A/419

ԳՐԱԴԱՐԱՆ

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ
ՍՐԲՈՅ
ԱՒԵՏԱՐԱՆԻ
ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ
ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ։

'Ի Հայրապետութ͞ն Ս͞բյ Աթոռոյն Միածնաիջին Տեառն
ԵՓՐԵՄԱՅ Սրբազնասուրբ Կաթուղիկոսի
ամենայն Հայոց։

Եւ յԱռաջնորդութեան Հայոց Ռուսաստանու Տեառն
Յօհաննու Առաքելաշնորհ Արք Եպիսկոպոսի։

Տպագրեալ ջանիւք և արդեամբք 'ի միաբանութ͞է
ժողովոյն Ա͞ծաշնչի, որ 'ի Սանկտպետրբուրգ։

Ամենօգոստափառ, Կայսերական, Բարձրագոյն
Հրամանաւ հաստատեալ Տպարանի, որ 'ի
Գահոյանիստն
ՍԱՆԿՏՊԵՏՐԲՈՒՐԳ.
[illegible] Մ. Յօհաննիսեանի [illegible]
Յամ Տեառն 1814։
Իսկ ըստ Հայոց ռմ̃ կ̃գ։

Կարգ և թիւ Նորոց կտակարանաց․ Հանդերձ գլխովք ։

Գլուխք

1 Սրբոյ Աւետարանի Մատթէոսի։ - - - 28
2 Սրբոյ Աւետարանի Մարկոսի։ - - - - 16
3 Սրբոյ Աւետարանի Ղուկասու։ - - - - 24
4 Սրբոյ Աւետարանի Յովհաննու։ - - - - 25

Երկրորդ Գիրք Սրբոյն Ղուկասու

5 Գործք Առաքելոց։ - - - - - - - - - 28

Թուղթք Պօղոսի Առաքելոյն ։

6 Թուղթ առ Հռովմայեցիս։ - - - - - - 16
7 Թուղթ առ Կորնթացիս․ 1։ - - - - - 16
8 Թուղթ առ Կորնթացիս․ 2։ - - - - - 13
9 Թուղթ առ Գաղատացիս։ - - - - - - - - 6
10 Թուղթ առ Եփեսացիս։ - - - - - - - 6
11 Թուղթ առ Փիլիպպեցիս։ - - - - - - 4
12 Թուղթ առ Կողոսացիս։ - - - - - - - 4
13 Թուղթ առ Թեսաղոնիկեցիս․ 1։ - - - - 5
14 Թուղթ առ Թեսաղոնիկեցիս․ 2։ - - - - 4
15 Թուղթ առ Տիմոթէոս․ 1։ - - - - - - 6
16 Թուղթ առ Տիմոթէոս․ 2։ - - - - - - 4
17 Թուղթ առ Տիտոս։ - - - - - - - - 3
18 Թուղթ առ Փիլիմոն։ - - - - - - - - 1
19 Թուղթ առ Եբրայեցիս։ - - - - - - - 13

Թուղթք կաթողիկեայց։

		Գլուխք
20	Յակոբու։	5
21	Պետրոսի. 1։	5
22	Պետրոսի. 2։	3
23	Յօհաննու. 1։	5
24	Յօհաննու. 2։	1
25	Յօհաննու. 3։	1
26	Յուդայի։	1
27	Տեսլեանն Յօհաննու։	22

Նոր կտակարանին բովանդակ են գիրք իէ։ 27։



«Հայաստանի Տիրամայր»-ը Մայր Տաճարի

ԱՒԵՏԱՐԱՆ

ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ։

Գլուխ Առաջին։

* * *

1 ԳԻՐՔ ԾՆՆԴԵԱՆ Յ͞ի Ք͞ի
2 որդւոյ դաւթի. որդւոյ աբրահամու։ *Աբրահամ
ծնաւ զիսահակ։ Իսահակ ծնաւ զյակոբ։
3 Յակոբ ծնաւ զյուդա և զեղբարս նորա։ *Յուդա
ծնաւ զփարէս՝ և զզարայ ՚ի թամարայ։ Փարէս
4 ծնաւ զեզրոմ։ Եզրոմ ծնաւ զարամ։ *Արամ ծնաւ
զամինադաբ։ Ամինադաբ ծնաւ զնաասոն։ Նաա-
5 սոն ծնաւ զսաղմոն։ *Սաղմոն ծնաւ զբոոս ՚ի
հռեքաբայ։ Բոոս ծնաւ զյօբէդ ՚ի հռութայ։
Օբէդ ծնաւ զյեսսէ։ Յեսսէ ծնաւ զդաւիթ
6 արքայ։ *Դաւիթ արքայ ծնաւ զսողոմոն ՚ի կնոջէն
7 ուրիայ։ *Սողոմոն ծնաւ զռոբովամ։ Ռոբովամ ծը-
8 նաւ զաբիայ։ Աբիա ծնաւ զասափ։ *Ասափ ծնաւ
9 զյոսափատ։ Յոսափատ ծնաւ զյորամ։ Յորամ
ծնաւ զոզիայ։ *Ոզիա ծնաւ զյովաթամ։ Յո-
10 վաթամ ծնաւ զաքազ։ Աքազ ծնաւ զեզեկիայ։ *Եզե-
կիա ծնաւ զմանասէ։ Մանասէ ծնաւ զամոն։ Ամոն
11 ծնաւ զյովսիա։ *Յովսիա ծնաւ զյեքոնիա՝ և զեղ-
12 բարս նորա առ գերութեամբն բաբելացւոց։ *Յետ գերու-
թեանն բաբելացւոց ծնաւ յեքոնիա զսաղաթիէլ։
13 Սաղաթիէլ ծնաւ զզօրաբաբէլ։ *Զօրաբաբէլ ծը-
նաւ զաբիուդ։ Աբիուդ ծնաւ զեղիակիմ։ Եղիակիմ
14 ծնաւ զազովր։ *Ազովր ծնաւ զսադովկ։ Սադովկ ծնաւ
15 զաքիմ։ Աքիմ ծնաւ զէղիուդ։ *Էղիուդ ծնաւ զէղիա-
զար։ Էղիազար ծնաւ զմատթան։ Մատթան ծնաւ
16 զյակոբ։ *Յակոբ ծնաւ զյովսէփ զայրն մարիամու՝
որում խօսեցեալ էր զմարիամ կոյս՝ յորմէ ծնաւ Յ͞ս որ
17 անուանեցաւ Ք͞ս։ *Արդ՝ ամ͞ ազգք յաբրահամէ

մինչև ՚ի Դաւիթ՝ ազգք չորեքտասանք: և ՚ի Դաւթէ մինչև
՚ի գերութիւնն Բաբիլոնացւոց՝ ազգք չորեքտասանք: և
՚ի գերութենէն Բաբիլոնացւոց մինչև ՚ի Քս̃. ազգք չորեքտասանք:
18 * Եւ Յի Քի ծնունդն էր այսպէս: խօսեցեալ
զմայրն նր̃ զՄարիամ [redacted]
19 յղացեալ ՚ի Հոգւոյն սրբոյ: * Եւ Յովսէփ [redacted]
՝ քանզի արդար էր. և ոչ կամեցաւ առակել զնա:
20 խորհեցաւ լռելեայն արձակել զնա: * Եւ մինչդեռ նա
զայս ածէր զմտաւ՝ ահա հրեշտակ Տն̃ ՚ի տեսլեան երևեցաւ
նմա՝ և ասէ: Յովսէփ որդի Դաւթի. մի՛ երկնչիր
առնուլ առ քեզ զՄարիամ կին քո. քանզի որ ՚ի նմայն
21 ծնեալ է, ՚ի Հոգւոյն սրբոյ է: * Ծնցի որդի. և կոչեսցես
զանուն նր̃ Յս̃. զի նա փրկեսցէ զժողովուրդ իւր
22 ՚ի մեղաց իւրեանց: * Այլ այս ամենայն. զի լցցի՝ որ
23 ասացաւ ՚ի Տէ ՚ի ձեռն Եսայեայ մարգարէի: * Ահա
կոյս յղասցի. և ծնցի որդի. և կոչեսցեն զանուն նր̃
24 Էմմանուէլ՝. որ թարգմանի ընդ մեզ Ած: * Եւ
զարթուցեալ Յովսէփ ՚ի քնոյ անտի, արար որպէս հրամայեաց
նմա հրեշտակն Տն̃: [redacted]:
25 * [redacted] մար
ամ [redacted] և կոչեաց զանուն նորա Յ[redacted]ուս

Գլ. Բ:

1 Եւ ՚ի ծնանելն Յի ՚ի Բեթղեհեմ Հրէաստանի,
յաւուրս Հերովդէի թագաւորի: ահա մոգք յարևելից
2 եկին յԵմ: * Եւ ասեն՝ ուր է. որ ծնաւ արքայն Հրէից:
զի տեսաք զաստղ նր̃ յարևելս. և եկաք երկրպա-
3 գանել նմա: * Եւ իբրև լուաւ արքայ Հերովդէս՝ խռովեցաւ՝
4 և ամենայն Եմ ընդ նմա: * Եւ ժողովեալ զամ
քահանայապետս՝ և զդպիրս ժողովրդեանն. հարցա-
5 նէր ՚ի նոցանէ. թէ ուր ծնանիցի Քս̃ն: * Եւ նոքա
ասեն ցնա ՚ի Բեթղեհեմ Հրէաստանի: զի այսպէս
6 գրեալ է ՚ի ձեռն մարգարէին: * Եւ դու Բեթղեհեմ
երկիր Յուդայ՝ ոչինչ կրտսեր ես յիշխանս Յուդայ: ՚ի քէն
ելցէ ինձ իշխան. որ հովուեսցէ զժողովուրդ իմ զԻէլ.
7 * Յայնժամ Հերովդէս ծածուկ կոչեաց զմոգսն՝ և ստու-
գեաց ՚ի նոցանէ զժամանակ աստեղն երևելոյ:
8 * Եւ արձակեալ զնս ՚ի Բեթղեհեմ, ասէ: գնա-

ցէք և ստուգեցէք վ՛ մանկանն. և յորժամ գտանիցէք՝
պատմեսջիք ինձ: զի և ես եկեալ երկիրպագից
9 նմա: * Եւ նոքա իբրև լուան 'ի թագաւորէն, գնացին.
ահա աստղն զոր տեսին յարևելս՝ առաջնորդէր
նոցա՝ մինչև եկեալ եկաց 'ի վերայ՝ ուր էր մանուկն:
10 * Իբրև տեսին զաստղն, խնդացին յոյժ ուրախութիւն
11 մեծ: * Եւ իբրև մտին 'ի տունն՝ տեսին
զմանուկն հանդերձ Մարիամաւ մարբն իւրով. և
անկեալ երկիրպագանէին նմա. և բացեալ զգանձս
իւրեանց՝ մատուցին նմա պատարագս ոսկի՝ և
12 կնդրուկ՝ և զմուռս: * Եւ հրաման առեալ 'ի տեսլեան
չդառնալ անդրէն առ Հերովդէս, ընդ այլ ճանապարհ
գնացին յաշխարհն իւրեանց:
13 * Եւ իբրև գնացին նոքա անտի. ահա հրեշտակ
Տեառն երևիւր 'ի տեսլեան Յովսեփու՝ և ասէ. արի,
առ զմանուկդ և զմայր իւր՝ և փախիր յեգիպտոս. և
անդ լինիջիր՝ յորժամ ասացից քեզ: քանզի 'ի խընդիր
է Հերովդէս կորուսանել զմանուկդ:
14 * Եւ նա յարուցեալ էառ զմանուկն և զմայր իւր
գիշերի. և գնաց յեգիպտոս: և անդ էր մինչև վախճան
15 Հերովդէի: * Զի լցցի ասացեալն 'ի Տէ 'ի ձեռն
մարգարէին որ ասէ: յեգիպտոսէ կոչեցի զորդի իմ:
16 * Յայնժամ իբրև ետես Հերովդէս թէ խաբեցաւ
'ի մոգուց անտի, բարկացաւ յոյժ: և առաքեալ կոտորեաց
զամ մանկունսն՝ որք էին 'ի Բեթղեհէմ և
յամ սահմանս նր՝ յերկեմենից և 'ի խոնարհ. ըստ
ժամանակին զոր ստուգեաց 'ի մոգուցն:
17 * Յայնժամ կատարեցաւ ասացեալն 'ի ձեռն Երեմիայի
մարգարէի. որ ասէ:
18 * Ձայն գուժեաց 'ի Հռամայ. ողբումն՝ և լալումն՝
և աշխարումն յոյժ: Հռաքէլ՝ լայր զորդիս իւր՝ և
ոչ կամէր մխիթարիլ՝ զի ոչ էին:
19 * Եւ 'ի վախճանիլն Հերովդէի. ահա հրեշտակ Տն
'ի տեսլեան երևիւր Յովսեփայ յեգիպտոս:
20 * Եւ ասէր՝ արի, առ զմանուկն զմայր իւր՝ և գնա
յերկիրն Իլի. զի մեռան՝ որք խնդրէին զանձն մանկանդ:
21 * Եւ նա յարուցեալ էառ զմանուկն և զմայր նորա.
22 և եկն յերկիրն Իլի: * Եւ իբրև լուաւ եթէ Արքեղայոս
թագաւորեաց Հրէաստանի փոխանակ Հերովդէի
հօրն իւրոյ՝ երկեաւ երթալ անդր: և հրա-

մանն առեալ 'ի տեսլեան. գնաց 'ի կողմանս գալիլէացւոց
23 : * Եւ եկեալ բնակեցաւ 'ի քաղաքին՝ որ կոչի
նազարէթ. զի լցցի բան մարգարէիցն. թէ նազովրեցի
կոչեսցի:

Գլ. Գ.

1 Յաւուրսն յայնոսիկ գայ յօհաննէս մկրտիչ քարոզէր
յանապատին հրէաստանի:
2 * Եւ ասէր: ապաշխարեցէք՝ զի մերձեալ է արքայութիւն
3 երկնից * Զի սա է. վն որոյ ասացաւ 'ի ձեռն
եսայեայ մարգարէի, որ ասէ. ձայն բարբառոյ
յանապատի. պատրաստ արարէք զճանապարհ Տն.
և ուղիղ արարէք զշաւիղս նորա.
4 * Եւ ինքն յօհաննէս ունէր զհանդերձ 'ի ստեւոյ
ուղտու. և գօտի մաշկեղէն ընդ մէջ իւր: և կերակուր
նորա էր մարախ և մեղր վայրենի:
5 * Յայնժամ ելանէին առ նա ամ երմացիք՝ և ամ
հրէաստան. և ամենայն կողմն յորդանանու:
6 * Եւ մկրտէին 'ի նմանէ 'ի յորդանան. և խոստովան
7 լինէին զմեղս իւրեանց: * Եւ տեսեալ զբազումս
'ի սադուկեցւոցն և 'ի փարիսեցւոց եկեալս
'ի մկրտութիւն նր՝ ասէ ցնոսա: ծնունդք իժից՝ ո եցոյց
ձեզ փախչել 'ի բարկութենէն՝ որ գալոցն է:
8 * Արարէք այսուհետև պտուղ արժանի ապաշխարութեան.
9 * Եւ մի համարիցիք ասել յանձինս՝
թէ ունիմք մեք հայր զաբրահամ: ասեմ ձեզ: զի
կարող է Ած 'ի քարանցս յայսցանէ յարուցանել որդիս
10 աբրահամու: * Զի ահաւասիկ տապար առ
արմին ծառոց դնի. ամ ծառ որ ոչ առնէ պտուղ
բարի, հատանի և 'ի հուր արկանի:
11 Ես մկրտեմ զձեզ ջրով յապաշխարութիւն. բայց որ
զկնի իմ գայ՝ հզօրագոյն է քան զիս: և ես չեմ բաւական
բառնալ զկօշիկս նր: Նա մկրտեսցէ զձեզ
12 'ի Հոգին սբ՝ և 'ի հուր: * Որոյ հեծանոցն 'ի ձեռին
իւրում. և սրբեսցէ զկալ իւր. և ժողովեսցէ
զցորեանն 'ի շտեմարանս իւր: և զյարդն այրեսցէ
13 անշէջ հրով: * Յայնժամ գայ Յս 'ի գալիլեէ 'ի
յորդանան առ յօհաննէս՝ մկրտիլ 'ի նմանէ:
14 * Եւ յօհաննէս արգելու զնա՝ և ասէ; ինձ պիտոյ

15 է 'ի քէն մկրտիլ՝ և դու առ իս գաս ։ * Պատաս-
խանի ետ Յս̃՝ և ասէ ցնա՝ Թոյլ տուր այժմ. զի
այսպէս վայելէ մեզ լնուլ զամենայն արդարութիւն ։
և ապա թոյլ ետ նմա ։
16 * Եւ իբրև մկրտեցաւ Յս̃, ել վաղվաղակի 'ի ջրոյ
անտի ։ և ահա բացան նմա երկինք ։ և ետես զՀոգին
Այ̃՝ զի իջանէր իբրև զաղաւնի. և գայր 'ի վր̃
17 նր̃ ։ * Եւ ահա ձայն յերկնից՝ որ ասէր. դա է Որդի
իմ սիրելի. ընդ որ հաճեցայ ։

Գլ. Դ.

1 Յայնժամ վարեցաւ Յս̃ յանապատ 'ի Հոգւոյն
2 փորձիլ 'ի սատանայէ ։ * Եւ պահեալ զքառա-
սուն տիւ և զքառասուն գիշեր՝ ապա քաղցեաւ ։
3 * Եւ մատուցեալ փորձիչն՝ ասէ ցնա. եթէ Որդի
ես Այ̃ ասա, զի քարինքս այսոքիկ հաց լինիցին ։
4 * Նա պատասխանի ետ՝ և ասէ ։ գրեալ է՝ եթէ ոչ
հացիւ միայն կեցցէ մարդ. այլ ամ̃ բանիւ որ ելանէ
5 'ի բերանոյ Այ̃ ։ * Յայնժամ առեալ ածէ զնա սատա-
նայ 'ի քաղաքն սր̃բ. և կացուցանէ զնա 'ի վր̃ աշտա-
6 րակի տաճարին ։ * Եւ ասէ ցնա. եթէ Որդի ես Այ̃
արկ զքեզ աստի 'ի վայր ։ զի գրեալ է. եթէ հրեշտա-
կաց իւրոց պատուիրեալ է վս̃ քո. և 'ի վր̃ ձեռաց բարձ-
ցեն զքեզ՝ զի մի երբէք հարցես զքարի զոտն քո ։
7 * Ասէ ցնա դարձեալ Յս̃՝ գրեալ է՝ թէ՝ ոչ փոր-
8 ձեսցես զՏր̃ Ած̃ քո ։ * Դարձեալ առեալ ածէ զնա
սատանայ 'ի լեառն մի բարձր յոյժ ։ և ցուցանէ նմա
զամ̃ թագաւորութիւնս աշխարհի. և զփառս նոցա ։
9 * Եւ ասէ ցնա. զայս ամ̃ քեզ տաց՝ եթէ անկեալ
10 երկիրպագանիցես ինձ ։ * Յայնժամ ասէ ցնա Յս̃՝
երթ յետս իմ սատանայ. զի գրեալ է. Տն̃ Այ̃
քում երկիրպագցես՝ և զնա միայն պաշտեսցես ։
11 * Ապա եթող զնա սատանայ՝ և ահա հրեշտակք
12 ՐՐ. մատեան՝ և պաշտէին զնա ։ * Եւ իբրև
լուաւ Յս̃՝ եթէ յօհաննէս մատնեցաւ՝ մեկնեցաւ և
13 գնաց 'ի գալ'իլ'եա ։ * Եւ թողեալ զնազարէթ, եկն և
բնակեցաւ 'ի կափառնայում, 'ի ծովեզերն. 'ի սահ-
մանս զաբուղօնի. և նեփթաղ'իմայ ։
14 * Զի լցցի բանն՝ որ ասացաւ 'ի ձեռն եսայեայ մար-

15 զարկէ։ *Երկիր զաբուղոնի՝ և երկիր նեփթաղիմայ՝
ճանապարհ ծովու՝ յայնկոյս յորդանանու. գալիլեայ
16 հեթանոսաց։ *Ժողովուրդ որ նստէր ՚ի խաւարի՝
ետես զլոյս մեծ։ և որոց նստէին յաշխարհին և ՚ի
ստուերս մահու՝ լոյս ծագեցաւ նոցա։
17 *Յայնմհետէ սկսաւ քարոզել Յս՛՝ և ասել. ապաշխարեցէք. զի մերձեալ է արքայութիւն երկնից։
18 *Մինչդեռ զգնայր Յս՛ ընդ եզր ծովուն գալիլեացւոց՝ ետես երկուս եղբարս. զսիմոն զկոչեցեալն պետրոս. և զանդրէաս եղբայր նր՛ արկեալ զուռկան ՚ի
19 ծով (քանզի ձկնորսք էին։) *Եւ ասէ ցնոսա : եկայք զկնի իմ. և արարից զձեզ որսորդս մարդկան։
20 *Եւ նոքա թողեալ վաղվաղակի զգործիսն՝ գնացին
21 զհետ նր՛։ *Եւ մատուցեալ անտի յառաջ՝ ետես այլ
երկուս եղբարս . զյակոբոս զեբեդեայ՝ և զյոհաննէս զեղբայր նորա ՚ի նաւի զեբեդեաւ հանդերձ
հարբն իւրեանց . մինչ կարկատէին զուռկանս իւրեանց.
22 և կոչեաց զնոսա։ *Նոքա թողեալ վաղվաղակի ըզ
նաւն և զհայրն իւրեանց՝ գնացին զհետ նորա :
23 Եւ շրջէր Յս՛ ընդ ամ՛ կողմն գալիլեացւոց. ուսուցանէր ՚ի ժողովուրդս նոցա՝ և քարոզէր զաւետարանն արքայութե՛՝ և բժշկէր զամ՛ հիւանդութիւն,
24 և զամ՛ ախտս ՚ի ժողովրդեանն։ *Եւ ել լուր նր՛ ընդ
ամ՛ երկիրն ասորւոց։ և մատուցին առ նա՛ զամ՛ հիւանդս՝ որք նեղեալք էին ՚ի պէսպէս ցաւս և ՚ի տանջանս։ և զդիւահարս՝ և զլուսնոտս. և զանդամալոյծս.
և բժշկեաց զնս՛ :
25 *Եւ երթային զհետ նր՛ ժողովուրդք բազումք. ՚ի
գալիլեէ և ՚ի դեկապօլեայ. և յե՛ղ՛մէ. և ՚ի հրէաստանէ. և յայնկոյս յորդանանու. և բժշկեաց զնոսա։

ԳԼ. Ե։

1 Եւ տեսեալ զժողովուրդսն՝ ել ՚ի լեառն. և իբրև
ԲԿԳ. նստաւ անդ՝ մատեան առ նա աշակերտք նորա :
2 *Եւ բացեալ զբերան իւր՝ ուսուցանէր զնս՛՝ և ասէր :
3 Երանի աղքատաց հոգւով՝ զի նոցա է արքայութիւն
4 երկնից։ *Երանի սգաւորաց՝ զի նոքա մխիթարես-
5 ցին : *Երանի հեզոց՝ զի նոքա ժառանգեսցեն զեր-

6 կիր ։ * Երանի՛ որք քաղցեալք և ծարաւիք իցեն արդարութեան՝
7 զի նոքա յագեսցին ։ * Երանի ողորմածաց՝
8 զի նոքա զողորմուի գտցեն ։ * Երանի այնոցիկ՝
որք սբք են սրտիւք ․ զի նոքա զԱծ տեսցեն ։
9 * Երանի խաղաղարարաց՝ զի նոքա որդիք Այ կոչեսցին ։
10 * Երանի որք հալածեալք իցեն վս արդարութեան՝
զի նոցա է արքայութի երկնից ։
11 * Երանի է ձեզ՝ յորժամ նախատիցեն զձեզ՝ և հալածեսցեն ․ և ասիցեն զամ բան չար զձէնջ սուտ վս
12 իմ ։ * Ցնծայջէք և ուրախ լերուք ․ զի վարձք ձեր
բազումք են յերկինս ․ զի այսպէս հալածեցին զմարգարէսն,
որք յառաջ քան զձեզ էին ։
13 * Դուք էք աղ երկրի ․ ապա թէ աղն անհամի՝ ի՞ւ
յաղիցի ․ ոչ իմիք ազդիցէ այնուհետև ․ բայց եթէ
ընկենուլ արտաքս՝ և կոխան լինել ՚ի մարդկանէ ։
14 * Դուք էք լոյս աշխարհի ․ ոչ կարէ քաղաք թաքչիլ՝
15 որ ՚ի վերայ լերին կայցէ ։ * Եւ ոչ լուցանեն ճրագ՝
և դնեն ընդ գրուանաւ ․ այլ ՚ի վերայ աշտանակի՝
և լոյս տայ ամենեցուն՝ որք ՚ի տանն իցեն ։
16 * Այնպէս լուսաւորեսցէ լոյս ձեր առաջի մարդկան ․
որպէս զի տեսցեն զգործս ձեր բարիս՝ և
փառաւորեսցեն զՀայր ձեր՝ որ յերկինս է ։
17 ԻԴ ․ * Մի՛ համարիք եթէ եկի լուծանել զօրէնս
կամ զմարգարէս ․ ոչ եկի լուծանել՝ այլ լնուլ ։
18 * Ամէն ամէն ասեմ ձեզ՝ մինչև անցցեն երկինք և
երկիր՝ յովտ մի, որ նշանախեց մի է, ոչ անցցէ յօրինացն
և ՚ի մարգարէից՝ մինչև ամենայն եղիցի
19 * Որ ոք լուծցէ մի ինչ ՚ի պատուիրանացս յայսցանէ
՚ի փոքունց, և ուսուսցէ այնպէս զմարդիկ, փոքր
կոչեսցի յարքայութե երկնից ․ իսկ որ արասցէ,
և ուսուսցէ՝ նա մեծ կոչեսցի յարքայուե երկնից ։
20 * Բայց ասեմ ձեզ ․ զի եթէ ոչ առաւելցի արդարութիւն
ձեր առաւել քան զդպրացն և զփարիսեցւոց,
ոչ մտանիցէք յարքայութիւն երկնից ։
21 * Լուարուք՝ զի ասացաւ առաջնոցն ․ թէ մի՛ սպանաներ ․
զի որ սպանանիցէ՝ պարտական լիցի դատաստանի ։
22 * Այլ ես ասեմ ձեզ ․ եթէ ամ որ բարկանայ
եղբօր իւրում տարապարտուց՝ պարտաւոր լիցի
դատաստանի ․ և որ ասիցէ ցեղբայր իւր յիմար ։

պարտաւոր լիցի ատենի. և որ ասիցէ ցեղբայր իւր
մորոս, պարտաւոր լիցի գեհենն հրոյն:
23 *Եթէ մատուցանիցես զպատարագ քո 'ի վերայ սեղանոյ. և անդ յիշեսցես, եթէ եղբայր քո ունի
24 ինչ խէթ զքէն: *Թո՛ղ զպատարագն քո առաջի
սեղանոյն. և երթ նախ հաշտեաց ընդ եղբօր քում.
և ապա եկեալ մատուսջիր զպատարագն քո:
25 *Լեր իրաւախոհ ընդ ոսոխի քում վաղագոյն. մինչ
դեռ իցես ընդ նմա 'ի ճանապարհի. գուցէ մատնիցէ
զքեզ ոսոխն դատաւորի. և դատաւորն դահճի.
26 և արկանիցիս 'ի բանտ: *Ամէն ասեմ քեզ. ոչ ելանիցես
անտի, մինչև հատուցանիցես զյետին նաքարակիտն:
27 *Լուարուք՝ զի ասացաւ մի՛ շնար:
28 *Բայց ես ասեմ ձեզ. թէ ամ՟ որ հայի 'ի կին մ՟րդ
առ 'ի ցանկանալ նմա՝ անդէն շնացաւ ընդ նմա 'ի
29 սրտի իւրում: *Եթէ ակն քո աջ գայթագղեցուցանէ
զքեզ՝ խլեա՛ զնա. և ընկեա՛ 'ի քէն. զի լաւ է քեզ՝
եթէ մի յանդամոց քոց կորիցէ. և մի՛ ամ՟ մարմինդ
30 քո անկանիցի 'ի գեհեն: *Եւ՛ եթէ աջ ձեռն քո
գայթագղեցուցանէ զքեզ, հատ զնա՝ և ընկեա՛ 'ի քէն.
զի լաւ է քեզ՝ եթէ մի յանդամոց քոց կորիցէ. և
մի ամենայն մարմինդ քո արկանիցի 'ի գեհեն:
31 *Ասացաւ՝ եթէ որ արձակիցէ զկին իւր՝
տացէ նմա զարձակմանն:
32 *Բայց ես ասեմ ձեզ: եթէ ամենայն որ արձակէ
զկին իւր առանց բանի պոռնկութ՟ե՝ նա տայ նմա շնանալ.
33 և որ զարձակեալն առնէ. շնայ: *Դարձեալ լուարուք. զի ասացաւ առաջնոյն՝ մի՛ երդնուցուս սուտ.
բայց հատուսցես Տ՟ն զերդմունս քո:
34 Այլ ես ասեմ ձեզ՝ ամենևին մի՛ երդնուլ. մի՛ յեր
35 կինս՝ զի աթոռ է Ա՟յ: *Եւ՛ մի՛ յերկիր՝ զի պատուանդան է ոտից նո՟ր. և մի՛ յեէմ. զի քաղաք է մե
36 ծի արքայի: *Եւ՛ մի՛ 'ի գլուխ քո երդնուցուս՝ զի
ոչ կարես մազ մի սպիտակ առնել կամ թուխ:
37 *Այլ եղիցի ձեր բան՝ այոն, այո, և ոչն ոչ. զի առա
38 ւելն քան զայն 'ի չարէն է: *Լուարուք՝ զի ասացաւ. ակն ընդ ական. և ատամն ընդ ատաման:
39 *Այլ ես ասեմ ձեզ՝ մի՛ կալ հակառակ չարի. այլ
եթէ որ ածիցէ ապտակ յաջ ծնօտ քո՝ դարձո՛ նմա

40 և զմիւսն ։ * Եւ որ կամիցի ոք դատել և առ-
41 նուլ զշապիկս քո, թո՛ղ 'ի նմա և զբաճկոն քո։ * Եւ
որ տարապարհակ վարիցէ զքեզ մղոն մի, երթ ընդ
42 նմա և երկուս։ * Որոք խնդրէ 'ի քէն՝ տո՛ւր. և որ կա-
մի փոխ առնուլ 'ի քէն՝ մի՛ դարձուցանէր զերեսս ։
43 * Լուարո՛ւք՝ ապաքէն՝ զի ասացաւ. սիրեսցես զընկեր
44 քո՝ և ատեսցես զթշնամին քո. * Այլ ես ասեմ ձեզ
սիրեցէք զթշնամիս ձեր. բարի արարէք ատելեաց ձե-
րոց։ և աղօ՛թս արարէք 'ի վերայ այնոցիկ՝ որք լլկեն
45 զձեզ և հալածեն։ * Զի եղիջիք որդիք Հօր ձերոյ՝ որ
յերկինս է։ զի զարեգակն իւր ծագէ 'ի վերայ չարաց
և բարեաց. և ածէ անձրև 'ի վերայ արդարոց և մեղա-
46 ւորաց։ * Զի եթէ սիրիցէք զայնոսիկ, որք սիրեն
զձեզ, զի՛նչ վարձք իցեն. ո՞չ ապաքէն և մաքսաւորք
47 զնոյն գործեն։ * Եւ եթէ տայցէք միայն ողջոյն բարե-
կամաց ձերոց՝ զի՛նչ աւելի առնէք. ո՞չ ապաքէն մաք-
48 սաւորք և մեղաւորք զնոյն գործեն։ * Արդ՝ եղերո՛ւք
դուք կատարեալք. որպէս և Հայրն ձեր երկնաւոր
կատարեալ է ։

ԳԼ. Զ ։

1 Զգո՛յշ լերուք ողորմութե̃ ձերում մի՛ առնել ա-
Բե. ռաջի մարդկան. ոպ̃ թէ 'ի ցոյց ինչ նց̃. գուցէ
և վարձս ո՛չ ընդունիցիք 'ի Հօրէն ձերմէ՝ որ յեր-
2 կինս է։ * Այլ յորժամ առնիցես զողորմութի̃ն,
մի՛ հարկանէր փող առաջի քո՝ որպէս կեղծաւորքն
առնեն 'ի ժողովուրդս և 'ի հրապարակս, որպէս
զի փառաւորեսցին 'ի մարդկանէ. ամէն ասեմ ձեզ՝
3 այն իսկ են վարձք նոցա։ * Այլ դու յորժամ զողոր-
մութի̃ն առնիցես, մի՛ գիտասցէ ձախ քո՝ զինչ գործէ
աջ քո ։
4 * Որպէս զի եղիցի ողորմութի̃ն քո 'ի ծածուկ. և
Հայրն քո՝ որ տեսանէ 'ի ծածուկ. հատուսցէ քեզ
5 յայտնապէս ։ * Եւ յորժամ յաղօթս կայցէք, մի՛
լինիցիք որպէս կեղծաւորքն՝ զի սիրեն 'ի ժողո-
վուրդս և յանկիւնս հրապարակաց կալ յաղօթս.
որպէս զի երևեսցին մարդկան. ամէն ասեմ ձեզ՝
այն իսկ են վարձք նոցա ։

6 * Այլ դու յորժամ կայցես յաղօթս, մուտ 'ի
սենեակ քո։ և փակեա՛ զդուրս քո։ և կա՛ց յաղօթս
առ Հայր քո 'ի ծածուկ. և Հայրն քո, որ տեսանէ
7 'ի ծածուկ՝ հատուսցէ քեզ յայտնապէս։ * Եւ
յորժամ կայցէք յաղօթս, մի շատախօսք լինիք
իբրև զհեթանոսսն. զի համարին եթէ 'ի բազում
8 խօսից իւրեանց լսելի լինիցին։ * Արդ՝ մի նմանի
ցիք նոցա. զի գիտէ Հայր ձեր. զինչ պիտոյ է ձեզ՝
9 մինչչև ձեր խնդրեալ ինչ իցէ 'ի նմանէ։ * Եւ
արդ՝ այսպէս կացէք դուք յաղօթս. Հայր մեր՝
որ յերկինս ես. սբ եղիցի անուն քո։
10 * Եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո՝ որպէս
11 յերկինս և յերկրի։ * Զհաց մեր հանապազորդ
12 տուր մեզ այսօր։ * Եւ թո՛ղ մեզ զպարտիս մեր՝
13 ոպ և մեք թողումք մերոց պարտապանաց։ * Եւ
մի տանիր զմեզ 'ի փորձութիւն. այլ փրկեա՛ զմեզ
'ի չարէ։ զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք
14 յաւիտեանս։ * Զի եթէ թողուցուք մարդկան
զյանցանս նոցա՝ թողցէ և ձեզ Հայրն ձեր երկնաւոր
15 զյանցանս ձեր։ * Ապա թէ ոչ թողուցուք մարդկան զյանցանս նոցա՝ և ոչ Հայրն ձեր երկնաւոր
16 թողցէ ձեզ զյանցանս ձեր։ * Եւ յորժամ պահիցէք՝ մի լինիք իբրև զկեղծաւորսն, տրտմեալք.
որք ապականեն զերեսս իւրեանց. որպէս զի երևեսցին մարդկան թէ պահիցեն. ամէն ասեմ ձեզ՝
17 այն իսկ են վարձք նոցա։ * Այլ դու յորժամ
պահիցես՝ օծ զգլուխ քո՝ և լուա՛ զերեսս քո։
18 * Զի մի երևեսցիս մարդկան իբրև զպահօղ։
այլ Հօրն քում 'ի ծածուկ. և Հայրն քո՝ որ տեսանէ
19 'ի ծածուկ՝ հատուսցէ քեզ։ * Մի գանձէք ձեզ
գանձս յերկրի. ուր ցեց և ուտիճ ապականեն. և
20 ուր գողք ական հատանեն. և գողանան։ * Այլ
գանձեցէք ձեզ գանձս յերկինս. ուր ո՛չ ցեց՝ և ո՛չ
ուտիճ ապականեն՝ և ո՛չ գողք ական հատանեն և գողանան։
21 * Զի ուր գանձք ձեր են՝ անդ և սիրտք
22 Ր.Զ. ձեր եղիցին։ * Ճրագ մարմնոյ ակն է. եթէ
ակն քո առատ է. ամենայն մարմինդ լուսաւոր
23 եղիցի։ * Ապա եթէ ակն քո չար է՝ ամենայն
մարմինդ խաւարին եղիցի։ իսկ արդ՝ եթէ լոյսդ որ

24 'ի քեզ է՝ խաւար է՝ խաւարն °որչափ եւս: * Ոչ ոք
կարէ երկուց տերանց ծառայել. կամ զմին ատիցէ,
եւ զմիւսն սիրիցէ. կամ զմին մեծարիցէ, եւ զմիւսն
արհամարհիցէ. ոչ կարէք Այ ծառայել եւ մամոնայի:
25 * Վասն այդորիկ ասեմ ձեզ՝ մի՛ հոգայք վս̃ ոգւոց
ձերոց, զինչ ուտիցէք. եւ մի՛ վս̃ մարմնոց ձերոց թէ
զինչ ագանիցիք. ոչ ապաքէն ոգի առաւել է քան
զկերակուր եւ մարմին քան զհանդերձ:
26 * Հայեցարո՛ւք 'ի թռչունս երկնից՝ զի ո՛չ վարեն.
եւ ո՛չ հնձեն. եւ ո՛չ ժողովեն 'ի շտեմարանս. եւ հայրն
ձեր երկնաւոր կերակրէ զնոսա. °ո՛չ ապաքէն դուք
27 առաւել էք քան զնոսա: * Իսկ արդ՝ ո՛ 'ի ձէնջ առ
հոգալ իւրում յաւելուլ կարիցէ 'ի հասակ իւր
28 զկանգուն մի: * Եւ վասն հանդերձի զի՛ հոգայք.
հայեցարո՛ւք 'ի շուշանս վայրենիս՝ որպէս աճէ. ո՛չ
29 ջանայ՝ եւ ո՛չ նիւթէ: * Ասեմ ձեզ՝ զի եւ ո՛չ
սողոմոն յամենայն փառսն իւրում զգեցաւ իբրեւ
30 զմի 'ի նոցանէ: * Իսկ եթէ զխոտն 'ի վայրի՝ որ
այսօր է. եւ վաղիւն 'ի հնոց արկանի, Ած այնպ̃ զգեցուցանէ.
°որչափ եւս առաւել զձեզ թերահաւատք:
31 * Մի՛ այսուհետեւ հոգայցէք, եւ ասիցէք. զինչ
կերիցուք՝ կամ զինչ արբցուք՝ կամ զինչ զգեցցուք:
32 * Զի զայդ ամ̃ հեթանոսք խնդրեն. քանզի գիտէ
հայրն ձեր երկնաւոր՝ թէ պիտոյ է ձեզ այդ ամ̃:
33 * խնդրեցէք նախ զարքայութի Այ՝ եւ զարդարու-
34 թիւն նր̃՝ եւ այդ ամ̃ յաւելցի ձեզ: * Մի՛ այսուհետեւ
հոգայցէք վասն վաղուի՛ն, զի վաղիւն վասն
իւր հոգասցէ. շատ է աւուրն չար իւր:

ԳԼ. Է:

1 2 Մի՛ դատէք՝ զի մի՛ դատիցիք: * Զի որով
Բէ. դատաստանաւ դատէք՝ դատեսջիք. եւ որով
3 չափով չափէք, չափեսցի ձեզ: * Զի՞ տեսանես
զշիւղ յականէ եղբօր քո. եւ 'ի քում ականդ զգերանդ
4 ո՛չ տեսանես: * Կամ զի՞արդ ասես ցեղբայր քո՝
թո՛ղ հանից զշիւղդ յականէ քումմէ. եւ ահաւադիկ
5 'ի քում ականդ գերան կայ: * Կեղծաւոր. հան
նախ զգերանդ յականէ քումմէ՝ եւ ապա հայեսցիս

6 հանել զշիւղն յականէ եղբօր քո։ * Մի՛ տայք
զսրբութիւն շանց՝ և մի՛ արկանէք զմարգարիտս ձեր
առաջի խոզաց. գուցէ առ ոտն կոխեսցեն զնոսա՝ և
7 դարձեալ երգիծուցանիցեն զձեզ։ * Խնդրեցէք, և
տացի ձեզ. հայցեցէք և գտջիք. բաղխեցէք և բաց
8 ցի ձեզ։ * Զի ա̃մ որ խնդրէ, առնու. և որ հայցէ,
9 գտանէ. և որ բաղխէ, բացցի նմա։ * Ո՞վ իցէ 'ի ձէնջ
մարդ՝ ցոր խնդրիցէ որդի իւր հաց, միթէ քար տայ-
10 ցէ նմա։ * Կամ խնդրիցէ ձուկն, միթէ օձ տայցէ նմա։
11 * Արդ եթէ դուք՝ որք չարքդ էք՝ գիտէք պար-
գևս բարիս տալ որդւոց ձերոց. ո՞րչափ ևս առաւել
հայրն ձեր՝ որ յերկինս է՝ տայցէ բարիս նոցին՝
որք խնդրեն զնա։
12 * Զա̃մ զոր միանգամ կամիջիք՝ թէ արասցեն ձեզ
մարդիկ՝ այնպէս արարէք և դուք նոցա. զի այն իսկ
13 են օրէնքն և մարգարէք։ * Մտէք ընդ նեղ դուռն՝
քանզի ընդարձակ դուռն՝ և համարձակ ճանապար-
հըն՝ որ տանի 'ի կորուստ. և բազումք են՝ որք մտա-
14 նեն ընդ նա։ * Քանզի անձուկ է դուռն. և նեղ
ճանապարհն՝ որ տանի 'ի կեանսն. և սակաւք են՝ որք
15 գտանեն զնա։ * Զգոյշ լերուք 'ի սուտ մարգարէից՝
որք գան առ ձեզ հանդերձիւք ոչխարաց՝ և 'ի ներքոյ
16 են գայլք յափշտակօղք։ * 'Ի պտղոյ նոցա ծանիջիք
զնոսա. միթէ քաղիցեն 'ի փշոյ խաղող՝ կամ 'ի տատասկէ
17 թուզ։ * Այսպէս ա̃մ ծառ բարի՝ պտուղ բարի առնէ.
18 և ծառ չար՝ պտուղ չար առնէ։ * Ո՛չ կարէ ծառ բարի
զպտուղ չար առնել. և ո՛չ ծառ չար զպտուղ բարի
19 առնել։ * Ամենայն ծառ՝ որ ոչ առնէ զպտուղ բարի.
20 հատանի և 'ի հուր արկանի։ * Ապա 'ի պտղոյ նոցա
21 ծանիջիք զնոսա։ * Ո՛չ ամենայն որ ասէ ցիս՝ Տ̄ր Տ̄ր.
մտցէ յարքայութիւն երկնից. այլ որ առնէ զկամս
22 Հօր իմոյ՝ որ յերկինս է։ * Բազումք ասիցեն ցիս
յաւուր յայնմիկ՝ Տ̄ր Տ̄ր. ո՞չ յանուն քո մարգարէա-
ցաք. և յանուն քո դևս հանաք. և յանուն քո զօրութիւնս
23 բազումս արարաք։ * Եւ յայնժամ ասացից ցնոսա՝ ե-
թէ ո՛չ երբէք գիտէի զձեզ. 'ի բա՛ց կացէք յինէն ա-
24 մենեքեան՝ որ գործէք զանօրէնութիւն։ * Ա̃մ որ
լսէ զբանս իմ զայսոսիկ, և առնէ զնոսա՝ նմանեսցի առն

25 իմաստնոյ. որ շինեաց զտուն իւր ՚ի վերայ վիմի: *Իջին
անձրևք՝ և խաղացին գետք՝ շնչեցին հողմք՝ և
բախեցին զտունն՝ և ոչ կործանեցաւ՝ քանզի ՚ի վ̅ր
26 վիմի հաստատեալ էր: *Եւ ամ̅ որ լսէ զբանս իմ զայսոսիկ՝
և ոչ առնէ զնոսա՝ նմանեսցի առն յիմարի՝
27 որ շինեաց զտուն իւր ՚ի վ̅ր աւազոյ: *Իջին անձրևք՝
յարեան գետք՝ շնչեցին հողմք՝ հարին զտունն և
28 անկաւ. և էր կործանումն ն̅ր մեծ յոյժ: *Եւ եղև
իբրև կատարեաց Յ̅ս զամ̅ զբանս զայսոսիկ՝ զարմանային
ժողովուրդքն ընդ վարդապետութիւն նորա:
29 *Զի իբրև իշխանութ̅ ուսուցանէր՝ և ոչ որպ̅ դըպիրքն
և փարիսեցիքն:

ԳԼ. Ը.

1 Այլ իբրև էջ ՚ի լեռնէ անտի, գնացին զկնի ն̅ր
2 ժողովուրդք բազումք: *Եւ ահա մատուցեալ
բորոտ մի, երկիրպագանէր նմա՝ և ասէր. Տ̅ր, եթէ
3 կամիս՝ կարօղ ես զիս սրբել: *Ձգեաց զձեռն
իւր՝ և հասոյց ՚ի նա Յ̅ս՝ և ասէ. կամիմ, սրբեա՛ց,
և վաղվաղակի սրբեցաւ ՚ի նմանէ բորոտութիւնն:
4 *Եւ ասէ ցնա Յ̅ս՝ զգո՛յշ լեր՝ մի ումեք ասիցես.
այլ երթ ցո՛յց զանձն քո քահանային. և մատո՛ ըզպատարագն.
զոր հրամայեաց Մովսէս ՚ի վկայութիւն
5 նոցա: *Եւ մտեալ ՚ի կափառնաում, մատեաւ առ նա
6 հարիւրապետ մի, աղաչէր զնա: *Եւ ասէր. Տէր՝
մանուկ իմ անկեալ կայ ՚ի տան անդամալոյծ՝ չարաչար
7 տանջեալ: *Ասէ ցնա Յ̅ս: Ես եկից՝ և բժըշկեցից
8 զնա: *Պատասխանի ետ հարիւրապետն՝ և
ասէ. Տ̅ր՝ չեմ բաւական եթէ ընդ յարկաւ իմով
մտանես. այլ ասա բանիւ, և բժշկեսցի մանուկն իմ:
9 *Քանզի և ես այր մի եմ ընդ իշխանութ̅. ունիմ
ընդ ձեռն զինուորս՝ ասեմ սմա երթ, և երթայ. և
այլում թէ եկ, և գայ. և ծառայի իմում թէ արա՛
10 զայս. և առնէ: *Իբրև լուաւ Յ̅ս զարմացաւ՝ և
ասէ ցայնոսիկ որ զհետ երթային. ամէն ասեմ
ձեզ՝ և ոչ յԻսրայէլի այսչափ հաւատս գտի
11 երբէք: *Բայց ասեմ ձեզ. զի բազումք յարևե-

419

ԳՐԱԴԱՐԱՆ

ելից և յարևմտից եկեսցեն՝ և բազմեսցին ընդ ա-
բրահամու՝ և ընդ իսահակայ՝ և ընդ յակոբու յար-
12 քայութեան երկնից: *Եւ որդիքն արքայութեան ել-
ցեն 'ի խաւարն արտաքին. անդ եղիցի լալ և կր
13 ճել ատամանց. *Եւ ասէ Յս՟ ցհարիւրապետն՝
Երթ. և որպէս հաւատացերդ, եղիցի քեզ. և ողջա-
14 ցաւ մանուկն նր՟ յաւուր յայնմիկ: *Եւ եկեալ Յս՟
'ի տուն պետրոսի. ետես՝ զի զոքանչ նորա անկեալ
15 դնիւր տապացեալ: * Կալաւ զձեռանէ նր՟ և ե-
թող զնա ջերմն. յոտն եկաց՝ և պաշտէր զնա:
16 * Իբրև երեկոյ եղև՝ մատուցին առ նա դիւահարս
բազումս. և էհան զայսսն բանիւ. և զամ՟ հիւանդ-
17 սըն բժշկեաց: *Զի լցցի բանն՝ որ ասացաւ 'ի
ձեռն եսայեայ մարգարէի. նա զհիւանդութիւնս մեր
18 վերացոյց՝ և զցաւս մեր եբարձ: *Տեսեալ Յս՟
զժողովուրդս բազումս զիւրև՝ հրամայեաց երթալ
19 Գ.Կ. յայնկոյս: *Եւ մատուցեալ դպիր մի ասէ ցնա.
վարդապետ՝ եկից և ես զհետ քո՝ յոր վայր և երթի-
20 ցես: *Ասէ ցնա Յիսուս. աղուեսուց որջք կան՝ և
թռչնոց երկնից բոյնք. այլ որդւոյ մարդոյ ո՛չ գոյ,
21 ուր դիցէ զգլուխ իւր: *Եւ մի ոմն յաշակերտաց
նորա ասէ. Տէր՝ տո՛ւր ինձ հրաման՝ զի երթայց
22 նախ թաղեցից զհայր իմ: *Ասէ ցնա Յս՟՝ եկ զհետ
իմ. և թո՛յլ տուր մեռելոցն, թաղել զմեռեալս
23 իւրեանց: *Եւ իբրև եմուտ 'ի նաւն. գնացին զհետ
24 նր՟ աշակերտքն նորա: *Եւ ահա շարժումն մեծ
եղև 'ի ծովուն. մինչև նաւին ծածկել յալեաց
25 անտի. և ինքն ննջէր: *Եւ մատուցեալ աշակերտքն
յարուցին զնա՝ և ասեն. Տ՟ր փրկեա՛ զմեզ՝ զի կոր
26 ընչիմք: *Եւ ասէ ցնոսա՝ ընդէ՞ր վատասիրտք էք՝
թերահաւատք. յայնժամ յարուցեալ սաստեաց
հողմոյն և ծովուն. և եղև խաղաղութիւն մեծ:
27 *Եւ մարդիկն զարմացան՝ և ասէին. ո՞րպիսի ոք
իցէ սա՝ զի և հողմք և ծով հնազանդին սմա:
28 *Եւ իբրև եկն յայնկոյս յերկիրն գերգեսացւոց՝
պատահեցան նմա դիւահարք երկու ելեալք 'ի գե-
րեզմանացն չարաչարք յոյժ. որպէս զի չէր հնար

29 անցանել ումեք ընդ այն ճանապարհ: *Եւ՛ ահա
աղաղակեցին՝ եւ ասեն. զի՞ կայ մեր եւ քո Յս՟ որ-
30 դի Ա՟յ. եկիր տարաժամ տանջել զմեզ: *Եւ՛ էր
հեռագոյն 'ի նոցանէ երամակ մի խոզից արօտական:
31 *Եւ՛ դեւքն աղաչէին զնա՝ եւ ասէին. եթէ հանես
զմեզ աստի, հրամա՛ն տուր մեզ երթալ յերամակ
32 խոզիցն: *Եւ՛ ասէ ցնոսա՝ երթայք. եւ նոքա ելեալ
գնացին յերամակն խոզից: եւ դիմեաց ամենայն երա
մակն 'ի դարէ անտի 'ի ծով՝ եւ մեռան 'ի ջուրսն:
33 *Եւ՛ խոզարածքն փախեան. եւ երթեալ 'ի քաղաքն
34 պատմեցին զա՟մ, եւ զիրս դիւահարացն: *Եւ՛ ահա
ամենայն քաղաքն ել ընդ առաջ Յի՟. իբրեւ տե-
սին զնա, աղաչէին, զի գնասցէ 'ի սահմանաց նոցա

ԳԼ. Թ:

1 Եւ՛ մտեալ 'ի նաւ՛ էանց յայնկոյս՝ եւ եկն 'ի քա-
2 ղաք իւր: *Եւ՛ ահա մատուցին առ նա անդա-
մալոյծ մի, որ դնիւր 'ի մահիճս: Եւ տեսեալ Յս՟
զհաւատս նոցա՝ ասէ ցանդամալոյծն՝ թողեալ լի-
3 ցին քեզ մեղք քո: *Եւ՛ ահա ոմանք 'ի դպրացն
4 ասեն ընդ միտս՝ հայհոյէ դա: Եւ՛ ծանուցեալ Յս՟
զխորհուրդս նոցա՝ ասէ ցնոսա. ընդէ՞ր խորհիք
5 դուք չարիս 'ի սիրտս ձեր: *Զի՞նչ դիւրին է ա-
սել. թողեալ լիցին քեզ մեղք քո՝ թէ ասել, ա-
6 րի եւ շրջեաց: *Այլ զի գիտասջիք՝ եթէ իշխա-
նութիւն ունի որդի մարդոյ յերկրի թողուլ զմեղս.
յայնժամ ասէ ցանդամալոյծն՝ արի, ա՛ռ զմահիճս
7 քո՝ եւ երթ 'ի տուն քո: *Եւ՛ յարուցեալ գնաց 'ի
8 տուն իւր: *Իբրեւ տեսին ժողովուրդքն զարմացան.
եւ փառաւոր առնէին զԱծ՟ զտուիչ այնպիսի իշխա-
նութեան մարդկան:

9 ԳԻ. *Եւ՛ անցեալ ընդ այն Յս՟՝ ետես զայր մի. զի
նստէր 'ի մաքսաւորութեան՝ մատթէոս անուն. եւ ա-
սէ ցնա՝ եկ զկնի իմ: եւ յարուցեալ գնաց զկնի նր՟
10 *Եւ՛ եղեւ իբրեւ բազմեալ էր նա 'ի տան. եւ ահա:
բազում մաքսաւորք եւ մեղաւորք եկեալ եւ բազ-
մեալ էին ընդ Յի՟ եւ ընդ աշակերտս նորա:

11 * Իբրեւ տեսին փարիսեցիքն՝ ասեն ցաշակերտս նր̄.
ընդէ՞ր ընդ մաքսաւորս եւ ընդ մեղաւորս ուտէ
12 վարդապետն ձեր։ * Իսկ Յս̄ իբրեւ լուա՛ւ՝ ասէ ցնս̄.
13 ոչ պիտոյ է բժիշկ հզօրաց՝ այլ հիւանդաց։ * Երթայք,
ուսարուք զինչ է, զողորմութիւն կամիմ, եւ
ոչ զոհ։ զի ոչ եկի կոչել զարդարս՝ այլ զմեղաւորս։
14 * Յայնժամ մատեան առ նա աշակերտքն Յոհաննու
եւ ասեն. ընդէ՞ր մեք եւ փարիսեցիքն պահեմք
յաճախ՝ եւ քո աշակերտքդ ոչ պահեն :
15 * Ասէ ցնոսա Յս̄, միթէ մարթ ինչ իցէ մանկանց
առագաստի սուգ առնուլ՝ մինչ փեսայն ընդ նս̄
իցէ. այլ եկեսցեն աւուրք՝ յորժամ բարձցի 'ի նոցանէ
16 փեսայն, եւ ապա պահեսցեն։ * Ոչ ոք արկանէ
կապերտ անթափի 'ի վր̄ հնացեալ ձորձոյ. զի առնու
երանէ զլրութիւն նորա 'ի հանդերձէն. եւեւս չար
17 պատառումն լինի։ * Եւ ոչ ոք արկանէ գինի նոր 'ի
տիկս հինս. ապա թէ ոչ՝ տիկքն պատառին՝ եւ գինին
հեղանի. եւ տիկքն կորնչին։ այլ արկանեն ըզ
գինի նոր 'ի տիկս նորս՝ եւ երկոքին պահին :
18 Գ.Գ. * Մինչդեռ նա զայս խօսէր ընդ նս̄՝ ահա
իշխան մի մատուցեալ երկիրպագանէր նմա՝ եւ
ասէր՝ դուստր իմ արդ իսկ վախճանեցաւ. այլ եկեալ
19 դիցես զձեռն քո 'ի վերայ նորա՝ եւ կեցցէ : * Յարեաւ
Յս̄՝ եւ գնայ զհետ նր̄ աշակերտօքն հանդերձ :
20 * Եւ ահա կին մի տառապեալ երկոտասանամեայ՝
մատուցեալ յետոյ մերձեցաւ 'ի դրօշակ հանդերձի
21 նորա։ * Քանզի ասէր 'ի միտս իւրում. թէ միայն
22 մերձենամ 'ի հանդերձս նորա՝ փրկիմ։ * Իսկ Յս̄
իբրեւ դարձաւ՝ եւ ետես զնա՝ ասէ. քաջալերեա՛ց
դուստր՝ հաւատք քո կեցուցին զքեզ. եւ փրկեցաւ
23 կինն 'ի ժամէն յայնմանէ : * Իբրեւ եկն Յս̄ 'ի տուն
իշխանին. եւ ետես զփողահարսն եւ զամբոխս յոյժ.
24 ասէ ցնոսա. 'ի բաց գնացէք : * Զի ոչ եթէ մեռեալ
25 է աղջիկդ՝ այլ ննջէ : * Եւ ծաղր առնէին զնա.
եւ իբրեւ ել ամբոխն 'ի բաց, եմուտ, կալաւ զձեռանէ
26 նր̄. եւ յարեաւ աղջիկն : * Եւ ել համբաւս այս
ընդ ամենայն երկիրն ընդ այն :
27 Գ.Գ. * Եւ մինչդեռ անցանէր ընդ այն Յս̄. զհետ

եղեն նորա կոյրք երկու՝ աղաղակէին՝ և ասէին. ողոր-
28 մեա՛ց մեզ որդի Դաւթի: *Եւ իբրև եկն ՚ի տուն, մա-
տեան առ նա կոյրքն. և ասէ ցնոսա Յս՟. հաւա-
տա՞յք, եթէ կարող եմ առնել ձեզ զայդ: ասեն ցնա՝
29 այո՛ Տր՟: *Յայնժամ մերձեցաւ յաչս նոցա՝ և ասէ.
30 ըստ հաւատոց ձերոց եղիցի ձեզ: *Եւ բացան աչք
նոցա. և սաստեաց նոցա Յս՟ և ասէ. զգո՛յշ կացէք՝
31 մի ոք գիտասցէ: *Եւ նոքա ելեալ համբաւեցին
32 զնա ընդ ամենայն երկիրն ընդ այն: *Եւ յելանե-
լն նոցա արտաքս՝ ահա մատուցին առ նա այր մի՝
33 համր դիւահար: *Եւ յելանել դիւին՝ խօսեցաւ
համրն. և զարմացան ժողովուրդքն՝ և ասեն. թէ
և ոչ երբէք երևեցաւ այսպիսի ինչ յԻէլ:
34 *Իսկ փարիսեցիքն ասէին. թէ իշխանաւն դիւաց
35 ԳԵ. հանէ դա զդևս: *Եւ շրջէր Յս՟ ընդ ամ՟
քաղաքս, և ընդ գիւղս. ուսուցանէր ՚ի ժողովուրդս
նոցա. և քարոզէր զաւետարանն արքայութեան. և
բժշկէր զամ՟ ախտս. և զամ՟ հիւանդութիս ՚ի ժո-
36 ղովրդեանն: *Եւ տեսեալ զժողովուրդսն գթացաւ
՚ի նոսա. զի էին աշխատեալք իբրև զոչխարս, որոց
37 ոչ իցէ հովիւ: *Յայնժամ ասէ ցաշակերտսն իւր.
38 հունձք բազումք են՝ և մշակք սակաւք: *Արդ՝
աղաչեցէք զՏէր հնձոց՝ [illegible] հանցէ մշակս ՚ի հուն
ձս իւր:

ԳԼ. Ժ:

1 Եւ կոչեցեալ առ ինքն զերկոտասան աշակերտսն իւր.
ետ նոցա իշխանութի այսոց պղծոց հանել զնս՝
2 և բժշկել զամ՟ ախտս՝ և զամ՟ հիւանդութիս: *Եւ
առաքելոյն երկոտասանից էին անուանք այսոքիկ:
առաջին Սիմոն անուանեալն Պետրոս. և Անդրէաս
3 եղբայր նր: *Յակոբոս զեբեդեայ՝ և Յովհաննէս
եղբայր նորա: Փիլիպպոս՝ և Բարթողիմէոս: Թօ-
մաս՝ և Մատթէոս մաքսաւոր: Յակոբոս ալփեայ՝ և
4 Ղեբէոս, որ անուանեցաւ Թադէոս: *Սիմոն կանա-
նացի. և Յուդա իսկարիովտացի՝ որ և մատնեաց զնա:
5 Զնոսա երկոտասանեսին առաքեաց Յս՟ պատուի-

րեաց նոցա, և ասէ: 'ի Ճանապարհս հեթանոսաց
մի երթայցէք. և 'ի քաղաքս սամարացւոց մի մտանիցէք:
6 *Այլ երթայք առաւել առ ոչխարս կորուսեալս
7 տանն իլի: *Եւ իբրև երթայցէք՝ քարոզեցէք՝ և ասացէք՝ զի մերձեալ է արքայութիւն
8 երկնից: *Զհիւանդս բժշկեցէք: զբորոտս սրբեցէք:
9 զդևս հանէք: ձրի առիք՝ և ձրի տուք: *Մի ըստանայք ոսկի՝ և մի արծաթ՝ և մի պղինձ 'ի գօտիս
10 ձեր: *Մ՝ի պարկ 'ի Ճանապարհի: և մի երկուս
հանդերձս: մի կօշիկս: մի ցուպս: զի արժանի է
11 մշակն կերակրոյ իւրոյ: *Յոր քաղաք մտանիցէք կամ
'ի գեօղ. հարցանիցէք թէ ո՞ է 'ի նմա արժանի. և
12 անդ լինիջիք՝ մինչև ելանիցէք անտի: *Եւ իբրև
մտանիցէք 'ի տունն, ողջոյն տայջիք նմա՝ և ասասջիք:
13 ողջոյն տանս այսմիկ: *Եթէ իցէ տունն
արժանի, եկեսցէ ողջոյնն ձեր 'ի վ͞ր ն͞ր. ապա թէ
ոչ իցէ արժանի, ողջոյնն ձեր առ ձեզ դարձցի:
14 *Եւ որ ոչ ընկալցի զձեզ. և ոչ լուիցէ բանից ձերոց՝
իբրև ելանիցէք 'ի տանէն կամ 'ի քաղաքէն
յայնմանէ, թօթափեսջիք զփոշին յոտից ձերոց:
15 *Ամէն ասեմ ձեզ՝ դիւրագոյն լիցի երկրին սոդոմայեցւոց
և գոմորայեցւոց յաւուրն դատաստանի՝ քան
16 Գ.Զ. քաղաքին այնմիկ: *Ահաւասիկ ես առաքեմ
զձեզ իբրև զոչխարս 'ի մէջ գայլոց: եղերուք այսուհետև
խորագէտք իբրև զօձս. և միամիտք իբրև
17 զաղաւնիս: *Զգոյշ լինիջիք 'ի մարդկանէ: զի մատնեսցեն
զձեզ յատեանս. և 'ի ժողովուրդս իւրեանց
18 տանջեսցեն զձեզ: *Եւ առաջի դատաւորաց և թագաւորաց
տանիցին զձեզ վ͞ս իմ 'ի վկայութիւն նոցա
19 և հեթանոսաց: *Այլ յորժամ մատնեսցեն զձեզ,
մի հոգայցէք՝ թէ ո՞պ՝ կամ զի՞նչ խօսիցիք:
20 *Զի ոչ եթէ դուք իցէք՝ որք խօսիցիքն. այլ Հոգին
21 հօր ձերոյ՝ որ խօսիցի 'ի ձեզ: *Մատնեսցէ
եղբայր զեղբայր 'ի մահ՝ և հայր զորդի: և յառնիցեն
որդիք 'ի վ͞ր հարց՝ և սպանանիցեն զնոսա:
22 *Եւ եղիջիք ատեցեալք յամենեցունց վ͞ս անուան
իմոյ: իսկ որ համբերեսցէ իսպառ, նա կեցցէ:
23 *Եւ յորժամ հալածեսցեն զձեզ 'ի քաղաքէս յայս-

միկ՝ փախիջիք յայլ։ և եթէ յայնմանէ հալածիցեն
զձեզ, փախիջիք ՚ի միւս։ ամէն ասեմ ձեզ՝ ոչ
սպառեսջիք զքաղաքս Իղի՝ մինչև եկեսցէ որդի մրդոյ։
24 * Ոչ է աշակերտ առաւել քան զվարդապետ. և
25 ոչ ծառայ քան զՏր իւր։ * Շատ իցէ աշակերտին՝
եթէ եղիցի իբրև զվարդապետ իւր. և ծառային՝
իբրև զՏր իւր։ եթէ զտանուտէրն բէեղզեբուղ
26 կոչեցին. որչափ ևս առաւել զընտանիս նորա։ * Մի
այսուհետև երկնչիցիք ՚ի նոցանէ։ զի ոչ ինչ է ՚ի ծածուկ՝
որ ոչ յայտնեսցի. և գաղտնի, որ ոչ ծանիցի։
27 * Զոր ասեմ ձեզ ՚ի խաւարի՝ ասացէք ՚ի լոյս։ և
զոր լուէք յունկանէ, քարոզեցէք ՚ի վր տանեաց։
28 * Եւ մի երկնչիք յայնցանէ՝ որք սպանանեն զմարմին,
և զոգի ոչ կարեն սպանանել։ այլ երկերուք
դուք առաւել յայնմանէ՝ որ կարող է զոգի և զմարմին
29 կորուսանել ՚ի գեհեննի։ * Ո՞չ ապաքէն երկու
ճնճղուկք դանկի միոջ վաճառին՝ և մի ՚ի նոցանէ
յերկիր ոչ անկցի առանց Հօր ձերոյ։
30 * Այլ ձեր և ամ իսկ հեր գլխոյ թուեալ է։
31 * Եւ արդ՝ մի երկնչիցիք՝ զի լաւէք քան զբազում
32 ճնճղուկս։ * Ամենայն որ խոստովանեսցի յիս առաջի
մարդկան, խոստովանեցայց և ես զնմանէ առաջի
33 Հօր իմոյ՝ որ յերկինս է։ * Եւ որ ուրասցի զիս
առաջի մարդկան, ուրացայց և ես զնա առաջի Հօր
34 իմոյ՝ որ յերկինս է։ * Մի համարիք եթէ եկի արկանել
խաղաղութի յերկիր։ ոչ եկի արկանել
35 խաղաղութի, այլ սուր։ * Քանզի եկի քակել
զայր ՚ի հօրէ իւրմէ։ և զդուստր ՚ի մօրէ իւրմէ։ և
36 զհարսն ՚ի սկեսրէ իւրմէ։ * Եւ թշնամիք առն ընտանիք
37 իւր։ * Որ սիրէ զհայր կամ զմայր առաւել
քան զիս՝ ոչ է ինձ արժանի։ և որ սիրէ զուստր
կամ զդուստր առաւել քան զիս՝ չէ ինձ արժանի։
38 * Եւ որ ոչ առնու զխաչ իւր՝ և գայ զկնի իմ, չէ
39 ինձ արժանի։ * Որ գտանէ զանձն իւր, կորուսցէ
զնա։ և որ կորոյս զանձն իւր վասն իմ, գտցէ զնա։
40 * Որ ընդունի զձեզ. զիս ընդունի. և որ զիս ընդունի,
41 ընդունի զառաքիչն իմ։ * Որ ընդունի զմարգարէ
յանուն մարգարէի, զվարձս մարգարէի առցէ։

եւ որ ընդունի զարդար յանուն արդարոյ՝ զվարձս
42 արդարոյ առցէ։ * Եւ որ արբուսցէ միում ՚ի փոքրկանցս
յայսցանէ բաժակ մի ջուր ցուրտ միայն յանուն
աշակերտի. ամէն ասեմ ձեզ՝ ոչ կորուսցէ
զվարձս իւր։

ԳԼ. ԺԱ.

1 Եւ եղեւ իբրեւ կատարեաց Յս՟ զպատուէր երկոտասանից
ԳԼ. աշակերտացն իւրոց, գնաց անտի
քարոզել եւ ուսուցանել ՚ի քաղաքս նոցա։
2 * Իսկ յօհաննէս իբրեւ լուաւ ՚ի բանտին զգործսն
3 Քի՟, առաքեաց ՚ի ձեռն աշակերտացն իւրոց։ * Եւ
ասէ ցնա. դո՞ւ ես՝ որ գալոցն ես, եթէ այլում ակն
4 կալցուք։ * Պատասխանի ետ Յս՟ եւ ասէ ցնոսա.
գնացէք եւ պատմեցէք յօհաննու, զոր լուայք եւ
5 տեսէք։ * Կոյրք տեսանեն. կաղք գնան. բորոտք
սրբին. եւ խուլք լսեն. եւ մեռեալք յառնեն. եւ աղքատք
6 աւետարանին։ * Եւ երանեալ է՝ որ ոչ գայթագղեսցի
7 յիս։ * Եւ իբրեւ նոքա գնացին, սկսաւ
Յս՟ ասել ցժողովուրդն զյօհաննէ. զի՞նչ ելէք տեսանել
յանապատին. եղէգն շարժուն ՚ի հողմոյ։
8 * Այլ զի՞նչ ելէք տեսանել, մարդ ՚ի հանդերձս
փափկութեան զարդարեալ. ահաւասիկ որք զփափուկսն
զգեցեալք են՝ ՚ի տունս թագաւորաց են։
9 * Այլ զի՞նչ ելէք տեսանել. մարգարէ. այո՛ ասեմ
10 ձեզ՝ եւ առաւելեւս քան զմարգարէ։ * Զի սա է՝
վասն որոյ գրեալն է՝ ահա ես առաքեմ զհրեշտակ
իմ առաջի երեսաց քոց՝ որ պատրաստեսցէ զճանապարհս
11 քո առաջի քո։ * Ամէն ասեմ ձեզ՝ չէ յարուցեալ
՚ի ծնունդս կանանց մեծ քան զյօհաննէս
մկրտիչ։ բայց փոքրիկն յարքայութեան երկնից մեծ
12 է քան զնա։ * Բայց յաւուրցն յօհաննու մկրտչի
մինչեւ ցայժմ արքայութիւն երկնից բռնադատի՝ եւ
13 բռունք յափշտակեն զնա։ * Քանզի ամ՟ օրէնք եւ
մարգարէք մինչեւ ցյօհաննէս մարգարէացան։
14 * Եւ թէ կամիք ընդունել, նա է եղիա՝ որ գալոցն է։
15 * Որ ունիցի ականջս լսելոյ, լուիցէ։

16 * Ո՞ւմ նմանեցուցից զազգս զայս։ նման է մանկտւոյ՝
որք նստիցին ՚ի հրապարակս՝ կարդայցեն զընկերս
17 իւրեանց։ * Ե՛ւ ասիցեն․ փողս հարաք ձեզ՝ և ոչ
18 կաքաւեցէք․ ողբացաք ձեզ՝ և ոչ կոծեցէք։ * Եկն
յօհաննէս, ոչ ուտէր՝ և ոչ ըմպէր․ և ասեն՝ դև
19 գոյ ՚ի նմա։ * Եկն որդի մարդոյ՝ ուտէ և ըմպէ․
և ասեն ․ ահա այր կերօղ և արբեցօղ՝ բարեկամ
մաքսաւորաց և մեղաւորաց։ և արդարացաւ իմաստու-
20 թիւն յորդւոց իւրոց։ * Յայնժամ սկսաւ նախատել
զքաղաքսն՝ յորս եղեն բազում զօրութիւնք նորա՝ և
21 ոչ ապաշխարեցին։ * Վայ քեզ քորազին։ վայ քեզ
բէթսայիդայ։ զի եթէ ՚ի տիւրոս և ՚ի սիդոն եղեալ
էին զօրութիւնքն որք ՚ի ձեզ եղեն, վաղուց արդեօք
22 խորգով և մոխրով ապաշխարեալ էր։ * Բայց ասեմ
ձեզ՝ դիւրագոյն լինի երկրին տիւրոսի և սիդոնի
23 յաւուրն դատաստանի քան ձեզ ։ * Ե՛ւ դու կափառ-
նաում․ մի մինչև յերկինս բարձրասցիս՝ այլ մինչև
՚ի դժոխս իջցես ։ զի եթէ ՚ի սոդոմ եղեալ էին
զօրութիւնքն՝ որք ՚ի քեզ եղեն, ապաքէն կային ևս
24 մինչև ցայսօր ։ * Բայց ասեմ ձեզ՝ եթէ երկրին
սոդոմացւոց դիւրագոյն լինի յաւուրն դատաստանի
քան ձեզ ։
25 ԳԿ․ * Յայնմ ժամանակի պատասխանի ետ Յս՟՝ և
ասէ։ գոհանամ զքէն Հայր՝ Տր՟ երկնի և երկրի․ զի
ծածկեցեր զայս յիմաստնոց և ՚ի գիտնոց՝ և յայ-
26 տնեցեր տղայոց։ * Այո՛ Հայր։ զի այսպ՟ հաճոյ եղև
27 առաջի քո։ * Ամ՟ ինչ տուաւ ինձ ՚ի Հօրէ իմմէ։
և ոչոք ճանաչէ զորդի՝ եթէ ոչ Հայր։ և ոչ զՀայր
ոք ճանաչէ՝ եթէ ոչ որդի։ և ում որդին կամիցի
28 յայտնել ։ * Եկա՛յք առ իս ամ՟ վաստակեալք և
29 բեռնաւորք՝ և ես հանգուցից զձեզ ։ * Առէք զլուծ
իմ ՚ի ձեզ ։ և ուսարուք յինէն՝ զի հեզ եմ․ և
խոնարհ սրտիւ։ և գտջիք հանգիստ անձանց ձերոց։
30 * Զի լուծ իմ քաղցր է․ և բեռն իմ փոքրոգի։

ԳԼ: ԺԲ:

1 Յայնժամ գնաց Յս̃ ը̃ արտորայսն նոցա 'ի շաբա-
ԳԲ. թու: և աշակերտքն նր̃ քաղցեան: և սկսան
2 հասկ կորզել և ուտել: * Փարիսեցիքն իբրև տե-
սին՝ ասեն ցնա: ահաւասիկ աշակերտքն քո գործեն.
3 զոր ո՛չ է օրէն 'ի շաբաթու: * Եւ նա ասէ ցնոսա.
ո՞չ իցէ ընթերցեալ ձեր՝ զոր արար Դաւիթ. յոր-
4 ժամ քաղցեաւն. և որք ընդ նմայն էին: * Զի արդ
եմուտ 'ի տունն Այ. և եկեր զհացն առաջաւորու-
թեն: զոր ո՛չ էր օրէն նմա ուտել. և ո՛չ որոց ընդ
5 նմայն էին. բայց միայն քահանայից: * Կամ թէ
չիցէ՞ ընթերցեալ յօրէնս՝ զի 'ի շաբաթս քահա-
նայքն 'ի տաճարին պղծեն զշաբաթսն՝ և անմեղք
6 են: * Բայց ասեմ ձեզ՝ զի մեծ քան զտաճարն է
7 աստ: * Եւ եթէ · գիտէիք զինչ է՝ զողորմութիւն
կամիմ, և ո՛չ զզոհ: ապա ո՛չ դատապարտէիք դուք
8 զանպարտսն: * Զի Տէր է շաբաթու որդի մարդոյ:
9 * Եւ գնացեալ անտի Յս̃ եկն 'ի ժողովուրդն նոցա:
10 * Եւ անդ էր այր մի. որոյ ձեռն գօսացեալ էր:
հարցին ցնա՝ և ասեն: եթէ պա՞րտ իցէ 'ի շաբա-
11 թու բժշկել՝ զի չարախօսեսցեն զնմանէ: * Եւ նա
ասէ ցնոսա. ո՞վ է 'ի ձէնջ մարդ. որոյ իցէ ոչխար մի.
և անկանիցի այն 'ի խորխորատ 'ի շաբաթու. միթէ
12 ո՞չ ունիցի՝ և յարուցանիցէ զնա: * Իսկ արդ որչափ
ևս առաւել է մարդ քան զոչխար: ապաուրեմն պարտ
13 է 'ի շաբաթու բարիս գործել: * Յայնժամ ասէ
ցայրն. ձգեա՛ զձեռն քո. և նա ձգեաց. և եղև ողջ
14 իբրև զմիւսն: * Իսկ փարիսեցիքն ելեալ արտաքս՝
խորհուրդ առին զնմանէ. թէ ոպ̃ կորուսցեն զնա:
15 * Եւ Յս̃ իբրև գիտաց, մեկնեցաւ անտի: և գնացին
զհետ նր̃ ժողովուրդքն՝ և բժշկեաց զամենեսեան:
16 * Եւ սաստեաց նոցա՝ զի մի՛ յայտնեսցեն զնմանէ
17 ումեք: * Զի լցցի, որ ասացաւն 'ի ձեռն եսայեայ
18 մարգարէի: * Ահա մանուկ իմ՝ զոր ընտրեցի. և
սիրելի իմ՝ ընդ որ հաճեցաւ անձն իմ: եդից զոգի
իմ 'ի վր̃ նր̃ և իրաւունս հեթանոսաց պատմեսցէ:
19 * Ոչ հակառակեսցի՝ և ո՛չ աղաղակեսցէ. և ո՛չ ոք

20 լուիցէ 'ի հրապարակս զբարբառ նր՟։ * Զեղէգն
ջախջախեալ ոչ փշրեսցէ՝ եւ զպատրոյգն առկայ-
ծեալ ոչ շիջուսցէ. մինչեւ հանցէ ի յաղթութի զդա-
21 տաստանս։ * Եւ յանուն նորա հեթանոսք յուսասցին։
22 ԴԳ. * Յայնժամ մատուցան առ նա դիւահար
մի կոյր՝ եւ համր. եւ բժշկեաց զնա։ ապ՟ զի համրն՝
23 եւ կոյրն խօսէր եւ տեսանէր։ * Զարմանային ամ՟
ժողովուրդքն՝ եւ ասէին. միթէ սա՞ իցէ Քն՟ որդի
24 դաւթի։ * Բայց փարիսեցիքն իբրեւ լուան՝ ասեն.
ոչ իւիք հանէ դա զդեւս՝ եթէ ոչ բէեղզեբուղաւ
25 իշխանաւն դիւաց։ * Իբրեւ գիտաց Յս՟ զխորհուրդս
նոցա՝ ասէ ցնոսա. ամենայն թագաւորութիւն բա-
ժանեալ յանձն իւր՝ աւերի. եւ ամ՟ քաղաք, կամ տուն
26 բաժանեալ յանձն իւր՝ ոչ կացցէ։ * Եւ եթէ սա-
տանայ զսատանայ հանէ՝ յանձն իւր բաժանեցաւ.
27 արդ զի՞արդ կացցէ թագաւորութի նր՟։ * Եւ եթէ
ես բէեղզեբուղաւ հանեմ զդեւս՝ որդիքն ձեր ի՞ւ
հանիցեն. վասնորոյ նոքա եղիցին ձեր դատաւորք։
28 * Ապա թէ Հոգւով Այ՟ հանեմ զդեւս՝ ուրեմն
29 հասեալ է 'ի վերայ ձեր արքայութի Այ՟։ * Կամ
զի՞արդ կարէ ոք մտանել 'ի տուն հզօրի՝ եւ զգոր-
ծիս նր՟ յափշտակել. եթէ ոչ նախ կապիցէ զհզօրն՝
30 եւ ապա զտուն նորա յափշտակիցէ։ * Որ ոչ ընդ իս
է՝ հակառակ իմ է։ եւ որ ոչ ժողովէ ընդ իս,
31 ցրուէ ։ * Վս՟ այդորիկ ասեմ ձեզ. ամ՟ մեղք եւ
հայհոյութիք թողցին մարդկան. բայց Հոգւոյն հայ-
32 հոյութի մի թողցի. * Եւ որոք ասիցէ բան զոր-
դւոյ մարդոյ՝ թողցի նմա. բայց որ զՀոգւոյն սրբոյ
ասիցէ՝ մի թողցի նմա. մի յայսմ աշխարհի. եւ մի
33 'ի հանդերձելումն։ * Կամ արարէք զծառն բարի
եւ զպտուղ նորա բարի. կամ արարէք զծառն չար՝
եւ զպտուղ նր՟ չար։ քանզի 'ի պտղոյ անտի ծառն
34 ճանաչի։ * Ծնունդք իժից։ զի՞արդ կարիցէք բա-
րիս խօսիլ՝ որք չարքդ էք։ քանզի 'ի յաւելորդաց
35 սրտի խօսի բերան։ * Մարդ բարի՝ 'ի բարի գան-
ձուց սրտի իւրոյ հանէ զբարիս։ եւ մարդ չար՝ 'ի
36 չար գանձուց սրտի իւրոյ հանէ զչարիս ։ * Բայց
ասեմ ձեզ. թէ ընդ ամ՟ դատարկ բանի՝ զոր խօ-

սիցեն մարդիկ՝ տացեն համար յաւուրն դատաս-
37 տանի: * Զի ՚ի բանից քոց արդարասցիս : և ՚ի
38 Դ Ի. բանից քոց պարտաւորեսցիս: * Յայնժամ պա-
տասխանի ետուն նմա ոմանք ՚ի դպրացն և ՚ի փա-
րիսեցւոց՝ և ասեն: Վարդապետ՝ կամիմք նշան ինչ
39 տեսանել ՚ի քէն: * Նա պատասխանի ետ՝ և ասէ
ցնոսա: Ազգ չար և շնացող նշան խնդրէ. և նշան մի
40 տացի նմա. բայց նշանն Յովնանու մարգարէի: * Զի ոպ՟
էր Յովնան ՚ի փոր կիտին զերիս տիւս և զերիս գիշերս:
այնպէս եղիցի և որդի մարդոյ ՚ի սիրտ երկրի զե-
41 րիս տիւս և զերիս գիշերս: * Արք նինուէացիք
յարիցեն ՚ի դատաստանի ընդ ազգիս ընդ այսմիկ՝
և դատապարտեսցեն զսա՝ զի զղջացան ՚ի քարոզու-
թեան Յովնանու: և արդ՝ աւասիկ մեծ քան զՅովնան
42 է աստ * Դշխոյն հարաւոյ յարիցէ ՚ի դատաստանի
ընդ ազգիս ընդ այսմիկ՝ և դատապարտեսցէ զսա:
զի եկն ՚ի ծագաց երկրի լսել զիմաստութիւն Սո-
43 ղօմոնի: և ահա մեծ քան զՍողօմոն է աստ: * Այլ
յորժամ այսն պիղծ ելանէ ՚ի մարդոյ՝ շրջի ընդ ան-
ջրդին տեղիս: խնդրէ հանգիստ՝ և ոչ գտանէ :
44 * Յայնժամ ասէ՝ դարձայց ՚ի տուն իմ՝ ուստի ելի :
և եկեալ գտանէ զնա պարապորդ մաքրեալ և յար-
45 դարեալ : * Յայնժամ երթայ՝ և առնու ընդ իւր
եօթն այլ այսս չարագոյնս քան զինքն՝ և մտեալ
բնակի անդ: և լինի մարդոյն այնորիկ յետինն չար
քան զառաջինն : այնպէս եղիցի և ազգիս այսմիկ
46 չարի: * Մինչդեռ նա ընդ ժողովուրդսն խօսէր.
ահա մայր նր՟ և եղբարք նր՟ կային արտաքոյ՝ և
47 խնդրէին խօսել ընդ նմա: * Եւ ասէ ոմն ցնա՝ ահա
մայր քո՝ և եղբարք քո՝ կան արտաքոյ՝ և խնդրեն
48 խօսել ընդ քեզ : * Նա պատասխանի ետ այնմիկ՝
49 որ ասացն ցնա. և ասէ: ո՞վ են իմ եղբարք: * Եւ
ձգեալ զձեռն իւր յաշակերտսն ասէ՝ ահա մայր
50 իմ և եղբարք իմ: * Զի որ առնիցէ զկամս հօր
իմոյ՝ որ յերկինսն է, նա է իմ եղբայր՝ և քոյր՝
և մայր:

ԳԼ. ԺԳ:

1 2 Յաւուր յայնմիկ ելեալ Յս 'ի տանէն՝ նստաւ
Գե. առ ծովեզերբն * Եւ ժողովեցան առ նա ժողո-
վուրդք բազումք. մինչեւ մտանել նմա 'ի նաւ. եւ
նստիլ: եւ ամ ժողովուրդն կայր առ ծովեզերբն:
3 * Եւ խօսէր ընդ նոսա բազում առակօք՝ եւ ասէր.
4 * Ահա ել սերմանահան սերմանել: եւ 'ի սերմա-
նելն իւրում, էր որ անկաւ առ ճանապարհաւ՝ եւ
5 եկն թռչուն երկնից՝ եւ եկեր զնա: * Եւ այլն ան-
կաւ յապառաժի. ուր ոչ գոյր հող բազում. եւ
վաղվաղակի բուսաւ՝ վասն չգոյէ հիւթոյ երկրին:
6 * 'Ի ծագել արեւու տապացաւ. եւ զի ոչ գոյին ար-
7 մատք, չորացաւ: * Եւ այլն անկաւ 'ի մէջ փշոց.
8 եւ ելին փուշքն եւ հեղձուցին զնա: * Եւ այլն ան-
կաւ յերկիր բարի. եւ տայր պտուղ: էր որ հարիւ-
րաւոր: եւ էր որ վաթսնաւոր: եւ էր որ երեսնա-
9 ւոր: * Որ ունիցի ականջս լսելոյ, լուիցէ:
10 * Եւ մատուցեալ աշակերտքն ասեն ցնա. ընդէ՞ր ա-
11 ռակօք խօսիս ընդ նոսա: * Նա պատասխանի ետ
եւ ասէ ցնոսա: քանզի ձեզ տուեալ է գիտել զխոր-
հուրդ արքայութեն երկնից: եւ նոցա չէ տուեալ:
12 * Զի որ գուցէ՝ տացի նմա եւ յաւելցի: եւ որ
ոչն գուցէ, եւ զոր ունիցին, բարձցի 'ի նմանէ:
13 * Վասն այդորիկ առակօք խօսիմ ընդ նոսա. զի տե-
սանեն՝ եւ ոչ տեսանեն: եւ լսեն՝ եւ ոչ լսեն՝ եւ ոչ
14 առնուն 'ի միտ: * Եւ կատարի առ նոսա մարգարէ-
ութիւն Եսայեայ՝ որ ասէ: լսելով լուիջիք՝ եւ մի
իմասջիք: եւ տեսանելով տեսջիք՝ եւ մի տեսջիք:
15 * Զի թանձրացաւ սիրտ ժողովրդեանս այսորիկ՝
եւ ականջօք իւրեանց ծանունս լուան: եւ զաչս իւ-
րեանց կափուցին. զի մի երբեք տեսցեն աչօք՝ եւ
ականջօք լուիցեն. եւ սրտիւք իմասցին. եւ դարձ-
16 ցին, եւ բժշկեցից զնոսա: * Բայց ձեր երանի է
աչաց՝ զի տեսանեն: եւ ականջաց ձերոց, զի լսեն:
17 * Ամէն ասեմ ձեզ. զի բազում մարգարէք եւ ար-
դարք ցանկացան տեսանել՝ զոր տեսանէքդ՝ եւ ոչ
18 տեսին. եւ լսել՝ զոր լուայքդ՝ եւ ոչ լուան: * Եւ

արդ՝ լուարուք դուք զառակ սերմանացանին։
19 * Ամ՟ որ լսէ զբանն արքայութեան՝ և ոչ առնու ՚ի
միտ. գայ չարն՝ և յափշտակէ զսերմանեալն ՚ի սիրտ
նր՟. այն է՝ որ առ ճանապարհաւն սերմանեցաւ։
20 * Եւ որ յապառաժին սերմանեցաւ, այն է՝ որ իբրև
լսէ զբանն. և վաղվաղակի խնդութ՟ ընդունի զնա։
21 * Բայց քանզի ոչ ունի արմատս յինքեան. այլ
առ ժամանակ մի է. ՚ի լինել նեղութեան և հալածանաց
վասն բանին՝ վաղվաղակի գայթագղի։
22 * Իսկ որ ՚ի մէջ փշոյն սերմանեցաւ՝ այն է՝ որ իբրև
լսէ զբանն, և հոգք աշխարհիս, և պատրանք մեծութեան
հեղձուցանեն զբանն. և լինի անպտուղ։
23 * Իսկ որ յերկիրն բարի սերմանեցաւ. այն է, որ
իբրև լսէ զբանն, և ՚ի միտ առնու. և տայ զպտուղ.
է՝ որ հարիւր. և է՝ որ վաթսուն. և է՝ որ երեսուն։
24 Գ. Ջ. * Այլ առակ էարկ առ նոսա՝ և ասէ. նմանեցաւ
արքայութ՟ի երկնից առն. որ սերմանիցէ
25 զսերմն բարի յագարակի իւրում։ * Եւ ՚ի քուն
լինել մարդկան. եկն թշնամին նր՟. և ցանեաց ի՟վ
26 զորոմն ՚ի մէջ ցորենոյն՝ և գնաց։ * Եւ իբրև
բուսաւ խոտն՝ և արար զպտուղ. ապա երևեցաւ և
27 որոմն։ * Մատուցեալ ծառայք տանուտեառն ասեն
ցնա։ Տր՟, ոչ սերմն բարի սերմանեցեր յագարակին
28 քում։ արդ՝ ուստի՞ ունիցի զորոմն։ * Եւ նա
ասէ ցնոսա՝ այր թշնամի արար զայն։ ՝ ասեն ցնա
ծառայքն. կամի՞ս, զի երթիցուք՝ քաղեսցուք զայն
29 ՚ի բաց։ * Եւ նա ասէ ցնս՟՝ մի. գուցէ մինչ քաղիցէք
զորոմն. և զցորեանն ընդ նմին ՚ի բաց խլիցէք։
30 * Թո՛յլ տուք երկոցունցն աճել ՚ի միասին մինչև ՚ի
հունձս։ և ՚ի ժամանակի հնձոցն՝ ասացից ցհնձօղսն.
քաղեցէք նախ զորոմն, և կապեցէք զայդ խրձունս
առ ՚ի յայրել։ և զցորեանն ժողովեցէք ՚ի
31 շտեմարանն իմ։ * Այլ առակ էարկ առ նոսա՝ և
ասէ։ նման է արքայութ՟ի երկնից հատոյ մանանխոյ.
զոր առեալ մարդոյ սերմանեաց յագարակի իւրում։
32 * Որ փոքրիկ է քան զամ՟ սերմանիս։ և յորժամ աճիցէ,
մեծ է քան զամ՟ բանջարս։ և լինի ծառ՝ մինչև
գալ թռչնոց երկնից՝ և հանգչել յոստս նորա։

33 * Այլ առակ խօսեցաւ ընդ նոսա և ասէ։ Նման է արքայութ՟ի երկնից խմորոյ· զոր առեալ կնոջ թաքոյց ’ի գրիւս երիս ալեր՝ մինչև ա՟մ խմորեցաւ։
34 * Զայս ա՟մ խօսեցաւ Յ՟ս առակօք ը՟ ժողովուրդսն·
35 և առանց առակի ոչինչ խօսէր ընդ նոսա։ * Զի լցցի ասացեալն ’ի մարգարէէն· բացից առակօք ըզբերան իմ· բղխեցից զծածկեալսն ’ի սկզբանէ աշխարհի։
36 ԳԻ· * Յայնժամ թողեալ Յ՟ս զժողովուրդսն, եկն ’ի տունն։ մատեան առ նա աշակերտքն ն՟ր՝ և ասեն·
37 մեկնեա՛ մեզ զառակ որոմանցն ագարակին։ * Նա պատասխանի ետ՝ և ասէ ցնոսա· որ սերմանէ զսերմն
38 բարի՝ է որդի մարդոյ։ * Եւ ագարակն աշխարհս է։ սերմն բարի նոքա են, որք որդիքն արքայութ՟ե են·
39 իսկ որոմն որդիք չարին են։ * Եւ թշնամին որ վարեաց զայն, սատանայ է։ և հունձն կատարած աշ-
40 խարհիս է։ և հնձօղքն հրեշտակք են։ * Որպէս ժողովի որոմն և ’ի հուր այրի· այնպէս եղիցի ’ի կա-
41 տարածի աշխարհիս։ * Առաքեսցէ որդի մարդոյ ըզհրեշտակս իւր· և ժողովեսցեն յարքայութ՟է նորա զամենայն գայթագղութ՟իս՝ և զայնոսիկ որք գոր-
42 ծեն զանօրէնութ՟ի։ * Եւ արկցեն զնոսա ’ի հնոց հրոյ՝ անդ եղիցի լալ և կրճել ատամանց։
43 * Յայնժամ արդարքն ծագեսցին իբրև զարեգակն յարքայութ՟ե երկնից· որ ունիցի ականջս լսելոյ
44 լուիցէ։ * Դարձեալ՝ նման է արքայութիւն երկնից գանձի ծածկելոյ յագարակի՝ զոր գտեալ մարդոյ թաքոյց՝ և ’ի խնդութ՟է անտի երթայ վաճառէ զա՟մ ինչ՝ զոր ունի· և գնէ զագարակն զայն։
45 * Դարձեալ՝ նման է արքայութ՟ի երկնից առն վաճառականի՝ որ խնդրիցէ մարգարիտս գեղեցիկս։
46 * Եւ գտեալ մի պատուական մարգարիտ՝ երթեալ վաճառեաց զա՟մ զոր ինչ ունէր՝ և գնեաց զայն
47 մարգարիտ։ * Դարձեալ՝ նման է արքայութ՟ի երկնից ուռկանի արկելոյ ’ի ծով՝ և յամենայն ազգաց ժո-
48 ղովելոյ։ * Որ իբրև լցաւ, հանեալ ’ի ցամաք՝ և նստեալ ժողովեցին զբարի՝ բարին յամանս՝ և զխո-
49 տանն ’ի բաց ընկեցին։ * Այնպէս եղիցի ’ի կատարածի աշխարհիս· ելցեն հրեշտակք՝ և մեկնեսցեն

50 զչարս 'ի միջոյ արդարոց: * Եւ արկցեն զնոսա 'ի
հնոց հրոյ. անդ եղիցի լալ և կրճել ատամանց:
51 * Ասէ ցնոսա Յս՟ իմացայք զայս ամ՟. ասեն ցնա.
52 այո՞ Տր՟: * Եւ նա ասէ ցնոսա՝ վասն այսորիկ ամ՟
դպիր աշակերտեալ արքայութե՟ երկնից՝ նման է
առն տանուտեառն, որ հանէ 'ի գանձէ իւրմէ զնոր
53 և զհին: * Եւ եղև իբրև կատարեաց Յս՟ զառակս
54 զայսոսիկ՝ փոխեցաւ անտի: * Եւ եկեալ 'ի գաւառ
իւր՝ ուսուցանէր զնոսա : մինչև զարմանալ նոցա և
ասել: ուստի՞ իցէ այս իմաստութի՟ և զօրու-
55 թի՟ք : * Ո՞չ սա է հիւսանն որդի՝ ո՞չ մայր սորա
կոչի Մարիամ. և եղբարք սորա յակոբոս. և յո-
56 սէս՝ և սիմօն՝ և յուդաս: * Եւ քորք սորա ամե-
նեքեան առ մեզ են: արդ ուստի՞ է սմա այս ամենայն:
57 * Եւ գայթագղէին 'ի նա. և Յս՟ ասէ ցնոսա՝ չի՛ք
մարգարէ անարգ՝ եթէ ոչ յիւրում գաւառի և
58 յիւրում տան: * Եւ ոչ արար անդ զօրութի՟ս բա-
զումս վասն անհաւատութե՟ նոցա:

ԳԼ. ԺԴ.

1 2 Յայնմ ժամանակի լուաւ հերովդէս չորրորդա-
ԵՐՒ. պետ զլուր Յի: * Եւ ասէ ցծառայս իւր. նա է
յովհաննէս մկրտիչ՝ նա յարեաւ 'ի մեռելոց. և վասն
3 այնորիկ զօրութի՟ք լինին նովաւ: * Քանզի հերո-
դէս կալեալ զյովհաննէս՝ կապեաց զնա՝ և եդ 'ի
բանտի վասն հերովդիադայ կնոջ փիլիպպոսի եղբօր
4 նորա: * Զի ասէր ցնա յովհաննէս՝ չէ արժան քեզ
5 ունել զդա: * Եւ կամէր զնա սպանանել՝ բայց
երկնչէր 'ի ժողովրդենէ անտի: քանզի իբրև զմար-
6 գարէ ունէին զնա: * Եւ իբրև եղեն ծնունդք
հերովդի՝ կաքաւեաց դուստրն հերովդիադայ 'ի մէջ
7 բազմականացն. և հաճոյ թուեցաւ հերովդի: * Ուս-
տի և երդմամբ խոստացաւ տալ նմա զինչ և խնդ-
8 րեսցէ: * Եւ նա յառաջագոյն խրատեալ 'ի մօրէ
իւրմէ. տուր ինձ ասէ այսր 'ի վերայ սկտեղ զգլուխն
9 յովհաննու մկրտչի: * Եւ տրտմեցաւ թագաւորն.
բայց վասն երդմանցն և բազմականացն հրամայեաց

10 տալ նմա։ * Եւ առաքեաց, գլխատեաց զյօհաննէս
11 ՚ի բանտի։ * Եւ բերաւ գլուխն նր̄ սկտեղբ՝ և տուաւ
12 աղջկանն. և տարաւ առ մայր իւր։ * Եւ մատուցեալ
աշակերտքն նորա՝ բարձին զմարմինն և թաղեցին.
13 ԵԳ. և եկեալ պատմեցին Յի։ * Եւ իբրև լուաւ
Յս̄՝ գնաց անտի նաւու յանապատ տեղի առանձինն ։
իբրև լուան ժողովուրդքն, գնացին զհետ նորա
14 հետի ՚ի քաղաքաց անտի ։ * Եւ իբրև ել, ետես
ժողովուրդ բազում. և գթացաւ ՚ի նոսա։ և բժշ
15 կեաց զհիւանդս նոցա ։ * Իբրև ընդերեկս եղև,
մատեան առնա աշակերտքն՝ և ասեն, տեղիս անա
պատ է՝ և օրս տարաժամեալ. արձակեա զժողովուրդսդ՝
զի երթիցեն շուրջ ՚ի շէնսն՝ գնեսցեն
16 իւրեանց կերակուրս։ * Եւ ասէ Յս̄. ոչինչ պիտոյ
է դոցա երթալ՝ դուք տուք դոցա ուտել ։
17 * Եւ նոքա ասեն ցնա՝ ոչինչ ունիմք աստ. բայց
18 հինգ նկանակ և երկուս ձկունս։ * Եւ ասէ ցնոսա՝
19 բերէք այսր զայն։ * Եւ հրամայեաց բազմեցուցանել
զժողովուրդսն, ՚ի վերայ խոտոյ. և առեալ
զհինգ նկանակն և զերկուս ձկունսն, հայեցաւ յերկինս։
օրհնեաց՝ և եբեկ՝ և ետ ցաշակերտսն ըզ
նկանակսն. և աշակերտքն ժողովրդոցն։
20 * Կերին ամենեքեան և յագեցան . և բարձին
21 զնշխարս կոտորոցն երկոտասան սակառի լի ։ * Եւ
որք կերինն, էին արք իբրև հինգ հազարք. թող
22 ԵՂ. զկանայս և զմանկտիս։ * Եւ ստիպեաց վաղվաղակի
զաշակերտսն մտանել ՚ի նաւ՝ և յառաջել
յայնկոյս. մինչ ինքն զժողովուրդսն արձակիցէ ։
23 * Եւ իբրև արձակեաց զժողովուրդսն, ել ՚ի լեառն
առանձինն կալ յաղօթս։ և իբրև ընդ երեկս եղև,
24 անդ էր միայն։ * Եւ նաւն մեկնեալ էր ՚ի ցամաքէն
բազում ասպարիսօք ծփեալ յալեացն. քանզի
25 ընդդէմ էր հողմն։ * Եւ ՚ի չորրորդ պահու գիշերոյն
եկն առ նոսա Յս̄ գնալով ՚ի վերայ ծովուն։
26 * Իբրև տեսին զնա աշակերտքն, զի գնայր ՚ի վերայ
ծովուն, խռովեցան. և առ ահին աղաղակեցին ։
27 * Եւ վաղվաղակի խօսեցաւ ընդ նոսա Յս̄՝ և ասէ.
28 քաջալերեցարուք՝ ես եմ, մի երկնչիք ։ * Պատաս-

խանի ետ նմա պետրոս՝ եւ ասէ՝ Տ՟ր ,եթէ դու ես,
հրամայեա ինձ գալ առ քեզ ՚ի վերայ ջրոյս։
29 * Եւ նա ասէ՝ եկ. եւ իջեալ ՚ի նաւէն պետրոս՝
30 գնայր ՚ի վերայ ջրոյն՝ եւ եկն առ Յս՟. * Եւ տեսեալ
զհողմն սաստիկ՝ երկեաւ. եւ իբրեւ սկսաւ ընկղմել՝
31 աղաղակեաց, եւ ասէ. Տէր՝ փրկեա զիս։ * Եւ
վաղվաղակի Յս՟ ձգեաց զձեռն իւր՝ կալաւ զնա եւ
ասէ. թերահաւատ՝ ընդէ՞ր երկմտեցեր։
32 * Եւ իբրեւ ել ՚ի նաւն՝ հանդարտեցաւ հողմն։
33 * Եւ որք ՚ի նաւուն էին մատեան եւ երկիրպագին
34 նմա՝ եւ ասեն՝ արդարեւ որդի Այ՟ ես դու։ * Եւ անցեալ
35 ՚ի ցամաք, եկին ՚ի գեննեսարէթ։ * Եւ իբրեւ
ծանեան զնա արք տեղւոյն այնորիկ, առաքեցին ընդ
ամ՟ գաւառն՝ եւ ածին առ նա զամենայն հիւանդս։
36 * Եւ աղաչէին զնա. զի գոնէ միայն ՚ի քղանցս հանդերձի
նր՟ մերձեսցին. եւ որք միանգամ մերձեցան՝
փրկեցան։

ԳԼ. ԺԵ։

1 2 Յայնժամ մատեան առ Յս՟ որք յԵ՟ղմէ փարիսեցիքն
ԵԵ· եւ դպիրք. եւ ասեն։ * Ընդէ՞ր աշակերտքըն
քո անցանեն զաւանդութ՟բ ծերոցն. զի ոչ
3 լուանան զձեռս՝ յորժամ զհաց ուտեն։ * Նա պատասխանի
ետ եւ ասէ ցնս՟. իսկ դուք ընդէ՞ր անցանէք
զպատուիրանաւն Այ՟ վասն ձերոյ աւանդութե՟։
4 * Զի Ած՟ ասաց. պատուեա զհայր քո եւ զմայր։
5 * Եւ որ բամբասէ զհայր՝ կամ զմայր՝ մահու վախճանեսցի
6 ։ * Եւ դուք ասէք՝ որ ասիցէ ցհայր իւր՝
կամ ցմայր իւր. թէ պատարագ է՝ զոր յինէն օգտիցիս
։ Եւ ոչ պատուիցէ զհայր իւր եւ զմայր։
եւ խոտէք զբանն Աստուծոյ վս՟ ձերոյ աւանդութե՟նն։
7 * Կեղծաւորք՝ բարւոք մարգարէացաւ ՚ի վերայ ձեր
8 եսայի՝ եւ ասէ ։ * Ժողովուրդս այս շրթամբք պատուէ
զիս՝ եւ սիրտ իւրեանց հեռացեալ մեկուսի
9 է յինէն ։ * Զուր պաշտեն զիս. ուսուցանեն վար-
10 դապետութիւն՝ զմարդկան պատուիրեալս։ * Եւ կոչեալ
առ ինքն զժողովուրդն՝ ասէ ցնս՟. լուարուք,

11 և 'ի միտ առէք։ * Ո՛չ որինչ մտանէ ընդ բերան,
պղծէ զմարդ. այլ որինչ ելանէ 'ի բերանոյ՝ այն
12 պղծէ զմարդ։ * Յայնժամ մատուցեալ ոմանք յաշակերտացն
նր՟ ասեն։ գիտես՝ զի փարիսեցիքն իբրև
13 լուա՛ն զբանն՝ գայթագղեցան։ * Նա պատասխանի
ետ նոցա և ասէ։ ամ՟ տունկ զոր ոչ տնկեաց Հայր
իմ երկնաւոր, խլեսցի։
14 * Թո՛յլ տուք զնոսա՝ կոյրք են՝ կուրաց առաջնորդք։
կոյր կուրի յորժամ առաջնորդէ՝ սխալէ՝ և երկոքին
15 'ի խորխորատ անկանին։ * Պատասխանի ետ
նմա պետրոս և ասէ՝ մեկնեա մեզ զառակս զայս։
16 * Ասէ Յս՟ տակաւին և դուք անմիտք էք։
17 * Եւ՛ ոչ իմանայք, եթէ ամ՟ որ մտանէ 'ի բերան,
18 յորովայն երթայ՝ և արտաքս ելանէ։ * Իսկ որ ելանէ
'ի բերանոյ՝ 'ի սրտէ անտի գայ. և այն պղծէ
19 զմարդն։ * Զի 'ի սրտէ ելանեն խորհուրդք չարք։
սպանութիւնք։ շնութիւնք։ պոռնկութիւնք։ գողութիւնք։
20 սուտ վկայութիւնք։ հայհոյութիւնք։ * Այս ամ՟ է՝
որ պղծէ զմարդն. այլ անլուայ ձեռօք ուտել՝ ոչ
21 պղծէ զմարդ։ * Եւ՛ ելեալ անտի Յի՟ գնաց 'ի կողմանս
22 տիւրոսի և սիդոնի։ * Եւ՛ ահա կին մի քանանացի
'ի սահմանաց անտի նոցա. ելեալ աղաղակէր
և ասէր։ ողորմեաց ինձ Տր՟ որդի դաւթի.
23 դուստր իմ չարաչար այսահարի։ * Եւ՛ նա ոչ ետ
նմա պատասխանի։ և մատուցեալ աշակերտքն նր՟
աղաչէին զնա և ասէին. արձակեա զնա՝ զի աղաղակէ
24 զհետ մեր։ * Նա պատասխանի ետ և ասէ.
ոչ ուրեք առաքեցայ՝ եթէ ոչ առ ոչխարս կորուսեալս
25 տանն իլի՟։ * Եւ՛ նա մատուցեալ երկիրպագանէր
նմա և ասէր. Տր՟ օգնեա ինձ։
26 * Պատասխանի ետ նմա և ասէ. ոչ է բարւոք՝
27 առնուլ զհաց մանկանց և արկանել շանց։ * Եւ՛ նա
ասէ՝ այո՛ Տր՟։ քանզի և շունք կերակրին 'ի փշրանաց
28 անկելոց 'ի սեղանոյ տեառն իւրեանց։ * Յայնժամ
պատասխանի ետ նմա Յս՟ և ասէ. ո՛վ կին
դու. մեծ են հաւատք քո։ եղիցի քեզ՝ ոպ՟ և կամիս։
և բժշկեցաւ դուստր նր՟ 'ի նմին ժամու։
29 ԵԼ. * Եւ՛ գնացեալ անտի Յի՟, եկն 'ի ծովեզրն գալիլ՝

*

30 եացւոց։ Եւ ելեալ 'ի լեառն՝ նստէր անդ։ * Մատեան
առ նա ժողովուրդք բազումք՝ որք ունէին
ընդ իւրեանս, կաղս՝ կոյրս՝ համերս՝ միակողմանիս.
և այլս բազումս։ և ընկեցին զնոսա առ ոտս նր՝ և
31 բժշկեաց զնոսա։ * Մինչև զարմանալ ժողովրդոյն՝
որք տեսանէին։ զի համերքն խօսէին։ կաղք գնային։
միակողմանիք բժշկէին։ կոյրք տեսանէին. և
32 փառաւոր առնէին զԱծ իլի։ * Եւ կոչեալ առ ինքն
Յի զաշակերտսն ասէ։ գթամ 'ի ժողովուրդդ զիարդ՝
երեք աւուրք են՝ զի կան առ իս. և ո՛չ ունին
զինչ ուտիցեն։ և արձակել զդոսա նօթիս՝ չկամիմ.
գուցէ նքթիցին զճանապարհայն ։
33 * Ասեն ցնա աշակերտքն։ արդ մեզ յանապատի
աստ ուստի՞ իցէ այնչափ հաց՝ մինչև՝ յագեցուցանել
34 զայսչափ ժողովուրդ։ * Եւ ասէ ցնոսա Յիսուս.
քանի՞ նկանակ ունիք։ և նոքա ասեն. եօթն. և սակաւ
35 ձկունս։ * Եւ հրամայեաց ժողովրդեանն բազմել
36 'ի վերայ գետնոյ։ * Եւ առեալ զեօթն նկանակսն
և զձկունսն՝ գոհացաւ՝ և եբեկ՝ և ետ աշակերտացն.
և նոքա ժողովրդեանն։
37 * Կերին ամենեքեան և յագեցան։ և բարձին զնշխարս
38 կոտորոցն եօթն զամբիւղ լի։ * Եւ որք կերինն՝ էին արք իբրև չորք հազարք՝ թող զկանայս
39 և զմանկտիս։ * Իբրև արձակեաց զժողովուրդսն,
ել 'ի նաւ՝ և եկն 'ի սահմանս մագդաղ'եայ ։

Գլ. ԺԶ։

1 Եւ մատուցեալ փարիսեցիքն՝ և սադուկեցիք
փորձելով խնդրէին 'ի նմանէ նշան յերկնից
2 ցուցանել նոցա։ * Նա պատասխանի ետ՝ և ասէ
ցնոսա. յորժամ երեկոյ լինի՝ ասէք, պարզ լինիցի.
3 զի կարմրացեալ է երկին։ * Եւ առաւօտու՝ այսօր
մրրիկ. զի շառագունի տրտմութբ երկին. արդ
զերեսս երկնի կարէք քննել. իսկ զնշան ժամանակիս
4 ո՞չ կարէք գիտել։ * Ազգ չար և շնացող
նշան խնդրէ՝ և նշան մի տացի նմա՝ բայց նշանն
յօնանու մարգարէի։ և եթող զնոսա և գնաց։

5 * Գնացին և աշակերտքն յայնկոյս. և մոռացան
6 առնուլ զհաց։ *Ասէ ցնոսա Յս̃՝ տեսէք և
զգոյշ լերուք ՚ի խմորոյ սադուկեցւոյն և փարիսեցւոյն։
7 * Նոքա խորհէին ընդ միմեանս՝ և ասէին
8 թէ զհաց ոչ բարձաք։ *Գիտաց Յս̃ և ասէ. զի՞
խորհիք ՚ի միտս ձեր թերահաւատք՝ եթէ հաց ոչ
9 ունիք։ *Տակաւին չիմանայք՝ և ոչ յիշէք զհինգ
նկանակսն ՚ի հինգ հազարսն. և քանի՞ սակառի բարձիք։
10 *Եւ՛ ո՛չ զեօթն նկանակսն ՚ի չորս հազարսն.
11 և քանի՞ զամբիւղս բարձիք։ * Արդ՝ զի՞արդ ոչ
իմանայք՝ եթէ ոչ վս̃ հացի ասացի ձեզ՝ զգոյշ
լինիլ ՚ի խմորոյ սադուկեցւոց և փարիսեցւոյն.
12 *Յայնժամ ՚ի միտ առին. թէ ոչ ասաց զգուշանալ
՚ի խմորոյ՝ այլ յաղանդոյ փարիսեցւոյն և սադուկեցւոց։
13 ԶԿ. *Եւ՛ եկեալ Յս̃ ՚ի կողմանս փիլ՚իպպեայ
կեսարեայն, հարցանէր ցաշակերտսն. և ասէր։ զո՞ ոք
14 ասեն զինէն մարդիկն՝ թէ իցէ որդի մարդոյ։ *Եւ՛
նոքա ասեն. ոմն զյօհաննէս մկրտիչ։ և այլք զեղ՚իայ՝
15 և կէսք զերեմիայ. կամ զմիոք ՚ի մարգարէից։ *Ասէ
ցնոսա. իսկ դուք զո՞ ասէք զինէն թէ իցեմ։
16 *Պատասխանի ետ սիմօն պետրոս՝ և ասէ ցնա.
17 դու ես Քս̃ն որդի Այ̃ կենդանւոյ։ *Պատասխանի
ետ Յս̃ և ասէ ցնա. երանի քեզ սիմօն որդի
յօնանու՝ զի մարմին և արիւն ոչ յայտնեաց քեզ՝
18 այլ Հայր իմ որ յերկինս է։ *Եւ՛ ես քեզ ասեմ.
զի դու ես վէմ. և ՚ի վր̃ այդր վիմի շինեցից զեկեղեցի
իմ. և դրունք դժոխոց զնա մի յաղթահարեսցեն։
19 *Եւ՛ տաց քեզ փականս արքայութե̄ երկնից։
և զոր միանգամ կապեսցես յերկրի, եղիցի
կապեալ յերկինս։ և զոր արձակեսցես յերկրի,
20 եղիցի արձակեալ յերկինս։ *Յայնժամ սաստեաց
աշակերտացն. զի մի ումեք ասիցեն՝ թէ նա է
21 Քս̃ն։ *Յայնմհետէ սկսաւ Յս̃ ցուցանել աշակերտացն
իւրոց՝ թէ պարտ է նմա երթալ յե̄մ։ և
բազում չարչարանս չարչարիլ ՚ի քահանայապետից՝
և ՚ի դպրաց՝ և ՚ի ծերոց ժողովրդեանն՝ և սպանանիլ.
22 և յերիր աւուր յառնել։ *Եւ՛ առեալ
զնա մեկուսի պետրոսի. սկսաւ կագել ընդ նմա

և ասել. քա՛ւ լիցի քեզ Տր̅. մի՛ եղիցի քեզ այդ։
23 * Ե՛ւ նա դարձեալ ՚ի պետրոս՝ ասէ։ Երթ յետս
իմ սատանայ. գայթագղութի իմ ես։ զի ո՛չ խոր-
24 հիս դու զԱյ̅ն. այլ զմարդկան։ * Յայնժամ
Յս̅ ասէ յաշակերտսն իւր։ Եթէ ոք կամի զկնի
իմ գալ՝ ուրասցի զանձն. և առցէ զխաչ իւր.
25 և եկեսցէ զկնի իմ։ * Զի որ կամիցի զանձն իւր
կեցուցանել կորուսցէ զնա։ և որ կորուսցէ զանձն
26 իւր վասն իմ, գտցէ զնա։ * Զի՛նչ օգտիցի մարդ՝
եթէ զաշխարհս ամ̅ շահեսցի. և զանձն իւր տու-
ժեսցէ։ կամ զի՛նչ տայցէ մարդ փրկանս ընդ անձին
27 իւրոյ։ * Զի գալոց է որդի մարդոյ փառօք հօր
իւրոյ՝ հանդերձ հրեշտակօք իւրովք։ և յայնժամ
28 հատուսցէ իւրաքանչիւր ըստ գործս իւր։ * Ամէն
ասեմ ձեզ՝ զի իցեն ոմանք ՚ի դոցանէ՝ որք աստ
կան. որք ո՛չ ճաշակեսցեն զմահ՝ մինչև տեսցեն
զորդի մարդոյ եկեալ արքայութեամբ իւրով։

ԳԼ. ԺԷ.

1 Ե՛ւ յետ վեց աւուր առնու Յս̅ զպետրոս՝ և
զյակոբոս՝ և զյօհաննէս զեղբայր նորա. և հա-
նէ զնոսա ՚ի լեառն մի բարձր առանձինն։
2 * Ե՛ւ այլակերպեցաւ առաջի նոցա. և լուսաւորե-
ցան երեսք նորա իբրև զարեգակն. և հանդերձք
3 նորա եղեն սպիտակք իբրև զլոյս։ * Ե՛ւ ահա երև-
եցան նոցա մովսէս և եղիա՝ որք խօսէին ընդ նմա։
4 * Պատասխանի ետ պետրոս՝ և ասէ ցՅս̅. Տր̅՝ բա-
րւոք է մեզ աստ լինել. եթէ կամիս՝ արասցուք
երիս տաղաւարս՝ մի քեզ։ և մի մովսէսի. և մի
5 եղիայի։ * Ե՛ւ մինչդեռ նա խօսէր. ահա ամպ լու-
սաւոր հովանի եղև ՚ի վերայ նոցա։ ձայն եղև յամ-
պոյն՝ և ասէ. դա է որդի իմ սիրելի՝ ընդ որ
6 հաճեցայ. դմա լուարուք։ * Իբրև լուան աշակերտքն,
անկան ՚ի վերայ երեսաց իւրեանց. և երկեան յոյժ։
7 * Ե՛ւ մատուցեալ Յս̅՝ բուռն էհար զնոցանէ՝ և
8 ասէ. յոտն կացէք՝ և մի՛ երկնչիք։ * Ամբարձին
զաչս իւրեանց՝ և ոչ զոք տեսին՝ բայց միայն զՅս̅։

9 * Եւ մինչ դեռ իջանէին ՚ի լեռնէ անտի, պատուէ-
րեաց նոցա Յս՟ և ասէ. մի ումեք ասիցէք զտե-
սիլդ՝ մինչև որդի մարդոյ ՚ի մեռելոց յարիցէ։
10 * Հարցին ցնա աշակերտքն և ասեն։ զի՞արդ դպիրքն
11 ասեն, թէ եղ՚իայի նախ պարտ է գալ։ * Պատասխա-
նի ետ Յս՟ և ասէ ցնոսա. եղ՚իա գայ՝ և հաստա-
12 տեսցէ զամենայն։ * Այլ ասեմ ձեզ՝ զի եղ՚իա
եկեալ իսկ է. և ոչ ծանեան զնա՝ այլ արարին
ընդ նմա՝ զոր ինչ կամեցան. նոյնպ՟ և որդի մար-
13 դոյ չարչարելոց է ՚ի նոցանէ։ * Յայնժամ ՚ի միտ
առին աշակերտքն. թէ վասն յօհաննու մկրտչի
14 ԶԲ. ասաց ցնոսա։ * Եւ իբրև եկին ՚ի ժողովուրդն,
մատեաւ այր մի՝ ՚ի ծունր իջանէր և ասէր. Տր՟
ողորմեա՛ որդւոյ իմում. զի լուսնոտի՝ և չարաչար
հիւանդանայ. բազում անգամ անկանի ՚ի հուր՝
15 և երբեմն ՚ի ջուր։ * Եւ մատուցի զնա աշակերտացն
քոց՝ և ոչ կարացին բժշկել։
16 * Պատասխանի ետ Յս՟ և ասէ. ո՞վ ազգ անհաւատ և
թիւր։ մինչև երբ իցեմ ը՟ ձեզ. մինչև յերբ ան-
սայցեմ ձեզ։ ած զնա առ իս՝ և ածին զնա առ
17 Յս՟։ * Եւ սաստեաց ՚ի նա Յս՟ և ել ՚ի նմանէ
դևն. և բժշկեցաւ մանուկն ՚ի ժամէն յայնմանէ։
18 * Յայնժամ մատեան աշակերտքն առանձինն, և
ասեն ցՅս՟. մեք ընդէ՞ր ոչ կարացաք հանել զնա։
19 * Եւ նա ասէ ցնոսա՝ վասն թերահաւատութե
ձերոյ. ամէն ասեմ ձեզ՝ եթէ ունիցիք հաւատս
քան զհատ մանանխոյ. ասասջիք լերինս այսմիկ՝
փոխեաց աստի անդր. և փոխեսցի. և ոչինչ ան-
20 հնարին լինիցի ձեզ։ * Բայց այս ազգ՝ ոչ ելանէ՝
եթէ ոչ աղօթիւք և պահօք։
21 ԶԳ. * Եւ մինչդեռ շրջէին նոքա ՚ի գալ՚իլ՚եայ՝ ասէ
ցնոսա Յս՟։ մատնելոց է որդի մարդոյ ՚ի ձեռս
22 մարդկան։ * Եւ սպանցեն զնա՝ և յերիր աւուր
23 յարիցէ. և տրտմեցան յոյժ։ * Իբրև եկին նոքա
՚ի կափառնայում, մատեան, որք զերկդրամեանն
պահանջէին առ պետրոս՝ և ասեն. վարդապետն
24 ձեր ո՞չ տայ զերկդրամեանն։ և ասէ, այո։ * Եւ
իբրև եմուտ ՚ի տուն՝ յառաջեաց քան զնա Յս՟ և

ասէ. զի՞նչ թուի քեզ Սիմոն. թագաւորք երկրի
յումմէ՞ առնուն զհարկս՝ կամ զհասն՝ յորդւոց
25 իւրեանց, թէ յօտարաց։ * Եւ իբրեւ ասաց թէ
յօտարաց. ասէ ցնա Յս՝ ապա ուրեմն ազատք են
26 որդիքն։ * Բայց զի մի գայթագղեցուսցուք զնոսա.
երթ ՚ի ծով՝ և ընկեա զկարթ. և զառաջին
ձուկն որ ելանիցէ, ա՛ռ և բա՛ց զբերան նորա. և
գտանիցես զսատեր. և զայն առեալ տացես ընդ
իմ և ընդ քո։

ԳԼ. ԺԸ։

1 Յայնմ աւուր մատեան աշակերտքն առ Յս՝ և
ասեն։ Ո՞վ իցէ ՚ի մէջ մեծ յարքայութեան երկնից։
2 * Եւ կոչեաց առ ինքն Յս զմանուկ մի. կացոյց
3 զնա ՚ի մէջ նոցա։ * Եւ ասէ՝ ամէն ասեմ
ձեզ. եթէ ոչ դարձջիք, և եղիջիք իբրև զմանկտի,
4 ո՛չ մտանիցէք յարքայութիւն երկնից։ * Արդ՝
որ խոնարհեցուսցանէ զանձն իբրև զմանուկս զայս՝
5 նա՛ է մեծ յարքայութեան երկնից։ * Եւ որ ոք ընկալցի
զմանուկ մի այսպիսի յանուն իմ, զիս ընդունի։
6 * Եւ որ ոք գայթագղեցուսցէ զմի ՚ի փոքրկանցս
յայսցանէ՛ յիս հաւատացելոց՝ լաւ է նմա եթէ
կախիցի երկան իշոյ ընդ պարանոց նր՝ և ընկղմիցի
7 ՚ի խորս ծովու։ * Վա՛յ աշխարհի ՚ի գայթագղութեց.
հարկ է գալ գայթագղութեց. բայց վա՛յ
մարդոյն այնմիկ՝ յոյր ձեռն գայցէ գայթագղութի։
8 * Եթէ ձեռն քո կամ ոտն գայթագղեցուցանէ
զքեզ՝ հա՛տ զնա՝ և ընկեա՛ ՚ի քէն. լաւ իցէ քեզ
միաձեռանի կամ կաղ մտանել ՚ի կեանս. քան թէ
երկուս ձեռս և երկուս ոտս ունել, և անկանել
9 ՚ի հուրն յաւիտենական։ * Եւ եթէ ակն քո
գայթագղեցուցանէ զքեզ, խլեա՛ զնա և ընկեա՛ ՚ի
քէն. լաւ իցէ քեզ միականի մտանել ՚ի կեանս. քան
երկուս աչս ունիլ՝ և անկանել ՚ի գեհեն հրոյն։
10 ԶԳ. * Զգո՛յշ լերուք՝ մի՛ արհամարհիցէք զմի ՚ի
փոքրկանցս յայսցանէ. ասեմ ձեզ. զի հրեշտակք նոցա
յերկինս հանապազ տեսանեն զերեսս հօր իմոյ որ

11 յերկինս է։ * Զի եկն որդի մարդոյ կեցուցանել
12 զկորուսեալն ։ * Զիա՞րդ թուի ձեզ․ եթէ լինիցի
մարդոյ հարիւր ոչխար՝ և մոլորիցի մի ՚ի
նոցանէ, ո՞չ թողուցու զիննսուն և զինն ոչխարսն
՚ի լերինս․ և երթիցէ խնդրիցէ զմոլորեալն։
13 * Եւ եթէ լինիցի գտանել զնա․ ամէն ասեմ ձեզ․
զի ուրախ լինի ՚ի վերայ նորա առաւել՝ քան ՚ի վերայ
14 իննսուն և իննունյն, որք չիցեն մոլորեալք։ * Այսպէս
ո՛չ են կամք առաջի Հօր իմոյ՝ որ յերկինս է՝
թէ կորիցէ մի ՚ի փոքրկանցս յայսցանէ։
15 * Եթէ մեղիցէ քեզ եղբայր քո՝ երթ յանդիմանեա՛
զնա՝ յորժամ դու և նա միայն իցէք․ եթէ
16 լուիցէ քեզ, շահեցար զեղբայր քո։ * Ապա թէ
ոչ լուիցէ քեզ, ա՛ռ ընդ քեզ միւս ևս՝ կամ երկուս․
զի ՚ի բերանոյ երկուց և երից վկայից հաստատեսցի
17 ամենայն բան։ * Իսկ եթէ նոցա ոչ լուիցէ՝
ասասջի՛ր յեկեղեցւոջ․ ապա եթէ և եկեղեցւոյն
ոչ լուիցէ, եղիցի քեզ իբրև զհեթանոսն
18 և զմաքսաւոր։ * Ամէն ասեմ ձեզ․ զոր կապիցէք
յերկրի՝ եղիցի կապեալ յերկինս․ և զոր արձակիցէք
յերկրի՝ եղիցի արձակեալ յերկինս ։
19 * Դարձեալ ասեմ ձեզ․ եթէ երկու ՚ի ձէնջ
միաբանիցին յերկրի վասն ամ̅ իրաց․ զինչ և խնդրեսցեն՝
եղիցի նոցա ՚ի Հօրէ իմմէ՝ որ յերկինս է։
20 * Զի ուր իցեն երկու կամ երեք ժողովեալ յանուն
21 իմ, անդ եմ ես ՚ի մէջ նոցա ։ * Յայնժամ
մատեաւ առ նա պետրոս՝ և ասէ․ Տ՛ր̅՝ քանի՞ցս
անգամ եթէ մեղիցէ ինձ եղբայր իմ, և թողից
22 նմա․ մինչև ցեօթն անգամ։ * Ասէ ցնա Յս̅․ ո՛չ
ասեմ քեզ՝ թէ մինչև ցեօթնանգամ․ այլ մինչև
23 ցեօթանասնեկին եօթն ։ * Վս̅ այսորիկ նմանեցաւ
արքայութի̅ երկնից առն թագաւորի․ որ կամեցաւ
24 համար առնուլ ՚ի մէջ ծառայից իւրոց։ * Եւ իբրև
սկսաւ առնուլ՝ մատուցաւ առ նա պարտապան մի
25 բիւր քանքարոյ։ * Իբրև ոչ ունէր հատուցանել՝
հրամայեաց վաճառել զնա տէրն նր̅․ և զկին նր̅՝
և զորդիս՝ և զամ̅ որ՛ զինչ և ունիցի՝ և հատուցանել
26 ։ * Եւ անկեալ ծառայն երկիրպագանէր

նմա և ասէր․ երկայնամիտ լեր առ իս՝ և զամե-
27 նայն հատուցից քեզ։ * Գթացեալ տէր ծառային
այնորիկ՝ արձակեաց զնա․ և զփոխն եթող նմա։
28 * Եւ ելեալ ծառայն այն եգիտ զմի ՚ի ծառայակցաց
իւրոց․ որ պարտէր նմա հարիւր դահեկան։ և
կալեալ զնա խեղդէր՝ և ասէր․ հատո՛ ինձ, զոր
29 պարտիսն։ * Արդ՝ անկեալ ծառայակիցն առ ոտս
նորա՝ աղաչէր զնա և ասէր՝ երկայնամիտ լեր առ
30 իս՝ և հատուցից քեզ։ * Եւ նա ոչ կամէր․ այլ
չոքաւ էարկ զնա ՚ի բանտ՝ մինչև հատուսցէ զպարտ-
31 սն։ * Իբրև տեսին ծառայակիցքն նորա, որինչ
եղեն՝ տրտմեցան յոյժ։ և եկեալ ցուցին տեառն
32 իւրեանց զա՟մ որինչ եղեն։ * Յայնժամ կոչեաց
զնա տէրն իւր և ասէ։ ծառա՛յ չար։ զա՟մ զպարտսն
33 թողի քեզ՝ վասնզի աղաչեցեր զիս։ * Իսկ արդ՝
ոչ էր պարտ և քեզ ողորմիլ ծառայակցին քում․
34 ո՟պ և ես քեզ ողորմեցայ։ * Եւ բարկացեալ տէրն
նր՟՝ մատնեաց զնա դահճաց․ մինչև հատուսցէ զա՟մ
35 զպարտսն։ * Նոյնպէս և Հայր իմ որ յերկինս է՝
արասցէ ձեզ․ եթէ ոչ թողուցուք իւրաքանչիւր
եղբօր իւրում ՚ի սրտից ձերոց զյանցանս նոցա։

ԳԼ․ ԺԹ։

1 Եւ եղև՝ իբրև կատարեաց Յս՟ զբանս զայսոսիկ,
Զկ․ փոխեցաւ ՚ի գալիլեէ՝ և եկն ՚ի սահմանս
2 հրէաստանի յայնկոյս յորդանանու։ * Եւ գնացին
զհետ նր՟ ժողովուրդք բազումք՝ և բժշկեաց զնս՟
3 անդ։ * Եւ մատուցեալ առ նա փարիսեցիքն, փոր-
ձէին զնա․ եթէ արժա՟ն իցէ ումեք արձակել զկին
իւր ըստ ամենայն վնասու։
4 * Պատասխանի ետ նոցա և ասէ․ չիցէ՞ ընթեր-
ցեալ ձեր՝ եթէ որ հաստատեաց ՚ի սկզբանէ՝ ա-
5 րու և էգ արար զնոսա, և ասէ։ * Վասն այսորիկ
թողցէ այր զհայր և զմայր՝ և երթիցէ զհետ կը-
նոջ իւրոյ՝ և եղիցին երկոքեան ՚ի մարմին մի։
6 * Ապա ուրեմն ոչ են երկու՝ այլ մի մարմին․ արդ
7 զոր Ած՟ զուգեաց՝ մարդ՝ մի՛ մեկնեսցէ։ * Ասեն

ցնա՝ իսկ մօւսէս ընդէ՞ր պատուիրեաց մեզ տալ
8 թուղթ մեկնելոյ՝ և արձակել: *Ասէ ցնոսա. Մօւսէս
վասն խստասրտութ՟են ձերոյ հրամայեաց ձեզ
արձակել զկանայս ձեր. այլ ՚ի սկզբանէ ոչ եղև
9 այնպէս: *Բայց ասեմ ձեզ՝ զի ամենայն, որ արձակեսցէ
զկին իւր և ոչ վ՟ս պոռնկութ՟են, և առնիցէ
այլ՝ շնայ. և որ զարձակեալն առնիցէ՝ շնայ:
10 *Ասեն ցնա աշակերտքն իւր. եթէ այդպէս վնաս
իցէ ընդ այր և ընդ կին, լաւ է չամուսնանալ:
11 *Եւ նա ասէ ցնոսա՝ ոչ ամենեքին բաւականք են
12 այդմ բանի, այլ որոց տուեալ է: *Զի են ներքինիք՝
որք յորովայնէ մօր իւրեանց ծնան այնպէս,
և են ներքինիք. որք ՚ի մարդկանէ եղեն ներքինիք.
և են ներքինիք՝ որք զանձինս իւրեանց արարին
ներքինիս վասն արքայութ՟են երկնից. որ կարօղ
13 է տանել՝ տարցի: *Յայնժամ մատուցին առ
նա մանկտի. զի ձեռն դիցէ ՚ի վերայ նոցա՝ և աղօթս
արասցէ: և աշակերտքն նորա սաստէին նոցա:
14 *Ասէ Յ՟ս թոյլ տուք մանկտւոյդ՝ և մի արգելուք
զդոսա գալ առ իս: զի այդպիսեացդ է արքայութ՟ի
15 ԶԶ. երկնից: *Եւ եդեալ ձեռն ՚ի վ՟ր նոցա՝ գնաց
16 անտի: *Եւ ահա մատուցեալ ոմն ասէ: վարդապետ
բարի. զի՞նչ բարի գործեցից՝ զի ընդունիցիմ
17 զկեանսն յաւիտենականս: *Եւ նա ասէ ցնա. զի՞
հարցանես զիս զբարւոյ. մի է բարի. եթէ կամիս
՚ի կեանսն յաւիտենականս մտանել՝ պահեա զպատուիրանսն:
18 *Ասէ ցնա՝ զո՞րս. ասէ ցնա Յ՟ս. զմի սպանաներն՝
19 և մի շնար՝ և մի սուտ վկայեր :*Պատուեա
զհայր քո և զմայր. և սիրեսցես զընկեր քո իբրև
20 զանձն քո: *Ասէ ցնա պատանին, զայդ ամենայն
պահեցի ՚ի մանկութէ իմմէ: արդ ի՞ւ իւիք պակաս
21 իցեմ: *Ասէ ցնա Յ՟ս: եթէ կամիս կատարեալ լինել,
երթ՝ վաճառեա զինչս քո՝ և տուր աղքատաց.
և ունիցիս գանձս յերկինս. և եկ զկնի իմ:
22 *Իբրև լուաւ պատանին զբանն, գնաց տրտմեալ.
23 զի ունէր ստացուածս բազումս: *Ասէ Յ՟ս ցաշակերտսն.
ամէն ասեմ ձեզ: զի դժուարաւ մտցէ մեծատուն
24 յարքայութ՟ի երկնից: *Դարձեալ ասեմ ձեզ.

դիւրին է մալխոյ մտանել ընդ ծակ ասղան քան
25 մեծատան յարքայութիւն Այ մտանել: *Իբրև լուան
աշակերտքն՝ զարմացան յոյժ. և ասեն, իսկ ո՞ կա-
26 րիցէ ապրել: *Հայեցաւ ՚ի նոսա Յս, և ասէ: առ ՚ի
մարդկանէ այդ անկար է. այլ առ յԱյ ամենայն ինչ
27 զօրաւոր: *Յայնժամ պատասխանի ետ պետրոս և
ասէ ցնա. աւասիկ մեք թողաք զամենայն և եկաք զկնի
28 քո. արդ զի՞նչ լինիցի մեզ: *Ասէ ցնոսա Յս. ամէն
ասեմ ձեզ. զի դուք՝ որք եկիք զկնի իմ, ՚ի միւ-
սանգամ գալստեանն. յորժամ նստցի որդի մարդոյ
յաթոռ փառաց իւրոց, նստջիք և դուք յերկոտա-
սան աթոռ՝ դատել զերկոտասան ազգս իսրայէլի:
29 *Եւ ամենայն որք եթող տուն. կամ զեղ-
բարս՝ կամ զքորս՝ կամ զհայր՝ կամ զմայր՝ կամ
զկին՝ կամ զորդիս՝ կամ զագարակս վասն անուան
իմոյ. հարիւրապատիկ առցէ՝ և զկեանսն յաւիտե-
30 նականս ժառանգեսցէ: *Բազումք եղիցին առա-
ջինք յետինք՝ և յետինք առաջինք:

Գլ. Ի:

1 Քանզի նման է արքայութիւն երկնից առն տանու-
տեառն. որ ել ընդ առաւօտս ՚ի վարձու ունել
2 մշակս յայգի իւր: *Եւ էարկ վարձս մշակացն աւ-
ուրն դահեկան. և առաքեաց զնոսա յայգի իւր:
3 *Եւ ելեալ զերրորդ ժամու՝ ետես այլս՝ զի կա-
4 յին դատարկք ՚ի հրապարակս: *Ասէ և ցնոսա:
երթայք և դուք յայգի իմ. և որ ինչ արժան
5 իցէ տաց ձեզ: *Գնացին և նոքա: և դարձեալ
ելեալ զվեց ժամու՝ և զինն ժամու՝ արար նոյնպէս:
6 *Եւ զմետասաներորդ ժամու ելեալ եգիտ այլս. զի
կային դատարկք. ասէ և ցնոսա՝ ընդէ՞ր կայք
7 աստ զօրս ցերեկ դատարկք: *Ասեն ցնա՝ զի ոչ ոք
կալաւ զմեզ ՚ի վարձու. ասէ ցնս՝ երթայք և
դուք յայգին. և որ ինչ արժան է՝ առնուցուք:
8 *Եւ իբրև երեկոյ եղև՝ ասէ Տր այգւոյն ցգործա-
կալեաց իւր. կոչեա զմշակսն՝ և տուր նոցա զվարձս
9 սկսեալ ՚ի յետնոյն մինչև ցառաջինսն: *Իբրև

եկին որք զմետասաներորդ ժամուն. առին մէն մի
10 դահեկան ։ * Եկեալ և առաջինքն համարէին թէ
աւելի առնուցուն. և առին մէն մի դահեկան և
11 նոքա ։ * Իբրև առին, տրտնջէին զտանուտեառնէն
12 և ասէին ։ * Թէ դոքա յետինքդ մի ժամ գործեցին՝
և հաւասարակորդս մեզ արարեր զդոսա. որք
13 զծանրութիւն աւուրն բարձաք և զտօթ ։ * Նա
պատասխանի ետ միում ՚ի նոցանէ և ասէ՝ ընկեր
չզրկեմ զքեզ. ո՞չ դահեկանի միոջ սակ արկեր ընդ
14 իս։ * Առ զքոյդ՝ և երթ. եթէ կամիցիմ յետնոցս
15 տալ՝ որպէս և քեզ ։ * Եթէ չիցէ՞ ինձ իշխանութի
յիմս առնել զինչ և կամիմ. կամ թէ ակն քո
16 չար է. զի ես առատ եմ ։ * Այսպ եղիցին յետինք
առաջինք՝ և առաջինք յետինք. զի բազումք
17 են կոչեցեալք. և սակաւք են ընտրեալք։ * Իբրև
ելանէր Յս յեէմ. էառ զերկոտասանսն առանձինն.
18 և ՚ի ճանապարհին ասէ ցնոսա։ * Ահաւասիկ ելանեմք յեէմ. և որդի մարդոյ մատնեսցի քահանայապետից՝ և դպրաց. և դատապարտեսցեն զնա ՚ի մահ։
19 * Եւ մատնեսցեն զնա հեթանոսաց՝ այպանել՝ և
հարկանել՝ և ՚ի խաչ հանել. և յերիր աւուր յա-
20 րիցէ։ * Յայնժամ մատեաւ առ նա մայր որդւոցն
զեբեդեայ որդւովքն իւրովք հանդերձ. երկիրպա-
21 գանէր՝ և խնդրէր ինչ ՚ի նմանէ։ * Եւ նա ասէ
ցնա. զի՞նչ կամիս. ասէ ցնա. ասա՛, զի նստցին
սոքա երկու որդիքս իմ. մի ընդ աջմէ քումմէ՝ և մի
22 ընդ ահեկէ յարքայութեան քում ։ * Պատասխանի ետ
Յս և ասէ. ո՛չ գիտէք զինչ խնդրէք. կարէ՞ք ըմ-
պել զբաժակն, զոր ես ըմպելոց եմ. կամ զմկր-
տութիւն զոր ես մկրտելոց եմ մկրտիլ. ասեն ցնա՝
23 կարօղ եմք։ * Ասէ ցնոսա Յս. զբաժակն իմ ըմ-
պիցէք. և զմկրտութիւն զոր ես մկրտելոց եմ,
մկրտիցիք՝ բայց նստուցանել ընդ աջմէ և ընդ
ահեկէ իմմէ՝ ո՛չ է իմ տալ. այլ որոց տուեալ է
24 ՚ի հօրէ իմմէ։ * Եւ լուեալ տասանցն՝ բարկացան
25 ՚ի վերայ երկուցն եղբարցն։ * Յս կոչեաց զնոսա առ
ինքն և ասէ. գիտէք, զի իշխանք ազգաց տիրեն
նոցա. և մեծամեծքն իշխեն նոցա ։

26 * Ո՛չ այնպէս լիցի և ՚ի ձերում միջի. այլ որ կամիցի
՚ի ձէնջ մեծ լինել՝ եղիցի ձեր պաշտօնեայ.
27 * Եւ որ կամիցի ՚ի ձէնջ առաջին լինել՝ եղիցի
28 ձեր ծառայ։ * Որպէս որդի մարդոյ ոչ եկն պաշտօն
առնուլ՝ այլ պաշտել. և տալ զանձն իւր
29 ԷԻ. փրկանս փոխանակ բազմաց։ * Եւ յելանել
նոցա յԵրիքովէ՝ գնացին զհետ նորա ժողովուրդք
30 բազումք։ * Եւ ահա կոյրք երկու նստէին առ ճանապարհաւն.
իբրև լուան թէ Յս՟ անցանէ՝ աղաղակեցին
և ասեն, ողորմեա՛ց մեզ Յս՟ որդի Դաւթի։
31 * Եւ ամբոխն սաստեաց նոցա՝ զի լռեսցեն.
և նոքա ևս առաւել աղաղակէին և ասէին, Տր՟
32 ողորմեա՛ց մեզ որդի Դաւթի։ * Զտեղի կաց Յս՟
կոչեաց զնս՟ և ասէ՝ զի՞նչ կամիք՝ զի արարից ձեզ։
33 * Ասեն ցնա՝ Տր՟ զի բացցին աչք մեր։
34 * Եւ գթացեալ Յս՟ մերձեցաւ յաչս նոցա՝ և
վաղվաղակի տեսին. և գնացին զհետ նորա։

ԳԼ. ԻԱ.

1 Իբրև մօտ եղեն յԵ՟մ. և եկին ՚ի Բեթփագէ մերձ
՚ի լեառն Ձիթենեաց։ յայնժամ Յս՟ առաքեաց
2 երկուս յաշակերտացն իւրոց։ * Եւ ասէ ցնոսա. երթա՛յք
՚ի գեօղդ՝ որ առաջի ձեր է։ և անդէն գտանէք
զէշ կապեալ՝ և յաւանակ ընդ նմին. լուծէք
3 և ածէք ինձ։ * Եւ եթէ ոք ասիցէ ինչ ձեզ,
ասասջիք, եթէ Տն՟ իւրեանց պիտոյ են։ և վաղվաղակի
4 առաքեսցէ զնոսա։ * Բայց այս ամ՟ եղև՝ զի
5 լցցի բան մարգարէին՝ որ ասէ։ * Ասացէք դստեր
սիօնի. ահա թագաւոր քո գայ քեզ հեզ. հեծեալ
6 յէշ և յաւանակի իշոյ։ * Գնացին աշակերտքն. և
արարին որպ՟ հրամայեաց նոցա Յիսուս։
7 * Եւ ածին զէշն և զյաւանակն։ և արկին զնոքօք
8 զձորձս՝ և նստաւ ՚ի վր՟ նոցա։ * Եւ բազում ժողովուրդք
տարածեցին զհանդերձս իւրեանց ՚ի ճանապարհին։
և այլք հատանէին ոստս ՚ի ծառոց՝ և
9 տարածանէին ՚ի ճանապարհին։ * Եւ ժողովուրդքն՝
որք առաջի և զկնի երթային, աղաղակէին և ա-

ակէին։ Օրհնութ̃ի որդւոյ դաւթի. օրհնեալ որ գայ
10 յանուն Տ̃ն. օրհնութ̃ի ՚ի բարձունս։ *Եւ ՚ի մտանելն
նորա յԵ̃մ՝ դղրդեցաւ քաղաքն ա̃մ. և ասէ՝ ո՞վ
11 իցէ սա։ *Եւ ժողովուրդքն ասեն՝ սա՛ է մարգարէն
Յ̃ս՝ որ ՚ի Նազարեթէ գալիլեացւոց։
12 *Եւ եմուտ Յիսուս ՚ի տաճարն՝ և եհան արտաքս
զամենեսին, որք վաճառէին և գնէին ՚ի տաճարի
անդ։ և զսեղանս հատավաճառացն կործանեաց։
13 և զաթոռս աղաւնեվաճառացն։ *Եւ ասէ ցնոսա.
գրեալ է՝ տուն իմ տուն աղօթից կոչեսցի։ և
14 դուք արարէք զդա այրս աւազակաց։ *Եւ մա-
տեան առ նա կոյրք և կաղք ՚ի տաճարին. և բժշ-
15 կեաց զնոսա։ *Իբրև տեսին քահանայապետքն և
դպիրք զսքանչելիսն՝ զորս արար. և զմանկտին՝
որք աղաղակէին ՚ի տաճարին. և ասէին։ ովսան-
նայ՝ օրհնութ̃ի որդւոյ դաւթի՝ բարկացան։
16 *Եւ ասեն ցնա։ լսե՞ս, զինչ ասեն դոքա։ ասէ
ցն̃ա Յ̃ս՝ այո՛։ չիցէ՞ ընթերցեալ ձեր՝ թէ ՚ի բե-
րանոյ տղայոց և ստնդեաց կատարեցեր զօրհնութ̃ի։
17 *Եւ թողեալ զնոսա՝ ել արտաքոյ քաղաքին ՚ի
18 բեթանիայ, և անդ ագաւ. *Եւ այգուցն իբրև
19 դարձաւ անդրէն ՚ի քաղաքն՝ քաղցեաւ։ *Եւ տե-
սեալ զթզենի մի ՚ի վերայ ճանապարհին՝ եկն ՚ի
նա՝ և ոչ եգիտ ՚ի նմա, բայց միայն տերև։ և ասէ
ցնա, մի՛ այսուհետև ՚ի քէն պտուղ եղիցի ՚ի յաւի-
20 տեան։ և առժամայն չորացաւ թզենին։ *Իբրև
տեսին աշակերտքն՝ զարմացան և ասեն. թէ զի-
21 արդ վաղվաղակի ցամաքեցաւ թզենին։ *Պատաս-
խանի ետ Յ̃ս՝ և ասէ ցնոսա. ամէն ասեմ ձեզ։
եթէ ունիցիք հաւատս՝ և ոչ երկմտիցէք՝ ո՛չ մի-
այն թզենւոյդ առնիցէք. այլ թէպէտ և լերինդ
ասիցէք՝ բարձի՛ր, և անկի՛ր ՚ի ծով՝ եղիցի։
22 *Եւ զա̃մ ինչ՝ զոր և խնդրիցէք յաղօթս հա-
23 ւատովք՝ առնուցուք։ *Եւ իբրև եկն ՚ի տաճարն,
մատեան առ նա՝ մինչդեռ ուսուցանէր, քահանայ-
ապետքն և ծերք ժողովրդեանն՝ և ասեն։ որո՞վ
իշխանութ̃բ առնես զայդ։ և ո՞վ ետ քեզ զիշխանու-
24 թիդ զայդ։ *Պատասխանի ետ Յ̃ս և ասէ ցնոսա։

հարցից և ես զձեզ բան մի։ զոր եթէ ասիցէք
ինձ, և ես ձեզ ասացից որով իշխանութե՟ ա-
25 նեմ զայս։ * Մկրտութիւն յօհաննու ուստի էր։
յերկնից, թէ ՚ի մարդկանէ։ և նոքա խորհէին ընդ
26 միտս՝ և ասէին։ * Եթէ ասեմք յերկնից՝ ասէ
ցմեզ. իսկ ընդէ՞ր ոչ հաւատացէք նմա։ և եթէ
ասեմք ՚ի մարդկանէ՝ երկնչիմք ՚ի ժողովրդենէն։
զի ամենեքին զյօհաննէս իբրև զմարգարէ ունէին։
27 * Պատասխանի ետուն Յի և ասեն. ոչ գիտեմք։
ասէ ցնոսա և նա. և ոչ ես ասեմ ձեզ՝ որով
28 իշխանութե՟ առնեմ զայս։ * Բայց զի՞արդ թուի
ձեզ՝ առն միոջ էին երկու որդիք։ և մատուցեալ
առ առաջինն ասէ՝ Երթ այսօր գործեա յայգւոջ։
29 * Նա պատասխանի ետ և ասէ։ երթամ տէր՝ և
30 ոչ չոգաւ։ * Մատուցեալ և առ միւսն և ասէ նոյնպ՟։
նա պատասխանի ետ և ասէ՝ ոչ կամիմ։ բայց յե-
31 տոյ զղջացաւ՝ և չոգաւ յայգին։ * Որդ՝ ո՞ յերկոցունց
արար զկամս հօրն։ ասեն՝ յետինն։ ասէ ցնոսա Յս՟։
ամէն ասեմ ձեզ։ զի մաքսաւորք և պոռնիկք յա-
ռաջեսցեն քան զձեզ յարքայութե՟ երկնից։
32 * Զի եկն յօհաննէս ճանապարհաւ արդարութե՟
և ոչ հաւատացէք նմա։ և մաքսաւորք և պոռնիկք
հաւատացին նմա։ և դուք տեսէք՝ և ոչ զղջացայք
33 ԸԳ. յետոյ հաւատալ նմա։ * Այլ առակ լուարուք.
այր մի էր տանուտէր՝ որ տնկեաց այգի. և ցան-
կով պատեաց զնա՝ և փորեաց ՚ի նմա հնձան։ և
շինեաց աշտարակ։ և ետ զնա ցմշակս, և գնաց ՚ի
տար աշխարհ։
34 * Իբրև մերձեցաւ ժամանակ պտղոյ՝ առաքեաց ըզ-
ծառայս իւր առ մշակսն՝ առնուլ զպտուղս նորա։
35 * Եւ կալեալ մշակացն զծառայս նր՟, զոմն տանջե-
36 ցին։ զոմն սպանին։ զոմն քարկոծեցին։ * Դար-
ձեալ առաքեաց այլ ծառայս բազումս քան զա-
ռաջինսն. և արարին նոցա նոյնպէս։
37 * Յետոյ առաքեաց առ նոսա զորդի իւր և ասէ։
38 թերևս ամաչեսցեն յորդւոյ աստի իմմէ։ * Իսկ
մշակքն իբրև տեսին զորդին, ասեն ընդ միտս՝ սա
է ժառանգն։ եկա՛յք սպանցուք զսա. և կալցուք

39 զժառանգութի̄ սորա։ * Եւ առեալ հանին զնա արտաքոյ
քան զայգին՝ և սպանին։
40 * Արդ՝ յորժամ եկեսցէ տէր այգւոյն՝ զինչ արասցէ
41 մշակացն այնոցիկ։ * Ասեն ցնա։ զչարսն չարաւ
կորուսցէ. և զայգին տացէ այլոց մշակաց. որք
42 տայցեն նմա զպտուղս ՚ի ժամու իւրեանց։ * Ասէ
ցնոսա Յս̄. չիցէ՞ երբէք ընթերցեալ ձեր ՚ի գիրս։
զվէմն՝ զոր անարգեցին շինօղք, նա եղև գլուխ անկեան։ ՚ի Տէ եղև այս. և է սքանչելի յաչս մեր։
43 * Վն̄ այսորիկ ասեմ ձեզ՝ զի բարձցի ՚ի ձէնջ
արքայութիւն Այ̄. և տացի ազգի, որ առնիցէ
44 զպտուղս նր̄։ * Եւ որ անկցի ՚ի վ̄ր վիմիս այսորիկ,
փշրեսցի. և յոր վերայ անկցի, հոսեսցէ զնա։
45 * Իբրև լուան քահանայապետքն՝ և դպիրք՝ և փարիսեցիք
զառակս զայս, գիտացին թէ վն̄ նոցա
46 ասաց։ * Եւ խնդրէին զնա ունել. բայց երկեան
՚ի ժողովրդոցն. քանզի իբրև զմարգարէ ունէին
զնա։

ԳԼ. ԻԲ.

1 ԻԲ. Պատասխանի ետ Յս̄ և ասէ ցնոսա
առակօք։
2 * Նմանեցաւ արքայութի̄ երկնից առն թագաւորի.
3 որ արար հարսանիս որդւոյ իւրում։ * Եւ առաքեաց զծառայս իւր կոչել զհրաւիրեալսն ՚ի հարսանիս.
4 և ոչ կամեցան գալ։ * Դարձեալ առաքեաց այլ ծառայս՝ և ասէ. ասացէք հրաւիրելոյն.
ահաւասիկ զճաշ իմ պատրաստեցի։ զուարակք
իմ և պարարակք զենեալ են. և ա̄մ ինչ պատրաստ
5 է։ եկայք ՚ի հարսանիսս։ * Եւ նոքա յուլացեալ գնացին. ոմն յագարակ իւր. և ոմն ՚ի վաճառ
6 իւր։ * Եւ այլք կալան զծառայս նր̄ թշնամա-
7 նեցին, և սպանին։ * Իսկ թագաւորն իբրև լուաւ՝ բարկացաւ. և առաքեաց զզօրս իւր. և սատակեաց զսպանօղսն զայնոսիկ, և զքաղաքս նոցա
8 այրեաց։ * Յայնժամ ասէ ցծառայս իւր։ հարսանիքս պատրաստք են. և հրաւիրեալքն չէին արժանի։

9 * Արդ՝ երթայք յանցս ճանապարհաց. և զոր
միանգամ գտանիցէք՝ կոչեցէք 'ի հարսանիս:
10 * Եւ ելեալ ծառայքն 'ի ճանապարհս. ժողովեցին
զամենեսեան. զորս և գտին զչարս և զբարիս.
11 և լցան հարսանիքն բազմականօք: * Եւ մտեալ թագաւորն
հայել զբազմականսն. ետես անդ զայր մի՝
որոյ ոչ էր զգեցեալ հանդերձ հարսանեաց:
12 * Եւ ասէ ցնա. ընկեր՝ զի՞արդ մտեր այսր. զի
ոչ ունէիր հանդերձ հարսանեաց: Եւ նա պապանձե
13 ցաւ: * Յայնժամ ասէ ցսպասաւորսն. կապեցէք
զդորա զոտս և զձեռս՝ և հանէք զդա 'ի խաւարն
արտաքին: անդ եղիցի լալ և կրճել ատամանց:
14 * Զի բազումք են կոչեցեալք՝ և սակաւք են ընտրեալք:
15 * Յայնժամ գնացեալ փարիսեցիքն,
առին խորհուրդ զնմանէ՝ թէ որպէս դնիցեն նմա
16 զորոգայթ բանիւք: * Եւ առաքեն առ նա զաշակերտսն
իւրեանց հերովդիանոսօքն հանդերձ՝ և ասեն:
վարդապետ՝ գիտեմք զի ճշմարիտ ես: և զճանապարհն
Ա՟յ ճշմարտութ՟բ ուսուցանես: և ոչ է
քեզ փոյթ զումեքէ: և ոչ հայիս յերեսս մարդոյ:
17 * Արդ՝ ասա մեզ՝ զի՞արդ թուի քեզ: պա՞րտ
18 է հարկս տալ կայսեր՝ թէ ոչ: * Գիտաց Յ՟ս
զչարամանկութ՟ի նոցա. և ասէ: զի՞ փորձէք զիս
19 կեղծաւորք: * Ցուցէք ինձ զդահեկան հարկին: Եւ
նոքա մատուցին նմա զդահեկան մի:
20 * Եւ ասէ ցնոսա Յ՟ս: ո՞յր է պատկերս այս՝ կամ
21 գիր: * Ասեն՝ կայսեր: յայնժամ ասէ ցն՟ս: երթայք՝
22 տուք զկայսերն, կայսեր. և զԱ՟յն՝ Ա՟յ: * Իբրև
լուա՛ն՝ զարմացան. և թողին զնա և գնացին:
23 * Յայնմ աւուր մատեան առ նա սադուկեցիքն. որք
24 ասէին թէ չի՛ք յարութ՟ի, հարցին ցնա: * Եւ
ասեն, վարդապետ՝ մովսէս ասաց՝ եթէ որ մեռցի
անորդի, արասցէ զկին ն՟ր եղբայր իւր: և յարուսցէ
25 զաւակ եղբօր իւրում: * Էին առ մեզ եղբարք
եօթն: առաջինն արար կին՝ և մեռաւ: և զի ոչ
ունէր զաւակ, եթող զկինն իւր եղբօր իւրում:
26 * Նոյնպէս և երկրորդն. և երրորդն. մինչև յեօթներորդն:
27 * Յետ ամենեցուն մեռաւ և կինն:

28 * Արդ՝ 'ի յարութեան՝ ո՞յր յեօթանցն եղիցի նա կին.
29 զի ամենեքին կալան զնա կին։ * Պատասխանի ետ
նոցա Յս̄ և ասէ. մոլորեալ էք՝ ոչ գիտէք զգիրս՝
30 և ոչ զզօրութիւն Այ̄։ * Զի 'ի յարութեան ոչ կա-
նայս առնեն՝ և ոչ արանց լինին. այլ են իբրև
31 զհրեշտակս յերկինս։ * Բայց վս̄ յարութեան մեռե-
լոց չիցէ՞ ընթերցեալ ձեր զասացեալսն ձեզ յԱյ̄։
32 * Ես եմ Ած̄ աբրահամու՝ Ած̄ իսահակայ՝ և Ած̄
յակօբայ։ և չէ Ած̄՝ Ած̄ մեռելոց՝ այլ կենդանեաց։
33 * Իբրև լուան ժողովուրդքն, զարմանային ընդ
34 վարդապետութիւն նորա։ * Իսկ փարիսեցիքն իբրև
լուան եթէ պապանձեցոյց զսադուկեցիսն, ժողովե-
35 ցան 'ի միասին։ * Եւ եհարց մի ոմն 'ի նոցանէ զնա
36 փորձելով և ասէ։ * Վարդապետ՝ ո՞ր պատուի-
37 րան է մեծ յօրէնս։ * Եւ Յս̄ ասէ ցնա։ սիրես
ցես զՏր̄ Ած̄ քո յա̄մ սրտէ քումմէ՝ և յա̄մ ան-
38 ձնէ քումմէ՝ և յա̄մ մտաց քոց։ * Այս է մեծն
39 և առաջին պատուիրան։ * Երկրորդն նման սմին.
սիրեսցես զընկեր քո իբրև զանձն քո։
40 * Յայս երկուս պատուիրանս ա̄մ օրէնք և մարգա-
41 րէք կախեալ կան։ * Եւ 'ի ժողովել փարիսեցւոցն
42 եհարց ցնոսա Յս̄. և ասէ։ * Զի՞արդ թուի ձեզ
43 վս̄ Քի̄։ ո՞յր որդի է։ ասեն ցնա՝ դաւթի։ * Ասէ
ցնոսա Յս̄։ իսկ զի՞արդ դաւիթ Հոգւովն կոչէ զնա
44 Տր̄ և ասէ։ * Ասաց Տր̄ ցՏր̄ իմ. նիստ ընդ աջմէ
իմմէ՝ մինչև եդից զթշնամիս քո պատուանդան
45 ոտից քոց։ * Իսկ եթէ դաւիթ զնա Տր̄ կոչէ՝ զի՞
46 արդ որդի նր̄ լիցէ։ * Եւ ոչ ոք կարէր տալ նմա
պատասխանի բան մի։ և ոչ իշխէր ոք յայնմ օրէ
հարցանել զնա և ոչինչ։

ԳԼ. ԻԳ։

1 ԻԶ. Յայնժամ խօսեցաւ Յս̄ ընդ ժողովուրդսն՝ և
ընդ աշակերտսն իւր. և ասէ։
2 * Յաթոռն մովսէսի նստան դպիրքն և փարիսեցիք։
3 * Զա̄մ ինչ՝ զոր ասիցեն ձեզ՝ արարէք, և պա-
հեցէք։ բայց ըստ գործոյն նոցա մի առնէք։ զի

*

4 ասեն և ոչ առնեն ։ * Կապեն մարդկան բեռինս
ծանունս և դժուարակիրս . և դնեն ’ի վերայ ուսոց
մարդկան . և մատամբ իւրեանց ոչ կամին
շարժել զնոսա ։
5 * Եւ զա՟մ զգործս իւրեանց առնեն ’ի ցոյց մարդկան ։
Լայնեն զգրապանակս իւրեանց՝ և երկայնեն
6 զքղանցս հանդերձից իւրեանց ։ * Սիրեն զյառաջագահս
յընթրիս . և զնախաթոռս ’ի ժողովուրդս՝
7 և զողջոյնս ’ի հրապարակս ։ * Եւ կոչել ’ի մարդկանէ
8 ռաբբի ռաբբի ։ * Բայց դուք մի զոք կոչէք
վարդապետ . զի մի է ձեր ուսուցիչ ։ և ամենեքեան
9 դուք եղբարք էք ։ * Եւ հայր մի կոչէք
ձեզ յերկրի . զի ձեր մի է հայր՝ որ յերկինս է ։
10 * Եւ մի կոչիցիք ուսուցիչք՝ զի ուսուցիչ ձեր
11 Քրիստոս է ։ * Եւ մեծն ’ի ձէնջ եղիցի ձեր
12 սպասաւոր ։ * Որ բարձրացուցանէ զանձն՝ խոնարհեսցի ։
և որ խոնարհեցուցանէ զանձն՝ բարձրասցի ։
13 * Վայ ձեզ դպրաց և փարիսեցւոց կեղծաւորաց ։
զի փակէք զարքայութիւն երկնից առաջի մարդկան ։
դուք ոչ մտանէք . և որոց մտանելն՝ չտայք թողուլ
14 մտանել ։ * Վայ ձեզ դպրաց և փարիսեցւոց կեղծաւորաց ։
զի ուտէք զտունս այրեաց՝ պատճառանօք
երկարէք զաղօթս՝ վ՟ն զի աւելի դատաստան
15 ընդունիցիք ։ * Վայ ձեզ դպրաց և փարիսեցւոց
կեղծաւորաց ։ զի յածիք ընդ ծով և ընդ ցամաք
առնել եկամուտ մի՝ և յորժամ լինիցի, առնէք
զնա որդի գեհենի կրկին ևս քան զձեզ ։
16 * Վայ ձեզ առաջնորդք կոյրք ։ զի ասէք՝ որ երդնու
’ի տաճարն չէ ինչ . բայց որ երդնու յոսկին՝
17 որ ’ի տաճարին է՝ արժան է ։ * Մոլորք և կոյրք՝
զի՞նչ մեծ է . ոսկին, եթէ տաճարն, որ սրբէ զոսկին ։
18 * Եւ որ երդնու ’ի սեղանն՝ չէ ինչ ։ բայց որ
երդնու ’ի պատարագն որ ’ի վ՟ր նորա է՝ արժանէ ։
19 * Յիմարք, և կոյրք . զի՞նչ մեծ է . պատարագն,
20 եթէ սեղանն՝ որ սրբէ զպատարագն ։ * Իսկ արդ՝
որ երդնուցու ’ի սեղանն . երդնու ’ի նա՝ և յա՟մ որ
21 ’ի վերայ ն՟ր է ։ * Եւ որ երդնուցու ’ի տաճարն, երդնու
22 ’ի նա՝ և ’ի բնակիչ նորա ։ * Եւ որ երդնուցու

յերկինս՝ երդնու յաթոռն Այ· և յայն որ նստին
23 'ի վ͞ր ն͞ր ։ * Վա՜յ ձեզ դպրաց և փարիսեցւոց կեղծաւորաց ։ զի տասանորդէք զանանուխ՝ և զսամիթ՝
և զչաման. և թողէք զծանր ծանր օրինացն՝ զդատաստան՝ և զողորմութիւն՝ և զհաւատս ։ զայս արժան
24 էր առնել՝ և զայն չթողուլ ։ * Առաջնորդք
կոյրք ։ որք զմժղուկս քամէք՝ և զուղտս կլանէք ։
25 * Վա՜յ ձեզ դպրաց և փարիսեցւոց կեղծաւորաց.
զի սրբէք զարտաքին զբաժակին և զսկաւառակին.
և 'ի ներքոյ լի են յափշտակութ͞բ և անիրաւութ͞բ ։
26 * Փարիսեցի կոյր ։ սրբեա՛ նախ զներքին բաժակին
և զսկաւառակին. զի լինիցի և արտաքինն նոցա
27 ս͞ր ։ * Վա՜յ ձեզ դպրաց և փարիսեցւոց կեղծաւորաց ։ զի նմա՛ն էք գերեզմանաց բռելոց ։ որք
արտաքոյ երևին գեղեցիկք. և 'ի ներքոյ լի են ոսկերօք
28 մեռելոց՝ և ամ͞ պղծութ͞բ ։ * Նոյնպէս և
դուք արտաքոյ երևիք մարդկան արդարք. և 'ի ներքոյ լի էք կեղծաւորութ͞բ և անօրէնութ͞բ ։
29. * Վա՜յ ձեզ դպրաց և փարիսեցւոց կեղծաւորաց ։ զի շինէք զշիրիմս մարգարէից՝ և զարդա-
30 րէք զգերեզմանս արդարոց ։ * Ե՛ւ ասէք՝ եթէ էաք
յաւուրս հարցն մերոց՝ ոչ հաղորդէաք արեան
31 մարգարէիցն ։ * Ապաքէն վկայէք զանձանց. եթէ
որդիք էք այնոցիկ՝ որք կոտորէին զմարգարէսն ։
32 * Ե՛ւ դուք լցէք զչափ հարցն ձերոց ։
33 * Օ՛ձք՝ ծնունդք իժից ։ զիա՞րդ փախնուցուք 'ի
34 դատաստանէ գեհենին ։ * Վ͞ա այդորիկ ահաւասիկ
ես առաքեմ առ ձեզ մարգարէս՝ և իմաստունս
և դպիրս՝ և 'ի նոցանէ սպանանիցէք, և 'ի խաչ
հանիցէք. և 'ի նոցանէ տանջիցէք 'ի ժողովուրդս
ձեր՝ և հալածիցէք 'ի քաղաքէ 'ի քաղաք ։
35 * Որ͞պ զի եկեսցէ 'ի վերայ ձեր ամ͞ արիւն արդար
հեղեալ յերկրի ։ յարենէն աբելի 'ի արդարոյ՝ մինչև
յարիւնն զաքարիայ որդւոյ բարաքեայ՝ զոր սպանէք
36 ընդ մէջ տաճարին և սեղանոյն ։ * Ամէն ասեմ
ձեզ՝ եկեսցէ այս ամ͞ 'ի վ͞ր ազգիս այսորիկ ։
37 * Եէմ, եէմ. որ կոտորես զմարգարէս՝ և քարկոծ
առնես զառաքեալսն առ քեզ ։ քանիցս անգամ

կամեցայ ժողովել զմանկունս քո՝ զորօրինակ ժո-
ղովէ հաւ զձագս իւր ընդ թեւովք։ և ոչ կամե-
38 ցայք։ * Ահա թողեալ լիցի ձեզ տունդ ձեր աւե-
39 րակ։ * Բայց ասեմ ձեզ. թէ ոչեւս տեսանիցէք
զիս յայսմհետէ, մինչեւ ասիցէք, օրհնեալ եկեալ
յանուն Տն։

ԳԼ. ԻԴ։

1 Եւ ելեալ արտաքս Յս՛ 'ի տաճարէն գնայր՝ և
ԷԷ. մատեան աշակերտքն ցուցանել նմա զշինուածս
2 տաճարին։ * Եւ նա պատասխանի ետ և ասէ ցնս։
տեսանէ՞ք զայդ ամ. ամէն ասեմ ձեզ՝ ոչ մնասցէ
այդր քար 'ի քարի վերայ որ ոչ քակտեսցի։
3 * Եւ մինչդեռ նստէր 'ի լերինն ձիթենեաց։ մա-
տեան առ նա աշակերտքն առանձինն և ասեն։ ասա
մեզ՝ ե՞րբ լինիցի այդ. և կամ զի՞նչ նշան իցէ
4 քոյոյ գալստեանն, և վախճանի աշխարհիս։ * Պա-
տասխանի ետ Յս՛ և ասէ ցնոսա։ զգո՛յշ լերուք՝
գուցէ ոք զձեզ խաբիցէ։
5 * Զի բազումք գայցեն յանուն իմ, և ասիցեն՝
թէ ես եմ Քս՛. և զբազումս մոլորեցուցանիցեն։
6 * Լսելոց էք պատերազմունս՝ և զհամբաւս պատե-
րազմաց։ զգո՛յշ լերուք, մի խռովիջիք։ զի պարտ
է լինել այնմ ամի՝ այլ չև է կատարած։
7 * Յարիցէ ազգ յազգի վերայ՝ և թագաւորութի
'ի թագաւորութե։ և եղիցին սովք՝ և սրածութիք՝
8 և սասանութիք 'ի տեղիս տեղիս։ * Սակայն և
9 այն ամ սկիզբն է երկանց։ * Յայնժամ մատնես-
ցեն զձեզ 'ի նեղութիւն. և սպանանիցեն զձեզ։
և եղիջիք ատեցեալք յամ ազգաց վասն անուան
10 իմոյ։ * Եւ յայնժամ գայթագղեսցին բազումք. և
զմիմեանս մատնեսցեն։ և ատեսցեն զմիմեանս։
11 * Եւ բազում սուտ մարգարէք յարիցեն։ և զբա-
12 զումս մոլորեցուսցեն։ * Եւ վասն բազմանալոյ ա-
նօրէնութե. ցամաքեսցի սէր բազմաց։
13 * Բայց որ համբերեսցէ իսպառ՝ նա կեցցէ։
14 * Եւ քարոզեսցի աւետարանս արքայութե ընդ ամ

տիեզերս . 'ի վկայութ՟ի ամ՟ հեթանոսաց : և ապայ
15 եկեսցէ կատարած : * Արդ՝ յորժամ տեսանիցէք
զպղծութ՟ի աւերածոյն, որ ասացեալն է 'ի ձեռն
դանիէղի մարգարէի . զի կայցէ 'ի տեղւոջն սրբու-
16 թ՟ե . որ ընթեռնուն՝ 'ի միտ առցէ : * Յայնժամ
որք 'ի հրէաստանի իցեն՝ փախիցեն 'ի լերինս:
17 * Եւ որ 'ի տանիս կայցէ՝ մի իջցէ առնուլ ինչ
18 'ի տանէ իւրմէ : * Եւ որ յանդի իցէ՝ մի դարձցի
19 յետս առնուլ զձորձս իւր: * Բայց վայ իցէ յղեաց
և ստնդիմաց յաւուրսն յայնոսիկ :
20 * Յաղօթս կացէք՝ զի մի լիցի փախուստն ձեր
21 ձմերայնի : * Եւ մի 'ի շաբաթու . զի եղիցի յայն-
ժամ նեղութ՟ի մեծ . որպիսի ոչ եղև 'ի սկզբա-
նէ արարածոց աշխարհի, մինչև ցայժմ, և ոչ
22 այլ լիցի : * Եւ եթէ ոչ կարճէին աւուրքն այ-
նոքիկ՝ ոչ ապրէր ամենայն մարմին . բայց վասն
ընտրելոցն կարճեսցին աւուրքն այնոքիկ :
23 * Յայնժամ թէ ոք ասիցէ ձեզ . ահաւասիկ աստ
24 է Քս՟ն, կամ անդ՝ մի հաւատայցէք : * Զի յա-
րիցեն սուտ քրիստոսք և սուտ մարգարէք . և
տացեն նշանս մեծամեծս և արուեստս . մինչև
մոլորեցուցանել՝ թէ հնար ինչ իցէ և զընտր-
25 եալսն : * Ահա յառաջագոյն ասացի ձեզ :
26 * Ապա եթէ ասիցեն ձեզ : ահաւանիկ յանապա-
տի է՝ մի ելանիցէք . և թէ ահա յշտեմարանս է՝
27 մի հաւատայցէք : * Զի որպէս փայլակն՝ որ ելա-
նէ յարևելից՝ և երևի մինչև յարևմուտս, այնպէս
28 եղիցի գալուստն որդւոյ մարդոյ : * Զի ուր գէշն
29 իցէ, անդր ժողովեսցին արծուիք : * Վաղվաղակի
յետ նեղութ՟ե աւուրցն այնոցիկ՝ արեգակն խաւա-
րեսցի . և լուսին ոչ տացէ զլոյս իւր . և աստեղք
անկցին յերկնից . և զօրութ՟իք երկնից շարժեսցին:
30 * Եւ ապա երևեսցի նշան որդւոյ մարդոյ յերկինս .
և յայնժամ կոծեսցին ամենայն ազգք երկրի : և
տեսցեն զորդի մարդոյ եկեալ 'ի վ՟ր ամպոց երկնից
31 զօրութ՟բ և փառօք բազմօք : * Եւ առաքեսցէ
զհրեշտակս իւր փողով մեծաւ . և ժողովեսցեն զըն-
տրեալս նորա 'ի չորից հողմոց՝ 'ի ծագաց երկնից

32 մինչև ՚ի ծագս նոցա ։ * ՚Ի թզենւոյ անտի ուսարուք
զառակն․ զի յորժամ նորա ոստքն կակղասցին,
և տերևն ցցուիցի․ գիտէք թէ մերձ է
33 ամառն ։ * Նոյնպէս և դուք յորժամ տեսանիցէք
զայս ամ՟ գիտասջիք թէ մերձ է ՚ի դուրս ։
34 * Ամէն ասեմ ձեզ՝ եթէ ոչ անցցէ ազգս այս՝
35 մինչև այս ամենայն եղիցի ։ * Երկինք և երկիր
36 անցցեն․ և բանք իմ մի՛ անցցեն ։ * Բայց վասն
աւուրն այնորիկ և ժամու․ ոչ ոք գիտէ՝ ոչ հրեշտակք
երկնից՝ և ոչ որդի՝ բայց միայն Հայր ։
37 * Այլ որպէս աւուրքն Նոյի․ նոյնպ՟ եղիցի գալուստն
38 որդւոյ մարդոյ ։ * Զի որպէս էին յաւուրսն՝
որք յառաջ քան զջրհեղեղն․ ուտէին և ըմպէին․
կանայս առնէին՝ և արանց լինէին․ մինչև յօրն
39 յորում եմուտ Նոյ ՚ի տապանն ։ * Եւ ոչ գիտացին՝
մինչև եկն ջրհեղեղն՝ և եբարձ զամենեսին․
այնպէս եղիցի և գալուստն որդւոյ մարդոյ ։
40 * Յայնժամ թէ իցեն երկու յագարակի, մին առցի,
41 և միւսն թողցի ։ * Եւ եթէ երկու աղայցեն
՚ի մի երկանս․ մին առցի, և միւսն թողցի ։
42 * Արթուն կացէք․ զի ոչ գիտէք յորում ժամու
43 տէրն ձեր գայ ։ * Զայն գիտասջիք եթէ գիտէր
տանուտէրն․ յորում պահու գող գայ, հսկէր,
և ոչ տայր ական հատանել զտուն իւրոյ ։
44 * Վասն այսորիկ և դուք եղերուք պատրաստ՝ զի
յորում ժամու ոչ ակնունիցիք՝ գայ որդի մարդոյ ։
45 * Իսկ ո՞վ իցէ հաւատարիմ ծառայ և իմաստուն․
զոր կացոյց Տ՟ր իւր ՚ի վերայ ծառայից իւրոց՝ տալ
46 նոցա զկերակուր ՚ի ժամու ։ * Երանի է ծառային
այնմիկ՝ զոր եկեալ տէրն գտանիցէ արարեալ այնպէս ։
47 * Ամէն ասեմ ձեզ՝ զի ՚ի վերայ ամենայն
48 ընչից իւրոց կացուսցէ զնա ։ * Ապա եթէ ասիցէ
ծառայն չար ՚ի սրտի իւրում․ տէր իմ յամէ գալ ։
49 * Եւ սկսանիցի հարկանել զծառայակիցս իւր․ ուտիցէ
50 և ըմպիցէ ընդ արբեցողս ։ * Գայցէ տէր
ծառային այնորիկ՝ յաւուր յորում ոչ ակն ունիցի․
51 և ՚ի ժամու յորում ոչ գիտիցէ ։ * Եւ կտրե-

ցէ զնա ընդ մէջ. և զբաժին նր՟ ընդ կեղծաւորս
դիցէ։ անդ եղիցի՛ լալ և կրճել ատամանց։

ԳԼ: ԻԵ.

Վ

1 Յայնժամ նմանեսցի արքայութի՟ երկնից տասն
կուսանաց. որոց առեալ զլապտերս իւրեանց ելին
ընդ առաջ փեսայի և հարսին։
2 * Հինգն 'ի նոցանէ յիմարք էին. և հինգն իմաստունք։
3 * Յիմարքն առին զլապտերսն. և զձէթ
ընդ իւրեանս ոչ բարձին։
4 * Իսկ իմաստունքն առին ձէթ ամանօք ընդ լապտերս
5 իւրեանց։ * Եւ 'ի յամել փեսային՝ նիրհեցին
6 ամենեքեան՝ և 'ի քուն մտին։ * Եւ 'ի մէջ գիշերին
եղև բարբառ՝ ահա՝ փեսայ գայ՝ ելէք ընդ առաջ
7 նորա։ * Յայնժամ յարեան ամ՟ կուսանքն՝ և
8 կազմեցին զլապտերս իւրեանց։ * Ասեն յիմարքն
ցիմաստունսն. տուք մեզ յիւղոյդ ձերմէ. զի ահա
9 շիջանին լապտերքս մեր։ * Պատասխանի ետուն իմաստունքն, և ասեն. գուցէ, ոչ իցէ մեզ և ձեզ
բաւական. այլ երթայք 'ի վաճառականս՝ և գնեսջիք
10 ձեզ։ * Իբրև գնացին նոքա գնել՝ եկն փեսայն՝ և
պատրաստքն մտին ընդ նմա 'ի հարսանիսն՝ և փակեցաւ
11 դուռն։ * Յետոյ գան և այլ կուսանքն՝ և
12 ասեն. Տէր՝ Տէր՝ բաց մեզ։ * Նա պատասխանի
ետ և ասէ. ամէն ասեմ ձեզ՝ թէ ոչ գիտեմ զձեզ։
13 * Արթուն կացէք՝ զի ոչ գիտէք զօրն՝ և ոչ զժամ։
14 * Որպէս այր մի գնացեալ 'ի տար աշխարհ. կոչեաց
զծառայս իւր. և ետ նոցա զինչս իւր։
15 * Ումեմն ետ հինգ քանքար՝ և ումեմն երկուս,
ումեմն մի։ իւրաքանչիւր ըստ իւրում կարի՝ և գնաց։
16 * Չոգաւ վաղվաղակի՝ որ էառ զհինգն՝ գործեաց
17 նոքօք. և շահեցաւ այլևս հինգ։ * Նոյնպէս և որ
18 զերկուսն, շահեցաւ այլևս երկուս։ * Եւ որ զմին
էառ՝ գնաց, փորեաց զերկիր. և թաքոյց զարծաթ
19 Տն՟ իւրոյ։ * Յետ բազում ժամանակի գայ Տր՟ ծառայիցն
այնոցիկ՝ և առնէ համարս 'ի մէջ նոցա։
20 * Եւ մատուցեալ որ զհինգ քանքարսն էառ՝ մա-

տոյց այլևս հինգ քանքար՝ և ասէ· Տէր՝ հինգ
քանքար ետուր ինձ· արդ՝ աւասիկ հինգ այլևս ՚ի
վերայ շահեցայ:
21 * Ասէ ցնա Տէրն իւր· ազնի՛ւ ծառայ՝ բարի և հաւատարիմ·
որովհետև ՚ի սակաւուդ հաւատարիմ
ես, ՚ի վերայ բազմաց կացուցից զքեզ· մուտ յուրախութի
22 Տեառն քո: * Մատուցեալ և որ զերկուս քանքարսն
առեալ էր՝ և ասէ· Տէր՝ երկուս քանքարս
ետուր ինձ· ահաւասիկ երկուս ևս այլ քանքարս՝
23 իզորս ՚ի վերայ շահեցայ * Ասէ ցնա Տէր
իւր: ազնի՛ւ ծառայ՝ բարի և հաւատարիմ· որովհետև
՚ի սակաւուդ հաւատարիմ ես՝ ՚ի վր̄ բազմաց կացուցից
24 զքեզ· մուտ յուրախութիւն Տն̄ քո: * Մատուցեալ և
որոյ զմի քանքարն առեալ էր, և ասէ· Տէր՝ գիտէի,
զի այր մի խիստ ես· հնձես, զոր ոչ սերմանեցեր:
25 և ժողովես, ուստի ոչ սփռեցեր: * Երկեայ, գնացի,
և թաքուցի զքանքարն քո յերկրի· արդ՝ աւասիկ
26 քոյդ ցքեզ: * Պատասխանի ետ տէրն՝ և ասէ ցնա·
ծառայ չար և վատ· գիտէիր եթէ հնձեմ՝ ուստի
ոչ սերմանեցի· և ժողովեմ՝ ուստի ոչ սփռեցի:
27 * Պարտ էր քեզ արկանել զարծաթդ իմ ՚ի սեղանաւորս·
և եկեալ ես տոկոսեօք պահանջէի զիմն:
28 * Արդ՝ առէք ՚ի դմանէ զքանքարդ՝ և տուք այնմ,
29 որ ունիցի զտասն քանքարն: * Զի ամենայնի, որ
ունիցի, տացի և յաւելցի· և որ ոչն ունիցի, և զոր
ունիցին, բարձցի ՚ի նմանէ:
30 * Եւ զծառայդ անպիտան հանէք ՚ի խաւարն արտաքին·
31 անդ եղիցի լալ և կրճել ատամանց: * Եւ
յորժամ եկեսցէ որդի մարդոյ փառօք իւրովք և
ամենայն հրեշտակք ընդ նմա· յայնժամ նստցի յա
32 թոռ փառաց իւրոց: * Եւ ժողովեսցին առաջի նր̄
ամ̄ ազգք· և մեկնեսցէ զնս̄ ՚ի միմեանց՝ ոպ̄ հովի՛ւ
33 զի մեկնեսցէ զօդիս յայծեաց: * Եւ կացուսցէ
զօդիսն ընդ աջմէ իւրմէ՝ և զայծիսն ՚ի ձախմէ
34 իւրմէ: * Յայնժամ ասասցէ թագաւորն յայնոսիկ՝
որք ընդ աջմէն իցեն· եկայք օրհնեալք հօր իմոյ՝
ժառանգեցէք զպատրաստեալ ձեզ արքայութիւն
35 ՚ի սկզբանէ աշխարհի: * Զի քաղցեայ՝ և ետուք ինձ

ուտել: ծարաւեցայ՝ և արբուցիք ինձ. օտար էի՝ և
36 ժողովեցիք զիս: * Մերկ՝ և զգեցուցիք զիս. հիւանդ
էի՝ և տեսիք զիս. 'ի բանտի էի՝ և եկիք առ իս:
37 * Յայնժամ պատասխանի տայցեն նմա արդարքն և
ասասցեն. Տէր՝ ե՞րբ տեսաք զքեզ քաղցեալ՝ և կերակրեցաք.
38 կամ ծարաւի, և արբուցաք: * Ե՞րբ
տեսաք զքեզ օտար, և ժողովեցաք. կամ մերկ,
39 և զգեցուցաք: * Ե՞րբ տեսաք զքեզ հիւանդ, կամ
'ի բանտի՝ և եկաք առ քեզ:
40 * Պատասխանի տացէ թագաւորն՝ և ասասցէ ցնոսա.
ամէն ասեմ ձեզ՝ որովհետև արարիք միում
եղբարցս այսոցիկ փոքրկանց՝ ինձ արարիք:
41 * Յայնժամ ասասցէ և ցայնոսիկ՝ որք ընդ ահեկէն
իցեն. երթայք յինէն անիծեալք 'ի հուրն
յաւիտենական. որ պատրաստեալ է սատանայի և
42 հրեշտակաց նորա: * Զի քաղցեայ, և ո՛չ ետուք
ինձ ուտել. ծարաւեցայ, և ո՛չ արբուցիք զիս:
43 * Օտար էի, և ո՛չ ժողովեցիք զիս. մերկ էի, և ո՛չ
զգեցուցիք զիս: հիւանդ էի՝ և 'ի բանտի՝ և ո՛չ
44 տեսիք զիս: * Յայնժամ պատասխանի տայցեն և
նոքա՝ և ասասցեն՝ Տէր ե՞րբ տեսաք զքեզ քաղցեալ՝
կամ ծարաւի, կամ օտար՝ կամ մերկ՝ կամ
հիւանդ՝ կամ 'ի բանտի՝ և ոչ պաշտեցաք զքեզ:
45 * Յայնժամ պատասխանի տացէ նոցա և ասասցէ.
ամէն ասեմ ձեզ՝ որովհետև ոչ արարիք միում 'ի
46 փոքրկանցս յայսցանէ՝ և ո՛չ ինձ արարիք: * Եւ
երթիցեն նոքա 'ի տանջանսն յաւիտենականս. և
արդարքն 'ի կեանսն յաւիտենականս:

ԳԼ. ԻԶ:

1 Եւ եղեւ իբրեւ կատարեաց Յս̅ զա̅մ զբանս զայսոսիկ՝
2 ասէ ցաշակերտսն իւր: * Գիտէք, զի
յետ երկուց աւուրց զատիկ լինի. և որդի մարդոյ
մատնի 'ի խաչ ելանել:
3 * Յայնժամ ժողովեցան քահանայապետքն՝ և դպիրք՝ և ծերք ժողովրդեանն 'ի սրահ քահանայապետին՝
4 որում անուն էր Կայիափա: * Եւ արա-

րին խորհուրդ՝ զի նենգութբ կալցեն զՅս՝ և
5 սպանցեն։ * Բայց ասէին, թէ մի ՚ի տօնի աստ՝
6 զի մի խռովութիւն լինիցի ՚ի ժողովրդեանն։ *Իբրև
եղև Յս ՚ի բեթանիայ ՚ի տուն սիմօնի բորոտի։
7 * Մատեաւ առ նա կին մի. որ ունէր շիշ իւղոյ
ծանրագնի. և թափեաց ՚ի գլուխ նորա ՚ի բազմակա
8 նին։ * Իբրև տեսին աշակերտքն՝ բարկացան, և ա
9 սեն. ընդէ՞ր է կորուստ այդ իւղոյդ։ * Զի մարթ
էր վաճառել զդա մեծագնի՝ և տալ աղքատաց։
10 *Գիտաց Յս՝ և ասէ ցնոսա. զի՞ աշխատ առնէք
զկինդ։ գործ մի բարի գործեաց դա յիս։
11 *Յամ ժամ զաղքատս ընդ ձեզ ունիք։ բայց զիս՝
12 ոչ հանապազ ընդ ձեզ ունիք։ * Արկանել դո-
րա զիւղդ ՚ի մարմին իմ. առ ՚ի թաղելոյ զիս նշա
13 նակեաց։ * Բայց ամէն ասեմ ձեզ. զի ուր քարո-
զեսցի աւետարանս այս ընդ ամ աշխարհ, խօսեսցի,
14 և զոր արար դա ՚ի յիշատակի դորա։ *Յայնժամ
գնաց մի յերկոտասանիցն անուանեալ յուդաս սկա
15 րիովտացի առ քահանայապետսն, և ասէ։ *Զի՞նչ
կամիք տալ ինձ. և ես մատնեցից զնա ձեզ։ և
նոքա կշռեցին նմա երեսուն արծաթի։
16 *Եւ յայնմ հետէ խնդրէր պարապ՝ զի մատնեսցէ
17 զնա նոցա։ *Եւ յառաջնում աւուր բաղարջակե-
րացն մատեան աշակերտքն առ Յս՝ և ասեն։ ո՞ւր
կամիս՝ զի պատրաստեսցուք քեզ ուտել զզատիկն։
18 *Եւ նա ասէ ցնոսա։ երթա՛յք ՚ի քաղաքն՝ առ այս
անուն. և ասասջի՛ք ցնա։ վարդապետն ասէ՝ ժամա-
նակ իմ մերձեալ է։ առ քեզ առնեմ զզատիկս աշա-
19 կերտօքս հանդերձ։ *Եւ արարին աշակերտքն. ոպ
20 հրամայեաց նց Յս։ և պատրաստեցին զզատիկն։ *Եւ
իբրև երեկոյ եղև՝ կայր բազմեալ ընդ երկոտասան
21 աշակերտսն։ *Եւ մինչդեռ ուտէին նոքա՝ ասէ։ ա-
մէն ասեմ ձեզ։ զի մի ոմն ՚ի ձէնջ մատնելոց է զիս։
22 *Եւ տրտմեցան յոյժ։ սկսան ասել ցնա իւրաքան-
չիւրոք ՚ի նոցանէ՝ մի թէ ե՞ս իցեմ Տէր։
23 *Նա պատասխանի ետ և ասէ։ որ մխեաց ընդ իս
զձեռն իւր ՚ի սկաւառակդ՝ նա մատնելոց է զիս։
24 *Որդի մարդոյ երթայ ոպ և գրեալ է վասն նր.

բայց վայ մարդոյն այնմիկ՝ յորոյ ձեռն որդի մարդոյ
մատնեսցի: լաւ էր նմա թէ չէր ծնեալ մարդն
25 այն: * Պատասխանի ետ յուդաս՝ որ մատնելոցն
էր զնա՝ եւ ասէ. միթէ ես իցեմ վարդապետ:
26 ասէ ցնա՝ դու ասացեր: * Եւ մինչ դեռ ուտէին
նոքա, էառ Յիսուս հաց. օրհնեաց՝ եւ եբեկ:
եւ ետ աշակերտացն՝ եւ ասէ: Առէք կերայք՝
27 այս է մարմին իմ: * Եւ առեալ բաժակ գոհացաւ՝
ետ նոցա՝ եւ ասէ: Արբէք 'ի դմանէ ամենեքին:
28 * Զի այդ է արիւն իմ նորոյ ուխտի. որ 'ի վերայ
29 բազմաց հեղանի 'ի թողութիւն մեղաց: * Բայց
ասեմ ձեզ. ոչ եւս արբից յայսմհետէ 'ի բերոյ որթոյ՝
մինչեւ ցօրն յայն՝ յորժամ արբից զդա ընդ
ձեզ նոր յարքայութեան հօր իմոյ:
30 * Եւ օրհնեցին, եւ ելին 'ի լեառն ձիթենեաց:
31 * Յայնժամ ասէ ցնոսա Յս̃: ամենեքին դուք գայթագղելոց
էք յինէն յայսմ գիշերի: զի գրեալ է՝
թէ հարից զհովիւն՝ եւ ցրուեսցին ոչխարք հօտին:
32 * Եւ յետ յառնելոյն իմոյ՝ յառաջեցից քան զձեզ
33 'ի գաղիղեա: * Պատասխանի ետ պետրոս եւ ասէ
ցնա: թէպէտ եւ ամենեքեան գայթագղեսցին
34 'ի քէն. սակայն ես ոչ գայթագղեցայց: * Ասէ ցնա
Յս̃՝ ամէն ասեմ քեզ՝ զի յայսմ գիշերի մինչեւ
35 հաւու խօսեալ իցէ՝ երիցս ուրասցիս զիս: * Ասէ
ցնա պետրոս: թէեւ մեռանիլ հասանիցի ը̅ քեզ.
զքեզ ոչ ուրացայց: Նոյնպէս եւ ա̃մ աշակերտքն
36 ասէին: * Յայնժամ գայ Յս̃ ընդ նոսա 'ի գիւղ մի՝
որում անուն էր գէթսէմանի: եւ ասէ ցնոսա: Նստարուք
այդր. մինչեւ երթայց՝ կացից յաղօթս:
37 * Եւ առեալ ը̅ իւր զպետրոս՝ եւ զերկուս որդիսն
38 զեբեդեայ՝ սկսաւ տրտմիլ եւ հոգալ: * Յայնժամ
ասէ ցնոսա: տրտում է ոգի իմ մինչեւ 'ի մահ. կացէք
39 աստ՝ եւ հսկեցէք ընդ իս: * Եւ մատուցեալ
յառաջ սակաւիկ մի անկաւ 'ի վ̅ր երեսաց իւրոց:
եկաց յաղօթս եւ ասէ: Հա՛յր իմ. եթէ հնար է՝
անցցէ բաժակս այս յինէն: բայց ոչ ո̅ր ես կամիմ,
40 այլ որպէս դու: * Գայ առ աշակերտսն՝ եւ
գտանէ զնոսա 'ի քուն: եւ ասէ ցպետրոս. այդպէս ոչ

41 կարացիք մի ժամ արթուն կալ ընդ իս։ * Արթուն
կացէք։ և աղօթս արարէք՝ զի մի մտանիցէք 'ի
փորձութիւն։ հոգիս յօժար է՝ բայց մարմինս տկար։
42 * Դարձեալ երկրորդ անգամ չոգաւ՝ եկաց յաղօթըս
Յս̅ և ասէ․ Հայր իմ․ եթէ հնար իցէ անցանել
յինէն բաժակիս այսմիկ։ ապա թէ ոչ՝
արբից զսա։ եղիցին կամք քո։
43 * Եւ եկեալ միւսանգամ եգիտ զնոսա 'ի քուն։ զի
44 էին աչք իւրեանց ծանրացեալք։ * Եթող զնոսա՝
և գնաց․ եկաց յաղօթս երրորդ անգամ։ և դարձեալ
45 զնոյն բան ասաց։ * Յայնժամ գայ առ աշակերտսն՝
և ասէ ցնոսա։ Ննջեցէք այսուհետև՝ և
հանգերո՛ւք։ զի ահա հասեալ է ժամ․ և որդի
46 մարդոյ մատնի 'ի ձեռս մեղաւորաց։ * Արիք երթիցուք
աստի․ զի ահաւասիկ էհաս՝ որ մատնելոց
47 է զիս։ * Եւ մինչդեռ նա զայն խօսէր՝ ահա
յուդաս մի յերկոտասանիցն եկն․ և ընդ նմա ամբոխ
բազում սրօք՝ և բրօք, 'ի քահանայապետիցն
և 'ի ծերոց ժողովրդեանն։
48 * Եւ որ մատնելոցն էր զնա․ ետ նոցա նշան և ասէ։
ը̅ որում ես համբուրեցից՝ նա է, զնա ունիջիք։
49 * Եւ վաղվաղակի մատուցեալ առ Յս̅՝ ասէ․ ո՛ղջ եր
50 վարդապետ․ և համբուրեաց ընդ նմա; * Եւ Յս̅
ասէ ցնա․ ընկեր, վասն ՞որոյ եկիր։ յայնժամ մատուցեալ
արկին ձեռս 'ի Յս̅․ և կալան զնա։
51 * Եւ ահա մի ոմն յայնցանէ՝ որք էին ընդ Յի̅,
ձգեաց զձեռն, և էհան զսուր իւր՝ և էհար զծառայ
քահանայապետին՝ և 'ի բաց էհան զունկն նր̅։
52 * Յայնժամ ասէ ցնա Յիսուս․ դարձո՛ զսուր քո
'ի տեղի իւր։ զի ամենեքեան՝ որք զսուր առնուցուն՝
53 սրով անկանիցին։ * Թէ համարիցիս՝ թէ ոչ
կարեմ աղաչել զհայր իմ․ և հասուցանիցէ ինձ
այսր՝ աւելի քան զերկոտասան գունդս հրեշտակաց։
54 * Այլ զի՞արդ լնանիցին գիրք՝ թէ այսպէս պարտէ
55 լինել։ * Յայնժամ ասաց Յս̅ ցամբոխն․ իբրև
'ի վ̅ աւազակի ելիք սուսերօք՝ և բրօք ունել զիս։
հանապազ առ ձեզ 'ի տաճարին նստէի և ուսուցանէի․
56 և ոչ կալայք զիս։ * Այլ այս ամ̅ եղև՝

զի լցցին գիրք մարգարէիցն։ յայնժամ աշակերտքն
57 ամենեքին թողին զնա և փախեան ։ * Իսկ նոքա
կալեալ զՅս̄ տարան առ Կայիափայ քահանայապետ՝
58 ուր դպիրք և ծերք ժողովեալ էին ։ * Եւ պետրոս
զհետ նր̄ երթայր բացագոյն մինչև 'ի սրահ քահանայապետին ։ և մտեալ 'ի ներքս նստէր ընդ սպա
59 սաւորսն տեսանել զկատարածն ։ * Իսկ քահանայապետքն՝ և ամ̄ ատեանն խնդրէին սուտ վկայու-
60 թի զՅէ․ զի սպանցեն զնա ։ * Եւ ոչ գտանէին
'ի բազմաց սուտ վկայիցն մատուցելոց ։ յետոյ մատուցեալ երկու սուտ վկայք ։
61 * Ասէին թէ , սա ասէր՝ կարող եմ քակել զտա-
62 ճարն Այ̄ ․ և զերիս աւուրս շինել ։ * Եւ յարուցեալ քահանայապետն ասէ ցնա ։ չ՞տաս ինչ պատասխանի ․ զի՞նչ դոքա ամբաստանեն զքէն ։
63 * Եւ Յս̄՝ լուռ կայր ։ պատասխանի ետ քահանայապետն և ասէ ցնա ։ երդմնեցուցանեմ զքեզ յԱծ̄
կենդանի ․ զի ասասցես մեզ՝ թէ դ՞ու ես Քս̄ն
64 որդի Այ̄ ։ * Ասէ ցնա Յս̄ ․ դու ասացեր ։ բայց
ասեմ ձեզ ։ յայսմ հետէ տեսանիցէք զորդի մարդոյ նստեալ ընդաջմէ զօրութե̄ն՝ և եկեալ ընդ
65 ամպս երկնից ։ * Յայնժամ քահանայապետն պատառեաց զհանդերձս իւր, և ասէ ։ հայհոյեաց ․ զի՞
ևս պիտոյ են մեզ վկայք ։ ահա արդ լուա՞յք զհայ-
66 հոյութի̄ նր̄ ։ * Զի՞նչ հաճոյ է ձեզ ։ նոքա պատասխանի ետուն և ասեն ․ մահապարտ է ։
67 * Յայնժամ թքին ընդ երեսս նորա ․ և կափեցին
68 զնա ։ և ոմանք ապտակեցին, և ասեն ։ * Մարգարէա՛ց մեզ Քս̄դ՝ ո՞վ է՝ որ էհարն զքեզ ։
69 * Իսկ պետրոս նստէր արտաքոյ 'ի գաւթին ։ մատեաւ առ նա աղախին մի, և ասէ ։ և դու ընդ Յի̄
70 գաղ’իղ’էացւոյ էիր ։ * Նա ուրացաւ առաջի ամենեցուն և ասէ՝ թէ ոչ գիտեմ զինչ խօսիդ ։
71 * Եւ իբրև ել նա արտաքս քան զդրունսն ․ ետես
զնա այլ կին մի ․ և ասէ ցայնոսիկ՝ որք անդն կայ-
72 ին ։ և սա ընդ Յի̄ նազօրեցւոյ էր ։ * Եւ դարձեալ ուրացաւ երդմամբ ․ թէ ոչ գիտէմ զայրն ։
73 * Եւ յետ սակաւ միոյ մատուցեալ որք կային

անդ՝ ասեն ցպետրոս՝ արդարեւ եւ դու ՚ի նոցանէ
ես • քանզի եւ խօսք քո յայտ առնեն զքեզ ։
74 * Յայնժամ սկսաւ նզովել եւ երդնուլ • թէ ոչ
75 գիտեմ զայրն ։ եւ իսկոյն հաւ խօսեցաւ ։ * Եւ
յիշեաց պետրոս զբանն Յի՟ զոր ասաց՝ թէ մինչ
չեւ հաւու խօսեալ իցէ՝ երիցս ուրասցիս զիս ։
եւ ելեալ արտաքս՝ ելաց դառնապէս ։

ԳԼ. ԻԷ ։

1 Իբրեւ այգ եղեւ՝ խորհուրդ արարին ամ՟ քահանայապետք
եւ ծերք ժողովրդեանն վասն Յի՟
2 սպանանել զնա ։ * Կապեցին զնա • եւ առին գնացին
եւ ետուն ՚ի ձեռս պոնտացւոյ պիղատոսի դատաւորի ։
3 * Յայնժամ տեսեալ յուդայի որ մատնեաց
զնա՝ թէ պարտաւորեցաւ՝ զղջացաւ ։ եւ դարձոյց
զարծաթն առ քահանայապետսն եւ ծերս ժողովրդեանն ։
4 * Եւ ասէ՝ մեղայ, զի մատնեցի զարիւն
արդար ։ եւ նոքա ասեն • մեզ չէ փոյթ՝ դու գիտես ։
5 * Եւ ընկէց զարծաթն ՚ի տաճարին՝ եւ գնաց •
6 եւ չոքաւ խեղդեցաւ ։ * Իսկ քահանայապետիցն
առեալ զարծաթն՝ ասեն ։ ոչ է արժան ընդունիլ
զայդ ՚ի կորբանն՝ քանզի գինք արեան են ։
7 * Խորհուրդ առեալ՝ գնեցին այնու զագարակն բրտի
8 ՚ի գերեզմանս օտարաց ։ * Վասն այնորիկ կոչեցաւ
ագարակն այն, ագարակ արեան՝ մինչեւ ցայսօր ։
9 * Յայնժամ լցաւ՝ որ ասացաւ ՚ի ձեռն երեմիայի մարգարէին՝
առին զերեսուն արծաթին զգինս վաճառելոյն •
զոր առին յորդւոցն իլի ։
10 * Եւ ետուն զնա յագարակն բրտի • ոպ՟ հրամայեաց
11 ինձ Տր՟ ։ * Եւ Յս՟ եկաց առաջի դատաւորին ։
Եհարց ցնա դատաւորն՝ եւ ասէ ։ դո՞ւ ես թագաւորն
12 հրէից • եւ Յս՟ ասէ ։ դու ասես ։ * Եւ ՚ի
չարախօսելն նորա ՚ի քահանայապետիցն եւ ՚ի ծերոց ։
13 ոչինչ ետ պատասխանի ։ * Յայնժամ ասէ
ցնա պիղատոս ։ ո՞չ լսես՝ որչափ դոքա հակառակ
14 քո վկայեն ։ * Եւ ոչ ետ նմա պատասխանի՝ եւ
ոչ բան մի, մինչեւ զարմանալ դատաւորին յոյժ ։

15 * Բայց ըստ տօնի սովորէր դատաւորն արձակել
16 ժողովրդեանն կապեալ մի՝ զոր կամէին: * Ունէին
յայնժամ կապեալ մի նշանաւոր՝ որում անուն էր
17 յեսու բարաբբայ: * Իբրև ժողովեցան՝ ասէ ցնոսա
պիղատոս: զո՞ կամիք յերկուց աստի՝ զի արձակե-
ցից ձեզ: զյեսու բարաբբա՞յ, եթէ զՅս զանուանե-
18 ալն Քս: * Քանզի գիտէր՝ եթէ առ նախանձու
19 մատնեցին զնա: * Եւ մինչ դեռ նստէր յատենին,
առաքեաց առ նա կինն իւր՝ և ասէ: չկայ ինչ քո
և արդարոյն այնորիկ: զի բազում անցս անցին ընդ
20 իս այսօր յանուրջս վս նորա: * Իսկ քահանայա-
պետքն և ծերք՝ հաւանեցուցին զժողովուրդսն՝ զի
խնդրեսցեն զբարաբբայն՝ և զՅս կորուսցեն:
21 * Պատասխանի ետ դատաւորն՝ և ասէ ցնոսա: զո՞
կամիք. զի արձակեցից ձեզ յերկուց այտի: և նոքա
22 ասեն՝ զբարաբբայ: * Ասէ ցնոսա պիղատոս: իսկ
23 զի՞ արարից զՅս զանուանեալն Քս: * Ասեն ամե-
նեքեան, խաչեսցի. և նա ասէ՝ զի՞նչ չար արար:
և նոքա առաւել ևս աղաղակէին և ասէին. խա-
24 չեսցի: * Եւ տեսեալ պիղատոսի՝ եթէ ոչինչ օգնէ.
այլ առաւել խռովութի լինի. առեալ ջուր՝ լուաց
զձեռս առաջի ժողովրդեանն՝ և ասէ: քաւեալ եմ
ես յարենէ արդարոյդ այդորիկ: դուք գիտասջիք:
25 * Պատասխանի ետ ամ ժողովուրդն՝ և ասէ: արիւն
դորա ՚ի վր մեր և ՚ի վր որդւոց մերոց:
26 * Յայնժամ արձակեաց նոցա զբարաբբայն. և զՅս
27 գանհարեալ՝ ետ ՚ի ձեռս՝ զի խաչեսցի: * Յայնժամ
զինուորք դատաւորին առին զՅս յապարանս. և
28 ժողովեցին ՚ի վր նր զամ զգունդն: * Մերկացուցին
29 զնա. և արկին զնովաւ քղամիդ կարմիր: * Եւ բոլո-
րեալ պսակ ՚ի փշոց՝ եդին ՚ի գլուխ նր: և եղէգն
յաջոյ ձեռին նր: ՚ի ծունր իջեալ առաջի նր՝ կա-
տակէին և ասէին. ողջ եր թագաւոր հրէից:
30 * Եւ թքեալ ՚ի նա՝ առնուին զեղէգն՝ և ծեծէին
31 զգլուխ նորա: * Եւ յորժամ ձաղեցին զնա՝ մերկա-
ցուցին ՚ի նմանէ զքղամիդն. և ագուցին նմա զիւր
32 հանդերձն: և տարան զնա ՚ի խաչ հանել: * Եւ
ելեալ արտաքս՝ գտին զայր մի կիւրենացի անուն

սիմօն: զնա կալան պահակ՝ զի բարձցէ զխաչն նր:
33 * Եւ եկեալ ՚ի տեղին անուանեալ գողգոթայ՝ որ
34 է տեղի կառափելոյ: * Ետուն նմա գինի ընդ լե-
ղի խառնեալ: և իբրև ճաշակեաց՝ ոչ կամէր ըմ-
35 պել: * Եւ հանեալ զնա ՚ի խաչ՝ բաժանեցին զհան-
դերձս նորա վիճակաւ. զի լցցի բանն՝ որ ասացաւ
՚ի մարգարէէն: բաժանեցին զհանդերձս իմ յիւ-
րեանս՝ և ՚ի վր պատմուճանի իմոյ վիճակս արկա-
36 նէին: * Եւ նստեալ պահէին զնա:
37 * Եւ եդին ՚ի վր գլխոյ նր գրեալ զվնաս նորա: Թէ
38 Այս է Յս թագաւորն հրէից: * Յայնժամ հանեն ՚ի
նմա ՚ի խաչ երկուս աւազակս. մի յաջմէ նորա՝ և
39 մի յահեկէ: * Եւ որք անցանէին, հայհոյէին զնա.
40 շարժէին զգլուխս իւրեանց: * Եւ ասէին: վա՜հ՝ որ
քակէիր զտաճարն և զերիս աւուրս շինէիր զնա՝
ապրեցո՛ զքեզ. եթէ որդի ես Այ՝ էջ ՚ի խաչէդ:
41 * Նոյնպէս և քահանայապետքն ձաղէին հանդերձ
42 դպրօքն և ծերօք՝ և ասէին: * Զայլս ապրեցոյց՝
զինքն ոչ կարէ ապրեցուցանել: եթէ թագաւոր
է Իէլի՝ իջցէ այժմ ՚ի խաչէդ՝ և հաւատասցուք
43 դմա: * Եթէ յուսայաւ յԱծ, փրկեսցէ այժմ զդա՝
եթէ կամի զդա. քանզի ասաց, եթէ Այ որդի եմ:
44 * Զնոյն և աւազակքն՝ որք խաչեալ էին ընդ նմա՝
45 նախատէին զնա: * Եւ ՚ի վեց ժամէ աւուրն խաւար
46 եղև ՚ի վր ամ երկրի մինչև ցինն ժամ: * Եւ զինն
ժամաւն գոչեաց Յս ՚ի ձայն մեծ՝ և ասէ: Էղի
էղի՝ ղ՚ամասաբաքթանի: այս ինքն է. Ած իմ,
47 Ած իմ. ընդէր թողեր զիս: * Ոմանք յայնցանէ
որք անդն կային, իբրև լուան՝ ասէին: զէղ՚իա
48 կարդայ: * Եւ վաղվաղակի ընթացաւ մի ոմն ՚ի նո-
ցանէ՝ էառ սպունգ լի քացախով՝ և հարեալ յեղե-
49 գան՝ ետ ըմպել նմա: * Եւ կէսքն ասէին. թո՛ղ
տեսցուք եթէ գայ եղ՚իա փրկել զդա:
50 * Եւ Յս դարձեալ աղաղակեաց ՚ի ձայն մեծ՝ և
51 արձակեաց զոգին: * Եւ ահա վարագոյր տաճարին
ցելաւ յերկուս՝ ՚ի վերուստ մինչև ՚ի վայր: երկիր
52 շարժեցաւ: և վէմք պատառեցան: * Եւ գերեզ-
մանք բացան: և բազում մարմինք ննջեցելոց սրբոց

53 յարեան ։ * Եւ ելեալք ՚ի գերեզմանացն՝ յետ յարութեանն
նորա, մտին ՚ի քաղաքն սբ. և երևեցան
54 բազմաց * Իսկ հարիւրապետն՝ և որք ընդ նմա
պահէին զՅս՝ իբրև տեսին զշարժումն և զեղեալսն՝
երկեան յոյժ և ասեն ։ արդարև ԱՅ որդի
55 էր սա ։ * Էին անդ կանայք բազումք ։ կային
՚ի հեռաստանէ՝ և հայէին ։ որք եկին զհետ Յի ՚ի
56 գալիլեէ պաշտել զնա ։ * Յորս էր մարիամ
մագդաղենացի՝ և մարիամ յակոբայ՝ և յովսեայ
մայր ։ և մայր որդւոցն զեբեդեայ ։
57 * Եւ իբրև երեկոյ եղև՝ եկն այր մի մեծատուն յարիմաթեայ՝
որում անուն էր յովսէփ. որ աշակերտեցաւ
58 իսկ Յի ։ * Սա մատուցեալ առ պիղատոս՝ խնդրեաց
զմարմինն Յի, յայնժամ պիղատոս հրամայեաց
59 տալ զմարմինն ։ * Եւ առեալ զմարմինն յովսէփ՝
60 պատեաց սբ կտաւովք ։ * Եւ եդ ՚ի նոր գերեզմանի՝
զոր փորեաց ՚ի վիմի ։ և թաւալեցուցեալ կափարիչ
դրան գերեզմանին վէմ մի մեծ՝ և գնաց ։
61 * Անդ էր մարիամ մագդաղենացի՝ և միւս մարիամն,
62 նստէին հանդէպ գերեզմանին ։ * Եւ ՚ի
վաղիւն անդր՝ որ է յետ ուրբաթուն. ժողովեցան
քահանայապետքն և փարիսեցիք առ պիղատոս ։
63 * Եւ ասեն ։ տէր, յիշեցաք զի մոլորեցուցիչն այն
ասէր, մինչ կենդանին էր ։ թէ յետ երից աւուրց
64 յառնեմ ։ * Արդ՝ հրամայեա զգուշանալ գերեզմանին
մինչև յերիս աւուրս ։ գուցէ եկեալ աշակերտքն
գիշերի՝ գողասցեն զնա՝ և ասիցեն ժողովրդեանն՝
թէ յարեաւ ՚ի մեռելոց ։ և լինիցի յետին
65 մոլորութիւն չար քան զառաջինն ։ * Ասէ ցնոսա
պիղատոս ։ ունիք զզօրականս. երթայք՝ զգուշացարուք՝
66 ոպ և գիտէք ։ * Եւ նոքա երթեալ
զգուշացան գերեզմանին ։ և կնքեցին զվէմն հանդերձ
զօրականօքն ։

ԳԼ: ԻԸ:

1 Եւ յերեկոյի շաբաթուն յորում լուսանայր միաշաբաթին. եկն մարիամ մագդաղենացի, և
2 միւս մարիամն տեսանել զգերեզմանն: * Եւ ահա շարժումն մեծ եղև: զի հրեշտակ Տ՟ն իջեալ յերկնից՝ մատուցեալ 'ի բաց թաւալեցոյց զվէմն 'ի
3 դրանց անտի: և նստէր 'ի վերայ ն՟ր: * Եւ էր տեսիլ ն՟ր իբրև զփայլակն: և հանդերձ ն՟ր սպիտակ
4 իբրև զձիւն: * Եւ յահէ անտի նորա խռովեցան պահապանքն. և եղեն իբրև զմեռեալս:
5 * Պատասխանի ետ հրեշտակն և ասէ ցկանայսն. մի՛ երկնչիք դուք. գիտեմ զի զՅ՟ս զխաչելեալն
6 խնդրէք: * Չէ աստ. քանզի յարեաւ, ոպ՟ ասացն:
7 եկայք և տեսէք զտեղին՝ ուր կայր: * Եւ վաղվաղակի երթայք ասացէք աշակերտացն ն՟ր թէ յարեաւ՝ և ահա յառաջանայ քան զձեզ 'ի գալիլեայ: անդ տեսանիցէք զնա: ահա ասացի ձեզ:
8 * Եւ ելեալ վաղվաղակի 'ի գերեզմանէ անտի ահիւ և խնդութեամբ բազմաւ՝ ընթանային պատմել աշա-
9 կերտացն: * Եւ ահա պատահեցաւ նոցա Յ՟ս և ասէ՝ ողջ էք: և նոքա մատուցեալ կալան զոտս
10 նորա՝ և երկիրպագին նմա: * Յայնժամ ասէ ցն՟ս Յ՟ս՝ մի՛ երկնչիք: երթայք ասացէք եղբարցն իմոց՝ զի երթիցեն 'ի գալիլեայ՝ և անդ տեսցեն զիս:
11 * Իբրև նոքա գնացին, ահա ոմանք 'ի զօրականացն եկին 'ի քաղաքն՝ և պատմեցին քահանայապետիցն
12 զամ՟ որինչ եղեն: * Եւ նոքա ժողովեալ հանդերձ ծերովքն, խորհուրդ առեալ՝ արծաթ յոյժ ետուն
13 զօրականացն: * Եւ ասեն. ասասջի՛ք՝ եթէ աշակերտքն նորա եկեալ գիշերի, գողացան զնա՝ մինչ
14 մեք 'ի քուն էաք: * Եւ եթէ լուր լիցի այդ առ դատաւորն, մեք հաւանեսցուք զնա և զձեզ անհոգս
15 արասցուք: * Եւ նոցա առեալ զարծաթն՝ արարին ոպ՟ ուսանն: և ել համբաւս այս 'ի հրէից մինչև
16 ցայսօր: * Իսկ մետասան աշակերտքն գնացին 'ի գալիլեայ, 'ի լեառնն ուր ժամադիր եղև նոցա
17 Յ՟ս: * Իբրև տեսին զնա՝ երկիրպագին նմա. և

18 ոմանք երկուանային: * Եւ մատուցեալ Յս՟ խօսեցաւ ընդ նոսա և ասէ. տուաւ ինձ ամ՟ իշխանութիւն յերկինս և յերկրի: ոպ՟ առաքեաց զիս Հայր,
19 և ես առաքեմ զձեզ: * Գնացէք այսուհետև՝ աշակերտեցէք զամ՟ հեթանոսս: մկրտեցէք զնոսա յանուն Հօր՝ և Որդւոյ՝ և Հոգւոյն սրբոյ:
20 * Ուսուցէք նոցա պահել զամ՟՝ զորինչ պատուիրեցի ձեզ: Եւ ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զամ՟ աւուրս, մինչև 'ի կատարած աշխարհի:

Երևանի Ս. Զօրաւոր եկեղեցու սեղանը

ՍՐԲՈՅ
ԱՒԵՏԱՐԱՆԻՍ
ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ
ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ·

Գլուխ Առաջներորդ:

ՍԿԻԶԲՆ ԱՒԵՏԱՐԱՆԻ ՅԻ̃
2 Քի̃, որդւոյ Ա̃յ: * Որպէս և գրեալ է եսայի մար-
գարէ: ահաւասիկ ես առաքեմ զհրեշտակ իմ առա-
ջի քո. որ հանդերձեսցէ զճանապարհս քո առա-
ջի քո:
3 * Ձայն բարբառոյ յանապատի՝ պատրաստ արարէք
զճանապարհ Տ̃ն. և ուղի՛ղս արարէք զշաւիղս Ն̃ր:
4 * Եւ եղև՝ զի յօհաննէս մկրտէր յանապատի: և քա-
րոզէր զմկրտութի̃ն ապաշխարութե̃ն ՚ի թողութի̃ն
5 մեղաց: * Եւ երթայր առ նա ա̃մ աշխարհն Հրէ-
աստանի. և եէ̃մացիք ամենեքեան: և մկրտէին ՚ի
նմանէ ՚ի յորդանան գետ խոստովանեալ զմեղս
6 իւրեանց: * Եւ էր յօհաննէս զգեցեալ ստև ուղ-
տու: և գօտի մաշկեղէն ընդ մէջ իւր: և կերա-
7 կուր Ն̃ր մարախ և մեղր վայրենի: * Քարոզէր և
ասէր. գայ զօրագոյն քան զիս զկնի իմ. որում
չեմ բաւական խոնարհիլ լուծանել զխրացս կօշկաց
8 նորա: * Ես մկրտեցի զձեզ ջրով: և նա մկրտես-
9 ցէ զձեզ Հոգւով սրբով: * Եւ եղև՝ յաւուրսն
յայնոսիկ եկն Յ̃ս ՚ի նազարեթէ գալիլեացւոյ. և
10 մկրտեցաւ ՚ի յօհաննէ ՚ի յորդանան: * Եւ նոյնժա
մայն ընդ վերանալ ՚ի ջրոյն՝ ետես ցելեալ զերկինս՝
և զՀոգին Ա̃յ իբրև զաղաւնի. զի իջանէր ՚ի վ̃ր

11 նորա ։ * Ձայն եղեւ յերկնից՝ եւ ասէ • դու ես
12 Որդի իմ՝ սիրելի • ընդ քեզ հաճեցայ ։ * Եւ նոյն-
13 ժամայն Հոգին հանէ զնա յանապատ ։ * Եւ էր
նա անդ զաւուրս քառասուն փորձեալ ՚ի սատա-
նայէ ։ եւ էր ընդ գազանս • եւ հրեշտակք պաշտէ-
ին զնա ։
14 ԲԲ • * Եւ յետ մատնելոյն յօհաննու՝ եկն Յս ՚ի
գալիլեայ՝ քարոզէր զաւետարանն Այ՝ եւ ասէր ։
15 * Թէ կատարեալ է ժամանակ • եւ հասեալ է արքայ-
ութիւն Այ ։ ապաշխարեցէք, եւ հաւատացէք յա-
16 ւետարանն ։ * Իբրեւ անցանէր առ ծովեզերբն գա-
ղիլեացւոց՝ ետես զսիմոն, եւ զանդրէաս զեղբայր
սիմոնի • զի արկեալ էր նոցա ուռկանս ՚ի ծով • քան
17 զի ձկնորսք էին ։ * Եւ ասէ ցնոսա Յս՝ եկայք ըզ-
կնի իմ, զի արարից զձեզ լինել որսորդս մարդկան ։
18 * Եւ վաղվաղակի թողեալ զուռկանսն՝ գնացին ըզ-
19 հետ նր ։ * Եւ մատուցեալ անտի սակաւիկ մի յա-
ռաջ՝ ետես զյակոբոս զեբեդեայ՝ եւ զյօհաննէս
զեղբայր նորա ։ եւ զնոսա ՚ի նաւին մինչ կազմէին
20 ուռկանս • եւ կոչեաց զնոսա ։ * Եւ վաղվաղակի
թողեալ զհայրն իւրեանց զզեբեդէոս ՚ի նաւին
վարձկանօքն հանդերձ՝ գնացին զհետ նր ։
21 ԲԳ • * Եւ մտանեն ՚ի կափառնայում ։ եւ իսկ եւ
իսկ ՚ի շաբաթուն մտեալ ՚ի ժողովուրդն ուսուցա-
22 նէր զնոսա ։ * Եւ զարմանային ընդ վարդապետու-
թիւն նորա ։ զի ուսուցանէր զնոսա իբրեւ իշխա-
23 նութիւն՝ եւ ոչ որպէս դպիրքն ։ * Եւ էր ՚ի ժողովրդեանն
նոցա այր մի, յորում այս պիղծ գոյր։ որ աղաղա-
24 կեաց եւ ասէ ։ * Թո՞յլ տուր • զի՞ կայ մեր եւ քո՝
Յս նազովրեցի։ եկիր կորուսանել զմեզ ։ գիտեմք
25 զքեզ, ով ես որդի Այ ։ * Սաստեաց ՚ի նա Յս եւ
ասէ ։ կարկեաց՝ եւ ել ՚ի դմանէ ։
26 Եւ զարկոյց զնա այսն պիղծ • եւ աղաղակեաց ՚ի ձայն
27 մեծ • եւ ել ՚ի նմանէ ։ * Եւ զարմացան ամենեքին,
մինչ եւ հծծել ընդ միմեանս եւ ասել ։ զինչ է այս
նոր վարդապետութիւն • զի իշխանութեամբ եւ այսոց
28 պղծոց սաստէ՝ եւ հնազանդին սմա։ * Եւ ել լուր
նր ընդ ամ կողմն գաղիլեացւոց ։

29 * Եւ վաղվաղակի ելեալ ՚ի ժողովրդենէն՝ եկն ՚ի
տուն սիմոնի և անդրեայ՝ յակոբաւ և յօհաննու
30 հանդերձ : * Եւ զոքանչ սիմոնի դնիր ջերմա-
ցեալ · և վաղվաղակի ասեն ցնա վս՟ նր՟ :
31 * Եւ մատուցեալ յարոյց զնա՝ կալեալ զձեռանէ
նր՟ : և եթող զնա տենդն՝ և պաշտէր զնս՟ :
32 * Եւ իբրև երեկոյ եղև ՚ի մտանել արեգականն ,
բերէին առ նա զամ՟ հիւանդս՝ և զդիւահարս :
33 * Եւ էր ամ՟ քաղաքն ժողովեալ առ դրունսն :
34 * Եւ բժշկեաց զբազում հիւանդս ՚ի պէսպէս ախ-
տից : և դևս բազումս եհան : և ոչ տայր խօսել
35 ԲԴԳ· դիւացն · զի գիտէին զնա թէ Քս՟ն է : * Եւ ը՟
այգն ընդ առաւօտն յարուցեալ՝ ել , և գնաց յա-
36 նապատ տեղի · և անդ կայր յաղօթս : * Եւ գնաց
զհետ նր՟ սիմոն՝ և որք ընդ նմայն էին :
37 * Եւ իբրև գտին զնա · ասեն ցնա՝ թէ ամենեքին
38 խնդրեն զքեզ : * Եւ ասէ ցնս՟ · եկայք , երթիցուք
և յայլ մօտաւոր գիւղաքաղաքսն՝ զի և անդ քա-
39 րոզեցից : զի յայս իսկ եկեալ եմ : * Եւ քարոզէր
՚ի ժողովուրդս նոցա ընդ ամ՟ գալիլեայս · և
40 դևս հանէր : * Գայ առ նա բորոտ մի · աղաչէր ,
՚ի ծունր իջանէր , և ասէր : Տր՟ եթէ կամիս , կա-
41 րող ես զիս սրբել : * Իսկ Յս՟ գթացեալ ձգեաց
զձեռն · մերձեցոյց ՚ի նա՝ և ասէ ցնա · կամիմ ,
42 սրբեաց : * Եւ իբրև ասաց զնա , վաղվաղակի գնաց
43 ՚ի նմանէ բորոտութ՟ին՝ և սրբեցաւ : * Եւ սաս-
տեալ նմա եհան արտաքս վաղվաղակի՝ և ասէ :
44 * Զգոյշ լեր · մի ումեք ասիցես · այլ երթ՝ ցոյց
զքեզ քահանային · և մատո վս՟ սրբութ՟ե քո պա-
45 տարագ՝ զոր հրամայեաց մովսէս ՚ի վկայութ՟ի նոցա:
46 * Եւ նա ելեալ սկսաւ քարոզել յոյժ՝ և հռչակել
հարկանել զբանն · մինչ ոչ ևս կարօղ լինել նմա
յայտնապէս ՚ի քաղաք մտանել : այլ արտաքոյ յա-
նապատ տեղիս էր · և գային առ նա յամ՟ կողմանց:

ԳԼ․ Բ․

1 Եւ մտեալ դարձեալ ՚ի կափառնաում յետ աւ-
ԲԵ․ ուրց։ * Լուր եղեւ եթէ ՚ի տան է։ եւ ժողո-
վեցան բազումք՝ մինչեւ տեղի եւս ոչ լինել՝ եւ ոչ
3 առ դրանն։ եւ խօսէր նոցա զբանն։ * Եւ գային
առ նա՝ բերէին անդամալոյծ մի բարձեալ ՚ի չորից։
4 * Եւ իբրեւ ոչ կարէին մերձենալ առ նա յամբոխէ
անտի, քակեցին զյարկն՝ ուր էր Յս՟․ եւ բացեալ
զառաստաղն՝ իջուցին զմահիճսն՝ յորում կայր ան-
5 դամալոյծն։ * Եւ տեսեալ Յի՟ զհաւատս նոցա՝ ասէ
ցանդամալոյծն․ որդեակ՝ թողեալ լիցին քեզ
6 մեղք քո։ * Եւ էին ոմանք ՚ի դպրաց անտի, որք
անդ նստէին։ եւ խորհէին ՚ի սիրտս իւրեանց։
7 * Զինչ է այս՝ որ խօսի սա զհայհոյութիւս։ ո՞վ
կարէ թողուլ զմեղս՝ եթէ ոչ մի Ած՟։
8 * Եւ գիտաց Յս՟ յոգի իւր՝ թէ այնպէս խորհէ-
ին ՚ի սիրտս իւրեանց։ եւ ասէ՝ զի՞ խորհիք զայդ
9 ՚ի սիրտս ձեր։ * Զի՞նչ դիւրին է ասել ցան-
դամալոյծն․ թողեալ լիցին քեզ մեղք քո․ եթէ
ասել՝ արի, առ զմահիճս քո՝ եւ երթ ՚ի տուն քո։
10 * Այլ զի գիտասջիք եթէ իշխանութի՟ն ունի որ-
դի մարդոյ ՚ի վ՟ր երկրի թողուլ զմեղս։ (ասէ ցան-
11 դամալոյծն։) * Քեզ ասեմ։ արի առ զմահիճս քո՝
12 եւ երթ ՚ի տուն քո։ * Եւ յարեաւ վաղվաղակի
առեալ զմահիճսն՝ ել առաջի ամենեցուն․ մինչեւ
զարմանալ ամենեցուն եւ փառաւոր առնել զԱծ՟։
եւ ասել․ թէ այսպիսի ինչ երբէք ոչ տեսաք։
13 ԲԶ․ * Եւ ել դարձեալ ՚ի ծովեզրն։ եւ ամ՟ ժո-
ղովուրդն գայր առ նա․ եւ ուսուցանէր զն՟ս։
14 * Եւ մինչդեռ անցանէր․ ետես զղ՛եւի աղ՛փեայ՝
զի նստէր ՚ի մաքսաւորութ՟ե․ եւ ասէ ցնա։ Եկ
15 զկնի իմ։ եւ յարուցեալ գնաց զկնի ն՟ր։ * Եւ եղեւ
՚ի բազմելն նորա ՚ի տան նորա․ եւ բազում մաքսա-
ւորք բազմեալ էին ընդ Յի՟՝ եւ ընդ աշակերտսն
նորա։ քանզի էին բազումք՝ որք երթային զհետ
16 նորա։ * Իսկ դպիրքն՝ եւ փարիսեցիք իբրեւ տեսին
թէ ուտէ ընդ մաքսաւորս եւ ընդ մեղաւորս․

ասեն յաշակերտսն նորա: զի՞է՝ զի ընդ մեղաւորս
և ընդ մաքսաւորս ուտէք և ըմպէք:
17 * Իբրև լուաւ Յս՟ ասէ ցնոսա: ոչինչ է պիտոյ
բժիշկ ողջոց՝ այլ հիւանդաց: և ոչ եկի կոչել
18 զարդարս՝ այլ զմեղաւորս: * Եւ էին աշակերտքն
Յովհաննու և փարիսեցիքն 'ի պահս: գան և ասեն
ցնա. ընդէ՞ր աշակերտքն Յովհաննու՝ և փարիսե-
ցիքն պահեն: և քո աշակերտքդ ոչ պահեն:
19 * Եւ ասէ ցն՟ս Յս՟: միթէ մարթ ի՞նչ իցէ որդւոց
առագաստի մինչ ընդ նոսա իցէ փեսայն՝ պահել:
ցորքան ընդ իւրեանս ունիցին զփեսայն, ոչ է
20 մարթ պահել: * Այլ եկեսցեն աւուրք՝ յորժամ
վերասցի 'ի նոցանէ փեսայն. և ապա պահեսցեն
21 յաւուրն յայնմիկ: * Ոչ ոք կարկատ նոր անթափ
արկանէ 'ի վ՟ր հնացեալ ձորձոյ: ապա թէ ոչ՝ առ-
նու լրումն իւրով նորն 'ի հնոյ անտի. և չարեաս
22 պատառումն լինի: * Եւ ոչ ոք արկանէ գինի նոր
'ի տիկս հինս: ապա թէ ոչ պայթուցանէ գինին
զտիկսն: գինին հեղանի. և տիկքն կորնչին: այլ
գինի նոր 'ի տիկս նորս արկանելի է:
23 ԲԸ. * Եւ եղև նմա 'ի շաբաթու անցանել ընդ
արտորայս: և աշակերտքն 'ի գնալն իւրեանց սկսան
24 հասկ կորզել և ուտել: * Եւ փարիսեցիքն ասեն
ցնա: տե՛ս՝ զի՞նչ գործեն աշակերտքն քո 'ի շաբա-
25 թու՝ զոր չէ արժան: * Եւ ասէ ցն՟ս Յս՟. ո՞չ եր-
բէք իցէ ընթերցեալ ձեր՝ զոր արարն Դաւիթ,
յորժամ պիտոյն եղև՝ և քաղցեաւ նա՝ և որք ընդ
26 նմայն էին: * Զի՞արդ եմուտ 'ի տունն Ա՟յ առ
աբիաթարաւ քահանայապետիւ. և զհացսն առա-
ջաւորութեն էկեր. և ետ այնոցիկ որք ընդ նմայն
էին. զորս ոչ էր օրէն ուտել՝ բայց միայն քահա-
27 նայիցն: * Եւ ասէ ցն՟ս: շաբաթ վ՟ս մարդոյ եղև.
28 և ոչ եթէ մարդ վ՟ս շաբաթու: * Ապաուրեմն
Տ՟ր է որդի մարդոյ և շաբաթու:

ԳԼ. Գ։

1 Եւ եմուտ միւսանգամ ՚ի ժողովուրդն. եւ էր անդ
2 այր մի՝ որոյ ձեռն գօսացեալ էր։ * Եւ սպասէին
նմա՝ եթէ բժշկիցէ զնա ՚ի շաբաթուն, զի չարախօսեսցեն
3 զնմանէ։ * Եւ ասէ ցայրն՝ որոյ ձեռն գօսացեալ
4 էր. արի, անց ՚ի մէջ։ * Եւ ասէ ցնոսա.
զի՞նչ արժան է ՚ի շաբաթու. բարի՞ ինչ գործել՝
եթէ չար առնել. ոգի՞ մի ապրեցուցանել՝ եթէ կորուսանել.
եւ նոքա լռեցին։
5 * Եւ հայեցեալ Յի զնոքօք լի ցասմամբ. տրտմեալ
վասն կուրութեն սրտից նոցա. ասէ ցայրն՝ ձգեա ըզձեռն
քո։ եւ նա ձգեաց. եւ ողջացաւ ձեռն նորա։
6 ԳԿ. * Եւ ելեալ արտաքս վաղվաղակի փարիսեցիքն
Հերովդիանոսօքն հանդերձ, խորհուրդ առնէին վն
7 նր, եթէ զիարդ կորուսցեն զնա։ * Իսկ Յս աշակերտօքն
իւրովք գնաց ՚ի ծովեզրն. եւ բազում ժողովուրդ
՚ի Գալիլեացւոց երթային զհետ նր. եւ ՚ի
8 Հրէաստանէ։ * Եւ յԵրմէ՝ եւ յայնկոյս յորդանանու.
եւ որք ՚ի տիւրոսէ եւ ՚ի սիդոնէ. բազում ժողովուրդ
իբրեւ լսէին՝ որչափ ինչ առնէր՝ գային
9 առ նա։ * Եւ ասէ ցաշակերտսն իւր՝ զի նաւակ մի
պատրաստական կայցէ նմա վասն ամբոխին՝ զի մի
10 նեղեսցեն զնա։ * Քանզի զբազումս բժշկեաց.
մինչ գալ եւ խռնիլ զնովաւ, զի մերձեսցին առ նա.
որք ունէին ախտս ինչ։
11 * Եւ այսք պղծք յորժամ տեսանէին զնա՝ անկանէին
առաջի նորա. աղաղակէին եւ ասէին։
12 * Թէ դու ես որդին Այ. եւ նա յոյժ սաստէր
13 նոցա. զի մի յայտնի առնիցեն զնա։ * Ելանէ ՚ի
լեառն. եւ կոչէ առ ինքն զորս ինքն կամեցաւ. եւ
14 չոգան առ նա։ * Եւ արար երկոտասանս՝ զի իցեն
15 զնովաւ. եւ զի առաքեսցէ զնս քարոզել։ * Եւ ունիլ
՚ի իշխանութի բժշկելոյ զցաւս՝ եւ հանելոյ զդեւս։
16 * Եւ եդ զանուն Սիմոնի՝ Պետրոս։
17 * Եւ յակոբու Զեբեդեայ, եւ Յովհաննու եղբօրն
Յակոբայ. եդ նոցա անուանս Բանէրգեդէս. որ է
18 որդիք որոտման։ * Եւ զԱնդրէաս. եւ զՓիլիպ-

պոս. և զԲարթուղիմէոս. զՄատթէոս զմաք-
սաւորն. և զԹովմաս. և զՅակոբոս աղփեայ. և
զԹադէոս՝ և զՍիմոն կանանացի:
19 * Եւ զՅուդայ իսկարիովտացի. որ և մատնեաց զնա:
20 Գ.Գ. * Գան ՚ի տուն՝ և գայ միւսանգամ ընդ նա
ժողովուրդն. մինչ զի և զհաց ևս ոչ ժամանել
21 ուտել նոցա: * Եւ իբրև լուան՝ որք իւրքն էին՝
ելին ունել զնա. զի համարէին թէ մոլեգնեալ
22 իցէ: * Եւ դպիրքն՝ որք յԵմէ իջեալ էին, ասէ-
ին թէ բէեղզեբուղ գոյ ՚ի դմա. և իշխանաւ դի-
23 ւացն հանէ դա զդևս: * Եւ կոչեալ զն՟ս առ ինքն՝
առակօք խօսէր ընդ նոսա. զի արդ կարէ սատանայ
24 զսատանայ հանել: * Եւ արդ՝ եթէ թագաւորու-
թիւն յանձն իւր բաժանեսցի, ոչ կարէ կալ թա-
25 գաւորութիւն այն: * Եւ եթէ տուն յանձն իւր
26 բաժանեսցի, ոչ կարէ կալ տունն: * Եթէ սատանայ
՚ի վերայ անձին իւրոյ յարեաւ. և բաժանեալ իցէ,
27 ոչ կարէ կալ. այլ վախճանեալ է: * Այլ ոչ ոք
կարէ զկարասի հզօրի մտեալ ՚ի տուն ն՟ր աւար
հարկանել՝ եթէ ոչ նախ զհզօրն կապիցէ՝ և ա-
28 պայ զտունն նորա աւար հարկանիցէ: * Ամէն ասեմ
ձեզ. զի ամենայն թողցի որդւոց մարդկան, մեղք
և հայհոյութ՟իք, որչափ և հայհոյիցեն:
29 * Բայց որ հայհոյեսցէ զհոգին ս՟ր, ոչ ունիցի
զթողութ՟ի յաւիտեան. այլ պարտապան լիցի յա-
30 ւիտենից մեղաց: * Զի ասէին, թէ այս պիղծ
31 Գ.Գ. գոյ ՚ի նմա: * Գան եղբարք և մայր նորա՝ և ար-
32 տաքոյ կացեալ յղեցին, և կոչէին զնա: * Եւ անդ
ժողովուրդն շուրջ զնովաւ նստէր. և իբրև ասա-
ցին ցնա, ահաւասիկ մայր քո և եղբարք քո՝ կան
33 արտաքոյ՝ և խնդրեն զքեզ: * Պատասխանի ետ
նոցա և ասէ. ո՞վ է իմ մայր՝ կամ եղբարք:
34 * Հայեցաւ շուրջ զիւրև յաշակերտսն զի նստէին.
և ասէ՝ ահաւասիկ մայր իմ, և եղբարք իմ:
35 * Զի որ առնիցէ զկամս Այ՟, նա է եղբայր իմ.
և քոյր՝ և մայր:

ԳԼ. Դ.

1 Դարձեալ սկսաւ ուսուցանել առ ծովեզերբն.
Գէ. և խռնեցան զնովաւ ժողովուրդք բազումք.
մինչև ՚ի նաւ մտանել նմա՝ և նստել ՚ի ծովուն.
և ամենայն ժողովուրդն ցծովեզերբն ցցամաքն ու-
2 նէին: * Եւ ուսուցանէր զնոսա առակօք բազում
ինչ. և ասէր նոցա ՚ի վարդապետութեան իւրում.
3 Լուարուք: * Ահաւասիկ ել սերմանող ՚ի սերմա-
4 նել: * Եւ եղև ՚ի սերմանելն. ոմն անկաւ առ ճա-
նապարհաւ՝ և եկն թռչունն՝ և եկեր զնա:
5 * Եւ այլն անկաւ յապառաժի. ուր ոչ գոյր հող
բազում, և վաղվաղակի բուսաւ՝ քանզի ոչ գոյր
6 հիւթ երկրին: * Եւ յորժամ ծագեաց արև,
ջեռաւ. և զի ոչ գոյին արմատք, ցամաքեցաւ:
7 * Եւ այլն անկաւ ՚ի մէջ փշոց. ելին փուշքն՝ և
8 հեղձուցին զնա. և պտուղ ոչ ետ: * Եւ այլն ան-
կաւ յերկիր բարւոք. և ելեալ աճեցեալ տայր
զպտուղ. և բերէր ընդ միոյ երեսուն. և ընդ
9 միոյ վաթսուն. և ընդ միոյ հարիւր: * Եւ ասէր՝
10 ԳԸ. որ ունիցի ականջս լսելոյ լուիցէ: * Եւ
իբրև եղև առանձինն. հարցին զնա՝ որք զնովաւն
11 էին աշակերտօքն հանդերձ զառակին: * Եւ ասէ
ցնոսա. ձեզ տուեալ է գիտել զխորհուրդ արքայու-
թեան Այ. բայց նոցա որք արտաքինքն են, ամ ինչ
12 առակօք լինի: * Զի տեսանելով տեսցեն՝ և մի
տեսցեն. և լսելով լուիցեն՝ և մի իմասցին. զի մի
13 երբեք դարձցին՝ և թողցի նոցա: * Եւ ասէ ցնո-
սա. ոչ գիտէք զառակս զայս. և զի՞արդ զա՞մ ա-
14 ռակսն գիտիցէք: * Որ սերմանէն, զբանն սերմանէ:
15 * Եւ նոքա են՝ որք առ ճանապարհաւն, ուր բանն
սերմանի. և յորժամ լսեն զնա՝ գայ սատանայ՝ և
16 հանէ զսերմանեալն ՚ի սիրտս նոցա: * Եւ նոքա
են՝ որք յապառաժին սերմանեցան. որք յորժամ
լսիցեն զբանն, վաղվաղակի խնդութեամբ ընդունին:
17 * Եւ զի ոչ ունին արմատս յանձինս. այլ առ ժա-
մանակ մի են. ապա ՚ի հասանել նեղութեան կամ
հալածման վասն բանին, վաղվաղակի գայթագղին.

18 * Իսկ որ 'ի մէջ փշոցն սերմանեցաւ՝ նոքա են.
19 որք իբրև զբանն լսեն ։ * Եւ հոգք աշխարհիս.
և պատրանք մեծութեան մտանեն, և հեղձուցանեն
20 զբանն՝ և անպտուղ լինի ։ * Եւ նոքա են՝ որք յեր-
կիրն բարւոք սերմանեցան. որք լսեն զբանն՝ և
ընդունին՝ և տան զպտուղ. ընդ միոյ երեսուն՝ և
ընդ միոյ վաթսուն՝ և ընդ միոյ հարիւր ։
21 ԳԷ. * Եւ ասէ ցնոսա. մի թէ գայ ճրագ՝ զի ընդ
գրուանաւ դնիցի. կամ ընդ մահճօք. ո՞չ ապա-
22 քէն 'ի վերայ աշտանակի դնիցի ։ * Զի չէ ինչ 'ի
ծածուկ՝ որ թէ ոչ յայտնեսցի. և ոչ եղև ինչ
23 գաղտնի, եթէ ոչ 'ի յայտ կայցէ ։ * Եթէ ոք
24 ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ ։ * Եւ ասէ ցնոսա.
տեսէ՛ք զինչ լսէքդ. և յաւելցի ձեզ՝ որոց լսէքդ.
որով չափով չափէքդ՝ նովին չափեսցի ձեզ ։
25 * Որոք ունիցի, տացի նմա. և որ ոչն ունիցի՝ և
26 ԴԿ. զոր ունին՝ բարձցի 'ի նմանէ ։ * Եւ ասէր՝ այսպէս
է արքայութիւն Այ. ոպ զի այր մի արկանիցէ զսեր-
27 մանիս յերկիր ։ * Եւ ննջիցէ, և յառնիցէ զցայգ
և զցերեկ. և սերմանիքն բուսանիցին և աճիցին.
28 և նա ոչ գիտէ ։ * Թէ երկիրն ինքնին բերէ զպտու-
ղըն. նախ զխոտն՝ և ապա զհասկն՝ ապա զցորեան
29 ատոք 'ի հասկին ։ * Եւ յորժամ տայցէ զպտուղն,
վաղվաղակի առաքէ մանգաղ՝ զի հասեալ են հունձք ։
30 * Եւ ասէր. ու՞մ նմանեցուսցուք զարքայութիւն
Այ. կամ որո՞վ առակաւ առակեսցուք զնա ։
31 * Որպէս հատն մանանխոյ՝ որ յորժամ սերմանի-
ցի յերկիր՝ փոքրագոյն է քան զամենայն սերմանիս՝
32 որք են յերկրի ։ * Եւ յորժամ սերմանիցի, բու-
սանի, և լինի մեծ քան զամենայն բանջարս. և ար-
ձակէ ոստս մեծամեծս մինչև բաւական լինել ընդ
հովանեաւ նորա թռչնոց երկնից բնակել ։
33 * Եւ այնպիսի առակօք խօսէր ընդ նոսա զբանն,
34 որպէս կարող լինէին լսել ։ * Եւ առանց առակի
ոչինչ խօսէր ընդ նոսա. բայց առանձինն աշակեր-
35 ԴԲ. տացն իւրոց մեկնէր զամ ։ * Եւ ասէ ցնոսա
յաւուր յայնմիկ, իբրև ընդ երեկս լինէր ։ Եկայք՝
33 անցցուք յայն կոյս ։ * Թողուն զժողովուրդն. և

առնուն զնա նաւաւն հանդերձ. և զայլևս նաւսն՝
37 որք էին ընդ նմա: * Եւ լինիւր մրրիկ մեծ հողմոյ.
և զալիսն 'ի նաւն զեղոյր. մինչ գրեթէ՝ լի՛ իսկ
38 լինել: * Եւ ինքն ննջէր 'ի խելս նաւին 'ի վերայ
բարձի. զարթուցանէին զնա և ասէին. վարդապետ՝ ոչինչ է քեզ փոյթ. զի կորնչիմք աւասիկ:
39 * Եւ զարթուցեալ սաստեաց հողմոյն. և ծովուն
ասէ. դադարեա՛, կարկեա՛ց. և դադարեաց հողմն.
40 և եղև խաղաղութիւն մեծ: * Եւ ասէ ցնոսա. ընդէ՞ր այդպէս վատասիրտք էք. չև ևս ունիք հաւատս:
և երկեան յերկիւղ մեծ. և ասէին ցմիմեանս. ո՞
ոք արդեօք իցէ սա. զի և հողմ և ծով հնազանդին սմա:

ԳԼ. Ե.

1 Եւ եկն յայնկոյս ծովուն յաշխարհն Գերգեսացւոց:
2 * Եւ ընդ ելանելն նորա 'ի նաւէ անտի, պատահեցաւ նմա այր մի 'ի գերեզմանացն զոր ունէր
3 այս պիղծ: * Որոյ բնակութիւն իսկ 'ի գերեզմանսն
էր. և ոչ շղթայիւք ոք ևս կարէր կապել զնա:
4 * Վ̃ բազում անգամ ոտնակապօք և շղթայիւք
կապելոյ՝ և խզելոյ 'ի նմանէ զշղթայսն. և զոտնակապսն խորտակելոյ. և ոչ ոք կարէր նուաճել զնա:
5 * Քանզի հանապազ զցայգ և զցերեկ 'ի գերեզմանս
և 'ի լերինս աղաղակէր. և կոծէր զանձն իւր քա-
6 րամբք: * Իբրև ետես զՅ̃ 'ի հեռաստանէ, ընթացաւ
7 և երկիրպագ նմա: * Աղաղակեաց 'ի ձայն մեծ և
ասէ, զի՞ կայ իմ և քո Յ̃ որդի Այ̃ բարձրելոյ.
երդմնեցուցանեմ զքեզ յԱծ̃, մի տանջեր զիս:
8 * Քանզի ասէր ցնա՝ ել այսդ պիղծ 'ի մարդոյ այտի:
9 * Եւ հարցանէր ցնա՝ թէ զինչ անուն է քո. և ասէ
ցնա, Լ'էգէօն անուն է իմ. քանզի բազումք եմք:
10 * Եւ աղաչէին զնա յոյժ. զի մի՛ հալածեսցէ զնս̃
11 արտաքս քան զաշխարհն: * Եւ անդ էր առ լերամբն երամակ մի խոզից արօտական մեծ:
12 * Աղաչեցին զնա ամենայն դևքն և ասեն. առաքեա՛ զմեզ 'ի խոզսն, զի մտցուք 'ի նոսա:

13 * Եւ հրամայեաց նոցա. և իբրև ելին այսքն պղծք՝
մտին ՚ի խոզսն. և դիմեաց երամակն ՚ի դարէ ան-
տի ՚ի ծովն. էին իբրև երկու հազարք՝ և հեղձ-
14 նուին ՚ի ծովուն: * Եւ խոզարածքն փախեան. և
պատմեցին ՚ի քաղաքին և յագարակս. և ելին տե-
15 սանել զինչ իցէ՝ որ գործեցաւն: * Գան առ
Յս՟՝ և տեսանեն զդիւահարն՝ զի նստէր զգեցեալ
և զգաստացեալ՝ որ ունէր զԼէգէօնն. և զահի
16 հարան: * Եւ պատմեցին նոցա՝ որոց տեսեալն էր.
թէ զինչ եղև դիւահարին. և զինչ վասն խոզիցն:
17 * Եւ սկսան աղաչել զնա՝ գնալ ՚ի սահմանաց նո-
18 ցա: * Եւ իբրև եմուտ նա ՚ի նաւն՝ աղաչէր զնա
19 դիւահարն՝ զի ընդ նմա իցէ: * Եւ Յս՟ ոչ ետ
նմա թոյլ. այլ ասէ ցնա՝ Երթ ՚ի տուն քո՝ առ
ընտանիս քո. և պատմեա նոցա. զորինչ միան-
գամ Տր՟ արար քեզ՝ և ողորմեցաւ քեզ:
20 * Եւ չոգաւ՝ և սկսաւ քարոզել ՚ի դեկապօլին՝
զորինչ արար նմա Յս՟. և ամենեքին զարմանային:
21 ԴԴ. * Եւ իբրև էանց Յս՟ միւսանգամ յայնկոյ
մըն, ժողովեցաւ առ նա ժողովուրդ բազում. և
22 էր առ ծովեզերբն: * Եւ ահա մի ՚ի ժողովրդա-
պետացն գայր՝ որում անուն էր Յայրոս. և իբրև
23 ետես զնա՝ անկաւ առ ոտս նորա: * Աղաչէր զնա
յոյժ և ասէր. թէ դուստր նորա մերձ է ՚ի
մահ. զի եկեալ դնիցէ նմա ձեռն. որպէս զի ա-
24 պրեսցի, և կեցցէ: * Եւ գնաց ընդ նմա. երթայր
և ժողովուրդ բազում զհետ նորա. և նեղէին
25 զնա: * Եւ կին մի էր ՚ի տեռատեսութե արեան՝
26 զերկոտասան ամ: * Եւ յոյժ վշտացեալ ՚ի
բազում բժշկաց. և ծախեալ զինչս իւր զամ՟. և
չէր ինչ օգտեալ. այլ ևս առաւել գայթայեալ:
27 * Իբրև լուաւ զՅ՟է՝ եկն ՚ի մէջ ամբոխին յետոյ՝
28 և բուռն էհար զհանդերձէ նորա: * Քանզի
ասէր ՚ի միտ, թէ միայն մերձեցայց ՚ի հանդերձս
29 նորա, փրկեցայց: * Եւ վաղվաղակի ցամաքեցաւ
աղբիւր արեան նորա. և գիտաց ՚ի մարմին իւր՝ թէ
30 բժշկեցաւ ՚ի տանջանացն: * Եւ անդէն վաղվաղակի
գիտաց Յս՟ յանձն իւր զզօրութին՝ որ ել ՚ի նմանէ.

դարձաւ յամբոխն և ասէ։ Ո՞վ մերձեցաւ 'ի հան-
31 դերձս իմ։ * Եւ ասեն ցնա աշակերտքն. տեսա-
նես, զի ամբոխդ նեղէ զքեզ. և ասես, թէ ով
32 մերձեցաւ 'ի հանդերձս իմ։ * Եւ շուրջ հայէր
33 տեսանել՝ թէ ո՞վ զայն արար։ * Եւ կինն զար-
հուրեալ և դողայեալ վասն որոյ գաղտն արար.
քանզի գիտէր՝ զինչ եղև նմա. եկն, անկաւ առա-
ջի նորա. և ասաց զամենայն իրսն ստուգութ͞բ։
34 * Եւ Յ͞ս ասէ ցնա. դուստր՝ հաւատք քո կեցու-
ցին զքեզ. երթ 'ի խաղաղութ͞ի. և եղիջիր ողջ
35 Գ՝Գ. 'ի տանջանաց քոց։ * Մինչ դեռ նա զայն խօ-
սէր՝ գան ոմանք 'ի ժողովրդապետէն և ասեն. թէ
դուստրն քո մեռաւ՝ զի՞ ևս աշխատ առնես զվար-
36 դապետդ։ * Իսկ Յ͞ս իբրև լուաւ զբանն ասացեալ,
ասէ ցժողովրդապետն՝ մի՛ երկնչիր՝ բայց միայն
37 հաւատա։ * Եւ ոչ զոք եթող ընդ իւր երթալ.
բայց միայն զպետրոս՝ և զյակոբոս՝ և զյոհաննէս
38 զեղբայրն յակոբայ։ * Գայ 'ի տուն ժողովրդապե-
տին՝ և տեսանէ ամբոխ յոյժ. և լալականս՝ և
աղաղակ յոյժ։

39 * Եւ մտեալ 'ի ներքս ասէ ցնոսա. զի՞ խռովեալ
էք և լայք՝ մանուկդ ո՛չ է մեռեալ՝ այլ ննջէ։
40 * Եւ ծաղր առնէին զնա. և նորա հանեալ արտաքս
զամենեսեան, առնու ընդ իւր զհայր մանկանն
և զմայր. և զնոսա, որք ընդ նմայն էին. և մտանէ
41 ուր դնիւր մանուկն։ * Եւ կալեալ զձեռանէ ման-
կանն՝ ասէ ցնա. տաղիթա կումի. որ թարգմանի՝
42 աղջիկ դու (քեզ ասեմ) արի։ * Եւ վաղվաղակի
յարեաւ աղջիկն, և գնայր. քանզի էր ամաց՝ իբրև
երկոտասանից. և զարմացան մեծաւ զարմանալեաւ։
43 * Եւ պատուէր տայր նոցա յոյժ, զի մի՛ ոք գիտաս-
ցէ զայն. և ասաց տալ նմա ուտել։

ԳԼ. Զ։

Գ՝Ե 1 Եւ ել անտի, եկն 'ի գաւառ իւր. և երթային
զհետ նորա աշակերտքն իւր։ * Եւ եղև 'ի
շաբաթուն սկսաւ ուսուցանել 'ի ժողովրդեանն.

և բազումք իբրև լսէին, զարմանային ընդ վարդապետութիւն նորա՝ և ասէին. ուստի՞ իցէ սմա այս. կամ զի՞նչ իցէ իմաստութիւն՝ որ տուեալ է սմա. զի զօրութիւնք այսպիսիք 'ի ձեռաց սորա լինին:
3 *Ո՛չ սա է մանուկ հիւսանն. և որդին մարիամու՝ եղբայր յակոբայ՝ և յովսեայ՝ և յուդայի՝ և սիմոնի, և չիցե՞ն քորք դորա աստ առ մեզ. և գայ-
4 թագղէին 'ի նա: *Եւ ասէ ցնոսա. ո՛չ է մարգարէ անարգ՝ բայց եթէ 'ի գաւառի իւրում և յազ-
5 գատոհմի, և 'ի տան իւրում: *Եւ ո՛չ կարէր անդ և ո՛չ մի ինչ զօրութիւն առնել. բայց սակաւ ինչ հիւանդաց ձեռն եդեալ բժշկէր զնոսա:
6 *Եւ զարմանայր վասն անհաւատութեան նոցա: Եւ
Գ.Զ. շրջէր շուրջ զգաւառօքն. և ուսուցանէր:
7 *Եւ կոչեաց առ ինքն զերկոտասանսն՝ և սկսաւ առաքել զնս երկուս երկուս. և տայր նոցա իշխա-
8 նութիւն 'ի վերայ այսոց պղծոց: *Եւ պատուիրեաց նոցա՝ զի մի՛ ինչ բարձցեն 'ի ճանապարհի. բայց միայն գաւազան. մի՛ պարկ՝ մի՛ հաց՝ մի՛ պղինձ 'ի
9 գօտիս: *Այլ ագանիլ հողաթափս. և մի՛ զգե-
10 նուցուք՝ ասէ, երկուս պարեգօտս: *Եւ ասէր ցնս. յոր տուն մտանիցէք՝ անդէն օթեվանս կալջիք,
11 մինչև ելանիցէք անտի: *Եւ որք ոչ ընկալցին զձեզ՝ և ոչ լուիցեն ձեզ. յորժամ ելանիցէք անտի՝ թօթափեսջիք զփոշի ոտից ձերոց 'ի վկայութիւն
12 նոցա: *Եւ ելեալ քարոզէին՝ զի ապաշխարեսցեն:
13 *Եւ դևս բազումս հանէին. և օծանէին իւղով զբազումս հիւանդս. և բժշկէին զնոսա:
14 Գ.Է. *Եւ լուաւ արքայ հերովդէս. (քանզի յայտնի եղև անուն նորա.) և ասէր թէ յոհաննէս մկրտիչ յարեաւ 'ի մեռելոց. և վասն այնորիկ զօրութիւնք
15 լինին նովաւ: *Այլք ասէին թէ եղիա է՝ իսկ այլքն թէ մարգարէ է. կամ թէ իբրև զմի 'ի
16 մարգարէից: *Իբրև լուաւ հերովդէս՝ ասէ. զորս ես գլխատեցի զյոհաննու՝ սա է նա՝ յարեաւ
17 'ի մեռելոց: *Զի ինքն հերովդէս առաքեաց կալաւ զյոհաննէս՝ և կապեաց զնա՝ և եդ 'ի բանտի վասն հերովդիադայ կնոջ փիլիպպոսի եղբօր նորա.

18 զի նա կին արար զնա ։ * Քանզի ասէր յօհաննէս
ցհերովդէս ․ թէ ոչ է օրէն քեզ ունել զկին եղբօր
19 քո ։ * Եւ հերովդիա ոխացեալ էր ընդ նմա՝
և կամէր սպանանել զնա․ և ոչ կարէր ։
20 * Զի հերովդէս երկնչէր 'ի յօհաննէ․ քանզի գիտէր
զնա այր արդար, և սր̃․ և սպասէր նմա․ և լուեալ
'ի նմանէ, բազում ինչ առնէր՝ և քաղցրութբ
21 լսէր նմա ։ * Իբրև օր մի լինէր պատշաճ՝
յորժամ ընթրիս տայր հերովդէս յաւուր
ծննդոց իւրոց՝ նախարարաց իւրոց և հազարապետաց․
22 և մեծամեծաց գաղիլեացւոց ։ * Եւ 'ի մտանել
դստերն հերովդիայ և 'ի կաքաւել, հաճոյ եղև
հերովդի՝ և բազմականացն ․ ասէ թագաւորն ցաղջիկն․
խնդրեա՛ յինէն զոր ինչ կամիս․ և տաց քեզ ։
23 * Եւ երդուաւ նմա բազում անգամ, թէ զոր ինչ
և խնդրեսցես դու յինէն՝ տաց քեզ․ մինչև ցկէս
24 թագաւորութե իմոյ ։ * Նա ելեալ ասէ ցմայր իւր․
զի՞նչ խնդրեցից ։ և նա ասէ, զգլուխն յօհաննու
25 մկրտչի ։ * Եւ մտեալ անդրէն փութանակի առ
թագաւորն՝ ասէ , կամիմ, զի տացես ինձ վաղվաղակի
'ի վերայ սկտեղ զգլուխն յօհաննու մկրտչի ։
26 * Եւ տրտմեցաւ յոյժ թագաւորն․ այլ վասն երդմանցն
և կոչնականացն ոչ կամեցաւ անարգել զնա ։
27 * Եւ առաքեաց վաղվաղակի թագաւորն դահիճ․
և հրամայեաց բերել զգլուխ նորա․ և չոգաւ
28 գլխատեաց զնա 'ի բանտին ։ * Եւ եբեր զգլուխ
նորա սկտեղբ՝ և ետ ցաղջիկն․ և աղջիկն տարաւ
29 և ետ մօր իւրում ։ * Իբրև լուան աշակերտքն նր̃,
եկին և բարձին զմարմին նորա․ և եդին 'ի գերեզմանի ։
30 ԵԿ․ * Ժողովեցան առաքեալքն առ Յս̃ և պատմեցին
նմա զա̃մ ինչ՝ զոր արարին, և զոր ուսուցին ։
31 * Եւ ասէ ցնոսա Յս̃․ եկայք դուք առանձինն
յանապատ տեղի․ և հանգիջիք սակաւ մի․ զի
էին բազումք՝ որք երթային և գային․ և հաց
32 անգամ ոչ ժամանէին ուտել ։ * Եւ գնային նաւու
33 յանապատ տեղի առանձինն ։ * Եւ տեսին զնոսա՝
զի երթային․ և զգացին բազումք․ և հետի յամենայն
քաղաքաց խուռն ընթանային անդր․ և մեր-

*

34 ձենային առ նոսա : * Եւ ելեալ ետես ամբոխ բազում . եւ գթացաւ ՚ի նոսա . զի էին իբրեւ ոչխարք որոց ոչ իցէ հովիւ . եւ սկսաւ ուսուցանել զնոսա
35 յոյժ : * Եւ իբրեւ բազում ժամ եղեւ, մատուցեալ աշակերտքն ասէին . տեղիս անապատ է . մինչ օր կայ:
36 * Արձակեա զժողովուրդս . զի երթեալ շուրջ յագարակս եւ ՚ի գեօղս՝ գնեսցեն իւրեանց զինչ ուտիցեն . զի աստ ուտել ինչ ոչ ունին :
37 * Նա պատասխանի ետ՝ եւ ասէ ցն՟ս . դուք տուք դոցա ուտել . ասեն ցնա . երթիցուք, գնեսցուք երկերիւր դահեկանի հաց՝ եւ տացուք դոցա ուտել :
38 * Ասէ ցնոսա . քանի՞ նկանակ ունիք՝ երթայք, եւ տեսէք . իբրեւ գիտացին, ասեն ցնա՝ հինգ, եւ եր-
39 կուս ձկունս: * Եւ հրամայեաց նոցա բազմել երախանս երախանս ՚ի վերայ դալար խոտոյ :
40 * Եւ բազմեցան՝ դասք՝ դասք՝ ուր հարիւր՝ եւ ուր
41 յիսուն : * Եւ առեալ զհինգ նկանակն եւ զերկուս ձկունսն՝ հայեցաւ յերկինս . օրհնեաց . մանրեաց զնկանակսն . եւ ետ աշակերտացն զի արկցեն նոցա .
42 եւ զերկուս ձկունսն բաշխեաց ամենեցուն : * Կերին
43 ամենեքեան, եւ յագեցան : * Եւ բարձին զնշխարսն երկոտասան սակառի լի: եւ ՚ի ձկանց անտի :
44 * Եւ էին, որք կերինն՝ իբրեւ արք հինգ հազար :
45 ԵԲ. * Եւ նոյնժամայն ձեպեաց զաշակերտսն մտանել ՚ի նաւ՝ եւ յառաջագոյն քան զնա երթալ յայնկոյս ՚ի Բեթսայիդա, մինչ ինքն զժողովուրդսն
46 արձակիցէ : * Եւ հրաժարեալ ՚ի նոցանէ՝ ել ՚ի
47 լեառն կալ յաղօթս : * Եւ իբրեւ երեկոյ եղեւ՝ էր նաւն ՚ի մէջ ծովուն . եւ ինքն ՚ի ցամաքի :
48 * Եւ ետես զնոսա հողմակոծեալս ՚ի վարելն . (զի էր հողմն ընդդէմ նոցա) եւ զչորրորդ պահու գիշերոյն գայ առ նոսա գնալով ՚ի վերայ ծովուն .
49 եւ կամէր զանց առնել առ նոքօք : * Նոքա իբրեւ տեսին՝ զի գնայր ՚ի վ՟ր ծովուն, համարեցան թէ առաչօք ինչ լինիցի . եւ աղաղակ բարձին :
50 * Քանզի ամենեքեան տեսին զնա՝ եւ խռովեցան . եւ նա անդէն վաղվաղակի խօսեցաւ ընդ նոսա՝ եւ ասէ . քաջալերացարուք՝ ես եմ, մի երկնչիք :

51 * Եւ ել 'ի նաւն առ նոսա. եւ դադարեաց հողմն։
Եւ առաւել եւս յիմարեալ էին 'ի միտս իւրեանց՝ եւ
52 զարմանային յոյժ։ * Զի եւ 'ի վերայ հացին ոչ
53 իմացան. զի էր սիրտ նոցա թմբրեալ։ * Եւ իբրեւ
անցին յայնկոյս, եկին յերկիրն գեննեսարէթ։
54 * Եւ իբրեւ ելին 'ի նաւէ անտի, իսկ եւ իսկ ծանեան
55 զնա արք տեղւոյն այնորիկ։ * Եւ ընթացեալ
այսր անդր ընդ ամենայն գաւառն, սկսան մահճօք
բերել զամենայն հիւանդս՝ ուր լսէին՝ թէ անդ
56 իցէ։ * Եւ ուր եւ մտանէր 'ի գեօղս՝ կամ 'ի քա-
ղաքս՝ կամ յագարակս, 'ի հրապարակս դնէին զախտա-
ժէտս. եւ աղաչէին զնա՝ զի գոնէ 'ի քղանցս
հանդերձի նորա մերձենայցեն. եւ որք միանգամ
մերձեցան, փրկեցան։

ԳԼ. Է։

1 2 Եւ ժողովեցան առ նա փարիսեցիքն՝ եւ ոմանք
ԷԳ. 'ի դպրացն, որք եկեալ էին յերուսաղեմէ։ * Եւ
տեսեալ զոմանս յաշակերտացն նորա. զի խառնակ
ձեռօք՝ այսինքն անլուայ ուտէին զհաց, բամբասե-
3 ցին։ * Զի փարիսեցիքն՝ եւ ամ̅ հրէայք՝ եթէ
ոչ բռնալիր լուանան զձեռս՝ զհաց ոչ ուտեն։
քանզի ունին զաւանդութիւն ծերոցն։
4 * Եւ 'ի հրապարակէ մտեալ՝ եթէ ոչ նախ մկրտի-
ցին, ոչ ուտեն։ Եւ այլ ինչ բազում է, զոր ընկա-
լան ունել։ մկրտութիւնս բաժակաց՝ եւ ստամանաց՝
5 եւ պղնձեաց՝ եւ մահճաց։ * Ապա հարցանէին զնա
փարիսեցիքն եւ դպիրք, թէ ընդէ՞ր աշակերտքդ
քո ոչ գնան ըստ աւանդութեան ծերոցն, այլ խառ-
6 նակ ձեռօք զհաց ուտեն։ * Նա պատասխանի ետ
եւ ասէ ցնոսա։ Թէ բարւոք մարգարէացաւ եսայի
վ̃ ձեր կեղծաւորաց։ ոմ̃ ասաց։ ժողովուրդս այս
շրթամբք մեծարէ զիս. եւ սիրտք նոցա հեռա-
7 ցեալ 'ի բացեայ են յինէն։ * Զուր պաշտեն զիս.
ուսուցանեն վարդապետութիւնս զմարդկան պատուի-
8 րանս։ * Թողեալ զպատուիրանն Այ̃՝ ունիք
զմարդկան աւանդութիւնս։ մկրտութիւնս ստամանաց

և բաժակայ · և այլոց նմանեաց սոյին առնէք բա-
9 զումս : * Ե՛ ասէ, ցնմ : բարւոք խոտէք զպատ-
ուիրանն Ա.յ· զի զձեր աւանդութիւն հաստատիցէք :
10 * Զի մովսէս ասէ պատուեա զհայր քո և զմայր :
և որ չարախօսեսցէ զհօրէ՝ կամ զմօրէ, մահու
11 վախճանեսցի : * Ե՛ դուք ասէք՝ եթէ ասիցէ ոք
ցհայր կամ ցմայր՝ կորբան · (որ է պատարագ:)
12 զոր յինէն օգտիցիս : * Ե՛ ոչևս տայք թոյլ նմա
13 առնել ինչ՝ հօրն, կամ մօր : * Ե՛ անարգէք զբանն
Ա.յ ձերով աւանդութեամբն, զոր աւանդեցիք : և բա-
14 զում ինչ՝ որ այսմ նման է՝ առնէք : * Ե՛ կոչեալ
առ ինքն զամ ժողովուրդն՝ ասէ ցնոսա : լուարուք
15 ինձ ամենեքեան՝ և 'ի միտ առէք : * Ոչինչ ար-
տաքուստ 'ի մարդ մտեալ՝ եթէ կարիցէ պղծել
զնա · այլ որ ելանէ 'ի նմանէ է, այն է՝ որ պղծէ
16 զմարդն : * Որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ :
17 ԵԴ· * Ե՛ իբրև եմուտ 'ի տուն յամբոխէ անտի,
18 հարցանէին ցնա աշակերտքն վս առակին : * Ե՛
ասէ ցնոսա : այդպէս և դուք անմիտք էք · ո՞չ իմա-
նայք, եթէ ամ որ արտաքուստ 'ի ներքս մտանէ
19 'ի մարդ, ոչ կարէ զնա պղծել : * Զի ոչ եթէ
'ի սիրտ նորա մտանէ, այլ յորովայն՝ և արտաքս
20 ելանէ · և սրբէ զամ կերակուրսն : * Ե՛ ասէր՝
թէ որ ինչ 'ի մարդոյն ելանէ՝ այն պղծէ զմարդ :
21 * Զի 'ի ներքուստ 'ի սրտէ մարդկան խորհուրդք
չարութեան ելանեն : շնութիւնք : պոռնկութիւնք :
22 * Գողութիւնք : սպանութիւնք : ագահութիւնք : չարու-
թիւնք : նենգութիւնք : գիջութի : չարակնութի : հայ-
23 հոյութի : ամբարտաւանութի : անզգամութի : * Այս
ամ չարիք 'ի ներքուստ ելանեն · և պղծեն զմարդ :
24 ԵԵ· * Ե՛ անտի յարուցեալ՝ եկն 'ի սահմանս տիւրոսի
և սիդոնի : և մտեալ 'ի տուն՝ ոչ կամէր յայտնել :
և ոչ կարաց ծածկել :
25 * Լուաւ կին մի զնմանէ, որոյ դուստրն նեղեալ էր
26 յայսոյ պղծոյ : եկն անկաւ առ ոտս նորա : * Ե՛
կինն էր հեթանոս՝ փիւնիկ ասորի յազգէ : և
աղաչէր զնա՝ զի զդեւն հանիցէ 'ի դստերէ նորա :
27 * Ե՛ Յս ասէ ցնա · թոյլ տուր՝ զի նախ՝ յագեսցու-

ցլին մանկունք ։ զի ոչ է բարւոք առնուլ զհաց մանկանց
28 և արկանել շանց ։ * Նա պատասխանի ետ
և ասէ ։ Տ՟ր՝ և շունք ՚ի փշրանաց սեղանոյ մանկանցն
29 կերակրին ։ * Եւ ասէ ցնա ։ վ՟ն այդր բանին
30 երթ · ել դեւն ՚ի դստերէ քումմէ ։ * Գնաց ՚ի
տուն իւր՝ և եգիտ ելեալ զդեւն · և զդուստրն,
31 զի անկեալ դնիւր ՚ի մահճին ։ * Եւ ելեալ միւսանգամ
՚ի սահմանացն տիւրոսի և սիդոնի · և եկն
՚ի ծովեզրն գալիլեացւոց ՚ի մէջ սահմանացն ՚ի
32 դեկապօղիս ։ * Եւ բերին առաջի նորա խուլ մի
և համր · և աղաչէին, զի ձեռն դիցէ ՚ի վ՟ր նորա ։
33 * Եւ առեալ զնա մեկուսի յամբոխէ անտի , էարկ
զմատունս իւր ընդ ականջս Ն՟ր՝ և եթուք անդր ։
34 և կալաւ զլեզուէ նորա ։ * Հայեցաւ յերկինս՝
յոգւոց եհան՝ և ասէ ցնա ։ եփփաթայ՝ որ է բացի՛ր ։
35 * Եւ նոյնժամայն բացան լսելիք նորա · և
լուծան կապանք լեզուի նորա · և խօսէր ուղիղ ։
36 * Եւ պատուիրեաց նոցա՝ զի մի ումեք ասիցեն ։ և
որչափ նա պատուիրէր նոցա՝ նոքա ևս առաւել
37 քարոզէին ։ * Եւ ևս քան զևս զարմանային և ասէին ·
զամ՟ ինչ բարւոք գործեաց սա ։ զի խլից
լսել տայ՝ և համերց խօսիլ ։

Գլ. Ը ։

1 Յաւուրսն յայնոսիկ դարձեալ ժողովուրդ բազում
ԵՁ. էր · և ինչ ոչ ունէին ուտել ։ կոչեաց
2 զաշակերտսն իւր՝ և ասէ ցնոսա ։ * Գթամ ես
՚ի վ՟ր ժողովրդեանդ ։ զի արդ երեք աւուրք են՝
զի առ իս են · և ոչ ունին զինչ ուտիցեն ։
3 * Եւ եթէ արձակեմ զդոսա նօթիս ՚ի տունս իւրեանց՝
նւաղիցին ՚ի ճանապարհի ։ զի ոմանք ՚ի
4 դոցանէ ՚ի հեռաստանէ եկեալ են ։ * Պատասխանի
ետուն նմա աշակերտքն նորա ։ ուստի՞ կարէ ոք յագեցուցանել
զդոսա հացիւ յանապատի աստ ։
5 * Եւ հարցանէր զն՟ս · քանի՞ նկանակ հաց ունիք ։
6 և նոքա ասեն եօթն ։ * Եւ հրամայեաց ժողովրդեանն
բազմել ՚ի վ՟ր երկրի, և առեալ զեօթն նկա

նակն գոհացաւ՝ եբեկ. և տայր ցաշակերտսն՝ զի
7 արկցեն։ և արկին առաջի ժողովրդեանն։ * Եւ
ձկունս սակաւս ունէին։ և զայնս օրհնեաց. և
8 հրամայեաց արկանել։ * Կերին և յագեցան՝ և բար
9 ձին զնշխարս կոտորոցն եօթն զամբիւղ։ * Եւ էին՝
որք կերինն՝ իբրև չորք հազարք։ և արձակեաց զնս։
10 ԵՂ. * Եւ նոյնժամայն մտեալ 'ի նաւ հանդերձ
աշակերտօքն՝ եկն 'ի սահմանս դաղմանունեայ։
11 * Եկին փարիսեցիքն՝ և սկսան վիճել ընդ նմա.
և խնդրէին 'ի նմանէ նշան յերկնից փորձելով
12 զնա։ * Եւ հառաչեաց յոգի իւր՝ և ասէ. զի՞ է, զի
ազգս այս նշան խնդրէ։ ամէն ասեմ ձեզ, թէ
13 տացի նշան ազգիս այսմիկ։ * Եւ թող զնս՝ և դարձեալ եմուտ 'ի նաւ՝ և գնաց յայնկոյս։
14 * Եւ մոռացան զհաց բառնալ. բայց միայն զմի
15 նկանակ ունէին ընդ իւրեանս 'ի նաւին։ * Եւ պատուիրէր նոցա և ասէր՝ զգոյշ եղերուք 'ի խմորոյ
անտի փարիսեցւոց՝ և 'ի խմորոյ հերովդիանոսաց։
16 * Եւ խորհէին ընդ միմեանս և ասէին. թէ զի
հաց ոչ ունիմք։
17 * Գիտաց Յս՝ և ասէ ցնոսա. զի՞ խորհիք 'ի սիրտս
ձեր՝ թերահաւատք՝ թէ զհաց ոչ ունիք. տակաւին ո՞չ իմանայք՝ և ո՞չ յիշէք։ տակաւին ունի
18 զսիրտս ձեր։ * Աչք գոն՝ և ոչ տեսանէք։ ականջք
են՝ և ոչ լսէք։ և ոչ իմանայք տակաւին։ և ոչ
19 յիշէք։ * Յորժամ զհինգ նկանակն 'ի հինգ հազարսն։
և քանի՞ սակառի լի բարձիք զկոտորոցն։ և ասեն
20 երկոտասան։ * Եւ յորժամ զեօթն նկանակն 'ի
չորս հազարսն. քանի՞ զամբիւղ լի բարձիք զկո-
21 տորոցն։ և նոքա ասեն՝ եօթն։ * Եւ ասէ ցնոսա.
22 իսկ զի՞արդ ոչ իմանայք։ * Գան 'ի բեթսայիդա.
և ածեն առաջի նորա կոյր մի. և աղաչէին զնա՝
23 զի մերձեսցի 'ի նա։ * Եւ առեալ զձեռանէ կուրին՝ եհան արտաքոյ շինին. եթուք յաչս նորա.
և ձեռն եդ 'ի վր նորա. և հարցանէր ցնա՝ թէ տե-
24 սանիցէ ինչ։ * Հայեցաւ՝ և ասէր. տեսանեմ զմար-
25 դիկ՝ զի շրջին իբրև զծառս։ * Դարձեալ եդ
զձեռն 'ի վր աչաց նորա. եբաց, և տեսանէր։ ողջա-

26 ցաւ, և տեսանէր համարձակ զա̅մ։ * Արձակեաց
զնա 'ի տուն իւր, և ասէ։ 'ի շէնդ մի մտանիցես։
այլ երթ 'ի տուն քո։ և յորժամ 'ի շէնն մտանիցես՝
ԶԱ․ մի՛ ումեք ասիցես 'ի շինին։
27 * Եւ ել Յ̅ս աշակերտօքն հանդերձ 'ի շէնս
կեսարեայ փիլիպպեայ։ և 'ի ճանապարհին հարցանէր
ցաշակերտսն և ասէր։ զո՞ ասեն զինէն
28 մարդիկ՝ թէ իցեմ։ * Նոքա ետուն պատասխանի
և ասեն՝ զյօհաննէս մկրտիչ․ և այլք զեղիայ․ և
29 այլք՝ զմի ոք 'ի մարգարէից անտի։ * Ասէ ցն̅ս․ իսկ
դուք զո՞ ասէք զինէն թէ իցեմ։ պատասխանի
ետ պետրոս, և ասէ ցնա․ դու ես Ք̅ս̅ն։
30 * Եւ սաստեաց 'ի նոսա՝ զի մի ումեք ասիցեն զնմանէ։
31 * Եւ սկսաւ ուսուցանել զնոսա, թէ պարտէ
որդւոյ մարդոյ բազում չարչարանս ընդունել՝ և
անարգել յերիցանց և 'ի քահանայապետից՝ և 'ի
դպրաց։ և մեռանել․ և յերիր աւուր յառնել։
32 * Եւ համարձակ զբանն խօսեցաւ։ և առեալ զնա
33 մեկուսի պետրոսի՝ սկսաւ սաստել նմա։ * Եւ նա
դարձաւ՝ և ետես զաշակերտսն, սաստեաց պետրոսի
և ասէ։ երթ յետս իմ սատանայ։ զի ո՛չ խորհիս
34 դու զա̅յն՝ այլ զմարդկանս։ * Եւ կոչեալ
առ ինքն զժողովուրդն աշակերտօքն հանդերձ՝ ասէ
ցնոսա։ եթէ ոք կամի գալ զկնի իմ, ուրասցի
զանձն իւր․ և բարձցէ զխաչ իւր՝ և եկեսցէ զկնի
35 իմ։ * Զի որ կամիցի ապրեցուցանել զանձն իւր՝
կորուսցէ զնա։ և որ կորուսցէ զանձն իւր վ̅ աւետարանին՝
36 ապրեցուսցէ զնա։ * Զի՞նչ օգուտ է
մարդոյ, եթէ զաշխարհ ա̅մ շահեսցի․ և զանձն իւր
37 տուժեսցէ։ * Քանզի զի՞նչ տացէ մարդ փոխանակ
38 անձին իւրոյ։ * Զի որոք ամօթ համարեսցի զիս
և զբանս իմ 'ի շնացող և 'ի մեղաւոր ազգիս յայսմիկ,
և որդի մարդոյ յամօթ արասցէ զնա՝ յորժամ
եկեսցէ փառօք հօր իւրոյ՝ և հրեշտակաց
39 սրբոց։ * Եւ ասէ ցն̅ս։ ամէն ասեմ ձեզ․ զի են
ոմանք 'ի սոցանէ որք աստ կան, որք մի ճաշակեսցեն
զմահ․ մինչև տեսցեն զարքայութիւն Ա̅յ եկեալ
զօրութ̅բ։

Գլ. Թ։

1 Եւ յետ վեց աւուր առնու ընդ իւր Յս՟ զՊետրոս՝ և զՅակոբոս՝ և զՅօհաննէս. և հանէ զնս՟
'ի լեառն մի բարձր առանձինն։ և յայլակերպս
2 եղև առաջի նոցա։ * Եւ ձորձք նորա եղեն փայլուն
սպիտակ յոյժ, ոպ՟ լժափինչք երկրի՝ ոչ կարեն այնպէս
3 սպիտակացուցանել։ * Եւ երևեցաւ նոցա եղիա
մովսէսիւ հանդերձ. որք խօսէին ընդ Յի։
4 * Պատասխանի ետ պետրոս՝ և ասէ ցՅս՟։ ռաբբի,
բարւոք է մեզ աստ լինել։ և արասցուք երիս տաղաւարս։ մի քեզ։ և մի մովսէսի։ և մի եղիայի։
5 * Քանզի ոչ գիտէր զինչ խօսէր։ զի զարհուրեալ
6 էին։ * Եւ եղև ամպ մի հովանի 'ի վր՟ նոցա։
ձայն եղև յամպոյ անտի և ասէ։ դա է որդի իմ
7 սիրելի՝ դմա լուարուք։ * Եւ յանկարծակի հայեցեալ այսր անդր՝ ոչ ևս զոք ուրեք տեսին։ բայց
8 միայն զՅս՟ ընդ իւրեանս։ * Եւ մինչ դեռ իջանէին 'ի լեռնէ անտի, պատուիրեաց նոցա՝ զի մի ումեք
պատմեսցեն, զոր տեսին։ բայց յորժամ որդի մարդոյ
9 'ի մեռելոց յարիցէ։ * Եւ նոքա զբանն 'ի մտի
ունէին։ և խնդրէին ընդ միմեանս. թէ զինչ իցէ
'ի մեռելոյն յառնել.
10 * Հարցին զնա և ասեն. զի՞նչ է այն՝ զոր դպիրքն
11 ասեն, եթէ նախ եղիայի պարտ է գալ։ * Նա
պատասխանի ետ նոցա և ասէ։ եղիա նախ եկեալ
յարդարեսցէ զամ՟։ իսկ զիարդ գրեալ է զորդւոյ
մարդոյ։ զի բազում ինչ չարչարեսցի, և անգոսնեսցի։
12 * Այլ ես ասեմ ձեզ, եթէ եղիա եկն,
(և արարին ընդ նմա զինչ և կամեցան։) ոպ՟ և
13 գրեալ է վս՟ նր՟։ * Եւ եկեալ առ աշակերտսն,
տեսին ամբոխ շուրջ զնոքօք. և զդպիրսն, զի
14 վիճէին ընդ նոսա։ * Եւ վաղվաղակի ամ՟ ժողովուրդն իբրև տեսին զնա, զարմացան. և ընդ առաջ
15 ընթացեալ՝ ողջոյն տային նմա։ * Եւ եհարց զնս՟,
16 թէ զինչ վիճէիք ընդ նոսա։ * Պատասխանի ետ
միոմն 'ի ժողովրդենէն և ասէ։ վարդապետ, ածի
զորդի իմ առ քեզ. զոր ունի այս համր։

17 * Եւ ուր հասանի՝ զարկուցանէ զնա՝ եւ փրփրէ։
եւ կրճտէ զատամունս իւր՝ եւ ցամաքի։ եւ ասացի
ցաշակերտսն քո՝ զի հանիցեն, եւ ոչ կարացին հա-
18 նել զնա։ * Պատասխանի ետ նոցա եւ ասէ. ո՜վ
ազգ անհաւատ՝ մինչեւ յերբ իցեմ առ ձեզ։ մին-
չեւ յե՞րբ անսայցեմ ձեզ. ածէք զնա առ իս։
19 * Եւ ածին զնա առ նա։ Իբրեւ ետես զնա այսն՝
վաղվաղակի շարժլեաց զնա։ եւ անկեալ յերկիր
20 թաւալէր՝ եւ փրփրայր։ * Եհարց ցհայր նորա
եւ ասէ։ քանի՞ ժամանակք են՝ յորմէհետէ այդ
21 եղեւ դմա։ եւ նա ասէ. ՚ի մանկութենէ։ * Բազում
անգամ ՚ի հուր արկանէ զդա եւ ՚ի ջուր, զի կո-
րուսցէ. արդ՝ թէ կարող իցես, օգնեա մեզ
22 Տր̄ գթացեալ ՚ի վր̄ մեր։ * Եւ Յս̄ ասէ ցնա. ասա-
ցեր թէ կարող ես. ա̃մ ինչ հնարաւոր է այնմ,
23 որ հաւատայն։ * Եւ վաղվաղակի աղաղակեաց հայր
մանկանն եւ ասէ։ հաւատամ Տր̄. օգնեա անհա-
24 ւատութեան իմում։ * Իբրեւ ետես Յս̄ եթէ կուտի
ժողովուրդն ՚ի վր̄, սաստեաց այսոյն պղծոյ եւ ասէ։
համրդ եւ խուլ այս. ես տամ քեզ հրաման. ել
՚ի դմանէ. եւ այլ եւս մի մտանիցես ՚ի դա։
25 * Եւ աղաղակեաց՝ եւ յոյժ լլկեաց զնա՝ եւ ել։ եւ
եղեւ պատանեակն իբրեւ զմեռեալ. մինչեւ բազմաց
26 իսկ ասել թէ մեռաւ։ * Եւ Յս̄ կալաւ զձեռանէ
27 նր̄, յարոյց զնա. եւ կանգնեցաւ։ * Եւ իբրեւ եմուտ
նա ՚ի տունն, աշակերտքն առանձինն հարցին ցնա։
մեք ընդէ՞ր ոչ կարացաք հանել զնա։
28 * Եւ ասէ ցնս̄. այդ ազգ ոչ իւիք ելանէ, եթէ
29 ԶԳ. ոչ պահօք եւ աղօթիւք։ * Եւ անտի ել-
եալ անցանէին առ գաղ՚իղ՚եայւովք։ եւ ոչ կամէր
30 եթէ ոք գիտասցէ։ * Քանզի ուսուցանէր զաշա-
կերտսն իւր՝ եւ ասէր ցնս̄, թէ որդի մարդոյ մատ-
նելոց է ՚ի ձեռս մարդկան։ եւ սպանցեն զնա. եւ
31 իբրեւ սպանցի՝ յերիր աւուր յարիցէ։ * Եւ նոքա
ոչ գիտէին զբանն. եւ երկնչէին հարցանել ցնա։
32 * Եկն ՚ի կափառնաում։ եւ իբրեւ եմուտ ՚ի տունն՝
հարցանէր զնս̄. զինչ վիճէիք զճանապարհայն
33 ընդ միմեանս։ * Եւ նոքա լուռ լինէին. քանզի

ընդ միմեանս վիճէին 'ի ճանապարհին թէ ո՞վ
34 մեծ իցէ : * Եւ իբրև նստաւ՝ կոչեաց զերկոտա-
սանսն և ասէ ցնոսա: եթէ ոք կամի առաջին լի-
35 նել՝ եղիցի ամենեցուն պաշտօնեայ : * Եւ առեալ
մանուկ մի՝ կացոյց 'ի մէջ նոցա. և ընկալեալ զնա
36 'ի գիրկս իւր, ասէ ցնոսա : * Որ միանգամ յայս-
պիսւոց մանկտւոյ ընկալցի յանուն իմ, զիս ընդու-
նի : և որ զիս ընդունիցի, ո՛չ զիս ընդունի, այլ
37 զայն՝ որ առաքեացն զիս : * Պատասխանի ետ նմա
յօհաննէս և ասէ: վարդապետ՝ տեսաք զոմն. որ
յանուն քո դևս հանէր՝ և զմեր կնի ո՛չ շրջէր՝
38 և արգելաք զնա : * Եւ նա ասէ՝ մի՛ արգելուք
զնա : զի ո՛չ ոք է, որ առնէ զօրութիւս յանուն
39 իմ. և կարիցէ հայհոյել զիս : * Զի որ ոչն է ը̄
40 մեզ հակառակ, 'ի մեր կոյս է : * Եւ որոք արբու-
ցէ ձեզ ջուր բաժակաւ յանունս յայս, թէ դուք
Քրի̄ էք, ամէն ասեմ ձեզ՝ մի՛ կորուսցէ զվարձս
41 իւր : * Եւ որոք գայթագղեցուսցէ զմի 'ի փոքր-
կանցս՝ որք հաւատան յիս, լաւ էր նմա առաւել՝
եթէ արկեալ էր ընդ պարանոց նր̄ երկան իշոյ
42 և ընկեցեալ 'ի ծով : * Եւ եթէ գայթագղեցուս
ցէ զքեզ ձեռն քո՝ հա՛տ՝ ընկեա՛ 'ի քէն : լաւ-
իցէ քեզ խեղ մտանել 'ի կեանսն յաւիտենից՝
քան երկուս ձեռս ունիլ, և երթալ 'ի գեհենն 'ի
43 հուրն անշէջ : * Ուր որդն նոցա ո՛չ մեռանի՝ և
44 հուրն ո՛չ շիջանի : * Եւ եթէ ոտն քո գայթագ-
ղեցուսցէ զքեզ, հա՛տ՝ և ընկեա՛ զնա 'ի քէն. լաւ
իցէ քեզ կաղ մտանել 'ի կեանսն յաւիտենից,
քան երկուս ոտս ունիլ և անկանիլ 'ի գեհենն 'ի
45 հուրն անշէջ : * Ուր որդն նոցա ո՛չ մեռանի՝ և
46 հուրն ո՛չ շիջանի : * Եւ եթէ ակն քո գայթագ-
ղեցուցանէ զքեզ, հա՛ն զնա 'ի բաց: լաւ իցէ քեզ
միով ակամբ մտանել յարքայութի̄ Այ̄, քան եր-
կուս աչս ունիլ՝ և անկանիլ 'ի գեհենն:
47 * Ուր որդն նոցա ո՛չ մեռանի՝ և հուրն ո՛չ շիջա-
48 նի : * Զի ամ̄ իւիք հրով յաղեսցի : և ամ̄ ողջա-
49 կէզ աղիւ՛ յաղեսցի : * Բարւոք է աղ : և եթէ
աղն անհամեսցի, իւ՞ համեմեսցի : արդ՝ կալարուք

յանձինս ձեր աղ՝ եւ խաղաղութիւն արարէք ընդ միմեանս:

ԳԼ. Ժ.

1 Եւ անտի յարուցեալ գայ ՚ի սահմանս Հրէաստանի յայնկոյս յորդանանու: եւ երթային
ՁԴ. դարձեալ խռնեալ ժողովուրդն առ նա. եւ ոպ՟ սովոր էր՝ միւսանգամ ուսուցանէր զնոսա:
2 * Իսկ փարիսեցիքն մատուցեալ փորձելով հարցանէին զնա՝ եւ ասէին. եթէ արժան իցէ առն զկին
3 իւր արձակել: * Նա պատասխանի ետ նոցա եւ ասէ:
4 զի՞նչ պատուիրեաց ձեզ մովսէս: * Եւ նոքա ասեն. մովսէս հրաման ետ գիր մեկնելոյ գրել, եւ արձակել:
5 * Պատասխանի ետ Յս՟ եւ ասէ ցնս՟: վս՟ խստասրտութե՟ ձերոյ գրեաց զպատուիրանն զայն:
6 * Այլ ՚ի սկզբանէ արարածոյ, արու եւ էգ արար
7 զնոսա Ած՝ եւ ասէ: * Վ՟այսորիկ թողցէ այր զհայր իւր եւ զմայր. եւ երթիցէ զհետ կնոջ իւ-
8 րոյ: * Եւ եղիցին երկուքն ՚ի մարմին մի: եւ այնու
9 հետեւ ոչ են երկու՝ այլ մարմին մի: * Արդ՝ զոր
10 Ած զուգեաց՝ մարդ մի՛ մեկնեսցէ: * Եւ ՚ի տան դարձեալ աշակերտքն զնոյն հարցին ցնա:
11 * Եւ ասէ ցնոսա: եթէ այր արձակեսցէ զկին իւր՝
12 եւ առնուցէ այլ՝ շնայ: Եւ կին եթէ ելցէ յառնէ
13 ՁԵ. իւրմէ, եւ եղիցի առն այլում, շնայ: * Եւ մատուցանէին առ նա մանկտի, զի ձեռն դիցէ նոցա: իսկ աշակերտքն սաստէին այնոցիկ՝ որք մատուցա-
14 նէին: * Իբրեւ ետես Յս՟, բարկացեալ սաստեաց նոցա եւ ասէ: թո՛յլ տուք մանկտւոյդ գալ առ իս. եւ մի՛ արգելուք զդոսա: զի այդպիսեացդ է
15 արքայութի՟ Այ: * Ամէն ասեմ ձեզ: որ ոչ ընկալցի զարքայութի՟ Այ իբրեւ զմանուկ՝ ոչ մտցէ
16 ՚ի նա: * Եւ առեալ զնս՟ ՚ի գիրկս՝ ձեռն եդ ՚ի վր՟
17 եւ օրհնեաց զնոսա: * Եւ ընդ ելանել նր՟ անտի ՚ի ճանապարհ, ահաւասիկ ոմն մեծատուն ընթացեալ ՚ի ծունր իջանէր. հարցանէր ցնա՝ եւ ասէր: վարդապետ բարի. զի՞նչ արարից՝ զի զկեանսն յա-

18 ւիտենականն ժառանգեցից: * Եւ Յս ասէ ցնա:
զի՞ ասես զիս բարի: չիք ոք բարի, բայց մի Ած:
19 * Զպատուիրանսն գիտե՞ս: մի՛ շնար: մի՛ սպանաներ:
մի՛ գողանար: մի՛ սուտ վկայեր: պատուեա՛ զհայր
20 քո և զմայր: * Նա պատասխանի ետ և ասէ ցնա:
վարդապետ՝ զայդ ամ արարի ՚ի մանկութենէ իմմէ.
21 արդ՝ զի՞նչ եւս պակասիցեմ: * Եւ Յս հայեցեալ ՚ի
նա՝ սիրեաց զնա. և ասէ ցնա. մի ինչ պակաս է
՚ի քէն. եթէ կամիս կատարեալ լինել, երթ՝
զորինչ ունիս վաճառեա, և տուր աղքատաց՝ և
ունիցիս գանձս յերկինս. և առ զխաչն, և եկ զկնի
22 իմ: * Եւ նա խոժոռեալ ընդ բանն գնաց տրտում:
23 զի ունէր ինչս բազումս: * Եւ հայեցեալ յայս
կոյս յայն կոյս Յս. ասէ ցաշակերտսն: զի՞ արդ դժ
ուարին է, որք զինչսդ ունին, մտանել յարքայութի
24 Այ: * Եւ աշակերտքն զարմացեալ էին ՚ի վերայ բանիցն նր: իսկ Յս դարձեալ պատասխանի ետ նոցա
և ասէ: որդեակք՝ որչափ դժուարին է յուսացելոց
25 յինչս՝ մտանել յարքայութիւն Այ: * Դիւրին է
մալխոյ ընդ ծակ ասղան անցանել՝ քան մեծատան
26 յարքայութիւն Այ մտանել: * Եւ նոքա առաւել եւս
զարմանային՝ և ասէին ընդ միմեանս: իսկ ո՞վ կարասցէ
27 ապրել: * Հայեցեալ ընդ նոսա Յս ասէ:
առ ՚ի մարդկանէ այդ անհնարին է: այլ ոչ առ
յԱյ: զի ամենեքեան կարելիք են առ Ած:
28 Զ Զ. * Սկսաւ ասել ցնա պետրոս: ահաւասիկ մեք
29 թողաք զամ և եկաք զկնի քո: * Պատասխանի ետ
Յս և ասէ: ամէն ասեմ ձեզ. ոչ ո՛ք է՝ որ եթող
զտուն՝ կամ զեղբարս՝ կամ զքորս՝ կամ զհայր՝
կամ զմայր՝ կամ զորդիս՝ կամ զագարակս վս իմ՝
30 կամ վս աւետարանին: * Եթէ ոչ առնուցու հարիւրապատիկ այժմ յայսմ ժամանակի տունս՝ և
եղբարս՝ և քորս՝ և զմայր՝ և որդիս՝ և ագարակս՝
հալածանօք հանդերձ. և յաշխարհին որ գալոց
31 է՝ զկեանսն յաւիտենականս: * Զի բազումք եղիցին առաջինք յետինք՝ և յետինք առաջինք:
32 * Եւ էին ՚ի ճանապարհի մինչդեռ ելանէին յեէմ:
և երթայր Յս առաջի քան զնոսա: և զարմա-

33 ցեալ էին՝ որք զհետն երթային՝ և երկնչէին։
ՁԸ * Եւ առեալ միւսանգամ՝ զերկոտասանսն առանձինն,
սկսաւ ասել նոցա որինչ անցք անցանելոց
34 լինէին ընդ նա։ * Թէ ահաւասիկ ելանեմք յԵէմ։
և որդի մարդոյ մատնեսցի քահանայապետից և
դպրաց։ և դատապարտեսցեն զնա ի մահ. և մատնեսցեն
զնա հեթանոսաց։ * Եւ կատակեսցեն
զնովաւ՝ և հարկանիցեն զնա՝ և թքանիցեն ի նա՝
35 և սպանցեն՝ և յերիր աւուր յարիցէ։ * Եւ երթային
առ նովաւ յակոբոս և յովհաննէս՝ որդիքն
զեբեդեայ. և ասեն ցնա. վարդապետ, կամիմք,
զի զորինչ խնդրեսցուք մեք ի քէն՝ արասցես մեզ։
36 * Եւ նա ասէ ցնոսա։ զի՞նչ կամիք յինէն՝ զի ա-
37 րարից ձեզ * Եւ նոքա ասեն ցնա. տուր մեզ՝ զի
նստցուք մի յաջմէ քումմէ, և մի յահեկէ ի
38 փառսն քում։ * Պատասխանի ետ Յ՟ս և ասէ ցն՟ս։
ոչ գիտէք զինչ խնդրէք։ կարէ՞ք ըմպել զբաժակն՝ զոր ես ըմպելոց եմ, կամ զմկրտութիւնն
39 մկրտիլ՝ զոր ես մկրտելոց եմ։ * Եւ նոքա ասեն
ցնա՝ կարեմք։ և Յ՟ս ասէ ցնոսա։ զբաժակն՝ զոր
ես ըմպելոց եմ, ըմպիցէք. և զմկրտութիւն՝ զոր
40 ես մկրտելոց եմ, մկրտիցիք։ * Այլ նստուցանել
ընդ աջմէ իմմէ և ընդ ահեկէ՝ ոչ է իմ տալ.
41 այլ որոց պատրաստեալ իցէ։ * Եւ լուեալ զայն
տասանցն՝ սկսան բարկանալ յակոբայ և յովհաննու։
42 * Եւ Յ՟ս կոչեաց զնոսա առ ինքն, և ասէ ցնոսա։
Գիտէք, զի որք յանձն իշխանքն են հեթանոսաց՝ տիրեն նոցա։ և մեծամեծք նոցա իշխեն նոցա։
43 * Ոչ նոյնպէս իցէ և ի ձերում միջի։ այլ որ կամիցի ի ձէնջ մեծ լինել՝ եղիցի ձեր սպաշտօնեայ։
44 * Եւ որ կամիցի ի ձէնջ առաջին լինել՝ եղիցի
45 ամենեցուն ծառայ։ * Քանզի և որդի մարդոյ՝
ոչ եկն առնուլ սպաշտօն՝ այլ սպաշտել. և տալ
զանձն իւր փրկանս փոխանակ բազմաց։
46 ԸԿ. * Եւ գան յերիքով. և ընդ ելանելն ն՟ր յերիքովէ աշակերտօքն և բազում ժողովրդով, որդի տիմէի բարտիմէոս կոյր՝ նստէր մուրացիկ յանցս
47 ճանապարհի։ * Իբրև լուաւ թէ Յիսուս նա-

զօրեցի է՝ սկսաւ աղաղակել և ասել. որդի դաւթի
48 Յ՟ս, ողորմեա ինձ: * Եւ սաստէին նմա բազումք՝
զի լռեսցէ: և նա առաւել ևս աղաղակէր.
49 որդի դաւթի, ողորմեա ինձ: * Զտեղի էառ Յ՟ս,
և հրամայեաց կոչել զնա. կոչեն զկոյրն՝ և ասեն ցնա:
քաջալերեաց՝ արի, կոչէ զքեզ: * Եւ ն՟ր ընկեցեալ
զձորձս իւր, յարեաւ և եկն առ Յ՟ս: * Պատասխանի
ետ նմա Յ՟ս, և ասէ. զի՞նչ կամիս՝ թէ արարից
քեզ: ասէ ցնա կոյրն. ռաբբունի, զի բացայց:
52 * Եւ Յ՟ս ասէ ցնա: երթ՝ հաւատք քո կեցուցին
զքեզ: և վաղվաղակի բացաւ. և երթայր զհետ
ն՟ր ՚ի ճանապարհին:

ԳԼ. ԺԱ:

1 Եւ յորժամ մերձ եղեն յԵ՟էմ, ՚ի Բեթփագէ և
՚ի Բեթանիայ մօտ ՚ի լեառն Ձիթենեաց, առաքէ
2 երկուս յաշակերտաց անտի: * Եւ ասէ ցնոսա:
երթայք դուք ՚ի գեօղդ՝ որ ընդդէմ ձեր կայ:
և նոյնժամայն իբրև մտանէք ՚ի նա, գտանիցէք
յաւանակ մի կապեալ. յորոյ վերայ ոչ ոք ՚ի մարդկանէ
3 նստաւ: լուծէք զնա՝ և ածէք: * Եւ եթէ
ոք ասասցէ ցձեզ՝ եթէ զի՞ լուծանէք զյաւանակդ,
ասասջիք եթէ Տ՟ն իւրում պիտոյ է. և վաղվաղակի
4 առաքեսցէ զնա այսր: * Չոգան, և գտին զյաւանակն
կապեալ առ դուրս արտաքոյ ՚ի փողոցի
5 անդ, և լուծին զնա: * Եւ ոմանք յորոց անդն
կային՝ ասեն ցնոսա. զի՞ գործէք, զի՞ լուծանէք
6 զյաւանակդ: * Եւ նոքա ասեն ցնոսա՝ որպէս ասացն
7 Յ՟ս. և թողին նոցա: * Ածին զյաւանակն առ
Յ՟ս: և արկանեն ՚ի վ՟ր ն՟ր հանդերձս. և նստաւ ՚ի վ՟ր
8 ն՟ր: * Եւ բազումք զհանդերձս իւրեանց տարածանէին
՚ի վ՟ր ճանապարհին: և այլք ոստս ՚ի ծառոց
հատանէին՝ և արկանէին զճանապարհաւն:
9 * Եւ որք առաջի և զկնի երթային, աղաղակէին,
10 և ասէին: ովսաննայ բարձրելոյն: * Օրհնեալ որ
գայդ յանուն Տ՟ն. օրհնեալ թագաւորութիւնդ
հօր մերում դաւթի: խաղաղութիւն յերկինս՝ և

11 փառք 'ի բարձունս ։ * Եւ եմուտ Յս յէմ 'ի տաճարն ։
և հայեցեալ շուրջ զամենեքումբք ։ և զի
էր երեկոյացեալ ժամն . ել 'ի բեթանիայ երկոտա-
12 Ըն· սանիւքն հանդերձ ։ * Եւ 'ի վաղիւն անդր
մինչդեռ ելանէին 'ի բեթանիայ՝ քաղցեաւ ։
13 * Եւ ետես զթզենի մի 'ի բացուստ տերևալից . և
եկն թէ գտանիցէ ինչ 'ի նմա ։ և իբրև եկն 'ի
նա՝ ոչինչ եգիտ, բայց միայն տերև . զի ոչ էր իսկ
14 ժամանակ թզոյ ։ * Պատասխանի ետ և ասէ ցնա ։ մի
ևս ոք յաւիտեան 'ի քէն պտուղ կերիցէ ։ և լսէին
15 աշակերտքն նորա ։ * Գան յէմ ։ և մտեալ 'ի տաճարն՝
սկսաւ հանել զվաճառականսն և զգնօղս՝
որք էին 'ի տաճարին ։ և զսեղանս հատավաճառացն
ցրուեաց ։ և զաթոռս աղաւնեվաճառացն կործանեաց ։
16 * Եւ ոչ թողոյր եթէ ոք անօթ ինչ ան-
17 ցուցանիցէ ը̄ տաճարն ։ * Ուսուցանէր և ասէր ցնս ։
թէ գրեալ է ։ տուն իմ տուն աղօթից կոչեսցի
ամ հեթանոսաց ։ և դուք արարէք զդա այր
18 աւազակաց ։ * Լուան քահանայապետքն և դպիրք .
և խնդրէին թէ ոպ կորուսցեն զնա ։ բայց երկնչէին
'ի նմանէ ։ զի ամ ժողովուրդն զարմացեալ
19 էր ընդ ուսումն նր ։ * Եւ իբրև երեկոյ լինէր՝
արտաքոյ քան զքաղաքն ելանէին ։
20 * Եւ մինչդեռ այգուցն առ նովաւ անցանէին, տեսին
21 զթզենին ցամաքեալ յարմատոյ ։ * Եւ յիշեալ
պետրոս՝ և ասէ ցնա ։ ռաբբի՝ ահաւասիկ
թզենին՝ զոր անիծեր՝ ցամաքեցաւ ։
22 * Պատասխանի ետ Յս և ասէ ցնս ։ եթէ ունի-
23 ցիք զհաւատսն Այ ։ * Ամն ասեմ ձեզ . որոք
ասիցէ լերինս այսմիկ՝ բարձիր, և անկիր 'ի ծով .
և ոչ երկմտիցի 'ի սրտի իւրում, այլ հաւատայցէ՝
թէ զոր ասէն լինի, եղիցի նմա զորինչ և ասիցէ ։
24 * Վասն այսորիկ ասեմ ձեզ՝ զամ ինչ վս որոյ
աղօթս արարեալ խնդրիցէք և հաւատայցէք թէ
25 առնուցուք, եղիցի ձեզ ։ * Եւ յորժամ յաղօթս
կայցէք, թողուցուք, եթէ ունիցիք ինչ զումեքէ ։
զի և հայրն ձեր՝ որ յերկինս է, թողցէ ձեզ
26 զյանցանս ձեր ։ * Զի եթէ դուք ոչ թողուցուք,

և ոչ Հայրն ձեր՝ որ յերկինս է՝ թողցէ ձեզ
27 ԼԳ· զյանցանս ձեր։ * Գան միւսանգամ յե՟էմ. և
մինչդեռ ՚ի տաճարի անդ գնայր, գան առ նա քա-
28 հանայապետքն և դպիրք և ծերք։ * Եւ ասեն ցնա։
որո՞վ իշխանութեամբ առնես զայդ. և ո՞վ ետ քեզ
29 զիշխանութիւնդ զայդ։ * Պատասխանի ետ Յս՟ և
ասէ ցն՟ս. Հարցից և ես զձեզ բան մի՝ տուք ինձ
պատասխանի. և ես ասացից ձեզ՝ որով իշխանութեամբ
30 առնեմ զայս։ * Մկրտութիւն Յովհաննու յերկնի՞ց
էր, եթէ ՚ի մարդկանէ։ տուք ինձ պատասխանի։
31 * Խորհէին ընդ միմեանս և ասէին։ եթէ ասեմք,
եթէ յերկնից, ասէ ցմեզ՝ իսկ ընդէ՞ր ոչ հաւա-
32 տայիք նմա։ * Այլ եթէ ասեմք ՚ի մարդկանէ,
երկնչիմք ՚ի ժողովրդենէն։ զի ամենեքին գիտէ-
33 ին զՅովհաննէս, թէ մարգարէ էր։ * Պատասխանի
ետուն և ասեն ցնա՝ չգիտեմք։ և Յս՟ ետ նոցա
պատասխանի և ասէ։ և ոչ ես ասեմ ձեզ, որով
իշխանութեամբ առնեմ զայս։

ԳԼ. ԺԲ։

1 Եւ սկսաւ խօսել ընդ նոսա առակօք և ասել.
այր մի տնկեաց այգի. և էած շուրջ զնովաւ
ցանգ. և գուբ հնձանի փորեաց. և շինեաց աշտա-
րակ. և ետ զնա ցմշակս. և գնաց ՚ի տար աշխարհ։
2 * Եւ առաքեաց առ մշակսն ՚ի ժամանակի ծառայ
մի, զի ՚ի մշակաց անտի առցէ ՚ի պտղոյ այգւոյն։
3 * Եւ նոքա կալեալ գան հարին զնա՝ և արձակե-
4 ցին ունայն։ * Դարձեալ առաքեաց առ նոսա այլ
ծառայ. և զնա կառափնատեցին՝ և արձակեցին
5 անարգեալ։ * Եւ դարձեալ այլ առաքեաց. և
զնա սպանին։ և զբազումս այլս. զոմանս հարկա-
6 նէին. և զոմանս սպանանէին։ * Ապա որդի մի էր
սիրելի, զնա առաքեաց առ նոսա յետոյ. և ասէ,
թերևս ամաչեսցեն յորդւոյ աստի իմմէ։
7 * Իսկ մշակքն իբրև տեսին զնա թէ գայ, ասեն
ցմիմեանս՝ սա է ժառանգն. եկա՛յք, սպանցուք զսա.
8 և մեր լիցի ժառանգութիւն։ * Եւ կալեալ զնա՝

9 սպանին՝ և հանին արտաքոյ այգւոյն: * Արդ՝ զի՞նչ
արասցէ Տր̅ այգւոյն. եկեսցէ և կորուսցէ զմշակսն.
10 և տացէ զայգին ՚ի ձեռս այլոց: * Եւ ոչ զգիրն
զայն ընթերցեալ իցէ ձեր. թէ զվէմն, զոր ա-
նարգեցին շինողքն, նա եղև գլուխ անկեան:
11 * ՚Ի Տէ եղև այս. և է սքանչելի յաչս մեր:
12 * Եւ խնդրէին զնա ունել. և երկեան ՚ի ժողովր-
դենէ անտի. զի գիտացին թէ առ նոսա ասաց
13 զառակն. և թողին զնա՝ և գնացին: * Եւ առա-
քեն առ նա զոմանս ՚ի փարիսեցւոց անտի՝ և ՚ի
հերովդիանոսաց. զի զնա որսասցեն բանիւ. և նոքա
եկեալ հարցանէին զնա նենգութը̅ և ասէին:
14 * Վարդապետ, գիտեմք զի ճշմարիտ ես. և ոչինչ
փոյթ է քեզ զումեքէ. զի ոչ հայիս յերեսս
մարդկան. այլ ճշմարտութը̅ զճանապարհն Այ̅
ուսուցանես. արդ՝ տամ՛ մեզ՝ արժան է հարկս տալ
կայսեր, թէ ոչ. տացո՞ւք, եթէ ոչ տացուք:
15 * Եւ Յս̅ գիտաց զկեղծաւորութի նոցա՝ ասէ ցնս̅.
զի՛ փորձէք զիս կեղծաւորք. բերէք ինձ դահեկան
16 մի՝ զի տեսից: * Եւ նոքա բերին: Եւ ասէ ցնո-
սա. ո՞յր է պատկերս այս, կամ՝ գիր: Եւ նոքա ասեն
17 ԷՊ· ցնա՝ կայսեր: * Պատասխանի ետ Յս̅, և ասէ
ցնոսա. երթա՛յք, տո՛ւք զկայսերն կայսեր. և զԱյ̅ն,
18 Այ̅: և զարմացան ը̅ նմա: * Գան առ նա սադու-
կեցիքն. որք ասեն՝ թէ չիք յարութի. հարցանէին
19 զնա և ասէին: * Վարդապետ, մովսէս գրեաց մեզ:
եթէ ուրուք եղբայր մեռանիցի և թողուցու
կին. և զորդի ոչ թողուցու, առցէ եղբայր նր̅
զկին նորա. և յարուսցէ զաւակ եղբօր իւրում:
20 * Արդ՝ եղբարք եօթն էին առ մեզ. առաջինն էառ
կին՝ և մեռաւ. և ոչ եթող զաւակ:
21 * Եւ երկրորդն էառ զնոյն, և մեռաւ. և ոչ նա
եթող զաւակ. նոյնպէս և երրորդն էառ զնոյն:
22 * Եւ եօթանեքեան իսկ. և ոչ թողին զաւակ.
23 յետ ամենեցուն մեռաւ և կինն: * Արդ՝ ՚ի յարու-
թեն, յորժամ յառնիցեն, ո՞յր ՚ի նոցանէ լինիցի
կինն՝ զի եօթանեքեան կալան զնա կին:
24 * Պատասխանի ետ Յս̅ և ասէ ցնոսա. ո՞չ վասն

*

այդորիկ իսկ մոլորեալ էք. զի ոչ գիտէք զգիրս՝
25 և ոչ զզօրութիւն այ՟: * Զի յորժամ 'ի մեռե-
լոց յարիցեն, ոչ արք կանայս առնեն, և ոչ կա-
նայք արանց լինին. այլ իբրև զհրեշտակս իցեն՝
26 որք յերկինս են: * Այլ վասն յարութե՟ մեռե-
լոց զի յառնեն, ո՞չ իցէ ընթերցեալ ձեր 'ի գիրսն
Մովսէսի 'ի մորենւոջն. որպէս ասաց ցնա Ած՟. ես
եմ, ասէ՝ Ած՟ աբրահամու. Ած՟ իսահակայ: և Ած՟
27 յակոբայ: * Եւ ոչ է Ած՟ մեռելոց՝ այլ կենդան-
եաց. և արդ՝ դուք յոյժ մոլորեալ էք:
28 * Եւ մատուցեալ միոյն 'ի դպրացն՝ լուէր նոցա
մինչ վիճէին. իբրև ետես եթէ բարւոք ետ
նոցա զպատասխանին, եհարց ցնա և ասէ. ո՞ր պա-
29 տուիրան է առաջին: * Եւ Յս՟ ասէ ցնա. առաջին
քան զամենայն. լո՛ւր իէլ՟, Տր՟ Ած՟ մեր՝ Տր՟ մի է:
30 * Եւ սիրեսցես զՏր՟ Ած՟ քո յամենայն սրտէ
քումմէ՝ և յամ՟ անձնէ քումմէ. և յամենայն զօր-
ութե՟ քումմէ. այս է առաջին պատուիրան:
31 * Եւ երկրորդ նման սմին. սիրեսցես զընկեր քո
իբրև զանձն քո. մեծ քան զսոսա այլ պատուիրան
32 ոչ գոյ: * Եւ ասէ ցնա դպիրն, բարւոք է վար-
դապետ. ճշմարտութբ՟ ասացեր՝ թէ մի է Ած՟ և
33 ոչ գոյ այլ՝ բաց 'ի նմանէ: * Եւ սիրել զնա յամե-
նայն սրտէ՝ և յամենայն զօրութե՟՝ և յամ՟ մտաց.
և սիրել զընկերն իբրև զանձն, առաւել է քան
34 զողջակէզս և զզոհս: * Եւ տեսեալ Յի՟ թէ իմաս-
տութբ՟ ետ զպատասխանին, ասէ ցնա. չես հեռի
յարքայութե՟ Այ՟. և ոչ ոք իշխէր ինչ հար-
35 ԻԵ. ցանել ցնա: * Պատասխանի ետ Յս՟ և ասէ՝
մինչ ուսուցանէր 'ի տաճարին, զիա՞րդ ասեն
36 դպիրքն, եթէ Քս՟ն որդի դաւթի է: * Եւ ինքն
դաւիթ Հոգւովն սրբով ասէ. ասաց Տր՟ ցՏր՟ իմ,
նիստ ընդ աջմէ իմմէ, մինչև եդից զթշնամիս քո
37 պատուանդան ոտից քոց: * Արդ՝ եթէ ինքն իսկ
դաւիթ ցնա Տր՟ կոչէ, յիա՞րդ իցէ որդի նորա:
և բազում ժողովուրդ լսէր նմա քաղցրութբ՟:
38 * Եւ ասէր ուսուցանելով 'ի վարդապետութե՟
իւրում. զգո՛յշ լերուք 'ի դպրաց անտի. որք կամին

՚ի հանդերձս երկայնս շրջել. զնախողջոյնս խնդրել
39 ՚ի հրապարակս։ * Եւ զնախաթոռս ՚ի ժողովուրդս.
40 եւ զգահագլուխս յընթրիս։ * Որք ուտեն զտունս
այրեաց. պատճառանօք յերկարեն զաղօթս. զի
աւելի եւս դատաստանս ընկալցին։
41 * Կայր Յս̃ ընդդէմ գանձանակին. տեսանէր թէ
զիարդ ժողովուրդն արկանէր պղինձ ՚ի գանձանակն.
եւ բազում մեծատունք արկին բազում ինչ։
42 * Եկն այրի մի, եւ էարկ երկուս լումայս. որ է
43 նաքարակիտ մի։ * Եւ կոչեալ առ ինքն զաշակերտսն,
ասէ ցնս̃. ամէն ասեմ ձեզ. զի այրին այն տառա-
պեալ՝ շատ էարկ քան զամենեսեան ՚ի գանձանակն։
44 * Քանզի ամենեքին յաւելորդաց իւրեանց արկին.
այլ նա ՚ի չքաւորութենէ իւրմէ՝ զամենայն ինչ զոր
ունէր՝ էարկ զոյն՛ չափ կեանս իւր։

ԳԼ. ԺԳ։

1 Եւ յելանելն նորա ՚ի տաճարէ անտի, ասէ
ԷՁ. ցնա մի յաշակերտացն նր̃. վարդապետ. տես՝
որպիսիք են քարինքս եւ որպիսիք շինուածք։
2 * Պատասխանի ետ նմա Յս̃ եւ ասէ. տեսանես
զայդ ամենայն շինուած. ամէն ասեմ ձեզ՝ եթէ
ոչ թողցի քար ՚ի քարի վերայ՝ որ ոչ քակտեսցի։
3 * Եւ մինչ նստէր նա ՚ի լերինն ձիթենեաց յան-
դիման տաճարին, հարցանէին ցնա առանձինն, պե-
տրոս՝ եւ յակոբոս՝ եւ յովհաննէս՝ եւ անդրէաս։
4 * Ասա մեզ, երբ լինիցի այդ. եւ զի՞նչ նշան է՝
5 յորժամ կատարելոց իցէ այդ ամենայն։ * Պատաս-
խանի ետ Յս̃ եւ ասէ ցնս̃. զգո՛յշ կացէք. միոք
6 զձեզ խաբեսցէ։ * Զի բազումք եկեսցեն յանուն
իմ. եւ ասիցեն՝ թէ ես եմ Քս̃՝ եւ զբազումս
7 մոլորեցուսցեն։ * Այլ յորժամ լսիցէք պատերազ-
մունս, եւ համբաւս պատերազմաց, մի խռովիցիք.
զի պարտ է լինել. բայց չեւ է կատարած։
8 * Զի յարիցէ ազգ յազգի վերայ. եւ թագաւորու-
թի ՚ի թագաւորութե̃ վր̃. եւ եղիցին շարժմունք
՚ի տեղիս տեղիս. սովք՝ եւ սրածութիւնք՝ եւ խռո-

վութիւնք. այլ այն ամենայն սկիզբն է երկանց:
9 * Եւ զձեզ իսկ մատնեսցեն յատեանս՝ և ՚ի ժողովուրդս տանջիցիք. և առաջի դատաւորաց և թագաւորաց կայցէք վասն իմ ՚ի վկայութիւն նոցա:
10 * Եւ ամենայն հեթանոսաց. բայց նախ պարտ է
11 աւետարանիս քարոզել: * Այլ յորժամ տանիցին զձեզ մատնել, մի յառաջագոյն հոգայցէք. և մի զմտաւ ածիցէք, թէ զինչ խօսիցիք. այլ որինչ տացի ձեզ ՚ի ժամուն յայնմիկ՝ զայն խօսիցիք. զի ոչ դուք էք՝ որք խօսիցիքն՝ այլ Հոգին սուրբ:
12 * Մատնեսցէ եղբայր զեղբայր ՚ի մահ՝ և հայր զորդի. և յառնիցեն որդիք ՚ի վերայ հարց՝ և սպա-
13 նանիցեն զնոսա: * Եւ եղիջիք ատեցեալք յամենեցունց վասն անուան իմոյ. այլ որ համբերեսցէ
14 իսպառ՝ նա կեցցէ: * Եւ յորժամ տեսանիցէք զպղծութիւն աւերածին. զի կայցէ ՚ի տեղւոջ, ուր չիցէ արժան. որ ընթեռնուն ՚ի միտ առցէ. յայնժամ որք ՚ի Հրէաստանի իցեն՝ փախիցեն ՚ի լերինս:
15 * Եւ որ ՚ի վ՟ր տանեացն իցէ՝ մի իջցէ ՚ի տուն.
16 և մի մտցէ բառնալ ինչ ՚ի տանէ իւրմէ: * Եւ որ յագարակին իցէ, մի դարձցի յետս առնուլ
17 զձորձս իւր: * Բայց վա՜յ իցէ յղեաց և ստնդուա՛ց,
18 յաւուրսն յայնոսիկ: * Յաղօթս կացէք՝ զի մի
19 ձմերանի լինիցի: * Եղիցին աւուրքն այնոքիկ նեղութեանց՝ ոպ՟ ոչ եղեն երբէք այնպիսիք ՚ի սկզբանէ արարածոց մինչև ցայժմ, և մի այլ լիցի:
20 * Եւ եթէ ոչ էր կարճեալ ԱԾ զաւուրսն զայնոսիկ վասն ընտրելոց իւրոց՝ ոչ ապրէր ամենայն մարմին. այլ վ՟ն ընտրելոյն՝ զորս ընտրեաց՝ կար-
21 ճեաց զաւուրսն զայնոսիկ: * Յայնժամ եթէ ոք ասիցէ ձեզ. եթէ ահաւասիկ է Քս՟ն. կամ անա-
22 նիկ, մի հաւատայցէք: * Զի յարիցեն սուտ քրիստոսք. և սուտ մարգարէք. և տայցեն նշանս և արուեստս՝ առ ՚ի մոլորեցուցանելոյ եթէ հնար ինչ
23 իցէ և զընտրեալսն: * Բայց դուք զգո՛յշ եղերուք. ահաւասիկ յառաջագոյն ասացի ձեզ զա՟մ:
24 * Այլ յաւուրսն յայնոսիկ յետ նեղութեան այնորիկ արեգակն խաւարեսցի. և լուսին ոչ տացէ

25 զլոյս իւր: * Եւ աստեղք երկնից թօթափեսցին.
եւ զօրութիւնք յերկինս շարժեսցին:
26 * Եւ յայնժամ՝ տեսցեն զորդի մարդոյ եկեալ ամ-
27 պովք՝ զօրութ̄բ եւ փառօք բազմօք: * Եւ յայնժամ
առաքեսցէ զհրեշտակս իւր. եւ ժողովեսցէ զընտ-
րեալս իւր ՚ի չորից հողմոց. ՚ի ծագաց երկրի մինչեւ
28 ՚ի ծագս երկնից: * Բայց դուք ՚ի թզենւոյ անտի
ուսջիք զառակն, յորժամ տակաւ ոստքն նորա կակ-
ղանայցեն. եւ տերեւ արձակիցի ՚ի նմանէ՝ գիտէք թէ
29 մերձ է ամառն: * Նոյնպէս եւ դուք՝ յորժամ տե-
սանիցէք զայս ամենայն եղեալ՝ գիտասջիք թէ
30 մերձ է առ դուրս: * Ամէն ասեմ ձեզ. թէ ոչ
անցցէ ազգս այս՝ մինչեւ այս ամենայն եղիցի:
31 * Երկինք եւ երկիր անցցեն. եւ բանք իմ ոչ ան-
32 ցանիցեն: * Այլ վ̄ս աւուրն այնորիկ եւ ժամու՝
ոչ ոք գիտէ. ոչ հրեշտակք յերկինս՝ եւ ոչ որդի.
33 բայց հայր միայն: * Զգոյշ եղերուք: սկեցէք եւ
կացէք յաղօթս. զի ոչ գիտէք երբ ժամանակն
34 իցէ: * Որպէս այր մի գնացեալ ՚ի տար աշխարհ՝
թողուցու զտուն իւր. եւ տայցէ ծառայից իւրոց
իշխանութ̄ի. եւ իւրաքանչիւր զգործս իւր. եւ
դռնապանին պատուէր տայցէ. զի արթուն լինիցի:
35 * Արդ՝ արթուն կացէք. (զի ոչ գիտէք երբ Տ̄ր
տանն գայցէ՝ յերեկորեայ՝ եթէ ՚ի մէջ գիշերի՝
եթէ ՚ի հաւախօսի՝ եթէ ընդ առաւօտս.)
36 Գուցէ եկեալ յանկարծակի՝ գտանիցէ զձեզ ՚ի
37 քուն: * Բայց զոր ձեզդ ասեմ, ամենեցուն ասեմ,
արթուն կացէք:

ԳԼ. ԺԴ:

1 Եւ էր զատիկ եւ բաղարջակեր, յետ երկուց ա-
ԷԷ. ւուրց. խնդրէին քահանայապետքն, եւ դպիրք՝
եթէ զիարդ զնա նենգութ̄բ կալեալ սպանանի-
2 ցեն: * Բայց ասէին, թէ մի ՚ի տօնի աստ. զի մի
3 խռովութ̄ի լինիցի ՚ի ժողովրդեանն: * Եւ մինչ
էր ՚ի բեթանիայ ՚ի տան սիմօնի բորոտի բազմեալ,
եկն կին մի, որ ունէր շիշ իւղոյ նարդեան ազնուի

մեծագնոյ : և բեկեալ զշիշն՝ եհեղ 'ի վերայ գլխոյ
4 նորա : * Եւ աշակերտքն զչարէին և ասէին : ընդէ՞ր
5 եղև կորուստ իւղոյդ այդորիկ : * Մարթ էր
զայդ իւղ վաճառել աւելի քան զերեքհարիւր դահեկանի • և տալ աղքատաց : և զայրանային նմա
6 յոյժ : * Եւ Յս̄ ասէ ցնս̄ : թո՛յլ տուք դմա : զի՞
աշխատ առնէք • զի գործ մի բարի գործեաց դա
7 յիս : * Յամ̄ժամ զաղքատս ընդ ձեզ ունիք : և
յորժամ կամիք՝ կարօղ էք առնել նոցա բարիս •
8 այլ զիս ոչ յամ̄ժամ ընդ ձեզ ունիք : * Դա
զոր ունէր, արար : յառաջագոյն խնկեաց զմարմին
9 իմ 'ի նշան պատանաց : * Ամէն ասեմ ձեզ • ուրեք
քարոզեսցի աւետարանս այս ընդ ամ̄ աշխարհ,
և զոր արար դա՝ խօսեսցի յիշատակի դորա :
10 * Եւ յուդա իսկարիովտացի մի յերկոտասանից անտի, գնաց առ քահանայապետսն՝ զի մատնեսցէ
11 զնա նոցա : * Նոքա իբրև լուա՛ն՝ խնդացին : և
խոստացան տալ նմա արծաթ : և խնդրէր թէ
12 զիա՞րդ պարապով մատնեսցէ զնա : * Եւ յառաջնում աւուր բաղարջակերացն • յորում զպասէքն
զենուին • ասեն ցնա աշակերտքն : ո՞ւր կամիս՝ երթիցուք՝ պատրաստեսցուք՝ զի կերիցես զզատիկն :
13 * Եւ առաքէ երկուս յաշակերտաց անտի՝ և ասէ
ցնս̄ : երթա՛յք 'ի քաղաքն : և իբրև մտանիցէք 'ի
քաղաքն՝ պատահեսցի ձեզ այր մի • որ սափոր
14 ջրոյ յուսն ունիցի : երթա՛յք զհետ նորա : * Եւ յոր
տուն մտանիցէ, ասասջիք ցտանուտէրն • վարդապետն ասէ՝ ո՞ւր են իջեւանքն իմ, ուր աշակերտօքս
15 ուտիցեմ զզատիկն : * Եւ նա ցուցցէ ձեզ վերնատուն մի մեծ զարդարեալ • անդ պատրաստեսջիք
16 մեզ : * Եւ գնացին պատրաստել աշակերտքն նորա :
ելին 'ի քաղաքն՝ և գտին ոպ̄ ասացն նոցա : և
17 պատրաստեցին զզատիկն : * Եւ իբրև երեկոյ եղև՝
18 գայ երկոտասանիւքն հանդերձ : * Եւ իբրև բազմեցան, և դեռ ուտէին, ասէ Յս̄ : ամէն ասեմ ձեզ՝
զի միոմն 'ի ձէնջ մատնելոց է զիս : որ ուտէ իսկ
19 ընդ իս : * Եւ նոքա սկսան տրտմել՝ և ասել մի
ըստ միոջէ՝ միթէ ե՞ս իցեմ • և միւսն, միթէ ե՞ս

20 իցեմ: * Նա պատասխանի ետ և ասէ ցնոսա: մի
յերկոտասանից այտի, որ մխեաց ընդ իս 'ի սկա-
21 ւառակդ: * Այլ որդի մարդոյ երթայ՝ ոպ̅ գրեալ
է վս̅ նր̅: բայց վայ իցէ մարդոյն այնմիկ՝ յորոյ
ձեռն որդի մարդոյ մատնեսցի: լաւ էր նմա՝ թէ
22 չէր իսկ ծնեալ մարդն այն: * Եւ մինչդեռ ուտէ-
ին, առեալ Յս̅ հաց· օրհնեաց և եբեկ՝ ետ նոցա,
23 և ասէ· առէք՝ այդ է մարմին իմ: * Եւ առեալ
բաժակ՝ գոհացաւ. և ետ նոցա· և արբին 'ի նմանէ
24 ամենեքեան: * Եւ ասէ ցնս̅: այս է արիւն իմ նո-
րոյ ուխտի· որ փոխանակ բազմաց հեղանի:
25 * Ամէն ասեմ ձեզ· թէ ոչ եւս յաւելից ըմպել 'ի
բերոյ որթոյ մինչև ցօրն յայն՝ յորժամ արբից
26 զնա նոր յարքայութեան Այ̅: * Եւ գոհացեալ՝ ելին
27 'ի լեառն ձիթենեաց: * Եւ ասէ ցնոսա Յս̅· ամե-
նեքեան գայթագղելոց էք յինէն յայսմ գիշերի·
զի գրեալ է, թէ հարից զհովիւն, և ոչխարքն ցրո-
28 ւեսցին: * Այլ յետ յարութեան իմոյ յառաջագոյն
29 երթայց քան զձեզ 'ի Գալիլեա: * Պատասխանի
ետ պետրոս և ասէ ցնա: թէպէտ և ամենեքին
30 գայթագղեսցին, այլ ես ոչ: * Եւ ասէ ցնա Յս̅:
ամէն ասեմ քեզ· թէ դու իսկ յայսմ գիշերի
մինչև հաւու խօսեալ իցէ՝ երիցս ուրասցիս զիս:
31 * Իսկ պետրոս առաւելեւս պնդէր և ասէր: եթէ
մեռանիլ ևս հասանիցի ընդ քեզ, զքեզ ոչ ու-
րացայց: նոյնպէս և ամենեքեան ասէին: * Գան 'ի
32 գեօղն՝ որում անուն էր գեթսեմանի: և ասէ ցաշա-
կերտսն: Նստարո՛ւք աստ՝ մինչ ես յաղօթս կայցից:
33 * Եւ առնու ընդ իւր զպետրոս՝ և զյակոբոս՝ և
34 զյօհաննէս· և սկսաւ տրտմիլ և հոգալ: * Յայն-
ժամ ասէ ցնոսա: տրտում է անձն իմ մինչև 'ի
35 մահ· մնացէք աստ՝ և արթո՛ւն կացէք: * Եւ մա-
տուցեալ սակաւիկ մի յառաջ, անկաւ 'ի վր̅ երե-
սաց իւրոց յերկիր· և կայր յաղօթս· զի եթէ
36 հնար իցէ՝ անցցէ 'ի նմանէ ժամն: * Եւ ասէ:
ա՛բբա հայր: ամ̅ ինչ քեզ հնարաւոր է: անցո՛ զբա-
ժակս զայս յինէն: բայց ոչ որպէս ես կամիմ՝ այլ
37 ոպ̅ դու կամիս: * Եւ գայ՝ գտանէ զնս̅՝ զի ննջէին:

և ասէ ցպետրոս. սիմոն ննջես. ոչ կարացեր
38 ժամ մի արթուն կալ: *Արթուն կացէք՝ և յա-
ղօթս կացէք. զի մի մտջիք 'ի փորձութի. ոգիս
յօժար է՝ բայց մարմինս տկար:
39 *Եւ դարձեալ չոգաւ՝ եկաց յաղօթս. և զնոյն
40 բան ասաց: *Դարձաւ միւսանգամ անդրէն. և
եգիտ զնոսա 'ի քուն. քանզի էին աչք նոցա ծան-
րացեալք. և ոչ գիտէին զինչ պատասխանի տայ-
41 ցեն նմա: *Գայ երրորդ անգամ, և ասէ ցնոսա.
ննջեցէք այսուհետև, և հանգերուք. զի հասեալ
է վախճան. եկն ժամ. և ահա որդի մարդոյ մատնի
42 'ի ձեռս մեղաւորաց: *Օն արիք, գնասցուք. զի
ահաւասիկ մերձեցաւ՝ որ մատնելոց է զիս:
43 *Եւ մինչդեռ նա զայն խօսէր՝ գայ յուդա իսկա-
րիօտացի՝ մի յերկոտասանից անտի. և ընդ նմա
ամբոխ սուսերօք և բրօք. 'ի քահանայապետից՝
44 և 'ի դպրաց՝ և 'ի ծերոց: *Տուեալ էր նշան
մատնչի՝ և ասէր. ընդ որում ես համբուրեցից՝
նա է. կալջիք զնա՝ և տարջիք զգուշութ̅ք̅:
45 *Եւ մատուցեալ վաղվաղակի՝ ասէ ցնա. ռաբբի,
46 ռաբբի. և համբուրեաց զնա: *Եւ նոքա արկին
47 'ի նա ձեռս՝ և կալան զնա: *Եւ միումն յայնցանէ՝
որք զնովաւն կային՝ ձգեալ զսուր. և եհար զծա-
ռայ քահանայապետին. և 'ի բաց եհան զունկն նր̅:
48 *Պատասխանի ետ Յս̅ և ասէ ցնոսա. իբրև 'ի վր̅
աւազակի ելիք սուսերօք և բրօք ունիլ զիս:
49 *Հանապազ առ ձեզ էի՝ և ուսուցանէի 'ի տա-
ճարին. և ոչ կալայք զիս. այլ զի լցցին գիրք
50 մարգարէից: *Յայնժամ թողին զնա աշակերտքն
51 ամենեքին՝ և փախեան: *Եւ մին երիտասարդ զհետ
երթայր նորա արկեալ զիւրև զկտաւ մի 'ի մեր
52 կուց. ունէին զնա երիտասարդքն: *Եւ նր̅ թողեալ
53 զկտաւսն փախեաւ մերկ 'ի նոցանէ: *Եւ տարան
զՅս̅ առ քահանայապետն կայիափայ. և գային
ընդ նմա ամ̅ քահանայքն՝ և դպիրք և ծերք:
54 *Եւ պետրոս երթայր զհետ նր̅ մինչև 'ի ներքս
իսկ 'ի գաւիթ քահանայապետին. և նստէր ընդ
55 սպասաւորսն. և ջեռնոյր առ լուսովն: *Իսկ քա-

հանայապետքն՝ և ամ՟ ատեանն խնդրէին համբաւակ Յ՟ի վկայութ՟ի ինչ: զի չարախօսեսցեն զնա·
56 և ոչ գտանէին: * Զի բազումք սուտ վկայութիւն վկայէին զնմանէ· և նման միմեանց ոչ էին
57 վկայութ՟իքն: * Այլք յարուցեալ վկայէին սուտ
58 զնմանէ, և ասէին: * Թէ մեք լուաք 'ի դմանէ զի ասէր: ես քակեցից զտաճարդ զայդ ձեռագործ· և զերիս աւուրս շինեցից զայլ՝ առանց ձեռագոր-
59 ծի: * Սակայն և այնպէս չէր նման վկայութ՟ի նո-
60 ցա: * Ապա յարուցեալ քահանայապետն 'ի մէջ հարցանէր զՅ՟ս, և ասէր· ոչինչ տաս պատասխանի· զի՞նչ դոքա զքէն վկայեն:
61 * Եւ Յ՟ս լուռևեթ կայր, և չտայր ինչ պատասխանի: դարձեալ քահանայապետն հարցանէր ցնա կրկին անգամ և ասէր: դո՞ւ ես Ք՟ս որդի Ա՟յ
62 օրհնելոյն: * Պատասխանի ետ Յ՟ս և ասէ ցնա: դու ասացեր՝ թէ ես եմ: բայց տեսանիցէք զորդի մարդոյ նստեալ ընդ աջմէ զօրութ՟ե Ա՟յ· և ե-
63 կեալ ընդ ամպս երկնից: * Եւ քահանայապետն պատառեաց վաղվաղակի զպատմուճան իւր և ասէ:
64 զի՞նչ ևս պիտոյ են մեզ վկայք: * Ահա լուայք ամենեքեան զհայհոյութ՟ի 'ի բերանոյ դորա: զիա՞րդ թուի ձեզ: և ամենեքեան դատապարտեցին զնա՝
65 թէ մահապարտ է: * Եւ ոմանք սկսան թքանել ընդ երեսս նր՟: ձորձ զգլխով արկանել՝ կոփել և ասել: մարգարէա՛ց մեզ Ք՟դ: ո՞վ է այն՝ որ եհարն զքեզ: և սպասաւորքն ապտակս հանէին
66 զնա. * Եւ Պետրոս մինչդեռ էր 'ի խոնարհ 'ի գաւ-
67 թին, գայ աղախին մի քահանայապետին: * Եւ տեսանէ զնա՝ զի ջեռնոյր· հայեցաւ ընդ նա և ասէ· և դու ընդ Յ՟ի Նազովրեցւոյ էիր:
68 * Նա ուրացաւ և ասէ· ոչ ճանաչեմ· և ոչ գիտեմ զինչ դուդ ասես: և ելեալ ել յարտաքին
69 գաւիթն՝ և հաւ խօսեցաւ: * Դարձեալ ետես զնա աղախինն· և սկսաւ ասել ցայնոսիկ՝ որք շուրջն
70 կային, թէ և սա 'ի նոցանէ է: * Եւ նա դարձեալ ուրացաւ: և յետ սակաւ միոյ՝ դարձեալ որք շուրջն կային, ասեն ցՊետրոս· արդարև և դու 'ի նոցա-

նէ ես . քանզի գաղիղեայի ես՝ և խօսքդ իսկ քո
71 նմանի են . * Եւ սկսաւ նզովել երդնուլ և ասել
72 թէ ո՛չ գիտեմ զայրդ զոր դուքդ ասէք : * Եւ նոյն
ժամայն կրկին հաւ խօսեցաւ . և յիշեաց պետրոս
զբանն՝ զոր ասաց ընդ Յս, թէ չև իցէ հաւու
երկիցս խօսեալ . զի դու երիցս ուրասցիս զիս : և
սկսաւ լալ :

Դ

Գլ. ԺԵ:

Եւ վաղվաղակի ընդ առաւօտն, խորհուրդ արարեալ
քահանայապետիցն հանդերձ ծերօքն և
դպրօք, և ամենայն ատեանն . կապեցին զՅս՝ և տարան՝
մատնեցին պիղատոսի :
2 * Եհարց զնա պիղատոս և ասէ . դու ես թագաւորն
հրէից: Նա պատասխանի ետ նմա և ասէ՝ դու
3 ասես : * Եւ չարախօսէին զնմանէ յոյժ քահանայապետքն.
4 և նա ոչինչ տայր պատասխանի : * Իսկ
պիղատոս դարձեալ հարցանէր զնա . ոչի՞նչ տաս պատասխանի.
տես՝ քանի ամբաստանեն զքէն :
5 * Եւ Յս այնուհետեւ ոչինչ ետ պատասխանի . մինչ
6 չև զարմանալ յոյժ պիղատոսի : * Բայց ըստ տօնի
արձակէր նոցա զմի ոք կապեալ . զոր խնդրեանք
7 խնդրէին : * Եւ էր՝ որում անուն էր բարաբբաս՝
կապեալ ընդ խռովիչսն, որոց ընդ խռովելն զայր
8 մի սպանեալ էր : * 'Ի ձայն բարձր սկսաւ աղաղակել
ամբոխն և խնդրել՝ որպէս սովոր էր . զի արձակեսցէ
9 նոցա զբարաբբայն : * Պատասխանի ետ
պիղատոս և ասէ ցնս . կամի՞ք, զի արձակեցից ձեզ
10 զարքայն հրէից : * Քանզի գիտէր թէ առ նախանձու
11 մատնեցին զնա քահանայապետքն . * Այլ
և զամբոխն հաւանեցուցին՝ զի արձակեսցէ նոցա
12 զբարաբբայն : * Դարձեալ պատասխանի ետ պիղատոս
և ասէ ցնոսա . իսկ զի՞նչ կամիք թէ արարից
13 զարքայն հրէից : * Եւ նոքա դարձեալ աղաղակէին
յուզեալք 'ի քահանայապետիցն 'ի խաչ
14 հան զդա : * Ասէ ցնոսա պիղատոս . զի՞նչ ինչ
չար արարեալ իցէ դորա . և նոքա առաւել ևս աղա-

15 ղակէին և ասէին․ 'ի խաչ հան զդա ։ * Իսկ Պի-
ղատոս իբրև զկամս կամեցաւ հաճել ամբոխին,
արձակեաց նոցա զԲարաբբայն․ և զՅս̄ գան հա-
16 րեալ ետ 'ի ձեռս․ զի 'ի խաչ ելանիցէ ։ * Եւ
զինուորքն տարան զնա 'ի ներքս 'ի գաւիթն՝ ուր
հրապարակն էր․ և կոչեն միանգամայն զամենայն
17 զգունդն ։ * Եւ զգեցուցանեն նմա քղամիդ կար-
միր, և ծիրանիս․ և եդին 'ի գլուխ նր̄ պսակ արարեալ
18 'ի փշոյ ։ * Եւ սկսան ողջոյն տալ նմա և
ասել՝ ողջ եր արքայդ հրէից ։
19 * Եւ ծեծէին զգլուխն եղեգամբ․ և թքանէին ը̄
երեսս․ և 'ի ծունր իջեալ երկիրպագանէին նմա ։
20 * Եւ իբրև կատակեցին զնա, մերկացուցին զքղա-
միդն և ծիրանիս․ և զգեցուցին նմա զիւր հան-
դերձն․ և ածին արտաքս․ զի 'ի խաչ հանիցեն զնա ։
21 * Եւ ունէին պահակ զսիմոն կիւրենացի՝ որ ընդ-
այն անցանէր, եկեալ յագարակէ․ զհայրն աղեք-
սանդրի և ռուփայ․ զի բարձցէ զխաչափայտն նորա ։
22 * Եւ ածեն զնա 'ի գող՚գոթայ՝ տեղ մի․ որ թարգ-
23 մանի տեղի կառափելոյ ։ * Եւ տային նմա դինի
զմռսեալ՝ և նա ոչ էառ․ և հանին զնա 'ի խաչ ։
24 * Եւ իբրև խաչեցին զնա՝ բաժանեցին զհանդերձս
նր̄․ արկեալ վիճակս 'ի վերայ՝ թէ ո՞ զինչ առնու-
25 ցու ։ * Էր ժամ երրորդ՝ և հանին զնա 'ի խաչ ։
26 * Եւ էր գիր վնասու նր̄ գրեալ թէ թագաւոր է
27 հրէից ։ * Եւ ընդ նմա հանին 'ի խաչ երկուս
աւազակս․ մի ընդ աջմէ նր̄ և մի ընդ ահեկէ ։
28 * Եւ լցաւ գիրն՝ որ ասէ, թէ ընդ անօրէնս հա-
29 մարեցաւ ։ * Եւ որք անցանէինն, հայհոյէին զնա,
շարժեալ զգլուխս իւրեանց՝ և ասէին․ վա՛հ՝ որ
քակէիր զտաճարն՝ և զերիս աւուրս շինէիր ։
30 * Ապրեցո՛ զանձն քո՝ և էջ 'ի խաչէդ ։
31 * Նոյնպ̄ և քահանայապետքն այպն արարեալ ընդ
միմեանս հանդերձ դպրօքն՝ ասէին․ զայլս ապրե-
32 ցոյց՝ զանձն ոչ կարէ ապրեցուցանել ։ * Քս̄դ
արքայդ իսլի․ իջցէ այժմ 'ի խաչէ այտի․ զի տեսցուք
և հաւատասցուք դմա․ և որք ընդ նմա 'ի
33 խաչն ելեալ էին՝ նախատէին զնա ։ * Եւ իբրև

վեց ժամ եղև՝ խաւար կալաւ զամենայն երկիր
34 մինչև յինն ժամ։ * Եւ յիններորդ ժամուն աղաղակեաց
Յս ՚ի ձայն մեծ և ասէ. Էղի՛ Էղի՛ ղամասաբաքթանի.
որ թարգմանի. Ած իմ, Ած
35 իմ, ընդէ՞ր թողեր զիս։ * Եւ ոմանք ՚ի նոցանէ՝
որք շուրջն կային զնովաւ՝ իբրև լուան, ասէին թէ
36 զեղիայ կարդայ։ * Եւ ընթացեալ միոյն՝ ելից
սպունգ մի քացախով. և հարեալ յեղեգան՝ տայր
ըմպել նմա. և ասէ՝ թո՛յլ տուք՝ տեսցուք, գայ
37 եղիա իջուցանել զդա։ * Եւ Յս արձակեաց զձայն
38 մեծ՝ և եհան զոգի։ * Եւ վարագոյր տաճարին
պատառեցաւ յերկուս, ՚ի վերուստ մինչև ՚ի խոնարհ։
39 * Եւ տեսեալ հարիւրապետին՝ որ կայր
անդ՝ եթէ աղաղակեաց և եհան զոգի, ասէ.
40 արդարև այրս այս՝ որդի Այ էր։ * Էին և կանայք՝
որք հայէին ՚ի հեռաստանէ. յորս էր մարիամ
մագդաղենացի. և մարիամ յակոբու փոքրկան.
41 և յովսեայ մայրն. և սաղոմէ։ * Որք յորժամ էրն
՚ի գալիլեա զհետ շրջէին նր, և պաշտէին զնա.
և այլք բազումք կանայք՝ որք ընդ նմա իսկ ելեալ
42 էին յեմ։ * Եւ իբրև երեկոյ եղև՝ (քանզի
43 ուրբաթ էր՝ որ ՚ի շաբաթն մտանէր։) * Եկեալ
յովսէփ՝ որ յարիմաթեայն էր. այր պարկեշտ նախարար,
որև ինքն իսկ ակնունէր արքայութեն Այ.
համարձակեցաւ՝ եմուտ առ պիղատոս. և խնդրեաց
44 զմարմինն Յի։ * Եւ պիղատոս զարմացաւ, թէ
այնչափ վաղ մեռաւ. և կոչեալ առ ինքն զհարիւրապետն,
եհարց զնա, և ասէ՝ թէ արդարև այնչափ
45 վաղ մեռաւ։ * Եւ իբրև ստուգեաց ՚ի հարիւրապետէ
անտի, շնորհեաց զմարմինն յովսէփայ։
46 * Եւ յովսէփ գնեալ կտաւ՝ և իջուցեալ զնա պատեաց
կտաւովն. և եդ ՚ի գերեզմանի. որ էր փորեալ
՚ի վիմէ. և թաւալեցոյց զվէմ մի ՚ի դուռն
47 գերեզմանին։ * Իսկ մարիամ մագդաղենացի. և
մարիամ յակոբայ՝ և յովսեայ, տեսին զտեղին՝ ուր
եդաւ։

ԳԼ. ԺԶ։

1 Եւ իբրեւ էանց շաբաթն՝ մարիամ մագդաղ՚ենա-
ցի՝ եւ մարիամ յակօբայ եւ սաղ՚օմէ, չոքան պատ-
րաստեցին խունկս. զի եկեսցեն եւ օծցեն զնա։
2 * Եւ ընդ առաւօտս միաշաբաթուն, գան ՚ի գե-
3 րեզմանն ընդ արեւագալն։ * Եւ ասէին ցմիմեանս,
ո՞վ թաւալեցուսցէ մեզ զվէմն ՚ի դրանց գերեզ-
4 մանին։ * Եւ հայեցեալ տեսին՝ զի թաւալեցու-
ցեալ էր վէմն ՚ի գերեզմանէն. քանզի էր մեծ յոյժ։
5 * Եւ մտեալ ՚ի ներքս ՚ի գերեզմանն՝ տեսին զեր-
իտասարդ մի, զի նստէր ընդ աջմէ կողմանէ, զգե-
ցեալ պատմուճան սպիտակ՝ եւ զարհուրեցան։
6 * Եւ նա ասէ ցնոսա. մի՛ երկնչիք՝ զՅ՟ս խնդրէք
զնազօրեցի զխաչելեալն, յարեաւ. չէ աստ՝ ահա-
7 ւասիկ տեղին, ուր եդին զնա։ * Այլ երթա՛յք,
ասացէք յաշակերտս նր՟, եւ ցպետրոս, թէ ահա
յառաջագոյն երթայ քան զձեզ ՚ի գալիլ՚եայ.
8 անդ տեսանիցէք զնա, որպէս ասացն ձեզ։ * Եւ
իբրեւ լուան, ելին եւ փախեան ՚ի գերեզմանէն,
քանզի զահիհարեալ էին. եւ ո՛չ ումեք ինչ ա-
9 սացին՝ զի երկնչէին։ * Յարուցեալ Յ՟ս առաւօ-
տուն, առաջին միաշաբաթուն, երեւեցաւ մարիամու
մագդաղ՚ենացւոյ, յորմէ հանեալ էր եօթն դեւսն։
10 * Եւ նա երթեալ պատմեաց այնոցիկ՝ որք ընդ
11 նմայն էին, մինչդեռ լային եւ սգային։ * Նոքա
իբրեւ լուան թէ կենդանի է. եւ երեւեցաւ նմա՝
12 ո՛չ հաւատային։ * Յետոյ երեւեցաւ այլով կեր-
պարանաւ՝ որք երթային յանդաստան։
13 * Նոքա չոքան՝ պատմեցին այլոց. եւ ո՛չ նոցա հա-
14 ւատացին։ * Յետոյ մինչդեռ բազմեալ էին մետա-
սանքն, երեւեցաւ նոցա. եւ թշնամանեաց զանհա-
ւատութ՟ի նոցա, եւ զխստասրտութ՟ի. զի որ երեւ-
եցաւ նոցա յարուցեալ ՚ի մեռելոց՝ եւ ո՛չ հաւա-
15 տացին։ * Եւ ասէ ցն՟ս. երթա՛յք յաշխարհ ամե-
նայն. եւ քարոզեցէք զաւետարանն արքայութ՟ե
61 ա՟մ արարածոց։ * Որ հաւատասցէ եւ մկրտեսցի,
կեցցէ. եւ որ ո՛չ հաւատասցէ՝ դատապարտեսցի։

17 * Նշանք այնոցիկ՝ որք հաւատան, երթիցեն զհետ այնոցիկ: յանուն իմ դևս հանիցեն. լեզուս խօսես-
18 ցին: * 'Ի ձեռս իւրեանց օձս բարձցեն. և եթէ զմահացու ինչ դեղ արբցեն. նոցա ինչ ոչ մնասեսցէ. 'ի վերայ հիւանդաց ձեռս դիցեն՝ և բժշկես-
19 ցեն: * Եւ ինքն Տ͞ր Յ͞ս յետ խօսելոյն ընդ նոսա՝ համբարձաւ յերկինս. և նստաւ ընդ աջմէ Հօր:
20 * Եւ նոքա ելեալ քարոզէին ընդ ա͞մ երկիր՝ Տ͞ն գործակցութ͞բ. և զբանն հաստատէին ա͞մ նշանօք՝ որք երթային զհետ նոցա:

⁂

ՍՐԲՈՅ
ԱՒԵՏԱՐԱՆԻՍ
ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ.
ԸՍՏ ՂՈՒԿԱՍՈՒ:

Գլուխ Առաջներորդ:

ՔԱՆԶԻ ԲԱԶՈՒՄՔ ՅՕԺԱՐԵՑԱՆ վերստին կարգել զպատմութ͞ի վասն իրացն հաս-
2 տատելոց 'ի մեզ: * Որպէս աւանդեցին մեզ որք 'ի սկզբանէ ականատեսք և սպասաւորք եղեն բանին:
3 * Կամ եղև և ինձ. որ 'ի սկզբանէ զհետ երթեալ էի ամենայնի՝ ճշմարտութ͞բ՝ կարգաւ գրել քեզ՝
4 քաջդ Թէոփիլէ: * Զի ծանիցես զբանիցն, որոց աշակերտեցար, զճշմարտութ͞ի:

5 * Եւ եղեւ յաւուրս Հերովդի արքային Հրէաստանի,
քահանայ ոմն անուն զաքարիա 'ի դասակարգէ աբիայ . եւ կին նորա 'ի դստերաց ահարոնի . եւ անուն
6 նորա եղիսաբէթ ։ * Եւ էին արդարք երկոքին առաջի Ա՟Յ . գնային յամենայն պատուիրանս՝ եւ յիրա-
7 ւունս Տ՟Ն անարատք ։ * Եւ ոչ գոյր նոցա որդեակ .
քանզի եղիսաբէթ ամուլ էր . եւ երկոքեան ան-
8 ցեալք էին զաւուրբք իւրեանց ։ * Եւ եղեւ 'ի քա-
հանայանալն նորա ըստ կարգի աւուրցն հասանելոյ
9 առաջի Ա՟Յ ։ * Ըստ օրինի քահանայութեանն էհաս
նմա խունկ արկանել՝ մտեալ 'ի տաճարն Տ՟Ն ։
10 * Եւ ամենայն բազմութի՟ ժողովրդեանն կային
յաղօթս արտաքոյ 'ի ժամ խնկոցն ։
11 * Եւ երեւեցաւ նմա հրեշտակ Տ՟Ն . զի կայր ընդ
12 աջմէ սեղանոյ խնկոցն ։ * Եւ խռովեցաւ զաքարիա
13 իբրեւ ետես . եւ անկաւ ահ 'ի վերայ նորա ։ * Ասէ
ցնա հրեշտակն Տ՟Ն . մի երկնչիր զաքարիա . զի
լուելի եղեն աղօթք քո . եւ կին քո եղիսաբէթ
ծնցի քեզ որդի . եւ կոչեսցես զանուն ն՟ր յօհան-
14 նէս ։ * Եւ եղիցի քեզ ուրախութի՟ եւ ցնծութի՟ .
եւ բազումք 'ի ծննդեան նորա խնդասցեն ։
15 * Զի եղիցի մեծ առաջի Տ՟Ն . եւ գինի եւ օղի մի
արբցէ . եւ Հոգւով սրբով լցցի անդստին յորո-
16 վայնէ մօր իւրոյ ։ * Եւ զբազումս յորդւոցն ի՟լի
17 դարձուսցէ 'ի Տ՟Ր Ա՟Ծ իւրեանց ։ * Եւ ինքն եկեսցէ առաջի ն՟ր Հոգւով եւ զօրութ՟բ եղիայի .
դարձուցանել զսիրտս հարց յորդիս . եւ զանհաւանս յիմաստութ՟ի արդարոց . պատրաստել Տ՟Ն ժո-
18 ղովուրդ կազմեալ ։ * Եւ ասէ զաքարիա ցհրեշտակն .
եւ իւ գիտացից զայդ . զի ես ծեր եմ . եւ կին իմ
19 անցեալ զաւուրբք իւրովք ։ * Պատասխանի ետ
հրեշտակն եւ ասէ ցնա . ես եմ գաբրիէլ՝ որ կամ
առաջի Ա՟Յ . եւ առաքեցայ խօսել ընդ քեզ՝ եւ
20 աւետարանել քեզ զայդ ։ * Եւ ահա եղիցիս համր,
եւ մի կարասցես խօսել մինչեւ ցօրն՝ յորում այդ
լինիցի . փոխանակ զի ոչ հաւատացեր բանից իմոց՝
21 որք լցցին 'ի ժամանակի իւրեանց ։ * Եւ ժողովուրդն
ակնունէր զաքարիայ . եւ զարմանային ընդ յամելն

22 նոցա 'ի տաճարին : * Եւ իբրև ել՝ ոչ կարէր խօ-
սել ընդ նոսա. և իմացան թէ տեսիլ ետես 'ի
տաճարին. և նա նշանացի խօսէր ընդ նոսա. և
23 կայր պապանձեալ : * Եւ եղև իբրև լցան աւուրք
պաշտաման նորա, գնաց 'ի տուն իւր :
24 * Եւ յետ աւուրցն այնոցիկ յղացաւ Եղիսաբէթ
կին նորա. և թաքուցանէր զանձն ամիսս հինգ, և
25 ասէր : * Զինչ գործ գործեաց ընդ իս Տր՝ յաւ-
ուրս՝ յորս հայեցաւ յիս բառնալ զնախատինս իմ
26 'ի մարդկանէ : * Եւ յամսեանն վեցերորդի առաքե-
ցաւ Գաբրիէլ հրեշտակ յԱյ 'ի քաղաք մի Գալիլ-
27 եացւոց. որում անուն էր Նազարէթ : * Առ կոյս,
խօսեցեալ առն. որում անուն էր Յովսէփ 'ի տանէ
28 Դաւթի. և անուն կուսին Մարիամ : * Եւ եկեալ
առ նա հրեշտակն ասէ. ուրախ լեր բերկրեալդ՝
29 Տր ընդ քեզ : * Եւ նա ընդ բանին խռովեցաւ. և
խորհէր ընդ միտս, թէ որպիսի ինչ իցէ ողջոյնս
30 այս : * Եւ ասէ ցնա հրեշտակն. մի երկնչիր Մա-
31 րիամ. զի գտեր շնորհս յԱյ : * Եւ ահա յղասջիր
և ծնցիս որդի. և կոչեսցես զանուն նորա Յս :
32 * Նա եղիցի մեծ. և որդի բարձրելոյ կոչեսցի. և
տացէ նմա Տր Ած զաթոռ Դաւթի հօր նորա.
և թագաւորեսցէ 'ի վերայ տանն Յակոբայ 'ի յաւի-
33 տեան : * Եւ թագաւորութե նորա վախճան մի լիցի :
34 * Եւ ասէ Մարիամ ցհրեշտակն. զիա՞րդ լինիցի
35 ինձ այդ. քանզի զայր ոչ գիտեմ : * Պատասխանի
ետ հրեշտակն և ասէ ցնա. Հոգին սուրբ եկեսցէ
'ի քեզ. և զօրութի բարձրելոյն հովանի լիցի 'ի
վերայ քո : քանզի և որ ծնանելոցն է 'ի քէն,
36 սուրբ է. և որդի Այ կոչեսցի : * Եւ ահա Եղի-
սաբէթ ազգականն քո՝ և նա յղի է 'ի ծերութե
իւրում. և այս վեցերորդ ամիս է նր՝ որ ամուլն
37 կոչեցեալ է : * Զի ոչ տկարասցի առ յԱյ ամե-
38 նայն բան : * Եւ ասէ Մարիամ՝ ահաւասիկ կամ
աղախին Տն. եղիցի ինձ ըստ բանի քում. և գնաց
39 'ի նմանէ հրեշտակն : * Յարուցեալ Մարիամ յաւ-
ուրսն յայնոսիկ, գնաց 'ի լեռնակողմն փութապէս
40 'ի քաղաքն Յուդայ : * Եւ եմուտ 'ի տունն Զաքարիայ.

41 և ետ ողջոյն Եղիսաբեթի : * Եւ եղև իբրև լուաւ
զողջոյնն Մարիամու Եղիսաբեթ, խաղաց մանուկն
յորովայնի նորա. և լցաւ Եղիսաբեթ Հոգւով
42 Սրբով : * Եւ 'ի ձայն բարձր աղաղակեաց և ասէ :
Օրհնեալ ես դու 'ի կանայս. և օրհնեալ է պտուղ
43 որովայնի քո: * Եւ ուստի՞ է ինձ այս. զի եկեսցէ
44 մայր Տն իմոյ առ իս : * Զի ահաւասիկ իբրև
եղև ձայն ողջունի քո յականջս իմ, խաղաց ցնծա
45 լով մանուկս յորովայնի իմում: * Եւ երանի, որ
հաւատայցէ եթէ եղիցի կատարումն ասացելոց
46 նմա 'ի Տէ : * Եւ ասէ Մարիամ. Մեծացուցէ
47 անձն իմ զՏր : * Եւ ցնծացաւ հոգի իմ՝ յԱծ
48 փրկիչ իմ: * Զի հայեցաւ 'ի խոնարհութիւն աղախնոյ
իւրոյ. զի ահա յայսմհետէ երանեսցեն ինձ
49 ամենայն ազգք : * Զի արար ինձ մեծամեծս Հզօրն.
50 և սուրբ է անուն նորա : * Եւ ողորմութիւն նորա
51 յազգս յազգս երկիւղածաց իւրոց : * Արար զօրութիւն
բազկաւ իւրով. ցրուեաց զամբարտաւանս
52 մտօք սրտից իւրեանց : * Եւ քակեաց զհզօրս յաթոռոց.
53 և բարձրացոյց զխոնարհս : * Զքաղցեալս
լցոյց բարութեամբ: և զմեծատունս արձակեաց ունայնս:
54 * Պաշտպանեաց Իսրայէլի ծառայի իւրոյ՝ յիշել զողորմութիւն
55 իւր : * Որպէս խօսեցաւ առ հարս մեր. Աբրահամու
56 և զաւակի նորա յաւիտեան : * Եկաց Մարիամ
առ նմա իբրև ամիսս երիս, և դարձաւ 'ի
57 տուն իւր : * Եւ Եղիսաբեթի լցան ժամանակք
58 ծննդեանն. և ծնաւ զորդի : * Եւ լուան որք շուրջ
զնովաւ էին. և ազգատոհմք նորա: զի մեծ արար
Տր զողորմութիւն իւր ընդ նմա. և խնդային ընդ
59 նմա : * Եւ եղև յաւուրն ութերորդի՝ եկին թլփատել
զմանուկն. և կոչէին զնա յանուն հօր իւրոյ
60 Զաքարիա : * Պատասխանի ետ մայր նորա և ասէ.
61 ոչ՝ այլ կոչեսցի Յովհաննէս : * Եւ ասեն ցնա՝ քան
զի ոչ ոք է յազգի քում. որոյ կոչի անուն Յովհաննէս
62 : * Ակնարկէին հօրն նորա՝ թէ զինչ կամիցի
63 կոչել զնա : * Եւ խնդրեաց տախտակ՝ գրեաց և
ասէ. Յովհաննէս է անուն դորա : և զարմացան
64 ամենեքին : * Եւ բացաւ բերան նորա վաղվաղակի,

*

65 և լեզու նորա. և խօսէր՝ և օրհնէր զԱ՟ծ: *Եւ եղև
ահ ՚ի վերայ ամենեցուն՝ որք լսէին զայս. և որք
շուրջ բնակեալք էին զնոքօք. և ընդ ամ՟ լեռնակողմն
Հրէաստանի պատմէին ամ՟ բանքս այսոքիկ:
66 *Եւ եդին ամենեքեան՝ որք լսէինն ՚ի սիրտս իւրեանց՝
և ասէին. զի՞նչ լինիցի մանուկս այս: և
67 ձեռն Տ՟ն էր ընդ նմա: *Եւ զաքարիա հայր ն՟ր՝ լցաւ
68 Հոգւով սրբով՝ մարգարէացաւ և ասէ: *Օրհնեալ
Տ՟ր Ա՟ծ Ի՟ղի. զի յայց ել մեզ. և արար փրկութ՟ի
69 ժողովրդեան իւրոյ: *Եւ յարոյց զեղջիւր փրկու
70 թ՟ե մեզ ՚ի տանէ դաւթի ծառայի իւրոյ: *Որպէս
խօսեցաւ բերանով սրբոցն՝ որք յաւիտենից մարգարէք
71 ն՟ր էին: *Փրկութ՟ի ՚ի թշնամեաց մերոց.
72 և ՚ի ձեռաց ամենայն ատելեաց մերոց: *Առնել
զողորմութ՟ի ընդ հարս մեր. և յիշել զուխտն իւր
73 սուրբ: *Զերդումն, զոր երդուաւ աբրահամու
74 հօր մերում, տալ մեզ: *Առանց երկիւղի, ՚ի
ձեռաց թշնամեաց մերոց փրկեալս. պաշտել զնա:
75 *Սրբութ՟բ և արդարութ՟բ առաջի նորա, զամ՟ աւուրս
76 կենաց մերոց: *Եւ դու մանուկ, մարգարէ
բարձրելոյն կոչեսջիր. զի երթիցես առաջի երեսաց
77 Տ՟ն. պատրաստել զճանապարհս ն՟ր: *Տալ
զգիտութ՟ի փրկութ՟ե ժողովրդեան նորա. ՚ի թողութ՟ի
78 մեղաց նոցա: *Վասն գթութ՟եց ողորմու
թ՟ե Ա՟յ մերոյ. որովք այց արար մեզ արեգակն
79 ՚ի բարձանց: *Երևիլ՝ որոց ՚ի խաւարի և ՚ի ստուերս
մահու նստէին. ուղղել զոտս մեր ՚ի ճանապարհս
80 խաղաղութ՟ե: *Եւ մանուկն աճէր՝ և զօրանայր
հոգւով. և էր յանապատս մինչև յօր
երևելոյ նորա Ի՟ղի.

ԳԼ. Բ:

1 Եւ եղև ընդ աւուրսն ընդ այնոսիկ. ել հրաման
յօգոստոս կայսերէ՝ աշխարհագիր առնել
2 ընդ ամենայն տիեզերս: *Այս առաջին աշխարհագիր
եղև ՚ի դատաւորութ՟ե ասորւոց կիւրենեայ:
3 *Եւ երթային ամենեքեան մտանել յաշխարհագիր

յիւրաքանչիւր քաղաքի : *Ել և յօսէփ 'ի գալիլեէ 'ի քաղաքէ նազարեթէ 'ի հրէաստան, 'ի քաղաք դաւթի, որ կոչի բեթղեհէմ՝ վս լինելոյ նորայ 'ի տանէ՝ և յազգէ դաւթի : *Մտանել յաշ-
5 խարհագիր Մարիամու հանդերձ, որ խօսեցեալն
6 էր նմա . և էր յղի : *Եւ եղև 'ի հասանել նորա անդր . լցան աւուրք ծնանելոյ նորա :
7 *Եւ ծնաւ զորդին իւր զանդրանիկ՝ և պատեաց 'ի խանձարուրս՝ և եդ զնա 'ի մսուր . զի ոչ գոյր
8 նոցա տեղի իջեւանին : *Եւ հովիւքն էին 'ի տեղւոջն յայնմիկ բացօթեայք՝ որք պահէին զպահպանութիւնս
9 գիշերոյ հօտից իւրեանց : *Եւ հրեշտակ Տն երևեցաւ նոցա . և փառք Տն ծագեցան առ նոսա . և
10 երկեան յերկիւղ մեծ : *Եւ ասէ ցնոսա հրեշտակն մի երկնչիք, զի ահաւասիկ աւետարանեմ ձեզ զուրախութիւն մեծ . որ եղիցի ամենայն ժողովր-
11 դեանն : *Զի ծնաւ ձեզ այսօր փրկիչ . որ է օծեալ
12 Տր 'ի քաղաքի դաւթի : *Եւ այս նշանակ ձեզ . գտանիցէք մանուկ պատեալ 'ի խանձարուրս . և
13 եդեալ 'ի մսուր : *Եւ յանկարծակի եղև ընդ հրեշտակին ընդ այնմիկ բազմութիւն զօրաց երկնա-
14 ւորաց . որք օրհնէին զԱծ և ասէին : *Փառք 'ի բարձունս Այ . և յերկիր խաղաղութիւն, 'ի մարդիկ
15 հաճութիւն : *Եւ եղև իբրև վերացան 'ի նոցանէ հրեշտակքն յերկինս, ասեն ցմիմեանս հովիւքն . եկայք, երթիցուք մինչև ցբեթղեհէմ, և տեսցուք, զի՞նչ է բանս այս՝ որ եղև . զոր Տր եցոյց
16 մեզ : *Եւ եկին փութանակի . և գտին զՄարիամ և զյօսէփ . և զմանուկն եդեալ 'ի մսուր :
17 *Եւ ծանեան վս բանին՝ որ ասացաւ նոցա զման-
18 կանէն : *Եւ ամենեքեան որք լսէին, զարմանային վասն բանիցն՝ զոր խօսեցան ընդ նոսա հովիւքն :
19 *Եւ Մարիամ զամենայն զբանս զայսոսիկ պահէր .
20 և խելամուտ լինէր 'ի սրտի իւրում : *Եւ դարձան հովիւքն, փառաւոր առնէին և օրհնէին զԱծ, վասն ամի զոր լուան, և տեսին . որպէս պատմեցաւ
21 նոցա : *Եւ իբրև լցան աւուրք ութ թլփատելոյ զնա . և կոչեցաւ անուն նորա Յս՝ որ կոչեցեալն

էր 'ի հրեշտակէն, մինչեւ յղացեալ էր զնա յորո-
22 վայնի: * Եւ իբրեւ լցան աւուրք սրբութեան նորա
ըստ օրինացն մովսէսի, ածին զնա յեէմ յանդիման
23 առնել Տն: * Որպէս եւ գրեալ է յօրէնս Տն. թէ
ամ արու, որ բանայ զարգանդ, սուրբ Տն կոչեսցի:
24 * Եւ տալ պատարագս՝ ըստ ասացելոյն յօրէնս Տն.
զոյգս տատրակաց. կամ երկուս ձագս աղաւնեաց:
25 * Եւ ահա այր մի էր յեէմ. որոյ անուն էր սի-
մեօն. եւ էր այրն այն արդար եւ երկիւղած. եւ ակն
ունէր մխիթարութեանն իղի. եւ Հոգի սուրբ էր 'ի նմա:
26 * Եւ էր նորա հրաման առեալ 'ի Հոգւոյն սրբոյ՝
մի տեսանել զմահ մինչեւ տեսցէ զօծեալն Տն:
27 * Եւ եկն Հոգւովն 'ի տաճարն. եւ իբրեւ ածին
ծնօղքն զմանուկն Յս՝ առնել նոցա ըստ սովորու-
28 թեան օրինաց 'ի վերայ նորա: * Եւ նա առ ընկալաւ
զնա 'ի գիրկս իւր. եւ օրհնեաց զԱծ՝ եւ ասէ:
29 * Արդ արձակես զծառայս քո Տր ըստ բանի քում
30 'ի խաղաղութիւն: * Զի տեսին աչք իմ զփրկութիւն
31 քո: * Զոր պատրաստեցեր առաջի ամ ժողովրդոց:
32 * Լոյս 'ի յայտնութիւն հեթանոսաց: եւ փառս ժո-
33 ղովրդեան քում իղի: * Եւ էին հայր եւ մայր նր
զարմացեալք 'ի վերայ բանիցն, որք խօսէին
34 զնմանէ: * Եւ օրհնեաց զնոսա սիմէօն. եւ ասէ
ցՄարիամ մայր նր. ահա սա կայ 'ի գլորումն եւ
'ի կանգնումն բազմաց 'ի մէջ իղի. եւ 'ի նշան հա-
35 կառակութեան: * Եւ ընդ քո իսկ անձն անցցէ սուր.
զի յայտնեսցին 'ի բազմաց սրտից խորհուրդք:
36 * Եւ անդ էր աննա մարգարէ, դուստր փանուէլի
յազգէ ասերայ: սա ինքն անցեալ էր զաւուրս
բազումս՝ կեցեալ ընդ առն ամս եօթն 'ի կուսութենէ
27 իւրմէ: * Եւ էր այրի ամաց իբրեւ ութսուն եւ
չորից. որ ոչ մեկնէր 'ի տաճարէն. այլ պահօք
38 եւ աղօթիւք պաշտէր զցայգ եւ զցերեկ: * Եւ սա
'ի նմին ժամու յարուցեալ գոհանայր զՏէ. եւ
խօսէր զնմանէ ը ամենեսին՝ որք ակն ունէին փըր-
39 կութեն եէմի: * Եւ իբրեւ կատարեցին զամ ըստ
օրինացն Տն, դարձան անդրէն 'ի գալիլեա 'ի
40 քաղաքն իւրեանց նազարէթ: * Եւ մանուկն աճէր

և զօրանայր լի իմաստութեամբ. և շնորհք ԱՅ էին
՚ի վերայ նորա:
41 * Եւ երթային ծնօղքն նորա ամի ամի յէմ ՚ի տօնի
42 զատկին: * Եւ իբրև եղեն նորա ամք երկոտասան՝
յելանել նոցա յէմ ըստ սովորութեան տօնին:
43 * Եւ կատարել զաւուրսն. և դառնալ անդրէն,
մնաց Յս մանուկն յէմ. և ոչ գիտացին ծնօղք
44 նորա: * Կարծէին զնմանէ թէ ընդ ուղեկիցսն
իցէ. եկին իբրև աւուր միոյ ճանապարհ. և խնդ-
45 րէին զնա ընդ դրացիսն և ընդ ծանօթս: * Եւ
իբրև ոչ գտին, դարձան անդրէն յէմ խնդրել
46 զնա: * Եւ եղև յետ երից աւուրց՝ գտին զնա ՚ի
տաճարին. զի նստէր ընդ վարդապետսն, լսէր ի
47 նոցանէ. և հարցանէր զնոսա: * Զարմանային
ամենեքեան՝ որք լսէին ՚ի նմանէ ընդ իմաստու-
48 թեան և ընդ պատասխանիս նորա: * Եւ իբրև տե-
սին զնա՝ զարմացան. և ասէ ցնա մայրն իւր.
որդեակ՝ զի՞նչ գործ գործեցեր դու ընդ մեզ. ա-
հաւասիկ հայր քո և ես տառապեալք՝ և խնդրէաք
49 զքեզ: * Եւ ասէ ցնոսա. զի՛ խնդրէիք զիս. ոչ
գիտէիք եթէ ՚ի տան հօր իմոյ պարտ է ինձ լինել:
50 * Եւ նոքա ոչ իմացան զբանն. զոր խօսեցաւ ընդ
51 նոսա: * Եւ էջ ընդ նս. և գնայր ՚ի նազարէթ՝
և էր նոցա հնազանդ. և մայր նորա պահէր զա-
52 մենայն զբանսն ՚ի սրտի իւրում: * Եւ Յս զարգա-
նայր իմաստութեամբ. և հասակաւ. և շնորհօք յԱՅ
և ՚ի մարդկանէ:

ԳԼ. Գ:

՚Ի հնգետասաներորդի ամի տէրութեան տիբեր-
1 եայ կայսեր. ՚ի դատաւորութեան հրէաստանի
պիղատոսի պոնտացւոյ. և ՚ի չորրորդ պետութեան
գալիլեացւոց հերովդի. և ՚ի փիլիպպոսի եղբօր նորա
չորրորդ պետութեան, իտուրեացւոց՝ և տրաքոնաց-
ւոց աշխարհին. և ՚ի չորրորդ պետութեան լիւսանեայ
2 աբիլինացւոց: * Եւ ՚ի քահանայապետութեան ան-
նայի և կայիափայ. եղև բան ԱՅ ՚ի վերայ յօհան-

3 նու որդւոյ զաքարիայ՝ յանապատի անդ։ * Եւ եկն
յա՟մ կողմն յորդանանու քարոզել մկրտութի ապաշխարութե
4 ՚ի թողութի մեղաց։ * Որպէս և
գրեալ է ՚ի գիրս պատգամաց եսայեայ մարգարէի.
ձայն բարբառոյ յանապատի. պատրաստ արարէք ըզճանապարհ
Տ՟ն. և ուղիղ արարէք զշաւիղս նորա։
5 * Ամենայն ձորք լցցին. և ամենայն լերինք և բլուրք
խոնարհեսցին. և եղիցին դժուարինք ՚ի դիւրինս.
և առապարքն ՚ի հարթս ճանապարհս։
6 * Եւ տեսցէ ամենայն մարմին զփրկութիւն Ա՟յ։
7 * Եւ ասէ ցժողովուրդսն ելեալս մկրտել ՚ի նմանէ։
Ծնունդք իժից՝ ո՞ եցոյց ձեզ փախչել ՚ի բարկու-
8 թէն՝ որ գալոցէ։ * Արարէք այսուհետև պտուղս
արժանի ապաշխարութե. և մի սկսանիցիք ասել
եթէ ունիմք հայր զաբրահամ. զայս ասեմ ձեզ.
եթէ կարող է Ա՟ծ ՚ի քարանցս յայսցանէ յարուցանել
որդիս աբրահամու։
9 * Բայց ահաւասիկ տապար առ արմին ծառոց կայ։
Ամենայն ծառ՝ որ ոչ առնէ զպտուղ բարւոք՝ հատանի
10 և ՚ի հուր արկանի։ * Հարցանէին զնա և
ժողովուրդքն և ասէին. իսկ արդ՝ զի՞նչ գործեսցուք։
11 Պատասխանի ետ և ասէ ցնոսա. որ իցեն
երկու հանդերձք՝ տացէ զմին այնմ, որ ոչն գուցէ։
և որ կայցէ կերակուր՝ նոյնպէս արասցէ։
12 * Եկին և մաքսաւորք մկրտել. և ասեն ցնա. վարդապետ՝
13 զի՞նչ գործեսցուք։ * Եւ նա ասէ ցնոսա.
մի ինչ աւելի՝ քան զհրամայեալն ձեզ առնիցէք։
14 * Հարցանէին զնա և զինուորքն և ասէին. և մեք
զի՞նչ գործեսցուք. ասէ ցնոսա՝ մի զոք խռովիցէք՝
և մի զոք զրպարտիցէք. շատ լիցին ձեզ թոշակքն
15 ձեր։ * Մինչ ակնունէր ժողովուրդն՝ և խորհէին
ամենեքեան ՚ի սիրտս իւրեանց վասն յօհաննու, մի
16 թէ սա իցէ Ք՟ն։ * Պատասխանի ետ ամենեցուն
և ասէ. ես մկրտեմ զձեզ ջրով. բայց գայ զօրագոյն
քան զիս. զորոյ չեմ բաւական բառնալ ըզկօշիկս.
նա մկրտեսցէ զձեզ Հոգւով սրբով և
17 հրով։ * Որոյ հեծանոցն ՚ի ձեռին իւրում սրբել
զկալ իւր՝ և ժողովել զցորեանն ՚ի շտեմարանս

18 իւր. և զյարդն այրեսցէ անշէջ հրով: *Բազում
և այլ ինչ մխիթարութբ̅ աւետարանէր ժողովր-
19 դեանն: *Բայց Հերովդէս չորրորդապետ յանդի-
մանեալ 'ի նմանէ վասն Հերովդիադայ կնոջ. եղբօր
իւրոյ՝ և վս̃ ամ̃ չարեաց զոր գործեաց Հերովդէս:
20 *Յաւել և զայն ևս 'ի վերայ ամ̃ի. և եդ 'ի բան
21 տի զյովհաննէս: *Եւ եղև 'ի մկրտել ամ̃ ժողովր
դեանն՝ և ընդ Յի մկրտելն և կալ յաղօթս, բա-
22 նալ երկնից: *Եւ իջանել Հոգւոյն սրբոյ մար-
մնաւոր տեսլեամբ իբրև զաղաւնի 'ի վերայ նորա.
և գալ ձայն յերկնից՝ որ ասէր. Դու ես որդի իմ
23 սիրելի՝ ընդ քեզ հաճեցայ: *Եւ ինքն Յս̃ էր ա-
մաց իբրև երեսնից՝ սկսեալ՝ որոց ոմ̃ կարծիւր որ-
դի յովսէփայ: (որ յակոբայն:) որ հեղեայն: որ մա-
24 տաթեայն: *Որ ղևեայն: որ մեղքեայն: որ յան-
25 նեայն: որ յովսէփայն: *Որ մատաթեայն: որ ամո-
սայն: որ նաւումայն: որ եսղեայն: որ նանգեայն:
26 *Որ մաահաթայն: որ մատաթեայն: որ սեմեայն: որ
27 յովսեքեայն: որ յովդեայն: *Որ յօնանայն: որ ռե-
սայն: որ զօրաբաբիղին: որ սաղաթիէղին: որ նե-
28 րեայն: *Որ մեղքեայն: որ ադդեայն: որ կոսամայն:
29 որ եղմոդադայն: որ երայն: *Որ յեսուայն: որ եղէ-
ազարայն: Որ յորամայն: որ մատաթայն: որ ղև-
30 եայն: *Որ սիմէօնին: որ յուդային: որ յովսէփայն:
31 որ յօնամայն: որ եղիակիմայն: *Որ մեղկայն: որ
մեննեայն: որ մատաթայն: որ նաթանայն: որ դաւ-
32 թին: *Որ յեսսեայն: որ օբեդայն: որ բոոսայն: որ
33 սաղմոնայն: որ նաասոնին: *Որ ամինադաբայն: որ
արամայն: (որ ադմեայն: որ առնեայն:) որ եսրօմայն:
34 որ փարէսին: որ յուդային: *Որ յակոբայն: որ ի-
սահակայն: որ աբրահամուն: որ թարային: որ նաքո-
35 րայն: *Որ սերուքայն: որ ռագաւայն: որ փաղե-
36 կայն: որ եբերայն: որ սաղային: *Որ կայնանայն:
որ արփաքսադայն: որ սեմայն: որ նոյին: որ ղամե-
27 քայն. *Որ մաթուսաղային: որ ենովքայն: որ յա-
38 րեդին: որ մաղաղիէլին: որ կայնանայն: *Որ ենո-
սայն: որ սեթայն: որ ադամայն: որ Այն:

Գլ. Դ.

1 Եւ Յս լի Հոգւով սրբով դարձաւ ՚ի Յորդանանէ. եւ վարէր Հոգւովն յանապատ: * Յաւուրս
2 քառասուն փորձեալ ՚ի սատանայէ: եւ ոչ եկեր՝
եւ ոչ էարբ յաւուրսն յայնոսիկ. եւ ՚ի կատարելն
3 նոցա՝ քաղցեաւ: * Եւ ասէ ցնա սատանայ. եթէ
Որդի ես ԱԾ՝ ասա՛ քարիդ այդմիկ՝ զի հաց լիցի:
4 * Պատասխանի ետ նմա Յս եւ ասէ. գրեալ է.
եթէ ոչ հացիւ միայն կեցցէ մարդ՝ այլ ամ բա-
5 նիւ ԱԾ: * Եւ հանեալ զնա ՚ի լեառն-մի բարձր՝
եցոյց նմա զամենայն թագաւորութիւնս աշխարհի
6 ՚ի վայրկեան ժամանակի: * Եւ ասէ ցնա սատա-
նայ: քեզ տաց զայս ամենայն իշխանութիւն՝ եւ
զփառս սոցա. զի ինձ տուեալ է՝ եւ ում կամիմ
7 տամ զսա: * Արդ՝ դու եթէ անկեալ երկիր պա-
գանիցես առաջի իմ, քեզ եղիցի ամենայն:
8 * Պատասխանի ետ նմա Յս, եւ ասէ. գրեալ է. եր-
կիրպագցես ՏՆ ԱԾ քում. եւ զնա միայն պաշտես-
9 ցես: * Եւ էած զնա յԵղմ. եւ կացոյց զնա ՚ի
վերայ աշտարակի տաճարին. եւ ասէ ցնա. եթէ
10 որդի ես ԱԾ, արկ զքեզ աստի ՚ի վայր: * Զի
գրեալ է՝ եթէ հրեշտակաց իւրոց պատուիրեալ է
11 վս քո՝ պահել զքեզ: * Զի ՚ի վերայ ձեռաց բարձ-
12 ցեն զքեզ՝ մի երբեք հարցես զքարի զոտն քո:
* Պատասխանի ետ նմա Յս, եւ ասէ. ասացեալ է. թէ
13 ոչ փորձեսցես զՏր ԱԾ քո: * Եւ կատարեալ զա-
մենայն փորձութիւն սատանայի. ՚ի բաց եկաց ՚ի
14 ՌԿ նմանէ առ ժամանակ մի: * Եւ դարձաւ Յս
զօրութբ Հոգւոյն ՚ի Գալիլեա. եւ ել համբաւ
զնմանէ ընդ ամենայն կողմանս գաւառին:
15 * Եւ նա ուսուցանէր ՚ի ժողովուրդս նոցա փառա-
16 ւորեալ յամենեցունց: * Եւ եկն ՚ի Նազարէթ՝ ուր
սնեալ էր. եւ եմուտ ըստ սովորութե իւրում
17 յաւուր շաբաթու ՚ի ժողովուրդն: * Եւ ետուն
նմա գիրս զեսայեայ մարգարէի. եւ յարեաւ ընթեռ-
նուլ. եւ իբրեւ եբաց զգիրսն՝ եգիտ զայն տեղի,
18 յորում գրեալն էր: * Հոգի ՏՆ ՚ի վերայ իմ.

վասն որոյ և օծ իսկ զիս. աւետարանել աղքա-
19 տաց առաքեաց զիս: * Քարոզել գերեաց զթո-
ղութի. և կուրաց տեսանել. արձակել զվիրա-
ւորս 'ի թողութի. քարոզել զտարեկան Տն ըն-
20 դունելի. և զօր հատուցման: * Եւ խփեալ զգիրսն՝
ետ ցպաշտօնեայն և նստաւ. և ամենեցուն՝ որք 'ի
21 ժողովրդեանն էին աչք՝ 'ի նա հայէին: * Եւ
սկսաւ ասել ցնոսա. այսօր լցան գիրքս այս յա-
22 կանջս ձեր: * Եւ ամենեքին վկայէին նմա. և զար-
մանային ընդ բանսն շնորհաց՝ որք ելանէին 'ի բե-
րանոյ նորա. և ասէին, ո՞չ սա է որդին յովսեփայ:
23 * Եւ ասէ ցնոսա. ապաքէն ասիցէք առ իս զառակս
զայս. բժիշկ՝ բժշկեա՛ զանձն քո. որչափ լուաք, զոր
արարեր 'ի կափառնաում, արա՛ և աստ 'ի քում գաւառի:
24 * Եւ ասէ, ամէն ասեմ ձեզ. թէ չէ մարգարէ
25 ընդունելի 'ի քաղաքի իւրում: * Արդարև ասեմ
ձեզ. զի բազում այրիք էին յաւուրս եղիայի 'ի մէջ
իլի, յորժամ փակեցան երկինք զերիս ամս և
զվեց ամիս. և եղև սով մեծ ընդ ամենայն երկիր:
26 * Եւ ո՛չ առ մի 'ի նոցանէ առաքեցաւ եղիա, բայց
միայն 'ի սարեփթայ սիդոնացւոց առ կին մի այրի:
27 * Եւ բազում բորոտք էին յիլի, առ եղիսէիւ
մարգարէիւ: և ոչոք 'ի նոցանէ սրբեցաւ, բայց մի-
այն նէեման ասորի:
28 * Եւ լցան ամենեքին բարկութբ 'ի ժողովրդեանն,
29 իբրև լուէին զայս: * Եւ յարուցեալ հանին զնա
արտաքոյ քաղաքին, և ածին զնա մինչև յարտևան
լերինն՝ յորոյ վերայ քաղաքն նոցա շինեալ էր՝
30 գահավէժ առնել զնա: * Եւ նա անցեալ ընդ
31 մէջ նոցա՝ գնայր: * Եւ էջ 'ի կափառնաում 'ի
քաղաքն գալիլեացւոց՝ և ուսուցանէր զնոսա 'ի
32 շաբաթսն: * Եւ զարմանային ընդ վարդապետու-
թի նորա՝ զի իշխանութբ էր բան նորա:
33 * Եւ էր 'ի ժողովրդեանն այր մի, զոր ունէր այս
դիւի պղծոյ. և աղաղակեաց 'ի ձայն մեծ:
34 * Ասէ, թուլայց: զի՞ կայ մեր և քո՝ Յս նազովրե-
ցի. եկիր կորուսանել զմեզ. գիտեմք զքեզ՝ ով
ես սբդ Այ:

35 * Սաստեաց ՚ի նա Յս և ասէ՝ պապանձեաց և
ել ՚ի դմանէ. զգետնեաց զնա դեւն ՚ի միջի նոց.
և ել ՚ի նմանէ. և ինչ ոչ վնասեաց նմա։
36 * Եւ եղեն զարմանալիք ՚ի վերայ ամենեցուն. խօսէին
ընդ միմեանս և ասէին, զի՞նչ է բանս այս.
զի իշխանութբ և զօրութբ սաստէ այսոց պղծոց՝
37 և ելանեն։ * Եւ երթայր հռչակ զնմանէ ընդ ամենայն
տեղիս շուրջ զաւառաւն։ * Եւ յարուցեալ
՚ի ժողովրդենէ անտի՝ եմուտ ՚ի տուն սիմոնի։
զոքանչ սիմոնի տագնապիւր ջերմամբ մեծաւ. և
38 աղաչեցին զնա վասն նորա։ * Եկաց առ նմա. սաստեաց
ջերմանն, և եթող զնա. և վաղվաղակի
39 յարեաւ, և պաշտէր զնոսա։ * Եւ ընդ արեւուն
մտանել՝ ամենեքեան, որոց էին հիւանդք ՚ի պէսպէս
40 ցաւս. բերէին զնս առ նա։ * Եւ նա իւրաքանչիւր
ումեք ՚ի նոցանէ դնէր ձեռս՝ և բժշկէր զնս։
41 * Ելանէին դեւք ՚ի բազմաց՝ աղաղակէին և ասէին.
եթէ դու ես որդի Այ. և նա սաստէր՝ և ոչ
տայր թոյլ խօսել. զի գիտէին զնա թէ Քսն է։
42 ԲԴ. * Եւ իբրեւ տիւ եղեւ, ել՝ և գնաց յանապատ
տեղիս, և ժողովուրդքն խնդրէին զնա. եկին
մինչեւ առ նա՝ և արգելուին զնա՝ զի մի գնասցէ
43 ՚ի նոցանէ։ * Եւ նա ասէ ցնս. և այլոց քաղաքաց
պարտ է ինձ աւետարանել զարքայութի Այ. զի
44 յայս իսկ առաքեցայ։ * Եւ քարոզէր ՚ի ժողովուրդսըն
գալիլեացւոց։

ԳԼ. Ե։

Եւ եղեւ ՚ի խռնել զնովաւ ժողովրդեանն և լսել
1 զբանն Այ. և ինքն կայր առ ծովակին գենեսարեթայ։
2 * Եւ ետես երկուս նաւս՝ զի կային առ
ծովակին. և ձկնորսքն ելեալք ՚ի նոցանէ՝ լուանային
3 զգործիսն։ * Ել նա ՚ի մի նաւուցն. որ էր սիմոնի.
և աղաչեաց զնա սակաւիկ մի տանել ՚ի ներքս
՚ի ցամաքէն։ նստաւ, և ուսուցանէր ՚ի նաւէ
4 անտի զժողովուրդսն։ * Եւ իբրեւ լռեաց ՚ի խօսիցն.
ասէ ցսիմոն՝ խաղայ՛ ՚ի խորն, և արկէ՛ք զուռ

5 ծիս ձեր յորս ։ *Պատասխանի ետ սիմոն և ասէ
նմա․ վարդապետ՝ զա̄մ զգիշերս աշխատ եղեաք՝ և
ոչինչ կալաք․ բայց վասն քո բանիդ արկցուք ըզգործիս ։
6 *Զայս իբրև արարին, փակեցին իներքըս
բազմութ̃ի ձկանց յոյժ ։ մինչև պատառէին
7 ուռկանք նոցա ։ *Եւ ակնարկէին որսակցացն ՚ի
միւս նաւն՝ գալ օգնել նոցա․ և եկին․ և լցին երկոքին
նաւքն մինչև մերձ ընկղմել նոցա ։
8 Իբրև ետես սիմոն պետրոս՝ անկաւ առ ծունկսն
Յ̄ի և ասէ․ ՚ի բաց գնա յինէն Տ̄ր․ զի այր մեղաւոր
9 եմ ես ։ *Քանզի ահ պատեաց զնա և զամենեսին՝
որք ընդ նմայն էին, վասն որսոյ ձկանցն՝ զոր
10 ըմբռնեցին ։ *Նոյնպէս և զյակոբոս, և զյօհաննէս՝
որք էին որսակիցք սիմոնի ։ և ասէ ցսիմոն Յ̄ս․ մի երկնչիր՝
յայսմհետէ զմարդիկ որսայցես ՚ի կենաս ։
11 *Եւ հանեալ զնաւն ՚ի ցամաք՝ թողին զա̄մ՝ և
12 ԲԻ․ գնացին զհետ նորա ։ *Եւ եղև ՚ի հասանելն
նորա ՚ի մի քաղաքաց, և ահա այր մի լի բորոտութ̄՝
իբրև ետես զՅ̄ս, անկեալ ՚ի վերայ երեսաց աղաչեաց
զնա՝ և ասէ․ Տ̄ր՝ եթէ կամիս, կարող ես զիս
13 սրբել ։ *Ձգեաց զձեռն իւր՝ հասոյց ՚ի նա և ասէ․
կամիմ, սրբեա՛ց․ և վաղվաղակի գնաց ՚ի նմանէ
14 բորոտութ̃ին ։ *Եւ պատուիրեաց նմա մի ումեք
ասել․ այլ եթէ երթ, ցոյց զանձն քո քահանային․
և մատո՛ զպատարագ վ̄ա սրբութ̄ե քո՝ որպէս և հրամայեաց
մովսէս ՚ի վկայութ̄ի նոցա ։
15 *Եւ յորդէր առաւել բանն զնմանէ․ և ժողովէին
ժողովուրդք բազումք լսել՝ և բժշկիլ ՚ի հիւանդութ̃է
16 իւրեանց ։ *Եւ նա խոյս տայր յանա
17 ԲԵ․ պատ տեղիս․ և կայր յաղօթս ։ Եւ եղև ՚ի
միում աւուրց․ և ինքն ուսուցանէր ։ և փարիսեցիքըն,
և օրինացն վարդապետք նստէին․ որք ժողովեալ
էին յա̄մ քաղաքաց գալիլեացւոց․ և հրէաստանէ՝
և եէմի․ և զօրութ̃ի Տ̄ն էր ՚ի բժշկել
18 զնոսա ։ *Եւ ահա արք բերէին մահճօք զայր մի,
որ էր անդամալոյծ․ և խնդրէին զնա մուծանել
19 ՚ի ներքս, և դնել առաջի ն̄ր ։ *Եւ իբրև ոչ գտանէին,
թէ ընդ որ մուծանիցեն զնա ՚ի ներքս վասն

ամբոխին, ելին 'ի տանիս՝ և 'ի ցռուցսն կախեցին
զնա. և իջուցին մահճօքն հանդերձ 'ի մէջ առաջի
20 Յի: * Եւ տեսեալ զհաւատսն նոցա՝ ասէ ցնա.
21 այր դու՝ թողեալ լիցին քեզ մեղք քո: * Սկսան
խորհիլ դպիրքն և փարիսեցիքն, և ասեն: ո՞ է
սա՝ որ խօսի զհայհոյութիւս, ո՞վ կարէ թողուլ
զմեղս, բայց միայն Ած:
22 * Իբրև գիտաց Յս զխորհուրդս նոցա՝ պատասխա-
նի ետ և ասէ ցնոսա. զի՞ խորհիք 'ի սիրտս ձեր:
23 * Զի՞նչ դիւրագոյն է ասել. թողեալ լիցին քեզ
24 մեղք քո՝ եթէ ասել, արի, և գնա: * Այլ զի գի-
տասջիք թէ իշխանութիւն ունի որդի մարդոյ յեր-
կրի թողուլ զմեղս (ասէ ցանդամալոյծն) քեզ
ասեմ. արի, առ զմահիճս քո՝ և երթ 'ի տուն քո:
25 * Եւ առժամայն յարուցեալ առաջի ամենեցուն՝
էառ զիւրև՝ յորոյ վերայ անկեալ դնիւր. գնաց
'ի տուն իւր. և փառաւոր առնէր զԱծ:
26 * Զարմանք կալան զամենեսեան. և փառաւոր առ-
նէին զԱծ. լի եղեն ահիւ և ասեն, թէ տեսաք
27 ԲԶ. այսօր նոր նշանս: * Եւ յետ այնորիկ ել
անտի՝ և ետես զմաքսաւոր մի՝ որում անուն
էր Ղևի. զի նստէր 'ի մաքսաւորութեան, և ասէ
28 ցնա. եկ զկնի իմ: * Եւ թողեալ զամ, յարեաւ
29 և գնաց զկնի նորա: * Եւ արար ընդունելութիւն
մեծ նմա Ղևի 'ի տան իւրում. և էր ժողովուրդ
բազում մաքսաւորաց՝ և այլոց՝ որք էին բազմեալք
30 ընդ նոսա: * Եւ տրտնջէին փարիսեցիքն և դպիրքն
նոցա զնմանէ առ աշակերտսն նորա՝ և ասեն. ընդ-
է՞ր ընդ մաքսաւորս և ընդ մեղաւորս ուտէք և ըմ
31 պէք: * Պատասխանի ետ Յս և ասէ ցնոսա. ոչ
ինչ են պիտոյ բժիշկք ողջոց՝ այլ հիւանդաց:
32 * Եւ ոչ եկի կոչել զարդարս՝ այլ զմեղաւորս
33 յապաշխարութիւն: * Եւ նոքա ասեն ցնա՝ ընդէ՞ր
աշակերտքն յոհաննու պահեն ըստէպ՝ և խնդր-
ուածս առնեն. նոյնպէս և փարիսեցւոյն. և քոյդ ու-
34 տեն, և ըմպեն: * Եւ նա ասէ ցնոսա. միթէ
կարո՞ղ էք մանկանց առագաստի, մինչ փեսայն ընդ
35 նոսա իցէ, հրաման տալ պահել: * Եկեսցեն աւ-

ուրք՝ յորժամ բարձցի ՚ի նոցանէ փեսայն, ապա պահեսցեն յաւուրսն յայնոսիկ :

36 * Ասաց և առակ մի առ նոսա. թէ ոչ ոք արկանէ ՚ի նոր հանդերձէ ՚ի վերայ հնացեալ ձորձոյ. ապա թէ ոչ՝ և զնորն պատառէ և ընդ հնոյն չմի-
37 աբանի կապերտն՝ որ ՚ի նորոյն : * Եւ ոչ ոք արկանէ գինի նոր ՚ի տիկս հինս. ապա թէ ոչ պայթուցանէ գինին նոր զտիկսն հինս. ինքն հեղանի, և
38 տիկքն կորնչին : * Այլ գինի նոր ՚ի տիկս նորս
39 արկանելի է. և երկոքին պահին : * Եւ ոչ ոք ըմպէ զհինն, և կամիցի զնորն. քանզի ասէ՝ թէ հինն քաղցրագոյն է ✝

Գլ. Զ.

1 Եւ եղև ՚ի շաբաթու երկրորդում առաջնոյն,
Բէ. անցանել նմա ընդ արտորայսն. և աշակերտքն նորա կորզէին հասկ՝ շփէին ընդ ափս և ուտէին :
2 * Եւ ոմանք ՚ի փարիսեցւոյն ասեն ցնոսա. զի՞նչ
3 գործէք՝ զոր չէ օրէն ՚ի շաբաթու : * Պատասխանի ետ նոցա Յս̅ և ասէ. չիցէ՞ ընթերցեալ ձեր՝ զոր արար Դաւիթ, յորժամ քաղցեաւ ինքն՝ և որք
4 ընդ նմայն էին : * Զիա՞րդ եմուտ նա ՚ի տունն Այ՝ և զհացն առաջաւորութեան եկեր. և ետ այնոցիկ՝ որք ընդ նմայն էին. զոր ոչ էր օրէն ու-
5 տել, բայց միայն քահանայապետացն : * Եւ ասէ ցնս̅. Տր̅ է որդի մարդոյ և շաբաթու :

6 * Եւ եղև ՚ի միւսում շաբաթուն մտանել նմա ՚ի ժողովուրդն՝ և ուսուցանել. և էր անդ այր մի՝ որոյ ձեռն աջ գօսացեալ էր :

7 * Եւ սպասէին նմա դպիրքն և փարիսեցիք՝ թէ ՚ի շաբաթուն բժշկիցէ՝ զի գտանիցեն չարախօսու-
8 թի զնմանէ : * Եւ նա գիտէր զխորհուրդս նոցա. ասէ ցայրն՝ որոյ ձեռն գօսացեալ էր՝ արի, և
9 անց ՚ի մէջ. և նա յարուցեալ եկաց: * Ասէ ցնոսա Յս̅. հարցից ինչ ձեզ. զի՞նչ արժան է ՚ի շաբաթու՝ բարի՞ ինչ առնել՝ եթէ չար գործել. ոգի մի ա-
10 պրեցուցանել. եթէ կորուսանել : * Եւ հայեցեալ

շուրջ զամենեքումբք զայրացեալ, ասէ ցնա՝ ձգեա՛
զձեռն քո՝ և նա ձգեաց. և հաստատեցաւ ձեռն
11 նորա իբրև զմիւսն: * Եւ նոքա լցան յիմարութեամբ.
և խօսէին ընդ միմեանս, թէ զինչ առնիցեն Յի:
12 Գ-Կ. * Եւ եղև ընդ աւուրսն ընդ այնոսիկ ել
'ի լեառն կալ յաղօթս, և հանէր զգիշերն 'ի
13 զլուխ յաղօթսն Այ: * Եւ իբրև այգ եղև կոչեաց զաշակերտսն իւր՝ և ընտրեաց 'ի նոցանէ երկոտասանս. (զորս և առաքեալս անուանեաց:)
14 * Զսիմօն՝ զոր և պետրոս անուանեաց. և զԱնդրէաս զեղբայր նորին. և զՅակոբոս. և զՅօհաննէս.
15 և զՓիլիպպոս. և զԲարթուղիմէոս: * Եւ
զՄատթէոս. և զԹովմաս. և զՅակոբոս ալփեայ.
16 և զՍիմօն զկոչեցեալն նախանձայոյզ: * Եւ զՅուդա Յակոբայ. և զՅուդա իսկարիովտացի, որ եղև
17 իսկ մատնիչ: * Եւ իջեալ նոքօք հանդերձ 'ի տեղի մի տափարակ. և ժողով աշակերտացն նր՛ և
բազմութի յոյժ ժողովրդեանն՝ յամ հրէաստանէ
և յեմէ՝ և յայնմ կողմանէ՝ և 'ի ծովեզերէն տիւ-
18 րոսի և սիդօնի: * Որք եկին լսել 'ի նմանէ՝ և
բժշկիլ 'ի հիւանդութեանց իւրեանց. և նեղեալքն
19 յայսոց պղծոց բժշկէին: * Եւ ժողովուրդն խնդրէր մերձենալ 'ի նա. զի զօրութիւն բազում ելանէր 'ի նմանէ՝ և բժշկէր զամենեսին:

20 * Եւ նա ամբարձ զաչս իւր յաշակերտսն իւր և
ասէ. Երանի է աղքատաց հոգւով. զի ձեր է
21 արքայութիւն Այ: * Երանի որք քաղցեալք են
այժմ, զի յագեսջիք. Երանի՝ որք լան այժմ, զի
22 ծիծաղեսջիք: * Երանի է ձեզ՝ յորժամ նախատիցեն զձեզ մարդիկ՝ և յորժամ որոշիցեն և նախատիցեն զձեզ. և հանիցեն անուն չար զձէնջ վս
23 որդւոյ մարդոյ: * Ուրախ լիջիք յաւուր յայնմիկ և
ցնծասջիք. զի ահա վարձք ձեր բազումք են յերկինս. ըստ դմին օրինակի առնէին մարգարէիցն
24 հարքն իւրեանց: * Բայց վա՛յ ձեզ մեծատանցդ՝
զի ընկալայք զմխիթարութիւն ձեր:
25 * Վա՛յ ձեզ՝ որք՝ յագեալքդ էք այժմ, զի քաղցիցիք. վա՛յ ձեզ՝ որք ծիծաղիքդ այժմ, զի սգայցէք՝

26 և լայցէք ։ *Վա՜յ ձեզ՝ յորժամ բարի ասիցեն
զձէնջ ամենայն մարդիկ․ զի այդպէս առնէին սուտ
մարգարէիցն հարք նոցա ։ *Այլ ձեզ ասեմ՝ որք
27 լսէքդ․ սիրեցէք զթշնամիս ձեր․ բարի արարէք
28 ատելեաց ձերոց․ *Օրհնեցէք զանիծիչս ձեր․
29 աղօթս արարէք ՚ի վերայ նեղչաց ձերոց ։ *Որ
հարկանէ զծնօտ քո՝ մատո նմա և զմիւսն․ և որ
հանէ ՚ի քէն զբաճկոն քո՝ մի արգելուր ՚ի նմանէ
30 և զշապիկս ։ *Ամենայն, որ խնդրէ ոք ՚ի քէն,
տուր․ և զորինչ հանէ ոք ՚ի քէն, մի պահանջեր ։
31 *Եւ՛ ոպ կամիք թէ արասցեն ձեզ մարդիկ, այն-
32 պէս արասջիք և դուք նոցա ։ *Եթէ սիրէք դուք
զսիրելիս ձեր՝ զի՞նչ շնորհ է ձեր․ զի և մեղա-
33 ւորք սիրեն զսիրելիս իւրեանց ։ *Եւ՛ եթէ բարի
առնէք բարերարաց ձերոց՝ ո՞ր շնորհ է ձեր․ զի և
34 մեղաւորք զնոյն գործեն ։ *Եւ՛ եթէ տայք փոխ
այնոցիկ՝ յորոց ակն ունիցիք առնուլ՝ ո՞ր շնորհ է
ձեր ։ քանզի և մեղաւորք մեղաւորաց փոխ տան․ զի
առցեն անդրէն զկշիռն ։
35 *Բայց սիրեցէք զթշնամիս ձեր․ և բարի արարէք
ատելեաց ձերոց․ և տուք փոխ՝ ուստի ոչ ակն ու-
նիցիք առնուլ․ և եղիցին վարձք ձեր բազում՝ և
եղիջիք որդիք բարձրելոյ․ զի նա քաղցր է ՚ի վե-
36 րայ չարաց՝ և ապաշնորհաց ։ *Եղերուք գթածք՝
37 որպէս և հայրն ձեր գթած է ։ *Մի՛ դատէք՝ և
ոչ դատիցիք․ մի՛ պատժէք՝ և ոչ պատժիցիք․
38 արձակեցէք, և արձակիցիք ։ *Տուք, և տացի
ձեզ․ չափ բարւոք՝ թաթաղուն, շարժուն, դեղուն,
տացին ՚ի գոգս ձեր․ նովին չափով՝ որով չափէք,
39 չափեսցի ձեզ ։ *Ասաց և առակ մի առ նոսա՝ մի-
թէ կարիցէ՞ կոյր կուրի առաջնորդել․ ո՞չ ապա-
40 քէն երկոքին ՚ի խորխորատ անկանիցին ։ *Ոչ է
աշակերտ լաւ քան զվարդապետ իւր․ ամ կատա-
րեալն եղիցի իբրև զվարդապետ իւր ։
41 *Զի՞ տեսանես զշիւղ յական եղբօր քո․ և ՚ի
42 քում ական զգերանդ ոչ նշմարես ։ *Կամ զիա՞րդ
կարես ասել ցեղբայր քո․ եղբայր, թո՛ղ հանից
զշիւղդ յականէ քումմէ․ և դու ՚ի քում ական
զգերանդ ոչ տեսանես․ կեղծաւոր՝ հան նախ զգե-

րանդ յականէ քումմէ․ և ապա հայեսջիր հանել
43 զշիւղ յականէ եղբօր քո։ * Զի ոչ է ծառ բարի
որ առնէ պտուղ չար․ և ոչ դարձեալ ծառ
չար որ առնիցէ պտուղ բարի։
44 * Զի իւրաքանչիւր ծառ ՚ի պտղոյ իւրմէ ճանաչի․
զի ոչ եթէ ՚ի փշոց քաղեն թուզ․ և ոչ ՚ի մորենւոյ
45 կթեն խաղող։ * Մարդ բարի, ՚ի բարի գանձուց
սրտի իւրոյ բղխէ զբարի․ և մարդ չար ՚ի չարէն
բղխէ զչար․ քանզի ՚ի յաւելորդաց սրտին
46 խօսի բերան նորա։ * Զի՞ կոչէք զիս՝ Տր՟՝ Տր՟՝ և
47 զոր ասեմն, ոչ առնէք։ * Ամենայն որ գայ առիս,
և լսէ զբանս իմ, և առնէ զնոսա՝ ցուցից ձեզ
48 ում նման է։ * Նման է առն, որ շինիցէ տուն․
որ փորեաց՝ և խորեաց՝ և եդ զհիմն ՚ի վերայ
վիմի․ ՚ի յառնել հեղեղաց բաղխեաց գետ զտունն․
և ոչ կարաց շարժել զնա․ զի հաստատեալ էր
49 հիմն ՚ի վերայ վիմի։ * Իսկ որ լսէ զբանս իմ և
ոչ առնէ՝ նման է առն՝ որ շինիցէ զտուն ՚ի վերայ
հողոյ առանց հիման․ զոր բաղխեաց գետ․ և վաղվաղակի
անկաւ․ և եղև կործանումն տանն այնորիկ
մեծ։

Գլ. Է։

1 Եւ եղև իբրև կատարեաց զա՟մ զբանս իւր ՚ի
Գր. լսելիս ժողովրդեանն, եմուտ ՚ի Կափառնաում։
2 * Հարիւրապետի ուրումն ծառայ չարաչար հիւանդացեալ
մերձ էր ՚ի վախճանիլ․ որ էր նմա պատուական։
3 * Եւ իբրև լուաւ զՅս՟, առաքեաց ըղծերս
Հրէից․ աղաչէր զնա, զի եկեսցէ, և ապրեցուսցէ
4 զծառայն նր՟։ * Եւ նոքա եկեալ առ Յս՟
աղաչէին զնա ստէպ և ասէին․ թէ արժանի է՝
5 որում զշնորհս զայս առնես։ * Զի սիրէ զազգս
6 մեր։ և զժողովրդարանն նա շինեաց մեզ։ * Եւ Յս՟
գնաց ընդ նոսա։ իբրև ոչ ինչ կարի հեռի էր ՚ի
տանէն․ յղեաց առ նա հարիւրապետն բարեկամս
և ասէ ցնա․ Տր՟, մի ինչ աշխատ լինիր՝ զի չեմ
բաւական եթէ ընդ յարկաւ իմով մտանիցես։

7 *Վասն որոյ և ոչ զանձն համարեցայ արժանի առ
քեզ գալոյ: այլ ասա բանիւ, և բժշկեսցի մանուկս
8 իմ: *Քանզի և ես այր մի եմ կարգեալ ընդ
իշխանութ՟բ: ունիմ ընդ ինև զինուորս: և ասեմ
սմա՝ երթ, և երթայ: և այլում թէ եկ, և գայ:
և ծառայի իմում թէ արա զայս, և առնէ:
9 *Եւ իբրև լուաւ զայս Յս՟ զարմացաւ. դարձաւ
առ ժողովուրդն՝ որք երթային զհետ նր՟՝ և ասէ.
ամէն ասեմ ձեզ՝ թէ և ոչ յիլի այսչափ հա-
10 ւատս գտի: *Եւ դարձան անդրէն սպասաւորքն
՚ի տուն. և գտին զծառայն հիւանդ՝ բժշկեալ:
11 ԳԳ. *Եւ եղև ՚ի վաղիւն, երթայր ՚ի քաղաք
մի, որում անուն էր Նային. երթային ընդ նմա
աշակերտքն նորա՝ և ժողովուրդք բազումք: *Իբրև
12 մերձ եղև ՚ի դուռն քաղաքին, և ահա հանէր
մեռեալ մի՝ որդի միամօր մօր իւրոյ: և նա էր այրի:
և ժողովուրդ բազում քաղաքին էր ընդ նմա:
13 *Իբրև ետես զնա Տր՟, գթացաւ ՚ի նա՝ և ասէ. մի
14 լար: *Եւ մատուցեալ մերձեցաւ ՚ի դագաղն: և
որք բարձեալն տանէին, զտեղի առին: և ասէ.
15 պատանի դու՝ քեզ ասեմ, արի: *Կանգնեցաւ՝ և
նստաւ մեռեալն. և սկսաւ խօսել: և ետ զնա
16 ցմայր իւր: *Եւ ահ կալաւ զամենեսին. և փառա-
ւոր առնէին զԱծ և ասէին: մարգարէ ոմն մեծ
յարուցեալ է ՚ի միջի մերում. և թէ այց արար
Ած ժողովրդեան իւրում ՚ի բարութի:
17 *Եւ ել զրոյցս այս ընդ ամ՟ հրէաստան վս՟ նր՟.
18 և ընդ ամ՟ կողմանս աշխարհին: *Եւ պատմեցին
յօհաննու աշակերտքն իւր վս՟ ամ՟ այսորիկ:
19 *Եւ կոչեաց առ ինքն երկուս ոմանս յաշակեր-
տացն իւրոց յօհաննէս. առաքեաց առ Տր՟ և ասէ.
դու ես, որ գալոցն ես, եթէ այլում ակն կալցուք:
20 *Եւ եկեալ արքն առ նա՝ ասեն: յօհաննէս մկր-
տիչ առաքեաց զմեզ առ քեզ՝ և ասէ: դու ես
որ գալոցն ես, թէ այլում ակն կալցուք:
21 *Եւ ՚ի նմին ժամու բժշկեաց բազումս ՚ի հիւան-
դութեց և ՚ի հարուածոց և յայսոց չարաց: և
22 կուրաց բազմաց շնորհեաց տեսանել: *Պատասխա-

*

նի ետ նոցա և ասէ։ երթայք, պատմեցէք յովհաննու՝
զոր տեսէք և լուայք· զի կոյրք տեսանեն·
կաղք գնան։ բորոտք սրբին։ խուլք լսեն։ մեռեալք
23 յառնեն։ աղքատք աւետարանին։ * Եւ երանի
24 իցէ որ ոչ գայթագղեսցի յիս։ * Եւ իբրեւ գնացին
աշակերտքն յովհաննու՝ սկսաւ ասել ընդ ժողովուրդսն
վասն յովհաննու։ զի՞ ելէք յանապատն
25 տեսանել· եղեգն ինչ շարժուն 'ի հողմոյ։ * Այլ զի՞նչ
ելէք տեսանել· մա՞րդ 'ի հանդերձս փափկութե զգեցեալ։
աշխարհիկ որք 'ի հանդերձս երեւելիս
26 և 'ի փափկութե են՝ յարքունիս են։ * Այլ զի՞նչ
ելէք տեսանել· զմարգարէ՞։ այո՛· ասեմ ձեզ՝ առաւել
27 եւս քան զմարգարէ։ * Զի սա է՝ վասն որոյ
գրեալն է։ թէ ահա առաքեմ զհրեշտակ իմ առաջի
քո՝ որ յարդարեսցէ զճանապարհս քո առաջի
28 քո։ * Ամէն ասեմ ձեզ։ մեծ 'ի ծնունդս կանանց
մարգարէ քան զյովհաննէս ո՛չ ոք է։ բայց փոքրիկն
29 յարքայութեն Այ մեծ է քան զնա։ * Եւ ամ ժողովուրդն
իբրեւ լուաւ, և մաքսաւորքն արդարացուցին
զԱծ· զի մկրտեցան 'ի մկրտութիւն յովհաննու։
30 * Իսկ փարիսեցիքն և օրէնսականք զխորհուրդն
Այ անարգեցին յանձինս իւրեանց՝ զի ո՛չ մկրտեցան
31 'ի նմանէ։ * Արդ՝ ո՞ւմ նմանեցուցից զմարդիկ
32 ազգիս այսորիկ· և ո՞ւմ իցեն նմանօղք։ * Նմանք
են մանկտւոյ՝ որք 'ի հրապարակս նստիցին· կարդայցեն
զմիմեանս և ասիցեն։ փողս հարաք ձեզ՝ և
ո՛չ կաքաւեցիք։ ողբացաք՝ և ո՛չ լացիք։
33 * Եկն յովհաննէս մկրտիչ՝ ո՛չ ուտէր զհաց· և ո՛չ
34 ըմպէր զգինի· և ասէիք՝ դեւ գոյ 'ի նմա։ * Եկն
որդի մարդոյ՝ ուտէ և ըմպէ, և ասէք, ահա այր կերօղ
և արբեցօղ· բարեկամ մաքսաւորաց և մեղաւորաց։
35 * Եւ արդարացաւ իմաստութի յորդւոց
36 Գ.Դ. իւրոց։† * Աղաչէր զնա ոմն 'ի փարիսեցւոյն՝
զի կերիցէ հաց ընդ նմա։ և մտեալ 'ի տուն
37 փարիսեցւոյն բազմեցաւ։ * Եւ կին մի էր 'ի քաղաքին
մեղաւոր։ իբրեւ գիտաց եթէ բազմեալ է
'ի տան փարիսեցւոյն, բերեալ շիշ մի իւղոյ նարդեան
38 ազնուի։ * Կայր յետոյ առ ոտս նր, լայր,

և արտասուօքն սկսաւ թանալ զոտս նր̄: և հերովն
գլխոյ իւրոյ ջնջէր: և համբուրէր զոտս նորա: և
39 օծանէր իւղովն: *Եւ տեսեալ փարիսեցւոյն՝ որ
կոչեացն զնա՝ ասէ ընդ միտս իւր. սա թէ մարգարէ
ոք էր, ապա գիտէր թէ ո՛վ և որպիսի
ոք կին մերձենայ ՚ի սա. զի մեղաւոր է:
40 *Պատասխանի ետ Յս̄ և ասէ. սիմոն, ունիմ ինչ
ասել քեզ: և նա ասէ: ասա՛ վարդապետ: և ասէ.
41 *Երկու պարտապանք էին ուրումն փոխատուի.
միոյն պարտիւր հինգ հարիւր դահեկան. և միւսն
42 յիսուն: *Եւ իբրև ոչ գոյր հատուցանել՝ երկոցունց
շնորհեաց: արդ ասա՛ ո՞վ առաւել սիրեսցէ
43 զնա: *Ասէ սիմոն: ինձ այսպէս թուի, թէ
որում զբազումն շնորհեաց: և նա ասէ ցնա. ուղիղ
44 դատեցար: *Եւ դարձեալ ՚ի կինն կողմն,
ասէ ցսիմոն. տեսանես զայս կին: մտի ՚ի տուն
քո. ջուր ոտից իմոց ոչ ետուր. իսկ սա արտասուօք
իւրովք եթաց զոտս իմ, և հերով իւրով
45 ջնջեաց: *Համբոյր մի դու ոչ ետուր ինձ. սա
ուստիկ յորմէ հետէ մտեալ եմ, ոչ դադարեաց
46 ՚ի համբուրելոյ զոտս իմ: *Իւղով զգլուխ իմ ոչ
օծեր. սա իւղով անուշիւ՛ էօծ: *Վս̄ որոյ ասեմ
47 քեզ. թողեալ լիցին սմա մեղք իւր բազում, զի
յոյժ սիրեաց: զի որում շատ թողուցու, շատ
48 սիրէ՝ և որում սակաւ, սակաւ: *Եւ ասէ ցնա.
49 թողեալ լիցին քեզ մեղք քո: *Եւ սկսան՝ որք
բազմեալն էին ընդ նմա, ասել ընդ միտս իւրեանց:
ո՞վ է սա՝ որ զմեղս թողու:
50 *Եւ նա ասէ ցկինն. հաւատք քո կեցուցին զքեզ՝
երթ ՚ի խաղաղութի:

Լա

ԳԼ: Ը:

1 Եւ եղև յետ այնորիկ և ինքն շրջէր ընդ քաղաքս
Գ.Ե. և ընդ գիւղս: քարոզէր և աւետարանէր
զարքայութիւն Այ̄: և երկոտասանքն ընդ
2 նմա: *Եւ կանայք ոմանք՝ որք բժշկեալ էին յայսոց
չարաց և ՚ի հիւանդութեց: մարիամ, որ կո-

չէր մագդաղենացի· յորմէ եօթն դեւք ելեալ էին։
3 * Եւ Յօհաննա կին Քուզայ՝ հազարապետին Հերօդի,
և Շուշան՝ և այլք բազումք· որք պաշտէին զնա
4 յընչից իւրեանց։ * Եւ 'ի ժողովել բազմաց ժո-
ղովրդոց։ և ըստ քաղաքաց քաղաքաց եկելոց առ
5 նա, ասէ առակաւ։ * Ել սերմանացան սերմանել
զսերմանս իւր։ և 'ի սերմանելն իւրում՝ էր, որ
անկաւ առ ճանապարհաւ· և եղև կոխան· և թռչու-
6 նք երկնից կերին զնա։ * Եւ այլն անկաւ յա-
պառաժի· և ընդ բուսանիլն՝ չորացաւ, առ 'ի չգոյէ
7 հիւթոյ։ * Եւ այլն անկաւ 'ի մէջ փշոց· և ընդ
8 նմին բուսեալ փշոյն՝ հեղձուցին զնա։ * Եւ այլն
անկաւ յերկիր բարի և պարարտ· և բուսեալ՝ ա-
րար պտուղ հարիւրապատիկ։ զայս իբրև խօսե-
ցաւ, ասէ· որ ունիցի ականջս լսելոյ, լուիցէ։
9 * Հարցանէին զնա աշակերտքն, թէ զի՞նչ իցէ ա-
10 ռակն։ * Եւ նա ասէ։ ձեզ տուեալ է գիտել
զխորհուրդս արքայութեան Այ· բայց այլոց առակօք։
զի տեսցեն, և մի տեսցեն։ և լուիցեն, և մի ի-
11 մասցին։ * Բայց առակն այս ինչ է։ սերմն բանն
12 Այ է։ * Եւ որք առ ճանապարհաւն, այնոքիկ են,
որք լսեն· և ապա գայ սատանայ՝ և հանէ զբանն
'ի սրտից նոցա· զի մի հաւատասցեն՝ և ապրեսցին։
13 * Եւ որք յապառաժին, որք յորժամ լսիցեն՝
խնդութեամբ ընդունին զբանն՝ և արմատս ոչ ունին·
որք առժամանակ մի հաւատան· և 'ի ժամանակի
14 փորձութեան հեռանան։ * Իսկ որ 'ի մէջ փշոցն ան-
կաւ, նոքա են, որք իբրև լսեն զբանն, և 'ի հոգս
և 'ի մեծութենի և 'ի ցանկութենի աշխարհիս զբա-
15 ղեալ հեղձնուն՝ և անպտուղ լինին։ * Իսկ որ
յերկիրն պարարտ· որոց բարւոք և զուարթագին
սրտիւ լուեալ զբանն՝ ընդունին· և տան պտուղ
16 համբերութեամբ։ * Ոչ ոք լուցանէ զճրագ և թաքու-
ցանէ ընդ կարասեաւ, կամ դնէ ընդ մահճօք·
այլ 'ի վերայ աշտանակի դնէ· զի որք մտանեն,
17 զլոյս տեսցեն։ * Զի ոչ ինչ ծածուկ՝ որ ոչ յայտ
լիցի· և ոչ գաղտնի, որ ոչ ծանիցի, և եկեսցէ
18 'ի յայտ։ * Տեսէք այսուհետև՝ զիարդ լսէքդ·

զի որ գուցէ՝ տացի նմա. և որ ոչն գուցէ, և
զոր կարծէն թէ ունիցի՝ բարձցի ՚ի նմանէ։
19 * Եկին առ նա մայրն և եղբարք իւր, և ոչ կարէ-
20 ին հասանել ՚ի նա վ̅ բազմութե̅ն։ * Ազդ եղև
նմա և ասեն. մայր քո և եղբարք քո կան արտա-
21 քոյ՝ և կամին զքեզ տեսանել։ * Եւ ասէ ցնոսա.
մայր իմ և եղբարք իմ սոքա են, որք զբանն Ա͞յ
22 Գ. Ձ. լսեն և առնեն։ * Եւ եղև՝ ՚ի միում աւուրց՝
ինքն ել ՚ի նաւ և աշակերտքն նորա. և ասէ ցնոսա.
եկայք, անցցուք յայնկոյս ծովակիս. և գնացին։
23 * Եւ մինչդեռ նաւէին, ՚ի քուն եմուտ. և էջ
մրրիկ հողմոյ ՚ի ծովակն՝ և ուռնոյր. և տագնապէ-
24 ին։ * Մատուցեալ զարթուցին զնա և ասեն.
վարդապետ, վարդապետ, կորնչիմք աւասիկ. և նա
յարուցեալ՝ սաստեաց հողմոյն և խռովութե̅ ջուրցն՝
25 և հանդարտեցան. և եղև խաղաղութի̅։ * Ասէ
ցնոսա. ուր են հաւատք ձեր. և զահիհարեալ զար-
մացան. և ասէին ցմիմեանս. ո՛վ արդեօք իցէ
սա՝ զի և հողմոյ և ջրոց զհրաման տայ, և հնա-
26 զանդին նմա։ * Եւ նաւեցին իջին յաշխարհն գեր-
գեսացւոց. որ է յանկոյս հանդէպ գալիլեայ։
27 * Եւ ընդ ելանելն նորա ՚ի ցամաք, պատահեաց
այր մի ՚ի քաղաքէն՝ յորում էին դևք. և բազում
ժամանակս չէր հանդերձ զգեցեալ՝ և ոչ ՚ի տան
բնակեալ. այլ ՚ի գերեզմանս.
28 * Եւ տեսեալ զՅ͞ս, աղաղակեաց՝ և անկաւ առա-
ջի նորա՝ և ասէ մեծաձայն. զի՞ կայ իմ և քո
Յ͞ս որդի Ա͞յ բարձրելոյ. աղաչեմ զքեզ՝ մի տան-
29 ջեր զիս։ * Քանզի հրաման տայր այսոյն պղծոյ
ելանել ՚ի մարդոյ անտի. քանզի բազում ժամա-
նակս յափշտակեալ էր զնա. և կապէր ՚ի շղթայս.
և պահէր յերկաթս. և խզէր զկապանսն, և վա-
30 րէր ՚ի դիւէն յանապատս։ * Եհարց զնա Յ͞ս և
ասէ. զի՞նչ անուն է քեզ։ և նա ասէ ղէգէօն։
31 զի դևք բազումք մտեալ էին ՚ի նա։ * Եւ աղաչէ-
ին զնա՝ զի մի հրաման տացէ նոցա երթալ
32 յանդունդս։ * Եւ էր անդ երամակ մի խոզից բազ-
մաց արօտական ՚ի լերինն. և աղաչեցին զնա. զի

հրաման տացէ նոցա մտանել ՚ի նոսա. և հրամայեաց
33 նոցա: * Եւ ելեալ դևքն յառնէն՝ մտին ՚ի խոզսն.
և դիմեաց երամակն ՚ի դարէ անտի ՚ի ծովակն.
34 և հեղձաւ: * Իբրև տեսին խոզարածքն զեղեալն,
որք եղեն, փախեան. և պատմեցին ՚ի քաղաքին և
35 յագարակսն: * Եւ իբրև ելին տեսանել զգործսն.
և եկին առ Յս. և գտին զայրն, ուստի դևքն ելեալ
էին, զգեցեալ և զգաստացեալ նստէր
36 առ ոտսն Յի՝ և երկեան: * Պատմեցին նոցա՝ որոց
տեսեալն էր. թէ զիարդ փրկեցաւ դիւահարն:
37 * Եւ աղաչէր զնա ամենայն բազմութիւն շուրջ
զկողմամբքն Գերգեսացւոց. գնալ ՚ի սահմանաց նոցա.
քանզի ահիւ մեծաւ տագնապէին: և նա մտեալ
38 ՚ի նաւ՝ դարձաւ անդրէն: * Աղաչէր զնա այրն,
ուստի դևքն ելեալ էին՝ շրջիլ ընդ նմա. արձակեաց
39 զնա և ասէ: * Դարձ ՚ի տուն քո, և պատմեա,
զոր միանգամ արար քեզ Ած. գնաց ՚ի քաղաքն
և քարոզէր, զոր ինչ արար նմա Յս:
40 * Եւ իբրև դարձաւ անդրէն Յս, ընկալաւ զնա
ժողովուրդն. քանզի ամենեքեան ակնունէին նմա:
41 * Եւ ահա եկն այր մի, որոյ անուն էր Յայրոս. և
նա էր իշխան ժողովրդեանն. անկեալ առ ոտսն
42 Յի՝ աղաչէր զնա մտանել ՚ի տուն նր: * Զի դուստր
միամօր էր նր. ամաց իբրև երկոտասանից. և էր
մերձ ՚ի մահ. և ընդ երթալն նր՝ ժողովուրդքն
43 նեղէին զնա: * Եւ կին մի էր ՚ի տեռատեսութե
արեան յամաց երկոտասանից. որ ՚ի բժիշկս
ծախեալ էր զամ ինչս իւր. որում ոչ էր լեալ հնար
44 յումեքէ բժշկիլ: * Մատուցեալ յետոյ՝ մերձեցաւ
՚ի դրօշակ հանդերձի նորա. և նոյնժամայն եկաց
45 բղխումն արեան նորա: * Եւ ասէ Յս. ո՞վ է՝ որ
մերձեցաւն յիս: Իբրև ամենեքեան ուրանային,
ասէ Պետրոս՝ և որք ընդ նմա էին. վարդապետ,
ժողովուրդք պնդեն և նեղեն զքեզ:
46 * Եւ ասէ Յս՝ ոմն մերձեցաւ յիս. քանզի գիտացի
47 եթէ զօրութի ել յինէն: * Իբրև ետես կինն՝
եթէ ոչ ծածկեցաւ ՚ի նմանէ, եկն դողալով և
անկեալ առաջի նորա. թէ վասն որոյ իրաց մերձեցաւ
՚ի նա, պատմեաց առաջի ամենայն ժողովր-

48 դեանն. եւ եթէ որպէս բժշկեցաւ առժամայն։ * Եւ
ասէ՝ քաջալերեաց դուստր. հաւատք քո կեցու-
49 ցին զքեզ. երթ ՚ի խաղաղութիւն։ * Եւ մինչդեռ
նա խօսէր, գայ ոմն ՚ի տանէ ժողովրդապետին՝ եւ
ասէ ցնա. մեռաւ դուստրն քո. մի ինչ աշխատ
50 առնէր զդա։ * Իսկ Յս իբրեւ լուաւ՝ պատասխանի
ետ նմա եւ ասէ. մի երկնչիր, միայն հաւատա՛ եւ
51 կեցցէ։ * Եւ մտեալ ՚ի տունն՝ ոչ զոք եթող մտա-
նել՝ բայց միայն զՊետրոս եւ զՅակոբոս. եւ զՅո-
հաննէս. եւ զհայր մանկանն եւ զմայր նորա։
52 * Լային ամենեքեան՝ եւ կոծէին զնա. եւ նա ասէ. մի
53 լայք, զի չէ մեռեալ այլ ննջէ։ * Եւ նոքա ծաղր
առնէին զնա. զի գիտէին թէ մեռաւ։ * Եւ նորա
54 հանեալ զամենեսին արտաքս։ * Կալաւ զձեռանէ
նորա. բարբառեցաւ եւ ասէ. արի, կաց մանուկ
55 դու։ * Եւ դարձաւ ոգի նորա, եւ կանգնեցաւ վաղ-
56 վաղակի. եւ հրամայեաց տալ նմա ուտել։ * Եւ
զարմացան ծնողքն նորա. եւ նա պատուիրէր մի
ումեք ասել՝ որ ինչ եղեն։

Գլ. Թ։

1 Գլ. Եւ կոչեալ զերկոտասան առաքեալսն. ետ նոցա
զզօրութիւն եւ զիշխանութիւն ՚ի վերայ ամ դի-
2 ւաց. եւ բժշկել զհիւանդութիւնս։ * Եւ առաքեաց
զնս քարոզել զարքայութիւն Այ. եւ բժշկել զախ-
3 տաժէտս։ * Եւ ասէ ցնոսա. մի ինչ բառնայք ՚ի
ճանապարհի. մի գաւազան. եւ մի մախաղ. մի հաց.
եւ մի արծաթ. եւ մի երկուս հանդերձս ունիցիք։
4 * Եւ յոր տուն մտանիցէք՝ անդ ագջիք. եւ անտի
5 գնասջիք։ * Եւ որք ոչ ընդունիցին զձեզ, յոր-
ժամ ելանիցէք ՚ի քաղաքէն յայնմանէ, զփոշի ոտից
6 ձերոց թօթափեսջիք ՚ի վկայութիւն նոցա։ * Եւ
ելեալ շրջէին ընդ քաղաքս եւ ընդ գիւղս. աւե-
տարանէին եւ բժշկէին ընդ ամ տեղիս։
7 * Լուաւ Հերովդէս չորրորդապետ զգործսն ամ.
8 եւ զարմանայր վա ասելոյն յումանց։ * Եթէ յոհան-
նէս յարեաւ ՚ի մեռելոց, եւ յոմանց՝ թէ եղիա

յայտնեցաւ: և յայլոց եթէ մարգարէ ոմն յառաջնոյն
9 յարեաւ: * Ասէ Հերովդէս. զյօհաննէս ես
գլխատեցի. իսկ սա ո՞վ իցէ՝ զորմէ զայսպիսի իրս
10 լսեմ: և խնդրէր տեսանել զնա: * Դարձան
առաքեալքն. և պատմեցին նմա զա՟մ՝ զոր արարին:
և առեալ զնոսա՝ խուսեաց առանձինն ՚ի տեղի
անապատ՝ քաղաքի միոյ, որում անուն էր Բեթսայիդա:
11 * Եւ ժողովուրդքն իբրև գիտացին, գնացին
զհետ ն՟ր: և ընկալեալ զն՟ս խօսէր ընդ ն՟ս վ՟ս արքայութե՟ն
Ա՟յ. և որոց պետք էին բժշկութե՟ն՝
12 բժշկէր: * Եւ օրն սկսաւ տարաժամիլ: մատեան
երկոտասանքն և ասեն ցնա: արձակեա զժողովուրդս,
զի երթեալ շուրջ ՚ի գիւղս և յագարակս՝
հանգիցեն. և գտցեն զկերակուր: զի աստ
13 յանապատի տեղւոջ եմք: * Ասէ ցն՟ս: դուք տուք
նոցա ուտել: և նոքա ասեն. ոչ գոյ մեր աւելի
քան զհինգ նկանակ և զերկուս ձկունս. բայց եթէ
երթիցուք՝ գնեսցուք բաւական ժողովրդեանդ
14 կերակուր: * Քանզի էին արք իբրև հինգ հազարք:
ասէ ցաշակերտսն. բազմեցուցէք զդոսա դաս
15 դաս՝ յիսուն յիսուն: * Եւ արարին այնպէս: և
բազմեցուցին զամենեսեան:
16 * Եւ առեալ զհինգ նկանակսն և զերկուս ձկունսն՝
հայեցաւ յերկինս. օրհնեաց՝ և եբեկ. և տայր
ցաշակերտսն արկանել ժողովրդեանն:
17 * Կերին և յագեցան ամենեքեան: և բարձին
զնշխարս կոտորոցն՝ երկոտասան սակառի:
18 ԴԿ. * Եւ եղև ՚ի կալն ն՟ր յաղօթս առանձինն.
էին ընդ նմա և աշակերտքն ն՟ր: եհարց զնոսա և
ասէ. զո՞վ ասեն զինէն ժողովուրդքն՝ թէ իցեմ:
19 * Եւ նոքա պատասխանի տուեալ ասեն: զյօհաննէս
մկրտիչ: և այլք զԵղիա: իսկ այլք թէ մարգարէ
20 ոմն յառաջնոյն յարեաւ: * Ասէ ցնոսա.
դուք զո՞վ ասէք զինէն, թէ իցեմ: պատասխանի
21 ետ Պետրոս և ասէ, զՔ՟ն Ա՟յ: * Նա սաստեաց
՚ի նոսա. և պատուիրեաց, մի՛ ումեք ասել
22 զայն: * Եւ ասէր թէ պարտ է որդւոյ մարդոյ բազում
չարչարիլ՝ և անարգիլ ՚ի քահանայապետից

և 'ի ծերոց և 'ի դպրաց. և սպանանիլ՝ և յերիր
23 աւուր յառնել: * Եւ ասէր առ ամենեսին. եթէ
որ կամի զկնի իմ գալ, ուրասցի զանձն՝ և առցէ
24 զխաչ իւր հանապազ՝ և եկեսցէ զհետ իմ: * Զի
որ կամիցի զանձն իւր կեցուցանել՝ կորուսցէ զնա:
և որ կորուսցէ զանձն իւր վ̃ն իմ, կեցուսցէ զնա:
25 * Զի՞նչ օգուտ է մարդոյ եթէ զաշխարհ շահեսցի. և զանձն իւր կորուսցէ, կամ տուժեսցէ:
26 * Զի որ ամօթ համարեսցի զիս և զբանս իմ,
զնա և որդի մարդոյ յամօթ արասցէ՝ յորժամ
գայցէ փառօք իւրովք՝ և հօր՝ և հրեշտակաց
27 սրբոց: * Բայց արդարև ասեմ ձեզ. եթէ են
ոմանք 'ի դոցանէ, որք աստ կան. որք մի ճաշակեսցեն զմահ, մինչև տեսցեն զարքայութիւն Այ:
28 * Եւ եղև յետ այոց բանից իբրև աւուրք ութ.
առեալ զՊետրոս՝ և զՅակոբոս՝ և զՅոհաննէս՝
29 ել 'ի լեառն կալ յաղօթս: * Եւ 'ի կալ նմա յաղօթս՝ եղև տեսիլ երեսաց նորա այլակերպ. և
փոխեցաւ հանդերձ ն̃ր. և եղև սպիտակ փայլուն:
30 * Եւ ահա արք երկու խօսէին ը̃ նմա. որք էին
31 մովսէս և եղիա: * Երևեալ փառօք: և ասէին
32 զելսն ն̃ր, զոր կատարելոց էր յեմ: * Իսկ պետրոս՝ և որք ընդ նմայն էին՝ ծանրացեալք 'ի քնոյ՝
զարթեան, և տեսին զփառսն ն̃ր՝ և զերկուս արսն՝
33 որք կային առ նմա: * Եւ եղև 'ի մեկնելն նոցա
'ի նմանէ, ասէ Պետրոս ցՅ̃ս. վարդապետ՝ բարւոք է մեզ աստ լինել. և արասցուք երիս տաղաւարս: մի քեզ. և մի մովսէսի. և մի եղիայի: և
34 ոչ գիտէր զինչ խօսէր: * Եւ իբրև զայս ասաց,
եկն ամպ, և հովանի եղև 'ի վերայ նոցա: և երկեան 'ի մտանելն նոցա ընդ ամպովն: * Զայն եղև
35 յամպոյն և ասէ. դա է Որդի իմ ընտրեալ. դմա
36 լուարուք: * Եւ ընդ լինել բարբառոյն՝ գտաւ Յ̃ս
միայն: և ինքեանք լռեցին, և ոչ ումեք պատմեցին յաւուրսն յայնոսիկ և ոչինչ՝ յորոց տեսինն:
37 Դր̃. * Եւ եղև 'ի վաղիւն՝ մինչ իջանէին նոքա 'ի
լեռնէ անտի, ընդառաջ եղև նմա ժողովուրդ բազում:
38 * Եւ ահա այր մի 'ի ժողովրդենէ անտի աղաղա-

կեաց և ասէ։ վարդապետ· աղաչեմ զքեզ՝ հայեաց
39 յորդի իմ։ զի միամօր է ինձ ։ * Եւ ահա այս հարկանի
՚ի ՚նմա ։ և յանկարծ գոչէ՝ և զարկուցանէ՝ և
թաւալեցուցանէ զնա՝ և փրփրեցուցանէ · և հազիւ
40 մեկնի ՚ի ՚նմանէ խորտակեալ զնա ։ * Եւ աղաչեցի
զաշակերտսն քո՝ զի հանցեն զնա՝ և ոչ կարացին ։
41 * Պատասխանի ետ Յս՟ և ասէ ։ ո՞վ ազգ անհաւատ
և թիւր · մինչև յե՞րբ եղէց ընդ ձեզ
42 և անսայցեմ ձեզ ։ մատո այսր զորդին քո ։ * Եւ
մինչդեռ մատչէր, զարկոյց զնա դևն՝ և շարժ
43 եաց ։ * Սաստեաց Յս՟ այսոյն պղծոյ · և բժշկեաց
44 զմանուկն · և ետ զնա ցհայր իւր ։ * Եւ զարմանային
ամենեքեան ՚ի վր՟ մեծամեծացն Այ՟ ։ և
՚ի զարմանալ ամենեցուն ՚ի վերայ ամ՟ի զոր առնէր·
ասէ ցաշակերտսն իւր · դիք դուք ՚ի լսելիս
ձեր զբանս զայսոսիկ ։ զի որդի մարդոյ մատնելոց է
45 ՚ի ձեռս մարդկան ։ * Եւ նոքա ոչ գիտէին զբանն ·
և էր ծածկեալ ՚ի նոցանէ՝ զի մի իմասցեն ։ և
երկնչէին հարցանել ցնա վս՟ բանին այնորիկ ։
46 * Եմուտ խորհուրդ ՚ի նոսա՝ թէ ո՞վ արդեօք մեծ
47 իցէ ՚ի նոցանէ ։ * Յս՟ իբրև ծանեաւ զխորհուրդս
սրտից նոցա · էառ զմանուկ մի · և կացոյց ՚ի մէջ
48 նոցա առ իւր ։ * Եւ ասէ ցնս՟ ։ որ ոք ընկալցի զմանուկս
զայս յանուն իմ, զիս ընդունի · և որ զիս
ընդունիցի, ընդունի զառաքիչն իմ ։ զի որ փոքրիկն
է յամենեսին ՚ի ձեզ՝ նա եղիցի մեծ ։
49 * Պատասխանի ետ յօհաննէս և ասէ ։ վարդապետ՝
տեսաք զոմն · որ յանուն քո դևս հանէր՝ և արգելաք
զնա · զի ոչ շրջի ընդ մեզ ։
50 * Ասէ ցնս՟ Յս՟ · մի՛ արգելուք · զի որ ոչն է ձեր թշնա
51 Դ՟Գ՟· մի, ՚ի ձեր կողմն է ։ * Եւ եղև ՚ի կատարել
աւուրց վերանալոյ նորա՝ և ինքն զերեսս հաստատեաց
երթալ յեմ՟ ։
52 * Եւ առաքեաց հրեշտակս առաջի երեսաց իւրոց։
և իբրև չոգան՝ մտին ՚ի գիւղ մի սամարացւոց պատրաստել
53 ինչ նմա ։ * Եւ ոչ ընկալան զնա ։ զի
54 դէմ եդեալ էր նր՟ երթալ յեմ՟ ։ * Իբրև տեսին
աշակերտքն յակոբոս և յօհաննէս, ասեն։ Տր՟

կամիս, զի ասասցուք. և իջցէ հուր յերկնից՝ և
55 սատակեսցէ զնս: * Դարձաւ սաստեաց 'ի նոսա և
56 ասէ: ո՛չ գիտէք որոյ հոգւոյ էք դուք: * Զի
որդի մարդոյ ո՛չ եկն զոգիս մարդկան կորուսանել,
57 այլ կեցուցանել: և գնացին յայլ գեւղ: * Եւ
մինչդեռ երթային նոքա 'ի ճանապարհին, ասէ
ոմն ցնա. եկից և ես զկնի քո յոր վայր և երթիցես:
58 * Ասէ ցնա Յս: աղուեսուց որջք գոն. և
թռչնոց երկնից դադարք. և որդւոյ մարդոյ ո՛չ
59 գոյ՝ ուր դիցէ զգլուխ: * Ասէ ցմիւս ևս: եկ զկնի
իմ: և նա ասէ: Տր հրամա՛ն տուր ինձ՝ երթալ
60 նախ թաղել զհայր իմ: * Ասէ ցնա Յս: թո՛ղ
զմեռեալսն թաղել զմեռեալս իւրեանց: և դու
երթ, և պատմեա զարքայութի Այ:
61 * Ասէ և այլ ոմն. եկից զկնի քո Տր. բայց նախ
հրամա՛ն տուր ինձ հրաժարել 'ի տանէ իմմէ:
62 * Ասէ ցնա Յս: ո՛չ ոք արկանէ զձեռն զմաճով և
հայիցի յետս, եթէ յաջողեալ իցէ արքայութեան
Այ:

ԳԼ. Ժ.

1 ԴԴ. Յետ այսորիկ երեւեցոյց Տր և այլս եօթանասուն
և երկուս և առաքեաց զնս
երկուս երկուս առաջի իւր յամ քաղաքս և 'ի տեղիս,
2 ուր ինքն երթալոց էր: * Եւ ասէ ցնս: հունձք
բազում են՝ և մշակք սակաւ: արդ՝ աղաչեցէք զՏր
հնձոց. զի հանցէ մշակս 'ի հունձս իւր:
3 Երթա՛յք, ահա առաքեմ զձեզ իբրև զգառինս 'ի մէջ
4 գայլոց: * Մի՛ բառնայք զքսակ. և մի մախաղ: մի՛
կօշիկս: և 'ի ճանապարհի ումեք ողջոյն մի տայցէք:
5 * Յոր տուն մտանիցէք, նախ ասասջիք թէ ողջոյն
6 տանս այսմիկ: * Եթէ իցէ անդ որդի ողջունի,
հանգիցէ ողջոյնն ձեր 'ի վերայ նր. ապա թէ ոչ՝ 'ի
7 ձեզ դարձցի: * Եւ 'ի նմին տան ագանիջիք: ուտիջիք
և ըմպիջիք 'ի նոցանէ: զի արժանի է մշակն
վարձու իւրոյ: մի՛ փոխիցիք 'ի տանէ 'ի տուն:
8 * Յոր քաղաք մտանիցէք՝ և ընդունիցին զձեզ՝ ու-

9 տիջիք զինչ առաջի դնիցեն ձեր: * Եւ բժշկեսջիք
որք ՚ի նմա հիւանդք իցեն: եւ ասասջիք նոցա. Մերձեալ
10 է ՚ի վերայ ձեր արքայութիւն Ա͞յ: * Իսկ յոր
քաղաք մտանիցէք, եւ ո՛չ ընդունիցին զձեզ, իբրեւ
11 ելանիցէք ՚ի հրապարակս ն͞ր, ասասջիք: * Եւ զփոշին
որ կցորդեալ է ՚ի քաղաքէ ձերմէ յոտս մեր՝ թօ
թափեսցուք ՚ի ձեզ: բայց զայս գիտասջիք՝ զի մեր
12 ձեալ է արքայութիւն Ա͞յ: * Ասեմ ձեզ. զի սոդոմացւոց
ընդարձակագոյն լինի յաւուրն յայնմիկ՝ քան
13 քաղաքին այնմիկ: * Վա՜յ քեզ Քորազին: վայ քեզ
Բեթսայիդա: զի եթէ ՚ի Տիւրոս. եւ ՚ի Սիդոն եղեալ
էին զօրութիւնքն՝ որք եղեն ՚ի ձեզ, վաղուց եւս
արդեօք ՚ի խորգ եւ ՚ի մոխիր նստեալք ապաշխարեալ
14 էին: * Բայց Տիւրոսի, եւ Սիդոնի ընդարձակա
15 գոյն լինի ՚ի դատաստանի՝ քան ձեզ: * Եւ դու Կափառնաւում՝
որ մինչեւ յերկինս բարձրացեալ ես.
16 մինչեւ ՚ի դժոխս իջցես: * Որ ձեզ լսէ, ինձ լսէ: եւ
որ զձեզ անարգէ, զիս անարգէ. եւ որ զիս անարգէ՝
զառաքիչն իմ անարգէ: եւ որ ինձ լսէ՝ լսէ այնմիկ
17 որ առաքեացն զիս: * Դարձան եօթանասունն եւ երկուքն
խնդութ͞բ եւ ասեն. Տ͞ր՝ եւ դեւք հնազանդին
18 մեզ յանուն քո: * Եւ ասէ ց͞նս: տեսանէի զսատանայ
19 անկեալ յերկնից իբրեւ զփայլակն: * Ահաւասիկ
ետու ձեզ զիշխանութ͞ի կոխել զօձս եւ զկարիճս եւ զա͞մ
զօրութ͞ե թշնամւոյն: եւ ձեզ ոչինչ մեղանչիցեն:
20 * Բայց ընդ այն մի խնդայք՝ եթէ այսք հնազանդին
ձեզ. այլ խնդացէք. զի անուանք ձեր գրեալ են յերկինս:
21 * ՚Ի նմին ժամու ցնծայր Յ͞ս Հոգւոյն սրբով
եւ ասէ: գոհանամ զքէն Հայր. Տ͞ր երկնից եւ երկրի:
զի ծածկեցեր զայս յիմաստնոց եւ ՚ի գիտնոց՝
եւ յայտնեցեր զայս տղայոց: այո Հայր: զի այսպէս
22 հաճոյ եղեւ առաջի քո: * Ամենայն ինչ տուաւ ինձ
՚ի Հօրէ իմմէ: եւ ոչոք գիտէ՝ ո՞վ է Որդի, եթէ ոչ
Հայր: եւ ո՞ է Հայր՝ եթէ ոչ Որդի: եւ ում կամիցի
23 Որդին յայտնել: * Եւ դարձեալ առանձինն առ աշակերտսն
ասէ: Երանի աչաց՝ որք տեսանիցեն զոր տեսանէքդ:
24 * Ասեմ ձեզ: զի բազում մարգարէք եւ
թագաւորք կամեցան տեսանել՝ զոր դուքդ տեսա.

նէք՝ և ոչ տեսին: և լսել զոր լսէքդ, և ոչ լուան:
25 Դ·Ե· * Եւ ահա յարեաւ ոմն օրինական՝ փորձէր
զնա և ասէր: վա՛րդապետ, զի՞նչ գործեցից՝ զի ըզ
կեանսն յաւիտենականս ժառանգեցից:
26 * Եւ նա ասէ ցնա: յօրէնսն զի՞նչ գրեալ է: ո՞պ
27 ընթեռնուս: * Նա պատասխանի ետ և ասէ: սիրես-
ցես զՏէր Ա͞Ծ քո յա͞մ սրտէ քումմէ. և յա͞մ անձնէ
քումմէ և յա͞մ զօրութենէ քումմէ. և յա͞մ մտաց քոց:
և զընկեր քո իբրև զանձն քո:
28 * Եւ ասէ ցնա: ուղիղ ետուր զպատասխանիդ: զայդ
29 արա, և կեցցես: * Նա իբրև կամեցաւ զանձն ար-
դարացուցանել. ասէ ցՅ͞ս: և ո՞վ է իմ ընկեր:
30 Պատասխանի ետ Յ͞ս և ասէ: այր մի իջանէր յԵ͞մէ
յերիքով. և անկաւ 'ի ձեռս աւազակաց: որք մեր-
կացուցին զնա՝ և վէրս 'ի վերայ եդին: թողին կի-
31 սամահ՝ և գնացին: * Դէպ եղև քահանայի միոջ
իջանել ընդ նոյն ճանապարհ. և տեսեալ զնա՝ զանց
32 արար: * Նոյնպէս և ղևտացի մի եկեալ ընդ նոյն
33 տեղի, ետես և զանց արար: * Սամարացի ոմն ճանա-
պարհորդեալ եկն ընդ նոյն առ նովաւ. և տեսեալ
34 զնա՝ գթացաւ: * Եւ մատուցեալ պատեաց զվէրս
նորա. արկեալ 'ի վերայ զձէթ և զգինի: և եդեալ
'ի վերայ գրաստու իւրոյ՝ էած զնա 'ի պանդոկի մի,
35 և դարմանեաց զնա: * Եւ 'ի վաղի՛ւն անդր իբրև
ելանէր անտի, հանեալ ետ պանդոկապետին երկուս
դահեկանս. և ասէ: դարման տար դմա: և զոր ինչ
ծախեսցես 'ի դմա՝ 'ի միւսանգամ գալստեան իմում
36 հատուցից քեզ: * Արդ՝ ո՞ յերեցունց 'ի նոցանէ
թուի քեզ մերձաւոր լեալ անկելոյն 'ի ձեռս աւա-
37 զակաց: * Եւ նա ասէ՝ որ արար զողորմութիւն 'ի
վերայ նորա: ասէ ցնա Յ͞ս: երթ՝ և դու արա՛ նոյնպ͞ս:
38 * Եւ եղև 'ի գնալն նոցա, և ինքն եմուտ 'ի գիւղ մի:
և կին ոմն անուն մարթա՝ ընկալաւ զնա 'ի տան
39 իւրում: * Եւ ն͞ր էր քոյր մի. որում անուն էր մարի-
ամ: որ և եկն, նստաւ առ ոտսն Տ͞ն. և լսէր զբան-
40 սըն նորա: * Եւ մարթա զբաղեալ էր 'ի բազում
սպասու: եկն և եկաց առ նմա և ասէ: Տէր ոչինչ է
փոյթ քեզ. զի քոյրդ իմ միայն եթող զիս 'ի սպա

41 սու. արդ՝ ասա դմա. զի օգնեսցէ ինձ: * Պատասխանի
ետ նմա Յ՟ս եւ ասէ: մարթա, մարթա, դու
հոգաս՝ եւ զբաղում իրիք զբաղեալ ես:
42 * Բայց աստ սակաւ ինչ պիտոյ է: մարիամ մասն
բարի ընտրեաց. որ ոչ բարձցի 'ի նմանէ:

ԳԼ. ԳԱ.

1 Եւ եղեւ 'ի տեղւոջ ուրեք կալ յաղօթս: եւ իբրեւ
Գ. Զ. դադարեաց. ասէ ցնա ոմն յաշակերտացն իւրոց:
Տ՟ր, ուսո մեզ յաղօթս կալ. որպ՟ եւ յօհաննէս
2 ուսոյց աշակերտացն իւրոց: * Ասէ ցնս: յորժամ կայցէք
յաղօթս. ասասջիք: Հայր մեր՝ ս՟ր եղիցի անուն
3 քո: եկեսցէ արքայութիւն քո: * Զհաց մեր
4 հանապազորդ տուր մեզ զօրըստօրէն: * Եւ թող
մեզ զմեղս մեր: զի եւ մեք թողումք ամ՟ի՝ որ
պարտիցի մեզ: եւ մի տանիր զմեզ 'ի փորձութ՟ի:
5 * Եւ ասէ ցն՟ս: ո՞վ է 'ի ձէնջ՝ որոյ իցէ բարեկամ.
եւ երթիցէ առ նա 'ի մէջ գիշերի. եւ ասիցէ ցնա.
6 բարեկամ, տուր ինձ փոխ երիս նկանակս: * Զի
բարեկամ իմ եկն առ իս յուղւոյ. եւ ոչ ինչ ունիմ
7 դնել առաջի ն՟ր: * Եւ 'ի ներքուստ տայցէ
պատասխանի եւ ասիցէ: մի աշխատ առներ զիս:
զի դուրք փակեալ են. եւ մանկունքս ընդ ինեւ
կան յանկողնի. ոչ կարեմ յառնել եւ տալ քեզ:
8 * Եթէ նա ստիպեսցէ բաղխելով՝ ասեմ ձեզ.
եթէ ոչ յարուցեալ տայցէ նմա վ՟ս բարեկամութ՟ն,
սակայն վ՟ս ժտութ՟ն յարուցեալ տայցէ
9 նմա՝ զինչ եւ պիտոյ իցէ: * Եւ ես ասեմ ձեզ,
խնդրեցէք, եւ տացի ձեզ: հայցեցէք, եւ գտջիք:
10 բաղխեցէք, եւ բացցի ձեզ: * Զի ամ՟, որ խնդրէ,
առնու: եւ որ հայցէ, գտանէ: եւ որ բախէ, բացցի
11 նմա: * Ցո՞ ոք 'ի ձէնջ հայր՝ խնդրիցէ որդի իւր
ձուկն: միթէ փոխանակ ձկան՝ օձ տայցէ նմա:
12 * Իսկ կամ խնդրիցէ ձու՝ միթէ կարի՞ճ տայցէ նմա:
13 * Իսկ եթէ դուք՝ որք չարքդ էք՝ գիտէք պարգեւս
բարիս տալ որդւոց ձերոց. ո՞րչափ եւս առաւել
հայրն ձեր յերկնից տացէ բարիս այնոցիկ:

14 ԴԸ. որք խնդրեն 'ի նմանէ։ * Ե՛ւ հանէր դեւ մի
համր։ և եղեւ յելանել դիւին՝ խօսեցաւ համրն։ և
15 զարմացան ա̃մ ժողովուրդն։ * Ե՛ւ ոմանք 'ի նոցանէ
ասէին. բէեղզեբուղաւ իշխանաւն դիւաց հանէ դա
16 զդեւս։ * Ե՛ւ այլք փորձէին՝ և նշան յերկնից խնդրէին
17 'ի նմանէ։ * Իսկ ն̃ր գիտացեալ զխորհուրդս նոցա,
ասէ ցնոսա. ա̃մ թագաւորութի̃ բաժանեալ յանձն,
աւերի։ և տուն բաժանեալ յանձն՝ կործանի։
18 * Ապա եթէ և սատանայ բաժանեցաւ յանձնէ.
զի՞արդ կայցէ թագաւորութի̃ ն̃ր։ զի ասէք զինէն
եթէ բէեղզեբուղաւ իշխանաւ հանէ դա
19 զդեւս։ * Եթէ ես բէեղզեբուղաւ հանեմ զդեւս.
որդիքն ձեր ի՞ւ հանիցեն։ վ̃ա այնորիկ նոքին եղիցին
20 ձեր դատաւորք։ * Իսկ եթէ մատամբ Ա̃յ
հանեմ զդեւս, ապա հասեալ է 'ի վերայ ձեր արքայութե̃ Ա̃յ։
21 * Յորժամ հզօր վառեալ պահիցէ
22 զտուն իւր, 'ի խաղաղութե̃ են ինչք ն̃ր։ * Բայց
եթէ հզօրագոյն քան զնա 'ի վերայ եկեալ յաղթեսցէ
նմա, զսպառազինութի̃ ն̃ր հանէ՝ յոր յուսացեալ
23 էր. և զաւար ն̃ր բաշխեսցէ։ * Որ ոչ է
ընդ իս՝ հակառակ իմ է. և որ ոչ ժողովէ ընդ
24 իս, ցրուէ։ * Յորժամ այսն ելանիցէ 'ի մարդոյ՝
շրջի ընդ անջրդին տեղիս։ խնդրէ հանգիստ։ և
իբրեւ ոչ գտանէ, ասէ. դարձայց անդրէն 'ի տուն
25 իմ ուստի ելի։ * Ե՛ւ գայ գտանէ մաքրեալ և
26 յարդարեալ։ * Յայնժամ երթայ և առնու եօթն
այլ այսս չարեւս քան զինքն՝ և մտեալ բնակի անդ.
և լինի յետինն մարդոյն այնորիկ չար քան զառաջինն։
27 * Ե՛ւ եղեւ մինչդեռ խօսէր զայս՝ ձայն եբարձ
կին մի 'ի ժողովրդենէ անտի և ասէ։ երանի է
որովայնին՝ որ կրեաց զքեզ. և ստեանցն՝ որք
28 դիեցուցին զքեզ։ * Ե՛ւ նա ասէ։ նա երանի այնոցիկ
29 է. որք լսեն զբանն Ա̃յ, և՛ առնեն։ * Ե՛ւ 'ի
դիզանալ 'ի վերայ նորա ժողովրդոյն՝ սկսաւ ասել։
ազգս այս, ազգ չար է. նշան խնդրէ։ և նշան յերկնից
30 ոչ տացի սմա, բայց նշանն յօնանու։ * Զի
որպ̃ եղեւ յօնան նշան նինուէացւոց, այնպ̃ եղիցի
31 և որդի մարդոյ ազգիս այսմիկ։ * Դշխոյն հարա-

ւոյ յարիցէ ՚ի դատաստանի ընդ արս ազգիս այսորիկ՝
և դատապարտեսցէ զոսա. զի եկն ՚ի ծագաց
երկրի լսել զիմաստութիւն սողոմոնի. և ահա
32 աւելի քան զսողոմոն է աստ: * Արք նինուէա
ցիք յարիցեն ՚ի դատաստանի ընդ ազգիս այսմիկ՝
և դատապարտեսցեն զսա. զի ապաշխարեցին ՚ի
քարոզութեան յօնանու. և ահա աւելի քան զյօ-
33 ԵԿ. նան է աստ: * Ո՛չ ուրուք լուցեալ զճրագ՝
դնէ ՚ի թաքստեան. և ո՛չ ընդ գրուանաւ, այլ ՚ի վերայ
աշտանակի. զի որք մտանենն, զլոյս տեսանիցեն:
34 * Ճրագ մարմնոյ ակն է: յորժամ ակն առատ է,
ամ՟ մարմինն լուսաւոր եղիցի: և երբ ակն չար
35 է, և մարմինն խաւարին եղիցի: * Արդ՝ զգո՛յշ լեր՝
գուցէ լոյսդ որ ՚ի քեզ է՝ խաւար իցէ:
36 * Եթէ մարմինդ քո ամ՟ լուսաւոր է, և չգուցէ
մասն ինչ խաւարին, եղիցի լուսաւոր ամ՟. ո՜վ
յորժամ ճրագն նշուլիւք լուսաւորեսցէ զքեզ:
37 * Եւ մինչ խօսէր զայս՝ աղաչէր զնա ոմն ՚ի
փարիսեցւոցն, զի ճաշ կերիցէ առ նմա: և նա
38 մտեալ բազմեցաւ: * Իբրև ետես փարիսեցին,
զարմացաւ. զի նախ ո՛չ մկրտեցաւ յառաջ քան
39 զճաշ: * Ասէ ցնա Տր՟: այժմ դուք փարիսեցիք
զարտաքին զբաժակին և զպնակին սրբէք. և ներքինն
ձեր լի՛ է յափշտակութբ՟ և չարութբ՟:
40 * Անմիտք. ո՞չ ապաքէն որ զարտաքինն արար՝ և
41 զներքինն նոյն արար: * Բայց ա՞ղէ զարժանն իսկ,
տուք ողորմութի. և ահա ամ՟ սբ՟ է ձեր:
42 * Այլ վա՛յ ձեզ փարիսեցւոց: զի տասանորդէք
զանանուխ. և զփեգենայ. և զամ՟ բանջար. և անցանէք
զիրաւամբք և զսիրովն Այ՟. զայս արժան
43 էր առնել՝ և զայնու ո՛չ անցանել: * Վա՞յ ձեզ
փարիսեցւոց. զի սիրէք զբարձրագահս ՚ի ժողովուրդս,
և զողջոյնս ՚ի հրապարակս:
44 * Վա՞յ ձեզ՝ զի էք դուք իբրև զգերեզմանս անյայտս.
և մարդիկ գնան ՚ի վերայ՝ և ո՛չ գիտեն:
45 * Պատասխանի ետ ոմն յօրինականացն, և ասէ:
վարդապետ, զայդ բան ասելով և զմեզ թշնամա-
46 նես: * Եւ նա ասէ. և ձեզ վայ օրինականացդ:

զի բառնայք մարդկան բեռինս դժուարակիրս. և
դուք մատամբ միով 'ի բեռինսն ոչ մերձենայք ։
47 *Վայ ձեզ. զի շինէք զշիրիմս մարգարէիցն. և
48 հարքն ձեր սպանին զնս ։ *Ապաքէն վկայէք
եթէ կամակիցք էք գործոց հարցն ձերոց. զի
նոքա կոտորեցին զնոսա. և դուք գերեզմանս
49 նոցա շինէք ։ *Վասն այնորիկ իմաստութիւն Այ
ասաց. առաքեցից 'ի նոսա մարգարէս և առաք-
եալս. և 'ի նոցանէ սպանանիցեն, և հալածիցեն ։
50 *Զի խնդրեսցի արիւն ամենայն մարգարէից հե-
ղեալ 'ի սկզբանէ աշխարհի յազգէ յայդմանէ ։
51 *Յարենէն աբիղի մինչև յարիւնն զաքարիայ կո-
րուսելոյ ընդ սեղանն և ընդ տաճարն. այո՛ ասեմ
ձեզ՝ խնդրեսցի յազգէ յայդմանէ ։
52 *Վայ ձեզ օրինականացդ. զի թաքուցանէք զփա-
կանս գիտութեան. դուք ոչ մտանէք, և որք մտա-
53 նելոցն են, արգելուք ։ *Եւ 'ի խօսելն զայս ամ
առ նմ առաջի ամենայն ժողովրդեանն, զամօթի
հարկանէին, և սկսան դպիրքն և փարիսեցիքն
դժուարել՝ և գրգռել ընդ նմա վասն բազում իրաց ։
54 *Եւ սպասէին որսալ ինչ բանս 'ի բերանոյ նորա՝
զի չարախօսեսցեն զնմանէ ։

ԳԼ. ԺԲ.

1 Որովք 'ի կուտել բիւրաւորաց ժողովրդեանն,
մինչև կոխել զմիմեանս. սկսաւ ասել յաշա-
կերտս իւր, նախ՝ զգոյշ լերուք անձանց 'ի խմորոյ փա-
2 րիսեցւոյն, որ է կեղծաւորութիւն ։ *Զի ոչինչ է 'ի
ծածուկ՝ որ ոչ յայտնեսցի. և գաղտնի՝ որ ոչ ծա-
3 նիցի ։ *Վասն այսորիկ զոր ինչ ասիցէք 'ի խաւա-
րի, լսելի լիցի 'ի լոյս. և զոր յունկանէ խօսեցայք
'ի շտեմարանս, քարոզեսցի 'ի վերայ տանեաց ։
4 *Բայց ձեզ ասեմ սիրելեաց իմոց. մի զարհուրիք
յայնցանէ, որք սպանանեն զմարմին, և յետ այ-
5 նորիկ աւելի ինչ ոչ ունիցին առնել ։ *Այլ ցու-
ցից ձեզ յումմէ երկնչիջիք. երկերուք յայնմանէ՝
որ յետ սպանանելոյ ունի իշխանութիւն արկանել

՚ի գեհեան. այո՞ ասեմ ձեզ՝ յայնմանէ երկերուք։
6 *Ո՞չ ապաքէն հինգ ձագք երկուց դանկաց վաճառին.
և մի ՚ի նոցանէ ո՛չ է մոռացեալ առաջի
7 Այ։ *Այլ ձեր և ամենայն իսկ հեր գլխոյ թուեալ է.
մի՛ երկնչիք՝ զի քան զբազում ձագս լաւ
8 էք դուք։ *Ասեմ ձեզ. զի ամենայն որ խոստովանեսցի
յիս առաջի մարդկան, և որդի մարդոյ
խոստովանեսցի զնմանէ առաջի հրեշտակաց Այ։
9 *Եւ որ ուրասցի զիս առաջի մարդկան, ուրացեալ
10 լիցի առաջի հրեշտակաց Այ։ *Եւ ամենայն
որ ասէ բան զորդւոյ մարդոյ՝ թողցի նմա. բայց
որ զՀոգին սուրբ հայհոյիցէ, մի՛ թողցի նմա։
11 *Այլ յորժամ տանիցեն զձեզ ՚ի ժողովուրդս և
՚ի պետութիւնս, մի՛ հոգայցէք՝ որպէս թէ զինչ
պատասխանի տայցէք. կամ զինչ ասիցէք։
12 *Զի Հոգին սուրբ ուսուսցէ ձեզ ՚ի նմին ժամու՝
զինչ պարտիցէ խօսիլ։
13 Եր̃. *Ասէ մի ՚ի ժողովրդենէն ցնա. վարդապետ,
ասա՛ ցեղբայր իմ, բաժանել ընդ իս զժառանգութիւն։
14 *Եւ նա ասէ ցնա. ա՛յր դու՝ ո՛ կացոյց զիս դատաւոր
15 կամ բաժանարար ՚ի վերայ ձեր։ *Եւ ասէ
ցնոսա. տեսէք, և զգո՛յշ լերուք յամենայն ագահութէ.
զի ո՛չ եթէ ՚ի մթերից ընչից ուրուք
16 լիցին կեանք նորա։ *Խօսեցաւ առ նոսա զառակ
մի, և ասէ. առն ուրումն մեծատան եկուն անդք
17 տոհմականս։ *Եւ խորհէր ՚ի միտս իւր՝ և ասէր.
զի՞ գործեցից՝ զի ո՛չ գոյ տեղի, ուր ժողովեցից
18 զարդիւնս իմ։ *Եւ ասէ՝ գիտեմ զինչ արարից.
քակեցից զշտեմարանս իմ. և ևս մեծամեծս շինեցից.
և անդր ժողովեցից զցորեան, և զամենայն
19 բարութիւնս իմ։ *Եւ ասացից ցանձն իմ. անձն,
ունիս բազում բարութիւնս, համբարեալ ամաց
բազմաց. հանգի՛ր, կե՛ր, ա՛րբ, և ուրա՛խ լեր։
20 *Ասէ ցնա Ած. անմիտ, յայսմ գիշերի զոգիդ
՚ի քէն ՚ի բաց պահանջիցեն. իսկ զոր պատրաստեցերն՝
21 ո՞ւմ լինիցի։ *Նոյնպէս և որ գանձէ անձին,
22 և ո՛չ յԱծ մեծանայցէ։ *Ասէ ցաշակերտսն իւր.
վասն այդորիկ ասեմ ձեզ՝ մի՛ հոգայք ընդ ոգւոյ՝

թէ զինչ ուտիցէք · և մի ընդ մարմնոյ՝ թէ զինչ
23 զգենուցուք ։ * Զի ոգի առաւել է քան զկերակուր,
24 և մարմին քան զհանդերձ ։ * Հայեցարուք
ընդ ագռաւս, զի ոչ սերմանեն՝ և ոչ հնձեն· որոց
ոչ գոն շտեմարանք՝ և ոչ համբարանոցք · և Ած
կերակրէ զնս̃ · ո՞րչափ ևս առաւել զձեզ՝ որք լաւ
25 էք քան զթռչունս ։ * Ո՞վ ՚ի ձէնջ առ հոգալ՝
կարիցէ յաւելուլ ՚ի հասակ իւր կանգուն մի ·
26 * Իսկ արդ եթէ ՚ի փոքուն չէք բաւական՝ վասն
27 այլոյն զի՞ հոգայք ։ * Հայեցարուք ընդ շուշանն,
որպէս աճէ · ոչ ջանայ՝ և ոչ նիւթէ · ասեմ
ձեզ՝ և ոչ Սողոմոն յամենայնի փառսն իւր զգեցաւ
28 իբրև զմի ՚ի նոցանէ ։ * Իսկ եթէ զխոտն՝ որ
այսօր ՚ի բացի է, և վաղիւ ՚ի հնոց արկանելի, Ած
այնպէս զգեցուցանէ · ո՞րչափ ևս առաւել զձեզ
29 թերահաւատք ։ * Եւ դուք մի խնդրէք զինչ ուտիցէք,
կամ զինչ ըմպիցէք · և մի զբաղնուք ։
30 * Զի զայն ամենայն հեթանոսք աշխարհի խնդրեն·
այլ ձեր Հայր գիտէ՝ զի պիտոյ է այն ամենայն ։
31 * Բայց խնդրեցէք նախ՝ զարքայութի̅ Այ, և զարդարութի̅
նորա · և այն ամենայն յաւելցի ձեզ ։
32 ԵԳ · * Մի երկնչիր հօտ փոքրիկ · զի հաճեցաւ
33 Հայր ձեր տալ ձեզ զարքայութի̅ ։ * Վաճառեցէք
զինչս ձեր · և տուք զողորմութի̅ · և արարէք ձեզ
քսակս առանց հնանալոյ, գանձ անպակաս յերկինս ·
ուր ոչ գող մերձենայ · և ոչ ցեց ապականէ ։
34 * Զի ուր գանձն ձեր է, անդ և սիրտք ձեր եղի
35 ցին ։ * Եղիցին գօտիք ձեր պնդեալ ընդ մէջս · և
36 ճրագունք լուցեալք ։ * Եւ դուք նմանօղք մարդկան՝
որք ակնունիցին տեառն իւրեանց՝ թէ երբ
դառնայցէ ՚ի հարսանեաց ։ զի յորժամ գայցէ և
37 բախիցէ, վաղվաղակի բանայցեն նմա ։ * Երանի
իցէ ծառայիցն այնոցիկ՝ զորս եկեալ տէրն գտցէ
արթունս · ամէն ասեմ ձեզ՝ զի գօտի ընդ մէջ
ածցէ՝ և բազմեցուսցէ զնոսա · և անցեալ պաշտեսցէ
38 զնոսա ։ * Եւ եթէ յերկրորդ, կամ յերրորդ
պահու եկեսցէ և գտցէ այնպ̃, երանելիք են ծառայքն
39 այնոքիկ ։ * Բայց զայն գիտասջիք · եթէ

գիտէր տանուտէրն յորում ժամու գող գայ՝
հսկէր, և չտայր թոյլ ական հատանել՝ 'ի տան
40 իւրում։ * Եւ դուք եղերո՛ւք պատրաստք՝ զի յո-
րում ժամու ոչ կարծիցէք՝ գայ որդի մարդոյ։
41 * Ասէ Պետրոս. Տէր՝ առ մե՞զ ասացեր զառակդ
42 զայդ՝ թէ առ ամենեսեան։ * Եւ ասէ Տէր. ո՞վ
իցէ հաւատարիմ տնտես և իմաստուն. զոր կացոյց
Տէր իւր 'ի վերայ գերդաստանի իւրոյ՝ տալ 'ի ժա-
43 մու զկերակուրս։ * Երանի իցէ ծառային այնմիկ՝
զոր եկեալ տէր իւր գտանիցէ արարեալ այնպ՟։
44 * Արդարև ասեմ ձեզ՝ զի 'ի վերայ ամենայն ընչից
45 իւրոց կացուսցէ զնա։ * Ապա թէ ասիցէ ծառայն
այն 'ի սրտի իւրում, յամէ տէր իմ 'ի գալ. և
սկսանիցի հարկանել զծառայս և զաղախնայս. ու-
46 տել՝ և ըմպել՝ և արբենալ։ * Եկեսցէ տէր ծա-
ռային այնորիկ, յաւուր յորում ակն ո՛չ ունիցի.
և 'ի ժամու, յորում ո՛չ գիտիցէ. ընդ մէջ կըտ-
րեսցէ զնա՝ և զբաժին նորա ընդ անհաւատս դիցէ։
47 * Եւ ծառայ՝ որ գիտիցէ զկամս տեառն իւրոյ, և
ոչ պատրաստեսցէ ըստ կամաց նր՟՝ արբցէ գան
48 բազում։ * Եւ որ ոչն գիտիցէ, և արժանի գանի
ինչ գործիցէ, արբցէ գան սակաւ։ Ամենայնի,
որում շատ տուաւ, շատ խնդրեսցի 'ի նմանէ. և
որում բազում աւանդեցաւ, առաւելեւս պահան-
49 Եղ. ջեսցեն 'ի նմանէ։ * Հուր եկի արկանել յեր-
կիր. և զի՞նչ կամիմ, թէ արդէն իսկ բորբոքիւր։
50 * Եւ մկրտութիւն մի ունիմ մկրտիլ. և զիա՞րդ
51 փութամ մինչև կատարեսցի։ * Համարիք, եթէ
խաղաղութ՟ի եկի տալ յերկիր. ո՛չ ասեմ ձեզ՝
52 այլ բաժինս։ * Զի եղիցին յայսմհետէ հինգ 'ի
տան միում բաժանեալք. երեքն յերկուց. և եր-
53 կուքն յերից։ * Բաժանեսցի, հայր յորդւոյ. և
որդի 'ի հօրէ. մայր 'ի դստերէ, և դուստր 'ի մօ-
րէ. սկեսուր 'ի հարսնէ, և հարսն 'ի սկեսրէ իւր-
54 մէ։ * Ասաց և ցժողովուրդն, յորժամ տեսանի-
ցէք ամպ ծագեալ յարեւմտից, իսկոյն ասէք, թէ
55 անձրև գայ. և լինի այնպէս։ * Եւ յորժամ հա-
րաւ շնչեալ՝ ասէք՝ թէ խորշակ լինի. և լինի։

56 այնպէս ։ * Կեղծաւորք՝ զերեսս երկնի և երկրի
գիտէք փորձել․ իսկ զժամանակս զայս զի՞արդ ոչ
57 փորձէք ։ * Ընդէ՞ր և յանձանց իսկ ոչ ընտրէք
58 զարժանն ։ * Ցորժամ երթայցես ընդ ոսոխի քում
առ իշխան, 'ի ճանապարհի տուր զհաշի՛ն զերծա-
նիլ 'ի նմանէ․ զի մի՛ քարշիցէ զքեզ առ դա-
տաւորն․ և դատաւորն մատնիցէ դահճի․ և դա-
59 հիճն արկանիցէ 'ի բանտ ։ * Ասեմ քեզ․ ոչ ելա-
նիցես անտի՝ մինչև հատուցանիցես զյետին բշիռն

ԳԼ․ ԺԳ։

1 Եկին ոմանք 'ի նմին ժամանակի․ և պատմէին
նմա վասն Գալիլեացւոցն․ որոց զարիւնն պի-
2 ղատոս խառնեաց ընդ զոհսն նոցա ։ * Պատասխա-
նի ետ և ասէ ցնոսա․ Համարիք եթէ այնք Գա-
լիլեացիք եղեն մեղաւորք քան զամենայն Գալի-
լեացիս․ զի զայնպիսի անցս կրեցին ։
3 * Ո՛չ ասեմ ձեզ․ այլ եթէ ոչ ապաշխարիցէք,
4 ամենեքին նոյնպ̃ կորնչիցիք ։ * Կամ նոքա ութու-
տասանքն, յորոց վերայ աշտարակն անկաւ 'ի Սի-
ղովամ, և սպան զնոսա․ Համարիք, թէ նոքա
պարտապանք եղեն քան զա̃մ մարդիկ՝ որք բնա-
5 կեալ են յե̃մ ։ * Ո՛չ ասեմ ձեզ․ այլ եթէ ոչ
ապաշխարիցէք, ամենեքեան նոյնպէս կորնչիցիք ։
6 * Ասաց և զառակս զայս․ Թզենի մի էր ուրումն
տնկեալ յայգւոջ իւրում, և եկն խնդրել զպտուղ
7 'ի նմանէ՝ և ոչ եգիտ ։ * Ասէ ցայգեգործն, ահա
երեք ամք են յորմէ հետէ գամ խնդրել պտուղ
'ի թզենւոջդ՝ և ոչ գտանեմ․ արդ՝ կոտեա զդա՝
ընդէ՞ր և զերկիրդ խափանէ ։
8 * Նա պատասխանի ետ և ասէ․ Տ՛ր, թո՛ղ զդա
յայս ամ ևս, մինչև շուրջ զդովաւ բրեցից՝ և
9 արկից զաղբ ։ * Թերևս արասցէ զպտուղ․ ապաթէ
10 ոչ․ ոչ՝ յամէ ևս, հատցես զդա ։ * Եւ՛ ուսու-
ցանէր 'ի միում ժողովրդանոցացն 'ի շաբաթու ։
11 * Եւ՛ ահա կին մի՝ զոր ունէր այս հիւանդութեան,
ամս ութուտասան․ և էր կորկամեալ․ և ոչ կա

12 րէր ամենեւին 'ի վեր հայել: * Եւ տեսեալ զնա
Յս՝ կոչեաց առ ինքն, և ասէ ցնա. կին դու՝
13 արձակեալ ես 'ի հիւանդութենէ քումմէ: * Եւ եդ
'ի վերայ նորա ձեռն. և առժամայն ուղղեցաւ. և
14 փառաւոր առնէր զԱծ: * Պատասխանի ետ ժո-
ղովրդապետն ցասուցեալ՝ թէ ընդէր 'ի շաբաթու
բժշկեաց Յս, և ասէ ժողովրդեանն. վեց օր է՝
յորս արժան է գործել՝ յայնս եկայք և բժշկեցա-
15 րուք. և մի յաւուր շաբաթու: * Պատասխանի
ետ նմա Տր, և ասէ. կեղծաւորք՝ իւրաքանչիւրոք
'ի ձէնջ 'ի շաբաթու ոչ արձակէ զեզն իւր կամ
16 զէշ 'ի մսրոյ՝ և տանի տայ ջուր: * Իսկ այս
դուստր աբրահամու էր, զոր կապեաց սատանայ
ահաւասիկ ութուտասն ամ, ոչ էր արժան ար
17 ձակել 'ի կապանաց անտի 'ի շաբաթու: * Եւ զայս
իբրեւ ասէր, յամօթ լինէին ամենեքեան, որք հա-
կառակն կային նմա. և ամենայն ժողովուրդն ու-
րախ լինէր 'ի վերայ ամենայն փառաւորութեանն,
18 որք գործէին 'ի նմանէ: * Եւ ասէր, ում նմանէ
արքայութիւն Այ. և ընդ ում նմանեցուցից
19 զնա: * Նման է հատոյ մանանխոյ. զոր առեալ
մարդոյ՝ էարկ 'ի պարտէզ իւր. աճեաց և եղեւ ծառ.
և թռչունք երկնից բնակեալ էին յոստս նորա:
20 * Եւ դարձեալ ասէ՝ ում նմանեցուցից զարքայու-
21 թիւն Այ: * Նման է խմորոյ՝ զոր առեալ կնոջ՝
թագոյց յալեր երից գրուայ՝ մինչեւ խմորեցաւ ամն:
22 ԵՋ. * Եւ շրջէր ընդ քաղաքս և ը գիւղս՝ ուսու-
23 ցանէր: և ճանապարհ արարեալ յեմ: * Ասէ
ցնա ոմն, Տր, եթէ սակաւք իցեն, որք ապրելոց
24 իցեն. և նա ասէ ցնս: * Ջանայարուք մտանել
ընդ դուռն նեղ. ասեմ ձեզ՝ զի բազումք խնդրես-
25 ցեն մտանել՝ և ոչ կարասցեն: * Յորմէ հետէ
մտցէ տանուտէրն՝ և փակեսցէ զդուռն. և սկսա-
նիցիք կալ արտաքոյ՝ և բաղխել զդուռն, և ա-
սել. Տր, Տր, բաց մեզ. և պատասխանի տուեալ
ասիցէ ձեզ. ոչ գիտեմ զձեզ ուստի էք:
26 * Յայնժամ սկսանիցիք ասել. կերաք առաջի քո,
և արբաք՝ և 'ի հրապարակս մեր ուսուցեր:

27 * Եւ ասիցէ ձեզ. ոչ գիտեմ զձեզ ուստի էք.
՚ի բաց կացէք յինէն ա՟մ մշակք անիրաւութեան:
28 * Անդ եղիցի լալ և կրճել ատամանց. յորժամ
տեսանիցէք զաբրահամ. և զիսահակ, և զյակոբ՝
և զամենայն մարգարէս յարքայութեան Ա՟յ. և զձեզ
29 հանեալ արտաքս: * Եւ եկեսցեն յարևելից, և
յարևմտից, և ՚ի հիւսիսոյ, և ՚ի հարաւոյ, և բազմեսցին
30 յարքայութեան Ա՟յ: * Եւ ահա յետինք,
որք եղիցին առաջինք. և իցեն առաջինք, որք լինիցին
31 յետինք: * ՚Ի նմին աւուր մատեան ոմանք
փարիսեցիք, և ասեն. ել և գնա աստի. զի Հերովդէս
կամի սպանանել զքեզ:
32 * Եւ նա ասէ ցնոսա. երթայք՝ ասացէք աղուեսուն
այնմիկ. ահաւասիկ հանեմ դևս. և բժշկութիւնս
կատարեմ այսօր., և վաղիւ, և յերիր աւուր
33 կատարիմ: * Բայց պարտ է այսօր, և վաղիւ, և
՚ի միւսում աւուր գնալ. զի ոչ է մարթ մարգարէի
կորնչիլ արտաքոյ քան զե՟մ:
34 * Ե՟մ, ե՟մ, որ կոտորէիր զմարգարէս, և քարկոծ
առնէիր զառաքեալսն առ քեզ. քանիցս անգամ
կամեցայ ժողովել զորդիս քո. որպէս հաւ զձագս
35 իւր ընդ թևովք՝ և ոչ կամեցայք: * Ահա թողեալ
լիցի ձեզ տուն ձեր աւերակ. բայց ասեմ ձեզ.
եթէ ոչևս տեսանիցէք զիս, մինչև ասիցէք՝
օրհնեալ եկեալ յանուն Տ՟ն:

ԳԼ. ԺԴ:

1 Եւ եղև ՚ի մտանել նորա ՚ի տուն ուրումն իշխանաց
փարիսեցւոց ՚ի շաբաթու ուտել հաց:
2 և նոքա սպասէին նմա: * Եւ ահա այր մի էր անդ
3 ջրգողեալ առաջի ն՟ր. * Պատասխանի ետ Յ՟ս և
ասէ ցօրինաւորս՝ և ցփարիսեցիս՝ եթէ արժան
4 իցէ ՚ի շաբաթու բժշկել: * Եւ նոքա լուռ եղեն:
և բուռն հարեալ զնմանէ՝ բժշկեաց զնա, և արձակեաց:
5 * Եւ ասէ ցն՟ս՝ ո՞յր ուրուք ՚ի ձէնջ էշ,
կամ եզն անկանիցի ՚ի ջրհոր, և ոչ վաղվաղակի
6 հանիցէ զնա՝ յաւուր շաբաթու: * Եւ ոչ կարացին
տալ նմա պատասխանի առ այն:

7 * Ասաց և առ կոչնականսն առակ մի: հայեցեալ
թէ զիարդ բարձրնտիր լինէին, ասէ ցնոսա:
8 * Յորժամ կոչիցէ ոք զքեզ 'ի հարսանիս, կամ 'ի
կոչունս. մի բազմիցիս յառաջին բարձին. գուցէ
պատուականագոյն ևս քան զքեզ լիցէ կոչեցեալ 'ի
9 նմանէ: * Եւ եկեալ՝ որ զքեզ և զնա կոչեաց՝
ասիցէ ցքեզ. տուր սմա տեղի: և ապա սկսանիցիս
ամօթով զյետին տեղին ունիլ:
10 * Այլ յորժամ կոչիցիս, երթ իջիր՝ բազմեսջիր 'ի
յետին տեղւոջ: զի յորժամ գայցէ՝ որ կոչեացն
զքեզ, ասիցէ ցքեզ. բարեկամ 'ի վեր մատիր: յայնժամ
եղիցին քեզ փառք առաջի բարձակցացն քոց:
11 * Զի ա՟մ, որ բարձրացուցանէ զանձն, խոնարհեսցի:
և որ խոնարհեցուցանէ զանձն, բարձրասցի:
12 * Ասէ և ցկոչնատէրն: յորժամ առնիցես ճաշ՝
կամ ընթրիս, մի կոչեր զբարեկամս քո. և մի
զեղբարս քո: և մի զազգականս քո: և մի զդրացիս
քո: և մի զմեծամեծս: զի մի և նոքա փոխարէն
կոչիցեն զքեզ՝ և լինիցի քեզ հատուցումն:
13 * Այլ յորժամ առնիցես ընդունելութ՟ի, կոչեա՛
14 զաղքատս՝ և զխեղս՝ և զկաղս՝ և զկոյրս: * Եւ
երանելի լինիցիս: զի ոչ ունին փոխարէն հատուցանելոյ
քեզ: և հատուցցի քեզ փոխարէն 'ի յարութ՟ե
15 արդարոց: * Իբրև լուաւ զայս ոմն 'ի բազմականացն՝
ասէ ցնա: երանի, որ կերիցէ ճաշ
16 յարքայութ՟ե Ա՟յ: * Եւ նա ասէ ցնա: այր ոմն
գործեաց ընթրիս. և հրաւիրեաց զբազումս:
17 * Եւ առաքեաց զծառայ իւր 'ի ժամու ընթրեացն
կոչել զհրաւիրեալսն, թէ եկայք: զի ահաւասիկ
18 պատրաստ է ա՟մ ինչ: * Եւ սկսան մի ըստ միոջէ
ամենեքեան հրաժարել: առաջինն ասէ. ագարակ
գնեցի. և հարկ է երթալ՝ և տեսանել զնա. աղաչեմ
19 զքեզ՝ կալ զիս հրաժարեալ: * Եւ միւսն
ասէ՝ լծս հինգ՝ եզանց գնեցի. և երթամ փորձել
զն՟ս. աղաչեմ զքեզ՝ կալ զիս հրաժարեալ:
20 * Եւ միւսն ասէ. կին առի, և վասն այնորիկ ոչ
21 կարեմ գալ: * Եւ եկեալ ծառայն պատմեաց զա՟մ
տեառն իւրում: յայնժամ բարկացեալ տանուտէրն՝

ասէ ցծառայն իւր. Ել վաղվաղակի ՚ի հրապարակս
և ՚ի փողոցս քաղաքիս. և զաղքատս՝ և զխեղս՝ և
22 զկաղս՝ և զկոյրս մո՛յծ այսր։ * Եւ ասէ ծառայն.
Տ̅ր, եղև զոր հրամայեցեր. և կայ և ևս տեղի։
23 * Եւ ասէ տ̅րն ցծառայն. Ել ՚ի ճանապարհս, և
՚ի ցանկս. և արա այսր մտանել. զի լցցի տունս
24 իմ։ * Ասեմ ձեզ. զի ոչ ոք յայնց կոչեցելոց ճա-
25 ԶԿ. շակեսցէ յընթրեաց իմոց։ * Եւ երթային
ընդ նմա ժողովուրդք բազումք։ Դարձաւ և ասէ
26 ցնոսա։ * Եթէ ոք գայ առ իս՝ և ոչ ատեայ զհայր
իւր և զմայր. և զկին իւր, և զորդիս. և զեղբարս
և զքորս. նաև զանձն ևս իւր, ոչ կարէ իմ ա-
27 շակերտ լինիլ։ * Զի որ ոչ բառնայ զխաչ իւր՝
և գայ զկնի իմ, ոչ կարէ իմ աշակերտ լինիլ։
28 * Ո՞վ ոք ՚ի ձէնջ կամիցի շինել աշտարակ. և ոչ
նախ նստեալ համարիցի զծախսն եթէ ունիցի
29 բաւական ՚ի կատարումն։ * Զի գուցէ իբրև ար-
կանիցէ զհիմն՝ և ոչ կարասցէ կատարել, ամե-
նեքեան՝ որք տեսանիցեն՝ սկսանիցին ծաղր առնել
30 զնա։ * Եւ ասել։ Եթէ այս այր սկսաւ շինել՝ և
31 ոչ կարաց կատարել։ * Կամ ո՞ր թագաւոր եր-
թեալ տայցէ պատերազմ ընդ այլում թագաւորի.
և ոչ նստեալ նախ խորհիցի. եթէ կարօղ իցէ
տասն հազարաւ զդէմ ունիլ այնորիկ՝ որ գայցէ
32 ՚ի վերայ նր̅ քսան հազարաւ։ * Ապա թէ ոչ՝ մինչ
դեռ հեռագոյն իցէ հրեշտակութիւս առաքեալ
33 աղաչեսցէ ՚ի խաղաղութի։ * Արդ՝ այսպէս ամ̅ ոք
՚ի ձէնջ. որ ոչ հրաժարեսցի յամ̅ ընչից իւրոց,
34 ոչ կարէ իմ աշակերտ լինիլ։ * Բարւոք է ա̅ղ.
35 այլ եթէ աղն անհամեսցի, ի՞ւ համեմեսցի։ * Ո՛չ
յերկիր՝ և ոչ յաղբ է պիտանացու։ այլ ընկենուլ
զնա արտաքս։ որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ։

ԳԼ։ ԺԵ։

1 Եւ էին մերձ առ նա ամ̅ մաքսաւորք, և մեղա-
2 ւորք լսել ՚ի նմանէ։ * Տրտնջէին փարիսեցիքն
և դպիրք՝ և ասէին. ընդէ՞ր սա զմեղաւորս ըն-

3 դունի՝ և ուտէ ընդ ն͞ս: * Ասաց առ նոսա զառակս
4 զայս: * Ո՞վ ոք իցէ 'ի ձէնջ մարդ՝ որոյ իցէ հարիւր
ոչխար, և կորուսանիցէ զմի 'ի նոցանէ: ո՞չ
թողուցու զիննսունն և զինն յանապատի. և երթայցէ
զհետ կորուսելոյն մինչև գտանիցէ զնա:
5 * Եւ իբրև գտանէ, դնէ զնա 'ի վերայ ուսոյ իւրոյ
6 խնդալով: * Եւ երթայ 'ի տուն. կոչէ զբարեկամս
և զդրացիս. և ասէ ցն͞ս: ուրախ եղերուք
ընդ իս. զի գտի զոչխարս իմ՝ զկորուսեալ:
7 * Ասեմ ձեզ. զի այսպէս է ուրախութ͞ի յերկինս
վ͞ն միոյ մեղաւորի որ ապաշխարիցէ՝ քան վ͞ն իննսուն
և ինն արդարոյ՝ որոց չիցէ պէտոյ ապաշխարութ͞ի:
8 * Կամ ո՞վ իցէ կին. որոյ իցեն դրամք տասն: և
եթէ կորուսանիցէ զդրամ մի. ո՞չ լուցանիցէ
զճրագ. և ածիցէ զաւել 'ի տան. և խնդրիցէ
9 ստէպ՝ մինչև գտանիցէ: * Եւ իբրև գտանէ, կոչէ
զբարեկամս և զդրացիս՝ և ասէ: ուրախ եղերուք
ընդ իս. զի գտի զդրամն իմ՝ զոր կորուսի:
10 * Այնպէս՝ ասեմ ձեզ, ուրախութ͞ի եղիցի առաջի
հրեշտակաց Ա͞յ 'ի վերայ միոյ մեղաւորի՝ որ ապաշխարիցէ:
11 * Եւ ասէ: առն միոջ էին երկու որդիք:
12 * Ասէ կրտսերն 'ի նոցանէ ցհայրն: Հա՛յր՝ տուր
ինձ բաժին. որ անկանի յընչիցդ: և նա բաժանեաց
13 նոցա զկեանսն: * Եւ յետ ոչ բազում աւուրց՝ ժողովեալ զա͞մ կրտսեր որդւոյն՝ գնաց յաշխարհ
հեռի: և անդ վատնեաց զինչս իւր, զի կեայր
14 անառակութ͞բ: * Եւ իբրև սպառեաց զա͞մ, եղև
սով սաստիկ յաշխարհին յայնմիկ: և սկսաւ ինքն
15 չքաւորիլ: * Եւ գնացեալ յարեցաւ 'ի միումն քաղաքացւոց
աշխարհին այնորիկ: և յղեաց զնա յագարակ
16 իւր արածել խոզս: * Եւ ցանկայր լնուլ
զորովայն իւր յեղջերէն, զոր խոզքն ուտէին: և
17 ոչ ոք տայր նմա: * Եւ եկեալ 'ի միտս իւր, ասէ:
քանի՞ վարձկանք են 'ի տան հօր իմոյ հացալիցք.
18 և ես աստ սովամահ կորնչիմ: * Յարուցեալ գնացից
առ հայր իմ. և ասացից ցնա: Հա՛յր՝ մեղայ
19 յերկինս՝ և առաջի քո: * Եւ ոչ ես եմ արժանի
կոչիլ որդի քո: արա՛ զիս իբրև զմի 'ի վարձկա-

20 նաց քոց․ * Եւ յարուցեալ եկն առ հայր իւր։ և
մինչդեռ հեռագոյն էր, ետես զնա հայրն՝ և գթա-
ցաւ․ յարեաւ, և ընթացաւ ընդառաջ․ անկաւ
21 զպարանոցաւ նր՟, և համբուրեաց զնա։ * Եւ ասէ
ցնա որդին։ Հայր, մեղայ յերկինս՝ և առաջի քո․
22 ոչ ևս եմ արժանի կոչել որդի քո։ * Ասէ հայրն
ցծառայս իւր․ փաղփաղակի հանէք զպատմուճանն
առաջին, և ագուցէք նմա․ և տուք զմատանին ՚ի
23 ձեռս նորա․ և կօշիկս յոտս նորա։ * Եւ ածէք
զեզն պարարակ, և զենէք։ կերիցուք, և ուրախ
24 լիցուք։ * Զի այս որդի իմ մեռեալ էր, և եկ-
եաց․ կորուսեալ էր, և գտաւ։ և սկսան ուրախ
25 լինել։ * Եւ էր երէց որդի նր՟ յագարակի։ և
մինչդեռ գայր՝ և մերձ եղև ՚ի տունն, լուաւ զձայն
26 երգոյն և պարուց։ * Եւ կոչեալ առ ինքն զմի ՚ի
ծառայիցն հարցանէր՝ թէ զինչ իցէ այն։
27 * Եւ նա ասէ ցնա։ զի եղբայր քո եկեալ է․ և
եզեն հայր քո զեզն պարարակ․ զի ողջամբ ընկա-
28 լաւ զնա։ * Բարկացաւ՝ և ոչ կամէր մտանել։ և
հայրն ելեալ արտաքս՝ աղաչէր զնա։
29 * Պատասխանի ետ և ասէ ցհայրն։ այս քանի՞ ամք
են՝ զի ծառայեմ քեզ․ և երբէք զպատուիրանաւ
քով ոչ անցի։ ուլ մի երբէք ոչ ետուր ինձ՝
30 զի ուրախ եղէց ընդ բարեկամս իմ։ * Եւ յոր-
ժամ եկն որդիդ քո այդ՝ որ եկեր զկեանս քո
ընդ պոռնիկս, զեներ դմա զեզն պարարակ։
31 * Եւ ասէ ցնա․ որդեակ, դու հանապազ ընդ իս
32 ես։ և ամ՟ որ ինչ իմ է՝ քո է։ * Այլ ուրախ
լինել՝ և խնդալ պարտ էր։ զի եղբայր քո այս՝
մեռեալ էր, և եկեաց․ կորուսեալ էր, և գտաւ։

ԳԼ․ ԺԶ

1 ԶԻ․ Եւ ասէր առ աշակերտսն։ այր մի էր մե-
ծատուն․ որոյ էր տնտես։ և եղև զնմա-
նէ ամբաստանութի՟․ ոպ՟ թէ վատնիցէ զինչս նր՟։
2 * Կոչեաց, և ասէ ցնա․ զի՞նչ է այս, զոր լսեմ ըզ-
քէն․ տուր զհամար տնտեսութե՟ քո․ զի ոչ ևս

3 կարես լինել տնտես: *Ասէ ընդ միտս իւր տնտեսըն.
զի՞նչ գործեցից. զի տէր իմ հանէ զտնտեսութիւն.
4 գործել ոչ կարեմ՝ մուրանալ ամաչեմ: *Գիտեմ,
զինչ արարից. զի յորժամ ՚ի բաց լինիցիմ ՚ի տնտեսութենէս՝
ընկալցին զիս ՚ի տունս իւրեանց:
5 *Եւ կոչեցեալ առ ինքն մի ըստ միոջէ ՚ի պարտապանաց
տեառն իւրոյ. ասէ ցառաջինն, քանի՞ ինչ պարտիս
6 տեառն իմում: *Եւ նա ասէ, հարիւր մար
ձիթոյ. ասէ ցնա՝ կալ զգիր քո՝ և նիստ գրեա՛ վաղվաղակի
7 յիսուն:×*Դարձեալ ասէ ցմիւսն՝ դու քանի՞
ինչ պարտիս. և նա ասէ՝ հարիւր քոռ ցորենոյ.
և ասէ ցնա՝ կալ զգիր քո՝ և նիստ գրեա՛ ութսուն:
8 *Եւ գովեաց Տրն զտնտեսն անիրաւութե̄՝ զի իմաստութ̄բ
արար. զի որդիք աշխարհիս այսորիկ
իմաստնագոյնք են քան զորդիս լուսոյ յազգս իւրեանց:
9 *Եւ ես ձեզ ասեմ. արարէք ձեզ բարեկամս
՚ի մամոնայէ անիրաւութե̄. զի յորժամ պակասիցէ
այն՝ ընկալցին զձեզ ՚ի յարկսն յաւիտենականս:
10 *Որ ՚ի փոքուն հաւատարիմ է, և ՚ի բազմին հաւատարիմ
է. և որ ՚ի փոքուն անիրաւ է, և ՚ի բազմին
11 անիրաւ է: *Իսկ արդ եթէ յանիրաւ մամոնային
ոչ եղէք հաւատարիմք. զճշմարիտն ձեզ ո՞ հաւատասցէ:
12 *Եւ եթէ յօտարին ոչ եղէք հաւատարիմք.
13 զձերն ո՞ տայցէ ձեզ: *Ոչ ոք ծառայ՝ կարէ երկուց
տերանց ծառայել. զի եթէ զմին ատիցէ, և զմիւսըն
սիրիցէ. կամ զմին մեծարիցէ, և զմիւսն արհամարհիցէ.
ոչ կարէք ԱՅ ծառայել և մամոնայի:
14 *Իբրև լուէին զայս ամ՟ փարիսեցիքն՝ քանզի արծաթասէրք
15 էին, և անգոսնէին զնա: *Եւ ասէ
ցնոսա. դուք էք՝ որք արդարացուցանէք զանձինս
առաջի մարդկան. սակայն ԱԾ գիտէ զսիրտս ձեր.
զի որ առաջի մարդկան բարձր է՝ պիղծ է առաջի
16 ԱՅ: *Օրէնք և մարգարէք մինչև ցյօհաննէս.
յայնմհետէ արքայութիւն ԱՅ բանաքարոզի. և ամենայն
17 ոք զնա բռնաբարէ: *Դիւրին իցէ երկնից
և երկրի անցանել՝ քան յօրինացն միոյ նշանախեցի
18 անկանել: *Ամ՟, որ արձակէ զկին իւր, և առնէ
այլ, շնայ. և որ զարձակեալն առնէ, շնայ:

19 * Այր ոմն էր մեծատուն. և ագանէր բեհեզ
և ծիրանիս. և ուրախ լինէր հանապազ առատա-
20 պէս: * Եւ աղքատ ոմն անուն Ղազարոս անկեալ
21 դնիւր առ դրան նորա վիրաւորեալ: * Եւ ցան-
կայր յագել 'ի փշրանացն' որք անկանէին 'ի սեղա-
նոյ մեծատանն. այլ և շունք ևս գային. և լեզուին
22 զվէրս նորա: * Եւ եղև 'ի մեռանել աղքատին, և
տանել հրեշտակաց զնա 'ի գոգն աբրահամու. մե-
23 ռաւ և մեծատունն' և թաղեցաւ: * Եւ 'ի դժոխսն
ամբարձ զաչս իւր մինչ 'ի տանջանսն էր. ետես
զաբրահամ 'ի հեռաստանէ, և զղազարոս 'ի գոգ
24 նորա հանգուցեալ: * Եւ նա աղաղակեաց և ասէ.
Հայր աբրահամ ողորմեաց ինձ. և առաքեա զղա-
զարոս զի թացէ զծագ մատին իւրոյ 'ի ջուր. և
զովացուսցէ զլեզու իմ. զի պապակիմ 'ի տապոյ
25 աստի: * Եւ ասէ ցնա աբրահամ. որդեակ, յիշեա
զի ընկալար անդէն զբարիս քո 'ի կեանսն քում.
և ղազարոս նոյնպէս զչարչարանսն. արդ սա աստ
26 մխիթարի. և դու այդր պապակիս: * Եւ 'ի վերայ
այսր ամենայնի վիհ մեծ է ընդ մեզ և ընդ ձեզ.
եթէ կամիցին աստի առ ձեզ անցանել' ոչ կարեն.
27 և ոչ այտի առ մեզ անցանել: * Եւ ասէ' արդ
աղաչեմ զքեզ հայր. զի արձակեսցես զդա 'ի տուն
28 հօր իմոյ: * Են իմ անդ եղբարք հինգ, որպ զի
տացէ նոցա զվկայութիւն. զի մի և նոքա գայցեն
29 յայս տեղի տանջանաց: * Եւ ասէ աբրահամ. ու-
նին զմովսէս և զմարգարէս. նոցա լուիցեն:
30 * Եւ նա ասէ. ոչ' հայր աբրահամ. բայց եթէ
'ի մեռելոց ոք երթիցէ առ նոսա, ապաշխարեսցեն
31 * Եւ ասէ ցնա' եթէ մովսէսի և մարգարէից ոչ
լսեն. և ոչ թէ 'ի մեռելոց ոք յառնիցէ հաւա-
տասցեն:

ԳԼ. ԺԷ:

1 Ասաց և առ աշակերտսն իւր: ոչ է մարթ
Զ Գ. չգալ գայթագղութեան: բայց վայ այնմիկ է'
2 յոյր ձեռն գայցէ: * Լաւ էր եթէ վէմ երկանա-

քար կախէր զպարանոցէ նր̅՝ և ընկենոյր ՚ի ծով,
քան թէ գայթագղեցուցանէ զմի ՚ի փոքրկանցս
3 յայսցանէ: * Զգոյշ կացէք անձանց: եթէ մեղիցէ
քեզ եղբայր քո սաստեա նմա: և եթէ ապաշխարիցէ՝
թող նմա:
4 * Եւ եթէ եօթնանգամ մեղիցէ քեզ. և եօթնանգամ
դարձցի ՚ի քեզ՝ և ասիցէ, ապաշխարեմ,
5 թողցես նմա: * Եւ ասեն առաքեալքն ցՏր̅:
6 յաւել մեզ հաւատս: * Եւ ասէ Տր̅: եթէ ունիցիք
հաւատս քան զհատն մանանխոյ. և ասիցէք
թթենւոյս այսմիկ. խլեաց, և անկեաց ՚ի ծովու.
7 և հնազանդեսցի ձեզ: * Իսկ ո՞վ ՚ի ձէնջ, որ
ունիցի ծառայ հողագործ կամ հովիւ. որ իբրև
մտանիցէ յագարակէ՝ ասիցէ ցնա վաղվաղակի՝ թէ
8 անց, բազմեաց: * Այլ ո՞չ ասիցէ ցնա՝ թէ պատրաստեա
զինչ ընթրելոյ իցէ. և գօտի ածեալ
պաշտեա զիս՝ մինչև կերիցս, և արբից. և ապա
9 կերիցես՝ և արբցես դու: * Մի՞թէ շնորհ ինչ
ունիցի ծառային այնմիկ. զի արար զամ հրամանսն:
10 * Նոյնպէս և դուք՝ յորժամ առնիցէք զամենայն
հրամայեալսն ձեր՝ ասասջիք եթէ ծառայք անպիտանք
եմք: զոր պարտէաքն առնել, արարաք:
11 * Եւ եղև մինչև երթայր նա յեմ. և ինքն անցանէր
ընդմէջ սամարիայ և գալիլեացւոց:
12 * Եւ մինչդեռ մտանէր ՚ի գեօղ ուրումն, պատահեցան
նմա տասն այր բորոտք: որք կային ՚ի հե-
13 ռաստանէ: * Բարձին զձայնս. և ասեն: Յս̅ վար-
14 դապետ՝ ողորմեա մեզ: * Եւ իբրև ետես զնս̅,
ասէ ցնոսա: երթայք, ցուցէք զանձինս քահանայ-
ից: և եղև իբրև գնային՝ առժամայն սրբեցան:
15 * Մի ոմն ՚ի նոցանէ իբրև ետես եթէ բժշկեցաւ,
դարձաւ անդրէն, ՚ի ձայն մեծ փառաւոր առնէր
16 զԱծ: * Անկաւ առ ոտս նր̅ ՚ի վերայ երեսաց իւ-
րոց՝ և գոհանայր զնմանէ. և ինքն էր սամարացի:
17 պատասխանի ետ Յս̅ և ասէ: * Ո՞չ տասն սոքա
18 սրբեցան. իսկ արդ ինն ո՞ւր են: * Զի ո՞չ
գտան դառնալ և տալ փառս Այ. բայց միայն
այլազգիս այս:

19 * Եւ ասէ ցնա : արի՛, գնա՛ . զի հաւատք քո կեցու-
20 ՁԴ· ցին զքեզ : * Իբրեւ հարցաւ 'ի փարիսեցւոցն
թէ երբ գայցէ արքայութ̃ի Ա̃յ, պատասխանի
ետ նոցա եւ ասէ : ո՛չ գայ արքայութ̃ի Ա̃յ խորա-
21 նօք : * Եւ ոչ ասիցեն, թէ ահաւասիկ աստ է՝ կամ
անդ : զի ահա արքայութ̃ի Ա̃յ 'ի ներքս 'ի ձեզ է:
22 * Ասաց եւ առ աշակերտսն : եկեսցեն աւուրք ցան-
կանալոյ ձեզ զմի յաւուրցն որդւոյ մարդոյ տեսանել՝
23 եւ ո՛չ տեսանիցէք : * Եւ եթէ ասիցեն ձեզ՝ եթէ
ահաւասիկ է՝ կամ անդ . մի՛ երթայցէք զհետ :
24 * Զի ո̃պ փայլակն փայլատակեալ 'ի ներքոյ երկնից
ընդ երկնիւք ծագիցի, նոյնպէս եւ որդի մարդոյ
25 յաւուրն իւրում: * Բայց նախ պարտ է նմա բա-
զում չարչարիլ՝ եւ խոտիլ յազգէս յայսմանէ :
26 * Եւ ո̃պ եղեւ յաւուրսն նոյի . նոյնպէս եղիցի եւ
27 յաւուրս որդւոյ մարդոյ : * Ուտէին՝ ըմպէին՝ կա-
նայս առնէին՝ եւ արանց լինէին : մինչեւ յօրն յո-
րում եմուտ նոյ 'ի տապանն . եւ եկն ջրհեղեղն՝ եւ
28 կորոյս զամենեսեան : * Նոյնպէս՝ եւ որպէս յա-
ւուրսն ղովտայ եղեւ : ուտէին, ըմպէին, գնէին,
29 վաճառէին, տնկէին, շինէին : * Եւ յորում աւուր
ել ղովտ 'ի սոդոմայ, տեղաց հուր եւ ծծումբ յերկ-
30 նից՝ եւ կորոյս զամենեսին : * Ըստ նմին օրինակի
եղիցի եւ յաւուրն, յորում որդի մարդոյ յայտնե-
31 լոց իցէ : * Յայնմ աւուր որ կայցէ 'ի տանիս՝ եւ
կարասի իւր 'ի տան, մի՛ իջցէ առնուլ զայն : եւ որ
32 յանդի իցէ՝ նոյնպէս մի՛ դարձցի յետս : * Յիշեցէք
33 զկինն ղովտայ: * Որ խնդրիցէ զանձն իւր ապրեցու-
ցանել՝ կորուսցէ զնա : եւ որ կորուսցէ՝ ապրեցու-
34 ցէ զնա : * Ասեմ ձեզ : յայնմ գիշերի , թէ եղի-
ցին երկու 'ի մի մահիճս . մին առցի , եւ միւսն
35 թողցի : * Եւ թէ եղիցին երկու աղալ 'ի միասին.
մին առցի, եւ միւսն թողցի : եւ եթէ իցեն երկու
յանդի . մին առցի, եւ միւսն թողցի :
36 * Պատասխանի ետուն եւ ասեն ցնա՝ յո՛ Տէր :
37 * Եւ նա ասէ ցնոսա: ուր մարմին է՝ անդր եւ ար-
ծուիք ժողովեսցին :

ԳԼ. ԺԸ.

1 Ասաց և առակ մի նոցա. առ այն, թէ պարտ է
ՁԵ. յամ̄ ժամ կալ նոցա յաղօթս և մի ձանձ-
2 րանալ: *Ասէ՝ դատաւոր մի էր ՚ի քաղաքի ու-
րումն: յԱ̄յ ոչ երկնչէր, և ՚ի մարդկանէ ոչ ամա
3 չէր: *Եւ այրի մի էր ՚ի նմին քաղաքի. գայր առ
նա և ասէր: դատ արա ինձ յոսոխէ իմմէ:
4 *Եւ ոչ կամէր ՚ի բազում ժամանակս: յետ այ-
նորիկ ասէ ՚ի միտս իւրում. թէ և յԱ̄յ ոչ երկնչիմ.
5 և ՚ի մարդկանէ ոչ ամաչեմ: *Գոնէ վս̄ աշխատ
առնելոյ զիս այրւոյն՝ արարից նմա դատ. զի մի
6 իսպառ եկեալ թախանձիցէ զիս: *Եւ ասէ Տր̄:
լուարուք զինչ դատաւորն անիրաւութե̄ ասէր:
7 *Իսկ Ած̄ ո՞չ առնիցէ զվրէժխնդրութի̄ ծառայից
իւրոց: որք աղաղակեն առ նա ՚ի տուէ և ՚ի գիշե-
րի: և երկայնամիտ միայն լինիցի առ նոսա:
8 *Այո՛ ասեմ ձեզ. զի արասցէ զվրէժխնդրութի̄
նոցա վաղվաղակի: իսկ որդի մարդոյ եկեալ գտա-
9 նիցէ՞ արդեօք հաւատս յերկրի: *Ասաց և առ
ոմանս պանծացեալս յանձինս՝ թէ արդարք իցեն՝
10 և խոտիցեն զբազումս, զառակս զայս: *Արք երկու
ելին ՚ի տաճարն կալ յաղօթս: մինն փարիսեցի,
11 և միւսն մաքսաւոր: *Փարիսեցին կայր մեկուսի.
և զայս առանձինն աղօթս մատուցանէր: Ած̄ իմ
գոհանամ զքէն: զի ոչ եմ իբրև զայլս ՚ի մարդ-
կանէ՝ զյափշտակօղս՝ և զանիրաւս՝ և զշունս. կամ
12 իբրև զայս մաքսաւոր: *Այլ պահեմ երկիցս ՚ի
շաբաթու. և տամ տասանորդս յամ̄ ստացուածոց
13 իմոց: *Եւ մաքսաւորն կայր մեկուսի. և ոչ կա-
մէր, և ոչ զաչսն ընդ երկինս ամբառնալ: այլ
կոծէր զկուրծս իւր. և ասէր: Ած̄՝ քաւեա զիս
14 զմեղաւորս: *Ասեմ ձեզ: էջ սա արդարացեալ
՚ի տուն իւր քան զնա: զի ամենայն որ բարձրացու-
ցանէ զանձն, խոնարհեսցի: և որ խոնարհեցուցանէ
ՁՁ. զանձն՝ բարձրասցի:
15 *Մատուցանէին առ նա և մանկտի՝ զի մերձենայցէ
՚ի նոսա: իբրև տեսին աշակերտքն՝ սաստէին նոցա:

16 * Իսկ Յս՟ կոչեաց զնս՟ առ ինքն՝ ասէ. թոյլ տուք
մանկտւոյդ գալ առ իս. եւ մի արգելուք զդոսա.
17 զի այդպիսեացդ է արքայութիւն Այ: * Ամէն ա-
սեմ ձեզ. որ ոչ ընդունիցի զարքայութիւն Այ
18 իբրեւ զմանուկ՝ ոչ մտցէ ՚ի նա. * Եւ եհարց զնա
ոմն իշխան եւ ասէ: վարդապետ բարի. զի՞նչ գոր-
ծեցից. զի զկեանս յաւիտենականս ժառանգեցից:
19 * Ասէ ցնա Յս՟: զի՞ ասես զիս բարի: չիք ոք բա-
20 րի, բայց մի Ած: * Զպատուիրանս գիտես: մի
շնար: մի սպանաներ: մի գողանար: մի սուտ վկայեր:
21 պատուեա՛ զհայր քո եւ զմայր: * Եւ նա ասէ՝ զայդ
22 ամ՟ պահեցի ՚ի մանկութենէ իմմէ: * Իբրեւ լուաւ
զայս Յս՟, ասէ ցնա: միւս եւս պակաս է քեզ: զամ՟
ինչ զոր ունիս, վաճառեա՛ եւ տուր աղքատաց. եւ
23 ունիցիս գանձս յերկինս. եւ եկ զկնի իմ: * Նա
իբրեւ լուաւ զայս՝ տրտմեցաւ. քանզի էր մեծա-
24 տուն յոյժ: * Իբրեւ ետես զնա Յս՟ տրտմեալ՝ ասէ:
ո՜րպ դժուարին է, որք ինչս ունիցին, մտանիցեն
25 յարքայութիւն Այ: * Դիւրագոյն իցէ մալխոյ ընդ
ծակ ասղան անցանել. քան մեծատան յարքայութիւն
26 Այ մտանել: * Եւ որք լուանն՝ ասէին. եւ ո՞ կարի
27 ցէ ապրել: * Եւ նա ասէ: անհնարինք առ ՚ի մարդ-
28 կանէ՝ հնարաւորք են յԱյ: * Եւ ասէ Պետրոս:
ահաւասիկ մեք թողաք զամ՟ ինչ զմեր, եւ եկաք
29 զկնի քո: * Եւ նա ասէ ցնոսա: ամէն ասեմ ձեզ.
եթէ ոչ ոք է՝ որ եթող զտուն՝ կամ զծնօղս՝ կամ
զեղբարս՝ կամ զկին՝ կամ զորդիս՝ վս՟ արքայութե՟
30 Այ: * Եթէ ոչ առնուցու բազմապատիկ, ՚ի ժա-
մանակի յայսմիկ. եւ յաշխարհին՝ որ գալոց է՝
զկեանսն յաւիտենականս ժառանգեսցէ:
31 * Եւ առեալ զերկոտասանսն առանձինն՝ ասէ ցնո-
սա: ահաւասիկ ելանեմք յԵ՟մ. եւ կատարեսցին
ամ՟ գրեալքն մարգարէիւք վս՟ Որդւոյ մարդոյ:
32 * Զի մատնեսցի հեթանոսաց. եւ կատակեսցի՝ եւ
33 հարկանիցի՝ եւ թքանիցի: * Եւ իբրեւ հարկանիցեն,
եւ սպանանիցեն զնա: եւ յերրորդ աւուր յարիցէ.
34 * Եւ նոքա ոչ ինչ իմացան յայնցանէ: այլ էր բանն
ծածկեալ ՚ի նոցանէ: եւ ոչ գիտէին զասացեալսն

35 Զէ· * Եւ եղև 'ի մօտիլն նորա յերիքով՝ կոյր
36 մի նստէր առ ճանապարհաւ մուրացիկ։ * Իբրև
լուաւ զանցանել ժողովրդեանն, հարցանէր թէ
37 զի՞նչ իցէ այն։ * Եւ պատմեցին նմա, թէ Յս՟
38 նազովրեցի անցանէ։ * Աղաղակեաց և ասէ։ Յս՟
39 որդի դաւթի, ողորմեա՛ ինձ։ * Եւ որք առաջին
երթային, սաստէին նմա զի լռեսցէ։ և նա ևս
առաւել աղաղակէր։ Որդի դաւթի՝ ողորմեա՛ ինձ։
40 * Զտեղի էառ Յս՟։ և հրամայեաց ածել զնա առ
իւր։ և իբրև մերձ եղև առ նա, եհարց զնա
41 և ասէ։ * Զի՞նչ կամիս դու՝ զի արարից քեզ։
և նա ասէ։ Տր՟, զի բացցին աչք իմ, և տեսից։
42 * Եւ Յս՟ ասէ ցնա․ հայեաց, հաւատք քո կեցուցին
43 զքեզ։ * Եւ առժամայն ետես։ երթայր զհետ
նր՟՝ և փառաւոր առնէր զԱծ՟։ և ամ՟ ժողովրդեանն
տեսեալ՝ տային զօրհնութիւն Այ՟ ✓

ԳԼ· ԺԹ։

1 Եւ մտեալ շրջէր ընդ երիքով։ * Եւ ահա այր
2 մի անուն կոչեցեալ զաքէոս․ և նա էր մաքսապետ․
3 և ինքն մեծատուն։ * Եւ խնդրէր տեսանել՝
թէ ով իցէ Յս՟։ և ոչ կարէր 'ի բազմութենէն,
4 զի կարճ էր հասակաւ։ * Եւ ընթացեալ
յառաջ՝ ել 'ի ժանտաթզենին, զի տեսանիցէ զնա․
քանզի ընդ այն լինել անցանելոց էր։
5 * Իբրև եկն 'ի տեղին, հայեցաւ 'ի վեր Յս՟ և ասէ
ցնա։ զաքէ՝ փութա՛, էջ այտի․ զի այսօր 'ի տան
6 քում արժան է ինձ ագանել։ * Փութացաւ, և
7 էջ․ և ընկալաւ զնա ուրախութ՟։ * Իբրև տեսին
ամենեքեան․ տրտնջէին և ասէին, թէ առ առն
8 մեղաւորի եմուտ լուծանել։ * Եկն՝ եկաց զաքէոս՝
և ասէ ցՏր՟, Տր՟, ահա զկէս ընչից իմոց
տաց աղքատաց․ և եթէ զոք զրկեցի, հատուցից
9 չորեքկին։ * Եւ ասէ ցնա Յս՟, այսօր եղև փրկութիւն
տանս այսմիկ։ քանզի և սա որդի աբրահամու
10 է։ * Զի եկն որդի մարդոյ խնդրել և կեցուցանել
11 զկորուսեալն։ * Եւ մինչդեռ նոքա զայն լսէին,

յաւել առակ մի և ասէ: վասն մերձենալոյն նորա
յեէմ, և համարելոյ նոցա եթէ առժամայն յայտ-
12 նելոց է արքայութի Այ: *Ասէ, Այր ոմն ազ-
նուական գնաց յաշխարհ հեռի առնուլ իւր թա-
13 գաւորութի և դառնալ: *Եւ կոչեալ զծառայս
իւր, ետ նոցա տասն մնաս: և ասէ ցնոսա՝ յար-
14 գեցէք զայդ՝ մինչև եկից: *Եւ քաղաքացիքն
նորա ատէին զնա, առաքեցին հրեշտակս զկնի նր
և ասեն. թէ ոչ կամիմք թագաւորել դմա ՚ի
15 վերայ մեր: *Եւ եղև դառնալ նմա առեալ զթա-
գաւորութիւն: և կոչեալ զծառայսն, որոց տուեալ
էր զարծաթն: զի գիտասցէ թէ ո՞ զինչ շահե-
16 ցաւ: *Եկն առաջինն և ասէ: Տ՟ր, մնասն քո
17 տասն մնաս արար: *Եւ ասէ ցնա: ազնիւ ծառայ
և բարի: զի ՚ի փոքուդ հաւատարիմ եղեր. լիջիր
իշխանութիւն ունիլ ՚ի վերայ տասն քաղաքի:
18 *Եկն երկրորդն և ասէ: Մնասն քո արար հինգ
19 մնաս: *Ասէ և ցնա: և դու լիջիր ՚ի վերայ հինգ
20 քաղաքաց: *Եկն միւսն և ասէ: Տ՟ր, ահա մնասն
քո՝ զոր ունէի ծրարեալ ՚ի վարշամակի. երկնչէի
21 ՚ի քէն: *Զի այր ստամբակ ես: բառնաս, զոր ոչ
եդեր: և հնձես, զոր ոչ սերմանեցեր:
22 *Եւ ասէ ցնա: ՚ի բերանոյ քումմէ դատեցից զքեզ
ծառայ անհաւատ: գիտէիր թէ ես այր մի ստամ-
բակ եմ: բառնամ, զոր ոչ եդի. և հնձեմ, ուր
23 ոչ սերմանեցի: *Եւ ընդէ՞ր ոչ ետուր զարծաթդ
իմ ՚ի սեղանաւորս. և եկեալ ես տոկոսեօք պա-
24 հանջէի: *Եւ ասէ ցապատաւորսն: առէք ՚ի դմա-
նէ զմնասն. և տարայք, տուք այնմ, որ ունի
25 զտասն մնասն: *Եւ ասեն ցնա. Տ՟ր, ունի տասն
26 մնաս: *Ասեմ ձեզ: եթէ ամի, որ ունիցի, տացի:
և յայնմանէ որ ոչն ունիցի, և զոր ունիցի՝ բարձ-
27 ցի ՚ի նմանէ: *Բայց զթշնամիսն իմ զայնոսիկ. որք
ոչն կամէին զիս թագաւորել ՚ի վերայ նոցա, ածէք
28 այսր, և սպանէք առաջի իմ: *Եւ իբրև զայս
ասաց՝ գնաց յառաջ ելանել յեէմ:
29 ԻԿ. *Եւ եղև իբրև մերձեցաւ ՚ի բեթփագէ և
՚ի բեթանիայ մօտ ՚ի լեառնն, որ կոչի ձիթենեաց:

30 առաքեաց երկուս յաշակերտաց իւրոց : * Եւ ասէ:
երթայք 'ի գեօղդ՝ որ հանդէպ ձեր կայ : յոր իբրեւ
մտանէք , գտանիցէք յաւանակ կապեալ . յորում
ոք 'ի մարդկանէ երբէք ոչ նստաւ : լուծէք զնա ,
31 և ածէք : * Եւ եթէ ոք հարցանիցէ զձեզ՝ թէ
ընդէ՞ր լուծանէք : այսպէս ասասջիք ցնա . թէ Տ՟ն
32 խնդրում պիտոյ է : * Իբրեւ չոգան, որք առաքեցանն,
գտին որպէս ասացն ցնոսա : կայր յաւանակն :
33 * Եւ մինչդեռ լուծանէին զյաւանակն , ասեն
տեարքն նորա ցնոսա : զի՞ լուծանէք զյաւանակդ :
34 * Եւ նոքա ասեն, Տ՟ն խնդրում պիտոյ է :
35 * Եւ ածին զնա առ Յ՟ս : և արկին զնովաւ հան-
36 դերձս , և հեծուցին զՅ՟ս : * Եւ մինչդեռ երթայր,
զհանդերձս իւրեանց տարածանէին զճանապար-
37 հաւն : * Եւ իբրեւ այն ինչ մերձ եղեւ 'ի զառ 'ի վայր
լերինն ձիթենեաց՝ սկսաւ ամ՟ բազմութի՟ աշակեր-
տացն ուրախութ՟բ օրհնել զԱ՟Ծ 'ի ձայն մեծ վ՟ա
38 ամ՟ եղելոց զօրութե՟ցն , զորս տեսին : * Եւ ասէ-
ին, օրհնեալ որ գայ թագաւորդ յանուն Տ՟ն : խա-
ղաղութի՟ յերկինս . և փառք 'ի բարձունս :
39 * Եւ ոմանք 'ի փարիսեցւոյն յամբոխէ անտի , ասեն
ցնա : վարդապետ , սաստեա աշակերտացդ քոց :
40 * Պատասխանի ետ, և ասէ : ասեմ ձեզ : զի եթէ
41 դոքա լռեսցեն, քարինքդ աղաղակեսցեն : * Եւ իբրեւ
մերձեցաւ՝ տեսեալ զքաղաքն՝ ելաց 'ի վերայ նորա,
42 և ասէ : * Եթէ գիտէիր դու գոնէ յաւուրս յայս
միկ զխաղաղութի՟ քո : բայց այժմ ծածկեցաւ
43 յերեսաց քոց : * Զի եկեսցեն աւուրք 'ի վերայ
քո . և պատեսցեն զքեւ թշնամիք քո պատնէշ . և
պաշարեսցեն զքեզ . և նեղեսցեն զքեզ յամ՟ կող-
44 մանց : * Եւ յատակեսցեն զքեզ : և զորդիս քո
'ի քեզ : և ոչ թողուցուն զքար 'ի քարի վերայ՝
յամ՟ի 'ի քեզ՝ փոխանակ զի ոչ ծանեար զժամա-
45 նակ այցելութե՟ քոյ : * Եւ մտեալ 'ի տաճարն՝
սկսաւ հանել զաղաւնէվաճառսն , և զգնօղս : և
46 զսեղանս հատավաճառացն ցրուեաց : * Եւ ասէ
ցնոսա : գրեալ է, և եղիցի տուն իմ տուն աղօթից,
47 և դուք արարէք զդա այրս աւազակաց : * Եւ ու-

ուսուցանէր զնոսա հանապազ 'ի տաճարին: Իսկ քահանայապետքն և դպիրք՝ և գլխաւորք ժողովրդեանն
48 խնդրէին զնա կորուսանել: * Եւ ոչ գտանէին
թէ զինչ արասցեն: զի ժողովուրդն ա̃մ կախեալ
կային զնմանէ 'ի լսել:

Գլ: Ի:

1 Եւ եղև 'ի միում աւուրց յայնցանէ մինչդեռ
Իբ. ուսուցանէր զժողովուրդն 'ի տաճարի անդ՝ և
աւետարանէր. հասին 'ի վերայ քահանայապետքն
2 և դպիրք ծերովքն հանդերձ: * Եւ ասեն ցնա՝
ասա մեզ՝ որո՞վ իշխանութ̄ գործես դու զայդ.
3 կամ ո՞վ է՝ որ ետ քեզ զայդ իշխանութի: * Պատասխանի ետ և ասէ ցնոսա. Հարցից և ես զձեզ
4 բան մի, և ասացէք ինձ: * Մկրտութի̄ն յոհաննու
յերկնի՞ց էր եթէ 'ի մարդկանէ:
5 * Եւ նոքա խորհեցան 'ի միտս իւրեանց և ասեն:
6 * Եթէ ասեմք յերկնից, ասէ. իսկ ընդէր ոչ հաւատացիք նմա. և եթէ ասեմք 'ի մարդկանէ, ամենայն ժողովուրդն քարկոծ առնեն զմեզ. զի հաստատեալ է 'ի միտս զյոհաննէ, թէ մարգարէ է:
7 * Եւ պատասխանի ետուն չգիտել թէ ուստի իցէ:
8 * Եւ Յս̄ ասէ ցնոսա. և ոչ ես ասեմ ձեզ՝ որով
9 ԻԳ. իշխանութ̄ առնեմ զայս: * Սկսաւ ասել առ
ժողովուրդն՝ զառակս զայս. այր մի տնկեաց զայգի.
և ետ զնա մշակաց. և ինքն գնաց 'ի ճանապարհ
10 ժամանակս բազումս: * Եւ 'ի ժամու՝ առաքեաց առ
մշակսն ծառայ. զի 'ի պտղոյ այգւոյն տացեն նմա.
և մշակքն գան հարին զնա. և արձակեցին ունայն:
11 * Եւ յաւել միւսեւս ծառայ յղել. նոքա և զնա
ևս գան հարին. անարգեցին, և առաքեցին ունայն:
12 * Եւ յաւել զերրորդն առաքել. նոքա և զնա վի-
13 րաւորեցին. և հանին արտաքս: * Ասէ տէր այգւոյն՝ զի՞նչ արարից. առաքեցից զորդի իմ սիրելի.
14 թերևս 'ի սմանէ պատկառեսցին: * Իբրև տեսին
զնա մշակքն, խորհեցան ընդ միմեանս և ասեն,
սա է ժառանգն. սպանցուք զսա. զի մեր լիցի

15 ժառանգութիւն։ * Եւ հանին զնա արտաքս քան
զայգին, եւ սպանին. արդ զի՞նչ արասցէ ընդ նոսա
16 տէր այգւոյն։ * Ո՞չ ապաքէն գայցէ եւ կորուսա-
նիցէ զմշակսն զայնոսիկ. եւ տայցէ զայգին այլոց։
17 Իբրեւ լուան, ասեն. քաւ՛ մի լիցի։ * Եւ նա հայե-
ցեալ ընդ նոսա ասէ. իսկ զի՞նչ իցէ այն, որ գրե-
ալն է. թէ զվէմն, զոր անարգեցին շինողք, նա
18 եղեւ գլուխ անկեան։ * Ամենայն որ ընդհարցի
ընդ վէմս ընդ այս, խորտակեսցի. եւ յորոյ վերայ
19 անկցի՝ հոսեսցէ զնա։ * Եւ խնդրէին դպիրքն եւ
քահանայապետք արկանել ՚ի նա ձեռս ՚ի նմին ժա-
մու, եւ երկեան ՚ի ժողովրդենէն. զի գիտէին թէ
առ նոսա ասաց զառակն զայն։
20 Է՛ի. * Եւ ապա սպասեցին, եւ առաքեցին դաւա-
ճանս կեղծաւորեալս զանձինս առ արդարս ունել.
զի ըմբռնեսցեն զնա բանիւք. առ ՚ի մատնել զնա
21 պետութեան եւ իշխանութեան դատաւորին։ * Հարցին
ցնա եւ ասեն. վարդապետ՝ գիտեմք, զի ուղիղ խօ-
սիս, եւ ուսուցանես, եւ ոչ առնուս ակն. այլ
ճշմարտութեամբ զճանապարհն Այ ուսուցանես։
22 * Արժա՞ն է մեզ կայսեր հարկս տալ՝ թէ ոչ։
23 * Եւ նայեցեալ ընդ խորամանկութիւն նոցա, ասէ
24 ցնոսա զի՞ փորձէք զիս։ Ցուցէք ինձ զդահեկանն։ Եւ նո-
քա ցուցին։ Եւ ասէ՝ զո՞յր պատկեր եւ գիր ունի. պա-
25 տասխանի ետուն եւ ասեն, զկայսեր։ * Եւ նա ասէ
ցնոսա, երթայք, տուք զկայսերն, կայսեր. եւ զԱյն,
26 Այ. * Եւ ոչ կարացին զնա ըմբռնել բանիւք առաջի
ժողովրդեանն. եւ զարմացեալ ընդ պատասխանին
27 նորա՝ լռեցին։ * Մատուցեալ ոմանք ՚ի սադուկե-
ցւոց, որք հակառակէին չլինել յարութեան։
28 * Հարցին ցնա եւ ասեն. վարդապետ, Մովսէս գրե-
աց մեզ. եթէ ուրուք եղբայր մեռանիցի, որոյ
իցէ կին, եւ նա անորդի իցէ. զի առնուցու եղբայր
նորա զկինն, եւ յարուսցէ զաւակ եղբօր իւրում։
29 * Արդ՝ եօթն եղբարք էին. եւ առաջինն առեալ
30 կին՝ մեռաւ անորդի։ * Էառ զնոյն եւ երկրորդն.
31 մեռաւ եւ նա անորդի։ * Էառ զնա եւ երրորդն.
նոյնպէս եւ եօթանեքին։ եւ ոչ թողին որդիս։

32 * Մեռաւ և կինն :
33 * Արդ՝ 'ի յարութեան ո՞ւմ 'ի նոցանէ լինիցի կին.
34 զի եօթանեքին կալան զնա կին : * Պատասխանի
ետ նոցա Յս̃ և ասէ. որդիք աշխարհիս այսորիկ
35 կանայս առնեն, և արանց լինին : * Իսկ որք ար-
ժանի լինիցին այնմ աշխարհի հասանել և յարու-
թե̃ն որ 'ի մեռելոց, ո՛չ կանայս առնեն. և ո՛չ
36 արանց լինին : * Քանզի և ո՛չ մեռանիլ ևս կա-
րեն. զի հաւասար հրեշտակաց են՝ և որդիք Այ.
քանզի յարութե̃ն որդիք են. այլ զի յառնեն մե-
37 ռելք : * Եւ մովսէս գուշակեաց 'ի մորենւոջն,
ոպ̃ ասէ զՏէ Այ աբրահամու. և զԱյ իսահա-
38 կայ. և զԱյ յակոբայ : * Եւ Ած̃ չէ մեռելոց՝ այլ
կենդանեաց. զի ամենեքին նմա կենդանիք են :
39 * Պատասխանի ետուն ոմանք 'ի դպրացն և ասեն.
40 վարդապետ, բարւոք ասացեր : * Եւ ո՛չևս ոք իշ-
խէր հարցանել զնա՝ և ոչինչ :
41 Ասէ և առ նս̃. զիա՞րդ ասեն զՔս̃՝ թէ որդի է
42 դաւթի : * Զի ինքն դաւիթ ասէ 'ի գիրս սաղմո-
սաց՝ ասաց Տր̃ ցՏր̃ իմ. նիստ ընդ աջմէ իմմէ :
43 * Մինչև եդից զթշնամիս քո պատուանդան ոտից
44 քոց : * Իսկ արդ՝ եթէ դաւիթ զնա Տր̃ կոչէ՝ զի-
45 ա՞րդ որդի նորա իցէ : * Եւ լուիլու ամենայն ժո-
46 ղովրդեանն ասէ ցաշակերտսն : * Զգո՛յշ լերուք
'ի դպրացն. որք կամին պատմուճանօք շրջիլ. և
սիրեն ողջոյնս 'ի հրապարակս, և զնախաթոռս 'ի
47 ժողովուրդս, և զբարձերէցս յընթրիս : * Որք
ուտեն զտունս այրեաց. և պատճառանօք յերկա-
րեն զաղօթս. նոքա ընկալցին աւելի դատաստանս:

ԳԼ. ԻԱ :

1 Եւ հայեցեալ ետես զմեծատունսն՝ որք արկանէին
2 զտուրս իւրեանց 'ի գանձանակն : * Ետես և կին
ոմն այրի աղքատ, որ էարկ անդր երկուս լումայս.
3 * Եւ ասէ՝ արդարև ասեմ ձեզ. զի այրին այն աղ-
4 քատ՝ աւելի էարկ քան զամենեսին : * Ամենեքին
նոքա 'ի մթերից իւրեանց արկին յընծայսն Այ.

բայց նա 'ի կարօտութենէ իւրմէ զա՟մ զկեանս իւր
5 Ի.Զ. զոր ունէր, էարկ: * Եւ յասել ոմանց զտաճարէն,
թէ գեղեցիկ վիմօք և աշտարակօք զարդարեալ
6 է՝ ասէ: * Այդ ամենայն, զոր տեսանէք՝ եկեսցեն
աւուրք՝ յորս ոչ թողցի այդր քար 'ի քարի
7 վերայ, որ ոչ քակտեսցի: * Հարցին զնա և ասեն.
վարդապետ՝ երբ լինիցի այդ. և զինչ նշան իցէ՝ յորժամ
8 այդ լինելոց իցէ: * Եւ նա ասէ. զգոյշ կացջիք.
մի խաբիցիք. զի բազումք գայցեն յանուն
իմ, և ասասցեն թէ ես եմ. և մերձեցաւ ժամանակ,
9 մի երթայցէք զկնի նոցա: * Եւ յորժամ
լսիցէք պատերազմունս և խռովութիւնս՝ մի զարհուրիցիք.
զի պարտ է նախ այնմ լինել. այլ ոչ առժամայն
10 կատարած: * Յայնժամ ասէ ցնս՟. յարիցէ
ազգ յազգի վերայ. և թագաւորութիւն 'ի թագաւորութեան
11 վերայ: * Եւ շարժմունք մեծամեծք.
և 'ի տեղիս տեղիս սովք, և սրածութիւնք. երկիւղ
12 արհաւիրք, և նշանք մեծամեծք յերկնից: * Բայց
յառաջ քան զայս ամ՟ մխեսցեն զձեռս իւրեանց
'ի ձեզ՝ և հալածեսցեն. և մատնեսցեն 'ի ժողովուրդս
և 'ի բանտս. և տանիցին առաջի դատաւորաց
13 և թագաւորաց վասն անուան իմոյ: * Եւ
14 լինիցի ձեզ այն 'ի վկայութիւն: * Արդ՝ դիք 'ի
սիրտս ձեր՝ մի յառաջագոյն կրթել տալոյ պատասխանի:
15 * Զի ես տաց ձեզ բերան. և իմաստութիւն.
որում ոչ կարիցեն կալ հակառակ՝ կամ
տալ պատասխանի ամ՟ հակառակորդք ձեր:
16 * Մատնեսջիք և 'ի ծնողաց՝ և յեղբարց՝ և յազգականաց՝
և 'ի բարեկամաց. և սպանանիցեն
17 'ի ձէնջ: * Եւ եղիջիք ատելեալք յամենեցունց
18 վ՟ան անուան իմոյ: * Եւ մազ մի 'ի գլխոյ ձերմէ
19 ոչ կորիցէ: * Եւ համբերութ՟բ ձերով ստասջիք
20 զոգիս ձեր: * Այլ յորժամ տեսանիցէք շուրջ
պատեալ զօրօք զե՟մ, յայնժամ գիտասջիք թէ
21 մերձ է աւեր նորա: * Յայնժամ որք 'ի Հրէաստանի
իցեն, փախիցեն 'ի լերինս. և որք ի միջի
նորա իցեն, խուսեսցեն. և որք 'ի գաւառս իցեն,
22 մի մտցեն 'ի նա: * Զի աւուրք վրէժխնդրութե՟

են այնոքիկ՝ առ 'ի կատարելոյ ամենայն գրելոց ։
23 *Բայց վայ իցէ յղեաց և սնուցանողաց յաւուրսն
յայնոսիկ․ զի եղիցի տագնապ մեծ 'ի վերայ երկրի․
24 և բարկութ͞ի ժողովրդեանն այնմիկ ։ *Եւ անկցին
'ի սուր սուսերի․ և գերեսցին յամենայն հեթա-
նոսս․ և եէմ՝ եղիցի կոխան ազգաց՝ մինչև կատա-
25 րեսցին ժամանակք հեթանոսաց ։ *Եւ եղիցին
նշանք յարեգական, և 'ի լուսնին, և յաստեղս․ և
յերկրի տագնապ հեթանոսաց՝ յահեղ բարբառոյ
26 իբրև ծովու՝ և խռովութ͞ե ։ *Ցելանելոյ ոգւոյ
մարդկան յերկիւղէ, և 'ի կարծեաց եկելոց 'ի վե-
րայ տիեզերաց․ զի զօրութ͞իք երկնից շարժեսցին։
27 *Եւ յայնժամ տեսցեն զորդի մարդոյ եկեալ ամ-
պովք՝ զօրութ͞բ և փառօք բազմօք ։
28 *Եւ յորժամ սկսանիցի այս լինել՝ ամբարձջիք և
բարձրացուսջիք զգլուխս ձեր․ զի մերձ է փրկու-
29 թի ձեր ։ *Եւ ասաց առակ մի նոցա․ տեսէք
30 զթզենին և զամենայն ծառ ։ *Յորժամ ցուցա-
նիցեն զպտուղ իւրեանց, տեսանէք, և 'ի նոցանէ
31 ճանաչէք թէ մերձ է ամառն։ *Նոյնպէս և դուք՝
յորժամ տեսանիցէք զայս ամենայն եղեալ՝ գիտաս-
32 ջիք, թէ մերձ է արքայութ͞ին Ա͞յ ։ *Ամէն ասեմ
ձեզ․ թէ ոչ անցցէ ազգս այս, մինչև այս ամե-
33 նայն լինիցի ։ *Երկինք և երկիր անցցեն, և բանք
34 իմ ոչ անցանիցեն ։ *Զգոյշ լերուք անձանց․
գուցէ ծանրանայցեն սիրտք ձեր շուայտութ͞բ և
արբեցութ͞բ՝ և հոգօք աշխարհականօք․ և յանկար
ծակի հասանիցի 'ի վերայ ձեր օրն այն ։
35 *Զի իբրև որոգայթ հասանիցի 'ի վերայ ամե-
նեցուն, որք բնակեալ են ընդ ա͞մ երեսս երկրի ։
36 *Արթուն կացէք այսուհետև․ յամենայնժամ
աղօթս արարէք․ զի արժանի լինիջիք զերծանիլ
յայնմ յամենայնէ, որ լինելոց է․ և կալ առաջի
37 որդւոյ մարդոյ․ *Եւ 'ի տուէ 'ի տաճարին ուսու-
ցանէր․ և զգիշերս ելեալ ագանիւր 'ի լերինն՝ որ
38 կոչիւր ձիթենեաց ։ *Եւ ամենայն ժողովուրդն
կանխէր ընդ առաւօտս առ նա 'ի տաճարն լսել
'ի նմանէ ։

Գլ. ԻԲ։

1 Մերձեցաւ տօն բաղարջակերացն՝ որ կոչիւր
պասքա ։ * Եւ խնդրէին քահանայապետքն և
դպիրքն՝ թէ որպէս սպանանիցեն զնա. բայց երկն-
3 չէին 'ի ժողովրդենէ անտի ։ * Ապա եմուտ սատա-
նայ 'ի յուդայ 'ի կոչեցեալն իսկարիօտացի, որ էր
'ի թուոյ երկոտասանիցն.

4 * Չոգաւ՝ եդ բանս ընդ քահանայապետս՝ և ընդ
դսպիրս՝ և ընդ իշխանս ժողովրդեանն. զի մատնես-
5 ցէ զնա նց̄ ։ * Եւ խնդացին, և խոստացան տալ
6 նմա զարծաթ ։ * Եւ յանձն էառ. և խնդրէր պա-
րապ՝ մատնել զնա նոցա մեկուսի յամբոխէ անտի։
7 * Եկն օր բաղարջակերացն, յորում օրէն էր զե-
8 նուլ զպասեքն ։ * Եւ առաքեաց զպետրոս, և զյօ-
հաննէս՝ և ասէ. երթայք, պատրաստեցէք մեզ
9 զպասեքն՝ զի կերիցուք ։ * Եւ նոքա ասեն, ո՞ւր կա-
10 միս՝ զի պատրաստեսցուք ։ * Եւ ասէ ցն̄. ահա
իբրև մտանիցէք 'ի քաղաքն, պատահեսցի ձեզ այր
մի բարձեալ սափոր ջրոյ. երթիջիք զհետ նորա 'ի
11 տունն, յոր մտանիցէ ։ * Եւ ասասջիք ցտանուտէր
տանն, վարդապետն ասէ քեզ. ո՞ւր են վանքն իմ,
յորում զպասեքն ուտիցեմ աշակերտօքս հանդերձ։
12 * Եւ նա ցուցցէ ձեզ վերնատուն մի մեծ զարդա-
13 րեալ. և անդ պատրաստեսջիք ։ * Եւ գնացեալ
գտին, որպէս և ասաց նց̄. և պատրաստեցին զպա-
14 սեքն ։ * Եւ իբրև ժամ եղև, բազմեցաւ, և եր-
15 կոտասան առաքեալքն ընդ նմա ։ * Եւ ասէ ցնոսա.
ցանկանալով ցանկացայ զայս պասեք ուտել ընդ
16 ձեզ՝ մինչչև չարչարեալ իցեմ։ * Բայց ասեմ ձեզ.
թէ ոչևս կերից 'ի սմանէ՝ մինչև լցցի յարքայու-
17 թե̄ Այ̄։ * Եւ ընկալեալ բաժակ՝ գոհացաւ, և
18 ասէ. առէք զայդ՝ և բաժանեցէք 'ի ձեզ ։ * Ասեմ
ձեզ՝ թէ յայսմ հետէ ոչ արբից 'ի բերոյ որթոյ՝
19 մինչև եկեսցէ արքայութ̄ի Այ̄։ * Եւ առեալ
հաց գոհացաւ. եբեկ՝ և ետ նոցա՝ և ասէ. Այս
է մարմին իմ, որ վասն բազմաց տուեալ. զայս
20 արասջիք առ իմոյ յիշատակի ։ * Նոյնպ̄ և զբաժա-

յետ ընթրեայն էառ՝ և ասէ· Այս բաժակ է նոր
ուխտ իմով արեամբ վասն բազմաց հեղլոյ։
21 * Բայց ահաւասիկ ձեռն մատնչի իմոյ ընդ իս ՚ի սե-
22 ղանս։ * Եւ որդի մարդոյ, ըստ սահմանելոյն եր-
թայ· բայց վա՜յ մարդոյն այնմիկ, յոյր ձեռն մատնիցի։
23 * Եւ նոքա սկսան խնդրել ընդ միմեանս, թէ ո՞վ է ՚ի
24 նոցանէ՝ որ զայն գործելոց իցէ։ * Եւ եղև հակառա-
կութիւն ՚ի մէջ նոցա, թէ ով ՚ի նոցանէ համարե-
25 ցի մեծ։ * Եւ նա ասէ ցնոսա· Թագաւորք ազգաց՝
տիրեն նոցա· և որք իշխենն նոցա՝ բարերարք կոչին։
26 Այլ դուք ոչ այնպէս· այլ որ մեծն է ՚ի ձեզ՝ եղի-
ցի իբրև կրտսերն· և առաջնորդն իբրև զսպասա-
27 ւորն։ * Ո՞վ է մեծ· բազմեալն եթէ սպասաւորն·
ո՞չ ապաքէն բազմեալն· բայց ես եմ ՚ի միջի ձե-
28 րում իբրև սպասաւոր։ * Եւ դուք էք՝ որք ցանդ
29 կայիք ընդ իս ՚ի փորձութեան իմ։ * Եւ ես ուխ-
տեմ ձեզ՝ որպէս և Հայր իմ ուխտեաց ինձ զար-
30 քայութիւն։ * Զի ուտիջէք, և ըմպիջէք ՚ի սեղանն
իմ յարքայութեան իմում· և նստիցիք յերկոտասան
31 աթոռ՝ դատել զերկոտասան ազգն Իէլի։ * Եւ ասէ
Տ՟ր սիմոն, սիմոն· ահա սատանայ խնդրեաց զձեզ
32 խարբալել իբրև զցորեան։ * Այլ ես աղաչեցի
վասն քո՝ զի մի պակասեսցին հաւատք քո· և դու
երբեմն դարձցիս, և հաստատեսցես զեղբարս քո։
33 * Եւ նա ասէ ցնա· Տ՟ր, ընդ քեզ պատրաստ եմ
34 և ՚ի բանտ և ՚ի մահ երթալ։ * Եւ նա ասէ ցնա·
ասեմ քեզ պետրէ· չիցէ այսօր հաւու խօսեալ՝
35 մինչ երիցս ուրասցիս զիս չգիտել։ * Եւ ասէ
ցնոսա· յորժամ առաքեցի զձեզ առանց քսակի
և մախաղի և կօշկաց՝ միթէ կարօտացա՞յք իմիք։
36 * Եւ նոքա ասեն, և ոչ իմիք· ապա ասէ· այլ
այժմ որ ունի զքսակ՝ բարձցէ, նոյնպէս և մախաղ·
և որ ոչն ունի՝ վաճառեսցէ զձորձս իւր՝ և գնես-
37 ցէ իւր սուսեր։ * Բայց ասեմ ձեզ· զի այս ևս
որ գրեալ է՝ պարտ է զի կատարեսցի յիս, թէ
ընդ անօրէնս համարեցաւ· զի որ վ՟ս իմ ինչ է՝
38 վճարեալ է։ * Եւ նոքա ասեն· Տ՟ր ահաւասիկ են
աստ երկու սուրք։ Եւ նա ասէ ցնոսա բաւական են։

39 * Եւ ելեալ գնաց ըստ սովորութե̃ն ՚ի լեառն
ձիթենեաց. գնային զհետ նր̃ եւ աշակերտքն։
40 * Իբրեւ եհաս ՚ի տեղին, ասէ ցնոսա. յաղօթս
41 կացէք չմտանել ՚ի փորձութիւն։ * Եւ ինքն մեկնեցաւ ՚ի նոցանէ իբրեւ քարընկէց մի. եդ ծունր,
42 կայր յաղօթս։ * Եւ ասէր՝ Հայր եթէ կամիս՝
անցո́ զբաժակս զայս յինէն. բայց ոչ իմ
43 կամք՝ այլ քոյդ լիցի։ * Եւ երեւեցաւ նմա հրեշտակ յերկնից, եւ զօրացուցանէր զնա։ եւ էր ՚ի
տագնապի. եւ մտադիւրութբ̃ եւս կայր յաղօթս։
44 * Եւ հոսէին ՚ի նմանէ քրտունք իբրեւ զկայլակս
արեան, ոլոռն, ոլոռն, հեղեալ յերկիր։
45 * Եւ յարուցեալ յաղօթիցն՝ եկն առ աշակերտսն՝
46 եւ եգիտ զնոսա ՚ի քուն, ի տրտմութէն։ * Եւ ասէ
ցնոսա. զի՞ ննջէք. արիք, կացէք յաղօթս՝ զի մի
47 մտանիցէք ՚ի փորձութիւն։ * Եւ մինչդեռ խօսէր,
ահաւասիկ ամբոխ. եւ որ կոչէրն Յուդա՝ մի յերկոտասանիցն, առաջնորդէր նոցա. իբրեւ մերձեցաւ
առ Յս̃՝ համբուրել զնա. քանզի զայն նշան տըւեալ էր նց̃. թէ ընդ որում ես համբուրեցից,
48 նա է՝ զնա ունիցիք։ * Ասէ ցնա Յս̃. Յուդա, համ
49 բուրելո՞վ մատնես զՈրդի մարդոյ։ * Իբրեւ տեսին, որք զնովաւն էին՝ որ ինչ եղեւ, ասեն ցնա.
50 Տ՛ր, հարցուք զնոսա սրով։ * Եւ էհար միոմն ՚ի
նոցանէ զքահանայապետին ծառայ. եւ ՚ի բաց եհան
51 զաջոյ ունկն նորա։ * Պատասխանի ետ Յս̃՝ եւ ասէ.
թո՛յլ տուք մինչեւ ցայդ վայր։ եւ մատուցեալ յունկն՝
52 բժշկեաց զնա։ * Եւ ասէ ցեկեալսն ՚ի վերայ նր̃
զքահանայապետսն՝ եւ զիշխանսն տաճարին՝ եւ
զծերս. իբրեւ ՚ի վերայ աւազակի ելիք սուսերօք
53 եւ բրօք։ * Հանապազ ընդ ձեզ էի ՚ի տաճարին,
եւ ոչ ձգեցիք ձեռս յիս. այլ այս է ձեր ժամ,
54 եւ իշխանութ̃ի խաւարի։ * Եւ կալեալ զնա՝ ածին,
եւ մուծին ՚ի տուն քահանայապետին. եւ պետրոս
55 երթայր զհետ նորա հեռաստոյն։ * Իբրեւ լուցին
զկրակ ՚ի մէջ գաւթին, եւ նստան շուրջ, նստաւ
56 եւ պետրոս ՚ի մէջ նոցա։ Ետես զնա աղախին մի
զի նստէր առ լոյսն. հայեցաւ ընդ նա եւ ասէ. եւ

57 սա ընդ նմա էր՝ որք ընդ նմա էին ։ * Իսկ պետրոս
ուրացաւ եւ ասէ․ ո՛չ գիտեմ զնա կին դու ։
58 * Եւ յետ սակաւ միոյ այլ ոմն ետես զնա եւ ասէ․
եւ դու ՚ի նոցանէ [illegible] ։ Եւ պետրոս ասէ՝ այր դու
59 չեմ ՚ի նոցանէ ։ * Եւ իբրեւ ժամ մի էանց ՚ի մէջ,
այլ ոմն պնդէր եւ ասէր․ ստոյգ եւ սա ընդ նմա
60 էր․ քանզի գալիլեացի է ։ * Ասէ պետրոս․ այր
դու, չգիտեմ զինչ խօսիս ։ Եւ առժամայն մինչ
61 դեռ զայն ասէր՝ խօսեցաւ հաւ․ * Դարձաւ Տր̄,
եւ հայեցաւ ՚ի պետրոս․ եւ յիշեաց պետրոս զբանն
Տն̄, զոր ասաց ցնա՝ մինչեւ հաւու խօսեալ լինէ,
62 երիցս ուրասցիս չգիտել զիս ։ * Եւ ելեալ արտաքս՝
63 ելաց դառնապէս ։ * Եւ արքն, որք պահէին
զնա, այպն առնէին զնովաւ․ եւ հարկանէին ։
64 * Ծածկէին զերեսս նորա եւ ապտակէին․ եւ հարցանէին
զնա եւ ասէին․ մարգարեացի՛ր՝ ո՛վ է՝ որ
65 եհարն զքեզ ։ * Եւ այլ բազում ինչ հայհոյութի̄
66 խօսէին ՚ի նա ։ * Եւ իբրեւ այգ եղեւ, ժողովեցաւ
ծերակոյտ ժողովրդեանն, քահանայապետքն, եւ
դպիրք․ եւ հանին, ածին զնա յատեանն իւրեանց․
եւ ասեն, թէ դու ես Քս̄ն, ասա մեզ ։
67 * Ասէ ցնոսա․ եթէ ասացից ձեզ՝ սակայն ո՛չ հաւատայք ։
68 * Եւ եթէ հարցից ինչ զձեզ՝ չտայք
69 ինձ պատասխանի, կամ արձակիցէք ։ * Բայց յայսմ
հետէ նստցի որդի մարդոյ ընդ աջմէ զօրութե̄ն
70 Այ̄ ։ * Եւ ասեն ամենեքեան․ ուրեմն դու ես Որդին
Այ̄․ եւ նա ասէ ցնոսա․ դուք ասէք թէ ես
71 եմ ։ * Եւ նոքա ասեն, զի՞նչ եւս պիտոյ է մեզ վկայութե̄․
զի մեզէն իսկ լուաք ՚ի բերանոյ դորա ։

ԳԼ․ ԻԴ․

1 Եւ յարուցեալ ամ̄ բազմութի̄ նց̄, ածին զնա առ պիղատոս ։
2 Եւ սկսան չարախօս լինել զնմանէ եւ ասել․ գտաք
զսա, զի թիւրէր զազգս մեր․ եւ արգելոյր ՚ի տալոյ
հարկս կայսեր ։ եւ ասէր զանձնէ՝ եթէ Քս̄
3 իցէ թագաւոր ։ * Իսկ պիղատոս եհարց զնա եւ

ասէ՝ դ՞ու ես թագաւորն հրէից: Նա պատասխա-
4 նի ետ նմա և ասէ: դու ասացեր: * Ասէ պիղա-
տոս ցքահանայապետսն, և ցժողովուրդսն. չգտա-
5 նեմ ինչ վնաս յառնս յայսմիկ: * Եւ նոքա պնդէին
և ասէին, եթէ խռովէ զժողովուրդս. ուսուցանէ
ընդ ամ̅ հրէաստան, սկսեալ ՚ի գալիլիէէ մինչև
6 ցայսր: * Իսկ պիղատոս իբրև լուաւ զգալիլիէէ:
եհարց եթէ գալիլիէացի իցէ այրն:
7 * Եւ իբրև գիտաց եթէ յիշխանութենէ հերովդէի
է, ետ տանել զնա առ հերովդէս: քանզի և նա
8 յեէմ էր յաւուրսն յայնոսիկ: * Եւ հերովդէս իբրև
ետես զՅս̅, ուրախ եղև յոյժ: զի ցանկայր ՚ի բա-
զում ժամանակաց տեսանել զնա: քանզի լսէր բա-
զում անգամ զնմանէ: և ակն ունէր նշան ինչ [illegible]եալ
9 տեսանել ՚ի նմանէ: * Հարցանէր զնա բանիւք բազ-
10 մօք. և նա ոչինչ ետ նմա պատասխանի: * Կային
քահանայապետքն և դպիրք՝ և պնդագոյնս չարա-
11 խօսէին զնմանէ: * Արհամարհեաց զնա և հերով-
դէս հանդերձ իւրօք զօրականօքն: և այպն արար-
եալ՝ էարկ զնովաւ հանդերձս սպիտակս. և ետ
12 տանիլ անդրէն առ պիղատոս: * Եւ եղեն բարե-
կամք պիղատոս և հերովդէս յաւուրն յայնմիկ.
քանզի յառաջ թշնամիք էին միմեանց:
13 * Կոչեաց պիղատոս զքահանայապետսն, և զիշխանս,
14 և զժողովուրդն: * Եւ ասէ ցնոսա: ածիք, մա-
տուցիք ինձ զայրս զայս իբրև զխոտորեցուցիչ
ժողովրդեանն. և ահաւասիկ առաջի ձեր դատե-
ցի, և վնաս ինչ. ոչ գտի յառնս յայսմիկ՝ զորոց
15 դուք չարախօսէքդ զդմանէ: * Այլ և ոչ հերո-
դէս; քանզի ետու տանիլ զդա առ նա: և արդ
ոչինչ մահու արժանի է գործեալ դորա:
16 * Խրատեցից զդա, և արձակեցից:
17 * Զի հարկ էր մի մի ըստ տօնի արձակել նոցա:
18 * Եւ նոքա աղաղակէին ամ̅ բազմութ̅ին և ասէին.
19 բարձ զդա՝ և արձակեա մեզ զբարաբբայ: * Որ էր
վս̅ խռովութե̅ իրիք եղելոյ ՚ի քաղաքին և սպա-
20 նութեան մտեալ ՚ի բանտ: * Դարձեալ պիղատոս
սկսաւ խօսել: քանզի կամէր արձակել զՅս̅:

21 * Եւ նոքա անդրէն աղաղակէին եւ ասէին. 'ի խաչ
22 հան զդա։ * Եւ նա երիցս ասէ ցնոսա. զի՞նչ չար
արար դա։ ոչինչ մահու պատճառ գտի 'ի դմա։ խրատեցից
23 զդա, եւ արձակեցից։ * Եւ նոքա ստիպէին
մեծաձայն՝ եւ խնդրէին զնա 'ի խաչ հանել։ եւ զօրանային
24 բարբառք նոցա եւ քահանայապետիցն։ * Եւ
պիղատոս հաւանեցաւ առնել զհայցուածս նոցա։
25 * Արձակեաց նոցա զաւազակն. զոր վս խռովութեան
եւ սպանութեան արկեալ էր 'ի բանտ՝ զոր եւ խնդրէինն
իսկ։ եւ զՅս մատնեաց կամաց նոցա։
26 * Իբրեւ տարան, ունէին զնա՝ ըմբռնեցին զոմն սիմոն
կիւրենացի՝ որ գայր յանդէ. եդին 'ի վր նր
27 զխաչն բերել զկնի Յի։ * Եւ երթայր զհետ նր
բազմութիւն ժողովրդեան, եւ կանանց. որք կոծէին,
28 եւ ողբային զնա։ * Դարձաւ Յս եւ ասէ ցնս։
դստերք երուսաղէմի՝ մի լայք 'ի վերայ իմ, այլ լացէք
'ի վերայ անձանց եւ 'ի վերայ որդւոց ձերոց։
29 * Զի եկեսցեն աւուրք, յորս ասիցեն։ թէ երանի
ամլոց՝ եւ որովայնից՝ որք ոչ ծնան. եւ ստեանց,
30 որք ոչ դիեցուցին։ * Յայնժամ սկսանիցին ասել
լերանց՝ թէ անկերուք 'ի վերայ մեր։ եւ բլրոց՝
31 թէ ծածկեցէք զմեզ։ * Զի եթէ ընդ փայտ դալար
զայս առնեն, ընդ չորն զի՞նչ լինիցի։
32 * Ածին եւ այլ երկուս չարագործս, սպանանել
33 ընդ նմա։ * Իբրեւ չոգան 'ի տեղին կոչեցեալ գագաթն.
անդ հանին զնա 'ի խաչ։ եւ զչարագործսն
զոմն ընդ աջմէ՝ եւ զոմն ընդ ձախմէ խաչեցին։
34 * Եւ Յս ասէ։ Հայր, թող դոցա. զի ոչ գիտեն՝
զինչ գործեն։ եւ 'ի բաժանել զհանդերձս նորա՝
35 արկին վիճակս։ * Եւ կայր ժողովուրդն հայեցեալ։
անգոսնէին զնա եւ իշխանքն հանդերձ նոքօք՝ եւ
ասէին։ զայլս ապրեցոյց, ապրեցուսցէ եւ զանձն
եթէ դա է Քս, Որդի այ ընտրեալն։
36 * Այպն առնէին զնա եւ զինուորքն. երթեալ առաջի՝
37 մատուցանէին նմա քացախ։ * Եւ ասէին։ եթէ
դու ես թագաւորն հրէից՝ փրկեա զանձն քո։
38 * Եւ էր գիր գրեալ 'ի վր նր. յունարէն, եւ դաղմատերէն,
եւ եբրայեցերէն գրով, եթէ սա է արքայն
39 հրէից։ * Իսկ միոյն 'ի կախելոց չարագոր-

ծաղն հայհոյէր զնա, և ասէր․ ո՛չ դու ես Քն̃.
40 փրկեա զանձն քո, և զմեզ: * Պատասխանի ետ
ընկերն սաստելով նմա, և ասէ․ չերկնչիս դու
41 յԱյ̃՝ զի ՚ի նմին պատժի կաս: * Եւ մեք յիրաւի,
զի արժանի՝ որոց գործեցաքն՝ առնումք զհատու-
42 ցումն. և սա ապիրատ ինչ ոչ գործեաց: * Եւ
ասէ ցՅս̃: յիշեա զիս Տր̃ յորժամ գայցես ար-
43 քայութեամբ քով: * Եւ ասէ ցնա Յս̃: ամէն ասեմ
44 քեզ․ այսօր ընդ իս լիցես ՚ի դրախտին: * Եւ էր
իբրև վեցերորդ ժամ. և խաւար եղև ՚ի վր̃ ամ̃
երկրի մինչև ցիններորդ ժամ: խաւարեցաւ արե-
45 գակն: * Եւ հերձաւ վարագոյր տաճարին ընդ մէջ:
46 * Եւ կարդաց Յս̃ ՚ի ձայն մեծ՝ և ասէ: Հայր՝ ՚ի
ձեռս քո աւանդեմ զհոգի իմ: զայս իբրև ասաց՝
47 եհան զոգի: * Եւ տեսեալ հարիւրապետին՝ որինչ
եղեւն՝ փառաւոր արար զԱծ՝ և ասէ․ արդարև
48 այր սա արդար էր * Եւ ամ̃ ժողովուրդն, որք
եկեալ էին, և տեսանէին զանցսն զայն՝ և զգործ,
49 բաղխէին զկուրծս՝ և դառնային: * Կային և ամ̃
ծանօթքն նր̃ ՚ի հեռաստանէ. և կանայք, որք
եկեալ էին զհետ նր̃ ՚ի գալիլեէ՝ տեսանէին զայն:
50 * Եւ ահա այր մի անուն յովսէփ, որ էր նախարար՝
51 այր բարեգործ և արդար: * Սա չէր միաբանեալ
ընդ խորհուրդս և ընդ գործս նց̃. յարեմաթեայ
քաղաքէ հրէից. որ և ինքն իսկ ակնունէր արքայու-
52 թեան Այ̃: * Սա մատուցեալ առ պիղատոս՝ խնդ-
53 րեաց զմարմինն Յի̃: * Եւ իջուցեալ զնա՝ պատեաց
պաստառակալաւ: և եդ ՚ի կառածոյ գերեզմանին.
54 ուր չէր բնաւ զոք եդեալ: * Եւ օրն էր ուրբաթ.
55 և շաբաթ լուսանայր: * Եւ երթային զհետ նորա
կանայք՝ որք եկեալ էին ընդ նմա ՚ի գալիլեէ:
տեսին զգերեզմանն, և որպէս եդաւ մարմին նր̃:
56 * Դարձան, և պատրաստեցին խունկս և իւղս: և
՚ի շաբաթուն հանգստեցին վս̃ պատուիրանին:

ԳԼ. ԻԴ:

1 Բայց ՚ի միաշաբաթուն վաղվաղ ընդ առաւօտն
եկին ՚ի գերեզմանն. բերին զխունկսն, զոր պատ-

2 րաստեցին՝ և այլ կանայք ընդ նոսա։ * Եւ գտին
զվէմն թաւալեցուցեալ ՚ի գերեզմանէ անտի։
3 * Եւ մտեալ ՚ի ներքս՝ ոչ գտին զմարմին Տն Յի։
4 * Եւ եղև ընդ հիանալն նց վս այնորիկ, և ահա
արք երկու հասին առ նոսա ՚ի հանդերձս լուսաւորս։
5 * Եւ իբրև զահի հարան՝ և խոնարհեցուցին զերեսս
իւրեանց յերկիր. ասեն ցնոսա. զի՞ խնդրէք զկեն-
6 դանին ընդ մեռեալս։ * Չէ աստ, այլ յարեաւ։
յիշեցէ՛ք՝ որպ խօսեցաւ ընդ ձեզ մինչ էր ՚ի Գա-
7 լիլեա։ * Եւ ասէր թէ պարտ է որդւոյ մարդոյ
մատնիլ ՚ի ձեռս մարդոյ մեղաւորաց. և ՚ի խաչ
8 ելանել՝ և յերրորդ աւուր յառնել։ * Եւ յիշեցին
9 զբանսն նորա։ * Եւ դարձան, պատմեցին զայս ամ
10 մետասանիցն, և այլոցն ամենեցուն։ * Եւ էին
մարիամ մագդաղենացի. և յոհաննա, և մարիամ
յակոբայ, և այլք ընդ նոսա, որք պատմէին զայս
11 առաքելոցն։ * Եւ երևեցան առաջի նց շաղփաղփու-
12 թիւն բանք նց՝ և չհաւատային նց։ * Բայց պետրոս
յարուցեալ ընթացաւ ՚ի գերեզմանն. և հայե-
ցեալ տեսանէ զկտաւսն լոկ, զի կային։ և գնաց ընդ
13 միտս զարմացեալ թէ զինչ եղև։ * Եւ ահա եր-
կուք ՚ի նոցանէ երթային ՚ի նմին աւուր ՚ի գեօղ
մի, որ հեռի էր յեէմէ հարիւր և վաթսուն աս-
14 պարիսաւ։ և էր անուն նորա էմմաւուս։ * Եւ նո-
քա խօսէին ընդ միմեանս վս ամ անցիցն անցելոց։
15 * Եւ եղև ընդ խօսիլն նց և ընդ վիճել՝ և ինքն
16 իսկ Յս մերձեցաւ՝ և երթայր ընդ նոսա։ * Եւ
նոցա աչք կալեալ էին առ ՚ի չճանաչելոյ զնա։
17 * Եւ ասէ ցնս. զի՞նչ են բանքդ՝ վս որոյ վիճիք
ընդ միմեանս՝ մինչդեռ երթայք, և տրտմեալ
18 էք։ * Պատասխանի ետ միոյն ՚ի նոցանէ՝ որում
անուն էր կղէօպաս, և ասէ ցնա. դու միայն կաս
յեէմ, որ ոչ գիտացեր՝ զինչ գործեցաւ ՚ի նմա
19 յաւուրսս յայսոսիկ։ * Եւ ասէ ցնս. զի՞նչ։ և
նքա ասեն։ զՅէ նազովրեցւոյ. որ եղև այր մար-
գարէ, հզօր արդեամբք և բանիւք՝ առաջի Այ, և
20 ամենայն ժողովրդեանն։ * Ո՞րպ մատնեցին զնա քա-
հանայապետքն՝ և իշխանքն մեր ՚ի դատաստան

21 մահու՝ եւ հանին զնա 'ի խաչ։ * Մեք ակնունէաք՝
թէ նա է՝ որ փրկելոց էր զԻէլ։ այլեւ հանդերձ
այսու ա̃միւ, այս երրորդ օր է՝ յորմէ հետէ այն
22 գործեցաւ։ * Այլեւ կանայք ոմանք 'ի մէնջ զար-
մացուցին զմեզ. որք կանխեալք ընդ առաւօտս՝ չո-
23 գան 'ի գերեզմանն։ * Եւ ոչ գտին զմարմին նր̃.
եկին, եւ ասեն. թէ եւ տեսիլ եւս հրեշտակաց
տեսին, որք ասէին զնմանէ՝ թէ կենդանի է։
24 * Եւ գնացին ոմանք 'ի մէնջ 'ի գերեզմանն. եւ
գտին նոյնպէս՝ ոպ̃ եւ կանայքն ասացին։ բայց զնա
25 ոչ տեսին։ * Եւ նա ասէ ցնս̃։ ո՜վ անմիտք եւ
հեղգամիտք առ 'ի հաւատալ յա̃մի, զոր խօսեցան
26 մարգարէքն։ * Ո՞չ զնոյն պարտէր չարչարիլ Քս̃ի,
27 եւ մտանել 'ի փառս իւր։ * Եւ սկսեալ 'ի Մովսէսէ՝
եւ յա̃մ մարգարէից՝ մեկնէր նոցա որինչ յա̃մի
28 գիրս գրեալ է զնմանէ։ * Իբրեւ մերձեցան 'ի գեօղն՝
յոր երթային, եւ նա պատճառէր հեռագոյն եւս
29 ուրեք երթալ։ * Եւ բռնադատեցին զնա՝ եւ ասեն.
առ մե՛զ ագիր. զի ընդ երեկս է՝ եւ տարաժամեալ
30 է օրս։ եւ եմուտ ագանիլ անդ ընդ նոսա։ * Եւ
եղեւ 'ի բազմիլն նր̃ ընդ նոսա. առեալ զհացն՝ օրհ-
31 նեաց՝ եբեկ՝ եւ ետ նոցա։ * Եւ նոցա բացան աչք՝
եւ ծանեան զնա։ եւ նա եղեւ 'ի նոցանէ աներեւոյթ։
32 * Եւ ասեն ցմիմեանս. ո՞չ իսկ եւ սիրտք մեր ճմ-
լէին 'ի մեզ՝ մինչ խօսէրն ընդ մեզ զճանապար-
33 հայն. եւ ոպ̃ բանայր մեզ զգիրս։ * Եւ յարուց-
եալ նոյն ժամայն՝ դարձան յէմ̃. եւ գտին ժողով-
34 եալ զմետասանսն. եւ զորս ընդ նոսայն էին։ * Եւ
ասեն թէ արդարեւ յարեաւ Տր̃՝ եւ երեւեցաւ Սի-
35 մօնի։ * Եւ նոքա պատմէին. որ զճանապարհայն։
եւ թէ զիարդ ետ ծանօթս նց̃ 'ի բեկանել հացին։
36 * Մինչդեռ զայն խօսէին, ինքն իսկ Յս̃ եկաց 'ի
մէջ նց̃՝ եւ ասէ ցնս̃։ խաղաղութի̃ ընդ ձեզ. ես
37 եմ, մի՛ երկնչիք։ * Եւ զահի հարեալ երկնչէին.
38 եւ համարէին զոգի ինչ տեսանել։ * Եւ ասէ ցնս̃։
զի՞ խռովեալ էք. եւ ընդէ՞ր խորհուրդք ելանեն
39 'ի սիրտս ձեր։ * Տեսէք զձեռս իմ եւ զոտս. զի
ես նոյն եմ։ շօշափեցէք զիս՝ եւ տեսէք։ զի ոգի

մարմին և ոսկերս ո՛չ ունի, որպ՟ զիս տեսանէք՝
40 զի ունիմ: * Եւ զայս ասացեալ՝ եցոյց նց՟ զձեռսն
41 և զոտս: * Եւ մինչդեռ տակաւին չհաւատային 'ի
խնդութենէն, և զարմացեալ էին: ասէ ցնս՟. ունի՞ք
42 ինչ կերակուր աստ: * Եւ նոքա ետուն նմա ձկան
43 խորովեցելոյ մասն. և խորիսխ մեղու: * Եւ էառ՝
44 եկեր առաջի նց՟. և զմնացորդսն ետ նց՟: * Եւ
ասէ՝ այս բանք են, զոր խօսեցայ ընդ ձեզ՝ մինչ առ
ձեզն էի. թէ պարտ է լնուլ ամ՟ գրելոյն յօրէնսն
Մովսէսի, և 'ի մարգարէս, և 'ի սաղմոսսն վս՟ իմ:
45 * Յայնժամ եբաց զմիտս նոցա իմանալ զգիրս:
46 * Եւ ասէ ցնս՟. թէ այսպէս պարտ էր չարչարիլ
Քի՟: և յառնել 'ի մեռելոց յաւուր երրորդի.
և քարոզիլ յանուն նր՟ ապաշխարութի՟, և
թողութի՟ մեղաց. յամ՟ ազգս՝ սկսեալ յեմէ՟:
47 * Եւ դուք էք վկայք բանիցս այսոցիկ:
48 * Եւ ահա ես առաքեմ զաւետիս Հօր իմոյ 'ի ձեզ.
և դուք նստարուք 'ի քաղաքիս յեմ՟. մինչև զգե
49 նուցուք զզօրութի՟ 'ի բարձանց: * Եհան զնոսա
մինչև 'ի Բեթանիա: և ամբարձեալ զձեռս իւր
50 օրհնեաց զնոսա: * Եւ եղև յօրհնելն նր՟ զնս՟, մեկնե
51 ցաւ 'ի նոցանէ. և վերանայր յերկինս: * Եւ նք՟
երկիր պագեալ նմա՝ դարձան յեմ՟ ուրախութ՟
52 մեծաւ: * Եւ էին հանապազ 'ի տաճարին, գովէին,
և օրհնէին զԱծ՟:



Թարգմանիչ վարդապետները

ՍՐԲՈՅ
ԱՒԵՏԱՐԱՆԻՍ
ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ·
ԸՍՏ ՅՕՀԱՆՆՈՒ։

Գլուխ Առաջներորդ։

1 ԻՍԿԶԲԱՆԷ ԷՐ ԲԱՆՆ· ԵՒ
2 բանն էր առ Ած՟։ և Ած՟ էր բանն։ * Նա էր 'ի
3 սկզբանէ առ Ած՟։ * Ամ՟ ինչ նովաւ եղև։ և
4 առանց նր՟ եղև և ոչինչ՝ որինչ եղևն։ * Նովաւ
5 կեանք էր· և կեանքն էր լոյս մարդկան։ * Եւ
լոյսն 'ի խաւարի անդ լուսաւորէ։ և խաւար նմա
6 ոչ եղև հասու։ * Եղև այր մի առաքեալ յԱյ՟·
7 անուն նմա յօհաննէս։ * Սա եկն 'ի վկայութիւն՝
զի վկայեսցէ վս՟ լուսոյն· զի ամենեքին հաւատասցեն
8 նովաւ։ * Ոչ էր նա լոյսն· այլ զի վկայեսցէ
9 վս՟ լուսոյն։ * Էր լոյսն ճշմարիտ· որ լուսաւոր առնէ
10 զամ՟ մարդ՝ որ գալոց է յաշխարհ։ * Յաշխարհի
էր· և աշխարհ նովաւ եղև· և աշխարհ զնա
11 ոչ ծանեաւ։ * Յիւրսն եկն· և իւրքն զնա ոչ
12 ընկալան։ * Իսկ որք ընկալանն զնա, ետ նց՟ իշխանութիւն
որդիս Այ՟ լինել· որոց հաւատասցեն
13 յանուն նր՟։ * Որք ոչ յարենէ· և ոչ 'ի կամաց
մարմնոյ՝ և ոչ 'ի կամաց առն· այլ յԱյ՟ ծնան։
14 * Եւ բանն մարմին եղև՝ և բնակեցաւ 'ի մեզ։ և
տեսաք զփառս նր՟· զփառս իբրև զմիածնի առ 'ի
15 Հօրէ, լի շնորհօք և ճշմարտութբ՟։ * Յօհաննէս
վկայեաց վս՟ նր՟· աղաղակեաց և ասէ։ սա է՝ զորմէ
ասէի, որ զկնի իմ գալոցն էր՝ առաջի իմ եղև·

16 զի նախ քան զիս էր։ * Զի 'ի լրութենէ նր՟
մեք ամենեքին առաք, շնորհս փոխանակ շնորհաց։
17 * Զի օրէնքն 'ի ձեռն մովսիսի տուաւ։ շնորհք
և ճշմարտութիւն 'ի ձեռն Յի՟ Քի՟ եղեն։
18 ԻԸ. * ԶԱ՟Ծ ոչ ոք ետես երբէք. բայց միածինն
19 որդի՝ որ է 'ի ծոց հօր, նա պատմեաց։ * Եւ այս
է վկայութիւն յովհաննու, յորժամ առաքեցին առ
նա հրէայքն յԵ՟մէ քահանայս և ղևտացիս, զի
20 հարցցեն ցնա՝ թէ դու ո՞ ես։ * Եւ խոստովան
եղև, և ոչ ուրացաւ. խոստովան եղև, թէ ես
21 ոչ եմ Քս՟ն։ * Եւ հարցին ցնա, իսկ ո՞վ ես
դու՝ եղիա՞ ես. և ասէ, ոչ եմ։ իսկ մարգարէն
22 ես դու. պատասխանի ետ՝ թէ ոչ։ * Իսկ ասա
մեզ՝ դու ո՞վ ես. զի պատասխանի տարցուք՝ որոց
առաքեցինն զմեզ. զի՞ ասես վասն քո։
23 * Ասէ, ես՝ ձայն բարբառոյ յանապատի. ուղի՛ղ
արարէք զճանապարհ Տ՟ն. որպէս ասաց եսայի
24 մարգարէ։ * Եւ որք առաքեցանն, 'ի փարիսեցւոց
25 անտի էին։ * Հարցին ցնա՝ և ասեն. իսկ զի՞
մկրտես՝ եթէ դու չես Քս՟ն, և ոչ եղիա. և
26 ոչ մարգարէն։ * Պատասխանի ետ նց՟ յովհաննէս՝
և ասէ. ես մկրտեմ զձեզ ջրով. 'ի միջի ձերում
27 կայ՝ զոր դուքն ոչ գիտէք։ * Որ զկնի իմ գալոցն է. որ առաջի իմ եղև. որում չեմ արժանի,
28 եթէ լուծից զխրացս կօշկաց նորա։ * Այս 'ի բեթաբրայ եղև յայնկոյս յորդանանու. ուր էրն
յովհաննէս, և մկրտէր։ (և անդ լինէր։)
29 ԻԹ. * 'Ի վաղիւ՝ անդր տեսանէ զՅս՟ զի գայր առ
նա. և ասէ, ահաւասիկ գառն ԱՅ՟ որ բառնայ
30 զմեղս աշխարհի։ * Սա է, վ՟ն որոյ եսն ասէի. զկնի
իմ գայ այր. որ առաջի իմ եղև. զի յառաջ իսկ
31 էր քան զիս։ * Եւ ես ոչ գիտէի զնա. այլ զի
յայտնի լինիցի իէլի, վասն այնորիկ եկի ես ջրով
32 մկրտել։ * Վկայեաց յովհաննէս և ասէ. թէ տեսանէի զՀոգին՝ զի իջանէր իբրև զաղաւնի յերկնից. և հանգչէր 'ի վերայ նորա։
33 * Եւ ես ոչ գիտէի զնա. այլ որ առաքեացն զիս
մկրտել ջրով՝ նա ասաց ցիս. յոր վերայ տեսա-

նիցես զՀոգին, զի իջանիցէ, և հանգչիցի 'ի վ՟ր
34 նորա, նա է՛ որ մկրտէ Հոգւովն սրբով: * Եւ ես
տեսի, և վկայեցի, եթէ սա է Որդին Ա՟յ:
35 ԻԴ· * 'Ի վաղիւն անդր կայր յօհաննէս, և յաշա-
36 կերտաց անտի ն՟ր երկու: * Եւ նայեցեալ ը՟ Յ՟ի
զի գնայր, և ասէ. ահաւասիկ Ք՟ս գառն Ա՟յ:
37 * Լուան 'ի նմանէ երկու աշակերտքն զի խօսէր. և
38 գնացին զհետ Յ՟ի: * Իբրև դարձաւ Յ՟ս և ետես զն՟ս
զի երթային զհետ ն՟ր, ասէ ցն՟ս. զի՞նչ խնդրէք.
նոքա ասեն ցնա. Ռաբբի, (որ թարգմանեալ կոչի
39 վարդապետ:) ո՞ւր ես օթեվանք քո: * Ասէ ցնոսա՝
եկայք, և տեսէ՛ք: եկին, և տեսին, ուր էին օթե-
վանք ն՟ր. և առ նմա ագան այն օր. զի ժամ՝ էր
40 իբրև տասներորդ: * Էր անդրէաս եղբայր սիմոնի
վիմի, մի յերկուց անտի. որք լուան 'ի Յօհաննէ՝
41 և գնացին զկնի նորա: * Գտանէ սա նախ զեղբայր
իւր զսիմոն, և ասէ ցնա. գտաք զմեսիայ՝ (որ
42 թարգմանի Ք՟ս:) * Սա էած զնա առ Յ՟ս: հայե-
ցեալ ընդ նա Յ՟ի՝ ասէ. դու ես սիմոն որդի յօ-
նանու. դու կոչեսցիս կեփաս. որ թարգմանի
43 ԻԵ· պետրոս: * 'Ի վաղիւն անդր կամեցաւ ելանել
'ի գալիլեա. գտանէ զփիլիպպոս, և ասէ ցնա Յ՟ս.
44 եկ զկնի իմ: * Էր փիլիպպոս 'ի բեթսայիդայ,
45 'ի քաղաքէ անդրեայ և պետրոսի: * Գտանէ փի-
լիպպոս զնաթանայէլ, և ասէ ցնա. զորմէ գրեաց
մովսէս յօրէնսն՝ և մարգարէքն, գտաք զՅ՟ս զորդի
46 յօսեփայ 'ի նազարեթէ: * Ասէ ցնա նաթանայէլ.
իսկ 'ի նազարեթէ մարթ ինչ իցէ բարւոյ իմիք
47 լինել: ասէ ցնա փիլիպպոս, եկ և տես: * Իբրև
ետես Յ՟ս զնաթանայէլ զի գայր առ նա, ասէ
վ՟ն ն՟ր. ահա արդարև իսրայէլացի՝ յորում նեն-
48 գութիւն ոչ գոյ: * Ասէ ցնա նաթանայէլ. ուստի՞
ճանաչես զիս: պատասխանի ետ Յ՟ս և ասէ ցնա.
մինչչև էր փիլիպպոսի կոչել զքեզ՝ զի էիր 'ի ներ-
49 քոյ թզենւոյն, տեսի զքեզ: * Պատասխանի ետ
նմա նաթանայէլ և ասէ. Ռաբբի, դու ես Որդի
50 Ա՟յ. դու ես թագաւոր Ի՟լի: * Պատասխանի ետ
նմա Յ՟ս և ասէ. փոխանակ զի ասացի քեզ, թէ

տեսի 'ի ներքոյ թզենւոյն, հաւատաս՝ մեծամեծս
51 ևս քան զայս տեսցես : * Եւ ասէ ցնա • ամէն ա-
մէն ասեմ ձեզ՝ տեսանիցէք զերկինս բացեալ՝ և
զհրեշտակս Այ՝ զի ելանիցեն՝ և իջանիցեն 'ի վր
Որդւոյ մարդոյ :

ԳԼ. Բ :

1 Եւ յաւուրն երրորդի հարսանիք էին 'ի կանայ
Բ.Զ. Գալիլեացւոց • և անդ էր մայրն Յի :
2 * Կոչեցաւ և Յս՝ և աշակերտքն նորա 'ի հարսա-
3 նիսն : * Եւ 'ի պակասել գինւոյն, ասէ մայրն ցՅս •
4 գինի ոչ ունին : * Եւ ասէ ցնա Յս • զի՛ կայ իմ
և քո՝ կին դու • չև է հասեալ ժամանակ իմ :
5 * Ասէ մայր նորա սպասաւորացն • որ ինչ ասիցէ,
6 արասջի՛ք : * Անդ էին թակոյկք կճեայք վեց՝ ըստ
սրբութեան հրէից • տանէին միմի 'ի նոցանէ մարս
7 երկուս կամ երիս : * Ասէ ցնոսա Յս • լցէք զթա-
կոյկդ ջրով : Եւ լցին զնոսա մինչև 'ի վեր :
8 * Եւ ասէ ցնոսա • արդ՝ առէք, և բերէք տաճա-
րապետին : Եւ նոքա բերին :
9 * Եւ իբրև ճաշակեաց տաճարապետն զջուրն գինի
եղեալ • և ոչ գիտէր ուստի իցէ • բայց սպասաւ-
որքն գիտէին՝ որք արկին զջուրն : Խօսի ընդ փե-
10 սային տաճարապետն : * Եւ ասէ, ամենայն մարդ
զանոյշ գինին յառաջագոյն պաշտէ • և յորժամ
արբենան, յայնժամ զյոռին • դու պահեցեր զա-
11 նոյշ գինիդ մինչև ցայժմ : * Զայս արար սկիզբն
նշանաց Յս 'ի կանայ Գալիլեացւոց • և յայտնեաց
զփառս իւր • և հաւատացին 'ի նա աշակերտքն նր :
12 ԲԷ • * Յետ այսորիկ էջ Յս 'ի կափառնաում,
ինքն և մայր իւր, և եղբարք իւր • և անդ լինէր
13 ոչ բազում ինչ աւուրս : * Եւ էր մերձ զատիկն
14 հրէից • և ել Յս յԵմ : * Եւ եգիտ 'ի տաճարին՝
զի վաճառէին զարջառս՝ և զոչխարս՝ և զաղաւնիս •
15 և զլումայափոխսն, որք նստէին : * Եւ արար
խարազան չուանեայ • և էհան զամենեսին 'ի տա-
ճարէն, զոչխարսն՝ և զարջառս, և զպղինձս հատա-
վաճառացն ցրուեաց : Եւ զսեղանսն կործանեաց :

16 * Եւ որք զաղաւնիսն վաճառէին՝ ասէ ցնոսա․ առէք
զայդ աստի, եւ մի առնէք զտուն Հօր իմոյ՝
17 տուն վաճառի: * Ապա յիշեցին աշակերտքն նր̄՝
թէ գրեալ է, նախանձ տան քո կերիցէ զիս:
18 * Պատասխանի ետուն Հրէայքն եւ ասեն ցնա․
զի՞նչ նշան ցուցանես դու մեզ՝ զի զայդ առնես:
19 * Պատասխանի ետ Յս̄ եւ ասէ ցնս․ քակեցէք
զտաճարդ զայդ՝ եւ զերիս աւուրս շինեցից զդա:
20 * Ասեն ցնա Հրէայքն․ զքառասուն եւ զվեց ամ
շինեցաւ տաճարս այս․ եւ դու զերիս աւուրս կանգ-
21 նես զդա: * Բայց նա ասէր վասն տաճարի մար-
22 մնոյ իւրոյ: * Իսկ յորժամ յարեաւ 'ի մեռելոց,
յիշեցին աշակերտքն նր̄՝ թէ այս է՝ զոր ասացն․
եւ հաւատացին գրոյն, եւ բանին, զոր ասաց Յս̄:
23 * Եւ իբրեւ էր յԵ՜մ 'ի զատկին տօնի, բազումք
հաւատացին յանուն նր̄․ զի տեսանէին զնշանսն՝
24 զոր առնէր: * Բայց ինքն Յս̄ ոչ հաւատայր յանձն
25 նոցա․ քանզի ինքն գիտէր զամենեսին: * Եւ զի ոչ
էր պիտոյ՝ եթէ որ վկայեսցէ վասն մարդոյ․ զի
ինքն իսկ գիտէր՝ զինչ կայր 'ի մարդն:

Գլ. Գ.

1 Եւ էր այր մի 'ի փարիսեցւոց անուն Նիկոդեմոս
2 անուն նր̄ իշխան Հրէից: * Սա եկն առ նա
գիշերի՝ եւ ասէ ցնա․ Ռաբբի, գիտեմք եթէ յԱ՜յ
եկեալ ես վարդապետ․ զի ոչ՛ք կարէ զայդ նշանս
առնել՝ զոր դուդ առնես, եթէ ոչ Ա՜ծ իցէ ընդ
3 նմա: * Պատասխանի ետ Յս̄ եւ ասէ ցնա․ ամէն
ամէն ասեմ քեզ․ եթէ ոչք ծնցի վերստին, ոչ
4 կարէ տեսանել զարքայութի̄ Ա՜յ: * Ասէ ցնա
Նիկոդեմոս․ զիա՞րդ կարէ մարդ ծնանիլ՝ որ ծերն
իցէ․ միթէ մա՞րթ իցէ անդրէն յորովայն մօր իւ-
5 րոյ կրկին մտանել եւ ծնանիլ: * Պատասխանի ետ
Յս̄ եւ ասէ ցնա․ ամէն ամէն ասեմ քեզ․ եթէ
ոչք ծնցի 'ի ջրոյ եւ 'ի Հոգւոյ՝ ոչ կարէ մտանել
6 յարքայութի̄ Ա՜յ: * Զի ծնեալն 'ի մարմնոյ՝ մար-
7 մին է․ եւ ծնեալն 'ի Հոգւոյ՝ հոգի է: * Դու մի

զարմանար, թէ ասացի քեզ՝ պարտ է ձեզ ծնանել
8 վերստին։ * Զի հողմ ուր կամի՛ շնչէ· եւ զձայն
նր̄ա լսես· այլ ոչ գիտես, ուստի գայ՝ կամ յո՛
երթայ· նոյնպէս եւ ա̄մ ծնեալն ՚ի Հոգւոյն։
9 * Պատասխանի ետ Նիկոդեմոս, եւ ասէ ցնա· զիա՞րդ
10 մարթի այդմ լինել։ * Պատասխանի ետ Յ̄ս եւ
ասէ ցնա· դու ես վարդապետ իլի՝ եւ զայդ ո՞չ
11 գիտես։ * Ամէն ամէն ասեմ քեզ։ զի զորինչ գի-
տեմք, խօսիմք· եւ զոր տեսաք, վկայեմք· եւ զվկայու-
12 թիւն մեր ոչ ընդունիք։ * Իսկ արդ եթէ զերկրաւ-
որս ասացի ձեզ՝ եւ ոչ հաւատայք· զիա՞րդ եթէ
զերկնաւորն ասացից՝ հաւատայցէք։
13 Գ.Ը. * Եւ ո՛չ ոք ել յերկինս, եթէ ոչ որ էջն
14 յերկնից՝ Որդի մարդոյ, որ էն յերկինս։ * Եւ ոպ̃
Մովսէս բարձրացոյց զօձն յանապատի, նոյնպէս բար-
15 ձրանալ պարտ է Որդւոյ մարդոյ։ * Զի ա̄մ, որ
հաւատայ ՚ի նա՝ ոչ կորիցէ· այլ ընկալցի զկեանսն
16 յաւիտենականս։ * Զի այնպէս սիրեաց Ա̄ծ զաշ-
խարհ՝ մինչեւ զՈրդին իւր միածին ետ· զի ա̄մ
որ հաւատայ ՚ի նա, մի՛ կորիցէ՝ այլ ընկալցի զկեա-
17 նսն յաւիտենականս։ * Զի ոչ առաքեաց Ա̄ծ
զՈրդի իւր յաշխարհ՝ թէ դատեսցէ զաշխարհ,
18 այլ զի փրկեսցի աշխարհ նովաւ։ * Որ հաւատայ
՚ի նա, ոչ դատապարտեսցի· եւ որ ոչ հաւատայ ՚ի
նա՝ արդէն իսկ դատապարտեալ է· զի ոչ հաւա-
19 տաց յանուն միածնի Որդւոյն Ա̄յ։ * Եւ ա՛յս իսկ
է դատաստան· զի լոյս եկն յաշխարհ՝ եւ սիրեցին
մարդիկ զխաւար առաւել քան զլոյս· զի էին
20 գործք իւրեանց չարութ̄ե։ * Զի ամենայն որ զչար
գործէ՝ ատեայ զլոյս· եւ ոչ գայ առ լոյսն, զի մի՛
21 յանդիմանեսցին գործք նորա։ * Իսկ որ առնէ
զճշմարտութ̄ի, գայ առ լոյսն, զի յայտնի լիցին
գործք նր̄ա թէ Աստուծով գործեցան։
22 Գ.Գ. * Յետ այսորիկ եկն Յ̄ս եւ աշակերտքն նր̄ա
յերկիրն Հրէաստանի· եւ անդ շրջէր նոքօք հան-
23 դերձ եւ մկրտէր։ * Մկրտէր եւ Յովհաննէս ՚ի յայե-
նոն մերձ առ Սաղիմ· զի ջուրք բազումք էին անդ·
24 եւ գային, եւ մկրտէին։ * Զի չեւ էր արկեալ

25 յօհաննէս 'ի բանտ։ * Եւ եղեւ խնդիր յաշակեր-
տացն յօհաննու ընդ հրէից վասն սրբութե։
26 * Եկին առ յօհաննէս՝ եւ ասեն ցնա. Ռաբբի, որ
էրն ընդ քեզ յայնկոյս յորդանանու. որում դուն
վկայեցեր. ահաւասիկ նա մկրտէ՝ եւ ամենեքին գան
27 առ նա։ * Պատասխանի ետ յօհաննէս եւ ասէ.
ոչ կարէ մարդ առնուլ յանձնէ եւ ոչինչ. եթէ
ոչ լիցէ տուեալ նմա յերկնից 'ի վերուստ.
28 * Դուք ձեզէն վկայէք ինձ, զի ասացի ձեզ՝ թէ
չեմ ես Քն, այլ թէ առաքեալ եմ առաջի նր։
29 * Որ ունի զհարսն՝ նա է փեսայ. իսկ բարեկամ
փեսային, որ կայ եւ լսէ նմա. ուրախութբ ուրախ
լինի վասն ձայնի փեսային. արդ՝ այս ուրախութի
30 որ իմս է, լցեալ է։ * Նմա պարտ է աճել. եւ ինձ
31 նուազել։ * Որ 'ի վերուստն գայ՝ 'ի վերոյ է քան
զամենայն. որ յերկրէ աստի է, յերկրէ է՝ եւ յեր-
կրէ խօսի։ որ յերկնիցն գայ ('ի վերոյ է քան զամ։)
32 * Զոր ինչ ետես՝ եւ զոր լուաւ՝ վկայէ. եւ զվկայու-
33 թի նր ոչ ոք ընդունի։ * Որ ընդունի զվկայութի
34 նորա՝ կնքեաց թէ Ած ճշմարիտ է։ * Զի զոր Ածն
առաքեաց՝ զբանսն Այ խօսի. զի ոչ եթէ չափով
35 տայ Ած զՀոգին։ * Հայր սիրէ զՈրդի, եւ զամե-
36 նայն ինչ ետ 'ի ձեռս նորա։ * Որ հաւատայ յՈրդի՝
ընդունի զկեանս յաւիտենականս. եւ որ ոչն հնա-
զանդի Որդւոյ՝ ոչ տեսցէ զկեանս. այլ բարկութի
Այ մնայ 'ի վերայ նորա։

ԳԼ. Դ.

1 Իբրեւ գիտաց Յս՝ եթէ լուան փարիսեցիքն՝
Գ.Դ. եթէ Յս բազում աշակերտս առնէ եւ մկրտէ
քան զյօհաննէս։ * (Քանզի ոչ եթէ Յս ինքնին
3 մկրտէր՝ այլ աշակերտքն նորա։) * Եթող զհրէ-
աստան երկիր. եւ եկն միւսանգամ 'ի գալիլեա։
4 * Եւ էր նմա անցանել ընդ սամարիա։
5 * Գայ նա 'ի քաղաք մի սամարացւոց՝ որում անուն
էր սիւքար. մերձ 'ի գիւղն զոր ետ յակոբ որդւոյ
6 իւրում յօսեփայ։ * Եւ անդ էր աղբիւր մի յա-

կոբայ. եւ Յս վաստակեալ 'ի ճանապարհէն, նստէր
'ի վերայ աղբերին. եւ էր ժամ իբրեւ վեցերորդ:
7 * Գայ կին մի 'ի սամարիայ հանել ջուր. ասէ
8 ցնա Յս. տուր ինձ ըմպել: * (Զի աշակերտքն
նորա երթեալ էին 'ի քաղաքն անդր՝ զի կերակուրս
9 գնեսցեն:) * Ասէ ցնա կինն սամարացի. դու՝ որ
Հրեայդ ես, զիա՞րդ յինէն ըմպել խնդրես 'ի կնոջէ սամարացւոյ. զի ոչ երբէք խառնակին Հրեայք
10 ընդ սամարացիս: * Պատասխանի ետ նմա Յս եւ
ասէ. եթէ գիտէիր դու զպարգեւսն Այ. եւ ով է՝
որ ասէդ ցքեզ՝ թէ տուր ինձ ըմպել. դու արդեւք խնդրէիր 'ի նմանէ՝ եւ տայր քեզ զջուրն
11 կենդանի: * Ասէ ցնա կինն. Տր, դու քանզի եւ
դոյլ իսկ ոչ ունիս, եւ ջրհորս խոր է. իսկարդ ուս-
12 տի՞ ունիցիս զջուրն կենդանի: * Միթէ դու մեծ
իցես քան զհայրն մեր յակոբ՝ որ զայս
ջրհոր ետ մեզ. եւ ինքն անտի էարբ՝ եւ որդիք
13 նորա, եւ խաշինք նր: * Պատասխանի ետ նմա Յս
եւ ասէ. ամենայն, որ ըմպէ 'ի ջրոյ յայդմանէ՝
միւսանգամ ծարաւի. բայց որ ըմպէ 'ի ջրոյն, զոր
14 ես տաց նմա՝ մի ծարաւեսցի յաւիտեան: * Այլ
ջուրն, զոր ես տաց նմա, եղիցի 'ի նմա աղբիւր
15 ջրոյ բղխելոյ 'ի կեանսն յաւիտենականս: * Ասէ
ցնա կինն. Տր, տուր ինձ զջուրն զայն, զի մի ծարաւեցայց. եւ մի եկից այսր հանել զջուր:
16 * Ասէ ցնա Յս. երթ կոչեա զայր քո՝ եւ եկ
17 այսր: * Պատասխանի ետ նմա կինն եւ ասէ. չիք
իմ այր: ասէ ցնա Յս. բարւոք ասացեր: թէ չիք
18 իմ այր: * Զի հինգ այր փոխեալ է քո. եւ զոր
այժմ ունիս՝ չէ քո այր. զայդ արդար ասացեր:
19 * Ասէ ցնա կինն. Տր, թուի ինձ թէ մարգարէ
20 իցես դու: * Հարքն մեր 'ի լերինս այսմիկ երկիր
պագին. եւ դուք ասէք եթէ յԵմ եւ եթէ անդ է,
21 ուր արժան իցէ երկրպագանել: * Ասէ ցնա Յս.
կին դու՝ հաւատա ինձ. զի եկեսցէ ժամանակ
յորժամ ոչ 'ի լերինս յայսմիկ. եւ ոչ յԵմ երկր-
22 պագանիցեն Հօր: * Դուք երկրպագանէք, որում
ոչն գիտէք. մեք երկրպագանեմք, որում գիտեմքն.

23 զի փրկութիւն ՚ի Հրէից է ։ * Այլ եկեսցէ ժամա-
նակ՝ և այժմ իսկ է. յորժամ ճշմարիտքն երկր-
պագուք երկրպագանիցեն Հօր հոգւով և ճշմար-
տութբ̄. քանզի և Հայր զայնպիսի երկրպագուս
24 Գ·Ե· իւր խնդրէ ։ * Հոգի է Աձ՝ և երկրպագուաց
նորա՝ հոգւով և ճշմարտութբ̄ պարտ է երկիր
25 պագանել ։ * Ասէ ցնա կինն, գիտեմք՝ զի Մեսիայ
գայ՝ (անուանեալն Քս̄։) յորժամ եկեսցէ նա, պատ-
26 մեսցէ մեզ զամենայն ։ * Ասէ ցնա Յս̄. ես եմ,
27 որ խօսիմս ընդ քեզ ։ * Եւ յայն բան եկին աշա-
կերտքն նորա. և զարմանային, զի ընդ կնոջն խօ-
սէր. բայց ոչ՛ք ասաց ՚ի նոցանէ, թէ զի՞նչ խնդրես,
28 կամ զի՞նչ խօսիս ընդ դմա ։ * Եթող կինն զսա-
փոր իւր, և չոգաւ ՚ի քաղաքն. և ասէ ցմարդիկն ։
29 * Եկայք, և տեսէք զայր մի, որ ասաց ինձ զամե-
նայն, որ ինչ իմ գործեալ է ։ միթէ նա՞ իցէ Քս̄ն ։
30 * Ելին ՚ի քաղաքէն՝ և գային առ նա ։
31 * Եւ մինչչև եկեալ էին նոքա, աղաչէին զնա ա-
32 շակերտքն և ասէին. Ռաբբի, հաց կեր ։ * Նա
ասէ ցնոսա. ես կերակուր ունիմ ուտել, զոր
33 դուքն ոչ գիտէք ։ * Ասէին աշակերտքն ընդ մի-
մեանս. միթէ եբե՞ր ինչ ոք դմա ուտել ։ * Ասէ
34 ցնոսա Յս̄. իմ կերակուր այն է՝ զի արարից զկամս
այնորիկ՝ որ առաքեացն զիս. և կատարեցից զգործն
35 նորա ։ * Ո՞չ դուք ասէք՝ եթէ այլևս չորք
ամիսք են, և հունձք գան. ահաւասիկ ես ասեմ
ձեզ՝ ամբարձէք զաչս ձեր, և տեսէք զարտորայսն,
զի սպիտակացեալ են՝ և ՚ի հունձս հասեալք ։
36 * Եւ որ հնձէն, վարձս առնու. և ժողովէ զպտուղ
՚ի կեանսն յաւիտենականս. զի որ սերմանէն՝ և որ
37 հնձէ՝ հաւասարակ ցնծասցեն ։ * Յայսմ իսկ է բանն
ճշմարիտ. զի այլ է՝ որ սերմանէ. և այլ է՝ որ
38 հնձէ ։ * Ես առաքեցի զձեզ հնձել՝ զոր ոչ դուք
վաստակեցիք. այլք վաստակեցին, և դուք ՚ի վաս-
39 տակս նց̄ մտիք ։ * Եւ ՚ի քաղաքէն յայնմանէ սա-
մարացւոց բազումք հաւատացին ՚ի նա, վս̄ բանի
կնոջն վկայելոյ՝ եթէ ասաց ինձ զամենայն, որ ինչ
40 իմ գործեալ էր ։ * Իսկ իբրև եկին առ նա սա-

մարացիքն, աղաչէին զնա լինել առ նոսա. եւ եղեւ
41 անդ աւուրս երկուս։ * Եւ եւս բազումք հաւատա-
42 ցին ՚ի նա վասն բանին նորա։ * Եւ ասէին ցկինն.
թէ ոչ այսուհետեւ վասն քո խօսիցդ հաւատամք.
զի մեզէն իսկ լուաք ՚ի դմանէ. եւ գիտեմք եթէ
դա է ճշմարիտ փրկիչ աշխարհի։
43 Գ.Զ. * Եւ յետ երկուց աւուրց ել անտի եւ գնաց
44 ՚ի Գալիլեա։ * Զի ինքն իսկ Յս վկայեաց՝ եթէ
մարգարէ յիւրում գաւառի պատիւ ոչ ունի։
45 * Այլ յորժամ եկն նա ՚ի Գալիլեա. ընկալան զնա
Գալիլեացիքն. զի տեսեալ եւս էր զամ նշանսն,
զորս արար յԵմ ՚ի տօնին. քանզի եւ նոքա եկեալ էին ՚ի տօնն։
46 * Եկն դարձեալ ՚ի Կանայ Գալիլեացւոց՝ ուր արար
զջուրն գինի. եւ անդ էր թագաւորական մի, որոյ
47 որդին հիւանդ կայր ՚ի Կափառնաում։ * Նա իբրեւ
լուաւ եթէ Յս եկեալ է ՚ի Հրէաստանէ ՚ի Գալիլեա, եկն առ նա, եւ աղաչէր. զի իջցէ, եւ
բժշկեսցէ զորդի նորա. քանզի մերձ էր ՚ի մե-
48 ռանել։ * Ասէ ցնա Յս։ եթէ ոչ նշանս ինչ եւ
արուեստս տեսանէք՝ ոչ հաւատայք։
49 * Ասէ ցնա թագաւորականն. Տր, էջ մինչեւ մեռ-
50 եալ իցէ մանուկն իմ։ * Ասէ ցնա Յս. երթ,
որդին քո կենդանի է։ եւ հաւատաց այրն բանին՝
51 զոր ասաց ցնա Յս, եւ գնաց։ * Եւ մինչդեռ իջա-
նէր՝ ընդառաջ եղեն նմա ծառայքն նորա. աւե-
տիս տուին եւ ասեն, թէ մանուկն քո կենդանի
52 է։ * Հարցանէր ցնոսա զժամն՝ յորում ապա-
քինեցաւ. եւ ասեն ցնա. երէկ յեօթներորդ ժա-
53 մու եթող զնա ջերմն։ * Գիտաց հայրն նորա՝
եթէ յայնմ ժամու՝ յորում ասաց ցնա Յս՝ թէ
որդին քո կենդանի է. եւ հաւատաց ինքն եւ ամե-
54 նայն տուն իւր։ * Զայս դարձեալ երկրորդ նշան
արար Յս եկեալ ՚ի Հրէաստանէ ՚ի Գալիլեա։

ԳԼ. Ե։

ԳԷ. Յետ այսորիկ տօն էր Հրէից. եւ ել Յս յԵմ։
2 * Եւ էր յԵմ ՚ի պրոբատիկէ աւազանին.

որ կոչիւր երբայեցերէն բեթ հեզդայ, հինգ սրահ:
3 * Յորս անկեալ դնիւր բազմութիւն յոյժ հիւանդաց,
կուրաց, կաղաց, գօսացելոց. որք ակնունէին ջրոյն
4 յուզելոյ: * Եւ հրեշտակ Տն իջանէր ըստ ժամանակի յաւազանն՝ և յուզէր զջուրն: և որ նախ 'ի
շարժումն ջրոյն իջանէր յաւազանն՝ բժշկիւր. ոչ
5 ունելով զնշան հիւանդութեան: * Եւ անդ էր այր մի,
որոյ երեսուն և ութ ամ էր 'ի հիւանդութեան իւ-
6 րում: * Զնա իբրև ետես Յս, զի անկեալ դնիւր.
և գիտաց եթէ բազում ժամանակք են այնուհետև,
7 ասէ ցնա՝ կամիս ողջ լինել: * Պատասխանի ետ
նմա հիւանդն. Տր, ոչ զոք ունիմ, եթէ յորժամ
ջուրքն յուզիցին, արկցէ զիս յաւազանն. և մինչ
ես գանդաղիմ, այլոք քան զիս յառաջագոյն իջանէ:
8 * Ասէ ցնա Յս. արի, առ զմահիճս քո՝ և գնա:
9 * Եւ ողջացաւ այրն. և յարեաւ՝ էառ զմահիճս
իւր՝ և շրջէր. և էր շաբաթ յաւուրն յայնմիկ:
10 * Ասեն հրէայքն ցբժշկեալն՝ շաբաթ է՝ և ոչ է արժան
11 քեզ առնուլ զմահիճս քո: * Պատասխանի ետ
նց և ասէ. որ բժշկեացն զիս, նա ասաց ցիս, առ ըզմահիճս քո՝ և գնա:
12 * Հարցին ցնա, և ասեն. ո՞վ է այրն, որ ասաց ցը-
13 քեզ՝ առ զմահիճս քո՝ և շրջեաց: * Եւ բժշկեալն
ոչ գիտէր թէ ով իցէ. քանզի Յս խոյս ետ վասն
14 ամբոխին 'ի տեղւոջէ անտի: * Յետ այսորիկ գտա-
նէ զնա Յս 'ի տաճարին, և ասէ ցնա. ահաւասիկ
ողջացար, մի ևս մեղանչեր. զի մի չար ևս ինչ լի-
15 նիցի քեզ: * Գնաց այրն՝ և պատմեաց հրէիցն,
16 եթէ Յս էր՝ որ բժշկեացն զնա: * Եւ վասն այ-
նորիկ հալածէին զՅս հրէայքն, զի զայն առնէր
17 'ի շաբաթու: * Եւ Յս պատասխանի ետ նց՝ Հայր
18 իմ մինչև ցայժմ գործէ. և ես գործեմ: * Վասն
այնորիկ առաւել խնդրէին հրէայքն սպանանել
զնա. զի ոչ միայն լուծանէր զշաբաթս՝ այլ և
Հայր իւր կոչէր զԱծ, և հաւասար առնէր
զանձն Այ:
19 Գ.Կ. * Պատասխանի ետ Յս և ասէ ցնոսա: ամէն
ամէն ասեմ ձեզ. ոչ կարէ Որդի մարդոյ առնել

յանձնէ, և ոչինչ, եթէ ոչ տեսանիցէ զՀայրն
զի առնէ. զի զոր նայն առնէ, զնոյն և Որդին
20 նմին նման գործէ: * Զի Հայր սիրէ զՈրդի, և
զամենայն ինչ ցուցանէ նմա՝ զոր ինքն առնէ: և
մեծամեծս ևս քան զսոյնս ցուցանէ նմա զգործս,
21 ընդ որս դուքդ զարմանայք: * Զի ո՟պ Հայր
յարուցանէ զմեռեալս և կենդանի առնէ՝ նոյնպէս
22 և Որդի՝ զորս կամի կենդանի առնէ: * Եւ ո՛չ
եթէ Հայր դատէ զոք՝ այլ զա՟մ դատաստան ետ
23 Որդւոյ իւրում: * Զի ամենեքեան պատուեսցեն
զՈրդին՝ ո՟պ պատուեն զՀայրն. որ ոչ պատուէ
զՈրդին, ո՛չ պատուէ զՀայր զառաքիչն նորա:
24 * Ամէն ամէն ասեմ ձեզ. զի որ զբանն իմ լսէ՝
և հաւատայ այնմ, որ առաքեացն զիս՝ ընդունի
զկեանսն յաւիտենականս. և ՚ի դատաստան ո՛չ
մտանէ, այլ փոխեցաւ ՚ի մահուանէ ՚ի կեանս:
25 * Ամէն ամէն ասեմ ձեզ. զի գայ ժամանակ՝ և
արդէն իսկ է. յորժամ մեռեալք լուիցեն ձայնի
26 Որդւոյն Ա՟յ. և որք լուիցենն, կեցցեն: * Զի որ-
պէս Հայր ունի կեանս յանձին իւրում. նոյնպէս
ետ և Որդւոյ ունել կեանս յանձին իւրում:
27 * Եւ՛ իշխանութ՟ի ետ նմա դատաստան առնել. և
28 զի Որդի մարդոյ է: * Ընդ այն զի՞ զարմանայք՝
զի եկեսցէ ժամանակ՝ յորում ամենեքին որք ՚ի
29 գերեզմանս կայցեն, լուիցեն ձայնի նորա: * Եւ՛
եկեսցեն արտաքս. որոց բարիս գործեալ իցէ՝ ՚ի
յարութ՟ի կենաց. և որոց չար արարեալ՝ ՚ի յա-
30 րութ՟ի դատաստանաց: * Ո՛չ կարեմ ես յանձնէ առ-
նել և ոչինչ. այլ որպէս լսեմ, դատեմ. և դա-
տաստան իմ արդար է: զի ո՛չ խնդրեմ զկամս իմ,
այլ զկամս այնորիկ՝ որ առաքեացն զիս:
31 Դկն. * Եթէ ես վկայեմ վասն անձին իմոյ. վկայու-
32 թ՟ին իմ չէ ճշմարիտ: * Այլ է՝ որ վկայէ վա՟ն իմ.
և դուք գիտէք, եթէ ճշմարիտ է վկայութ՟ին՝ զոր
33 վկայեաց վա՟ն իմ: * Դուք առաքեցիք առ Յովհաննէս՝
34 և վկայեաց ճշմարտութ՟են: * Այլ ես ո՛չ եթէ
՚ի մարդկանէ առնում զվկայութ՟ի, այլ զայս ա-
35 սեմ, զի դուք ապրեսջիք: * Նա էր ճրագն, որ

լուցեալ էր, և ծագիւր: և դուք կամեցայք ցնծալ
36 առժամանակ մի 'ի լոյս նր։ *Այլ ես ունիմ զվկայու-
թիւն մեծ ևս քան զյօհաննու։ զգործսն՝ զորս ետ
ցիս Հայր, զի կատարեցից զնս• նոքին իսկ գործքն՝
զորս գործեմ, վկայեն վն իմ, եթէ Հայր առա-
37 քեաց զիս։ *Եւ որ առաքեաց զիս Հայր նա վկայ-
եաց վն իմ։ Դուք՝ ոչ զձայն նր երբէք լուայք•
38 և ոչ զտեսիլ նր տեսիք։ *Եւ ոչ զբան նորա
ունիք 'ի ձեզ բնակեալ։ զի զոր նա առաքեաց՝ դուք
39 նմա ոչ հաւատայք։ *Քննեցէք զգիրս• զի դուք
համարիք նոքօք ունիլ զկեանսն յաւիտենականս։
և նոքին իսկ են, որք վկայեն վն իմ, որովք հա-
40 մարիք ունիլ կեանս։ *Եւ դուք ոչ կամիք գալ
41 առ իս՝ զի զկեանսն ունիցիք։ *Ես փառս 'ի մարդ-
42 կանէ ոչ առնում։ *Այլ գիտեմ զձեզ՝ թէ զսէրն
43 Այ ոչ ունիք յանձինս։ *Ես եկի յանուն Հօր
իմոյ՝ և ոչ ընդունիք զիս։ եթէ այլոք եկեսցէ
յիւր անուն, զնա ընդունիցիք։
44 *Զիա՞րդ կարէք դուք հաւատալ• զի զփառս 'ի
միմեանց առնուք• և զփառս զառ 'ի միոյն Այ ոչ
45 խնդրէք։ *Մի համարիք՝ եթէ ես չարախօս լինի-
ցեմ զձէնջ առ Հօր• գոյ, որ չարախօս կայ զձէնջ.
46 մօսէս, յոր դուքն յուսացեալ էք։ *Զի եթէ
հաւատայիք դուք մօսէսի, հաւատայիք արդեօք և
47 ինձ։ զի նա վն իմ իսկ գրեաց։ *Զի եթէ նորա
գրոյն ոչ հաւատայք• զիա՞րդ իմոյս բանից հա-
ւատայցէք։

Գլ. Զ։

1 Յետ այսորիկ գնաց Յս յայնկոյս ծովուն Գա-
Դ.Գ. լիլեացւոց տիբերեայ։ *Եւ զհետ երթայր
նորա ժողովուրդ բազում։ զի տեսանէին զնշանսն,
3 զորս առնէր 'ի վր հիւանդաց։ *Ել 'ի լեառն Յս,
4 և անդ նստէր աշակերտօքն հանդերձ։ *Եւ էր
5 մերձ զատիկ տօնն հրէից։ *Եբարձ 'ի վեր զաչս
իւր Յս, և ետես՝ զի ժողովուրդ բազում գայր
առ նա• ասէ ցփիլիպպոս։ ուստի գնեսցուք հացս՝

6 զի կերիցեն դոքա ։ * Զայս ասէր փորձելով զնա․
7 այլ ինքն գիտէր զինչ առնելոց էր ։ * Պատասխանի
ետ նմա փիլիպպոս ։ երկերիւր դահեկանի
հաց չէ դոցա բաւական, թէպէտ և իւրաքանչիւրոք
8 սակաւ ինչ առնուցու ։ * Ասէ ցնա մի յաշակերտացն
նորա՝ անդրէաս՝ եղբայր սիմօնի վիմի ։
9 * Է՛ աստ պատանեակ մի, որ ունի հինգ նկանակ
գարեղէն․ և երկուս ձկունս․ այլ այն զի՞նչ է առ
10 այդչափ մարդիկ ։ * Ասէ Յս̅․ բազմեցուցէք զմարդիկդ ։
և էր խոտ յոյժ ՚ի տեղւոջն ։ և բազմեցան
11 մարդիկն թուով իբրև հինգ հազար ։ * Եւ էառ
զհացսն Յս̅՝ և գոհացաւ՝ և բաշխեաց բազմականացն ։
12 նոյնպէս և ՚ի ձկանցն որչափ և կամեցան ։ * Եւ
իբրև յագեցան՝ ասէ ցաշակերտսն իւր ։ Ժողովեցէք
զնշխարեալ կտորսդ, զի մի ինչ կորիցէ ։
13 * Ժողովեցին, և լցին երկոտասան սակառի զկտորսն
՚ի հինգ գարեղէն նկանակէ անտի, որ յաւելաւ
14 ՚ի կերողացն ։ * Իսկ մարդիկքն իբրև տեսին
զնշանսն՝ զոր արար ։ ասէին, սա է ճշմարիտ մարգարէն,
որ գալոց է յաշխարհ ։
15 Դ․Ը․ * Յս̅ իբրև գիտաց եթէ գալոց են յափշտակել
զնա, զի արասցեն զնա թագաւոր, գնաց դարձեալ
16 ՚ի լեառն միայն ։ * Եւ իբրև երեկոյ եղև,
17 իջին աշակերտքն նր̅ ՚ի ծովեզրն ։ * Եւ մտեալ ՚ի
նաւ՝ գային յայնկոյս ծովուն ՚ի կափառնաում ։ և
իբրև նսեմացաւ, և չև ևս եկեալ էր առ նոսա
18 Յս̅ ։ * Եւ ծովն ՚ի սաստիկ հողմոյ շնչելոյ յուզիւր ։
19 * Եւ վարեալ իբրև ասպարէզս քսանևհինգ, կամ
երեսուն՝ տեսանէին զՅս̅՝ զի գնայր ՚ի վր̅ ծովուն,
20 և մերձ էր ՚ի նաւն․ և զարհուրեցան յոյժ ։ * Նա
21 ասէ ցնս̅ ։ ես եմ, մի երկնչիք ։ * Եւ կամէին զնա
ընդունիլ ՚ի նաւն, և վաղվաղակի եհաս նաւն յերկիրն՝
յոր երթային ։
22 Դ․Ե․ * ՚Ի վաղիւ անդր ժողովուրդն որ կայր յայնկոյս
ծովուն, տեսանէր թէ այլ նաւ ոչ դոյր անդ
բաց ՚ի միոյն, յոր մտին աշակերտքն Յի̅ ։ և զի
չէր մտեալ Յս̅ ընդ աշակերտսն իւր ՚ի նաւն ։
23 բայց միայն աշակերտքն նր̅ գնային ։ * Իբրև այլ

*

նաւք գային 'ի տիբերիայ մօտ յայն տեղին՝ ուր
24 զհացն կերին: * Իսկ իբրև ետես ժողովուրդն՝
եթէ Յս̄ չէ անդ՝ և ոչ աշակերտքն նր, առին
նոքա զնաւսն, և եկին 'ի կափառնաում խնդրել
25 զՅս̄: * Եւ իբրև գտին զնա յայնկոյս ծովուն,
26 ասեն ցնա: Ռաբբի, ե՞րբ եկիր այսր: * Պատասխանի ետ նց Յս̄ և ասէ: ամէն ամէն ասեմ ձեզ.
խնդրէք զիս, իբր ոչ եթէ զնշանս ինչ տեսիք,
այլ զի կերիք 'ի հացէ անտի, և յագեցայք:
27 * Եղբա՛յք, գործեցէք մի զկորստական կերակուրն,
այլ զկերակուրն, որ մնայ 'ի կեանսն յաւիտենականս, զոր Որդին մարդոյ տայէ ձեզ: քանզի զնա
28 Հայր կնքեաց Ած: * Ասեն ցնա: զի՞նչ առնիցեմք՝
29 զի զգործսն Այ գործեսցուք: * Պատասխանի ետ
ցնոսա Յս̄, և ասէ. այս է գործն Այ: զի հաւատասջիք յայն, զոր առաքեացն նա:
30 * Ասեն ցնա: զի՞նչ նշանս առնիցես՝ զի տեսցուք,
31 և հաւատասցուք: զինչ գործիցես: * Հարքն մեր
կերին զմանանայն յանապատի անդ՝ ոպ և գրեալ է:
32 զհաց յերկնից ետ նց ուտել: * Ասէ ցնոսա Յս̄:
ամէն ամէն ասեմ ձեզ: եթէ ոչ մովսէս ետ ձեզ
զհացն յերկնից. այլ Հայրն իմ տայ ձեզ զհացն
33 յերկնից զճշմարիտ: * Զի հաց Այ է, որ իջանէ
34 յերկնից՝ և կեանս տայ աշխարհի: * Ասեն ցնա:
35 Տ̄ր, յամ ժամ տուր մեզ զհացն զայն: * Ասէ
ցնա Յս̄: ես եմ հացն կենաց. որ գայ առ իս, ոչ
քաղցիցի: և որ հաւատայ յիս՝ ոչ երբէք ծարա-
36 ւեսցի: * Այլ ասացի ձեզ, թէ տեսանէք զիս,
37 և ոչ հաւատայք: * Զամ, զոր տայ ինձ Հայր,
առ իս եկեսցէ, և որ գայ առ իս, ոչ հանից ար
38 տաքս: * Զի իջի ես յերկնից՝ ոչ զի զկամս իմ
արարից. այլ զկամս այնորիկ՝ որ առաքեացն զիս:
39 Դ. Զ. * Այս են կամք Հօր իմոյ, որ առաքեացն զիս.
զի զամ, զոր ետ ցիս Հայր՝ ոչ կորուսից 'ի նմանէ. այլ յարուցից զնա յաւուրն յետնում:
40 * Այս են կամք Հօր իմոյ. զի ամ, որ տեսանէ
զՈրդի և հաւատայ 'ի նա, ընկալցի զկեանսն յաւիտենականս: և ես յարուցից զնա յաւուրն յետ-

41 նում։ * Տրտնջէին վնմանէ Հրէայքն, զի ասաց
42 թէ ես եմ հացն իջեալ յերկնից։ * Եւ՛ ասէին,
ո՞չ սա է Յս̅ որդին Յովսեփու՝ զորոյ մեք գիտեմք
զհայրն։ Իսկ արդ՝ զիա՞րդ ասէ՝ թէ ես յերկնից
43 իջի։ * Պատասխանի ետ Յս̅, և ասէ ցնոսա։ մի՛
44 քրթմնջէք ընդ միմեանս։ * Ո՛չ ոք կարէ գալ առ
իս, եթէ ոչ Հայրն՝ որ զիս առաքեաց ձգեսցէ
զնա։ և ես յարուցից զնա յաւուրն յետնում։
45 * Գրեալ է 'ի մարգարէս՝ և եղիցին ամենեքեան
ուսեալք յԱյ̅։ ամ̅ որ լսէ 'ի Հօրէ՝ և ուսանի,
46 գայ առ իս։ * Ո՛չ եթէ զՀայր ուրուք տեսեալ
իցէ․ եթէ ոչ՝ որ էն յԱյ̅, նա ետես զՀայր։
47 * Ամէն ամէն ասեմ ձեզ։ զի որ հաւատայ յիս՝
48 ընդունի զկեանսն յաւիտենականս։ * Ես եմ հացն
49 կենաց։ * Հարքն ձեր կերին զմանանայն յանապատին՝
50 և մեռան։ * Այս է հացն, որ յերկնից իջեալ
է։ զի որ ուտիցէ ոք 'ի սմանէ՝ մի մեռանիցի։
51 * Ես եմ հացն կենդանի, որ յերկնից իջեալ։
52 * Եթէ ոք ուտիցէ 'ի հացէ յայսմանէ՝ կեցցէ յաւիտեան։
Եւ՛ հացն, զոր ես տաց՝ մարմին իմ է․
53 զոր ես տաց վս̅ կենաց աշխարհի։ * Մարտնչէին
ընդ միմեանս Հրէայքն՝ և ասէին։ զիա՞րդ կարէ
54 սա տալ մեզ զմարմին իւր յուտել։ * Ասէ ցնոսա
Յս̅։ ամէն ամէն ասեմ ձեզ․ եթէ ոչ կերիջիք
զմարմին Որդւոյ մարդոյ՝ և արբջիք զարիւն նր̅,
55 ո՛չ ունիք կեանս յանձինս։ * Որ ուտէ զմարմին
իմ, և ըմպէ զարիւն իմ, ունի զկեանս յաւիտենականս․
և ես յարուցից զնա յաւուրն յետնում։
56 * Զի մարմին իմ ճշմարիտ կերակուր է․ և արիւն
57 իմ, ճշմարիտ ըմպելի է։ * Որ ուտէ զմարմին իմ,
և ըմպէ զարիւն իմ՝ յիս բնակեսցի, և ես 'ի նմա։
58 * Որպէս առաքեաց զիս կենդանին Հայր, և ես
կենդանի եմ վասն Հօր․ և որ ուտէն զիս, և
59 նա կեցցէ վասն իմ։ * Այս է հացն, որ յերկնից
իջեալ։ ո՛չ որպէս կերին հարքն ձեր զմանանայն
և մեռան։ որ ուտէ զհացս զայս՝ կեցցէ յաւիտեան։
60 * Զայս ասաց 'ի ժողովրդեանն, յուսուցանէրն
61 'ի կափառնաում։ * Եւ՛ բազումք յաշակերտացն

իբրև լուան՝ ասէին. խիստ է բանդ այդ • ո՞վ կարէ
62 լսել դմա ։ * Իբրև գիտաց Յս̅ յանձն իւր՝ եթէ
տրտնջեն վ̅ն այնորիկ աշակերտքն իւր՝ ասէ ցնոսա.
63 ա՞յդ գայթագղեցուցանէ զձեզ ։ * Իսկ արդ եթէ
տեսանիցէք զՈրդի մարդոյ, զի ելանիցէ ուր էր
64 զառաջինն ։ * Հոգին է կենդանարար, մարմինն
ինչ ո՛չ օգնէ • զբանսն զոր ես խօսեցայ ընդ ձեզ՝
65 հոգի է և կեանք ։ * Այլ են ոմանք 'ի ձէնջ՝ որք
ոչ հաւատան ։ քանզի գիտէր Յս̅ 'ի սկզբանէ,
ո՞վ են այնոքիկ՝ որք ոչն հաւատային • և ո՞վ այն է՝
66 որ մատնելոցն է զնա ։ * Եւ ասէր, վ̅ն այնորիկ ասացի
ձեզ՝ թէ ոչոք կարէ գալ առ իս, եթէ ոչ
67 իցէ տուեալ նմա 'ի Հօրէ իմմէ ։ * Յայսմանէ բազումք
յաշակերտացն նր̅ չոգան յետս. և ո՛չևս շրջէին
68 ընդ նմա ։ * Ասէ Յս̅ ցերկոտասանն աշակերտսն,
69 միթէ և դո՛ւք կամիք երթալ * Պատասխանի ետ
նմա սիմօն պետրոս • Տ̅ր, առ ո՞վ երթիցուք. բանս
կենաց յաւիտենականաց ունիս ։
70 * Եւ մեք հաւատացաք՝ և ծանեաք՝ եթէ դու ես
71 Ք̅ս Որդի Ա̅յ ։ * Պատասխանի ետ նց̅ Յս̅ • ո՞չ ես
զձեզ զերկոտասանսդ ընտրեցի, և մի 'ի ձէնջ
72 սատանայ է ։ * Եւ ասէր զսիմօնեան յուդայէ իսկարիօտացւոյ ։ զի նա իսկ մատնելոց էր զնա • և
մի էր յերկոտասանիցն ։

ԳԼ. Է։

1 ԴԻ. Յետ այսորիկ շրջէր Յս̅ 'ի գալիլեա ։ քանզի
ո՛չ կամէր 'ի Հրէաստանի շրջել • զի խնդրէին
2 զնա Հրէայքն սպանանել ։ * Եւ էր մերձ տօնն
3 Հրէից տաղաւարահարաց ։ * Ասեն ցնա եղբարքն
նր̅ ։ գնա աստի, և երթ 'ի Հրէաստան • զի և աշակերտքն
քո տեսցեն զգործսդ քո՝ զոր դու գործես ։
4 * Չի ոչ՛ք է՝ որ 'ի ծածուկ ինչ գործէ՝ և խնդրէ
զինքն համարձակ լինել ։ եթէ զայդ գործես,
5 յայտնեա զանձն քո աշխարհի ։ * Քանզի և եղբարքն
6 իսկ չէին հաւատացեալ 'ի նա ։ * Ասէ ցնս̅
Յս̅ ։ ժամանակ իմ չև է հասեալ • բայց ձեր ժա-

7 մանակ յամ ժամու պատրաստ է : * Ոչ կարէ աշ-
խարհս ատել զձեզ. բայց զիս ատեայ : զի ես
վկայեմ վ՟ս ն՟ր, եթէ գործք իւր չարութ՟ե են :
8 * Դուք երթայք 'ի տօնն յայն. ես ոչ երթամ
'ի տօնն յայն : զի իմ ժամանակ չև է լցեալ :
9 * Զայս իբրև ասաց՝ ինքն մնաց անդէն 'ի գալիլ-
10 եայ : * Իբրև ելին եղբարքն ն՟ր, ապա և ինքն ել
'ի տօնն, ոչ յայտնի. այլ իբրև 'ի ծածուկ :
11 * Եւ հրէայքն խնդրէին զնա 'ի տօնի անդ՝ և ա-
12 սէին. ո՞ւր իցէ նա : * Եւ քրթմնջիւն էր զնմանէ
'ի ժողովուրդսն : կէսքն ասէին՝ թէ բարւոք է :
այլքն ասէին. ոչ, այլ մոլորեցուցանէ զժողովուրդն:
13 * Եւ ոչ ոք համարձակ խօսէր զնմանէ՝ վ՟ս երկիւղին
14 Եկ. հրէից : * Իբրև տօնն ընդմիջեցաւ՝ ել Յ՟ս
15 'ի տաճարն՝ և ուսուցանէր : * Զարմանային հրէ-
այքն և ասէին, զիարդ դպիրս գիտէ սա, զի ու-
16 սեալ բնաւ չի՛ք : * Պատասխանի ետ նոցա Յ՟ս և
ասէ : իմ վարդապետութիւն չէ իմ, այլ այնորիկ՝
17 որ առաքեացն զիս : * Եթէ ոք կամի զկամս ն՟ր
առնել՝ գիտասցէ վ՟ս վարդապետութեանս, յԱ՟յ իցէ
արդեօք, եթէ ես ինչ յանձնէ իմմէ խօսիմ :
18 * Որ յանձնէ իւրմէ խօսի՝ զփառս անձին իւրում
խնդրէ : իսկ որ խնդրէ զփառս այնորիկ, որ առա-
քեացն զնա՝ նա ճշմարիտ է, և անիրաւութ՟ի ոչ
19 գոյ 'ի նմա : * Ո՞չ մովսէս ետ ձեզ զօրէնս. և ոչ ոք
20 'ի ձէնջ առնէ զօրէնսն : * Զի՞ խնդրէք զիս սպա-
նանել : պատասխանի ետ ժողովուրդն և ասէ : դև
21 գոյ 'ի քեզ. ո՞վ խնդրէ զքեզ սպանանել : * Պա-
տասխանի ետ ն՟ց Յ՟ս և ասէ : գործ մի գործեցի.
և ամենեքին զարմացեալ էք :
22 * Վ՟ս այնորիկ մովսէս ետ ձեզ զթլփատութ՟ի :
(զի ոչ եթէ 'ի մովսէսէ էր. այլ 'ի հարց անտի :)
23 և 'ի շաբաթու թլփատէք զմարդ : * Իսկ արդ եթէ
զթլփատութ՟ի առնու մարդ 'ի շաբաթու, զի մի
օրէնքն մովսէսի լուծցին. ընդէ՞ր ցասուցեալ էք՝
զի զողջոյն իսկ մարդ բժշկեցի 'ի շաբաթու :
24 Եր : * Մի՛ ըստ աչս դատէք. այլ ուղիղ դատաստան
25 արարէք : * Ասէին ոմանք յԵրուսաղեմացւոց անտի :

26 ո՞չ նա է սա՝ զոր խնդրէին սպանանել: *Եւ՛ ա-
ւասիկ յայտնապէս խօսի, և չասեն ինչ ընդ դմա։
գուցէ արդեօք և իշխանքն գիտացին թէ սա է
27 Քսն։ *Այլ զսա գիտեմք ուստի է։ իսկ Քսն
28 յորժամ գայցէ՝ ոչ ոք գիտէ ուստի է։ *Աղաղա-
կեաց Յս ՚ի տաճարին. ուսուցանէր, և ասէր։ և
զիս գիտէք, և ուստի եմ գիտէք. և յանձնէ իմ
մէ ոչ եմ եկեալ. այլ է ճշմարիտ՝ որ առաքեացն
29 զիս՝ զոր դուքն ոչ գիտէք։ *Ես գիտեմ զնա.
զի ՚ի նմանէ իսկ եմ. և նա առաքեաց զիս։
30 *Խնդրէին զնա ունել՝ և ել ՚ի ձեռաց նր։ և ոչ ոք
էարկ ՚ի նա ձեռն. զի չև էր հասեալ ժամ նր։
31 *Եւ բազումք ՚ի ժողովրդենէն հաւատային ՚ի նա.
և ասէին. Քսն յորժամ գայցէ՝ միթէ աւելի՞ ինչ
32 նշանս առնիցէ՝ քան զոր սայս առնէ։ *Եւ լուան
փարիսեցիքն զտրտունջ ժողովրդեանն զնմանէ. և
առաքեցին քահանայապետքն և փարիսեցիք սպա-
33 սաւորս՝ զի կալցին զՅս։ *Ասէ Յս. փոքր մի ևս
ժամանակ ընդ ձեզ եմ. և երթամ առ այն՝ որ
34 առաքեացն զիս։ *Խնդրիցէք զիս՝ և ոչ գտանի-
ցէք։ և ուր եսն երթամ, դուք ոչ կարէք գալ։
35 *Ասեն Հրէայքն ընդ միմեանս։ իսկ յո՞ երթայցէ
դա՝ զի մեք ոչ գտանիցեմք զդա։ միթէ ՚ի սփիւռս
հեթանոսաց երթայցէ՝ և ուսուցանիցէ զհեթա-
36 նոսս։ *Զի՞նչ է բանն այն՝ զոր ասաց. խնդրիցէք
զիս՝ և ոչ գտանիցէք. և ուր եսն երթամ, դուք
ոչ կարէք գալ։
37 ԵԳ. *՚Ի վերջնում աւուր մեծի տօնին կայր Յս՝
աղաղակէր և ասէր։ եթէ ոք ծարաւի իցէ՝ եկես-
38 ցէ առ իս, և արբցէ։ *Որ հաւատայ յիս՝ ոպ
ասեն գիրք՝ գետք յորովայնէ նր բղխեսցեն ջրոյ
39 կենդանութե։ *Զայս ասէր վս Հոգւոյն՝ զոր
ընդունելոց էին, որք հաւատային ՚ի նա։ զի չև էր
40 Հոգի տուեալ. քանզի Յս չև էր փառաւորեալ։
*Ոմանք ՚ի ժողովրդենէն իբրև լուեալ զբանս զայս,
41 ասէին։ սա է ճշմարիտ մարգարէն։ *Այլքն ասէին՝
սա է Քսն։ իսկ կէսքն ասէին՝ միթէ ՚ի Գալիլեէ
42 գալոց իցէ Քսն։ *Ո՞չ գիրք ասեն, եթէ ՚ի զաւակէ

դաւթի, և 'ի բեթղեհեմ գեղջէ՝ ուր դաւիթն է՝
43 գալոց է քս̅։ * Եւ եղև հերձուած 'ի ժողովր-
44 դեանն վն̅ նր̅։ * Եւ ոմանք 'ի նոցանէ կամէին ու-
45 նիլ զնա. այլ ոչ ոք մխեաց 'ի նա ձեռս։ * Եւ եկին
անդրէն սպասաւորքն առ քահանայապետսն և փա-
րիսեցիս։ և ասեն նոքա ցնոսա. ընդէ՞ր ոչ ածիք
46 զնա այսր։ * Պատասխանի ետուն սպասաւորքն, և
ասեն. ոչ երբէք այնպէս խօսեցաւ մարդ՝ որպէս այրն
47 այն։ * Պատասխանի ետուն փարիսեցիքն, և ասեն.
միթէ և դուք մոլորեցայք։ * Միթէ յիշխանացն
48 ոք հաւատա՞ց 'ի նա, կամ 'ի փարիսեցւոց։ * Այլ
այն խաժամուժ ամբոխ, որ ոչ գիտէ զօրէնս, և
49 նզովեալք են։ * Ասէ նիկոդեմոս ցնս̅՝ որ եկեալ
էր առ նա գիշերի յառաջագոյն՝ և մի էր 'ի նո-
50 ցանէ։ * Միթէ օրէնքն մեր դատեն զմարդ՝ եթէ
ոչ լսեն ինչ նախ 'ի նմանէ. կամ գիտեն զինչ
51 գործէ։ * Պատասխանի ետուն նմա և ասեն։ մի
թէ և դու ևս գալիլեացի՞ ես։ քննեա՛, և տես։
52 զի մարգարէ 'ի գալիլեէ ոչ յառնէ։ * Եւ գնա-
ցին իւրաքանչիւր ոք 'ի տեղի իւր։

ԳԼ. Ը։

1 ԵԳ. Իսկ Յս̅ գնաց 'ի լեառն ձիթենեաց։ * Եւ ընդ ա-
ռաւօտն դարձեալ եկն 'ի տաճարն. և գայր առ
նա ամ̅ ժողովուրդն, և ուսուցանէր զնոսա։
3 * Ածին դպիրքն և փարիսեցիք զկին մի ըմբռ-
նեալ 'ի շնութեն։ և կացուցեալ զնա առաջի։
4 * Ասեն. կինս այս ըմբռնեալ՝ ինքն յայտնապէս շնա-
5 ցեալ է։ * Եւ յօրէնս մովսէս մեզ պատուիրեաց զայս
պիսիս քարկոծել։ արդ՝ դու զի՞նչ ասես վս̅ դորա։
6 * Զայս ասէին փորձելով զնա՝ զի ունիցին զամբաս
տանութի զնմանէ։ իսկ Յս̅ 'ի խոնարհ նայելով զը
7 րէր մատամբն յերկրի։ * Իսկ իբրև ստիպեցին հար
ցանելով զնա, հայեցեալ 'ի վեր՝ ասէ ցնս̅։ անմեղն
'ի ձէնջ՝ նախ նա՛ ընկեսցէ զքար 'ի վր̅ դորա։
8 * Եւ դարձեալ 'ի խոնարհ նայելով՝ գրէր յերկրի։
9 Եւ լուեալ ելանէին մի ըստ միոջէ՝ սկսեալ յա-

ռաջնոյն մինչև 'ի վերջինսն. և մնաց միայն Յս՟, և
10 կինն կայր առաջի նորա: * Պատասխանի ետ Յս՟
և ասէ ցնա. կին դու՝ ո՞ւր են, ոչ՛ոք զքեզ դատա-
11 պարտեաց: * Եւ՛ ասէ. ոչ Տէր: և ասէ Յս՟. և ոչ
ես դատապարտեմ զքեզ. երթ՝ յայսմհետէ մի մե-
12 ղանչեր: * Դարձեալ խօսեցաւ ընդ նոսա Յս՟, և
ասէ: ես եմ լոյս աշխարհի. որ գայ զկնի իմ, ընդ
խաւար մի գնասցէ. այլ ընկալցի զլոյսն կենաց:
13 * Ասեն ցնա փարիսեցիքն: դու վս՟ անձին քո վկա-
14 յես՝ և վկայութիւն քո չէ ճշմարիտ: * Պատաս-
խանի ետ Յս՟ և ասէ ցնոսա: թէպէտ ես վկայեմ
վասն անձին իմոյ՝ վկայութիւն իմ ճշմարիտ է. զի
գիտեմ ուստի եկի՝ և յո՛ երթամ: բայց դուք ո՛չ
15 գիտէք, ուստի գամ, կամ յո՛ երթամ: * Դուք
ըստ մարմնոյ դատէք. ես ո՛չ դատեմ և ոչ զոք:
16 * Թէպէտ և դատեմ ես զոք՝ դատաստանն իմ
ճշմարիտ է. զի չեմ միայն, այլ ես՝ և որ առաք-
17 եայն զիս Հայր: * Եւ՛ յօրէնսն իսկ ձեր գրեալ է՝
թէ երկուց մարդոյ վկայութիւն ճշմարիտ է:
18 * Ես եմ, որ վկայեմ վասն իմ: և վկայէ վս՟ իմ,
որ առաքեացն զիս Հայր:
19 * Ասէին ցնա: ո՞ւր է Հայրն քո: պատասխանի ետ
Յս՟ և ասէ ցնոսա: ո՛չ զիս գիտէք՝ և ո՛չ զՀայրն
իմ. եթէ զիս գիտէիք, և զՀայրն իմ թերևս
20 գիտէիք: * Զայս բա՛ն խօսեցաւ 'ի տան գանձին՝
յորժամ ուսուցանէր 'ի տաճարի անդ՝ և ոչ՛ոք կա-
լաւ զնա. զի չև ևս հասեալ էր ժամ նորա:
21 ԻԵ. * Ասէ դարձեալ ցնոսա Յս՟: ես երթամ, և
խնդրիցէք զիս. և 'ի մեղս ձեր մեռանիցիք: զի ուր
22 ես՛ երթամ, դուք ո՛չ կարէք գալ: * Ասեն Հրէ-
այքն: միթէ զինքն՛ երթայցէ. զի ասէ, թէ ուր
23 ես՛ երթամ, դուք ոչ կարէք գալ: * Եւ՛ ասէ ցնս՟:
դուք 'ի ներքուստ աստի էք: և ես 'ի վերուստ ան-
տի եմ: դուք յաշխարհէ աստի էք. ես չեմ յայսմ
24 աշխարհէ: * Բայց ասացի ձեզ՝ թէ 'ի մեղս ձեր
մեռանիցիք. զի թէ ո՛չ հաւատայցէք թէ ես եմ,
25 մեռանիցիք 'ի մեղս ձեր: * Ասեն ցնա՝ դու ո՞վ ես:
ասէ ցնոսա Յս՟. նախ զի և խօսիմ իսկ ընդ ձեզ:

26 * Բազում ինչ ունիմ վասն ձեր խօսել և դատել :
այլ որ առաքեայն զիս՝ ճշմարիտ է: և ես զոր լու-
27 ուայ 'ի նմանէ. զայն խօսիմ յաշխարհի: * Եւ ոչ
գիտացին թէ զՀօրէ ասէր ընոսա:
28 * Ասէ ցնս̃ Յս̃. յորժամ բարձրացուցանիցէք
զՈրդի մարդոյ՝ յայնժամ գիտասջիք եթէ ես եմ:
և յանձնէ իմմէ ինչ ոչ առնեմ. այլ որպ̃ ուսոյց
29 զիս Հայրն իմ, զայն խօսիմ: * Եւ որ առաքեայն
զիս, ընդ իս է: ոչ եթող զիս միայն. զի ես
30 զհաճոյս նր̃ առնեմ հանապազ: * Իբրև զայն խօ-
սեցաւ՝ բազումք հաւատացին 'ի նա :
31 ԵԶ. * Եւ ասէր Յս̃ առ հրէայսն հաւատացեալս:
եթէ դուք կայջիք 'ի բանին իմում, ճշմարիտ ա-
32 շակերտք իմ էք: * Եւ ծանիջիք զճշմարտու-
թիւնն. և ճշմարտութիւն ազատեսցէ զձեզ:
33 * Պատասխանի ետուն նմա և ասեն : զաւակ աբրա-
համու եմք. և ոչ ումեք երբէք ծառայեցաք. զի
34 ա՞րդ ասես եթէ ազատք լինիջիք: * Պատասխանի
ետ նց̃ Յս̃: ամէն ամէն ասեմ ձեզ. եթէ ամ̃, որ
35 առնէ զմեղս, ծառայ է մեղաց: * Եւ ծառայն ոչ
յաւիտեան կայ 'ի տան. իսկ որդին յաւիտեան կայ:
36 * Իսկ արդ եթէ Որդին զձեզ ազատեցուսցէ,
37 ճշմարիտ ազատք լինիջիք: * Գիտեմ զի զաւակ
աբրահամու էք: այլ խնդրէք սպանանել զիս.
38 զի բանին իմոյ չի՛ք տեղի 'ի ձեզ: * Ես՝ զոր տեսի
առ Հօր իմում, խօսիմ: և դուք՝ զոր լուեայք 'ի
39 Հօրէն ձերմէ՝ առնէք: * Պատասխանի ետուն նմա
և ասեն: Հայր մեր աբրահամ է: ասէ ցնս̃ Յս̃:
եթէ որդիք աբրահամու էիք՝ զգործսն աբրահա-
40 մու գործէիք: * Այլ այժմ խնդրէք սպանանել
զիս. զայր մի, որ ձեզ զճշմարտութի̃ խօսեցայ՝
զոր լուայ 'ի Հօրէ իմմէ: զայդ աբրահամ ոչ ա-
41 րար: * Դուք առնէք զգործս Հօրն ձերոյ: ասեն
ցնա. մեք 'ի պոռնկութենէ չեմք ծնեալք. մի է Հայր
42 մեր Ած̃: * Ասէ ցնս̃ Յս̃: եթէ Ած̃ էր Հայր ձեր,
սիրէիք արդեօք զիս. զի ես յԱյ̃ ելի և եկի. և
ոչ եթէ յանձնէ ինչ եկի. այլ նա առաքեաց զիս:
43 * Ընդէ՞ր զխօսս իմ ոչ գիտէք դուք. վ̃զի՝ ոչ

44 կարէք լսել զբանն իմ։ * Դուք 'ի հօրէ սատանայէ էք. և զցանկութիւն հօրն ձերոյ կամիք առ-
նել։ զի նա մարդասպան էր 'ի սկզբանէ. և 'ի ճշմար-
տութեան ոչ եկաց. զի ոչ գոյ ճշմարտութիւն 'ի նմա.
յորժամ խօսիցի սուտ՝ յիւրոց անտի խօսի. զի
45 սուտ է, և հայր նորա։ * Իսկ ես, զի զճշմարտու-
46 թիւն խօսիմ, ոչ հաւատայք ինձ։ * Ո՞վ 'ի ձէնջ
յանդիմանեսցէ զիս վս̅ մեղաց. եթէ զճշմարտու-
թիւն ասեմ ձեզ՝ ընդէ՞ր ոչ հաւատայք ինձ։
47 * Որ էն յԱԾ՝ զբանս ԱԾ լսէ։ և դուք վս̅ այնո-
48 րիկ ոչ լսէք, զի չէք յԱԾ։ * Պատասխանի ետուն
հրէայքն, և ասեն ցնա։ ո՞չ բարւոք ասեմք մեք՝
եթէ սամարացի ես դու. և դև գոյ 'ի քեզ։
49 * Պատասխանի ետ Յս̅ և ասէ։ յիս դև ոչ գոյ՝
այլ պատուեմ զՀայր իմ. և դուք անարգէք զիս։
50 * Ես ոչ խնդրեմ զփառս իմ։ է, որ խնդրէն՝ և
51 դատէ։ * Ամէն ամէն ասեմ ձեզ. եթէ ոք զբանն
իմ պահեսցէ՝ զմահ մի՛ տեսցէ 'ի յաւիտեան։
52 * Ասեն ցնա հրէայքն։ արդ գիտացաք եթէ դև
գոյ 'ի քեզ։ աբրահամ մեռաւ՝ և մարգարէքն. և
դու ասես, եթէ ոք զբանն իմ պահեսցէ, մի՛ ճա-
53 շակեսցէ զմահ 'ի յաւիտեան։ * Միթէ դու մեծ
ինչ ո՞ք իցես քան զհայր մեր Աբրահամ, որ մե-
ռաւ՝ և մարգարէքն մեռան։ արդ դու զո՞ առնես
54 զքեզ։ * Պատասխանի ետ Յս̅. եթէ ես փառաւո-
րեմ զանձն իմ, փառքն իմ ոչինչ են. է Հայր՝
որ փառաւորէ զիս. զորմէ դուքն ասէք թէ ԱԾ
55 մեր է։ * Եւ ոչ ճանաչէք զնա. բայց ես գիտեմ
զնա. և թէ ասեմ, թէ ոչ գիտեմ զնա՝ ձեզ
նման սուտ լինիմ. այլ ես գիտեմ զնա. և զբանս
56 նր̅ պահեմ։ * Աբրահամ հայր ձեր ցանկայր տե-
57 սանել զօր իմ. ետես, և ուրախ եղև։ * Ասեն
ցնա հրէայքն. յիսուն ամ չև ևս է քո. և զաբ-
58 րահամ տեսեր։ * Ասէ ցնոսա Յս̅. ամէն ամէն
ասեմ ձեզ. յառաջ քան զլինել աբրահամու եմ
59 ես։ * [illegible] [illegible], զի արկցեն 'ի վերայ նորա. և
Յս̅ [illegible] ետ. և ել գնաց 'ի տաճարէ անտի։

ԳԼ. Թ.

1
ԵՂ· Եւ մինչդեռ անցանէր՝ ետես զայր մի կոյր 'ի ծնէ։
2 * Եւ հարցին զնա աշակերտքն նորա՝ եւ ասեն.
Ռաբբի, ո՞յր վնասէ. սորա՞, թէ հօր եւ մօր իւրոյ,
3 զի կոյր ծնցի։ * Պատասխանի ետ Յս̃. ո՛չ դորա
վնաս է եւ ո՛չ հօր եւ մօր իւրոյ. այլ զի յայտնի
4 լիցին գործքն Այ̃ 'ի դմա։ * Եւ ինձ պարտ է գործել
զգործս այնորիկ՝ որ առաքեացն զիս, մինչ
օր կայ. գայ գիշեր, յորժամ ոչ ոք կարէ գործել։
5 * Մինչդեռ յաշխարհի եմ, լոյս եմ աշխարհի։
6 * Զայս իբրեւ ասաց, եթուք 'ի գետին. եւ արար
կաւ 'ի թքոյն. եւ ծեփեաց զկաւն 'ի վր̃ աչաց կու-
7 րին։ * Եւ ասէ ցնա. երթ, լուա՛ց յաւազանին Սե-
ղովմայ. (որ թարգմանի առաքեալ.) չոգաւ, լուացաւ՝
8 եկն եւ տեսանէր։ * Իսկ դրացիքն՝ եւ որոց տեսեալ
էր զնա յառաջագոյն եթէ մուրացիկ էր, ասէին.
ո՞չ սա էր՝ որ նստէրն եւ մուրանայր։ Կէսքն ասէ-
9 ին. նա է։ * Այլքն ասէին. ո՛չ, այլ նման է նմա. եւ
10 ինքն ասէր՝ թէ ես եմ։ * Ասեն ցնա. իսկ զիա՞րդ
11 բացան աչք քո։ * Նա ետ պատասխանի. այր մի,
որում Յս̃ն ասեն, կաւ արար. եւ ծեփեաց զաչս
իմ. եւ ասէ ցիս. երթ 'ի Սեղովամ, եւ լուա՛. չոգայ՝
լուացայ՝ եւ տեսանեմ։
12 * Ասեն ցնա. ո՞ւր է նա. ասէ ցնս̃՝ ո՛չ գիտեմ։
13 * Ածին առ փարիսեցիսն զնա, որ երբեմն կոյրն էր։
14 * Եւ էր շաբաթ յորժամ զկաւն արար Յս̃. եւ ե-
15 բաց զաչս կուրին։ * Դարձեալ հարցանէին զնա
փարիսեցիքն, թէ զիա՞րդ տեսանես։ Եւ նա ասէ ցն-
նոսա. կաւ եդ 'ի վերայ աչաց իմոց. եւ լուացայ,
16 եւ տեսանեմ։ * Ասեն ոմանք 'ի փարիսեցւոյն. ո՛չ
է այրն այն յԱյ̃. զի զշաբաթ ո՛չ պահէ։ Կէսքն
ասէին. իսկ զիա՞րդ կարէ մարդ մեղաւոր այսպիսի
նշանս առնել։ Եւ էին հերձուածք 'ի մէջ նոցա։
17 * Ասեն դարձեալ ցկոյրն. դու զի՞ ասես վս̃ նորա՝
զի եբաց զաչս քո։ Եւ նա ասէ՝ թէ մարգարէ է։
18 * Եւ ո՛չ հաւատային հրէայքն զնմանէ՝ եթէ կոյր
էր՝ եւ բացաւ. մինչեւ կոչեցին զծնօղս բացելոյն։

19 * Հարցին զնս՟ և ասեն. սա՞ է որդին ձեր, զորմէ
դուքն ասէիք, թէ կոյր ծնաւ. արդ՝ զիա՞րդ տեսանէ:
20 * Պատասխանի ետուն նոցա ծնողքն նր՟ և ասեն.
գիտեմք՝ զի սա է որդին մեր. և զի կոյր ծնաւ:
21 * Բայց զիարդ այժմդ տեսանէ՝ ոչ գիտեմք. կամ
թէ՝ ո՞վ եբաց զաչս դորա՝ մեք ոչ գիտեմք. ցդա՛
իսկ հարցէք. ինքնին ՚ի չափ հասեալ է. ինքն իսկ
22 խօսեսցի վասն իւր: * Զայս ասացին ծնողքն նր՟
զի երկնչէին ՚ի հրէիցն. քանզի ուխտ եդեալ էր
հրէից. եթէ որ խոստովանեսցի զնա Քս՟ ՚ի բաց
23 կացցէ ՚ի ժողովրդենէն: * Վասն այնորիկ ասացին
ծնողքն նորա, եթէ ինքնին ՚ի չափ հասեալ է՝ զնա
24 իսկ հարցէք: * Դարձեալ կրկին անգամ կոչեցին
զայրն, որ կոյրն էր, և ասեն ցնա. տո՛ւր փառս Այ՟.
25 մեք գիտեմք՝ զի այրն այն մեղաւոր է: Ետ նա ասէ.
թէ մեղաւոր իցէ՝ ես ոչ գիտեմ. բայց զայս գիտեմ,
զի կոյր էի՝ և արդ տեսանեմ:
26 * Դարձեալ ասեն ցնա. զի՞նչ արար քեզ. զիա՞րդ
27 եբաց՝ զաչս քո: * Պատասխանի ետ նց՟. այժմ
ասացի ձեզ՝ և ոչ լուայք. զի՞ կամիք միւսանգամ
լսել. միթէ և դուք կամիք աշակերտել նմա:
28 * Նոքա հայհոյեցին զնա՝ և ասէին. դու լիջիր նր՟
29 աշակերտ. մեք մովսէսի աշակերտք եմք: * Մեք գիտեմք՝ զի ընդ մովսէսի խօսեցաւ Ած՟. զսա ոչ գի-
30 տեմք ուստի իցէ: * Պատասխանի ետ այրն, և ասէ
ցնոսա. այդ իսկ են սքանչելիք, զի դուք ոչ գի-
31 տէք՝ ուստի իցէ, և զիմ զաչս եբաց: * Գիտեմք՝
զի Ած՟ մեղաւորաց ոչ լսէ. բայց եթէ Ածապաշտ
ոք իցէ, և զկամս նորա առնիցէ՝ նմա լսէ:
32 * ՚Ի յաւիտենից ոք ոչ լուաւ՝ եթէ եբաց ոք զաչս
33 կուրի ՚ի ծնէ կոյր ծնեցելոյ: * Եթէ ոչ յԱյ՟ էր
34 այրն այն՝ ոչ կարէր առնել ինչ: * Պատասխանի
ետուն և ասեն ցնա. ՚ի մեղս իսկ ծնեալես ամենևին. և դու վարդապետ լինիս մեր: և հանին զնա
35 արտաքս: * Լուաւ Յս՟ եթէ հանին զնա արտաքս. և իբրև եգիտ զնա՝ ասէ ցնա. դու հաւա-
36 տաս յՈրդի Այ՟: * Նա պատասխանի ետ և ասէ.

37 Տէր, ո՞վ է՝ զի հաւատացից 'ի նա ։ * Ասէ ցնա Յս.
և տեսեր զնա, և որ խօսիդ ընդ քեզ՝ նա է ։
38 * Եւ նա ասէ. հաւատամ, Տէր. և երկիրպագ նմա ։
39 Զկ. * Եւ ասէ Յս, 'ի դատաստան եկի յաշխարհս
յայս. զի որք ոչն տեսանեն, տեսցեն. և որք տեսա-
40 նենն, կուրասցին ։ * Լուան ոմանք 'ի փարիսեցւոցն,
որք ընդ նմա էին, և ասեն ցնա. միթէ և մեք կոյրք
41 իցեմք ։ * Ասէ ցնոսա Յս. եթէ կոյրք էիք՝ ոչ էր
ձեր մեղ. բայց արդ ասէք, եթէ տեսանեմք՝ և
մեղքն ձեր 'ի ձեզ հաստատեալ են ։

ԳԼ. Ժ ։

1 Ամէն ամէն ասեմ ձեզ. որ ոչ մտանէ ընդ դուռն
'ի գաւիթ ոչխարաց, այլ ընդ այլ ելանէ, նա
2 գող է, և աւազակ ։ * Իսկ որ մտանէ ընդ դուռն,
3 հովիւ է ոչխարաց ։ * Նմա դռնապանն բանայ. և
ոչխարքն ձայնի նորա լսեն. և զիւր զոչխարսն կոչէ
4 յանուանէ, և հանէ զնոսա ։ * Եւ յորժամ զիւրսն
զամենայն հանիցէ՝ առաջի նոցա երթայ. և ոչխարքն
զհետ նր երթան, զի ճանաչեն զձայն նորա ։
5 Զօտարի զհետ ո՛չ երթիցեն, այլ փախիցեն 'ի
6 նմանէ. զի ո՛չ ճանաչեն զձայն օտարաց ։ * Զայս
առակ ասաց նց Յս ։ և նոքա ո՛չ գիտէին, եթէ
7 զինչ էր՝ որ խօսէրն ընդ նոսա ։ * Դարձեալ ասէ
ցնս Յս ։ ամէն ամէն ասեմ ձեզ. ես եմ դուռն
8 ոչխարաց ։ * Ամենեքեան՝ որք յառաջ քան զիս ե-
կին՝ գողք էին, և աւազակք. այլ ո՛չ լուան նոցա
9 ոչխարքն ։ * Ես եմ դուռն. ընդ իս եթէ ոք մտա-
նիցէ՝ կեցցէ. մտցէ, և ելցէ, և ճարակ գտցէ ։
10 * Գող ո՛չ գայ՝ եթէ ոչ զի գողասցի, և սպանցէ,
և կորուսցէ. ես եկի զի զկեանս ունիցին. և առա-
ւել ևս ունիցին ։
11 Զր. * Ես եմ հովիւն քաջ. հովիւ քաջ զանձն իւր
12 դնէ 'ի վերայ ոչխարաց ։ * Իսկ վարձկանն, որ ոչ
է հովիւ. որոյ ոչ իւր են ոչխարքն, իբրև տեսա-
նէ զգայլն զի գայ՝ թողու զոչխարսն և փախչի. և
13 գայլն յափշտակէ զնոսա և ցրուէ ։ * Քանզի վարձ-

կան է՝ և չէ փոյթ նմա վասն ոչխարացն ։
14 * Ես եմ հովիւն քաջ. և ճանաչեմ զիմսն, և
15 ճանաչիմ յիմոցն: * Որպէս գիտէ զիս Հայր, գիտեմ
և ես զՀայր. և զանձն իմ դնեմ 'ի վերայ
16 ոչխարաց: * Նաև՝ այլևս ոչխարք են իմ, որք ոչ
են յայսմ գաւթէ. և զայն ևս պարտ է ինձ ածել
այսր. և ձայնի իմում լուիցեն. և եղիցին մի հօտ՝
17 և մի հովիւ: * Վասն այնորիկ սիրէ զիս Հայր իմ.
զի ես դնեմ զանձն իմ, զի միւսանգամ առից զնա:
18 * Ոչ ոք հանէ զնա յինէն. այլ ես դնեմ զնա անձամբ
իմով. իշխանութիւն ունիմ դնել զնա. և իշխանութիւն
ունիմ միւսանգամ առնուլ զնա. զայս
19 պատուէր առի 'ի Հօրէ իմմէ: * Դարձեալ հերձուած
լինէր 'ի մէջ հրէից վասն բանիցս այսոցիկ:
20 * Եւ ասէին բազումք 'ի նոցանէ. դև գոյ 'ի նմա՝
21 և մոլեգնի. զի՞ լսէք նմա: * Այլքն ասէին.
այսոքիկ բանք ոչ են դիւահարի. միթէ դև կարէ՞
զաչս կուրի բանալ:
22 ԶԳ. * Եղեն յայնժամ նաւակատիքն յԵմ, և
23 ձմեռն էր: * Եւ շրջէր Յս 'ի տաճարին, 'ի սրահին
24 Սողոմոնի: * Շուրջ եղեն զնովաւ հրէայքն
և ասեն. մինչև յե՞րբ թափես զոգիս մեր. եթէ
25 դու ես Քսն՝ ասա մեզ համարձակ: * Պատասխանի
ետ նոցա Յս և ասէ. ասացի ձեզ՝ և ոչ հաւատայք
ինձ: զգործսն, զորս ես գործեմ յանուն
26 Հօր իմոյ՝ նոքին իսկ վկայեն վս իմ: * Այլ դուք
ոչ հաւատայք. զի չէք յոչխարաց անտի իմոց:
27 * Ոչխարք իմ ձայնի իմում լսեն. և ես ճանաչեմ
28 զնոսա. և զկնի իմ գան: * Եւ ես տամ նոցա
զկեանսն յաւիտենականս. և մի կորիցեն 'ի յաւիտեան.
և մի՛ոք յափշտակեսցէ զնոսա 'ի ձեռաց
29 իմոց: * Հայր իմ, որ ետ ինձ զնոսա՝ մեծ է քան
զամենայն. և ոչ՛ոք կարէ յափշտակել 'ի ձեռաց
30 Հօր իմոյ: * Ես և Հայր իմ մի եմք:
31 * Վէմս առին հրէայքն, զի քարկոծ արասցեն զնա:
32 * Պատասխանի ետ նց Յս. բազում գործս բարիս
ցուցի ձեզ 'ի Հօրէ իմմէ՝ վասն որո՞յ գործոյ 'ի նոցանէ
քարկոծ առնէք զիս:

33 *Պատասխանի ետուն նմա հրէայքն. վս̄ բարւոյ
գործոյ ոչ առնեմք զքեզ քարկոծ, այլ վասն հայ
հոյութե̄. եւ զի դու մարդ ես՝ եւ զանձն քո Ած
34 առնես։ *Պատասխանի ետ նոցա Յս̄. ոչ յօրէնս
ձեր գրեալ է, ես ասացի թէ աստուածք իցէք։
35 *Իսկ եթէ զնո̄ աստուածս ասէ՝ առ որս բանն Այ
36 եղեւ. եւ չէ մարթ եղծանիլ գրոյն։ *Իսկ զոր
Հայր սրբեաց՝ եւ առաքեաց յաշխարհ. դուք ասէք՝
թէ հայհոյես. զի ասացի՝ թէ Որդի Այ եմ։
37 *Եթէ ոչ գործեմ զգործս Հօր իմոյ՝ մի հաւա-
38 տայք ինձ։ *Ապա թէ գործեմ, թէ եւ ինձ ոչ
հաւատայք, սակայն գործոյն հաւատացէք. զի
գիտասջիք, եւ ծանիջիք՝ եթէ Հայր յիս է, եւ ես
39 ՚ի Հայր։ *Դարձեալ խնդրէին զնա ունիլ՝ եւ ել
40 ՚ի ձեռաց նոցա։ *Եւ գնաց միւսանգամ յայնկոյս
յորդանանու՝ ՚ի տեղին, ուր էր Յօհաննէս զա-
41 ռաջինն՝ եւ մկրտէր. եւ անդ լինէր։ *Եկին բա-
զումք առ նա՝ եւ ասեն. զի յօհաննէս նշան ինչ
42 ոչ արար։ *Բայց զա̄մ, զոր ասաց յօհաննէս վս̄
նորա՝ ճշմարիտ էր. եւ բազումք հաւատային ՚ի
նա անդ։

ԳԼ. ԺԱ։

1 Եւ էր ոմն հիւանդ ղազարոս ՚ի բեթանիայ, ՚ի
ԶԳ. գեղջէ մարիամայ, եւ մարթայի քեռ նորա։
2 *(Այս այն մարիամն էր՝ որ էօծ զՏր̄ն իւղով եւ
ջնջեաց զոտս նորա հերաւն իւրով. որոյ եղբայրն
3 ղազարոս հիւանդ էր։) *Առաքեցին առ նա քորքն
նորա՝ եւ ասեն. Տր̄, ահաւասիկ՝ զոր դուն սիրէիր՝
4 հիւանդացեալ է։ *Իբրեւ լուաւ Յս̄, ասէ. այն
հիւանդութի̄ չէ ՚ի մահ. այլ վասն փառացն Այ՝
5 զի փառաւոր լիցի Որդի Այ այնուիկ։ *Եւ սիրէր
Յս̄ զմարիամ, եւ զմարթայ զքոյր նր̄՝ եւ զղազար։
6 *Իբրեւ լուաւ, թէ հիւանդացեալ է՝ զտեղի կալաւ
անդէն ուր էրն, աւուրս երկուս։
7 *Ապա յետ այնորիկ ասէ ցնս̄. եկայք երթիցուք
8 միւսանգամ ՚ի հրէաստան։ *Ասեն ցնա աշակերտքն.

Ռաբբի՝ այժմ ևս խնդրէին զքեզ Հրեայքն քարկոծանել.
9 և դարձեալ երթաս անդրէն : * Պատասխանի
ետ Յս. ոչ երկոտասան ժամ է աւուր.
եթէ ոք գնայ 'ի տուընջեան, ոչ գայթագղի. զի
10 զլոյս աշխարհիս այսորիկ տեսանէ : * Ապա թէ ոք
գնայ 'ի գիշերի՝ գայթագղի, զի լոյս ոչ գոյ ընդ
11 նմա : * Զայս խօսեաց, յետ այսորիկ ասէ.
Ղազարոս բարեկամ մեր ննջեաց. այլ երթամ,
12 զի զարթուցից զնա : * Ասեն ցնա աշակերտքն նորա.
13 Տր եթէ ննջեաց՝ ապա ապրի : * Այլ Յս
վասն մահու նորա ասէր. նոցա այսպէս թուեցաւ՝
14 թէ վասն ննջելոյ քնոյն ասէր : * Յայնժամ ասէ
15 ցնս Յս յայտնապէս. Ղազարոս մեռաւ : * Եւ ես ուրախ
եմ վասն ձեր. զի դուք հաւատասջիք ինձ,
զի ես չէի անդ. բայց արդ՝ եկայք երթիցուք
16 առ նա : * Ասէ թովմաս, անուանեալն երկուորեակ՝
ցաշակերտակիցսն, ո՛ն, եկայք և մեք՝ զի ընդ նմա
17 մեռցուք : * Եկն Յս և եգիտ զնա չորեքօրեայ 'ի գե
18 րեզմանի : * (Եւ էր բեթանիա մերձ յԵէմ, իբրև
19 ասպարիսօք հնգետասան :) * Բազումք 'ի Հրէից
անտի, եկեալ էին առ մարթայ և մարիամ, զի
մխիթարեսցեն զնոսա վասն եղբօրն :
20 * Մարթա իբրև լուաւ, թէ Յս գայ, ընդառաջ
գնաց նորա. բայց մարիամ նստէր անդէն 'ի տան:
21 * Ասէ մարթա ցՅս. Տր, եթէ աստ լեալ էիր,
22 եղբայրն իմ չէր մեռեալ : * Այլ և արդ գիտեմ,
եթէ զորինչ խնդրեսցես յԱյ՝ տայէ քեզ Աճ :
23 * Ասէ ցնա Յս. յարիցէ եղբայրն քո.
24 * Ասէ ցնա մարթա. գիտեմ, զի յարիցէ 'ի յարութեան
25 յաւուրն յետնում: * Ասէ ցնա Յս. ես իսկ
եմ յարութիւն և կեանք. որ հաւատայ յիս, թէ
26 պէտ և մեռանի՝ կեցցէ : * Եւ ամ, որ կենդանի է՝
և հաւատայ յիս, մի մեռցի 'ի յաւիտեան : Հաւատա՞ս
27 այսմիկ : * Ասէ ցնա. այո՛ Տր. ես հաւատացի,
եթէ դու ես Քս Որդի Այ, որ յաշխարհ
28 գալոց էիր : * Եւ զայս իբրև ասաց՝ գնաց, և կոչեաց
զմարիամ զքոյր իւր լռելեայն՝ և ասէ. վարդապետն
29 եկեալ է, և կոչէ զքեզ : * Նա իբրև լու-

ուաւ՝ յարեաւ վաղվաղակի, եւ եկն առ նա:
30 * Չեւ եւս էր եկեալ Յս̅ ’ի գեօղն. այլ էր անդէն
’ի տեղւոջն՝ ուր ընդառաջ եղեւ նմա Մարթա:
31 * Իսկ Հրէայքն, որք էին ընդ նմա ’ի տան անդ՝ եւ
մխիթարէին զնա, իբրեւ տեսին զՄարիամ թէ յարեաւ
վաղվաղակի, եւ գնաց, գնային եւ նոքա զհետ
նր̅. համարէին թէ ’ի գերեզմանն երթայ՝ զի լացցէ
32 անդ: * Իսկ Մարիամ իբրեւ եկն, ուր էրն Յս̅, եւ
ետես զնա՝ անկաւ առ ոտս նորա եւ ասէ. Տ̅ր̅,
եթէ աստ էիր դիպեալ՝ ոչ էր մեռեալ եղբայրն
33 իմ: * Յս̅ իբրեւ ետես զնա զի լայր, եւ որք ընդ
նմա էին Հրհայքն, լային՝ խռովեցաւ յոգի իւր
34 իբրեւ զայրացեալ: * Եւ ասէ, ո՞ւր եդիք զնա: ասեն
35 ցնա՝ Տ̅ր̅, եկ, եւ տես: * Եւ արտասուեաց Յս̅:
36 * Ասէին Հրէայքն. տեսէք, որչափ սիրէր զնա:
37 * Կէսքն ’ի նոցանէ ասէին. ո՞չ կարէր սա, որ
եբաց զաչս կուրին, առնել զի եւ սա մի՛ մեռցի:
38 * Յս̅ դարձեալ զայրացեալ ընդ միտս իւր, գայ
’ի գերեզմանն. եւ էր այր մի, եւ վէմ մի եդեալ
39 ’ի վերայ նորա: * Եւ ասէ Յս̅ ’ի բաց արարէք ըզվէմդ: ասէ ցնա Մարթա, քոյր մեռելոյն: Տ̅ր̅, արդ
40 հոտեալ իցէ, քանզի չորեքօրեայ է: * Ասէ ցնա
Յս̅. ո՞չ ասացի քեզ՝ եթէ հաւատասցես, տեսցես
41 զփառս Ա̅յ̅: * Եւ իբրեւ ’ի վեր առին զվէմն. Յս̅
ամբարձ զաչս իւր ’ի վեր, եւ ասէ. Հայր, գոհա-
42 նամ զքէն, զի լուար ինձ: * Եւ ես գիտէի՝ զի
յամենայն ժամ լսես ինձ. այլ վս̅ ժողովրդեանս,
որք շուրջ կան՝ առնեմ, զի հաւատասցեն թէ դու
43 առաքեցեր զիս: * Զայս իբրեւ ասաց՝ ’ի ձայն մեծ
աղաղակեաց՝ եւ ասէ. ղազարէ, արի, եկ արտաքս:
44 * Եւ ել մեռեալն ոտիւք կապելովք. եւ ձեռօքն երիզապնդօք. եւ երեսօքն վարշամակապատօք. եւ
ասէ ցնոսա Յս̅. լուծէք զդա, եւ թողէք երթալ:
45 * Բազումք ’ի Հրէիցն՝ որք եկեալ էին առ մարիամնս, իբրեւ տեսին՝ զոր արարն՝ հաւատացին ’ի
46 նա: * Եւ ոմանք ’ի նոցանէ գնային առ փարիսեցիսն,
եւ պատմեցին նոցա՝ զոր արարն Յս̅:
47 Զ. Զ. * Ժողովեցան քահանայապետքն եւ փարի-

*

սեցիք յատեան, եւ ասեն. զի՞նչ արասցուք՝ զի այրս
48 այս բազում նշանս առնէ: *Եթէ թողումք զնա
այնպէս, ամենեքին հաւատան 'ի նա. եւ գայցեն
հռոմք՝ եւ բառնայցեն զազգս մեր՝ եւ զտեղի:
49 *Մի ոմն 'ի նոցանէ անուն կայիափա, որ քահա-
նայապետ էր տարւոյն այնորիկ, ասէ ցնոսա. դուք
50 ոչինչ գիտէք: *Եւ ոչ բնաւ խորհիք իսկ, թէ
լաւ է մեզ՝ զի այր մի մեռանիցի 'ի վերայ ժողովր-
51 դեանս, եւ մի ամ ազգս կորիցէ: *Զայս ոչ
յանձնէ ինչ ասաց. այլ զի քահանայապետն էր
տարւոյն այնորիկ, մարգարէացաւ՝ եթէ մեռանե-
52 լոց էր Յս 'ի վր ազգին: *Եւ ոչ 'ի վերայ ազգին
միայն, այլ զի եւ զորդիսն Այ զցրուեալսն ժողո-
53 վեսցէ 'ի մի: *Ապա յայնմ օրէ խորհուրդ արա-
54 րին, զի սպանցեն զնա: *Եւ Յս այնուհետեւ ոչ
եթէ համարձակ շրջէր 'ի մէջ հրէիցն. այլ գնաց
անտի յերկիր մի, որ մերձ էր յանապատ. 'ի քա-
ղաք մի, որում անուն էր եփրայիմ, եւ անդ լինէր
աշակերտօքն հանդերձ:
55 ԶԵ. *Եւ էր մերձ զատիկն հրէից. եւ բազումք
ելին յերեմ 'ի գաւառէ անտի յառաջ քան
56 զզատիկն, զի սրբեսցեն զանձինս իւրեանց: *Խնդրէ-
ին զՅս, եւ ասէին ընդ միմեանս՝ մինչ կային 'ի
տաճարին. զիա՞րդ թուի ձեզ՝ եթէ ոչ գայցէ 'ի
տօն այսր: պատուէր տուեալ էր քահանայապե-
տիցն եւ փարիսեցւոց, զի թէ ոք գիտասցէ թէ
ուր է՝ դուշակեսցեն զնմանէ, զի կալցեն զնա:

ԳԼ. ԺԲ:

1 Իսկ Յս վեց աւուրբք յառաջ քան զզատիկն եկն
'ի բեթանիա, ուր էր ղազար մեռեալն, զոր
2 յարոյց 'ի մեռելոց: *Եւ արարին անդ նմա ընթ-
րիս. եւ 'ի սպասու կայր մարթա. եւ ղազար մի էր
3 'ի բազմելոց ընդ նմա: *Իսկ մարեմայ առեալ լիտր
մի իւղոյ նարդեան ազնուի մեծագնոյ, եօծ զոտսն
Յի. եւ հերովք իւրովք մաքրէր զոտս նր: եւ տունն
4 լի եղեւ 'ի հոտոյ իւղոյն: *Ասէ միոյն յաշակերտաց

նովին յուդա իսկարիովտացի, որ մատնելոյն էր զնա
5 * Ընդէ՞ր ոչ իւղդ այդ վաճառեցաւ երեք հարիւր
6 դենարի, եւ տուաւ աղքատաց: * Զայս ասաց՝ ոչ
զի աղքատաց ինչ փոյթ էր նմա. այլ զի գող էր՝
եւ զարկղն ինքն ունէր: եւ որինչ անկանէրն, նա
7 կրէր: * Ասէ Յս̅ թո՛յլ տուք դմա, զի յօրն պա-
8 տանաց իմոց պահեսցէ զայդ: * Զաղքատս յամ
ժամ ընդ ձեզ ունիք. զիս ոչ հանապազ ընդ
9 ձեզ ունիք: * Իբրեւ գիտաց ժողովուրդ բազում
'ի հրէից թէ անդ է, եկին, ոչ միայն վս̅ Յի̅,
այլ զի եւ զՂազար տեսցեն. զոր յարոյց 'ի մեռե-
10 լոց: * Խորհուրդ առարին քահանայապետքն՝ զի եւ
11 զՂազար սպանցեն: * Վանզի բազումք 'ի հրէից
երթային՝ եւ հաւատային 'ի Յս̅:
12 ԵԿ. * 'Ի վաղիւն անդր ժողովուրդ բազում, որ ե-
կեալ էր 'ի տօնն, իբրեւ լուան թէ գայ Յս̅ յեր̅մ:
13 * Առին ոստս արմաւենեաց՝ եւ ելին ընդառաջ նր̅.
աղաղակէին եւ ասէին: ովսաննայ. օրհնեալ որ
14 գայ յանուն Տն̅. թագաւորդ իղի: * Եւ գտեալ
Յս̅ էշ մի, նստաւ 'ի վր̅ նր̅. ոպ̅ եւ գրեալ է:
15 * Մի երկնչիր դուստր սիոնի: ահաւասիկ թագա-
ւոր քո գայ նստեալ 'ի վր̅ յաւանակի իշոյ:
16 * Եւ զայն ինչ ոչ գիտացին աշակերտքն նր̅ զա-
ռաջինն. այլ յորժամ փառաւորեցաւ Յս̅՝ յայնժամ
յիշեցին եթէ այն էր՝ որ գրեալն էր վս̅ նր̅. եւ
17 զայն արարին նմա: * Եւ ժողովուրդն վկայէր՝ որ
էր ընդ նմա, թէ զՂազար կոչեաց եւեթ 'ի գերեզ-
18 մանէն. եւ յարոյց զնա 'ի մեռելոց: * Եւ վս̅ այնո-
րիկ ընդառաջ եղեւ նմա ժողովուրդն. զի լուան
19 եթէ զայն նշանս արարեալ էր նր̅: * Իսկ փարի-
սեցիքն ասէին ընդ միմեանս: տեսանէք՝ զի ոչինչ
օգտիք. ահաւասիկ աշխարհ ամ̅ զկնի նր̅ գնայ:
20 * Էին անդ ոմանք եւ հեթանոսք յելելոց անտի,
21 զի երկիրպագանիցեն 'ի տօնին: * Նոքա մատեան
առ փիլիպպոս՝ որ 'ի բեթսայիդայ գալիլեացւոյն
էր, աղաչէին զնա եւ ասէին: Տր̅, կամիմք զՅս̅
22 տեսանել: * Գայ փիլիպպոս եւ ասէ ցանդրէաս:
23 անդրէաս եւ փիլիպպոս ասեն ցՅս̅: * Եւ Յս̅ պա-

տասխանի ետ նց̅ և ասէ: Եհաս ժամ, զի փառա-
24 ԻԲ. ւորեսցի Որդի մարդոյ: * Ամէն ամէն ասեմ
ձեզ. եթէ ոչ հատն ցորենոյ անկեալ յերկիր մե-
25 ռանիցի: * Ինքն միայն կայ: ապա եթէ մեռանիցի՝
բազում արդիւնս առնէ: որ սիրէ զանձն իւր՝ ա-
ձակէ զնա: և որ ատեայ զանձն իւր յաշխարհիս
յայսմիկ՝ ՚ի կեանսն յաւիտենականս պահեսցէ զնա:
26 * Եթէ ոք զիս պաշտեսցէ, զկնի իմ եկեսցէ: և
ուր եսն եմ, անդ և պաշտօնեայն իմ եղիցի: եթէ
ոք զիս պաշտիցէ, պատուեսցէ զնա Հայրն իմ:
27 ԻԳ. * Բայց այժմ անձն իմ խռովեալ է: և զի՞նչ
ասացից. եթէ Հայր՝ ապրեցո՛ զիս ՚ի ժամէ աստի
յայսմանէ: այլ վասն այնորիկ եկի ես ՚ի ժամս յայս:
28 * Հա՛յր, փառաւորեա՛ զանուն քո: եկն բարբառ
յերկնից. և փառաւոր արարի. և դարձեալ փա-
29 ռաւոր արարից: * Եւ ժողովուրդն, որ կայր, և
լսէր՝ ասէին որոտումն լինել. կէսքն ասէին, հրեշ-
30 տակ խօսեցաւ ընդ նմա: * Պատասխանի ետ Յս̅
և ասէ: ո՛չ վս̅ իմ ինչ եկն բարբառս այս. այլ
31 վս̅ ձեր: * Այժմիկ դատաստան է աշխարհիս այ-
սորիկ. այժմիկ իշխան աշխարհիս այսորիկ ընկեսցի
32 արտաքս: * Եւ ես յորժամ բարձրացայց յերկրէ,
33 զամենեսին ձգեցից առ իս: (* Զայս ասէր, նշա-
նակեալ՝ թէ որով մահու մեռանելոց իցէ:)
34 * Պատասխանի ետ նմա ժողովուրդն: մեք լուա՛ք
յօրէնացն՝ եթէ Քս̅ն յաւիտեան կայ. և դու զի՞-
արդ ասես՝ եթէ պարտ է բարձրանալ Որդւոյ
35 մարդոյ. ո՞վ է այն որդին մարդոյ: * Ասէ ցնս̅ Յս̅.
փոքր միւս ևս ժամանակ լոյս ընդ ձեզ է: գնացէք՝
մինչդեռ զլոյսն ունիք, զի մի՛ խաւար ձեզ հասցէ.
զի որ գնայ ՚ի խաւարի, ո՛չ գիտէ յո՛ երթայ:
36 * Մինչդեռ զլոյսն ընդ ձեզ ունիք՝ հաւատացէ՛ք
՚ի լոյսն, զի որդիք լուսոյ եղիջիք: զայս խօսեցաւ
37 Յս̅. և չոգաւ՝ թաքեաւ ՚ի նոցանէ: * Եւ այնչափ
նշանս արարեալ էր առաջի նց̅. և նոքա ո՛չ հա-
38 ւատային ՚ի նա: * Զի լցցի բանն Եսայեայ մարգա-
րէի՝ զոր ասաց: Տ՛ր, ո՛ հաւատաց ՚ի լուր մեր. և
39 բազուկ Տն̅ ո՞ւմ յայտնեցաւ: * Վ̅ս այնորիկ ոչ

կարէին հաւատալ ՚ի նա· զի միւսանգամ ասէ Ե-
40 սայի։ * Թէ կուրացոյց զաչս նց՟· և թմբրեցոյց
զսիրտս նոցա· զի մի տեսցեն աչօք· և իմասցին
41 սրտիւք· և դարձցին, և բժշկեցից զնս՟։ * Զայս
ասաց Եսայի, յորժամ ետես զփառս նր՟· և խօ-
42 սեցաւ վս՟ նր՟։ * Բայց սակայն և յիշխանաց անտի
բազումք հաւատացին ՚ի նա· այլ վս՟ փարիսեցւոյն
ոչ յայտնէին· զի մի ՚ի ժողովրդենէն ելանիցեն։
43 * Քանզի սիրեցին զփառս մարդկան առաւել քան
44 ԻԳ· զփառսն Այ՟։ * Եւ Յս՟ աղաղակէր, և ասէր։
որ հաւատայ յիս՝ ոչ հաւատայ յիս, այլ յայն՝
45 որ առաքեացն զիս։ * Եւ որ տեսանէ զիս, զնյն՟
տեսանէ՝ որ առաքեացն զիս։
46 * Ես լոյս՝ յաշխարհ եկի· զի ամ՟, որ հաւատայ
47 յիս, ՚ի խաւարի մի մնասցէ։ * Եւ եթէ ոք լուիցէ
բանից իմոց, և ոչ պահեսցէ, ես ոչ դատեմ
զնա· քանզի ոչ եկի, թէ դատեցից զաշխարհ·
48 այլ զի փրկեցից զաշխարհ։ * Որ անարգէ զիս, և
ոչ ընդունի զբանս իմ· գոյ՝ որ դատէ զնա։ բանն,
զոր ես խօսեցայ, նա դատէ զնա յաւուրն յետնում։
49 * Զի ես յանձնէ իմմէ ոչ խօսեցայ· այլ որ ա-
ռաքեացն զիս Հայր, նա ետ ինձ պատուէր՝ զինչ
50 ասացից՝ և զինչ խօսեցայց։ * Եւ գիտեմ, թէ
պատուէրն այն կեանք են յաւիտենականք։ արդ՝
զոր եսն խօսիմ, ոպ՟ ասաց ինձ Հայրն՝ այնպէս
խօսիմ։

ԳԼ. ԺԳ.

1 Յառաջագոյն քան զտօնն զատկի, գիտաց Յս՟,
ԻԵ· Թէ հասեալ է ժամ նորա՝ զի փոխեսցի յաշ-
խարհէ աստի առ Հայր։ սիրեաց զիւրսն, որք յաշ-
խարհի աստ էին· իսպառ սիրեաց զնոսա։
2 Եւ ՚ի լինել ընթրեացն, սատանայի իսկ արկեալ
էր ՚ի սիրտ, զի մատնեսցէ զնա Յուդա սիմոնի իս-
3 կարիովտացւոյ։ * Գիտաց Յս՟՝ զի զամ՟ ինչ ետ Հայր
՚ի ձեռս նորա։ Եւ թէ յԱյ՟ ել՝ և առ Այ՟ եր-
4 թայ։ * Յառնէ յընթրեաց անտի, և դնէ զհան-

5 դերձսն։ և առեալ զղենջակ մի՝ սփածաւ։ *Եւ
ապա առեալ զջուր՝ եարկ 'ի կոնք· և սկսաւ լուա-
նալ զոտս աշակերտացն· և սրբէր ղենջակաւն՝ զոր
6 սփածեալն էր։ *Գայ առ սիմոն պետրոս· և նա
ասէ ցնա, Տէր, դու զիմ զոտս լուանաս։
7 *Պատասխանի ետ նմա Յս և ասէ· զոր ինչ ես
գործեմ, դու այժմ ոչ գիտես· բայց յապայ գի-
8 տասջիր։ *Ասէ ցնա պետրոս։ ոչ լուասցես զոտս
իմ յաւիտեան։ պատասխանի ետ նմա Յս· եթէ
9 ոչ լուացից զքեզ՝ ոչ ունիս ընդ իս մասն։ *Ասէ
ցնա սիմոն պետրոս։ Տէր, մի՛ միայն զոտս իմ, այլ
10 և զձեռս՝ և զգլուխ։ *Ասէ ցնա Յս· լուացելոյն
չէ ինչ պիտոյ՝ այլ զի զոտսն լուանայցէ։ քանզի
ամենեւին սբ է։ և դուք սբ էք, այլ ոչ ամենեքին։
11 *Զի գիտէր զայն՝ որ մատնելոյն էր զնա· վասն
այնորիկ ասաց՝ եթէ ոչ ամենեքին սբ էք։
12 *Եւ յորժամ լուաց զոտս նոցա, էառ զհանդերձ-
սըն իւր՝ և դարձեալ բազմեցաւ, և ասէ ցնոսա,
13 գիտէ՞ք զինչ արարի ձեզ։ *Դուք կոչէք զիս
վարդապետ և Տր· և բարւոք ասէք· քանզի եմ
իսկ։
14 *Իսկ արդ եթէ ես լուացի զոտս ձեր, Տրս և վար-
դապետս, և դուք պարտիք զմիմեանց զոտս լուա-
15 նալ։ *Զի օրինակ մի ետու ես ձեզ, զի ոպ ես
ձեզ արարի, և դուք առնիցէք·
16 ԻԶ· *Ամէն ամէն ասեմ ձեզ։ ոչ է ծառայ մեծ
քան զՏր իւր։ և ոչ առաքեալ մեծ քան զայն՝
17 որ առաքեացն զնա։ *Եթէ զայս գիտէք, երա-
18 նելի եւս էք՝ եթէ առնիցէք զայս *Ոչ վս ամե-
նեցուն ձեր ասեմ· զի ես գիտեմ, զորս ընտրեցի։
այլ զի լցցի գիրն, եթէ որ ուտէր ընդ իս հաց՝ ա-
19 րար ինձ խաբէութի։ *Յայսմ հետէ իսկ ասեմ
ձեզ մինչև եղեալ։ Զի յորժամ լինիցի՝ հաւա-
20 տասջիք՝ եթէ ես եմ։ *Ամէն ամէն ասեմ ձեզ։ որ
ընդունի, զորոք ես առաքեցից՝ զիս ընդունի· և
որ զիս ընդունի, ընդունի զայն, որ առաքեացն զիս։
21 *Զայս իբրև ասաց Յս, խռովեցաւ յոգի իւր՝
վկայեաց և ասէ։ ամէն ամէն ասեմ ձեզ· զի մի ոմն 'ի

22 ձէնջ մատնելոց է զիս։ * Հայէին ընդ միմեանս
աշակերտքն տարակուսեալք, թէ զումմէ ասիցէ։
23 * Եւ էր միոյն յաշակերտացն բազմեալ առ Յի՟
24 զոր սիրէրն Յս՟։ * Ակնարկէ նմա սիմօն պետրոս՝
25 հարցանել՝ ո՞վ իցէ, վասն որոյ ասէն։ * Եւ նա անկեալ
զլանջօքն Յի՟, ասէ ցնա։ Տէ՛ր, ո՞վ է։ պատասխանի
26 ետ Յս՟ և ասէ։ * Այն է՝ որում ես թացից
զպատառն, և տաց։ և թացեալ զպատառն տայ
27 յուդայի իսկարիովտացւոյ։ * Եւ յետ պատառոյն՝ ապա
եմուտ 'ի նա սատանայ։ և ասէ ցնա Յս՟, արդ
զորինչ առնելոց ես՝ արա վաղվաղակի։
28 * Եւ զայս ոչո՛ք իմացաւ 'ի բազմականացն անտի, թէ
29 առ ինչ ասաց ցնա։ * Զի ոմանք համարէին, թէ՝
զի զարկղն ունէր յուդա, ասաց նմա Յս՟, գնեա՛
զինչ՝ որ պիտոյ է մեզ 'ի տօնիս։ և կամ՝ թէ աղքատաց
30 ինչ տայցէ։ * Իսկ ն՟ր առեալ զպատառն՝
ել արտաքս վաղվաղակի, և էր գիշեր։
31 ԵԻ․ * Եւ իբրև ել, ասէ Յս՟։ այժմ փառաւորեցաւ
Որդի մարդոյ։ և Ած՟ փառաւորեցաւ 'ի նմա։
32 * Զի եթէ Ած՟ փառաւորեցաւ 'ի նմա, և Ած՟ փառաւորեսցէ
զնա յանձն իւր։ և վաղվաղակի փառաւորեսցէ
33 զնա։ * Որդեակք իմ՝ փոքր ինչ ժամանակ
ընդ ձեզ եմ։ խնդրիցէք զիս․ և որպէս ասացի
ցհրէայսն, թէ ուր եսն երթամ, դուք ոչ
34 կարէք գալ․ և արդ ձեզ ասեմ։ * Պատուիրան
նոր տամ ձեզ․ զի սիրիցէք զմիմեանս, որպէս սիրեցի
ես զձեզ․ զի և դուք սիրեսջիք զմիմեանս։
35 * Յայսմ գիտասցեն ամենեքեան, եթէ իմ աշակերտք
36 էք, եթէ սիրիցէք զմիմեանս։ * Ասէ ցնա
սիմօն պետրոս։ Տ՟ր՝ յո՞ւր երթաս։ պատասխանի
ետ Յս՟։ ուր եսն երթամ, դու ոչ կարես այժմ
գալ զկնի իմ, բայց յապայ եկեսցես զկնի իմ։
37 * Ասէ ցնա պետրոս։ Տ՟ր, ընդէ՞ր ոչ կարիցեմ գալ
այժմ զկնի քո․ արդէն զանձն իմ իսկ եդից 'ի
38 վերայ քո։ * Պատասխանի ետ Յս՟։ զա՞նձն քո դիցես
'ի վերայ իմ։ ամէն ամէն ասեմ քեզ․ չև իցէ
հաւու խօսեալ, մինչ դու երիցս ուրասցիս զիս։

Գլ. ԺԴ։

1 Մի խռովեսցին սիրտք ձեր։ այլ հաւատայք
2 յԱծ̅, և յիս հաւատայք։ * 'Ի տան Հօր իմոյ
օթեվանք բազում են։ ապա թէ ոչ՝ ասացեալ էր
իմ ձեզ. թէ երթամ, և պատրաստեմ ձեզ տեղի։
3 * Եւ եթէ երթամ, և պատրաստեմ ձեզ տեղի,
դարձեալ գամ, և առնում զձեզ առ իս։ զի ուր
4 եսն իցեմ, և դուք ընդ իս իցէք։ * Եւ ուր ես
երթամն գիտիցէք. և զճանապարհն գիտիցէք։
5 * Ասէ թովմաս. Տ՛ր̅՝ ոչ գիտեմք, յո՞ երթաս. և
6 զիա՞րդ զճանապարհն կարասցուք գիտել։ * Ասէ
ցնա Յս̅։ Ես եմ ճանապարհ, և ճշմարտութիւն, և
կեանք։ ոչ ո՛ք գայ առ Հայր՝ եթէ ոչ ինեւ։
7 * Եթէ զիս գիտէիք՝ ապա և զՀայրն իմ գիտէիք։ և
8 այսուհետև գիտասջիք զնա. (և տեսէք զնա։) * Ասէ
ցնա փիլիպպոս. Տ՛ր̅, ցո՛յց մեզ զՀայր՝ և շատ է մեզ։
9 * Ասէ ցնա Յս̅. այսչափ ժամանակս ը̅ ձեզ եմ,
և ո՞չ ծանեար զիս փիլիպպէ։ որ ետեսն զիս,
ետես զՀայրն։ և դու զիա՞րդ ասես՝ եթէ ցոյց մեզ
10 զՀայր։ * Ո՞չ հաւատաս, եթէ ես 'ի Հայր, և
Հայր յիս է։ զբանս, զորս ես խօսիմ ընդ ձեզ, ոչ
եթէ յանձնէ ինչ խօսիմ. այլ Հայրն, որ յիս
11 բնակեալ է՝ նա գործէ զգործսն։ * Հաւատա՛յք
12 ինձ, եթէ ես 'ի Հայր, և Հայր յիս է։ * Ապա թէ
ոչ՝ գոնէ վս̅ գործոյն հաւատայք ինձ։ ամէն
ամէն ասեմ ձեզ. թէ որ հաւատայն յիս, զգործսն՝
զորս ես գործեմ, և նա գործեսցէ։ և մեծամեծս
ևս քան զնոյնս գործեսցէ։ զի ես առ Հայր երթամ։
13 * Եւ զոր ինչ խնդրիցէք յանուն իմ, արարից
զայն։ զի փառաւորեսցի Հայր յՈրդի։
14 * Եթէ զոր ինչ խնդրիցէք յինէն՝ արարից զայն։
15 * Եթէ սիրէք զիս՝ զպատուիրանս իմ պահեսջիք։
16 * Եւ ես աղաչեցից զՀայր. և այլ մխիթարիչ տացէ
ձեզ։ զի ընդ ձեզ բնակեսցի 'ի յաւիտեան։
17 * Զհոգին ճշմարտութեան. զոր աշխարհս ոչ կարէ
ընդունել։ զի ոչ տեսանէ զնա. և ոչ ճանաչէ
զնա։ բայց դուք ճանաչէք զնա. զի առ ձեզ

18 բնակեսցի՝ և ընդ ձեզ եղիցի ։ * Ո՛չ թողից զձեզ
19 որբս ։ գամ առ ձեզ ։ * Փոքր մի ևս, և աշխարհս
ոչ ևս տեսանէ զիս ։ բայց դուք տեսանիցէք զիս․
զի ես կենդանի եմ․ և դուք կենդանի լինելոց էք ։
20 * Յայնմ աւուր գիտասջիք դուք՝ զի ես ՚ի Հօր
21 իմում, և դուք յիս, և ես ՚ի ձեզ ։ * Որ ունի զպատուիրանս իմ, և պահէ զն̄ս, նա է՝ որ սիրէ զիս ։
և որ սիրէն զիս, սիրեսցի ՚ի Հօրէ իմմէ ։ և ես
22 սիրեցից զնա․ և երևեցուցից նմա զիս ։ * Ասէ
ցնա Յուդա ոչ Իսկարիովտացին ։ Տ̄ր, զի՞ եղև՝ զի
մեզ յայտնելոց ես զքեզ՝ և ոչ աշխարհի ։
23 * Պատասխանի ետ Յ̄ս և ասէ ցնա ։ Եթէ ոք
սիրէ զիս՝ զբանն իմ պահեսցէ․ և Հայր իմ սիրեսցէ զնա ։ և առ նա եկեսցուք՝ և օթևանս առ
24 նմա արասցուք ։ * Եւ որ ոչն սիրէ զիս՝ զբանն իմ
ոչ պահէ ։ և բանն իմ, զոր լսէք՝ ոչ է իմ․ այլ
25 Հօրն, որ առաքեաց զիս ։ * Զայս խօսեցայ ընդ
26 ձեզ՝ մինչ առ ձեզս եմ ։ * Իսկ մխիթարիչն Հոգին ս̄բ՝ զոր առաքեսցէ Հայր յանուն իմ, նա ուսուսցէ ձեզ զա̄մ․ և յիշեցուսցէ զա̄մ, զորինչ
27 ասացի ձեզ ։ * Զխաղաղութի̄ թողում ձեզ ։ զխաղաղութի̄ զիմ տամ ձեզ ։ ոչ որ̄պ աշխարհս տայ՝
տամ ես ձեզ ։ մի՛ խռովեսցին սիրտք ձեր․ և մի՛
28 զանգիտեսցեն ։ * Լուա՛յք, զի ասացի ես ձեզ՝ թէ
երթամ, և գամ առ ձեզ ։ եթէ սիրէիք զիս՝ ապա
ուրախ լեալ էր ձեր՝ թէ ես առ Հայր երթամ․
29 զի Հայր իմ մեծ է քան զիս ։ * Եւ այժմ ասացի
ձեզ մինչև եղեալ․ զի յորժամ լինիցի՝ հաւատասջիք ։ * Ոչ ևս այլ շատ խօսեցայց ընդ ձեզ ։ գայ
30 իշխան աշխարհիս այսորիկ՝ և յիս ինչ ոչ գտանէ ։
31 * Այլ զի ծանիցէ աշխարհ, եթէ սիրեմ զՀայր ։
և որ̄պ պատուիրեաց ինձ Հայր՝ այնպէս առնեմ ։ Օ՛ն
արիք, գնասցուք աստի ։

ԳԼ․ ԺԵ ։

1 Ես եմ որթն ճշմարիտ․ և Հայր իմ մշակ է ։
2 * Ամենայն ուռ՝ որ յիս է, և ոչ բերէ զպտուղ՝

կտրէ զնա. և զամ որ բերէ զպտուղ, սրբէ զնա,
3 զի առաւել ևս պտղաբեր լիցի: * Դուք այժմ
իսկ սուրբ էք վասն բանին՝ զոր խօսեցայ ընդ ձեզ:
4 * Կացէք յիս՝ և ես 'ի ձեզ. որպէս ուռն ոչ կարէ
զպտուղ բերել յանձնէ իւրմէ, եթէ ոչ իցէ
հաստատեալ յորթն, նոյնպէս և դուք՝ եթէ ոչ
5 յիս հաստատեալ իցէք: * Ես եմ որթ՝ և դուք
ուռ. որ հաստատեալ է յիս՝ և ես 'ի նմա, նա բերէ
զպտուղ յոյժ. զի առանց իմ ոչինչ կարէք առնել:
6 * Եթէ ոք ոչ է հաստատեալ յիս, ել նա արտաքս
իբրև զուռն՝ և ցամաքեցաւ. և ժողովեն
7 զնա՝ և 'ի հուր արկանեն՝ և այրի: * Եթէ կայցէք
յիս, և բանք իմ 'ի ձեզ կայցեն՝ զոր ինչ կամիցիք,
8 խնդրեսջիք՝ և լինիցի ձեզ: * Յայսմիկ փառաւորեցաւ
Հայր իմ, զի պտուղ յոյժ բերիցէք. և եղիջիք
9 իմ աշակերտք: * Որպէս սիրեաց զիս Հայր,
և ես սիրեցի զձեզ. հաստատուն կացէք 'ի սէր իմ:
10 * Եթէ պահիցէք զպատուիրանս իմ, կայջիք 'ի
սէր իմ. որպէս և ես զպատուիրանս Հօր իմոյ պահեցի,
11 և կամ 'ի սէր նորա: * Զայս խօսեցայ ընդ
ձեզ. զի ուրախութիւն իմ 'ի ձեզ իցէ. և ձեր
12 ուրախութիւն լցեալ եղիցի: * Այս է պատուէր
իմ, զի սիրեսջիք զմիմեանս, որպէս և ես զձեզ
13 սիրեցի: * Մեծ ևս քան զայս սէր ոչք ունի եթէ
զանձն իւր դիցէ 'ի վերայ բարեկամաց իւրոց:
14 * Դուք բարեկամք էք իմ. եթէ առնիցէք՝ զոր
15 եսն պատուիրեմ ձեզ: * Ոչ ևս կոչեմ զձեզ ծառայս,
զի ծառայն ոչ գիտէ զինչ գործէ տէրն
նորա: այլ զձեզ կոչեցի բարեկամս, զի զամենայն,
զոր լուայ 'ի Հօրէ իմմէ ծանուցի ձեզ:
16 * Ոչ եթէ դուք ընտրեցիք զիս. այլ ես ընտրեցի
զձեզ, և եդի զձեզ. զի դուք երթայցէք՝ և
պտղաբերք լինիցիք. և պտուղն ձեր կայցէ. և զոր
ինչ խնդրիցէք 'ի Հօրէ իմմէ յանուն իմ, տայցէ
17 ձեզ: * Զայս պատուիրեմ, զի սիրեսջիք զմիմեանս:
18 * Եթէ աշխարհ զձեզ ատեայ. գիտասջիք զի նախ
19 զիս ատեաց: * Եթէ յաշխարհէ աստի էիք՝ աշխարհ
զիւրն սիրէր արդեօք. բայց զի չէք յաշ-

խարհէ, այլ ես ընտրեցի զձեզ յաշխարհէ, վ̃
20 այնորիկ ատեայ զձեզ աշխարհ։ * Յիշեցէք զբանն՝
զոր ասացի ձեզ. եթէ ոչ է ծառայ մեծ քան զտէր
իւր։ Եթէ զիս հալածեցին. ապա և զձեզ հա-
լածեսցեն. եթէ զբանն իմ պահեցին, ապա և
21 զձերն պահեսցեն։ * Այլ զնոյնս արասցեն ընդ ձեզ
վասն անուան իմոյ. զի ոչ գիտեն զայն՝ որ առա-
22 քեացն զիս։ * Իսկ եթէ չէր եկեալ և խօսեցեալ
ընդ նոսա, մեղ ինչ ոչ գոյր նոցա. բայց արդ
23 չիք պատճառ վասն մեղաց իւրեանց։ * Որ զիս ա-
24 տեայ՝ և զհայրն իմ ատեայ։ * Եթէ զգործսն
չէր գործեալ ՚ի նոսա՝ զոր ոչ այլ ոք գործեաց,
մեղ ինչ ոչ գոյր նոցա. բայց արդ տեսին, և ա-
25 տեցին. և զիս և զհայր իմ։ * Այլ զի լցցի բանն,
որ յօրէնս նոցա գրեալ է. թէ ատեցին զիս տա-
26 րապարտուց։ * Բայց յորժամ եկեսցէ մխիթարիչն՝
զոր ես առաքեցից ձեզ ՚ի հօրէ՝ զհոգին ճշմարտու-
թեան որ ՚ի հօրէ ելանէ, նա վկայեսցէ վ̃ իմ։
27 * Եւ դուք վկայէք՝ զի ՚ի սկզբանէ ընդ իս էք։

ԳԼ. ԺԶ։

1 Զայս խօսեցայ ընդ ձեզ՝ զի մի՛ գայթագղեսջիք։
2 * ՚Ի ժողովրդոց իւրեանց հանիցեն զձեզ. այլ
եկեսցէ ժամանակ՝ զի ա՛մ որ սպանանիցէ զձեզ՝
3 համարիցի պաշտօն մատուցանել Այ։ * Եւ զայս
արասցեն ընդ ձեզ. քանզի ոչ ծանեան զհայր՝ և
4 ոչ զիս։ * Այլ և զայս խօսեցայ ընդ ձեզ՝ զի յորժամ
եկեսցէ ժամանակ՝ յիշիցէք՝ թէ ես ասացի ձեզ։
5 * Զայս ՚ի սկզբանէ ոչ ասացի ձեզ. քանզի ընդ
ձեզ էի. բայց արդ երթամ ես առ առաքիչն իմ։ և
ոչ ոք ՚ի ձէնջ հարցանիցէ զիս. թէ յո՞ երթաս։
6 * Այլ զի զայս խօսեցայ ընդ ձեզ. տրտմութ̃ի ելից
7 զսիրտս ձեր։ * Այլ ես զճշմարիտն ասեմ ձեզ.
լաւ է ձեզ՝ եթէ ես երթամ. զի եթէ ես ոչ եր-
թայց՝ մխիթարիչն ոչ եկեսցէ առ ձեզ. ապա ե-
թէ երթամ, առաքեցից զնա առ ձեզ։
8 * Եւ նա եկեալ յանդիմանեսցէ զաշխարհ՝ վասն

մեղաց՝ և վն̄ արդարութե̄՝ և վն̄ դատաստանի:
9 *Վասն մեղաց՝ զի ոչ հաւատան յիս:
10 *Վասն արդարութե̄՝ զի առ Հայր իմ երթամ.
11 և ոչ ևս տեսանէք զիս: *Վասն դատաստանի՝
զի իշխան աշխարհիս այսորիկ դատապարտեալ է:
12 *Եւս բազում ինչ ունիմ ասել ձեզ՝ այլ ոչ կարէք
13 հանդուրժիլ այժմիկ: *Յորժամ եկեսցէ նա Հոգին ճշմարտութե̄՝ առաջնորդեսցէ ձեզ ամ̄ ճըշմարտութի̄. զի ոչ եթէ յանձնէ ինչ խօսիցի.
այլ զոր լսիցէ՝ խօսիցի. և զգալոցն պատմեսցէ ձեզ:
14 *Նա զիս փառաւորեսցէ, զի յիմմէ անտի առնուցու
և պատմեսցէ ձեզ:
15 *Զամ̄ ինչ զոր ունի Հայր՝ իմ է: վն̄ այնորիկ
ասացի ձեզ. թէ յիմմէ անտի առնուցու՝ և պատ-
16 մեսցէ ձեզ: *Փոքր մի, և ոչ ևս տեսանէք զիս,
և ապա սակաւիկ մի, և տեսանիցէք զիս. և զի ես
17 երթամ առ Հայր | *Ասէին ոմանք յաշակերտաց
անտի ցմիմեանս. զի՞նչ է այս՝ զոր ասէ ցմեզ. թէ
փոքր մի, և ոչ տեսանէք զիս. և դարձեալ սակաւիկ մի, և տեսանիցէք զիս. և թէ ես առ Հայր
18 երթամ: *Եւ ասէին, զի՞նչ իցէ այն փոքր միւս
19 ևսն. չգիտեմք զի՞նչ խօսի *Գիտաց Յս̄ եթէ
կամէին ցնա հարցանել. և ասէ ցնոսա. վն̄ այդորիկ խնդրէք ընդ միմեանս՝ զի ասացի թէ փոքր
մի, և ոչ տեսանէք զիս, և դարձեալ սակաւիկ
20 միւսևս, և տեսանիցէք զիս: *Ամէն ամէն ասեմ
ձեզ. զի լայջիք, և ողբասջիք դուք՝ և աշխարհ
խնդասցէ. դուք տրտմեսջիք՝ այլ տրտմութի̄ն ձեր
21 յուրախութի̄ եղիցի: *Կին յորժամ ծնանիցի՝ տրտմութի̄ է նմա, զի հասեալ է ժամ նորա. այլ յորժամ ծնցի զմանուկն, ոչ ևս յիշէ զնեղութի̄ն վն̄
22 խնդութե̄ն. զի ծնաւ մարդ յաշխարհ *Եւ դուք
այժմ տրտմութի̄ ունիք. այլ դարձեալ տեսից ըզձեզ՝ և ուրախ լիցին սիրտք ձեր. և զուրախութի̄ն
23 ձեր՝ ոչո՛ք հանիցէ ՚ի ձէնջ: *Եւ յայնմ աւուր
զիս ինչ ոչ հարցանիցէք. ամէն ամէն ասեմ ձեզ՝
զի զոր ինչ խնդրիցէք ՚ի Հօրէ իմմէ յանուն իմ,
24 տացէ ձեզ: *Մինչև ցայժմ ոչինչ խնդրեցիք

յանուն իմ. խնդրեցէք, եւ առնուջիք. զի ուրա-
25 խութիւն ձեր լցեալ իցէ։ * Զայս առակօք խօ-
սեցայ ընդ ձեզ. եկեսցէ ժամանակ՝ յորժամ ոչ եւս
առակօք խօսեցայց ընդ ձեզ. այլ յայտնապէս զՀօրէ
26 պատմեցից ձեզ։ * Յայնմ աւուր խնդրեսջիք յա-
նուն իմ. եւ ոչ ասեմ ձեզ՝ եթէ ես աղաչեցից
27 զՀայր վասն ձեր։ * Զի ինքն իսկ Հայր սիրէ
զձեզ՝ զի դուք զիս սիրեցէք. եւ հաւատացէք, թէ
28 ես յԱյ ելի։ * Ելի ի Հօրէ՝ եւ եկի յաշխարհ.
դարձեալ թողում զաշխարհ, եւ երթամ առ Հայր։
29 * Ասեն ցնա աշակերտքն՝ ահա արդ յայտնութեամբ
30 խօսիս, եւ առակ եւ ոչ մի ինչ ասես։ * Այժմ
գիտեմք՝ եթէ գիտես զամենայն. եւ ոչ ինչ պիտոյ է
եթէ ոք հարցանիցէ զքեզ. յայսմիկ հաւատամք՝
31 եթէ յԱյ ելեր։ * Պատասխանի ետ նոցա Յս եւ
32 ասէ. այժմ հաւատայք։ * Ահա եկեսցէ ժամ, եւ
եկեալ իսկ է. զի ցրուեսջիք յիւրաքանչիւր տե-
ղիս. եւ զիս միայն թողուցուք. եւ չեմ միայն, զի
33 Հայր ընդ իս է։ * Զայս խօսեցայ ընդ ձեզ. զի
ընդ իս զխաղաղութիւն ունիցիք. յաշխարհի աստ
նեղութիւն ունիցիք. այլ քաջալերեցարուք. զի ես
յաղթեցի աշխարհի։

ԳԼ. ԺԷ։

1 Զայս իբրեւ խօսեցաւ Յս, համբարձ զաչս իւր
յերկինս եւ ասէ. Հայր՝ հասեալ է ժամ՝ փա-
ռաւորեա զՈրդի քո. զի եւ Որդի քո փառաւորեսցէ
2 զքեզ։ * Որպէս ետուր նմա իշխանութիւն ամ մար-
մնոյ. զի ամ, զոր ետուր նմա, տացէ զկեանսն
3 յաւիտենականս։ * Այս են յաւիտենական կեանք.
զի ճանաչիցեն զքեզ միայն ճշմարիտ Ած. եւ զոր
4 առաքեցեր զՅս Քս։ * Ես զքեզ փառաւորեցի
յերկրի. զգործն կատարեցի, զոր ետուր ցիս՝ զի
5 արարից։ * Եւ այժմ փառաւորեա զիս Հայր, առ
ի քէն փառօքն՝ զոր ունէի յառաջ քան զլինել
6 աշխարհի առ ի քէն։ * Յայտնեցի զանուն քո
մարդկան, զորս ետուր ինձ յաշխարհէ. քո էին, եւ
ինձ ետուր զնոսա. եւ զբանն քո պահեցին։

7 *Արդ գիտացին, եթէ զամենայն ինչ՝ զոր ետուր
8 ինձ, առ 'ի քէն են։ *Զի զբանն՝ զոր ետուր ինձ՝
ետու նոցա. և նոքա ընկալան, և ծանեան ճշմարտութ̅ի՝
թէ առ 'ի քէն ելի. և հաւատացին եթէ
9 դու առաքեցեր զիս։ *Արդ՝ ես վասն նոցա աղաչեմ,
և ոչ վասն աշխարհի աղաչեմ. այլ վասն նոցա՝
10 զորս ետուրն ինձ՝ զի քո են։ *Եւ որ ինչ իմ է՝
ամենայն քո է. և որ ինչ քո է՝ այն իմ է. և փառաւորեալ
11 եմ 'ի ն̅ս։ *Եւ ես ոչ ևս եմ յաշխարհի՝
և նոքա յաշխարհի են. և ես առ քեզ գամ։ Հայր
ս̅բ, պահեա զն̅ս յանուն քո, որով ետուրն ինձ.
զի եղիցին մի, որպէս և մեք մի եմք։
12 Մինչ էի յաշխարհի ընդ նոսա, ես պահէի զն̅ս
յանուն քո՝ որով ետուրն ինձ՝ և պահեցի. և ոչ ոք
'ի նոցանէ կորեաւ՝ բայց որդին կորստեան. զի
13 գիրն լցցի։ *Բայց արդ առ քեզ գամ. և զայս
խօսիմ յաշխարհի. զի ունիցին զուրախութ̅ի իմ
14 լիով յանձինս իւրեանց։ *Ես ետու նոցա զբանն
քո. և աշխարհ ատեաց զնոսա. զի չեն յաշխարհէ,
15 որպէս և ես չեմ յաշխարհէ։ *Ոչ զայս աղաչեմ,
զի բարձցես զն̅ս յաշխարհէ. այլ զի պահեսցես
16 զն̅ս 'ի չարէ։ *Յաշխարհէ սոքա չեն,
որպէս և ես չեմ յաշխարհէ։
17 *Սուրբ արա զնոսա ճշմարտութ̅բ քով. զի քո
18 բանդ ճշմարտութ̅ի է։ *Որպէս զիս առաքեցեր
յաշխարհ. և ես առաքեցի զնոսա յաշխարհ։
19 *Եւ 'ի վերայ նոցա ես սուրբ առնեմ զանձն իմ.
զի եղիցին և նոքա սրբեալք ճշմարտութ̅բ։
20 *Այլ ոչ վասն նոցա միայն աղաչեմ, այլև վասն
ամենայն հաւատացելոց բանիւն նոցա յիս։
21 *Զի ամենեքին մի իցեն. որպէս դու Հայր յիս՝
և ես 'ի քեզ. զի և նոքա 'ի մեզ իցեն. զի և աշխարհ
հաւատասցէ եթէ դու առաքեցեր զիս։
22 *Եւ ես զփառսն, զորս ետուր ինձ, ետու նոցա.
23 զի իցեն մի, որպէս և մեք մի եմք։ *Ես 'ի նոսա՝
և դու յիս. զի եղիցին կատարեալք 'ի մի. և գիտասցէ
աշխարհ, եթէ դու առաքեցեր զիս. և սիրեցի
զնոսա՝ որպէս դու զիս սիրեցեր։

24 * Հայր՝ զորս ետուրն ինձ, կամիմ, զի ուր եմն եմ,
և նոքա իցեն ընդ իս. զի տեսանիցեն զփառսն իմ.
զորս ետուրն ցիս. զի սիրեցեր զիս յառաջ քան
25 զլինել աշխարհի: * Հայր արդար, և աշխարհ զքեզ
ոչ ծանեաւ. այլ ես զքեզ ծանեայ՝ և նոքա ծանեան.
26 եթէ դու առաքեցեր զիս: * Եւ ծանուցի
զանուն քո. և ծանուցից. զի սէրն, զոր սիրեցեր
զիս՝ 'ի նոսա իցէ՝ և ես 'ի նոսա:

Գլ. ԺԸ.

1 Զայս իբրև ասաց Յս՟, ել աշակերտօքն հանդերձ
յայնկոյս ձորոյն կեդրոնի. ուր էր պարտէզ,
յոր եմուտ ինքն և աշակերտքն իւր:
2 * Գիտէր և յուդա, որ զնա մատնելոց էր՝ զտեղին:
զի բազում անգամ ժողովեալ էր անդր Յի՟ աշակերտօքն
3 հանդերձ: * Եւ յուդայի առեալ ընդ
իւր զգունդն, և 'ի քահանայապետից և 'ի փարիսեցւոց
սպասաւորս, գայ անդր ջահիւք՝ և լապտերօք՝
4 և զինուք: * Իսկ Յս՟ իբրև ետես զայն ամ՟
եկեալ 'ի վր՟ նր՟, ել և ասէ ցնս՟. զո՞ խնդրէք:
5 * Պատասխանի ետուն նմա. զՅս՟ Նազօրեցի: ասէ
ցնոսա Յս՟. ես եմ: կայր ընդ նոսա և յուդա՝ որ
6 մատնէրն զնա: * Իբրև ասաց՝ թէ ես եմ, յետս յետս
7 չոգան՝ և զարկան զգետնի: * Դարձեալ եհարց
զնս՟: զո՞ խնդրէք: նոքա ասեն, զՅս՟ Նազօրեցի:
8 * Պատասխանի ետ նոցա Յս՟. ասացի ձեզ թէ ես
եմ: արդ՝ եթէ զիս խնդրէք՝ թո՛յլ տուք դոցա
9 երթալ: * Զի լցցի բանն՝ զոր ասաց. թէ զոր՝
ետուր ցիս՝ ոչ կորուսից 'ի նոցանէ՝ և ոչ զոք:
10 * Իսկ սիմօն պետրոս քանզի ունէր զսուր, ձգեաց
զնա. և եհար զքահանայապետին ծառայ՝ և 'ի բաց
հատ զունկն նր՟ զաջոյ: և էր անուն ծառային մաղքոս:
11 * Ասէ Յս՟ ցպետրոս. արկ զսուրդ անդրէն
'ի պատեանս իւր: զբաժակն, զոր ետ ինձ Հայր՝ ո՞չ
12 ըմպիցեմ զնա: * Իսկ գունդն, և հազարապետն,
և սպասաւորքն հրէից կալան զՅս՟ և կապեցին:
13 * Եւ ածին զնա նախ առ աննա՝ որ էր աներ կայիա

փայի. որ քահանայապետն էր տարւոյն այնորիկ ։
14 * Այս այն Կայիափայ էր՝ որ խրատն ետ Հրէից,
եթէ լաւ է առն միում մեռանել ՚ի վերայ ժո-
15 ղովրդեանն ։ * Եւ երթայր զհետ Յի՟ Սիմոն Պետ-
րոս՝ և միւս աշակերտն ։ և աշակերտն այն՝ քանզի
ծանօթ էր քահանայապետին՝ եմուտ ընդ Յի՟ ՚ի
16 գաւիթ քահանայապետին ։ * Եւ Պետրոս կայր առ
դրանն արտաքոյ ։ Ել միւս աշակերտն՝ որ էր ծա-
նօթ քահանայապետին՝ և ասաց դռնապանին՝ և
17 եմոյծ ՚ի ներքս զՊետրոս ։ * Ասէ աղջիկն՝ որ դռնա-
պանն էր, ցՊետրոս ։ միթէ և դու յաշակերտաց
18 առնն այնորիկ իցես ։ և նա ասէ՝ ոչ եմ ։ * Կային
անդ ծառայքն և սպասաւորք խարոյկ արկեալ՝
քանզի ցուրտ էր՝ և ջեռնուին ։ կայր ընդ նոսա
19 և Պետրոս՝ և ջեռնոյր ։ * Եւ քահանայապետն
եհարց զՅս՟ վս՟ աշակերտացն՝ և վս՟ վարդապետու-
20 թե՟ նր՟ ։ * Պատասխանի ետ նմա Յս՟ ։ ես յայտնա-
պէս խօսեցայ յաշխարհի. ես յամ ժամ ուսուցի
՚ի ժողովրդեանն. և ՚ի տաճարի անդ՝ ուր ամ՟ Հրէ-
այքն ժողովեալ էին ։ և ՚ի ծածուկ ինչ ոչ խօ-
21 սեցայ ։ * Զի՞ հարցանես զիս ։ հա՛րց զայնոսիկ՝
որք լուա՛ն, եթէ զինչ ասացի ցնս՟. ահաւասիկ
22 նոքա գիտեն զինչ ասացի ես ։ * Իբրև նա զայս
ասաց, միոմն ՚ի սպասաւորացն՝ որ անդ կայր, եած
ապտակ Յի՟՝ և ասէ ։ այդպէ՞ս պատասխանի տաս քա-
23 հանայապետիդ ։ * Եւ Յս՟ ասէ ցնա ։ եթէ չար
ինչ խօսեցայ՝ վկայեա՛ վս՟ չարին ։ Իսկ եթէ բարի,
24 ընդէ՞ր հարկանես զիս ։ * Եւ առաքեաց զնա Աննա
կապեալ առ Կայիափայ քահանայապետ ։
25 * Եւ Սիմոն Պետրոս կայր անդ՝ և ջեռնոյր ։ ասեն
ցնա, միթէ և դու յաշակերտաց անտի նր՟ իցես ։
26 նա ուրացաւ և ասէ՝ թէ չեմ ։ * Եւ ասէ միոմն
՚ի ծառայից քահանայապետին՝ ազգական այնորիկ,
զորոյ զունկն եհատ Պետրոս ։ ո՞չ ես իսկ տեսի
27 զքեզ ՚ի պարտիզի անդ ընդ նմա ։ * Դարձեալ
ուրացաւ Պետրոս ։ և վաղվաղակի հաւ խօսեցաւ ։
28 * Եւ ածեն զՅս՟ ՚ի մանուց Կայիափայ յապարանս
դատաւորին ։ և էր այգուց ։ և նոքա ոչ մտին յա-

պարանսն, զի մի պղծեսցին, այլ զի ուտիցեն զզա-
29 տիկն։ *Ել առ նոսա պիղատոս արտաքս՝ և ասէ։
զի՞նչ չարախօսութի մատուցանէք զառնէն զայն-
30 մանէ։ *Պատասխանի ետուն և ասեն ցնա։ եթէ
չէր չարագործ այրն այն, ապա ոչ մատնէաք զնա
31 քեզ։ *Ասէ ցն͞ա պիղատոս։ առէք զնա դուք. և
ըստ ձերոց օրինացն դատեցէք։ ասեն ցնա հրէ-
այքն։ մեզ ոչ է արժան սպանանել զոք։
32 *Զի լցցի բանն Յ͞ի, զոր ասաց. նշանակեալ՝ թէ
33 որով մահու մեռանելոց իցէ։ *Եմուտ միւսան-
գամ յապարանսն պիղատոս. կոչեաց զՅ͞ս՝ և ասէ
34 ցնա։ դու՞ ես թագաւորն հրէից։ *Պատասխանի
ետ Յ͞ս։ 'ի քէ՞ն ասես զայդ՝ եթէ այլք ասացին
35 քեզ զինէն։ *Պատասխանի ետ պիղատոս։ միթէ
և ես հրէա՞յ իցեմ։ ազգն քո և քահանայապետք
մատնեցին զքեզ ինձ։ զի՞նչ գործ գործեալ է քո։
36 *Պատասխանի ետ Յ͞ս. իմ արքայութի չէ յայսմ
աշխարհէ։ եթէ յաշխարհէ աստի էր արքայու-
թիւն իմ, սպասաւորքն իմ մարտնչէին արդեօք՝ զի
մի մատնեցայց հրէից. բայց արդ թագաւորութիւն
37 իմ չէ աստի։ *Ասէ ցնա պիղատոս։ ապաթէ
այդպէս իցէ, թագաւոր ոմն ես դու։ պատասխանի
ետ Յ͞ս. դու ասես՝ թէ թագաւոր իցեմ. բայց ես
յայդ իսկ ծնեալ եմ։ և 'ի դոյն իսկ եկեալ եմ
յաշխարհ, զի վկայեցից ճշմարտութեն։ ա͞մ որ 'ի
38 ճշմարտութէ է՝ լսէ բարբառոյ իմոյ։ *Ասէ ցնա
պիղատոս։ զի՞նչ է ճշմարտութի։ զայս իբրև
ասաց, դարձեալ ել առ հրէայսն՝ և ասէ ցնոսա։
ես՝ և ոչ մի ինչ պատճառս գտանեմ 'ի նմա։
39 *Բայց է ձեր սովորութի, զի զմի ոք արձակեցից
ձեզ 'ի զատկիս։ արդ՝ կամի՞ք՝ զի արձակեցից ձեզ
40 զթագաւորն հրէից։ *Աղաղակեցին ամենեքեան՝
և ասացին։ մի զդա՝ այլ զբարաբբայ։ և էր բա-
րաբբայն այն աւազակ։

10

ԾԴ

ԳԼ. ԺԹ։

1 Յայնժամ էառ պիղատոս զՅ͞ս՝ և գան էհար։
2 *Եւ զինուորայն արարեալ պսակ 'ի փշոյ՝ և-

դին 'ի գլուխ նր̄ ։ և զգեցուցին նմա զհանդերձ
3 ծիրանի ։ *Եւ գային առ նա , և ասէին ։ ողջ եր
4 արքայ Հրէից ։ և հանէին նմա ապտակս ։ *Եւ
դարձեալ պիղատոս արտաքս՝ և ասէ ցն̄ ։ ահա
ածեմ զնա արտաքս առ ձեզ ։ զի գիտասջիք թէ
5 ես վնաս ինչ 'ի նմա ոչ գտանեմ ։ *(Եւ Յս̄ ար
տաքս . և ունէր զպսակ 'ի փշոց և զհանդերձ ծի
6 րանի ։) և ասէ ցն̄ ։ ահա այրդ ցձեզ ։ *Իբրև տեսին զնա քահանայապետքն և սպասաւորք , զաղաղակ բարձին՝ և ասեն . 'ի խաչ հան . 'ի խաչ հան
զդա ։ ասէ ցն̄ պիղատոս ։ առէք զդա 'ի ձեզ . և
ձեզէն հանէք 'ի խաչ . զի ես 'ի դմա վնաս ինչ
7 ոչ գտանեմ ։ *Պատասխանի ետուն նմա Հրէայքն ։
մեք օրէնս ունիմք . և ըստ օրինաց մերոց պարտի
8 մեռանիլ . զի զանձն իւր Որդի ԱՅ արար ։ *Իբրև
լուաւ զբանս զայս պիղատոս , առաւելևս երկեաւ ։
9 *Եմուտ դարձեալ անդրէն յապարանսն , և ասէ
ցՅս̄ ։ ուստի՞ ես դու ։ և Յս̄ ոչ ետ նմա պատասխանի ։
10 *Ասէ ցնա պիղատոս ։ ընդ իս ո՞չ խօսիս ։ ո՞չ
գիտես եթէ իշխանութի ունիմ հանել զքեզ 'ի
խաչ . և իշխանութի ունիմ արձակել զքեզ ։
11 *Պատասխանի ետ Յս̄ ։ ոչ ունէիր դու իշխանութի 'ի վր̄ իմ , և ոչ մի . եթէ ոչ էր տուեալ
քեզ 'ի վերուստ ։ վ̄ այսորիկ որ մատնեացն զիս
12 քեզ , նր̄ մեծ մեղք են ։ *Եւ յայնմանէ պիղատոս
խնդրէր արձակել զնա ։ և Հրէայքն աղաղակէին ,
և ասէին ։ եթէ զդա արձակես՝ չես բարեկամ
կայսեր ։ ա̄մ ոք որ թագաւոր կոչէ զանձն իւր ,
13 հակառակ է կայսեր ։ *Իսկ պիղատոս իբրև լուաւ
զբանս զայս , էած զՅս̄ արտաքս . և նստաւ 'ի վերայ բեմին , 'ի տեղւոջն որ կոչիւր քարայատակ . և
14 եբրայեցերէն կապպաթա ։ *Էր ուրբաթն զատկի ։ և էր ժամ իբրև վեցերորդ ։ և ասէ ցՀրէայսն ։
ահա թագաւոր ձեր ցձեզ ։
15 *Եւ նոքա աղաղակէին , բա՛րձ 'ի մէնջ . բա՛րձ 'ի մէնջ՝
և հան զդա 'ի խաչ ։ ասէ ցն̄ պիղատոս ։ ես զթագաւորդ ձեր 'ի խա̄չ հանիցեմ ։ պատասխանի ետուն
քահանայապետքն . չի՛ք մեր թագաւոր բայց 'ի կայ-

16 սերէ ։ *Յայնժամ ետ զնա 'ի ձեռս նց՟, զի 'ի խաչ
17 ելանիցէ ։ *Եւ նոքա առեալ տանէին զնա ։ Եւ
բարձեալ էր ինքնին զխաչափայտն. եւ ելանէր 'ի
տեղին՝ որ անուանեալ էր գագաթն. եւ կոչիւր
18 եբրայեցերէն գողգոթա։ *Ուր եւ 'ի խաչ իսկ հանին
զնա ։ եւ ընդ նմա երկուս եւս այլս աստի եւ
19 անտի, եւ 'ի մէջ զՅս՟։ *Գրեաց եւ տախտակ
մի պիղատոս, եւ եդ 'ի վր՟ խաչին ։ եւ էր գրեալ
20 Յս՟ Նազօրեցի, թագաւոր հրէից ։ *Զայն տախտակ
ընթերցան բազումք 'ի հրէից. զի մօտ էր 'ի
քաղաք անդր տեղին՝ ուր խաչեցաւն Յս՟. եւ էր գրեալ
Եբրայեցերէն, Դաղմատերէն. եւ Յունարէն ։
21 *Ասեն ցպիղատոս քահանայապետքն հրէից ։ մի՛
գրեր թագաւոր հրէից ։ այլ թէ նա ասաց՝ թագաւոր
22 եմ հրէից ։ *Պատասխանի ետ պիղատոս ։
23 զոր ինչ գրեցի՝ գրեցի ։ *Իսկ զինուորքն իբրեւ
հանին 'ի խաչ զՅս՟, առին զհանդերձս նր՟. (եւ արարին
չորս մասունս. իւրաքանչիւր զինուորի մասն։)
իսկ զպատմուճանն՝ քանզի էր առանց կարանի, 'ի
24 վերուստ փորանկեալ ամենեւին ։ *Ասեն ցմիմեանս։
մի՛ պատառեսցուք զայդ. այլ արկցուք վիճակս 'ի
վերայ դորա՝ ում եւ ելցէ ։ զի լցցի գիրն՝ որ ասէ։
բաժանեցին զհանդերձս իմ յիւրեանս, եւ 'ի վերայ
պատմուճանի իմոյ զվիճակ արկին ։ զինուորքն զայս
25 ինչ գործեցին ։ *Եւ կային առ խաչին Յի՟ մայր
նր՟. եւ քոյր մօր նր՟ մարիամ կղէօպայ. եւ մարիամ
26 մագդաղենացի։ *Յս՟ իբրեւ ետես զմայրն, եւ զաշակերտն,
զոր սիրէր, զի կայր մօտ. ասէ ցմայրն,
27 Կին դու, ահա որդի քո ։ *Ապա ասէ ցաշակերտն։
ահա մայր քո։ եւ յայնմ ժամանակէ էառ աշակերտն
28 զնա առ իւր ։ *Յետ այսորիկ գիտաց Յս՟,
եթէ ահա ամ՟ ինչ կատարեալ է։ զի կատարեսցի
29 գիրն, ասէ. ծարաւի եմ։ *Եւ անդ կայր աման
ինչ լի քացախով ։ եւ նք՟ սպունգ լցեալ քացախով
ընդ եզուոյ՝ շուրջ եդեալ զմշտկաւ զոպայի՝ մատու-
30 ցին 'ի բերան նր՟ ։ *Իբրեւ էառ Յս՟ զքացախն հանդերձ
եզուովն՝ ասէ։ ամ՟ ինչ կատարեալ է ։ եւ
խոնարհեցուցեալ զգլուխն՝ աւանդեաց զոգին։

31 * Իսկ Հրեայքն (քանզի ուրբաթ էր,) զի մի՛ անդէն ՚ի խաչին ագանիցին մարմինքն մինչև ցշաբաթն. (զի էր օր մեծ շաբաթուն այնորիկ։) աղաչեցին զպիղատոս, զի խորտակեսցեն զբարձս նց՟, և բարձցին։
32 * Եկին զինուորքն, և զառաջնոյն խորտակեցին զբարձս։ նոյնպէս և զմիւսոյն՝ որ ընդ նմա ՚ի
33 խաչին ելեալ էր։ * Բայց իբրև եկին առ Յս՟, և տեսին զի այն ինչ մեռեալ էր՝ ոչ խորտակեցին
34 զբարձս նորա։ * Այլ մի ոմն ՚ի զինուորացն տիգաւ խոցեաց զկողս նր՟։ և վաղվաղակի ել արիւն, և
35 ջուր։ * Եւ որ տեսեն, վկայեաց. և ճշմարիտ է վկայութիւն նր՟։ և նա գիտէ եթէ ճշմարիտ ասէ.
36 զի և դուք հաւատասջիք։ * Այս եղև՝ զի լցցի
37 գիրն, եթէ ոսկր նր՟ մի՛ փշրեսցի։ * Եւ դարձեալ միւս գիր ասէ, եթէ հայեսցին ՚ի նա՝ յոր խոցե-
38 ցինն։ * Յետ այսորիկ աղաչեաց զպիղատոս յովսէփ, որ յարիմաթեայ էր աշակերտ Յի՟ ՚ի ծածուկ՝ վս՟ ահին հրէից։ զի բարձցէ զմարմինն Յի՟։ և հրամայեաց պիղատոս։ եկն և եբարձ զնա։
39 * Եկն և նիկոդեմոս՝ որ եկեալն էր առ Յս՟ ՚ի գիշերի զառաջինն, և եբեր զմուռս խառն ընդ հա-
40 լուէս, իբրև լտերս հարիւր։ * Առին զմարմինն Յի՟, և պատեցին կտաւօք և խնկօք համդերձ. որպ՟
41 օրէն էր հրէից պատել. * Եւ էր ՚ի տեղւոջն՝ յորում խաչեցաւ՝ պարտէզ։ և ՚ի պարտիզի անդ գերեզմանն նոր. յորում ոչ ոք երբէք էր եդեալ։
42 * Անդ վս՟ ուրբաթուն հրէից՝ զի մօտ էր գերեզմանն՝ եդին զՅս՟։

Գլ. Ի։

1 Եւ ՚ի միաշաբաթուջն մարիամ մագդաղենացի գայ առաւօտուն ընդ արշալուսն ՚ի գերեզմանն անդր. և տեսանէ զվէմն բարձեալ ՚ի դրանէ գերեզմանին։
2 * Ապա ընթանայ՝ և գայ առ սիմոն պետրոս. և առ միւս աշակերտն. զոր սիրէրն Յս՟. և ասէ ցնս՟. բարձին զՏր՟ ՚ի գերեզմանէ անտի, և ոչ գիտեմ, ուր եդին զնա։

3 *Ել պետրոս և միւս աշակերտն, և գային 'ի գերեզմանն:
4 *Ընթանային երկոքեան 'ի միասին: և
միւս աշակերտն յառաջեաց, ընթացաւ վաղագոյն
5 քան զպետրոս՝ և եկն նախ 'ի գերեզմանն: *Եւ
խոնարհեալ տեսանէ զի կային անդ կտաւքն. բայց
6 'ի ներքս ոչ եմուտ: *Եկն և սիմօն պետրոս որ
գայրն զկնի նր̄. և եմուտ 'ի գերեզմանն: և տեսանէ
7 զկտաւսն, զի կային անդ: *Եւ վարշամակն,
որ էր 'ի գլուխ նր̄ ոչ ընդ այլ կտաւսն կայր.
8 այլ ուրոյն ծալեալ 'ի մի կողմն: *Յայնժամ եմուտ
և միւս աշակերտն. որ եկեալն էր յառաջագոյն
9 'ի գերեզմանն՝ ետես և հաւատաց: *Զի
չև ևս գիտէին զգիրս՝ թէ պարտ է նմա 'ի մեռելոց
10 յառնել: *Չոգան դարձեալ առ միմեանս աշակերտքն:
11 *Բայց մարիամ կայր արտաքոյ գերեզմանին, և լայր: և մինչդեռ լայր՝ խոնարհեցաւ
12 'ի գերեզմանն: *Եւ տեսանէ երկուս հրեշտակս
'ի սպիտակս. զի նստէին մի 'ի սնարից՝ և մի յոտից՝
13 ուր կայր մարմինն Յի̄: *Եւ նոքա ասեն
ցնա: կին դու՝ զի՞ լաս: ասէ ցնս̄. զի բարձին
զՏր̄ն իմ 'ի գերեզմանէ աստի. և ոչ գիտեմ, ուր
14 եդին զնա: *Զայս իբրև ասաց. դարձաւ 'ի թիկունս կոյս. և տեսանէ զՅս̄՝ զի կայր: և ոչ գիտէր
15 թէ Յս̄ իցէ: *Ասէ ցնա Յս̄: կին դու՝ զի՞
լաս: զո՞ խնդրես: Նմա այսպէս թուեցաւ թէ
պարտիզպանն իցէ, ասէ ցնա. Տ՛ր, եթէ դու բարձեր զնա՝ ասա ինձ, ուր եդեր զնա՝ զի ես առից
16 զնա: *Ասէ ցնա Յս̄՝ մարիամ: և նա դարձաւ, և
ասէ ցնա եբրայեցերէն: րաբբունի: (որ թարգմանի
17 վարդապետ:) *Ասէ ցնա Յս̄: մի՛ մերձենար յիս.
զի չև ևս ելեալ եմ առ Հայր իմ: այլ երթ դու
առ եղբարս իմ, և ասա ցնս̄: ելանեմ ես առ Հայրն
18 իմ, և առ Հայր ձեր: և Ած̄ն իմ, և Ած̄ ձեր: *Գայ
մարիամ մագդաղենացի՝ և պատմէ աշակերտացն,
եթէ ետես նա զՏր̄. և զայս ինչ ասաց ցնա:
19 *Եւ էր երեկոյ 'ի միաշաբաթոջ աւուրն: և դրունք
փակեալք՝ ուր էին աշակերտքն ժողովեալք վս̄ ահին
հրէից: եկն Յս̄՝ և եկաց 'ի մէջ նց̄: և ասէ ցնս̄՝

20 ողջոյն ընդ ձեզ։ * Իբրև զայս ասաց՝ եցոյց նց̅
զձեռսն և զկողս իւր։ և խնդացին աշակերտքն ի-
21 բրև տեսին զՏր̅։ * Ասէ ցնս̅ դարձեալ։ ողջոյն
ընդ ձեզ. ոպ̅ առաքեաց զիս Հայր իմ, և ես առա-
22 քեմ զձեզ։ * Եւ զայս իբրև ասաց՝ փչեաց ՚ի նոսա
23 և ասէ։ առէք զՀոգի սբ̅։ * Եթէ ումեք թողու-
ցուք զմեղս՝ թողեալ լիցի նց̅։ և եթէ զուրուք
24 ունիցիք՝ կալեալ լիցի։ * Իսկ Թովմաս մի յերկո-
տասանիցն՝ անուանեալն Երկուորեակ, ոչ էր ընդ
25 նոսա՝ յորժամ եկն Յս̅։ * Ասէին ցնա այլ աշա-
կերտքն. եթէ տեսաք զՏր̅։ և նա ասէ ցնս̅։ եթէ
ոչ տեսից ՚ի ձեռս նր̅ զնշան բևեռացն, և արկից
զմատունս իմ ՚ի տեղիս բևեռացն, և մխեցից
26 զձեռս իմ ՚ի կողս նորա՝ ոչ հաւատամ։ * Եւ յետ
ութ աւուր դարձեալ էին ՚ի ներքս աշակերտքն, և
Թովմաս ընդ նոսա։ գայ Յս̅ դրացն փակելոց. և
եկաց ՚ի մէջ նոցա, և ասէ. ողջոյն ընդ ձեզ։
27 * Ապա ասէ ցԹովմաս։ բեր զմատունս քո՝ և արկ
այսր՝ և տես զձեռս իմ։ և բեր զձեռն քո, և
մխեա ՚ի կողս իմ. և մի լինիր անհաւատ՝ այլ հա-
28 ւատացեալ։ * Պատասխանի ետ Թովմաս՝ և ասէ
29 ցնա։ Տր̅ իմ, և Այ̅ իմ։ * Ասէ ցնա Յս̅։ այդ զի
տեսերդ զիս՝ և հաւատացեր։ երանի, որոց ոչ
30 իցէ տեսեալ՝ և հաւատասցեն։ * Բազում և այլ
նշանս արար Յս̅ առաջի աշակերտացն իւրոց, որ ոչ
31 է գրեալ ՚ի գիրս յայսմիկ։ * Այլ այս այնչափ
ինչ գրեցաւ՝ զի հաւատայցէք, եթէ Յս̅ Քս̅ է
Որդի Այ̅։ և զի հաւատայցէք, և զկեանսն յաւի-
տենականս ընդունիցիք յանուն նորա։

ԳԼ. ԻԱ։

1 Յետ այսորիկ դարձեալ յայտնեաց զանձն իւր
Յս̅ աշակերտացն իւրոց առ ծովեզերբն Տիբե-
2 րեայ։ և յայտնեաց այսպէս։ * Էին ՚ի միասին Սի-
մոն Պետրոս. և Թովմաս անուանեալն Երկուորեակ.
և Նաթանայէլ որ ՚ի կանայ Գալիլեացւոց, և որ-
դիքն Զեբեդեայ. և այլք յաշակերտացն անտի եր

3 կու : * Ասէ ցն̅ա սիմօն պետրոս : երթամ ձուկն
որսալ: ասեն ցնա, գամք և մեք ընդ քեզ : գնա-
ցին, և մտին ՚ի նաւ . և յայնմ գիշերի կալան և
4 ոչ ինչ: * Իբրև այգ եղև, կայր Յս̅ յեզր ծովուն:
բայց ոչ ծանեան աշակերտքն թէ Յս̅ իցէ :
5 * Ասէ ցնոսա Յս̅: մանկունք՝ միթէ ունիք ինչ ու-
տելոյ : պատասխանի ետուն և ասեն ցնա, ոչ :
6 * Ասէ ցնոսա Յս̅: արկէք յաջակողմն նաւին զուռ-
կանդ, և գտանիցէք : արկին, և ոչ կարէին ձգել
7 ՚ի բազմութենէ անտի ձկանցն : * Ասէ աշակերտն
այն, զոր սիրէրն Յս̅ ցպետրոս : Տր̅ է այն : սիմօն
պետրոս՝ իբրև լուաւ թէ Տր̅ է՝ էարկ զիւրև
զփածանելին, (քանզի մերկ էր:) և ընկէց զինքն
8 ՚ի ծովն : * Եւ այլ աշակերտքն նաւաւն իսկ գային:
(քանզի չէին հեռի ՚ի ցամաքէ : այլ իբրև երկեր-
իւր կանգնաւ) քարշէին զգործին հանդերձ
9 ձկամբքն : * Իբրև ելին ՚ի ցամաք՝ տեսանեն կրա-
կետղ կայծականց . և ձուկն մի ՚ի վր̅՝ և հաց :
10 * Ասէ ցնոսա Յս̅ : բերէք ՚ի ձկանց այտի՝ զոր
11 դուքդ կալայք այժմիկ : * Եմուտ սիմօն պետրոս .
և ձգէր զգործին ՚ի ցամաք՝ լի մեծամեծ ձկամբք,
հարիւր յիսուն և երիւք : և այնչափ ինչ կայր,
12 և ոչ պատառեցաւ գործին : Ասէ ցն̅ա Յս̅: եկա՛յք
ճաշեցէք : և ոչ՛ոք յաշակերտացն իշխէր հարցանել՝
13 թէ դու ո՛վ ես : զի գիտէին թէ Տր̅ն է : * Գայ
Յս̅՝ և առնու զհացն՝ և տայ նց̅ . նոյնպ̅ և զձուկն :
14 * Զայս երիցս անգամ երևեցաւ Յս̅ աշակերտացն
15 յարուցեալ ՚ի մեռելոց : * Եւ իբրև ճաշեցին՝ ասէ
ցսիմօն պետրոս Յս̅ : սիմօն յօնաննու սիրե՞ս զիս
առաւել քան զդոսա : ասէ ցնա . այո՛ Տր̅ . և դու
գիտես՝ զի սիրեմ զքեզ : ասէ ցնա՝ արածեա՛ զգա-
16 ռինս իմ : * Դարձեալ ասէ ցնա : սիմօն յօնաննու
սիրե՞ս զիս : ասէ ցնա . այո՛ Տր̅՝ և դու գիտես՝ զի
սիրեմ զքեզ : ասէ ցնա՝ արածեա՛ զոչխարս իմ :
17 * Ասէ ցնա երիցս անգամ . սիմօն յօնաննու սիրե՞ս
զիս : տրտմեցաւ պետրոս , զի ասաց ցնա երիցս՝
թէ սիրես զիս : և ասէ ցնա . Տր̅, դու զամ̅ գի-
տես : և դու իսկ զամ̅ ճանաչես՝ և եթէ սիրեմ

զքեզ: ասէ ցնա Յս͞: արածեա զոչխարս իմ:
18 * Ամէն ամէն ասեմ քեզ. զի մինչ մանուկն էիր,
անձամբ անձին գօտի ածէիր՝ և երթայիր, յո և
կամէիր: և յորժամ ծերասցիս, ձեռս 'ի վեր կալ
ցիս: և այլք ածցեն քեզ գօտի, և տարցին ուր
19 ոչ կամիցիս: * Զայս ասաց՝ նշանակեալ թէ որով
մահու փառաւոր առնիցէ զԱծ͞: և զայս իբրև ա-
20 սաց, ասէ ցնա՝ Եկ զկնի իմ: * Դարձաւ պետրոս՝
և տեսանէ զաշակերտն՝ զոր սիրէր Յս͞, զի եր
թայր զկնի: որ և անկաւ զլանջօք նորա՝ և ասէ: Տր͞,
21 ով է՝ որ մատնելոց է զքեզ: * Զնա տեսեալ պետ
22 րոսի, ասէ ցՅս͞: Տր͞, իսկ սա զի՞: * Ասէ ցնա Յս͞:
եթէ կամիմ, զի կայցէ դա՝ մինչև ես գամ. քեզ
23 զի՞ փոյթ է՝ դու եկ զկնի իմ: * Ե՛լ բանս այս
յեղբարս՝ և համարեցան թէ աշակերտն այն ոչ
մեռանիցի: և ոչ ասաց նմա Յս͞ եթէ ոչ մեռա-
նիցի. այլ թէ կամիմ ես՝ թէ կայցէ դա՝ մինչև
24 ես գամ: * Այս աշակերտ է՝ որ վկայէ վս͞ այսո-
ցիկ. որ և գրեաց իսկ զայսոսիկ: և գիտեմք եթէ
25 ճշմարիտ է վկայութիւն նր͞: * Բայց է և այլ ինչ
բազում, զոր արար Յս͞: որք եթէ գրեալ էին
մի ըստ միոջէ. կարծեմ թէ և ոչ աշխարհս բա
ւական էր տանել զգիրսն՝ որք թէ գրեալ էին:



Ս. Մեսրոպ



Ս. Սահակ Պարթև

ԳՈՐԾՔ

ԱՌԱՔԵԼՈՑ:

Գլուխ Առաջին:

1 ԶԲԱՆՆ ԱՌԱՋԻՆ՝ ԶՈՐ ԱՐԱ
րի վասն ամ՟ի, ո՛ Թէոփիլէ. զոր սկսաւ Յս՟ առնել և
2 ուսուցանել: * Մինչև յօրն պատուիրելոյ առա-
քելոյն 'ի ձեռն հոգւոյն սրբոյ: զորս ընտրեայն,
3 և վերացաւ: * Որոց յանդիման կացոյց զինքն
կենդանի յետ չարչարանաց իւրոց 'ի բազում ար-
ուեստս՝ յաւուրս քառասուն երևել նց՟՝ և ասել
4 վն՟ արքայութեն Այ՟: * Եւ 'ի հաղորդիլ ընդ նոսա
հացի՛, պատուէր տայր նց՟ յերուսաղէմէ մի մեկ-
նիլ. այլ սպասել աւետեացն Հօր, զոր լուարուքն
5 յինէն: * Զի յօհաննէս մկրտեաց 'ի ջուր: այլ
դուք մկրտիցիք 'ի հոգին սբ՟, ոչ յետ բազմաց
6 ինչ աւուրցս այսոցիկ: * Եւ նոքա միաբանեալ
հարցանէին զնա՝ և ասէին: Տր՟ եթէ 'ի ժամանա
կի աստ յայսմիկ հաստատուցանելո՞ց իցես զարքայու-
7 թին իղի: * Ասէ ցնս՟. ոչ է ձեր գիտել զժամս
և զժամանակս, զոր Հայր եդ յիւրում իշխանու-
8 թեն: * Այլ առջիք զզօրութին 'ի հասանել հոգ-
ւոյն սրբոյ 'ի վր՟ ձեր: և եղիջիք ինձ վկայք յեմ՟,
և յամ՟ հրէաստանի, և 'ի սամարիա. և մինչև
9 'ի ծագս երկրի: * Եւ զայս իբրև ասաց՝ մինչդեռ
հայէին նոքա՝ վերացաւ: և ամպն կալաւ զնա յա-
10 չաց նց՟: * Եւ մինչդեռ պշուցեալ էին ընդ եր-
կինս երթալոյ նր՟, ահաւասիկ արք երկու երևե-
ցան նոցա 'ի հանդերձս սպիտակս:
11 * Որք և ասացին: արք գալիլեացիք՝ զի՛ կայք
հայեցեալք ընդ յերկինս: այս Յս՟ որ վերացաւն
'ի ձէնջ յերկինս, սոյնպէս եկեսցէ՝ զոր օրինակ

12 տեսիք զդա երթալ յերկինս: * Յայնժամ սոքա
դարձան յէ̃էմ յանուանեալ լեռնէն ձիթենեաց:
որ է մերձ յեէ̃մ ըստ շաբաթու ճանապարհի:
13 * Եւ իբրև մտին ՚ի վերնատունն, ելին ուր վանքն
իսկ էին. Պետրոս՝ և Յովհաննէս. Յակոբոս՝ և
Անդրէաս. Փիլիպպոս՝ և Թովմաս. Բարթուղիմէոս՝
և Մատթէոս. Յակոբոս Ալփեան՝ և Շմաւոն
14 Նախանձայոյզ. և Յուդա Յակոբեան: * Սոքա ա-
մենեքեան էին հանապազորդեալք միաբան յաղօթս
հանդերձ կանամբք. և Մարեմաւ մարբն Յի̃՝ և
15 եղբարբք նորա: * Եւ յաւուրսն յայնոսիկ յարու-
ցեալ պետրոս ՚ի մէջ եղբարցն՝ ասէ. (և էր անդ
16 բազմութիւն անուանց հարիւր և քսանից:) * Արք
եղբարք՝ պարտ է կատարել գիրն, զոր յառաջա-
գոյն ասաց հոգին սբ̃ ՚ի բերանոյ դաւթի՝ վասն
յուդայի. որ եղև առաջնորդ ունելեացն Յի̃:
17 * Զի ՚ի թիւս մեր էր՝ ընդ մեզ. և հասեալ էր
18 նմա վիճակ պաշտամանս այսորիկ: * Սա ստացաւ
գեօղ ՚ի վարձուց անիրաւութեան. և ուռուցեալ հեր-
19 ձաւ ընդ մէջ՝ և հեղաւ ամենայն փոր նր̃: * Եւ
յայտնի եղև ամենեցուն՝ որք բնակեալ են յեէ̃մ.
մինչև կոչել գեղջն այնմիկ բարբառովն իւրեանց
20 ակեղ դամայ. այսինքն՝ գեօղ արեան: * Զի գր-
եալ է ՚ի գիրս սաղմոսաց. եղիցի բնակութի̃ նր̃ աւե-
րակ. և մի̃ ոք իցէ՝ որ բնակիցի ՚ի նմա ; և զկարգ
21 նր̃ առցէ այլ: * Արդ՝ պարտ է յարանցս յայսցանէ՝
եկելոցս ընդ մեզ յա̃մ ժամանակի՝ յորում եմուտ
22 և ել առ մեզ Տր̃ Յս̃: * Սկսեալ ՚ի մկրտութենէն
յովհաննու մինչև յօրն՝ յորում վերացաւ ՚ի մէնջ.
վկայ յարութե̃ նորա ընդ մեզ լինել միում ՚ի
23 սոցանէ: * Եւ կացուցին երկուս: զՅովսէփ՝ որում
բարսաբայն կոչէին. որ անուանեցաւն յուստոս:
24 և զՄատաթիայ: * Եւ կացեալ յաղօթս՝ ասեն:
դու Տր̃՝ սրտագէտ ա̃մի, յայտնեա՛ զմիոք՝ զոր ըն-
25 տրեցեր ՚ի սոցանէ յերկոցունց: * Առնուլ զվիճակ
պաշտամանս այսորիկ՝ և զառաքելութե̃, յորմէ ան-
կաւ յուդաս՝ գնալ ՚ի տեղի իւր: * Եւ ետուն վի-

ճակս ն̃ց. և ել վիճակն մատաթեայ. և համարեցաւ ընդ մետասան առաքեալսն։

ԳԼ. Բ։

1 Եւ 'ի կատարել աւուրցն պենտեկոստէից՝ էին
2 ամենեքեան միաբան 'ի միասին։ * Եւ եղև յանկարծակի
հնչիւն յերկնից՝ եկեալ իբրև սաստիկ
հողմոյ. և ելից զա̃մ զտունն յորում նստէին։
3 * Եւ երևեցան ն̃ց բաժանեալք լեզուք իբրև 'ի
հրոյ. և նստաւ իւրաքանչիւր 'ի վերայ նոցա։
4 * Եւ լցան ամենեքեան հոգւով սրբով. և սկսան
խօսել յայլ լեզուս՝ ոպ̃ և Հոգին տայր բարբառել
5 նոցա։ * Եւ էին յե̃մ բնակեալք հրէայք՝
արք երկիւղածք յամենայն ազգաց՝ որք 'ի ներքոյ
6 երկնից։ * Եւ իբրև եղև բարբառս այս՝ եկն միաբան
բազմութիւն՝ և խռնեցաւ. զի լսէին յիւրաքանչիւր
7 լեզուս խօսել նոցա։ * Սքանչանային ամենեքեան,
և զարմանային, և ասէին ընդ միմեանս.
ո՞չ ահաւասիկ ամենեքին սոքա՝ որք խօսին, գալիլեացիք
8 են։ * Եւ զիա՞րդ լսեմք մեք յիւրաքանչիւր
9 բարբառս մեր՝ յորում ծնեալք եմք։ * Պարթևք՝
և մարք՝ և ելամացիք՝ և որք բնակեալք են 'ի միջագետս՝
'ի հրէաստանի՝ և 'ի գամիրս՝ 'ի պոնտոս՝
10 և յասիա։ * 'Ի փռիւգիա, և 'ի պամփիւլիա՝ յեգիպտոս՝
և 'ի կողմանս լիբէացւոց. որք ընդ կիւրենացիս,
և որք եկք հռոմայեցիք։
11 * Հրէայք՝ և եկք նոյուն. կրետացիք՝ և արաբացիք՝
լսեմք խօսից նոցա 'ի մեր լեզուս զմեծամեծս
12 Այ̃։ * Սքանչանային ամենեքեան զարմացեալք, և
13 ասէին ցմիմեանս, զի՞նչ կամիցի այս լինել։ * Եւ
կիսոցն ընդ խաղ արկեալ ասէին, թէ քաղցուալիցք
14 լցեն։ * Յարուցեալ պետրոս հանդերձ մետասանիւքն՝
ամբարձ զձայն իւր՝ և խօսեցաւ ընդ նոսա։
Արք հրէաստանեայք՝ և որք բնակեալք էք յե̃մ
ամենեքին, այս ձեզ յայտնի լիցի՝ և ունկնդիր լիք բանից
15 իմոց։ * Ո՛չ ոպ̃ դուքդ կարծէք՝ թէ սոքա
արբեալք իցեն. զի դեռ երեք ժամք են աւուր։

16 *Այլ այս է՝ որ ասացաւ ՚ի ձեռն մարգարէին Յո-
17 վէլայ : *Եւ եղիցի յետ այսորիկ յաւուրս յետինս՝
ասէ Ած՝ հեղից յՀգւոյ իմմէ ՚ի վերայ ամենայն
մարմնոյ. և մարգարէասցին ուստերք ձեր. և
դստերք ձեր. և երիտասարդք ձեր տեսիլս տեսցեն :
18 և ծերք ձեր երազօք երազասցին : *Եւ ՚ի
վ՟ր ծառայից իմոց՝ և ՚ի վերայ աղախնայց իմոց՝ յաւուրս
յայնոսիկ հեղից յՀգւոյ իմմէ, և մարգարէ-
19 ասցին : *Եւ տաց նշանս յերկինս ՚ի վեր՝ և նշանս
յերկիր ՚ի խոնարհ. արիւն, և հուր, և մրրիկ
20 ծխոյ : *Արեգակն դարձցի ՚ի խաւար, և լուսին
յարիւն՝ մինչչև եկեալ իցէ օր Տն մեծ և երևե-
21 լի : *Եւ եղիցի ամ որ կարդասցէ զանուն Տն՝
կեցցէ :
22 Ար՟. *Արք իսրայելացիք լուարուք. զբանս զայսոսիկ.
զՅս նազովրեցի, զայր յուցեալ յԱյ ՚ի ձեզ զօ-
րութբ, և նշանօք, և արուեստիւք, զորս արար
նովաւ Ած ՚ի մէջ ձերում, որպէս և դուք իսկ
23 գիտէք : *Զնա նկատեալ խորհրդով և կանխա-
գիտութբն Այ՝ մատնեալ ՚ի ձեռս անօրինաց՝
24 բևեռեալ ՚ի փայտի սպանէք : *Զոր Ած յարոյց՝
լուծեալ զերկունս մահու. քանզի ոչ էր հնար
25 ըմբռնել նմա ՚ի նմանէ : *Դաւիթ իսկ ասէ զնմա-
նէ. յառաջագոյն տեսանէի զՏր առաջի իմ յամե-
նայն ժամ, զի ընդ աջմէ իմմէ է, մի սասանեցայց
26 *Վասն այսորիկ ուրախ եղև սիրտ իմ, և ցնծա-
ցաւ լեզու իմ. ևսև մարմին իմ բնակեսցէ յուսով :
27 *Զի ոչ թողցես զանձն իմ ՚ի դժոխս՝ և ոչ
տայցես սրբոյ քում տեսանել զապականութի :
28 *Ծանուցեր ինձ զճանապարհս կենաց. լցուցես
29 զիս ուրախութբ երեսաց քոց : *Արք եղբարք՝
պարտ է համարձակութբ ասել ձեզ վասն նահա-
պետին Դաւթի. զի մեռաւ՝ և թաղեցաւ. և գերեզ-
ման նորա կայ ՚ի մէջ ձերում մինչև ցայսօր :
30 *Զի մարգարէ էր. և գիտէր, եթէ երդմամբ
երդուաւ նմա Ած ՚ի պտղոյ որովայնի նորա նստու-
31 ցանել յաթոռ նր : *Յառաջագոյն ծանուցեալ
խօսեցաւ վասն յարութեան Քի. զի ոչ թողաւ

ոգի նր̄ 'ի դժոխս՝ և ոչ մարմին նորա ետես զա-
32 պականութիւն ։ * Զայս Յս̄ յարոյց Ած̄ որում ա-
մենեքին մեք վկայեմք ։ * Աջովն Այ̄ բարձրացեալ․
33 զաւետիս Հոգւոյն սրբոյ ընկալեալ 'ի Հօրէ սփռ-
34 եաց զայս, զոր դուք իսկ տեսանէք՝ և լսէք ։ * Զի
ոչ եթէ Դաւիթ ել յերկինս․ ասէ իսկ ինքն՝
35 ասաց Տր̄ ցՏր̄ իմ, նիստ ընդ աջմէ իմմէ ։ * Մինչ
չև եդից զթշնամիս քո պատուանդան ոտից քոց ։
36 * Արդ՝ ճշմարտիւ գիտասցէ ամենայն տունդ Իէլի․
զի Տր̄ զնա՝ և օծեալ Ած̄ արար․ զայն Յս̄ զոր
37 դուքն խաչեցէք ։ * Եւ լուեալ զայս զղջացան 'ի
սիրտս իւրեանց․ և ասեն ցպետրոս՝ և ցայլ առա-
38 քեալսն․ զի՞նչ գործեսցուք արք եղբարք ։ * Ասէ
ցնս̄ պետրոս․ ապաշխարեցէք՝ և մկրտեսցի իւրաքան-
չիւրոք 'ի ձէնջ յանուն Տն̄ Յի̄ Քի̄ 'ի թողութի̄
մեղաց․ և ընկալջիք զաւետիս հոգւոյն սրբոյ ։
39 * Զի ձեզ են աւետիքս՝ և որդւոց ձերոց ։ և ամ̄
40 հեռաւորաց՝ զորս կոչեսցէ Տր̄ Ած̄ մեր ։ * Եւ
այլովք բանիւք բազմօք վկայութի̄ դնէր, և մխիթա-
րէր զնոսա՝ և ասէր ։ ապրեցարուք յազգէ աստի
41 խոտորելոյ յայսմանէ ։ * Ոմանք յօժարութբ̄ ըն-
կալեալք զբանն նր̄՝ մկրտեցան ։ և յաւելան յաւուր
յայնմիկ հոգիք իբրև երեք հազարք ։
42 ԱԳ․ * Եւ էին հանապազորդեալք վարդապետու-
թե̄ն առաքելոյն․ և հաղորդութե̄ն՝ և բեկանելոյ
43 հացին, և աղօթից ։ * Եւ լինէր ամ̄ անձին ահ
և երկիւղ ։ բազում նշանք և արուեստք 'ի ձեռն
44 առաքելոյն գործեին ։ * Ամ̄ հաւատացեալքն էին
'ի միասին․ և ունէին զամ̄ ինչ հասարակաց ։
45 * Եւ զստացուածս և զինչս վաճառէին, և բաշխէ-
ին զայն ամենեցուն՝ ըստ կարգ պիտոյ ինչ լինէր ։
46 * Հանապազօր կանխեալ միաբանութբ̄ 'ի տաճարն ։
և առ տունս բեկանէին զհացն ։ և առնուին զկերա-
կուր ուրախութբ̄, և միամտութբ̄ սրտի ։
47 * Օրհնէին զԱծ̄՝ և ունէին շնորհս առ ամ̄ ժո-
ղովուրդն ։ և Տր̄ յաւելոյր 'ի փրկեալսն հանապա-
զօր 'ի նոյն ։

ԳԼ· Գ։

1 Պետրոս և յօհաննէս ելանէին 'ի տաճար ընդ
2 յիններորդ ժամու աղօթիցն : * Եւ էր այր մի
կաղ յորովայնէ մօր իւրոյ՝ զոր բարձեալ դնէին
հանապազ առ դրան տաճարին, որ կոչիւր գեղեցիկ : խնդրել զողորմութիւն յայնցանէ՝ որք մտանէ-
3 ին 'ի տաճարն : * Սա տեսեալ զպետրոս և զյօ-
հաննէս՝ զի մտանէին 'ի տաճարն, աղաչէր զողոր-
4 մութիւն առնուլ : * Հայեցաւ 'ի նա պետրոս յօհան-
5 նու հանդերձ, և ասէ : հայեա՛ց 'ի մեզ : * Նա դար
ձաւ 'ի նոսա, և ակն ունէր առնուլ ինչ 'ի նոցանէ:
6 * Եւ ասէ պետրոս, զարծաթ և զոսկի ո՛չ ունիմ.
բայց զոր ունիմս, զայս տաց քեզ : յանուն Յի̅ Քի̅
7 նազովրեցւոյ արի՛, և գնա՛ : * Եւ կալեալ զաջոյ
ձեռանէ նր̅՝ յարոյց զնա. և անդէն հաստատեցան
8 բարձք նր̅ և սրունք : * 'Ի վեր վազեալ՝ և սկսաւ
գնալ. և եմուտ ընդ նոսա 'ի տաճարն. գնայր, և
9 վազէր՝ և օրհնէր զԱ̅ծ : * Եւ ետես ամենայն ժո-
ղովուրդն զնա. զի գնայր, և օրհնէր զԱ̅ծ :
10 * Եւ գիտէին զնա՝ զի սա էր, որ նստէր վասն
ողորմութեան առ գեղեցիկ դրան տաճարին. և լցան
11 զարմանալեօք 'ի վերայ նշանին, որ եղև: * Եւ մինչ
նա ունէր զպետրոս և զյօհաննէս, ընթացաւ ա-
մենայն ժողովուրդն առ նոսա 'ի սրահն՝ որ կոչիւր
12 սողոմոնի՝ զարմացեալք : * Իբրև ետես պետրոս,
պատասխանի ետ ժողովրդեանն. արք իէ̅ղացիք՝ զի՞
զարմացեալ էք 'ի վերայ այսորիկ՝ կամ ընդ մեզ
զի՛ էք պշուցեալք. իբր թէ անձին զօրութ̅բ ինչ
կամ քաջութ̅բ արարեալ իցէ զգնալդ դմա :
13 * Ա̅ծ աբրահամու՝ և Ա̅ծ իսահակայ՝ և Ա̅ծ յա-
կոբայ, Ա̅ծ հարցն մերոց փառաւորեաց զորդի իւր
զՅ̅ս. զոր դուքն մատնեցիք՝ և ուրացայք առաջի
14 պիղատոսի, 'ի դատելն նր̅ արձակել : * Եւ դուք
զսբ̅ն և զարդարն ուրացայք. և խնդրեցիք զայր
15 մի մարդասպան շնորհել ձեզ : * Եւ զառաջնորդ
կենացն սպանէք. զոր Ա̅ծ յարոյց 'ի մեռելոց. որում
մեք իսկ վկայք եմք :

16 * Եւ հաւատովք անուան նորա զսա՝ զոր տեսա-
նէքս և գիտէք՝ հաստատեաց անուն նր̅: և հա-
ւատքն, որք նովաւ՝ ետուն դմա զառողջութիւն
17 զայս՝ յանդիման ձեր ամենեցուն: * Եւ արդ եղ-
բարք՝ գիտեմ, զի անգիտութ̅բ արարիք՝ որպէս
18 և իշխանքն ձեր: * Այլ Ած՝ որ յառաջագոյն պատ-
մեաց 'ի բերանոյ ամ̅ մարգարէից զչարչարելն Քի̅
19 իւրոյ՝ նոյնպէս և կատարեաց: * Արդ՝ ապաշխարե-
20 ցէք և դարձարուք 'ի ջնջել զմեղս ձեր: * Ոպ̅ զի
եկեսցեն ժամանակք հանգստեան յերեսաց Տն̅․
և առաքեսցէ զյառաջագոյն նկատեալն ձեզ զՅս̅
21 Քս̅: * Զոր պարտ է երկնից ընդունել մինչև 'ի
ժամանակս ամենեցուն հաստատելոյ: զորոց խօսե-
ցաւ Ած 'ի բերանոյ սրբոց իւրոց մարգարէից:
22 ԱԳ․ * Մովսէս ասաց ցհարսն, թէ մարգարէ յա-
րուսցէ ձեզ Տր̅ Ած ձեր յեղբարց ձերոց իբրև
զիս, նմա լուիջիք՝ ըստ ամ̅ի, որ զինչ և խօսեսցի
23 առ ձեզ: * Եւ եղիցի ամ̅ անձն, որ ոչ լուիցէ
մարգարէին այնմիկ, սատակեսցի 'ի ժողովրդենէն:
24 * Եւ ամ̅ մարգարէք, որք 'ի Սամուելիէ և այսր՝ խօ-
սեցան, և պատմեցին զաւուրս զայսոսիկ:
25 * Դուք էք որդիք մարգարէիցն, և ուխտին; զոր
ուխտեաց Ած ընդ հարս ձեր: և ասէ ցԱբրահամ․
'ի զաւակի քում օրհնեսցին ամ̅ ազգք երկրի:
26 * Ձեզ նախ յարոյց Ած զորդի իւր․ և առաքեաց
զնա օրհնել զձեզ՝ 'ի դառնալ ձեզ իւրաքանչիւր
'ի չարեաց ձերոց:

ԳԼ․ Դ:

1 Եւ մինչդեռ խօսէին նոքա ընդ ժողովրդեանն;
հասին 'ի վերայ նց̅ քահանայքն և իշխանք տա-
2 ճարին, և սադուկեցիքն: * Զայրագնեալք՝ վս̅
ուսուցանելոյ նց̅ զժողովուրդն՝ և պատմելոյ Յի̅
3 զյարութիւն մեռելոց: * Մխեցին 'ի նս̅ զձեռս իւր-
եանց․ և եդին զնս̅ 'ի բանտի, մինչև 'ի վաղիւն, զի
4 էր ընդ երեկս: * Իսկ բազումք 'ի լսողաց բանին՝
հաւատացին: և եղև թիւ մարդկան իբրև հազա-

5 րաց հնգից: *Եւ եղեւ 'ի վաղիւն անդր՝ ժողովել
նոցա զիշխանսն՝ եւ զծերսն՝ եւ զդպիրս յէմ:
6 *Եւ զաննայ քահանայապետ եւ զկայիափայ. եւ
զյօհաննէս. եւ զաղէքսանդրոս. եւ որք միանգամ
7 էին յազգէ քահանայութեան: *Եւ կացուցեալ զնս
'ի մէջ՝ հարցանէին: որով զօրութբ, կամ որով
8 անուամբ արարէք դուք զայս: *Յայնժամ պետրոս
լցեալ Հոգւով սրբով՝ ասէ ցնս. իշխանք
9 ժողովրդեան, եւ երիցունք իլի: *Եթէ արժան
ինչ իցէ դատել զմեզ այսօր վս երախտեաց առն
10 միոյ տկարի, որով սա բժշկեցաւ: *Յայտնի լիցի
ամենեցուն ձեզ՝ եւ ամ ժողովրդեանն իլի: զի յանուն
Յի Քի Նազովրեցւոյ՝ զոր դուքն խաչեցիք՝
զոր Ած յարոյց 'ի մեռելոց. նովաւ սա կայ առաջի
11 ձեր ողջացեալ: *Նա է վէմ անարգեալ
'ի ձէնջ շինողաց: որ եղեւ գլուխ անկեան:
12 *Եւ չիք այլով իւիք փրկութի: զի եւ ոչ անուն
այլ ոք 'ի ներքոյ երկնից տուեալ 'ի մարդիկ՝ որով
արժան իցէ կեալ մեզ:
13 *Հայեցեալ 'ի համարձակութիւնն պետրոսի եւ
յօհաննու, եւ 'ի վերայ հասեալ թէ արք տգէտք՝
եւ առանց դպրութեան են, զարմանային, զի ճանաչէին
14 զնս թէ ընդ Յի էին: *Եւ զայրն եւս տեսանէին
զբժշկեալն՝ զի կայր ընդ նոսա. եւ ոչ կարէին
15 տալ պատասխանի: *Եւ հրամայեալ նոցա
արտաքս քան զատեանն ելանել. խորհեցան ընդ
16 միմեանս: *Եւ ասեն՝ զի՞նչ արասցուք առնս
այսոցիկ՝ զի երեւելի նշան եղեւ 'ի ձեռն սոցա: ամ
իսկ բնակչաց եէմի յայտ է, եւ ոչ կարեմք ուրանալ:
17 *Այլ զի մի առաւել ճարակեսցի 'ի ժողովուրդն՝
սպառնասցուք նց, մի եւս խօսել յանունն
18 յայն՝ մի ումեք 'ի մարդկանէ. *Եւ կոչեցեալ զնս
պատուիրեցին ամենեւին մի խօսել՝ եւ մի ուսուցանել
19 յանուն Յի: *Իսկ պետրոս եւ յօհաննէս պատասխանի
ետուն եւ ասեն ցնս: եթէ արժան իցէ
առաջի Այ՝ ձեզ լսել առաւել քան Այ՝ ընտրեցէք:
20 *Այլ մեք ոչ կարեմք, զոր տեսաքն եւ լուաք՝
21 չխօսել: *Նոքա սպառնացեալ արձակեցին

զնա, եւ ոչինչ գտեալ թէ ո՟պ պատուհասեսցեն
զնա վ՟ն ժողովրդեանն. զի ամենեքեան փառաւոր
22 առնէին զԱ՟ծ վ՟ն լսոյն եղելոց։ * Զի ամաց էր
այրն՝ աւելի քան զքառասուն՝ յորոյ վերայ եղեւ
23 նշանս այս բժշկութեան։ * Եւ անդէն արձակեալք
եկին առ իւրեանսն. եւ պատմեցին, որչափ ինչ
ասացին ցնոսա քահանայապետքն եւ երիցունքն։
24 * Եւ նոքա լուեալ՝ միաբանին զձայն իւրեանց առ
Ա՟ծ՝ եւ ասեն։ դու Տ՟ր Ա՟ծ՝ որ արարեր զերկինս
25 եւ զերկիր՝ զծով եւ զա՟մ, որ է 'ի նոսա։ * Որ 'ի
բերանոյ հօր մերոյ դաւթի ծառայի քոյ՝ 'ի ձեռն
Հոգւոյն սրբոյ ասացեր։ զմէ՞ խռովեցան հեթա-
26 նոսք՝ եւ ժողովուրդք խորհեցան ընդունայն։ * Յանդիման
եղեն թագաւորք երկրի. եւ իշխանք ժողովեցան
'ի միասին, վասն Տ՟ն եւ վ՟ն օծելոյ նորա։
27 * Ժողովեցան արդարեւ 'ի քաղաքիս յայսմիկ, 'ի
վերայ սրբոյ Որդւոյ քոյ Յ՟ի, զոր օծերն. Հերովդէս՝
եւ պոնտացի պիղատոս՝ ազգօք եւ ժողովրդօք Ի՟ղի։
28 * Առնել որչափ ձեռն քո եւ կամք յառաջագոյն
29 սահմանեցին լինել։ * Եւ արդ Տ՟ր, հայեաց 'ի սպառ-
նալիսն նոցա՝ եւ տուր ծառայից քոյ ա՟մ համար-
30 ձակութ՟բ խօսել զբանն քո։ * 'Ի ձգել զձեռն քո
'ի բժշկութ՟ի, եւ նշանս, եւ արուեստս, լինել ան-
31 ուամբ սրբոյ Որդւոյ քոյ Յ՟ի։ * Եւ մինչ կային
նոքա յաղօթս՝ շարժեցաւ տեղին յորում էին ժո-
ղովեալ։ եւ լցան ամենեքին հոգւով սրբով. եւ
խօսէին զբանն Ա՟յ համարձակութ՟բ։
32 Ա.Զ։ * Եւ բազմութ՟ի հաւատացելոյն էր սիրտ
եւ անձն մի։ եւ ոչոք 'ի նոցանէ ասէր զինչէից իւրոց
թէ իւր իցէ. այլ էր ն՟ց ա՟մ ինչ հասարակաց։
33 * Եւ զօրութ՟բ բազմաւ տային զվկայութ՟ի առա-
քելոցն յարութեն Տ՟ն Յ՟ի Ք՟ի։ եւ շնորհք մե-
34 ծամեծք էին 'ի վերայ ամենեցուն ն՟ց։ * Եւ ոչոք
կարօտիւր 'ի նոսա. զի որք միանգամ տեարք էին
գիւղից կամ ապարանից՝ վաճառէին, եւ բերէին
35 զգինս վաճառելոցն։ * Դնէին առ ոտս առաքելոյն։
եւ բաշխէին իւրաքանչիւր՝ ո՟պ ումեք պիտոյ լինէր։
36 * Յովսէփ, որ կոչեցաւ բառնաբաս յառաքելոցն

*

տի։ (որ թարգմանի որդի մխիթարութ͞ե։) ղեւտա-
37 ցի՝ յազգէ կիպրացի։ * Էր նր͞ գիւղ· վաճառեաց,
եւ եբեր զգինսն՝ եւ եդ առ ոտս առաքելոցն։

ԳԼ· Ե·

1 Իսկ այր ոմն անանիա անուն, հանդերձ կնաւ իւրով
2 սափիրաւ· վաճառեաց զագարակ։ * Եւ խորեաց
'ի գնոյ անտի՝ գիտելով եւ կնոջն· եւ եբեր
3 մասն ինչ՝ եդ առ ոտս առաքելոցն։ * Ասէ պետրոս·
անանիա, ընդէ՞ր ելից սատանայ զսիրտ քո՝ ստել
քեզ Հոգւոյն սրբոյ, եւ խորել 'ի գնոյ գեղջն։
4 * Ո՞չ ապաքէն մինչ կայր՝ քո էր· եւ 'ի վաճառելն
ընդ քո իշխանութ͞բ էր։ զի՞ է՝ զի եդեր 'ի սրտի
քում՝ զիրս զայս։ ոչ ստեցեր մարդկան, այլ Ա͞յ։
5 * Եւ լուեալ անանիա զբանս զայսոսիկ՝ անկաւ, եւ
էհան զոգի։ եւ եղեւ ահ մեծ 'ի վերայ ամենեցուն,
6 որք լուանն զայն։ * Յառն կային երիտասարդքն՝ եւ
7 ամփոփեցին զնա՝ եւ տարեալ թաղեցին։ * Եւ եղեւ
իբրեւ ժամք երեք անցին, եւ կին նր͞ ոչ գիտէր
8 զինչ եղեալն էր՝ եմուտ 'ի ներքս։ * Պատասխանի
ետ նմա պետրոս՝ եւ ասէ։ ասա՛ դու ինձ՝ թէ այնչափ
գնոյ զգեօղն վաճառեցիք։ եւ նա ասէ՝ այո՛
9 այնչափ։ * Եւ ասէ ցնա պետրոս· զի՞ է՝ զի միաբանեցայք
դուք փորձել զՀոգին Տ͞ն· ահա ոտքն,
որք թաղեցին զայրն քո՝ 'ի դրան, հանցեն եւ զքեզ։
10 * Եւ անկաւ անդէն առ ոտս նր͞՝ եւ էհան զոգի։
մտին երիտասարդքն՝ գտին զնա մեռեալ· եւ հանին,
11 եւ թաղեցին առ առն իւրում։ * Եւ եղեւ
երկիւղ մեծ 'ի վերայ ամ͞ եկեղեցւոյն· եւ 'ի վերայ
ամենեցուն՝ որք լուանն զայն։

12 ԱԻ· * Եւ 'ի ձեռս առաքելոցն լինէին նշանք եւ
արուեստք բազումք 'ի ժողովրդեանն։ եւ էին միաբան
13 ամենեքեան 'ի սրահին սողոմոնի։ * Եւ յայլոց
անտի ոչ ոք իշխէր մերձենալ առ նոսա։ այլ յարգէր
14 զն͞ս ժողովուրդն։ * Եւ առաւելեւս յաւելունային
հաւատացեալքն 'ի Տ͞ր, բազմութ͞ի արանց եւ
15 կանանց։ * Մինչեւ 'ի հրապարակս հանել զհի-

ւանդս, և դնել պատգարակօք և մահճօք լուրեց̄· զի
ընդ անցանելն պետրոսի գոնէ հովանի նր̄ հասցէ
16 ումեք ՚ի նոցանէ: * Եւ ժողովիւր բազմութ ի շուրջ
՚ի քաղաքաց անտի յեէմ: բերէին զհիւանդս և
զնեղեալս յայսոց պղծոց· որք և բժշկէին ամենեքեան:
17 * Յարուցեալ քահանայապետն, և ամենեքին
որք ընդ նմա (այսինքն աղանդն սադուկեցւոց) լցան
18 նախանձու: * Եւ արկին զձեռս յառաքեալսն՝ և
եդին զնս̄ հրապարակաւ ՚ի բանտի:
19 * Այլ հրեշտակ Տն̄ ՚ի գիշերի եբաց զդուրս
20 բանտին, և հանեալ զնս̄՝ ասէ: * Գնացէք, կացէք
՚ի տաճարին, և խօսեցարուք ընդ ժողովրդեանն
21 զամ̄ պատգամս կենացս այսոցիկ: * Եւ իբրև լուան,
մտին ընդ առաւօտն ՚ի տաճարն՝ և ուսուցանէին:
եկն քահանայապետն՝ և որք ընդ նմա, կոչեցին
միաբան զատեանն, և զամ̄ ծերակոյտ որդւոցն Իղի,
22 և առաքեցին ՚ի բանտն ածել զնս̄: * Եւ իբրև եկին
սպասաւորքն՝ ոչ գտին զնոսա ՚ի բանտին:
23 դարձեալ անդրէն պատմեցին: * Եւ ասեն: թէ
զբանտն գտաք փակեալ ամ̄ զգուշութ̄բ· և զպահապանսն՝
զի կային առ դրանն· բացաք՝ և ՚ի ներքս
24 զոք ոչ գտաք: * Իբրև լուան զբանս զայս իշխանն
տաճարին՝ և քահանայապետքն, հիացեալ էն̄ նոցա,
25 թէ զինչ արդեօք լինիցի այն: * Եւ եկն ոմն պատմեաց
նց̄՝ թէ ահա արքն՝ զորս եդիք ՚ի բանտի՝
կան ՚ի տաճարին, և ուսուցանեն զժողովուրդն:
26 * Յայնժամ երթեալ իշխանն սպասաւորօքն հանդերձ՝
էած զնս̄ ոչ բռնութ̄բ: քանզի երկնչէին
27 ՚ի ժողովրդենէն՝ զի մի քարկոծեսցին: * Եւ ածեալ
զնս̄՝ կացուցին յատենի: եհարց ցնոսա քահանայապետն:
28 * Եւ ասէ: ոչ պատուիրելով պատուիրեցաք
ձեզ. մի ուսուցանել յանունն յայն: և
արդ ահաւասիկ լցիք զեէմ ուսմամբ ձերով: և
կամիք ածել ՚ի վր̄ մեր զարիւն առն այնորիկ:
29 * Պատասխանի ետ պետրոս և այլ առաքեալքն՝
և ասեն· Հնազանդիլ պարտ է Այ̄՝ առաւել քան
30 մարդկան: * Ած̄ հարցն մերոց յարոյց զՅս̄՝ զոր
դուք սպանէք կախեալ զփայտէ: * Զնա Ած̄ ա-

ռաջնորդ եւ փրկիչ բարձրացոյց աջով իւրով տալ
ապաշխարութիւն Իսրայէլի՝ եւ թողութիւն մեղաց:
32 * Եւ մեք եմք վկայք բանիցս այսոցիկ: եւ Հոգին սբ՝
33 զոր ետ ԱԾ հնազանդելոց իւրոց: * Եւ նոքա իբրեւ
լուան, տատանէին. եւ խորհէին սպանանել զնոսա.
34 * Յարուցեալ ոմն 'ի մէջ ատենին փարիսեցի՝
որում անուն էր Գամաղիէլ: օրէնսուսոյց՝ պատուական
ամ ժողովրդեանն. հրամայեաց սակաւիկ
35 մի զարսն արտաքս տանել: * Եւ ասէ ցնս՝ արք
Իսրայէլացիք. հայեցարուք 'ի ձեզ վասն արանցս այսոցիկ՝
36 զինչ արժան է գործել: * Յառաջ քան զաւուրս
զայսոսիկ յարեաւ Թեւդաս ասել զանձնէ,
թէ իցէ ոմն: յոր անկան արք թուով իբրեւ չորեքհարիւր:
որ սպանաւ՝ եւ ամենեքեան, որք միաբանեալ
էին ընդ նմա, քակտեցան՝ եւ եղեն ոչինչ:
37 * Յետ նր յարեաւ Յուդա Գալիլեացի՝ յաւուրս
աշխարհագրին. եւ ապստամբեցոյց զժողովուրդ բազում
զկնի իւր: եւ նա կորեաւ՝ եւ ամենեքեան որք
38 նմա հաւանեալք էին, ցրուեցան: * Եւ զարդիս ասեմ
ձեզ. 'ի բաց կացէք յարանցդ յայդցանէ: եւ
թոյլ տուք դոցա. զի թէ 'ի մարդկանէ իցէ խորհուրդդ
39 այդ՝ կամ գործ, քակտեսցի: * Ապա թէ
յԱՅ է՝ ոչ կարէք քակտել զդոսա. գուցէ եւ ԱԾամարտք
40 գտանիցիք: Հաւանեցան նմա: * Եւ կոչեալ
զառաքեալսն՝ գան հարին. եւ պատուիրեցին մի
41 խօսել յանուն ՅԻ. եւ արձակեցին զնս: * Եւ նոքա
գնային խնդալով յերեսաց ատենին. զի վասն
42 անուանն ՏՆ արժանի եղեն անարգելոյ: * Եւ զամ
օր 'ի տաճարին, եւ 'ի տունս ոչ դադարէին յուսուցանել
եւ աւետարանել զՅս Քս:

ԳԼ. Զ:

1 Եւ յաւուրսն յայնոսիկ 'ի բազմանալ աշակերտացն,
եղեւ տրտունջ յունաց առ հեբրայեցիսն.
զի արհամարհեալ լինէին 'ի պաշտամանն հանապազորդ
2 այրիք նց: * Կոչեցին երկոտասանքն զբազմութիւն
աշակերտացն եւ ասեն: ոչ է հաճոյ մեզ

3 թողուլ զբանն Այ՝ եւ պաշտել զսեղանս։ * Ընտ-
րեցէք եղբարք, վկայեալս ՚ի ձէնջ՝ արս եօթն լի
Հոգւով սրբով եւ իմաստութ̄բ. զորս կացուս-
4 ցուք ՚ի վ̄ր պիտոյիցս այսոցիկ։ * Եւ մեք աղօթից՝
5 եւ պաշտաման՝ եւ բանին հաստատուն լիցուք։ * Եւ
հաճոյ թուեցաւ առաջի ամ̄ բազմութեան։ Եւ ընտ-
րեցին զՍտեփաննոս՝ այր լի հաւատով եւ Հոգւով
սրբով. եւ զՓիլիպպոս. եւ զՊրոքորոն. եւ զՆիկանո-
րայ։ եւ զՏիմոնայ. եւ զՊարմենայ. եւ զՆիկողայոս
6 զեկն Անտիոքացի։ * Զորս կացուցին առաջի առա-
քելոցն. եւ աղօթս արարեալ. եդին ՚ի վ̄ր նց̄ զձեռս։
7 * Եւ բանն Ա̄յ աճէր. եւ բազմանայր թիւ աշա-
կերտացն յոյժ յե̄մ։ եւ բազում ժողովք ՚ի քա-
հանայիցն անսային հաւատոյն։
8 ԻԲ. * Ստեփաննոս՝ այր լի շնորհօք եւ զօրութ̄բ
առնէր արուեստս՝ եւ նշանս մեծամեծս ՚ի ժողովր-
9 դեանն։ * Յարեան ոմանք ՚ի ժողովրդենէն, որ կո-
չիւր լիբէրտացւոց՝ եւ կիւրենացւոց՝ եւ աղեքսանդրաց-
ւոց՝ եւ որ ՚ի կիլիկեցւոց՝ եւ յասիայ, վիճել ընդ
10 Ստեփաննոսի։ * Եւ ոչ կարէին զդէմ ունել իմաս-
11 տութեն եւ Հոգւոյն, որով խօսէր։ * Յայնժամ
հրապուրեցին արս ոմանս ասել. լուաք զդորա խօ-
12 սել բանս հայհոյութ̄ե ՚ի Մովսէս եւ յԱծ̄։ * Եւ խառ-
վեցին զժողովուրդն, եւ զծերսն, եւ զդպիրսն։
եւ հասեալ ՚ի վ̄ր յափշտակեցին զնա՝ եւ ածին
13 յատեանն։ * Եւ կացուցին վկայս սուտս՝ որք ասէ-
ին, այրս այս ոչ դադարէ խօսել բանս հայհոյու-
14 թ̄ե զտեղւոյն սրբոյ եւ զօրինացն։ * Լուաք ՚ի
դմանէ, զի ասէր՝ թէ Յս̄ նազովրեցի՝ նա քակեսցէ
զտեղիս զայս՝ եւ փոխեսցէ զօրէնս՝ զորս ետ մեզ
15 Մովսէս։ * Եւ հայեցեալ ՚ի նա ամենեցուն, որք
նստէին յատենին. տեսին զերեսս նր̄ իբրեւ զե-
րեսս հրեշտակի։

Գլ. Է։

1 Ասէ քահանայապետն՝ թէ արդարեւ այդ այդպէ՞ս
2 իցէ։ * Եւ նա ասէ՝ արք եղբարք եւ հարք՝ լուա-

րուք ինձ։ Ա՟ծ փառաց երևեցաւ հօր մերում աբրահամու
մինչդեռ 'ի միջագետս էր. մինչչև բնակեցուցեալ
3 էր զնա 'ի խառան. և ասէ ցնա։ * Ե՛լ յերկրէ
քումմէ և յազգէ քումմէ՝ և եկ յերկիր՝ զոր
4 ցուցից քեզ։ * Յայնժամ ելեալ յերկրէն քաղդէացւոց՝
բնակեցաւ 'ի խառան։ և անտի յետ մեռանելոյ
հօր ն՟ր՝ փոխեաց. և պանդխտեցոյց զնա յերկրիս
յայսմիկ, յորում դուք այժմ բնակեալ էք։
5 * Եւ ոչ ետ նմա ժառանգութիւն 'ի սմա, և ոչ
քայլ մի ոտին։ և խոստացաւ տալ նմա զսա 'ի բնակութիւն.
և զաւակի ն՟ր յետ ն՟ր. մինչ ոչ գոյր ն՟ր
6 որդի։ * Խօսեցաւ Ա՟ծ այսպէս, թէ եղիցի զաւակ
նորա պանդուխտ յօտար երկրի։ և ծառայեցուսցեն
զնա. և չարչարեսցեն զնա ամս չորեքհարիւր։
7 * Եւ զազգն՝ որում ծառայեսցեն, դատեցայց ես ասէ
Ա՟ծ։ և յետ այսորիկ ելցեն՝ և պաշտեսցեն զիս
8 'ի տեղւոջս յայսմիկ։ * Եւ ետ նմա ուխտ թլփատութեան։
և այսպէս ծնաւ զիսահակ։ և թլփատեաց զընա
յաւուր ութերորդի։ և իսահակ զյակոբ։ և
9 յակոբ զերկոտասան նահապետսն։ * Եւ նահապետքն
նախանձեալ ընդ յովսէփայ՝ վաճառեցին յեգիպտոս.
10 և էր Ա՟ծ ընդ նմա։ * Եւ փրկեաց զնա
յամ՟ նեղութեանց նորա։ և ետ նմա շնորհս և իմաստութի
առաջի փարաւոնի արքային եգիպտացւոց.
և կացոյց զնա իշխան եգիպտացւոցն, և ամ՟ տան
11 նորա։ * Եւ եկն սով յամենայն երկիրն եգիպտոսի.
և 'ի քանան նեղութիւն մեծ։ և ոչ գտանէին
կերակուր հարքն մեր։
12 * Եւ լուեալ յակոբայ թէ գտանի կերակուր յեգիպտոս՝
առաքեաց զհարսն մեր յառաջագոյն։
13 * Եւ յերկրորդումն ետ ծանօթս յովսէփ եղբարց
իւրոց. և յայտնի եղև փարաւոնի ազգ նորա։
14 * Առաքեաց յովսէփ, և կոչեաց զյակոբ զհայր իւր.
և զամ՟ ազգատոհմն. ոգիս եօթանասուն և հինգ։
15 * Եւ էջ յակոբ յեգիպտոս՝ և վախճանեցաւ ինքն
16 և հարքն մեր։ * Եւ փոխեցան 'ի սիւքէմ, և եդան
յայրին, զոր առաւ աբրահամ գնոց արծաթոյ
17 յորդւոցն եմովրայ՝ որդւոյ սիւքեմայ։ * Իբրև

մերձեցաւ ժամանակ աւետեացն, զոր խոստացաւ Ա՟ծ
աբրահամու, աճեաց ժողովուրդն՝ և բազմացաւ
18 յեգիպտոս։ * Մինչև յարեաւ այլ թագաւոր յեգիպտոս՝
19 որ ոչ ճանաչէր զյօսէփ։ * Նա հնարեցաւ
ազգին մերում, և չարչարեաց զհարսն մեր
առնել ընկեցիկ զմանկունս նց՟՝ զի մի ապրեսցին։
20 * Յորում ժամանակի ծնաւ և մովսէս՝ և էր կայտառ
առաջի Ա՟յ. որ սնաւ ՚ի տան հօր իւրոյ ամիս
21 երիս։ * Եւ ընկեցիկ առնել զնա՝ եբարձ
զնա դուստր փարաւոնի. և սնոյց զնա իւր յորդէգիրս։
22 * Եւ վարժեցաւ մովսէս ա՟մ իմաստութ՟բ
եգիպտացւոց. և էր զօրաւոր բանիւք և գործովք
23 իւրովք։ * Իբրև լցանէր քառասնամեայ ժամանակ,
անկաւ ՚ի սիրտ նորա շրջել զեղբարբք իւրովք՝ զորդւովքն
24 ի՟լի։ * Եւ տեսեալ զոմն զրկեալ՝ պ՟շտպեցաւ,
և խնդրեաց զվրէժ զրկելոյն, սպանանեալ զեգիպտացին։
25 * Զմտաւ ածէր թէ իմասցին եղբարք
նորա, զի Ա՟ծ ՚ի ձեռն նորա տալոց էր փրկութ՟ի
26 ն՟ց. և նոքա ոչ իմացան։ * Եւ ՚ի վաղիւն անդր
երևեցաւ ն՟ց մինչդեռ մարտնչէին՝ և վարեաց զն՟ս
՚ի խաղաղութ՟ի. ասէ, արք եղբարք էք, ընդէ՞ր
27 զրկէք զմիմեանս։ * Իսկ որ զրկէր զընկերն, մերժեաց
զնա՝ և ասէ. ո՞ կացոյց զքեզ իշխան և դատաւոր
28 ՚ի վ՟ր մեր։ * Միթէ սպանանե՞լ կամիցիս
զիս՝ զորօրինակ սպաներ երէկ զեգիպտացին։
29 * Եւ փախեաւ մովսէս ՚ի բանիցս յայսցանէ, և եղև
պանդուխտ յերկրին մադիամու. ուր ծնաւ երկուս
30 Բ՟. որդիս։ * Եւ ՚ի կատարել ամացն քառասնից,
երևեցաւ նմա յանապատի լերինն սինայ հրեշտակ
31 Տ՟ն ՚ի բոց հրոյ մորենւոյն։ * Եւ մովսէս տեսեալ
զարմացաւ ընդ տեսիլն, և ՚ի մատչելն ն՟ր նշմարել
32 եղև ձայն Տ՟ն։ * Ես եմ Ա՟ծ հարցն քոց. Ա՟ծ
աբրահամու. Ա՟ծ իսահակայ. և Ա՟ծ յակոբու։ և
զահի հարեալ մովսէս՝ ոչ իշխէր հայիլ։
33 * Եւ ասէ ցնա Տ՟ր լոյծ զկօշիկս յոտից քոց. զի
տեղիդ՝ յորում դուդ կայցես՝ երկիր սուրբ է։
34 * Տեսանելով տեսի զչարչարանս ժողովրդեան իմոյ՝
որ յեգիպտոս. և լուայ հեծութ՟ե ն՟ց՝ և իջի փրկ

կել զնոսա․ և արդ՝ եկ, առաքեցից զքեզ յեգիպ-
35 տոս։ *Զայն մովսէս՝ զոր ուրացան, և ասէին․ ո՞
կացոյց զքեզ իշխան և դատաւոր ՚ի վերայ մեր․ զնա
Ած իշխան և փրկիչ առաքեաց ՚ի ձեռն հրեշտա-
36 կին, որ երևեցաւ նմա ՚ի մորենւոջն։ *Նա եհան
զնոսա՝ արարեալ նշանս և արուեստս յերկրին ե-
գիպտացւոց՝ և ՚ի կարմիր ծովուն, և յանապատին
37 ամս քառասուն։ *Այս մովսէս է, որ ասաց ցոր-
դիսն իլի․ մարգարէ յարուսցէ ձեզ Տր Ած ձեր
38 յեղբարց ձերոց իբրև զիս՝ նմա լուիջիք։ *Սա է՝
որ եղև յեկեղեցւոջն՝ յանապատի ընդ հրեշտակին,
որ խօսեցաւ ընդ նմա ՚ի լերինն սինայ՝ և ընդ հարսն
մեր․ որ ընկալաւ զպատգամս կենդանիս՝ տալ մեզ։
39 *Որում ոչ կամեցան հնազանդել հարքն մեր․
այլ մերժեցին, և դարձան սրտիւք իւրեանց յե-
40 գիպտոս։ *Եւ ասեն ցահարոն․ արա մեզ աստ-
ուածս, որք երթիցեն առաջի մեր․ զի մովսէսն այն՝
որ եհան զմեզ յերկրէն եգիպտացւոց՝ ոչ գիտեմք
41 զի՞ եղև նմա։ *Եւ արարին յաւուրսն յայնոսիկ
զորթ․ և մատուցին զոհս կռոց․ և ուրախ լինէին
42 ՚ի գործս ձեռաց իւրեանց։ *Դարձոյց Ած՝ և մատ
նեաց զնոսա ՚ի պաշտօն զօրութեան երկնից․ որպէս և
գրեալ է ՚ի գիրս մարգարէից․ միթէ զոհս և պա-
տարագս մատուցի՞ք ինձ զամս քառասուն յանա-
43 պատին՝ տունդ իլի։ *Եւ առիք զխորանն մողոքայ․
և զաստղն աստուծոյն հռեմփայ․ զպատկերսն, զորս
արարէք երկրպագանել նոցա․ և փոխեցից զձեզ
44 յայն կողմն բաբելոնացւոց։ *Խորանն վկայութեան էր
ընդ հարսն մեր յանապատին․ որպէս հրաման ետ՝
որ խօսէրն ընդ մովսէսի, առնել զայն ըստ օրինա-
45 կին՝ զոր ետես։ *Զոր և ընկալեալ բերէին հարքն
մեր՝ հանդերձ յեսուաւ ՚ի վիճակ ազգացն․ զորս
մերժեաց Ած յերեսաց հարցն մերոց․ մինչև յաւ-
46 ուրսն դաւթի։ *Որ եգիտ շնորհս առաջի Այ․
և խնդրեաց գտանել յարկս Այ յակոբայ։
47 *Նա և սողոմոն շինեաց նմա տուն։
48 *Այլ ոչ եթէ բարձրեալն ՚ի ձեռագործ տաճարս
49 բնակի․ այլ որպէս մարգարէն ասէ։ *Երկինք աթոռ

իմ են, և երկիր պատուանդան ոտից իմոց․
զո՞րպիսի տուն շինեցիք ինձ ասէ Տ̄ր․ կամ
50 զի՞նչ տեղի հանգստեան իմոյ։ * Ո՞չ ձեռն իմ՝ արար
51 զայս ամենայն։ * Խստապարանոցք և անթլփատք
սրտիւք և ականջօք․ դուք հանապազ Հոգւոյն
սրբոյ հակառակ կայք․ ո̄պ հարքն ձեր՝ և
52 դուք։ * Զո՞ ՚ի մարգարէից ոչ հալածեցին հարքն
ձեր․ և սպանին զայնոսիկ՝ որք յառաջագոյն պատմեցին
վ̄ս գալստեան արդարոյն․ որոյ դուք այժմ
53 մատնիչք և սպանողք եղէք։ * Որք առիք զօրէնս
54 ՚ի հրամանս հրեշտակաց․ և ո՛չ պահեցիք։ * Եւ
լուեալ զայս՝ պայրանային ՚ի սիրտս իւրեանց, և
կրճտէին զատամունս ՚ի վ̄ր նորա։
55 * Եւ նա էր լի Հոգւով սրբով․ հայեցաւ յերկինս,
և ետես զփառս Այ․ և զՅս̄ զի կայր ընդաջմէ
Այ․ և ասէ՝ ահա տեսանեմ զերկինս բացեալ՝
և զՈրդի մարդոյ զի կայ ընդաջմէ Այ։
56 * Աղաղակեալ ՚ի ձայն մեծ՝ խցէին զականջս իւրեանց,
57 և դիմեցին առ հասարակ ՚ի վ̄ր ն̄ր։ * Եւ
հանեալ արտաքոյ քաղաքին՝ քարկոծէին․ և վկայքն
դնէին զձորձս իւրեանց առ ոտս երիտասարդի միոջ՝
58 որ կոչիւր սաւուղ։ * Եւ քարկոծ առնէին
զստեփաննոս որ կարդայր և ասէր․ Տ̄ր Յս̄ ընկալ
59 զոգի իմ։ * Եդ ծունր՝ և աղաղակեաց ՚ի ձայն բարձր․
Տ̄ր, մի համարիր դոցա զայս մեղս․ և զայս իբրև
ասաց՝ ննջեաց․ և սօղոս էր կամակից սպանման
նորա։

ԳԼ․ Ը։

1 Եւ եղև յաւուրն յայնմիկ հալածումն մեծ ՚ի
վերայ եկեղեցւոյն յե̄էմ․ և ամենեքեան ցրուեցան
՚ի գաւառս հրէաստանի՝ և ՚ի սամարիայ՝ բայց
2 յառաքելոցն։ * Եւ բարձին զստեփաննոս արք երկիւղածք՝
և արարին կոծ մեծ ՚ի վերայ ն̄ր։
3 ԲԴ․ * Բայց սօղոս մշտակալ էր եկեղեցւոյն․ ՚ի
տունս տունս մտանէր․ քարշէր զարս և զկանայս՝ մատնէր
4 ՚ի բանտ։ * Եւ սփռեալքն շրջէին, և աւետարանէ

5 լին զբանն ։ * Իսկ Փիլիպպոս իջեալ ՚ի քաղաքն
6 Սամարացւոց՝ քարոզէր նոցա զՅ͞ս ։ * Ունկն դնէին
ժողովուրդքն բանիցն Փիլիպպոսի միաբան ՚ի լսել
նոցա՝ և ՚ի տեսանել զնշանսն, զոր առնէր ։
7 * Քանզի բազումք՝ որք ունէին զայսս պղծս՝ աղա-
8 ղակէին ՚ի ձայն մեծ, և ելանէին ։ * Եւ բազումք
9 անդամալոյծք և կաղք բժշկէին ։ * Եւ եղև ուրա-
խութիւն մեծ ՚ի քաղաքին այնմիկ ։ այր ոմն անուն
Սիմոն՝ յառաջագոյն էր ՚ի քաղաքին · մոգ էր, և
ապշեցուցանէր զազգն Սամարացւոց · ասել զանձնէ
10 թէ իցէ մեծ ոմն ։ * Յոր հայէին ամենեքին ՚ի
փոքուէ մինչև ՚ի մեծամեծս · և ասէին՝ սա է
11 զօրութիւն Ա͞յ՝ որ կոչի մեծ ։ * Հայէին ՚ի նա վասն
բազում ժամանակաց մոգութեամբքն ապշեցուցանելոյ
12 զնոսա ։ * Բայց յորժամ հաւատային Փիլիպպոսի,
որ աւետարանէր վասն արքայութեան Ա͞յ, և ան-
ուանն Յ͞ի Ք͞ի, մկրտէին ամենեքեան՝ արք և կա-
13 նայք ։ * Այլ և ինքն Սիմոն հաւատայ · և մկր-
տեալ կանխէր առ Փիլիպպոս ։ տեսեալ զնշանսն և
զմեծամեծ զօրութիւնս, որք լինէին՝ զարմանայր ։
14 * Իբրև լուան, որք յԵրուսաղէմ առաքեալքն էին, թէ
և ՚ի Սամարիայ ընկալան զբանն Ա͞յ, առաքեցին
15 առ նոսա զպետրոս և զՅովհաննէս ։ * Որք իջեալք՝
կացին յաղօթս ՚ի վերայ նոցա, որպէս զի առցեն զՀո-
16 գին սուրբ ։ * Զի ցայն ժամ չև ևս էր և ոչ ՚ի
վերայ միոյ նոցա հասեալ · բայց միայն մկրտեալք
17 էին յանուն Տ͞ն Յ͞ի ։ * Յայնժամ եդին զձեռս ՚ի
18 վ͞ն նոցա՝ և առնուին զՀոգի սուրբ ։ * Տեսեալ Սի-
մոնի՝ թէ զձեռն ՚ի վերայ դնելով առաքելոյն տու-
եալ լինի Հոգին սուրբ, մատոյց ն͞ց ինչս՝ և ասէ ։
19 * Տուք և ինձ իշխանութիւն զայս · զի յոր վե-
րայ դնիցեմ զձեռս՝ առցէ զՀոգի սուրբ · և պետ-
20 րոս ասէ ցնա ։ * Արծաթ քո ընդ քեզ լիցի ՚ի
կորուստ · զի զպարգևսն Ա͞յ համարեցար ընչիւք
21 ստանալ ։ * Ոչ գոյ քեզ մասն և վիճակ ՚ի բանիդ
յայդմիկ · քանզի սիրտ քո ոչ է ուղիղ առաջի
22 Ա͞յ ։ * Ապաշխարեա դու ՚ի չարեացդ քոց յայդցա-
նէ · և աղաչեա զՏ͞ր · թերևս թողութիւն լիցի քեզ

23 'ի մեղմելս խորհրդոց սրտի քոյ ։ * Քանզի 'ի դառնութեան մաղձի, եւ 'ի կնճիռն անիրաւութեան տեսա-
24 նեմ զքեզ ։ * Պատասխանի ետ սիմոն, եւ ասէ ․ ա-
ղաչեցէք դուք վասն իմ զՏր, զի մի ինչ եկեսցէ
25 'ի վերայ իմ, յորոց դուքդ ասացիք ։ * Եւ նոքա
եդեալ զվկայութիւն խօսեցան զբանն Այ՝ եւ դար-
ձան յեէմ, եւ 'ի բազում գեօղս սամարացւոյն ա-
ւետարանէին ։

26 ԻԵ․ * Հրեշտակ Տն խօսեցաւ առ փիլիպպոս՝ եւ
ասէ․ արի՛, եւ գնա՛ դու 'ի կողմն հարաւոյ՝ ընդ ճա-
նապարհ որ իջանէ յեէմէ 'ի գազայ․ այս է անա-
27 պատ ։ * Եւ յարեաւ գնաց․ եւ ահաւասիկ այր մի
եթէովպացի, ներքինի, հզօր՝ կանդակայ տիկնոջ ե-
թէովպացւոց․ որ էր 'ի վերայ ամենայն գանձուց
նորա․ որ եկեալ էր երկիրպագանել յեէմ ։
28 * Եւ էր անդրէն դարձեալ՝ եւ նստեալ 'ի կառս իւ-
29 րում․ ընթեռնոյր զմարգարէն զեսայի ։ * Ասէ Հոգին
ցփիլիպպոս․ մատի՛ր, եւ յարեա՛յ 'ի կառդ յայդո-
30 սիկ ։ * Եւ ընթացեալ փիլիպպոս․ լուաւ, զի ըն-
թեռնոյր զեսայի մարգարէ, եւ ասէ․ գիտիցե՞ս ար-
31 դեօք, զոր ընթեռնուցուսդ ։ * Եւ նա ասէ՝ զիա՞րդ
կարիցեմ գիտել՝ թէ ոք ոչ առաջնորդեսցէ ինձ․
եւ աղաչեաց զփիլիպպոս ելանել նստիլ ընդ նմա ։
32 * Եւ գլուխ գրոյն՝ զոր ընթեռնոյր՝ էր այս․ իբրեւ
ոչխար 'ի սպանդ վարեցաւ․ եւ իբրեւ զգառն առա-
ջի կտրչի իւրոյ անմռունչ ․ այնպէս ոչ բանայ
33 զբերան իւր ։ * 'Ի խոնարհութեան նր դատաստան
նորա բարձաւ ։ զազգատոհմն նորա ո՞ պատմեսցէ ․
34 զի բառնին յերկրէ կեանք նորա ։ * Պատասխանի
ետ ներքինին փիլիպպոսի, եւ ասէ․ աղաչեմ զքեզ,
վն ո՞յր ասէ մարգարէն զայս․ վասն իւր, եթէ
35 վասն այլոյ ուրուք ։ * Եբաց փիլիպպոս զբերան
իւր․ եւ սկսեալ 'ի գրոց յայսմանէ՝ աւետարանեաց
36 զՅս ։ * Իբրեւ երթային զճանապարհայն, եկին 'ի
ջուր ինչ․ եւ ասէ ներքինին, ահաւասիկ ջուր՝
37 զի՞նչ արգելու զիս 'ի մկրտելոյ ։ * Եւ ասէ ցնա
փիլիպպոս՝ եթէ հաւատաս բոլորով սրտիւ, մարթ
է ։ պատասխանի ետ եւ ասէ․ հաւատամ եթէ է

38 Յ͞ս Ք͞ս Որդի Ա͞յ: * Եւ հրամայեաց կալուցանել
զկառսն. և իջին երկոքեան 'ի ջուրն, փիլիպպոս
39 և ներքինին՝ և մկրտեաց զնա: * Եւ իբրև ելին
'ի ջրոյ անտի, Հոգին սուրբ եկն 'ի վ͞ր ներքինւոյն.
և հրեշտակ Տ͞ն յափշտակեաց զփիլիպպոս. և ոչ
ևս ետես զնա ներքինին. և գնայր զճանապարհ իւր
40 ուրախութ͞բ: * Բայց փիլիպպոս գտաւ յազովտոս.
և շրջեալ աւետարանէր ամենեցուն քաղաքացն
մինչև 'ի գալ նորա 'ի կեսարիա:

Գ.Լ. Թ.

ԲՁ. Իսկ սօղոս տակաւին լցեալ սպառնալեօք և
1 սպանմամբ աշակերտացն Տ͞ն. մատուցեալ առ
2 քահանայապետն: * Խնդրեաց 'ի նմանէ թուղթս
'ի դամասկոս առ ժողովուրդսն. ապա թէ զոք գտցէ
զայնր ճանապարհաւ արս կամ կանայս, կապեալ
3 ածցէ յե͞մ: * Եւ ընդ երթալն ն͞ր եղև մերձե-
նալ 'ի դամասկոս. յանկարծակի շուրջ զնովաւ
4 փայլատակեաց լոյս յերկնից: * Եւ անկեալ յեր-
կիր՝ լուաւ զբարբառ՝ որ ասէր ցնա. սաւուղ սաւ-
5 ուղ. զի՞ հալածես զիս: * Եւ ասէ՝ ո՞վ ես Տ͞ր: և
նա ասէ. ես եմ Յ͞ս, զոր դու հալածես. խիստ է
քեզ ընդդէմ խթանի աքացել:
6 * Եւ զարհուրեալ՝ և անշշունջ լեալ՝ ասաց. Տէր,
7 զիս զի՞նչ կամիս առնել: * Եւ ասէ ցնա Տէր. այլ
յարի կաց՝ և մուտ 'ի քաղաքդ. և պատմեսցի քեզ՝
զինչ քեզ պարտ իցէ առնել: Իսկ արքն, որք ը͞ն
նմայն երթային, կային անշշունջ. զձայնն միայն
8 լսէին՝ բայց տեսանէին և ոչինչ: * Յարեաւ սօղոս
յերկրէ անտի, և աչօք բացօք ոչ զոք տեսանէր.
զձեռանէ առեալ նորա՝ մուծին 'ի դամասկոս,
9 * Եւ էր անդ աւուրս երիս՝ և ոչ տեսանէր. և
10 ոչ եկեր՝ և ոչ էարբ: * Եւ էր ոմն աշակերտ 'ի
դամասկոս՝ անանիա անուն: և ասէ ցնա Տ͞ր 'ի տես-
լեան, անանիա: և նա ասէ՝ ահաւասիկ եմ Տ͞ր:
11 * Եւ ասէ ցնա Տ͞ր. յարի կաց՝ և գնա ընդ փողոցն,
որ կոչի ուղիղ. և խնդրեսցես յապարանսն յու-

դայ՝ սօղոս անուն տարսոնացի՝ զի կայ դեռ յաղօթս.
12 *(Եւ ետես ’ի տեսլեան զայր մի անանիա անուամբ
մտեալ և եդեալ ’ի վերայ նորա ձեռս. որպէս զի
13 տեսցէ :) * Պատասխանի ետ անանիա՝ Տր̄՝ լուեայ
’ի բազմաց վասն առնն այնորիկ՝ որչափ արար չարիս
14 սրբոց քոց յէ̄մ: * Եւ աստ ունի իշխանութիւն
’ի քահանայապետացն կապել զամենեսեան,
15 որք կարդան զանուն քո: * Ասէ ցնա Տր̄, երթ
դու՝ զի անօթ ընտրութե̄ է նա ինձ, կրել զանուն
իմ առաջի հեթանոսաց՝ և թագաւորաց՝ և
16 որդւոցն իղի: * Քանզի ես իսկ ցուցից նմա՝ որչափ
պարտ իցէ նմա չարչարիլ վս̄ անուան իմոյ:
17 * Եւ գնաց անանիա՝ և եմուտ յապարանսն. և եդեալ
’ի վերայ նորա ձեռս, ասէ. սաւուղ եղբայր՝
’ի վեր հայեաց՝ Տր̄ առաքեաց զիս. Յս̄, որ երևեցաւն
քեզ ’ի ճանապարհին՝ յորում գայիր. ոպ̄
18 զի տեսցես՝ և լցցիս հոգւով սրբով: * Եւ վաղվաղակի
անկան յաչաց նորա իբրև զկեղևունք. ետես՝
19 և յարեաւ մկրտեցաւ: * Եւ առեալ զկերակուր՝
զօրացաւ. և եղև ’ի դամասկոս աւուրս
20 ինչ ընդ աշակերտսն: * Եւ վաղվաղակի ’ի ժողովուրդսն
քարոզեաց զՅս̄. թէ սա է Որդին Այ̄:
21 * Զարմացեալ էին ամենեքեան, որք լսէինն, և
ասէին. ո՞չ սա էր՝ որ աւեր հարկանէր յէ̄մ զայնոսիկ,
որք կարդային զանուն Յի. և այսր նմին
իրի եկեալ է. զի կապեալս զսոսա տարցի առ քահանայապետսն:
22 * Այլ սօղոս առաւել ևս զօրանայր՝
և յաղթահարէր զհրէայսն՝ որք բնակեալ էին ’ի
դամասկոս. և խելամտեցուցանէր թէ սա է Քս̄ն:
23 * Իբրև կատարեցին աւուրք բազումք, խորհեցան
հրէայքն սպանանել զնա:
24 * Յայտնեցաւ սօղոսի նենգութի̄ նց̄. քանզի սպահէին
զդրունսն ’ի տուէ և ’ի գիշերի՝ որպէս զի
25 սպանցեն զնա: * Եւ առեալ զնա աշակերտացն ’ի
գիշերի՝ ընդ պարիսպն կախեալ իջուցին վանդակաւ:
26 * Իբրև եկն սօղոս յէ̄մ, ընդելանէր յարիլ
յաշակերտսն. և ամենեքեան երկնչէին ’ի նմանէ.
չհաւատային եթէ իցէ աշակերտ:

27 * Բայց բառնաբաս առեալ զնա՝ էած առ առաքեալսն․
եւ պատմեաց նոցա՝ զիարդ ’ի ճանապարհին ետես
զՏ՟ր ․ եւ զի խօսեցաւ ընդ նմա ․ եւ զի ’ի դամասկոս
28 համարձակեցաւ յանուն Յ՟ի ։ * Եւ էր ընդ նոսա
մտանել եւ ելանել յէ՟մ, համարձակեալ յանուն Տ՟ն ։
29 * Խօսէր, եւ վիճէր ընդ յոյնս ․ եւ նոքա խոկային
30 սպանանել զնա ։ * Եւ իմացեալ եղբարցն՝ իջուցին
զնա ’ի կեսարիայ ․ եւ առաքեցին զնա ’ի տարսոն ։
31 * Բայց եկեղեցին ընդ ամենայն հրէաստան եւ ’ի սամարիա եւ ’ի գալիլեա ունէր զխաղաղութիւն շինեալ
եւ երթեալ զհետ երկիւղի Տ՟ն ․ եւ մխիթարութ՟ք
Հոգւոյն սրբոյ բազմանայր ։
32 ԻԷ․ * Եւ եղեւ ’ի շրջելն պետրոսի առ ամենեքումբք,
իջանել նմա եւ առ սուրբսն, որք բնակեալ էին ’ի լիւդ-
33 դեայ ։ * Եւ եգիտ անդ այր մի, որում անուն էր
ենեա, ութամեայ դնիւր ’ի մահիճս անդամալոյծ ։
34 * Եւ ասէ ցնա պետրոս ․ Ենեա՝ բժշկէ զքեզ Տէր
Յ՟ս Ք՟ս ․ արի, եւ քեզէն թօթափեա զանկողինս
35 քո ։ եւ վաղվաղակի յարեաւ ։ * Եւ տեսին զնա ա-
մենեքեան, որք բնակեալ էին ’ի լիւդդեայ եւ ’ի
սարոնայ ․ որք եւ դարձան իսկ ’ի Տ՟ր ։
36 * Եւ ’ի յոպպէ էր կին մի աշակերտեալ՝ անուն
տաբիթա, որ թարգմանեալ կոչի այծեմնիկ ․ նա
էր լի գործովք բարեօք եւ ողորմութ՟ք՝ զորս առ-
37 նէր ։ * Եւ եղեւ յաւուրսն յայնոսիկ հիւանդանալ
նմա եւ մեռանել ․ լուացին զնա՝ եւ եդին ’ի դստի-
38 կոնի անդ ։ * Եւ մերձ էր լիւդդեա ’ի յոպպէ ․
աշակերտացն լուեալ եթէ պետրոս անդ է, առա-
քեցին երկուս արս առ նա՝ աղաչել, զի մի դանդա-
39 ղեսցի գալ առ ն՟ս ։ * Եւ յարուցեալ պետրոս՝ եկն
առ նոսա ․ որ իբրեւ եկն՝ հանին ’ի վերնատունն ․
եւ կային շուրջ զնովաւ այրիքն ամենայն ․ լային,
եւ ցուցանէին զձորձս եւ զհանդերձս, որչափ առ-
40 նէր նոցա այծեմնիկն ։ * Եւ հանեալ արտաքս զա-
մենեսեան պետրոսի, եդ ծունր, եկաց յաղօթս ․ եւ
դարձաւ ’ի մարմինն եւ ասէ ․ տաբիթա՝ արի, կայ
յանուն Տ՟ն Յ՟ի Ք՟ի ․ եւ նա եբաց զաչս իւր ․ եւ

41 տեսեալ զպետրոս՝ նստաւ կանգուն։ *Զձեռն ետ
նմա՝ եւ յարոյց զնա. եւ կոչեաց զսուրբսն, եւ զայրիս,
42 առաջի կացոյց զնա կենդանի։ *Եւ յայտնի եղեւ
ընդ ա̄մ յոպպէ. եւ հաւատացին բազումք ՚ի Տ̄ր։
43 *Եւ եղեւ աւուրս բազումս լինել նմա ՚ի յոպպէ՝
առ ումեմն սիմոնի խաղախորդի։

Գլ. Ժ։

1 Այր մի էր ՚ի կեսարիա՝ անուն կոռնելիոս՝
Գ.Կ. հարիւրապետ. ՚ի գնդէն որ կոչիւր իտալիակի։
2 *Բարեպաշտօն՝ եւ երկիւղած յԱ̄յ ա̄մ տամբ
իւրով. առնէր ողորմութիւնս բազումս ժողովրդեանն.
եւ յաղօթս կայր առ Ա̄ծ յամենայն ժամ։
3 *Ետես ՚ի տեսլեան յայտնապէս զիններորդ ժամու
աւուրն զհրեշտակ Ա̄յ՝ զի մտանէր առ նա՝ եւ ասէր
4 ցնա. կոռնելիէ։ *Եւ նա հայեցեալ ընդ
նա զարհուրեցաւ. եւ ասէ՝ զի՞ է Տ̄ր։ ասէ ցնա,
աղօթք քո՝ եւ ողորմութիւնք՝ ելին յիշատակաւ առաջի
5 Ա̄յ։ *Եւ արդ յղեա արս ՚ի յոպպէ՝ եւ կոչեա
6 զսիմոն ոմն՝ որ կոչի պետրոս։ *Նա մտեալ է
առ սիմոնի ումեմն խաղախորդի, որոյ է տունն
7 մերձ ՚ի ծով։ *Եւ իբրեւ գնաց հրեշտակն, որ խօսէր
ընդ նմա՝ կոչեաց երկուս ՚ի ծառայիցն՝ եւ զինուոր
մի բարեպաշտօն ՚ի սպասաւորացն իւրոց։
8 *Եւ պատմեալ նոցա զամենայն՝ առաքեաց զնոսա
9 ՚ի յոպպէ։ *Եւ ՚ի վաղիւն անդր ՚ի Ճանապարհ անկանել
նոցա՝ եւ մօտ ՚ի քաղաքն լինել՝ ել պետրոս
՚ի տանիսն կալ յաղօթս զվեցերորդ ժամուն։
10 *Քաղցեաւ, եւ կամէր ճաշակել. եւ ՚ի պատրաստել
նոցա՝ եղեւ ՚ի վերայ ն̄ր զարմացումն։ +
11 *Եւ տեսանէր զերկինս բացեալ. եւ զչորեցունց
տանոց կապեալ անօթ ինչ իբրեւ կտաւոյ մեծի,
12 իջեալ եւ նստեալ ՚ի վ̄ր երկրի։ *Յորում էին
ա̄մ չորքոտանիք եւ սողունք երկրի, եւ թռչունք
13 երկնից։ *Եւ եղեւ ձայն առ նա. արի պետրէ, զեն,
14 եւ կեր։ *Եւ պետրոս ասէ. քաւ լիցի Տ̄ր. զի ոչ
երբէք կերի խառնակ ինչ եւ անսուրբ։

15 *Չայն եղև կրկին անգամ առ նա. զոր Ած սրբեաց՝
16 դու մի պղծեր: *Այս եղև երիցս՝ և վերացաւ
17 անօթն յերկինս: *Եւ մինչդեռ զարմացեալ
էր ընդ միտս պետրոս՝ եթէ զի՞նչ իցէ տեսիլն
զոր ետես. ահա արքն առաքեալք 'ի կուռնէղեայ՝
հարցին զապարանիցն սիմոնի, կացին առ դրանն:
18 *Կոչեցին զոմն՝ և հարցանէին, եթէ սիմոն՝ որ
19 կոչի պետրոս՝ աստ մնեալ իցէ: *Եւ մինչդեռ պետրոս
զմտաւ ածէր վասն տեսլեանն՝ ասէ Հոգին
ցնա. ահաւասիկ արք ոմանք խնդրեն զքեզ:
20 *Այլ արի, էջ և երթ ընդ նոսա առանց իրիք
21 խղճելոյ. զի ես առաքեցի զնոսա: *Եւ իբրև էջ
պետրոս առ նոսա, ասէ. ահաւասիկ ես եմ, զոր
խնդրէքն. զի՞նչ իրք են՝ վասն որոյ եկիքդ:
22 *Եւ նոքա ասեն, կուռնէղիոս հարիւրապետ՝ այր
արդար և երկիւղած յԱՅ. վկայեալ յամ ազգէն
հրէից. զհրաման էառ 'ի հրեշտակէ սրբոյ կոչել
23 զքեզ 'ի տուն իւր՝ և լսել բանս 'ի քէն: *Կոչեաց
զնա 'ի ներքս՝ և առ իւր ագոյց. և 'ի վաղիւն
անդր յարուցեալ պետրոս՝ գնայր ընդ նոսա. և
ոմանք յեղբարց անտի՝ որք 'ի յոպպէ էին՝ եկին
24 ընդ նմա: *Եւ 'ի վաղիւն մտին 'ի կեսարիայ.
և կուռնէղիոս մնայր նոցա. կոչեալ զազգատոհմն
Գ.Ր. իւր՝ և զկարևոր բարեկամսն:
25 *Եւ եղև 'ի մտանելն պետրոսի, ընդ առաջ եղև
նմա կուռնէղիոս. անկեալ առ ոտսն՝ երկիրպագանէր:
26 *Եւ պետրոս կանգնեաց զնա՝ և ասէ. յոտն
27 կաց՝ և ես ինքն մարդ եմ: *Եւ խօսելով ընդ
նմա եմուտ 'ի ներքս. և գտանէր անդ ժողովեալ
28 բազումս: *Եւ ասէ ցնոսա. դուք ինքնին գիտէք
որպէս անմարթ է առն հրէի հայիլ կամ մերձենալ
առ այլազգիս. և ինձ Ած եցոյց մի զոք խառնակ
29 կամ անսուրբ ասել 'ի մարդկանէ: *Վասն
այդորիկ և առանց ը̄ բանս ինչ ածելոյ եկի կոչեցեալ.
բայց արդ հարցանեմ. յի՞նչ պէտս կոչեցիք
30 զիս: *Եւ կուռնէղիոս ասէ. յառաջքան զչորս
աւուրս մինչ ցայս ժամ, կայի յաղօթս յինն ժամ
'ի տան իմում. և ահա այր մի եկն՝ և եկաց առա

31 ջի իմ 'ի հանդերձս սպիտակս. և ասէ: * Կոռ-
նէլիէ, լսելիք եղեն աղօթք քո. և ողորմութիւնք
32 քո յիշեցան առաջի ԱՅ՟: * Եւ արդ յղեա՛ 'ի Յոպ-
պէ՝ և կոչեա զսիմոն, որ կոչեցեալն է պետրոս.
սա մտեալ է 'ի տուն սիմոնի ուրումն խաղախորդի
մերձ 'ի ծով. որ եկեալ, և խօսեսցի ընդ քեզ:
33 * Վաղվաղակի ուրեմն առաքեցի առ քեզ: և դու
բարւոք արարեր՝ զի եկիր. արդ ամենեքեան մեք
առաջի քո կամք լսել զամենայն, որ հրամայեալ է
34 քեզ 'ի ՏԷ՟: * Եբաց պետրոս զբերան իւր՝ և ասէ.
ճշմարտութբ՟ հասու լինիմ. զի ոչ գոյ ակնառութի՟
35 առ յԱՅ՟: * Այլ յամ՟ ազգս՝ որ երկնչիցին 'ի նմանէ,
և գործէ զարդարութի՟՝ ընդունելի է նմա:
36 * Զբանն առաքեաց որդւոց իլի՟, աւետարանել
զխաղաղութի՟ 'ի ձեռն ՅԻ՟ ՔԻ՟. (սա է ամենայնի
37 ՏՐ՟:) * Դուք ինքնին գիտէք զբանն, որ եղև ընդ
ամ՟ հրէաստան սկսեալ 'ի գալիլիէէ յետ մկրտու-
38 թեան, զոր քարոզեաց Յօհաննէս: * Զյս՟ որ 'ի նա-
զարեթէ՝ զոր էօծ ԱԾ՟ հոգւով սրբով և զօրութբ՟.
որ շրջեցաւ բարի առնել՝ և բժշկել զամենայն ըմ-
բռնեալս 'ի սատանայէ. զի ԱԾ՟ էր ընդ նմա:
39 * Եւ մեք վկայք եմք ամի՟՝ զոր արար յերկրին հրէ-
աստանի՝ և յեմ՟. զոր և սպանին կախեալ զփայ-
40 տէ: * Զնա ԱԾ՟ յարոյց յերրորդ աւուր. և ետ
նմա յայտնի լինել.
41 * Ո՛չ ամենայն ժողովրդեանն՝ այլ մեզ վկայիցս
յառաջագոյն ընտրելոց յԱՅ՟. որք և կերաք՝ և
արբաք ընդ նմա յետ յարութե՟ նորա 'ի մեռելոց:
42 * Եւ պատուիրեաց մեզ՝ քարոզել ժողովրդեանն՝
և վկայութի՟ դնել՝ թէ նա է սահմանեալն յԱՅ՟
43 դատաւոր կենդանեաց և մեռելոց: * Նմա ամ՟
մարգարէք վկայեն, զթողութի՟ մեղաց առնուլ
44 անուամբ նորա, ամ՟ հաւատացելոց 'ի նա: * Եւ
մինչդեռ խօսէր պետրոս զբանս զայս, հանգեաւ
հոգին սբ՟ 'ի վր՟ ամենեցուն՝ որք լսէին զբանն:
45 * Զարմացան, որք 'ի թլփատութէ՟ անտի հաւա-
տացեալք եկեալ էին ընդ պետրոսի. զի և 'ի հե-
թանոսս պարգևք հոգւոյն սրբոյ զեղանէին:

*

46 * Քանզի լսէին ՚ի նոցանէ խօսել ՚ի լեզուս՝ և
47 մեծացուցանել զԱծ։ * Յայնժամ պատասխանի
ետ պետրոս։ մի թէ զջուր ոք արգելուլ կարէ՞ առ
՚ի չմկրտել զսոսա. որք և զհոգին սբ̃ ընկալան՝ ոպ̃
48 և մեք։ * Եւ հրամայեաց նց̃ մկրտել յանուն Տն̃
Յ̃ի Ք̃ի։ յայնժամ աղաչեցին զնա լինել անդ աւուրս ինչ։

ԳԼ. ԺԱ։

1 Լուան առաքեալքն՝ և եղբարք, որք էին ՚ի
Գ.Գ. կողմանս հրէաստանի, զի և ՚ի հեթանոսս ընկալան
2 զբանն Այ։ * Բայց յորժամ ել պետրոս
յեէմ, խղճէին ՚ի նմանէ՝ որք ՚ի թլփատութենէ հաւատացեալքն։
3 * Եւ ասէին. եթէ մտեր առ արս
4 անթլփատս՝ և կերեր ընդ նս̃։ * Եւ սկսաւ պետրոս
5 պատմել նոցա կարգաւ՝ և ասէ։ * Ես էի ՚ի
քաղաքին յոպպէ յաղօթս՝ և տեսի ՚ի զարմացման
տեսիլ։ իջանել անօթս ինչ իբրև կտաւոյ մեծի
զչորեցունց տանոցն կախեալ յերկնից՝ և եհաս
6 մինչև առ իս։ * Յոր աշուցեալ հայէի. և տեսի
զչորքոտանիս երկրի. և զգազանս՝ և զսողունս.
7 և զթռչունս երկնից։ * Եւ լուայ բարբառ, որ
8 ասէր. արի պետրոս, զե՛ն, և կե՛ր։ * Եւ ասեմ.
քաւ լիցի Տէր. զի խառնակ ինչ՝ և անսբ̃ ոչ երբէք
9 եմուտ ՚ի բերան իմ։ * Պատասխանի ետ բարբառն
երկիցս անգամ յերկնից։ զոր Ած սրբեաց՝
10 դու մի խառնակ համարիր։ * Այս եղև երիցս. և
11 վերացաւ դարձեալ ա̃մ յերկինս։ * Եւ ահա անդրէն
երեք արք եկին՝ կային առ ապարանիցն՝ ուր
12 եսն էի՝ առաքեալք ՚ի կեսարիէ առ իս։ * Եւ ասէ
ցիս հոգին երթալ ընդ նոսա՝ և մի ինչ խղճել։
եկին ընդ իս և սոքա վեցեքին եղբարքս. և մտաք
13 ՚ի տուն առնն այնորիկ։ * Եւ պատմեաց մեզ՝ ոպ̃
ետես զհրեշտակն ՚ի տան իւրում, զի կայր՝ և ասէր
ցնա։ առաքեա ՚ի յոպպէ. և կոչեա զսիմոն
14 զկոչեցեալն պետրոս։ * Որ խօսեսցի բանս ընդ
քեզ. որով կեցցես դու՝ և ա̃մ տուն քո,

15 *Եւ իբրև սկսայ խօսել՝ եկն Հոգին ս՟բ ՚ի վ՟ր ն՟ց։
16 ո՟պ և ՚ի վ՟ր մեր ՚ի սկզբանն։ *Յիշեցի զբանն Տ՟ն՝
զոր ասէրն․ յօհաննէս մկրտեաց ՚ի ջուր․ բայց դուք
17 մկրտեսջիք ՚ի Հոգին ս՟բ։ *Իսկ արդ՝ եթէ զհասա-
րակաց պարգևն ետ Ա՟ծ և ն՟ց՝ ո՟պ և մեզ՝ ՚ի հա-
ւատալն ՚ի Տ՟ր Յ՟ս Ք՟ս․ ես զի՞նչ կարօղ էի ար-
18 գելուլ զԱ՟ծ։ *Եւ լուեալ զայս՝ լռեցին, և փա-
ռաւոր առնէին զԱ՟ծ՝ և ասէին։ ուրեմն և ՚ի հե-
թանոսս ետ Ա՟ծ զապաշխարութ՟ի կենաց։
19 Գ․Դ․ *Եւ ցրուեալքն ՚ի նեղութ՟էն ստեփաննոսի՝
հասին մինչև ՚ի փիւնիկէ, և ՚ի կիպրոս՝ և յանտի-
ոքիայ։ ո՛չ ումեք խօսէին զբանն՝ բայց միայն հրէ-
20 ից։ *Եւ էին ոմանք արք կիպրացիք՝ որք մտեալք
յանտիոք՝ խօսէին ընդ յոյնսն աւետարանեալ զՏ՟ր
21 Յ՟ս։ *Եւ էր ձեռն Տ՟ն ընդ նոսա։ և բազմութ՟ի
22 հաւատացելոց դարձաւ ՚ի Տ՟ր։ *Լուր եղև բանս
այս յականջս եկեղեցւոյն՝ որ էր յեէ՟մ, վ՟ս ն՟ց։ և
առաքեցին զբառնաբաս մինչև յանտիոք։
23 *Որ իբրև եկն՝ և ետես զշնորհսն Ա՟յ՝ ուրախ
եղև․ և մխիթարէր զամենեսին՝ յօժարութ՟բ սրտի
24 կալ ն՟ց ՚ի Տ՟ր։ *Զի էր այր զուարթամիտ՝ և լի
Հոգւով սրբով և հաւատով․ և յաւելաւ ժողովուրդ
25 բազում Տ՟ն։ *Եւ ել ՚ի տարսոն խնդրել զսօղոս․ և
26 գտեալ զնա՝ ած յանտիոք․ *Եւ եղև ն՟ց զա՟մն ողջոյն
ժողովել յեկեղեցին՝ և ուսուցանել զժողովուրդ
բազում, և անուանել նախ յանտիոք զաշակերտսն
27 Քրիստոնեայ։ *Ընդ աւուրսն ընդ այնոսիկ իջին
28 յեէ՟մէ մարգարէք յանտիոք։ *Յարուցեալ միոմն
՚ի նոցանէ ագաբոս՝ նշանակեաց հոգւովն, սով
մեծ լինել ընդ ա՟մ աշխարհ՝ որ եղև առ կղօդեաւ։
29 *Բայց յաշակերտաց անտի, ո՟պ զիարդ կարօղ ոք
էր՝ իւրաքանչիւրոք ՚ի նոցանէ որոշեցին առաքել
՚ի պէտս եղբարցն, որք բնակեալք էին ՚ի հրէաս-
30 տանի։ *Զոր և արարին իսկ առաքեալ առ երի-
ցունսն ՚ի ձե՟ռն բառնաբայ՝ և սօղոսի։

ԳԼ. ԺԲ.

1 Ընդ ժամանակսն ընդ այնոսիկ եարկ Հերովդէս
ԳԵ. թագաւոր զձեռն չարչարել զոմանս յեկեղեցւոյն:
2 * Եւ սպան զյակոբոս զեղբայրն յօհաննու, սրով:
3 * Ետես եթէ հաճոյ է հրէիցն, յաւել ևս ունել
զպետրոս: և էին աւուրքն բաղարջակերաց:
4 * Զոր իբրև կալաւ՝ և եդ ՚ի բանտի: և մատնեաց
չորից չորրորդաց զինուորաց պահել զնա. և
կամէր յետ զատկին ածել զնա ժողովրդեանն:
5 * Եւ պետրոս ՚ի պահեստի էր ՚ի բանտին: և աղօթք
ստէպ լինէին յեկեղեցւոյն վս̄ նորա առ Ած:
6 * Իբրև կամեցաւ ածել զնա հերովդէս, ՚ի գիշերին
յայնմիկ էր պետրոս ՚ի քուն ՚ի մէջ երկուց զինուորաց.
կապեալ կրկին շղթայիւք: և պահապանքն
7 առաջի դրանն պահէին զբանտն: * Եւ ահա հրեշտակ
Տն եկն և եկաց ՚ի վր̄՝ և լոյս ծագեաց ՚ի
տանն: և խթեաց զկողն պետրոսի՝ յարոյց զնա՝
և ասէ. արի վաղվաղակի: և անկան շղթայքն ՚ի
8 ձեռաց նր̄: * Եւ ասէ հրեշտակն ցնա. ած զգօտի
քո. և ա՛րկ զհողաթափս յոտս քո: և արար այնպէս:
և ասէ ցնա՝ ա՛րկ զձորձս քո, և եկ զկնի իմ:
9 * Եւ ելեալ երթայր զհետ՝ և ոչ գիտէր եթէ
ճշմարիտ իցէ՝ որինչ եղեւն ՚ի հրեշտակէն. զի հա-
10 մարէր երազ տեսանել: * Եւ իբրև անցին նոքա՝
ա̄ մի պահ և բ̄. երկուս, եկին մինչև ՚ի դուռն երկաթի՝
որ հանէր ՚ի քաղաքն. որ ինքնին բացաւ
նոցա: և մտեալ անցին ընդ փողոց մի. և վաղվա-
11 ղակի ՚ի բաց եկաց ՚ի նմանէ հրեշտակն: * Եւ պետրոս
իբրև ՚ի միտս եկն, ասէ. արդ գիտեմ ճշմարտիւ՛
թէ առաքեաց Տր̄ զհրեշտակ իւր. և փրկեաց
զիս ՚ի ձեռաց Հերովդէի, և յամ̄ ակնկալութէ
12 ժողովրդեանն հրէից: * Եւ լեալ ՚ի միտս՝ եկն ՚ի
տունն մարիամու մօր յօհաննու, որ կոչեցաւն մարկոս,
ուր էին բազումք ժողովեալք՝ և աղօթս առնէին.
13 * Եւ ՚ի բախել զդուրս դրանն, մատեաւ աղախին
մի ունկն դնել, որում անուն էր հռոդէ:
14 * Եւ ծանուցեալ զձայնն պետրոսի՝ ՚ի խնդալոյն ոչ

եբաց զդուռն· 'ի ներքս ընթացեալ պատմեաց՝
15 թէ պետրոս առ դրանն կայ։ * Նոքա ասեն ցնա՝
մոլիս։ և նա ևս պնդէր՝ թէ այդպէս է։ և նոքա
16 ասէին՝ հրեշտակ նորա լիցի։ * Եւ պետրոս ստէպ
բաղխէր։ իբրև բացին՝ տեսին զնա՝ և զարմացան։
17 * Եւ նա ձեռամբ ցուցանէր լռել։ և պատմեաց՝
որպէս Տ̄ր եհան զնա 'ի բանտէն։ և ասէ՝ պատ-
մեցէք յակոբայ, և եղբարցն զայս։ և ել գնաց
18 յայլ տեղի։ * Եւ իբրև այգ եղև՝ էր խռովութի̄
մեծ 'ի մէջ զինուորացն զի՞ արդեօք պետրոսն եղև։
19 * Իսկ հերովդէս իբրև խնդրեաց զնա՝ և ոչ եգիտ,
հարցեալ զպահապանսն՝ հրամայեաց սպանանել։
և իջեալ 'ի հրէաստանէ 'ի կեսարիայ՝ և անդ լի-
20 նէր։ * Եւ էր հերովդէս ցասմամբ ընդ տիւրացիս·
և ընդ սիդոնացիս։ և նոքա առհասարակ եկին առ
նա։ և 'ի բանի արարեալ զբղաստոս սենեկապետ
արքային, խնդրէին զխաղաղութի̄· վ̄ն կերակրելոյ
21 երկրին նոցա յարքունուստ։ * Յաւուր միում յե-
րևելւոջ՝ հերովդէս զգեցեալ էր զհանդերձ թա-
գաւորութ̄ե՝ և նստէր յատենի, և խօսէր ընդ
22 նոսա հրապարակաւ։ * Եւ ամբոխն աղաղակէր՝ թէ
23 Ա̄Յ բարբառ է, և ոչ մարդոյ։ * Եւ անդէն էհար
զնա հրեշտակ Տ̄ն՝ փոխանակ զի ոչ ետ փառս
24 Ա̄յ։ և եղեալ որդնալից՝ սատակեցաւ· * Եւ բանն
Ա̄յ աճէր և բազմանայր։
25 Գ.Զ· * Բառնաբաս և սօղոս դարձան յեմէ՝ իբ-
րև կատարեցին զպաշտօնն։ առեալ էր ընդ իւր-
եանս և զյօհաննէս՝ որ կոչեցեալն էր մարկոս։

ԳԼ· ԺԳ։

1 Էին ոմանք յանտիոք ըստ եկեղեցւոյն մարգարէք,
և վարդապետք։ բառնաբաս՝ և շմաւոն կոչե-
ցեալն նիւղէր· և ղուկիոս կիւրենացի· և մանայեն
դայեակ որդի հերովդի չորրորդապետի, և սօղոս։
2 * Մինչդեռ 'ի պաշտաման Տ̄ն կային, և պահէին,
ասէ Հոգին ս̄բ· որոշեցէք ինձ զբառնաբաս և
զսօղոս 'ի գործ՝ յոր կոչեալ է իմ զդոսա։

3 * Ցայնժամ պահեալ՝ և աղօթս արարեալ՝ եդին
4 զձեռս ՚ի վր̅ նց̅՝ և արձակեցին : * Եւ նոքա առաքեալք
՚ի Հոգւոյն սրբոյ՝ իջին ՚ի սեղևկիա․ և անտի
5 նաւեցին ՚ի կիպրոս : * Եւ հասեալ ՚ի սաղամինայ՝
պատմէին զբանն ա̅յ ՚ի ժողովուրդս հրէիցն : ունէին
6 և զյօհաննէս պաշտօնեայ : * Շրջեալ ընդ
ա̅մ կղզին մինչև ՚ի պափոս, գտին անդ զայր ոմն
մոգ սուտ մարգարէ՝ հրէայ․ որում անուն էր բարէ
7 յեսու : * Որ էր ընդ փոխանակ բդեշխին սէրգեայ
պօղոսի՝ առն իմաստնոյ : Նր̅ աղաչեալ զբառնաբաս,
և զսօղոս, խնդրէր լսել զբանն ա̅յ :
8 * Ընդդէմ եկաց նց̅ եղիմաս մոգ : (քանզի այնպէս
թարգմանի անուն նր̅ :) խնդրէր շրջել զփոխանակ
9 բդեշխին ՚ի հաւատոց : * Իսկ սօղոս, որ և պօղոսն
10 լցեալ հոգւով սրբով՝ հայեցաւ ՚ի նա : * Եւ ասէ՝
Ով լի ա̅մ նենգութբ̅՝ և խորամանկութբ̅, որդի
սատանայի, թշնամի ա̅մ արդարութե̅ . ոչ լռես
11 ՚ի թիւրելոյ զճանապարհս Տ̅ն ուղիղս : * Եւ արդ՝
ահա ձեռն Տ̅ն ՚ի վերայ քո․ և դու եղիցիս կոյր
չտեսանել զարև մինչև ՚ի ժամանակ մի : և անդէն
անկաւ ՚ի վր̅ նորա մէգ և խաւար : և շրջեալ խնդրէր
12 առաջնորդս : * Ցայնժամ տեսեալ փոխանակ
բդեշխին զիրսն՝ որ եղեն, հաւատաց զարմացեալ
13 ընդ վարդապետութ̅ին Տ̅ն : * Եւ ամբարձեալ ՚ի
պափէ պօղոսեանց՝ եկին ՚ի պերգէ պամփիւղեայ : յոհաննէս
մեկնեալ ՚ի նոցանէ դարձաւ յե̅էմ :
14 * Եւ նոքա գնացեալ ՚ի պերգեայ՝ եկին յանտիոք
պիսիդեայ : և մտեալ ՚ի ժողովուրդն յաւուր շաբաթուց՝
նստան :
15 * Եւ յետ ընթեռնլոյ զօրէնսն և զմարգարէս, առաքեցին
առ նոսա ժողովրդապետքն՝ և ասեն : արք
եղբարք՝ եթէ իցեն ՚ի ձեզ բանք մխիթարութե̅
առ ժողովուրդդ՝ խօսեցարո՛ք :
16 ԳԸ․ * Յոտն եկաց պօղոս՝ շարժեաց զձեռն և ասէ․
արք իսրայելք՝ և որք երկնչիք յԱ̅յ՝ լուարո՛ւք :
17 * Ա̅ծ ժողովրդեանս այսորիկ Ի̅լի, ընտրեաց զհարսն
մեր : և զժողովուրդն բարձրացոյց ՚ի պանդխտութե̅
յերկրին եգիպտացւոց : և ՚ի բազուկ բարձր

18 եհան զնս̅ անտի: * Եւ՛ իբրև քառասնամեայ ժա-
19 մանակ կերակրեաց զնս̅ յանապատի: * Եւ՛ քակեալ
զազգս եօթն յերկրին քանանու՝ ժառանգեցոյց նց̅
20 զերկիր նոցա: * Իբրև ամս չորեքհարիւր և յի-
սուն: և յետ այսորիկ ետ նց̅ դատաւորս մինչև
21 ՚ի սամուէլ մարգարէ: * Եւ՛ անտի յառաջ խնդրե-
ցին զթագաւոր: և ետ նց̅ Ած̅ զսաւուղ որդի
կիսեայ· այր յազգէ բենիամենի՝ ամս քառասուն:
22 * Եւ՛ իբրև փոխեաց զնա, յարոյց նց̅ զդաւիթ
թագաւոր՝ որում և տուեալ վկայութիւ̅. գտի
զդաւիթ որդի յեսսեայ այր ըստ սրտի իմում. որ
23 արասցէ զա̅մ կամս իմ: * ՚Ի սորա զաւակէ Ած̅
ըստ աւետեացն յարոյց ի̅ղի փրկիչն Յս̅:
24 * Ըստ յառաջագոյն քարոզութե̅ն յօհաննու. առա-
ջի երեսաց մտին նր̅ մկրտութե̅ի ապաշխարութե̅ն՝
25 ա̅մ ժողովրդեանն ի̅ղի: * Եւ՛ իբրև լնոյր յօհան-
նէս զընթացսն, ասէր. զո՞ ոք կարծէք զինէն թէ
իցեմ, չեմ ես այն. այլ ահա գայ զկնի իմ,
որում չեմ արժանի զկօշիկս ոտիցն լուծանել:
26 * Արք եղբարք՝ որդիք աբրահամեանն տոհմին, և որք
՚ի ձեզ երկիւղածք իցեն յԱյ̅: ձեզ բանս այս փրկու-
27 թե̅ի առաքեցաւ: * Բայց որք բնակեալք են յե̅մ,
և իշխանք նց̅ անծանօթք եղեն ՚ի սմանէ՝ և ըստ
բարբառոյ մարգարէիցն. որք զամենայն շաբաթսն
28 ընթերցեալ լինէին՝ դատեալ կատարեցին: * Եւ՛
ոչ մի ինչ պատճառս մահու գտեալ՝ խնդրեցին
՚ի պիղատոսէ սպանանել զնա: †
29 * Եւ՛ իբրև կատարեցին զա̅մ, որ վասն նորա գըր-
եալ էր, իջուցեալ ՚ի փայտէն, եդին ՚ի գերեզմանի:
30 * Այլ Ած̅ յարոյց զնա ՚ի մեռելոց: որ երևեցաւ
31 աւուրբք բազմօք այնոցիկ: * Որք ելեալ էին ընդ
նմա ՚ի գալիլեէ յե̅մ: որք և արդ իսկ վկայք են
32 նորա առ ժողովուրդն: * Եւ՛ մեք ձեզ աւետարա-
նեմք զխոստումն՝ որ առ հարսն եղեալ էր:
33 * Զի զնոյն Ած̅ կատարեաց առ մեզ որդւոց նոցա
յարուցեալ զՅս̅: ոպ̅ և ՚ի սաղմոսին գրեալ է
յերկրորդում: որդի իմ ես դու. և ես այսօր ծը-
34 նայ զքեզ: * Եւ՛ զի յարոյց զնա ՚ի մեռելոց. և ոչ

35 Եւս դառնալոց է յապականութիւն : * Այսպէս ասէ.
եթէ տաց ձեզ զսրբութիւնս Դաւթի զհաւատա-
րիմս : Քանզի և ՚ի միւսումն ասէ : Ո՛չ տայցես
36 սրբոյ քում տեսանել զապականութիւն : * Այլ Դա-
ւիթ յազգի անդ իւրում պաշտեալ. և ՚ի կամս Այ
ննջեաց. և յաւելաւ առ հարս իւր՝ և ետես զապակա-
37 նութիւն: * Բայց զոր Ածն յարոյց՝ ոչ ետես զապա
38 կանութիւն: * Յայտնի լիցի ձեզ արք եղբարք. զի սովաւ
ձեզ թողութիւն մեղաց աւետարանի: և յամէն՝ յոր
մէ ոչ կարացէք օրինօքն մովսէսի արդարանալ :
39 * Սովաւ ամենայն, որ հաւատայ, արդարանայ :
40 * Զգոյշ կացէք՝ գուցէ եկեսցէ ՚ի վր ձեր աս-
41 ցեալն ՚ի մարգարէսն : * Տեսէք արհամարհոտք՝ և
զարմացարուք՝ և եղծարուք : զի գործ մի գործեմ
ես յաւուրս ձեր. գործ, որում ոչ հաւատայցէք՝
42 թէ ոք պատմեսցէ ձեզ : * Եւ՛ իբրև ելին անտի՝ աղա-
չէին ՚ի միւսում շաբաթու խօսել նոցա զնոյն բանս:
43 * Իբրև արձակեցաւ ժողովուրդն, զհետ երթային
բազումք ՚ի Հրէից անտի՝ և ՚ի պաշտօնէից եկամը-
տից պօղոսի և բառնաբայ. որք խօսէին ընդ նս.
և հաւանեցուցանէին զնոսա կալ՝ մնալ ՚ի շնորհսն
Աստուծոյ :
44 ԳԿ. * Եւ՛ ՚ի գալ միւսոյ շաբաթուն, գրեթէ ամ
45 քաղաքն ժողովեցաւ լսել զբանն Այ : * Իբրև տե-
սին Հրէայքն զամբոխն՝ լցան նախանձու : և ընդդէմ
դարձեալ ասացելոյն ՚ի պօղոսէ՝ հայհոյէին :
46 * Համարձակեալ պօղոսի և բառնաբայ ասէին. առ
ձեզ նախ պարտ էր խօսել զբանն Այ. և քանզի
դուք մերժէք զնա, և ո՛չ արժանիս համարիք ըզ-
ձեզ կենացն յաւիտենականաց, ահաւասիկ դառնամք
47 ՚ի հեթանոսս : * Զի այսպէս պատուիրեաց մեզ
Տր : եդի զքեզ ՚ի լոյս հեթանոսաց՝ լինել քեզ
48 ՚ի փրկութիւն մինչև ՚ի ծագս երկրի : * Զայս լը-
ուեալ հեթանոսացն՝ ուրախ լինէին, և փառաւոր
առնէին զբանն Տն : և հաւատային՝ որք էին կար
49 գեալ ՚ի կեանսն յաւիտենականս : * Եւ՛ շրջէր
50 բանն Այ ընդ ամենայն գաւառն : * Բայց Հրէայքն
գրգռեցին զպաշտօնեայ կանայս զըզգաստս. և զգլխա

ւորս քաղաքին. և յարուցին հալածանս 'ի վ͞ր
պօղոսի և բառնաբայ՝ հանին զնոսա 'ի սահմանացն
51 իւրեանց։ * Եւ նոքա թօթափեալ զփոշին յոտից
52 'ի վ͞ր նոցա, եկին յիկոնիոն։ * Եւ աշակերտքն լը-
ցանէին խնդութ͞բ՝ և հոգւով սրբով։

ԳԼ. ԺԴ։

1 Եւ եղեւ յիկոնիոն 'ի միասին մտանել նոցա 'ի ժո
ղովուրդ հրէիցն, և խօսել նոյնպէս. մինչև հա-
ւատալ հրէից, և յունաց բազմաց յոյժ։
2 * Բայց անհաւանն հրէայքն յարուցին՝ և չարացու
ցին զանձինս հեթանոսացն 'ի վերայ եղբարց։
3 * Բաւական՝ ժամանակս շրջէին համարձակեալք Տ͞ն
վկայութ͞բ՝ բանի՛ն շնորհացն իւրոյ. և տալ նշա-
4 նս և արուեստս լինելոյ 'ի ձեռս ն͞ց։ * Եւ եղեն
հերձուածք 'ի բազմութ͞ե քաղաքին. ոմանք էին 'ի
5 հրէայսն, և ոմանք յառաքեալսն։ * Իբրև եղև դի
մել հեթանոսացն և հրէից իշխանօքն իւրեանց
'ի թշնամանել և 'ի քարկոծել զնոսա։
6 * Ազդ եղեալ ն͞ց՝ փախեան 'ի քաղաքս լիկայոնացւոց
'ի լիւստրիայ՝ և 'ի դերբէ. և շուրջ գաւառաւն. և անդ-
7 ր. աւետարանէին։ * Եւ այր ոմն լիւստրացի տը-
կար յոտից՝ նստէր՝ կաղ յորովայնէ մօր իւրոյ. որոյ
8 երբէք չէր գնացեալ։ * Սա լուաւ զխօսսն պօղոսի.
որ հայեցեալ 'ի նա, և տեսեալ թէ ունի հաւատս
9 փրկութ͞ե։ * Ասէ մեծաձայն. քե՛զ ասեմ, յանուն
Տ͞ն մերոյ Յ͞ի Ք͞ի յոտն կաց 'ի վերայ ոտից քոց
10 ուղիղ։ և վազվազէր՝ և գնայր։ * Եւ ժողովուրդքն
տեսեալ՝ զոր արար պօղոս, բարձին զձայնս իւր-
եանց լիկայոնարէն և ասեն. աստուածք նմանեալք
11 մարդկան իջին առ մեզ։ * Եւ կոչէին զբառնաբաս
դիոս. և զպօղոս հերմէս. քանզի նա էր առաջ-
12 նորդ բանին։ * Իսկ քուրմն դիայ՝ որ կայր առա-
ջի քաղաքին, ցուլս՝ և պսակս հասուցեալ 'ի
դուռն, համդերձ բազմութ͞բքն կամէր զոհել։
13 * Եւ լուեալ առաքելոյն բառնաբայ և պօղոսի՝
պատառեալ զհանդերձս իւրեանց՝ արտաքս վազե-

14 ցին յամբոխէն, աղաղակէին ։ * Եւ ասէին ․ արք՝
զի՞նչ գործէք զայդ ․ մեք ձեզ նմանօղք կարեօք
մարդիկ եմք ․ աւետարանել ձեզ յայդպիսի ու-
նայնութեանց դառնալ յԱծ՟ կենդանի ․ որ արար զեր
կինս և զերկիր՝ և զծով՝ և զամենայն որ ՚ի նմա ։
15 * Որ յանցեալ ազգսն, թոյլ ետ ամ՟ հեթանոսաց
16 գնալ ՚ի ճանապարհս իւրեց՟ ։ * Եւ սակայն ոչ եթէ
անվկայութիւն զինքն եթող բարերարութ՟բն
տալ յերկնից ձեզ զանձրևս, և ժամանակս պտղա-
բերս ․ լնուլ կերակրօք և ուրախութ՟բ զսիրտս
17 ձեր ։ * Եւ զայս ասացեալ՝ հազիւ լռեցուցանէին
զժողովուրդն ՚ի զոհելոյ նց՟ ։ այլ գնալ յիւրաքան-
18 չիւր տեղիս ։ * Եւ ՚ի շրջիլ նց՟ և յուսուցանել՝
եկին հասին յանտիոքէ, և յիկոնիոնէ հրէայք ․ և
՚ի վիճելն նց՟ համարձակութ՟բ՝ պատրեցին զժողովն
՚ի բաց կալ ՚ի նոցանէ ․ և ասէին թէ ոչինչ ճշմար-
տութիւն ասեն, այլ զամ՟ ստեն ․ և քարկոծեալ
զպօղոս՝ քարշեցին արտաքս քան զքաղաքն՝ և հա-
19 մարէին զնա մեռեալ ։ * Եւ ՚ի պատել զնովաւ ա-
շակերտացն՝ յարեաւ և եմուտ ՚ի քաղաքն ․ և ՚ի
վաղիւն անդր ել բառնաբաւ հանդերձ ՚ի դերբէ ։
20 * Աւետարանել ՚ի քաղաքին յայնմիկ՝ և աշակեր-
տեալ զբազումս, դարձան ՚ի լիւստրայ՝ և յիկոնիոն՝
21 և յանտիոքիայ ։ * Հաստատել զանձինս աշակեր-
տելոյ՝ և մխիթարել կալ հաստատուն ՚ի հա-
ւատսն ․ և թէ բազում նեղութ՟բք պարտ է մեզ
22 մտանել յարքայութիւն այ՟ ։ * Ձեռնադրեցին նց՟
ըստ եկեղեցւոյ երիցունս ․ աղօթս արարեալ հան-
դերձ պահօք՝ յանձն արարին զնոսա Տն՟ ․ յոր հա-
23 ւատացեալ էին ։ * Եւ շրջեալ ընդ պիսիդեայ՝ ե-
24 կին ՚ի պամփիլիայ ։ * Եւ խօսեցեալ ՚ի պերգէ
25 զբանն Տն՟, իջին յատալիայ ։ * Եւ անտի նաւար
կեալ՝ գնացին յանտիոք, ուստի էին յանձնարա-
րեալ շնորհացն այ՟՝ ՚ի գործն զոր կատարեցին ։
26 * Եկեալ և ժողովեալ զեկեղեցին պատմէին՝ որ
չափ արար Ած՟ ընդ նոսա ․ և զի եբաց հեթանո-
27 սաց զդուռն հաւատոյ ։ * Շրջէին ժամանակս ոչ
սակաւս ընդ աշակերտսն ․

ԳԼ. ԺԵ.

1 Եւ ոմանք իջեալք 'ի Հրէաստանէ՝ ուսուցանէին
Գ.Գ. զեղբարս. եթէ ոչ թլփատիք ըստ օրինայն
2 մովսէսի՝ ոչ կարէք ապրիլ։ * Եւ 'ի լինել ոչ սակաւ
հակառակութե̅ և խնդրոյ՝ պօղոսի և բառնաբայ՝
ընդ նոսա, եդին ելանել պօղոսի և բառնաբայ, և
ոմանց 'ի նոցանէ առ առաքեալս և երիցունս յե̅ղ̅մ
3 վ̅ս խնդրոյն այնորիկ։ * Նոքա յուղարկեալք յեկեղեցւոյն, շրջեցան ընդ փիւնիկէ, և ը̅ սամարիայ
պատմեցին զդարձն հեթանոսաց. և առնէին ու-
4 րախութի̅ մեծ ա̅մ եղբարցն։ * Եւ հասեալք
յե̅ղ̅մ, ընկալեալք յեկեղեցւոյն՝ և յառաքելոցն՝ և
յերիցանց, պատմեցին որչափ ինչ արար ընդ նոսա
5 Ա̅ծ։ * Յարեան ոմանք 'ի հերձուածոյն փարիսեցւոց հաւատացեալք. և ասեն, թէ պարտ է թլփատել զդոսա. և պատուիրել պահել զօրէնսն մօ-
6 սէսի։ * Եւ ժողովեցան առաքեալքն և երիցունք
7 տեսանել վասն բանիս այսորիկ։ * Եւ յետ բազում
խնդիր լինելոյ՝ յոտն եկաց պետրոս՝ և ասէ ցն̅ս. արք
եղբարք՝ դուք ինքնին գիտէք՝ զի յաւուրցն առաջնոց 'ի միջի ձերում ընտրեաց Ա̅ծ բերանով իմով
լսել հեթանոսաց բանին աւետարանի, և հաւա-
8 տալ։ * Եւ սրտագէտն Ա̅ծ վկայեաց նոցա. տալով
9 նոցա զհոգին սուրբ՝ որպէս և մեզ։ * Եւ ոչինչ
ընտրութի̅ արար 'ի մէջ նոցա և մեր՝ հաւատովքն
10 սրբեալ զսիրտս նոցա։ * Արդ ընդէ՞ր փորձէք զԱ̅ծ.
դնել լուծ 'ի վերայ պարանոցի աշակերտացն, զոր
ոչ հարքն մեր՝ և ոչ մեք կարացաք բառնալ.
11 * Այլ շնորհօք Տ̅ն Յ̅ի Ք̅ի հաւատամք ապրիլ,
12 զորօրինակ և նոքա։ * Լռեաց ա̅մ ժողովուրդն,
և լսէին բառնաբայ և պօղոսի պատմելոյն. որչափ
արար Ա̅ծ նշանս և արուեստս 'ի հեթանոսս, 'ի ձեռն
13 նոցա։ * Եւ յետ լռելոյն նոցա՝ պատասխանի ետ
յակոբոս՝ և ասէ. արք եղբարք՝ լուարուք ինձ։
14 * Շմաւօն պատմեաց՝ ո̅պ յառաջագոյն Ա̅ծ այց արար
առնուլ զժողովուրդ 'ի հեթանոսաց անուան ի-
15 րոյ։ * Եւ այնմ միաբանին բանք մարգարէիցն.

16 որպէս և գրեալ է : ✝* Յետ այսորիկ դարձայց՝ և
շինեցից զյարկն Դաւթի զանկեալն . և զկործա-
նեալսն նր՟ վերստին շինեցից՝ և կանգնեցից զնա:
17 * Որպէս զի խնդրեսցեն մնացորդք մարդկան զՏր՟ .
և ամենայն հեթանոսք՝ յորոց վերայ կոչեցեալ է
18 անուն իմ, ասէ Տր՟, որ առնէ զայս ամ՟ : * Յայտ
19 նի 'ի յաւիտենից է Տն՟ գործ իւր : * Վասն որոյ
և ես իրաւունս համարիմ, մի՛ նեղել զայնոսիկ՝
որք 'ի հեթանոսաց դառնան առ Ած՟ :
20 * Այլ տալ թուղթ առ նոսա . խորշիլ 'ի կերակ-
րոյ կռոց՝ և 'ի պոռնկութենէ՝ և 'ի մեռելոտւոյ՝ և յա-
21 րենէ : * Զի մովսէս յազգացն առաջնոց ըստ քա-
ղաքաց զքարոզիչսն իւր ունի՝ 'ի ժողովսն ըստ
22 ամ՟ շաբաթուց ընթերցեալ : * Յայնժամ հաճոյ
թուեցաւ առաքելոցն և երիցանցն ամենայն եկե-
ղեցեաւն . արս ընտրեալս 'ի նոցանէ առաքել յան
տիոք ընդ պօղոսի և ընդ բառնաբայ . զյուդայ
զկոչեցեալն բարսաբայ՝ և զշիղայ՝ արս գլխաւորս :
23 * Գրել առ եղբարս 'ի ձեռն նց՟ զայս ինչ : Առա-
քեալք՝ և երիցունք եղբարք՝ յանտիոք՝ և 'ի սիւ-
րիայ՝ և 'ի կիլիկիայ եղբարցդ՝ որք 'ի հեթանոսաց
24 էք՝ ողջոյն : * Քանզի լուաք՝ թէ ոմանք իբրև 'ի
մէնջ խռովեցուցին զձեզ . բանիւք խախտել զան-
ձինս ձեր՝ ասեն թլփատիլ և պահել զօրէնսն՝
25 որոց ոչ հրամայեցաք : * Հաճոյ թուեցաւ մեզ
միաբան ժողովելոցս, արս ընտրեալս յղել առ
ձեզ ընդ սիրելիս մեր՝ ընդ բառնաբայ և ընդ
26 պօղոսի : * Արք՝ որք մատնեցին զանձինս իւրեանց
27 վասն անուան Տն՟ մերոյ Յի՟ Քի՟ : * Արդ առաքե-
ցաք զյուդայ և զշիղայ . և նոքա 'ի բանից զնոյն
28 պատմել : * Զի հաճոյ թուեցաւ հոգւոյն սրբոյ՝
29 և մեզ . մի ինչ աւելի բեռն դնել ձեզ : * Բայց
միայն 'ի կարևորացս յայսոցիկ 'ի բաց կալ . 'ի զոհելոց
կռոց՝ և յարենէ՝ և 'ի հեղձուցելոյ՝ և 'ի պոռն-
կութենէ . յորոց սպահեալ զանձինս բարւոք գործէք՝
30 ողջ լերուք : * Եւ նոքա արձակեալք իջին յանտիոք՝
և ժողովեալ զժողովուրդսն, ետուն զթուղթն :
31 * Եւ ընթերցեալ ուրախ եղեն 'ի վերայ մխիթա-

32 րութեն ։ * Յուդա և Շիղա՝ զի և նոքա մարգա-
րէք էին՝ բանիւք բազմօք մխիթարեցին զեղբարսն
33 և հաստատեցին ։ * Եւ եղեալ անդ ժամանակս ինչ՝
արձակեցան խաղաղութ՟բ յեղբարցն առ առաքեալսն
34 * Եւ հաճոյ թուեցաւ Շիղայի մնալ անդէն. իսկ
35 Յուդաս միայն գնաց յե՟մ ։ * Բայց Պօղոս և Բառ-
նաբաս շրջէին յԱնտիոք ուսուցանել և աւետարա-
36 նել՝ և այլօք բազմօք՝ զբանն Տ՟ն ։ * Իսկ յետ ա-
ւուրց ասէ Պօղոս ցԲառնաբաս. դարձցուք, և շրջե-
ցուք զեղբարբք՝ ըստ ամենայն քաղաքաց՝ յորս քա-
37 րոզեցաք զբանն Տ՟ն՝ թէ ո՟պ ունիցին ։ * Բառնա-
բաս կամէր առնուլ և զյօհաննէս զկոչեցեալն
38 Մարկոս ։ * Բայց Պօղոս աղաչէր՝ (թէ զմեկնեալն
՚ի նոցանէ ՚ի Պամփիլեայ. և զչեկեալն ընդ նոսա ՚ի
39 գործն) մի առնուլ ընդ ինքեանս ։ * Եւ եղև գրգ-
ռութ՟ի մինչև մեկնիլ նոցա ՚ի միմեանց. Բառնա-
բաս առնուլ զմարկոս նաւել ՚ի Կիպրոս ։
40 * Եւ Պօղոսի ընտրեալ զՇիղայ՝ ել, յանձն արա-
ԴԴ. րեալ շնորհացն Ա՟յ յեղբարցն անտի ։
41 * Եւ շրջէր ՚ի կողմանս Ասորւոց. և Կիլիկեցւոց՝
հաստատէր զեկեղեցիսն. պատուիրելով պահել ըզ-
պատուիրանս առաքելոյն, և երիցանցն ։

ԳԼ. ԺԶ։

1 Եկն եհաս ՚ի Դերբէ և ՚ի Լիւստրայ. և ահա ա-
շակերտ ոմն էր անդ՝ անուն Տիմոթէոս՝ որդի
կնոջ Հրէի հաւատացելոյ, և հօր հեթանոսի ։
2 * Որ վկայեալ էր ՚ի Լիւստրացւոց և յԻկոնացւոց եղ-
3 բարց ։ * Զսա կամեցաւ Պօղոս ընդ իւր տանել. և
առեալ թլփատեաց զնա վ՟ս Հրէիցն, որք էին ՚ի
տեղիսն յայնոսիկ. քանզի գիտէին ամենեքին զհայր
4 նորա թէ հեթանոս էր ։ * Իբրև անցանէին ընդ
քաղաքսն՝ աւանդէին նոցա պահել զհրամանսն
պատուիրեալս յառաքելոյն և յերիցանցն՝ որք յե՟մ ։
5 * Եւ եկեղեցիքն հաստատէին ՚ի հաւատս. և յա-
ւելանային ՚ի թիւն հանապազօր ։
6 ԴԵ. * Եւ շրջեցան ընդ Փռիւգիայ. և ընդ կող-

մինս գաղատացւոց․ արգելեալք 'ի Հոգւոյն սրբոյ
7 խօսել զբանն յասիայ։ *Այլ եկեալ առ միւսեաւ՝
թեւակոխէին երթալ 'ի բիւթանիայ՝ եւ ոչ համար
8 ձակեաց նց հոգին Յի։ *Եւ անցեալ ընդ միւսիայ՝
9 իջին 'ի տրօադա։ *Եւ տեսիլ երեւեցաւ 'ի գիշերի
պօղոսի․ այր ոմն մակեդոնացի կայր, աղաչէր
զնա՝ եւ ասէր․ անցեալ 'ի մակեդոնիա՝ օգնեսցես
10 մեզ։ *Եւ իբրեւ զտեսիլն ետես, վաղվաղակի խնդ
րեցաք ելանել 'ի մակեդոնիա․ տեղեկացեալք թէ
հրաւիրեաց զմեզ Տր աւետարանել նոցա։
11 *Եւ ելեալ 'ի տրօադայ՝ դէպ ուղիղ գնացաք 'ի սա
մոթրակէ․ եւ 'ի վաղիւն անդր 'ի նոր քաղաք։
12 *Եւ անտի 'ի փիլիպպոս․ որ է առաջին վիճակ՝
մակեդոնացւոց քաղաք՝ կողոնիայ։ եւ անդ 'ի քաղաքին
13 դադարեալ մեր աւուրս ինչ։ *Յաւուրն
շաբաթու ելաք արտաքոյ քաղաքին առ գետափն՝
ուր համարէր աղօթս մատուցանել․ եւ նստեալ
14 խօսէաք ընդ ժողովեալ կանայսն։ *Եւ կին ոմն
անուն լիդիա ծիրանեվաճառ՝ 'ի թիւատիր քաղա
քէ՝ երկիւղած յԱյ՝ լուաւ․ զորոյ Տր եբաց
15 զսիրտ անսալ խօսիցն պօղոսի։ *Եւ իբրեւ մկըր
տեցաւ ինքն եւ տունն իւր․ աղաչէր, եւ ասէր՝ եթէ
համարիցիք զիս հաւատացեալ Տն՝ մտեալ 'ի տուն
իմ ագերուք՝ եւ բռնադատեալ տարաւ զմեզ։
16 *Եւ եղեւ մինչ երթայաք մեք յաղօթս, պատահեցաւ
մեզ աղախին ոմն՝ որ ունէր զայս հարցուկ․
որ շահս բազումս տայր տերանց իւրոց մոլեկոթն։
17 *Նա զհետ եղեալ պօղոսի եւ մեր՝ աղաղակէր՝ եւ
ասէր․ արքս այսոքիկ՝ ծառայք Այ բարձրելոյ են․
որք պատմեն ձեզ զճանապարհս փրկութե։
18 *Եւ զայս առնէր 'ի բազում աւուրս․ զայրացեալ
պօղոս՝ դարձաւ եւ ասէ ցայսն․ պատուիրեմ քեզ
յանուն Յի Քի՝ ելանել 'ի դմանէ։ եւ ել 'ի նմին
19 ժամու։ *Իբրեւ տեսին տեարք նր՝ եթէ հատաւ
յոյս շահին նց, առեալ զպօղոս եւ զշիղայ՝ ձգեցին
20 'ի հրապարակս առ իշխանսն։ *Եւ ածեալ զնոսա
առ զօրագլուխսն՝ ասէին․ արքս այսոքիկ խռովեցուցանեն
զքաղաքս մեր․ հրէայք են։

21 * Եւ պատմեն մեզ օրէնս, զոր չէ արժան մեզ
ընդունել՝ և ոչ առնել. զի հռոմայեցիք եմք։
22 * Եւ ընթացաւ ժողովուրդն ընդդէմ նոցա. և
զօրագլուխքն պատառեցին զհանդերձս իւրեանց.
23 հրամայէին գան հարկանել։ * Եւ բազում վէրս
եդեալ 'ի վերայ նոցա՝ արկին 'ի բանտ. պատուիրեցին
բանտապետին զգուշութ՟բ պահել զնոսա։
24 * Որոյ առեալ զայսպիսի պատուէր՝ էարկ զն՟ս 'ի
ներքին բանտն. և զոտս նոցա պնդեաց 'ի կոճեղս։
25 * Եւ 'ի մէջ գիշերոյն պօղոս և շիղա կային յաղօթս՝
և օրհնէին զԱ՟ծ՝ և ունկն դնէին ն՟ց կալանաւորքն։
26 * Եղև յանկարծակի շարժումն մեծ՝ մինչև 'ի շարժիլ
հիմանց բանտին. և բացան անդէն դրունքն
ա՟մ. և ամենեցուն կապանք լուծան։
27 * Իբրև զարթեաւ բանտապետն՝ և ետես բացեալ
զդրունս բանտին, ձգեաց զսուսեր՝ և կամէր երթալ
զիւրովին. կարծէր փախուցեալ զկապեալսն։
28 * Եւ գոչեաց 'ի ձայն մեծ պօղոս՝ և ասէ. մի ինչ
գործեր ընդ անձն քո չար. քանզի ամենեքին աստ
29 եմք։ * Խնդրեաց զլոյս՝ և դիմեաց 'ի ներքս. և
դողահար եղեալ անկաւ առաջի պօղոսի և շիղայի։
30 * Եւ ածեալ զնոսա արտաքս՝ ասէ. տեարք՝ զի՞նչ
պարտ է ինձ առնել՝ զի ապրեցայց։
31 * Եւ նոքա ասեն, հաւատա՛ 'ի Տ՟ր Յ՟ս Ք՟ս, և ապ-
32 րեսցիս դու՝ և ա՟մ տուն քո։ * Եւ խօսեցան
նմա զբանն Տ՟ն՝ և ամենեցուն որք էին 'ի տան
33 նորա։ * Եւ առեալ զնոսա 'ի նմին ժամու գիշերոյն՝
լուաց 'ի վիրաց անտի. և մկրտեցաւ ինքն՝ և
իւրքն ամենեքեան անդէն վաղվաղակի։
34 * Եւ ածեալ զնոսա 'ի տուն իւր, եդ առաջի սեղան.
և ուրախ եղև ա՟մ տամբն հաւատացեալ
35 յԱ՟ծ։ * Եւ իբրև այգ եղև՝ առաքեցին զօրագլուխքն
զնուիրակսն, և ասեն. արձակեա՛ զարսդ
36 զայդոսիկ։ * Եւ պատմեաց բանտապետն զբանսն
պօղոսի. եթէ առաքեցին զօրագլուխքն զի արձակիցիք.
արդ ելէք՝ և երթա՛յք խաղաղութ՟բ։
37 * Իսկ պօղոս ասէ ցնոսա՝ գան հարեալ զմեզ հրապարակաւ՝
արս անմեղս հռոմայեցիս՝ արկին 'ի բանտ.

և արդ լռելեայն հանեն զմեզ. ոչ այդպէս. այլ
38 եկեսցեն, * ինքեանք իսկ հանցեն զմեզ։ և պատմեցին
զօրագլխացն նուիրակքն զբանսն. զահի հարան՝
իբրև լուան թէ հռոմայեցիք են. և եկեալ
39 աղաչեցին զնոսա։ * Եւ իբրև հանին, աղաչէին
40 գնալ 'ի քաղաքէն։ * Եւ ելեալ 'ի բանտէն. մտին
առ լիդիայ։ Եւ տեսեալ զեղբարսն՝ մխիթարեցին
զն͞ս՝ և գնացին։

ԳԼ. ԺԷ։

1 Գ. Ջ. Եւ շրջեալ ընդ ամփիպօլիս, և ընդ ապօղօնիայ,
եկին 'ի թեսաղոնիկէ, ուր էր ժողովուրդ
2 հրէից։ * Եւ ըստ սովորութեն պօղոս եմուտ
առ ն͞ս։ և 'ի շաբաթս երիս խօսեցաւ ընդ
3 նոսա 'ի գրոց։ * Բանայր, և դնէր առաջի, եթէ
պարտ էր Ք͞ի չարչարիլ և յառնել 'ի մեռելոց։
Եւ նա է Ք͞ն Յ͞ս՝ զոր ես պատմեմ ձեզ։
4 * Եւ ոմանք 'ի նոցանէ հաւանեցան. և միաբանեցան
պօղոսի և շիղայի։ բայց պաշտօնէիցն հեթանոսաց
էր բազմութի յոյժ. և 'ի կանանց գլխաւորաց
5 ոչ սակաւք։ * Եւ նախանձեցան հրէայքն, և
առեալ արս ոմանս գռեհիկս՝ անօրէնս՝ ամբոխ արարեալ
խռովեցին զքաղաքն։ և կուտեալ յապարանն
յասօնի, խնդրեցին զն͞ս ածել 'ի հրապարակ։
6 * Եւ իբրև ոչ գտին զնոսա՝ քարշէին զյասօն
և զոմանս եղբարս առ քաղաքապետսն. բողոք
բարձեալ՝ եթէ որք զաշխարհս խռովեցին՝ սոքա
և այր հասին։
7 * Զորս ընկալեալ է յասօնի։ և սոքա ամենեքեան
հակառակ հրամանաց կայսեր գործեն. թագաւոր
8 զոմն ասեն զՅ͞ս։ * Եւ խռովեցուցին զժողովուրդն
9 և զքաղաքապետսն, որք լսէին զայս։ * Եւ առեալ
դերաշխաւորութի առ 'ի յասօնայ և յայլոյն՝ արձակեցին
10 զն͞ս։ * Բայց եղբարքն վաղվաղակի գիշերայն
յուղարկեցին զպօղոս և զշիղայ 'ի բերիայ։ որք
իբրև հասին անդր՝ 'ի ժողովուրդն հրէից գնացին։
11 * Զի սոքա էին ազնուականագոյնք՝ քան որք 'ի

թեսաղօնիկին էին։ որք ընկալան զբանն ամ յօժարութբ։ հանապազ քննէին զգիրս, եթէ իցէ
12 այս այսպէս։ *Եւ բազումք ՚ի նոցանէ հաւատացին։ եւ ՚ի յունաց կանանց զգաստից՝ եւ արանց ոչ
13 սակաւք․ *Իսկ իբրեւ գիտացին, որք ՚ի թեսաղօնիկէ հրէայքն էին, եթէ եւ ՚ի բերիա պատմեցաւ ՚ի պօղոսէ բանն Այ։ եկին եւ անդր շարժել
14 եւ խռովեցուցանել զժողովուրդն։ *Յայնժամ վաղվաղակի զպօղոս առաքեցին եղբարքն գնալ մինչեւ
՚ի ծովեզր։ եւ մնացին շիղա եւ տիմոթէոս անդէն։
15 *Եւ որք տանէին զպօղոս, ածին զնա մինչեւ յաթէնս։ եւ առեալ պատուէր ՚ի նմանէ առ շիղայ եւ
տիմոթէոս, զի վաղվաղակի եկեսցեն առ նա․ եւ
16 Գն․ գնացին։ *Եւ յաթէնս ՚ի մնալ նց պօղոսի,
զայրանայր հոգի նր ՚ի նմա։ զի տեսանէր ՚ի կռապաշտութե զքաղաքն։
17 *Եւ խօսէր ՚ի ժողովրդեանն ընդ հրէայս եւ ընդ
պաշտօնեայս՝ եւ ՚ի հրապարակին զամ օր՝ որոց եւ
18 պատահէին։ *Ոմանք յեպիկուրեանցն, եւ ստոյիկեանցն փիլիսոփայից հակառակէին ընդ նմա։ եւ
ոմանք ասէին՝ զի՞նչ կամիցի սերմանաքաղս այս խօսիլ։ իսկ այլք, թէ օտարոտի իմն դից թուի պատ
միչ լինիլ։ քանզի զՅն եւ զյարութիւն աւետարա-
19 նէր։ *Եւ առեալ զնա ածին յարիսպագոսն։ եւ
ասէին՝ կարասցուք իմանալ թէ զի՞նչ է նոր վարդապետութիւդ՝ որ ՚ի քէն պատմի։
20 *Օտարացուցիչս իմն բերես ՚ի լսելիս մեր․ կա-
21 միմք գիտել թէ զի՞նչ կամիցի այս լինիլ։ *Զի
աթենացիքն ամենեքին՝ եւ եկքն օտարք, ոչ յայլ
ինչ պարապէին՝ բայց ասել ինչ՝ կամ լսել նո-
22 րագոյնս։ *Եկաց պօղոս ՚ի մէջ արիսպագին՝ եւ ասէ։
Արք աթենացիք, ըստ ամի իբրեւ պաշտօնասէրս
23 տեսանեմ զձեզ։ *Քանզի շրջեալ եւ տեսեալ
զպաշտամունս ձեր, գտի բագին մի․ յորում գրեալ էր անծանօթի Այ՝ զոր դուք յանծանօթս
24 պաշտէք՝ ես զնոյն պատմեմ ձեզ։ *Ած՝ որ արար
զաշխարհս եւ զամ, որ ՚ի նմա, նա երկնից եւ երկրի է Տէր։ ոչ ՚ի ձեռագործ տաճարս բնակէ․

*

25 * Եւ ո՛չ ՚ի ձեռաց մարդկան պաշտի իբրեւ կարօտ
իմիք: Նա տայ ամ̅ի կեանս՝ եւ շունչ՝ եւ զամ̅ ինչ:
26 * Արար ՚ի միոջէ արենէ զամ̅ ազգս մարդկան՝
բնակել ՚ի վ̅ր ամ̅ երեսաց երկրի: Հաստատեալ
կարգեալ ժամանակս՝ եւ սահմանադրութի բնա-
27 կութե̅ նց̅՝ խնդրել զԱծ̅: * Զի թերեւս զն-
նիցեն զնա՝ եւ գտանիցեն: Նա եւ ո՛չ հեռի իսկ է
յիւրաքանչիւրումեքէ ՚ի մէնջ:
28 * Զի նովաւ կեամք՝ եւ շարժիմք՝ եւ եմք: ոպ̅ եւ
29 ոմանք ՚ի ձերոց ճարտարաց ասացին: * Թէ նր̅ եւ
ազգ իսկ եմք. եւ արդ՝ որովհետեւ ազգք եմք Այ̅,
ո՛չ պարտիմք համարել ոսկւոյ՝ կամ արծաթոյ՝
կամ քարի, որ ՚ի ճարտարութէ եւ ՚ի մտաց մար-
դոյ քանդակեալ իցէ՝ զԱծականն լինել նմանօղ:
30 * Բայց զժամանակս անգիտութե̅ անտես արարեալ
Այ̅: արդ զայս պատուիրէ մարդկան՝ ամ̅ ումեք
31 ապաշխարել: * Քանզի հաստատեաց օր՝ յորում
պարտ է դատել զաշխարհս արդարութբ̅՝ ՚ի ձեռն
առն՝ որով սահմանեաց տալ հաւատս ամենե-
ցուն՝ յարուցեալ զնա ՚ի մեռելոց:
32 * Իբրեւ լուան զյարութի մեռելոց, ոմանք ծաղր
առնէին զնա: Կէսքն ասէին՝ լուիցուք ՚ի քէն վ̅ս
33 այդորիկ միւսանգամ: * Եւ ապա պօղոս ել եւ
34 գնաց ՚ի միջոյ նց̅: * Եւ ոմանք արք անկեալք ՚ի նա,
հաւատացին: ընդ որս էր եւ դիոնէսիոս արիսպա-
գացի: եւ կին մի անուն դամարիս՝ եւ այլք ընդ
նոսա:

ԳԼ· ԺԸ:

1 Յետ այսորիկ մեկնեալ պօղոսի յաթենացւոց ան-
2 տի՝ եկն ՚ի կորնթոս: * Եւ եգիտ զհրէայ զոմն
անուն ակիւղաս՝ յազգէ պոնտացի. այն ինչ ե-
կեալ յիտալիայ. եւ զպրիսկիղայ կին նր̅ (վ̅ս հրամա-
նին կղօդեայ՝ որոշել զամ̅ հրէայս ՚ի հռօմայ:) եւ
յարեցաւ ՚ի նոսա:
3 * Եւ վ̅ս զի համարուեստ էր՝ եղեւ առ նոսա՝ եւ
գործէր: (քանզի էին խորանակարք արուեստիւ:)

4 * Եւ խօսէր ՚ի ժողովրդեանն ըստ ա͞մ շաբաթու.
և հաւանեցուցանէր զհրէայս՝ և զհեթանոսս:
5 * Իբրև իջին ՚ի մակեդոնիայ՝ շիղա և տիմոթէոս,
ստիպէր հոգւովն պօղոս դնել զվկայութ͞ի հրէ-
6 իցն՝ թէ Յ͞ս է Ք͞սն: * Եւ յընդդէմ դառնալ նց͞՝
և ՚ի հայհոյել՝ թօթափեաց զձորձս՝ և ասէ ցն͞ս.
արիւն ձեր ՚ի գլուխս ձեր՝ քաւեալ եմ ես. յայսմ
հետէ ՚ի հեթանոսս երթամ:
7 * Եւ գնացեալ անտի՝ եմուտ ՚ի տուն ուրումն, որոյ
անուն էր տիտոս յուստոս՝ պաշտօնեայ Ա͞Յ: որոյ
8 ապարանք էին մերձ ՚ի ժողովետղն: * Կրիսպոս
ժողովրդապետ հաւատաց ՚ի Տ͞ր ա͞մ տամբ իւրով:
և բազմաց կորնթացւոց լուեալ՝ հաւատային ՚ի
9 Տ͞ր՝ և մկրտէին: * Եւ ասէ Տ͞ր ՚ի գիշերին տես-
լեամբ ցպօղոս: մի՛ երկնչիր՝ այլ խօսեաց՝ և մի՛
10 լռեր: * Քանզի ես ընդ քեզ եմ: և ոչ ո՛ք ընդ-
դէմ դարձցի քո. ՚ի չարչարել զքեզ. քանզի ժո-
ղովուրդ է իմ բազում ՚ի քաղաքիս յայսմիկ:
11 * Եւ նստաւ անդ տարի մի՝ և ամիս վեց՝ ուսուցա-
12 Եկ. նել նոյա զբանն Ա͞Յ: * Առ գաղիոնաւ փո-
խանակաւ բդեշխին աքայեցւոց. յարեան միաբան
հրէայքն ՚ի վ͞ր պօղոսի, և ածին զնա յատեան:
13 * Եւ ասէին, եթէ արտաքոյ օրինաց պատրէ. սա
14 զմարդիկ՝ պաշտել զԱ͞Ծ: * Եւ իբրև մերձ էր պօ-
ղոս բանալ զբերան իւր, ասէ գաղիոն ցհրէայսն.
եթէ էր ինչ անիրաւութ͞ի կամ խարդախութ͞ի
չարեաց՝ ո՛վ հրէայք՝ ՚ի դէպ էր ինձ անսալ ձեզ:
15 * Ապա եթէ խնդիրք ինչ են վ͞ն բանի՝ և ան-
ուանց՝ և օրինաց ձերոց՝ տեսէ՛ք ձեզէն: քանզի
16 դատաւոր այդպիսի իրաց չկամիմ լինել: * Եւ
մերժեաց զնոսա յատենէ անտի:
17 * Եւ առեալ ամենեցուն յունաց զսոսթենէս ժո
ղովրդապետ՝ հարկանէին առաջի ատենին. և ոչինչ
18 գաղիոնի փոյթ լինէր: * Բայց պօղոսի տակաւին
մնացեալ աւուրս բազումս՝ յեղբարց հրաժարեալ՝
նաւէր յասորիս: (և ընդ պրիսկիղայ և ակիւղայ)
փոքրել զգլուխ ՚ի կենքրեայ. քանզի ուխտադիր էր:
19 * Եւ հասեալ յեփեսոս՝ զն͞ս եթող անդ. և ինքն

մտեալ առ ժողովուրդն՝ խօսէր ընդ հրէայսն ։
20 * Եւ աղաչէին զնա բազում ժամանակս լինել
21 անդ. և ոչ էառ յանձն ։ * Այլ հրաժարեալ ՚ի
նոցանէ. և ասէ՝ դարձեալ շրջեցայց առ ձեզ Այ̄
22 կամօք՝ ամբարձաւ յեփեսոսայ ։ * Իջեալ ՚ի կեսարիայ,
ել և ետ ողջոյն եկեղեցւոյն. էջ յանտիոք ։
23 * Եւ եղեալ անդ ժամանակս ինչ. և շրջել կար-
գաւ ընդ գաղատացւոց աշխարհն. և ընդ փռիւ-
24 գիայ, հաստատել զամ̄ աշակերտեալսն ։ * Հրեայ
ոմն ապողոս անուն, աղեքսանդրացի յազգէ. այր
ճարտարաբան, եկն եհաս յեփեսոս. զօրաւոր էր
25 գրովք ։ * Սա էր տեղեկացեալ ճանապարհին Տն̄,
և եռայր հոգւով ։ խօսէր, և ուսուցանէր ճշմար-
տութիւն վս̄ Յի̄ ։ գիտէր միայն զմկրտութիւն յո-
26 հաննու ։ * Սա սկսաւ համարձակել ՚ի ժողովր-
դեանն ։ և լուեալ ՚ի նմանէ ակիւղայ և պրիսկիղայ,
առին զնա առ ինքեանս ։ և ճշմարտագոյն պատմե-
27 ցին նմա զճանապարհն Այ̄ ։ * Իբրև կամեցաւ նա
գնալ յաքայիա, յօժարեալ եղբարք գրեցին առ
աշակերտսն ընդունել զնա ։ որ իբրև եհաս անդր՝
բազում նպաստ լինէր հաւատացելոցն ՚ի ձեռն
28 շնորհացն ։ * Քանզի պնդագոյն զհրէայսն յանդի-
մանէր հրապարակաւ ։ ցուցանել գրովք եթէ
Քն̄ է Յս̄ ։

ԳԼ. ԺԹ.

1 Եւ եղև մինչդեռ ապօղոսն ՚ի կորնթոս էր, պօ-
ԵՐ. ղոսի շրջեալ զվերին կողմամբքն՝ և իջեալ
2 յեփեսոս. և գտեալ զոմանս զաշակերտս ։ * Ասէ
ցնս̄ եթէ զՀոգի սր̄ ընկալարո՞ւք ՚ի հաւատալն ։ Նո-
քա ասեն. այլ ոչ եթէ Հոգի սր̄ գուցէ՝ լու-
3 եալ է մեր ։ * Եւ ասէ՝ իսկ յի՞նչ մկրտեցայք ։
4 Նոքա ասեն ՚ի յօհաննու մկրտութիւն ։ * Եւ ասէ
պօղոս՝ յօհաննէս մկրտեաց մկրտութբ̄ ապաշխա-
րութե̄ ամ̄ ժողովրդեանն ։ և ասէր՝ զի որ գա-
լոցն է յետ նր̄, ՚ի նա հաւատասցեն. այս ինքն է՝
5 Յս̄ Քս̄ ։ * Եւ իբրև լուան, մկրտեցան յանուն

6 Տ՟ն Յ՟ի ։ * Եւ 'ի դնել 'ի վ՟ր ն՟ց պօղոսի զձեռն,
եկն Հոգին ս՟ւ 'ի վ՟ր ն՟ց ։ խօսէին լեզուս՝ և մար-
7 գարէանային ։ * Եւ էին ամենեքեան այր իբրև
8 երկոտասան ։ * Եւ մտեալ 'ի ժողովուրդն՝ համար-
ձակիւր ամիսս երիս ։ խօսէր, և հաւանեցուցանէր
9 վ՟ս արքայութ՟ե՟ն Ա՟յ ։ * Իբրև ոմանք խստանային՝
և ընդդէմ դառնային բամբասել զճանապարհն
առաջի բազմութ՟ե՟ն, մեկնեալ 'ի նոցանէ՝ որոշեաց
զաշակերտսն ։ Հանապազ օր խօսէր 'ի դպրոցին
10 տիւրաննի ուրումն ։ * Եւ այս եղև զերկուս ամ,
մինչև ա՟մ բնակչացն ասիայեցւոց լսել զբանն Տ՟ն,
հրէից՝ և հեթանոսաց ։
11 * Եւ զօրութ՟իս ոչ սակաւս Ա՟ծ առնէր 'ի ձեռն
12 պօղոսի ։ * Մ՝ինչ զի և 'ի հիւանդս տանիլ 'ի
քրտանէն թաշկինակս և կամ վարշամակս. և մեր-
ժել 'ի նոցանէ ախտիցն. և այսոց չարաց ելանել ։
13 * Յանդգնեցան ոմանք և 'ի շրջօղ հրէիցն, որք
երդմնեցուցիչքն էին անուանել 'ի վ՟ր այնոցիկ՝
որք ունէին այսս չարս, զանուն Տ՟ն Յ՟ի, և ասէին ։
երդմնեցուցանեմ զձեզ 'ի Յ՟ս՝ զոր պօղոսն քարոզէ ։
14 * Էին ուրումն սկևեայ հրէի քահանայապետի
եօթն որդիք, որք զայս առնէին ։
15 * Պատասխանի ետ այսն չար, և ասէ ց՟նս ։ զՅ՟ս
գիտեմ, և զպօղոս ճանաչեմ, բայց դուք ո՞վ էք ։
16 * Եւ վազեաց այրն յորում էր այսն չար՝ ըմբռ-
նեալ զերկոսեանն՝ յաղթահարեաց զն՟ս, մինչև մեր
կըս և վիրաւորս փախչել 'ի տանէ անտի ։
17 * Եւ այս յայտնի եղև ա՟մ հրէից և հեթանոսաց՝
որք բնակեալ էին յեփեսոս ։ և անկաւ երկիւղ
յամենեսեան 'ի ն՟ս ։ և մեծանայր անուն Տ՟ն Յ՟ի ։
18 * Եւ բազումք 'ի հաւատացելոցն գային, և խոստո-
19 վան լինէին, և պատմէին զգործս իւրեանց ։ * Եւ
բազումք 'ի կախարդացն բերէին զգիրսն, և այրէ-
ին առաջի ամենեցուն ։ համարեցին զգինս նոցա,
և գտանէին արծաթոյ դահեկանի, բիւրս հինգ ։
20 * Եւ այսպ՟ բանն Ա՟յ աճէր՝ և զօրանայր ։
21 Եգ․ * Եւ իբրև կատարեցաւ այս, եդ պօղոս 'ի
մտի շրջել ընդ մակեդոնիայ՝ և ընդ աքայիայ և

գնալ յեՀմ: ասէր, եթէ յետ երթալոյն իմոյ անդր,
22 պարտ է ինձ և զՀռոմ տեսանել: * Առաքեաց 'ի
մակեդօնիայ երկուս 'ի պաշտօնէից իւրոց զտիմօթէոս՝ և զերաստոս. և ինքն մնաց 'ի ժամանակս
23 ինչ յասիայ: * Եւ եղև 'ի ժամանակին յայնմիկ
խռովութ̃ի ոչ սակաւ վասն ճանապարհին Տ̃ն:
24 * Իսկ դեմետրիոս ուրումն անուն՝ արծաթագործ,
գործէր մեհեանս արծաթիս արտեմի դից: և
տայր ճարտարացն լինել ոչ սակաւ շահ:
25 * Որ ժողովեաց իսկ և զձեռագէտս արուեստին,
և ասէ. արք՝ դուք ձեզէն իսկ գիտէք, զի յայսմ
26 գործոյ է շահ մեզ: * Եւ տեսանէք, և լսէք՝ եթէ
ոչ միայն զեփեսացւոց, այլ դրեթէ զա̃մ իսկ
ասիացւոց՝ պօղոս այս՝ հաւանեցուցեալ շրջեաց
բազում ժողովս՝ ասել՝ եթէ ոչ են աստուածք՝
27 ձեռագործք: * Եւ ոչ միայն այս ճգնէ զմեր կողմնս
գալ 'ի յանդիմանութիւն, այլ և զմեծին աստուծոյ
արտեմեայ զմեհեանն յոչինչ համարել: Նաև քակելոց ևս իցէ զմեծութիւն ն̃ր. զոր ա̃մ ասիա՝ և
28 տիեզերք պաշտեն: * Եւ զայս իբրև լուան, լիք
եղեն բարկութ̃բ: աղաղակէին և ասէին. մեծ է
29 արտեմիս եփեսացւոց: * Եւ լցաւ քաղաքն խռովութ̃բ՝ և դիմեցին առ հասարակ 'ի թէատրոնն.
յափշտակելով զգայիոս և զարիստարքոս մակեդո-
30 նացի զուղեկիցսն պօղոսի: * Բայց պօղոս իբրև
կամեցաւ մտանել յամբոխն, ոչ թողին զնա աշա-
31 կերտքն: * Ոմանք և յասիայ պետացն, որք էին ն̃ր
բարեկամք, յղէին առ նա՝ և աղաչէին, մի տալ
32 զանձն 'ի թէատրոնն: * Այլք զայլիմն աղաղակէին. զի էր ժողովն ն̃շ խռովեալ: և բազումք 'ի
նոցանէ ոչ գիտէին, եթէ վա̃ որ ժողովեալ իցեն:
33 * Եւ յամբոխին բազմութ̃է յառաջ կալան զաղէքսանդրոս: և իբրև ածին յառաջ զնա հրէայքն,
աղէքսանդրոս շարժեաց զձեռն՝ և կամէր պատաս-
34 խանի տանել ամբոխին: * Իբրև գիտացին եթէ
այրն հրէայ է, մի բարբառ եղեալ յամենեցունց՝
իբրև ժամս երկուս աղաղակել, եթէ մեծ է ար-
35 տեմիս եփեսացւոց: * Լռեցոյց դպրապետն զա̃մ

բոխն՝ և ասէ․ արք եղբարք՝ իսկ ով է 'ի մարդկանէ՝
որ ոչ գիտէ զեփեսացւոց քաղաքս մեհենազարդ՝
մեծին արտեմեայ դիցն, և դիոպետեայ ։
36 *Եւ զի այդ այդպէս է անշուշտ՝ ձեզ պարտ է
հանդարտիլ․ և մի ինչ յանդգնութեամբ գործել ։
37 *Ածէք զարսդ զայդոսիկ այսր․ ոչ մեհենակապուտս՝
38 և հայհոյիչս աստուծոյ մերոյ ։ *Զի եթէ
դեմետրիոս՝ և որք ընդ նմա ճարտարք՝ ունիցին ինչ
ընդ ումեք բանս՝ յատեան երթիցեն․ և դատաւորք
39 գոն՝ և ամբաստան լիցին զմիմեանս ։ *Ապա եթէ
վասն այլոյ իրիք խնդիր իցէ՝ յօրինաւոր ժողովն
40 վճարեսցեն ։ *Քանզի և մեզ վիշտ վտանգի է
ընդ կռուոյս այսր աւուր՝ առանց իրիք յանցանաց
լինելոյ ։ (զորմէ ոչ կարասցուք պատասխանի տալ)
վասն ժողովոյս այսորիկ ։ և զայս ասացեալ՝ արձակեաց
զժողովն ։

ԳԼ․ Ի․

1 Եւ յետ դադարելոյ ամբոխին՝ կոչեաց պօղոս զաշակերտսն,
ԵԳ․ և մխիթարեաց․ ողջոյն ետ՝ և ել
2 գնաց 'ի մակեդոնիայ ։ *Եւ շրջեալ ընդ կողմանսն
ընդ այնոսիկ՝ և մխիթարեալ զնոսա բանիւք բազմօք՝
3 եկն յելլադայ ։ *Իբրև արար անդ ամիսս երիս,
եղև նմա դաւ 'ի հրէիցն, մինչդեռ կամէր
ելանել յասորիս․ խորհուրդ կալաւ դառնալ ընդ
4 մակեդոնիայ ։ *Եւ երթայր ընդ նմա մինչև յասիայ,
սոսիպատրոս՝ պիւռա բերիացի․ և 'ի թեսաղոնիկեցւոց
արիստարքոս՝ և սեկունդոս՝ և գայիոս դերբացի՝
և տիմոթէոս՝ և ասիացիք․ տիւքիկոս՝ և տրոփիմոս ։
5 *Նոքա յառաջ երթեալ մնային մեզ 'ի
6 տրովադայ ։ *Եւ մեք նաւեցաք յետ աւուրցն բաղարջակերաց
'ի փիլիպպեայ՝ և եկաք առ նոսա 'ի
տրովադայ՝ մինչև յաւուրս հինգ․ անդ դադարեցաք
7 աւուրս եօթն ։ *Եւ յաւուրն շաբաթու՝ մինչդեռ
ժողովեալ էաք բեկանել զհացն, պօղոս խօսէր
ընդ նոքա․ զի գնալոց էր 'ի վաղիւ անդր․ և
8 երկայնեաց զբանն մինչև 'ի մէջ գիշերին ։ *Եւ

էին լապտերք բազումք ՚ի վերնատանն՝ ուր էաքն
9 ժողովեալք։ * Եւ՛ նստէր ոմն երիտասարդ՝ անուն
Եւտիքոս՝ ՚ի վերայ պատուհանին, նիրհէր ՚ի քուն
թանձրութե̄. ՚ի խօսելն պօղոսի յաճախ, ընկըղմեալ
՚ի քնոյ անտի՝ անկաւ յերրորդ դստիկոնէն
10 ՚ի վայր, և բարձաւ մեռեալ։ * Եւ՛ իջեալ պօղոս՝ անկանիւր
զնովաւ. առնոյր զնա ՚ի գիրկս՝ և ասէր։ մի
11 խռովիք. քանզի հոգի սորա ՚ի սմին է։ * Եւ՛ ելեալ
զհացն՝ և ճաշակեաց. և բազում ևս խօսեցաւ մինչև
12 յառաւօտ. և ապա ել և գնաց։ * Եւ՛ ածին
զպատանին կենդանի. և մխիթարեցան ոչ սակաւ։
13 * Եւ՛ մեք մտեալ ՚ի նաւ՝ ամբարձաք յասոն. անտի
ակնունէաք միւսանգամ առնուլ զպօղոս. զի այնպէս
պատուիրեալ էր՝ մինչ ինքն զցամաքաւն երթալոց
14 էր։ * Եւ՛ իբրև դիպեցաւ մեզ յասոն՝ առեալ
15 զնա եկաք ՚ի միտիլինէ։ * Եւ՛ անտի նաւարկեալ՝
և ՚ի վաղիւ անդր հասաք հանդէպ քիայ. և
՚ի միւս ևս օրն հասաք ՚ի սամոս. և ՚ի վաղիւ անդր
16 եկաք ՚ի մեղիտոն։ * Զի ՚ի մտի եդեալ էր պօղոսի
նաւել առ եփեսոսաւ՝ որպէս զի մի լիցի նմա
ժամանակ ինչ յամել յասիայ։ քանզի փութայր՝
եթէ հնար ինչ իցէ նմա՝ զօրն պենտեկոստէից
ԵԵ. երթալ յե̄մ։
17 * Եւ՛ ՚ի մելիտեայ յղեալ յեփեսոս՝ կոչեաց
18 զերիցունս եկեղեցւոյն։ * Եւ՛ իբրև եկին առ նա՝
ասէ ցնոսա. դուք ձեզէն գիտէք՝ յօրէ յառաջնմէ՝
յորմէ եկի յասիայ. որպէս ընդ ձեզ զա̄մ ժամանակն
19 եղէ։ * Ծառայել Տն̄ ամենայն խոնարհութբ̄՝
և բազում արտասուօք՝ և փորձութբ̄ք.
որք դիպեցան ինձ ՚ի նենգութե̄ց հրէից։
20 * Որպէս ոչինչ զանգիտեցի յօգտակարայն չպատմել
ձեզ՝ և ուսուցանել զձեզ հրապարակաւ, և
21 առ տունս։ * Տալ զվկայութի̄ հրէից և հեթանոսաց
զապաշխարութե̄ն որ առ Ած̄. և զհաւատոցն
22 որ ՚ի Տր̄ մեր Յս̄ Քս̄։ * Եւ՛ արդ՝ ահաւասիկ ես
կապեալ հոգւով երթամ յե̄մ. և որ ինչ անդ
23 ընդդէմ անցանելոց իցէ՝ չգիտեմ։ * Բայց
զի հոգին սուրբ ըստ քաղաքաց քաղաքաց վկայէ

ինձ, և ասէ. եթէ կապանք և նեղութիւնք մնան
24 քեզ: * Այլև ոչ ինչ համարիմ զանձն իմ պատուական՝
որպէս զի կատարեցից զընթացս իմ ուրախութեամբ՝
և զպաշտօնն զոր առի ՚ի ՏԷ ՅԷ՝ վկայ
լինիլ աւետարանի շնորհացն ԱՅ:
25 * Եւ արդ՝ ահաւասիկ գիտեմ ես, եթէ ոչևս
տեսանէք զերեսս իմ դուք ամենեքեան, յորս
26 շրջեցայ քարոզել զարքայութիւն այ: * Վն որոյ
զվկայութիւն դնեմ ձեզ յաւուր յայսմիկ՝ զի սուրբ
27 եմ յարենէ ամենեցուն: * Քանզի ոչ խորշեցայ
՚ի պատմելոյ ձեզ զամենայն կամսն ԱՅ:
28 * Զգոյշ կացէք անձանց՝ և ամենայն հօտին. յորում
եդ զձեզ Հոգին սբ տեսուչս՝ հովուել
զժողովուրդ Տն, զոր ապրեցոյց արեամբն իւրով:
29 * Քանզի գիտեմ ես՝ եթէ յետ ելից մեկնելոյ՝
գայցեն գայլք յափշտակօղք ՚ի ձեզ. որք ոչ խնայ-
30 իցեն հօտին: * Եւ ՚ի ձէնջ յարիցեն արք, որք
խօսիցին թիւրս՝ ձգել զաշակերտսն զհետ իւրեանց:
31 * Վասն այնորիկ արթուն կացէք. զի զերեամ մի՝
զցայգ և զցերեկ՝ ոչ դադարեցի արտասուօք խրա-
32 տել զմի մի իւրաքանչիւր: * Եւ արդ յանձն առնեմ
զձեզ ԱՅ՝ և բանի շնորհաց նր, որ կարօղն է
շինել՝ և տալ ձեզ զժառանգութիւն ընդ սբսն ամ
33 * Արծաթոյ՝ կամ ոսկւոյ՝ կամ հանդերձից՝ ոչ
34 ուրուք ՚ի ձէնջ ցանկացայ: * Դուք ինքնին գի-
տէք՝ զի զպէտս իմ, և որոց ընդ իս էին՝ պաշտե-
35 ցին ձեռքս այս: * Եւ զամենայն ինչ ցուցի ձեզ.
զի այսպէս պարտ է վաստակել. և դարմանել
զհիւանդս. և յիշել զբանն Տն ՅԻ, զոր ինքն իսկ
ասաց՝ երանելի է մանաւանդ տալն քան զառնուլն:
36 * Եւ զայս իբրև ասաց՝ եդեալ ծունր ամենեքումբք
37 եկաց յաղօթս: * Բազում լալիւն եղև ամենեցուն.
և անկեալ զպարանոցաւն պօղոսի՝ համբուրէին զնա:
38 * Մորմոքէին մանաւանդ ՚ի վերայ բանին՝ զոր ա-
սէր. թէ ոչևս տեսանելոց են զերեսս նորա. և
յուղարկեցին զնա ՚ի նաւ անդր:

ԳԼ. ԻԱ։

1 Եւ իբրև եղև ելանել մեզ և մեկնել ՚ի նո-
Ե.Զ. ցանէ· հանդէպ դիմեալ եկաք ՚ի կով· և
՚ի վաղիւն անդր ՚ի հռոդոն· և անտի ՚ի պատարայ։
2 * Եւ գտեալ զնաւ մի, զի երթայր ՚ի փիւնիկէ· և
3 ելեալ ՚ի նա՝ գնացաք։ * Եւ յայտ եղեալ կիպ-
րեայ՝ թողաք զնա ՚ի ձախակողմն, նաւեցաք յասորիս,
և իջաք ՚ի տիւրոս· քանզի անդ էր նաւուն թափե-
4 լոց զբեռինսն։ * Եւ գտեալ զաշակերտսն՝ կացաք
անդ աւուրս եօթն, որք ասէին ցպօղոս ՚ի ձեռն
Հոգւոյն՝ մի ելանել յե՜մ։
5 * Եւ իբրև եղև մեզ կատարել զաւուրսն՝ ելեալ
գնայաք՝ յուղարկեալ զմեզ ամենեցուն հանդերձ
կանամբք և որդւովք՝ մինչև արտաքոյ քաղաքին·
6 և եդեալ զծունր՝ կացաք յաղօթս։ * Եւ հրաժա-
րեցաք ՚ի միմեանց առ ծովեզերբն՝ և ելաք ՚ի նաւն·
7 և նոքա դարձան յիւրեանց տեղիս։ * Եւ մեր
զնաւն աւարտեալ ՚ի տիւրոսէ՝ հասաք ՚ի պտողէ-
մայիդա· և ողջոյն տուեալ եղբարցն՝ եղեաք օր
8 մի առ նոսա։ * Եւ ՚ի վաղիւն անդր ելեալ անտի՝
եկաք ՚ի կեսարիա· և մտեալ յապարանսն փիլիպ-
պոսի աւետարանչի, որ էր յեօթանց անտի՝ ագաք
9 առ նմա։ * Նորա էին դստերք չորք՝ կուսք մար-
10 գարէք։ * Եւ ՚ի լինելն մեր անդ աւուրս բազումս,
էջ ոմն ՚ի հրէաստանէ մարգարէ անուն ագա-
11 բոս։ * Եւ եկեալ առ մեզ· առեալ զգօտին պօղո-
սի՝ կապեաց զոտս և զձեռս իւր՝ և ասէ· այսպէս
ասէ Հոգին սուրբ· զայրն, որոյ գօտիս այս է՝
այսպէս կապեսցեն հրէայք՝ և մատնեսցեն ՚ի ձեռս
12 հեթանոսաց։ * Եւ իբրև լուաք զայն՝ աղաչէաք
մեք՝ և որք ՚ի տեղւոջն էին՝ չելանել նմա յե՜մ։
13 * Յայնժամ պատասխանի ետ պօղոս· զի՞նչ գոր-
ծէք՝ զի՞ լայք, և ճմլեցուցանէք զսիրտ իմ· քան-
զի ես ոչ միայն կապելոյ՝ այլև մեռանելոյ յե՜մ
պատրաստ եմ, վասն անուան Տ՟ն Յ՟ի Ք՟ի։
14 * Եւ ՚ի չանսալն նորա՝ լռեցաք· ասեմք, Տ՟ն կամք
լիցին։

15 ԵԼ. * Եւ յետ աւուրցն այնոցիկ՝ համբարձեալ
16 ելանէաք յէ՟մ: * Եկին ընդ մեզ և յաշակերտաց
անտի Կեսարիայ. և տանէին զմեզ առ որում
վանս ունելոց էաք՝ Մնասոնի ումեմն Կիպրացւոյ՝
17 առաջնոյ աշակերտի: * Եւ 'ի մտանելն մեր յէ՟մ,
18 խնդութեամբ ընկալան զմեզ եղբարք: * 'Ի վաղիւն
անդր եմուտ Պօղոս ընդ մեզ առ Յակոբոս. և եկին ամենայն երիցունքն:

19 * Եւ ողջոյն տուեալ նոցա՝ պատմէր մի ըստ միոջէ՝
զոր արար ԱԾ 'ի հեթանոսս 'ի ձեռն պաշտաման
20 նորա: * Եւ նոցա լուեալ՝ փառաւոր առնէին
զԱԾ, և ասեն ցնա տեսանե՞ս եղբայր՝ քանի՞ բիւրք
են հաւատացելոցն հրէից. և ամենեքեան նախանձաւորք
21 օրինացն են: * Բայց իրազեկ եղեն վասն
քո՝ թէ զապստամբութիւն ուսուցանես 'ի մովսիսէ՝
որոց 'ի հեթանոսս ամ հրէայք են. ասես մի՛
թլփատել զորդիս նոցա՝ և մի՛ ըստ կրօնիցն գնալ:
22 * Արդ՝ զի՞նչ լինիցի, ապաքէն լուիցեն թէ եկեալ
23 ես: * Արդ՝ զայս արա՝ զոր ասեմք քեզ. են 'ի
մեզ արք չորք ուխտադիրք յանձինս իւրեանց:
24 * Զնոսա առեալ՝ սրբեսցիս ընդ նոսա. Եւ ծախեա ինչ 'ի նոսա՝ զի գերծցեն զգլուխս. և գիտասցեն ամենեքին, թէ զորոց իրազեկն եղեն զքէն՝
ոչինչ է. այլ միաբանիս և դու պահել զօրէնս:
25 * Բայց վասն հաւատացելոցն հեթանոսաց, մեք
առաքեցաք՝ որպէս ընտրեցաք, մի՛ ինչ այնպիսի
պահել նոցա. բայց միայն զգուշանալ 'ի կռոց զոհելոյ. և յարենէ. և 'ի հեղձուցելոյ՝ և 'ի պոռնկութենէ:
26 * Յայնժամ Պօղոսի առեալ զարսն՝ 'ի վաղիւն անդր ընդ նոսա սրբեալ եմուտ 'ի տաճարն.
յայտ առնել զկատարումն աւուրցն սրբութեան.
մինչև մատեաւ 'ի վերայ իւրաքանչիւր ուրուք 'ի
նոցանէ պատարագ:

27 ԶԼ. * Եւ իբրև մերձ էին եօթն աւուրք 'ի կատարել. տեսեալ զնա 'ի տաճարին ասիացւոց հրէից՝ զեղուցին զնովաւ զամենայն զամբոխն. և արկեալ
28 'ի նա ձեռս՝ աղաղակէին: * Արք Ի՟էլացիք՝ օգնեցէք. այս այր է՝ որ հակառակ ժողովրդեանն՝ և

օրինայ՝ և տեղւոյս այսորիկ՝ ամենեցուն ամենայն ուրեք ուսուցանէ. մինչև հեթանոսս ևս եմոյծ ՚ի
29 տաճարն՝ և պղծեաց զս̅բ̅ տեղին: * Քանզի էր յառաջագոյն տեսեալ զտրոփիմոս զեփեսացի ՚ի քաղաքին ընդ նմա. զոր կարծէին եթէ ՚ի տաճար անդր եմոյծ պօղոս:
30 * Շարժեցաւ քաղաքն ամ̃, և կուտեցաւ ժողովուրդն. և առեալ զպօղոս ձգէին արտաքոյ տա-
31 ճարին. և վաղվաղակի փակեցան դրունքն: * Ե՛ խնդրէին զնա սպանանել. եհաս զրոյց ՚ի հազարապետն գնդին, եթէ խռովեալ է ամենայն եէմ:
32 * Որոյ անդէն առեալ զօրականս և հարիւրապետս՝ դիմեաց ՚ի վերայ նոցա. և նք̃ տեսեալ զհազարապետն և զզօրականսն, դադարեցին ՚ի հարկանելոյ
33 զպօղոս: * Յայնժամ մատուցեալ հազարապետն կալաւ զնա, և հրամայեաց զնա կապել կրկին շղթայիւք՝ և հարցանէր՝ թէ ո՞ իցէ. և զի՞նչ իցէ
34 արարեալ: * Այլք զայլ իմն աղաղակէին զնմանէ յամբոխին: իբրև ոչ կարաց գիտել զստոյգն վասն ամբոխին, հրամայեաց ածել զնա ՚ի բանակն:
35 * Ե՛ իբրև եհաս յաստիճանն, դէպ եղև բառնալ և բերել զնա ՚ի զօրականացն՝ վս̅ բռնութե̅ ամ-
36 բոխին: * Քանզի զհետ երթայր բազմութի̅ ժո-
37 ղովրդեանն, և ասէին՝ բարձ զդա: * Մինչդեռ մտանելոց էր պօղոս ՚ի բանակն, ասէ ցհազարապետն՝ եթէ արժան իցէ ինձ խօսել ընդ քեզ:
38 և նա ասէ. յունարէն գիտե՞ս: * Մի՞ արդեօք դու իցես եգիպտացին, որ յառաջ քան զայսոսիկ աւուրս ապստամբեցուցեր՝ և հաներ յանապատ չորս հա-
39 զարս արս սիկարեանս: * Ե՛ ասէ պօղոս, ես եմ այր հրէայ՝ ՚ի տարսոնէ կիլիկեցւոյ. ո՛չ աննշան քաղաքի քաղաքացի. աղաչեմ զքեզ հրամայեա՛
40 ինձ խօսել առ ժողովուրդդ: * Ե՛ ՚ի հրամայելն նր̅ պօղոս կացեալ ՚ի վերայ աստիճանացն՝ շարժեաց զձեռն ժողովրդեանն. և իբրև բազում լռութի̅ լինէր. սկսաւ բարբառել հեբրայեցւոց բարբառովն՝ և ասէ:

ԳԼ. ԻԲ.

1 Ա՛րք եղբարք, և հարք, լուարո՛ւք ինձ այժմ առ
2 ձեզ պատասխանատո՛ւութիւնս : * Իբրև լո՛ւան
թէ հեբրայեցւոց լեզո՛ւաւն բարբառեցաւ նոցա՝ առաւել
3 ևս դադարեցին 'ի լռութի : * Եւ ասէ՝ ես
եմ այր Հրեայ՝ ծնեալ 'ի Տարսոնի Կիլիկեցւոց՝
սնեալ 'ի քաղաքիս յայսմիկ՝ առ ոտս Գամաղիէլի,
խրատեալ ըստ ճշմարտութե̅ հայրենի օրինաց ·
նախանձայոյզ էի Ա̅յ՝ որպէս ամենեքեան դուք էք
4 այսօր : * Որ զայն ճանապարհ հալածեցի մինչև 'ի
մահ · կապել՝ և մատնել 'ի բանտս՝ այր և կանայս ·
5 * Որպէս և քահանայապետդ վկայէ ինձ · և ա̅մ
ծերակոյտդ · յորոց և թուղթս առեալ առ եղբարս
'ի դամասկոս երթայի, ածել և անտի կապեալս
6 ԶՐ · յեէմ, զի պատժեսցին : * Եւ եղև ինձ, 'ի
գնալն և մերձենալ 'ի դամասկոս · զմիջաւուրբն
յանկարծակի յերկնից փայլատակեալ լոյս սաստիկ
7 զինև : * Եւ անկայ յերկիր · և լուա՛յ բարբառ՝ որ
ասէր ցիս · սա՛ւուղ, սաւուղ, զի՞ հալածես զիս :
8 * Եւ ես ետու պատասխանի՝ թէ ո՛վ ես Տ̅ր : և
ասէ ցիս · ես եմ Յ̅ս Նազօրեցի, զոր դու հալածես :
9 * Բայց որք ընդ իս էին՝ զլոյսն տեսին, այլ ըղձայնն
10 ոչ լուէին՝ որ խօսէր ընդ իս : * Եւ ասեմ,
զի՞նչ արարից՝ Տէր : և ասէ ցիս Տ̅ր · յարուցեալ
երթիցես 'ի դամասկոս · և անդ պատմեսցի քեզ
11 վասն ա̅մ՝ որ հրաման է քեզ առնել : * Իբրև ոչ
տեսանէի 'ի փառաց լուսոյն այնորիկ՝ զձեռանէ ձըգեալ
'ի նոցանէ՝ որք ընդ իս էին, մտի 'ի դամասկոս :
12 * Անանիա ոմն, այր երկիւղած ըստ օրինաց,
վկայեալ ամենայն բնակչաց՝ որք 'ի դամասկոս հրէայքն
13 էին : * Եկն, եկաց առ իս և ասէ · սա՛ւուղ եղբայր
14 'ի վեր հայեաց : * Եւ ես նոյն ժամայն 'ի վեր
հայեցայ 'ի նա : և նա ասէ ցիս · Ա̅ծ հարցն մերոց
յառաջագոյն ընտրեաց զքեզ ճանաչել զկամս նո̅ր՝
և տեսանել զարդարն, և լսել զբարբառ 'ի բերանոյ
15 նորա : * Զի եղիցիս վկայ նորա առ ամենայն
մարդիկ՝ որոց տեսերն և լուար :

16 * Եւ արդ՝ զի՞ հեղգաս, արի՛, մկրտեա՛յ եւ լուա՛
17 զմեղս քո 'ի կարդալն զանուն նորա: * Եւ եղեւ
ինձ 'ի դառնալն յեէմ, եւ կալ յաղօթս 'ի տաճա-
18 րին, լինել 'ի զարմացման: * Եւ տեսանել զնա՝
զի ասէր ցիս. փութա՛ եւ ել յեէմէ վաղվաղակի.
քանզի չեն ընդունելոց զքո վկայութիւն վասն իմ:
19 * Եւ ես ասեմ. Տ՟ր, ինքեանք իսկ գիտեն՝ զի ես
էի՝ որ 'ի բանտ տայի, եւ գան հարկանէի ըստ ժո-
20 ղովրդոցն զհաւատացեալս 'ի քեզ: * Եւ յորժամ
հեղանիւր արիւն Ստեփաննոսի վկային քոյ, ես ինքն
էի՝ որ 'ի վերայ կայի. եւ կամակից լինէի սպանմանն
նր՟. եւ պահէի զհանդերձս սպանողաց նր՟:
21 * Եւ ասէ ցիս. գնա՛, զի ես 'ի հեթանոսս հեռա-
ւորս առաքեցից զքեզ:
22 * Եւ ունկն դնէին նմա մինչեւ ցայս բան. ապա բար-
ձին զձայնս իւրեանց եւ ասեն. բա՛րձ յերկրէ զայդ-
23 պիսիդ՝ զի չէ՛ պարտ այդպիսւոյդ կեալ: * Եւ յա-
ղաղակելն նոցա, եւ ընկենուլ զհանդերձս, եւ զփո-
24 շին ցանել յօդս: * Հրամայեաց հազարապետն մու-
ծանել զնա 'ի բանակն. ասէր գանի՛ւ հարցանել
զնա. զի գիտասցէ վ՟ն որոյ յանցման այնպէս աղա-
25 ղակէին զնմանէ: * Եւ իբրեւ պրկեցին զնա փոկովք,
ասէ Պօղոս ցհարիւրապետն, որ 'ի վերայ կայր.
եթէ զայր Հռոմայեցի եւ անպարտ պարտ է ձեզ
26 գան հարկանել: * Եւ իբրեւ լուաւ հարիւրապետն,
մատուցեալ առ հազարապետն պատմեաց՝ եւ ասէ.
զի՞նչ կամիս առնել՝ քանզի այրս այս Հռոմայեցի է:
27 * Եւ մատուցեալ հազարապետն ասէ ցնա. ասա՛
դու ցիս՝ Հռոմայեցի՞ ես. եւ նա ասէ՝ այո՛:
28 * Պատասխանի ետ հազարապետն. ես բազում դր՟
խոյ 'զ զինուորութիս զայս ստացայ. ասէ Պօղոս,
29 ես ծնեալ իսկ 'ի դմին եմ: * Եւ վաղվաղակի 'ի-
բաց կացին 'ի նմանէ՝ որք հարկանելոյն էին զնա.
եւ հազարապետն իսկ երկեաւ՝ իբրեւ գիտաց թէ
Հռոմայեցի է. զի կապեալ էր զնա:
30 ԶԳ. * Եւ 'ի վաղիւ անդր կամէր գիտել զճշմա-
րիտն. թէ զի՞նչ չարախօսութի՟ն իցէ հրէից.
արձակեաց զնա՝ եւ հրամայեաց կոչել զքահանայա-

պետսն և զամ ատեանն. և իջուցեալ զպօղոս կացոյց
'ի մէջ նոցա։

ԳԼ: ԻԳ.

1 Եւ հայեցեալ պօղոսի յատեանն՝ ասէ. արք եղբարք՝
ես ամ ուղիղ մտօք գնացեալ եմ առաջի
2 Այ մինչև ցայսօր ։ * Եւ քահանայապետն անանիա
հրամայեաց սպասաւորացն հարկանել զբերան
3 նր։ * Յայնժամ պօղոս ասէ ցնա. հարկանելոց է
զքեզ Ած՝ որմ բռեալ. և դու նստիս դատել զիս
ըստ օրինաց. և առանց օրինաց հրամայես զիս
4 հարկանել։ * Եւ որք շուրջն կային՝ ասեն։ զքահանայապետն
Այ հայհոյես։
5 * Եւ ասէ պօղոս՝ ոչ գիտէի եղբարք եթէ իցէ
քահանայապետ։ գրեալ իսկ է՝ զիշխանս ժողովրդեան
6 քո ոչ հայհոյեսցես։ * Իբրև գիտաց պօղոս
եթէ մի կողմն սադուկեցւոց է՝ և միւսն փարիսեցւոց.
աղաղակէր 'ի մէջ ատենին։ արք եղբարք՝
ես փարիսեցի եմ, որդի փարիսեցւոյ։ վասն յուսոյ
և յարութեան մեռելոց՝ ես աւասիկ դատիմ։
7 * Եւ զայս իբրև ասաց՝ եղեն հերձուածք փարիսեցւոցն
և սադուկեցւոցն. և պատառեցաւ բազմութին։
8 * Քանզի սադուկեցիքն ասեն՝ չիք յարութի,
ոչ հրեշտակ՝ և ոչ հոգի. բայց փարիսեցիքն
խոստովանին՝ զերկոսեանն։

9 * Եւ եղև աղաղակ մեծ. յոտն կացին ոմանք 'ի
դպրացն անտի, 'ի կողմանէ փարիսեցւոց՝ հակառակէին
և ասէին. ոչինչ չարախօսութի գտանեմք
յառնս յայսմիկ. բայց թէ Հոգի խօսեցաւ 'ի դմա՝
10 կամ հրեշտակ։ * Եւ 'ի բազմանալ ամբոխին՝ երկուցեալ
հազարապետն թէ գուցէ ճեղքիցի պօղոս
'ի նոցանէ՝ հրամայեաց զօրականին իջանել
յափշտակել զնա 'ի միջոյ նոցա. և ածել 'ի բանակն։
11 * Եւ 'ի վաղորդեան գիշերին եկաց առ նմա
Տր, և ասէ. քաջալերեաց, զի որպէս վկայեցեր
վս իմ յէմ, այնպէս պարտ է քեզ և 'ի հռոմ
վկայել։

12 ՁԳ. * Եւ իբրեւ այգ եղեւ՝ արարեալ ժողով
հրէիցն նզովեցին զանձինս. ոչ ուտել եւ ոչ ըմ-
13 պել մինչեւ սպանցեն զպօղոս։ * Եւ էին աւելի
քան զքառասուն՝ որոց զայս ընդ միմեանս երդ-
14 մունս արարեալ էր։ * Սոքա մատեան առ քահանայա-
պետսն եւ երիցունս՝ եւ ասեն. նզովիւք նզովեցաք
զանձինս՝ ոչինչ ճաշակել մինչեւ սպանցուք զպօ-
15 ղոս։ * Բայց դուք զգացուցէք հազարապետին հան-
դերձ ատենիւն. զի իջուսցէ զնա առ ձեզ, որպէս
թէ կամիցիք ճշմարտագոյն ինչ գիտել զնմանէ։
եւ մեք յառաջքան զմօտիլն նորա՝ պատրաստիմք ՚ի
սպանանել զնա։
16 * Եւ լուեալ քեռորդւոյն պօղոսի զդաւաճանու-
թիւն, եկն եմուտ ՚ի բանակ անդր՝ պատմեաց պօ-
17 ղոսի։ * Եւ կոչեալ պօղոսի առ իւր զմի ՚ի հարիւրա-
պետաց անտի՝ ասէ. զպատանիս զայս տար առ հա-
18 զարապետն, զի ունի ինչ պատմել նմա։ * Եւ նա
առեալ զնա՝ տարաւ առ հազարապետն՝ եւ ասէ.
կապեալն պօղոս կոչեաց զիս. եւ աղաչեաց, զպա-
տանիս զայս ածել առ քեզ. որ ունի ինչ խօսել
19 ընդ քեզ։ * Առեալ զձեռանէ նորա հազարապե-
տին՝ գնաց մեկուսի. հարցանէր, թէ զինչ ունիս
20 խօսել ընդ իս։ * Եւ նա ասէ՝ հրէայք միաբանե-
ցան աղաչել զքեզ. զի ՚ի վաղուեան զպօղոս իջու-
ցես յատեան, իբրեւ թէ կամիցին ինչ ճշմարտա-
21 գոյնս հարցանել վասն նր՟։ * Արդ՝ դու մի՛ ան-
սայցես նոցա. քանզի դարան գործեալ է նմա ՚ի
նոցանէ՝ արանց աւելի քան զքառասուն. որք նզո-
վեցին զանձինս ոչ ուտել՝ եւ ոչ ըմպել՝ մինչեւ
սպանցեն զնա. արդ պատրաստք են՝ եւ սպասեն
քում հրամանի։
22 ՁԵ. * Ապա հազարապետն արձակեաց զպատանին՝
պատուիրեալ մի՛ ումեք ասել, թէ զայս զգացու-
23 ցեր ինձ։ * Եւ կոչեաց երկուս ՚ի հարիւրապետացն՝
եւ ասէ. պատրաստեցէք զօրականս երկերիւրս,
որպէս զի երթիցեն մինչեւ ՚ի կեսարիա. եւ հե-
ծեալս եօթանասուն՝ եւ տիգաւորս երկերիւրս.
24 յերից ժամուց գիշերոյն։ * Եւ գրաստ պատրաս-

տանկան՝ որպէս զի իջուցեալ զպօղոս ապրեցուսցեն։
25 * (Երկեաւ, մի գուցէ յափշտակեսցեն զնա հրէայքն, և սպանցեն. և ինքն յետոյ զզրպարտութի կրեսցէ, իբրու թէ առնլոց իցէ զկանձս.) և առ փե-
26 ղիքս դատաւոր գրեալ թուղթ ։* Որ ունէր զօրինակ զայս ։ Կղօդիոս Լիւսիաս առ քաջդ դատա-
27 ւորդ փեղիքս՝ ողջոյն ։ * Զայրս զայս կալեալ ՚ի հրէից՝ և մերձ ՚ի սպանանել ՚ի նոցանէ. հասեալ ՚ի վր̄ զօրականօք ապրեցուցի, իմացեալ եթէ հռո-
28 մայեցի է ։ * Կամեցայ գիտել զվնասն, վ̄ որոյ ամբաստանէինն զնմանէ. իջուցի զդա յատեան նց̄։
29 * Զոր գտի ամբաստանեալ վ̄ խնդրոյ իրիք օրինաց իւրեանց. և ոչինչ արժանի մահու, կամ կա-
30 պանաց ունէր զվնաս։ * Իբրև ազդ եղև ինձ սակս նենգութ̄ե յայրդ լինելոյ ՚ի նոցանէ՝ յղեցի առ քեզ. զհրաման տուեալ և չարախօսացն խօսիլ
31 զդմանէ առաջի քո. ո՛ղջ լեր ։ * Եւ՛ զօրականայն, ըստ հրամանի նր̄ առեալ զպօղոս՝ տարան ՚ի գիշե-
32 րի առ անտիպատրոսն ։ * Եւ՛ ՚ի վաղիւ՛ անդր արձակեալ զհեծեալսն ընդ նմա երթալ՝ դարձան ՚ի
33 բանակն ։ * Նոքա մտին ՚ի կեսարիա, և տուեալ ցդատաւորն զթուղթն, առաջի կացուցին նորա և
34 զպօղոս ։ * Իբրև ընթերցաւ՝ եհարց, թէ յորմէ՞ նահանգէ իցէ ։ և ստուգեալ եթէ ՚ի կիղիկիէ է,
35 * Լու՛այց ասէ քեզ՝ յորժամ և չարախօսքն քո եկեսցեն ։ և հրամայեաց յապարանսն հերովդի պահել զնա ։

ԳԼ. ԻԴ ։

1 ԶԶ. Եւ՛ յետ՝ հինգ աւուրց էջ քահանայապետն անանիա հանդերձ ծերովք ոմամբք. և ճարտարախօսաւ տերտիւղիաւ ոմամբ. որք և զգայու-
2 ցին դատաւորին վ̄ պօղոսի ։ * Եւ՛ ՚ի կոչելն զնոսա՝ սկսաւ տերտիւղոսն ամբաստան լինել և ասել. զբազում խաղաղութ̄ի գտեալ է ՚ի քէն՝ և [illegible] ուղղութ̄ի ազգիս այսորիկ քով խնամով ։
3 * Ամի՛ն և ամ̄ ուրեք շնորհակալք եմք՝ քաջդ

*

4 փելի՛քս՝ ամ՟ի՛ գոհութ՟բ։ * Բայց զի մի աւելի ես աշխատ արարից զքեզ, աղաչեմ՝ լուր մեզ կարճ ՚ի կարճոյ՝ քոյին հեզութ՟դ։
5 * Քանզի գտաք զայրս զայս ապականիչ և խռովիչ ամենայն Հրէից՝ որք են ընդ տիեզերս. և առաջնորդ նազօրայեցւոց հերձուածոյն։ * Որ և զտաճարն եւս
6 կամեցաւ պղծել՝ զոր և կալաք. և ըստ մերոյ օրինաց դատել կամեցաք։ * Եկեալ լիւսիաս հազա-
7 րապետն՝ մեծաւ բռնութ՟բ ՚ի ձեռաց մերոց եհան։
8 * Հրամայեաց և չարախօսացն ն՟ր գալ առ քեզ. յորմէ դու իսկ բաւական լինիցիս վերստին դատել՝ ամ՟ի հասու լինել՝ զորոց մեքս ամբաստանեմք զդմա-
9 նէ։ * Միաբանեցան Հրէայքն՝ և ասեն. այդ այդ-
10 պէս է։ * Պատասխանի ետ պօղոս՝ (յակնարկելն նմա դատաւորին խօսել։) ՚ի բազում ամաց լինել զքեզ դատաւոր ազգիս այսորիկ գիտեմ. յօժարութ՟բ վ՟ս իմոյ իրաց պատասխանի առնեմ։
11 * Քանզի կարօղ ես գիտել. զի ոչինչ աւելի է իմ քան զաւուրս երկոտասան յորմէ հետէ ելի
12 երկիրպագանել յԵ՟մ։ * Եւ ո՛չ ՚ի տաճարի անդ գտին զիս ընդ ումեք խօսեցեալ. և կամ ժողով
13 արարեալ բազմաց։ ո՛չ ՚ի ժողովուրդս։ * Եւ ո՛չ ՚ի քաղաքի։ և ո՛չ յանդիման առնել կարեն քեզ,
14 վ՟ս որոյ այժմդ չարախօսեն զինէն։ * Բայց զայս խոստովանիմ քեզ՝ եթէ ըստ ճանապարհին, զոր ասեն հերձուած, այնպէս պաշտեմ զհայրենի Ած՟ն, հաւատացեալ ամ՟ի՝ որինչ յօրէնսն և ՚ի մարգա-
15 րէս գրեալ է։ * Ունիմ զյոյս առ Ած. որում և դոքա իսկ ակնունին՝ թէ յարութ՟ի լինելոց է ար-
16 դարոց և մեղաւորաց։ * Յորում և ես իսկ ճգնիմ. անխիղճ միտս ունել առ Ած, և առ մարդիկ յամ՟
17 ժամ։ * ՚Ի բազում ամաց ողորմութ՟իս եկի առնել
18 յազգդ իմ։ և ետու պատարագս։ * Որովք գտին զիս սրբեալ ՚ի տաճարին. ո՛չ բազմօք՝ և ո՛չ ամ-
19 բոխի՛. * Ոմանք յասիացւոց անտի Հրէայք՝ որոց պարտ էր գալ առաջի քո՝ և ամբաստան լինել՝
20 եթէ ունիցին ինչ զինէն։ * Եւ կամ նոքեանք սոքա ասասցեն զի՞նչ գտին յիս անիրաւութ՟ի,

21 մինչդեռ կայի յատենին: * Բայց միայն վ̅ միոյ
բարբառոյս այսորիկ՝ զոր աղաղակեցի մինչ կայի
՚ի մէջ նց̃: եթէ վ̅ յարութեան մեռելոց դատիմ
ես այսօր ՚ի ձէնջ:
22 ԶԴ. * Եւ յապաղեաց զն̅ փեղիքս զի ստուգագոյնս
գիտէր վ̅ Ճանապարհին: ասէ՝ յորժամ Լիւսիաս
հազարապետ իջցէ այսր՝ տեղեկացայց վասն
23 ձեր: * Հրամայեաց հարիւրապետին պահել զնա.
և ունիլ յընդարձակի. և մի՛ զոք յիւրոց անտի
24 արգելուլ ՚ի պաշտելոյ զնա. * Եւ յետ աւուրց
ինչ եկն փեղիքս հանդերձ դրուսիղաւ կնաւ իւրով,
որ էր հրէայ: կոչեաց զպօղոս՝ և լուաւ ՚ի
25 նմանէ՝ վ̅ որ ՚ի ՔՍ̅ ՅՍ̅ հաւատոյն: * Եւ ՚ի խօսելն
ն̅ր վ̅ արդարութեան՝ և ժուժկալութեան՝ և հանդերձելոց
դատաստանին. զահի հարեալ փեղիքս, ետ
պատասխանի. դու առ այժմ երթ՝ և յորժամ լինիցի,
26 կոչեցից զքեզ: * Միանգամայն և ակն ունէր
թէ տացի ինչ նմա ՚ի պօղոսէ: վ̅ որոյ և ստէպ
կոչեալ զնա՝ խօսէր ընդ նմա:
27 ԸԿ. * Եւ ՚ի կատարել երկուց ամաց՝ եկն փոխանակ
փեղիքսի, փեստոս պորկիոս: իբրև կամեցաւ
շնորհս առնել հրէից փեղիքս, եթող զպօղոս
կապեալ:

ԳԼ· ԻԵ:

1 Փեստոս իբրև եհաս յիշխանութիւն. յետ երից
2 աւուրց ել յէ̅մ ՚ի կեսարիոյ: * Եւ զգացուցին
նմա քահանայապետքն, և գլխաւորք հրէից
3 զպօղոսէ: * Եւ աղաչէին խնդրել շնորհս ՚ի նմանէ.
զի կոչեսցէ զնա յէ̅մ, դարան գործեալ սպա-
4 նանել զնա ՚ի Ճանապարհին: * Իսկ փեստոս արար
պատասխանի պահել զնա ՚ի կեսարիայ. թէ ինքն
5 իսկ ընդհուպ անդր երթալոց է: * Եւ որք ՚ի
ձէնջ կարօղք իցեն՝ ասէ. ընդ իս իջցեն: և եթէ
իցէ ինչ յառնն վնաս՝ ամբաստան լինիցին զնմանէ:
6 * Եւ լեալ անդ աւուրս՝ ոչ աւելի քան զութ
կամ զտասն, եկն, էջ ՚ի կեսարիայ: և ՚ի վաղիւ

անդր նստեալ յատենի, հրամայեաց ածել զպօղոս:
7 * Եւ իբրեւ եկն՝ կային շուրջ զնովաւ՝ որք յե՟մէ
իջեալ էին հրէայքն: բազում և ծանր վնասս
8 դնէին՝ զոր ոչ կարէին ցուցանել: * Քանզի ատենէր
զպատասխանի պօղոս, եթէ ոչ յօրէնս հրէից՝
և ոչ ՚ի տաճարն, և ոչ ՚ի կայսր՝ ինչ վնասակար
9 եմ: * Բայց փեստոս կամեցեալ հրէիցն
շնորհս առնել՝ պատասխանի ետ պօղոսի՝ և ասէ:
կամի՞ս յե՟մ ելանել՝ և անդ վ՟ դոցին իրաց դատիլ
10 առաջի իմ: * Եւ ասէ պօղոս՝ յատենի կայսեր
հասեալ կամ, ուր պարտ է ինձ դատիլ: հրէից
ինչ չեմ վնասակար. որպ՟ և դու իսկ քաջ գիտես:
11 * Ապա թէ վնասակար իցեմ, և արժանի ինչ
մահու գործեցի, ոչ զանգիտեմ ՚ի մեռանելոյ: իսկ
եթէ ոչինչ զորոց սոքա ամբաստան լինին զինէն,
ոչ ոք կարէ զիս դոցա շնորհել. ՚ի կայսր բողոքեմ:
12 * Յայնժամ փեստոս խօսեցեալ ընդ խորհրդակցին՝
արար զպատասխանի. ՚ի կայսր բողոքեցեր՝ առ
կայսր երթիցիր:
13 ԻԲ. * Իբրեւ անցին աւուրք ինչ՝ ագրիպպաս արքայ՝
և բերինիկէ եկին ՚ի կեսարիա՝ յողջոյն փեստոսի:
14 * Եւ իբրեւ աւուրս բազումս հանդէին անդ, փեստոս
զեկոյց արքային զպօղոսէ՝ և ասէ: այր մի է
15 աստ մնացեալ կապեալ ՚ի փեղիքսէ: * Վ՟ որոյ
իբրեւ չոքայ յե՟մ, զգացուցին ինձ քահանայապետքն
և գլխաւորք հրէիցն՝ խնդրէին յինէն առնել նմա
16 պատուհաս: * Որոց ետու պատասխանի. եթէ չէ
օրէն հռօմայեցւոց շնորհել ումեք զոք, մինչեւ ամբաստանեալն
յանդիման ունիցի զդատախազսն. և
տեղի պատասխանւոյ առնուցու վ՟ ամբաստանութե՟:
17 * Եւ իբրեւ եկին այսր, ոչինչ յապաղեցի. այլ ՚ի
վաղի՟ն նստեալ յատենի, հրամայեցի ածել զայրն:
18 * Վ՟ որոյ մատուցեալ ամբաստանքն, և ոչ մի
ինչ վնաս չարութե՟ ՚ի մէջ բերէին՝ զորոց ես կարծէի:
19 * Բայց խնդիրս ինչ՝ զորս վ՟ իւրեանց պաշտաման
ունէին ընդ նմա. և վ՟ Յ՟ի ուրումն մեռելոյ.
զորմէ ասէր պօղոս թէ կենդանի է:
20 * Իբրեւ յանհնարս մտի ես վ՟ այսպիսեաց իրաց

քննութե՟ն․ ասեմ, եթէ կամիցի երթալ յե՟մ,
21 և անդ դատիլ վս՟ նոցին իրաց: *Իսկ 'ի պօղո-
սի բողոքելն՝ զի պահեսցի 'ի քաջի արանցն յան-
դիմանութե՟ն, հրամայեցի պահել զնա՝ մինչև տաց
22 տանիլ զնա առ կայսր: *Ագրիպպաս ցփեստոս
ասէ: կամէի և ես լսել առնն: և նա ասէ՝ 'ի վա-
ղիւ լուիցես:
23 ԻԳ․ *Եւ 'ի վաղիւ անդր իբրև եկն ագրիպպաս՝
և բերենիկէ՝ բազում և երևելի տպասուք: և մտին
յատեանն հանդերձ հազարապետօքն․ և արամբք
պատուաւորօք քաղաքին: և հրամայեալ փեստոսի՝
24 ածին զպօղոս: *Եւ ասէ փեստոս, ա՛րքայ ագրիպ-
պաս՝ և ամ՟ արք՝ որք ը՟ մեզ էք․ տեսանէք զսա՝
վս՟ սորա ամ՟ ժողովք հրէից ամբաստան եղեն ինձ
յե՟մ և աստ: աղաղակէին՝ թէ չէ պարտ դմա
25 կեալ: *Բայց ես 'ի վր՟ հասի թէ ոչինչ է դորա
արժանի մահու գործեալ: և դորա ինքնին բողոք
26 կալեալ առ քաջ արանցն, խորհեցայ յղել: *Վս՟ որոյ
ստուգութի՟ ինչ գրել տեառն իմում ոչ ունիմ:
վս՟ այնորիկ ածի զդա առաջի ձեր՝ և մանաւանդ
առաջի քո ա՛րքայ ագրիպպաս: ոպ՟ զի վերստին քըն-
27 նեալ մարթացից ինչ գրել: *Քանզի անպատեհ
իմն թուի ինձ՝ տալ տանիլ զկապեալ մի, և զո-
չինչ մեղս զնմանէ նշանակել:

ԳԼ․ ԻԶ․

1 Եւ ագրիպպաս ասէ ցպօղոս, հրամայեալ է քեզ
վս՟ քո խօսել: յայնժամ պօղոսի ձգեալ զձեռն՝
2 առնէր պատասխանի: *Վս՟ ամ՟ ամբաստանութե՟ն
հրէիցդ զինէն՝ ա՛րքայ ագրիպպա՝ համարիմ զանձն
երանելի․ զի քո առաջի այսօր տալոց եմ զպատասխա-
3 նանի: *Մանաւանդ զի գիտակ ես իսկ ամ՟ կրօ-
նից և խնդրոյ հրէից: վս՟ որոյ աղաչեմ երկայն-
4 մտութբ՟ լսել ինձ: *Քանզի զկենաց իմոց՝ որ 'ի
մանկութե՟է, 'ի սկզբանէ եղեալ յազգի իմում յե՟մ,
տեղեակք են ամ՟ հրէայք:
5 *Յառաջագոյն գիտեն 'ի վաղուց հետէ՝ (եթէ

կամիցին վկայել:) զի ըստ ճշմարտագոյն կրօնից
6 օրինացն մերոց կեցեալ եմ փարիսեցի: * Արդ
վասն յուսոյն՝ որ առ հարսն մեր եղելոյ աւետեացն
7 յԱյ՝ դատեալ կամ յատենի: * Յոր երկոտասան
ազգատոհմիս մերոյ անպակաս զցայգ և
զցերեկ պաշտեալ ակն ունին հասանել: վասն որոյ
յուսոյ ամբաստանիմ ա՛րքայ ՚ի հրէից:
8 * Զի՞նչ անհաւատ թուի ձեզ՝ եթէ Ած զմեռեալս
9 յարուցանէ: * Ես իսկ ինքնին պատշաճ համարէի՝
զբազում ինչ հակառակ անուանն Յի Նա-
10 զօրեցւոյ գործել: * Զոր և արարի իսկ յեէմ:
և զբազումս ՚ի սրբոցն ես բանտարգել առնէի.
՚ի քահանայապետիցն առեալ զիշխանութի. և
11 սպանանելոյն նց բերէի զհամար: * Եւ՛ ըստ ամ
ժողովրդոյն բազում անգամ պատժեալ զնս բռնա-
դատէի հայհոյել: առաւել ևս մոլեալ ՚ի վր նց՝
12 հալածէի մինչև յարտաքին քաղաքսն: * Որովք
գնացեալ ՚ի դամասկոս՝ իշխանութբ և հրամանօք
քահանայապետիցն:
13 * Զմիջաւուրբն ՚ի ճանապարհի տեսի՝ ա՛րքայ՝ յերկնից
առաւել քան զլուսաւորութի արեգական ծագեալ
զինև լոյս; և զինոքօք՝ որք ընդ իսն երթային:
14 * Եւ՛ ամենեցուն մեր անկանել յերկիր, լուայ ձայն,
որ ասէր ցիս՝ հեբրայեցւոց բարբառովն. սաւուղ՛
սաւուղ՛ զի՞ հալածես զիս: խիստ է քեզ ընդդէմ
15 խթանի աքացել: * Եւ՛ ես ասեմ, ո՞ ես Տր: և Տր
16 ասէ՝ ես եմ Յս զոր դու հալածես: * Այլ արի,
և կա՛ց ՚ի վր ոտից քոց. զի վս այսորիկ երևեցայ
քեզ՝ առնուլ զքեզ ՚ի ձեռն պաշտօնեայ և վկայ՝
որոց տեսերդ զիս. և որով երևեցայց քեզ:
17 * Փրկել զքեզ ՚ի ժողովրդենէդ՝ և ՚ի հեթանո-
18 սաց, յորս ես առաքեցից զքեզ: * Բանալ զաչս
նց. դարձուցանել ՚ի խաւարէ ՚ի լոյս: և յիշխա-
նութենէ սատանայի յԱծ: առնուլ նց զթողութի
մեղաց: և զվիճակ ընդ սբս՝ հաւատովքն որ յիս:
19 * Ուստի ա՛րքայ ագրիպպա՝ ո՛չ եղէ անհաւան երկ-
20 նաւոր տեսլեանն: * Այլ նախ որոց ՚ի դամասկոս
և յեէմ էին. և ընդ ամ գաւառս հրէաստանի,

և հեթանոսս՝ զղջանալ՝ և դառնալ պատմեցի յԱծ
կենդանի: արժանի ապաշխարութե գործս գործել:
21 * Վսն այսորիկ հրէից կալեալ զիս 'ի տաճարին,
22 կամէին սպանանել: * Օգնութե հասեալ առ յԱյ
մինչև ցայսօր կայի վկայել փոքու և մեծի. ոչինչ
արտաքոյ ասել՝ քան զոր մարգարէքն և մովսէս խօ-
23 սեցան զհանդերձելոց լինելոյ: * Եթէ չարչարե-
լոց է Քսն: եթէ առաջին 'ի յարութե մեռելոց՝
լոյս պատմելոց է ժողովրդեանն՝ և հեթանոսաց:
24 ԻԴ. * Եւ՛ նր զայս պատասխանի տուեալ, փես-
տոս 'ի ձայն մեծ՝ ասէ: մոլի՛ս պօղէ. բազում
դպրութիքդ զքեզ 'ի մոլորութի դարձուցանեն:
25 * Իսկ պօղոս ասէ՝ ոչ մոլիմ, քաջդ փեստոս:
զցածութե և զճշմարտութե բանս բարբառիմ:
26 * Գիտակ իսկ է այսոցիկ արքայ. ընդ որում և
համարձակեալդ խօսիմ: քանզի ծածկել 'ի քէն
իմիք 'ի սոցանէ՝ չառնում յանձն: զի ոչ եթէ
յանկեան ուրեք գործեալ իցէ այս:
27 * Հաւատա՞ս արքայ ագրիպպա մարգարէից. գիտեմ
28 զի հաւատաս: * Եւ՛ ասէ ագրիպպա ցպօղոս, փո-
քու իմն հաւանեցուցանես զիս լինել քրիստոնեայ:
29 * Եւ՛ պօղոս ասէ՝ խնդրեի յԱյ՝ և փոքու՝ և մե-
ծաւ՝ ոչ միայն զքեզ՝ այլ զամենեսեան՝ որք լսեն
ինձ այսօր՝ լինել այսպիսի՝ ոպ և եսս եմ, բայ 'ի
30 կապանաց աստի: * Յոտն եկաց արքայն՝ և դատաւորն՝
31 և բերինիկէ. և որք ընդ նոսայն նստէին: * Եւ՛ իբրև
գնացին, խօսէին ընդ միմեանս և ասէին: թէ ոչ
ինչ արժանի մահու կամ կապանաց գործէ այրս այս:
32 * Իսկ ագրիպպաս ցփեստոս ասէ: արձակել մարթ
էր զայրս զայս՝ եթէ ոչ էր բողոքեալ 'ի կայսր:

ԳԼ. ԻԷ:

1 ԻԵ. Իբրև հրամայեցաւ մեզ նաւել յիտալիա.
տային զպօղոս՝ և զայլս ոմանս կապեալս՝ ցհար-
իւրապետ մի, որում անուն էր յուլիոս՝ սեբաս-
2 տեան գնդին: * Եւ՛ ելեալ 'ի նաւ մի անդրամիտ-
տայի, որ երթալոց էր 'ի կողմանն ասիացւոց՝
գնացաք. էր ընդ մեզ և արիստարքոս՝ մակեդոն

3 թեսաղոնիկեցի ։ * Եւ 'ի վաղիւ անդր իջաք 'ի
սիդոն. և մարդասիրութին ցուցեալ յուլեայ առ
պօղոս, հրամայեաց առ բարեկամսն երթալ՝ և զդար-
4 ման գտանել ։ * Եւ անտի ելեալ խոնարհագոյն
նաւեցաք 'ի կիպրոս՝ վ̄ս հողմոյն ընդդէմ լինելոյ ։
5 * Յայնժամ ընդ մէջ ծովուն կիլիկեայ և պամփի-
6 լեայ՝ նաւեալ՝ իջաք 'ի միւռայ լիկիայցւոյ ։ * Եւ
անդ գտեալ հարիւրապետին զնաւ մի աղէքսան-
դրացի, որ երթայր յիտալիա եմուծ զմեզ անդր ։
7 * Եւ 'ի բազում աւուրս ծանրանաւեալք՝ հազիւ
հասաք առ գնիդաւ. և 'ի չթողացուցանել զմեզ
հողմոյն, նաւեցաք 'ի խոնարհագոյն 'ի կրետէ առ
8 սաղմոնաւ ։ * Հազիւ անցեալ առ նովաւ՝ եկաք 'ի
տեղի ինչ՝ որ կոչիւր գեղեցիկ նաւահանգիստ. յոր
9 հուպ էր քաղաքն լասեայ ։ * Եւ իբրև բազում
ժամանակք անցանէին. և սխալևս լինէր նաւե-
լոյն. և վասն այնր ինչ ևս պահոցն անցանելոյ՝
10 տայր խրատ պօղոս ։ * Եւ ասէր ցնոսա. արք տե-
սանեմ զի թշնամանօք և բազմաւ վնասու՝ ոչ մի-
այն բեռինդ և նաւիդ այլ և անձանց մերոց լի-
11 նելոց է նաւարկութիս ։ * Իսկ հարիւրապետն նա-
ւապետին և նաւավարին առաւել անսայր՝ քան բա
12 նիցն պօղոսի ։ * Իբրև դժպատեհ լինն լժոճիւր նա-
ւահանգիստն առ 'ի ձմերել, բազումք խորհեցան
գնալ անտի. թերևս կարասցեն հասանել 'ի փիւ-
նիկէ՝ ձմերել 'ի նաւահանգստին կրետացւոյ. որ
հայէր ընդ հարաւակողմն, և ընդ աշխարհն ։
13 * Եւ 'ի շնչել հարաւոյն, համարեցան ուր դի-
մեալն էին հասանել. և եկեալ՝ մօտ անցանէին
14 զկրետեաւ ։ * Եւ ոչ յետ բազում ժամուց՝ անկաւ
զնովաւ հողմ ու[illegible]ուցիկ՝ որ կոչի եւրակիւլոն ։
15 * Ընդ յափշտակել նաւին, և 'ի չհանդուրժել
ընդդէմ հողմոյն, թոյլ տուեալ երթայաք և
16 դայաք ։ * 'Ի կղզի ինչ դիմեալ՝ որ կոչիւր կղօդա,
հազիւ կարացաք ըմբռնել զմակոյկն ։
17 * Զոր առեալ՝ յօգնականութի կապէին ընդ նաւն.
երկուցեալք եթէ գուցէ 'ի յորձանուտն անկանի-
ցին. և իջուցեալ զառագաստն, այնպէս երթային

18 և դայլն : * Եւ ’ի սաստկագոյն վշտանալոյն մերոյ՝
’ի վաղիւն անդր զկարասին ընկեցիկ տանէին :
19 * Եւ յերրիր աւուր ընդ ինքեանց ձեռն՝ զգործի
20 նաւին ընկեցին : * Իբրև ոչ արև՝ և ոչ աստեղք
երևէին ’ի բազում աւուրս, և ձմեռն ոչ սակաւ
կայր ’ի վ͞ր. ապա բառնայր ա͞մ յոյս փրկութե̃
21 մերոյ : * Եւ զի ’ի բազում աւուրս նօթիք էին ։
յայնժամ պօղոս կացեալ ’ի մէջ ն͞ց՝ ասէ. պարտ
էր ձեզ ով արք՝ անսալ ինձ, և ոչ ելանել ’ի
22 կրետեայ՝ և շահել զվիշտս զայս և զվնաս ։ * Եւ
արդ՝ խրատեմ զձեզ քաջալերել՝ զի վնաս անձին
և ոչ միում ’ի ձէնջ լինելոյ, բայց ’ի նաւէդ :
23 * Քանզի երևեցաւ ինձ յայսմ գիշերի հրեշտակ
Ա͞յ՝ որոյ եսն եմ, և պաշտեմ զնա :
24 * Եւ ասէ՝ մի երկնչիր պօ՛ղէ. կայսեր ևս պարտ է
քեզ յանդիման լինել. և ահա շնորհեալ է քեզ
յԱ͞յ զամենեսեան, որք են ընդ քեզ ’ի նաւիդ:
25 * Վ͞ս այսորիկ քաջալերացարո՛ւք արք. զի հաւա-
տամ յԱ͞ծ, թէ այսպէս լինի՝ զորօրինակ խօսեցաւ
26 ընդ իս. * Բայց ’ի կղզի ինչ հասանի մեզ ան-
կանել :
27 ԻԷ. * Իբրև չորեքտասաներորդ գիշեր լինէր՝
մինչդեռ ծփէաք ’ի հանդրին անդունդս, ’ի մէջ
գիշերին կարծէին նաւավարքն եթէ հասեալ իցեն
28 յաշխարհ ուրեք : * Եւ ընկեցեալ զգունդն՝ գտին
գիրկս քսան. և սակաւ ինչ դադարեալ՝ դար-
ձեալ ընկեցին՝ և գտին գիրկս հնգետասան :
29 * Զահի հարեալ թէ գուցէ ’ի խիստ ինչ տեղի
անկանիցին. յետուստ կողմանէ ընկեցին խարիսխս
30 չորս. ըղձանային այգուն լինելոյ : * Բայց նաւա-
վարքն խնդրէին փախչել ’ի նաւէ անտի. և իջու-
ցեալ զկուրն ’ի ծով անդր՝ պատճառանօք՝ որպէս
թէ յառաջոյ կողմանէ խարիսխս ձգելոց իցեն :
31 * Ասէ պօղոս ցհարիւրապետն և ցզօրականսն. եթէ
ոչ դոքա մնան ’ի նաւիս՝ դուք ապրել ոչ կարէք:
32 * Յայնժամ զօրականքն հատին զլարս կրին՝ և ’ի-
33 բաց ընկեցին : * Եւ մինչդեռ այգն կամէր լինել՝
աղաչէր պօղոս զամենեսեան առնուլ զկերակուր.

ասէ՝ այս չորեքտասաներորդ օր է. որում անձն
ունիք նօթի կատարել. և չէ ինչ ճաշակեալ:
34 * Վասն որոյ աղաչեմ զձեզ՝ ճաշակել զկերակուր՝
զի այն իսկ վն̅ ձերոյ փրկութեան է. զի ոչ ուրուք
'ի ձէնջ մազ մի 'ի գլխոյ կորիցէ:
35 * Եւ իբրև ասաց զայս, առեալ զհաց՝ գոհացաւ
զԱ̅յ առաջի ամենեցուն. եբեկ, և սկսաւ ուտել:
36 * Եւ քաջալերեցան ամենեքին, և նոքա առին զկերակուր:
37 * Եւ էաք ամենայն հոգիք 'ի նաւին՝ երկերիւր
38 եօթանասուն և վեց: * Իբրև յագեցան
կերակրով, թեթևացուցին զնաւն՝ թափեալ զցորեանն
39 'ի ծովն: * Եւ իբրև այգ եղև՝ զերկիրն ոչ
ճանաչէին. բայց զգոգ մի նշմարէին, թէ առ ափն
ծովուն իցէ. յոր խորհէին եթէ հնար ինչ իցէ
40 զերծուցանել զնաւն: * Եւ զխարիսխսն, հատեալ՝
ընկեցին 'ի ծովն, թուլացուցին զխռանելիս թևոյն,
և 'ի բաց առին զառագաստն. և ետուն հողմոյն
41 յափնկոյս ծովուն: * Անկեալ 'ի տեղի մի երկծով՝
թիւրեցին զնաւն. և առաջին կողմն նաւին
խրեալ՝ անշարժ մնայր. և յետին կողմն քակէր
42 'ի բռնութենէն: * Եւ զօրականացն խորհուրդ արարեալ՝
զի զկապեալսն սպանցեն, և մի ոք լուղիցէ,
43 և փախիցէ: * Եւ հարիւրապետն քանզի կամէր
ապրեցուցանել զպօղոս՝ արգել զն̅ս 'ի խորհրդոյն.
հրամայեաց զի որք կարօղք իցեն լուղել՝ ընկանիցին,
և 'ի ցամաք ելանիցեն. և զայլսն՝ զորս 'ի տախտակս:
44 * Եւ զորս յայլ ինչ կահ 'ի նաւէ անտի.
և այսպէս եղև ամենեցուն փրծանիլ յերկիր:

ԳԼ. ԻԸ:

1 Եւ ապրեալք՝ յայնժամ գիտացաք թէ Մելիտինէ
էր անուն կղզւոյն: բայց բարբարոսքն շնորհեցին
2 ոչ սակաւ մարդասիրութի մեզ: * Քանզի լուցին
զխարոյկ՝ և ընկալան զամենեսին զմեզ վասն անձրևին,
3 որ սաստկէր՝ և վասն ցրտոյն: * Եւ 'ի ժողովել
պօղոսի զխուրձ ինչ բազում, և դնել 'ի վերայ
խարուկին, իժ մի 'ի ջերմութենէն ելեալ կա-

4 լաւ զձեռանէ նորա : * Եւ իբրև տեսին բարբարոսքն կախեալ զգազանն զձեռանէ նր՟, ասէին ցմիմեանս. ուրեմն սպանօղ է այրս այս՝ որ թէպէտ ապրեցաւ 'ի ծովէն, իրաւունքն ոչ ետուն կեալ :
5 * Եւ նր՟ թօթափեալ զգազանն 'ի հուրն, եղև
6 նմա չար և ոչինչ : * Եւ նոքա ակն ունէին նմա այտնլոյ՝ կամ անկանելոյ՝ և յանկարծակի մեռանելոյ: իբրև շատ ակն կալեալ, և տեսանէին՝ թէ ոչինչ վնաս եղև նմա՝ դարձեալ դարձուցեալ
7 զբանն՝ ասէին թէ աստուած ոմն է։ * Եւ շուրջ զտեղեաւն այնուիկ էին գիւղք գլխաւորի կղզւոյն՝ որում անուն էր պոպղիոս. որ էառ զմեզ յերաշխի զերիս աւուրս՝ և սիրով ընկալաւ :
8 * Եւ եղև հօրն պոպղեայ 'ի ջերմն, և յախտ թանչից հիւանդանալ՝ դնիլ. առ որ մտեալ պօղոս՝ և կացեալ յաղօթս՝ եդ զձեռն, և բժշկեաց զնա :
9 * Եւ իբրև այս եղև, և այլք հիւանդք՝ որք էին
10 'ի կղզւոջն, գային և բժշկէին : * Որք և բազմօք պատուօք պատուեցին զմեզ. և իբրև գնացաք՝ ետուն՝ որ ինչ պէտքն էին :
11 ԻԸ. * Եւ յետ երից ամսոց ելաք 'ի նաւ մի աղեքսանդրացի՝ որ ձմերեալ էր 'ի կղզւոջն նշանա-
12 ւոր դիոսկուրացւոյ : * Եւ իջեալ 'ի սիրակուսայ՝
13 եղեաք անդ աւուրս երիս: * Ուստի գնացեալ հասաք 'ի հռեգիոն. և յետ աւուր միոյ 'ի շնչել հարաւոյն, երկօրեայք եկաք 'ի պատիողոս :
14 * Ուր և գտաք եղբարս՝ աղաչեցեալք 'ի նոցանէ լինիլ առ նս՟ աւուրս եօթն. և ապա ելաք 'ի հռոմ:
15 * Եւ անտի լուեալ եղբարց զմէնջ՝ ելին ընդառաջ մեր մինչև յորդոստայն ապիեայ՝ և երիցն կրպակաց. զորս տեսեալ պօղոսի՝ գոհացաւ զԱյ՟ և քա-
16 ջալերեցաւ : * Եւ իբրև մտաք 'ի հռոմ, հրամայեցաւ պօղոսի լինիլ առանձինն հանդերձ զինուո-
17 րաւն՝ պահապանաւ իւրով : * Եւ եղև յետ երից աւուրց՝ կոչել նմա զհրէիցն գլխաւորս. և իբրև եկին, ասէ ցնս՟. ես՝ արք եղբարք՝ ոչինչ հակառակ գործեալ ժողովրդեանն կամ կրօնիցն հայրենեաց. կապեալ յե՟էմէ մատնեցայ 'ի ձեռս հռոմայեցւոց :

18 * Որք իբրև դատեցին զիս՝ կամեցան արձակել. վ̅ն և ոչ գոյր ինչ վնաս մահու գտանելոյ յիս։
19 * ՚Ի հակառակիլ Հրէիցն, հարկ եղև բողոքել ՚ի կայսր. իբրև ոչ եթէ զազգէն իմիք ունէի ինչ
20 չարախօսել։ * Վ̅ն այսր պատճառանաց աղաչեցի զձեզ տեսանել և խօսել. քանզի վ̅ն յուսոյն Ի̅լի
21 կամ ՚ի շղթայս յայսոսիկ։ * Եւ նոքա ասեն ցնա. մեք ոչ թուղթս ինչ վասն քո ընկալաք ՚ի Հրէաստանէ. և ոչ եկեալ ոք յեղբարց պատմեաց՝ կամ խօսեցաւ ինչ վասն քո զչարութիւն։
22 * Բայց աղաչեմք ՚ի քէն լսել թէ զինչ խորհիցիս. զի վ̅ն հերձուածոյդ այդորիկ յայտնի իսկ է մեզ. զի ամենայն ուրեք զհակառակութ̅ի կրէ։
23 * Զ ժամ եդեալ նմա օր մի, եկին ՚ի վանս առ նա բազումք. որոց պատմէր վկայութ̅բ զարքայութ̅ին Ա̅Յ. և հաւանեցուցանէր զնոսա վ̅ն Յ̅Ի. յօրինացն մովսէսի՝ և ՚ի մարգարէից՝ յայգուէ մինչև
24 ցերեկոյ։ * Եւ ոմանք հաւանէին. և կէսք բանիցն
25 չհաւատային։ * Եւ անմիաբանք լեալ ՚ի միմեանց՝ արձակէին, յասելն պօղոսի բան մի. թէ բարւոք խօսեցաւ Հոգին սուրբ ՚ի ձեռն եսայեայ մարգարէի
26 առ հարսն մեր։ * Եւ ասէ՝ երթ առ ժողովուրդն, և ասասցես. լսելով լուիջիք և մի իմասջիք. և
27 տեսանելով տեսջիք՝ և մի տեսջիք։ * Զի թանձրացաւ սիրտ ժողովրդեանն այնորիկ՝ և ականջօք իւրեանց ծանր լուան. և զաչս իւրեանց կափուցին. զի մի երբէք տեսանիցեն աչօք, և ականջօք լուիցեն. և սրտիւք իմասցին, և դարձցին, և բժշկե-
28 ցից զն̅ս։ * Եւ արդ՝ յայտնի լիցի ձեզ՝ զի հեթանոսաց առաքեցաւ փրկութ̅ի Ա̅Յ՝ նոքին և լուիցեն։
29 * Եւ իբրև զայս ասաց՝ արտաքս գնացին ՚ի նմանէ Հրէայքն, որք ունէին ՚ի մէջ իւրեանց զբազում
30 խնդիրս։ * Եւ եղև զերկամ մի՝ բովանդակ իւրով
31 վարձու։ * Եւ ընդունէր զամենեսեան. որք մտա-
32 նէին առ նա։ * Քարոզէր զարքայութ̅ին Ա̅Յ՝ և ուսուցանէր վասն Տ̅Ն Յ̅Ի Ք̅Ի, անխափան՝ ամենայն համարձակութ̅բ։

ԹՈՒՂԹ
ԵՐԱՆԵԼՒՈՅՆ
ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ
ԱՌ ՀՌՕՄԱՅԵՑԻՍՆ։

Գլուխ Առաջներորդ։

I Առ. ՊՕՂՈՍ ԾԱՌԱՅ ՅԻ՟ ՔԻ՟,
կոչեցեալ առաքեալ. որոշեալ յաւետարանն Այ՟։
2 * Զոր յառաջ խոստացաւ 'ի ձեռն մարգարէից
3 իւրոց՝ գրովք սրբովք: * Վասն Որդւոյ իւրոյ ե-
4 ղելոյ 'ի զաւակէ Դաւթի ըստ մարմնոյ: * Սահմա-
նելոյ Որդւոյն Այ՟ զօրութ՟բ ըստ հոգւոյն սրբու-
թ՟ն. 'ի յարութենէ մեռելոց Յի՟ Քի՟ Տն՟ մերոյ:
5 * Որով ընկալաք շնորհս և զառաքելութիւն 'ի
հնազանդութ՟ի հաւատոյ յամենայն հեթանոսս վս՟
6 անուան նր՟: * Ընդ որս և դուք էք կոչեցեալք
7 Յի՟ Քի՟: * Ամենեցուն՝ որոց էք 'ի Հռոմ, սիրե-
լեաց Այ՟՝ կոչեցելոց սրբոց. Շնորհք ընդ ձեզ
և խաղաղութ՟ի յԱյ՟ Հօրէ մերմէ՝ և 'ի Տէ՟ Յէ՟
8 Քէ՟: * Նախ գոհանամ զԱյ՟ իմոյ 'ի ձեռն Յի՟
Քի՟ վս՟ ձեր ամենեցուն. զի հաւատք ձեր պատ-
9 մեալ են ընդ ամենայն աշխարհ: * Վկայ է ինձ
Ած՟, զոր պաշտեմն հոգւով իմով յաւետարանի
10 Որդւոյ նր՟: * Թէ ոչ զյիշատակս ձեր առնեմ յամ՟
ժամ յաղօթս իմ, աղաչելով զի թերևս երբէք
յաջողեսցի ինձ կամօքն Այ՟ գալ առ ձեզ:
11 * Քանզի անձկացեալ եմ տեսանել զձեզ. զի
փոխեցից 'ի ձեզ շնորհս ինչ հոգևորս՝ առ 'ի հաս-
12 տատել զձեզ: * Այսինքն է, մխիթարակից լի-

նիլ ձեզ· վասն ընդ միմեանց իմ՟ց և ձերդ հաւա
13 տոյ ։ * Ո՛չ կամիմ եթէ անգէտ լիցէք եղբարք·
զի բազումանգամ յօժարեցայ գալ առ ձեզ՝ (և
արգելեալ մինչև ցայժմ։) զի և ’ի ձեզ գտից զպտուղ
14 ինչ որպէս և յայլ հեթանոսս ։ * Քանզի յունաց
և բարբարոսաց՝ իմաստնոց և անմտից պարտակա-
15 նեմ։ * Այնպէս (որչափ իմովսանն) յօժարութ՟ն
և ձեզ՝ որք ’ի Հռօմդ էք՝ աւետարանել։
16 * Զի ո՛չ եթէ ամօթ ինչ համարիմ զաւետա-
րանն· քանզի զօրութ՟ի Ա՟յ է ’ի փրկութ՟ի ամե-
նայն հաւատացելոյ· նախ հրէի, և ապա հեթանոսի։
17 * Զի արդարութ՟ի Ա՟յ նովաւ յայտնի ’ի հաւա-
տոյ ’ի հաւատս· որպէս և գրեալ է ։ Թէ ար-
դարն ’ի հաւատոց կեցցէ ։
18 ԱԳ․ * Քանզի յայտնեալ է բարկութ՟ին Ա՟յ
յերկնից ’ի վերայ ա՟մ ամբարշտութ՟ե և անիրաւու-
թ՟ե մարդկան· որք զճշմարտութ՟ին Ա՟յ անիրա-
19 ւութ՟ք ունին ։ * Վ՟ն զի գիտութ՟ին Ա՟յ յայտնի
է ’ի ն՟ա· քանզի Ա՟ծ իսկ յայտնեաց ն՟ց ։
20 * Զի աներևոյթք ն՟ր ’ի սկզբանէ աշխարհի, ա-
րարածովքս իմացեալ տեսանին· այսինքն է՝
մշտնջենաւորութ՟ի, և զօրութ՟ի, և Ա՟ծութ՟ի նո
րա· զի ո՛չ գտանիցեն ամենևին տալ պատասխա-
21 նի ։ * Զի ծանեան զԱ՟ծ, և ո՛չ իբրև զԱ՟ծ
փառաւորեցին, կամ գո՛հացան։ այլ նանրացան
’ի խորհուրդս իւրեանց· և խաւարեցան անմտու
22 թ՟ք սիրտք ն՟ց։ * Զ անձինս առ իմաստունս ունէ-
23 ին՝ յիմարեցան ։ * Եւ փոխեցին զփառս անեղծին
Ա՟յ՝ ’ի նմանութ՟ի պատկերի՝ եղծանելոյ մարդոյ՝
և թռչնոց՝ և չորքոտանեաց՝ և սողնոց ։
24 * Վ՟ն որոյ մատնեաց զն՟ս Ա՟ծ ’ի ցանկութ՟ի սրտից
նոցա ’ի պղծութ՟ի· անարգել զմարմինս իւրեանց
25 յանձինս իւրեանց ։ * Որք փոխանակեցին զճշմար-
տութ՟ին Ա՟յ ընդ ստութ՟ե· հնազանդեցան՝ և պաշ-
տեցին զարարածս, և ո՛չ զարարիչն· որ է օրհ-
26 նեալ յաւիտեանս· ամէն։ * Վասն այսորիկ մատ-
նեաց զն՟ս Ա՟ծ ’ի կիրս անարգութ՟ե · զի էգք նոցա
փոխանակեցին զպէտս բնականս, ’ի պէտս անբնա-

27 կանս ։ * Նոյնպէս և արուք թողեալ զբնական
պէտս իգութեան, բորբոքեցան ցանկութեամբք իւրեանց
'ի միմեանս . արուք ընդ արուս զխայտառակութիւն
գործէին . և զվարձ փոխարինին՝ որ պարտ էր
մոլորութեան նոցա՝ յանձինս իւրեանց ընդունէին ։
28 * Եւ որպ՝ զի ոչ ընտրեցին զԱծ ունել 'ի գիտու-
թեան . մատնեաց զնոսա Ած 'ի միտս անարգութեան՝
29 գործել զանարժանս ։ * Լցեալս ամ՟ անիրաւութեամբ .
պոռնկութեամբ . անզգամութեամբ . ագահութեամբ . չա-
րութեամբ . լի նախանձու . սպանութեամբ . հեռիւ . նեն-
30 գութեամբ . չարաբարոյութեամբ . շողոմողք ։ * Չարախօսք .
Ածատեացք . ամբարտաւանք . ամբարհաւաճք .
գտիչք չարեաց . զծնօղս անարգօղք ։
31 * Անմիտք . ուխտադրուժք . անագորոյնք . աննը-
ռէրք . անողորմք ։
32 * Ոյք հասեալք էին Այ իրաւանցն վերայ . թէ
ոյք զայսպիսիս գործեն՝ արժանի են մահու . և
ոչ միայն որք զայնս առնեն, այլ և որք կամակիցն
լինին գործելեացն ։

ԳԼ. Բ։

1 Վասն որոյ առանց պատասխանի տալոյ ես ով
մարդ՝ որ դատեսդ ։ զի որով դատես զընկերն,
զանձն քո դատապարտես . զի դու զնոյն գործես՝
որով դատեսն ։
2 Ա՛Դ . * Քանզի գիտեմք եթէ Այ դատաստանն
ճշմարտութեամբ է 'ի վերայ այնոցիկ՝ որք զայնպիսիսն
3 գործեն ։ * Իսկ արդ խորհիցի՞ս զայս ով մարդ, որ
դատես զայնոսիկ՝ որք զայնպիսիսն գործեն՝ և դու
զնոյն գործես, եթէ ապրեցեալ իցես 'ի դատաստա-
4 նաց անտի Այ ։ * Եթէ զմեծութեամբ քաղցրու-
թեան նորա, և զներելով և զերկայնմտութեանն ար-
համարհիցես . չգիտիցե՞ս, զի քաղցրութիւն Այ զքեզ
5 յապաշխարութիւն ածէ ։ * Այլ ըստ խստութեան
քում, և ըստ անզեղջ սրտի գանձես անձին քում
զբարկութիւն յաւուր բարկութեան, և յայտնութեան
արդար դատաստանութեանն Այ ։

6. * Որ հատուսցանէ իւրաքանչիւրոց ըստ գործոց իւրեանց:
7 * Որք համբերութեամբ են 'ի գործս բարութեան, զփառս՝ և զպատիւ՝ և զանեղծութիւն խնդրեն,
8 զկեանսն յաւիտենից: * Իսկ որք 'ի հակառակութենէ անտի են, և ապստամբք 'ի ճշմարտութենէն՝ և ընդհետ երթան անիրաւութեան, բարկութիւն, և սրտմտութիւն:
9 * Նեղութիւն և անձկութիւն 'ի վերայ ամենայն մարդոյ՝ որ գործէ զչար. նախ Հրէի՝ և ապա
10 Հեթանոսի: * Փառք և պատիւ՝ և խաղաղութիւն ամենայնի, որ գործէ զբարի. նախ Հրէի՝ և ապա Հե-
11 թանոսի: * Զի ոչ է ակնառութիւն առաջի այ՟:
12 ԱԵ. * Որք միանգամ արտաքոյ օրինացն մեղան, արտաքոյ օրինացն և կորնչին. և որք ընդ օրինօքն
13 մեղան, օրինօքն և դատեսցին: * Զի ոչ եթէ որք լսօղք օրինացն են՝ արդարացեալք են առաջի այ՟.
14 այլ առնօղք օրինացն արդարասցին: * Այլ յորժամ հեթանոսք՝ որք զօրէնս ոչ ունին, բնութեամբ զօրինացն գործեն, նոքա՝ որք զօրէնս ոչ ունին, անձանց իւրեանց իսկ են օրէնք:
15 * Որք ցուցանեն զգործս օրինացն գրեալ 'ի սիրտս իւրեանց՝ վկայութեամբ մտաց իւրեանց. և յանդիմանել զմիմեանս 'ի խորհրդոց իւրեանց. կամ թէ պատասխանի իսկ տալ:
16 * Յաւուրն՝ յորում դատիցէ ԱԾ՟ զգաղտնիս մարդկան՝ ըստ աւետարանիս իմոյ, 'ի ձեռն Յի՟ Քի՟:
17 * Ապա եթէ դու Հրէայ անուանեալ ես՝ և յեցեալ ես յօրէնսն՝ և պարծիս յԱԾ՟:
18 * Եւ գիտես զկամս նորա՝ և ընտրես զլաւն՝ և
19 խրատեալ ես յօրինացն: * Վստահ ես յանձն քո՝ առաջնորդ լինել կուրաց, լոյս խաւարելոց:
20 * Խրատիչ անզգամաց՝ վարդապետ տղայոց. ունիլ զկերպարանս գիտութեան և ճշմարտութեան օրի-
21 նացն: * Իսկ արդ որ ուսուցանես զընկերն, զանձն քո ոչ ուսուցանես. որ քարոզես չգողանալ՝ գողա-
22 նաս: * Որ ասես չշնալ՝ շնաս. որ գարշիս 'ի մե-
23 հենայ՝ զմեհեանս կողոպտես: * Որ օրինօքն պարծիս՝ յանցանել ըստ օրէնսն զԱԾ՟ անարգես:
24 * (Զի անուն Այ՟ վասն ձեր հայհոյի 'ի մէջ հեթանո-

25 ԱԶ· սայ՝ ո՛պ և գրեալ է։) * Թլփատութի՟ օգնէ՝ եթէ զօրէնսն պահիցես · ապա եթէ յանցաւոր օրինացն իցես, թլփատութի՟ քո անթլփատութի՟ եղև։
26 * Իսկ եթէ անթլփատութի՟ն զիրաւունս օրինացն պահիցէ, ո՛չ ապաքէն անթլփատութի՟ նր՟ ՚ի թլփատութի՟ համարիցի։
27 * Եւ դատիցէ՝ որ ՚ի բնէ անթլփատութի՟ է զօրէնսն կատարելով զքեզ, որ գրովն և թլփատութե՟ն յանցաւոր օրինացն իցես։
28 * Զի ո՛չ եթէ՝ որ յայտնի հրէայն է· և ո՛չ որ յայտնի մարմնով թլփատութի՟ն։
29 * Այլ որ ՚ի ծածուկ հրէայն է· և թլփատութի՟ սրտի հոգւով, և ո՛չ գրով։ որոյ գովութի՟ն ո՛չ ՚ի մարդկանէ է, այլ յԱյ՟։

ԳԼ· Գ։

1 Իսկ արդ զի՞նչ աւելի է հրէին, կամ զի՞նչ օգուտ
2 ՚ի թլփատութենէ անտի։ * Բազում ինչ ամ՟
իրօք։ նախ այն իսկ՝ զի հաւատարիմք եղեն պատ-
3 գամքն Այ՟։ * Իսկ արդ՝ եթէ չէր հաւատացեալ
ոմանց՝ միթէ անհաւատութի՟ն նց՟ զԱյ՟ հաւատոն
4 խափանէ՞ր՝ քաւ լիցի։ * Արդ՝ եղիցի Ած՟ ճշմարիտ՝
և ամ՟ մարդ սուտ։ ո՛պ և գրեալ է։ ո՛պ արդար
եղիցիս ՚ի բանս քո· և յաղթեսցես ՚ի դատել քեզ։
5 * Իսկ արդ՝ եթէ ապիրատութիւնն մեր զԱյ՟ ար-
դարութի՟ն յանդիման կացուցանէ՝ զի՞նչ ասեմք։
միթէ անիրաւ ինչ է Ած՟, որ ածէ զբարկութի՟։
6 (* Ըստ մարդկութե՟ ասեմ։) քաւ լիցի։ ապա թէ
7 ոչ, զիա՞րդ դատէ Ած՟ զաշխարհ։ * Զի եթէ
ճշմարտութի՟ն Այ՟ յիմում ստութե՟ն առաւելաւ
՚ի փառս նորա՝ զի՞ ես ես իբրև զմեղաւոր դատիմ։
8 * Եւ կամ (ո՛պ հայհոյիմք, և ո՛պ ասեն զմէնջ
ոմանք ասել) թէ արասցուք զչարն՝ զի եկեսցէ
9 բարի։ որոց դատաստանքն յիրաւի են։ * Եւ արդ՝
ի՞ իմի՞ք առաւել իցեմք։ ապաքէն և ո՛չ իմի՛ք։
քանզի յառաջագոյն իսկ մեղադիրք եղեաք հրէից
և հեթանոսաց՝ ամենեցուն ընդ մեղօք լինելոյ։
10 * Ո՛պ և գրեալ է։ թէ ոչո՛ք է արդար՝ և ո՛չ մի։

*

11 * Եւ ոչ գոյ՝ որ իմանայ. եւ ոչ ոք է՝ որ խնդրէ
12 զԱծ : * Ամենեքեան խոտորեցան, ՚ի միասին անպիտանացան : ոչ ոք է՝ որ առնէ զբարի. եւ ոչ ոք է
մինչեւ ՚ի մի :
13 * Գերեզման բաց է կոկորդ նց՝ լեզուօք իւրեանց
նենգաւորք եղեն : թոյնք իժից ՚ի ներքոյ շրթանց
14 նոցա : * Որոց բերանք անիծիւք եւ դառնութեամբ լի
15 են : * Երագունք են ոտք նց հեղուլ զարիւն :
16 * Բեկումն եւ թշուառութիւն ՚ի ճանապարհս նց:
17 * Եւ զճանապարհն խաղաղութե ոչ ծանեան :
18 * Ոչ է երկիւղ Այ առաջի աչաց նց :
19 ԲՊ. * Բայց գիտեմք՝ զոր ինչ միանգամ օրէնքն
ասեն. այնոցիկ՝ որք ընդ օրինօքն են, ասեն : զի ամ
բերան խցցի. եւ դատապարտ լիցի ամ աշխարհ Այ:
20 * Զի ՚ի գործոց օրինաց ոչ արդարասցի ամ
մարմին առաջի նր. քանզի օրինօքն է գիտութի
21 մեղաց : * Բայց արդ՝ առանց օրինացն իսկ արդարութին Այ յայտնեալ է՝ վկայեալ յօրինաց անտի
22 եւ ՚ի մարգարէից : * Քանզի արդարութին Այ ՚ի
հաւատոց անտի Յի Քի յամ հաւատացեալս. եւ
23 ոչ ինչ է խտիր : * Քանզի ամենեքեան մեղան. եւ
24 նուազեալ են ՚ի փառացն Այ : * Եւ արդարանան
ձրի նորին շնորհօք՝ ՚ի ձեռն փրկութեանն որ ՚ի
25 Քս Յս : * Զոր յառաջն եդ Ած ՚ի քաւութի ՚ի
ձեռն հաւատոյն արեամբ նր, ՚ի հանդէս արդարութե նր, վս թողութե յառաջագոյն մեղացն գործելոց
26 * ՚ի ներելն Այ, ՚ի հանդէս արդարութե նր ՚ի
ժամանակի յայսմիկ : զի եղիցի Նա արդար. եւ արդարացուցէ զայն՝ որ ՚ի հաւատոյն Յի : * Իսկ արդ
27 ո՞ւր են պարծանքն. արգելան : յորո՞ց օրինաց. ՚ի
գործո՞ց անտի, ոչ, այլ ՚ի հաւատոյն օրինաց :
28 * Քանզի համարիմք հաւատովք արդարանալ մարդոյ՝ առանց գործոց օրինաց : * Եթէ Հրէից միայն
29 իցէ Ած՝ եւ հեթանոսաց ոչ : այո՛ եւ հեթանոսաց :
30 * Զի եթէ մի է Ած՝ որ արդարացուցանէ զթլփատութին ՚ի հաւատոց. ապա եւ զանթլփատութին
նովին հաւատովք :

31 * Արդ՝ զօրէնսն ինչ խափանեմք հաւատովքս. քաւ
լիցի. այլ զօրէնսն հաստատեմք ։

ԳԼ. Դ ։

1 Իսկ արդ՝ զի՞նչ ասիցեմք զգտանելն աբրահամու
ԲԶ. նահապետին մերոյ ը͞ս մարմնոյ ։
2 * Զի եթէ աբրահամու գործովք էր արդարա-
ցեալ. ունիլ ունէր պարծանս՝ այլ ոչ առ ԱԾ ։
3 * Իսկ զի՞նչ ասիցէ գիր. հաւատաց աբրահամ յԱԾ՝
4 և համարեցաւ նմա յարդարութիւն ։ * Բայց այնմ՝
որ գործիցէն՝ ոչ համարին վարձքն ըստ շնորհաց՝
5 այլ ըստ պարտեաց ։ * Իսկ այնմ, որ ոչն գործիցէ՝
բայց հաւատայցէ յայն՝ որ արդարացուցանէ զամբա-
րիշտս, համարին հաւատքն ն͞ր յարդարութիւն ըստ առա
6 ջադրութեան շնորհին ԱՅ ։ * Ո͞պ և դաւիթ ասէ զերա
նութիւն մարդոյ՝ որում ԱԾ համարի զարդարութիւն ա-
7 ռանց գործոց ։ * Երանի՝ որոց թողան անօրէնութիւնք.
8 և որոց ծածկեցան մեղք ։ * Երանեալ է այր՝ որում
9 ոչ համարեսցի Տ͞ր զմեղս ։ * Արդ՝ երանութիւն
այս. 'ի վ͞ր թլփատութեան է՝ եթէ 'ի վերայ անթլ
փատութեան ։ քանզի ասեմք՝ եթէ համարեցաւ աբ-
րահամու հաւատքն յարդարութիւն ։
10 * Արդ՝ զիա՞րդ համարեցաւ ։ մինչդեռ 'ի թլփա-
տութեանն էր՝ թէ յանթլփատութեան ։ ոչ 'ի թլփա
11 տութեանն, այլ յանթլփատութեան ։ * Եւ՛ նշանակ
էառ զթլփատութիւն, կնիք արդարութեան հաւա-
12 տոյն՝ որ յանթլփատութենէ անտի ։ * Զի եղիցի նա
հայր ա͞մ հաւատացելոց, որք յանթլփատութենէ
անտի իցեն ։ առ 'ի համարելոյ և ն͞ց արդարութիւն,
և հայր թլփատութեան, որոց ոչ 'ի թլփատութենէ
անտի և եթ. այլ և որոց երթայցեն ընդ հետս
անթլփատութեան հաւատոյ հօր մերոյ աբրահամու ։
13 ԳԴ. * Զի ոչ եթէ օրինօքն են աւետիքն աբ-
րահամու՝ և զաւակի ն͞ր ժառանգ լինել աշխարհի.
14 այլ 'ի հաւատոյն արդարութենէ ։ * Զի եթէ որք
յօրինացն են, ժառանգք իցեն. ապա ընդունայն
են հաւատքն՝ և դատարկ աւետիքն ։

15 * Քանզի օրէնքն զբարկութ՟ի գործեն ; բայց ուր
16 ոչ են օրէնք՝ և ոչ յանցանք լինի : * Վ՟ն այնո-
րիկ 'ի հաւատոց անտի, զի ըստ շնորհացն իցէ :
առ 'ի լինելոյ հաստատուն աւետեացն ամ՟ զաւակին:
ոչ այնմ միայն՝ որ յօրինաց անտի. այլ և այնմ,
որ 'ի հաւատոյն աբրահամու : որ է հայր մեր ա-
17 մենեցուն :/ (* Որպ՟ և գրեալ է : Թէ հայր ազգաց
բազմաց արարի զքեզ :) առաջի Այ՟ , որում հա-
ւատաց՝ եթէ կենդանի առնէ զմեռեալս. և կոչէ
18 զչգոյսն իբրև զգոյս : * Որ անյոյսն յուսով հաւա-
տաց լինել նմա հայր ազգաց բազմաց : որպ՟ և ասա-
19 ցաւն. Թէ այնպէս եղիցի զաւակ քո : * Եւ՛ նա
ոչ երկմտեաց 'ի հաւատոյն. թէպէտ և հայեցաւ
'ի մարմին իւր այնուհետև իբրև 'ի մեռեալ : քան
զի զհարիւրամենիւք ուրեմն էր : և 'ի մեռելու-
20 թ՟ի յարգանդին սառայի : * Բայց յաւետեացն Այ՟
ոչ երկմտեաց անհաւատութ՟բ : այլ զօրացաւ հա-
21 ւատովք. ետ փառս Այ՟ : * Եւ՛ հաստատեցաւ 'ի
միտս իւր, թէ որ խոստացաւն՝ կարօղ է առնել :
22 * Վ՟ն որոյ և համարեցաւ նմա յարդարութ՟ի :
23 * Այլ զի գրեցաւն, ոչ եթէ վ՟ն նր՟ միայն, եթէ
24 համարեցաւ նմա : * Այլ և վ՟ն մեր՝ որոց համա-
րելոց է. որք հաւատամք յայն՝ որ յարոյց զՅ՟ս
25 զՏ՟ր մեր 'ի մեռելոց : * Որ մատնեցաւ վ՟ն յանցա-
նաց մերոց. և յարեաւ վ՟ն զմեզ արդարացուցա-
նելոյ :

ԳԼ. Ե.

1 Այսուհետև արդարացեալք 'ի հաւատոց անտի,
զխաղաղութ՟ի կալցուք առ Ած՟ 'ի ձեռն Տ՟ն
2 մերոյ Յ՟ի Ք՟ի . * Որով և զմ՟ծայութ՟ի ընկալաք
հաւատովք 'ի շնորհս յայսոսիկ՝ յորում կամք, և
պարծիմք յուսով փառացն Այ՟ :
3 * Եւ՛ ոչ այսչափ միայն, այլև պարծիմք ևս 'ի
նեղութ՟իս մեր : քանզի գիտեմք, եթէ նեղութ՟իք
4 զհամբերութ՟ի գործեն : * Համբերութ՟իւն զհան-
5 դէս : հանդէս զյոյս : * Յոյս՝ ոչ երբէք ամաչե-

ցուցանէ : զի սէրն Այ՟ սփռեալ է ՚ի սիրտս մեր, ՚ի ձեռն Հոգւոյն սրբոյ՝ որ տուաւ մեզ:

6 * Զի մինչդեռ տկարքն էաք՝ Քս՟ վս՟ մեր ՚ի ժամանակի ՚ի վր՟ ամպարշտաց մեռաւ: 7 * Զի վս՟ արդարոյ հազի՛ւ ոք մեռանիցի: այլ վս՟ բարւոյ թերեւս համարձակիցի ոք մեռանիլ: 8 * Յայտնեայ Ած՟ զսէրն իւր ՚ի մեզ. զի մինչդեռ տկարքն էաք.

9 * Քս՟ վս՟ մեր մեռաւ. որչափ եւս առաւել յարդարանալս մերում այժմիկ արեամբն նր՟ ապրեսցուք նովաւ ՚ի բարկութ՟է անտի:

10 * Զի եթէ մինչ թշնամիքն էաք՝ հաշտեցաք ընդ Այ՟ մահուամբ Որդւոյ նր՟. որչափ եւս առաւել ՚ի հաշտիլս մերում ապրեսցուք կենօք նր՟:

11 * Եւ ո՛չ այսչափ միայն. այլեւ պարծիմք եւս յԱծ՟ ՚ի ձեռն Տն՟ մերոյ Յի՟ Քի՟. որով և զհաշտութ՟ին իսկ ընկալաք:

12 ԳԶ. * Զի ոպ՟ ՚ի միոջէ մարդոյ մեղք յաշխարհ մտին՝ և ՚ի մեղաց անտի մահ. և այնպէս յամ՟ մարդիկ տարածեցաւ մահ՝ որով ամենեքեան մեղան:

13 * Քանզի մինչև յօրէնսն մեղք էին յաշխարհի: բայց մեղք ո՛չ համարին, ուր օրէնք ոչ իցեն:

14 * Այլ թագաւորեաց մահ յԱդամայ մինչև ցՄովսէս: և ՚ի վր՟ չյանցուցելոյն, ըստ նմանութ՟ե յանցուածոյն Ադամայ. որ է օրինակ հանդերձելոյն:

15 * Այլ ո՛չ ոպ՟ յանցանքն, նոյնպէս և շնորհքն: զի եթէ միոյն յանցանօք բազումք մեռան. որչափ եւս առաւել շնորհքն Այ՟ և պարգեւք՝ շնորհօք միոյն մարդոյ Յի՟ Քի՟ ՚ի բազումս առաւելաւ:

16 * Եւ ո՛չ ոպ՟ ՚ի միոջէ յանցուցելոյն պարգեւս: քան զի դատաստանն ՚ի միոջէ յանցուածոյ անտի ՚ի դատապարտութիւն: այլ շնորհքն ՚ի բազմաց յանցուածոյն յարդարութ՟ի: 17 * Զի եթէ միոյն յանցանօք մահ թագաւորեաց միովն, որչափ եւս առաւել՝ որք զառաւելութ՟ի շնորհաց և զպարգեւաց արդարութ՟են առնուցուն, կենօք թագաւորեսցեն 18 ՚ի ձեռն միոյն Յի՟ Քի՟: * Ապա ուրեմն ոպ՟ միոյն յանցանօք յամ՟ մարդիկ դատապարտութ՟ի, նոյնպէս և միոյն արդարութ՟բ՝ յամ՟ մարդիկ արդա-

19 րութի՟ կենաց։ * Զի որպ՟ անհնազանդութ՟բ մի-
ոյն մարդոյ մեղաւորք բազումք եղեն. նոյնպէս և
հնազանդութ՟բ միոյն, արդարք բազումք եղիցին։
20 * Բայց օրէնք ՚ի ներքս անկան, զի յանցանքն բազ-
մասցին։ զի ուր առաւել եղեն մեղքն, առաւել
21 ևս յաւելան շնորհքն։ * Զի որպ՟ թագաւորեցին
մեղքն ՚ի մահու անդ. նոյնպէս և շնորհքն թա-
գաւորեսցեն արդարութ՟բ ՚ի կեանսն յաւիտենից
՚ի ձեռն Յ՟ի Ք՟ի Տ՟ն մերոյ։

ԳԼ. Զ.

1 Իսկ արդ՝ զի՞նչ ասիցեմք՝ յաճախեսցուք ՚ի մեղս՝
2 զի շնորհքն բազմասցին։ * Քաւ լիցի։ որք մե-
ռաք մեղացն. զիա՞րդ տակաւին ՚ի նմին կեցցեմք։
3 * Եթէ ո՞չ գիտէք՝ զի որք մի անգամ մկրտեցաք
4 ՚ի Ք՟ս Յ՟ս՝ ՚ի մահ նորա մկրտեցաք։ * Թա-
ղեցաք ընդ նմին մկրտութ՟բն ՚ի մահ. զի որպ՟ յա-
րեաւ Ք՟ս ՚ի մեռելոց փառօք հօր. նոյնպ՟ և մեք ՚ի
նորոգութ՟ն կենաց շրջիցուք։
5 * Զի եթէ տնկակիցք եղեաք նմանութ՟ե մահու
6 նորա. այլ և յարութ՟ե նորա լինիցիմք։ * Զայս գիտաս-
ջիք՝ զի հին մարդն մեր խաչակից եղև նորա՝ զի խա-
փանեսցի մարմին մեղացն, մի ևս ծառայել մեզ
7 մեղացն։ * Զի որ մեռանի՝ արդարացեալ է ՚ի մե-
8 ղաց։ * Իսկ եթէ մեռաք ընդ Ք՟ի, հաւատամք,
9 թէ և կեցցուք ընդ նմա։ * Գիտեմք զի Ք՟ս յա-
րուցեալ է ՚ի մեռելոց։ այսուհետև ոչ մեռանի։
և մահ նմա ոչևս տիրէ։
10 * Զի որ մեռաւն՝ մեղացն մեռաւ միանգամ։ և
11 որ կենդանին է՝ կենդանի է Ա՟յ։ * Նոյնպէս և
դուք համարեսջիք զանձինս մեռեալս մեղացն, և
կենդանիս Ա՟յ, ՚ի Ք՟ս Յ՟ս ՚ի Տ՟ր մեր։
12 Գ.Կ. * Մի այսուհետև թագաւորեսցեն մեղք ՚ի
մահկանացու մարմինս ձեր՝ հնազանդիլ ցանկու-
13 թեանց նորա։ * Ե՛ւ մի պատրաստէք զանդամս ձեր
զէն անիրաւութ՟ե մեղացն։ այլ պատրաստեցէք
զանձինս ձեր Ա՟յ։ որպ՟ ՚ի մեռելոց ՚ի կենդանիս։

և զանդամս ձեր զէն արդարութեն Այ։
14 * Զի մեղք ձեզ ոչ տիրեսցեն. քանզի ոչ էք ընդ
15 օրինօք՝ այլ ՚ի շնորհօք։ * Իսկ արդ՝ զի՞արդ. մե-
ղիցո՞ւք. զի չե՛մք ընդ օրինօք՝ այլ ընդ շնորհօք։
16 * Քանզի ոչ գիտէք՝ եթէ որում մատուցանէք
զանձինս ձեր ծառայս ՚ի հնազանդութի, ծառայք
էք՝ որում հնազանդիքդ, եթէ մեղաց՝ ՚ի մահ. և
եթէ ՚ի հնազանդութե արդարութե, ՚ի կեանս։
17 * Այլ շնորհք Այ, զի էիք ծառայք մեղաց՝ հնա
զանդեցայք ՚ի սրտէ՝ որում աւանդեցայք յառակ
վարդապետութե ։
18 * Արդ՝ ազատեալք ՚ի մեղաց՝ ծառայեցէք արդա-
19 րութե ։ * Մարդկօրէն ասեմ վս տկարութե
մարմնոյ ձերոյ։ զի որպէս պատրաստեցիք զանձինս ձեր
ծառայս պղծութե, և անօրէնութե յանօրէնութի։
նոյնպէս և այժմ պատրաստեցէք զանդամս ձեր
20 ծառայս արդարութե, ՚ի սրբութի։ * Զի մինչ
ծառայքն էիք մեղաց՝ ազատեալք էիք յարդա-
21 րութենէ։ * Իսկ արդ՝ զի՞նչ պտուղ ունէիք յայն-
ժամ. որովք այժմդ զամօթի հարեալ էք։ զի վախ-
22 ճան նոցա մահ է։ * Բայց արդ ազատեալք ՚ի
մեղացն՝ և ծառայեալք Այ՝ ունիք զպտուղ ձեր
՚ի սրբութի, և վախճան նր կեանք յաւիտենից։
23 * Զի թոշակն մեղաց մահ է. այլ շնորհքն Այ
կեանք յաւիտենից ՚ի Քս Յս ՚ի Տր մեր։

ԳԼ. Է։

1 Եթէ ոչ գիտէք եղբարք (զի ընդ գիտունս
ԴԴ. օրինաց խօսիմ) զի օրէնք տիրեն մարդոյ որ
2 չափ ժամանակս կենդանի իցէ։ * Քանզի կին առ-
նական, ՚ի կենդանի այր իւր կապեալ կայ օրինօք.
իսկ եթէ մեռցի այրն, արձակեալ է յօրինաց առն։
3 * Ապաքէն մինչ կենդանի է այրն, շուն կոչի՝
եթէ լինիցի առն այլում։ և եթէ մեռանիցի այրն,
ազատ է յօրինացն։ չհամարեալ շուն, եթէ լի-
4 նիցի առն այլում։ * Այսուհետև և դուք եղբարք
մեռայք օրինացն մարմնովն Քի. լինել այլում, որ
՚ի մեռելոյն յարուցեալ է, զի պտղաբերեսցուք Այ.

5 * Քանզի մինչ էաքն մարմնով, կիրք մեղաց՝
որք օրինօքն էին՝ զօրանային յանդամս մեր, առ ՚ի
6 պտղաբերս առնելոյ զմեզ մահու։ * Բայց այժմ
դատարկեցաք յօրինացն անտի. քանզի մեռաք այն-
միկ՝ որով ըմբռնեալն էաք, առ ՚ի ծառայել մեզ
նորոգութե̄բ հոգւոյն՝ և ոչ հնութե̄բ գրոյն։
7 * Իսկ արդ զի՞նչ ասեմք։ օրէնքն մե՞ղք իցեն. քաւ
լիցի։ այլ զմեղս ոչ գիտէի, եթէ ոչ օրինօք։
և զցանկութ̄ի ոչ ճանաչէի, եթէ ոչ օրինացն էր
8 ասացեալ՝ մի ցանկանայցես։ * Պատճառս առին
մեղքն պատուիրանաւն, և գործեցին յիս զամ̄
ցանկութ̄ի։ զի առանց օրինացն մեղքն մեռեալ էին։
9 * Ե՛ւ ես առանց օրինացն երբեմն էի կենդանի։
այլ իբրև եհաս յիս պատուիրանն, մեղքն կենդա-
10 նացան։ * Ե՛ւ ես մեռայ։ և գտաւ ինձ պատուի-
11 րանն՝ որ ՚ի կեանս էր, նոյն ՚ի մահ։ * Զի մե-
ղացն պատճառս առեալ պատուիրանաւն՝ խաբեցին
զիս, և նովին սպանին։
12 Գ. Զ. * Այսուհետև օրէնքն ս̄րք են՝ և պատ-
13 ուիրանն ս̄ր՝ և արդար՝ և բարերար։ * Իսկ արդ՝
ինձ բարին մա̄հ եղև. քաւ լիցի. այլ մեղքն։ զի
երևեսցին մեղքն բարեաւն գործել ինձ զմահ. զի
եղիցին ըստ առաւելութե̄ն մեղքն մեղաւոր ՚ի ձեռն
14 պատուիրանին։ * Գիտեմք զի օրէնքն հոգևոր
են։ այլ ես մարմնաւոր եմ, ընդ մեղօք վաճառ-
15 եալ։ * Զի զոր գործեմն՝ ոչ գիտեմ. ոչ եթէ
զոր կամիմն զբարին՝ զայն առնեմ. այլ զոր ատեամն
16 զչարն՝ զայն գործեմ։ * Ապա եթէ զոր ոչն կամիմ՝
զայն առնեմ. վկայեմ օրինացն՝ եթէ բարւոք են։
17 * Այլ արդ ոչ եթէ ես գործեմ զայն, այլ
18 բնակեալ յիս մեղքն։ * Գիտեմ, զի ոչ բնա-
կեալ է յիս, այսինքն ՚ի մարմնի իմում, բարի ինչ.
զի կամքն առաջի կան ինձ. և առնել զբարին ոչ։
19 * Զի ոչ եթէ՝ զոր կամիմ զբարին՝ զայն առնեմ,
20 այլ զոր ոչն կամիմ զչարն, զայն գործեմ։ * Ապա
եթէ, զոր ոչն կամիմ, զայն առնեմ. ոչև ես առ-
21 նեմ զայն՝ այլ բնակեալ յիս մեղքն։ * Ե՛ւ արդ՝
գտանեմ զօրէնս այնորիկ՝ որք կամիցին առնել յիս

22 զբարին. և ինձ չարն առաջի կայ: * Հաճեալ եմ
ընդ օրէնսն Այ ըստ ներքին մարդոյն:
23 * Բայց տեսանեմ այլ օրէնս յանդամս իմ, զինեալ
հակառակ օրինաց մտաց իմոց. և գերեալ զիս
24 օրինօքն մեղաց՝ որք են յանդամս իմ: * Այր մի
տառապեալ եմ ես: ո՞վ ապրեցուսցէ զիս 'ի մարմնոյ
25 աստի մահու: * Այլ շնորհքն Այ 'ի ձեռն
Յի Քի Տն մերոյ: ապա ուրեմն ես ինքնին մտօք
ծառայեմ օրինացն Այ: և մարմնով օրինացն մեղաց:

ԳԼ. Ը:

1 Թէ այդպէս իցէ՝ ոչինչ դատապարտութի է
ԵԿ այնոցիկ՝ որք 'ի Քս Յս. որք ոչ ըստ մարմնոյ
2 վարին: * Զի օրէնք հոգւոյն կենաց 'ի Քս
Յս ազատեցին զիս յօրինաց մեղացն և մահու:
3 * Զի որ անհնարին էր օրինացն՝ որով տկարանայրն
մարմնով. Աձ զՈրդին իւր առաքեաց 'ի
նմանութի մարմնոյ մեղաց՝ և վն մեղաց. և դատա-
4 պարտեաց զմեղս 'ի մարմնի անդ: * Զի արդարութի
օրինացն կատարեսցի 'ի մեզ, որք ոչ ըստ
5 մարմնոյ գնայցեմք՝ այլ ըստ հոգւոյ: * Զի որք
ըստ մարմնոյն են՝ զմարմնոյն խորհին. և որք ըստ
6 հոգւոյն՝ զհոգւոյն: * Զի խորհուրդ մարմնոյ՝ մահ
է. և խորհուրդ հոգւոյն, կեանք և խաղաղութի:
7 * Քանզի խորհուրդ մարմնոյ թշնամութի է յԱձ՝
զի օրինացն Այ ո՛չ հնազանդի. նաև կարէ իսկ
8 ոչ: * Զի որք մարմնովն են, Այ հաճոյ լինել ո՛չ
9 կարեն: * Բայց դուք ո՛չ էք մարմնով՝ այլ հոգւով,
եթէ իցէ Հոգին Այ 'ի ձեզ բնակեալ: ապա
10 եթէ որ զՀոգին Քի ոչ ունի, սա չէ նր: * Իսկ
եթէ Քս 'ի ձեզ է՝ ապա մարմին մեռեալ է վասն
մեղաց. և հոգին կենդանի վասն արդարութե:
11 * Եթէ Հոգի այնորիկ՝ որ յարոյց զՅս 'ի մեռելոց,
բնակեալ է 'ի ձեզ. ապա և որ յարոյց զՅս
Քս 'ի մեռելոց՝ կենդանացուսցէ և զմահկանացու
մարմինս ձեր բնակեալ Հոգւովն իւրով 'ի ձեզ:

12 * Այսուհետեւ եղբարք՝ պարտապան եմք ոչ մարմնոյ
ըստ մարմնոյ կեալ:
13 * Զի եթէ ըստ մարմնոյ կեցջիք՝ մեռանելոց
էք. իսկ եթէ հոգւով զգործս մարմնոյ սպանանիցէք՝
14 կեցջիք: * Զի որք հոգւովն ԱՅ վարին,
15 նոքա են որդիք ԱՅ: * Զի ոչ առիք զհոգին
ծառայութեան միւսանգամ յերկիւղ. այլ առիք
զհոգին որդեգրութեան. որով աղաղակեմք Աբբա
16 (Հայր:) * Նոյն ինքն Հոգին վկայէ հոգւոյս մերում,
17 եթէ եմք որդիք ԱՅ: * Եւ եթէ որդիք,
ապա եւ ժառանգք. ժառանգք ԱՅ՝ եւ ժառանգակիցք
ՔԻ. եթէ չարչարանացն կցորդք լինիցիմք,
18 եւ փառացն հաղորդք լինելոց եմք: * Ինձ այսպէս թուի՝
եթէ ոչ են արժանի չարչարանք ժամանակիս
հանդերձելոց փառացն՝ որք յայտնելոց են
19 ՚ի մեզ: * Զի ակնկալութիւն արարածոց յայտնութեան
20 Որդւոյն ԱՅ սպասէ: * Զի ընդունայնութեան
արարածք հնազանդեցան, ոչ իւրեանց կամաւ՝ այլ
21 վասն այնորիկ՝ որ հնազանդեցոյցն յուսով: * Զի եւ
ինքեանք իսկ արարածքն ազատեսցին ՚ի ծառայութենէ
ապականութեան յազատութիւն փառաց Որդւոյն
22 ԱՅ: * Քանզի գիտեմք, եթէ ամենայն արարածք
23 հեծեն՝ եւ երկնեն մինչեւ ցայժմ: * Եւ ոչ այսչափ
միայն. այլ եւ մեք իսկ՝ որք զպտուղ Հոգւոյն ունիմք,
անձամբ յանձինս մեր հեծեմք՝ որդեգրութեան
24 ակնկալեալ՝ փրկութեան մարմնոյ մերոյ: * Զի յուսով
ապրեցաք: այլ յոյս տեսանելի՝ չէ յոյս. զի
25 զոր տեսանէ ոք՝ զի՞ եւս յուսայ: * Ապա եթէ
զոր ոչն տեսանեմք, յուսամք. համբերութեամբ ակն ունիմք:
26 * Նոյնպէս եւ Հոգին ՚ի թիկունս հասանէ
տկարութեան մերում. զի զոր կամքն յաղօթս՝ որպէս
արժանն իցէ՝ ոչ գիտեմք. այլ ինքն Հոգին
27 բարեխօս լինի ՚ի հեծութիւնս անմռունչս: * Բայց
որ քննէն զսիրտս՝ գիտէ զինչ խորհուրդ է Հոգւոյն.
զի ըստ ԱՅ բարեխօսէ վասն սրբոց:
28 * Բայց գիտեմք՝ եթէ որոց սիրեն զԱԾ՝ յամենայնի
գործակից լինի ՚ի բարիս. որք հրաւիրանաւն
29 կոչեցան: * Զի զորս յառաջն ճանաչէր՝

յառաջագոյն և հրաւիրեաց կերպարանակից լինել
պատկերի Որդւոյն իւրոյ․ զի եղիցի Նա անդրանիկ
30 'ի մէջ եղբարց բազմաց ։ * Եւ զորս յառաջագոյն
հրաւիրեաց՝ զնոսին և կոչեաց․ և զորս կոչեացն,
զնոսին և արդարացոյց․ և զորս արդարացոյցն,
զնոսին և փառաւորս արար ։
31 * Իսկ արդ զի՞նչ ասեմք առ այս․ եթէ Ած 'ի մեր
32 կոյս է, ո՞վ իցէ մեր հակառակ ։ * Որ յիւր Որ-
դին ո՛չ խնայեաց՝ այլ վասն մեր ամենեցուն մատ-
նեաց զնա․ զիա՞րդ ոչ նովաւ հանդերձ զամ շնոր-
33 հիցէ մեզ ։ * Ո՞վ իցէ՝ որ մեղադիր լինիցի ընտրե-
34 լոց Այ․ Ած է՝ որ արդարացուցանէ ։ * Իսկ արդ՝
ո՞վ է՝ որ դատապարտ առնիցէ ։ Քս Յս՝ որ մե-
ռաւն՝ մանաւանդ թէ յարուցեալ իսկ է․ և է
ընդաջմէ Այ․ որ և բարեխօս իսկ է վասն մեր ։
35 * Արդ՝ ո՞վ մեկնեսցէ զմեզ 'ի սիրոյն Քի․ նեղու-
թի․ թէ անձկութի․ թէ հալածանք․ թէ սով․
36 թէ մերկութի․ թէ վիշտ․ թէ սուր ։ * (Որպէս
և գրեալ է․ վն քո մեռանիմք զօրհանապազ՝ հա-
մարեցաք որպէս զոչխար 'ի սպանումն ։)
37 * Այլ յայսմ ամի, առաւել յաղթեմք նովաւ՝ որ
38 սիրեացն զմեզ ։ * Քանզի հաստատեալ եմ, եթէ՝
ոչ մահ․ և ոչ կեանք․ և ոչ հրեշտակք․ և ոչ
իշխանութիւք․ և ոչ զօրութիւք․ և ոչ որկանս․
և ոչ հանդերձեալքն․ և ոչ կարողութի ։
39 * Եւ ոչ բարձրութի․ և ոչ խորութի․ և ոչ այլ-
ինչ արարած՝ կարէ մեկնել զմեզ 'ի սիրոյ անտի
Այ․ որ 'ի Քս Յս 'ի Տր մեր ։

ԳԼ․ Թ ։

1 Ստուգութի ասեմ 'ի Քս, և ոչ ստեմ․ վկայ-
Եդ․ են ինձ միտք իմ, 'ի Հոգի սբ ։ * Զի տրտ-
մութի է ինձ յոյժ՝ և անպակաս ցաւք սրտի իմոյ ։
3 * Զի ուխտիւք խնդրէի, ես ինքնին նզով լինել
'ի Քէ․ վասն եղբարց և ազգականաց իմոց ըստ
4 մարմնոյ ։ * Որք են Իէլացիք․ որոց որդէգրութին․
և փառքն․ և կտակարանն․ և օրէնսդրութիւնն․

5 և պաշտօնն · և աւետիքն ։ * Որոց հարքն · յորոց
և Քս̄ ըստ մարմնոյն · որ է 'ի վր̄ ամենեցուն Ած
օրհնեալ յաւիտեանս · ամէն ։
6 * Ոչինչ է մարթ՝ եթէ անկած լինիցի բանն այ̄ ·
զի ոչ ամենեքեան՝ որք յիէլէն են՝ նոքա իէլա-
7 ցիք իցեն ։ * Եւ՛ ոչ որք զաւակք աբրահամու են՝
ամենեքեան որդիք իցեն · այլ իսահակաւ կոչեսցի
8 քեզ զաւակ ։ * Այսինքն թէ ոչ՝ որք որդիք մարմ-
նոյն են , են որդիք այ̄ · այլ որդիք աւետեացն
9 համարին 'ի զաւակ ։ * Քանզի աւետեաց իսկ է
բանս այս · թէ 'ի ժամանակի յայսմիկ եկից՝ և ե-
10 ղիցի որդի սառայի ։ * Եւ՛ ոչ այսչափ միայն՝ այլև
'ի հռեբեկայ 'ի միոջէ անկողնոյ իսահակայ հօր
11 մերոյ ։ * Զի մինչև ծնեալ էին, և մինչև զբարի
ինչ՝ կամ զչար գործեալ էին ։ (զի ըստ ընտրութեն
12 առաջադրութին այ̄ հաստատեսցի ։) * Ո՛չ 'ի գոր-
ծոց՝ այլ յայնմանէ որ կոչեացն՝ ասացաւ նմա ։
13 * Եթէ երէցն կրտսերոյն ծառայեսցէ , որպէս և
գրեալ է · թէ զյակոբ սիրեցի · և զեսաւ՛ ատեցի ։
14 * Իսկ արդ՝ զի՞նչ ասեմք · մի թէ անիրաւութին
15 իցէ այ̄ · քաւ լիցի ։ * Զի մովսէսի ասէ · ողորմե-
ցայց՝ որում ողորմեցայց · և գթացայց՝ յոր գթա
16 ցայցն ։ * Ապա ոչ ըստ այնմ ինչ է՝ որ կամիցի ,
և ոչ ըստ այնմ , որ ընթանայցէ · այլ ըստ Այ̄՝
որ ողորմի ։
17 ԵԶ · * Քանզի ասէ գիր ցփարաւոն · թէ վասն
այնորիկ զարթուցի զքեզ , զի 'ի քեզ ցուցից զզօրու-
թի իմ , և պատմեսցի անուն իմ ընդ ամենայն
18 երկիր ։ * Ապա ուրեմն ում կամի ողորմի , և ում
19 կամի խստանայ ։ * Իսկ արդ ասիցես , թէ մեղ ևս
20 զի՞ դնէ՝ զի կամաց նր̄ ոչ՛ք կայ հակառակ ։ * Իսկ
արդ դու ո՞վ ես մարդ՝ որ պատասխանի տաս Այ̄ ·
միթէ ասիցէ՞ ստեղծուածն ցստեղծիչն իւր՝ թէ
21 ընդէ՞ր այդպ̄ արարեր զիս ։ * Եթէ ո՞չ ունիցի զիշ-
խանութի բրուտն կաւոյն , 'ի նմին զանգուածոյ առ-
նել զանօթ՝ զոմն 'ի պատիւ՛, և զոմն յանարգանս ։
22 * Ապա եթէ կամէր Ած ցուցանել զբարկութի ,
և յայտնի առնել զզօրութի իւր · որ համբեր բազ

մեաւ երկայնմտութեամբ անօթոյն բարկութեան՝ պատ-
23 րաստելոյն ՚ի կորուստ։ * Զի յայտնի արասցէ զմեծութիւն փառաց իւրոց ՚ի վերայ անօթոյն ողորմութեան, զորս պատրաստեաց ՚ի փառս։
24 * Զորս եւ կոչեաց զմեզ. ոչ միայն ՚ի Հրէից՝
25 այլ ՚ի հեթանոսաց։ * Որպէս եւ յովսէէ ասէ. կոչեցից, զոր ոչ ժողովուրդ իմ, ժողովուրդ իմ. եւ զչսիրեցեալն, սիրեցեալ. եւ զչողորմեալն, ողոր-
26 մեալ։ * Եւ եղիցի ՚ի տեղւոջ՝ յորում ասացաւ նոցա՝ թէ ոչ ժողովուրդ իմ դուք. անդ կոչեսցին նոքա Որդիք Աստուծոյ կենդանւոյ։ * Եսայի աղաղակէ
27 վասն Իսրայէլի. եթէ իցէ թիւ որդւոցն Իսրայէլի իբրեւ զաւազ ծո-
28 վու՝ սակաւ ինչ մնացորդք մնասցեն։ * Զի բան մի հակիրճ եւ համառօտ արդարութեամբ. զբանն հակիրճ
29 արասցէ Տէր ՚ի վերայ երկրի։ * Եւ որպէս ասէ Եսայի։ Թէ ոչ Տէրն զօրութեանց թողեալ էր մեզ զաւակ, իբրեւ զսոդոմ լինէաք՝ եւ զգոմորայ նմանեալ էաք։
30 Զ Կ. * Իսկ արդ զի՞նչ ասիցեմք. զի հեթանոսք՝ որք ոչ երթային զհետ արդարութեան՝ հասին արդարութեան. այսինքն արդարութեան՝ որ ՚ի հաւատոց ան-
31 տի։ * Այլ Իսրայէլ երթայր զհետ օրինացն արդարութեան՝ եւ յօրէնս արդարութեանն ոչ ժամանեաց։
32 * Ընդէ՞ր. զի ոչ ՚ի հաւատոց՝ այլ իբրեւ ՚ի գործոց օրինաց՝ քանզի զթեցին նոքա առ վիմին գայ-
33 թակղութեան։ * Որպէս եւ գրեալ է։ Ահաւասիկ դնեմ ՚ի սիօն կքար գայթակղութեան՝ եւ վէմ գլորման. եւ ամենայն, որ հաւատասցէ ՚ի նա՝ մի ամաչեսցէ։

ԳԼ. Ժ։

1 Եղբարք՝ իմ կամք սրտի, եւ աղօթք առ Աստուած վասն
2 նոցա են ՚ի փրկութիւն։ * Քանզի վկայեմ նոցա՝ թէ զնախանձն Աստուծոյ ունին, այլ ոչ գիտութեամբ։
3 * Զի տգէտք են Աստուծոյ արդարութեանն. եւ զիւրեանցն խնդրեն կացուցանել. զի արդարութեանն Աստուծոյ ոչ
4 հնազանդեցան։ * Քանզի կատարած օրինացն Քրիստոս է՝ յարդարութիւն ամենայն հաւատացելոց։
5 Զ Գ. * Մովսէս գրէ զարդարութիւն, որ յօրինաց

նացն է. Թէ արասցէ զայն մարդ՝ կեցցէ 'ի նո-
6 սին: * Իսկ զհաւատոյն արդարութէ այսպէս ասէ.
մի ասիցես 'ի սրտի քում, ո՞վ ելանիցէ յերկինս՝
7 այսինքն է, զՔս իջուցանել: * Կամ ո՞վ իջանիցէ
յանդունդս՝ այսինքն է՝ զՔս հանել 'ի մեռելոց:
8 * Այլ զի՞նչ ասէ գիր. մերձ է բանն 'ի բերան
քո՝ և 'ի սրտի քում է. այսինքն է՝ բանն հաւա-
9 տոյ՝ զոր քարոզեմք: * Զի եթէ խոստովանեսցիս
բերանով քով զՏր զՅս. և հաւատասցես 'ի սրտի
քում, թէ Ած յարոյց զնա 'ի մեռելոց՝ կեցցես:
10 * Զի սրտիւ հաւատայք յարդարութի. և բե-
րանով խոստովանիք 'ի փրկութի:
11 * Քանզի ասէ գիր. ամենայն, որ հաւատայցէ 'ի նա՝
12 մի ամաչեսցէ: * Զի ոչ գոյ խտիր հրէի և հե-
թանոսի. քանզի նոյն Տր է ամենեցուն. բաւական
13 յամենեսին, որք կարդան առ նա: * Զի ամենայն՝
14 որ կարդասցէ զանուն Տն՝ կեցցէ: * Իսկ զիա՞րդ
կարդասցեն՝ յոր ոչն հաւատացին. կամ զիա՞րդ
հաւատասցեն, որում ոչ լուան. կամ զիա՞րդ լու-
15 իցեն առանց ուրուք քարոզելոյ: * Կամ զիա՞րդ
քարոզեսցեն, եթէ ոչ առաքեսցին. որպէս և
գրեալ է. իբրև զի գեղեցիկք են ոտք աւետարան-
չացն խաղաղութե, և աւետարանչացն բարութե:
16 * Այլ ո՛չ ամենեքեան հնազանդք եղեն աւետարա-
նին. Եսայի աղաղակէ. Տր, ո՞ հաւատաց լրոյ մերում:
17 * Ապաքէն հաւատք 'ի լսելոյ են՝ և լուր 'ի բա-
18 նէն Քի: * Այլ ասեմ, միթէ ո՞չ լուան. մանա-
ւանդ՝ զի ընդ ամենայն երկիր ել բարբառ նոցա.
19 և ընդ ծագս տիեզերաց խօսք նց: * Այլ ասեմ,
միթէ Իէլ ո՞չ լուաւ. Նախ Մովսէս ասէ՝ ես նա-
խանձեցուցից զձեզ ոչինչ ժողովրդեամբ. և ազգաւ
20 անմտաւ դժնեցուցից զձեզ: * Բայց Եսայի համար-
ձակի խօսի՝ և ասէ. գտայ այնոցիկ՝ որք զիս ո՛չ
խնդրէին. յայտնի եղէ այնոցիկ՝ որք զինէն ո՛չ
21 հարցանէին: * Այլ առ Իէլ ասէ. զօր ամ ձգեցի
զձեռս իմ առ ժողովուրդ անհաւան և հակառա-
կող:

Գլ. ԺԱ.

1 Իսկ արդ ասեմ, մի՞թէ մերժեաց Ած զժողո-
ՁՁ վուրդ իւր. քաւ լիցի. քանզի և ես իէլացի
եմ. 'ի զաւակէ աբրահամու՝ յազգէ բենիամենի ։
2 * Ո՛չ մերժեաց Ած զժողովուրդ իւր, զոր յառաջն
ծանեաւ. մի՛ թէ ո՞չ գիտէք, յեղիայ զի՞նչ ասէ
գիր. որպէս ամբաստան լինի այ զիէլէ ։
3 * Տ՟ր զմարգարէս քո կոտորեցին՝ և զսեղանս քո
կործանեցին. ես մնացի միայն, և խնդրեն զանձն
4 իմ ։ * Այլ զի՞նչ ասէ նմա պատասխանին ածային.
Թողի ինձ, ասէ՝ եօթն հազար այր. որք ո՛չ կրկնեցին
5 զծունր բահաղու ։ * Նոյնպէս և յայսմ ժամանա-
կի, մնացորդք՝ ըստ ընտրութեն շնորհացն եղեն ։
6 * Իսկ եթէ շնորհօք՝ ո՛չ ևս 'ի գործոց. ապա թէ
7 ոչ՝ շնորհքն ո՛չ ևս շնորհք լինին ։ * Իսկ արդ՝ զոր
խնդրէրն իէլ, այնմ ոչ եհաս. բայց ընտրութին ե-
8 հաս. և այլքն կուրացան ։ * Ոպ և գրեալ է. ետ
նց Ած զհոգի յիմարութե. աչս՝ որովք ո՛չ տե-
սանիցեն. և ականջս՝ որովք ո՛չ լսիցեն, մինչև
9 ցայսօր ժամանակի ։ և դաւիթ ասէ ։ * Եղիցին
սեղանք նոցա յորոգայթ, և 'ի յորս՝ և 'ի գայ-
թագղութի, և 'ի հատուցումն նոցին ։
10 * Խաւարեսցին աչք նոցա՝ զի մի՛ տեսցեն. և զթի-
11 կունս նոցա հանապազ կորացո՛ ։ * Իսկ արդ ասեմ,
մի՞թէ վասն այնորիկ յանցեան, զի կործանեսցին.
քաւ լիցի. այլ նց յանցանօքն փրկութի հեթա-
12 նոսաց. զի նախանձ արկցէ նց ։ * Իսկ եթէ յան-
ցանքն նոցա մեծութի աշխարհի. և պակասութի
նց՝ մեծութի՝ հեթանոսաց. ո՞րչափ ևս առաւել
լրութի նոցա ։

13 Էկ. * Այլ ձեզ ասեմ հեթանոսաց՝ ցորքան ժա-
մանակս իցեմ հեթանոսաց առաքեալ, զպաշտօնն
14 իմ փառաւոր առնեմ ։ * Զի թերևս նախանձ
արկից նոցա մարմնոյ իմոյ՝ և ապրեցուցից զո-
15 մանս 'ի նոցանէ ։ * Զի եթէ մերժումն նց հաշ-
տութի աշխարհի է. իսկ ընդունելութին զի՞նչ
16 իցէ՝ եթէ ո՛չ կենդանութի 'ի մեռելոց ։ * Իսկ

եթէ սկիզբն սուրբ է՝ և զանգուածն. և եթէ արմատն՝
17 ապա և ոստքն * Եթէ յոստոց անտի ումանք
փշրեցան. և դու որ ձիթենիդ վայրենի էիր՝ պատուաստեցար
՚ի նոսա. և բաժանորդ եղեր արմատոյն՝
18 և պարարտութե ձիթենւոյն: * Մի՛ պարծիր առ
ոստովքն, ապա եթէ պարծիցիս՝ ո՛չ եթէ դու
զարմատն ՚ի վեր ունիս. այլ արմատն զքեզ:
19 * Իսկ արդ ասիցես, ոստքն փշրեցան՝ զի ես պատուաստեցայց:
20 * Բարւոք է՝ անհաւատութբն
փշրեցան. և դու հաւատովք հաստատեցար. մի՛
21 հպարտանար՝ այլ երկիր: * Զի թէ Ած ՚ի բուն
ոստոցն ոչ խնայեաց. գուցէ երբէք և ՚ի քեզ ոչ
22 խնայիցէ: * Արդ՝ տես զքաղցրութի և զսաստկութին
այ. ՚ի վերայ կործանելոյն սաստկութի, և
՚ի վերայ քո քաղցրութին այ, եթէ կայցես ՚ի
նմին քաղցրութե, ապաթէ ոչ՝ և դու կոտորիցիս:
23 * Եւ նոքա եթէ ոչ ՚ի նմին անհաւատութե
կայցեն, պատուաստեսցին. զի կարօղ է Ած միւանգամ
24 պատուաստել զնոսա: * Զի եթէ դու
՚ի բուն ՚ի վայրենւոյ ձիթենւոյ անտի հատար՝ և
յանբունն ՚ի բարւոք ձիթենւոջն պատուաստեցար.
ո՞րչափ ևս առաւել նոքա՝ որք բունքն իսկ են՝ պատուաստեսցին
յիւրեանց ձիթենւոջն:

25 ԳԼ. * Ոչ կամիմ եղբարք եթէ ոչ գիտիցէք
խորհրդոյս այսմիկ. (զի մի՛ յանձինս ձեր լիցէք իմաստունք.)
զի կուրութի փոքր ՚ի շատէ եղև Իղի.
26 մինչև լրումն հեթանոսաց մտցէ: * Եւ ապա ամ
Իէլ կեցցէ. ոպ և գրեալ է. եկեսցէ ՚ի սիօնէ
փրկիչ՝ և դարձուսցէ զամբարշտութիւն ՚ի յակոբայ:
27 * Եւ այս նոցա՝ որ յինէն ուխտ՝ յորժամ
28 բարձից զմեղս նոցա: * Ըստ աւետարանին թշնամիք
են վասն ձեր. ըստ ընտրութեն սիրելիք վասն
29 հարցն: * Քանզի անզեղջք են շնորհք և կոչումն
30 այ: * Զի որպէս և դուք երբեմն ապստամբք
էիք յԱյ՝ և արդ ողորմութի գտիք առ նց ապս
31 տամբութբն: * Նոյնպ և նոքա այժմ ապստամբք
եղեն առ ձերում ողորմութդ. զի և նոքա զողորմութի
32 գտցեն: * Քանզի արգել Ած զամենե-

սին յանհնազանդութե̃, զի ամենեցուն ողորմեսցի :
33 * Ո՜վ խորք մեծութե̃, և իմաստութե̃, և գիտու-
թե̃ն Այ̃ · որպէս զի առանց քննելոյ են դատաս-
տանք նորա · և առանց քննելոյ ճանապարհք նր̃ :
34 * Զի ո՞վ գիտաց զմիտս Տ̃ն, կամ ո՞վ խորհրդա-
35 կից եղև նմա : * Կամ ո՞վ ետ նմա փոխ, և առնու-
36 ցու զփոխարէն 'ի նմանէ : * Զի 'ի նմանէ՝ և նո-
վաւ՝ և 'ի նոյն ամ̃ · նմա փառք յաւիտեանս, ամէն։

ԳԼ. ԺԲ.

1 Աղաչեմ զձեզ եղբարք գթութբ̃ն ա̃յ՝ պատրաս-
տել զմարմինս ձեր պատարագ կենդանի · սուրբ՝
2 հաճոյ Ա̃յ՝ զխօսուն պաշտօնդ ձեր : * Եւ մի կեր-
պարանիք կերպարանօք աշխարհիս այսորիկ · այլ
նորոգեցարո՛ք 'ի նորոգութիւն մտաց ձերոց · առ 'ի
քննել ձեզ զնա, և եթէ զինչ են կամքն ա̃յ՝
3 բարին, և հաճոյն, և կատարեալն : * Զայս ասեմ
շնորհօքն ա̃յ՝ որք տուեալ են ինձ, ամե̃ն որք
են 'ի ձեզ · մի առաւել ինչ խորհել քան զոր-
ժանն խորհելոյ · այլ խորհել 'ի զգաստանալ՝ իւ-
րաքանչիւր՝ որպէս և բաժանեաց Ած̃ զչափ հա-
4 ւատոյ : * Որպ̃ 'ի միում մարմնի անդամս բազումս
ունիմք · և անդամքն ամենեքեան ոչ զնոյն գործ
5 ունին : * Նոյնպ̃ և բազումքս մի մարմին եմք 'ի
Քս̃ · այլ իւրաքանչիւր միմեանց անդամք եմք :
6 * Բայց ունիմք մեք շնորհս ըստ շնորհացն, որք
տուեալք են մեզ ազգս ազգս : եթէ մարգարէու-
7 թի՝ ըստ չափուն հաւատոյ : * Եթէ պաշտօն, ըստ
պաշտամանն · եթէ որ ուսուցանէն՝ ըստ վարդա-
8 պետութե̃ն : * Եթէ որ մխիթարէն, ը̃ մխիթա-
րութե̃ն : որ առատն է, զուարթութբ̃ : որ վերա-
կացուն է, փութով : որ ողորմի, լրջմտութբ̃ :
9 * Սէր առանց կեղծաւորութե̃ : ատել զչար · զհետ
10 երթալ բարեաց : * Եղբայրսիրութբ̃ առ միմ-
եանս գթածք : 'ի պատիւ զմիմեանս երանել :
11 * 'Ի փոյթ՝ մի վեհերոտք : հոգւով եռացեալք : Տ̃ն
12 ծառայեցէք · * Յուսով խնդացէք : նեղութե̃ համ

*

13 բերեցէք : աղօթից ստէպ կացէք : * 'Ի պէտս սրբոց հաղորդեցարուք : զհիւրասիրութիւն զհետ երթայք :
14 * Օրհնեցէք զհալածիչս ձեր . օրհնեցէք, և մի
15 անիծանէք : * Խնդալ ընդ խնդացօղս : լալ ընդ
16 լացօղս : * Զնոյն միմեանց խորհիցիք : մի ամբարտաւանիք՝ այլ ընդ խոնարհս զիջանիցիք : մի լինիք
17 իմաստունք յանձինս ձեր . * Մի ումեք չարի զչար հատուցանէք : խորհեցարուք զբարիս, մի միայն առաջի այ՟, այլև առաջի ամ՟ մարդկան :
18 * Եթէ հնար ինչ իցէ ձեզ՝ ընդ ամ՟ մարդկան
19 զխաղաղութի՟ ունիցիք : * Մի զանձանց վրէժ խնդրէք սիրելիք : այլ տուք տեղի բարկութե՟ : քանզի գրեալ է. իմ է վրէժխնդրութի՟ . և ես հա
20 տուցից՝ ասէ Տր՟ : * Այլ եթէ քաղցեալ է թշնամին քո՝ հաց տուր նմա : և եթէ ծարաւի՝ ջուր տուր նմա : զայս արարեալ՝ կայծակունս հրոյ կու
21 տեսցես 'ի գլուխ նր՟ : * Մի յաղթիր 'ի չարէն . այլ յաղթեա՛ բարեաւն չարին :

ԳԼ. ԺԳ :

1 Ամենայն անձն որ ը՟ իշխանութը՟ է՝ 'ի հնազանդութե՟ կացցէ : քանզի ոչ ուստեք է իշխանութի՟, եթէ ոչ յԱյ՟ : և որք ենն, յԱյ՟ կարգեալ
2 են : * Այսուհետև որ հակառակ կայ իշխանութե՟ն, այ՟ հրամանին հակառակ կայ : և որք հակառակ
3 կան, անձանց դատաստանս ընդունին : * Զի իշխանքն ոչ են յերկիւղ բարեաց գործոց՝ այլ չարաց : կամի՞ս չերկնչիլ յիշխանութե՟ անտի՝ զբարիս գործեա՛ . և ընդունիցիս գովութի՟ 'ի նմանէ :
4 * Զի այ՟ պաշտօնեայ է քեզ 'ի բարիս : ապա եթէ զչար գործիցես, երկի՛ր : զի ոչ եթէ վայրապար ածեալ է զսուսեր ընդ մէջ : զի Այ՟ սպասաւոր է՝ վրէժխնդիր 'ի բարկութե՟, այնմ . որ
5 զչարն գործիցէ : * Վս՟ որոյ հարկ է հնազանդ լինել՝ ոչ միայն վս՟ բարկութե՟ն . այլև վս՟ մտացն
6 խղճի : * Վս՟ այնորիկ և հարկս հարկանէք՝ զի
7 Այ՟ սպասաւորք են 'ի նոյն կանխեալք : * Արդ հա-

տուցէք ամենեցուն զպարտս ։ որում զհարկ՝ զհարկն։
որում զմաքս՝ զմաքսն ։ որում զերկիւղ՝ զերկիւղն։
8 որում զպատիւ՝ զպատիւն։ * Եւ մի՛ ումեք պարտապան
գտանիցիք ։ բայց զմիմեանս սիրել ։ զի որ
9 սիրէ զընկերն, զօրէնսն կատարէ ։ * Զի մի՛ շնայցես
։ և մի՛ սպանանիցես ։ և մի՛ գողանայցես ։ և
մի՛ սուտ վկայիցես ։ և մի՛ ցանկանայցես ։ և եթէ
այլ ինչ պատուիրան է՝ յայն բան բովանդակի ։
եթէ սիրեսցես զընկեր քո իբրև զանձն քո ։
10 * Սէր ընկերի իւրում զչար ոչ առնէ ։ լրումն
11 օրինացն սէր է ։ * Եւ զայս գիտասջիք վ̅ ժամանակի
։ զի արդ ժամ իսկ է մեզ 'ի քնոյ զարթնուլ ։
զի այժմ մերձ է մեզ փրկութի̃, քանզի յորժամ
12 հաւատացաքն։ * Գիշերն մերժեցաւ՝ և տիւն մերձեցաւ
։ 'ի բաց արասցուք այսուհետև զգործսն խաւարի
13 ։ և զգեցցուք զզէնն լուսոյ ։ * Իբրև 'ի տուընջեան
զգաստացեալք շրջեսցուք։ մի՛ անառակութ̅բք՝
և արբեցութ̅բք ։ և մի՛ խառն անկողնովք՝ և պղծութ̅բք
։ և մի՛ նախանձու՝ և հակառակութ̅բ ։
14 * Այլ զգեցարուք զՏ̅ր Յ̅ս Ք̅ս ։ և մարմնոյ
խնամ մի՛ տանիք 'ի ցանկութիս ։

ԳԼ. ԺԴ ։

1 Այլ զտկարացեալն 'ի հաւատս ընկալարուք՝ մի՛
2 խղճիւ երկմտութեանց ։ * Ոմն հաւատայ ուտել
3 զա̅մ։ և որ հիւանդն է, զբանջար կերիցէ ։ * Որ
ուտէն, զայն, որ ոչն ուտէ՝ մի՛ անգոսնեսցէ ։ և
որ ոչն ուտէ, զայն, որ ուտէն ։ մի՛ դատեսցէ ։
4 քանզի Ա̅Ծ զնա ընկալաւ ։ * Դու ո՞վ ես՝ որ դատես
զայլոյ ծառայ ։ իւրում Տ̅ն կայ՝ կամ անկանի
։ բայց կացցէ՝ զի կարող է Տ̅ր հաստատել զնա։
5 * Ոմն պահէ օրըստօրէ. և ոմն պահէ զօրհանապազ
6 ։ իւրաքանչիւրոք զիւր միտս հաճեսցի ։ * Որ
խորհի զօրն՝ Տ̅ն խորհի ։ և որ ոչն խորհի զօրն,
Տ̅ն չխորհի ։ և որ ուտէ՝ Տ̅ն ուտէ՝ և գոհանայ
զի̅յ ։ և որ ոչն ուտէ՝ Տ̅ն չուտէ՝ և գոհանայ
7 զԱ̅Յ ։ * Զի ոչոք 'ի մէնջ անձամբ կեայ ։ և ոչ

8 անձամբ մեռանի։ * Եթէ կեամք՝ Տ՟ն կեամք։ և
եթէ մեռանիմք՝ Տ՟ն մեռանիմք։ և արդ՝ եթէ
9 կեամք, և եթէ մեռանիմք՝ Տ՟ն եմք։ * Քանզի 'ի
նոյն իսկ և Ք՟ս մեռաւ և եկեաց. զի մեռելոց և
10 կենդանեաց առ հասարակ տիրեսցէ։ * Դու զի՞
դատես զեղբայր քո։ կամ ընդէ՞ր անարգանես զեղբայր
քո։ Քանզի ամենեքին կալոց եմք առաջի
11 ատենին Ք՟ի։ * Զի գրեալ է. կենդանի եմ ես՝
ասէ Տ՟ր. զի ինձ կրկնեսցի ամ՟ ծունր՝ և ամ՟ լեզու
12 խոստովան եղիցի Ա՟յ։ * Ապաքէն իւրաքանչիւրոք
'ի մէնջ ընդ անձին համարս տացէ
13 Ա՟յ։ * Այսուհետև՝ մի՛ զմիմեանս դատեսցուք.
այլ առաւել զայս դիք 'ի մտի՝ չդնել գայթակղութ՟ի
14 եղբօրն։ * Զայս գիտեմ, և հաստատեալ
եմ 'ի Ք՟ս Յ՟ս, զի ոչինչ է պիղծ նովաւ։ բայց
այնմ, որ համարիցի ոք ինչ պիղծ՝ նմա է պիղծ։
15 * Զի եթէ վ՟ս կերակրոյ եղբայրն քո տրտմի՝
ոչևս սիրով գնայցես։ մի՛ կերակրովն քո զնա կո-
16 րուսաներ, վ՟ս որոյ Ք՟ն մեռաւ։ * Մի՛ հայհոյեսցի
17 բարին ձեր։ * Զի ո՛չ է արքայութ՟ին Ա՟յ
կերակուր և ըմպելի. այլ արդարութ՟ի, և խնդութ՟ի,
18 և խաղաղութ՟ի 'ի Հոգի ս՟բ։ * Զի որ յայսմ
ծառայէ Ք՟ի. հաճոյ է Ա՟յ՝ և ընտիր մարդկան։
19 * Արդ այսուհետև զհետ երթիցուք խաղաղութ՟ե
20 և շինութ՟ե՝ որ առ միմեանս է։ * Մի՛ վ՟ս կերակրոյ
քակեր զգործն Ա՟յ։ ամ՟ ինչ ս՟բ է. այլ չար
այնմ մարդոյ է՝ որ խղճիւն ուտիցէ։

21 * Լաւ է ոչ ուտել զմիս, և ոչ ըմպել զգինի.
և ո՛չ որով եղբայրն քո գայթագղի, կամ գլթէ,
22 կամ տկարանայ։ * Դու ապաքէն հաւատս ունիս.
կա՛լ առանձին առաջի Ա՟յ։ Երանի որ ոչ դատիցէ
23 զանձն, որով զննելն փորձիցէ։ * Բայց որ խղճէն,
թէպէտ և ուտիցէ՝ դատապարտեալ է՝ զի ոչ ըստ
հաւատոց։ զի ամ՟ ինչ՝ որ ոչ 'ի հաւատոց է՝ մեղք
են։ (Այլ այնմ, որ կարօղն է հաստատել զձեզ
ըստ աւետարանիս իմում. և ըստ քարոզութ՟ե
Յ՟ի Ք՟ի։ ըստ յայտնութ՟ե խորհրդոյն՝ ժամանակօքն
յաւիտենից լռեցելոյ։ և յայտնելոյ այժմիկ

'ի ձեռն գրոց մարգարէականաց՝ ըստ հրամանի
մշտնջենաւորին այ. 'ի հնազանդութիւն հաւատոյ՝
յամ հեթանոսս ծանուցելոյ. միայնոյ իմաստնոյն
Այ. 'ի ձեռն Յի Քի՝ որում փառք յաւիտեանս։
ամէն։)

ԳԼ. ԺԵ։

ԵԳ. Պարտ է մեզ՝ որք կարօղքս եմք՝ զտկարութի
1 տկարացն բառնալ։ և մի անձանց ևեթ հա-
2 ճոյ լինել։ * Այլ իւրաքանչիւրոք 'ի մէնջ ընկերին
3 հաճոյ լիցի 'ի բարիս՝ վասն շինութե։ * Քանզի
և Քս ոչ եթէ անձին հաճոյ եղև։ այլ որպ և
գրեալ է։ Նախատինք նախատչաց քոց անկան 'ի վր
4 իմ։ * Բայց որ ինչ գրեցաւն՝ 'ի մեր վարդապե-
տութիւն գրեցաւ. զի համբերութը և մխիթա-
5 րութը գրոց զյոյսն ընկալցուք։ * Այլ Ած համ-
բերութե՝ և ամ մխիթարութե, տացէ ձեզ ըզ-
նոյն խորհիլ ընդ միմեանս ըստ Յի Քի.
6 * Զի միաբանութը 'ի մի բերան փառաւոր առնի-
7 ցէք զԱծ. և զՀայր Տն մերոյ Յի Քի * Վասն
որոյ ընկալարուք զմիմեանս, որպ և Քս ընկալաւ
8 զձեզ 'ի փառս այ։ * Այլ ասեմ, թէ Քի սպա-
սաւոր թլփատութեն լինել՝ վս ճշմարտութեն այ
էր. առ 'ի հաստատուն առնելոյ զաւետիս հարցն։
9 * Այլ հեթանոսք վասն ողորմութե փառաւոր
առնեն զԱծ։ որպ և գրեալ է։ վս այսորիկ գոհա-
ցայց զքէն 'ի հեթանոսս. և անուան քում սաղ-
10 մոս ասացից։ * Եւ դարձեալ ասէ։ ուրախ եղե-
11 րուք հեթանոսք ընդ ժողովրդեան նորա։ * Եւ
դարձեալ՝ թէ օրհնեցէք ամ հեթանոսք զՏր. և
12 գովեցէք զնա ամ ժողովուրդք։ * Եւ դարձեալ
եսայի ասէ։ եղիցի արմատն յեսսեայ։ և որ կանգ-
նելոց է իշխան հեթանոսաց՝ 'ի նա հեթանոսք
13 յուսասցին։ * Այլ Ած յուսոյ՝ լի արասցէ զձեզ
ամ խնդութը և խաղաղութը։ առաւելուլ ձեզ
յուսով զօրութը Հոգւոյն սրբոյ։
14 ԵԴ. * Հաստատեալ եմ և ես յինքնին, եղբարք

իմ, վս՟ ձեր․ զի դուք լի էք բարութբ՟։ լի էք ամ՟
գիտութբ՟։ կարօղք էք զմիմեանս խրատելոյ։
15 * Այլ համարձակագոյնս գրեցի առ ձեզ, եղբարք
իմ, փոքր 'ի շատէ։ իբրեւ յիշեցուցանելով ձեզ
16 վս՟ շնորհացն՝ որք տուեալք են ինձ յԱյ՟։ * Լինել
ինձ սպասաւոր Յի՟ Քի՟ 'ի հեթանոսս։ ըղձակերտելս առնել զաւետարանն Այ՟։ զի եղիցի պատարագն հեթանոսաց ընդունելի՝ սրբեալ Հոգւովն
17 սրբով։ * Ունիմ այսուհետեւ պարծանս 'ի Քս՟ Յս՟
18 առ Այ։ * Քանզի ոչ իշխեմ խօսել ինչ՝ զոր ոչ
գործեաց Քս՟ ինեւ 'ի հնազանդութի՟ հեթանոսաց
19 բանիւք եւ արդեամբք։ * Զօրութբ՟ նշանաց եւ
արուեստից՝ զօրութբ՟ Հոգւոյն սրբոյ։ ոպ՟ ինձ
յԵէմէ եւ շուրջ մինչեւ 'ի կողմանս Իւրիկացւոց
20 լնուլ զաւետարանն Քի՟։ * Այնպէս առատացեալ
յաւետարանել։ ոչ ուր անուանեցաւ Քս՟․ զի մի
իբրեւ յայլոց հիման վերայ շինիցեմ։ այլ ոպ՟ եւ
21 գրեալ է։ * Թէ որոց ոչ պատմեցաւ վս՟ նր՟՝ տեսցեն։ եւ որոց ոչ իցէ լուեալ՝ 'ի միտ առցեն։
22 * Վս՟ որոյ շատ խափանեցայ գալ առ ձեզ։
23 * Բայց արդ ոչ եւս գոյ ինձ տեղի 'ի կողմանս յայս
սոսիկ։ եւ անձուկ յոյժ ունիմ՝ 'ի բազում ամաց
24 գալ առ ձեզ։ * Յորժամ անցանիցեմ 'ի Սպանիա՝
ակն ունիմ յանցանելն առ նոսա՝ տեսանել զձեզ․
եւ 'ի ձէնջ յուղարկիլ անդր։ եթէ նախ իսկ փոքր
25 'ի շատէ ձեօք լցայց։ * Բայց այժմ երթամ
26 յԵէմ պաշտել զսրբս։ * Քանզի հաճոյ թուեցաւ
Մակեդոնացւոյն եւ Աքայեցւոյն հաղորդութի՟ ինչ
առնել ընդ աղքատս սրբոցն՝ որք են յԵէմ։
27 * Հաճոյ թուեցաւ՝ քանզի եւ պարտականք իսկ
են նց՟․ զի եթէ հոգեւորացն նոցա հաղորդք եղեն
հեթանոսք՝ պարտին եւ մարմնաւորացն կցորդ լինել նոցա։
28 * Արդ զայս կատարեալ՝ եւ կնքեալ
29 զպտուղ նց՟՝ անցից առ ձեօք 'ի Սպանիա։ * Զայս
գիտեմ, զի 'ի գալն առ ձեզ՝ լրութբ՟ օրհնութեան
աւետարանին Քի՟ եկից։
30 ԻԵ․ * Աղաչեմ զձեզ եղբարք 'ի ձեռն Տն՟ մերոյ
Յի՟ Քի՟․ եւ սիրով Հոգւոյն սրբոյ՝ պատերազմակից

31 լինիլ ինձ յաղօթս վ̅ս իմ առ Ա̅Ծ : * Զի ապրե-
ցայց յապստամբացն, որք 'ի Հրէաստանի են : և
պաշտօնն իմ որ յեէմ, ընդունելի լիցի սրբոյն :
32 * Զի խնդութ̅բ եկեալ առ ձեզ 'ի կամս ա̅յ,
հանգեայց ընդ ձեզ : * Եւ Ա̅Ծ խաղաղութե̅ եղի-
ցի ընդ ձեզ ամենեսին. ամէն :

Գ·Լ· Ժ·Զ:

1 Յանձն առնեմ ձեզ զփիբէ զքոյր մեր, որ է սպա
2 սաւոր եկեղեցւոյն կենքրայւոյ : * Զի զնա ըն-
կալջիք 'ի Տ̅ր արժանի սրբոց : և վերակացու լի-
նիջիք նմա' յոր պէտս իրաց և կոչեսցէ զձեզ :
քանզի և նա վերակացու եղև բազմաց. և ինձ
3 իսկ գլխովին : * Ողջոյն տաջիք պրիսկեայ' և ակ-
4 ուղեայ' գործակցաց իմոց 'ի Ք̅ս Յ̅ս : * (Որք ընդ
անձին իմոյ զիւրեանց պարանոցս մատուցին : զորոց
ոչ ես միայն գոհանամ, այլ և ա̅մ եկեղեցիք հե-
5 թանոսաց :) * Եւ առ տնին եկեղեցւոյն նոցա : Ող-
ջոյն տաջիք եպենետեայ սիրելւոյ իմոյ. որ է պտուղ
6 ասիացւոց 'ի Ք̅ս : * Ողջոյն տաջիք մարիայ' որ
7 բազում վաստակս վաստակեաց 'ի ձեզ : * Ողջոյն
տաջիք անդրոնիկեայ, և յունեայ ազգականաց իմոց'
և գերեկցաց. որք երևելիքն իսկ են յառաքեալս :
8 որք և յառաջ իսկ քան զիս եղեն 'ի Ք̅ս : * Ող-
9 ջոյն տաջիք ամպղեայ սիրելւոյ իմոյ 'ի Տ̅ր : * Ող-
ջոյն տաջիք ուրբանեայ գործակցի իմոյ 'ի Տ̅ր : և
10 ստաքեայ սիրելւոյ իմոյ : * Ողջոյն տաջիք ապեղեայ'
11 որ ընտիրն է 'ի Տ̅ր : * Ողջոյն տաջիք նոցա, որք յա-
րիստաբուղեայ տանէ անտի են : ողջոյն տաջիք հե-
րոդիոնայ ազգականի իմոյ : ողջոյն տաջիք այնոցիկ'
որք 'ի նարկիսեայ տանէն իցեն 'ի Տ̅ր :
12 * Ողջոյն տաջիք տրիփոնեայ' և տրիփոսեայ վաս-
տակաւորաց 'ի Տ̅ր : ողջոյն տաջիք պերսիդեայ սի-
րելւոյ, որ բազում վաստակս վաստակեաց 'ի Տ̅ր :
13 * Ողջոյն տաջիք ռուփեայ ընտրելոյ 'ի Տ̅ր . և մօր
14 նորա և իմոյ : * Ողջոյն տաջիք ասինկրիտեայ,
փղեգոնտեայ, երմեայ, պատրոբայ, երմեայ. և

15 որք ընդ նոսա եղբարք իցեն: * Ողջոյն տուջիք Փի-
լողոգեայ, և Յուլեայ. Ներեայ՝ և քեռ նր. և Ո-
ղիմպեայ: և որք ընդ նոսա սրբք ամենեքին իցեն:
16 * Ողջոյն տուջիք միմեանց 'ի համբոյր սրբութե:
17 ԻԶ. ողջոյն տան ձեզ ամ եկեղեցիք Քի: * Աղաչեմ
զձեզ եղբարք՝ դիտել զայնպիսիսն, որք զհերձ-
ուածս և զգայթագղութիս առնիցեն արտաքոյ վար-
դապետութեն՝ զոր դուքն ուսայք: և խորշեցարուք
18 'ի նոցանէ: * Զի այնպիսիքն Տն մերոյ Քի ոչ
ծառայեն, այլ իւրեանց որովայնին: և քաղցրաբա-
նութբ, և օրհնութբ պատրեն զսիրտս անմեղաց:
19 * Զի ձեր հնազանդութիւնդ առ ամենեսեան հա-
մբաւեալ է: և արդ՝ 'ի ձեզ ուրախ եմ: բայց կամիմ
զձեզ իմաստունս լինել 'ի բարիս՝ և անմեղս 'ի
20 չարիս: * Եւ Ած խաղաղութե խորտակեսցէ զսա-
տանայ ընդ ոտիւք ձերովք մերձ ընդ մերձ: Շնորհք
21 Տն մերոյ Յի Քի ընդ ձեզ: * Ողջոյն տայ ձեզ
Տիմոթէոս եղբայր և գործակից իմ: և Ղուկիոս.
և Յասոն. և Սոսիպատրոս ազգականք իմ:
22 * Ողջոյն տամ ձեզ՝ և ես Տերտիոս, որ զթուղ-
23 թս գրեցի՝ 'ի Տր: * Ողջոյն տայ ձեզ Գայիոս
ասպնջական իմ, և ամ եկեղեցւոյն: ողջոյն տայ
ձեզ Երաստոս շահապ քաղաքիս. և Կոշտոս եղ-
24 բայր: * Շնորհք Տն մերոյ Յի Քի ընդ ձեզ ընդ
25 ամենեսին: ամէն: * Այլ այնմ, որ կարօղն է հաս-
տատել զձեզ ըստ աւետարանին իմում, և ըստ
քարոզութեն Յի Քի: ըստ յայտնութե խորհր-
դոյ՝ ժամանակօքն յաւիտենից լռեցելոյ:
26 * (Եւ յայտնեցոյ այժմիկ 'ի ձեռն գրոց մարգարէ-
ականաց. ըստ հրամանի մշտնջենաւորին Այ. 'ի
հնազանդութի հաւատոց) յամ հեթանոսս ծա-
27 նուցելոյ: * Միայնոյ իմաստնոյն այ 'ի ձեռն Յի
Քի. նմա պատիւ և փառք յաւիտեանս յաւիտենից.
ամէն:

ԹՈՒՂԹ
ԵՐԱՆԵԼՒՈՅՆ
ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ
ԱՌ ԿՈՐՆԹԱՑԻՍ ԱՌԱՋՆԵՐՈՐԴ։

Գլուխ Առաջներորդ։

1 ՊՕՂՈՍ ԿՈՉԵՑԵԱԼ
առաքեալ Յի՟ Քի՟ կամօքն Այ՟. և սոսթենէս եղ-
2 բայր։ * Եկեղեցւոյդ Այ՟՝ որ է 'ի կորնթոս՝ նուի-
րելոյ 'ի Քս՟ Յս՟, կոչեցելոց սրբոց՝ ամենեքումբք
հանդերձ, որք կարդան զանուն Տն՟ մերոյ Յի՟
Քի՟ յա՟մ տեղիս նոցա՝ և մեր։
3 * Շնորհք ընդ ձեզ և խաղաղութի՟։ յԱյ՟ Հօրէ
4 մերմէ, և 'ի Տէ՟ Յէ՟ Քէ՟։ * Գոհանամ զԱյ՟
իմոյ յա՟մ ժամ վս՟ ձեր՝ 'ի վերայ շնորհացն Այ՟՝
որք տուեալք են ձեզ 'ի Քս՟ Յս՟։
5 * Զի յա՟մի մեծացայք դուք նովաւ, ա՟միւ բանիւ,
6 և ա՟միւ գիտութ՟բ։ * Ոպ՟ և վկայութիւն իսկ Այ՟
7 հաստատեցաւ 'ի ձեզ։ * Զի դուք մի նուազիցիք՝
և մի իւիք շնորհօք։ ակնկալեալք յայտնութե՟ Տն՟
8 մերոյ Յի՟ Քի՟։ * Որ և հաստատեսցէ զձեզ մինչև
'ի կատարած՝ անարատս՝ յօրն Տն՟ մերոյ Յի՟ Քի՟։
9 * Հաւատարիմ է Ած՟. որով կոչեցայք 'ի հաղորդութի՟
10 Որդւոյ նր՟ Տն՟ մերոյ Յի՟ Քի՟։ * Աղաչեմ
զձեզ եղբարք անուամբ Տն՟ մերոյ Յի՟ Քի՟։ զի
զնոյն բան ասիցէք ամենեքեան։ և մի իցեն 'ի

ձեր հերձուածք ։ քանզի էիք հաստատեալք ՚ի
նոյն միտս և ՚ի նոյն հանճար ։
11 * Ազդ եղև ինձ վս̄ ձեր եղբարք ՚ի քղո՛եացւոց
12 անտի, թէ հակառակութիւնք են ՚ի ձեզ ։ * Ե՛ւ այդ
ասեմ իսկ․ եթէ իւրաքանչիւրոք ՚ի ձէնջ ասէ՝
ես պօղոսեան եմ, և միւսն եթէ ես ապօղոսեան ։
և միւսն եթէ ես կեփայեան ։ և միւսն եթէ ես
13 քն̄եան ։ * Իսկ արդ՝ բաժանեալ ի՞նչ իցէ քս̄ ։
միթէ պօղոս ՚ի խաչ ելեալ իցէ վս̄ ձեր․ կամ յա
14 նուն պօղոսի՝ մկրտեցայք ։ * Գոհանամ զա̄յ իմոյ՝
զի ոչ զոք ՚ի ձէնջ մկրտեցի՝ բայց միայն զկրիսպոս՝
15 և զգայիոս՝ զի մի ոք ասիցէ ։ * Թէ յիմ
16 անուն մկրտեցայք ։ * Տալ ետու կնիք և տանն
ստեփաննեայ ։ այլ ոք ոչ գիտեմ ամենևին թէ
17 մկրտեցի ։ * Զի ոչ առաքեաց զիս քս̄ մկրտել՝
այլ աւետարանել ։ ոչ ճարտարութբ̄ բանից, զի
մի ընդունայն լիցի խաչն քի̄ ։
18 Ա․Զ ։ * Զի ճառ խաչին, կորուսելոյն յիմարու-
19 թի̄ է․ այլ փրկելոցս մեզ զօրութի̄ այ̄ ։ * Զի
գրեալ է ։ կորուսից զիմաստութի̄ իմաստնոց․ և զխոր
հուրդս խորհրդականաց արհամարհեցից ։
20 * Ուր իմաստունն․ ուր դպիրն․ ուր քննիչ աշխար-
հիս այսորիկ ։ ո՞չ ապաքէն յիմարեցոյց Ած̄ զիմաս-
21 տութի̄ աշխարհիս այսորիկ ։ * Քանզի իմաստու
թբ̄ն Այ̄ ոչ ծանեաւ աշխարհ իմաստութբ̄ն զԱծ̄․
հաճեցաւ Ած̄՝ յիմարութբ̄ քարոզութե̄ն՝ ապրեցու
22 ցանել զհաւատացեալս ։ * Իսկ որովհետև հրէ-
այք նշան հայցեն․ և հեթանոսք զիմաստութի̄
23 խնդրեն ։ * Մեք քարոզեսցուք զխաչելեալն քս̄ ։
հրէից գայթագղութի̄․ և հեթանոսաց յիմարութի̄ ։
24 * Բայց նոցին իսկ կոչեցելոյն հրէից և հեթանոսաց՝
զքս̄, այ̄ զօրութի̄՝ և այ̄ իմաստութի̄ ։ * Զի
25 յիմարն այ̄ իմաստնագոյն է քան զմարդիկ ։ և
26 տկարն այ̄ զօրագոյն է քան զմարդիկ ։ * Թէպէտ
և զձեր իսկ կոչումնդ տեսէք *եղբարք ։ զի ոչ
բազումք իմաստունք ըստ մարմնոյ․ և ոչ բազումք
27 հզօրք․ և ոչ բազումք ազնո՛ւականք ։ * Այլ զյի-
մարս աշխարհիս ընտրեաց Ած̄, զի յամօթ արա-

ցէ զիմաստունս : և զտկարս աշխարհիս ընտրեաց
28 Ած, զի յամօթ արասցէ զհզօրս : * Եւ զանատոհմս
աշխարհիս և զարհամարհեալս ընտրեաց Ած՝ և
29 զոչինչսն. զի զէսն խափանեսցէ : * Ոպ զի մի
30 պարծեսցի ամ մարմին առաջի նր : * Զի 'ի նմանէ
դուք էք 'ի Քսի Յսի : որ եղև մեզ իմաստութի
յԱյ. արդարութի, և փրկութի, և սրբութի :
31 * Զի որպէս գրեալ է: որ պարծին, 'ի Տէր պարծեսցի :

ԳԼ. Բ:

1 Եւ ես թէպէտ և եկի առ ձեզ եղբարք՝ ոչ իբր
առաւելութե ինչ բանից իմաստութե պատմել
2 ձեզ զվկայութիւն Քի : * Զի ոչ եթէ 'ի մտի
եդի գիտել ինչ 'ի ձեզ՝ բայց միայն զՅս Քս՝ և
3 զնոյն 'ի խաչ ելեալ : * Եւ ես տկարութբ՝ և եր-
կիւղիւ և դողութբ բազմաւ եղէ առ ձեզ :
4 * Եւ բանն իմ, և քարոզութիւն, ոչ պատիր բանք
իւք իմաստութե՝ այլ արդեամբք Հոգւոյն և զօ-
5 րութեամբ : * Զի հաւատք ձեր մի իցեն իմաս-
տութեամբ մարդկան, այլ զօրութեամբ այ :
6 * Զիմաստութիւն խօսիմք ընդ կատարեալս . զի-
մաստութիւն, ոչ զաշխարհիս այսորիկ. և ոչ զիշ-
խանաց աշխարհիս այսորիկ զխափանելեացս :
7 * Այլ խօսիմք զայ իմաստութիւնն ծածուկ խոր-
հրդով. զոր յառաջ քան զյաւիտեանս սահմանեց
8 Ած 'ի փառս մեր : * Զոր ոչոք յիշխանաց աշխար-
հիս այսորիկ ծանեաւ. զի եթէ էր ծանուցեալ՝
ոչ արդեօք զՏէրն փառաց 'ի խաչ հանէին :
9 * Այլ որպէս և գրեալ է. զոր ակն ոչ ետես, և
ունկն ոչ լուաւ, և 'ի սիրտ մարդոյ ոչ անկաւ,
զոր պատրաստեաց Ած սիրելեաց իւրոց :
10 * Այլ մեզ յայտնեաց Ած Հոգւովն իւրով. զի
11 Հոգին զամենայն քննէ՝ և զխորս այ : * Զի ո ոք
'ի մարդկանէ գիտէ ինչ զմարդոյն, եթէ ոչ հոգի
մարդոյն՝ որ 'ի նմա. նոյնպէս և ոչ զայն ոք գի-
12 Բկ. տէ՝ եթէ ոչ Հոգին Այ : * Այլ մեք ոչ ե-

թէ զհոգի աշխարհիս առաք՝ այլ զհոգին որ յայ՟։
զի ծանիցուք զայն՝ որ յԱյ՟ն շնորհեցաւ մեզ։
13 * Եւ՛ զոր խօսիմքս՝ ոչ եթէ մարդկեղէն ուսմամբ
ճարտարութ՟բ բանից․ այլ վարդապետութ՟բ հոգւոյն
ընդ հոգեւորս զհոգեւորս համեմատեմք։
14 * Քանզի շնչաւոր մարդ ոչ ընդունի զհոգւոյն
Այ՟՝ զի յիմարութի՟ն է նմա․ եւ ոչ կարէ գիտել՝
15 եթէ հոգեպէս քննի։ * Իսկ հոգեւորն քննէ
16 զամենայն․ եւ ինքն յումեքէ ոչ քննի։ * Իսկ արդ
ո՞վ գիտաց զմիտս Տն՟, որեւ խրատատու լինիցի նմա․
այլ մեք զմիտս Քի՟ ունիմք։

ԳԼ․ Գ․

1 Եւ՛ ես եղբարք՝ ոչ կարացի խօսել ընդ ձեզ իբրեւ
ընդ հոգեւորս՝ այլ իբրեւ ը՟ մարմնաւորս։
2 * Իբրեւ տղայոց ՚ի Քս՟, զկաթն ջամբեցի ձեզ՝ եւ ոչ
զկերակուր․ զի ոչեւս կարէիք․ նաեւ արդ իսկ ոչ
3 կարէք․ քանզի դեռ մարմնաւորք էք։ * Ուր եւ
արդ են իսկ ՚ի ձեզ հեռ եւ նախանձ․ ո՞չ ապաքէն
մարմնաւորք էք՝ եւ ըստ մարդկան գնայք։
4 * Յորժամ ասէ ոք ՚ի ձէնջ՝ ես պօղոսեան եմ, եւ
միւսն թէ ես ապօղոսեան՝ ոչ մարդիկք էք․ իսկ
արդ՝ ո՞վ է պօղոս․ կամ ո՞վ է ապօղոս։
5 * Պաշտօնեայք որովք հաւատացէք, եւ իւրաքանչիւր
6 ո՟պ եւ Տ՟ն ետ։ * Ես տնկեցի, ապօղոս ջուր
ետ․ այլ Ած՟ աճեցոյց։
7 * Այսուհետեւ՝ ոչ այն ինչ ոք է՝ որ տնկեաց․
եւ ոչ այն, որ զջուրն ետ․ այլ որ աճեցոյցն Ած՟։
8 * Որ տնկեացն եւ որ զջուրն ետ՝ մի են․ բայց
իւրաքանչիւրոք զիւր վարձս առնուցու՝ ըստ իւրում
9 վաստակոց։ * Զի Այ՟ գործակիցք եմք․
10 Այ՟ արդիւն էք․ Այ՟ շինուած էք։ * Ըստ շնորհացն
Այ՟՝ որք տուեալ են ինձ․ իբրեւ իմաստուն
ճարտարապետ զհիմն եդի․ բայց այլ է՝ որ շինէ․
այլ իւրաքանչիւրոք զգոյշ լիցի թէ որպէս շինիցէ։
11 * Զի զհիմն այլոք ոչ կարէ դնել քան զեդեալն՝
12 որ է Յս՟ Քս՟։ * Եթէ ոք շինէ ՚ի վերայ հիմանս
այսորիկ՝ ոսկի՝ արծաթ՝ ականս պատուականս․

13 փայտ՝ խոտ՝ եղէգն ։ * Իւրաքանչիւրոյ գործն յայտնելոց
է. զի օրն տն̄ ընտրեսցէ, զի հրով յայտնելոց է։
14 * Եւ զիւրաքանչիւրոյ գործն զիարդ և իցէ՝ հուրն
15 փորձեսցէ ։ * Եթէ ուրուք գործն, զոր շինեաց՝
կայցէ՝ վարձս առցէ. և եթէ ուրուք գործն այրեսցի՝ տուժեսցի. բայց ինքն կեցցէ. այլ այնպէս՝
16 որպէս թէ 'ի հուր ։ * Ո՞չ գիտէք՝ եթէ տաճար
էք Այ̄ և հոգի Այ̄ բնակեալ է 'ի ձեզ։
17 * Եթէ ոք զտաճար Այ̄ ապականէ, ապականեսցէ
զնա Ած̄. զի տաճար Այ̄ սուրբ է. որ էք դուք ։
18 * Մ՛ի ոք զանձն խաբեսցէ՝ եթէ ոք կամեսցի 'ի
ձէնջ իմաստուն լինել յաշխարհիս յայսմիկ, յիմար
19 լիցի՝ զի եղիցի իմաստուն ։ * Զի իմաստութի̄
աշխարհիս այսորիկ յիմարութի̄ է առաջի Այ̄.
քանզի գրեալ է՝ եթէ որ ըմբռնէ զիմաստունս 'ի
20 խորամանկութեան իւրեանց ։ * Եւ դարձեալ՝ եթէ Տր̄
ճանաչէ զխորհուրդս իմաստնոց՝ զի են ընդունայնք։
21 * Այսուհետև՝ մի ոք պարծեսցի 'ի մարդկանէ ։
22 * Զի ամ̄ ինչ ձեր է. եթէ պօղոս, եթէ ապողոս, եթէ կեփաս, եթէ աշխարհ, եթէ կեանք,
եթէ մահ, եթէ որկանս, եթէ հանդերձեալքն.
23 ամենայն ինչ ձեր է ։ * Դուք Քի̄. Քս̄ Այ̄ ։

ԳԼ. Դ։

1 Այսպէս համարեսցին զմեզ մարդիկ, իբրև զպաշտօնեայս Քի̄ և հազարապետս խորհրդոցն Այ̄։
2 * Արդ՝ խնդիր է 'ի մէջ հազարապետաց՝ եթէ ոք
3 հաւատարիմ գտցի։ * Այլ ինձ և այս անարգանք
են, եթէ 'ի ձէնջ դատեցայց՝ կամ բնաւ իսկ 'ի
4 մարդկանէ. նաև զանձն իմ ոչ քննեմ, * Զի
ոչինչ գիտեմ անձին իմոյ. այլ ոչ եթէ այսու
5 արդարանամ, զի որ քննէն զիս՝ Տր̄ է ։ * Այսուհետև, մի յառաջքան զժամանակն դատէք. մինչև
եկեսցէ Տր̄՝ որ լուսաւոր արասցէ զդաղտնիս խաւարի. և յայտնեսցէ զխորհուրդս սրտից. և ապա իւ-
6 րաքանչիւրոյ գովութիւն եղիցի յԱյ̄ ։ * Զայս եղբարք առակեցի յանձն իմ, և յապօղոս, վասն ձեր.

զի ՚ի մէնջ ուսջիք մի ինչ առաւել քան զգրեալն
խորհել · զի մի այր՝ քան զընկեր հպարտանայցէք
7 ՚ի վերայ ընկերին : * Իսկ արդ ո՞վ է՝ որ
քննիցէ զքեզ · զի՞նչ ունիս՝ որ ոչ է առեալ · և
8 եթէ առեր՝ զի՞ պարծիս իբրև զչառօղ : * Արդէն
իսկ յագեալ իցէք՝ և արդէն մեծացայք՝ առանց
մեր թագաւորեցիք · և երանի թէ թագաւորէիք՝
9 զի և մեք ընդ ձեզ թագաւորէաք : * Ինձ այսպէս
թուի՝ եթէ զմեզ զառաքեալս յետնորդս արար
Ած̅՝ իբրև զմահապարտս · զի տեսիլ եղեաք աշխարհի,
և հրեշտակաց, և մարդկան :
10 * Մեք յիմարք վասն Քի̅ · և դուք իմաստունք
՚ի Քս̅ · մեք տկարք և դուք հզօրք · դուք փառաւորեալք՝
11 և մեք անարգք : * Մինչև ցայսօր
ժամանակի՝ և քաղցեաք՝ և ծարաւեաք՝ և մերկ
գնայաք՝ և կափահարեաք · և անհանգիստք եղեաք:
12 * Եւ աշխատեցաք ձեռօք մերովք : բամբասէին
զմեզ՝ օրհնէաք · հալածէին, յանձն առնուաք:
13 * Հայհոյէին, աղաչէաք · իբրև առակ նշաւակի եղեաք
ամենայն աշխարհի · ամենեցուն փարելի լինիլ
14 մինչև ցայժմ : * Ո՛չ եթէ ամօթ ինչ առնելով
զձեզ գրեմ զայս · այլ իբրև զորդիս սիրելիս
15 խրատեմ : * Թէպէտ և բիւր դաստիարակս ունիջիք
՚ի Քս̅ այլ ո՛չ եթէ բազում հարս · զի ՚ի
16 Քս̅ Յս̅ աւետարանաւն ես ծնայ զձեզ : * Արդ՝ աղաչեմ
զձեզ նմանօղք ինձ եղիջիք՝ որպէս և ես
17 Քի̅ : * Վասն այնորիկ առաքեցի առ ձեզ զտիմոթէոս՝
որ է իմ որդի սիրելի՝ և հաւատարիմ ՚ի
Տր̅ · որ և յիշեցուսցէ ձեզ զճանապարհս իմ, որ
՚ի Քս̅ Յս̅ · որպէս և ամենայն ուրեք՝ յամենայն
18 եկեղեցիս ուսուցանեմ : * Որպէս թէ չիցեմ գալոց
19 առ ձեզ՝ ոմանք հպարտացան : * Այլ եկից
հուպ ընդ հուպ՝ եթէ Տր̅ կամեսցի · և ՚ի միտ
առից ո՛չ զբանս հպարտացելոցն, այլ զզօրութիւն:
20 * Զի ո՛չ եթէ բանիւք է արքայութիւն Այ̅, այլ
21 զօրութե̅բ : * Արդ ի՞չ կամիք՝ գաւազանաւ եկից
առ ձեզ, եթէ սիրով հոգւոյն՝ հեզութե̅, և արդարութե̅,
և խոնարհութե̅ :

Գլ. Ե:

1 Բնաւ և անուանի լսի 'ի ձեզ ընդէր պոռնկու-
թի՛ւն և այնպիսի պոռնկութի՛ւն որ ոչ և 'ի հեթա-
2 նոսս՝ ոպ̃ թէ զկին հօր իւրոյ ոք ունել: * Եւ դուք
հպարտացեալ էք. և ոչ առաւել սգացարուք:
զի բարձցի 'ի միջոյ ձերմէ՝ որ զգործն զայն գոր-
3 ծեաց: * Զի ես թէպէտ մարմնով մեկուսի եմ,
սակայն հոգւով մերձ եմ: բայց արդէն իսկ իբրև
'ի մօտոյ ընտրեցի, զայն՝ որ այնպէսն գործեաց:
4 * Յանուն Տն̃ մերոյ Յի̃ Քի̃, ժողովել ձեր 'ի
միասին՝ և իմոյ հոգւոյս՝ զօրութբ̃ հանդերձ Տն̃
5 մերոյ Յի̃ Քի̃: * Մատնել զայնպիսին սատանայի
'ի սատակումն մարմնոյ. զի ոգին ապրեսցի յաւուրն
Տն̃ մերոյ Յի̃ Քի̃:
6 * Ոչ բարւոք են պարծանքդ ձեր: ո՞չ գիտէք՝
եթէ փոքր մի խմոր զամ̃ զանգուածն խմորէ:
7 * Սրբեցէք 'ի բաց զհին խմորն՝ զի եղիջիք նոր զան
գուած, ոպ̃ էքդ անխմորք: քանզի զատիկ մեր զե
8 նաւ Քս̃: * Այսուհետև տարացուք տօնս. մի 'ի
խմորն հին. և մի 'ի խմորն չարութե̃ և անզգա-
մութե̃. այլ յանխմորն սրբութե̃ և ճշմարտու-
9 ԻԴ. թեան: * Գրեցի ձեզ 'ի թղթի այդր չխառ
10 նակիլ ընդ պոռնիկս: * Եւ ոչ եթէ ընդ պոռ-
նիկս աշխարհիս այսորիկ՝ կամ ընդ ագահս և ընդ
յափշտակօղս՝ կամ ընդ կռապաշտս: ապա թէ
11 ոչ՝ պարտէիք և յաշխարհէ իսկ ելանել: * Բայց
արդ գրեցի ձեզ չխառնակիլ. եթէ ոք եղբայր ան-
ուանեալ, կամ պոռնիկ իցէ, կամ կռապաշտ՝
կամ ագահ՝ կամ բամբասօղ՝ կամ արբեցօղ՝ կամ
յափշտակօղ՝ ընդ այնպիսում և զհաց մի ուտել:
12 * Զի՞ կայ իմ և զարտաքինսն դատելոյ: ո՞չ ապա
13 քէն դուք զներքինսն դատիցէք: * Եւ զարտաքինսն
Ած̃ դատեսցէ: բարձէք զչարն 'ի միջոյ ձերմէ:

Գլ. Զ:

1 Իշխէ ոք 'ի ձէնջ եթէ իրք ինչ իցեն ընդ ըն-
կերի իւրում, դատիլ առաջի անիրաւաց՝ և ոչ

2 առաջի սրբոց: * Եթէ ո՞չ գիտէք՝ զի սուրբք զաշխարհ դատեն: և եթէ ձեօք դատի աշխարհ՝ ապա
3 ոչ էք արժանի անարգ ատենից: * Ո՞չ գիտէք՝ եթէ զհրեշտակս դատեմք, թող թէ զերկրաւորս:
4 * Զերկրաւոր ատեանս եթէ յանձն առնուցուք, զանարգսն եկեղեցւոյ դատաւորս նստուցէք:
5 * Առ ամօթոյ ձերոյ ասեմ. այնչափ ոչ գոյ ոք իմաստուն ՚ի ձեզ, որ կարիցէ իրաւունս ընտրել
6 ՚ի մէջ եղբօր իւրոյ: * Այլ եղբայր ընդ եղբօր դա-
7 տի. և զայն ՚ի մէջ անհաւատից: * Եւ արդ՝ ամենևին իսկ պարտութիւն է ՚ի ձեզ: զի դատաստանս իսկ գոն ՚ի միջի ձերում: ընդէ՞ր ոչ դուք զրկիք:
8 և ոչ դուք առաւել նեղիք: * Այլ դուք զրկէք՝
9 և նեղէք. և այդ զեղբարս ևս: * Եթէ ո՞չ գիտէք՝ զի անիրաւք զարքայութիւն Այ̅ ոչ ժառանգեն. մի խաբիք՝ ոչ պոռնիկք, ոչ կռապաշտք,
10 ոչ շունք: * Ո՛չ իգացեալք, ոչ արուագէտք, ոչ գողք, ոչ ագահք, ոչ արբեցողք, ոչ բամբասողք, և ոչ յափշտակողք զարքայութի Այ̅
11 ժառանգեն: * Եւ դուք այնպիսիք ոմանք էիք: այլ լուացարուք՝ այլ սրբեցարուք՝ այլ արդարացարուք յանուն Տն̅ մերոյ Յի̅ Քի̅, և ՚ի հոգին Այ̅ մերոյ:
12 * Ամենայն ինչ ինձ մարթ է՝ այլ ոչ ամ̅ ինչ օգուտ է: ամ̅ ինչ ինձ մարթ է, այլ ոչ եթէ ես
13 ընդ իշխանութբ̅ ուրուք լինիցիմ: * Կերակուր որովայնի, և որովայն կերակրոյ: այլ Ած̅ զսա՝ և զնոսա խափանեսցէ: բայց մարմին ոչ պոռնկութե̅,
14 այլ Տն̅՝ և Տր̅ մարմնոյ: * Այլ Ած̅՝ որ և զՏրն̅ յարոյց. և զձեզ յարուսցէ զօրութբ̅ իւրով:
15 * Ո՞չ գիտէք՝ եթէ մարմինք ձեր անդամք են Քի̅: արդ առեալ զանդամս Քի̅, առնիցեմ զանդամս
16 պոռնկի՞: * Եթէ ո՞չ գիտէք՝ զի որ մերձենայ ՚ի պոռնիկ՝ մի մարմին է: եղիցին (ասէ) երկոքին ՚ի
17 մարմին մի: * Եւ որ մերձենայ ՚ի Տր̅՝ մի հոգի է:
18 * Փախերուք ՚ի պոռնկութե̅: ամ̅ մեղս՝ զոր և գործէ մարդ՝ արտաքոյ մարմնոյ իւրոյ է: իսկ որ պոռնկի՝ յիւր մարմին մեղանչէ:

19 * Եթէ ո՞չ գիտէք՝ զի մարմինք ձեր տաճար են Հոգւոյն սրբոյ՝ որ է ՚ի ձեզ՝ զոր ունիք յԱյ։
20 Եւ չէք անձանց տէր։ * Քանզի գնոյ գնեցայք։ փառաւոր արարէք զԱծ ՚ի մարմինս ձեր, և յոգիս․ որ է յԱյ։

Գլ․ Է։

1 Այլ վասն որոյ գրեցիքն առ իս, բարւոք է մար-
2 դոյ՝ ՚ի կին մարդ չմերձենալ։ * Բայց վասն պոռնկութե իւրաքանչիւրոք զիւր կին կալցի։ և իւրա-
3 քանչիւրոք կին զիւր այր կալցի։ * Կնոջ այր իւր զպարտսն հատուսցէ։ նոյնպէս և կին առն իւրում։
4 * Զի կին մարմնոյ իւրում ոչ իշխէ՝ այլ այրն։ նոյնպէս և այր՝ իւրում մարմնոյն ոչ իշխէ՝ այլ
5 կինն։ * Մի՛ զրկէք զմիմեանս։ բայց եթէ ինչ ՚ի միաբանութե առ ժամանակ մի, զի ուխտիցն պարապիցիք։ և դարձեալ ՚ի նոյն դարձջիք։ զի մի՛ փորձեսցէ զձեզ սատանայ վս անխառնութե ձե-
6 րոյ։ * Զայս ասեմ ներելով՝ և ոչ հրամանս տա-
7 լով։ * Քանզի կամիմ եթէ ամ մարդ լինել իբրև զիս։ այլ իւրաքանչիւրոք զիւր շնորհս ունի յԱյ՝ ոմն այսպէս՝ և ոմն այնպէս։
8 Գ․ Կ․ * Բայց ամուրեացն և այրեացն ասեմ, լաւ
9 է նց՝ եթէ կայցեն իբրև զիս։ * Ապա եթէ ոչ ունիցին ժոյժ՝ ամուսնասցին։ զի լաւ է ամուսնանալ՝
10 քան զջեռնուլ։ * Այլ կանամբեացն պատուիրեմ, ոչ ես, այլ Տր։ կնոջ յառնէ մի՛ մեկնիլ։
11 * Ապա եթէ մեկնեսցի, անայր մնասցէ՝ կամ անդրէն ընդ առն իւրում հաշտեսցի։ և առն զկին
12 իւր մի՛ թողուլ։ * Բայց այլոց ես պատուիրեմ, ոչ եթէ Տր․ եթէ որ եղբայր, կին ունիցի անհաւատ, և նմա հաճոյ իցէ բնակել ընդ նմա՝ մի՛ թող-
13 ցէ զնա։ * Եւ կին, որ ունիցի զայր անհաւատ՝ և նմա կամ իցէ բնակել ընդ նմա՝ մի՛ թողցէ զայրն։
14 * Զի սր է այրն անհաւատ կնաւն։ և սր է կինն անհաւատ արամբն։ ապա թէ ոչ՝ որդիքն ձեր
15 պիղծք են։ բայց այժմ սրք են։ * Ապա թէ ան-

*

հաւատն մեկնիցի, մեկնեսցի։ զի ոչինչ հարկ 'ի վ՟ր
կայ եղբօրն, կամ քեռն յայնպիսի իրս։ քանզի 'ի
16 խաղաղութիւն կոչեաց զմեզ Ա՟ծ։ * Զի՞ գիտես
կին դու՝ եթէ զայր քո ապրեցուսցես։ կամ զի՞
գիտես այր դու՝ եթէ զկին քո ապրեցուսցես։
17 * Եթէ ոչ՝ իւրաքանչիւր ումեք ոպ՟ և բաժանեաց
Տ՟ր, զիւրաքանչիւրոք ոպ՟ և կոչեաց Ա՟ծ՝ այնպէս
գնասցէ։ և այսպէս ընդ ամ՟ եկեղեցիս պատ-
18 ուէր տամ։ * Թլփատեալ ոք կոչեցաւ՝ մի՛ յանկասցի
անթլփատութիւն։ յանթլփատութեան ոք կոչեցաւ՝
19 մի՛ թլփատեսցի։ * Զի թլփատութիւն ոչինչ է՝ և
անթլփատութիւն ոչինչ՝ այլ պահպանութիւն Ա՟Յ
20 պատուիրանացն։ * Բայց իւրաքանչիւրոք յոր կո-
21 չումն կոչեցաւ՝ 'ի նմին կացցէ։ * Ծառայ կոչե-
ցար՝ մի՛ փոյթ լիցի քեզ. այլ թէ և կարիցես ա-
22 զատ լինել՝ քեզ այնպէս լաւ իցէ։ * Զի որ 'ի Տ՟ր
կոչեցեալ է ծառայն՝ ազատ Տ՟ն է. նոյնպ՟ և որ ա-
23 զատն կոչեցեալ է՝ ծառայ Ք՟ի է։ * Գնոց գնե-
24 ցայք՝ մի՛ լինիք ծառայք մարդկան։ * Իւրաքան-
չիւրոք յոր կոչումն կոչեցաւ՝ 'ի նմին կացցէ առաջի
25 Գ՟Դ. Ա՟Յ։ * Այլ վ՟ս կուսանաց պհրաման ինչ 'ի
Տ՟է ո՛չ ունիմ. բայց խրատ տամ, ո՟պ ողորմելոյ
26 ուրուք 'ի Տ՟է, հաւատարիմ լինել։ * Համարիմ
թէ այնպէս լաւ իցէ, (բայց). վ՟ս վտանգին որ 'ի վ՟ր
կայ, բարւոք է մարդոյ թէ այսպէս իցէ։
27 * Կապեալ ես 'ի կին՝ մի՛ խնդրեր արձակել։ ար-
28 ձակեալ ես 'ի կնոջէ՝ մի՛ խնդրեր զկին։ * Զի
եթէ ամուսնանայցես՝ ո՛չ մեղար։ և եթէ ամուս-
նանայցէ կոյսն, ո՛չ մեղաւ։ բայց զնեղութիւն մարմ-
նոյ ունիցին այնպիսիքն։ այլ ես խնայեցի 'ի ձեզ։
29 * Բայց զայս ասեմ եղբարք՝ եթէ ժամանակս կար-
ճեալ է։ այսուհետև զի որք ունիցին կանայս՝ ո՟պ
30 թէ չունիցին։ * Եւ՛ որք լային՝ ո՟պ թէ ո՛չ լայ-
ցեն։ և որք խնդային՝ որպէս թէ չխնդայցեն։ և
31 որք գնեն՝ ո՟պ թէ չունիցին։ * Եւ՛ որք վարեն
զաշխարհս՝ որպէս թէ չվայելիցեն. զի անցեալ է
32 վայելչութ՟ի աշխարհիս այսորիկ։ * Այլ կամիմ
զձեզ անհոգս լինել։ զի որ անկին է՝ հոգայ

33 զՏ՟ն, թէ ո՞պ հաճոյ լիցի Տ՟ն։ * Եւ որ կանամբին
է՝ հոգայ զաշխարհին, թէ ո՞պ հաճոյ լիցի կնոջ
34 իւրում։ և ահա մեկնեցան 'ի միմեանց։ * Անամու-
սինն և կոյսն։ զի կոյսն հոգայ զՏ՟ն՝ զի իցէ ս՟բ հոգ-
ւով և մարմնով։ և ամուսնին հոգայ զաշխարհին,
35 թէ ո՞պ հաճոյ լիցի առն իւրում։ * Այլ զայս վ՟ս
ձերոյ օգտի ասեմ. ո՛չ եթէ խեղդ ինչ արկանեմ
ձեզ։ այլ վ՟ս պարկեշտութե՝ և հպատակութե Տ՟ն
36 առանց զբաղանաց։ * Ապա թէ ոք ամօթ համա-
րիցի վ՟ս կուսին իւրոյ՝ եթէ իցէ ելեալ ըստ չափ.
և այնպէս ինչ պարտ իցէ լինել. զոր կամիցի՝
37 արասցէ. ո՛չ մեղանչէ, ամուսնասցի։ * Իսկ որ
հաստատեալ է 'ի սրտի իւրում, և վտանգ ինչ
ո՛չ իցէ նմա, զիշխանութի ունի 'ի վ՟ր կամաց իւ-
րոց. և զայն ընտրեաց 'ի սրտի իւրում, պահել
38 զկոյսն իւր՝ բարւոք առնէ։ * Եւ որ ամուսնացու-
ցանէ զկոյս իւր՝ բարւոք առնէ։ և որ ոչ ամուս-
39 նացուցանէ՝ լաւ ևս առնէ։ * Կին կապեալ է՝ ցոր
քան ժամանակս կենդանի է այր ն՟ր։ ապա եթէ
ննջիցէ այր ն՟ր՝ ազատ է. ում կամիցի ամուսնասցի.
40 բայց միայն Տ՟ր։ * Բայց երանելի ևս է՝ թէ այն-
պէս կացցէ ըստ իմում խրատու։ Ես այսպէս հա-
մարիմ։ թէ և յիս իցէ հոգի Ա՟յ։

ԳԼ. Ը։

1 Այլ վ՟ս զոհից կռոցն գիտեմք՝ եթէ ամենե-
ԳԵ. քեան զգիտութի ունիմք։ գիտութի հպար-
2 տացուցանէ. այլ սէր շինէ։ * Եթէ ոք կամիցի
գիտել ինչ, չև ևս գիտաց՝ ո՞պ արժանն էր գիտել։
3 * Բայց որ սիրէ զԱ՟ծ, նա՛ է տեղեկացեալ 'ի
4 նմանէ։ * Այլ վ՟ս կերակրոյն զոհելոց՝ գիտեմք
եթէ ոչինչ իսկ կուռքդ են յաշխարհի։ զի չի՛ք
5 ոք Ա՟ծ բայց 'ի միոյն։ * Զի թէպէտ և իցեն ան-
ուանեալ Աստուածք՝ եթէ յերկինս, և եթէ յերկ-
րի։ (ո՞պ և են ա՟ծք բազումք՝ և տեարք բազումք։)
6 * Այլ մեզ մի է Ա՟ծ հայր՝ յորմէ ա՟մ, և մեք
'ի նա։ և մի Տ՟ր Յ՟ս Ք՟ս, որով ա՟մ, և մեք նո-

7 մաւ ։ * Այլ ոչ յամենեսեան գիտութիւն է ։ ոմանք
առ խղճի մտաց մինչև ցայժմ զկռոյն իբրև զզո-
հեալ ուտեն ։ և խիղճ մտաց նց՟ քանզի տկար է ,
8 պղծի ։ * Այլ կերակուր զմեզ առաջի այ՟ ոչ կա-
ցուցանէ ։ ոչ եթէ չուտեմք՝ պակասիմք ինչ ․ և
9 ոչ եթէ ուտեմք, առաւելումք ինչ ։ * Բայց զգոյշ
լերուք՝ դուցէ իշխանութիւնդ ձեր այդ , գայթակ-
10 ղութիւն լինիցի տկարաց ։ * Եթէ ոք տեսանիցէ
զքեզ՝ որ զգիտութիւնդ ունիս՝ բազմեալ 'ի մեհե-
նի՝ ո՞չ ապաքէն խիղճ մտաց նր՟, որ տկարութի՟
զգածեալ է՝ անդրէն շինիցի ուտել զզոհեալսն ։
11 * Եւ կորնչիցի տկար եղբայրն 'ի քում գիտութե ․ վս՟
12 որոյ Քս՟ն մեռաւ ։ * Եւ այնպէս յանցուցեալ յեղ
բարս, և զխիղճ մտաց տկարացն զայրացուցեալ՝ 'ի
13 Քս՟ մեղանչէ ։ * Վս՟ որոյ՝ թէ կերակուր գայ-
թագղեցուցանէ զեղբայրն իմ, ոչ կերիցից զմիս յաւի-
տեան ։ զի մի՛ զեղբայրն իմ գայթագղեցուցից ։

Գլ․ Թ․

1 Ո՞չ ապաքէն ազատ եմ, ո՞չ ապաքէն առաքեալ
եմ, ո՞չ ապաքէն զՏր՟ մեր Յս՟ Քս՟ աչօք ի-
մովք տեսի ։ ո՞չ ապաքէն գործ իմ դուք էք 'ի
2 Տր՟ ։ * Թէպէտ և այլոց չիցեմ առաքեալ՝ այլ
դէպ ձեզ եմ ։ զի կնիք իսկ առաքելութե՟ իմոյ
դուք էք 'ի Տր՟ ։
3 * Իմ պատասխանի՝ որ զիս հարցանիցեն՝ այս է ։
4 * Միթէ ո՞չ ունիցիմք իշխանութի՟ ուտել և ըմ-
5 պել ։ * Միթէ ո՞չ ունիցիմք իշխանութի՟ զքոյր
կանայս շրջեցուցանել ընդ մեզ ․ ոպ՟ և այլ առա-
քեալքն ․ և եղբարքն Տն՟՝ և կեփաս ։
6 * Եթէ միայն ես և բառնաբաս չունիցիմք զիշխա-
7 նութի՟ գործել ինչ ։ * Ո՞ք զինուորիցի իւրովք
թոշակօք ։ ո՞ ոք տնկիցէ այգի՝ և 'ի պտղոյ նր՟ ոչ
ուտիցէ ։ ո՞ ոք արածիցէ զխաշն՝ և 'ի կաթանէ
8 խաշինն ոչ ուտիցէ ։ * Միթէ ըստ մարդկութե՞
խօսիցիմ զայս ։ կամ թէ և օրէնքն զայն ո՞չ ասի-
9 ցեն ։ * 'ի մօսիսի իսկ յօրէնսն գրեալ է ։ ոչ կա-

պեսցես զցռուկ եզին կալոտւոյ։ միթէ զեզանց
10 ինչ փոյթ էր ա՟յ։ * Ո՞չ ապաքէն վ՟ս մեր ասէ։
քանզի վ՟ս մեր գրեցաւ։ զի յուսով պարտի, որ
սերմանէն, սերմանել։ և որ կասուն՝ յուսով վայելել։
11 * Եթէ մեք ՚ի ձեզ զհոգևորսն սերմանեցաք՝
մեծ ի՞նչ է, եթէ ՚ի ձէնջ զմարմնաւորսդ հնձիցեմք։
12 * Եթէ այլք ձերով իշխանութբ՟դ վայելեն,
ընդէ՞ր ոչ առաւել ևս մեք։ այլ ոչ ՚ի գործ ինչ
արկաք զիշխանութիւս զայս։ բայց ա՟մի համբերեմք․
զի մի՛ խափանիչք լինիցիմք աւետարանին Ք՟ի։
13 * Ո՞չ գիտէք՝ եթէ որք ՚ի տաճարին գործեն,
՚ի տաճարէ անտի ուտեն։ և որք սեղանոյն պաշտօնեայքն
14 են, ՚ի սեղանոյ անտի վայելեն։ * Նոյնպէս
և Տ՟ր հրաման ետ․ որոց զաւետարանն աւետարանեն՝
15 յաւետարանէ անտի կեալ։ * Բայց ես
և ո՛չ զմի ինչ յայսցանէ արկի ՚ի գործ․ և ո՛չ
գրեցի զայդ՝ զի ինձ այնպէս ինչ լինիցի։ լաւ է
ինձ մանաւանդ մեռանել․ և ո՛չ զի զպարծանս իմ
16 որ ընդունայն համարիցի։ * Զի եթէ աւետարանեմ,
ոչինչ են ինձ պարծանք․ քանզի հարկ ՚ի վ՟ր
կայ։ բայց վա՜յ է ինձ, եթէ ոչ աւետարանեմ։
17 * Եթէ կամաւ զայն առնեմ, վարձք են ինձ։ և
18 եթէ ակամայ՝ տնտեսութի յանձնէ ինձ։ * Եւ՛
արդ՝ զի՞նչ վարձք են ինձ։ եթէ յաւետարանելն
ձրի տաց զաւետարանն՝ զի մի՛ զեղծցիմ ինչ իշխանութբ՟ս
19 իմով յաւետարանին անդ։ * Քանզի
ազատ էի յա՟մէ՝ և ամենեցուն զանձն ՚ի ծառայութիւն
կացուցի․ զի զբազումս շահեցայց։
20 * Եղէ ընդ հրէայսն իբրև զհրէայ․ զի զհրէայսն
21 շահեցայց։ * Եղէ ընդ օրինօք իբրև զայնոսիկ՝ որք
ընդ օրինօքն էին։ (իբր ո՛չ եթէ ընդ օրինօքն էի)
այլ զի և որք ընդ օրինօքն իցեն, և զնոսա շահեցայց։
ընդ անօրէնսն եղէ իբրև զանօրէն։ (իբր
ո՛չ եթէ անօրէն ինչ էի Ա՟յ․ այլ ընդ օրինօքն
22 Ք՟ի․) զի շահեցայց զանօրէնսն։ * Եղէ ընդ տկարս
իբրև զտկար՝ զի զտկարսն շահեցայց։ ընդ ա՟մի ա՟մ
23 եղէ․ զի թերևս ապրեցուցից զոմանս։ * Զայս
ա՟մ առնեմ վ՟ս աւետարանին, զի կցորդ եղէց նմա։

24 ԴԿ. * Ո՞չ գիտէք՝ եթէ որք յասպարիսին ընթանան, ընթանալ ամենեքեան ընթանան՝ բայց մի ոք
առնու զյաղթութիւնն: այնպէս ընթացարուք՝ զի
25 հասանիցիք: * Ամ՟ որ պատերազմի՝ ամ՟ի ժուժկալ
լինի: նոքա զի զեղծանելի պսակն առնուցուն՝ և
26 մեք զանեղծութե՟ն: * Արդ ես իսկ այնպէս ընթանամ, ո՛չ ոպ՟ յանհերևոյթս. այնպէս մրցիմ, ո՛չ ոպ՟
27 եթէ զհողմս ինչ կոծելով: * Այլ ճնշեմ զմարմին իմ, և հնազանդեցուցանեմ: զի գուցէ որ
այլոյն քարոզեցի՝ ես ինքն անպիտան գտանիցիմ:

ԳԼ. Ժ:

1 Ո՛չ կամիմ, եթէ տգէտք իցէք եղբարք: զի
հարքն մեր ամենեքին ը՟ ամպովն էին: և ամենե-
2 քին ը՟ ծովն անցին: * Եւ ամենեքին 'ի մովսէս
3 մկրտեցան յամպն և 'ի ծովն: * Եւ ամենեքին
4 զնոյն հոգևոր կերակուրն կերին: * Եւ ամենեքին
զնոյն հոգևոր ըմպելին արբին: (զի ըմպէին 'ի հոգևոր վիմէն՝ որ երթայր զհետ նց՟: և վէմն էր
5 ինքն Քս՟:) * Այլ ոչ եթէ ընդ բազումս 'ի նոցանէ հաճեցաւ Ած՟: քանզի տապաստ անկան յա-
6 նապատի անդ: * Եւ այն օրինակաւ լինէր վ՟ մեր:
զի մի լիցուք ցանկացօղք չարեաց. ոպ՟ և նոքայն
7 ցանկացան: * Եւ մի կռապաշտք լինիք՝ ոպ՟ ոմանք
'ի նոցանէ: ոպ՟ և գրեալ է: Նստաւ ժողովուրդն
8 ուտել և ըմպել և յարեան 'ի խաղալ: * Եւ մի
պոռնկիցուք, ոպ՟ ոմանք 'ի նոցանէ պոռնկեցան: և
անկան 'ի միում աւուր քսան և չորք հազարք:
9 * Եւ մի փորձեսցուք զՏր՟՝ ոպ՟ ոմանք 'ի նոցանէ
10 փորձեցին, և յօձից անտի սատակեցան: * Եւ մի
տրտնջեսցուք՝ ոպ՟ ոմանք 'ի նոցանէ տրտնջեցին,
11 և կորեան 'ի սատակչէ անտի: * Այլ այն ամենայն օրինակաւ անցանէր ընդ նոսա: բայց գրեցաւ
վասն մերոյ խրատու. յորս վախճան յաւիտենից
12 եհաս: * Այսուհետև որ համարիցի հաստատուն
13 կալ՝ զգո՛յշ լիցի. գուցէ անկանիցի: * Փորձութի՟
'ի ձեր վերայ ոչ է եկեալ բայց 'ի մարդկանէ: այլ

հաւատարիմ է Ած՝ որ ոչ տացէ զձեզ 'ի փոր-
ձութի առաւել քան զկար ձեր ։ այլ արասցէ ընդ
փորձութեն և զելս՝ զի համբերել կարասջիք ։
14 ԴԻ· * Վն որոյ սիրելիք իմ, փախերուք 'ի կռա-
15 պաշտութէ ։ * Իբրև ընդ իմաստնոց խօսիմ ։ ընտ-
16 րեցէք ձեզէն՝ զոր ասեմս ։ * Բաժակն օրհնու-
թե զոր օրհնեմք՝ ոչ ապաքէն հաղորդութի է
արեանն Քի ։ հացն՝ զոր բեկանեմք՝ ոչ ապաքէն
17 հաղորդութիւն է մարմնոյն Քի ։ * Զի մի հաց՝
մի մարմին եմք բազումքս ։ զի ամենեքին 'ի միոջէ
18 հացէ անտի վայելեմք ։ * Տեսէք զիէլն ըստ մարմ-
նոյ ։ ոչ ապաքէն՝ որք ուտեն 'ի զոհիցն՝ հաղորդք
19 են սեղանոյն ։ * Իսկ արդ զինչ · ասեմ, թէ զո-
հեալն իցէ՞ ինչ ։ և կամ թէ կուռքն իսկ իցեն ինչ ։
20 * Այլ զոր զոհեմն հեթանոսք՝ դիւաց, և ոչ Այ
զոհեն ։ ոչ կամիմ զձեզ հաղորդս դիւաց լինել ։
քանզի ոչ կարէք զբաժակն Տն ըմպել՝ և զբա-
21 ժակն դիւաց ։ * Եւ ոչ կարէք 'ի սեղանոյ Տն
22 վայելել՝ և 'ի սեղանոյ դիւաց ։ * Եթէ զնախանձ
ինչ արկանիցեմք Տն · միթէ զօրագոյնք իցեմք
քան զնա ։ ամ ինչ ինձ մարթ է՝ այլ ոչ ամ ինչ
23 օգուտ է ։ * Ամ ինչ ինձ մարթ է՝ այլ ոչ ամ
24 ինչ շինէ ։ * Մի ոք զանձին ևեթ խնդրեսցէ՝ այլ
25 և զընկերին ։ * Ամենայն ինչ որ 'ի սպանդանոցի
վաճառի, կերայք, և մի խտրէք վն խղճի մտաց ։
26 * Զի Տն է երկիր լրիւ իւրով ։
27 * Եթէ ոք կոչէ զձեզ յանհաւատից՝ և կամիցիք
երթալ ։ զամ ինչ՝ որ առաջի ձեր դնիցի, կերայք,
28 և մի խտրէք վն խղճի մտաց ։ * Ապա եթէ ոք
ասասցէ ձեզ՝ թէ այդ զոհեալ է՝ մի ուտիցէք վն
29 նր՝ որ գուշակն եղև · և վն խղճի մտացն ։ * Այլ
զխիղճ մտացն ասեմ · ոչ զիւրն, այլ զընկերին ։
իսկ ընդէ՞ր ընդ ազատութիս իմ դատիցի յայ-
30 լոց խղճէ մտաց ։ * Եթէ ես շնորհօք վայելեմ,
ընդէ՞ր հայհոյիցիմ, վասն որոյ եսն գոհանամ ,
31 * Արդ՝ եթէ ուտիցէք՝ եթէ ըմպիցէք՝ եթէ
զինչ և առնիցէք ։ զամ ինչ 'ի փառս Այ արաս-
32 ջիք ։ * Առանց գայթագղութի դնելոյ հրէից և

Հեթանոսաց լինիջիք՝ և եկեղեցւոյն Աստուծոյ ։
33 *Որպէս և ես ամենևին ամենեցուն հաճոյ լինիմ ։
ոչ խնդրեմ զանձին օգուտ ։ այլ զբազմաց՝ զի ապ-
րեսցին ։

ԳԼ. ԺԱ.

1 Նմանօղք ինձ եղերուք. ո՟պ և ես Ք՟ի ։ *Գո
Դ. Զ. վեմ զձեզ՝ զի զա՟մ ինչ զիմ յիշէք ։ և ո՟պ
3 աւանդեցի ձեզ՝ զաւանդութիւնսն ունիցիք ։ *Կա-
միմ, զի գիտիցէք դուք. եթէ առն ա՟մի գլուխ
Ք՟ս է՝ և գլուխ կնոջ այր՝ և գլուխ Ք՟ի Ա՟ծ ։
4 *Ամենայն այր՝ յորժամ յաղօթս կայցէ՝ կամ մարգա
րէանայցէ՝ և զգլուխն ծածկեալ ունիցի, յամօթ
5 առնէ զգլուխն իւր ։ *Եւ՛ ա՟մ կին՝ յորժամ յա-
ղօթս կայցէ՝ կամ մարգարէանայցէ բացա գլխով՝
յամօթ առնէ զգլուխն իւր ։ զի այնպէս համարի՝
6 թէ գերծեալ իցէ ։ *Զի եթէ ոչ սքօղեսցի
կին, փոքրեսցէ զհերս իւր ։ ապա եթէ անպատեհ է
կնոջ փոքրել կամ գերծուլ՝ սքօղեսցի ։
7 *Առն մարդոյ չէ պարտ ծածկել զգլուխ իւր ։
զի պատկեր և փառք Ա՟յ է ։ իսկ կին փառք առն
8 իւրոյ է ։ *Զի ոչ եթէ այր ՚ի կնոջէ է. այլ
9 կին յառնէ ։ *Քանզի ոչ իսկ հաստատեցաւ այր
10 վ՟ս կնոջ. այլ կին վ՟ս առն ։ *Վ՟ս այնորիկ պարտի
11 կինն շուք դնել գլխոյն վ՟ս հրեշտակաց ։ *Բայց
ոչ կին առանց առն. և ոչ այր առանց կնոջ ՚ի
12 Տ՟ր ։ *Զի ո՟պ կին յառնէ՝ նոյնպ՟ և այր ՚ի կնոջէ՝
13 բայց ա՟մ յԱ՟յ ։ *Այլ դուք ձեզէն տուք զիրաւդ ։
արժա՞ն է կնոջ մարդոյ հոլանի յաղօթս կալ առա
14 ջի Ա՟յ ։ *Եւ՞ ոչ բնութիւն իսկ ուսուցանէ զձեզ ։
զի այր եթէ գիսաւոր է՝ անարգանք են նմա ։
15 *Բայց կին եթէ գիսաւոր է՝ փառք են նմա ։ զի
16 գէսք փոխանակ զգեստու տուեալք են նմա ։ *Ապա
թէ ոք կամի հակառակօղ լինել. մեք չունիմք
այնպիսի սովորութ՟ի. և ոչ եկեղեցիքն Ա՟յ ։
17 *Այլ զայս պատուիրեմ, ոչ ո՟պ թէ գովիցեմ,
զի ոչ ՚ի լաւ անդր՝ այլ ՚ի վատթարն նկրտիք ։

18 * Նախ՝ յորժամ 'ի մի վայր ժողովիցիք յեկեղեցին։
լսեմ եթէ հերձուածք գոն 'ի ձեզ։ և սակաւ
19 ինչ հաւատայի։ * Բայց և հերձուածք լինելոց
են 'ի ձեզ։ զի որք ընտիրքն իցեն 'ի ձեզ՝
20 երևեսցին։ * Ե՛ւ արդ՝ 'ի ժողովելն ձեր 'ի միասին՝
21 ո՛չ է տուն Տն ձեզ տեղի հաց ուտելոյ։ * Զի իւրաքանչիւրոք՝
զիւր ընթրիս յառաջանայ ուտել։
22 և ոմն քաղցեալ՝ և ոմն արբեալ։ * Միթէ տունս
ո՞չ ունիցիք ուտելոյ կամ ըմպելոյ։ եթէ զեկեղեցեաւն
Այ արհամարհիցէ՞ք· և յամօթ առնէք
զչքաւորսն։ զի՞նչ ասացից։ գովեցի՞ց զձեզ՝ յայդմ
23 ո՛չ գովեմ։ * Զի ես ընկալայ 'ի Տէ՛ զոր և ձեզն
աւանդեցի։ եթէ Տր Յս 'ի գիշերին յորում մատնիւր։
24 էառ զհաց՝ * գոհացաւ՝ եբեկ և ասէ։
Առէք՝ և կերայք· այս է մարմին իմ, որ վս ձեր
բաշխի։ զայս արարէք առ իմոյ յիշատակի։
25 * Նոյնպ և զբաժակն յետ ընթրեացն էառ և ասէ։
այս բաժակ՝ նոր ուխտ է իմով արեամբ·, զայս
արարէք քանիցս անգամ թէ ըմպիցէք՝ առ իմոյ
26 յիշատակի։ * Քանիցս անգամ եթէ ուտիցէք
զհացս զայս, և զբաժակս ըմպիցէք՝ զմահ Տն պատմեսջիք,
27 մինչև եկեսցէ նա։ * Այսուհետև՝ որ
ուտիցէ զհացս, կամ ըմպիցէ զբաժակս Տն անարժանութբ,
պարտական եղիցի մարմնոյ և արեան
28 Տն։ * Փորձեսցէ մարդ զանձն իւր· և ապա 'ի
հացէ անտի կերիցէ· և 'ի բաժակէն արբցէ։
29 * Զի որ ուտէ և ըմպէ անարժանութբ՝ դատաստան
անձին իւրում ուտէ և ըմպէ։ զի ո՛չ խտրէ
30 զմարմինն Տն։ * Վս այնորիկ իսկ են 'ի ձեզ բազում
հի՛ւանդք և ախտաժէտք· և շատք ևս այնք
են, որք և ննջեցեալք իսկ իցեն։
31 * Զի եթէ զանձինս քննէաք՝ ապա ո՛չ դատապարտէաք։
32 * Ե՛ւ եթէ դատիմք՝ 'ի Տէ խրատիմք։
33 զի մի ընդ աշխարհի դատապարտիցուք։ * Այսուհետև
եղբարք՝ յորժամ 'ի մի վայր ժողովիցիք ուտել՝
34 միմեանց մնասջի՛ք։ * Ապա թէ ոք քաղցեալ
իցէ՝ 'ի տան իւրում կերիցէ։ զի մի 'ի դատապար

տուն ժողովիցիք: բայց զայլ ինչ յորժամ եկից՝
յայնժամ՝ պատուիրեցից:

ԳԼ. ԺԲ:

1 Այլ վասն հոգևորացն, եղբարք՝ ոչ կամիմ եթէ
2 անգիտաք իցէք: * Գիտէք իսկ՝ զի մինչ հեթանոսքն
էիք՝ առ կուռս անմռունչս որպէս երթայիք
3 և գայիք: * Վասն որոյ ցուցանեմ ձեզ·
զի ոչ ոք Հոգւով այ̅ խօսի՝ և ասիցէ նզովեալ
Յս̅· և ոչ ոք կարէ ասել Տր̅ զՅս̅, եթէ ոչ Հոգւովն
4 սրբով: * Թէպէտ և բաժինք շնորհաց են՝
5 այլ Հոգի նոյն է: * Եթէ բաժինք պաշտամանց
6 են, այլ Տր̅ նոյն է: * Եթէ բաժինք յաջողութե̅ց
են՝ այլ Ած̅ նոյն է· որ յաջողէ զամենայն յամ̅ն:
7 * Բայց իւրաքանչիւր ումեք տուեալ է յայտնութիւն
Հոգւոյն առ իւրաքանչիւր օգուտ:
8 * Ումեմն ՚ի հոգւոյն տուեալ է բան իմաստութե̅·
այլում բան գիտութե̅ ըստ նմին Հոգւոյ:
9 * Միւսումն հաւատք նովին հոգւով· այլում շնորհ
բժշկութե̅ց նովին հոգւով:
10 * Այլում յաջողութիւն զօրութե̅ց· այլում մարգարէութիւն·
այլում ընտրութիւն հոգւոց· այլում
ազգք լեզուաց· այլում թարգմանութիւն
11 լեզուաց: * Այլ զայս ամենայն յաջողէ մի և նոյն
հոգի· և բաժանէ իւրաքանչիւր որպէս և կամի:
12 * Որպէս մարմին մի է՝ և անդամս բազումս ունի·
և ամ̅ բազում անդամք մարմնոյն՝ մի մարմին են·
13 նոյնպէս և Քս̅: * Քանզի միով հոգւով մեք
ամենեքին ՚ի մի մարմին մկրտեցաք· եթէ հրէայք,
եթէ հեթանոսք· եթէ ծառայք, եթէ ազատք·
ամենեքին զմի հոգի արբաք:
14 * Քանզի մարմին ոչ մի անդամ է· այլ բազում:
15 * Եթէ ասիցէ ոտն, զի չեմ ձեռն, չեմ ՚ի մարմնոյ
անտի, ոչ այնու չիցէ ՚ի մարմնոյ անտի:
16 * Եւ՛ եթէ ասիցէ ունկն, վասնզի չեմ ակն, չեմ
՚ի մարմնոյ անտի, ոչ այնու չիցէ ՚ի մարմնոյ անտի:
17 * Եթէ ամենայն մարմին ակն էր՝ ո՞ւր էր ունկն·

և եթէ ամենայն լսելիք էին՝ ո՛ւր էին հոտոտելիք ։
18 * Բայց արդ՝ Ած եդ զանդամսն՝ զմի մի իւրաքան-
չիւր ՚ի նոցանէ ՚ի մարմնին որպէս և կամեցաւ ։
19 * Ապա եթէ էր ամենայն մի անդամ, ուր էր մար-
20 մին ։ * Բայց արդ անդամք բազումք են, և մար-
21 մին մի ։ * Ոչ կարէ ակն ասել ձեռին, թէ չես
ինձ պիտոյ. և կամ դարձեալ գլուխ ոտս թէ
22 չէք ինձ պիտոյ ։ * Այլ առաւել որք թո՛ւէին ան-
դամք մարմնոյն, թէ տկարագոյնք իցեն՝ կարևորք
23 են ։ * Եւ որք թո՛ւին, թէ անարգագոյնք իցեն
մարմնոյն, այնց առաւելագոյն պատիւ առնեմք. և
ամօթոյքն մեր առաւել ևս պարկեշտութիւն ունին ։
24 * Եւ պարկեշտիցն մերոց չէ ինչ պիտոյ. քանզի
Ած խառնեաց զմարմինն, և նուաղին առաւելն
25 զպատիւ ետ ։ * Զի մի իցեն հերձուածք ՚ի մարմ-
նի անդ. այլ զի նոյնք զմիմեանց հոգայցեն ան-
26 դամքն ։ * Եւ եթէ վշտանայ ինչ մի անդամն,
վշտանան ամենայն անդամքն ընդ նմա. և եթէ
փառաւորի ինչ մի անդամն, խնդան ամենայն ան-
27 դամքն ընդ նմա ։ * Այլ դուք մարմին Քի էք՝ և
28 անդամք յանդամոց նր ։ * Եւ զորս եդ Ած յե-
կեղեցւոջ՝ այս են. նախ՝ զառաքեալս. երկրորդ՝
զմարգարէս. երրորդ՝ զվարդապետս. ապա զզօրու-
թիւնս. ապա շնորհս բժշկութեց՝ օգնութիւնս՝ վա-
րիչս՝ ազգս լեզուաց՝ թարգմանութիւնս լեզուաց ։
29 * Միթէ ամենեքին առաքեալք իցեն՝ միթէ ա-
մենեքին մարգարէ՞ք իցեն. միթէ ամենեքին վար-
դապետք իցեն ։
30 * Միթէ ամենեքին շնորհս բժշկութե՞ ունիցին.
միթէ ամենեքին ՚ի լեզուս խօսիցին. միթէ ամե-
31 նեքին թարգմանիցե՞ն ։ * Բայց նախանձաւո՛րք լե-
րուք շնորհացն, որք լաւքն են ։ այլ ես առաւել ևս
Ճանապարհ ցուցանեմ ձեզ ։

ԳԼ. ԺԳ.։

1 Եթէ զլեզուս մարդկան խօսիցիմ և հրեշտակաց՝
և զսէր ոչ ունիցիմ, եղէ ես իբրև պղինձ,
որ հնչէ. կամ իբրև զծնծղայս՝ որք ղօղանջեն։
2 * Եւ եթէ ունիցիմ զմարգարէութիւն, և գիտի
ցեմ զխորհուրդս ամենայն՝ և զամ գիտութի. և
եթէ ունիցիմ զամ հաւատս՝ մինչև զլերինս փո-
3 փոխել, և զսէր ոչ ունիցիմ, ոչինչ եմ։ * Եւ
եթէ ջամբիցեմ զամենայն զինչս իմ աղքատաց.
և մատնիցեմ զմարմինս իմ յայրումն. և զսէր ոչ
4 ունիցիմ, ոչինչ օգտիմ։ * Սէր երկայնամիտ է՝
քաղցրանայ. սէր ոչ նախանձի. ոչ ամբարհա-
5 ւաճէ. ոչ հպարտանայ։ * Ոչ յանդգնի. ոչ
6 խնդրէ զիւր. ոչ գրգռի. ոչ խորհի զչար։ * Ոչ
խնդայ ընդ անիրաւութիւն. այլ խնդայ ընդ ստու
7 գութի։ * Ամենայնի տանէ. ամի հաւատայ. ամե-
8 նեւին յուսայ. ամի համբերէ։ * Սէր ոչ երբէք
անկանի. եթէ մարգարէութիւնք իցեն՝ խափանես-
ցին. եթէ լեզուք՝ լռեսցեն՝ եթէ գիտութի խա-
9 փանեսցի։ * Քանզի փոքր 'ի շատէ գիտեմք. և փո-
10 քր 'ի շատէ մարգարէանամք։ * Այլ յորժամ
եկեսցէ կատարումն, փոքր 'ի շատէս խափանեսցի։
11 Ես. * Մինչ տղայն էի՝ իբրև զտղայ խօսէի՝ իբրև
զտղայ խորհէի, իբրև զտղայ համարէի։ այլ յոր-
ժամ եղէ այր՝ զտղայութիւն 'ի բաց խափանեցի։
12 * Այժմ տեսանեմք իբրև ընդ հայելի օրինակաւ.
այլ յայնժամ դէմ յանդիման. այժմ խելամուտ
եմ փոքր 'ի շատէ. այլ յայնժամ գիտացից՝ որպէս
13 և նայն ծանեաւ զիս։ * Բայց արդ մնան հաւատ՝
յոյս՝ սէր. սոքա երեքեան. և մեծ քան զսոսա
սէր է։

ԳԼ. ԺԴ.։

1 Զհետ երթայք սիրոյ, և նախանձաւորք լերուք
հոգևորացն. առաւել զի և դուք մարգարէա
2 նայցէք։ * Զի որ խօսի 'ի լեզուս՝ ոչ ընդ մարդ-

կան խօսի, այլ ընդ Այ. զի ոչ՛ք է՝ որ լսէ.
3 բայց Հոգւովն խօսի 'ի խորհուրդս ։ * Իսկ որ
մարգարէանայն, մարդկան խօսի 'ի շինութիւն,
4 և 'ի սփոփումն ։ * Որ խօսի 'ի լեզուս՝ զանձն իւր շինէ.
5 իսկ որ մարգարէանայ՝ զեկեղեցին շինէ ։ * Կամիմ,
զի ամենեքին դուք 'ի լեզուս խօսիցիք. առաւել
զի մարգարէանայցէք. զի լաւ է՝ որ մարգարէանայն
քան զայն՝ որ 'ի լեզուս խօսիցի. բայց եթէ
թարգմանիցէ՝ զի եկեղեցին զշինութիւն առնուցու ։
6 * Բայց այժմ, եղբարք՝ եթէ եկից առ ձեզ 'ի լեզուս
խօսելով, զինչ օգուտ լինիցիմ ձեզ՝ եթէ
ոչ խօսիցիմ, կամ յայտնութ͞բ. կամ գիտութ͞բ.
կամ մարգարէութ͞բ. կամ վարդապետութ͞բ ։
7 * Այնպէս ուղ անշունչքն զձայն տայցեն, եթէ
փող և եթէ քնար. և եթէ զխտրութիւն ինչ
բարբառոյն չառնիցեն. զիա՞րդ ճանաչիցի փողոյն
հարկանել՝ կամ քնարին հնչել ։
8 * Քանզի եթէ խառնաձայն արձակիցի փողն, ո՞վ
9 պատրաստեսցի 'ի պատերազմ ։ * Նոյնպէս և
դուք՝ եթէ լեզուօք ոչ նշանակիցէք զբանն՝ զիա՞րդ
ճանաչիցին խօսքն. զի լինիցիք այնուհետև
10 իբրև ընդ օդս խօսեցեալք ։ * Զի այնչափ ազգք
ձայնից են յաշխարհի. և ոչինչ անձայն է ։
11 * Իսկ արդ՝ եթէ ոչ գիտիցեմ զզօրութի ձայնին,
լինիցիմ այնմ, որ խօսիցի ընդ իս՝ խուժ. և նա,
12 որ խօսիցի ընդ իս՝ խուժ ։ * Նոյնպէս և դուք՝ քան
զի նախանձորդք էք հոգևորայն. վասն շինուածոյ
13 եկեղեցւոյն խնդրէք՝ զի առաւելուս իցէք ։ * Վ͞ս
որոյ՝ որ խօսի 'ի լեզուս, աղօթս արասցէ՝ զի
14 թարգմանիցէ ։ * Եթէ կամ յաղօթս լեզուաւ՝
հոգին իմ կայ յաղօթս. այլ միտք իմ անպտուղք
15 են ։ * Իսկ արդ՝ զի՞նչ իցէ՝ կացից յաղօթս հոգւով,
կացից յաղօթս և մտօք. սաղմոս ասացից հոգւով՝
սաղմոս ասացից և մտօք ։
16 * Ապա թէ ոչ՝ եթէ օրհնիցես հոգւով՝ որ կայցէ
'ի տեղւոջ տգիտին, զիա՞րդ ասիցէ 'ի քում գոհութ͞ն՝
զամէնն. քանզի զոր ասեսն՝ նա ո՛չ գիտէ ։
17 * Զի դու բարւոք գոհանաս. այլ ընկերն ո՛չ շինի.

18 Եղբ. * Գոհանամ զԱՅ իմոյ՝ վս ամենեցուն ձեր՝
19 առաւել լեզուօք խօսիմ: * Այլ ՚ի մէջ եկեղեցւոյ
կամիմ բանս հինգ, մտօք խօսիլ՝ զի և զայլս խրատի-
20 ցեմ, քան զբազում բանս լեզուաւ: * Եղբարք՝
մի լինիք տղայք մտօք՝ այլ ՚ի չարեաց տղայացարուք՝
21 և մտօք կատարեալք լինիջիք: * Քանզի և յօ-
րէնսն գրեալ է. եթէ յօտար լեզուս՝ և ՚ի շըր-
թունս օտարոտիս խօսեցայց ընդ ժողովրդեանդ ընդ
այդմիկ՝ սակայն և ոչ այնպէս լուիցեն ինձ, ասէ
22 Տր: * Ապաւրեմն լեզուք նշանակի վս են: ոչ
հաւատացելոց այլ անհաւատից: իսկ մարգարէուի,
23 ոչ անհաւատից, այլ հաւատացելոց: * Ապա եթէ
գայցէ ամ եկեղեցին ՚ի մի վայր, և ամենեքին ՚ի
լեզուս խօսիցին. և մտանիցեն անդր տգէտք՝ կամ
24 անհաւատք՝ ոչ ասիցեն թէ զի մոլիքդ: * Իսկ
եթէ ամենեքին մարգարէանայցեն. և մտանիցէ ոք
անդր անհաւատ՝ կամ տգէտ, յանդիմանի յամե-
25 նեցունց. և քննի յամենեցունց: * Եւ՛ գաղտնիք
սրտի նր յայտնի լինին: և ապա անկեալ ՚ի վերայ
երեսաց՝ երկիրպագանիցէ ԱՅ: և խոստովան լինի-
26 ցի թէ արդարև ԱԾ է ՚ի ձեզ: * Եւ՛ արդ՝ զինչ
իցէ եղբարք. յորժամ ՚ի մի վայր ժողովիցիք,
իւրաքանչիւրոք ՚ի ձէնջ՝ եթէ զսաղմոս ունիցի,
թէ զվարդապետութի ունիցի, եթէ զյայտնութի
ունիցի, թէ զլեզուս ունիցի՝ եթէ զթարգմանութի
27 ունիցի. ամ ՚ի շինուած լինիցի: * Եթէ ՚ի լեզուս
ոք խօսեսցի՝ երկուք. և եթէ ևս աւելի՝ երեք:
և ապա մի ըստ միոջէ: և մին թարգմանեսցէ:
28 * Ապա եթէ չիցէ ոք՝ որ թարգմանիցէ՝ լուռ լիցի
յեկեղեցւոջն: ընդ միտս իւր՝ և ընդ ԱՅ խօսեսցի:
29 * Բայց մարգարէք երկու, կամ երեք խօսեսցին:
30 և այլքն քննեսցեն: * Ապա եթէ այլոյ ումեք
որ նստիցի, յայտնեսցի՝ առաջինն լռեսցէ:
31 * Քանզի կարօղ էք ամենեքին մի ըստ միոջէ
մարգարէանալ՝ զի ամենեքին ուսանիցին. և ամե-
32 նեքեան մխիթարեսցին: * Եւ՛ հոգիք իսկ մար-
գարէից՝ մարգարէից հնազանդին:
33 * Զի ոչ եթէ խռովութե է ԱԾ՝ այլ խաղա-

34 ղութե՟. ոպ՟ յամ՟ եկեղեցիս սրբոց : * Կանայք յամ՟
եկեղեցիս լուռ լիցին. զի ոչ հրամայի նց՟ խօսիլ՝
այլ հնազանդ լինիլ. ոպ՟ և օրէնքն իսկ ասեն :
35 * Ապա եթէ ուսանիլ ինչ կամիցին՝ 'ի տան զայս
իւրեանց հարցանիցեն : քանզի անպատեհ է կնոջ
36 մարդոյ յեկեղեցւոջ խօսիլ : * Եթէ 'ի ձէ՞նջ բանն
37 Այ՟ ել : և կամ առ ձե՞զ միայն եհաս : * Իսկ
եթէ ոք կամիցի մարգարէ լինիլ՝ կամ հոգևոր,
գիտասցէ՝ զոր գրեցից առ ձեզ՝ եթէ Տն՟ պատուի-
38 րանք են : * Ապա եթէ ոք տգիտանայցէ, տգիտասցի :
39 * Այսուհետև եղբարք, նախանձեցարո՛ւք մարգա-
40 րէանալ՝ և զխօսիլն լեզուօք մի՛ արգելուք : * Եւ՛
ամ՟ ինչ ձեր պարկեշտութբ՟ և ըստ կարգի լինիցի :

ԳԼ. ԺԵ.

1 Ցուցանեմ ձեզ եղբարք զաւետարանն իմ, զոր
ԵԳ. աւետարանեցի ձեզ. զոր և ընկալայք. յորև
2 հաստատեալդ էք : * Որով ապրեցայքն : որով
բանիւ՛ աւետարանեցի ձեզ՝ եթէ ունիցիք : բայց
եթէ 'ի զուր ինչ հաւատայցէք :
3 * Զի ես ձեզ զայն նախ աւանդեցի՝ զոր և ես
ընկալայ : եթէ և Քս՟ մեռաւ վս՟ մեղաց մերոց, ըստ
4 գրոց : * Եւ՛ զի թաղեցաւ : եթէ և յարեաւ յաւ-
5 ուր երրորդի ըստ գրոց : * Եւ՛ եթէ երևեցաւ
6 կեփայի . և ապա մետասանիցն : * Ապա երևեցաւ
աւելի քան զհինգ հարիւր եղբարց միանգամայն.
յորոց բազումք կան մինչև ցայժմ, և ոմանք ննջե-
7 ցին : * Եւ՛ ապա երևեցաւ յակոբայ : ապա առա-
8 քելոցն ամենեցուն : * Հուսկ յետոյ քան զամենե-
սին իբրև անարգի միոջ՝ երևեցաւ և ինձ :
9 * Զի ես իսկ եմ տրուպն առաքելոց . որ չեմ իսկ
արժանի եթէ կոչեցայց առաքեալ : զի հալածեցի
10 զեկեղեցին Այ՟ : * Այլ շնորհօքն Այ՟ եմ, զինչ
և իցեմ : և շնորհ.ք նր՟՝ որք յիս՝ ընդունայն ինչ
ոչ եղեն : այլ առաւել քան զնս՟ ամենեսին վաս-
տակեցայ : և ոչ եթէ ես՝ այլ շնորհն Այ՟ որ
11 ընդ իս : * Արդ՝ եթէ ես՝ և եթէ նոքա՝ այսպէս

12 քարոզեցաք։ Եւ դուք այսպ̄ հաւատացէք։ * Ապա
եթէ Քս̄ քարոզի՝ եթէ 'ի մեռելոց յարուցեալ
է, զիա՞րդ ասեն ոմանք 'ի ձէնջ՝ եթէ յարութիւն
13 մեռելոց չիք։ * Եթէ յարութիւն մեռելոց չիք,
14 ապա և Քս̄ չէ յարուցեալ։ * Եւ եթէ Քս̄ չիցէ յարուցեալ, ընդունայն է քարոզութիւն մեր·
15 ընդունայն են և հաւատքն ձեր։ * Եւ գտանիցիմք
սուտ վկայք Այ̄· զի վկայեցաք զԱյ̄ եթէ յարոյց
զՔս̄։ զոր ոչն արդեօք յարոյց՝ եթէ մեռեալք ոչ
16 յառնեն։ * Իսկ եթէ մեռեալք ոչ յառնեն՝ ապա
17 և Քս̄ չէ յարուցեալ։ * Եւ եթէ Քս̄ չիցէ յարուցեալ· ընդունայն են հաւատքն ձեր։ և տակաւին
18 'ի նմին մեղս կայցէք։ * Իսկ արդ՝ որք ննջեցինն 'ի Քս̄, կորեան արդեօք։
19 * Եթէ այսու կենօքս միայն յուսացեալ եմք 'ի
Քս̄, ողորմելիք եմք քան զա̄մ մարդիկ։
20 ԵԴ· * Այլ արդ Քս̄ յարուցեալ է 'ի մեռելոց՝
21 առաջին պտուղ ննջեցելոց։ * Քանզի մարդով
եղև մահ, և մարդով յարութիւն մեռելոց։
22 * Որպ̄ ադամաւն ամենեքեան մեռանին· նոյնպէս
23 և Քի̄ւ ամենեքեան կենդանանային։ * Իւրաքանչիւր յիւրում կարգի։ նախ Քս̄, և ապա Քս̄եանք
24 'ի գալստեան նր̄։ * Եւ ապա կատարած։ յորժամ
տայցէ 'ի ձեռս զթագաւորութիւնն ա̄յ, և հօր։
յորժամ խափանեսցէ զա̄մ իշխանութիւնս՝ և զա̄մ
25 պետութիւն, և զզօրութիւն։ * Զի պարտ է նմա
թագաւորել՝ մինչև դիցէ զա̄մ թշնամիս 'ի ներքոյ
26 ոտից իւրոց։ * Յետին թշնամին խափանի մահ։
և զա̄մ ինչ հնազանդ արար 'ի ներքոյ ոտից նր̄։
27 այլ յորժամ ասիցէ։ * Թէ հնազանդեալ է նմա
ա̄մ, յայտ է՝ եթէ բաց յայնմանէ՝ որ հնազանդե-
28 ցոյց նմա զա̄մ։ * Այլ յորժամ հնազանդեսցի նմա
ամենայն՝ յայնժամ և ինքն որդի հնազանդեսցի
այնմ, որ հնազանդեցոյց նմա զամենայն։ զի եղիցի
29 Ած̄ ա̄մ յա̄մի։ * Ապա եթէ ոչ՝ զի՞նչ գործիցեն,
որք մկրտիցին վս̄ մեռելոց։ եթէ արդարև մեռեալք ոչ յառնեն· ընդէ՞ր իսկ մկրտին վս̄
30 նոցա։ * Ընդէ՞ր և մեք ճգնիմք յա̄մ ժամ։

31 *Եւ հանապազ մեռանիմք: 'ի պարծանս ձեր երդ-
նում եղբարք՝ զոր ունիմ 'ի Քս̅ Յս̅ 'ի Տր̅ մեր.
32 *Եթէ (ըս̅ մարդոյ) 'ի գազանամարտի լեալ էի
յեփեսոս: զի՞նչ օգուտ էր ինձ, եթէ մեռեալք
ոչ յառնէին: կերիցո՛ւք՝ արբցո՛ւք՝ քանզի վաղի՛ն
33 մեռանիմք: *Մի՛ խաբիք. ապականեն զբարս քաղ-
34 ցունս բանք չարք: *Սթափեցարո՛ւք արդարութբ̅՝
և մի՛ մեղանչէք: զի զգիտութի̅ այ̅ ոչ ունին
ոմանք, առ ամօթոյ ձերոյ ասեմ.
35 Եե. *Այլ ասիցէ ոք. զիա՞րդ յառնեն մեռեալք՝
36 կամ որո՞վ մարմնով գայցեն: *Անմի՛տ դու զոր
սերմանես, ոչ կենդանանայ՝ թէ ոչ մեռանիցի.
37 *Եւ զոր սերմանեսն, ոչ զնոյն մարմին, որ ծնա-
նելոցն իցէ, սերմանես. այլ հատ մերկ. եթէ ցո-
38 րենոյ իցէ՝ և եթէ այլոց սերմանեաց: *Եւ Ած̅
տայ նմա զմարմինն՝ ոպ̅ և կամի: և իւրաքանչիւրոց
39 սերմանեացն զիւր մարմին: *Ո՛չ ամ̅ մարմին նոյն
մարմին է: այ՛լ այլ մարմին է մարդկան, և այլ
մարմին անասնոց. այլ մարմին թռչնոց՝ և այլ
40 մարմին ձկանց: *Եւ մարմինք երկնաւորք և մար-
մինք երկրաւորք: այ՛լ այլ փառք երկնաւորաց՝ և
41 այլ փառք երկրաւորաց: *Այլ փառք արեգական,
և այլ փառք լուսնի. և այլ փառք աստեղաց: և
42 աստղ քան զաստղ առաւել է փառօք: *Նոյնպ̅
և յարութիւն մեռելոց: սերմանի ապականութբ̅՝
43 և յառնէ առանց ապականութե̅: *Սերմանի ա-
նարգութբ̅՝ և յառնէ փառօք: սերմանի տկարութբ̅՝
44 և յառնէ զօրութբ̅: *Սերմանի մարմին շնչաւոր՝
և յառնէ մարմին հոգևոր: եթէ գոյ մարմին շն-
45 չաւոր՝ գոյ և հոգևոր: *Ոպ̅ և գրեալ է: եղև
մարդն առաջին Ադամ, 'ի շունչ կենդանի: երկ-
46 րորդ Ադամ 'ի հոգի կենդանարար: *Բայց ոչ
նախ հոգևորն. այլ շնչաւորն, և ապա հոգևորն:
47 *Առաջին մարդն յերկրէ՝ հողեղէն: իսկ երկրորդ
48 մարդն՝ Տր̅ յերկնից: *Ոպ̅ հողեղէնն, նոյնպէս և
հողեղէնքս: և ոպ̅ երկնաւորն՝ նոյնպէս և երկնա-
49 ւորքն: *Եւ ոպ̅ զգեցաք զպատկեր հողեղինին.
50 զգեցցուք և զպատկեր երկնաւորին: *Բայց զայս

*

ասեմ Եղբարք՝ եթէ մարմին և արիւն զարքայութիւն
ա̅յ ժառանգել ոչ կարեն։ և ոչ ապականութիւն
զանապականութիւն ժառանգէ ։
51 * Արդ՝ զխորհուրդ մի ասեմ ձեզ։ ամենեքեան
ննջեսցուք, այլ ոչ ամենեքեան նորոգեսցուք ։
52 * Յանկարծակի յական թօթափել՝ 'ի փող յետին
քանզի փող հարկանի, և մեռեալք յարիցեն առանց
53 ապականութե̅ ։ և մեք նորոգեսցուք ։ * Զի պարտ
է ապականութես այսմիկ զգենուլ զանապականութիւն ։ և մահկանացուիս այսմիկ զգենուլ զանմահութիւն ։
54 * Այլ յորժամ մահկանացուս այս զգեցցի զանմահութիւն. և ապականացուս զանապականութի. յայնժամ եղիցի բանն՝ որ գրեցաւ. եթէ
55 ընկլաւ մահ 'ի յաղթութիւն։ * Ո՞ւր է մահ յաղ-
56 թութիւն քո ։ ո՞ւր դժոխք խայթոց քո ։ * Խայ-
թոց մահու մեղք են, և զօրութիւն մեղաց օրէնք։
57 * Այլ շնորհք ա̅յ՝ որ ետ մեզ զյաղթութիւն
58 'ի ձեռն Տ̅ն մերոյ Յ̅ի Ք̅ի ։ * Այսուհետև Եղբարք
իմ սիրելիք, հաստատունք եղերուք՝ անշարժ կացէք •
առաւել լերուք 'ի գործս Տ̅ն յա̅մ ժամ,
գիտասջիք՝ զի վաստակք ձեր՝ ոչ են ընդունայն
առաջի Տ̅ն ։

ԳԼ· ԺԶ։

1 Այլ վ̅ս հաշուէին, որ 'ի սրբսն է, ո̅պ պատուէր
ԾԶ. Ետու եկեղեցեացն գաղատացւոց՝ նոյնպէս և
2 դուք արասջիք ։ * Ըստ իւրաքանչիւր միաշաբա-
թուջն իւրաքանչիւրոք 'ի ձէնջ անձին իւրում
3 գանձեսցէ՝ որ ինչ և յաջողեսցի ։ * Զի մի յոր-
ժամ գայցեմ, յայնժամ հաշիւք լինիցին ։ այլ
յորժամ եկից՝ զոր միանգամ ընտրեսջիք թղթովք,
զնոսա առաքեցից տանել զշնորհսն ձեր յե̅մ։
4 * Ապա թէ արժան իցէ և ինձ երթալ՝ ընդ իս եր-
5 թիցեն ։ * Այլ եկից առ ձեզ՝ յորժամ 'ի մակե-
դոնիա անցանիցեմ։ բայց իբրև շրջեցայց 'ի մակե-
6 դոնիա , * Թէ դէպ լիցի, առ ձեզ մնացից՝ և կամ
ձմերեցից ։ զի և դուք յուղարկեսջիք զիս՝ ուր և

7 երթալոց եմ։ * Զի ոչ կամիմ զձեզ այժմ ՚ի
հարևանցի տեսանել։ այլ ունիմ ժամանակ ինչ
8 առնել առ ձեզ՝ եթէ Տր̄ հրամայեսցէ։ * Բայց
այժմ լինիմ յեփեսոս մինչև ցպենտեկոստէ։
9 * Զի դուռն բացեալ է ինձ մեծ և կարևոր, և
10 հակառակօղք բազումք են։ * Արդ՝ եթէ եկեսցէ
տիմոթէոս՝ տեսջիք, զիարդ աներկիւղ լինիցի առ
ձեզ։ զի զգործ Տն̄ գործէ՝ որպէս և ես։
11 * Մի ոք զնա անարգեսցէ։ և յուղարկեսջիք զնա
խաղաղութբ̄՝ զի եկեսցէ առ իս։ քանզի ակն ու-
12 նիմ նմա եղբարբք հանդերձ։ * Այլ վասն ապօ-
ղոսի եղբօր՝ յոյժ աղաչեցի զնա, զի եկեսցէ առ
ձեզ եղբարբք հանդերձ։ և արդեօք ոչ էին կամք,
զի այժմ եկեսցէ. այլ եկեսցէ, յորժամ պարա-
13 պեսցի։ * Հսկեցէք՝ հաստատուն կացէք ՚ի հա-
14 ւատս։ ժրացարուք՝ զօրացարուք։ * Ամենայն ինչ
15 ձեր սիրով լինիցի։ * Աղաչեմ զձեզ եղբարք՝
գիտէք զտունն ստեփանեայ՝ և փորտունատեայ՝ որք
են պտուղ աքայեցւոց։ և ՚ի պաշտօն սրբոյն կար
16 գեցին զանձինս։ * Զի և դուք հնազանդ լինի-
ցիք այնպիսեաց. և ամի̄, որ գործակից իցէ և
17 վաստակակից։ * Ուրախ եղէ ՚ի գալ ստեփանեայ՝ և
փորտունատեայ՝ և աքայիկոսի. զի զձեր պակա-
18 սութիւն նոքա լցին։ * Քանզի հանգուցին զոգի
19 իմ և զձեր։ արդ ծանիջիք զայնպիսիսն։ * Ողջոյն
տան ձեզ եկեղեցիքն ասիացւոց։ ողջոյն շատ տան
ձեզ՝ ակուիղաս, և պրիսկիղա՝ հանդերձ առտնին
20 եկեղեցեաւն իւրեանց։ * Ողջոյն տան ձեզ եղբարք
ամենեքեան։ ողջոյն տուք միմեանց ՚ի համբոյր սր̄
21 բութե̄։ * Ողջոյնդ այդ՝ իմոյ ձեռին պօղոսի է։
22 * Եթէ ոք ոչ սիրէ զՏր̄ Յս̄, եղիցի նզովեալ՝
23 մարանաթայ։ * Շնորհք Տն̄ մերոյ Յի̄ Քի̄ ընդ
24 ձեզ։ * Եւ սէրն իմ ընդ ամենեսին ձեզ ՚ի Քս̄
Յս̄. ամէն։

ԹՈՒՂԹ
ԵՐԱՆԵԼՒՈՅՆ
ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ
ԱՌ ԿՈՐՆԹԱՑԻՍՆ ԵՐԿ ՐՈՐԴ։

Գլուխ Առաջներորդ։

I Բկ. ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼ
Յի՟ Քի՟ կամօքն այ՟. և տիմոթէոս եղբայր։ ե-
կեղեցւոյդ Այ՟՝ որ է 'ի կորնթոս. սրբովք ամե-
նեքումբք, որք են յամենայն կողմանս աքայեցւոց։
2 * Շնորհք ընդ ձեզ և խաղաղութիւն յայ՟ Հօ-
3 րէ մերմէ՝ և 'ի Տէ՟ Յէ՟ Քէ՟։ * Օրհնեալ է Աճ՟
և Հայր Տն՟ մերոյ Յի՟ Քի՟. Հայր գթութեց՟. և
4 Աճ՟ ամ՟ մխիթարութե՟։ * Որ մխիթարէ զմեզ
յամ՟ նեղութիւնս մեր։ առ 'ի կարօղ լինելոյ մեզ
մխիթարել զայնոսիկ՝ որք յամ՟ նեղութե՟ իցեն,
մխիթարութբ՟ն՝ որով մեք մխիթարիմք յայ՟։
5 * Զի որպ՟ առաւելուն չարչարանքն Քի՟ 'ի մեզ.
նոյնպէս և 'ի ձեռն Քի՟ առաւել լինի և մխիթա-
6 րութիւն մեր։ * Զի եթէ նեղիմք վս՟ ձերոյ մխի-
թարութե՟ և փրկութե՟։ և եթէ մխիթարիմք
վս՟ ձերոյ մխիթարութե՟. կամ քաջալերիմք վս՟
ձերոյ քաջալերութե՟ և փրկութե՟։ որ յաջողեալն
է համբերութբ՟ նոյին չարչարանացն. զոր և մեքն
7 չարչարիմք։ * Եւ յոյսն մեր հաստատուն է վս՟
ձեր։ քանզի գիտեմք, եթէ որպ՟ կցորդք եմք չար

8 չարչարանացն՝ նոյնպէս և մխիթարութեն: * Քանզի
ոչ կամիմ տգէտս լինել զձեզ եղբարք՝ վն նե-
ղութե մերոյ եղելոյ յասիայ: զի առաւել քան
զկար մեր ծանրացաք. մինչև անյոյս լինելոյ մեզ
9 և ՚ի կենաց: * Այլ անձամբ յանձինս զվճիռ մա-
հու ընկալաք: զի մի յանձինս ապաստանիցիմք՝
10 այլ յԱծ՝ որ յարուցանէ զմեռեալս: * Որ յայն-
պիսի մահուանէ փրկեաց զմեզ՝ և փրկեսցէ:
11 * Քանզի յուսացեալ եմ, եթէ տակաւին փրկես-
ցէ օգնականութբ աղօթից ձերոց վն մեր: զի
՚ի բազմադէմ շնորհացն, որք են ՚ի մեզ. բազմօք
յաճախեսցին գոհութիւնքն վն մեր:
12 ԲԴ. * Քանզի պարծանք մեր այս են. վկայութիւն
մտաց մերոց: զի սրբութբ և ստուգութբ այ.
և ոչ մարմնեղէն իմաստութբ: այլ շնորհօքն այ
շրջեցաք յաշխարհի: բայց առաւել ևս առ ձեզ:
13 * Քանզի ոչ եթէ այլ ազգ ինչ գրեմք առ ձեզ:
այլ զոր ընթեռնուցուքն՝ և գիտակ լինիցիք. քան
զի յուսամ եթէ մինչև ՚ի վախճան գիտասցէք:
14 * Որպէս և խելամուտ եղէք մեզ փոքր ՚ի շատէ:
զի պարծանք ձեր եմք. որպէս և դուք մեր յա-
15 ւուրն Տն մերոյ Յի Քի: * Եւ յայս ապաստան
կամէի նախ առ ձեզ գալ՝ զի դուք կրկին շնորհս
16 ընդունիցիք: * Եւ ՚ի ձէնջ երթալ ՚ի Մակեդոնիա.
և ՚ի Մակեդոնիոյ գալ առ ձեզ: և ՚ի ձէնջ յու-
17 ղարկել ՚ի Հրէաստան: * Իսկ եթէ զայս խորհե-
ցայ՝ մի թէ թեթևութ՞բ ինչ գնայի: և կամ
զոր խորհիմս ըստ մարմնոյ ինչ խորհիցիմ, (այլ)
զի եղիցի յինէն կողմանէ. այոն, այո: և ոչն, ոչ:
18 * Հաւատարիմ է Ած՝ զի բանն մեր՝ որ առ ձեզ
19 եհաս՝ ոչ է այո, և ոչ: * Քանզի Որդին Այ Յս
Քս, որ ՚ի ձեզ մեօք քարոզեցաւ, ինև և սիղուա-
նոսիւ, և տիմոթէիւ, ոչ եղև այո, և ոչ. այլ
20 այոն ՚ի նմին եղև: * Զի որչափ աւետիքն Այ՝
են ՚ի նմա այոն: վասն որոյ և նովին ամէնն մեօք
21 ՚ի փառս Այ: * Այլ որ հաստատեացն զմեզ
ձեօք հանդերձ ՚ի Քս, և որ էօծ զմեզ՝ Ած է:
22 * Որ և կնքեաց զմեզ. և ետ զառհաւատչեայ

23 Հոգւոյն ՚ի սիրտս մեր։ * Այլ ես վկայ զԱծ̃
կոչեմ անձին իմոյ. զի վն̃ խնայելոյ ՚ի ձեզ՝ ոչ ևս
եկի ՚ի կորնթոս։ զի ոչ եթէ տիրեմք ձեզ հաւատովքս՝ այլ գործակիցք եմք շնորհացդ ձերոյ.
քանզի հաւատովք հաստատեալ կայք։

ԳԼ. Բ.

1 Բայց զայս և եթ ընտրեցի՝ զի մի միւսանգամ
Բ.Զ. տրտմութե̃ եկից առ ձեզ։ * Զի եթէ ես
տրտմեցուցանեմ զձեզ։ և ո՞վ է՝ որ ուրախ առնի-
3 ցէ զիս, եթէ ոչ՝ որ տրտմիցի յինէն։ * Եւ զայս
զի գրեցի՝ զի մի յորժամ գայցեմ, զտրտմութի̃
ինչ կրիցեմ, ուստի արժան էր ինձ ուրախ լի-
նել։ յուսացեալ եմ ՚ի ձեզ ամենեսին. զի իմ
4 ուրախութիւն՝ ձեր ամենեցուն է։ * Զի ՚ի բազ-
մաց վշտաց՝ և ՚ի նեղութե̃ սրտի գրեցի առ ձեզ
բազում արտասուօք։ ոչ զի տրտմիցիք՝ այլ զի
զսէրն իմ գիտասջիք, զոր ունիմ առաւելապէս
5 առ ձեզ։ * Ապա եթէ ոք տրտմեցոյց՝ ոչ եթէ
զիս տրտմեցոյց. այլ փոքր ՚ի շատէ՝ զի մի ծանրա-
6 ցայց ամենեցուն ձեզ։ * Շատ է այնպիսւոյն պա
7 տուհասն այն՝ որ ՚ի բազմաց անտի է։ * Այսու-
հետև նմին հակառակ մանաւանդ շնորհել ձեզ
նմա՝ և մխիթարել. զի մի յառաւել տրտմութենէն
8 ընկղմեսցի այնպիսին։ * Վն̃ որոյ աղաչեմ զձեզ
9 հաստատել ՚ի նա զսէրն։ * Վն̃ այնորիկ իսկ և
գրեցի. զի զփորձ առից զձեր՝ եթէ յա̃մի հպատակ
10 իցէք։ * Եթէ ումեք շնորհիցէք՝ և ես։ քանզի
և ես եթէ շնորհիցեմ, զորինչ շնորհիցեմն՝ վն̃
11 ձեր ՚ի դէմս Քի̃։ * Զի մի զրկիցիմք ՚ի սատա-
նայէ։ քանզի չեմք ինչ անտեղեակ խորհրդոյն
նորա։

12 Գ.Կ. * Այլ իբրև հասի ես ՚ի տրօադա յաւետարանն
13 Քի̃, և դուռն բաց էր ինձ ՚ի Տր̃։ * Ո՛չ ետու
զհանգիստ հոգւոյ իմոյ։ քանզի ոչ գտի ես անդ
զտիտոս զեղբայր իմ։ այլ հրաժարեալ ՚ի նոցանէ՝
գնացի ՚ի մակեդոնիա։

14 * Այլ Այ շնորհ՝ որ յամենայնի հռչակ հարկանէ զմէնջ 'ի Քս̅ Յս̅, և զհոտ գիտութե̃ իւրոյ յայտնի առնէ մեօք յամ̅ տեղիս: 15 * Զի հոտ անոյշ եմք Քսի առ Ած. 'ի մէջ փրկելոցն՝ և 'ի մէջ կորուսելոցն: 16 * Ոմանց հոտ 'ի մահուանէ 'ի մահ: և ոմանց հոտ 'ի կենդանութե̃է 'ի կեանս: և առ այս ո՞ բաւական իցէ: 17 * Քանզի ոչ եմք իբրև զայլսն, որք վաճառականք լինին բանին Այ: այլ իբրև 'ի հաստատութե̃է. այլ իբրև յԱյ. առաջի Այ 'ի Քս̅ խօսիմք:

ԳԼ. Գ:

1 Սկսանիմք այսուհետև վերստին զանձինս ընծայեցուցանել ձեզ: Թէպէտ և ոչ պիտոյ իցեն մեզ (որպէս ոմանց) թուղթք ընծայութե̃ առ ձեզ. կամ 'ի ձէնջ: 2 * Այլ թուղթք մեր դուք էք՝ գրեալ 'ի սիրտս մեր՝ ծանուցեալ՝ և ընթերցեալ յամ̅ մարդկանէ: 3 * Յայտնեալք՝ զի էք թուղթք Քսի, պաշտեցեալք 'ի մէնջ: և գրեալ՝ ոչ մրով, այլ հոգւով Այ կենդանւոյ: ոչ 'ի տախտակս քարեղէնս, այլ 'ի տախտակս սրտի, մարմնեղէնս: 4 * Յոյս մի այսպիսի ունիմք 'ի ձեռն 5 Քսի առ Ած: Իբրև ոչ եթէ անձամբ բաւականք եմք խորհիլ ինչ իբրև 'ի մէնջ. այլ բաւականութիւն մեր յԱյ է: 6 * Որով բաւական արար զմեզ՝ պաշտօնեայս նորոյ կտակարանայս՝ ոչ գրով, այլ հոգւով: զի գիրն սպանանէ. այլ հոգին կեցուցանէ:

7 Գ.Գ. * Զի եթէ պաշտօնն մահու գրով դրոշմեալ 'ի տախտակսն քարեղէնս եղև փառօք՝ զի մի կարասցեն հայել որդիքն Իլի յերեսսն Մովսէսի՝ վասն փառաց երեսաց նր̅, որ խափանելոցն էր: 8 * Որչափ ևս առաւել պաշտօն Հոգւոյն եղիցի 9 փառօք: * Զի եթէ պաշտօն դատապարտութե̃ն փառօք էր, ո՞րչափ ևս առաւել պաշտօն արդա- 10 րութե̃ն փառօք: * Քանզի ոչ եթէ փառաւորի փառաւորեալն յայսմ մասին, վս̅ առաւելութե̃

11 փառացն։ * Զի եթէ որ խափանելոցն էր՝ այն
փառօք էր, որչափ եւս առաւել՝ որ կալոցն է՝ փա-
12 ռօք լիցէ։ * Եւ արդ՝ զի ունիմք զայսպիսի յոյս,
13 բազմաւ համարձակութ̅բ վարեսցուք։ * Եւ ոչ ո̅պ
Մովսէսն արկանէր քօղ 'ի վերայ երեսաց իւրոց,
մ̅ չհայելոյ որդւոցն Իլի 'ի վախճան խափանելոյն։
14 * Այլ կուրացան միտք նոցա։ քանզի մինչեւ ցայ-
սօր ժամանակի նոյն քօղ ձգեալ կայ 'ի վերայ ըն-
թերցուածոյ հին կտակարանացն։ եւ ոչ վերանայ
15 (զի Ք̅ի խափանելոց է։) * Այլ մինչեւ ցայսօր՝
որչափ ընթեռնուն զՄովսէս՝ նոյն առագաստ կայ
16 'ի վերայ սրտից նոցա։ * Այլ յորժամ դարձցին
առ Տ̅ր՝ ապա վերասցի առագաստն։
17 * Զի Տ̅ր հոգին է։ ուր հոգի Տ̅ն է, անդ
18 ազատութ̅ի է։ * Բայց մեր ամենեցուն բացօք ե-
րեսօք զփառսն Տ̅ն իբրեւ ը̅ հայելի տեսեալ՝ 'ի նոյն
պատկեր նորոգեմք 'ի փառաց 'ի փառս. որպէս եւ
'ի Տ̅ն հոգւոյ։

ԳԼ. Դ.

1 Վ̅ այնորիկ ունիմք զպաշտօնս զայս՝ որպէս եւ
գտաք զողորմութիւն, եւ ոչ ձանձրանամք։
2 * Այլ հրաժարեցաք 'ի գաղտնեաց ամօթոյն. զի
մի գնասցուք խորամանկութ̅բ, եւ մի նենգեսցուք
զբանն Ա̅յ. այլ յայտնութ̅բ ճշմարտութ̅են ըն-
ծայեցուսցուք զանձինս մեր առ ա̅մ միտս մարդկան
3 առաջի Ա̅յ։ * Ապա եթէ իցէ եւս ծածկեալ ա-
ւետարանն մեր՝ 'ի մէջ կորուսելոյն է ծածկեալ։
4 * Նոցա աստուածած աշխարհիս այսորիկ կուրացոյց
զմիտս անհաւատիցն, զի մի ծագեսցի 'ի նոսա
լուսաւորութիւն աւետարանի փառացն Ք̅ի։ որ է
5 պատկեր աներեւութին Ա̅յ։ * Զի ոչ եթէ զան-
ձինս քարոզեմք՝ այլ զՅ̅ս Ք̅ս զՏ̅ր մեր։ եւ զմեզ
6 ծառայս ձեզ վասն Ք̅ի։ * Զի Ա̅ծ որ ասաց 'ի
խաւարի զլոյս ծագել. որ եւ ծագեաց իսկ 'ի սիրտս
մեր զլուսաւորութիւն գիտութ̅ե փառացն Ա̅յ 'ի
7 դէմս Յ̅ի Ք̅ի։ * Այսուհետեւ ունիմք զգանձս

զայս յամանս խեցեղէնս ։ զի առաւելութիւն զօրութեան
8 իցէ յԱ՟յ, և ոչ ’ի մէնջ ։ * Յա՟մի նեղեալք՝
այլ ոչ նուաղեալք ։ կարօտեալք՝ այլ ոչ տարակուսեալք
9 ։ * Հալածեալք՝ այլ ոչ լքեալք ։ չարչարեալք՝
10 այլ ոչ սատակեալք ։ * Յա՟մ ժամ
զմահն Յ՟ի ’ի մարմինս մեր կրեսցուք՝ զի և կեանքն
Յ՟ի ’ի մարմինս մեր յայտնեսցին ։
11 * Քանզի միշտ մեք՝ որք կենդանիքս եմք, ’ի մահ
մատնիմք վ՟ս Յ՟ի․ զի և կեանքն Յ՟ի յայտնի լիցին
12 ’ի մահկանացու մարմինս մեր ։ * Այսուհետև մահ
13 ’ի մեզ զօրանայ, և կեանք ’ի ձեզ ։ * Արդ՝ ունիմք
զնոյն հոգի հաւատոյ ։ որպէս և գրեալ է ։ Հաւատացի՝
վ՟ս որոյ և խօսեցայ ։ և մեք հաւատամք վ՟ս
14 որոյ և խօսիմք իսկ ։ * Զայս գիտեմք՝ եթէ որ
յարոյցն զՅ՟ս, և զմեզ ընդ Յ՟ի յարուսցէ՝ և յանդիման
15 կացուսցէ ձեօք հանդերձ ։ * Զի ա՟մ ինչ
վ՟ս ձեր է ։ զի շնորհքն յաճախեալք, ի բազմաց
գոհութէ անտի՝ առաւելասցին ’ի փառս ա՟յ ։
16 * Վ՟ս որոյ և ոչ ձանձրանամք․ այլ թէպէտ և
արտաքին մարդս մեր ապականի՝ այլ ներքին մարդն
17 մեր նորոգի օր ըստ օրէ ։ * Զի առժամայն յաճախութի
թեթև նեղութեան մերոյ՝ ’ի յաւիտենականն
առաւելութիւն, զմեծութիւն փառացն գործէ ’ի
18 մեզ ։ * Քանզի ոչ դիտեմք զերևելիս՝ այլ զաներևոյթսն
։ զի երևելիքս առժամանակ մի են․
և աներևոյթքն յաւիտենականք ։

ԳԼ․ Ե․

1 Քանզի գիտեմք՝ եթէ երկրաւոր տաճար շինուածոյս
մերոյ քակտեսցի, զշինուած յԱ՟յ ունիմք․
տաճար առանց ձեռագործի, յաւիտենական յերկինս
2 ։ * Եւ ընդ այս տառապիմք ։ քանզի զբնակութիւն
3 երկնից փափագեմք զգենուլ ։ * Միայն թէ
յորժամ զգենուցումք՝ ոչ մերկք գտանիցիմք ։
4 * Քանզի որք եմք ընդ յարկաւս ընդ այսոսիկ՝
տառապիմք ծանրացեալք ։ զի ոչ կամիմք մերկանալ,
այլ զգ՟ն ’ի վերայ այսր զգենուլ․ զի ընկղմեսցի
մահկանացուս ’ի կենաց անտի ։

5 * Այլ որ յաջողէն մեզ ՚ի սոյն՝ Ած է. որ ետ
6 մեզ զառհաւատչեայ Հոգւոյն: * Արդ՝ համարձա-
կեմք յամ՟ ժամ, եւ գիտեմք, եթէ որչափ յամեմք
7 ՚ի մարմնի աստ՝ օտարանամք ՚ի Տէ՟: (* Զի հա-
8 ւատովք գնամք՝ եւ ոչ կարծեօք:) * Այլ համար
ձակեմք՝ եւ առաւել եւս հաճեալ եմք ելանել ՚ի
9 մարմնոյ աստի՝ եւ մտանել առ Ած: * Վս՟ որոյ եւ
աշխատանամք: զի եթէ յամփոփեմք՝ եւ եթէ ելանի-
10 ցեմք՝ հաճոյ եւ եթ լինիցիմք նմա: * Քանզի ամե-
նեյուն մեզ յանդիման լինել կայ առաջի ատենին
Քի՟: զի ընկալցի իւրաքանչիւր իւրով մարմնովն՝
զորինչ գործեաց յառաջ՝ եթէ բարի եւ եթէ
11 չար: * Իսկ արդ զահն Տն՟ գիտելով չափ զմարդ-
կան ինչ միտս հաճեմք. սակայն առաջի Այ՟ յայտ
նելոց եմք: բայց եւ յուսամ եւ ՚ի ձեր միտս յայտ
12 նի լինել: * Իբր ոչ եթէ միւսանգամ զանձինս
ինչ ընծայեցուցանեմք ձեզ՝ այլ պատճառս տամք
ձեզ պարծանաց վս՟ մեր. զի ունիցիք առ այնոսիկ՝
13 որք առ աչօք պարծիցին՝ եւ ոչ սրտիւք: * Զի
եթէ առաւելցաք ինչ՝ այն Այ՟ է: եւ եթէ զգաս
14 տանամք՝ այն ձեր է: * Զի սէրն Քի՟ ստիպէ
զմեզ քննել զայս: զի եթէ մին փոխանակ ամենե
ցուն մեռաւ, ապա ուրեմն ամենեքեան մեռեալ էին:
15 * Եւ ՚ի վերայ ամենեցուն մեռաւ Քս՟: զի որք
կենդանիք իցեն՝ մի անձանց իցեն կենդանիք. այլ
այնմ, որ ՚ի վերայ նոցայն մեռաւ՝ եւ յարեաւ:
16 * Այսուհետեւ մեք ոչ զոք գիտեմք մարմնով: զի
թէպէտ եւ գիտէաք մարմնով զՔս՟՝ այլ արդ
17 ոչ եւս նոյնպէս գիտեմք: * Բայց եթէ ՚ի Քս՟
նոր արարած ինչ իցէ: զի հինն էանց. եւ արդ
18 նոր եղեւ ամ՟: * Այլ ամ՟ ինչ յԱյ՟՝ որ հաշտե-
ցոյց զմեզ ընդ իւր ՚ի ձեռն Քի՟: եւ ետ մեզ զպաշ
19 տօնն հաշտութեան: * Եւ՛ քանզի Ած էր՝ Քի՛ զաշ
խարհս հաշտեցուցանել ընդ իւր, եւ չհամարել
նոցա զմեղս իւրեանց: եւ եդ ՚ի մեզ զբանն հաշ
20 տութեան: * Արդ վս՟ Քի՟ պատգամաւորեմք՝ որպէս
եւ Այ՟ բարեխօսութի՟ մեօք: աղաչեմ վս՟ Քի՟

21 հաշտեցարո՛ւք ընդ Այ։ * Զի զայն, որ ո՛չն գի-
տէր մեղս՝ վս̅ մեր մեղս արար. զի մեք եղիցուք
նովաւ արդարութի̅ Այ։

Գլ. Զ։

1 Գործակիցք եմք ձեր՝ և աղաչեմք. մի՛ ընդունայն
2 զշնորհսն Այ ընդունիլ ձեզ։ * Զի ՚ի ժամա-
նակի ընդունելութե̅, ասէ, լուայ քեզ. և յաւուր
փրկութե̅ օգնեցի քեզ։ ահաւասիկ ժամանակ ըն-
3 դունելի։ ահա օր փրկութե̅։ * Մի՛ և մի՛ իւիք
տայցէք պատճառս, զի մի՛ արատեսցի պաշտօնն։
4 * Այլ յա̅մի ընծայեցուցէք զանձինս ձեր իբրև
զպաշտօնեայս Այ համբերութե̅ բազմաւ։ ՚ի նեղու-
5 թիւնս. ՚ի վիշտս. ՚ի չարչարանս։ * ՚Ի գանս. ՚ի
բանտս. ՚ի խռովութիւնս. յաշխատութիւնս. ՚ի
6 հսկմունս. ՚ի պահս։ * ՚Ի սրբութե̅. ՚ի գիտութե̅.
յերկայնմտութե̅. ՚ի քաղցրութե̅. ՚ի հոգի ս̅ր.
7 ՚ի սէր առանց կեղծաւորութե̅։ * ՚Ի բանս ճշմար-
տութե̅. ՚ի զօրութե̅ Այ։ վս̅ զինուն արդարու-
8 թե̅՝ որ ընդ աջմէն և ընդ ահեկէն է։ * Փառօք և
անարգութե̅։ գովութե̅ և պարսաւանօք։ իբրև մո-
լարք՝ և ճշմարիտք. իբրև անծանօթք՝ և ծանուցեալք։
9 * Իբրև մահկանացուք՝ և ահաւասիկ կենդանիք
եմք։ իբրև խրատեալք՝ և ոչ մահապարտեալք։
10 * Իբրև տրտմեալք՝ և հանապազ ուրախ եմք։ իբ-
րև տնանկք՝ և զբազումս մեծացուցանեմք։ իբրև
ոչինչ ունիմք՝ և զամենայն ինչ ունիմք։
11 * Բերանք մեր բացեալք են առ ձեզ, կո՛րնթա-
ցիք՝ և սիրտք մեր ընդարձակեալք։
12 * Ոչինչ նեղիք ՚ի մէնջ՝ բայց եթէ ՚ի գութս
13 ձեր նեղիցիք։ * Արդ զնոյն հատուցումն իբրև
ընդ որդեակս ունիմ. ընդարձակեցարո՛ւք և դուք։
14 * Եւ՛ մի՛ լինիք լծակիցք անհաւատից։ քանզի զի՞նչ
հաղորդութի̅ է արդարութե̅ ընդ անիրաւութե̅։
և կամ զի՞նչ հաւասարութի̅ է լուսոյ ընդ խաւա-
15 րի։ * Եւ՛ կամ զի՞նչ միաբանութիւն է Ք̅ի ընդ
բելիարայ։ կամ զի՞նչ բաժին կայ հաւատացելոյն

16 ընդ անհաւատին: * Կամ զի՞նչ նմանութիւն է
տաճարի Ա՟յ մեհենաց: ապաքէն դուք տաճար Ա՟յ
կենդանւոյ էք: որպէս և ասաց Ա՟ծ. թէ բնակեցայց
՚ի նոսա: և գնացից ՚ի նոսա՝ և եղէց նոցա
17 Ա՟ծ: և նոքա եղիցին իմ ժողովուրդ: * Վասն
որոյ ելէք ՚ի միջոյ ն՟ց՝ և մեկնեցարուք, ասէ Տ՟ր: և
18 ՚ի պիղծս մի՛ մերձենայք: * Եւ ես ընկալայց զձեզ:
և ես եղէց ձեզ ՚ի հայր: և դուք եղիջիք ինձ
յուստերս, և ՚ի դստերս, ասէ Տ՟ր ամենակալ:

Գլ. Է:

1 Իսկ որովհետև զայս աւետիս ունիմք սիրելիք՝
Գ. Ջ. սրբեսցուք զանձինս մեր յա՟մ պղծութենէ մարմնոյ
և հոգւոյ. կատարեսցուք զսրբութիւն ահիւն ա՟յ:
2 * Տարայք մեզ, զի ոչ ումեք մեղաք. և ոչ զոք եղծաք.
3 և ոչ զոք զրկեցաք: * Ոչ եթէ ՚ի դատապարտութիւն
ինչ ասեմ. քանզի յառաջ իսկ ասացի,
եթէ ՚ի սրտի մերում կայք՝ ՚ի կեալ և ՚ի
4 մեռանիլ ընդ ձեզ: * Բազում համարձակութիւն
է ինձ առ ձեզ. բազում պարծանք են ինձ վասն
ձեր. լի՛ եմ մխիթարութ՟բ՝ առաւելեալ եմ ուրախութ՟բ
5 յամենայն նեղութիւնս մեր: * Քանզի յոր
ժամ հասաք մեք ՚ի մակեդոնիա, և ոչ միով իւիք
հանգիստ գտաւ մարմնոյ մերում՝ այլ յամենայնի
նեղեալք. քանզի արտաքոյ մարտք՝ և ՚ի ներքոյ արհաւիրք:
6 * Այլ որ մխիթարէն զխոնարհս, մխիթարեաց
7 զմեզ Ա՟ծ ՚ի գալստեանն տիտոսի: * Ոչ միայն
՚ի գալստեան նորա՝ այլև ՚ի մխիթարութեանն զոր
մխիթարեցաւն ՚ի ձեզ. ՚ի պատմել մեզ զանձուկն
ձեր՝ զողբումն ձեր՝ զնախանձն ձեր վ՟ն իմ, մինչ առաւել
8 ուրախ լինել ինձ: * Զի թէ և տրտմեցուցի
զձեզ թղթովն՝ ոչ զղջանամ, թէպէտ և զղջացեալ
էի: քանզի տեսանեմ՝ զի թուղթն այն
(թէ և առ ժամանակ մի) տրտմեցոյց զձեզ:
9 * Արդ ուրախ եմ, ոչ զի տրտմեցիք՝ այլ զի յապաշխարութիւնն
տրտմեցիք: քանզի տրտմեցայք
դուք ըստ ա՟յ. զի մի՛ իւիք զրկեսցիք ՚ի մէնջ:

10 * Զի որ ըստ Այ տրտմութիւն է, զապաշխարու-
թիւն 'ի փրկութիւն առանց զղջանալոյ գործէ. իսկ
աշխարհի տրտմութիւն զմահ գործէ.
11 * Արդ նոյն իսկ որ ըստ Այ տրտմեցայք՝ որչափ ինչ
փոյթ գործեաց 'ի ձեզ. կամ աղերս՝ կամ սաստ՝
կամ երկիւղ՝ կամ անձուկ՝ կամ նախանձ՝ կամ
վրէժխնդրութիւն : քանզի յամենայնի ընծայեցու-
ցիք զանձինս ձեր՝ սրս լինել յիրիդ յայդմիկ :
12 * Ապա ուրեմն թէև գրեցի ես առ ձեզ՝ ոչ վասն
այնորիկ՝ որ զրկեաց. և ոչ վասն այնորիկ՝ որ զրկե-
ցաւ. այլ վն յայտնի լինելոյ փութոյն մերոյ՝ զոր
13 ունիմք վասն ձեր առաջի Այ: * Վասն այնորիկ
մխիթարեալ եմք 'ի վերայ մխիթարութեն մերոյ :
առաւել ևս խնդացաք 'ի վերայ խնդութեն տիտո-
սի: քանզի հանգուցեալ էր հոգի նորա 'ի ձէնջ ամե-
14 նեցունց: * Զի զինչ և պարծեցայ առ նմա վասն
ձեր՝ ոչ ամաչեցի : այլ որպէս զամ ճշմարտութբ
խօսեցաք ընդ ձեզ, նոյնպէս և պարծանքն մեր առ
15 տիտոս ճշմարիտ եղեն : * Նաև գութք նորա ա-
ռաւելեալ են 'ի ձեզ : քանզի յիշեցուցանէր մեզ զա-
մենեցուն ձեր զհնազանդութիւն : թէ որպ ահիւ
16 և դողութբ ընկալայք զնա : * Եւ արդ ուրախ եմ,
զի յամենայնի համարձակ եմ առ ձեզ:

Գլ. Ը :

1 Ծանուցանեմ ձեզ եղբարք զշնորհսն Այ՝ որք տը-
Գկ. ուեալ են եկեղեցեացն մակեդոնացւոց :
2 * Զի մեծաւ հանդիսիւ նեղութեն՝ առաւելութի
խնդութեն նոցա . և ծանր աղքատութիւն նոցա՝
առաւել եղև 'ի մեծութիւն առատութեան նոցա:
3 * Զի ըստ կարի նց վկայեմ. և աւելի քան զկար:
4 * Ինքնակամ բազում աղաչանօք աղաչեցին զշնորհ
սըն, և զհաղորդութիւն պաշտամանն , որ 'ի սրբն՝
5 տալ ցմեզ : * Ոչ որչափ ակն ունէաք , այլև զան-
ձինս ևս ետուն . նախ Տն՝ և ապա մեզ կամօքն Այ:
6 * Աղաչել զտիտոս՝ զի որպէս սկսաւն յառաջագոյն,
նոյնպէս և կատարեսցէ 'ի ձեզ և զայդ ևս շնորհ :

7 * Այլ որպէս յամ̅ն առաւելէք հաւատովք՝ և
բանիւ, և գիտութեամբ՝ և ամ̅ փութով։ և որ ՚ի
մէնջ ՚ի ձեզ սէրն է. զի և յայդմ ևս շնորհի
8 առաւել լինիցիք։ * Ո՛չ որպէս հրաման տալով
ասեմ. այլ վ̅ն այլոց փութոյ, և վ̅ն ձերոյ սիրոյ՝
9 զմտերմութիւնդ փորձեմ։ * Քանզի գիտէք զշնորհսն
Տ̅ն մերոյ Յ̅ի Ք̅ի։ զի վ̅ն ձեր աղքատացաւ՝
որ մեծատունն էր. զի դուք նորա աղքատութեամբն
10 մեծասջիք։ * Եւ՛ խրատ մի յայսմիկ տամ. զի այն
իսկ օգտի ձեզ է. որք ոչ միայն զառնելն՝ այլ և
զկամիլն յառաջագոյն սկսայք ՚ի հերուն հետէ։
11 * Բայց արդ և զառնելն իսկ կատարեցէք. զի ոպ̅
յօժարութիւնն ՚ի կամաց է, նոյնպէս և առնելն
12 ըստ գոյին։ * Զի եթէ յօժարութիւնն առաջի
կայ, ըստ գոյին ընդունելի է՝ և ոչ եթէ ըստ
13 չգոյին։ * Զի ոչ եթէ այլոց զհանգիստ կամիցիմ,
14 և ձեզ զնեղութիւն։ * Այլ հաւասարութեամբ.
այժմու ժամանակիս, ձեր առաւելութիւնդ ՚ի նոցա
պակասութեան։ զի և նոցա առաւելութիւնն եղիցի ՚ի
ձերում պակասութեանդ, զի եղիցի հաւասարութ̅ի՝
15 որպէս և գրեալ է։ * Թէ որ զբազումն էառ՝ ոչ
առաւելաւ. և որ զսակաւն էառ՝ ոչ նուազեցաւ։
16 ԴԲ։ * Բայց շնորհք Ա̅յ՝ որ էարկ զնոյն փոյթ
17 վ̅ն ձեր ՚ի սիրտ Տիտոսի։ * Զի զաղաչանսն ընկալաւ՝
և փութացաւ. յօժարագոյն դիմեաց գալ
18 առ ձեզ։ * Եւ՛ առաքեցաք ընդ նմա զեղբայրն՝
որոյ գովութիւն յաւետարանի անդ է ընդ ամ̅
19 եկեղեցիս։ * Եւ՛ ոչ այսչափ միայն, այլև ձեռնադրեալ
յեկեղեցեաց անտի, նշդեհակից մեր եղև
՚ի շնորհս յայսմիկ՝ որք պաշտին ՚ի մէնջ ՚ի փառս
Տ̅ն՝ և ՚ի մեր յօժարութիւն։
20 * Բայց զայս խոյսէաք իսկ՝ թէ արդեօք ոք ինչ
դնիցէ ՚ի հաստատութեան յայսմիկ՝ որ պաշտեցաւս
21 ՚ի մէնջ։ * Քանզի խորհիմք զբարիս, ոչ միայն
22 առաջի Տ̅ն. այլև առաջի մարդկան։ * Եւ՛ առաքեցաք
ընդ նոսա զեղբայրն մեր՝ զոր ընտրեցաք
՚ի բազում իրս՝ բազում անգամ պինտ գտեալ։ և
առաւելևս այժմ պնդագոյն յուսով մեծաւ ՚ի ձեզ։

23 * Բայց եթէ վ̅ն տիտոսի ինչ բանք են, իմ հաւասար է՝ և ձեր գործակից. և եթէ եղբարք մեր, առաքեալք եկեղեցւոյ՝ և փառք Ք̅ի :
24 * Եւ արդ զհանդէս սիրոյ ձերոյ՝ և զմերոյ պարծանացն վ̅ն ձեր, 'ի դոսա ցուցջիք յանդիման ամենայն եկեղեցեացն :

ԳԼ. Թ.

1 Այլ վ̅ն պաշտամանն որ 'ի ս̅բսն է՝ աւելի է
Դ.Գ. ինձ գրել առ ձեզ : * Զի գիտեմ զյօժարութիւն ձեր, զոր վ̅ն ձեր պարծեցեալ եմ 'ի մէջ մակեդօնացւոյն. թէ աքայեցիքն 'ի հերուն հետէ պատրաստեն. և ձեր նախանձն զբազումս
3 յորդորեաց : * Եւ առաքեցաք զեղբարսն՝ զի մի պարծանքն մեր՝ որք վ̅ն ձեր՝ ընդունայն լինիցին 'ի մասինդ յայդմիկ. այլ (որպէս ասէի իսկ՝) պատ-
4 րաստագոյնք գտանիջիք : * Գուցէ յորժամ գայցեն ընդ մեզ մակեդօնացիքն՝ և գտանիցեն զձեզ անպատրաստս, և ամաչեսցուք մեք, (զի մի ասասցուք թէ դուք) 'ի մասինդ յայդմիկ պարծանաց :
5 * Արդ կարևոր համարեցայ աղաչել զեղբարս, զի յառաջագոյն եկեսցեն առ ձեզ. և յառաջագոյն պատրաստեսցեն, զյառաջագոյն խոստացեալ օրհնութիւնն ձեր 'ի պատրաստի ունել : այնպէս իբրև
6 զօրհնութիւն, և մի իբրև զագահութիւն : * Քան զի որ սերմանէ ճշդելով՝ ճշդելով և հնձեսցէ : և որ սերմանէ առատութ̅բ՝ առատութ̅բ և հնձես-
7 ցէ : * Իւրաքանչիւր որպէս և յօժարիցի դք սրտի՛. մի առ հարկի և տրտմութ̅ե : քանզի զտուրս զուարթս առատս սիրէ Ա̅Ծ :
8 * Այլ կարող է Ա̅Ծ զա̅մ շնորհս առաւելուլ 'ի ձեզ : զի յա̅մի յա̅մ ժամ զա̅մ՝ բաւականութիւն ընկալեալ՝ առաւելուցուք յա̅մ գործս բարութ̅ե :
9 * Որպէս և գրեալ է : ցրուեաց, և ետ աղքատաց՝ արդարութիւն նորա մնայ յաւիտեան :
10 Դ.Դ. * Այլ այն՝ որ պարգևէ զսերմն սերմանահանաց՝ և զհաց 'ի կերակուր, պարգևեսցէ՝ և բազմացուսցէ զսերմանսն ձեր. և աճեցուսցէ զար-

11 դիւնս արդարութե՟ ձերոյ։ * Յամե՟ մեծացեալք
ամ՟ առատութբ՟՝ որ յօրինէ մեօք զգոհութիւն
12 Այ՟։ * Զի պաշտօն հարկիս այսորիկ՝ ոչ միայն
առ 'ի լնուլ զպակասութի՟ սրբոյն է. այլ եւ առա-
13 ւելուլ բազմօք գոհութիւնս Այ՟։ * Հանդիսիւ
պաշտամանս այսորիկ փառաւորել զԱծ՟ 'ի վերայ
հնազանդութե՟ խոստովանութե՟ ձերոյ յաւետա-
րանն Քի՟։ եւ առատութբ՟ հաղորդութե՟ն 'ի նոսա՝
14 եւ յամենեսին։ * Եւ նոցա աղօթք վս՟ ձեր՝ քանզի
անձկացեալ են առ ձեզ վս՟ առաւել շնորհացն այ՟
15 որ 'ի ձեզ։ * Այլ շնորհք այ՟ 'ի վերայ անպատում
պարգեւացն նորա։

ԳԼ. Ժ։

1 Այլ ես ինքն Պօղոս աղաչեմ զձեզ հեզութբ՟
Դ.Ե. եւ հանդարտութբ՟ն Քի՟. որ յանդիման ձեզ՝
իբրեւ զտառապեալ մի եմ 'ի միջի ձերում։ բայց
2 'ի հեռուստ համարձակիմ առ ձեզ։ * Աղաչեմ,
զի մի 'ի մօտոյ եւ եթ համարձակիցիմ վստահութբ՟.
կամ համարիցիմ յանդգնիլ 'ի վերայ ոմանց՝ որք
կարծեն զմէնջ՝ եթէ ըստ մարմնոյ գնայցեմք։
3 * Զի թէպէտ եւ մարմնով գնամք՝ այլ ոչ եթէ
4 ըստ մարմնոյ զինուորիմք։ * Զի զէն զինուորու-
թե՟ մերոյ ոչ է մարմնաւոր, այլ զօրաւոր յԱյ՟,
առ 'ի քակելոյ զամուրս. զխորհուրդս քակեմք։
5 * Եւ զամ՟ բարձրութի՟ հպարտացեալ 'ի վերայ
գիտութե՟ Այ՟. եւ գերեմք զամ՟ միտս 'ի հնազան-
6 դութիւնն Քի՟։ * Եւ 'ի պատրաստի ունիմք խնդ-
րել զվրէժ ամ՟ անհնազանդութե՟, յորժամ ձեր
7 եւս հնազանդութի՟դ կատարեսցի։ * Ըստ իւրաքան
չիւր երեսաց դիտեսջիք։ եթէ ոք վստահ յանձն
իցէ Քի՟ լինել, զայս խորհեսցի դարձեալ 'ի միտս
իւր. թէ ոպ՟ նայն Քի՟ է՝ նոյնպէս եւ մեք։
8 * Զի թէ առաւել եւս պարծեցայց վս՟ իշխանու-
թե՟ մերոյ՝ զոր ետ մեզ Տր՟ 'ի շինել՝ եւ ոչ 'ի քա-
9 կել զձեզ՝ ոչինչ ամաչեցից։ * Զի մի թուեցայց
իբրեւ զահ ինչ արկանել ձեզ թղթովքս։

10 * Ասիցէ՛ք, թուղթս ծանունք են եւ սաստիկք,
այլ տեսիլ մարմնոյ տկար՝ եւ բանն արհամար-
11 հեալ: * Զայս խորհեսցի այնպիսին, զի որպիսիք
եմք բանիւք թղթոյդ ՚ի հեռուստ, նոյնպիսիք եւ
12 ՚ի մօտոյ արդեամբք: * Զի ոչ իշխեմք կշռել եւ
համասարել զանձինս ընդ ոմանց, որք զանձինս
իւրեանց ձեզ ընծայեցուցանեն: այլ անձամբք
յանձինս՝ զանձինս չափեն: եւ ՚ի կշռել անձամբք
13 յանձինս՝ ոչ առնուն ՚ի միտ: * Այլ մեք ոչ
եթէ յանչափս ինչ պարծիցուք: այլ ըստ չափու
կանոնին, զոր բաժանեաց մեզ ԱԾ չափու՝ հասա-
14 նել մինչեւ առ ձեզ: * Իբր ոչ եթէ հասու ինչ
չիցեմք ՚ի ձեզ, եւ ձգտեցուցանեմք զանձինս. քան-
զի մինչեւ առ ձեզ հասաք աւետարանաւն Քի.
15 * Եւ ոչ յանչափս ինչ պարծիմք օտար վաստա-
կօք: բայց զյոյս մի ունիմք զաճմանն հաւատոց ձե-
րոց՝ անդրէն ՚ի ձեզ մեծանալոյ՝ ըստ կանոնիս մե-
16 րոյ յառաւելութիւն: * ՚Ի վերեւս քան զձեզ աւետա-
րանել՝ ոչ օտար կանոնաւ ՚ի պատրաստականս ինչ
17 պարծիլ: * Զի որ պարծի՝ ՚ի Տր̄ պարծեսցի:
18 * Զի ոչ եթէ որ զանձն ընծայեցուցանէ՝ նա է
ընտրեալ. այլ զոր Տր̄ն ընծայեցուցանէ:

ԳԼ. ԺԱ:

1 Լաւ էր եթէ ներէիք փոքր մի եւ իմում անզգա-
Դ.Զ. մութեանս. այլ եւ անսայցէք իսկ: * Նախան-
ձայութեամբ զձեզ ՚ի նախանձն ԱՅ. զի խօսեցայ
զձեզ առն միում, իբրեւ զկոյս մի սր՝ յանդիման
3 կացուցանել Քի: * Բայց երկնչիմ, որպէս օձն
խաբեաց զեւայ խորամանկութբն իւրով, ապակա-
նեսցին միտք ձեր ՚ի միամտութենէն՝ որ ՚ի Քս:
4 * Զի եթէ որ գալոցն իցէ՝ զայլ Քս քարոզի-
ցէ՝ զոր մեք ոչ քարոզեցաք: կամ զոգի օտար
առնուցուք՝ զոր ոչ առիք. կամ աւետարան օտար՝
զոր ոչ ընկալայք. բարւոք անսայիք նմա:
5 * Բայց ես այսպէս համարիմ, թէ ոչ ինչ իմիք
պակաս իցեմ քան զլաւ առաքեալսն:

6 * Թէպէտ և տգէտ եւս իցեմ բանիւ, այլ ոչ եթէ
գիտութբ։ սակայն յամենայնի յայտնեցաք ամենայնիւ ամենեւին
7 առ ձեզ։ * Եւ եթէ զմեղս ինչ գործեցի,
զի զանձն խոնարհեցուցի․ և այն, զի դուք
բարձրասջիք։ զի ձրի զաւետարանն Այ աւետարանեցի
8 ձեզ։ * Զայլ եկեղեցիս կողոպտեցի առեալ
9 զթոշակ ՚ի ձեր սպասաւորութիւն։ * Եւ յորժամ
եկի առ ձեզ, թէպէտ և պակասեցայ ինչ, ոչ
զոք ՚ի ձէնջ ծանրացուցի։ զի զպակասութիւնն
իմ լցին եղբարքն եկեալք ՚ի Մակեդոնիայ։ և
յամենայնի առանց ծանրանալոյ ձեզ զանձն իմ պահեցի՝
10 և պահեցից։ * Քանզի գոյ յիս ճշմարտութիւնն
Քի։ զի պարծանքս այս ոչ արգելցին յի
11 նէն ՚ի կողմանս Աքայեցւոց։ * Ընդէ՞ր։ իբրու թէ
12 ոչ սիրիցեմ զձեզ։ զայն Ած գիտէ։ * Զոր առնեմս՝
և արարից։ զի հատից զպատճառս այնոցիկ՝
որք զպատճառան կամիցին։ զի որով պարծիցին,
13 և նոքա իբրև զմեզ գտանիցին։ * Զի այնպիսիքն
են սուտ առաքեալք․ մշակք նենգաւորք․ կերպարանին
14 ՚ի կերպարանս առաքելոցն Քի։ * Եւ չեն
ինչ զարմանք։ քանզի և ինքն սատանայ կերպարանի
15 ՚ի հրեշտակ լուսոյ։ * Եւ ոչինչ է մեծ՝
թէ և պաշտօնեայք նորա կերպարանին իբրև պաշտօնեայք
արդարութե։ որոց կատարածն եղիցի
16 ըստ գործոց իւրեանց։ * Դարձեալ ասեմ, (մի
ոք համարեսցի զիս անզգամ․ ապա թէ ոչ՝ գոնէ
իբրև զանզգամ ընկալարո՛ւք զիս․ զի և ես փոքր
17 մի ինչ պարծեցայց։) * Եւ զոր խօսիմս՝ ոչ եթէ
ըստ Տն խօսիմ, այլ իբրև անզգամութբ՝ ըստ
18 կարգի այդց պարծանաց։ * Եւ քանզի բազումք
19 պարծին ըստ մարմնոյ՝ և ես պարծեցայց։ * Մտադիւր
իմն անսայիք անմտայն ձերումդ իմաստունք։
20 * Քանզի անսայք, եթէ ոք խաբէ զձեզ․ եթէ
ոք ծառայեցուցանէ․ եթէ ոք ուտէ զձեր․ եթէ
ոք առնու ինչ․ եթէ ոք հպարտանայ․ եթէ ոք
զձեզ յանդիման հարկանէ։

21 * Ըստ անարգանացդ ասեմ, իբրև թէ մեք տկարացաք
արդեօք։ յորինչ ոք համարձակիցի (անզ-

22 զգամութբ ասեմ) համարձակիմ և ես։ * Եբրայեցի՞ք իցեն, և ես։ Իէլացի՞ք իցեն, և ես։ Զա-
23 ւակ աբրահամու իցեն, և ես։ * Պաշտօնեայք Քի իցեն (յանդգնագոյնս ասացից) Թէ առաւելեւս ես․ եթէ վաստակօք՝ առաւել։ եթէ գանիւք՝ ես առաւել։ եթէ բանտիւ՛, աւելի քան զնոսա։ եթէ մահ-
24 ուամբք՝ բազում անգամ։ * 'Ի հրէից հնգիցս,
25 քառասուն միով պակաս առի։ * Երիցս ձաղկեցայ։ միանգամ քարկոծ եղէ։ երիցս նաւակոծ եղէ։
26 զտիւ և զգիշեր յանդունդս տառապեցայ։ * 'Ի ճանապարհս բազում անգամ։ վիշտս 'ի գետոց․ վիշտս յաւազակաց․ վիշտս յազգէ․ վիշտս 'ի հեթանոսաց․ վիշտս 'ի քաղաքի․ վիշտս յանապատի․ վիշտս
27 'ի ծովու․ վիշտս 'ի սուտ եղբարց։ * 'Ի ջանս՝ և 'ի վաստակս․ 'ի տքնութիւնս բազում անգամ։ 'ի քաղց և 'ի ծարաւ․ 'ի պահս բազում անգամ։ 'ի
28 ցուրտ և 'ի մերկութե։ * Թող զայլ նեղութիւնս․ և զի հանապազ խուժանն 'ի վերայ իմ կուտիւր՝
29 և հոգք ամ եկեղեցեացն։ * Ո՞ հիւանդանայ՝ և ես ոչ հիւանդանամ։ ո՞ գայթագղի, և ես ոչ տապանիմ․
30 ԲԿ․ * Եթէ պարծիլ ինչ պարտ իցէ՝ զտկարու-
31 թեն պարծեցայց։ * Ած և Հայր Տն մերոյ Յի Քի գիտէ՝ որ է օրհնեալ յաւիտեանս, զի ոչ
32 ստեմ։ * 'Ի դամասկոս ազգապետն արետայ արքայի պահէր զքաղաքն դամասկացւոց ունել զիս։
33 * Եւ ընդ պատուհանն վանդակաւ կախեցայ ընդ պարիսպն, և փախեայ 'ի ձեռաց նորա։

ԳԼ․ ԺԲ։

1 Արդ պարծիլ ինչ պարտ իցէ՝ (այլ օգնէ ինչ ոչ։) բայց եկից 'ի տեսիլս և յայտնութիւնս
2 Տն։ * Գիտեմ զայր մի 'ի Քս յառաջ քան զչորեքտասան ամ (եթէ մարմնով՝ ոչ գիտեմ․ և եթէ առանց մարմնոյ՝ ոչ գիտեմ, Ած գիտէ) յափշտակեալ զայնպիսին մինչև յերրորդ երկինս։
3 * Եւ գիտեմ զայնպիսի այր (եթէ մարմնով՝ և

եթէ առանց մարմնոյ՝ ոչ գիտեմ, Ած գիտէ:)
4 * Զի յափշտակեցաւ ՚ի դրախտն. և լուաւ զբանս
անճառս. զորս ոչ է պարտ մարդոյ խօսել:
5 * Վասն այնպիսւոյն պարծեցայց. այլ վասն անձին
իմոյ՝ ոչ պարծեցայց՝ բայց եթէ ՚ի տկարութիւնս:
6 * Զի եթէ և կամիցիմ պարծիլ՝ ոչ եղէց անզգամ.
քանզի զճշմարտն ասեմ. այլ խնայեմ, գուցէ ոք
համարիցի յիս աւելի՝ քան զոր տեսանիցէ յիս՝
7 կամ լսիցէ յինէն: * Եւ զի մի առաւելութբ
յայտնութեցն հպարտացայց, տուաւ ինձ խայթ
մարմնոյ՝ հրեշտակ սատանայ կռփել զիս: զի մի հպար-
8 տացայց: * Եւ վս այնորիկ երիցս անգամ աղաչե-
9 ցի զՏր, զի ՚ի բաց արասցէ յինէն: * Եւ ասէ ցիս՝
շատ է քեզ շնորհ իմ: զի զօրութի իմ ՚ի տկարու-
թե կատարի: և արդ՝ լաւ ևս լիցի ինձ պարծիլ ՚ի
տկարութիւնս. զի բնակեսցէ յիս զօրութիւն Քի:
10 Բ.Կ. * Վասն որոյ հաճեալ եմ ընդ տկարութիս.
ընդ թշնամանս. ընդ վիշտս. ընդ հալածանս. և
ընդ նեղութիւնս վասն Քի: զի յորժամ տկարա-
11 նամ, յայնժամ զօրանամ: * Եղէ անզգամ, քան-
զի դուք ստիպեցիք զիս: զի ինձ պարտ էր ՚ի ձէնջ
զվկայութիւն առնուլ. թէ ոչինչ պակաս գտայ
քան զլաւ առաքեալսն: զի թէպէտ ես ոչինչ եմ:
12 * Սակայն նշանք առաքելոյ գործեցան ՚ի ձեզ՝ ամ
համբերութբ, նշանօք և արուեստիւք՝ և զօրութբք:
13 * Եւ արդ զինչ իցէ՝ որով պակաս գտայ քան
զայլ եկեղեցիս. բայց եթէ այնու՝ զի ես զձեզ
ոչ ծանրացուցի: շնորհեցէք ինձ զվնասդ զայդ:
14 * Ահաւասիկ այս երիցս անգամ պատրաստեալ եմ
գալ առ ձեզ: և ձեզ բեռն ինչ՝ ոչ եղէց: քան-
զի ոչ խնդրեմ ինչ զձեր՝ այլ զձեզ: քանզի ոչ
պարտին որդիք հարց գանձել՝ այլ հարք որդւոց:
15 * Բայց ես մտադիւրութբ ծախեցից, և ծախեցայց
վասն անձանց ձերոց: զի թէպէտ և յառաւել
16 սիրոյն զձեզ սակաւ սիրիցեմ: * Այլ գրեթէ ես
ոչինչ ծանրացայ ձեզ: այլ քանզի խորագէտ էի,
17 խեղօք կալայ զձեզ: * Միթէ որովք առաքեցի առ
18 ձեզ՝ նոքօք աղահեցի՞ ինչ ՚ի ձէնջ: * Աղաչեցի

զՏիտոս՝ և առաքեցի ընդ նմա զեղբայրն։ մի թէ
ագահեցաւ ինչ զձեր Տիտոս։ ոչ նովին ոգւով
գնայաք։ ոչ նովին շաւղօք շրջեցաք։

19 ԻԶ. * Դարձեալ համարիցիք՝ եթէ յոլով ան-
կեալ ինչ ձեզ աղերսիցեմք։ առաջի Այ ՚ի Քս
խօսիմք։ զի ամ ինչ սիրելիք վասն ձերոյ շինու-
20 թեն է։ * Այլ երկնչիմ, գուցէ եկեալ՝ ոչ որ-
պէս կամիմ, գտանիցեմ զձեզ։ և ես գտանիցիմ
ձեզ՝ որպէս և դուք ոչ կամիցիք։ գուցէ դար-
ձեալ՝ հեռ, նախանձ, սրտմտութիւնք, գրգռու-
թիւնք, չարախօսութիւնք, քսութիւնք, հպար-
տութիւնք, ամբարտաւանութիւնք, խռովութիւնք՝
21 իցեն ՚ի մէջ ձեր։ * Գուցէ դարձեալ յորժամ
գայցեմ, նկուն ինչ առնիցէ զիս Ած իմ առ ձեզ։
և զսուգ առնուցում վասն բազմաց յառաջագոյն
մեղուցելոց՝ և ոչ ապաշխարելոց՝ ՚ի վերայ պղծու-
թեն, և պոռնկութեն, և գիջութեն՝ զոր գործեցին։

ԳԼ. ԺԳ.

1 Այս երիցս անգամ գամ առ ձեզ։ զի ՚ի բերա-
նոյ երկուց և երից վկայից հաստատեսցի ամ
2 բան։ * Յառաջ ասացի՝ և դարձեալ կանխաւ
ասեմ։ յանդիման երկիցս անգամ։ և այժմ ՚ի բա
ցուստ գրեմ, յառաջագոյն յանցուցելոցն՝ և այլոցն
ամենեցուն։ զի եթէ եկից դարձեալ՝ ոչ խնայեցից։
3 * Եթէ զփորձ ինչ խնդրէք Քի, որ ինևս ընդ
ձեզ խօսի. որ հզօրացեալն է ՚ի ձեզ, և ոչ տկա-
4 րացեալ։ * Զի թէպէտ և խաչեցաւ ՚ի մերմէ
տկարութենէ. այլ կենդանի է զօրութբն Այ։ և
մեք թէպէտ և տկարանայցեմք վն Նր. այլ կեն-
դանի լիցուք ընդ նմա զօրութբն Այ։
5 * Փորձեցէք զանձինս ձեր. եթէ կայք ՚ի նմին
հաւատս։ քննեցէք զանձինս. եթէ ոչ գիտէք
զանձինս՝ զի Քս Յս ՚ի ձեզ է։ բայց եթէ անպի-
6 տանք իցէք։ * Այլ ակնունիմ թէ գիտիցէք.
7 զի մեք ոչ եմք անպիտանք։ * Այլ խնդրեմք Այ՝
զի մի ինչ արասցէ չար։ ոչ զի մեք ընտիրք

երևիցուք. այլ զի դուք զբարիս գործիցէք՝ և
8 մեք անպիտանք իցեմք։ * Զի ոչ կարեմք ինչ
հակառակ կալ ճշմարտութեան. այլ վերակացուք
9 եմք ճշմարտութեան։ * Խնդամ եմք՝ յորժամ մեք
տկարանայցեմք՝ և դուք զօրաւորք իցէք։ զդոյն
իսկ և աղօթս առնեմք զձեր հաստատութենէդ։
10 * Վասն այնորիկ զայս ՚ի հեռուստ գրեմ. զի մի
յորժամ եկից՝ սաստկութիւն վարեցայց՝ ըստ իշխանութեանս,
զոր ետ ինձ Տր̅ ՚ի շինել՝ և ոչ ՚ի քակել։
11 * Այսուհետև եղբարք, ողջ լերուք՝ հաստատուն
կացէք՝ մխիթարեցարուք՝ միաբան լերուք՝
զխաղաղութիւն արարէք։ և ԱԾ խաղաղութեան և
12 սիրոյ՝ եղիցի ընդ ձեզ։ * Ողջոյն տուք միմեանց ՚ի
համբոյր սրբութեան։ ողջոյն տան ձեզ սուրբք ամենեքեան։
13 * Շնորհք Տն̅ մերոյ Յի̅ Քի̅. և սէրն
Այ̅. և հաղորդութիւն Հոգւոյն սրբոյ ընդ ձեզ
ամենեսին։ Ամէն։



Ս. Թադէոս առաքեալ



Ս. Բարթողիմէոս առաքեալ

ԹՈՒՂԹ
ԵՐԱՆԵԼՒՈՅՆ
ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ
ԱՌ ԳԱՂԱՏԱՑԻՍՆ։

Գլուխ Առաջներորդ։

1 ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼ ՈՉ'Ի ՄԱՐԴ-
Գ.Դ. կանէ, և ոչ 'ի ձեռն մարդոյ՝ այլ 'ի ձեռն
Յ՟ի Ք՟ի, և Ա՟յ Հօր. որ յարոյց զնա 'ի մեռելոց։
2 * Եւ որք ընդ իս են եղբարք ամենեքին, եկեղե-
3 ցեացդ գաղատացւոց։ * Շնորհք ընդ ձեզ և խա-
ղաղութիւն յա՟յ հօրէ մերմէ՝ և 'ի Տ՟է Յ՟է Ք՟է։
4 * Որ ետ զանձն իւր վասն մեղաց մերոց. զի զմեզ
փրկեսցէ յաշխարհէ աստի չարէ. ըստ կամացն ա՟յ,
5 և հօր մերոյ։ * Որում փառք յաւիտեանս յաւի-
տենից՝ ամէն։
6 * Զարմանամ, զի այդպէս վաղվաղակի փոփոխիք
յայնմանէ՝ որ կոչեաց զձեզ 'ի շնորհս Ք՟ի՝ յայլ
7 աւետարան։ * Որ ոչ դոյ այլ. բայց եթէ իցեն
ոմանք՝ որք խռովեցուցանիցեն զձեզ՝ և կամիցին
8 շրջել զաւետարանն Ք՟ի։ * Այլ եթէ մեք, կամ
հրեշտակ յերկնից աւետարանեսցէ ձեզ աւելի քան
զոր աւետարանեցաքն ձեզ՝ նզովեա՛լ լիցի։
9 * Որպէս յառաջագոյն ասացաք՝ և արդ դարձեալ
ասեմ, եթէ ոք աւետարանեսցէ ձեզ՝ աւելի քան
10 զոր առիքն, նզովեա՛լ լիցի։ * Արդ՝ մարդկա՞ն հա-
ճոյ լինիցիմ, եթէ ա՟յ։ կամ խնդրիցե՞մ մարդկան

հաճոյ լինիլ: եթէ տակաւին մարդկան հաճոյ լինէի,
ապա Քի ծառայ ոչ էի:
11 Գ. Զ. * Ցուցանեմ ձեզ եղբարք զաւետարանն,
որ աւետարանեցաւ յինէն. զի ոչ է ըստ մարդոյ:
12 * Քանզի և ոչ ես 'ի մարդոյ առի: և ոչ ուսայ
յումեքէ. այլ 'ի յայտնութենէ Յի Քի:
13 * Քանզի լուեալ իսկ է ձեր զիմ գնացսն, որ
երբեմն 'ի հրէութեան անդ. զի անչափ հալածէի
14 զեկեղեցին այ. և աւեր հարկանէի զնա: * Եւ յառաջադէմ
էի 'ի հրէութեան՝ քան զբազում հասակակիցս
իմ, որք յազգին իմում էին. առաւել
նախանձախնդիր էի իմոց հայրենի աւանդութեանցն:
15 * Այլ յորժամ կամեցաւ Ած՝ որոշեաց զիս յորովայնէ
մօր իմոյ. և կոչեաց 'ի ձեռն շնորհաց
16 իւրոց, * Յայտնել զորդին իւր ինև. զի աւետարանեցից
զնա 'ի հեթանոսս: անդէն վաղվաղակի
ոչինչ առի հանդամանս մարմնոյ և արեան:
17 * Եւ ոչ ելի յԵէմ, առ որ յառաջագոյն քան զիս
առաքեալքն էին. այլ չոգայ յարաբիա. և դարձեալ
18 դարձայ 'ի դամասկոս: * Ապա յետ երից ամաց
ելի յԵէմ տեսանել զպետրոս. և եղէ առ
19 նմա աւուրս հնգետասան: * Զայլ ոք յառաքելոց
անտի ոչ տեսի, բայց միայն զյակօբոս զեղբայր
20 Տեառն: * Այլ զոր գրեմս առ ձեզ, ահաւասիկ առաջի
21 այ՝ զի ոչ ստեմ: * Ապա եկի 'ի կողմանս
22 ասորւոց և կիլիկեցւոց: * Եւ անծանօթս էի երեսօք
եկեղեցեացն՝ որք 'ի թլփատութենէ անտի էին
23 'ի Քս: * Բայց զի լսելով լուեալ էր. թէ որ հալածէր
զմեզ յայնժամ, արդ աւետարանէ զհաւատսըն՝
24 զոր երբեմն խախտէր: * Եւ փառաւոր առնէին
25 ինև զԱծ:

Գլ. Բ:

1 Ապա յետ ամաց չորեքտասանից միւսանգամ ելի
Գ. Ն. յԵէմ ընդ բառնաբայ. առեալ ընդ իս և
2 զտիտոս: * Եւ ելի ըստ յայտնութեան: և զպատմեցի
նոցա զաւետարանն՝ զոր քարոզէի 'ի հեթանոսըս,
առանձինն այնոցիկ՝ որք կարծեալքն էին. դու

ցէ ընդունայն ինչ ընթացեալ իցեմ, կամ ընթա-
3 նայցեմ ։ * Այլ և ոչ տիտոս՝ որ ընդ իս 'ի հեթանո
4 սաց էր, բռնադատեցաւ թլփատել ։ * Այլ վասն
մտադրուաց սուտ եղբարց, որք մտղեցան մտանել
դիտել զազատութիւն մեր՝ զոր ունիմք 'ի Քս̄ Յս ։
5 զի զմեզ ծառայեցուսցեն ։ * Որոց և ոչ առ ժամա
նակ մի անսացաք հնազանդութեան ։ զի ճշմարտու-
թիւն աւետարանին հաստատեսցի առ ձեզ ։
6 * Բայց ցկարծեցելոց եթէ իցեն ինչ՝ (որպիսիք ոք
երբեմն էին, չէ ինչ ինձ փոյթ ։ քանզի Ած՝ ակն
մարդկան ոչ առնու ։) զի ինձ կարծեցեալքն զայնոսիկ
7 ինչ ոչ զգայուցին ։ * Այլ զնորին հակառակն՝
իբրև տեսին թէ հաւատացեալ է ինձ աւետարա-
նըն անթլփատութե̄․ որպէս պետրոսի 'ի թլփա-
8 տութե̄ ։ (* Զի որ յաջողեաց պետրոսի յառա-
քելութիւն թլփատութե̄ն՝ յաջողեաց և ինձ 'ի
9 հեթանոսս ։) * իբրև գիտացին զշնորհսն, որք տը-
ռեալք էին ինձ, յակոբոս՝ և կեփաս, և յոհան-
նէս․ որք կարծեալք սիւնքն էին․ ձեռն ետուն
հաղորդութե̄ ինձ և բառնաբայ ։ զի մեք 'ի հեթա
10 նոսս, և նոքա 'ի թլփատութե̄ն ։ * Բայց միայն զի
զաղքատսն յիշեսցուք ։ զոր և ես փութացայ զնոյն
11 ԳԻ․ առնել ։ * Այլ յորժամ եկն կեփաս յան-
տիոք՝ ընդդէմ դարձայ նորա․ քանզի գոգ իբրև
12 ստգտեալ իսկ էր ։ * Քանզի մինչև եկեալ էին
ոմանք առ 'ի յակոբայ, ընդ հեթանոսս ուտէր ան-
խտիր ։ իսկ իբրև եկին, զատանէր՝ և որոշէր զանձն,
երկուցեալ յայնցանէ՝ որք 'ի թլփատութէ անտի
13 էին ։ * Եւ կեղծաւորեցան ընդ նմա՝ և այլ հրէ-
այքն․ մինչև բառնաբաս անգամ խոնարհեցաւ 'ի
14 նոցա կեղծաւորութիւնն ։ * Այլ իբրև տեսի թէ
ոչ ուղիղ գնան 'ի ճշմարտութիւն աւետարանին,
ասեմ կեփասու առաջի ամենեցուն․ եթէ դու որ
հրէայդ ես՝ հեթանոսաբար՝ և ոչ հրէաբար կեաս․
զիա՞րդ ստիպես հեթանոսաց լինել հրէաբար ։
15 * Զի մեք բուն հրէայք եմք․ և ոչ 'ի հեթանո-
16 սաց մեղաւորք ։ * Զայս գիտեմք՝ եթէ ոչ արդա-
րանայ մարդ 'ի գործոց օրինաց․ եթէ ոչ՝ 'ի հա-

տոյն Յ՟ի Ք՟ի: և մեք ՚ի Ք՟ս Յ՟ս հաւատացաք ,
զի արդարասցուք ՚ի հաւատոյն Ք՟ի, և ոչ ՚ի գոր-
ծոց օրինաց: զի ՚ի գործոց օրինաց ոչ արդարաս-
17 ցի ամ՟ մարմին: * Իսկ եթէ մինչ խնդրիցեմք
արդարանալ ՚ի Ք՟ս, և գտանիցիմք մեք մեղաւորք:
ապաքէն Ք՟ս մեղաց պաշտօնեայ եղև: քաւ
18 լիցի: * Զի եթէ զոր քակեցի՝ զնոյն միւսանգամ
շինիցեմ: ապա յանցաւոր զանձն իմ ես ինձէն
19 երևեցուցանեմ: * Զի ես օրինօք, օրինացն մեռայ,
20 զի Ա՟յ կեցից. և ընդ Ք՟ի ՚ի խաչ ելից: * Եւ
կենդանի եմ այսուհետև՝ ոչ ես՝ այլ կենդանի է
յիս Ք՟ս: այլ որ այժմս կեամ մարմնով հաւա-
տովք Որդւոյն Ա՟յ կեամ: որ սիրեացն զիս՝ և մատ-
21 նեաց զանձն վ՟ս իմ: * Եւ ես ոչ անարգեմ զշնորհսն
Ա՟յ: զի եթէ յօրինաց անտի է արդարութիւն,
ապա Ք՟ս ձրի մեռաւ:

ԳԼ. Գ:

1 Ո՛ անմիտ գաղատացիք, ո՞ նախանձ արար ձեզ
Գ. Զ. ոչ հնազանդիլ ճշմարտուե՟. որոց դրեթէ
առաջի աչաց Ք՟ս Յ՟ս գրեցաւ ՚ի խաչ ելեալ:
2 * Զայս միայն կամիմ ուսանել ՚ի ձէնջ. ՚ի գոր-
ծո՞ց օրինաց զհոգին ընկալայք՝ եթէ ՚ի լրոյ հա-
3 ւատոյ: * Այդչափ անմիտք էք. սկսեալ հոգւով
4 և արդ մարմնով վախճանիք: * Եւ այնչափ անցք
5 անցին ընդ ձեզ զուր՝ եթէ իցէ զուր: * Իսկ արդ՝
որ բաշխեաց ՚ի ձեզ զՀոգին՝ և յաջողեաց ՚ի ձեզ
զզօրութիւնս. ՚ի գործոց օրինա՞ց է՝ թէ ՚ի լրոյ
6 հաւատոյ: * Որպէս և գրեալ է: Հաւատաց աբ-
րահամ յԱ՟Ծ՝ և համարեցաւ նմա յարդարութիւն:
7 * Գիտիցէ՞ք արդեօք. զի որք ՚ի հաւատոյ անտի
8 են, նոքա են որդիք աբրահամու: * Յառաջագոյն
գիտէր գիր, եթէ ՚ի հաւատոյ անտի արդարացու-
ցանէ Ա՟Ծ զհեթանոսս՝, յառաջագոյն խոստացաւ
աբրահամու. թէ ՚ի քեզ օրհնեսցին ամ՟ ազգք:
9 * Այսուհետև՝ որք ՚ի հաւատոյ անտի են՝ օրհնին
ընդ հաւատացելոյն աբրահամու:

10 * Զի որք միանգամ 'ի գործոց օրինացն են, ընդ
անիծիւք են : քանզի գրեալ է . Թէ անիծեալ ամ՟
մարդ՝ որ ո՛չ կայցէ յամենեսեան գրեալսն 'ի գիրս
11 օրինաց՝ առնել զամ՟ : * Զի օրինօքն ո՛չ ոք արդա-
րանայ առաջի Այ՟ : այն յայտ իսկ է : զի արդարն՝
12 ասէ, 'ի հաւատոց կեցցէ : * Բայց օրէնքն չեն 'ի
հաւատոց, այլ որ արասցէ զայնոսիկ՝ կեցցէ 'ի նո-
13 սին : * Քս՟ գնեաց զմեզ յանիծից օրինացն, ե-
ղեալ վասն մեր անէծք : զի գրեալ է . Թէ անի-
ծեալ ամ՟, որ կախեալ կայցէ զփայտէ :
14 * Զի 'ի հեթանոսս օրհնութի՟ աբրահամու եղի-
ցի 'ի Քս՟ Յս՟ . զի մեք զաւետիս Հոգւոյն սրբոյ
15 առցուք հաւատովք : (* Ըստ մարդկութե՟ ասեմ)
Եղբարք : ապաքէն զմարդկան հաստատեալ կտակ
ո՛չ ոք կարէ անարգել . և ո՛չ զայլ հրաման 'ի վերայ
16 այնր տալ : * Իսկ աբրահամու խոստացան աւետիքն .
և զաւակի նորա : և ո՛չ ասէ՝ զաւակաց իբրև զբազ-
մաց . այլ իբրև զմիոյ : Թէ՝ և զաւակի քում . որ է
17 Քս՟ : * Բայց զայս ասեմ, զկտակն յառաջագոյն
հաստատեալ յԱյ՟, օրէնքն որք յետ չորեքհար-
իւր և երեսուն ամի եղան, ո՛չ կարեն խախտել՝
առ 'ի խափանելոյ զաւետիսն :
18 * Իսկ Թէ յօրինաց անտի է ժառանգութիւնն . ապա
ո՛չ ևս յաւետեացն : բայց աբրահամու աւետեօք շնոր-
19 հեաց Ած՟ : * Իսկ զի՞նչ իցեն օրէնք՝ յանցուածոց
վասն յաւելան, մինչև եկեսցէ զաւակն . որում
խոստացեալն էր՝ կարգեալ հրեշտակօք 'ի ձեռն
20 միջնորդի : * Իսկ միջնորդ միոյ ուրուք ո՛չ է՝
21 բայց Ած՟ մի է : * Իսկ արդ օրէնքն հակառա՞կ ինչ
իցեն աւետեացն Այ՟ . քաւ լիցի : զի եթէ տու-
եալ էին օրէնքն, որք կարօղք էին կենդանի առ-
նել, ապա հաստատ յօրինաց անտի է արդարութի՟ :
22 * Այլ փակեցին գիրք զամենեսին ընդ մեղօք : զի
աւետիքն 'ի հաւատոց անտի Յի՟ Քի՟ տացին հաւա-
23 տացելոց : * Մինչչև հաւատքն եկեալ էին՝ ընդ
օրինօքն փակեալ պահէաք 'ի հանդերձեալ հա-
24 ւատսն, որք յայտնելոց էին 'ի մեզ : * Ապա օրէնքն
դաստիարակք եղեն մեզ 'ի Քս՟ Յս՟ . զի 'ի հաւա-

25 տոյն արդարանայցուք: *Այլ իբրև եկն հաւատքն,
26 ոչ ևս ընդ դաստիարակաւ եմք: *Քանզի ամենե-
քին որդիք Այ̅ էք հաւատովք 'ի Յս̅ Քս̅.
27 *Որք միանգամ 'ի Քս̅ մկրտեցայք՝ զՔս̅ զգե-
28 ցեալ էք: չիք խտիր: *Ոչ հրէի՝ և ոչ հեթա-
նոսի: ոչ ծառայի, և ոչ ազատի: ոչ արուի, և
ոչ իգի: զի ամենեքեան դուք մի էք 'ի Քս̅ Յս̅:
29 *Ապա եթէ դուք Քի̅ էք՝ ուրեմն Աբրահամու
զաւակք էք՝ ըստ աւետեացն ժառանգք:

ԳԼ. Դ:

1 Զայս ասեմ. ցորքան ժամանակս ժառանգն տը-
ԵԿ. ղայ է՝ չէ ինչ աւելի քան զծառայն. թէպէտ
2 և Տէր իցէ ամենեցուն: *Այլ ընդ հազարապետ-
տօք է՝ և ընդ գաւառապետօք՝ մինչև 'ի ժամանա-
3 կական հօրն: *Նոյնպէս և մեք՝ մինչ տղայքն
էաք՝ ընդ տարերբ աշխարհիս 'ի ծառայութիւն
4 կայաք: *Այլ իբրև եկն լրումն ժամանակին, ա-
ռաքեաց Ած̅ զՈրդի իւր՝ որ եղև 'ի կնոջէ. և
5 եմուտ ընդ օրինօք: *Զի զն̅ս՝ որք ընդ օրինօքն
իցեն՝ գնեսցէ: զի մեք զորդեգրութիւն ընկալցուք:
6 *Եւ զի էք դուք որդիք, առաքեաց Ած̅ զՀոգի
Որդւոյ իւրոյ 'ի սիրտս մեր՝ որ աղաղակէ Աբբայ
7 Հայր: *Այսուհետև չես ծառայ, այլ որդի. եթէ
8 որդի և ժառանգ այ̅: *Այլ յայնժամ մինչ ոչն
գիտէիք զԱծ̅՝ ծառայէիք այնոցիկ՝ որք ոչն էին 'ի
9 բնէ աստուածք: *Այլ այժմիկ ծանեայք զԱծ̅,
մանաւանդ թէ ծանուցայք իսկ յայ̅. զիա՞րդ դառ-
նայք միւսանգամ անդրէն 'ի տարերս տկարս և
յաղքատս, որոց միւսանգամ զանձինս ծառայեցու-
10 ցանել կամիք: *Զաւուրս խտրէք՝ և զամիսս՝ և
11 զժամանակս՝ և զամս: *Երկնչիմ 'ի ձէնջ. գու-
ցէ թէ 'ի դուր ինչ վաստակեցայ 'ի ձեզ:
12 *Եղերուք իբրև զիս. քանզի և ես իբրև զձեզ
էի: եղբարք՝ աղաչեմ զձեզ. չիք ինչ ձեր մեղու-
13 ցեալ ինձ: *Գիտէք դուք՝ զի տկարութեամբ
մարմնոյ աւետարանեցի ձեզ զառաջինն: և զփոր-

14 ձանձն որք 'ի մարմնի իմում էին : *Ոչ անարգեցիք՝
և ոչ անգոսնեցիք : այլ իբրև զհրեշտակ Այ
15 ընկալայք զիս՝ իբրև զՔս Յս : *Իսկ արդ ու՞ր է
երանութիւնն ձեր: վկայեմ ձեզ՝ եթէ հնար ինչ
16 էր՝ զաչս ձեր հանէիք և տայիք ինձ : *Արդ՝ զի
թշնամի իմն եղէ ձեզ • զի զստոյգն խօսեցայ :
17 *Այլ նախանձեցուցանեն զձեզ ոչ 'ի բարիս : և
արգելուլ կամին զձեզ՝ զի նոցա նախանձաւորք
18 լինիցիք : *Բայց լաւ է նախանձաւոր լինել 'ի բարիս
յամ ժամ: և ոչ միայն յորժամ 'ի ձերում
19 ԻԳ· միջի իցեմ: *Որդեակք իմ, զորս դարձեալ
վերստին երկնեմ, մինչև նկարեսցի Քս 'ի ձեզ :
20 *Կամէի այժմ գալ առ ձեզ՝ և փոխել զբարբառ
21 իմ• զի տարակուսեալ եմ ես վս ձեր: *Ասացէք
ինչ ինձ, որք ընդ օրինօքն կամիք լինել: չիցէ՞
ընթերցեալ ձեր զօրէնս :
22 *Զի գրեալ է՝ թէ Աբրահամու երկու որդիք
23 էին, մի յաղախնոյ անտի, և մի յազատէն : *Այլ
որ յաղախնոյն էր՝ ըստ մարմնոյ ծնեալ էր։ և որ
24 յազատէն՝ ըստ աւետեաց: *Որ է առակ օրինակի:
զի այս ինքն են երկու կտակարանք : մի 'ի լեռնէ
սինայ, 'ի ծառայութիւն ծնեալ՝ որ է հագար :
25 *Քանզի սինա լեառն է յարաբիա՝ հաւասարէ
այժմ եէմի: զի ծառայէ որդւովք իւրովք հանդերձ:
26 *Այլ վերինն եէմ ազատ է՝ որ է մայր մեր ամենեցուն :
27 *Զի գրեալ է: ուրախ լեր ամուլ՝ որ ոչ
ծնանէիր՝ գոչեա, և աղաղակեա որ ոչդ երկնէիր•
զի բազում են որդիք սկնդկին առաւել քան զարամբւոյն :
28 *Այլ մեք եղբարք՝ ըստ իսահակայ
29 աւետեացն որդիք եմք : *Այլ որպէս յայնժամ,
որ ըստ մարմնոյն ծնեալ էր՝ հալածէր զայն՝ որ
30 ըստ հոգւոյն, նոյնպէս և այժմ, *Այլ զի՞նչ ասէ
գիր : 'ի բաց հան զաղախինդ , և զորդի դորա • զի
մի ժառանգեսցէ որդի աղախնոյն՝ ընդ որդւոյն ազատի :
31 *Վասն որոյ եղբարք՝ չեմք որդիք աղախնոյն,
այլ ազատին : ազատութբն, որով Քս զմեզ
ազատեցոյց :

ԳԼ. Ե։

1 Պի՛նդ կացէք այսուհետեւ, եւ մի՛ միւսանգամ
ԵԶ ընդ լծով ծառայութեան մտանէք ։ * Ահաւա-
սիկ ես պօղոս ասեմ ձեզ։ զի եթէ թլփատիք՝
3 Քս̅ ինչ ձեզ ոչ օգնէ ։ * Վկայեմ ամ̅ մարդոյ՝
որ թլփատիցի՝ թէ պարտական է զամ̅ օրէնսն
4 կատարել ։ * Խափանեալ էք 'ի Քէ̅՝ որք օրինօքն
արդարանայք ։ եւ անկեալ էք 'ի շնորհաց անտի ։
5 * Զի մեք հոգւոյն՝ 'ի հաւատոց յուսոյն արդա-
րութեան ակն ունիմք ։
6 * Զի 'ի Քս̅ Յս̅՝ ոչ թլփատութիւն ինչ կարող
է՝ եւ ոչ անթլփատութիւն․ այլ հաւատք սիրով
7 յաջողեալք ։ * Ընթանայիք՝ ո՞ կասեցոյց
8 զձեզ ճշմարտութե̅ն չհաւանիլ․ * Զի այնք հրա
պոյրք՝ ոչ յայնմանէ էին՝ որ կոչեացն զձեզ ։
9 * Փոքր մի խմոր զամ̅ զանգուածն խմորէ ։
10 * Այլ ես յուսացեալ եմ 'ի ձեզ Տր̅՝ թէ ոչ
զայլ ազգ ինչ խորհիցիք ։ եւ որ խռովեցուցանէ
11 զձեզ՝ կրեսցէ զդատաստանն՝ ո՛ ոք եւ իցէ ։ * Այլ
ես եղբարք՝ եթէ զթլփատութիւն քարոզէի՝ ըն-
դէ՞ր տակաւին հալածիմ ։ ապաուրեմն խափանեալ
12 իցէ գայթագղութիւն խաչին ։ * Երանի թէ մօ-
տակտուրք իսկ լինէին՝ որք զձեզն խռովեցուցա-
13 նեն ։ * Զի դուք յազատութի̅ կոչեցեալ էք՝ եղ-
բարք ։ միայն զի ազատութիւն ձեր ոչ լինիցի 'ի
պատճառս մարմնոյ․ այլ սիրով ծառայեցէք մի-
14 մեանց ։ * Զի ամ̅ օրէնք 'ի մի բան կատարին ։ սի-
15 րեսցես զընկեր քո իբրեւ զանձն քո ։ * Ապա եթէ
զմիմեանս խածատիցէք՝ եւ ուտիցէք․ զգո՛յշ լե-
րուք՝ գուցէ 'ի միմեանց սատակիցիք ։
16 ԶԿ․ * Բայց զայս ասեմ. Հոգւով գնացէք՝ եւ
17 զցանկութիւն մարմնոյ մի՛ կատարէք ։ * Զի մար
մին ցանկայ հակառակ հոգւոյ ։ եւ Հոգի հակառակ
մարմնոյ ։ եւ զի սոքա միմեանց հակառակք են, մի՛
18 զոր կամիցիքն՝ զայն առնիցէք ։ * Իսկ եթէ հոգ-
19 ւով վարիք․ ապա չէ՛ք ընդ օրինօք ։ * Զի յայտ
նի են գործք մարմնոյ ։ այս ինքն են, շնութի̅ ։

20 պոռնկութիւն • պղծութիւն • գիջութիւն : * Կռապաշտութիւն • կախարդութիւն • թշնամութիւն • հեռ • նախանձ • բարկութիւն • հակառակութիւնք •
21 երկպառակութիւնք • հերձուածք : * Չարակնութիւնք • սպանութիւնք • արբեցութիւնք • անառակութիւնք • և որ ինչ սոյին նմանք են : զոր յառաջագոյն իսկ ասեմ ձեզ, որպէս կանխաւ ասէի, թէ որք զայսպիսի ինչ գործեն` զարքայութիւնն Այ ոչ
22 ժառանգեն : * Իսկ պտուղ Հոգւոյն այս է : սէր • խնդութիւն • խաղաղութիւն • երկայնմտութիւն :
23 * Քաղցրութիւն • բարութիւն • հաւատ • հանդարտութիւն : հեզութիւն • ժուժկալութիւն • ճընշումն • այսպիսեաց ասոր օրէնքն չեն հակառակ :
24 * Իսկ որք Քսեանքն են, զմարմինս իւրեանց 'ի խաչ հանին` կարեօք և ցանկութեամբք հանդերձ :
25 * Եթէ կեամք Հոգւով` ընդ Հոգւոյն և միաբանի-
26 ցուք : * Մի լինիցուք սնափառք` միմեանց ձայն տալոյ` և ընդ միմեանս նախանձելոյ :

ԳԼ. Զ.

1 ԶԳ. Եղբարք, եթէ յանկարծ ըմբռնիցի ոք 'ի ձէնջ յինչ և իցէ յանցանս` դուք` որք հոգևորքդ էք` հաստատեցէք զայնպիսին հոգւով հեզութեան. զգոյշ լինիցիք անձանց` զի մի և դուք փորձիցիք:
2 * Զմիմեանց բեռն բարձէք` և այնպէս կատարե-
3 ցէք զօրէնսն Քի : * Եթէ ոք համարիցի լինել ինչ և չիցէ, զանձն իւր խաբէ :
4 * Զգործ իւր կշռեսցէ իւրաքանչիւրոք : և ապա անձին իւրում միայն պարծանս տացէ` և մի առ
5 ընկերսն : * Զի իւրաքանչիւրոք զիւր բեռն բառ-
6 նայցէ : * Հաղորդութիւն արասցէ աշակերտն վար-
7 դապետին` յամ բարութիւնս : * Մի խաբիք • Այ
8 ոչ արհամարհի : * Զի զոր ինչ սերմանէ մարդ` զնոյն և հնձեսցէ : որ սերմանէ 'ի մարմին իւր, 'ի մարմնոյ անտի հնձեսցէ զապականութիւն : և որ սերմանէ 'ի հոգին` 'ի հոգւոյ անտի հնձեսցէ

9 զկեանսն յաւիտենից : * Այլ զբարիս գործել մի
ձանձրասցուք. զի 'ի ժամանակի իւրում հնձեսցուք
10 առանց լքանելոյ : * Այսուհետեւ մինչդեռ
ժամանակս 'ի ձեռս է՝ գործեսցուք զբարիս առ
ամենեսեան, մանաւանդ առ ընտանիս հաւատոյ :
11 * Տեսէք՝ որպիսի գրով գրեցի ձեզ իմով ձեռամբ :
12 * Զի որք միանգամ կամին բարեմարդիկ
լինել մարմնով, նոքա ստիպեն զձեզ թլփատել.
միայն զի մի զհետ խաչին Քի երթայցեն :
13 * Քանզի որք թլփատեալքն իսկ են, նոքա զօրէնսն
ոչ պահեն : այլ կամին, զի դուք թլփատիջիք.
14 զի ձերով մարմնովդ պարծեսցին : * Այլ ինձ
քաւ լիցի պարծել՝ բայց միայն 'ի խաչն Տն մերոյ
Յի Քի. որով ինձ աշխարհ 'ի խաչ ելեալ է՝
եւ ես աշխարհի :
15 * Զի 'ի Քս Յս, ոչ թլփատութիւն ինչ է՝ եւ ոչ
16 անթլփատութիւն. այլ նոր արարած : * Եւ որք
միանգամ այսմ կանոնի միաբան լինին, խաղաղութիւն
'ի վերայ նոցա, եւ ողորմութիւն՝ եւ 'ի վերայ
17 Իղին Այ : * Այսուհետեւ աշխատ ոք զիս մի արասցէ.
զի ես զչարչարանս Քի 'ի մարմնի իմում
18 կրեմ : * Շնորհ Տն մերոյ Յի Քի՝ ընդ հոգւոյդ
ձերում եղբարք : Ամէն

* * *

ԹՈՒՂԹ
ԵՐԱՆԵԼՒՈՅՆ
ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ
ԱՌ ԵՓԵՍԱՑԻՍՆ·

Գլուխ Առաջին :

1 Էկ· ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼ Յի
Քի կամօքն Այ՝ սրբոց որք են յեփեսոս, և հա-
2 ւատացելոց 'ի Քս Յս : * Շնորհք ընդ ձեզ և
խաղաղութիւն յԱյ Հօրէ մերմէ՝ և 'ի Տէ Յէ Քէ :
3 * Օրհնեալ է Ած, և Հայր Տն մերոյ Յի Քի·
որ օրհնեաց զմեզ ամենայն հոգևոր օրհնութբ
4 յերկնաւորս 'ի Քս : * Որպ ընտրեաց զմեզ նովաւ
յառաջքան զլինելն աշխարհի, լինել մեզ սբս և
5 անարատս առաջի նր սիրով : * Յառաջագոյն սահ-
մանեաց զմեզ յորդեգրութիւն 'ի ձեռն Յի Քի
6 'ի նոյն ըստ հաճութե կամաց իւրոց : * 'Ի գովեստ
փառաց շնորհաց իւրոց : որով զուարճացոյց զմեզ
7 սիրելեաւն : * Որով ունիմք զփրկութիւն 'ի ձեռն
արեան նր, զթողութիւն մեղաց՝ ըստ մեծութե
8 շնորհաց իւրոց : * Որ առաւելաւ 'ի մեզ ամենայն
9 իմաստութբ և գիտութբ : * Ցոյց մեզ զխորհուրդ
կամաց իւրոց՝ ըստ հաճութե իւրում, զոր յառա-
10 ջագոյն եդ նովաւ : * 'Ի տնտեսութե լրման ժա-
մանակաց : բովանդակել զամ Քիւ· որ ինչ յեր-
11 կինս՝ և որ ինչ յերկրի, 'ի նոյն : * Որով և վի-
ճակեցաք յառաջագոյն հրաւիրեալք՝ ըստ յառա-

*

ջադրութեան Այ· որ զամ յաջողէ ըստ խորհրդոց
12 կամաց իւրոց: * Լինել մեզ ՚ի գովեստ փառաց
13 նորա՝ յառաջագոյն յուսացելոցս ՚ի Քս: * Որով
եւ դուք իբրեւ լուայք զբանն ճշմարտութեան, (զաւե-
տարանն փրկութեան ձերոյ,) որով եւ հաւատացեալ
14 կնքեցայք Հոգւոյն սրբոյ աւետեաց: * Որ է առ-
հաւատչեայ ժառանգութեան մերոյ, ՚ի փրկութիւն
նուաճութեան, ՚ի գովեստ փառաց նորա:
15 Եղ· * Վասն այնորիկ եւ ես իբրեւ լուայ զհա-
ւատսն ձեր՝ որ ՚ի Տր Յս· եւ զսէրն որ ընդ ամ
16 սբս: * Ոչ դադարեմ ՚ի գոհանալոյ վս ձեր՝ յի-
17 շել զձեզ յաղօթս: * Զի Այծ, Տն մերոյ Յի Քի
Հայրն փառաց՝ տացէ ձեզ զհոգին իմաստութեան
18 եւ յայտնութեան, գիտութեն իւրով: * Լուսաւորել առ-
նել զաչս սրտից՝ առ ՚ի գիտելոյ մեզ՝ զինչ է յոյս
կոչմանն նորա: եւ զինչ մեծութիւն փառաց ժա-
19 ռանգութեն նորա ՚ի սբս: * Եւ զինչ է առաւելութի
մեծութեն զօրութեն նորա ՚ի մեզ հաւատացեալս:
ըստ յաջողութեն կարողութեն զօրութեն իւրոյ:
20 * Զոր յաջողեաց ՚ի Քս: զի յարոյց զնա՝ ՚ի մե-
ռելոց· եւ նստոյց ընդ աջմէ իւրմէ յերկնաւորս,
21 * ՚ի վերայ ամ իշխանութեն՝ եւ պետութե· եւ զօրու-
թեն՝ եւ Տէրութե· եւ ամ անուան անուանելոյ, ոչ
միայն յաշխարհիս յայսմիկ՝ այլ եւ ՚ի հանդերձելումն:
22 * Եւ զամ ինչ հնազանդ արար ՚ի ներքոյ ոտից նո-
րա: Եւ զնա ետ գլուխ ՚ի վերայ ամ իրիք եկե-
23 ղեցւոյ: * Որ է մարմին նորա եւ լրումն՝ որ զամ
յամենայնի լնու:

Գլ· Բ:

1 Եւ դուք՝ որք մեռեալքն էիք ՚ի մեղս ձեր եւ յան
2 ցանս: * Յորս երբեմն գնայիք ըստ յաւիտենի
աշխարհիս այսորիկ՝ ըստ իշխանին իշխանութե օդոյ
այսոյ՝ որ այժմս ընդ մեռեալ է յորդիսն ապստամբու-
3 թեն: * Յորս եւ մեք ամենեքեան շրջէաք երբեմն ՚ի
ցանկութիւնս մարմնոյ մերոյ· եւ առնէաք զկամս մարմ

նոյ և զմտաց. և էաք արդարև որդիք բարկութեան
իբրև այլքն։
4 ԵԶ. * Այլ Ած̄՝ որ մեծն է ողորմութեամբ՝ վասն
5 բազում սիրոյն իւրոյ՝ զոր սիրեաց զմեզ. * Մինչ
դեռ մեռեալք էաք 'ի մեղս մեր՝ կենդանիս արար
զմեզ 'ի Քս̄, (քանզի շնորհօք ապրեցայք.)
6 * Ընդ նմին յարոյց՝ և ընդ նմին նստոյց յերկնաւորս
7 'ի Քս̄ Յս̄։ * Զի ցուցցէ 'ի յաւիտեանսն՝
որք գալոցն են՝ զառաւել մեծութիւն շնորհացն
իւրոց՝ քաղցրութե̄ 'ի մեզ 'ի Քս̄ Յս̄։
8 * Զի շնորհօք նորա էք փրկեալք 'ի ձեռն հաւատոյ.
և այս ոչ 'ի ձէնջ, այլ Այ̄ պարգև է։
9 * Ոչ 'ի գործոց, զի մի ոք պարծեսցի։
10 * Զի նորա արարածք եմք՝ հաստատեալք Քի̄
Յի̄ 'ի գործս բարութե̄, յորս յառաջագոյն պատրաստեաց
11 Ած̄. զի 'ի նոյնս գնասցուք։ * Վասն
որոյ և դուք յիշեցէք՝ զի երբեմն հեթանոսք էիք
մարմնով. որ կոչեցեալ է անթլփատութիւն. յանուանեալ
թլփատութե̄ անտի մարմնաւոր ձեռագործին։
12 * Զի էիք 'ի ժամանակին յայնմիկ առանց
Քի̄։ և օտարացեալք էիք յառաքինութե̄ն Ի̄ղի։
և տարադիրք յուխտից աւետեացն։ և զյոյս ինչ
13 ոչ ունէիք՝ և անԱծ̄ք էիք յաշխարհի։ * Իսկ
այժմիկ 'ի ձեռն Յի̄ Քի̄, դուք՝ որք երբեմն հեռաւորք
էիք՝ մերձաւորք եղէք արեամբն Քի̄։
14 * Զի նա է խաղաղութիւն մեր՝ որ արար զերկոսեանսն
մի. և զմիջնորմն ցանկոյն քակեաց՝ զթշնամութիւն
15 'ի մարմնի իւրում։ * Եւ զօրէն պատուիրանացն
հրամանօքն խափանեաց. զի զերկոսին հաստատեսցէ
ինքեամբ 'ի մի նոր մարդ։ և արասցէ
16 զխաղաղութիւն։ * Եւ հաշտեցուսցէ զերկոսին
միով մարմնով ընդ Այ̄ խաչիւն իւրով։ քանզի
17 սպան զթշնամութիւն յանձին իւրում. * Եւ եկն
աւետարանեաց զխաղաղութիւն ձեզ հեռաւորացդ՝ և
18 զխաղաղութիւն մերձաւորաց։ * Զի նովաւ ունիմք
զնուաճութիւն երկոքին՝ միով Հոգւով առ Հայր։
19 * Ապա այսուհետև ոչ էք օտարք և պանդուխտք.
այլ քաղաքակիցք սրբոց՝ և ընտանիք Այ̄։

20 * Շինեալք 'ի վերայ հիմանն առաքելոց և մարգարէից՝
21 որոյ է գլուխ անկեանն Քս Յս։ * Յորում
ամ շինուածն յօդեալ և պատրաստեալ աճէ 'ի
22 տաճար սբ Տն։ * Յորում և դուք ընդ նմին շինիք
'ի բնակութիւն Այ Հոգւովն։

ԳԼ։ Գ։

1 Վասն այսորիկ ես Պօղոս կապեալ Յի Քի վասն
2 ձեր հեթանոսաց։ * Թէպէտ լուեալ իսկ է
ձեր զտնտեսութիւն շնորհացն Այ․ որք տուեալք
3 են ինձ 'ի ձեզ։ * Զի ըստ յայտնութեան ցուցաւ
ինձ խորհուրդն։ որպէս յառաջագոյն գրեցի առ
4 ձեզ սակաւուք։ * Առ 'ի կարող լինելոյ ընթեռնուլ
և 'ի միտ առնուլ զիմաստութիւնն իմ 'ի
5 խորհրդեանն Քի։ * Զի այլոց ազգաց ոչ ցուցաւ
որդւոց մարդկան․ որպէս այժմ յայտնեցաւ
սրբոց իւրոց առաքելոց և մարգարէից Հոգւովն։
6 * Լինել հեթանոսաց ժառանգակիցս և մարմնակիցս՝
և հաղորդս աւետեացն 'ի Քս Յս աւետարանաւն։
7 * Որոյ եղէ ես սպասաւոր ըստ պարգեւաց շնորհացն Այ՝ որք տուան ինձ ըստ յաջողութե
8 զօրութե նորա։ * Ինձ, որ տրուպս եմ ամ
սրբոց՝ տուան շնորհքս այսոքիկ, 'ի հեթանոսս
9 աւետարանել զանքննելին մեծութիւնն Քի։ * Եւ
լուսաւոր առնել զամենեսին, թէ զինչ է տնտեսութիւն խորհրդոյն, որ ծածկեալն էր յամ յաւիտենից առ Այ՝ որ զամ ինչ արար։
10 * Զի յայտնեսցի արդ իշխանութեանց և պետութեանց՝
որք յերկինս են 'ի ձեռն եկեղեցւոյ՝ բազմապատիկ
11 իմաստութիւնն Այ։ * Ըստ յառաջադրութեան յաւիտենիցն՝ զոր արար 'ի ձեռն Տն մերոյ Յի Քի։
12 * Որով ունիմք զհամարձակութիւն և զընծայու-
13 թիւն յուսով 'ի ձեռն հաւատոց նր։ * Վասն
որոյ աղաչեմ մի ձանձրանալ 'ի նեղութիւնս մերում,
14 որ վասն ձեր է։ որ է փառք ձեր։ * Վասն այսորիկ դնեմ զծունր առ հայր Տն մերոյ Յի Քի։
15 * Ուստի ամ նահապետութիւն յերկինս և յերկիր

16 անուանի։ * Զի տացէ ձեզ ըստ մեծութե՟ փառաց իւրոց, հաստատել զօրութե՟բ ՚ի ձեռն Հոգ-
17 ւոյն իւրոյ ՚ի ներքին մարդն։ * Բնակել Քի հաւատովք ՚ի սիրտս ձեր։ սիրով արմատացեալք և
18 հաստատեալք։ * Զի կարողք լինիջիք հասանել ընդ ամ՟ սրբ՟, զինչ է լայնութիւն, և երկայնու-
19 թիւն. բարձրութիւն, և խորութիւն։ * Ճանաչել զառաւելութիւն գիտութե՟ սիրոյն Քի. զի
20 լցջիք ամ՟ լրութե՟բն Այ՟։ * Այլ այնմ որ կարող է առաւել քան զամ՟ ինչ առնել յաճախութե՟բ՝ քան զոր խնդրեմքն և իմանամք։ ըստ զօրութե՟ն՝
21 որ յաջողեալ է ՚ի մեզ։ * Նմա փառք յեկեղեցւոջ, և ՚ի Քս՟ Յս՟, յամ՟ ազգս յաւիտենից յաւիտեանս։ Ամէն։

ԳԼ. Դ.

1 Արդ՝ աղաչեմ զձեզ ես՝ որ կապեալս եմ ՚ի Տր՟. արժանի գնալ կոչմանն, յոր կոչեցայք։
2 * Ամենայն խոնարհութե՟բ՝ և հեզութե՟բ, և երկայն
3 մտութե՟բ՝ անսալ միմեանց սիրով։ * Փութալ պահել զմիաբանութիւն հոգւոյն յօդիւ խաղաղութե՟։
4 * Մի մարմին՝ և մի հոգի. որպէս և կոչեցայք ՚ի մի
5 յոյս կոչման ձերոյ։ * Մի Տէր, մի հաւատ, մի
6 մկրտութիւն։ * Մի Ած՟, և հայր ամենեցուն. որ ՚ի վր՟ ամ՟ի և ընդ ամենեսին՝ և յամենեսին ՚ի մեզ։
7 * Այլ իւրաքանչիւր ումեք ՚ի մէնջ տուեալ է շը-
8 նորհ ըստ չափու պարգևացն Քի։ * Վս՟ որոյ ասէ։ Ել ՚ի բարձունս՝ գերեաց զգերութիւն. և ետ պար-
9 գևս մարդկան։ * Որ ելն, զինչ է, եթէ ոչ զի
10 էջ նախ ՚ի ստորին կողմն երկրի։ * Որ էջն, նոյն է՝ և որ ելն ՚ի վերոյ քան զամ՟ երկինս։ զի լցցէ
11 զամենայն։ * Եւ նա ետ զոմանս առաքեալս. զոմանըս մարգարէս. զոմանս աւետարանիչս. զոմանս
12 հովիւս, և վարդապետս։ * Առ ՚ի հաստատութիւն սրբոց, ՚ի գործ պաշտաման, ՚ի շինուած մարմնոյն
13 Քի։ * Մինչև հասցուք ամենեքեան ՚ի մի միաբանութիւն հաւատոյ և գիտութե՟ Որդւոյն Այ՟. յայր կատարեալ ՚ի չափ հասակի կատարմանն Քրիստոսի։

14 Դ * Զի մի յայսմհետէ իցեմք տղայք խռովեալք՝ և
տատանեալք յամ հողմոյ վարդապետութե, խա-
բէութբ մարդկան. խորամանկութբ ՚ի խաբէութե
15 մոլորութե։ * Այլ ճշմարտեալք սիրով աճեսցուք
16 ՚ի նա ամե, որ է գլուխ Քս։ * Ուստի ամ մար-
մինն յօդեալ և պատշաճեալ ամ խաղալեօք տար
բերութեան՝ ըստ իւրաքանչիւրոյ մասին՝ զաճումն
մարմնոյ գործէ՝ ՚ի շինուած անձին իւրոյ սիրով։
17 * Արդ՝ զայս ասեմ, և ուխտեմ ՚ի Տր. մի ևս ձեզ
զնոյն օրինակ գնալ՝ ոպ և այլք հեթանոսք գնան՝
ունայնութբ մտաց իւրեանց։
18 * Որոյ խաւարեալք են միտք՝ և օտարացեալք են
՚ի կենաց անտի այ՝ վասն տգիտութեն՝ որ է ՚ի նս,
19 վասն կուրութե սրտից իւրեանց։ * Որք զան-
ձանց իւրեանց զյոյսն հատին. և մատնեցին զան-
ձինս գիճութե. ՚ի գործս ամ պղծութե ագահու-
20 թեամբ։ * Այլ դուք ո՛չ այսպէս ուսայք զՔս։
21 * Թէպէտ և լուայք զնմանէ՝ և նմին ուսայք՝
22 որպէս է ճշմարտութիւն Յս * ՚ի բաց մերկանալ
՚ի ձէնջ ըստ առաջնոյ գնացիցն զմարդն հին՝ զա-
պականեալն ցանկութբք խաբէութեն։
23 * Եւ նորոգիլ հոգւով մտաց ձերոց։
24 * Եւ զգենուլ զնոր մարդն՝ որ ըստ այ հաստա-
տեալ է՝ արդարութբ և սրբութբ ճշմարտութեն։
25 * Վն որոյ ՚ի բաց ընկեցէք զստութիւն։ խօսեցա-
րուք զճշմարտութիւն իւրաքանչիւր ընդ ընկերի
իւրում. զի եմք միմեանց անդամք։
26 * Բարկանայք՝ և մի մեղանչէք։ արեգակն ՚ի վե-
27 րայ բարկութե ձերոյ մի մտցէ։ * Եւ մի տայք
28 տեղի սատանայի։ * Որ գողանայր, մի ևս գողաս-
ցի՝ այլ մանաւանդ վաստակեսցէ՝ գործել ձեռօք
իւրովք զբարիս. զի բաւական իցէ տալ՝ ում պի-
29 տոյ իցէ։ * Ամ բան տգեղ ՚ի բերանոյ ձերմէ մի
ելցէ. այլ որ ինչ բարին է ՚ի շինուած պիտոյից,
30 զի տացէ շնորհս լսողացն, որք լսենն։ * Եւ մի
տրտմեցուցանէք զՀոգին սբ Այ, որով կնքեցայք
31 յաւուրն փրկութե։ * Ամենայն դառնութիւն՝ և
բարկութիւն՝ և սրտմտութիւն՝ և աղաղակ՝ և

հայհոյութիւն բարձցի 'ի ձէնջ ամն չարութբ
32 հանդերձ : * Լերո՛ւք ընդ միմեանս քաղցունք՝
գթածք . շնորհել միմեանց . որպէս և Ած Քիւ
շնորհեաց մեզ :

ԳԼ. Ե.

1 Եղերո՛ւք նմանօղք Այ, իբրև որդիք սիրելիք :
2 * Եւ գնացէք սիրով՝ որպէս և Քս սիրեաց
զմեզ . և մատնեաց զանձն իւր վասն մեր՝ պատա-
3 րագ և զենումն Այ 'ի հոտ անուշից : * Այլ
պոռնկութիւն, և ամենայն պղծութիւն, կամ ագա
հութիւն, և անուանեսցի մի 'ի միջի ձերում . որ
4 պէս և վայել է սրբոց : * Եւ զազրութիւն՝ կամ
խօսք յիմարութե, կամ խեղկատակութիւն՝ որ ոչ
5 վայել է . այլ մանաւանդ գոհութիւն : * Զայս տե-
ղեկացեալ գիտասջիք . թէ ամ պոռնիկ՝ կամ
պիղծ՝ կամ ագահ, որ է կռապաշտ՝ ոչ ունի
զժառանգութիւն յարքայութեն Քի և Այ :
6 * Մի՛ոք զձեզ խաբեսցէ բանիւք ունայնօք : զի վա
այսորիկ իսկ գայ բարկութիւնն այ 'ի վերայ որդ-
7 ւոյն անհաւանութե : * Մի այսուհետև լինիք
8 բաժանորդք նոցա : * Զի թէպէտ և երբեմն էիք
խաւարք . արդ լոյս էք 'ի Տր : իբրև զորդիս լու-
9 սոյ գնացէք : * Զի պտուղ լուսոյ ամենայն բա-
րութբ է՝ և արդարութբ՝ և ճշմարտութբ :
10 * Փորձեցէք՝ զի՛նչ է հաճոյ Տն :
11 * Եւ մի կցորդք լինիք անպտղութե գործոցն
12 խաւարի . այլ մանաւանդ յանդիմանեցէք : * Զի
որ 'ի ծածուկ ինչ գործի 'ի նոցա՝ զայն և խօսել
13 աղտեղի է : * Այլ ամ ինչ յանդիմանեալ՝ 'ի լու-
սոյ յայտնի լինի : զի ամենայն ինչ՝ որ յայտնի է՝
14 լոյս է : * Վասն որոյ և ասէ : արի, որ ննջեսդ .
և կանգնեա՛ց 'ի մեռելոց՝ և լուսատու լիցի քեզ
15 Ըկ. Քս : * Տեսջի՛ք՝ որպէս ճշմարտիւ գնայցէք .
16 մի իբրև անիմաստք : * Այլ իբրև իմաստունք :
գնեցէք զժամանակս՝ զի աւուրքս չարութե են :
17 * Վա այնորիկ մի լինիք անմիտք՝ այլ իմացարո՛ւք

18 զինչ կամք են Տն̃: * Եւ մի՛ արբենայք գինւով,
յորում գեղխութիւն է. այլ մանաւանդ լցարուք
19 Հոգւովն սրբով: * Խօսել ՚ի սիրտս ձեր սաղմոսիւք,
և օրհնութ̃բք՝ և երգովք հոգևորօք: երգել
և սաղմոս ասել ՚ի սիրտս ձեր Տեառն:
20 * Գոհացարուք յա̃մ ժամ ՚ի վերայ ա̃մի, յանուն
21 Տն̃ մերոյ Յի̃ Քի̃, Հօրն և Ա̃յ: * Հնազանդ լերուք
22 միմեանց երկիւղին Քի̃: * Կանայք իւրեանց
արանց հնազանդ լինիցին իբրև Տեառն:
23 Զի այր է գլուխ կնոջ՝ որպէս և Քս̃ գլուխ է
24 եկեղեցւոյ. և ինքն է փրկիչ մարմնոյ: * Այլ որպէս
եկեղեցին հնազանդ լինի Քի̃. նոյնպէս և կանայք
25 իւրեանց արանց յա̃մի: * Արք՝ սիրեցէք
զկանայս ձեր. որպէս և Քս̃ սիրեաց զեկեղեցի.
26 և զանձն իւր մատնեաց ՚ի վ̃ր նորա: * Զի զնա սրբեսցէ
27 սրբութ̃բ աւազանին բանիւ: * Զի կացուսցէ
ինքն իւր յանդիման փառաւոր զեկեղեցի՝ զի
մի՛ ունիցի ինչ զարատ՝ կամ զաղտեղութիւն. կամ
զայլ ինչ այնպիսեաց. այլ զի իցէ սր̃, և անարատ:
28 * Նոյնպէս պարտին և արք սիրել զիւրեանց
կանայս՝ իբրև զիւրեանց մարմինս: որ սիրէ
29 զկին իւր՝ զանձն իւր սիրէ: * Զի ոչ ոք երբէք
ատեաց զանձն իւր՝ այլ սնուցանէ, և դարմանէ
30 զնա. որպէս և Քս̃ զեկեղեցի: * Զի անդամք
եմք մարմնոյ նորա. ՚ի մարմնոյ նորա՝ և յոսկերաց
31 նորա: * Վ̃ այսորիկ թողցէ այր զհայր, և զմայր
իւր, և երթիցէ զհետ կնոջ իւրոյ՝ և եղիցին երկոքին
32 ՚ի մարմին մի: * Խորհուրդս այս մեծ է՝
33 բայց ես ասեմ ՚ի Քս̃ և յեկեղեցի: * Այլ և
դուք նոյնպէս միըստմիոջէ. զի իւրաքանչիւրոք
զիւր կին այնպէս սիրեսցէ իբրև զիւր անձն. և
կին երկնչիցի յառնէ իւրմէ:

ԳԼ. Զ:

1 Որդիք՝ հնազանդ լերուք ծնողաց ձերոց ՚ի Տր̃: զի
2 այն է արժան: * Պատուեա զհայր քո և զմայր:
3 որ է առաջին պատուիրան յաւետիւն: * Զի քեզ

բարի եղիցի. և երկայնակեաց լինիցիս ՚ի վր̅ երկրի։
4 * Հարք՝ մի զայրացուցանէք զորդիս ձեր՝ այլ սնուցանիջիք զնոսա խրատու և ուսմամբ Տեառն։
5 * Ծառայք՝ հնազանդ լերուք տերանց ձերոց մարմնաւորաց, ահիւ և դողութ̅բ, և միամտութ̅բ
6 սրտից ձերոց, որպէս և Քի̅։ * Մի առ ականէ ծառայել իբրև մարդահաճոյք։ այլ իբրև ծա-
7 ռայք Քի̅ առնել զկամս Այ̅։ * Սրտի մտօք ծառայել՝ իբրև Տեառն. և մի իբրև մարդկան։
8 * Գիտասջիք՝ թէ իւրաքանչիւրոք որ ինչ առնէ զբարին, զնոյն ընդունի և ՚ի Տէ̅՝ եթէ ծառայ՝ և
9 եթէ ազատ։ * Եւ դուք տեարք՝ զնոյն առնիջիք առ նոսա։ ներելով առնել զպատուհասն։ գիտասջիք թէ և նոցա և ձեր Տր̅ կայ յերկինս։ և ակ-
10 նառութիւն ոչ գոյ առաջի նր̅։ * Այսուհետև զօրացարուք Տր̅՝ և կարողութ̅բ զօրութեան նորա։
11 * Եւ զգեցարուք զսպառազինութիւնն Այ̅. զի կարօղ լինիջիք կալ ընդդէմ հնարից սատանայի։
12 * Զի ոչ է մեզ պատերազմ ընդ մարմնոյ և ընդ արեան։ այլ ընդ իշխանութիւնս, և ընդ պետութիւնս, ընդ աշխարհակալս խաւարիս այսորիկ՝ ընդ այսս չարութեան՝ որք են ՚ի ներքոյ երկնից։
13 * Վասն այնորիկ առէք զսպառազինութիւնն Այ̅. զի կարօղ լինիցիք ՚ի դիմի հարկանել չարին յա-
14 ւուրն չարութե̅։ * Եւ իբրև զամ̅ ինչ կատարիցէք, հաստատուն կայք։ զօտեղի կալջիք պնտեալ զմէջս ձեր ճշմարտութ̅բ. և զգեցեալ զզրահն
15 արդարութե̅։ * Եւ ագուցեալ զոտս պատրաստութ̅բ
16 աւետարանին խաղաղութե̅։ * Եւ ՚ի վերայ ամի̅ առէք զվահանն հաւատոյ. որով կարօղ լինիջիք
17 զամ̅ նետս մոխս չարին շիջուցանել։ * Եւ առէք զսաղաւարտն փրկութե̅. և զսուսեր հոգւոյն (որ
18 է բանն Այ̅)։ * Ամենայն աղօթիւք և խնդրուածօք, աղօթս առնել յամ̅ ժամանակի հոգւով։ և ՚ի նոյն տքնիջիք ամ̅ ժուժկալութ̅բ՝ և խնդրուածօք վասն
19 ամենայն սրբոց։ * Եւ վասն իմ. զի ինձ տացի բան ՚ի բանալ բերանոյ իմոյ, համարձակութ̅բ ցու-
20 ցանել զխորհուրդ աւետարանին։ * Վս̅ որոյ պատ

գամաւորիմ կապանօքս : զի նովին համարձակեցայց,
21 որպէս և պարտ իցէ ինձ խօսել : * Բայց զի գի-
տիջիք և դուք զինէն, զինչ գործեմ. զա̄մ ինչ
ցուցցէ ձեզ տիւքիկոս սիրելի եղբայր՝ և հաւատա
22 րիմ պաշտօնեայ ՚ի Տր̄ : * Զոր առաքեցի առ
ձեզ դմին իրի : զի գիտասջիք դուք զմէնջ. և
23 մխիթարեսցէ զսիրտս ձեր : * Խաղաղութ̄ի ընդ
եղբարս. և սէր հաւատովք հանդերձ յԱ̄յ Հօրէ՝
24 և ՚ի Տ̄է Յ̄է Ք̄է : * Շնորհք ընդ ամենեսին՝
որք սիրեն զՏր̄ մեր Յս̄ Քս̄ անեղծութբ̄ : Ամէն :

ԹՈՒՂԹ
ԵՐԱՆԵԼԻՈՅՆ
ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ
ԱՌ ՓԻԼԻՊՊԵՑԻՍՆ :

Գլուխ Առաջին :

1 ՙԹւկ. ՊՕՂՈՍ ԵՒ ՏԻՄՕԹԷՈՍ
ծառայք Յ̄ի Ք̄ի ամենայն սրբոց ՚ի Քս̄ Յս̄, որք
են ՚ի կողմանս փիլիպպեցւոց, եպիսկոպոսակցօք և
2 սարկաւագօք : * Շնորհք ընդ ձեզ և խաղաղու-
թիւն յա̄յ հօրէ մերմէ՝ և ՚ի Տ̄է Յ̄է Ք̄է :
3 * Գոհանամ զԱ̄յ իմոյ ՚ի վերայ ամենայն յիշատա-
4 կաց ձերոց : * Յա̄մ ժամ, յա̄մ խնդրուածս իմ,
վասն ձեր ամենեցուն առնել աղօթս խնդութբ̄ :

5 * Վասն հաղորդութե՟ ձերոյ ընդ աւետարանին,
6 յօրէ յառաջնմէ մինչև ցայժմ: * Վստահ եմ
յայդ, թէ որ սկսաւ ՚ի ձեզ զգործս բարեաց՝
կատարեսցէ մինչև յօրն Յի՟ Քի՟:
7 * Որպէս իրաւ իսկ թուի ինձ խորհիլ զայս վ՟ն
ձեր ամենեցուն. վասն ունելոյ ինձ զձեզ ՚ի սրտի,
՚ի կապանս իմ և ՚ի պատասխանատուութե՟ իմում.
և ՚ի հաստատութե՟ աւետարանին, կցորդս ինձ
8 շնորհաց զձեզ ամենեսին լինել: * Վկայ է ինձ
Ած՝ որպէս անձկացեալ եմ առ ձեզ ամենեսին
9 գթովքն Յի՟ Քի՟: * Եւ զայն աղօթս առնեմ.
զի սէրն ձեր ևս քան զևս առաւել լիցի ՚ի գիտու-
10 թե՟, և յա՟մ իմաստութե՟: * Ընտրել ձեզ զլաւն՝
զի իցէք հաստատունք և առանց գայթագղութե՟
11 յաւուրն Քի՟: * Լցեալք պտղով արդարութե՟
՚ի ձեռն Յի՟ Քի՟, ՚ի փառս՝ և ՚ի գովեստ Այ՟:
12 Թ՟ի. * Կամիմ թէ գիտիցէք եղբարք. զի որինչ
վասն իմ էր, ևս քան զևս ՚ի յառաջադիմութիւն
13 աւետարանին եկն: * Մինչև կապանաց իմոց յայտ-
նի լինել ՚ի Քս՟ յա՟մի հրապարակիս, և առ այլս
14 ամենեսին: * Եւ առ բազումս եղբարս ՚ի Տր՟. որք
վստահք են կապանօքս իմովք՝ առաւելևս համար-
ձակեալք՝ առանց երկիւղի զբանն Այ՟ խօսել:
15 * Ոմանք առ նախանձու և հակառակութե՟. և ոմանք
16 միաբանութ՟բ իսկ զՔս՟ քարոզեն: * Եւ ոմանք
՚ի սիրոյ: քանզի գիտեն՝ եթէ ՚ի պատասխանատու-
17 ութ՟ի աւետարանին կամ: * Եւ ոմանք առ հես-
տութե՟ զՔս՟ պատմեն, այլ ոչ սրբութ՟բ: քանզի
զի համարին նեղութիւնս յարուցանել ՚ի վերայ
18 կապանաց իմոց: * Բայց այս զինչ է: որով օրի-
նակաւ և իցէ, եթէ պատճառանօք՝ և եթէ ճշմար-
տութ՟բ՝ Քս՟ պատմի. և ընդ այս խնդամ՝ այլև
19 ուրախ ևս եղէց: * Զի գիտեմ, եթէ այս պահի
ինձ ՚ի փրկութիւն, ՚ի ձերոց խնդրուածոց՝ և ՚ի
20 պարգևաց Հոգւոյն Յի՟ Քի՟: * Ըստ ակնկալութե՟,
և յուսոյն իմոյ. զի մի իւիք յամօթ եղէց. այլ
ամենայն համարձակութ՟բ որպէս և յա՟մ ժամ, և
այժմ մեծասցի Քս՟ ՚ի մարմնի իմում, եթէ կե-

21 նօք՝ և եթէ մահու: * Զի ինձ կեանք Քս՟ է,
22 և մեռանիլ շահ: * Այլ եթէ կեանքս մարմնոյ՝
այս ինձ պտուղ գործոյ է. և զինչ ընտրեցից՝ ոչ
23 գիտեմ: * Նեղեալ եմ յերկոցունց. զցանկալն
ելանել և ընդ Քի՟ լինել՝ առաւել լաւ համարիմ:
24 * Եւ կալ՝ մնալ աստէն 'ի մարմնի, կարեւոր ևս
25 վասն ձեր: * Եւ զայս յուսացեալ գիտեմ, եթէ
կացից՝ և մնացից ամենեցուն ձեզ. 'ի ձեր փութա-
26 նալ՝ և խրախ լինել 'ի հաւատս: * Զի պարծանք
ձեր առաւել լիցին 'ի Քս՟ Յս՟ ինև, 'ի միւսանգամ
27 գալստեան իմում առ ձեզ: * Միայն եթէ արժա-
նի աւետարանին Քի՟ գնայցէք: զի եթէ գայցեմ,
և տեսանիցեմ զձեզ. և եթէ հեռի իցեմ, և լսի-
ցեմ զձէնջ, զի հաստատուն կայցէք 'ի մի հոգի,
և միով շնչով նահատակիցիք 'ի հաւատս աւետա
28 րանին: * Եւ մի պանգիտիցէք, և մի իւիք 'ի հա-
կառակորդաց անտի՝ որ է նոցա հանդէս կորստեան.
29 և ձերոյ փրկութեան: * Եւ այդ յԱյ՟ է՝ որ ձեզ
շնորհեցաւ վասն Քի՟, ոչ միայն 'ի նա հաւատալ՝
30 այլ և վասն նր՟ չարչարիլ: * Զնոյն պատերազմ
ունիլ՝ զոր յիս տեսիք՝ և այժմ լսէք յինէն:

ԳԼ. Բ:

1 Արդ՝ եթէ մխիթարութի՟ ինչ իցէ 'ի Քս՟, եթէ
սփոփութիւն սիրոյ՝ եթէ հաղորդութի՟ հոգ-
ւոյ, եթէ գթութիւն և ողորմութիւն:
2 * Լցէք զխնդութիւնս իմ, զի զնոյն խորհիջիք՝
զնոյն սէր յանձին ունիջիք. համաշունչք՝ միախոր-
3 հուրդք: * Մի ինչ ըստ գրգռութե՟, և մի ինչ
ըստ սնապարծութե՟. այլ խոնարհութբ՟ զմիմեա-
4 նըս լաւ համարիլ առաւել քան զանձինս: * Մի
զանձանց և եթ գիտել՝ այլ իւրաքանչիւրոք զըն-
5 կերին: * Զայն խորհեսջիք իւրաքանչիւրոք 'ի
6 ձէնջ, որ և 'ի Քս՟ Յս՟: * Որ 'ի կերպարանս Այ՟ էր,
ոչ ինչ յափշտակութի՟ համարեցաւ զլինիլն հաւա-
7 սար Այ՟: * Այլ զանձն ունայնացոյց՝ զկերպարանս
ծառայի առեալ, 'ի նմանութիւն մարդկան եղեալ՝
8 և կերպարանօք գտեալ իբրև զմարդ: * Խոնարհե

ցոյց զանձն, լեալ հնազանդ մահու չափ՝ և մահու
9 խաչի: * Վասն որոյ և Ած՟ զնա առաւել բարձրա-
ցոյց. և շնորհեաց նմա անուն՝ որ ՚ի վեր է քան
10 զամ՟ անուն: * Զի յանուն Յի՟ Քի՟ ամ՟ ծունր
կրկնեսցի, երկնաւորաց՝ և երկրաւորաց՝ և սանդա-
11 րամետականաց: * Եւ ամ՟ լեզու խոստովան լիցի,
թէ Տր՟ Յս՟ Քս՟ է ՚ի փառս Այ՟ հօր:
12 * Այսուհետև սիրելիք իմ, (որպէս յամի՟ հնա-
զանդեցայք) մի միայն ՚ի գալստեան իմում, այլ ա-
ռաւել ևս այժմ, յորժամ հեռի եմ ՚ի ձէնջ՝
ահիւ և դողութե՟ զանձանց փրկութի՟ գործեցէք:
13 * Զի Ած՟ է՝ որ յաջողէ ՚ի ձեզ զկամելն, և զառ-
14 նելն վասն հաճութե՟ն: * Զամենայն ինչ գործե-
ցէք առանց տրտնջելոյ և քրթմնջելոյ:
15 * Զի եղիջիք անբիծք և անարատք որդիք Այ՟,
անմեղք ՚ի մէջ կամակոր և խեղաթիւր ազգին.
յորոց միջի երևիցիք իբրև լուսաւորք յաշխարհի:
16 * Զբանն կենաց ունիլ յանձինս՝ ՚ի պարծանս ինձ
յաւուրն Քի՟: զի ոչ ընդունայն ինչ ընթացայ՝
և ոչ ընդունայն վաստակեցայ:
17 * Այլ թէպէտ և նուիրիմ ՚ի վերայ պատարագի
18 և պաշտաման հաւատոց ձերոց: * Խնդամ՝ և ու-
րախակից եմ ամենեցուն ձեր: նոյնպէս և դուք
խնդացէք՝ և ուրախակից եղերուք ինձ:
19 * Բայց յուսամ ՚ի Տր՟ Յս՟, զտիմոթէոս վաղվաղա-
կի արձակել առ ձեզ. զի և ինձ սրտի դիւր լինի-
20 ցի, յորժամ գիտիցեմ ինչ զձէնջ: * Զի ոչ զոք
ունիմ համաշունչ՝ եթէ ընտանեբար հոգայցէ վս՟
21 ձեր: * Զի ամենեքին զանձանց խնդրեն, և ոչ
22 զՅի՟ Քի՟: * Բայց զփորձ նորա գիտացէք և
դուք. զի իբրև որդի հօր ծառայեաց ընդ իս յա-
23 ւետարանին: * Արդ՝ զսա ակնունիմ արձակել՝ ող՟
24 նոյնհետայն զանձնէ ստուգեցից: * Այլ յուսամ
25 ՚ի Տր՟՝ թէ և ես իսկ ընդ հուպ եկից: * Բայց լաւ
համարեցայ զեպափրոդիտոս զեղբայր՝ և զգործա-
կից և զզինուորակից, զձեր առաքեալ՝ և զպաշ-
26 տօնեայ խնդրոյ պիտոյից՝ առաքել առ ձեզ: * Քանզի
և ինքն իսկ յոյժ անձկացեալ է տեսանել զամենե

սին զձեզ: եւ հոգայր՝ զի ձեր լուեալ էր թէ խօթացաւ:
27 * Եւ արդարեւ խօթացաւ մինչեւ ՚ի մահ.
այլ Ած ողորմեցաւ նմա. ոչ նմա միայն, այլեւ ինձ.
զի մի զտրտմութի ՚ի վերայ տրտմութե կրիցեմ:
28 * Արդ՝ փութապէս յղեցի զնա՝ զի տեսեալ զնա
միւսանգամ ուրախ լինիցիք. եւ ես առանց տրտմութե եղէց:
29 * Ընկալջիք զնա ՚ի Տր ամենայն խնդութի՝ եւ զայնպիսիսն առ պատուականս ունիջիք:
30 * Զի վասն գործոյ Տն մինչեւ ՚ի մահ մերձեցաւ,
դուն գործեալ ոգւովք չափ. զի լցցէ զձեր պակասութի իմոյ սպասաւորութեան:

Գլ. Գ:

1 Այսուհետեւ եղբարք իմ, ուրախ լերուք ՚ի Տր:
զնոյն գրել առ ձեզ ինձ ոչինչ դանդաղելի է.
2 եւ ձեզ կարի զգուշալի: * Զգոյշ եղերուք ՚ի
շանց անտի: զգոյշ եղերուք ՚ի չար մշակաց անտի:
3 զգոյշ եղերուք ՚ի կրճատութենէ անտի: * Զի
թլփատութիւն մեք եմք, որք հոգւով զԱծ պաշտեմք: եւ պարծիմք ՚ի Քս Յս, եւ ոչ ՚ի մարմին
4 սպանծացեալ եմք: * Թէպէտ եւ ես իսկ զնոյն
վստահութի ունիմ ՚ի մարմնի: եթէ որ համարիցի այլ ազգ վստահ լինել ՚ի մարմին, առաւելեւս
5 ես: * Թլփատութի ութօրեայ. յազգէ Իղի. ՚ի
ցեղէ բենիամենի. եբրայեցի յեբրայեցւոց: ըստ
6 օրինացն փարիսեցի: * Ըստ նախանձայոյզն լինելոյ
հալածէի զեկեղեցին այ: ըստ արդարութե օրինացն
7 լեալ անարատ: * Այլ որ ինչ ինձ շահն էր՝ զայն
8 վնաս համարիմ վասն Քի: * Այլ եւ համարիմ
իսկ զամենայն վնաս՝ վասն առաւել գիտութեն Յի
Քի Տն իմոյ: վասն որոյ յամէ զրկեցայ՝ եւ համարիմ կղկղանս, զի զՔս շահեցայց:
9 * Եւ գտայց
՚ի նմա, իբրեւ ոչ եթէ զիմ արդարութիւն, որ
յօրինաց անտի է՝ ունիցիմ, այլ զհաւատոյն Քի
10 Յի. որ յԱյ արդարութիւնն է: * Հաւատովք
ճանաչել զնա՝ եւ զզօրութիւն յարութե նորա՝ եւ
զհաղորդութիւն չարչարանաց նորա՝ կերպարանա-

11 կից լինիլ մահու նորա: * Թէ որպէս հասից 'ի
12 մեռելոյն յարութիւն: * Իբրև ոչ եթէ արդէն առեալ իցեմ, կամ կատարեալ իցեմ. պնդեալ մտեալ
եմ թէ հասից, մանաւանդ թէ ըմբռնեալ իսկ
13 իցեմ 'ի Քն Յն: * Եղբարք՝ ես ոչ համարիմ
զանձն իմ թէ հասեալ իցեմ: բայց մի ինչ է՝ զի
զառ 'ի յետոյն մոռացեալ եմ, և 'ի յառաջադէմսն
14 նկրտեմ: * Ուշ եդեալ՝ ընթանամ 'ի կէտ կոչ-
15 մանն Այ 'ի Քս Յս: * Այսուհետև՝ որք միանգամ կատարեալքդ էք՝ զայս խորհեսցուք: և
եթէ այլ ազգ ինչ խորհիցիք՝ սակայն և զայն
16 Ած ձեզ յայտնեսցէ: * Բայց յոր ժամանեցաքս՝
զնոյն խորհիլ՝ և սմին կանոնի միաբան լինիլ:
17 * Նմանօղք ինձ եղիջիք եղբարք՝ և դիտասջիք
զայնպիսիսն, որք այնպէսն գնայցեն, որպէս ունիքդ
զմեզ ձեզ օրինակ:
18 * Զի բազումք գնան՝ զորոց բազում անգամ ասէի ձեզ. (բայց արդ և լալով իսկ ասեմ) կթշնա-
19 մեայ խաչին Քի: * Որոց կատարածն կորուստ է:
որոց Ած որովայնն է. և փառք ամօթն իւրեանց,
20 որք զերկրաւորս և եթ խորհին: * Այլ մեր առաքինութիւն յերկինս է. ուստի և փրկչին ակն
21 ունիմք Տն Յի Քի: * Որ նորոգեսցէ զմարմին
խոնարհութեան մերոյ՝ կերպարանակից լինել մարմնոյ փառաց իւրոց, ըստ զօրութեանն՝ առ 'ի կարօղ
լինելոյ հնազանդեցուցանել ընդ իւրև զամենայն:

ԳԼ: Դ:

1 Այսուհետև եղբարք իմ սիրելիք և անձկալիք,
ուրախութիւն իմ, և պսակ. այսպէս հաստա-
2 տուն կայէք 'ի Տր սիրելիք: * Զևոդիայ աղաչեմ, և զսինտիքէ աղաչեմ, զնոյն խորհիլ 'ի Տր:
3 * Այո աղաչեմ և զքեզ մտերիմ իմ և լծակից,
և դու օգնական լինիջիր նոցա՝ որք յաւետարանին
նահատակեցան ընդ իս կղեմաւ հանդերձ՝ և այլովք
գործակցօք իմովք: որոց անուանքն են 'ի դպրու-
4 թեան կենաց: * Ուրախ լերուք 'ի Տր յամ ժամ:

5 դարձեալ ասեմ, ուրախ լերուք: * Հեզութիւն
ձեր յայտնի լիցի ամենայն մարդկան: Տր̅ մերձ է:
6 * Մի ինչ հոգայք. այլ ամենայն աղօթիւք և
խնդրուածօք, գոհութեամբ խնդրուածք ձեր յայտնի
7 լիցին առ Ած̅: * Եւ խաղաղութիւնն Այ̅՝ որ ՚ի
վեր է քան զամ̅ միտս, պահեսցէ զսիրտս ձեր, և
8 զմիտս ՚ի Քս̅ Յս̅: * Այսուհետև եղբարք՝ որինչ
ճշմարտութիւն է՝ որինչ պարկեշտութիւն, որինչ
արդարութիւն, որինչ սրբութիւն, որինչ սիրոյ,
որինչ համբաւ բարեաց, որինչ քաջութիւն, որինչ
9 գովութիւն՝ զայն խորհեսջիք: * Զոր ուսայքն, և
ընկալայք, և լուայք՝ և տեսէք յիս՝ զայն արա
րէք: և Ած̅ խաղաղութեան եղիցի ընդ ձեզ:
10 * Ուրախ եղէ ես ՚ի Տր̅ յոյժ. զի և դուք
զմտաւ ածիք հոգալ ինչ վասն իմ. որպէս և հո-
11 գայիքն: բայց բարբարէիք լինէ: * Իբր ո՛չ առ
կարօտութեան ինչ ասեմ. զի ես ուսայ՝ որովք կա-
12 րեմ բաւական լինել: * Գիտեմ նուաղիլ, գիտեմ
առաւելուլ՝ (յամ̅ի ամենևին վարժեալ եմ,) և յա
գիլ՝ և քաղցենալ. և առաւելուլ՝ և նուաղիլ:
13 * Յամ̅ի կարող եմ, այնու՝ որ զօրացոյցն զիս:
14 * Բայց բարւոք արարիք՝ զի կցորդ եղէք ինձ
՚ի նեղութեան:
15 * Գիտէք և դուք փիլիպպեցիք, զի ՚ի սկզբան
աւետարանին իբրև ելի ես ՚ի մակեդոնիայ՝ և ո՛չ
մի եկեղեցի հաղորդեաց ինձ յաղագս տալոյ և
16 առնլոյ՝ բայց միայն դուք: * Զի և ՚ի թեսաղո-
նիկ միանգամ և երկիցս զպէտս իմ ետուք բերել:
17 * Իբր ո՛չ եթէ խնդրեմ զտուրսն, այլ խնդրեմ
18 զպտուղն, որ յաճախէ ՚ի բան ձեր: * Այլ իմ
առեալ զամ̅, և առաւելեալ եմ: ընկալայ՝ և լի
եմ ՚ի ձեռն եպափրոդիտեայ, որ է ՚ի ձէնջ հոտ
19 անուշից՝ պատարագ ընդունելի՝ հաճոյ Այ̅: * Եւ
Ած̅ իմ լի արասցէ զամ̅ պէտս ձեր ըստ իւրում
20 մեծութեան, փառօք ՚ի Քս̅ Յս̅: * Այլ Այ̅, և
Հօր մերում փառք յաւիտեանս յաւիտենից. Ամէն:
21 * Ողջոյն տաջիք ամենայն սրբոյ՝ որք ՚ի Քս̅ Յս̅:
22 * Ողջոյն տան ձեզ՝ որք ընդ իս են եղբարք:

23 * Ողջոյն տան ձեզ ամենեքեան սրբք։ մանաւանդ
24 որք 'ի տանէ կայսեր են։ * Շնորհք Տն̄ Յի̄ Քի̄
ընդ ոգւոյդ ձերում։ Ամէն։

ԹՈՒՂԹ
ԵՐԱՆԵԼՒՈՅՆ
ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ
ԱՌ ԿՈՂՈՍԱՑԻՍՆ՝

Գլուխ Առաջին։

1 ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼ Յ̄Ի Ք̄Ի ԿԱ
2 մօքն ա̄յ, և տիմոթէոս եղբայր։ * Առ կողոսացիս
սրբս և հաւատացեալս եղբարս 'ի Ք̄ս Յ̄ս։
3 * Շնորհք ընդ ձեզ և խաղաղութիւն յԱ̄յ Հօրէ
մերմէ՝ և 'ի Տէ̄ Յէ̄ Քէ̄։ գոհանամք զԱ̄յ և
զՀօրէ Տն̄ մերոյ Յի̄ Քի̄, յա̄մ ժամ վասն ձեր
4 աղօթս առնելով։ * Իբրև լուաք զհաւատսն ձեր՝
որ 'ի Ք̄ս Յ̄ս Տ̄ր մեր. և զսէրն, զոր ընդ ամենայն
5 սրբս ունիք։ * Վասն յուսոյն՝ որ պահի ձեզ
յերկինս. զորմէ լուայք բանիւն ճշմարտութ̄ե
6 աւետարանին։ * Որ եհաս առ ձեզ. որպէս ընդ
ամենայն աշխարհ աճէ՝ և պտղաբերէ. որպէս և
'ի ձերում միջի. յօրէ յորմէ լուայք՝ և ծանեայք
7 զշնորհսն Ա̄յ ճշմարտութ̄բ։ * Որպէս ուսայք
յեպափրեայ սիրելոյ ծառայակցէ մերմէ, որ է
հաւատարիմ վ̄ն ձեր՝ պաշտօնեայ Քի̄ Յի̄։

*

8 Որ և պատմեաց մեզ զսէրն ձեր հոգւով:
9 * Վասն այսորիկ և մեք յօրէ յորմէ լուաք՝ ոչ
դադարեմք վասն ձեր աղօթս առնել՝ և խնդր-
ուածս մատուցանել՝ զի լնուցուք զգիտութիւն կա-
մաց նորա, ամենայն իմաստութե՟բ և հոգևոր հան
10 ճարով: * Գնալ ձեզ արժանի Տ՟ն յա՟մ հաճու-
թե՟, յա՟մ գործս բարութե՟ պտղաբերք՝ և աճե-
11 ցուցք գիտութե՟ն Ա՟Յ: * Ամենայն զօրութե՟բ
զօրացեալք ըստ զօրութե՟ փառացն նորա. յա՟մ
համբերութե՟ և երկայնմտութե՟ ուրախութե՟բ:
12 * Գոհանալ զԱ՟Յ Հօրէ՝ որ կոչեաց զձեզ 'ի
13 մասն վիճակի սրբոցն 'ի լոյս: * Որ փրկեաց զմեզ
յիշխանութէ խաւարի, և փոխեաց զմեզ յարքայու
14 թիւն Որդւոյ իւրոյ սիրելւոյ: * Որով ունիմք
զփրկութիւն արեամբն նորա, և զթողութիւն մե
15 ղաց՝ մարմնով նորա: * Որ է պատկեր աներև-
16 ութին Ա՟Յ, անդրանիկ ա՟մ արարածոց: * Զի
նովաւ հաստատեցաւ ամենայն, որ ինչ յերկինս՝
և որ ինչ յերկրի: որք երևին, և որք ոչն երևին.
եթէ աթոռք, եթէ Տ՟րութիւնք, եթէ պետութիւնք,
եթէ իշխանութիւնք. ամենայն ինչ նովաւ՝ և 'ի
17 նոյն հաստատեցաւ: * Եւ նա է յառաջքան զա՟մ.
և ամենայն ինչ նովաւ եկաց բովանդակ:
18 * Եւ նա է գլուխ մարմնոյ եկեղեցւոյ. որ է սկիզբն,
անդրանիկ 'ի մեռելոց. զի եղիցի ինքն յա՟մի յա-
19 ռաջացեալ: * Զի 'ի նմա հաճեցաւ ա՟մ լրումն
20 Ա՟ծութե՟ն բնակել: * Եւ նովաւ հաշտեցուցանել
զա՟մ 'ի նոյն: արար զխաղաղութիւն արեամբ
խաչին իւրոյ. որ ինչ յերկրի՝ և որ ինչ յերկինս:
21 * Եւ զձեզ՝ որք երբեմն օտարացեալք էիք՝ և
թշնամիք խորհրդովք 'ի գործս չարութե՟:
22 * Այժմ աւադիկ հաշտեցոյց անդամովք մարմնոյ
իւրոյ, 'ի ձեռն մահուն իւրոյ: յանդիման կացուցա-
նել զձեզ սբ՟ս՝ և անբիծս՝ և անարատս առաջի
23 նորա: * Եթէ կայցէք 'ի հաւատսն արմատացեալք
և հաստատեալք. և անշարժք 'ի յուսոյ աւետա-
րանին, զոր լուայք քարոզելոյ ընդ ամենայն արա-
րածս 'ի ներքոյ երկնից. որոյ եղէ ես Պօղոս պաշ-

24 տօնեայ: Ե՛ւ արդ՝ ուրախ եմ 'ի չարչարանս իմ
վասն ձեր. և լնում զպակասութիւնս նեղութե̄ն
Քի 'ի մարմնի իմում վասն մարմնոյ նորա՝ որ է
25 եկեղեցի: * Որոյ եղէ ես պօղոս պաշտօնեայ՝ ըստ
տնտեսութե̄ն Այ, որ տուեալ է ինձ 'ի ձեզ՝ կատարել
26 զբանն Այ: * Զխորհուրդն որ ծածկեալն
էր 'ի յաւիտենից և յազգաց. որ այժմ յայտնեցաւ
27 սրբոց իւրոց: * Որոց կամեցաւ Ած ցուցանել,
թէ զինչ է մեծութիւն փառաց խորհրդոյ
նորա 'ի հեթանոսս, որ է Քս̄ 'ի ձեզ՝ յոյսն փառաց:
28 * Զոր մեք քարոզեմք, և խրատեմք զա̄մ
մարդ՝ և ուսուցանեմք զա̄մ մարդ ամենայն հոգևոր
իմաստութբ̄. զի կացուսցուք զա̄մ մարդ կատարեալ
29 'ի Քս̄ Յս̄: * Յոր և աշխատիմ պատերազմեալ
ըստ յաջողութե̄ նորա՝ որ յաջողեալ է յիս
զօրութբ̄:

Գլ. Բ.

1 Կամիմ, զի գիտիցէք դուք՝ զորպիսի ճգնութիւն
ունիմ յանձին վասն ձեր՝ և վասն լաւոդիկեցւոյն,
և որոց չիցէ տեսեալ զերեսս իմ մարմնով:
2 * Զի մխիթարեսցին սիրտք նոցա տեղեկացեալք
սիրով. և յա̄մ մեծութիւն լրութե̄ իմաստութե̄՝
'ի գիտութե̄ խորհրդոյ Այ Հօր 'ի Քս̄ Յս̄:
3 * Յորում ամենայն գանձք իմաստութե̄ և գիտութե̄
4 ծածկեալ կան: * Այլ զայս ասեմ, զի մի ոք
զձեզ զառանցուսցէ պատիր բանիւք:
5 * Զի թէպէտ մարմնով հեռի եմ, այլ հոգւով
ընդ ձեզ եմ: խնդամ, իբրև տեսանեմ զկարգն
ձեր՝ և զհաստատութիւն հաւատոյն ձերոյ՝ որ 'ի
6 Քս̄ Յս̄: * Արդ՝ որպէս ընկալայք զՔս̄ Յս̄ զՏր̄,
7 նովին գնասջիք: * Արմատացեալք և շինեալք 'ի
նա, և հաստատեալք 'ի հաւատս, որպէս ուսայքն
8 առաւելեալք 'ի նմին գոհութեամբ: * Զգո՛յշ
լերուք՝ մի ոք իցէ՝ որ զձեզ կողոպտիցէ ճարտարմտութբ̄՝
և սնոտի խաբէութբ̄. ըստ մարդկան
աւանդութե̄՝ և ըստ տարերց աշխարհիս՝ և

9 ոչ ըստ Քի՟ ։ * Զի ՚ի նմա բնակի ամենայն լրումն
10 Ածութե՟ մարմնապէս։ * Եւ էք նովաւ լցեալք, որ
11 է գլուխ ամ՟ իշխանութե՟ և պետութե՟ ։ * Որով
թլփատեցայք հաւատովք զանձեռագործ թլփա-
տութիւնն՝ ՚ի մերկանալ զանդամս մարմնոյ թլփա-
12 տութ՟ն Քի՟ ։ * Թաղեցայք ընդ նմին ՚ի մկրտու-
թե՟ն, որով և ընդ նմին յարեայք հաւատովք Այ՟
ազդեցութեանն, որ յարոյց զնա ՚ի մեռելոց ։
13 * Եւ զձեզ, որք երբեմն մեռեալքն էիք ՚ի մեղս,
և յանթլփատութե՟ մարմնոյ ձերոյ, կենդանացոյց
յանձին իւրում, շնորհեաց մեզ զամ՟ յանցանս մեր։
14 * Եւ ջնջեաց զձեռագիր մերոյ հակառակութե՟ն
հրամանօք իւրովք ։ որ կայր մեզ հակառակ՝ եբարձ
զնա ՚ի միջոյ՝ և բևեռեաց ընդ խաչափայտին։
15 * Մերկեաց զիշխանութիւնս և զպետութիւնս․
յայտ յանդիմանս խայտառակեաց նշաւակեալ զնոսա
16 յանձին իւրում ՚ի յաղթութե՟ իւրում։ * Մի ոք
այսուհետև զձեզ դատեսցէ՝ ուտելով, կամ ըմպե-
լով, կամ մասամբք տօնից, կամ ամսամտիւք՝ կամ
17 շաբաթուք ։ * Որք են ստուերք հանդերձելոցն․
18 այլ մարմինն Քս՟ է ։ * Մի ոք զձեզ խաբեսցէ ։ որ
կամիցի խոնարհութ՟բ և կրօնիւք հրեշտակաց,
զոր չիցէ տեսեալ գնահետ փքեալ․ տարապարտ
19 հպարտացեալ ՚ի մտաց մարմնոյ իւրոյ ։ * Եւ ոչ
ունիցի զգլուխն Քս՟՝ ուստի ամենայն մարմինն յօդիւք
և խաղալեօք տարբերեալ և խառնեալ՝ աճէ
20 զաճումն Այ՟ ։ * Եթէ մեռայք ընդ Քի՟ ՚ի տարերց
աշխարհիս՝ զի՞ ևս իբրև զկենդանիս աստէն
21 յաշխարհի կրօնաւորիք ։ * Մի մերձենար․ մի
22 ճաշակեր․ մի հուպ լինիր ։ * Որ է ամենայն ինչ
՚ի պէտս ապականութե՟, ըստ պատուիրանաց և
23 վարդապետութե՟ մարդկան ։ * Որ յիմաստութ՟ի
իմն հանճարի, ինքնակամ կրօնիւ և խոնարհութ՟բ՝
և անխնայութ՟բ մարմնոյ․ և ոչ ՚ի պատուի ինչ
լրութե՟ մարմնոյ ։

ԳԼ․ Գ․

1 Եթէ յարեայք ընդ Քի՟, ապա զվերինն խնդրե-
2 ցէք, ուր Քս՟ն նստի ընդ աջմէ Այ՟։ * Զվե-
րինն խորհեցարուք, մի զայն՝ որ յերկրի աստ է։
3 * Քանզի մեռայք՝ և կեանքն ձեր ծածկեալ են
4 ընդ Քի՟ յԱծ՟։ * Իսկ յորժամ Քս՟ յայտնեսցի,
կեանքն ձեր․ յայնժամ և դուք ընդ նմա յայտնես-
5 ջիք փառօք։ * Սպանէք այսուհետև զանդամս ձեր
զերկրաւորս։ 'ի բաց ընկեցէք զպոռնկութիւն,
զպղծութիւն, զբիծ, զցանկութիւն չարեաց, և
զագահութիւն, որ է կռապաշտութիւն։
6 * Վասն որոյ գայ բարկութիւնն Այ՟ 'ի վերայ
7 որդւոյն անհաւանութե՟։ * Որովք և դուք երբեմն
8 գնայիք՝ մինչ կենդանիքն էիք 'ի նոսա։ * Արդ՝
'ի բաց թօթափեցէք և դուք զայն ամենայն։ զբար-
կութի՟, զսրտմտութի՟, զչարութի՟, զհայհոյութի՟,
9 զխեղկատակութի՟ 'ի բերանոց ձերոց։ * Մի՛ ստէք
միմեանց։ մերկացարուք զհին մարդն գործօք իւ-
10 րովք։ * Եւ զգեցարուք զնորն նորոգեալ 'ի գի-
տութիւն ըստ պատկերի արարչին իւրո[illegible]
11 * Ուր ոչ է հրէայ՝ և հեթանոս։ թլփատութի՟,
և անթլփատութիւն։ խուժ՝ դուժ՝ սկիւթացի՝
ծառայ՝ ազատ։ այլ ամենայն, և յամ՟ի Քս՟։
12 * Զգեցարուք այսուհետև իբրև ընտրեալք Այ՟
սբ՟ք և սիրեցեալք՝ զգութ, զողորմութի՟, զքաղց-
րութի՟, զխոնարհութի՟, զհեզութի՟, զերկայն-
13 մտութի՟։ * Ներել միմեանց․ շնորհել իրերաց․
եթէ ուրուք զումեքէ տրտունջ ինչ իցէ, որպէս
Ած՟ Քիւ՟ շնորհեաց ձեզ՝ նոյնպէս և դուք։
14 * Եւ 'ի վերայ այսր ամի՟ զսէրն, որ է զօդ կատար-
15 մանն։ * Եւ խաղաղութիւնն Քի՟ հաստատեսցի 'ի
սիրտս ձեր։ յորև կոչեցայքն միով մարմնով։ և
16 գոհացօղք լինիջիք։ * Զի բանն Քի՟ բնակեսցի
'ի ձեզ առատապէս, ամենայն իմաստութ՟բ, ուսու-
ցանել և խրատել զմիմեանս։ սաղմոսիւք և օրհ-
նութ՟բք, և երգօք հոգևորօք՝ և շնորհօք օրհնել
17 'ի սիրտս ձեր զԱծ՟։ * Եւ զամ՟ զոր և առնիցէք

բանիւք և արդեամբք, զա՟մ յանուն Տ՟ն Յ՟ի արասջիք։ գոհացօղք լինիջիք զԱ՟Յ և զՀօրէ նովաւ։
18 * Կանայք հնազանդ լերուք արանց ձերոց, որպէս
19 և վայել է ՚ի Տ՟ր։ * Արք սիրեցէք զկանայս ձեր,
20 և մի դառնացուցանէք զնոսա։ * Որդիք հնազանդ
լերուք ծնողաց ձերոց յա՟մի՝ զի այն է հաճոյ առաջի
21 Տ՟ն։ * Հարք՝ մի զայրացուցանէք զորդիս ձեր·
22 զի մի տրտմեսցին։ * Ծառայք հնազանդ լերուք
տերանց ձերոց յա՟մի, մի առ ականէ ծառայութ՟բ
իբրև մարդահաճոյք· այլ միամտութ՟բ սրտի երկնչիւ
23 ՚ի Տ՟է։ * Զոր ինչ առնիցէք՝ սրտի մտօք
գործեսջիք իբրև Տ՟ն, և ոչ իբրև մարդկան։
24 * Գիտասջիք զի ՚ի Տ՟է առնուցուք զհատուցումն
ժառանգութեան ձերոյ։ քանզի Տ՟ն Ք՟ի ծառայէք։
25 * Իսկ ապիրատն ընկալցի ըստ իւրում ապիրատութեանն։ զի չիք ակնառութիւն առաջի Ա՟Յ։

ԳԼ· Դ։

1 Տեարք, զիրաւունս և զհաւասարութիւն ծառայից
ձերոց շնորհեցէք։ գիտասջիք՝ զի և ձեր Տ՟ր
2 գոյ յերկինս։ * Աղօթից ստէպ կացէք· տքնիլ ՚ի
3 նմին գոհութ՟բ։ * Աղօթս արարէք միանգամայն
և վասն մեր· զի Ա՟Ծ բացցէ մեզ զդուռն բանի,
խօսիլ զխորհուրդն Ք՟ի, (վասն որոյ և կապեալս
4 կամ։) * Զի յայտնի արարից զնա՝ որպէս արժան
5 իցէ ինձ խօսիլ։ * Իմաստութ՟բ գնասջիք առ արտաքինսն,
6 գնոյ առեալ զժամանակս։ * Եւ բանն
ձեր յա՟մ ժամ լի շնորհօքն Տ՟ն՝ իբրև աղիւ համեմեալ
լիցի։ գիտել որպէս արժան իցէ ձեզ
7 իւրաքանչիւրումեք տալ պատասխանի։ * Այլ որ
ինչ զինէն իցէ՝ ցուցցէ ձեզ զա՟մ տիւքիկոս սիրելի
եղբայր՝ և հաւատարիմ պաշտօնեայ՝ և ծառայակից
8 ՚ի Տ՟ր։ * Զոր առաքեցի առ ձեզ դմին իրի,
զի գիտասջիք վասն մեր, և մխիթարեսցէ զսիրտս
9 ձեր։ * Ոնեսիմաւ հանդերձ եղբարբ՝ հաւատարմաւ
և սիրելեաւ՝ որ է ՚ի ձէնջ։ զա՟մ ինչ ցուցցէ ձեզ՝
10 որ ինչ աստ է։ * Ողջոյն տայ ձեզ Արիստարքոս

գերեկից իմ• և Մարկոս եղբօրորդի Բառնաբայ•
վասն որոյ առիք զպատուէր՝ եթէ եկեսցէ առ ձեզ՝
11 ընկալջիք զնա ։ * Եւ Յիսուս՝ որ անուանեալն Յուստոս ։
որք են 'ի թլփատութենէ անտի։ զի դոքա
միայն եղեն գործակիցք ինձ յարքայութեանն Այ,
12 որք և եղեն ինձ մխիթարութիւն ։ * Ողջոյն տայ
ձեզ Եպափրաս՝ որ 'ի ձէնջ ծառայ Քի Յի է •
յամ ժամ պատերազմեալ վասն ձեր յաղօթս, զի
կայցէք կատարեալք և լցեալք յամ կամս Այ։
13 * Վկայեմ նմա, զի բազում աշխատութիւն ունի
վասն ձեր, և վասն Լաւոդիկեցւոյն, և վասն այնոցիկ՝
14 որք Յերապօլիսն են ։ * Ողջոյն տայ ձեզ
15 Ղուկաս բժիշկ և սիրելի, և Դեմաս ։ * Ողջոյն
տաջիք եղբարց՝ որք են 'ի Լաւոդիկիա և Նիմփայի
16 և որ առ տանն եկեղեցին է նորա ։ * Եւ յորժամ
ընթեռնուցու առ ձեզ թղթուղթդ՝ արասջիք, զի
և 'ի Լաւոդիկեցւոց եկեղեցւոջն ընթերցցի ։ և
զառ 'ի Լաւոդիկեցւոյն՝ զի և դուք ընթեռնուցուք։
17 * Եւ ասասջիք Արքիպպոսի՝ զգոյշ լեր սպասաւորութեանդ՝
զոր ընկալար 'ի Տր, զի զայդ կատարեսցես ։
18 * Ողջոյնդ ձեռին իմոյ Պօղոսի է ։ յուշ լիցին
ձեզ կապանքս իմ։ Շնորհք ընդ ձեզ։ Ամէն։

* * *

ԹՈՒՂԹ
ԵՐԱՆԵԼՒՈՅՆ
ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ
ԱՌ ԹԵՍԱՂՕՆԻԿԵՑԻՍՆ
ԱՌԱՋՆԵՐՈՐԴ։

Գլուխ Առաջներորդ։

1 ՊՕՂՈՍ ԵՒ ՍԻՂՈՒԱՆՈՍ ԵՒ ՏԻմոթէոս՝ եկեղեցւոյդ թեսաղոնիկեցւոյ յԱստուած
2 Հայր և 'ի Տր մեր Յս Քս։ * Շնորհք ը ձեզ և խաղաղութիւն։ Գոհանամք զԱյ յամենայն ժամ վասն ձեր ամենեցուն՝ յիշատակ առնել յաղօթս
3 մեր անդադար։ * Յիշել զձեր գործն հաւատոյ՝ և զվաստակ սիրոյ՝ և զհամբերութի յուսոյն Տն մերոյ Յի Քի՝ առաջի Այ և Հօր մերոյ։
4 * Գիտէք եղբարք, սիրեցեալք յԱյ՝ զընտրութին
5 ձեր։ * Զի աւետարանն մեր ոչ եղև առ ձեզ բանիւ միայն. այլ և զօրութբ՝ և Հոգւով սրբով՝ և լրութբ բազմաւ. որպ և գիտէք իսկ՝ թէ որպիսիք
6 եղեաք 'ի միջի ձերում վս ձեր։ * Եւ դուք նմանօղք մեզ եղէք՝ և Տն. ընկալեալք զբանն 'ի բազում նեղութե, խնդութեամբ Հոգւոյն սրբոյ։
7 * Մինչեւ ձեզ օրինակ ամենեցուն հաւատացելոյ. որք
8 են 'ի մակեդոնիա՝ և յաքայիա։ * Զի 'ի ձէնջ հընչեաց բանն Այ. ոչ միայն 'ի մակեդոնիա և յաքայիա, այլ և յամ տեղիս հաւատքն ձեր՝ որք առ Ած են, սփռեցան։ զի այսուհետեւ ոչինչ է պիտոյ
9 մեզ և խօսել ինչ։ * Զի նոքին իսկ պատմեն վասն մեր, թէ որպ եղև մեզ մուտ առ ձեզ. և որպ

դարձայք առ Ած 'ի կռոց անտի, ծառայել Այ
10 կենդանւոյ և ճշմարտի։ * Եւ ակնունել Որդւոյ
նորա յերկնից. զոր յարոյց 'ի մեռելոց զՅս, որ
փրկեաց զմեզ 'ի բարկութենէ անտի՝ որ գալոցն է։

ԳԼ. Բ.

1 Դուք ինքնին գիտէք եղբարք զմուտն մեր առ
2 ձեզ. զի ոչ ընդունայն ինչ եղև։ * Այլ յառա-
ջագոյն չարչարեալք՝ և թշնամանեալք՝ (որպէս և
դուք իսկ գիտէք։) 'ի մէջ փիլիպպեցւոց, համար-
ձակեցաք Աստուծով մերով պատմել ձեզ զաւետա-
3 րանն Այ մեծաւ պատերազմաւ։ * Զի մխիթա-
րութիւն մեր ոչ 'ի մոլորութենէ է՝ և ոչ 'ի պղծու-
4 թենէ՝ և ոչ նենգութեամբ։ * Այլ որպէս ընտ-
րեցաք յԱյ հաւատարիմ լինել աւետարանին, նոյն
պէս և խօսիմք։ ոչ իբրև մարդկան հաճոյ լինել՝
5 այլ Այ, որ քննէ զսիրտս մեր։ * Զի ոչ եր-
բէք բանիւք ողոքանաց եղեաք առ ձեզ՝ որպէս և
դուք իսկ գիտէք։ և ոչ 'ի պատճառս ագահութե,
6 որպէս և Ած վկայ է։ * Եւ ոչ խնդրեցաք զփառս
7 'ի մարդկանէ. ոչ 'ի ձէնջ. և ոչ յայլոց։ * Կարօղք
էաք իբրև զՔի առաքեալս ծանրանալ. այլ եղեաք
հեզք 'ի միջի ձերում, որպէս դայեակ մի՝ որ սնու-
8 ցանիցէ մանկունս։ * Նոյնպէս և մեք գթայեաք
'ի ձեզ։ հաճոյ թուէր մեզ տալ ձեզ ոչ միայն
զաւետարանն Այ, այլև զանձինս մեր։ քանզի սի-
9 րելիք մեր եղէք։ * Յիշէք եղբարք զվաստակն
մեր և զջան, զի զցայգ և զցերեկ գործէաք վն
չծանրանալոյ ումեք 'ի ձէնջ. և քարոզէաք ձեզ զա-
10 ւետարանն Այ։ * Դուք ինքնին վկայք էք՝ և Ած.
որպէս սրբութբ՝ և արդարութբ՝ և անբծութբ՝
11 ձեզ հաւատացելոցդ եղեաք։ * Որպէս և գիտէք
իսկ. զի զիւրաքանչիւրոք 'ի ձէնջ (իբրև հայր
12 զորդիս։) * Մխիթարէաք և սփոփէաք։ և դնէ-
աք զվկայութի գնալ ձեզ արժանապէս Այ, որ
կոչեաց զձեզ յիւր արքայութին և 'ի փառս։
13 * Վասն այնորիկ և մեք գոհանամք զԱյ անդա-

կալ՝ զի առեալ զլուր բանին Այ առ 'ի մէնջ, ընկալայք
ոչ իբրև զբան մարդկան. այլ (որպէս
ճշմարտիւ) զբան Այ: որ և յաջողեալ իսկ է 'ի
14 ձեզ հաւատացեալսդ: * Զի դուք նմանօղք եղէք
եղբարք՝ եկեղեցեացն Այ՝ որք են 'ի Հրէաստանի
'ի Քս Յս: զի զնոյն չարչարանս չարչարեցայք և
դուք 'ի ձերոց ազգակցաց՝ որպէս և նոքայն 'ի
15 Հրէից: * Որք և զՏրն Յս սպանին, և զմարգարէսն:
և զմեզ հալածեցին: և Այ յաչաց ելին.
և ամենայն մարդկան հակառակք եղեն:
16 * Ե՛ւ արգելուին զմեզ խօսիլ հեթանոսաց զի
ապրեսցին: զի կատարեսցեն զմեղս իւրեանց յամ
ժամ: քանզի հասեալ է 'ի վերայ նոցա բարկութի
17 մինչև իսպառ: * Այլ մեք եղբարք՝ թէպէտ և
որբ մնացաք 'ի ձէնջ առժամանակ մի, երեսօք՝ և
ոչ սրտիւք: առաւելևս փութայաք տեսանել զերեսս
18 ձեր մեծաւ ցանկութբ: * Վասն այսորիկ կամեցայ
գալ առ ձեզ ես պօղոս՝ միանգամ և երկիցս.
19 և խափանեաց զմեզ սատանայ: * Քանզի
ո՞վ է մեր յոյս, կամ խնդութիւն, կամ պսակ
պարծանաց մերոց. եթէ ոչ դուք 'ի Տր՝ առաջի
Տն մերոյ Յի Քրիստոսի 'ի նորա գալստեանն:
20 * Զի դուք էք փառք մեր, և խնդութիւն:

ԳԼ. Գ:

1 Վասն որոյ ոչ ևս ունիմք ժոյժ՝ զի բարւոք թուեցաւ
2 մեզ միայն մնալ յաթէնս: * Ե՛ւ առաքեցաք
զտիմոթէոս զեղբայր մեր՝ և զգործակից
աւետարանին Այ և Հօրն Քի: հաստատել զձեզ՝
3 և մխիթարել վասն հաւատոյն ձերոյ: * Զի մի
տաղտկայցէք 'ի նեղութիս յայսոսիկ: քանզի դուք
4 ինքնին իսկ գիտէք, զի 'ի սոյն կամք: * Քանզի
մինչ առ ձեզն իսկ էաք՝ յառաջագոյն ասէաք ձեզ,
թէ նեղութիք հասանելոց են 'ի վերայ մեր. որպէս
5 եղև իսկ՝ և գիտացիք: * Վասն այնորիկ և
ես զի ոչ ևս ունէի ժոյժ՝ առաքեցի գիտել զհաւատոյն
ձեր: գուցէ արդեօք փորձեաց և զձեզ

6 փորձիչն. և ընդունայն լինիցի ջանն մեր: *Բայց
արդ իբրև եկն տիմօթէոս 'ի ձէնջ առ մեզ՝ և
ետ մեզ զաւետիս հաւատոյն ձերոյ և սիրոյ: զի
ունիք 'ի մտի զյիշատակս մեր բարեաց յամ ժամ.
ցանկացեալ էք տեսանել զմեզ՝ որպէս և մեք զձեզ:
7 *Վասն այնորիկ մխիթարեցաք 'ի ձեզ եղբարք 'ի
վերայ ամենայն վշտաց և նեղութե՟ց ձերոց՝ 'ի
8 ձեռն հաւատոյն ձերոյ: *Զի այժմ կենդանի
եմք՝ եթէ դուք հաստատուն կայցէք 'ի Տ՟ր:
9 *Զի՞նչ կարեմք գոհութի՟ մատուցանել Ա՟յ
վասն ձեր, 'ի վերայ ամենայն խնդութե՟ն, զոր
10 խնդամք վասն ձեր առաջի Ա՟յ մերոյ: *Զցայգ
և զցերեկ առաւել ևս աղաչեմք տեսանել զերեսս
ձեր: և հաստատել զպակասութիւն հաւատոյն
11 ձերոյ: *Այլ ինքն Ա՟ծ և Հայր մեր՝ և Տ՟ր մեր
Յ՟ս Ք՟ս ուղղեսցէ զճանապարհս մեր առ ձեզ:
12 *Եւ՛ զձեզ ինքն Տ՟ր բազմապատիկս և առաւելս
արասցէ սիրով ընդ միմեանս և առ ամենեսին՝
13 որպէս և մեք 'ի ձեզ: *Հաստատել զսիրտս ձեր
անարատս 'ի սրբութիւն առաջի Ա՟յ և Հօր մերոյ,
'ի գալստեան Տ՟ն մերոյ Յ՟ի Ք՟ի հանդերձ
ամենայն սրբովք իւրովք. Ամէն:

ԳԼ. Դ:

1 Այսուհետև եղբարք, աղաչեմք զձեզ՝ և մխիթարեմք
'ի Ք՟ս Յ՟ս: զի որպէս ընկալայք 'ի մէնջ՝
թէ որպէս պարտ իցէ ձեզ գնալ՝ և հաճոյ լինել
Ա՟յ. որպէս և գնայք իսկ: զի ևս քանզևս յաւելանայցէք
2 'ի նոյն: *Եւ՛ գիտէք՝ թէ որպիսի
3 պատուիրանս տուաք ձեզ 'ի Տ՟ր Յ՟ս: *Զի այս
են կամքն Ա՟յ, սրբութի՟ ձեր. 'ի բաց լինել ձեզ 'ի
4 պոռնկութ՟է, *Գիտել իւրաքանչիւրումեք 'ի
ձէնջ զիւր աման ստանալ սրբութ՟բ և պատուով:
5 *Մի 'ի ցաւս ցանկութ՟ե՝ որպէս և այլք հեթանոսք՝
6 որք ոչ գիտեն զԱ՟ծ: *Մի զանցանել և
զրկել յիրիք յայդմիկ զեղբայր իւր. քանզի վրէժ
խնդիր է Տ՟ր 'ի վերայ ա՟մի այդորիկ: որպէս յա-

ռաջագոյն ասացաք ձեզ, և եդաք զվկայութիւն:
7 * Քանզի ոչ կոչեաց զմեզ Ած 'ի պղծութիւն՝
8 այլ 'ի սրբութիւն: * Այսուհետև որ զձեզ անարգէ՝
ոչ զմարդ անարգէ, այլ զԱծ՝ որ և ետ
9 զՀոգին իւր սբ 'ի ձեզ: * Այլ վն եղբայրսիրութեան՝
չէ ինչ պիտոյ գրել առ ձեզ: զի դուք ինքնին
իսկ Ածուսոյցք էք առ 'ի զմիմեանս սիրելոյ:
10 * Քանզի և առնէք իսկ զայդ յամենեսեան եղբարս՝
որք են յամենեսեան կողմանս մակեդոնայւոյ:
աղաչեմք զձեզ եղբարք՝ առաւել առաւելուլ
11 և առատանալ՝ հանդարտիլ: * Եւ գործել
զիւրաքանչիւր. և գործել ձեռօք ձերովք որպէս
և պատուիրեցաք ձեզ: զի գնայցէք պարկեշտութբ
առ արտաքինսն՝ և մի ինչ կարօտեալք իցէք:
12 * Ոչ կամիմք եղբարք՝ եթէ տգէտք իցէք վասն
ննջեցելոց. զի մի տրտմիցիք որպէս և այլքն՝ որոց
13 ոչ գոյ յոյս: * Եթէ հաւատամք՝ եթէ Յս մեռաւ
և յարեաւ. նոյնպէս և Ած զննջեցեալսն 'ի ձեռն
14 Յի ածցէ ընդ նմա: * Բայց զայս ասեմք Տն բանիւ,
եթէ մեք՝ որք կենդանիքս եմք մնացեալք՝ 'ի
15 գալստեանն Տն ոչ ժամանեմք ննջեցելոցն: * Զի
ինքնին Տր հրամանաւ՝ և 'ի ձայն հրեշտակապետի,
և 'ի փող Այ իջանէ յերկնից: և մեռեալք
16 'ի Քս՝ յարիցեն յառաջագոյն: * Ապա և մեք՝
որք կենդանեացն մնացեալ իցեմք՝ նոքօք հանդերձ
յափշտակիցուք ամպօք ընդ առաջ Տն յօդս: և
17 այնպէս յամ ժամ ընդ Տն լինիցիմք: * Այսուհետև
մխիթարեցէք զմիմեանս բանիւքս այսոքիւք:

ԳԼ. Ե:

1 Այլ վասն ժամուց և ժամանակաց եղբարք չէ
2 ինչ պիտոյ գրել առ ձեզ: * Զի դուք ինքնին
իսկ ստոյգ գիտէք, թէ օրն Տն իբրև զգող
3 գիշերի՝ այնպէս հասանի: * Յորժամ ասիցեն թէ
խաղաղութիւն և շինութիւն է՝ յայնժամ յանկարծակի
հասցէ նոցա սատակումն՝ որպէս երկն
4 յղւոյ՝ և մի ապրեսցին: * Այլ դուք եղբարք՝ ոչ
էք 'ի խաւարի՝ թէ օրն ձեր իբրև զգող 'ի վերայ

5 հասանիցի : * Զի ամենեքին դուք որդիք լուսոյ
էք և որդիք տունջեան : չեմք գիշերոյ՝ չեմք խա
6 ւարի : * Ապա մի՛ զքնով անկանիցիմք՝ որպէս և
այլքն : այլ արթունք, և զուարթունք եղիցուք :
7 * Զի որք ննջեն, ՚ի գիշերի ննջեն : և որք ար-
8 բենան, ՚ի գիշերի արբենան : * Այլ մեք՝ զի տուն-
ջեան եմք, արթունք եղիցուք. և զգեցցուք ըզ
զրահն հաւատոյ և սիրոյ. և դիցուք զսաղաւարտ
9 յուսոյն փրկութեն : * Զի ոչ եդ զմեզ Ած ՚ի բար
կութի, այլ ՚ի փրկութի կենդանութեն ՚ի ձեռն
Տն մերոյ Յի Քի :
10 * Որ մեռաւ վասն մեր . զի եթէ արթունք իցեմք՝
և եթէ ննջիցեմք՝ նովաւ հանդերձ կեցցուք :
11 * Վասն որոյ մխիթարեցէք զմիմեանս՝ և շինեցէք
12 զիրեարս՝ որպէս և առնէքդ իսկ : * Աղաչեմք
զձեզ եղբարք ծանաչել զվաստակաւորս և զվերա-
13 կացուս ձեր ՚ի Տր՝ և զխրատիչս ձեր : * Եւ հա-
մարեցարո՛ւք զնոսա արժանիս առաւել սիրոյ՝ վասն
գործոյ նոցա : զխաղաղութիւն արարէք ընդ մի-
14 մեանս: * Աղաչեմք զձեզ եղբարք՝ խրատեցէք զաս
տահակս : մխիթարեցէք զկարճամիտս : պատսպա-
րան լերո՛ւք տկարաց : երկայնամիտ լերո՛ւք առ ա-
15 մենեսին : * Զգո՛յշ լերուք՝ գուցէ ոք չարի զչար
հատուցանիցէ : այլ յամ ժամ զբարեաց զհետ եր
16 թայք առ միմեանս, և առ ամենեսեան : * Յամ
17 ժամ ուրախ լերուք : * Անդադար աղօթս արարէք:
18 * Յամի գոհացարո՛ւք : զի այս են կամք Այ Քի՛
19 Յի՛ ՚ի ձեզ : * զՀոգին մի՛ շիջուցանէք :
20 * Զմարգարէութիս մի՛ արհամարհէք :
21 * Զամ ինչ փորձեցէք. զբարին ընկալարո՛ւք :
22 * Յամ իրաց չարաց ՚ի բաց կացէք :
23 * Եւ ինքն Ած խաղաղութե՝ սրբս արասցէ զձեզ
համօրէնս : և բովանդակ ձեր ոգի և շունչ և մար
մին անարատ ՚ի գալուստ Տն մերոյ Յի Քի պա-
24 հեսցի : * Հաւատարիմ է՝ որ կոչեաց զձեզ . որև
25 արասցէ զնոյն : * Եղբարք՝ աղօթս արարէք և ՚ի
26 մեր վերայ : * Ողջոյն տուջիք եղբարց ամենեցուն
27 ՚ի համբոյր սրբութե : * Երդմնեցուցանեմ զձեզ

'ի Տ՟ր՝ ընթեռնուլ զթուղթդ առաջի ա՟մ եղբարց
28 սրբոց: * Շնորհք Տ՟ն մերոյ Յ՟ի Ք՟ի ընդ ձեզ:
Ամէն:

ԹՈՒՂԹ
ԵՐԱՆԵԼՒՈՅՆ
ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ
ԱՌ ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՍ ԵՐԿՐՈՐԴ:

Գլուխ Առաջին:

1 ՊՕՂՈՍ ԵՒ ՍԻՂՈՒԱՆՈՍ ԵՒ ՏԻմոթէոս,
եկեղեցւոյդ Թեսաղոնիկեցւոց՝ յԱստուած
2 Հայր մեր, եւ 'ի Տ՟ր Յ՟ս Ք՟ս: * Շնորհք ընդ ձեզ
եւ խաղաղութիւն յԱ՟յ Հօրէ մերմէ, եւ 'ի Տեառնէ
3 Յիսուսէ Քրիստոսէ: * Գոհանալ պարտիմք
զԱ՟յ յա՟մ ժամ վասն ձեր եղբարք՝ ո՟պ եւ արժան
իսկ է. զի աճէ քան զաճս հաւատքն ձեր, եւ
յաճախէ սէր իւրաքանչիւր ձեր ամենեցուն առ
4 միմեանս: * Որպէս եւ մեզ ձեօք պարծիլ յեկեղեցիսն
ա՟յ՝ վասն համբերութ՟ն ձերոյ եւ հաւատոյ՝
յա՟մ հալածանս ձեր եւ 'ի նեղութիս, որոց դուքն
5 համբերէք: * Յօրինակ արդար դատաստանին Ա՟յ.
արժանի լինել ձեզ արքայութ՟ն Ա՟յ՝ վասն որոյ եւ
6 զճգնութիդ կրէք: * Եթէ պարտ է առաջի Ա՟յ՝
հատուցանել նեղչացն ձերոց զնեղութիւն:
7 * Եւ ձեզ նեղելոցդ զհանգիստ ընդ մեզ՝ 'ի յայտնութ՟ն
Տ՟ն մերոյ Յ՟ի, յերկնից հրեշտակօք զօրու
8 թեան իւրոյ: * 'Ի բոց հրոյ առնուլ զվրէժս յայն

ցանէ՝ ոյք ոչ ճանաչեն զԱծ, և որք ոչ հնազանդին
9 աւետարանի Տն մերոյ Յի Քի ։ * Ոյք տայցեն
վրէժս ՚ի սատակումն յաւիտենից՝ յերեսաց
10 Տեառն՝ և ՚ի փառաց զօրութե նորա ։ * Յորժամ
գայցէ փառաւոր լինել ՚ի մէջ սրբոց իւրոց, և
սքանչելի ՚ի մէջ ամ հաւատացելոց. զի հաւատարիմ
եղև վկայութին մեր ՚ի վերայ ձեր յաւուր
11 յայնմիկ ։ * Յոր և աղօթս առնեմք վասն ձեր
յամժամ, զի զձեզ արժանիս արասցէ կոչմանն
ձերում Ած մեր՝ մինչև լցցէ զամ զհաճութիւն
բարութեան, և զգործս հաւատոյն զօրութեամբ ։
12 * Զի փառաւոր լիցի անուն Տն մերոյ Յի Քի
՚ի ձեզ՝ և դուք ՚ի նմա. ըստ շնորհացն Այ մերոյ՝
և Տեառն Յիսուսի Քրիստոսի ։

ԳԼ. Բ ։

1 Աղաչեմ զձեզ եղբարք՝ վասն գալստեան Տեառն
մերոյ Յի Քի, և մերոյ ժողովելոյն առ նա ։
2 * Մի վաղվաղակի խռովել ձեզ ՚ի մտաց. և մի
զարհուրել. մի հոգւով և մի բանիւ, և մի թղթով
իբրև թէ ՚ի մէնջ. որպէս եթէ եկեալ հասեալ
3 իցէ օրն Տն ։ * Մի ոք զձեզ խաբեսցէ՝ և մի
իւիք իրօք. զի եթէ ոչ նախ եկեսցէ ապստամբութիւնն,
և յայտնեսցի մարդն անօրէնութե, որդին
4 կորստեան, * Հակառակորդն հպարտացեալ ՚ի վերայ
ամի, որ անուանեալ իցէ Ած, կամ պաշտօն.
մինչև նստիլ նմա ՚ի տաճարին Այ, և ցուցանել
5 զանձն՝ թէ Ած իցէ ։ * Ոչ յիշէք՝ զի մինչ առ
6 ձեզն իսկ էի՝ ասէի զայս ։ * Եւ արդ դուք ինքնին
գիտէք զայն՝ զոր ունի յայտնիլ նմա յիւրում
7 ժամանակի. * Զի խորհուրդն անօրէնութեան
արդէն իսկ զօրանայ ։ բայց յայնժամ մինչ ՚ի միջոյ
8 բարձցի՝ որ այժմդ ունի ։ * Եւ ապա յայտնեսցի
անօրէնն. զոր Տր Յս սատակեսցէ հոգւով բերանոյ
իւրոյ ։ և խափանեսցէ յայտնութբ գալստեան
9 իւրոյ ։ * Որոյ գալուստն ըստ ազդեցութեան սատանայի
է, ամենայն զօրութբ և նշանօք, և ար-

10 ուեստիւք ստօք: * Եւ ամենայն պատրանօք անիրաւ
ութեան ՚ի վերայ կորուսելոյն: փոխանակ զի զսէրն
ճշմարտութեան ոչ ընկալան՝ զի ապրեսցին: և
վասն այնորիկ առաքեսցէ նոցա Ած՟ ազդեցութիւն
մոլորութեան, հաւատալ նոցա ստութեանն:
11 * Զի դատապարտեսցին ամենեքեան՝ որք ոչ հա
ւատային ճշմարտութեանն, այլ հաճեցան ընդ
12 անօրէնութիւնն: * Այլ մեք պարտիմք գոհանալ
զԱյ՟ յամ ժամ վասն ձեր եղբարք սիրեցեալք
՚ի Տէ՟: զի ընտրեաց զձեզ Ած՟ ՚ի սկզբանէ ՚ի փրկ
ութիւն՝ սրբութ՟ հոգւոյն՝ և հաւատովքն ճշմար
13 տութեան: * Յոր և կոչեաց զձեզ աւետարանաւն
մերով ՚ի փրկութիւն փառաց Տն՟ մերոյ Յի՟ Քի՟:
14 * Այսուհետև եղբարք՝ հաստատուն կացէք՝ և
պինդ կալարուք զաւանդութիւնն՝ զորս ուսայք՝
15 եթէ բանիւ, և եթէ թղթով մերով: * Այլ
ինքն Տր՟ մեր Յս՟ Քս՟՝ և Ած՟ և Հայր մեր, որ
սիրեաց զմեզ՝ և ետ մեզ զմխիթարութիւն յա
16 ւիտենից՝ և զյոյս բարեաց շնորհօք: * Մխիթարեսցէ զսիրտս ձեր՝ և հաստատեսցէ յամ բանս
և ՚ի գործս բարութեան:

ԳԼ. Գ:

1 Այսուհետև եղբարք՝ աղօթս արարէք ՚ի վերայ
մեր. զի բանն Տն՟ ընթասցի. և փառաւոր
2 լիցի յամ տեղիս՝ որպէս և առ ձեզ: * Զի
ապրիցուք յանօրինաց և յանզգամաց մարդոց: զի
3 ոչ ամենեցուն են հաւատք: * Այլ հաւատարիմ
է Տր՟, որ և հաստատեսցէ զձեզ՝ և պահեսցէ ՚ի
4 չարէ անտի: * Վստահ եմ ՚ի ձեզ Տր՟, թէ զոր
պատուիրեցաք ձեզ: և առնէք՝ և առնիցէք:
5 * Այլ Տր՟ ուղղեսցէ զսիրտս ձեր ՚ի սէրն Այ՟ և
6 ՚ի համբերութիւնն Քի՟: * Պատուիրեմ ձեզ եղ
բարք՝ յանուն Տն՟ մերոյ Յի՟ Քի՟, խորշիլ ձեզ
յամ եղբօրէ՝ որք ստահակն գնայցեն. և ոչ ըստ
7 աւանդութեանն, զոր ընկալայք ՚ի մէնջ: * Զի
դուք ինքնին գիտէք՝ թէ որպէս պարտ է ձեզ

նմանիլ մեզ: և ոչ եղեաք ստահակեալք առ ձեզ:
8 * Եւ ոչ ձրի զուրուք զհաց կերաք՝ այլ ջանիւ և
վաստակով զցայգ և զցերեկ գործէաք՝ վասն չծանրանալոյ
9 ումեք 'ի ձէնջ: * Ոչ եթէ չունէաք զիշխանութիւն.
այլ զի զանձինս օրինակս տացուք
10 ձեզ՝ նմանօղս լինիլ մեզ: * Քանզի մինչդեռ առ
ձեզն իսկ էաք՝ զայս պատուիրեցաք ձեզ: եթէ որ
11 ոչն կամիցի գործել՝ և կերիցէ մի: * Արդ՝ լսեմք
զոմանս 'ի ձէնջ՝ եթէ ստահակութեամբ գնան, գործ
ինչ ոչ գործեն, այլ յուլացեալք՝ հետաքրքիր
12 շրջին: * Այնպիսեացն պատուէր տամք՝ և աղաչեմք
'ի Տր Յս Քս. զի հանդարտութեամբ գործեսցեն՝
13 և զիւրեանց հաց կերիցեն: * Այլ դուք եղբարք՝
14 մի ձանձրանայք զբարիս գործել: * Ապա
եթէ ոք ոչ հնազանդեսցի բանիս մերոյ թղթովդ,
զայդուրիկ, դուք նշանակեսջիք զնա: և մի խառնակիցիք
15 ընդ նմա՝ զի պատկառեսցի: * Բայց մի իբրև
զթշնամի համարիջիք՝ այլ խրատեսջիք իբրև զեղբայր:
16 * Եւ ինքն Տր խաղաղութեան՝ տացէ ձեզ
զխաղաղութիւն յամ ժամ, յամ իրս: Տր ընդ ամենեսին
17 ընդ ձեզ: * Ողջոյն իմոյ ձեռին պօղոսի է,
որ է նշանակ յամենայն թուղթս, այսպէս գրեմ:
18 * Շնորհք Տն մերոյ Յի Քի ընդ ամենեսին
ձեզ. Ամէն:

* * *

ԹՈՒՂԹ
ԵՐԱՆԵԼՒՈՅՆ
ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ
ԱՌ ՏԻՄՈԹԷՈՍ ԱՌԱՋՆՈՐԴ։

Գլուխ Առաջին։

1 ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼ ՅԻ
սուսի Քրիստոսի ըստ հրամանի փրկչին մերոյ
2 ԱՅ՟ և ՔԻ՟ ՅԻ՟ յուսոյն մերոյ։ * Տիմոթեայ որդ-
ւոյ սիրելւոյ հաւատովք։ Շնորհք՝ ողորմութիւն՝
և խաղաղութիւն յԱՅ՟ Հօրէ և ՚ի ՏԷ՟ մերմէ՝ ՅԷ՟
3 ՔԷ՟ * Որպէս աղաչեցի զքեզ. կալ յԵփեսոս՝
մինչ երթայի ՚ի Մակեդոնիա. զի պատուէր տա-
4 ցես ոմանց չլինել օտարուսմունս։ * Եւ՛ չհայիլ
յառասպելս՝ ՚ի տոհմաթիւս անչափս։ որք մանա-
ւանդ խնդիրս յուզեն, և ոչ տնտեսութիւն ԱՅ՟
5 հաւատովք։ * Քանզի գլուխ պատուիրանին սէր
է, ՚ի սբ՟ սրտէ՝ և ՚ի մտաց բարեաց՝ և յանկեղ
6 ծաւոր հաւատոյ։ * Յորոց ոմանք վրիպեցան՝ խո-
7 տորեալք յունայնութիւն բանից։ * Կամին լինել
վարդապետք օրինաց. ինքեանք ոչ իմանան զինչ
8 խօսին, և ոչ վս՟ որոյ պնդեալն են։ * Գիտեմք՝
եթէ բարւոք են օրէնք՝ եթէ ոք զնոսա օրինօքն
9 կրեսցէ * Բայց զայս գիտասցէ, զի ՚ի վերայ ար
դարոյ օրէնք ոչ կան, այլ ՚ի վերայ անօրինաց՝ և
անհնազանդից. ամպարշտաց՝ և մեղաւորաց. ան
սրբոց՝ և պղծոց. զհայր և զմայր անարգողաց.

10 մարդասպանաց ։ * Պոռնկաց. արուագիտաց. մարդելուզոյ. ստոց. ստերդմանց. եւ եթէ այլ ինչ իցէ հակառակ ողջամիտ վարդապետութեանն ։
11 * Որ ըստ աւետարանին փառաց երանելւոյն Այ է.
12 որոյ եղէ ես հաւատարիմ ։ * Շնորհ ունիմ այնմիկ, որ զօրացոյց զիս 'ի Քս Յս 'ի Տր մեր ։ զի հաւատարիմ համարեցաւ զիս կարգել 'ի պաշտօնու-
13 թիւն ։ * Որ յառաջագոյն հայհոյիչն էի, եւ հալածիչ, եւ թշնամանիչ. այլ գտի զողորմութի. զի զայն յանգիտութեան եւ յանհաւատութեան գոր-
14 ծէի ։ * Եւ առաւել եղեն շնորհք Տն մերոյ հա-
15 ւատովքն եւ սիրովն որ 'ի Քս Յս ։ * Հաւատարիմ է բանս՝ եւ ամի ընդունելութեան արժանի ։ զի Յս Քս եկն յաշխարհ փրկել զմեղաւորս՝ որոց
16 գլուխն ես եմ ։ * Այլ վասն այնորիկ գտի զողորմութիւն, զի նախ յիս եցոյց Յս Քս զամ երկայնմտութի՝ յօրինակ այնոցիկ՝ որք հաւատալոցն իցեն 'ի նա՝ 'ի կեանսն յաւիտենից ։
17 * Այլ թագաւորին յաւիտենից՝ անեղծի, եւ աներեւութի, միոյն Այ՝ փառք եւ պատիւ յաւիտեանս
18 յաւիտենից . Ամէն ։ * Զայս պատուէրս աւանդեմ քեզ՝ որդեակ իմ Տիմոթէոս, ըստ կանխելոց 'ի քեզ մարգարէութեանց. զի դու զինուորի-
19 ցիս նոքօք զգեղեցիկ զինուորութիւնն ։ * Ունիցիս զհաւատս սրբօք մտօք՝ զոր ոմանց մերժեալ յան-
20 ձանց իւրեանց՝ նաւաբեկեցան 'ի հաւատս ։ * Որոց սակի են Հիմենոս՝ եւ Աղեքսանդրոս ։ զորս մատնեցի սատանայի, զի խրատեսցին չհայհոյել ։

ԳԼ. Բ.

1 Եւ արդ՝ աղաչեմ, նախ քան զամ առնել աղօթս՝ խնդրուածս՝ պաղատանս, գոհութիւնս վասն
2 ամենայն մարդկան ։ * Վասն թագաւորաց եւ ամենայն իշխանաց ։ զի խաղաղութբ՝ եւ հանդարտութբ վարեսցուք զկեանս մեր, ամենայն
3 Աստուածպաշտութբ եւ սրբութբ ։ * Զի այն է բարի եւ ընդունելի առաջի փրկչին մերոյ Այ ։

4 * Որ զա՟մ մարդիկ կամի զի կեցցեն՝ և ՚ի գիտութիւն
5 ճշմարտութեան եկեսցեն : * Քանզի մի է
Ա՟ծ, և մի միջնորդ Ա՟յ և մարդկան՝ մարդն Յ՟ս Ք՟ս
6 * Որ ետ զանձն փրկանս ընդ ամենեցուն՝ վկայութի՟
7 ժամանակաց իւրոց ; * Յոր եդայ ես քարոզ և
առաքեալ (զճշմարիտն ասեմ ՚ի Ք՟ս, և ոչ ստեմ)
եղէ վարդապետ հեթանոսաց հաւատովք և ճշմարտութի՟ :
8 * Կամիմ, զի արք կայցեն յաղօթս յա՟մ
տեղիս : բառնայցեն զս՟ր ձեռս ՚ի վեր առանց բարկութեան՝
9 և երկմտութեան : * Նոյնպէս և կանայք
՚ի զարդ խոնարհութեան՝ ակնածութեամբ
և զգաստութեամբ զարդարել զանձինս : մի ՚ի
հիւսս ոսկեմանս ընդելուզեալս մարգարտով : կամ
10 ՚ի հանդերձս պաճուճեալս : * Այլ որպէս վայել
է կանանց՝ զԱ՟ծպաշտութիւն յանձնառելոց գործօք
11 բարութեան : * Կին մարդ ցածութեամբ ուսցի՝
12 ամենայն հնազանդութեամբ : * Այլ ուսուցանել
կնոջ մարդոյ ոչ հրամայեմ, և ոչ ճոխաբան
լինել քան զայր մարդ. այլ ՚ի լռութեան
13 կալ : * Զի Ադամ նախ ստեղծաւ՝ և ապա Եւայ.
14 * Եւ Ադամ ոչ պատրեցաւ՝ այլ կինն պատրեցաւ,
15 և յանցեաւ : * Բայց կեցցէ վասն որդեծնութեն՝
եթէ կացցեն ՚ի հաւատս՝ և ՚ի սէր, և ՚ի սրբութեան
պարկեշտութեան :

ԳԼ. Գ.

1 Հաւատարիմ է բանս : եթէ ոք եպիսկոպոսութեան
2 ցանկայ՝ բարւոյ գործոյ ցանկայ : * Պա՛րտ
է եպիսկոպոսին անարատ լինել. միոյ կնոջ այր,
հեզ՝ ցած՝ պարկեշտ՝ հիւրասէր՝ ուսուցիչ :
3 * Մի՛ թշնամանող. մի՛ հարկանող՝ այլ հանդարտ;
4 մի՛ կռուող՝ մի՛ արծաթասէր : * Զի իւրում տանն
իսկ բարւոք վերակացու լեալ իցէ : որդեակս ունիցի,
որք ՚ի հնազանդութե կայցեն, ա՟մ պարկեշտութեամբ :
5 * Ապա եթէ ոք իւրում տանն վերակացու
չգիտիցէ լինել, զիա՟րդ եկեղեցւոյ Ա՟յ խնամակալ
6 լինիցի : * Մի՛ նորատունկ. զի մի հպար-

տացեալ՝ 'ի դատաստանս սատանայի անկանիցի :
7 * Այլ պարտ է նմա վկայութիւն բարի և յար-
տաքնոցն ունել. զի մի 'ի նախատինս անկանիցի՝ և
8 յորոգայթս սատանայի : * Նոյնպէս և զսարկաւա-
գունս պարկեշտս : մի երկբանս, մի գինեսէրս,
9 մի զօշաքաղս : * Այլ ունիցին զխորհուրդս հա-
10 ւատոյ սր̅ մտօք : * Եւ նոքեանք նախ փորձեսցին.
և ապա 'ի պաշտօնն մատիցեն, զի անարատք
11 իցեն : * Նոյնպէս և կանայք նոցա պարկեշտք :
մի չարախօսք. հեզք՝ հաւատարիմք յամ̅ի :
12 * Սարկաւագունք լինիցին միոյ կնոջ արք : որք
որդւոց իւրեանց բարւոք վերակացուք լեալ իցեն,
13 և տանց իւրեանց : * Զի որք բարւոք պաշտիցեն,
զաստիճան բարի անձանց իւրեանց շահին. և զբա
զում համարձակութիւն 'ի հաւատն, որ 'ի Ք̅ս
14 Յ̅ս : * Զայս գրեմ առ քեզ՝ զի ակնունիմ 'ի
15 մօտոյ գալ : * Ապա թէ յամիցիմ՝ զի գիտասցես,
թէ որպէս պարտ իցէ քեզ 'ի տան Ա̅յ շրջիլ. որ
է եկեղեցի Ա̅յ կենդանւոյ, սիւն և հաստատութի
16 ճշմարտութեան : * Եւ յայտնի իսկ մեծ է խոր
հուրդն Ա̅ծպաշտութեան. որ երևեցաւ մարմնով՝
արդարացաւ հոգւով՝ յայտնեցաւ հրեշտակաց՝ քա
րոզեցաւ 'ի հեթանոսս՝ հաւատարիմ եղև յաշխար
հի՝ և վերացաւ փառօք :

ԳԼ. Դ.

1 Այլ Հոգին սր̅ յայտնապէս ասէ. թէ 'ի ժամա
նակս յետինս՝ քակտեսցին ոմանք 'ի հաւատոյն.
և հայեսցին յայսս մոլորութեան, և 'ի վարդա-
2 պետութիւնս դիւաց : * Կեղծաւորութեամբ ստա
3 բանք, խարեալք իւրեանց խղճիւ մտաց : * Որք
արգելուցուն յամուսնանալոյ. և մեկնիցեն 'ի կե-
րակրոց՝ զոր Ա̅ծ հաստատեաց 'ի վայելել հաւա-
տացելոց. և այնոցիկ՝ որք հասեալք իցեն 'ի ճշմար
4 տութեանն վերայ : * Զի ամենայն արարածք Ա̅յ
բարիք են. և չիք ինչ 'ի նոցա խոտան : մանա
5 ւանդ որք գոհութեամբ ընդունիցին : * Զի սրբի

6 բանիւն Այ՝ և աղօթիւք: * Զայս խրատ տուեալ
եղբարցդ՝ բարւոք պաշտօնեայ լինիցիս Քի Յի:
սնանիցիս բանիւք հաւատոյ, և բարւոք վարդապե-
7 տութեամբ. զորոյ զհետ իսկ եկեր: * Այլ 'ի
պղծ բանից՝ և յառասպելաց պառաւանց հրաժա-
րեսջիր: բայց կրթեա՛ զանձն քո ածպաշտութիւն:
8 * Զի մարմնոյ կրթութիւն առ սակաւ ինչ օգտա-
կար է. իսկ ածպաշտութի առ ամենայն ինչ օգ-
տակար է. և զաւետիս կենաց ունի՝ զայդիս և
9 զհանդերձելոյն: * Հաւատարիմ է բանս՝ և ամե-
10 նայն ընդունելութեան արժանի: * Զի 'ի սոյն
իսկ վաստակիմք՝ և նախատինս յանձն առնումք:
զի յուսացեալ եմք յԱծ կենդանի, որ է փրկիչ
ամենայն մարդկան, մանաւանդ հաւատացելոց:
11 * Պատուէր տաջիր զայդ՝ և ուսուցանիջիր:
12 * Զի մի ոք զքո մանկութիւնդ արհամարհիցէ: այլ
օրինակ լինիջիր հաւատացելոց՝ բանիւք, գնացիւք,
13 սիրով, հաւատով, սրբութեամբ: * Մինչև գամ
ես, միտ դիր ընթերցուածոց մխիթարութեան՝
14 և վարդապետութեան: * Մի՛ անփոյթ առներ
զշնորհադ՝ որք 'ի քեզ են. որք տուան քեզ մար-
գարէութեամբ 'ի ձեռնադրութէ երիցութեան:
15 * Յայդ խորհեաց՝ և 'ի դոյն կանխեսջիր. զի քո
յառաջադիմութիւնդ ամենեցուն յայտնի լիցի:
16 * Զգոյշ լինիջիր անձին և վարդապետութե՟՝ և
'ի դմին յամեսջիր: զայդ եթէ առնիցես՝ և զանձն
ապրեցուսցես, և զայնոսիկ՝ որք քեզն լսիցեն:

Գլ. Ե:

1 Զծերն մի պատուհասեսցես՝ այլ մխիթարեսջիր
իբրև զհայր: զերիտասարդս իբրև զեղբարս:
2 * Զպառաւունս իբրև զմարս. զմանկամարդս
3 իբրև զքորս ամենայն սրբութեամբ: * Զայրիս
4 պատուեա, որք ստոյգ այրիք իցեն: * Ապա թէ
ոք այրի, որդիս և թոռունս ունիցի, ուսանիցին
նախ իւրեանց տանց բարիս առնել՝ և զփոխարէնս
հատուցանել ծնողացն: զի այն է բարի, և ընդու-

5 նել առաջի Այ: * Իսկ որ ճշմարտիւ այրին իցէ,
և միայնացեալ՝ յուսացեալ յԱծ, և կանխեալ յաղօթս
6 և 'ի խնդրուածս զցայգ և զցերեկ: * Իսկ
որ գիրգ այրին է՝ կենդանւոյն մեռեալ է:
7 * Զայս պատուիրեա՛, զի անարատք իցեն:
8 * Իսկ եթէ ոք իւրոց, և մանաւանդ ընտանեաց
խնամ ոչ տանիցի, 'ի հաւատոյն ուրացեալ է՝ և
9 չարևս քան զանհաւատն է: * Այրի ընդ այրիս
անուանեսցի, որ չիցէ պակաս 'ի վաթսնամենից,
10 միոյ առն կին լեալ: * Եւ 'ի գործս բարիս վկայեալ.
եթէ մանկունս սնուցեալ իցէ, եթէ զհիւրս
ընկալեալ իցէ, եթէ սրբոց զոտս լուացեալ իցէ,
եթէ նեղելոց բաւական լեալ իցէ, եթէ ամենայն
11 գործոյ բարեաց զհետ երթեալ իցէ: * Այլ 'ի
մանկամարդայ այրեացն հրաժարեա՛: զի յորժամ
12 խայտան զՔիւ՝ ամուսնանալ կամին: * Իսկ զդատաստանս
ընդունին. զի զառաջին հաւատսն արհամարհեցին:
13 * Միանգամայն և դատարկանձունք
ուսանին. շրջօղք տանէ 'ի տուն: և ոչ միայն դատարկք,
այլ և փաղքուք և հետաքրքիրք: և խօսին՝
14 որինչ ոչ է պիտոյ: * Կամիմ՝ մանկամարդայդ
ամուսնանալ. որդիս ծնանիլ. տնարարս լինել: և
մի ինչ պատճառս տալ հակառակորդին 'ի հայհոյ
15 ութեան յաղագս: * Զի անդէն իսկ ոմանք խոտորեցան
16 զկնի սատանայի: * Եթէ ոք հաւատացեալ՝
այրիս ունիցի՝ բաւական լիցի նոցա, և մի ծանրասցի
եկեղեցւոյն. զի ճշմարիտ այրեացն բաւական
17 լիցի: * Որք բարւոք վերակացուք լինին երիցունք՝
կրկին պատուոյ արժանի եղիցին. մանաւանդ
որք աշխատիցին բանիւ և վարդապետութբ:
18 * Քանզի ասէ գիր: մի կապեսցես զցռուկ եզին
կալոտւոյ: և արժանի է մշակն վարձու իւրոյ:
19 * Զերիցունէ զչարախօսութիւն մի ընդունիցիս:
20 բայց եթէ երկուք կամ երիւք վկայիւք: * Իսկ
որք մեղանչենն՝ առաջի ամենեցուն յանդիմանեա՛,
21 զի և այլքն երկիցեն: * Վկայութիւն դնեմ առաջի
Այ, և Յի Քի, և ընտրելոց հրեշտակաց, զի
զայդ պահեսցես առանց մտահաճութեան: մի ինչ

22 առնել աչառանօք : * Ձեռս վաղվաղակի յուրուք
վերայ մի դնիցես . և մի կցորդ լինիցիս մեղաց
23 օտարաց : զանձն քո ս՟ր պահեսջիր : * Այսուհետև
մի ջուր ևեթ ըմպիցես՝ այլ սակաւիկ մի և գինի
խառնեսջիր՝ վասն ստամոքսի և սակաւ հիւանդութեանց
24 քոց : * Են մարդք՝ որոց մեղքն յայտնի են՝
և յառաջագոյն հասեալ 'ի դատաստան . և են,
25 որոց զկնի երթան : * Նոյնպէս և բարի գործքն
յայտնի են : և որք այլազգ ևս ինչ իցեն՝ թաքչել
ոչ կարեն :

ԳԼ. Զ:

1 Որք միանգամ ընդ լծով ծառայութեան իցեն,
զիւրաքանչիւր տեարս պատուոյ արժանի համարեսցին
. զի մի անունն Ա՟յ և վարդապետութիւնն
2 հայհոյեսցի : * Իսկ որք հաւատացեալ տեարս ունիցին՝
մի արհամարհեսցեն՝ զի եղբարք են . այլ
առաւել ծառայեսցեն՝ զի հաւատացեալք են, և
սիրունք : որք զբարերարութիւն յանձին ունիցին:
3 զայս ուսուցանիջիր՝ և մխիթարեսջիր : * Իսկ եթէ
որ այլազգ ինչ ուսուցանիցէ . և ոչ անսայցէ ողջմտութեան
բանից Տ՟ն մերոյ Յ՟ի Ք՟ի : և ըստ
ա՟ծպաշտութեան վարդապետութեանն :
4 * Այնպիսին հպարտացեալ է, և ոչինչ գիտէ :
այլ տապի 'ի խնդիրս և 'ի բանս հակառակութեան:
ուստի լինին նախանձ, հեռ, հայհոյութիւնք,
5 կարծիք չարեաց : * Խորդախութիւնք ապականելոց
մտաց մարդկան, և օտարացելոց 'ի ճշմարտութ՟է
անտի ; որք շահավաճառ համարին զա՟ծպաշտութիւնն
: բայց դու մերժիջի՛ր յայնպիսեացն :
6 * Այլ շահավաճառ մեծ՝ ա՟ծպաշտութիւն է բաւականութեամբ
7 հանդերձ : * Զի ոչինչ բերաք
8 յաշխարհ՝ և ոչ տանել ինչ կարասցուք : * Այլ
ունիմք կերակուր և հանդերձս, և այնու շատասցուք
9 : * Իսկ որք կամին մեծանալ՝ անկանին 'ի
փորձութիւնս և յորոգայթս, և 'ի բազում ցանկութիւնս
անմիտս և վնասակարս . որք ընկղմեն

10 զմարդիկ ’ի սատակումն և ’ի կորուստ։ * Զի
արմատ ամենայն չարեաց՝ արծաթսիրութիւն է։
որում ոմանք ցանկացեալ՝ վրիպեցան ’ի հաւատոյն,
11 և զանձինս արկին ընդ բազում ցաւօք։ * Այլ
դու ով մարդ Այ, փախիր յայնցանէ. և երթ
զհետ արդարութե, ածպաշտութեան, հաւատոյ,
12 սիրոյ, համբերութեան, հեզութեան։ * Եւ մար
տիր զբարւոք մարտն հաւատոյ. և բուռն հար զկե
նացն յաւիտենականաց՝ յոր կոչեցարդ, և դաւա-
նեցեր զբարւոք դաւանութիւնն առաջի բազում
13 վկայից։ * Պատուիրեմ քեզ առաջի Այ, որ կեն
դանի առնէ զամ. և Յի Քի, որ վկայեաց առաջի
պոնտացւոյ պիղատոսի զբարւոք դաւանութիւնն։
14 * Պահել քեզ զպատուիրանն անբիծ՝ անարատ,
մչև ’ի յայտնութիւն Տն մերոյ Յի Քի։
15 * Զոր յիւր ժամանակս ցուցցէ, երանելին՝ և
միայն հզօր. թագաւոր թագաւորաց. և Տր տե-
16 րանց։ * Որ միայն ունի զանմահութիւն բնակեալ
’ի լոյս անմատոյց։ զոր ոչոք ետես ’ի մարդկանէ՝
և ոչ տեսանել կարող է։ որում պատիւ, և զօրու
17 թիւն յաւիտեանս. ամէն։ * Մեծատանց՝ որք են
յայսմ աշխարհի՝ պատուէր տացի՛ր, մի հպարտա-
նալ՝ և մի յուսալ ’ի մեծութիւն անստոյգ. այլ
յԱծ (որ տայ մեզ զամ առատապէս ’ի վայելել։)
18 * Զբարիս գործել՝ մեծանալ գործօք բարութե,
19 առատս, սիրունս՝ հաղորդս լինել։ * Գանձել ան
ձանց զհիմն բարի ’ի հանդերձեալն. զի զբուռն
20 հարկանիցեն զճշմարիտ կենացն։ * Ով տիմոթէէ՝
պահեա զաւանդդ՝ խոտորեալ ’ի պղծոց՝ և ’ի նո-
րաձայն բանից։ և ’ի հակառակութե՝ և ’ի մոլար
21 անուն գիտութե։ * Զոր ոմանք յանձն առեալ՝
վրիպեցան ’ի հաւատոյ անտի։ Շնորհք ընդ քեզ.
Ամէն։

ԹՈՒՂԹ
ԵՐԱՆԵԼՒՈՅՆ
ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ
ԱՌ ՏԻՄՈԹԷՈՍ ԵՐԿՐՈՐԴ·

Գլուխ Առաջին·

1 ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼ ՅԻսուսի Քրիստոսի կամօքն Այ, ըստ աւետեաց
2 կենացն որ ՚ի Քս Յս: * Տիմոթեայ որդւոյ սիրելւոյ՝ շնորհք՝ ողորմութիւն, և խաղաղութիւն
3 յԱյ Հօրէ՝ և ՚ի Քէ Յէ Տէ մերմէ: * Շնորհ ունիմ Այ, զոր պաշտեմն ՚ի նախնեաց մտօք սրբօք:
իբրև զի անպակաս ունիմ զքէն յիշատակ յաղօթս
4 իմ, զցայգ և զցերեկ: * Ցանկայեալ եմ տեսանել զքեզ յիշատակել զարտասուսն քո՝ զի լցայց
5 ուրախութեամբ: * Զմտաւ ածեալ զանկեղծ հաւատսն՝ որք են ՚ի քեզ. որ յառաջագոյն բնակեցաւ
՚ի հանւոյ քում Լաւօդեայ, և ՚ի մօր քում Եւնիկեայ՝ հաստատեալ եմ՝ թէ և ՚ի քեզ է:
6 * Վասն որոյ յիշեցուցանեմ քեզ արծարծել զշնորհսն Այ՝ որք են ՚ի քեզ ՚ի ձեռնադրութենէ
7 իմմէ: * Զի ոչ ետ մեզԱծ զհոգի վհատութեան,
8 այլ զօրութեան՝ և սիրոյ՝ և զգաստութեան: * Մի այսուհետև ամօթ համարիցիս զվկայութիւն Տն
մերոյ՝ և մի զիս զկապեալս նորա: այլ կցորդ լեր
չարչարանաց աւետարանին ըստ զօրութեանն Այ:

9 *Որ փրկեաց զմեզ, և կոչեաց 'ի կոչումն սբ։ ոչ ըստ
գործոց մերոց՝ այլ ըստ իւրում յառաջադրութեանն,
և շնորհաց, որ տուաւ մեզ 'ի Քս Յս, յառաջ
10 քան զժամանակսն յաւիտենից։ *Բայց յայտնե-
ցաւ այժմիկ յերևել փրկչին մերոյ Յի Քի. որ
խափանեաց զմահ՝ և լուսաւոր արար զկեանս, և
11 զանեղծութիւն 'ի ձեռն աւետարանին։ *Որոյ եդայ
ես քարոզ՝ և առաքեալ՝ և վարդապետ հեթանո-
12 սաց։ *Վասն որոյ և զայս չարչարանս կրեմ, այլ
ոչինչ ամօթ համարիմ։ քանզի գիտեմ, յո՛ հաւա-
տացեալն եմ։ և հաստատեալ եմ, թէ կարօ՛ղ է
13 զաւանդն իմ պահել յօրն յայն։ *Ունիցիս օրի-
նակ ողջմտութեան բանիցն, զորս յինէն լուար՝ հա-
14 ւատովք՝ և սիրով 'ի Քս Յս։ *Զբարւոք
աւանդն պահեսջիր՝ 'ի ձեռն Հոգւոյն սրբոյ 'ի մեզ
15 բնակելոյ։ *Զայս գիտասջիր՝ զի մեկնեցան 'ի
մէնջ ամենեքեան՝ որք էին յասիայ։ որոց սակի
16 են փիգեղոս և հերմոգինէս։ *Տացէ Ած զողոր-
մութիւն տանն ոնեսիփորայ. զի բազում անգամ
հանգոյց զիս. և զկապանս իմ ոչ ամօթ համա-
17 րեցաւ։ *Այլ իբրև եկն 'ի հռոմ, պնդագոյնս
18 խնդրեաց զիս՝ և եգիտ։ *Տացէ նմա Տր զողոր-
մութիւն գտանել 'ի Տէ յաւուր յայնմիկ։ և որ-
չափ ինչ միանգամ յեփեսոս սպաս կալաւ ինձ,
զայն դու ինքնին իսկ քաջ գիտես։

Գլ. Բ.

1 Այլ դու որդեակ իմ. զօրացիր շնորհօք՝ որ 'ի
2 Քս Յս։ *Եւ զոր լուար յինէն բազում
վկայիւք՝ զայն աւանդեսջես հաւատարիմ մարդոց՝
3 որք բաւական իցեն և զայլս ուսուցանել։ *Վշտա
կից լեր իբրև զքաջ զինուոր Քի Յի։
4 *Ոչ ոք զինուորեալ՝ տատէ ընդ կեանս աշխար-
հիս պատաղի, եթէ զօրավարին հաճոյ լինիցի։
5 *Եւ եթէ մարտիկ ոք իցէ՝ ոչ պսակի՝ եթէ ոչ
6 ըստ օրինին մարտիցի։ *Եւ հողագործին աշխա-
7 տելոյ պա՛րտ է նախ 'ի պտղոյն վայելել։ *Իմա՛

զինչ ասեմս. տացէ քեզ Տ̄ր զիմաստութիւն յամ̃ի:
8 * Յիշեա՛ զՅ̄ս Ք̄ս յարուցեալ 'ի մեռելոց 'ի զա-
9 ւակէ Դաւթի՝ ըստ աւետարանին իմոյ: * Յորում
չարչարիմ կապանօք չափ՝ իբրև չարագործ. այլ
10. բանն Այ ոչ եթէ կապեալ իցէ: * Վասն այնո-
րիկ ամենայն համբերեմ վասն ընտրելոյն, զի և նոքա
փրկութեան հասանիցեն, որ 'ի Ք̄ս Յ̄ս երկնա-
11 ւոր փառօքն հանդերձ: * Հաւատարիմ է բանն.
զի եթէ ընդ նմա մեռաք՝ ընդ նմին և կեցցուք:
12 * Եթէ համբերեմք, ընդ նմին և թագաւորես-
ցուք. և եթէ ուրանամք՝ և նա ուրասցի զմեզ:
13 * Եւ եթէ չհաւատամք, նա հաւատարիմ մնայ:
14 ուրանալ զանձն իւր ոչ կարէ: * Զայս յուշ
արասջիր վկայութիւն եդեալ առաջի Այ: մի
բանակռի՛ւ լինել, յոչինչ պէտս 'ի կործանումն
15 լսողաց: * Փութասջի՛ր զանձն քո ընտիր կացուցա-
նել առաջի Այ: մշակ անամօթ՝ ուղիղ հա-
16 մառօտել զբանն ճշմարտութ̄ե: * Այլ 'ի պղծոյ՝
և 'ի ունայն խօսից մերժի՛ջիր: զի առաւել յառաջ
17 գայցեն յամբարշտութիւնս: * Եւ բանք նոցա իբ-
րև զքաղցկեղ ճարակ գտանեն: որոց սակի են հի-
18 մենոս՝ և փիղետոս: * Որք վրիպեցան 'ի ճշմար-
տութ̄է, և ասեն. եթէ յարութիւն մեռելոց ար-
դէն իսկ եղեալ է. և կործանեն զհաւատս ոմանց:
19 * Այլ հաստատուն հիմն Այ կայ՝ և ունի զկնիքս
զայս: եթէ ճանաչէ Տ̄ր զայնոսիկ՝ որք իւրքն են
և 'ի բաց լիցի յանիրաւութ̄է, ամենայն որ անուա-
20 նէ զանուն Տ̄ն: * Այլ 'ի տան մեծի ոչ են միայն
անօթք ոսկեղէնք՝ և արծաթեղէնք. այլ և փայ-
տեղէնք՝ և խեցեղէնք: են՝ որք 'ի պատուի են. և
21 են որք յանարգութեան: * Եթէ ոք սրբեսցէ
զանձն իւր յայնպիսեաց անտի, եղիցի անօթ պատ-
ուականի՝ սրբեալ և պիտանի Տ̄ն իւրում՝ յամ̃
22 գործ բարութեան պատրաստեալ: * Այլ յերի-
տասարդական ցանկութեանց փախի՛ր: և երթ
զհետ արդարութեան, զհաւատոյ, զսիրոյ, զխաղա-
ղութեան, զսրբութեան, ընդ այնոսիկ, որք կար-
դան զանունն Տ̄ն սբ̄ սրտի՛ւ

23 * Այլ 'ի յիմար և յանխրատ խնդրոց հրաժա-
24 րեալ գիտասջիր ի՛ է անտի ծնանին կռիւք: * Բայց
ծառայի Տն ոչ է պարտ կռուիլ՝ այլ հեզ լինել
25 առ ամենեսին, ուսուցիչ, անոխակալ: * Հանդարտ
ութեամբ խրատել զհակառակօղսն. թերևս տա-
ցէ նոցա Այ զապաշխարութիւն 'ի գիտութիւն
26 ճշմարտութեան: * Եւ սթափեսցին յորոգայթից
սատանայի, որսացեալք 'ի նմանէ 'ի նորա կամս:

Գլ. Գ:

1 Զայս գիտասջիր՝ թէ յաւուրս յետինս եկես-
2 ցեն ժամանակք չարք: * Զի եղիցին մար-
դիկ անձնասէրք, արծաթասէրք, հպարտք, ամ-
բարտաւանք, հայհոյիչք, անհաւանք ծնողաց, ան-
3 շնորհք, անսուրբք: * Անոռէկք, անդութք, բան-
սարկուք, անժոյժք, վէսք, անբարեսէրք,
4 * Մատնիչք, յանդգունք, ամբարհաւաճք, ցան-
5 կասէրք մանաւանդ՝ քան ածասէրք: * Որք ունի-
ցին զկերպարանս ածպաշտութեան, և 'ի զօրութենէ
անտի նորա ուրացեալք իցեն: և խորշեսջի՛ր 'ի նո-
6 ցանէ: * Քանզի 'ի նոցանէ են, որք մտանեն տա-
նէ 'ի տուն. և գերեն զկանայս շեղջակուտեալս
մեղօք, և վարեալս 'ի պէսպէս ցանկութիւնս:
7 * Որք յամենայն ժամ ուսանին, և երբէք 'ի գի-
8 տութիւն ճշմարտութեան ոչ հասանին: * Այլ
որպէս յանէսն, և յամբրէս հակառակ կացին մովսէսի.
նոյնպէս և սոքա հակառակ կան ճշմարտութեան:
մարդք ապականեալք մտօք՝ անպիտանք 'ի հաւատս:
9 * Այլ ոչ երբէք գայցեն յառաջ 'ի լաւ անդր:
քանզի անմտութիւն սոցա յայտնի լինիցի ամենե-
10 ցուն՝ որպէս և նոցայն իսկ եղև: * Այլ դու զհետ
եկիր վարդապետութեան իմոյ, առաջնորդութեն,
յօժարութեան, հաւատոյ, երկայնմտութեան, սի-
11 րոյ, համբերութեան: * Հալածմանց, չարչարա-
նաց, որպիսիք եղեն ինձ յանտիոք՝ և յիկոնիոն,
և 'ի լիւստրա: որպիսի հալածանաց համբերի.
12 և յամէ փրկեաց զիս Տր: * Եւ ամենեքեան, որք

կամիցին ա̄ծպաշտութեամբ կեալ 'ի Քս̄ Յս̄՝ 'ի
13 հալածանս կրեսցեն: * Այլ մարդիք չարք, և կախարդք՝ յառաջ եկեսցեն 'ի չար անդր: մոլո-
14 րեալք՝ և մոլորեցուցանիցեն: * Այլ դու հաստատուն կաց՝ յորս ուսար՝ և հաւատարիմ եղեր:
15 գիտես, ուստի ուսար: * Զի 'ի մանկութէ զգիրս սբ̄ս գիտես. որք կարօղք են իմաստուն առնել զքեզ 'ի փրկութիւն, 'ի ձեռն հաւատոյ՝ որ 'ի Քս̄
16 Յս̄. * Ամենայն գիրք Ա̄ծաշունչք և օգտակարք, 'ի վարդապետութիւն են՝ և յանդիմանութիւն, և յուղղութիւն՝ և 'ի խրատ արդարութեան:
17 * Զի կատարեալ լիցի մարդն Այ̄՝ յա̄մ գործս բարութեան հաստատեալ:

ԳԼ. Դ:

1 Զայս վկայութիւն դնեմ առաջի Այ̄՝ և Յի̄ Քի̄, որ դատելոց է զկենդանիս և զմեռեալս, 'ի
2 յայտնութեան իւրում և յարքայութե̄: * Եւ դու քարոզեա զբանն: հա՛ս'ի վերայ՝ ժամու և տարաժամու: յանդիմանեա, սաստեա, մխիթարեա ամենայն երկայնմտութեամբ և վարդապետութ̄բ:
3 * Քանզի եկեսցէ ժամանակ՝ զի ողջմտութեան վարդապետութե̄ն ոչ անսայցեն. այլ ըստ իւրաքանչիւրոց ցանկութեանց կուտեսցեն իւրեանց վարդապետս՝ ըստ մարմանջելոյ լսելեաց իւրեանց:
4 * Եւ 'ի ճշմարտութէ անտի դարձուցանիցեն
5 զլսելիս՝ և յառասպելս կործանեսցին: * Այլ դու զուարթ կաց. յա̄մի ճգնեաց. զգործս աւետարանչի
6 գործեա: զպաշտօն քո կատարեալ կալ: * Զի ես այսուհետև նուիրեալ եմ: և ժամանակ դարձի
7 իմոյ հասեալ կայ: * Զբարւոք պատերազմ պատերազմեցայ. զընթացսն կատարեցի. զհաւատսն
8 պահեցի: * Այսուհետև կայ և մնայ ինձ արդարութեան պսակն, զոր հատուսցէ ինձ Տր̄ յաւուր յայնմիկ արդար դատաւորն: և ոչ միայն ինձ, այլև ամենեցուն, որք սիրեցին զյայտնութիւն նորա: փութաջի՛ր գալ առ իս վաղվաղակի:
9 * Զի դեմաս եթող զիս՝ և սիրեաց զաշխարհ. և

10 գնաց 'ի Թեսաղոնիկէ։ * Կրեսկէս 'ի գաղիղեա՝
11 տիտոս 'ի դաղմատիա։ * Ղուկաս միայն է ընդ
իս։ զմարկոս առեալ ընդ քեզ ածիցես՝ զի է ինձ
12 պիտանի 'ի սպասաւորութիւն։ * Զտիւքիկոս առա
13 քեցի յեփեսոս։ * Զփիլոնն թողի 'ի տրօադա առ
կարպոսի։ յորժամ գայցես, բերջի՛ր և զգիրսն.
14 մանաւանդ զմատեանսն։ * Աղեքսանդրոս դարբին
բազում չարչարանս եցոյց ինձ. հատուսցէ նմա
15 Տր՟ ըստ գործոց նորա։ * Յորմէ և դու անձնա-
պահ լինիջի՛ր. զի շատ հակառակ եկաց բանից
16 իմոց։ * Յառաջնում ատենին ոչ ոք ինձ 'ի թիկունս
եկաց։ այլ ամենեքին թողին զիս։ մի համարեսցի
17 նոցա այն։ * Այլ Տր՟ օգնեաց ինձ, և զօրացոյց
զիս. զի ինև քարոզութիւնն հաստատեսցի. և
լուիցեն ամենայն հեթանոսք։ և ապրեցայ ես 'ի
18 բերանոյ առիւծուն։ * Փրկեսցէ զիս Տր՟ յամ գոր
ծոյ չարայ։ և կեցուսցէ զիս յարքայութիւն իւր՝
որ յերկինս է։ որում փառք յաւիտեանս յաւիտե
19 նից. Ամէն։ * Ողջոյն տաջիր պրիսկեայ՝ և ակիւղեայ՝
և ոնեսիփորայ տանն։
20 * Երաստոս մնաց 'ի կորնթոս։ զտրոփիմոս թողի
21 'ի մեղիտոս հիւանդագին։ * Փութասջի՛ր յառաջ
քան զձմեռն գալ։ ողջոյն տան քեզ՝ եւբուղոս, և
պուդէս. և լինոս, և կղօդիա՝ և եղբարք ամենե-
22 քեան։ * Տր՟ Յս՟ Քս՟ ընդ ոգւոյդ քում. Շնորհք
ընդ քեզ։ Ամէն։

* * * * *
* * * *
* * *
* *
*

ԹՈՒՂԹ
ԵՐԱՆԵԼՒՈՅՆ
ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ
ԱՌ ՏԻՏՈՍ։

Գլուխ Առաջին։

1 ՊՕՂՈՍ ԾԱՌԱՅ ԱՅ ԵՒ ԱՌԱ-
քեալ Յի Քի, ըստ հաւատոյ ընտրելոցն Այ, և
՚ի գիտութիւն ճշմարտութեանն՝ որ ըստ ածպաշ-
2 տութեանն է։ * Յուսով կենացն յաւիտենից, զոր
խոստացաւ անսուտն Ած յառաջ քան զժամանակս
3 յաւիտենից։ * Բայց յայտնեաց իւրովք ժամանա-
կօք զբանն իւր քարոզութեամբ. որոյ եղէ ես հա-
ւատարիմ ըստ հրամանի փրկչին մերոյ Այ։
4 * Տիտոսի որդւոյ սիրելւոյ ըստ հասարակաց հա-
ւատոց. Շնորհք՝ և խաղաղութիւն յԱյ Հօրէ,
5 և ՚ի Քէ Յէ փրկչէ մերմէ։ * Վասն այնորիկ
իսկ թողի զքեզ ՚ի կրէտէ, զի զորինչ միանգամ
պակաս իցէ՝ ուղղեսցես։ և կացուսցես ըստ քաղա-
քաց երիցունս՝ որպէս և ես քեզ պատուիրեցի։
6 * Եթէ ոք անարատ իցէ, միոյ կնոջ այր։ որ-
դեակս ունիցի հաւատացեալս՝ և ոչ յամբաստանու-
թիւն անառակութեան, կամ անհնազանդս։
7 * Զի պարտ է եպիսկոպոսին անարատ լինել՝ որ-
պէս և Այ տնտեսի. մի յանդուգն. մի բարկացօղ,
մի թշնամանօղ. մի հարկանօղ. մի զօշաքաղ։
8 * Այլ հիւրասէր, բարեսէր, ցած, արդար, սուրբ,
9 ժուժկալ։ * Վերակացու լինել հաւատարիմ բա

նին վարդապետութեան. զի կարօղ լիցի մխիթարել ողջմտութեամբ վարդապետութեամբն. և զհա
10 կառակորդսն կշտամբել: * Քանզի բազումք են անհնազանդք՝ զրախօսք՝ և մտախաբք. մանաւանդ
11 որք 'ի թլփատութէ անտի են: * Զորս պարտ է ըմբերանել: որք զամ̃ տունս կործանեն, և ուսուցանեն՝ զոր չէ արժան՝ վասն զօշաքաղութեան:
12 * Ասաց ոմն 'ի նոցանէ՝ իւրեանց իսկ մարգարէ, կրէտացիք հանապազասուտք, չարաճճիք, դատար-
13 կապորտք: * Եւ ստոյգ է վկայութիւնս այս: վս̃ որոյ կշտամբեսցես զնոսա խստագոյնս, զի առողջա-
14 ցին 'ի հաւատս: * Եւ մի՛ հայեսցին 'ի հրէական առասպելս, և 'ի պատուէր մարդկան զառածելոյ
15 'ի ճշմարտութենէ: * Ամենայն ինչ սուրբ է սրբոց՝ բայց պղծոցն և անհաւատից՝ ոչինչ է սբ̃: այլ պղ-
16 ծեալք են միտք և խորհուրդք նոցա: * Խոստովանին գիտել զԱծ, և գործովք իւրեանց ուրանան: պիղծք և անհաւանք՝ և յամ̃ գործս բարեաց անպիտանք:

Գլ. Բ:

1 Այլ դու խօսեա՛ց՝ որ ինչ վայել է ողջամիտ վար-
2 դապետութեանդ: * Ծերոց զգաստս լինել. պարկեշտս, ցածունս, ողջամիտս 'ի հաւատս, 'ի սէր, 'ի համբերութեան, 'ի ժուժկալութեան:
3 * Պառաւանց նոյնպէս 'ի զգաստութեան, 'ի սուրբ վայելչութեան, մի բանսարկուս, մի գինէմոլս, այլ
4 բարեխօսս: * Զի զգաստացուսցեն զմանկամարդսն՝ այրասէրս լինել, որդեսէրս:
5 * Ցածունս, սուրբս, տնարարս, բարեգործս, հնազանդս իւրեանց արանց. զի մի՛ բանն Այ, և վար-
6 դապետութիւնն հայհոյեսցի: * Զերիտասարդս
7 նոյնպէս աղաչեսջիր՝ ցածունս լինել: * Ամենեցուն զանձն օրինակ կացուցանել՝ գործոց բարութեան, վարդապետութեամբ զանեղծութիւն ունել, զսր-
8 բութիւն, զպարկեշտութիւն: * Զբանն ողջմտութեան, անպարսաւ լինել. զի որ հակառակորդն

*

իցէ. յամօթ լիցի, եւ մի ինչ ունիցի ասել զմէնջ
9 չարութեան: * Ծառայից՝ իւրեանց տերանց հնա
զանդ լինել՝ եւ հաճոյս յամի: մի հակառակօղս,
10 * Մի հատանս. այլ զամ հաւատս ցուցանել բա
րութեամբ, զի զվարդապետութիւն փրկչին մերոյ
11 Այ զարդարեսցեն յամի: * Քանզի երեւեցաւ
12 շնորհն Այ փրկիչ ամ մարդկան: * Որ խրատէ
զմեզ՝ զի ուրասցուք զամբարշտութիւն, եւ զաշխար
հական ցանկութիւնս. զգաստութբ, եւ արդարու
թեամբ՝ եւ աստուածպաշտութեամբ կեցցուք յաշխարհի:
13 * Եւ ակնկալցուք երանելւոյ յուսոյն՝ եւ յայտնու-
թեան փառաց մեծին Այ՝ եւ փրկչին մերոյ Յի
14 Քի: * Որ ետ զանձն վասն մեր. զի փրկեսցէ յամ
անօրէնութէ. եւ սրբեսցէ իւր ժողովուրդ սեպհա
15 կան, նախանձաւոր գործոց բարութե: * Զայդ
խօսեաց՝ եւ մխիթարեա՛ եւ յանդիմանեա՛ ամենայն
սաստիւք: զի մի ոք իցէ, որ զքեզ արհամարհիցէ:

ԳԼ. Գ.

1 Եւ յուշ արասջիր նոցա՝ իշխանութեանց եւ պե-
տութեանց հնազանդ լինել՝ եւ հպատակ կալ:
եւ ամենայն գործոց բարութեան պատրաստ գտա-
2 նել: * Մի զոք հայհոյել՝ անկռիւս լինել: հեզս.
զամ ցածութիւն առ ամենայն մարդիկ ցուցանել:
3 * Զի էաք երբեմն եւ մեք անմիտք՝ անհաւանք՝
մոլորեալք՝ ծառայէաք ցանկութեանց՝ եւ պէսպէս
անառակութեանց: չարութեամբ՝ եւ նախանձու
շրջէաք՝ ատեցեալք՝ եւ զմիմեանս ատէաք:
4 * Իսկ յորժամ քաղցրութիւն եւ մարդասիրութի
5 փրկչին մերոյ Այ յայտնեցաւ, * Ո՛չ 'ի գործոց
արդարութե՝ զոր արարաք մեք. այլ ըստ իւրում
ողորմութեանն ապրեցոյց զմեզ 'ի ձեռն աւազանին
միւսանգամ ծննդեանն, եւ նորոգութեան Հոգւոյն
6 սրբոյ: * Զոր էհեղ 'ի մեզ առատութեամբ,
7 'ի ձեռն Յի Քի փրկչին մերոյ: * Զի արդարա-
ցեալք շնորհօք՝ եղիցուք ժառանգաւորք յուսով
8 կենացն յաւիտենականաց: * Հաւատարիմ է բանս.

և 'ի սոյն կամիմ զքեզ հաստատուն լինել ։ զի
փոյթ արասցեն գործոց բարեաց վերակացու լինել
հաւատացեալքն յԱծ ։ զի այն է բարի և օգտա-
9 կար մարդկան ։ * Այլ զյիմարութեան խնդիրս
և զտոհմաթիւս ։ և զհեռ՝ և զօրինական կռիւս
'ի բաց մերժեսջիր ։ զի անօգուտք են, և սնոտիք ։
10 * Յառնէ հերձուածողէ՝ յետ միանգամ և երկիցս
խրատելոյ՝ հրաժարեսջիր ։
11 * Գիտասջիր՝ զի թիւրեալ է այնպիսին, և մեղանչէ․
12 անձամբ զանձն դատապարտեալ ։ * Այլ յորժամ
յղեցից առ քեզ զԱրտեմա, կամ զՏիքիկոս, փու-
թասջիր գալ առ իս 'ի Նիկոպօլիս․ զի անդ եդի 'ի
13 մտի ձմեռել ։ * Եւ զԶենոն զօրինական դպիր, և
զԱպօղոս փութով արձակեսջիր՝ զի մի ինչ պա-
14 կասիցի նոցա ։ * Ուսցին և մերքն ևս՝ բարեաց
գործոց վերակացու լինել 'ի պէտս կարևորս․
15 զի մի անպտուղք լինիցին ։ * Ողջոյն տան քեզ՝
որք ընդ իս են ամենեքեան ։ ողջոյն տուր սիրե-
լեաց մերոց հաւատովք ։ Շնորհք ընդ ձեզ ամենե-
սին ։ Ամէն ։

* * * * *
* * * *
* * *
* *
*

ԹՈՒՂԹ
ԵՐԱՆԵԼՒՈՅՆ
ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ
ԱՌ ՓԻԼԻՄՈՆ։

Գլուխ Առաջին։

1 ՊՕՂՈՍ ԿԱՊԵԱԼ ՅԻ ՔԻ, ԵՒ տիմոթէոս եղբայր։ փիլիմոնի սիրելւոյ՝ եւ գոր-
2 ծակցի մերոյ։ * Եւ ապփեայ քեռ, եւ արքիպ-
պեայ զինուորակցի մերոյ՝ եւ առ տանն եկեղեցւոյդ։
3 * Շնորհք ընդ ձեզ եւ խաղաղութիւն յԱյ Հօ-
րէ մերմէ, եւ ՚ի Տէ Յէ Քէ։
4 * Գոհանամ զԱյ իմոյ՝ յամ ժամ յիշատակել
5 յաղօթս իմ վասն քո։ * Իբրեւ լսեմ զքո հա-
ւատսն, եւ զսէր, զոր ունիս առ Տր Յս, եւ առ
6 ամենայն սուրբս։ * Զի հաղորդութիւն հաւա-
տոյն քոյ արդիւն լինիցի. գիտութեամբ ամենայն
7 բարութեան, որ ՚ի ձեզ է ՚ի Քս Յս։ * Զի խնդու-
թիւն յոյժ ընկալայ՝ եւ զմխիթարութիւն ՚ի վերայ
սիրոյն քոյ. զի գութք սրբոց քեւ հանգուցեալ են
8 եղբայր։ * Վասն որոյ բազում համարձակութիւն
ունիմ ՚ի Քս հրաման տալ քեզ զարժանն։
9 * Վասն սիրոյ՝ մանաւանդ թէ աղաչեմ իսկ այն-
պիսի լինիլ՝ որպէս եւ պօղոս ծերացեալ. արդ եւ
10 կապեալ եւս Յի Քի։ * Աղաչեմ զքեզ վասն որդ-
ւոյ իմոյ, զոր ծնայ ՚ի կապանս իմ, զոնեսիմոս։
11 * Որ երբեմն անպիտան էր քեզ. բայց արդ քեզ
12 եւ ինձ պիտանի։ * Զոր յղեցի առ քեզ։ Եւ դու
զդա ընկալջիր՝ այսինքն է զիմ ոգիս։
13 * Զոր կամէի առ իս արգելուլ՝ զի ընդ քո ու-

14 նիցի ինձ սպաս 'ի կապանս աւետարանին ։ * Բայց
առանց քոյ կամաց ոչինչ կամեցայ առնել՝ զի մի
բարիքդ քո 'ի հարկէ լինիցին՝ այլ կամաւ ։
15 * Եւ թերեւս վս̄ այնորիկ մեկնեցաւ առ ժամանակ
16 մի, զի յաւիտեան ունիցիս զդա ։ * Մի եւս իբրեւ
զծառայ՝ այլ 'ի վեր քան զծառայ, իբրեւ զեղբայր
սիրելի ։ եթէ ինձ այսպէս՝ ո՞րչափ եւս առաւել
17 քեզ մարմնով եւ Տր̄, * Եթէ զիս քեզ հաղորդ
18 համարիցիս՝ ընկա՛լ զդա իբրեւ զիս ։ * Եւ եթէ
յանցուցեալ ինչ իցէ՝ կամ պարտիցի, զայն ինձ
19 համարեա՛յ ։ * Ես պօղոս գրեցի իմով ձեռամբ․
ես հատուցից, զի մի ասիցեմ քեզ՝ թէ եւ դու
20 զանձն քո ինձ պարտիս ։ * Այո՛ եղբայր՝ ես քո
փոխանակ եղէց 'ի Տր̄ ։ հանգո՛ զաղիսդ իմ 'ի Քս̄ ։
21 * Յուսացեալ 'ի հնազանդութիւնդ քո՝ գրեցի առ
քեզ ։ քանզի գիտեմ թէ առաւել եւս քան զոր
22 ասեմդ՝ առնիցես ։ * Միանգամայն եւ պատրաստեսջի՛ր
ինձ վանս․ քանզի յուսամ եթէ աղօթիւք
23 ձերովք շնորհեցայց ձեզ ։ * Ողջոյն տայ ձեզ եպափրաս
24 գերեկից իմ 'ի Քս̄ Յս̄ ։ * Եւ մարկոս՝ եւ
արիստարքոս, եւ դեմաս, եւ ղուկաս՝ գործակիցք
25 իմ ։ * Շնորհք Տն̄ Յի̄ Քի̄ ընդ ոգւոյդ ձերում ։
Ամէն ։

* * * * *
* * * *
* * *
* *
*

ԹՈՒՂԹ
ԵՐԱՆԵԼՈՅՆ
ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ
ԱՌ ԵԲՐԱՅԵՑԻՍՆ՝

Գլուխ Առաջին։

՚ԲԱԶՈՒՄ ՄԱՍԱՄԲՔ ԵՒ
բազում օրինակօք կանխաւ խօսեցաւ Ած ընդ հարս
2 մեր մարգարէիւք ։ * ՚Ի վախճանի աւուրցս այսոցիկ
խօսեցաւ ընդ մեզ Որդւովն, զոր եդ ժառանգ
3 ամենայնի. որով եւ զյաւիտեանս արար ։ * Որ է լոյս
փառաց՝ եւ նկարագիր էութեան նորա. որ կրէ
զամ՟ բանիւ զօրութեան իւրոյ. սրբութիւն մեղաց
մերոց արարեալ՝ նստաւ ընդաջմէ մեծութեանն ՚ի
4 բարձունս ։ * Այնչափ առաւել եղեալ քան զհրեշտակս, որչափ լաւ եւս քան զնոսա անուն ժառան-
5 գեաց։ * Քանզի յո՞ երբէք ասաց ՚ի հրեշտակաց։ Որ
դի իմ ես դու՝ ես այսօր ծնայ զքեզ ։ Եւ դար-
ձեալ թէ. ես եղէց նմա ՚ի Հայր. եւ նա եղիցի ինձ
6 յՈրդի ։ * Եւ յորժամ միւսանգամ մուծանէ զանդ-
րանիկն յաշխարհ, ասէ. երկիր պագցեն նմա ա-
7 մենայն հրեշտակք Այ։ * Եւ առ հրեշտակսն
ասէ ։ Որ առնէ զհրեշտակս իւր հոգիս. եւ զպաշտօ
8 նեայս իւր բոց հրոյ ։ * Իսկ յՈրդին ասէ. Աթոռ
քո Ած յաւիտեանս յաւիտենից. գաւազան ուղղու-
9 թեան, գաւազան արքայութեան քո ։ * Սիրեցեր
զարդարութիւն՝ եւ ատեցեր զանօրէնութիւն ։ Վն
այսորիկ օծ զքեզ Ած՝ Ած քո իւղով ուրախու-
10 թեան՝ առաւել քան զընկերս քո ։ * Եւ դու Տր
՚ի սկզբանէ զերկիր հաստատեցեր. եւ գործք ձե-
11 ռաց քոց երկինք են ։ * Նոքա կորնչին՝ եւ դու

կաս, և մնաս: ամենեքեան իբրև զձորձս մաշես-
12 ցին, և իբրև զվերարկուս: * Գալարեսցես զնոսա
իբրև զհանդերձս՝ և գալարեսցին: բայց դու նոյն
13 իսկ ես՝ և ամք քո ո՛չ պակասին: * Յո՞ երբեք
ասաց 'ի հրեշտակաց. նիստ ընդ աջմէ իմմէ՝ մինչև
եդից զթշնամիս քո պատուանդան ոտից քոց:
14 * Ո՞չ ապաքէն ամենեքեան հոգիք են հարկաւորք՝
որք առաքին 'ի սպասաւորութիւն վասն այնոցիկ,
որք ժառանգելոց են զփրկութիւն:

ԳԼ. Բ.

1 Վասն այնորիկ պա՛րտ է մեզ առաւել ևս ունկն-
դիր լինել բանիցն լսելեաց՝ զի մի երբեք
2 նուաղիցուք: * Զի եթէ որ 'ի ձեռն հրեշտա-
կաց խօսեցաւ բանն՝ հաստատուն եղև՝ և ամենայն
յանցաւորութիւն և անհնազանդութիւն ընկալաւ
3 զդատիժ պատուհասի: * Մեք զիա՞րդ ապրիցուք
հեղգացեալք յայնպիսւոյ փրկութենէ: որ սկիզբն
էառ խօսելոյ 'ի Տեառնէ. և 'ի ձեռն այնոցիկ որք
4 լուանն՝ 'ի մեզ հաստատեցաւ: * Վկայել ԱՅ̅
նշանօք և արուեստիւք և պէսպէս զօրութ̅բք, և
5 մասամբք Հոգւոյն սրբոյ ը̅ իւրոյ կամաց: * Զի ո՛չ
եթէ հրեշտակաց հնազանդեցոյց զհանդերձեալ
6 աշխարհն, վասն որոյ մեքս խօսիմք: * Վկայեաց
ոք ուրեք՝ և ասէ: զի՞նչ է մարդ՝ եթէ յիշես զնա.
կամ որդի մարդոյ՝ թէ այց առնես նմա:
7 * Փոքր մի խոնարհ արարեր զնա քան զհրեշտակս.
փառօք և պատուով պսակեցեր զնա՝ և կացուցեր
8 զնա 'ի վերայ ձեռակերտաց քոց: * Զամենայն
ինչ հնազանդ արարեր 'ի ներքոյ ոտից նորա: Արդ
'ի հնազանդեցուցանել նմա զամենայն, ոչինչ եթող
անհնազանդ 'ի նմանէ: բայց այժմ ո՛չ ևս տեսանեմք
9 հնազանդեալ նմա զամենայն: * Այլ փոքր մի խո-
նարհեալ քան զհրեշտակս տեսանեմք զՅ̅ս վասն
չարչարանաց մահուն: փառօք և պատուով պսա-
կեալ. զի շնորհօքն ԱՅ̅ վասն ամենեցուն զմահ ճա-
10 շակեսցէ: * Զի վայել էր իսկ նմա, վասն որոյ

ամենայն, և որով ամենայն, բազում որդիս 'ի
փառս ածեալ, և զառաջնորդ փրկութեան նոցա
11 չարչարանօք կատարել։ * Զի որ սրբէն, և որք
սրբին, 'ի միոջէ են ամենեքին. վասն որոյ ոչ
ամօթ համարի եղբարս անուանել զնոսա և ասել.
12 * Պատմեցից զանուն քո եղբարց իմոց. 'ի մէջ եկե
13 ղեցւոյ օրհնեցից զքեզ։ * Եւ դարձեալ՝ Ես եւս
եղէց յուսացեալ 'ի նա։ Եւ դարձեալ. ահաւասիկ
14 ես և մանկունք իմ, զոր ետ ինձ Ած։ * Արդ՝ որով
հետև մանկունք հաղորդեցան արեան և մարմնոյ.
և ինքն իսկ մերձաւորութեամբ կցորդ եղև նո-
ցունց. զի մահուն իւրով խափանեսցէ զայն, որ
զիշխանութիւն մահուն ունէր՝ այսինքն է, զսատա
15 նայ։ * Եւ ազատեսցէ զայնոսիկ, որք մահուն
երկիւղիւ հանապազ կէին վտարանդեալք 'ի ծա-
16 ռայութիւն։ * Քանզի ոչ երբէք զհրեշտակաց
բուռնհարկանէ. այլ զզաւակէն աբրահամու բուռն
17 հարկանէ։ * Ուստի պարտ իսկ էր նմա ամիւ եղ
բարց նմանիլ. զի ողորմած լինիցի, և հաւատարիմ
քահանայապետ յԱծակոյս կողմանէ առնի, առ 'ի
18 քաւելոյ զմեղս ժողովրդեանն։ * Զի որով ինքն
չարչարեցաւ փորձեալ, կարօղ է և փորձա-
նաւորաց օգնական լինել։

ԳԼ. Գ.

1 Ուստի, եղբարք սրբք՝ երկնաւոր կոչմանն բաժա-
նորդք՝ նայեցարուք ընդ առաքեալն, և ընդ քա
հանայապետն խոստովանութեան մերոյ ընդ Յս
2 Քս։ * Որ հաւատարիմ է արարչին իւրոյ՝ որպէս
3 և մօսէս յամի տան նորա։ * Զի առաւելևս փա
ռաց քան զմօսէս արժանի եղև. որչափ առաւել
պատիւ ունիցի քան զտունն՝ տանն առնելի։
4 * Զի ամենայն տուն կազմի, յումեմնէ կազմի. իսկ
5 որ զամենայն արար, Ած է։ * Մօսէս հաւատարիմ
է յամի տան նորա իբրև զծառայ՝ առ 'ի վկայու-
6 թիւն բանիցն ասացելոց։ * Այլ Քս իբրև որդի
'ի վերայ տան իւրոյ. որոյ տունն մեք իսկ եմք.

միայն թէ զհամարձակութիւն, և զպարծանս յուսոյն մինչև 'ի վախճան հաստատուն ունիցիմք ։
7 * Վասն որոյ այսպէս ասէ Հոգին սբ ։ այսօր եթէ
8 ձայնի նր լուիցէք, * Մի խստացուցանէք զսիրտս
ձեր իբրև 'ի դառնութեան, յաւուրն փորձութե
9 յանապատին ։ * Ուր փորձեցին զիս հարքն ձեր.
10 քննեցին զիս՝ և տեսին զգործս իմ ։ * Քառասուն ամ ։ վասն որոյ տաղտկացայ ազգացն այնոցիկ,
և ասացի. միշտ մոլորեալ են սրտիւք ։ և նոքա
11 ոչ ծանեան զճանապարհս իմ ։ * Որպէս երդուայ
'ի բարկութեան իմում, թէ մտցեն 'ի հանգիստ
12 իմ ։ * Տեսէք եղբարք՝ գուցէ երբէք լինիցի յումեք 'ի ձէնջ սիրտ չար անհաւատութեան՝ ապըս-
13 տամբ լինել յԱՅ կենդանւոյ ։ * Այլ մխիթարեցէք զմիմեանս զօրհանապազորդ՝ մինչդեռ այսօրդառաջի կայ. զի մի ոք խստասցի 'ի ձէնջ խաբէ-
14 ութեամբ մեղաց ։ * Քանզի բաժանորդք եղեաք
Քի. միայն թէ զսկիզբն հաստատութեան մինչև
15 զվախճան պինդ կալցուք ։ * Յասելն, Այսօր եթէ
ձայնի նորա լսիցէք՝ մի խստացուցանէք զսիրտս
16 ձեր իբրև 'ի դառնութեանն ։ * Քանզի ոմանք
լուան՝ և դառնացուցին ։ այլ ոչ ամենեքեան՝ որք
17 ելեալք էին յեգիպտոսէ 'ի ձեռն մովսիսի ։ * Յումմէ՞
տաղտկացաւ զքառասուն ամն ։ ո՞չ ապաքէն 'ի
յանցուցելոցն, որոց ոսկերքն անկան յանապատի
18 անդ ։ * Ո՞ւմ երդուաւ չմտանել 'ի հանգիստն
19 իւր. եթէ ոչ անհաւատիցն ։ * Եւ տեսանեմք՝ զի
ոչ կարացին մտանել վասն անհաւատութեանն ։

ԳԼ. Դ.

1 Երկիցուք այսուհետև՝ գուցէ 'ի թողուլ զաւետիսն, 'ի մտանելոյ 'ի հանգիստն նր՝ գտանիցի ոք
2 'ի ձէնջ նուաղեալ ։ * Քանզի եմք աւետարանեալք
որպ և նոքայն ։ այլ ոչ ինչ օգնեաց լուր բանին,
3 չխառնելոյն 'ի հնազանդութի հաւատոյ ։ * Այլ մեք
մտանեմք 'ի հանգիստն. որք հաւատացաքս ։ որպէս
և ասացն թէ՝ որպէս երդուայ 'ի բարկութե ի-

մում, թէ մտցեն 'ի հանգիստ իմ. թէպէտ և արդիւնքն
4 'ի սկզբանէ աշխարհի լեալ էին։ * Վասնզի
ասէ ուրեք վասն աւուրն եօթներորդի այսպէս.
և հանգեաւ Ած յաւուրն եօթներորդի յամ գործոց
5 իւրոց։ * Եւ աստ դարձեալ ասէ՝ թէ մտցեն
6 'ի հանգիստ իմ։ * Եւ արդ՝ քանզի արգելեալ ոմանք
մտանել 'ի նա։ և որք յառաջագոյն աւետարանեալքն
էին՝ չմտին վասն անհաւատութեանն։
7 * Դարձեալ զայլ օր սահմանէ՝ զայսօրն 'ի Դաւիթ
և ասէ՝ յետ այնչափ ժամանակաց, որպէս յառաջագոյնն
ասաց. այսօր եթէ ձայնի նորա լուիջէք՝
8 մի խստացուցանէք զսիրտս ձեր։ * Զի եթէ զնոսա
յեսու՛այ հանգուցեալ էր, ապա վասն այլոյ
9 աւուր ոչ խօսիւր՝ յետ այնորիկ։ * Արդ ուրեմն
նու՛աղեալ է շաբաթումն ժողովրդեանն Այ։
10 * Զի որ եմուտ 'ի հանգիստն նորա. և նա հանգեաւ
յիւրոց գործոց անտի. որպէս և Ած յիւրայնոցն։
11 * Փութասցուք այսուհետև մտանել յայն
հանգիստ։ զի մի ոք ընդ նովին օրինակաւ անհաւատութեանն
12 անկանիցի։ * Քանզի կենդանի է
բանն Այ՝ և ազդօղ՝ և հատու քան զամ սուր երկսայրի,
և անցանէ մինչև ցորոշումն շնչոյ՝ և ոգւոյ՝
և յօդից՝ և ուղղոյ. և քննիչ է մտաց՝ և խորհրդոց
13 սրտից։ * Եւ չիք արարած աներևոյթ յերեսաց
նորա։ այլ ամենայն ինչ մերկապարանոց
կայ առաջի աչաց նորա՝ զորմէ մեր բանքս են։
14 * Ունիմք այսուհետև քահանայապետ մեծ անցեալ
ընդ երկինս, զՅս զՈրդին Այ։ պինտ կալցուք
15 զխոստովանութիւնն։ * Քանզի ոչ եթէ ունիմք
քահանայապետ՝ որ չիցէ կարօղ չարչարակից
լինիլ տկարութեան մերոյ. այլ փորձ է ամի՛ ըստ
16 նմանութեան առանց մեղաց։ * Մատիցուք այսուհետև
համարձակութեամբ առաջի աթոռոյ շնորհաց
նորա. զի ընկալցուք զողորմութիւն՝ և գտցուք
շնորհս 'ի դէպ ժամանակի օգնականութեան։

Գլ․ Ե․

1 Զի ամենայն քահանայապետ ՚ի մարդկանէ առեալ՝
վասն մարդկան կայ յԱ՟ծակոյս կողմն անդր․
զի մատուսցէ պատարագս, և զոհս վասն մեղաց:
2 * Զափու չարչարակից կարօղ է լինել տգիտաց և
մոլորելոց: քանզի և ինքն իսկ տկարութ՟բ պա-
3 ծեալ է: * Վասն այնորիկ հարկ է՝ որպէս վասն
ժողովրդեանն, նոյնպէս և ընդ անձին մատուցա-
4 նել պատարագս վասն մեղաց: * Եւ ոչ եթէ ան-
ձամբ ոք առնու զպատիւ․ այլ կոչեցեալն յԱյ՟ ոպ՟
5 և Ահարոն: * Նոյնպէս և Ք՟ս ոչ եթէ անձին
ինչ շուք եդ լինել քահանայապետ՝ այլ որ խօ-
սեցաւն առ նա՝ թէ որդի իմ ես դու՝ ես այսօր
6 ծնայ զքեզ: * Որպէս և ՚ի միւսումն ասէ: դու ես
քահանայ յաւիտեան ըստ կարգին մելքիսեդեկի:
7 * Որ յաւուրս մարմնոյ իւրոյ՝ աղօթս և պաղա-
տանս առ այն, որ կարօղն էր ապրեցուցանել զնա
՚ի մահուանէ՝ ուժգին ղօչմամբ և արտասուօք մա-
տուցանէր: և լսելի լինէր առ լաւութեանն՝
8 * Թէպէտ և Որդի է՝ ուսաւ ՚ի չարչարանաց անտի
9 զհնազանդութիւն: * Եւ իբրև կատարեցաւ՝ եղև
ամենայն հնազանդելոց իւրոյ պատճառ փրկութ՟ե
10 յաւիտենից: * Եւ անուանեցաւ յԱյ՟ քահանայա-
պետ յաւիտենից ըստ կարգին մելքիսեդեկի:
11 * Վասն որոյ բազումք են մեզ բանք, և դժուարա
պատում ՚ի մեկնել: քանզի խօթամիտք եղէք լը-
12 սելեօք: * Փոխանակ զի պարտ էր ձեզ լինել վար-
դապետս վ՟ ժամանակին: դարձեալ պիտոյ է ձեզ
ուսանել՝ թէ զի՞նչ են նշանագիրք ՚ի սկզբան բանի-
ցըն Այ՟: և եղէք կարօտք կաթին՝ և ոչ հաստատնոյ
13 կերակրոյ: * Զի ամենայն որ կաթնկեր է՝ տղէտ
14 է բանին արդարութ՟ե, քանզի տղայ է: * Այլ
կատարելոցն է հաստատունն կերակուր: որոց՝ վասն
՚ի չափս հասանելոյ՝ ճաշակելիքն կրթ՟ք են ըն-
տրութեան բարւոյ և չարի:

ԳԼ. Զ.

1 Վասն որոյ թողեալ զբան սկզբանն Քի՝ 'ի կատարումն
եկեսցուք. մի միւսանգամ՝ արկանել
զհիմն ապաշխարութեան, 'ի մեռելոտի գործոց
2 անտի, և հաւատոյն որ յԱծ: * Եւ մկրտութեան
վարդապետութեան. և ձեռնադրութեան ձեռաց.
և յարութեան մեռելոց. և դատաստանին յաւիտենից:
3 * Եւ զայդ արասցուք զայն, եթէ Ած հրամայեսցէ:
4 * Քանզի անհնար է միանգամ մկրտելոյն,
որք ճաշակեցին յերկնաւոր պարգևացն, և
5 հաղորդք եղեն Հոգւոյն սրբոյ, * Եւ զգեղեցիկ
բանին Այ ճաշակս ճաշակեցին, և զզօրութիւն
6 հանդերձելոյ աշխարհին, * Եւ կործանեսցին՝ միւսանգամ
նորոգել յապաշխարութիւն՝ և վերստին
'ի խաչ հանել անձանց զՈրդին Այ, և դարձեալ
7 խայտառակել: * Քանզի երկիր՝ որ ըմպիցէ
զանձրև բազում անգամ եկեալ 'ի վերայ նորա՝
ծնանիցի արդիւնս շահեկանս նոցա, վասն որոյ գործեցին՝
8 ընդունի զօրհնութիւն յԱյ: * Իսկ որ բերէ
զփուշ և զտատասկ, անպիտան է և մերձ է յանէծս,
9 և վախճան նորա յայրումն: * Բայց հաստատեալ
եմ վասն ձեր սիրելիք 'ի լաւ անդր, և
որ լին է փրկութեամբ. զի թէպէտ և այսպէս
10 խօսիմք: * Ոչ եթէ անիրաւ ինչ է Ած՝ մոռանալ
զգործս ձեր և զսէր՝ զոր ցուցանէք յանուն նորա.
11 զի պաշտէիք զսրբսն, և պաշտէք: * Եւ մեք ըղձամք՝
զի իւրաքանչիւրոք 'ի ձէնջ զնոյն փոյթ
ցուցանիցէ 'ի հաստատութիւն յուսոյն՝ մինչև
12 ցվախճան: * Զի մի հեղգամիտք լինիցիք, նմանողք
եղերուք այնոցիկ՝ որք հաւատովք և երկայնմտութեամբ
13 ժառանգեցին զաւետիսն: * Զի աբրահամու
խոստացեալ զաւետիսն Այ՝ քանզի յայլոք
14 'ի մեծ ոչ գոյր երդնուլ, * Յանձն իւր երդուաւ,
և ասէ: Այո, օրհնելով օրհնեցից զքեզ. և բազմացուցանելով
15 բազմացուցից զքեզ: * Եւ այնպէս
16 երկայնամիտ եղեալ՝ եհաս աւետեացն: * Ապաքէն
մարդիկ՝ որինչ 'ի վեր է քան զինքեանս՝ յայն

երդնուն: Եւ ամ՟ի հակառակութեան նոցա վճռի
17 հաստատութիւն՝ երդումն է: * Որով առաւել եւս
կամեցեալ Ա՟յ ցուցանել ժառանգաւորաց աւե-
տեացն զհաստատութիւն խորհրդոյն իւրոյ, միջնոր-
18 դեաց երդմամբ: * Զի երկու անփոփոխելի իրօք՝
որովք անհնարին է ստել Ա՟յ, զհաստատուն մխի-
թարութիւն ունիցիմք՝ որք ապաստան եղեաք
19 բուռն հարկանել զհանդերձեալ յուսոյն: * Զոր
իբրեւ զխարիսխ հաստատուն եւ անշարժ ունիցիմք
անձանց մերոց, որ եւ մտանիցէ 'ի ներքին կողմն
20 վարագուրին: * Ուր կարապետն մեր Յ՟ս եմուտ
վ՟ս մեր՝ ըստ կարգին մելքիսեդեկի եղեւ քահա-
նայապետ յաւիտենից

ԳԼ. Է:

1 Քանզի այս մելքիսեդեկ թագաւոր էր սաղեմայ.
քահանայ Ա՟յ բարձրելոյ. որ ել ընդ առաջ
աբրահամու, յորժամ դարձեալ գայր 'ի կոտորա-
2 ծէ թագաւորացն՝ եւ օրհնեաց զնա: * Որում եւ
տասանորդս յամենայնէ ետ աբրահամ. նախ թարգ-
մանի թագաւոր արդարութեան. ապա թագաւոր
սաղեմայ, որ է թագաւոր խաղաղութեան:
3 * Անհայր՝ անմայր՝ չհամարեալ յազգս. որոյ ո՛չ
սկիզբն աւուրց՝ եւ ո՛չ կատարած կենաց: նմանեալ
Որդւոյ Ա՟յ՝ կայ մնայ քահանայ մշտնջենաւոր:
4 * Արդ՝ տեսէք որպիսի ոք էր սա. որում եւ աբ-
րահամ տասանորդս ետ յաւարէ անտի՝ նահապետն:
5 * Եւ՛ որք յորդւոյն ղեւեայ զքահանայութիւն առ-
նուն, պատուէր ունին տասանորդել զժողովուրդն
ըստ օրինացն, այսինքն՝ զեղբարս իւրեանց: թէ-
պէտ եւ ելեալ իցեն յերանացն աբրահամու:
6 * Իսկ չհամարեալն յազգս 'ի նոցանէ՝ տասանոր-
դեաց զաբրահամ: եւ զնա, որոյ զաւետիսն ընկալ-
7 եալ էր, օրհնեաց: * Զի առանց ամ՟ հակառակու-
8 թեան, նուա՛ղն 'ի լաւէ անտի օրհնեսցի: * Եւ՛ աստ
մարդք մահկանացուք տասանորդս առնուն: բայց
անդ վկայեցաւ՝ թէ կենդանի է: (եւ որպէս բանից

9 կարգ է տալ:) * Թէ աբրահամաւ և ղեւի իսկ՝
որ զտասանորդսն առնոյր, տասանորդեցաւ:
10 * Զի դեռ ևս յերանս հօր իւրոյ էր՝ յորժամ
11 ընդ առաջ եղև նմա մելքիսեդեկ: * Իսկ արդ՝
եթէ կատարումն 'ի ձեռն ղեւտացւոյ քահանայութեն
էր, (քանզի ժողովուրդն յայն օրէնս գրեցաւ:)
զի՞նչ պիտոյ էր ըստ կարգին մելքիսեդեկի այլում
քահանայի յառնել. և ոչ ասել թէ ըստ կարգին
12 ահարոնի: * Այլ 'ի փոփոխիլ քահանայութեանն,
հարկ էր և օրինացն փոփոխումն լինել:
13 * Զի զորմէ այսպէսն ասի՝ յայլմէ ազգէ կալաւ
զհաղորդութիւն, յորմէ ոչոք երբէք եղև հաղորդ
14 սեղանոյն: * Արդ յայտ իսկ է. թէ յազգէ յուդայ
ծագեցաւ Տր̄ մեր: յորմէ ազգէ վս̄ քահանայից
15 մովսէս ինչ ոչ խօսեցաւ: * Եւ ևս առաւել
յայտ է՝ թէ ըստ նմանութեան մելքիսեդեկի
16 յառնելոց է այլ քահանայ: * Որ ոչ ըստ մարմնաւոր
պատուիրանին եղև, այլ ըստ զօրութեան
17 կենդանոյն անվախճանից: * Քանզի վկայեցաւ. թէ
դու ես քահանայ յաւիտեան ըստ կարգին մելքիսեդեկի:
18 * Արհամարհութիւն լինիւր առաջնոյ
պատուիրանին, վասն նորին տկարութեան և անշահութեան:
19 * Քանզի ոչինչ կատարումն գործեցին
օրէնքն, և մուտ ազնուական յուսոյն՝ որով
20 մերձենամք առ Ած̄: * Եւ այնչափ, զի ոչ առանց
երդման: (զի են ոմանք՝ որք առանց երդման են
21 կացեալ քահանայք: * Բայց սա երդմամբ 'ի ձեռն
այնորիկ՝ որ ասացն 'ի նա: երդուաւ Տր̄ և ոչ
ևս զղջասցի, դու ես քահանայ յաւիտեան:)
22 * Եւ այնչափ լաւագոյն ուխտի եղև երաշխաւոր
23 Յս̄: * Եւ բազում են կացեալ քահանայք՝ վասն
24 մահու արգել լինելոյ 'ի մշտնջենաւորել: * Իսկ սա
վս̄ յաւիտեան կալոյ՝ առանց անցանելոյ ունի զքահանայութիւնն:
25 * Ուստի և կենդանի առնել համօրէն
կարող է զմատուցեալսն նովաւ առ Ած̄: քանզի
միշտ կենդանի է լինել բարեխօս վասն նոցա:
26 * Զի այնպիսի իսկ վայելէր մեզ քահանայապետ:
սուրբ՝ անմեղ՝ անարատ՝ զատեալ 'ի մեղա-

27 ւորաց․ և բարձրացեալ քան զերկինս ։ * Որում
ոչ հանապազ հարկ է որպէս այլոց քահանայա-
պետիցն․ նախ վասն իւրեանց մեղացն պատարագս
մատուցանել, և ապա վասն ժողովրդեանն ։ Իսկ
սա զայն միանգամ կատարեաց՝ զի զանձն իւր մա-
28 տոյց պատարագ ։ * Օրէնքն զմարդիկ կացուցա-
նեն քահանայապետս՝ զգաձեալս տկարութեամբ․
իսկ բանն երդմանն յետ օրինացն՝ զՈրդի, որ յա-
ւիտեան կատարեալ է ։

ԳԼ․ Ը։

1 Ե՛ բանից գլուխ խօսիցս՝ զայնպիսի ունիմք քա-
հանայապետ՝ որ նստաւ ընդ աջմէ մեծութե̄
2 աթոռոյն յերկինս ։ * Սրբութեանցն պաշտօնեայ՝
և խորանին ճշմարտութեան, զոր Տր̄ն կանգնեաց՝
3 և ոչ մարդ ։ * Զի ամենայն քահանայապետ վս̄
մատուցանելոյ զզոհս և զպատարագս կայ․ ուստի
հարկ է և նմա ունել ինչ զոր մատուցանիցէ ։
4 * Զի եթէ էր յերկրի, թերևս չէր իսկ քահա
նայ․ զի գոյին, որք մատուցանէին ըստ օրինացն
5 պատարագ ։ * Որք առակաւ և օրինակաւ պաշտէ-
ին երկնաւորացն ։ որպէս և հրամայեցաւ Մովսէսի,
յորժամ գործելոց էր զվրան ժամուն ։ տեսջի՛ր
(ասէ) արասցես զա̄մ ըստ օրինակին՝ որ ցուցաւ
6 քեզ ՚ի լերինն ։ * Բայց արդ առաւելագոյն ևս պաշ
տաման եհաս Յս̄, որչափ լաւագոյն ևս ուխտի է
միջնորդ՝ որ յառաւել աւետեաց օրինադրեցաւ ։
7 * Զի եթէ առաջինն անարատ էր, ապա երկ-
8 րորդին տեղի ոչ խնդրէր ։ * Նա աւանիկ բամբասէ
զնոսա, և ասէ ։ ահաւասիկ աւուրք եկեսցեն, ասէ
Տր̄․ և կատարեցից ՚ի վերայ տանն Ի̄լի և ՚ի վերայ
9 տանն յուդայ՝ ուխտ նոր ։ * Ո՛չ ըստ ուխտին՝
զոր եդի ընդ հարս նոցա, յաւուր յորում առի ՚ի
ձեռն՝ հանել զնոսա յերկրէն եգիպտացւոց ։ և զի
նոքա ոչ կացին յուխտին իմում, և ես անփոյթ
10 արարի զնոցանէ․ ասէ Տր̄ ամենակալ ։ * Այլ այս
է ուխտն՝ զոր եդից տանն Ի̄լի՝ յետ աւուրցն այնո

ցին, ասէ Տր̅ ։ տաց զօրէնս իմ 'ի միտս նոցա՝ և
'ի սիրտս նոցա գրեցից զնոսա ։ և եղէց նոցա Ած̅՝
11 և նոքա եղիցին ինձ 'ի ժողովուրդ ։ * Եւ ոչ ևս
ուսուցանիցեն իւրաքանչիւր զքաղաքակից իւր ։ և
իւրաքանչիւր զեղբայր իւր՝ և ասիցեն, թէ ծանիր
զՏր̅ ։ զի ամենեքեան ծանիցեն զիս 'ի փոքրկանց
12 մինչև 'ի մեծամեծս նոցա ։ * Զի քաւիչ եղէց
անիրաւութեանց նոցա ։ և զմեղս նոցա՝ և զանօ-
13 րէնութիւնս նոցա այլ ոչ ևս յիշեցից ։ * Արդ՝
ասելովն նոր՝ հնացոյց զառաջինն ։ և որ հնանայն
և ծերանայ՝ մերձ է յապականութիւն ։

ԳԼ. Թ. ։

1 Ունիլ ունէր և առաջինն իրաւունս պաշտամանն
2 յայնժամ զաշխարհական սրբութիւնն ։ * Զի
խորանն առաջին հանդերձեալ այսպէս ։ յորում
էին աշտանակն՝ և սեղանն, և հացն նուիրաց՝ որ
3 սրբութիւն կոչիւր ։ * Եւ յետ երկրորդ վարագու-
րին խորանն՝ որ կոչիւր սրբութիւն սրբութեանց ։
4 * Յորում կայր բուրվառն ոսկի՝ և արկղն կտա-
կարանաց պատեալ ներքոյ և արտաքոյ ոսկւով ։
յորում սափորն ոսկի լի մանանայիւ, և գաւազանն
Ահարօնի՝ որ ծաղկեցաւ՝ և տախտակք կտակարա-
5 նացն ։ * Եւ 'ի վերայ նորա քերոբէքն փառաց՝
որք հովանի ունէին 'ի վերայ քաւութեանն ։ վասն
6 որոյ ոչ է այժմ ասել միըստմիոջէ ։ * Եւ այն
ամենայն իբրև այնպէս հանդերձեալ կայր, յա-
ռաջին խորանն յամ ժամ մտանէին քահանայքն
7 զպաշտամունսն կատարել ։ * Բայց յերկրորդն մի-
անգամ 'ի տարւոջն, քահանայապետն, և զայն ոչ
առանց արեան, զոր մատուցանէր վասն իւր, և
8 վասն ժողովրդեանն անգիտութեան ։ * Զայս
ցուցեալ Հոգւոյն սրբոյ՝ մինչև յայտնեալ էր
Ճանապարհի սրբութեանցն ։ քանզի դեռ առաջին
խորանն ունէր զհաստատութիւն ։
9 * Որ է առակ ժամանակին, որ առաջի կայր ․ յո-
րում պատարագքն և զոհքն մատչէին, որք ոչ

կարէին ըստ մտաց կատարել զպաշտաւմունսն · բայց
10 միայն կերակրօք և ըմպելեօք, * Եւ պէսպէս մկրտութեամբք՝
մարմնոյ արդարութեամբք · որ մինչև
'ի ժամանակս ուղղութեանն ի վերայ կային ։
11 * Այլ Քս̃ եկեալ քահանայապետ՝ հանդերձելոցն
բարեաց՝ մեծաւն և կատարելագունիւ՝ և անձեռագործ
խորանաւ՝ այսինքն է՝ որ ոչ յայսց արարածոց ։
12 * Եւ ոչ արեամբ նոխազաց և զուարակաց · այլ
իւրով արեամբն եմուտ միանգամ 'ի սրբութիւնն
13 յաւիտենական գտեալ փրկութիւն ։ * Զի
եթէ արիւն ցլուցն և նոխազաց՝ և մոխիր երինջոյն
ցանեալ զպղծեալսն սրբէր առ 'ի մարմնոյ սրբութէ̃ ,
14 * Որչափ ևս առաւել արիւնն Քի̃, որ 'ի ձեռն Հոգւոյն
յաւիտենականի մատոյց զանձն անարատ պատարագ
Այ̃, սրբեսցէ զխիղճ մտաց ձերոց 'ի մեռելոտի
գործոց անտի՝ պաշտել զԱծ̃ կենդանի ։
15 * Եւ վասն այնորիկ նորոյ ուխտիս է միջնորդ ։ զի
յորժամ մահ լինիցի՝ 'ի փրկութիւն վասն առաջնոյ
ուխտին յանցանաց, զաւետիս առցեն հրաւիրեալքն
16 'ի ժառանգութիւն յաւիտենից ։ * Քանզի ուր
կտակ է՝ հարկ է զմահ 'ի մէջ բերել կտակագրին ։
17 * Զի կտակ յետ մահուն հաստատուն է ։ ապաթէ
ոչ՝ զիարդ իցէ հաստատուն, մինչ կտակագիրն
18 կենդանի է ։ * Ուստի և ոչ առաջինն առանց արեան
19 նորոգիւր ։ * Քանզի իբրև պատմեցան ամենայն
պատուիրանք օրինացն 'ի Մովսիսէ ժողովրդեանն՝
առեալ զարիւն ցլուցն և նոխազացն, ջրով և
բրդով, կարմրով և զոպայիւ, զկտակարանօքն իսկ
20 և զամենայն ժողովրդեամբն սրսկեաց ։ * Եւ ասէ ։
Այս է արիւն կտակին, զոր պատուիրեաց ձեզ Ած̃ ։
21 * Եւ զխորանն և զամ̃ կահիւ սպասուն, նոյնպէս
22 սրսկեաց զարիւնն ։ * Եւ գրեթէ ամենայն
ինչ արեամբ սրբիւր ըստ օրինացն · և առանց հեղման
23 արեան ոչ լինէր թողութիւն ։ * Ապա հարկ
էր օրինակացն այնպիսեօքն սրբիլ ։ և բուն իսկ
երկնաւորացն՝ առաւել ևս պատարագօք քան զնոյնս ։
24 * Զի ոչ եթէ 'ի ձեռագործ սրբութիւնսն եմուտ
Քս̃ յօրինակս ճշմարտութեանն · այլ 'ի

*

բուն իսկ յերկինս, յանդիման լինել երեսացն Այ
25 վասն մեր: * Ոչ զի բազում անգամ մատուցանի-
ցէ զանձն պատարագ՝ որպէս քահանայապետն, որ
մտանէր 'ի սրբութիւն սրբութեանցն, ամի ամի ա-
26 րեամբն օտարաւ: * Ապա թէ ոչ՝ պարտ էր նմա բա
զում անգամ չարչարիլ 'ի սկզբանէ աշխարհի: բայց
արդ առաւել միանգամ 'ի կատարած յաւիտենից՝
յանարգութիւն մեղաց իւրով պատարագաւն յայտ
27 նեցաւ: * Եւ զորօրինակ կայ մնայ մարդկան միան
գամ մեռանիլ՝ և յետ այնորիկ դատաստան:
28 * Նոյնպէս և Քս՝ միանգամ մատուցեալ պատա
րագաւ 'ի բառնալոյ զմեղս բազմաց: իսկ յերկրոր-
դումն առանց մեղաց յայտնեսցի այնոցիկ՝ որք ակն-
ունիցին նմա հաւատովք 'ի փրկութիւն:

Գլ. Ժ:

1 Քանզի զստուեր հանդերձելոց բարեացն ունէին
օրէնքն, և ոչ զնոյն կերպարան իրացն. ամի
ամի զնոյն պատարագս մատուցանեն յանգ, որք ոչ
2 են կարօղք զմատուցեալսն կատարել: * Ապա թէ
ոչ՝ դադարէին 'ի մատուցանելոյ. վասն և ոչ մի
ինչ այսուհետև զխիղճ մեղաց ունելոց պաշտօնէ
3 իցն միանգամ սրբեցելոցն: * Այլ անդէն 'ի նմին
4 'ի յիշատակս մեղացն կային ամի ամի: * Քանզի
ոչ կարէր արիւն նոխազաց և ցլուց բառնալ զմեղս:
5 * Վասն որոյ 'ի մտանելն իւրում յաշխարհ՝ ասէ.
զզոհս և զպատարագս ոչ կամեցար. բայց զմար-
6 մին հաստատեցեր ինձ: * Ընդ ողջակէզս, և ընդ
7 վասն մեղացն ոչ հաճեցար: * Յայնժամ ասացի՝
թէ ահաւասիկ եկի. 'ի ճառս գրոց գրեալ է վս
8 իմ առնել զկամս քո Ած: * Վերագոյն ասէ,
թէ ընդ զոհս՝ և ընդ պատարագս՝ և ընդ ողջա-
կէզս՝ և ընդ վասն մեղացն ոչ հաճեցար: և ոչ
9 կամեցար՝ որք ըստ օրինացն մատչէին: * Ապա ասէ՝
ահաւասիկ գամ առնել զկամս քո Ած: մերժէ
10 զառաջինն՝ զի զերկրորդն հաստատեսցէ: * Որով
կամօք և մեք սրբեցաք՝ 'ի ձեռն պատարագի մարմ

11 նոյն Յի̅ Քի̅ միանգամ: * Եւ ա̅մ քահանայապետ
կայ հանապազորդ 'ի պաշտաման: և զնոյն պատարագս
մատուցանէ բազում անգամ, որք ոչ երբէք կարօղք
12 են բառնալ զմեղս: * Իսկ սա զմին վասն մեղաց
մատոյց պատարագ. և մշտնջենաւոր նստաւ ը̅ աջմէ
13 Ա̅յ: * Եւ այսուհետև ակնունի, մինչև դիցին
14 թշնամիք իւր 'ի ներքոյ ոտից իւրոց: * Քանզի
միով պատարագաւ կատարեաց զսրբեալսն 'ի մշտըն-
15 ջենաւորս: * Այլ վկայէ մեզ և Հոգին սր̅՝ յետ
16 ասելոյն յառաջագոյն: * Եթէ այս է ուխտն, զոր
եդից ընդ հարս նոցա՝ յետ աւուրցն այնոցիկ՝ ասէ
Տր̅. տաց զօրէնս իմ 'ի սիրտս նոցա՝ և 'ի խոր-
17 հուրդս նոցա գրեցից զնոսա: * Ապա ասէ՝ թէ
զմեղս նոցա, և զանօրէնութիւնս նոցա այլ ոչ ևս
18 յիշեցից: * Իսկ ուր թողութիւն է, ոչ ևս պիտոյ
19 է վասն մեղաց պատարագ: * Ունիմք այսուհետև
եղբարք՝ զհամարձակութիւն 'ի մուտս սրբութե̃ցն
20 արեամբն Յի̅: * Որ նորոգեաց մեզ զճանապարհ
նորոգ և կենդանի 'ի ձեռն վարագուրին՝ այսինքն է,
21 մարմնոյ իւրոյ: * Եւ քահանայ մեծ 'ի վերայ տանն
22 Ա̅յ: * Մատիցուք ճշմարիտ սրտիւ̃ լրութ̅ հա-
ւատոյ, լուացեալ զսիրտս 'ի խղճէ չարեաց, և
23 մկրտեալ զմարմինս 'ի ջուր սրբութեան: * Պինդ
կալցուք զխոստովանութիւն անշարժ՝ յուսոյն. (զի
24 հաւատարիմ է՝ որ խոստացաւն:) * Եւ զգուշասցուք միմեանց յորդորմամբ սիրոյ և գործոց բա-
25 րեաց: * Եւ մի թողցուք զժողովս միմեանց, որ-
պէս և սովոր են ոմանք. այլ մխիթարեսցուք, և
այնչափ ևս առաւել՝ որչափ տեսանիցէք զօրն մեր-
26 ձեալ: * Զի կամակար մտօք եթէ յանցանիցեմք
յետ ընդունելութեան գիտութեան ճշմարտու-
թեանն՝ այնուհետև ոչ ևս պիտոյ է վասն մեղաց
27 պատարագ: * Այլ ահեղ ակնկալութիւն դատաստանին, և նախանձ հրոյն, որ ուտելոց է զհակառա-
28 կորդսն: * Արհամարհեալ ուրուք զօրէնսն մօսէ-
սի, առանց իրիք ողորմութեան՝ առ երկուք կամ
29 երիւք վկայիւք մեռանիւր: * Իսկ արդ՝ որչափ

սաստիկ պատժոյ արժանի համարիցիք զայն, որ
զՈրդին Այ առ ոտն եհար. և զարիւն նորոյ ուխտին խառնակ համարեցաւ. որով և սրբեցաւն.
30 և զՀոգին շնորհաց թշնամանեաց: * Այլ գիտեմք
զայն՝ որ ասաց: Իմ են վրէժխնդրութիւնք. և ես
հատուցից՝ ասէ Տր: և դարձեալ թէ՝ դատէ Տր
31 զժողովուրդ իւր: * Ահ մեծ է անկանել ՚ի ձեռս
32 Այ կենդանւոյ: * Արդ՝ յիշեցէք զաւուրսն զառաջինս. յորս լուսաւորեալք՝ բազմաց ճգանց և չար
33 չարանաց համբերէք: * Մերթ ՚ի նախատինս. և
մերթ ՚ի նեղութիւնս խայտառակեալք: մերթ
կցորդք այնպիսեաց վաստակաւորացն լինել:
34 * Քանզի և ընդ կապեալս չարչարեցայք. և զյափշտակութիւն ընչից ձերոց խնդութեամբ ընկալայք:
քանզի գիտէիք, եթէ լաւագոյն ևս ստացուածս
ունիք անձանց յերկինս՝ ուր կանն, և մնան:
35 * Արդ մի մերժէք ՚ի ձէնջ զհամարձակութիւնն
ձեր, յորում կայ մեծաց վարձուց հատուցումն:
36 * Պիտոյ է ձեզ համբերութիւն. զի զկամս Այ
37 արարեալ՝ հասջիք աւետեացն: * Զի փոքր միւս
ևս՝ քան որչափ՝ որ գալոցն է՝ եկեսցէ՝ և ոչ յա-
38 մեսցէ: * Զի արդարն իմ ՚ի հաւատոց կեցցէ:
և եթէ երկմիտ ոք լիցի, ոչ հաճեսցի ընդ նա
39 անձն իմ: * Բայց մեք ոչ եթէ երկմտութեամբ
եմք ՚ի կորուստ. այլ հաւատովք ՚ի փրկութիւն
հոգւոյ:

ԳԼ. ԺԱ.

1 Զի՞նչ են հաւատք, եթէ ոչ՝ յուսացելոց իրաց
հաստատութիւն, և յանդիմանութիւն, որոց
2 ոչն երևին: * Զի նովաւ վկայեցան առաջինքն:
3 * Հաւատովք իմանամք հաստատեալ զյաւիտեանսըն բանիւն Այ. յաներևութից զերևելիս եղեալ:
4 * Հաւատովք զլաւ պատարագս հաբէղ՝ քան զկայէն
մատուցանէր Այ. որով վկայեցաւ իսկ արդար լինել. զի ՚ի վերայ պատարագացն եղև նմա վկայութիւն յԱյ: զի թէպէտ և մեռաւ ՚ի նմին, սակայն

5 տակաւին խօսի ։ * Հաւատովք Ենօք փոխեցաւ՝ զի
մի զմահ ճաշակեսցէ ։ և ոչ ուրեք գտանիւր·
քանզի փոխեաց զնա Ած· և յառաջ քան զփոխելն
6 նորա վկայեցաւ հաճոյ լինել Այ ։ * Բայց առանց
հաւատոյ անհնար է հաճոյ լինել Այ ։ այլ հա-
ւատալ արժանէ այնմ, որ մերձենայ առ Ած՝ թէ
է Ած· և որք խնդրենն զնա՝ լինի պարգևատու ։
7 * Հաւատովք առեալ հրաման Նոյի, վասն չևևս
երևելեացն՝ զահի հարեալ կազմէր զտապանն ՚ի
փրկութիւն տան իւրոյ ։ որով դատեաց զաշխարհ·
և հաւատոյն արդարութեան եղև ժառանգաւոր ։
8 * Հաւատովք՝ որ աբրահամն կոչեցաւ՝ ունկնդիր
եղև ելանել ՚ի տեղին, զոր առնլոց էր ՚ի ժառան
գութիւն· ել՝ գնայր՝ և ոչ գիտէր՝ յո՞ երթիցէ ։
9 * Հաւատովք պանդխտեցաւ յերկրին աւետեաց
իբրև յօտարութեան ։ խորանօք բնակեցաւ՝ իսա-
հակաւ և յակոբաւ հանդերձ ժառանգակցօք՝ նոյին
10 աւետեաց ։ * Քանզի ակնունէր հիմամբք հաստա
տելոյ քաղաքին· որոյ ճարտարապետ և արարիչ
11 Ած է ։ * Հաւատովք և ինքն սառա, որ ամուլն
կոչեցեալ էր· զզօրութիւն՝ առնլոյ զսերմն որդե
ծնութեան, ընդունէր· և ՚ի տարաժամ հասակի
ծնանէր ։ քանզի հաւատարիմ համարեցաւ զայն՝
12 որ խոստացաւն ։ * Վասն որոյ և ՚ի միոջէն ծնա-
նէին· (և այն ՚ի յանցեալ ժամանակի) իբրև զաստեղս
երկնից բազմութեամբ· և իբրև զաւազ առ ափն
13 ծովու անանց թուոյ ։ * Ըստ հաւատոյ մեռան
ամենեքին սոքա, և չևևս ընկալեալ զաւետիսն·
այլ ՚ի հեռաստ տեսին զնոսա և ցնծացան ։ և խոս-
տովան եղեն՝ եթէ օտարք՝ և պանդուխտք են
14 յերկրի ։ * Զի որք զայնպիսին խօսին, յայտ առ
15 նեն՝ եթէ զգաւառ իւր խնդրեն ։ * Զի եթէ
զայն յիշէին՝ ուստի ելինն՝ գոյր ժամանակ դառնա
16 լոյ անդրէն ։ * Նա աւանիկ ազնու՛ականի իմն ցան-
կացեալք են, այսինքն է՝ երկնաւորին ։ վասն որոյ
ոչ ամօթ համարի Ած՝ կոչիլ նոցա Ած ։ քանզի
17 պատրաստեաց նոցա զքաղաք ։ * Հաւատովք մա-
տոյց աբրահամ ՚ի փորձութեան իւրում զիսա-

հակ պատարագ։ և զմիամօրն մատուցանէր, որոյ
18 զաւետիսն ընկալեալ էր։ *Որում ասացաւն, թէ
19 իսահակաւ կոչեսցի քեզ զաւակ։ *Եդ ՚ի մտի
իւրում, թէ և ՚ի մեռելոց կարող է յարուցանել
20 ԱԾ։ ուստի և յառակս ընկալաւ զնա։ *Հաւա-
տովք վասն հանդերձելոց իրաց օրհնեաց իսահակ
21 զյակոբ և զեսաւ։ *Հաւատովք յակոբ ՚ի մեռա-
նիլ իւրում, զիւրաքանչիւրոք յորդւոցն յովսեփու
օրհնեաց՝ և երկիր եպագ ՚ի ծայր գաւազանի իւրոյ։
22 *Հաւատովք յովսէփ ՚ի վախճանին իւրում յիշ-
եաց զելս որդւոցն Իէլի, և վասն ոսկերաց իւրոց
23 պատուիրեաց։ *Հաւատովք մովսէս իբրև ծնաւ,
թաքուցաւ ամիսս երիս ՚ի հարց իւրոց։ քանզի
տեսին կայտառ զմանուկն։ և ոչ զանգիտեցին ՚ի
24 հրամանէ թագաւորին։ *Հաւատովք մովսէս իբրև
աճեաց՝ ուրացաւ կոչել որդի դստերն փարաւոնի։
25 *Լաւ համարեցաւ չարչարիլ ընդ ժողովրդեան
ԱՅ. քան առ ժամանակ մի վայելել ՚ի մեղս։
26 *Կարևոր համարեցաւ զնախատինսն Քի, քան
զմեծութիւն գանձուցն եգիպտացւոց։ քանզի հայե-
27 ցեալ ակնունէր վարձուցն հատուցմանն։ *Հաւա-
տովք թողոյր զերկիրն եգիպտացւոց. և ոչ երկն-
չէր ՚ի ցասմանէ թագաւորին։ զի զաներևոյթն
իբրև զտեսեալ համբերութեամբ համարեցաւ։
28 *Հաւատովք արար զզատիկն և զհեղումն արեան.
զի մի սատակիչ անդրանկացն մերձենայցէ ՚ի նոսա։
29 Հաւատովք անցին ընդ ծովն կարմիր՝ իբրև ընդ
ցամաք երկիր. զորոյ զփորձ առեալ եգիպտացւոցն՝
30 ընկղմեցան։ *Հաւատովք պարիսպքն երիքովի ան
31 կան. շուրջ եկեալ զնոքօք զեօթն օր։ *Հաւա-
տովք ռախաբ պոռնիկ ոչ կորեաւ ընդ անհաւատսն.
32 ընկալեալ զլրտեսսն խաղաղութեամբ։ *Եւ՛ արդ՝
զի՞նչ ես ասացից. զի չէ բաւական ժամանակս
պատմելոյ վասն գեդէօնի, բարակայ, սամսօնի,
յեփթայայ, դաւթի, սամուէլի, և այլոց մարգա-
33 րէից։ *Որք հաւատով պարտեցին զթագաւորու-
թիւնս, գործեցին զարդարութիւն. հասին աւե-
34 տեաց. խցին զբերանս առիւծուց։ *Շիջուցին

զզօրութիւն հրոյ. ապրեցան 'ի բերանոյ սրոյ. զօ-
րացան 'ի տկարութենէ. եղեն զօրաւորք 'ի պատե-
35 րազմի. առին զբանակս օտարաց: * Ընկալան կա-
նայք 'ի յարութենէ զմեռեալս իւրեանց: կէսք կոշ
կոծեցան, եւ ոչ եւս ընկալեալք զփրկութիւն. զի
36 լաւագոյն յարութեան հասանիցեն: * Եւ կէսք
կտանջանաց եւ գանից զփորձ առին, զկապանաց
37 եւ զբանտից: * Քարկոծեցան. սղոցեցան. փորձե
ցան. սպանմամբ սրոյ մեռան. շրջեցան լեշկ մաշ
կօք՝ եւ մորթօք այծենեօք: կարօտեալք նեղեալք.
38 չարչարեալք: * Զորս ոչ արժէ աշխարհս: յա
նապատի մոլորեալք՝ 'ի լերինս՝ եւ յայրս՝ եւ 'ի փա
39 պարս երկրի: * Եւ սոքա ամենեքեան վկայեալք
'ի հաւատոյն. ոչ եւս ընկալան զաւետիսն:
40 * Աստուծոյ վասն մեր լաւագոյն հանդերձեալ, զի
մի առանց մեր կատարեսցին:

ԳԼ. ԺԲ:

1 Այսուհետեւ եւ մեք՝ որք այսչափ շուրջ զմեօք
մածեալ ունիմք զբազմութիւն վկայից, զհպար
տութիւն զամենայն 'ի բաց ընկեսցուք, եւ զմեղսն
կարեւորս. համբերութեամբ ընթասցուք 'ի պատե
2 րազմն՝ որ առաջի կայ մեզ: * Հայեսցուք 'ի զօրա-
գլուխն հաւատոյ, եւ 'ի կատարիչն Յս̄. որ փոխա-
նակ մխիթարութեանն, որ նմա առաջի կայր՝ յանձն
էառ զխաչ: արհամարհեաց զամօթ, նստաւ ընդ-
3 աջմէ աթոռոյն Այ̄: * Ածէք զմտաւ, որ
զայսպիսի համբերութիւն 'ի մեղաւորաց հակառա
կութէ նորա կրեաց. զի մի աշխատք լինիցիք ան
4 ձամբք ձերովք՝ եւ լքանիցիք: * Զի չեւ եւս ա-
րեամբ չափ պատերազմեալ՝ հակառակ կայցէք մեղացն:
5 * Եւ մոռացայք զմխիթարութիւնն, որ ընդ ձեզ՝
իբրեւ ընդ որդեակս խօսի: որդեակ իմ՝ մի լքա-
նիր 'ի խրատու Տն̄. եւ մի վհատիցիս՝ յանդիմա
6 նեալ 'ի նմանէ: * Զի զոր սիրէ Տր̄՝ խրատէ. տան
7 ջէ զամենայն որդի, զոր ընդունի: * 'Ի խրատու
համբերութեան կայք: իբրեւ յորդիս մատուցեալ

10 տեցան, որք այնուէսն գնացին: * Ունիմք մեք զսե
ղան, ուստի ոչ ունին իշխանութիւն ճաշակել,
11 որք պաշտեն զպաշտօն խորանին: * Զի որոց անաս
նոց մատչիւր արիւնն 'ի սրբութիւնսն վասն մե
ղաց 'ի ձեռն քահանայապետին, նոցունց մարմինք
12 այրեին արտաքոյ բանակին: * Վասն որոյ և Յս՟
զի սրբեսցէ իւրով արեամբն զժողովուրդն. արտա
13 քոյ դրանն չարչարեցաւ: * Արդ՝ եկա՛յք ելցուք
առ նա արտաքոյ բանակին. առեալ յանձն զնախա
14 տինս նորա: * Քանզի ոչ եթէ ունիմք զքաղաք՝
որ աստէն մնալոց իցէ. այլ զհանդերձեալսն խնդ
15 րեմք: * Արդ՝ 'ի ձեռն նորա մատուսցուք զպա-
տարագ օրհնութեան յամենայն ժամ Այ: այ-
սինքն է՝ զպտուղ շրթանց խոստովանողաց յա-
16 նուն նորա: * Զբարերարութիւն և զհաղորդու
թիւն մի մոռանայք. զի ընդ այնպիսի պատարագս
17 հաճի Աճ: * Ունկնդիր լերուք առաջնորդաց ձե-
18 րոց. և հպատակ կայք նոցա: * Զի նոքա տքնին
վասն ոգւոց ձերոց՝ որպէս թէ համարս տալոց
իցեն ընդ ձեր. զի խնդութեամբ արասցեն զայն՝
և մի յոգւոց հանելով: զի այն ոչ յօգուտ ձեր է:
Աղօթս արարէք վասն մեր. զի հաստատեալ գի-
տեմք եթէ բարւոք միտս ունիմք. յամի կամիմք
19 բարւոք գնալ յուցանել: * Եւ առաւել աղաչեմք,
զի զայն առնիցէք, զի վաղագոյն պատսպարեցայց
20 ձեզ: * Եւ Աճ խաղաղութեան՝ որ եհան 'ի մե
ռելոց զհովիւն հօտից զմեծն արեամբ յաւիտենա
21 կանի ուխտին զՏր մեր Յս Քս: * Հաստատեսցէ
զձեզ 'ի գործս բարութեան՝ առնել զկամս նորա:
և արասցէ 'ի մեզ զհաճոյսն առաջի իւր 'ի ձեռն
22 Յի Քի. որում փառք յաւիտեանս. Ամէն: * Աղա
չեմ զձեզ եղբարք՝ անսալ բանիս մխիթարութե:
23 քանզի սակաւուք գրեցի ձեզ: * Եւ ճանաչէք զեղ
բայրն մեր զտիմոթէոս զարձակեալն (առ ձեզ). ընդ
24 որում, եթէ վաղագոյն գայցէ, տեսից զձեզ: * Ող
ջոյն տաջիք ամենայն առաջնորդաց ձերոց. և ամ
սրբոց: ողջոյն տան ձեզ՝ որք 'ի կողմանս իտալի-
25 ացւոց են: * Շնորհք ընդ ամենեսին ձեզ: Ամէն:

ԹՈՒՂԹ
ԿԱԹՈՒՂԻԿԵԱՅՑ ԵՐԱՆԵԼՒՈՅՆ
ՅԱԿՈԲՈՒ
ԱՌԱՔԵԼՈՅ։

Գլուխ Առաջին։

Ա՛Դ.. ՅԱԿՈԲՈՍ ԱՍՏՈՒԾՈՅ
և Տ̃ն մերոյ Յ̄ի Ք̄ի ծառայ․ երկոտասան ազգացդ․
2 որք 'ի սփիւռս էք՝ ողջոյն։ * Ամենայն ուրախութեան
արժանի համարիջիք եղբարք, յորժամ 'ի
պէսպէս փորձութեան 'ի մէջ անկանիցիք։
3 * Գիտասջիք՝ զի հանդէս ձերոյ հաւատոյն յորի
4 նեալ գործէ զհամբերութիւն։ * Իսկ համբերութիւնն
զգործ կատարեալ ունի․ զի իցէք ողջանդամք
և կատարեալք․ և ոչինչ իմիք նուազեալք։
5 * Ապա թէ ոք 'ի ձէնջ իցէ նուազեալ յիմաստութէ,
խնդրեսցէ յԱՅ, որ տայ ա̃մի առատապէս՝
6 և ո՛չ նախատէ․ և տացի նմա։ * Բայց խնդրեսցէ
հաւատովք՝ և մի երկմտեսցէ։ զի որ երկմիտն է՝
նման է հողմակոծեալ և տատանեալ ալեաց ծովու։
7 * Մի՛ ակնկալցի մարդն այն առնուլ ինչ յԱՅ։
8 * Զի այր երկմիտ՝ անհաստատ է յա̃մ ճանապարհս
9 իւր։ * Պարծեսցի եղբայր խոնարհ 'ի բարձրութիւն
10 իւր։ * Եւ որ մեծատունն իցէ՝ 'ի խոնարհութիւն
իւր։ քանզի իբրև զծաղիկ խոտոյ
11 անցցէ։ * Զի ծագեցաւ արև հանդերձ խորշա-

է ՚ի ձեզ Ած. որ որդի է, զոր ոչ խրատիցէ հայր:
8 * Զի եթէ առանց խրատու լինիցիք, որում ամենեքին
բաժանորդք եղեն, ապա խորթք իցէք՝ և
9 ոչ որդիք: * Զի եթէ ՚ի մարմնաւոր հարցն մերոց՝
զորս ունիմք խրատիչս, պատկառէաք: ո՞չ ապա
ևս առաւել հնազանդիցուք հօրն հոգւոց՝ և կեցցուք:
10 * Զի նոքա առ սակաւ ժամանակս ըստ
կամաց իւրեանց խրատէին. իսկ նա վասն օգտի, առ
11 յընդունելոյ զսրբութիւն նորա: * Ամենայն խրատ
առ ժամանակն ոչ ուրախութեան թուի, այլ տրտմութեան:
բայց յետոյ պտուղ խաղաղութեան նովաւ
կրթելոցն հատուցանէ յարդարութիւն:
12 * Վասն որոյ զձեռս լքեալս՝ և զծունկս կթոտս
13 հաստատեցէք: * Եւ զշաւիղս ուղի՛ղս արարէք
ոտից ձերոց. զի մի որ կաղն իցէ՝ գլորիցի. այլ
14 մանաւանդ բժշկեսցի: * Զխաղաղութեան զհետ
երթայք ընդ ամենեսին, և զսրբութեան. առանց
15 որոյ ոչ ոք տեսանէ զՏր: * Զգո՛յշ լերուք՝ դուցէ
ոք յետնեալ գտանիցի ՚ի շնորհացն Այ: մի՛ ոք
արմատ դառնութեան ՚ի վեր երևեալ նեղիցէ՝ և նովաւ
16 բազումք պղծիցին: * Մի՛ ոք պոռնիկ՝ կամ
պիղծ իբրև զեսաւ. որ ընդ միոյ կերակրոյ զանդրանկութիւն
17 վաճառեաց: * Գիտէք՝ զի թէպէտ
և յետոյ կամեցաւ ժառանգել զօրհնութիւնն, խոտան
գտաւ: զի ապաշխարութեան տեղի ոչ եգիտ.
18 թէպէտ և արտասուօ՛ք խնդրեաց զնա: * Զի
ոչ էք մատուցեալ առ լեառն շօշափելի՝ որ հրովն
վառեալ էր, և միգով, և մառախլով, և խաւարաւ,
19 և մրրկաւ: * Որ փողն հնչէր՝ և բարբառ պատգամացն:
ուստի՝ որք լուա՛նն, հրաժարեցան, զի մի
20 կրկնեսցի առ նոսա բանն: * Քանզի ոչ հանդարտէին
հրամանին: թէպէտ և գազան մերձենայր
21 ՚ի լեառն քարկոծ լինէր: * Եւ այնպէս ահագին
էր տեսիլն: զի և Մօսէս ասէր. եթէ զահի հարեալ
22 եմ, և դողամ: * Այլ մատուցեալ էք ՚ի սիօն
լեառն, և ՚ի քաղաք Այ կենդանւոյ՝ յէմ յերկինս,
և ՚ի բիւրաւոր բանակս հրեշտակաց:
23 * Եւ յեկեղեցին անդրանկաց գրելոց յերկինս. և

առ դատաւորն ամենեցուն Ած․ և յոգիս արդա-
24 րոց կատարելոց ։ * Եւ ՚ի նորոյ կտակարանաց միջ-
նորդն Յս ։ և ՚ի հեղումն արեան նորա՝ որ առա-
25 ւել խօսի քան զհաբէլին ։ * Զգո՛յշ լերուք՝ գու-
ցէ հրաժարիցիք յայնմանէ՝ որ խօսեցաւն ։ զի եթէ
նոքա ոչ կարացին զերծանել հրաժարեալք յայն-
մանէ՝ որ յերկրին հրաման տայր․ ո՜րչափ ևս առա-
ւել մեք, եթէ յերկնաւորէն թիկունս դարձուցա-
26 նիցեմք ։ * Որոյ ձայնն զերկիր շարժեաց յայնժամ․
և այժմ խոստացեալ է՝ և ասէ․ միւսանգամ շար-
27 ժեցից․ ոչ միայն զերկիր՝ այլ և զերկինս ։ * Այլ
միւսանգամն յայտ առնէ զշարժելոյն, իբրև զեղե-
լոյ փոփոխումն․ զի հաստատուն կայցեն անշարժքն ։
28 * Վասն որոյ զթագաւորութիւն անշարժ ընկալ-
եալ, սլինա կալցուք զշնորհսն, որով պաշտեմք
զԱծ հաճութեամբ՝ ահի՛ւ՝ և դողութեամբ ։
29 * Քանզի Ած մեր հուր ծախիչ է ։

ԳԼ․ ԺԳ ։

1 Եղբայրսիրութիւն հաստատեսցի առ ձեզ ։
2 * Զօտարասիրութիւն մի՛ մոռանայք ։ զի այնու
3 ոմանք յանգէտս ընկալան զհրեշտակս ։ * Յո՛ւշ
լիցին ձեզ կապեալքն՝ որպէս թէ դուք ընդ նոսա
կապեալք իցէք ։ և չարչարեալքն, որպէս և դուք
4 իսկ մարմնաւորք էք ։ * Պատուական ամուսնութի․
և սուրբ անկողին, բայց զշունս և զպոռնիկս դա-
5 տէ Աստուած ։ * Բարք անարծաթասէրք լինիցին․
բաւական համարիլ որչափ ինչ ՚ի ձեռս իցէ ։ քան-
զի ինքն իսկ ասաց ։ ոչ թողից զքեզ՝ և ոչ ընդվայր
6 հարից ։ * Որպէս զի համարձակ լիցուք ասել ։ Տէր
է իմ օգնական, և ոչ երկեայց՝ զի՞ արասցէ ինձ մարդ ։
7 * Յիշեցէք զառաջնորդս ձեր, որք խօսեցան ձեզ
զբանն Այ․ հայեցեալք յելս գնացից նց ։ նմանօղք եղե-
8 րուք հաւատոյն ։ * Յս Քս երէկ՝ և այսօր․ նոյն և
9 յաւիտեանս ։ * Յուսմունս պէսպէսս, և օտարա-
ձայնս մի՛ դանդաչէք ։ զի լաւ է շնորհօք հաստա-
տել զսիրտս՝ և ոչ կերակրօք ։ որովք ոչ ինչ օգ-

կաւ՝ և ցամաքեցոյց զխոտն. և թօթափեցաւ ծա-
ղիկ նորա. և կորեաւ վայելչութիւն երեսաց նորա
նոյնպէս և մեծատունն հանդերձ շահիւքն իւրովք
12 թարշամեսցի: * Երանեալ է այր՝ որ համբերիցէ
փորձանաց: զի եթէ ընտիր եւս գտանիցի, առցէ
զպսակն կենաց, զոր խոստացաւ սիրելեաց իւրոց:
13 ԱԵ. * Մի՛ ոք որ 'ի փորձութեան իցէ, ասասցէ՝
թէ յԱյ փորձիմ. զի Ած անփորձ է չարաց:
14 փորձէ նա և ոչ զոք: * Իւրաքանչիւրոք փորձի
առ յիւրոց ցանկութեանց ձգեալ և պատրեալ:
15 * Ապա այնուհետև ցանկութիւնն յղացեալ՝ զմեղս
ծնանի: և մեղքն կատարեալ՝ զմահ ծնանին:
16 Մի՛ խաբիք եղբարք իմ սիրելիք:
17 * Զի ամենայն տուրք բարիք՝ և ամենայն պարգևք՛
կատարեալք 'ի վերուստ են իջեալք առ 'ի Հօրէն
լուսոյ: յորում չի՛ք փոփոխումն՝ և կամ շրջելոյ
18 ստուեր: * Կամեցեալ ծնաւ զմեզ բանիւ՛ ճշմար-
տութեան՝ լինել մեզ պտուղ ինչ արարածոց
19 նորա: * Գիտասջիք եղբարք իմ սիրելիք: Եղիցի
ամենայն մարդ երագ առ 'ի լսել՝ և ծանր առ 'ի խօ
20 սիլ. և ծանր առ 'ի բարկանալ: * Զի բարկութիւն
մարդոյ զարդարութիւն Այ ոչ գործէ:
21 * Որով 'ի բաց թօթափել զամենայն աղտեղութիւն,
և զյաւելուած չարեաց՝ հեզութեամբ ընդունիջիք
զբանն ընդաբոյս. որ կարօղն է կեցուցանել զոգիս
22 ձեր: * Լինիջիք առնօղք բանին. և մի՛ լսօղք մի՛
23 այն համարեսջիք զանձինս: * Զի եթէ ոք լսօղ
միայն իցէ բանին՝ և ոչ առնօղ. նման է նա մար
դոյ՝ որ պշուցեալ հայիցի ընդ երեսս իւր՝ որ ծնա
24 նիցի 'ի հայելւոջ: * Զի հայեցեալ ետես զինքն՝
և գնաց արար. և անդէն մոռացաւ թէ որպիսի
25 ոք էր: * Իսկ որ յառեալ 'ի կատարեալ օրէնս
ազատութեանն հայիցի, և 'ի նմին կայցէ՝ ոչ եղև
նա լսօղ մոռացութեան՝ այլ առնօղ գործոյն: նա
26 յառնելն իւրում լիցի երանելի: * Եթէ ոք կա-
միցի կրօնաւոր լինել՝ և ոչ սանձահարիցէ զլեզու
իւր՝ այլ զբաղեցուցանիցէ զսիրտ իւր՝ այնպիսւոյն
վայրապար է կրօնաւորութիւն:

27 * Կրօնաւորութիւն սուրբ և անարատ՝ առ յԱյ, և
'ի Հօրէ՝ այս է : այցելու լինիլ որբոց, և այրեաց
'ի նեղութեան իւրեանց. անարատ պահել զանձն
յաշխարհէ :

ԳԼ. Բ :

ԱԶ· Եղբարք իմ, մի՛ աչառութեամբ ունիցիք զհաւատսն
1 Տեառն մերոյ Յի Քի. որ Տէրն է
2 փառաց : * Եթէ մտցէ 'ի ժողովուրդ ձեր այր՝ որ
ունիցի զմատանի ոսկի՝ և հանդերձս պայծառս.
մտանիցէ անդր և աղքատ ոք՝ 'ի հանդերձս աղտե
3 ղիս : * Հայիցիք ընդ այն՝ որ ունիցի զհանդերձսն
պայծառս : և ասիցէք՝ եթէ դու նիստ աստ պատուով.
և ցաղքատն ասիցէք՝ եթէ յոտն կաց դու
այդր. կամ թէ՝ եկ, նիստ առ պատուանդանի իմում:
4 * Ո՞չ խղճիցէք յանձինս՝ և լինիցիք դատաւորք
5 չարեաց խորհրդոց : * Լուարո՛ւք ինձ եղբարք
իմ սիրելիք. ո՞չ աղքատն Ած ընտրեաց զաղքատս
աշխարհիս, որք են մեծատունք հաւատովք՝
և ժառանգաւորք արքայութեանն՝ զոր խոստացաւ
6 սիրելեաց իւրոյ: * Եւ դուք անարգէք զաղքատս:
Ո՞չ մեծատունքն յաղթահարեն զձեզ՝ և նոքա քար
7 շեն զձեզ 'ի դատաստան : * Ո՞չ նոքա հայհոյեն
զբարւոք անունն՝ որ կոչեցեալ է 'ի վերայ ձեր :
8 * Ապա թէ զօրէնսն կատարիցէք զարքունականս
ըստ գրոց : Թէ սիրեսցես զընկեր քո իբրև զանձն
9 քո՝ բարւոք առնէք: * Իսկ եթէ աչառիցէք,
մեղս գործէք՝ յանդիմանեալք յօրինացն իբրև օրինազանցք :
10 * Որ ոք զամենայն օրէնսն պահիցէ,
և միով իւիք ինչ գթիցէ՝ եղև ամենայն օրինացն
11 պարտական : * Զի որ ասացն՝ թէ մի՛ սպանանիցես՝
ասաց թէ՝ և մի՛ շնայցես. զի եթէ սպանանիցես
ոչ, բայց շնայցես՝ եղեր յանցաւոր օրինացն:
12 * Այնպէս խօսեցարո՛ւք՝ և այնպէս արարէ՛ք՝ որպէս
զի ազատութեան օրինօքն իցէք դատելոց :
13 * Զի անողորմ դատաստան լինելոց է այնմ, որ

ոչ առնիցէ զողորմութիւն. քանզի բարձրագլուխ
ԱԷ. պարծի ողորմութիւն 'առ դատաստանաւ:
14 * Զի՞նչ օգուտ իցէ եղբարք իմ, եթէ ասիցէ
ոք հաւատս ունիլ՝ և գործս ոչ ունիցի. միթէ
15 կարիցէ՞ն հաւատքն ապրեցուցանել զնա: * Եթէ
եղբայր ոք, կամ քոյր իցեն մերկք՝ կամ կարօ-
16 տեալք աւուրն կերակրոյ: * Ասիցէ ոք 'ի ձէնջ ցնո
սա. գնացէ՛ք խաղաղութեամբ, ջեռարո՛ւք, և յա-
գեցարո՛ւք. և տայցէ՛ք ո՛չ նոցա զպէտս մարմնոյն՝
17 զի՞նչ օգուտ իցէ: * Սոյնպէս և հաւատք եթէ
գործս ո՛չ ունիցին, մեռեալք են առանձինն:
18 * Այլ թերևս ասիցէ ոք. եթէ դու հաւատս ու
նիս՝ և ես գործս ունիմ. ցո՛յց ինձ զհաւատսն քո
առանց գործոց. և ես ցուցից՝ քեզ 'ի գործոց իմոց
19 զհաւատս իմ: * Դու հաւատաս՝ զի մի է Ած. բար
ւոք առնես. և դևք հաւատան, և սարսին:
20 * Կամի՞ս գիտել ո՛վ մարդ սնոտի, զի հաւատք
21 առանց գործոց մեռեալ են: * Աբրահամ հայր
մեր՝ ո՞չ ապաքէն 'ի գործոց արդարացաւ, հա-
նեալ 'ի սեղան զորդին իւր զիսահակ պատարագ:
22 * Տեսանե՞ս, զի հաւատքն եղեն գործակիցք գոր-
ծոց նորա. և 'ի գործոց անտի հաւատքն կատարե
23 ցան: * Եւ կատարեցաւ գիրն՝ որ ասէ. հաւատաց
աբրահամ յԱծ. և համարեցաւ նմա յարդարու-
24 թիւն. և կոչեցաւ բարեկամ Այ: * Տեսանէ՞ք,
զի 'ի գործոց արդարանայ մարդ՝ և ո՛չ 'ի հաւա-
25 տոց միայն: * Սոյնպէս և ռախաբ պոռնիկ՝ ո՞չ
ապաքէն 'ի գործոց արդարացաւ. ընկալեալ զլր
տեսսն՝ ընդ այլ ճանապարհ արձակեաց:
26 * Զորօրինակ մարմին առանց հոգւոյ մեռեալ է.
սոյնպէս և հաւատք առանց գործոց մեռեալ են:

ԳԼ. Գ:

1 Մի՛ բազում վարդապետք լինիք եղբարք իմ,
ԲԿ. գիտասջիք՝ զի մեծ դատաստան ընդունելոց
2 եմք: * Քանզի բազում ինչ յանցանեմք ամենե-
քեան: եթէ ոք բանիւ ոչ յանցանիցէ՝ նա է

մարդ կատարեալ՝ որ կարօղ է սանձահարել զամե-
3 նայն մարմին իւր: * Տես՝ զի ձիոց սանձս 'ի բե-
րան դնեմք առ անսալոյ նոցա մեզ. և զամենայն
4 մարմինս նոցա նուաճեմք: * Ահաւասիկ և նաւք՝
որպիսիք ինչ են, և 'ի սաստիկ հողմոց վարին.
և փոքր թեւովն շրջին յոր կոյս և միտք ուղղչին
5 կամիցին: * Սոյնպէս և լեզու փոքր ինչ անդամ
է՝ և զմեծամեծս բարբառի, ահա և սակաւ ինչ
6 հուր զորպիսի անտառս հրդեհէ: * Եւ լեզու հուր՝
զարդ անիրաւութեան. լեզու հաստատեալ է յան-
դամս մեր՝ որ զամենայն մարմինն ապականէ՝ և
վառէ հրով զանիւ ծննդեան. և բորբոքեալ տո-
7 չորի 'ի գեհենի: * Ամենայն բնութիւն գազանաց՝
և թռչնոց՝ և սողնոց՝ և որք 'ի ծովու են, հնա-
զանդեալք են՝ և հնազանդին մարդկեղէն բնու-
8 թեանն: * Բայց զլեզու մարդկան ոչոք կարէ հնա-
զանդել զչարն՝ և զանկարգ՝ և զի լի թունոք մահա
9 բերին: * Նովաւ օրհնեմք զՏ՟րն և զՀայր. և նո
վաւ անիծանեմք զմարդիկ՝ որք ըստ նմանութեան
Ա՟յ արարան:
10 * 'Ի նմին բերանոյ ելանեն օրհնութ՟ք և անէծք.
ո՛չ է պարտ եղբարք իմ, այսմ այսպէս լի-
11 նել: * Միթէ աղբիւր անդստին 'ի միոյ ականէն
12 բղխիցէ՞ քաղցր և դառն: * Մի թէ մարթ ինչ
իցէ եղբարք իմ, թզենւոյ ձէթ բերել. կամ որթոյ
թուզ: և ո՛չ աղտաղտին տեղւոջ ջուր քաղցր առնել:
13 ԻԲ. * Ո՞վ իցէ իմաստուն և հանճարեղ 'ի ձեզ:
ցուցցէ 'ի բարւոք գնացից զգործս իւր հեզութ՟բ
14 իմաստութ՟ն: * Ապա եթէ նախանձ՝ և դառնու-
թիւն՝ և հակառակութիւն ունիցիք 'ի սիրտս ձեր,
մի՛ պարծիք սուտ առնել զճշմարտութիւնն:
15 * Ո՛չ է իմաստութիւնս այս իջեալ 'ի վերուստ.
16 այլ երկրաւոր՝ շնչաւոր՝ և դիւական: * Զի
ուր հեռ, և նախանձ. անդ է անկարգութիւն, և
17 ամենայն իրք չարք: * Իսկ վերին իմաստութիւնն:
նախ զի սուրբ է՝ ապա խաղաղարար, հեզ՝ դիւրա
հաւան՝ լի՛ ողորմութեամբ, և պտղովք բարեաց.
անխիղճ. առանց կեղծաւորութեան:

18 * Պտուղ արդարութեան, խաղաղութեամբ սեր-
մանի այնոցիկ՝ որք առնեն զխաղաղութիւն :

ԳԼ. Դ:

1 Ո՞ւստի պատերազմունք՝ և ուստի՞ կռիւք 'ի ձեզ:
ո՞չ յայսպիսեաց ցանկութեանց ձերոց՝ որք զօ-
2 րացեալք են յանդամս ձեր: * Ցանկայք՝ և ո՛չ
ունիք. սպանանէք՝ և նախանձիք՝ և ո՛չ կարէք
հասանել. պատերազմիք՝ կռուիք՝ և ո՛չ ունիք. վա̄
3 զի ո՛չ խնդրէք: * Խնդրէք՝ և ո՛չ առնուք՝ վասն
զի չարաչար խնդրէք: զի անդէն 'ի ցանկութիւնս
4 ձեր մաշիցիք: * Շ՛նացողք՝ ո՞չ գիտէք՝ զի սէր
աշխարհիս թշնամութիւն է առ Ած. զի որոք կա
միցի սիրել զաշխարհ թշնամի առնէ զանձն Այ̄:
5 * Կամ թէ վայրապա՞ր համարիցիք՝ զոր ասէ գիր.
առ նախանձ լինի՞ որում փափագի հոգի՝ որ բնա-
6 կեաց 'ի մեզ: * Տալ զառաւել շնորհսն: վասն
որոյ ասէ. Տր̄ ամբարտաւանից հակառակ կայ՝ տայ
7 շնորհս խոնարհաց: * Հնազանդեցարո՛ւք այսու-
հետև Այ̄՝ և կացէք հակառակ չարախօսին. և
լիցի փախստական առ 'ի ձէնջ:
8 * Մերձեցարո՛ւք առ Ած՝ և մերձեսցի առ ձեզ:
ԲԳ. Սրբեցէ՛ք զձեռս, մե՛ղաւորք. և ուղիղ արարէք
9 զսիրտ՝ երկմիտք: * Տառապեցարո՛ւք՝ սգացարո՛ւք՝
և լացէ՛ք. ծաղր ձեր 'ի սուգ դարձցի. և ուրա-
10 խութիւն ձեր 'ի տրտմութիւն: * Խոնարհեցարո՛ւք
11 առաջի Տն̄՝ և բարձրացուսցէ զձեզ: * Մի՛ բամ
բասէք զմիմեանս եղբարք. որ բամբասէ զեղբայր՝
կամ դատէ զեղբայր իւր՝ զօրէնսն բամբասէ՝ և
զօրէնսն դատէ: և եթէ զօրէնսն դատիցես՝
12 ո՛չ առնող օրինացն ես՝ այլ դատաւոր: * Մի է
օրէնսդիր և դատաւոր՝ որ կարօղն է փրկել և
13 կորուսանել: * Դու ո՞ ես՝ որ դատես զընկերն:
Ահաւասիկ են. որք ասեն. այսօր՝ և վաղիւ՛ երթի
ցուք յայս անուն քաղաք. եղիցուք անդ տարի մի.
14 վաճառեսցուք, և շահեսցուք: * Որք ո՛չ գիտէք
15 զվաղիւ՛ն: * Որպիսի ինչ են կեանք ձեր. զի իբրև
զմրրիկ էք. որ առ սակաւ մի երևեալ՝ և ապա

պականեալ: փոխանակ զի ասէիք՝ եթէ Տր̅ կամեսցի՝ և կեցցուք, արասցուք զայս ինչ՝ կամ զայն ։
16 * Եւ արդ պարծիք յամբարտաւանութեան ձերում. ամենայն այսպիսի պարծանք չարութեան են ։
17 * Որոք գիտիցէ զբարին, և ոչ առնիցէ՝ մեղք են նմա ։

Գլ· Ե ։

1 Արդ՝ այսուհետև մեծատունք լայէ՛ք՝ և ողբա
ԲԴ· ցէ՛ք 'ի վերայ թշուառութեանցն, որք գալոց
2 են 'ի վերայ ձեր ։ * Զի մեծութիւնդ ձեր ոչինչ
3 է. և հանդերձ ձեր կերակուր ցեցոյ ։ * Արծաթ
ձեր և ոսկի ժանգահար՝ և ժանգ նոցա լիցի ձեզ
'ի վկայութիւն. և կերիցէ զմարմինս ձեր. իբրև
4 զհուր գանձեցէ՛ք աւուրսն յետնոց ։ * Ահաւասիկ
վարձք մշակաց՝ որք գործեն զանդս ձեր, առ ձեզ
են. զրկեալն 'ի ձէնջ աղաղակէ. և բողոք հնձո
ղացն եհաս յականջս Տն̅ զօրութեանց ։
5 * Փափկացայ՛ք 'ի վերայ երկրի՝ և զբօսայ՛ք: սնու
ցէ՛ք զսիրտս ձեր իբրև աւուր սպանման ։
6 * Զրկեցի՛ք, սպանի՛ք զարդարն. որ ոչ կայր ձեզ
7 հակառակ ։ * Երկայնամիտ լերո՛ւք եղբարք իմ
մինչև 'ի գալուստն Տն̅ ։ ահա մշակ երկայնամտեալ
սպասէ պատուական պտղոյն երկրի. մինչև առցէ
8 զկանուխ և զանագանն ։ * Երկայնամտեցէ՛ք և դուք.
և հաստատեցէ՛ք զսիրտս ձեր՝ զի գալուստ Տն̅ մեր
9 ձեալ է ։ * Մի՛ տրտմեցուցանէ՛ք զմիմեանս եղբարք՝
զի մի՛ դատիցիք. ահաւասիկ դատաւորն առ դրունս
10 կայ ։ * Օրինակ առէ՛ք, եղբարք՝ չարչարանաց և
երկայնմտութե̅՝ զմարգարէսն՝ որք խօսեցան յա
11 նուն Տն̅ ։ * Ահաւասիկ երանեմք համբերողաց:
զհամբերութի̅ն Յոբայ լուարուք՝ և զկատարումն
Տն̅ տեսէ՛ք ։ զի բազմագութ է Տր̅ և ողորմած ։
12 ԲԵ· * Յառաջ քան զամենայն ինչ եղբարք իմ,
մի՛ երդնուցուք՝ մի՛ յերկինս՝ մի՛ յերկիր՝ մի՛ յայլ ինչ
երդումն: այլ եղիցի ձեր՝ այոն, այո. և ոչն, ոչ.
զի մի՛ 'ի կեղծաւորութիւն ինչ անկանիցիք ։

*

13 * Վշտանայցէ ոք 'ի ձէնջ, յաղօթս կացցէ։ բերկրեսցի
14 ոք, սաղմոս ասասցէ։ * Հիւանդանայցէ ոք
'ի ձէնջ՝ կոչեսցէ զերիցունս եկեղեցւոյ՝ և արասցեն
'ի վերայ նորա աղօթս։ օծցեն իւղով յանուն
15 Տն։ * Եւ աղօթքն հաւատովք փրկեսցեն զաշխատեալն՝
և յարուսցէ զնա Տր․ և եթէ մեղս ինչ
16 իցէ գործեալ՝ թողցի նմա։ * Խոստովան եղերուք
միմեանց զմեղս․ և աղօթս արարէք 'ի վերայ միմեանց՝
որպէս զի բժշկիջիք․ քանզի յոյժ զօրաւորք
17 են աղօթք արդարոյ յօգնականութիւն։ * Եղիա
մարդ էր իբրև զմեզ չարչարելի․ և յաղօթս եկաց՝
և ոչ տեղեաց յերկիր զերիս ամս և զվեց
18 ամիս։ * Եւ դարձեալ եկաց յաղօթս՝ և ետուն
երկինք զանձրև՝ և բուսոյց երկիր զպտուղ իւր։
19 * Եղբարք իմ, եթէ ոք 'ի ձէնջ մոլորեալ իցէ
'ի ճշմարտութեան ճանապարհէ անտի՝ և դարձուս-
20 ցէ ոք զնա․ * Գիտասցէ, զի որ դարձուսցէ
զմեղաւորն 'ի մոլորութեան ճանապարհէ իւրմէ,
փրկեսցէ զոգի իւր 'ի մահուանէ՝ և ծածկեսցէ
զբազմութիւն մեղաց։

* * * * *
* * * *
* * *
* *
*

ԹՈՒՂԹ
ԵՐԱՆԵԼՒՈՅՆ
ՊԵՏՐՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ
ԱՌԱՋՆՈՐԴ.

Գլուխ Առաջին:

1 ՐՋ. ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔԵԱԼ ՅԻՍՈՒսի Քրիստոսի, ընտրելոցդ նժդեհից, որք 'ի
սփիւռս պոնտացւոց, գաղատացւոց, և կապադովկացւոց,
2 և ասիացւոց, և բիւթանիացւոց: * Ըստ
կանուխ գիտութեն Այ Հօր. սրբութեամբ Հոգւոյն.
'ի հնազանդութիւն և 'ի հեղումն արեանն Յի
Քի: շնորհք ըն ձեզ և խաղաղութիւն բազմասցի:
3 * Օրհնեալ է Ած և Հայր Տն մերոյ Յի Քի.
որ ըստ բազում ողորմութեան իւրում ծնաւ զմեզ
վերստին 'ի յոյսն կենդանի. 'ի ձեռն յարութեանն
4 Յի Քի 'ի մեռելոց: * Յանեղծ և յանարատ՝ և
յանթառամ ժառանգութին՝ որ պահեալ է յերկինս
5 ձեզ: * Որք զօրութեամբն Այ պահեալք էք
հաւատովք 'ի պատրաստեալ փրկութին, յայտնել
6 'ի յետին ժամանակս. * Որով ուրախ լինիջիք՝
որք այժմ սակաւիկ ինչ ըստ պատշաճի իրացդ
7 տրտմեալ էք 'ի պէսպէս փորձութիւնս: * Զի
հանդէս ձերոյ հաւատոյն առաւել քան զոսկի
կորստական պատուական է. որ հրով փորձեալ՝
գտցի 'ի գովութիւն և 'ի փառս. և 'ի պատիւ
8 յայտնութեանն Յի Քի: * Զոր ոչն տեսիք՝ և
սիրեցիք. ընդ որ այժմ ոչ հայեցեալք՝ բայց հաւատայք.
և ուրախ էք անճառ և փառաւորեալ
9 խնդութեամբն: * Ընկալեալ զկատարումն հաւատոյն
10 ձերոյ զոգւոյն փրկութիւն: * Վասն որոյ

փրկութեան խնդրեցին՝ և քննեցին մարգարէքն․
որք վասն որոյ 'ի ձեզ լինելոյ էին շնորհաց՝ մար-
11 գարէանային: * Քննէին՝ յորում և յորպի-
սի ժամանակի գուշակէր 'ի նոսա Հոգին Քի: որ
նախ զչարչարանացն Քի վկայէր՝ և յետ այնորիկ
12 զփառացն: * Որոց և յայտնեցաւ իսկ․ զի ոչ եթէ
անձանց, այլ մեզ մատակարարաւք լինէին նոցին․
որք այժմ պատմեցան այնոքիւք, որք աւետարանե-
ցինն ձեզ Հոգւովն սրբով, որ առաքեալն յերկ-
նից․ զոր ցանկային տեսանել գոնեայ ընդ աղօտ
Հրեշտակք:
13 ԲԻ․ * Որով պնտեալ զմէջս մտաց ձերոց, զո՛
արթնացեալք բովանդակ սպասեցէք հասելոյ ձեզ
14 շնորհացն 'ի յայտնութեանն Յի Քի: * Իբրև
զորդիս հնազանդուե: մի՛ կերպարանեալք առաջ-
նովք ձերովք անգիտութեանն ցանկութեամբք:
15 * Այլ ը սրբոյն՝ որ կոչեաց զձեզ՝ և դուք սբք
16 յամենեսեան գնացս ձեր լինիջիք: * Վասն որոյ
գրեալ է՝ եթէ եղերո՛ւք սբք՝ զի ես սբ եմ:
17 * Եւ՛ եթէ հայր կոչիցէք զայն, որ առանց ակնա-
ռութեան դատէ ըստ իւրաքանչիւր գործոց․ ապա
երկիւղիւ՛ զձերոյ պանդխտութեան ժամանակս
18 գնասջիք: * Զի ոչ ապականացու արծաթեղինօք՝
և ոսկեղինօք փրկեցայք 'ի ձերոց ունայնութեան
19 հայրենատուր գնացիցն: * Այլ պատուական ար-
եամբն Քի․ իբրև անբիծ և անարատ գառին:
20 * Որ յառաջ ծանօթ էր՝ նախ քան զլինելքանէ
աշխարհի: և երևեցաւ 'ի վախճան ժամանակաց
21 վասն ձեր: * Որք նովաւ հաւատացիք յԱծ՝ որ
յարոյց զնա 'ի մեռելոց: և ետ նմա փառս․ զի
22 հաւատքն ձեր և յոյս իցեն յԱծ: * Զանձինս ձեր
սրբել հնազանդութբ ճշմարտութեն, յեղբայրսիրուե
առանց կեղծաւորութեան, 'ի սուրբ սրտէ սիրել
23 սերտիւ՛ զմիմեանս: * Ծնեալք վերստին ոչ յա-
պականութեան սերմանէն․ այլ յանապականա-
ցուէն, կենդանի, և մշտնջենական բանին Այ:
24 * Քանզի ամենայն մարմին իբրև զխոտ է․ և ա-
մենայն փառք մարդոյ իբրև զծաղիկ խոտոյ․ խոտն

25 ցամաքեցաւ՝ և ծաղիկն թօթափեցաւ : * Եւ բանն Տն մնայ յաւիտեան . այսինքն է բանն, որ 'ի ձեզ աւետարանեցաւ :

ԳԼ. Բ.

ԳԱ. 'Ի բաց թօթափեալ այսուհետև զամ չարութի,
1 և զամենայն նենգութիւն, և զկեղծաւորութի,
և զնախանձ, և զամենայն չարախօսութիւն :
2 * Իբրև զարդի ծնեալ մանկունս խօսունս . և ան
խարդախ կաթին փափագիցէք : զի նովաւ աճիցէք
3 'ի փրկութիւն : * Եթէ ճաշակեցէք զի քաղցր է
4 Տէր : * Առ որ մատուցեալ վէմն կենդանի, որ
թէպէտ 'ի մարդկանէ անարգեալ . այլ առ յԱյ
5 ընտրեալ և պատուական է : * Եւ դուք իբրև ըզ
վէմս կենդանիս շինիք տաճար հոգևոր . յանարատ
քահանայութիւն մատուցանել զհոգևոր պատա-
6 րագս՝ հաճոյս Այ, 'ի ձեռն ՅԻ ՔԻ : * Քանզի
կայ իսկ 'ի գրի . թէ ահաւասիկ դնեմ 'ի սիոն
վէմ ընտիր, գլուխ անկեան պատուական, և որ 'ի
7 նա հաւատասցէ՝ մի ամաչեսցէ : * Ձեզ այսու-
հետև հաւատացելոց է վէմ պատուական : իսկ
անհաւատիցն, վէմ, զոր անարգեցին շինօղքն, նա
8 եղև գլուխ անկեան : * Եւ վէմ գլորման, և վէմ
գայթագղութեան, որք գայթագղին ապստամբեալքն
9 'ի բանէն՝ յոր և եդանն : * Այլ դուք ազգ էք
ընտիր, թագաւորութիւն, քահանայութի . ազգ
սուրբ, ժողովուրդ սեպհական . որպէս զի զձեր
առաքինութիւնս նուիրիցէք այնմ, որ զձեզ 'ի խա
ւարէն կոչեաց յիւր սքանչելի լոյսն :
10 * Որք երբեմն չժողովուրդ՝ բայց արդ ժողովուրդ
Այ : որք չողորմեալք՝ այժմ զողորմութի գտիք :
11 ԳԲ. * Սիրելիք՝ աղաչեմ, իբրև զպանդուխտս և
զնժդեհս, 'ի բաց մերժել 'ի մարմնաւոր ցանկութեն,
12 որք զինուորին ընդդէմ ոգւոց : * Զվարս ձեր 'ի
մէջ հեթանոսաց պարկեշտս ցուցանել : զի որով
բամբասիցեն զձեզ իբրև զչարագործս՝ 'ի բարւոք

գործոց ձերոց դիտեալ՝ փառաւորեսցեն զԱծ
Գ.Գ. յաւուրն այցելութեան:
13 * Հնազանդ լերուք ամենայն մարդկեղէն ստեղծ-
ուածոյ վասն Տեառն: եթէ թագաւորի, իբրեւ ա-
14 ռաւել ումեք: * Եթէ դատաւորաց՝ իբրեւ 'ի նմա-
նէ առաքելոց, 'ի վրէժխնդրութի չարագործաց՝
15 և 'ի գովութիւն բարեգործաց: * Զի այսպէս են
կամք Այ· բարեգործայս պապանձեցուցանել զան
16 զգամ մարդոց զանգիտութիւն: * Իբրեւ զազատս
լինիլ՝ և մի իբրեւ զպատրուակ չարութեան ունիլ
զազատութիւնն. այլ իբրեւ Աստուծոյ ծառայք:
17 * Զամենեսեան պատուեցէք· զեղբայրսիրութի
սիրեցէք· յԱյ երկերուք· զթագաւորս պատուե-
18 ցէք: * Ծառայք հնազանդ լինիլ յամի երկիւղի
տերանց· ոչ միայն բարերարացն և հեզոց, այլ և
19 կամակորացն: * Զի այս շնորհք Այ են: եթէ
բարւոք ինչ մտօք տանիցի ոք վշտաց անիրաւի:
20 * Քանզի զի՞նչ երախտիք իցեն, եթէ յորժամ մե-
ղանչիցէք՝ տանջիցիք, և համբերիցէք: այլ եթէ բա-
րիս գործիցէք՝ չարչարիցիք՝ և համբերիցէք, այն
21 շնորհք յԱյ են: * Քանզի 'ի դոյն իսկ կոչեցայք·
զի և Քս վասն ձեր մեռաւ. և ձեզ եթող զօրի-
նակ, զի զհետ երթայցէք զհետոց նորա:
22 * Որ ոչն արար մեղս, և ոչ գտաւ նենգութիւն
23 'ի բերան նորա: * Որ բամբասեալ՝ և ոչ փոխա-
րէն բամբասէր: չարչարեալ՝ և ոչ պահէր սպառ-
նալիս: բայց իրաւամբք մատնիւր դատաւորին:
24 * Որ զմեր մեղս իւրով մարմնովն վերացոյց 'ի խա-
չափայտն· զի լիցուք զերծեալք 'ի մեղաց մասի,
և իցեմք արդարութեն կենակիցք· որոյ վիրօքն
25 բժշկեցայք: * Քանզի էիք իբրեւ զոչխարս մոլո-
րեալս: այլ այժմ դարձայք առ հովիւն և տե-
սուչ ոգւոց ձերոց:

ԳԼ. Գ.

1 Նոյնպէս և կանայք հնազանդ լինիլ արանց իւ-
Գ.Գ. րեանց: զի եթէ են նոքա ապստամբք 'ի բա

նէ անտի, յաղագս կանանց գնացից՝ առանց բանին
2 իսկ շահեսցին: * Դիտել երկիւղիւ՛ զձեր պարկեշտ
3 գնացս: * Որոց լինիցի ոչ արտաքուստ հիւսիւք՝
և ոսկեհուռ ծամակալօք՝ կամ պաճուճեալ զգեստուք
4 զարդ: * Այլ ծածուկ սրտին մարդն. անեղծութեամբ
հեզութեամբ և հանդարտութեամբ հոգւոյն,
5 որ է առաջի ԱՅ բազմապատիկ: * Քանզի
այսպէս երբեմն և կանայք՝ որք յուսայեալք էին
յԱծ՝ զարդարէին զանձինս հնազանդիլ իւրեանց
6 արանց: * Որպէս և սառա՝ զի հնազանդ էր աբրահամու.
և տէր իւր կոչէր զնա: որոյ եղէք դուք
որդիք: բարեգործք էին, և ոչ կասկածէին՝ և
7 ոչ ՚ի միջէ ինչ երկիւղէ: * Այնպէս և արք իմաստութեամբ
բնակիցին ընդ նոսա: իբրև տկար
անօթոյ ածիցեն պատիւս կանանց՝ իբրև ժառանգակցաց
շնորհացն կենաց. զի մի խափան լինիցին
8 աղօթիցն ձերոց: * Եւ՛ գլուխ ամի՝ զի համամիտք
իցէք՝ համակիրք, եղբայրասէրք՝ ազնուամտութք՝
9 խոնարհք: * Մի՛ զչար փոխանակ չարի հատուցանել:
կամ բամբասանս ընդ բամբասանաց: այլ զնորին
հակառակն՝ օրհնել: զի յայս իսկ կոչեցայք՝
զի զօրհնութիւն ժառանգիցէք:
10 Գ.Ե. * Զի որ կամիցի զկեանս սիրել՝ և տեսանել
զաւուրս բարութեան, լռեցուսցէ զլեզու իւր
՚ի չարութէ, և զշրթունս իւր ՚ի չխօսելոյ զնենգութիւն:
11 * Խոտորեսցի ՚ի չարէ. և արասցէ
զբարի: խնդրեսցէ զխաղաղութիւն. և երթիցէ
12 զհետ նորա: * Զի աչք Տն ՚ի վերայ արդարոց.
և ականջք նորա յաղօթս նոցա: երեսք Տն ՚ի վերայ
13 չարագործաց: * Եւ՛ ո՞վ իցէ՝ որ չարչարիցէ
զձեզ՝ եթէ դուք բարւոյն նախանձաւորք լինիցիք:
14 * Այլ թէ չարչարիցիք իսկ յաղագս արդարութեան,
երանելիք էք: բայց յերկիւղէ նոցա մի
15 երկնչիցիք. և մի խռովիցիք: * Այլ զՏր փոյթ
զՔս որ առնիջիք ՚ի սիրտս ձեր:
Գ.Զ. Պատրաստք իցէք տալ զպատասխանի յամի,
որ խնդրիցէ զբանն. որ է վասն յուսոյն ձերոյ:
16 * Այլ հեզութեամբ և երկիւղիւ՛, ունիցիք բարս

քաղցունս. զի որով չարախօսիցեն զձէնջ՝ յամօթ
լիցին՝ որք բամբասեն զձեր բարւոք գնացս ՚ի Քս̅։
17 * Զի լաւ է բարեգործաց (եթէ կամիցին ըստ
Այ̅ կամացն) չարչարիլ՝ քան չարագործաց։
18 * Զի և Քս̅ միանգամ վասն մեղաց ՚ի վերայ
ձեր մեռաւ։ արդարն ՚ի վերայ անարդարաց։ զի
զձեզ մերձեցուսցէ առ Ած̅։ Թէպէտ և մեռաւ
մարմնով. այլ կենդանի է հոգւով։
19 * Որով և ոգւոյն՝ որք էին ՚ի բանտին, երթեալ
20 քարոզեաց։ * Երբեմն ապստամբելոյն. յորժամ
ներէր նոցա Այ̅ երկայնմտութիւն յաւուրս Նոյի.
յորս տապանն կազմիւր։ յոր նուազունք՝ այսինքն՝
21 ոգիք իբրև ութ ապրեցան ՚ի ջրոյ անտի։ * Որ և
զձեզ ըստ նմին օրինակի կեցուսցէ մկրտութիւն.
ոչ զմարմնոյ աղտոյ ՚ի բաց ընկենլով՝ այլ զբարւոք
մտացն հանդէս առ Ած̅ ՚ի ձեռն յարութեան Յի̅
22 Քի̅։ * Որ է ընդ աջմէ Այ̅, երթեալ յերկինս.
՚ի հնազանդել նմա հրեշտակաց՝ իշխանութեանց
և զօրութեանց։

ԳԼ. Դ.

1 Քրիստոսի չարչարելն մարմնով վասն մեր, և
ԳԼ. Դ. դուք ՚ի նոյն միտս վառեցարուք. զի որ չար
2 չարի մարմնով, դադարէ ՚ի մեղաց։ * Զի մի ևս
ըստ մարդկան ցանկութեանց՝ այլ ը̅ կամացն Այ̅
3 կեցցէ զայլևս ժամանակն։ * Բաւական է
անցեալ ժամանակն լինելոյ կամացն հեթանոսաց.
գիջութեամբք՝ ցանկութեամբք՝ գինեհարութ̄բք,
անառակութեամբք, արբեցութեամբք, անօրէն
4 կռապաշտութեամբք։ * Որով օտարացեալք ոչ
վարելին ընդ ձեզ՝ ՚ի նոյն անառակութեան զեղխու-
5 թիւնք, և հայհոյեն։ * Որք տայցեն զպատասխանի
այնմ, որ ՚ի պատրաստի ունի դատել զկենդանիս
6 և զմեռեալս։ * Զի ՚ի սոյն իսկ և մեռելոց խոս
տացեալ է։ զի դատեսցին ըստ մարդկան մարմնով՝
և կենդանի լինիցին ըստ Այ̅ հոգւով։

7 * Ամենեցուն վախճան մերձեալ է ։ զգաստացարո՛ւք այսուհետեւ՝ եւ լերո՛ւք զուարթունք ։
8 * Նախքան զամենայն, զսէր սերտ ունիլ ընդ միմեանս ։ զի սէր ծածկէ զբազմութիւն մեղաց ։
9 * Օտարասէրք լինիլ ընդ միմեանս առանց տրտըն-
10 ջելոյ ։ * Իւրաքանչիւրոք որպէս եւ ընկալաւ շնորհս ինչ՝ ՚ի միմեանս զնոյն մատակարարել. իբրեւ զբարւոք հազարապետս պէսպէս շնորհացն ԱՅ ։
11 * Եթէ ոք խօսեսցի՝ իբրեւ զԱՅ պատգամ. եթէ ոք մատակարարիցէ՝ իբրեւ ՚ի զօրութենէ՝ զոր շնորհէ ԱԾ. զի յամի փառաւորեսցի ԱԾ ՚ի ձեռն ՅԻ ՔԻ ։ որում փառք եւ զօրութիւն յաւիտեանս յաւիտենից ։ ամէն ։
12 Դկ. * Սիրելիք՝ մի՛ օտարոտի համարել զեռանդն ինչ՝ որ ՚ի փորձութիւն ձեզ լինիցի, որպէս թէ
13 օտար ինչ իրք ձեզ դիպիցին ։ * Այլ իբրեւ հաղորդեալք ՔԻ չարչարանացն, ուրախ լինիջիք՝ զի եւ ՚ի յայտնութն փառաց նորա ցնծացեալք բերկ-
14 րիջիք ։ * Իսկ եթէ նախատիցիք եւս վասն անուանն ՔԻ, երանելիք էք ։ զի փառացն՝ եւ զօրութեան անուն է ։ եւ ԱՅ Հոգին ՚ի վերայ ձեր հանգու-
15 ցեալ է ։ * Մի՛ ոք ՚ի ձէնջ չարչարեսցի իբրեւ զսպանող. կամ իբրեւ զգող. կամ իբրեւ զչարագործ.
16 կամ իբրեւ զօտարատեսուչ ։ * Ապա եթէ իբրեւ զքրիստոնեայ՝ մի՛ ինչ ամաչեսցէ ։ այլ փառաւոր
17 առնիցէ զԱԾ անուամբս այսուիկ ։ * Զի ժամանակ է՝ սկիզբն լինելոյ դատաստանին ՚ի տանէն ԱՅ ։ զի եթէ նախ ՚ի մէնջ. իսկ զի՞նչ կատարած այնոցիկ իցէ՝ որք ոչ հնազանդեցան ԱՅ աւետարանին ։
18 * Եւ եթէ արդարն հազի՛ւ կեցցէ. իսկ ամբա-
19 րիշտն եւ մեղաւորն ո՞ւր գտանիցի ։ * Որպէս՝ զի որք չարչարիցին ըստ ԱՅ կամացն, հաւատարիմ հաստիչին աւանդեսցեն զիւրեանց ոգիս բարերարութբք ։

Գլ. Ե ։

1 Դր. Զերիցունս այսուհետեւ աղաչեմ, իբրեւ երիցակից՝ եւ վկայ չարչարանացն ՔԻ. որ եւ հանդերձելոյ փառացն յայտնելոյ հաղորդ ։

2 * Արածեցէք՝ որ 'ի ձեզ հօտդ է Այ։ վերակացու
լինել՝ մի իբրեւ ակամայ՝ այլ կամաւ ըստ Այ։ մի
զօշաքաղութեամբ․ այլ յօժարութեամբ։
3 * Մի՛ իբրեւ տիրելով վիճակացն․ այլ լինել օրի-
4 նակ հօտին։ * Զի յերեւել հովուապետին՝ ընդու-
5 նիջիք զանթառամ փառացն պսակ։ * Սոյնպէս եւ
երիտասարդք հնազանդ լերո՛ւք ծերոց։ * Ամե-
նեքին ընդ միմեանս զխոնարհութիւն ունիջիք։
զի Ած ամբարտաւանից հակառակ կայ․ տայ շնորհս
6 խոնարհաց։ * Խոնարհեցարո՛ւք ընդ հզօր ձեռամբն
Այ․ զի զձեզ բարձրացուսցէ 'ի ժամանակի։
7 * Զամենայն հոգս ձեր ընկեցէ՛ք 'ի նա․ զի նա է՝
որ հոգայ վասն ձեր։
8 Դ․Գ․ * Արթո՛ւն լերո՛ւք՝ եւ հսկեցէ՛ք։ զի ոսոխն
ձեր սատանայ իբրեւ զառիւծ գոչէ։ շրջի, եւ խնդ-
9 րէ՝ թէ զո՛ կլանիցէ։ * Որում 'ի դիմի հակա-
նիցիք հաստատեալք հաւատովք․ գիտասջիք զնոյն
անցս չարչարանաց եղբայրութեան ձերոյ, յաշխար
10 հի յանձինս կատարել։ * Եւ Ած ամենայն շնոր-
հաց՝ որ կոչեաց զձեզ յիւր յաւիտենական փառսն
Ցի՛ Քի՛․ որում փոքրմի եղէ՛ք չարչարակի՛ք։
նա կազդուրասցէ․ կարողասցէ․ հաստահիմն
11 արասցէ։ * Նմա իշխանութի՛ եւ փառք յաւիտեանս
12 յաւիտենից․ Ամէն։ * 'ի ձեռն սիղուանոսի հաւատար
մի եղբօր, որպէս կարծեմ, փոքր 'ի շատէ գրեցի առ
ձեզ մխիթարել։ եւ 'ի վերայ այսորիկ վկայել։ զի
եւ այս ճշմարիտ շնորհ Այ է՝ յոր հաստատեալ
13 կայցէ՛ք։ * Ողջոյն տայ ձեզ՝ որ 'ի բաբիլոն ընտ-
րելակից եկեղեցին է․ եւ մարկոս որդի իմ։
14 Ողջոյն տաջիք միմեանց 'ի համբոյր սրբութեան։
խաղաղութիւն ընդ ձեզ ամենեսին, որք էք 'ի
․Քս Յս։ Ամէն։

* * *

ԹՈՒՂԹ
ԵՐԱՆԵԼՒՈՅՆ
ՊԵՏՐՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ
ԵՐԿՐՈՐԴ։

Գլուխ Առաջին։

1 Դ. Դ. ՍԻՄՈՆ ՊԵՏՐՈՍ, ԾԱՌԱՅ, եւ առաքեալ Յի՟ Քի՟. որոց հանգիտապատիւ մեզ հասիքդ հաւատոյ յարդարութիւն Ա՟յ մերոյ, եւ փրկչին Յի՟ Քի՟։
2 * Շնորհք ընդ ձեզ, եւ խաղաղութի՟ բազմասցի գիտութ՟բն Ա՟յ, եւ Յի՟ Քի՟ Տ՟ն մերոյ.
3 * Որպէս ամենայն ինչ մեզ իւրոյ Ա՟ծեղէն զօրութեամբն առ 'ի կեանս եւ յա՟ծպաշտութի՟ շնորհեալ. 'ի ձեռն գիտութեանն այնորիկ, որ կոչեաց զմեզ
4 յիւր փառսն եւ վայելչութիւն: * Որով մեծամեծքըն եւ պատուականք աւետիք պարգեւեալք են մեզ: զի նոքիմբք ա՟ծեղէն բնութեանն լինիցիք հաղորդակիցք. փախուցեալք 'ի ցանկութ՟եց աշխար-
5 հիս եւ յապականութ՟եց։ * Եւ՛ սմին այսմիկ զա՟մ փոյթ 'ի մէջ առեալ՝ ձերովք հաւատովքն մատակարարեսջիք զառաքինութիւն, առաքինութեամբն
6 զգիտութիւն։ * Եւ՛ գիտութ՟բն զժուժկալութի՟, եւ ժուժկալութ՟բն զհամբերութիւն, եւ համբե-
7 րութեամբն զա՟ծպաշտութիւն։ * Եւ՛ ա՟ծպաշտութեամբն զեղբայրսիրութի՟, եւ եղբայրսիրութ՟բն
8 զսէր։ * Զայսոսիկ ձեր յանձին կալեալ՝ եւ 'ի սոյն յաճախեալ՝ ոչ դատարկս եւ անպտուղս զձեզ հաստատեսցէ 'ի Տ՟ն մերոյ Յի՟ Քի՟ գիտութիւնն։

9 * Իսկ յոր ոչն իցեն սոքա մերձ, կոյր է և շլա-
ցու ։ ՚ի մոռացումն դարձուցեալ զսրբութիւն
10 առաջնոց իւրոյն յանցանաց ։ * Վ̅ն որոյ եղբարք՝
առաւել փութասջիք՝ զի բարեայն գործովք
հաստատուն զձեր կոչումն, և զընտրութիւն պա-
հիցէք ։ զայս արարեալ՝ ոչ երբէք յանցանիցէք ։
11 * Զի այսպէս առատապէս շնորհեսցի ձեզ մուտ
՚ի յաւիտենական արքայութիւն Տ̅ն մերոյ և փրկչին
ԴԵ․ Յիսուսի Քրիստոսի ։
12 * Որում պատրաստիցիմ միշտ ձեզ յիշեցուցանել
վասն սոցին առաւել ևս գիտակայն՝ և հաստատե-
13 լոյն եկեալ հասեալ ճշմարտութիւնն ։ * Քանզի
իրաւունս համարիմ մինչդեռ եմ ՚ի մարմնի աստ՝
14 զարթուցանել զձեզ յիշատակօք ։ * Գիտեմ թէ
վաղվաղակի է լինելոց մերկանալ յինէն մարմնոյս․
որպէս և Տէր մեր Յ̅ս Ք̅ս եցոյց ինձ ։
15 * Ե՛ւ փութամ ճեպիմ միշտ զձեզ յորդորել ։ զի
և յետ իմոյ ելանելոյ յաշխարհէս՝ առնիցէք զյիշա-
16 տակս այսոցիկ ։ * Քանզի ոչ եթէ պաճուճեալ
ինչ առասպելաց զհետ երթեալ ցուցաք ձեզ զՏ̅ն
մերոյ Յ̅ի Ք̅ի զզօրութիւնն, և զգալուստն ։ այլ
մեկէն եղեալ ականատեսք նորա մեծութեանն ։
17 * Քանզի առեալ յԱ̅Յ Հօրէ զփառս և զպատիւ․
եկեալ յայնպիսւոյ բարբառոյ՝ ՚ի մեծ վայելչութե̅
փառաց անտի․ եթէ դա է Որդի իմ սիրելի՝ ը̅
18 որ ես հաճեցայ․ * Ե՛ւ զայս բարբառ մեք իսկ լու-
աք եկեալ յերկնից՝ որք ընդ նմա իսկ էաք ՚ի
19 սուրբ լերինն ։ * Ե՛ւ ունիմք հաստատագոյն զբանն
մարգարէական․ որում եթէ անսայցէք՝ բարւոք
առնէք․ իբրև ճրագի՝ որ տայցէ զլոյս ՚ի խաւար-
չուտ տեղւոջ, մինչև տիւն լուսաւորեսցի, և արու-
սեակն ծագեսցի ՚ի սիրտս ձեր ։
20 ԴԶ․ * Բայց նախ զայս գիտակ լինիջիք․ զի
ամենայն մարգարէութիւն իւրոյ գրոյ լուծումն
21 ոչ լինի ։ * Քանզի ոչ եթէ ըստ կամաց մարդ-
կան առաւ մարգարէութիւն երբէք․ այլ ՚ի Հոգ-
ւոյն սրբոյ կրեալք՝ խօսեցան մարդիկք յԱ̅Յ ։

ԳԼ. Բ։

1 Լինէին և սուտ մարգարէք 'ի ժողովրդեանն՝ ոպ՟
և այժմ 'ի ձեզ լինիցին սուտք վարդապետք.
որք սպրդեալ մուծանեն հերձուածս կորստեան։
և զորս Տ՟ն գնեաց զնոսա՝ ուրացեալք՝ ածեն 'ի
վերայ անձանց զերագահասն կորուստ։
2 * Եւ բազումք անկեալք երթիցեն զհետ նոցա անառակութեանցն։ վասն որոյ ճշմարտութեանն
3 ճանապարհ հայհոյիցի։ * Եւ ագահութեամբ մտա
ցածին բանիւք առնիցեն զձեզ վտարանդի։ որոց
դատաստանն 'ի բնէ ոչ դատարկանայ. և կորուստ
4 նոցա ոչ նիրհեսցէ։ * Զի եթէ 'ի հրեշտակսն
յանցուցելոց՝ Ա՟ծ ոչ խնայեաց՝ այլ խաւարային
կապանօք արկեալ 'ի տարտարոսն՝ ետ պահել 'ի
5 դատաստանն։ * Նա և ոչ 'ի սկզբանն աշխարհի
խնայեաց. բայց զութերորդն զՆոյ՝ զարդարութեան
քարոզ պահեաց՝ 'ի ջրհեղեղէ աշխարհի ամբարշտե
6 լոյն ածեալ։ * Եւ զքաղաքս սոդոմայեցւոց և գոմորայեցւոց դարձուցեալ յաճիւն՝ դատեցաւ։ օրինակ
առ յապայ ամբարշտելոյն կացուցանէր։
7 * Եւ զարդարն զղօտ ձանձրացեալ յանկարգ գի-
8 ճութեանն գնացից փրկեաց։ * Քանզի ականատես և ականջալուր արդարն բնակեալ 'ի մէջ ն՟ց.
օրըստօրէ զիւր զսուրբ հոգին նոցա անօրէն գնացիւքն տանջէր։
9 ԳԻ. * Գիտէ Տ՟ր զա՟ծապաշտս փրկել 'ի փորձութե՟է. և զանիրաւս պահել 'ի տանջանս յաւուրն
10 դատաստանի։ * Մանաւանդ՝ որք զհետ մարմնոյ
պղծալից ցանկութեանց իցեն երթեալք։ արհամարհօղք Տ՟րութե՟ն՝ ժպիրհք՝ յանդգունք. չզան-
11 գիտեն զփառսն հայհոյել։ * Ուր հրեշտակք զօրութեամբ և կարողութեամբ քան զնոսա մեծամեծք՝ չածեն զնոքօք զհայհոյութե՟ն դատաստան։
12 * Այլ սոքա իբրև զանխօս անասունս՝ ըստ բնածին բարուցն յեղծումն և յապականութիւն՝ որոց
չենն տեղեակ, հայհոյեն յապականութեան իւրեանց՝
13 և ապականեսցին։ * Տանջեալք 'ի վարձուց անիրա

ւութեան։ որք զցանկութիւն զաւուրն փափկութիւն
համարին։ բծկանք՝ արատաւորք՝ փափկացեալք
'ի պատիրս իւրեանց․ լեալ ձեզ խրախճանակիցք։
14 * Աչս ունին համդոյնս պոռնկաց․ անդադարս
'ի մեղաց՝ պատրել զանձինս յողդողդաց․ որք ունին
զսիրտ հարեալ զագահութեամբ, մանկունք
15 անիծից։ * Թողեալ զուղղորդ ճանապարհն՝ մոլորեցան։
զհետ երթեալ ճանապարհին բաղաամայ
բէօրեանց՝ զվարձս անիրաւութեան սիրեցին։
16 * Որ կշտամբանս իւրոյ անօրէնութեանն ստացաւ
զէշն անխօսուն․ մարդկեղէն բարբառովն բարբառեալ՝
արգել զմարգարէին զանօրէնութիւնն։
17 * Այսպիսիքն են աղբիւրք անջրդիք՝ և մէգք վարեալք
'ի մրրկէ, որոց աղջամուղջք խաւարին յաւիտեան
18 պահեալ կան։ * Քանզի զմեծաբանս սնոտեաց
բարբառեալ՝ պատրեն գիճուե̅ք ցանկութե̅
մարմնոյ զայնոսիկ՝ որք ստոյգն փախչիցին յայնցանէ՝
19 որք 'ի մոլորութե̅ն շրջիցին։ * Նոցա զազատութիւն
խոստանան, և ինքեանք ապականութե̅ն
ծառայք են․ զի որով իւիք յաղթիցի ոք՝ նորին
20 և ծառայ է։ * Զի եթէ փախուցեալք 'ի պղծութեանց
աշխարհի գիտութեամբ Տն̃ մերոյ, և փրկչին
Յի̃ Քի̃․ և դարձեալ ընդ նոյնս շաղեալք
պատիցին՝ եղև նց̃ վախճանն չար քան զառաջինն։
21 * Զի լաւ էր նոցա՝ եթէ բնաւ իսկ չէր ծանուցեալ
զարդարութեան ճանապարհ․ քան թէ ծանեան՝
և յետս կացին 'ի սուրբ պատուիրանէն՝ որ
22 նոցա աւանդեցաւ։ * Եկեալ 'ի դէպ նոցա ճշմարիտ
առակին դժնութեան, եթէ շուն դառնայ
անդրէն 'ի փսխած իւր․ և խոզ լոացեալ՝ ընդ
տիղմ թաւալեալ։

Գլ․ Գ․

1 Զայս ձեզ սիրելիք երկրորդ թուղթ գրեմ․
Եկ․ որովք զարթուցից 'ի յիշատակ զհաստատուն
2 միտս ձեր։ * Յիշել զյառաջագոյն ասացեալ
պատգամսն 'ի սրբոց մարգարէից և յառաքելոցն

3 ձերոց. զպատուէրս Տն և փրկչին: * Բայց զայս
նախ գիտասջիք՝ զի յաւուրս յետինս եկեսցեն ար
համարհօղք՝ այպանօղք: որք ըստ իւրեանց ցանկու
4 թեանց գնասցեն: * Եւ ասիցեն: ո՞ւր են աւետիք
գալստեան նորա. զի յորմէ հետէ հարքն ննջեցին՝
ամենայն ինչ նոյնպէս կայ մնայ 'ի սկզբանէ արա-
5 րածոց: * Եւ զայն մոռացեալ լիցէ նոցա՝ որք
զայն կամին. եթէ երկինք էին 'ի սկզբանէ՝ և
երկիր 'ի ջրոյ. և ջուրք հաստատեալ բանիւն Այ
6 * Վասն որոյ երբեմն աշխարհ ջրհեղեղաւ ապա-
7 կանեալ՝ կորեաւ: * Եւ այժմ երկինք և երկիր
նովին բանիւ գանձեալ են: հրոյ պահեալք յօրն
դատաստանի՝ և կորստեան ամբարիշտ մարդկան:
8 ԵԲ. * Եւ այս և մի լիցի 'ի ձէնջ ծածկեալ
սիրելիք. զի մի օր Տն իբրև զհազար ամ է. և
9 հազար ամ իբրև զմի օր: * Ո՛չ յամեցուցէ Տր
զաւետիսն՝ որպէս ոմանք յամր համարին. այլ եր
կայնամիտ լինի առ ձեզ: քանզի ո՛չ կամի եթէ
ոք կորիցէ. այլ ամենեցուն հասանել յապաշխա-
ԵԳ. րութիւն:

10 * Այլ եկեսցէ օր Տեառն իբրև զգող: յորում
երկինք տագնապաւ անցցեն: և բնութիւնք հրով
կիզեալք լուծցին: և երկիր՝ և որ 'ի նմա գործք
11 գտանիցին: * Եւ 'ի լուծանիլ այսպէս այսր ամի,
որպիսի ինչ պարտ իցէ ձեզ գտանիլ. այլ սուրբ
12 և ամենապաշտ կարգաւ ակնունիլ: * Եւ փութալ
հասանիլ գալստեան աւուրն Տն. յորում երկինք
հրայրեացք լուծանիցին, և բնութիւնք հրդե-
13 հեալք հալիցին: * Նորոց երկնից՝ և նորոյ երկրի
ըստ աւետեացն հայեցեալ սպասիցեմք, յորս ար-
ԵԴ. դարութիւնն բնակի:

14 * Վասն որոյ սիրելիք՝ այսոցիկ սպասեալք՝ փութ
անձին ունիցիք՝ անբիծք և անարատք գտանիլ
15 նմա 'ի խաղաղութեան: * Եւ զՏեառն երկայն-
մտութիւն՝ փրկութիւն համարիջիք: զորօրինակ և
սիրելի եղբայրն մեր պօղոս՝ ըստ շնորհելոյ նմա
16 իմաստութեանն գրեաց ձեզ: * Որպէս և յամ
իսկ թուղթսն խօսի վասն այսոցիկ. յորս գտանին

ոչինչ դժուարիմացք. զորս անուսքն և յողդ յողդք կամակորեն. որպէս և զամենայն իսկ գիրս առ իւրեանց անձանցն կորուստ։ 17 * Եւ դուք այսուհետեւ սիրելիք՝ իբրեւ զկանխագէտս զգուշասջիք. զի մի անառակ մոլորութեամբքն զգածեալք՝ անկանիջիք 18 յաստեաց հաստատութենէ։ * Աճեցէք շնորհօք և գիտութեամբ Տ̃ն մերոյ և փրկչին Յ̃ի Ք̃ի ։ նմա փառք՝ և այժմ, և յօրն յաւիտենից. Ամ̃ն.

* * *

ԹՈՒՂԹ
ԵՐԱՆԵԼՒՈՅՆ
ՅՈՀԱՆՆՈՒ
ԱՌԱՔԵԼՈՅ ԱՌԱՋՆԵՐ
ՐՍՐԴ։

Գլուխ Առաջներորդ։

1 ԵԵ. ՈՐ ԷՐՆ ՚Ի ՍԿԶԲԱՆԷ. ԶՈՐ Վէ լուաքն՝ որում ականատեսն իսկ եղեաք։ ընդ որ հայեցաքն, և ձեռք մեր շօշափեցին ՚ի վերայ 2 բանին կենաց։ * Եւ կեանքն յայտնեցան. և տեսաք՝ և վկայեմք՝ և պատմեմք ձեզ զյաւիտենական կենացն, որ էր առ Հօր՝ և երևեցաւ մեզ։ 3 * Զոր տեսաքն՝ և լուաք՝ պատմեմք և ձեզ. զի և դուք զհաղորդութիւն ունիցիք ընդ մեզ. և մեր.

հաղորդութիւնն իցէ ընդ Հօր՝ և ը̄ Որդւոյ իւրում
4 Յի Քի։ * Եւ զայս գրեմք ձեզ. զի ձեր
5 ուրախութիւնն կատարեալ լիցի։ * Եւ այս են
աւետիքն, զոր լուաք ’ի նմանէ՝ և պատմեմք
ձեզ. զի Ած լոյս է՝ և խաւար ’ի նմա չի՛ք և ոչ
6 մի։ * Եթէ ասիցեմք՝ եթէ զհաղորդութիւն ունիմք
ընդ նմա, և ’ի խաւարի շրջիցիմք՝ ստեմք, և
7 ոչ առնեմք զճշմարտութիւնն։ * Իսկ եթէ ընդ
լոյս գնայցեմք՝ որպէս և նա ’ի լոյս է. զհաղորդութիւն
ունիմք ընդ միմեանս. և արիւնն Յի Որդւոյ
8 նորա սրբէ զմեզ յամենայն մեղաց։ * Եթէ
ասիցեմք, եթէ մեղս ինչ մեք ոչ ունիմք՝ զանձինս
խաբեմք. և ճշմարտութիւն ’ի մեզ ոչ գոյ։
9 * Ապա եթէ խոստովան լինիցիմք զմեղս մեր՝ հաւատարիմ
է նա՝ և արդար առ ’ի թողուլ մեզ
զմեղս մեր. և սրբել զմեզ յամենայն անիրաւութենէ։
10 * Եւ եթէ ասիցեմք, եթէ ոչինչ մեղաք՝
սուտ առնեմք զնա. և բան նորա ոչ է ’ի մեզ բնակեալ։

ԳԼ. Բ։

1 Որդեակք իմ, զայս գրեմ ձեզ՝ զի մի՛ մեղիցէք։
ԵԶ. և եթէ մեղիցէ ոք, ունիմք բարեխօս
առ Ած զՅս Քս՝ զարդարն՝ և զանարատն։
2 * Եւ նա է քաւութիւն մեղաց մերոց։ և ոչ եթէ
3 մերոյն միայն՝ այլ և ամենայն աշխարհի։ * Եւ
յայսմիկ գիտեմք՝ եթէ ծանեաք զնա. եթէ զպատուիրանս
4 նորա պահիցեմք։ * Որ ասիցէ, եթէ
ծանեայ զնա. և զպատուիրանս նորա ոչ պահիցէ՝
սուտ է, և ճշմարտութիւն ’ի նմա ոչ գոյ։
5 * Իսկ որ պահիցէ զբան նորա՝ արդարև ’ի նմա է
կատարեալ սէրն Այ։ այսուիկ ճանաչեմք՝ եթէ
6 ’ի նմա եմք։ * Որ ասիցէ ’ի նմա բնակիլ՝ այնպէս
ԵԷ. պարտի գնալ, որպէս և նայն գնաց։
7 * Սիրելիք՝ ոչ եթէ զնոր ինչ պատուիրան
գրեմ ձեզ՝ այլ զհին պատուիրանն, զոր ’ի սկզբանէ
ունէիք. և հին պատուիրան բանն է՝ զոր
8 լուայք։ * Դարձեալ զնոր պատուիրան գրեմ ձեզ՝

որ է ճշմարտին 'ի նմա, և 'ի ձեզ։ զի խաւարն
էանց․ և լոյսն ճշմարիտ արդէն իսկ երևի։
9 * Որ ասէ եթէ 'ի լոյսն իցէ՝ և զեղբայր իւր ատիցէ՝
10 սուտ է՝ և 'ի խաւարի է տակաւին։ * Որ սիրէ
զեղբայր իւր, 'ի լոյս բնակէ, և գայթակղութիւն
11 'ի նմա չի՛ք։ * Իսկ որ ատեայ զեղբայր իւր՝ 'ի խա
ւարի է․ և ընդ խաւարի շրջի․ և ո՛չ գիտէ յո՛
երթայ՝ զի խաւարին կուրացոյց զաչս նորա։
12 * Գրեմ ձեզ որդեակք՝ զի թողեալ են ձեզ
13 մեղք վասն անուա՛ն նորա։ * Գրեմ ձեզ հա՛րք՝
զի ծանեայք դուք զայն՝ որ 'ի սկզբանէն է։ գրեմ
ձեզ երիտասարդք․ զի յաղթեցէք դուք չարին։
14 * Գրեմ ձեզ մանկունք՝ զի ծանեայք դուք զՀայր։
գրեցի ձեզ հա՛րք․ զի ծանեայք դուք զայն․ որ
'ի սկզբանէն է։ գրեցի ձեզ երիտասարդք՝ զի էք
դուք հզօրացեալք՝ և բանն Այ 'ի ձեզ բնակէ, և
15 յաղթեցիք դուք չարին։ * Մի՛ սիրէք զաշխարհ՝
16 և մի՛ որինչ յաշխարհի է։ * Եթէ ոք սիրէ զաշխարհ՝
ո՛չ է 'ի նմա սէր Հօր։ զի ամենայն որինչ յաշխար
հի է՝ ցանկութիւն է մարմնոյ, և ցանկութիւն է
աչաց․ և ամբարտաւանութիւն աստի կենցաղոյս․ որ ո՛չ է
17 առ 'ի Հօրէ՝ այլ յաշխարհէ աստի է։ * Աշխարհս
անցանէ և ցանկութիւնն։ իսկ որ առնէ զկամս Այ՝
Զկ․ մնայ յաւիտեան։
18 * Որդեակք, յետին ժամանակ է․ և որպէս
լուայք եթէ նեռն գալոց է՝ և արդէն իսկ նե-
ռինք բազումք եկեալք են։ ուստի մարթիմք 'ի մա-
19 նալ՝ եթէ յետին ժամանակ է։ * Առ 'ի մէնջ ելին,
այլ ո՛չ էին 'ի մէնջ․ զի եթէ 'ի մէնջ էին՝ ապա
Զլ․ առ մեզ մնային։ այլ զի յայտնի լինիցին,
20 եթէ ո՛չ էին ամենեքին 'ի մէնջ։ * Եւ դուք
զօծութիւն ունիք առ 'ի սրբոյն․ և գիտէք ամենե
21 քին։ * Ո՛չ գրեցի ձեզ՝ եթէ ո՛չ գիտէք զճշմար
տութիւնն․ այլ թէ գիտէք զնա․ և թէ՝ զի ամե
նայն ստութիւն ո՛չ է 'ի ճշմարտութենէ անտի։
22 * Իսկ ո՞վ է սուտ՝ եթէ ո՛չ որ ուրանայ թէ Յս չէ
Քս։ նա իսկ է նեռն․ որ ուրանայ զՀայր և
23 զՈրդի։ * Ամենայն որ ուրանայ զՈրդի, և ո՛չ

զՀայր ընդունի : իսկ որ խոստովանի զՈրդի, և
24 զՀայր ընդունի : * Դուք՝ զոր լուայքն ՚ի սկզբանէ՝ ՚ի ձեզ բնակեսցի. զի եթէ ՚ի ձեզ բնակեսցի,
զոր ՚ի սկզբանէն լուայք՝ և դուք յՈրդի և ՚ի
25 Հայր բնակեսջիք : * Եւ այս են աւետիքն՝ զորս
աւետարանեաց նա մեզ՝ զկեանսն յաւիտենականս :
26 * Զայս գրեցի ձեզ, զի մի ոք զձեզ մոլո-
27 րեցուսցանիցէ : * Եւ դուք օծութիւնն՝ զոր ընկալայք ՚ի նմանէ՝ բնակեսցի ՚ի ձեզ. զի չէ ինչ պիտոյ՝ թէ ոք զձեզ ուսուսցէ : այլ որպէս նորա
օծութիւնն ուսուցանիցէ զձեզ վս͞ ամենայնի՝ և
ճշմարիտ է՝ և չէ սուտ. և որպէս ուսոյց զձեզ,
28 կայք ՚ի նմա : * Եւ այժմ որդեակք՝ կացէք ՚ի
նմին. զի եթէ յայտնեսցի, ունիցիմք համարձակութիւն. և մի ամաչեսցուք ՚ի նմանէ ՚ի գալըս
29 տեառնն նորա : * Զի եթէ գիտիցէք՝ եթէ արդար
է նա, իմասջիք, եթէ ամենայն, որ առնէ զարդարութիւն՝ առ ՚ի նմանէ ծնեալ է :

ԳԼ. Գ.

1 Տեսէք՝ զորպիսի սէր շնորհեաց մեզ Հայր. զի
որդիք Ա͞Յ կոչիցուք և եմք : վասն այսորիկ աշխարհ ոչ ճանաչէ զմեզ՝ քանզի ոչ ծանեաւ զնա :
2 Զ͞Գ. * Սիրելիք՝ այժմ որդիք Ա͞Յ եմք: և չև ևս
է յայտ՝ եթէ զինչ լինելոց իցեմք : գիտեմք, զի
յորժամ նա յայտնեսցի՝ նմա նման լինելոց եմք.
3 զի տեսանելոց եմք զնա՝ որպէս և էն : * Եւ ամենայն, որ ունի զայս յոյս յանձին՝ սրբէ զանձն իւր՝
4 որպէս և նա սո͞ւրբ է : * Ամենայն, որ զմեղս գործէ,
նա և զանօրէնութիւնս առնէ՝ և ինքն իսկ մեղքն
5 անօրէնութիւն է : * Եւ գիտեմք՝ զի նա յայն սակս
յայտնեցաւ՝ զի զմեղս բարձցէ՝ և ՚ի նմա մեղք ոչ
6 են : * Ամենայն, որ ՚ի նմա է հաստատեալ՝ ոչ
մեղանչէ. և ամենայն, որ մեղանչէ՝ ոչ ետես զնա՝
և ոչ ծանեաւ զնա :
7 Զ͞Գ. * Մանկունք՝ մի ոք զձեզ խաբեսցէ : որ
առնէ զարդարութիւն, արդար է՝ որպէս և նայն

ա բ գ դ ե զ է

8 արդար է : * Եւ որ առնէ զմեղս, 'ի սատանայէ
է : զի 'ի սկզբանէ սատանայ մեղանչէ : վն̃ այնորիկ
յայտնեցաւ Որդին Այ՝ զի լուծցէ զգործս սատանայի :

9 * Ամենայն որ յԱյ է ծնեալ՝ մեղս ոչ առնէ. զի
սերմն նորա 'ի նմա մնայ, և ոչ կարէ մեղանչել՝
10 զի յԱյ է ծնեալ : * Այսուիկ յայտնի են 'ի միմեանց
որդիք Այ՝ և որդիք սատանայի : Ամ որ ոչ առնէ
զարդարութիւն՝ չէ նա յԱյ, և որ ոչ սիրէ
11 զեղբայր իւր : * Զի այս է պատուիրանն՝ զոր լուայք
'ի սկզբանէ՝ զի սիրեսջիք զմիմեանս :
12 * Ոչ որպէս Կայէն 'ի չարէ անտի էր՝ և սպան
զեղբայր իւր : և յո՞ր սակս սպան զնա. զի իւր
13 գործքն չարք էին, և եղբօրն բարիք : * Եւ մի
ինչ զարմանայք եղբարք, եթէ աշխարհ զձեզ ատեայ :
14 * Մեք գիտեմք՝ զի փոխեցաք 'ի մահուանէ
'ի կեանս. քանզի սիրեմք զեղբարս : Իսկ որ
15 ոչն սիրէ՝ անդէն 'ի մահուն մնայ : * Ամենայն, որ
ատէ զեղբայր իւր՝ մարդասպան է : և գիտէք՝ զի
ամենայն մարդասպան ոչ ունի զկեանսն յաւիտենականս
16 յանձին հաստատեալ : * Այսուիկ գիտացաք
զսէրն Այ. զի նա զանձն իւր եդ վասն մեր.
և մեք վասն եղբարց մերոց պարտիմք դնել զանձինս :
17 * Որ ունիցի զկեանս ինչ յաշխարհիս՝ և
տեսանիցէ զեղբայր իւր կարօտեալ իւիք՝ և փակիցէ
զգութ իւր 'ի նմանէ. զիա՞րդ սէրն Այ 'ի նմա
18 լիցէ բնակեալ : * Որդեակք՝ մի բանիւք և լեզուօք
սիրեսցուք. այլ արդեամբ և ճշմարտութեամբ :
19 * Եւ աստուստ լիցուք ծանուցեալք՝ եթէ 'ի ճշմարտութենէ
անտի իցեմք : և առաջի նորա արասցուք
20 զհանդէս սրտից մերոց : * Զի եթէ ստգտանիցեն
զմեզ սիրտք մեր՝ այլ Ած մեծ է քան զսիրտս
Զ Զ . մեր՝ և գիտէ զամենայն :
21 * Սիրելիք՝ եթէ սիրտք մեր զմեզ ոչ
ստգտանիցեն, զհամարձակութիւն ունիմք առ Ած :
22 * Եւ զոր ինչ հայցիցեմք, առնուցումք 'ի նմանէ.
զի զպատուիրանս նորա պահեմք. և զհաճոյս առաջի
23 նորա առնեմք : * Եւ այս է պատուիրան նորա՝

զի հաւատասցուք յանուն Որդւոյ նորա Յի Քի։
և սիրեսցուք զմիմեանս՝ որպէս և ետ մեզ պատուէր։
24 * Եւ որ պահէ զպատուիրանս նորա՝ 'ի նմա
է հաստատեալ՝ և նա 'ի սմա։ և յայսմանէ գիտեմք՝
եթէ բնակէ 'ի մեզ 'ի Հոգւոյ անտի, զոր ետ մեզ։

Գլ. Գ.

1 Սիրելիք՝ մի ամենայն հոգւոյ հաւատայք, այլ ընտրեցէք
զհոգիսն՝ եթէ յԱյ իցեն։ զի բազում
2 սուտ մարգարէք ելեալ են յաշխարհ։ * Եւ մեք
այսուիկ ճանաչեմք զհոգին Այ։ Ամենայն հոգի,
որ խոստովանի զՅս Քս մարմնով եկեալ՝ յԱյ է
3 նա։ * Եւ ամենայն հոգի, որ ոչ խոստովանի զՅս
մարմնով եկեալ՝ չէ նա յԱյ։ և այս Նեռին է․
զորմէ լուայք եթէ գալոց է, և արդէն իսկ յաշխարհի
4 է։ * Դուք յԱյ էք որդեակք՝ և յաղթեցէք
նոցա․ զի մեծ է՝ որ 'ի ձեզդ է՝ քան զայն
5 որ յաշխարհին է։ * Նոքա յաշխարհէ են․ վասն
այնորիկ յաշխարհէ խօսին․ և աշխարհ լսէ նոցա։
6 * Մեք յԱյ եմք։ որ զԱծ ճանաչէ, լսէ մեզ։ և
որ չէ յԱյ՝ ոչ լսէ մեզ։ այսուիկ ճանաչեմք զհոգին
ճշմարտութեան և զհոգին խաբէութեան։
7 ԶԻ․ * Սիրելիք՝ սիրեսցուք զմիմեանս։ զի սէր
յԱյ է։ և ամենայն որ սիրէ՝ յԱյ է ծնեալ և
8 ճանաչէ զԱծ։ * Եւ որ ոչն սիրէ՝ ոչ ճանաչէ
9 զԱծ, զի Ած սէր է։ * Եւ զի յայսմ երևեցաւ
սէրն Այ 'ի մեզ՝ զի զՈրդին իւր միածին առաքեաց
յաշխարհ, զի եղիցուք նովաւ կենդանիք։
10 * Յայսմ է սէրն․ ոչ զի մեք սիրեցաք զԱծ՝ այլ
զի նա սիրեաց զմեզ։ և առաքեաց զՈրդին իւր 'ի
քաւութիւն մեղաց մերոց։
11 * Սիրելիք՝ եթէ Ած այնպէս սիրեաց զմեզ․ ապա
12 և մեք պարտիմք զմիմեանս սիրել։ * Զած ուրուք
երբէք չէ տեսեալ։ եթէ սիրեսցուք զմիմեանս՝
Ած 'ի մեզ բնակի․ և սէր նորա 'ի մեզ կատարեալ
13 է։ * Այսուիկ գիտեմք, եթէ մեք 'ի նմա
բնակեալ եմք՝ և նա 'ի մեզ՝ զի 'ի Հոգւոյն իւրմէ

14 ետ մեզ: * Եւ մեք տեսաք՝ և վկայեմք, զի Հայր
առաքեաց զՈրդին իւր փրկիչ աշխարհի:
15 * Որ ոք խոստովանեսցի եթէ Յս է Որդի Այ,
16 Ած 'ի նմա բնակի, և նա յԱծ: * Եւ մեք հաւատացաք՝
և ծանեաք զսէրն Այ, զոր ունի առ մեզ:
Ած սէր է. և որ կայ 'ի սէրն՝ բնակեալ է յԱծ.
17 և Ած 'ի նմա բնակի: * Յայսմիկ կատարեալ է
սէր նորա 'ի մեզ. զի զհամարձակութիւն ունիցիմք
յաւուրն դատաստանի: զի որպէս նայն է՝ նոյնպէս
18 և մեք եմք յաշխարհի յայսմիկ: * Երկիւղ ոչ
գոյ 'ի սէր, այլ սէրն կատարեալ 'ի բաց մերժէ զերկիւղ:
զի երկիւղ ընդ տանջանօք է: իսկ որ երկնչի,
19 չէ կատարեալ 'ի սէրն: * Մեք սիրեսցուք
20 զԱծ՝ վասն զի նախ նա սիրեաց զմեզ: * Եթէ
ոք ասիցէ, եթէ սիրեմ զԱծ, և զեղբայր իւր
ատիցէ՝ սուտ է: որ ոչ սիրէ զեղբայր իւր՝ զոր տեսանէ.
զԱծ, զոր ոչն ետես՝ զիարդ կարիցէ սիրել:
21 * Եւ զայս պատուէր ունիմք առ 'ի նմանէ. զի որ
սիրէ զԱծ, սիրէ նա և զեղբայր իւր:

ԳԼ. Ե:

1 Ամենայն որ հաւատայ՝ եթէ Յս է Քսն, յԱյ
ԵԿ. ծնեալ է: և ամենայն որ սիրէ զծնօղն, սիրէ և
2 զծնեալն 'ի նմանէ: * Այսուհիկ ճանաչեմք՝ եթէ սիրեմք
զՈրդին Այ. յորժամ զԱծ սիրեսցուք՝ և զպատուիրանս
3 նորա արասցուք: * Քանզի այս է սէրն
Այ, եթէ զպատուիրանս նորա պահեսցուք. և պատուիրանք
4 նորա չեն ինչ ծանունք: * Զի ամենայն,
որ յԱյ ծնեալ է՝ յաղթէ աշխարհի: և այս է
յաղթութիւնն՝ որ յաղթէ աշխարհի՝ հաւատքն
5 մեր: * Եւ ո՞ իցէ, որ յաղթիցէ աշխարհի. եթէ
ոչ՝ որ հաւատայցէ՝ եթէ Յս է Որդի Այ:
6 * Սա է՝ որ եկն ջրով (և հոգւով) և արեամբ,
Յս Քս: ոչ ջրով միայն. այլև արեամբ և ջրով:
և Հոգին է՝ որ վկայ է, եթէ Քս է ճշմարտութիւնն:
7 * Զի երեք են, որք վկայեն յերկինս:
Հայր, Բանն, և Հոգին սբ. և երեքեան մի են:

8 * Եւ երեք են, որք վկայեն յերկրի։ Հոգի,
ջուր, և արիւն. և երեքեան մի են։
9 * Եթէ զմարդկան ինչ վկայութիւն ունիցիմք՝
ապաքէն Այ վկայութիւն մեծ իցէ։ Այս է վկայու
թիւն Այ. զի վկայեաց 'ի վերայ Որդւոյն իւրոյ։
10 * Որ հաւատայ յՈրդին Այ, ունի յանձին զվկայու
թիւնս զայս։ որ ոչ հաւատայ Որդւոյ Այ, սուտ
առնէ զնա։ քանզի ոչ հաւատայ վկայութեանն,
զոր վկայեաց Ած 'ի վերայ Որդւոյ իւրոյ։
11 * Եւ այս իսկ է վկայութիւն. զի զկեանս յաւիտե-
նականս ետ մեզ Ած։ և այս են կեանք՝ որ յՈր-
12 դին նորա են։ * Որ ընդունի զՈրդի, ընդունի
և զկեանս։ և որ ոչ ընդունի զՈրդին Այ, և ոչ
զկեանս ընդունի։
13 * Զայս գրեցի ձեզ՝ զի գիտասջիք՝ թէ կեանս
յաւիտենականս ունիք. և զի հաւատայցէք յանուն
14 Որդւոյն Այ։ * Եւ այս է համարձակութիւն՝ զոր
ունիմք մեք առ նա։ զի զորինչ հայցեսցուք ըստ
15 կամաց նորա, լսէ մեզ։ * Զի եթէ գիտեմք՝ եթէ
լսէ հայցուածոյն մերոց. ապա գիտեմք՝ եթէ առ
նումք զհայցուածսն՝ զոր հայցեմք առ 'ի նմանէ։
16 * Եթէ ոք տեսցէ զեղբայր իւր մեղուցեալ մեղս,
որ ոչ առ 'ի մահ. խնդրեսցէ՝ և տացի նմա
կեանս, մեղուցելոյն ոչ առ 'ի մահ։ են մեղք՝ որք
մահուչափք են. ոչ վս այնորիկ ասեմ, եթէ խնդ
17 րեսցես։ * Ամենայն անիրաւութիւն, մեղք են. և
18 են մեղք՝ որք մահուչափք են։ * Գիտեմք եթէ
ամենայն, որ յԱյ է ծնեալ՝ ոչ մեղանչէ։ այլ որ
յԱյն է ծնեալ՝ պահէ զանձն. և չար առ նա ոչ
19 մերձենայ։ * Գիտեմք եթէ յԱյ եմք, և աշխարհ
20 ամենայն 'ի չարի կայ։ * Եւ գիտեմք՝ եթէ Որդին
Այ եկն, և ետ մեզ միտս. զի ծանիցուք զՃշմարիտն
Ած։ և իցեմք 'ի Ճշմարտի Որդւոյ նորա Յի Քի,
զի նա է Ճշմարիտ Ած՝ և կեանք յաւիտենականք։
21 * Որդեակք, պահեցէք զանձինս 'ի կռապաշտութէ։

* * *

ԹՈՒՂԹ
ԵՐԱՆԵԼՒՈՅՆ
ՅՕՀԱՆՆՈՒ
ԱՌԱՔԵԼՈՅ
ԵՐԿՐՈՐԴ:

1 էգ. ՅԵՐԻՑՈՒԷ ԱՌ ԸՆՏՐԵԱԼԴ
կիւրիա. և առ որդեակս իւր. զոր ես սիրեմ
ճշմարտութեամբ: և ոչ եթէ ես միայն, այլ
և ամենեքեան, որք գիտակք են ճշմարտութեանն:
2 * Վասն ճշմարտութեանն, որ 'ի մեզ հաստատեալ
է. զի և ընդ ձեզ իցէ. և դուք յաւիտենից
3 ընդ մեզ իցէք: * Շնորհք՝ ողորմութիւն,
խաղաղութիւն յԱՅ Հօրէ. և 'ի ՏԷ ՅԷ ՔԷ
Որդւոյն Հօրն՝ ճշմարտութեամբ և սիրով եղիցին
4 ընդ ձեզ: * Ուրախ եղէ յոյժ. զի գտի յորդեկացդ
քոց՝ որք գնան ճշմարտութեամբ, ըստ պատուիրանին
զոր առաք 'ի Հօրէ:
5 * Եւ այժմ աղաչեմ զքեզ կիւրիա. իբրև ոչ
եթէ զնոր ինչ պատուիրան գրեմ քեզ. այլ զոր
'ի սկզբանէ ունէաք, զի սիրեսցուք զմիմեանս:
6 * Եւ այս է սէրն, զի գնասցուք ըստ պատուիրանացն
նորա: և այս է պատուիրանն, զի որպէս լուարուք
7 'ի սկզբանէ՝ ըստ նմին գնասջիք: * Զի բազում
մոլորեցուցիչք ելին յաշխարհ: որք ոչ
խոստովանին զՅս Քս եկեալ մարմնով, նա մոլորեցուցիչ
8 է, և նեռն: * Զգոյշ լինիջիք անձանց՝
զի մի կորուսանիցէք՝ զոր վաստակեցիքն. այլ զի
առնուցուք բովանդակ զվարձս:

9 * Ամենայն, որ յանցանէ՝ և ոչ կայ ՚ի վարդապետ-
ԼԴ· ութ͞են Ք͞ի, զԱ͞ծ ոչ ճանաչէ: որ կայ ՚ի վար
դապետութեանն, նա՝ և զՈրդի և զՀայր ընդունի:
10 * Եթէ ոք գայցէ առ ձեզ, և զվարդապետու-
թիւնս զայս ոչ ունիցի, մի ընդունիցիք զնա ՚ի
11 տուն. և մի ողջոյն տայցէք նմա: * Եւ որ տաս-
ցէ նմա ողջոյն՝ կցորդ լինի չարեաց գործոց ն͞ր:
12 * Բազում ինչ ունէի գրել ձեզ՝ այլ ոչ կամե-
ցայ քարտիսիւ և դեղով գրել: զի ակն ունիմ ին-
ձէն իսկ գալ առ ձեզ. և բերան ՚ի բերան խօսիլ.
13 զի ուրախութ͞ին մեր իցէ կատարեալ: * Ողջոյն
տան քեզ որդիք քեռ քո ընտրելոյ: Շնորհք
ընդ ձեզ:

ԹՈՒՂԹ
ԵՐԱՆԵԼԻՈՅՆ
ՅՈՀԱՆՆՈՒ
ԱՌԱՔԵԼՈՅ ԵՐՐՈՐԴ·

ԼԵ· ՅԵՐԻՑՈՒԷ ԱՌ ԳԱՅԻՈՍ ՍԻ-
2 րելի. զոր ես սիրեմ ճշմարտութ͞բ: * Սիրելի,
վասն ամ͞ իրաց քոց յաջողութ͞ե, և առողջութ͞ե,
աղօթս առնեմ. որպէս է իսկ յաջողութ͞ի ան-
3 ձինդ քո: * Յոյժ ուրախ եղէ ՚ի գալ եղբարցն՝ և
լինել վկայ քոյոյ ճշմարտութեանդ. որպէս գնաս
4 դու ճշմարտութեամբ: * Մեծ ևս ինչ ուրախու-
թիւն քան զայս ոչ ունիմ, զի լսիցեմ թէ իմ
5 որդեակքն ճշմարտութ͞բ գնան: * Սիրելի, հաւա-

տարիմ գործես զայդ՝ զոր թէ առնիցես առ եղբարս՝
6 զդոյն և առ օտարս: * Որք վկայեցին զքո
սիրոյդ առաջի եկեղեցւոյ: որոց բարիս արարեալ
7 յուղարկես արժանի Այ: * Զի վասն անուան
ելին, և զոչինչ յումեքէ առնուն զհեթանոսականայն:
8 * Մեք այսուհետև պարտիմք ընդունել
զայնպիսիսն, զի գործակիցք լինիցուք ճշմարտութեան:
9 * Գրեցի ինչ եկեղեցւոյն. այլ որ յառաջադէմն
՚ի նոցանէ է՝ Դիոտրեփէս, ոչ ընդունի զմեզ:
10 Վասն այսորիկ եթէ եկից՝ յիշեցուցից զգործս
նորա, զորս առնէ, բանիւք չարեօք, շատախօսութբ̄
աշխատ առնէ զմեզ: և ոչ այսոքիւք շատացեալ:
ոչ ինքն ընդունի զեղբարս, և զայնոսիկ՝ որք ընդունին,
արգելու: նաև յեկեղեցւոյ եւս հանէ:
11 * Սիրելի՝ մի լինիցիս նմանօղ չարի՝ այլ բարւոյ:
զի որ զբարիս առնէ՝ յԱյ է. և որ զչարիս գործէ՝
12 նա ոչ ետես երբէք զԱծ: * Զդեմետրեայ
վկայեալ յամենեցունց՝ և յեկեղեցւոյն՝ և ՚ի ճշմարտութէ,
և մեք վկայեմք: և դու գիտես՝ զի
ճշմարիտ է մեր վկայութիւնն:
13 * Բազում ինչ ունէի գրել քեզ: այլ ոչ կամիմ
14 թանաքով և դեղով գրել: * Զի ակնունիմ ՚ի
մօտոյ իսկ տեսանել զքեզ. և բերան ՚ի բերան
15 խօսիլ: * Խաղաղութիւն ընդ քեզ: Ողջոյն տան
քեզ սիրելիքն: Ողջոյն տաջիր սիրելեաց մերոց
իւրաքանչիւր յանուանէ:

* * * * *
* * * *
* * *
* *
*

ԹՈՒՂԹ ԿԱԹՈՒՂԻԿԵԱՅՑ
ԵՐԱՆԵԼՒՈՅՆ
ՅՈՒԴԱՅԻ
ԱՌԱՔԵԼՈՅ.

1 էջ. ՅՈՒԴԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ծառայ՝ և եղբայր յակոբայ. հեթանոսաց՝ որք յԱՅ Հօրէ էք սիրեցեալք. և ՅԻ ՔԻ պահեալք և ընտրեալք: 2 * Ողորմութիւն ձեզ՝ և խաղաղութիւն՝ և սէր բազմասցի: 3 * Սիրելիք՝ զամ փոյթ յանձին կալեալ գրել ձեզ վասն մերոյ հասարակաց փրկութեան. հարկ յանձին կալայ գրել ձեզ և աղաչել՝ զի ճգնիցիք ՚ի վերայ հաւատոյն, որ միանգամ աւանդեցաւ սրբոց: 4 * Քանզի սպրդեցին ներս ոմանք (որք յառաջագոյն իսկ կանխագրեալք էին ՚ի սոյն դատաստան:) ամբարիշտք. որք զԱՅ մերոյ շնորհսըն դարձուցին յանկարգութիւն. և զմի միայն իշխանն՝ և զՏէր մեր ՅՍ ՔՍ ուրացեալք: 5 * Յիշեցուցանել ձեզ այսուհետև կամ է ինձ. որք գիտէքդ զամ. զի Աստուած միանգամ փըրկեալ զժողովուրդն յեգիպտոսէ: երկրորդ անգամ զանհաւատսն կորոյս: 6 * Եւ զհրեշտակս՝ որք ոչ պահեցին զիւրեանց իշխանութիւնն, այլ թողին զիւրեանց բնակութիւն, ՚ի դատաստանս մեծի աւուրն՝ մշտնջենաւոր կապանօք պահեաց ՚ի խաւարի: 7 * Որպէս սոդոմ և գոմոր, և որք շուրջ զնոքօք քաղաքքն, որք ըստ նմին օրինակի պոռնկեցան զհետ ընկերացն մարմնոց, կան առաջի օրինակ, զյաւիտենական հրոյն ընկալեալ զդատաստան: 8 * Ըստ նմին օրինակի և սոքա

իբրեւ քնով դանդաչեալք՝ զմարմին պղծեն՝ զՏէ-
9 րութիւն քամահեն՝ զփառս հայհոյեն: *Սւր Մի-
քայէլ հրեշտակապետն՝ յորժամ ը̅ բանսարկուին
սատանայի վիճեալ տայր պատասխանի վասն մօսի-
սեան մարմնոյն: ոչ ժպրհեցաւ հայհոյութեան
դատաստանին հանդուրժել. այլ ասէ՝ սաստեսցէ
10 ՚ի քեզ Տ̅ր: *Իսկ սոքա զորինչ ոչն գիտեն,
հայհոյեն: Եւ զայն եւս՝ զոր բնութեամբ իբրեւ
զանխօս անասունս գիտեն, ՚ի նոյն ապականեցին:
11 *Վայ է նոցա. զի ընդ ճանապարհին կայենի
գնացին: Եւ ընդ մոլորութեանն բաղաամայ ղեղխե-
ցան զհետ վարձուց: Եւ ընդ հակառակութեանն
12 կորխայ կորեան: *Սոքա են ատեցեալք, շոգմոգք՝
երթեալք զհետ ցանկութեանց իւրեանց. ՚ի սէրս
իւրեանց խարդախութեամբ: ըմպին ընդ ձեզ ու-
րախակիցք: աներկիւղ զանձինս ճարակեն: ամպք
անջրդիք հողմակոծեալք: ծառք պտղակորոյսք՝ ան-
պտուղք՝ կրկնամեռք՝ խլեալք արմատաքի:
13 *Անսաստ ալիք ծովու. որք միշտ փրփրեն զիւ-
րեանց զանձանց զամօթ: աստեղք մոլարք. որոց
մէգ խաւարին յաւիտենից պահեալ է:
14 *Մարգարէացաւ վասն նոցա՝ եւ եօթներորդն յա-
դամայ ենովք՝ եւ ասէ: ահաւասիկ եկն Տ̅ր բիւրուք
15 սրբօք՝ հրեշտակօք: *Առնել դատաստան ընդ
ա̅մի: Եւ յանդիմանել զամենայն ամբարիշտս վասն
գործոց իւրեանց, զոր ամբարշտեցան: Եւ վասն ա-
մենայն խիստ բանից, զոր խօսեցան զնմանէ. մեղա-
16 ւորք եւ ամբարիշտք: *Սոքա են տրտնջօղք եւ
շոգմոգք. երթեալք ըստ իւրեանց անձանց ցան-
կութեանց: Եւ բերանք նոցա զամբարտաւանս բար-
ԻԷ. բառնին: առնուն ակն երեսաց վասն օգտի:
17 *Բայց դուք սիրելիք՝ յիշեցէք զկանխասաց
18 բանս առաքելոցն Տ̅ն մերոյ Յ̅ի Ք̅ի: *Զի ասէ-
ին ձեզ. եթէ ՚ի յետին ժամանակս եղիցին մոլորդք
արհամարհօղք. երթեալք ըստ իւրեանց ամբարշ-
19 տութեանցն ցանկութեանց: *Սոքա են նշաւա-
կեալք շնչաւորք. որք զոգին ոչ ունիցին:
20 *Այլ մեք սիրելիք՝ եղիցուք շինել զանձինս սրբ

բութիւն հաւատոյ՚ի Հոգին սր̄. կացցուք յաղօթս :
21 * Պահել զանձինս սիրովն Այ̄ : ակնունիլ ողորմութեան Տ̄ն մերոյ Յ̄ի Ք̄ի ՚ի կեանսն յաւիտենականս :
22 * Եւ ոմանց դատապարտելոց լինիջիք
23 կշտամբիչք : * Եւ զոմանս ապրեցուցանիջիք՝ յափըշտակեալ ՚ի հրոյ : և ոմանց ողորմիջիք երկիւղիւ դատել : և զպատմուճանն, որ ՚ի մարմնոյն իցէ աղ-
24 տեղեալ : * Եւ այնմ, որ կարօղն է պահել զձեզ անարատս և անբիծս, հաստատել առաջի իւրոց
25 փառացն անբերկեան ցնծութեամբ : * Միոյն Այ̄ փրկչին մերոյ Յ̄ի Ք̄ի Տ̄ն մերոյ՝ փառք, մեծութիւն, զօրութիւն, և իշխանութիւն, յառաջ քան զամենայն յաւիտեանս. և այժմ, և յա̄մ յաւիտեանս : Ամէն :

ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ
ԵՐԱՆԵԼԻՈՅՆ
ՅՈՀԱՆՆՈՒ
ԱՌԱՔԵԼՈՅ:

Գլուխ Առաջին :

1 ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ՅԻՍՈՒՍԻ Քրիստոսի ՚ի ձեռն որոյ ետ Ա̄ծ ցուցանել ծառայից իւրոց՝ որ լինելոց է վաղվաղակի : և նշանակեաց առաքելով ՚ի ձեռն հրեշտակի իւրոյ, առ
2 յօհաննէս ծառայ իւր : * Որ վկայեաց զբանէն Այ̄, և զվկայութիւն Յ̄ի Ք̄ի՝ զոր ետես. և որ
3 էր. և որ լինելոցն էր յետ այնորիկ : * Երանի՝

որ ընթեռնու զբանս մարգարութե՟ս այսորիկ: և
որ լուէ՝ և պահէ՝ զորինչ 'ի սմա գրեալէ. զի ժա
4 մանակս մերձեալէ: * Յօհաննէս առ եօթն եկե-
ղեցիսն՝ որք են յասիայ: Շնորհք ընդ ձեզ և խա-
ղաղութ՟ի. յէէն, և որ էն. և որ գալոցն է: և
յեօթն հոգւոյն զօրութ՟է՝ որ է առաջի աթոռոյն
5 նորա: * Եւ 'ի Յէ՟ Քէ՟ հաւատարմէ վկայէն: որ
է անդրանիկ մեռելոյ. և իշխան թագաւորութե՟ց
երկրի: որ սիրեաց զմեզ. և եհան զկապանս մե-
6 ղաց մերոց արեամբն իւրով: * Եւ արար զմեզ
թագաւորս և քահանայս Այ՟ Հօր իւրոյ. նմա
փառք՝ և զօրութիւն՝ յաւիտեանս յաւիտենից:
7 Ամէն: * Ահաւասիկ գալոց է ընդ ամպս երկնից:
և տեսցեն զնա ամենայն աչք. և որք խոցեցինն:
և կոծեսցին 'ի վերայ նորա ամենայն ազգք երկրի:
8 * Այո՛. Ամէն: ես եմ α և օ, առաջինն և վերջինն, ա
սէ Տէր Ած՟. որ էն, և որ է՝ և որ գալոցն է՝
9 Տէր ամենակալ: * Ես յօհաննէս եղբայր ձեր, և
հաւասարակից վշտաց՝ և արքայութե՟, և համբերու
թեան 'ի Քն՟ Յս՟: եղէ ես 'ի կղզին՝ որ կոչի պատ
մոս, վասն բանին Այ՟՝ և վկայութեան Յի՟ Քի՟:
10 * Եւ եղև յիս հոգի յաւուր կիւրակէի: և լուայ
զկնի իմ զձայն մեծ իբրև զփողոյ՝ ասելով:
11 * Զոր տեսանես՝ գրեա 'ի գիրս: և տուր տա-
նիլ առ եօթն եկեղեցիսն՝ որք են յասիայ. յե-
փեսոս. և 'ի զմիւռնիայ. 'ի պերգամոն. և 'ի թի
ւատիր. և 'ի սարդիկայ. և 'ի փիղադելփիայ. և
12 լաւոդիկիայ: * Եւ դարձայ ես տեսանել զձայնն,
որ խօսէր ընդ իս: և 'ի դառնալն իմ տեսի եօթն
13 ճրագարան ոսկի: * Եւ 'ի մէջ ճրագարանացն նման
որդւոյ մարդոյ: զգեցեալ պճղնաւոր: և գօտև
14 որեալ առ ստեամբքն գօտի ոսկեղէն: * Եւ գլուխ
նորա և հեր որպէս զասր սպիտակ՝ և որպէս զձիւն:
15 և աչք նորա որպէս զբոց հրոյ: * Եւ ոտք նորա
նման պղնձի ծխելոյ 'ի մէջ հնոցի հրաշէկ: և ձայն
16 նորա իբրև զձայն ջուրց բազմաց: * Եւ ունէր
յաջ իւր աստեղս եօթն: և 'ի բերանոյ նորա սուր
երկսայրի սրեալ ելանէր: և երեսք նորա իբրև

17 զարեգակն ճառագայթեալ երևիւր ։ * Իբրև տեսի
զնա՝ անկայ առ ոտս նորա որպէս զմեռեալ ։ Եւ
եդ 'ի վերայ իմ զաջ իւր՝ և ասէ . մի՛ երկնչիր ։
18 Ես եմ սկիզբն . և ես եմ վախճան ։ * Ես եմ
կեանք՝ և ես եմ, որ մեռայն ։ Եւ աՀաւասիկ կենդանի
եմ՝ յաւիտեանս յաւիտենից ։ Եւ ունիմ զփականս
19 մաՀու և դժոխոց ։ * Գրեա՛, զոր տեսանեսդ՝
որ են . և որ Հանդերձեալ է լինել յետ այնորիկ ։
20 * Զխորհուրդ եօթն աստեղայն, զորս տեսեր
յաջու իմ, և զեօթն ոսկի ճրագարանացն ։ եօթն
աստեղքն՝ եօթն եկեղեցեաց Հրեշտակքն են ։ Եւ
եօթն աշտանակքն՝ եօթն եկեղեցիքն են ։

ԳԼ. Բ ։

եփ[illegible]եցոց հրեշտակը փիլիպոս

1 Առ Հրեշտակն Եփեսացւոց եկեղեցւոյն գրեա՛ ։
Այսպէս ասէ, որ ունի զեօթն աստեղս յաջ
2 իւր . և շրջի 'ի մէջ աշտանակացն ոսկւոյ ։ * Տեսի
զգործս քո՝ և զվաստակս՝ և զՀամբերութիւն, և
զի ոչ կարես բառնալ զչարսն . և փորձեցեր զնոսա,
որք ասէին զանձինս առաքեալս գոլ՝ և ոչ
էին . և գտեր զնոսա սուտս ։ Եւ բարձեր զնոսա ։
3 * Եւ Համբերեցեր վասն անուան իմոյ՝ և աշխատեցար ։
4 * Այլ ասեմ առ քեզ ։ զի զսէրն քո զառաջինն
5 թողեր ։ * Յիշեա՛, ուստի անկարն՝ և ապաշխարեա՛,
և զառաջին գործսն քո արա՛ ։ ապա թէ
ոչ՝ գամ վաղվաղակի, և շարժեցից զաշտանակս քո
'ի տեղւոջէ իւրմէ՝ եթէ ոչ ապաշխարեսցես ։
6 * Արդ զայս արա՝ զի ատեսցես զգործսն Նիկօղայոսի .
7 զոր և ես ատեմ ։ * Որ ունի ականջս լսելոյ . լուիցէ
զինչ ասէ Հոգին որ առ եկեղեցիս . որ յաղթէ,
տաց նմա ուտել 'ի փայտէն կենաց՝ որ է 'ի
8 մէջ դրախտին Այ ։ * Եւ առ Հրեշտակն զմիւռնացւոց
եկեղեցւոյն գրեա՛ . այսպէս ասէ անսկիզբն,
և անվախճանն . որ եղև մեռեալ՝ և կենդանացաւ ։
9 * Տեսի զգործս քո՝ և զնեղութի՛ և զաղքատութիւն .
այլ աղքատութիւն քո մեծութիւն եղիցի ։
և Հայհոյիս յայնցանէ՝ որք ասեն զինքեանս Հրէայս

յոհան
Հրեշ

10 գոլ՝ և ոչ են. այլ են ժողովք սատանայի: * Մի երկնչիր՝ վասն որոյ կամիս չարչարել. ահա հանդերձեալ է բանսարկուն արկանել 'ի ձէնջ 'ի բանտ. զի փորձիցիք. և ունիցիք նեղութիւն աւուրս տասն: լեր հաւատարիմ մինչև 'ի մահ. և տաց

11 քեզ զպսակն կենաց: * Որ ունի ականջս՝ լուիցէ զինչ Հոգին ասէ առ եկեղեցիս. որ յաղթէ, ոչ

12 անիրաւի յերկրորդ մահուանէն: * Եւ առ հրեշտակն՝ որ 'ի պերգամոնյ եկեղեցւոյն, գրեա. այսպէս ասէ՝ որ ունի զսուրն երկսայրի սրեալ:

[illegible]
Հրեշտա
[illegible]

13 * Տեսի զգործս քո՝ զի բնակեալ ես՝ ուր աթոռն է սատանայի. և ունիս զանուն իմ, և ոչ ուրացար զհաւատս իմ: յաւուր յորում Անթիպաս վկայն իմ հաւատարիմ եղև. (զի վկայ է իմ հաւատարիմ ամենայն հաւատացելոց) որ սպանաւ 'ի ձէնջ՝ ուր

14 սատանայ է բնակեալ: * Այլ ունիմ ասել առ քեզ սակաւ. զի կայ առ քեզ վարդապետութի բաղաամայ՝ որ ուսոյց զբաղակ դնել զգայթագղութիւն առաջի որդւոյն Իլի. ուտել նոցա զզո-

15 հեալ՝ և պոռնկել: * Այսպէս և դու ունիս զվարդապետութիւն Նիկողայեցւոց՝ զոր ես ատեմ:

16 * Արդ՝ ապաշխարեա՛ ապա թէ ոչ՝ գամ վաղվաղակի. և պատերազմեցայց ընդ նոսա սրով բերանոյ

17 իմոյ: * Որ ունի ականջս, լուիցէ զինչ Հոգին ասէ առ եկեղեցիս: որ յաղթէ, տաց նմա ուտել 'ի մանանայէն թաքուցելոյ. և տաց նմա զգիրն սրբութեան: և գրեալ անուն նոր 'ի գիրն. զոր ոչ ոք գիտէ՝ բայց միայն որ առնու:

[illegible]
[illegible]
Հրեշտա
[illegible]

18 * Եւ առ հրեշտակն՝ որ 'ի Թիւատրոյ եկեղեցին՝ գրեա. այսպէս ասէ Որդին Այ. որոյ աչք են իբրև զբոց հրոյ. և ոտք նորա նման պղնձի ծխելոյ:

19 * Տեսի զգործս քո՝ և զսէր՝ և զհաւատ՝ և զպաշտօն քո համբերութեամբ: զի բազում է վաստակ

20 քո վերջինն քան զառաջինն: * Այլ ասեմ առ քեզ բազում. զի թողեր զկինն զեզաբէլ. որ ասէր զինքն մարգարէ. և ուսուցանէր զմոլորութիւն, և պատրէր զծառայս իմ, պոռնկել՝ և ուտել զզոհեալ:

21 * Եւ ետու նոցա ժամանակ ապաշխարել զպոռն-

22 կութիւն իւրեանց՝ և ոչ ապաշխարեցին ։ * Ահաւասիկ ես արկանեմ զնա ՚ի հնոց՝ և զգործակիցս իւր՝ ընդ որս շնացաւ՝ ՚ի նեղութիւնս մեծամեծս․ եթէ ոչ ապաշխարեսցեն ՚ի գործոց իւրեանց ։
23 * Եւ զորդիս նորա սպանից մահուա՛մբ ։ և ծանիցեն ամենայն եկեղեցիք՝ եթէ ես եմ, որ յանդիմանեմ զերիկամունս և զսիրտս․ և տամ ձեզ իւ-
24 րաքանչիւր ըստ գործոց իւրեանց ։ * Այլ ձեզ ասեմ, որք ՚ի Թիւատիր էք․ և ոչ ունիք զվարդապետութիւնս զայս․ որք ոչ ծանեայք զխորհուրդս սատանայի՝ զոր խօսին․ սակայն ոչ արկից
25 զձեօք զայլ ծանրութիւն ։ * Զոր ունիք, պա-
26 հեցէք՝ մինչև ես գամ ։ * Եւ որ յաղթէ՝ պահէ զգործս իմ մինչև ցվախճան, տաց նմա իշխանու-
27 թիւն ՚ի վերայ ազգաց ։ * Եւ հովուեսցէ զնոսա գաւազանաւ երկաթեաւ․ և իբրև զանօթ բրուտի
28 փշրեսցէ զնոսա ։ * Որպէս և ես ընկալայ ՚ի Հօրէ իմմէ․ և տաց նմա զաստղն առաւօտու ։
29 * Որ ունի ականջս լսել՝ լուիցէ զինչ Հոգին ասէ առ եկեղեցիս ։

ԳԼ․ Գ․

Հրեշտակին [illegible]

Սարդ [illegible]

1 Եւ առ հրեշտակն սարդիկեցւոյ եկեղեցւոյն գրեա․ այսպէս ասէ՝ որ ունի զեօթն Հոգիս Այ՝ և զեօթն աստեղս․ տեսի զգործս քո՝ զի անուն կենդանւոյ
2 ունիս՝ և մեռեալ ես ։ * Լեր արթուն՝ և հաստատեա՛ այսուհետև՝ զի հանդերձեալ ես մեռանիլ ։ քանզի ոչ գտի զգործս քո կատարեալ առա-
3 ջի Այ ։ * Արդեօք յիշեա՛ թէ որպէս լուար․ և պահեա՛, և ապաշաւեա՛ ։ ապա թէ ոչ զուարթանաս՝ գամ որպէս գող․ և ոչո՛ք իմանայ զգալուստ
4 իմ առ քեզ ։ * Որ ունիս սակաւ մի զանուն Սարդիանացւոյն․ որք ոչ աղտեղացուցին զհանդերձս իւրեանց․ և շրջին ՚ի սպիտակս՝ որում արժանի
5 եղեն ։ 10 * Որ յաղթէ՝ այսպէս զգեցցի սպիտակս ։ և ոչ ջնջեսցի անուն նորա ՚ի դպրութենէն կենաց․ և խոստովանեցից զանուն նորա առաջի Հօր իմոյ՝

*

[illegible]

Յօվհան[illegible]

[illegible]

6 և առաջի հրեշտակաց նորա: * Որ ունի ականջ՝
7 լուիցէ զի՛նչ ասէ Հոգին առ եկեղեցիս: * Եւ առ հրեշտակն եղբայրասիրաց եկեղեցւոյն գրեա: այսպ̃ ասէ՝ սբ̃ն և ճշմարիտն. որ ունի զփականս Դաւթի: բանայ՝ և ոչո՛ք է՝ որ փակէ. փակէ, և ոչո՛ք է՝ որ
8 բանայ: * Տեսի զգործս քո: ահա ետու առաջի քո զդուռն բացեալ. զոր ոչո՛ք կարէ փակել: զի սակաւ է զօրութիւն քո: և պահեցեր զբան իմ, և
9 ո՛չ ուրացար զանուն իմ: * Ահաւասիկ տամ քեզ զժողովս սատանայի. որք ասեն զինքեանս հրէայս գո՛լ և ո՛չ են՝ այլ ստեն. արարից զնոսա՝ զի եկեսցեն, և երկիրպագցեն առաջի ոտից քոց. և ծա-
10 նիցեն, զի ես սիրեցի զքեզ: * Զի պահեցեր զբան համբերութեան իմոյ. և ես պահեցից զքեզ 'ի ժամ փորձութեան քոյ. որ հանդերձեալ է գալ յամե՛նայն տիեզերս. փորձել զամե՛նայն բնա-
11 կեալս յերեսս երկրի: * Ահա գամ վաղվաղակի. կա՛լ զոր ունիսդ՝ զի մի՛ ոք առցէ զպսակ քո:
12 * Որ յաղթէ՝ արարից զնա սիւն տաճարի Այ̃ իմոյ. և արտաքս այլ մի՛ ևս ելցէ: և գրեցից 'ի վերայ նորա զանուն Այ̃ իմոյ. և զանուն քաղաքի Այ̃ իմոյ՝ զնորն Եէ̃մի. որ իջանելոց է յերկնից
13 յԱյ̃ իմոյ. և զանուն իմ նոր: * Որ ունի ականջ՝
14 լուիցէ զինչ ասէ Հոգին առ եկեղեցիս: * Եւ առ հրեշտակն Լաւոդիկեայ եկեղեցւոյն գրեա. այսպէս ասէ. ամէնն՝ վկայն հաւատարիմ, և ճշմարիտ: որ
15 է սկիզբն արարածոց Այ̃: * Գիտեմ զգործս քո՝ զի ո՛չ ցուրտ ես՝ և ո՛չ ջերմ. պարտ էր քեզ
16 ցուրտ լինիլ՝ և կամ ջերմ: * Այլ դու գաղջ ես. և ո՛չ ջերմ, և ո՛չ ցուրտ: հանդերձեալ ես փըսխել
17 'ի բերանոյ իմմէ: * Զի ասես՝ մեծատուն էի՝ և մեծացայ: և ո՛չ ինչ կարօտիմ. և ո՛չ գիտես, եթէ դու ես ողորմելին՝ և հեգդ՝ և աղքատ.
18 մերկ՝ և կոյր: * Արդ ես խորհրդակից եղէց քեզ. ա՛ռ գնեա՛ յինէն ոսկի փորձեալ 'ի հրոյ՝ զի մեծասցիս. և հանդերձս սպիտակս՝ զի զգեցցիս. զի մի՛ երևեսցի անփայելչութիւն մերկութեան քոյ.
19 և դի՛ր դեղ յաչս քո՝ զի տեսցես: * Ես, զոր սի

[illegible]

[illegible]

րեմ, յանդիմանեմ, և խրատեմ։ Նախանձեա՛ց այժմ,
20 և ապաշխարեա՛ ։ * Ահաւասիկ կամ ես առ դուրս
քո՝ և բաղխեմ. եթէ ոք լուիցէ ձայնի իմում. և
բանայցէ զդրունսն, մտից առ նա՝ և ընթրիս արա-
21 րից առ նա. և նա ընդ իս։ * Որ յաղթէ՝ տաց
նմա նստել ընդ իս յաթոռս իմ. որպէս ես յաղ
22 թեցի՝ և նստայ յաթոռ Հօր իմոյ։ * Որ ունի ա-
կանջս՝ լուիցէ զինչ Հոգին ասէ առ եկեղեցիս։

ԳԼ. Դ.

1 Եւ յետ այսորիկ տեսի՝ և ահա դրունք երկնից
բացեալ էին, և ձայն փողոյն, զոր լուայ զառա-
ջինն, խօսէր ընդ իս, և ասէր. Ե՛լ այսր՝ և ցու-
2 ցից քեզ՝ զինչ լինելոց է առ յապայն։ * Եւ վաղ
վաղակի եղէ ես հոգւով՝ և ահա աթոռ անդ յեր
3 կինս։ * Եւ ՚ի վերայ աթոռոյն նստեալ նմանու
թիւն տեսութեան ականց յասպիսոյ՝ և սարդիոնի։
4 * Եւ ծիածան շուրջ զաթոռովն. նմանք տես-
լեան զմրխտի։ և շուրջ զաթոռովն աթոռք քսան
և չորք. և ՚ի վերայ աթոռոյն նստէին երիցունք
քսան և չորք. զգեցեալք հանդերձս սպիտակս. և
5 ՚ի գլուխս իւրեանց պսակս ոսկեղէնս։ * Եւ յա-
թոռոյ անտի ելանէին փայլատակմունք՝ և ձայնք՝
և որոտմունք։ և եօթն լամբարք հրոյ բորբոքե-
լոյ՝ առաջի աթոռոյն. որք են եօթն Հոգիքն Այ։
6 * Եւ առաջի աթոռոյն ծով ապակեղէն, ՚ի նմա-
նութիւն սպիտակութեան սառին։ և ՚ի մէջ աթո
ռոյն՝ և շուրջ զաթոռովն չորք կենդանիք՝ լի
7 աչօք յետոյ և առաջոյ։ * Եւ էր կենդանին առա
ջին նման առիւծու. և երկրորդ կենդանին նման
զուարակի. և երրորդ կենդանին ունէր երեսս
մարդոյ. և չորրորդ կենդանին նման արծուո՛յ թռու
8 ցելոյ։ * Եւ չորից կենդանեացն էին միոյ միոյ ՚ի
նոցանէ վեց թևք. շուրջ լցեալք աչօք. և ոչ հանգ
չէին՝ ոչ զտիւ, և ոչ զգիշեր՝ յասելոյ. սբ, սբ, սբ,
Տր Այ ամենակալ՝ որ էն. և որ ես. և որ գալոց
9 ես։ * Եւ յորժամ տային կենդանիքն զպատիւ և

զփառս՝ և զգոհութիւն նստելոյն ՚ի վերայ աթոռոյն՝
կենդանւոյն յաւիտեանս յաւիտենից:
10 * Անկանէին քսան և չորք երիցունքն՝ առաջի նստելոյն
յաթոռն. և երկիրպագանէին կենդանւոյն
յաւիտեանս յաւիտենից. և դնելով զպսակս իւրեանց
11 առաջի աթոռոյն՝ ասէին: * Արժան է քեզ
Տր̅ Ած̅ մեր՝ առնուլ զփառս՝ և զպատիւ, և զզօրութիւն:
զի դու ստացեր զամենայն. և ՚ի քո
կամիլդ ստեղծան. և կան հաստատունք:

ԳԼ. Ե.

1 Եւ տեսի յաջոյ ձեռինն, որ նստէր յաթոռն.
զի ունէր գիրք՝ գրեալ ներքոյ և արտաքոյ.
2 կնքեալ եօթն կնքով: * Եւ տեսի զհրեշտակ մի
զօրաւոր՝ զի քարոզէր ձայնիւ մեծաւ և ասէր.
ո՞վ է արժանի բանալ զգիրքդ՝ և լուծանել զկնիք
3 դորա: * Եւ ոչո՛ք կարէր՝ ո՛չ յերկինս, և ո՛չ յերկրի՝
և ո՛չ ՚ի ներքոյ երկրի՝ բանալ զգիրն, և ո՛չ
4 նայիլ ՚ի նա: * Եւ ողբայի՛ն բազումք՝ զի ոչո՛ք
գտաւ արժանի բանալ զգիրն, և ընթեռնուլ զնա.
կամ տեսանել զնա:
5 * Եւ մի ոմն յերիցանցն ասէ: մի՛ ողբայք. ահաւասիկ
յաղթեաց առիւծն յազգէն յուդայ, յարմատոյն
դաւթի, բանալ զգիրսն՝ և զեօթն կնիքսն նորա:
6 * Եւ ՚ի մէջ աթոռոյն և չորից կենդանեացն՝ և
՚ի մէջ երիցանցն գառն կայր զենեալ. որոյ էր եօթն
եղջիւրս. և եօթն աչս. որք են եօթն հոգիք Այ̅
7 առաքեալք ընդ ամենայն երկիր: * Եւ եկն՝ և կալաւ
յաջոյ ձեռանէ նորա որ նստիւր ՚ի վերայ աթոռոյն:
8 * Եւ յորժամ էառ զգիրսն, չորք կենդանիքն,
և քսան և չորք երիցունքն անկանէին
առաջի գառինն. և ունէին իւրաքանչիւր զքնար,
և զբուրվառ ոսկի լի խնկով. որք են աղօթք
9 սրբոյն: * Եւ օրհնէին զերգս նորս. և ասէին:
արժանի ես առնուլ զգիրդ՝ և բանալ զկնիք դորա:
զի զենար՝ և գնեցեր զմեզ Այ̅ արեամբ քով,
յամենայն ազգաց՝ և ՚ի լեզուաց՝ և ՚ի ժողովրդոց
10 հեթանոսաց: * Եւ արարեր Այ̅ մերոյ քահանայս՝

և թագաւորս՝ թագաւորել ՚ի վերայ երկրի:
11 * Եւ տեսի, և լուայ զձայն հրեշտակաց բազմաց՝
որք կային շուրջ զաթոռովն, և զչորիւք կենդա-
նեօքն, և զքահանայիւքն: և էր թիւ նոցա՝ բիւրք
12 բիւրուց՝ և հազարք հազարաց: * Որք ասէին
ձայնիւ մեծաւ. արժանի է գառն զենեալ առնուլ
զմեծութ՟ի, և զա՟ծու՟ի, և զիմաստութ՟ի, և զզօրու-
թիւն, և զպատիւ, և զփառս, և զօրհնութիւն:
13 * Եւ ամենայն արարածք՝ որք են յերկինս և յեր-
կրի՝ և որք ՚ի ծովու՝ և որք ՚ի նոսա: լուայ՝ որք
ասէին ձայնիւ մեծաւ՝ որ նստի յաթոռն՝ և գառն
օրհնեալ՝ բարձրացեալ՝ և փառաւորեալ՝ յաւի-
14 տեանս յաւիտենից: * Եւ չորք կենդանիքն ասէին.
ամէն: և քսան և չորք երիցունքն անկանէին առա-
ջի նորա՝ և երկիրպագանէին կենդանւոյն յաւի-
տեանս յաւիտենից: գլ / զ

ԳԼ. Զ:

1 Եւ տեսի, զի եբաց գառն զմինն ՚ի կնքոցն. և լուայ
՚ի միոյ ՚ի չորից կենդանեացն իբրև զձայն որոտ-
2 ման՝ զի ասէր՝ գամ: * Եւ տեսի, և ահա ձի,
և որ հեծեալն էր ՚ի նմա՝ ունէր աղեղն. և տր-
ուաւ նմա պսակ. և ել յաղթօղն, զի յաղթեսցէ:
3 * Եւ յորժամ եբաց զկնիքն երկրորդ, լուայ յերկ-
րորդ կենդանւոյն՝ զի ասէր. գամ, և տես:
4 * Եւ ել այլ ձի կարմիր: և որ հեծեալն էր ՚ի նմա՝
տուաւ նմա առնուլ զխաղաղութիւն յերկրէ. զի
զմիմեանս զենցեն. և տուաւ նմա սուր մեծ:
5 * Եւ յորժամ եբաց զկնիքն երրորդ, լուայ յեր-
րորդ կենդանւոյն՝ զի ասէր. գամ, և տես: և տեսի,
և ահա ձի սեաւ. և որ նստեալն էր ՚ի վերայ ն՟ր՝
6 ունէր կշիռս ՚ի ձեռին իւրում: * Եւ լուայ զձայն
՚ի միջոյ չորից կենդանեացն. կապիճ մի ցորեան՝
դենարի միոջ. և երեք կապիճ գարի՝ դենարի միոջ.
7 և զձէթ և զգինի մի վնասեսցես: * Եւ յորժամ
եբաց զկնիքն չորրորդ, լուայ զձայն ՚ի չորրորդ
կենդանւոյն՝ զի ասէր՝ գամ, և տես:

8 * Եւ տեսի, և ահա ձի շղուոս՝ և որ նստէր 'ի
վերայ նորա՝ ունէր զմահ՝ և դժոխք երթային
զհետ նորա. և տուաւ նմա իշխանութ͞ի 'ի վ͞ր չորրորդ
մասին աշխարհի՝ սատակել սրով՝ և սովով՝ և մահուամբ՝
9 և գազանօք երկրի: * Եւ յորժամ եբաց
զկնիքն հինգերորդ՝ տեսի 'ի ներքոյ սեղանոյն զհոգիս
ամենայն մարդկան զենելոյ վասն բանին Ա͞յ՝
և վասն վկայութեան նորա՝ զոր ունէին:
10 * Որք ասէին 'ի ձայն մեծ՝ մինչև յե՞րբ Տ͞ր՝ (ս͞ր
և ճշմարիտ) ոչ դատես՝ և խնդրես զվրէժ արեան
11 մերոյ 'ի բնակչաց երկրի: * Եւ տուաւ նոցա
արկանելիս սպիտակս. և ասացաւ նոցա՝ զի հանգիցեն
փոքր մի ժամանակս. մինչև լցցին ծառայակիցք
նոցա՝ և եղբարք նոցա՝ որք հանդերձեալ
12 էին կատարիլ իբրև զնոսա: * Եւ տեսի յորժամ
եբաց զկնիքն վեցերորդ, և ահա շարժումն մեծ
եղև. և արեգակն եղև սեաւ իբրև զկապերտ այծեայ.
և լուսինն բոլորովին եղև արիւն:
13 * Եւ աստեղք երկնից թօթափեցան յերկիր: որ
պէս տերև թզենւոյ՝ զի ուժգին հնչեսցի 'ի հողմոյ:
14 * Եւ երկինն իբրև զմագաղաթեայ գիրս գալարիւր:
և ամենայն լերինք և կղզիք 'ի տեղւոյ իւրեանց
15 շարժեցան: * Եւ թագաւորք երկրի՝ և իշ
խանք՝ և հազարապետք՝ և մեծամեծք՝ և զօրաւորք.
և ամենայն ծառայք՝ և ամենայն ազատք՝ թաքուցին
զինքեանս յայրս և 'ի ծերպս վիմաց:
16 * Եւ ասէին լերանց թէ անկերուք 'ի վերայ մեր.
և ցբլուրս թէ՝ ծածկեցէք զմեզ, յերեսաց նստողին
'ի վերայ աթոռոյն՝ և 'ի բարկութ͞է գառինն:
17 * Զի եկն օր մեծ բարկութեան նորա՝ և ո՞վ կարէ
կալ առաջի նորա:

ԳԼ· Է:

1 Եւ յետ այնորիկ տեսի չորս հրեշտակս՝ զի կային
'ի չորս անկիւնս երկրի. և ունէին զչորս հողմս
երկրի՝ զի մի շնչեսցէ հողմ 'ի վերայ երկրի. և
2 մի 'ի ծովու՝ և մի 'ի ծառս: * Եւ տեսի զայլ

հրեշտակ՝ զի ել յարևելից՝ և ունէր զկնիք Այ
կենդանւոյ. և աղաղակեաց ձայնիւ մեծաւ առ չորս
հրեշտակսն՝ որոց տուեալ էր զիշխանութիւն ապականել
3 զերկիր՝ և զծով : * Եւ ասէ : Մի՛ վնասէք
երկրի՝ մի ծովու՝ և մի ծառոց. դադարեցէք՝ մինչև
կնքեցից զծառայս Այ մրյ ՚ի ճակատս նոցա :
4 * Եւ լուայ զթիւ կնքելոյն, զի էին հարիւր քառասուն
և չորք հազարք կնքեալք : յամենայն ազ
5 գէ որդւոյն իսլի : * Յազգէն յուդայ՝ երկոտասան
հազար կնքեալ: Յազգէն ռուբենի՝ երկոտասան
հազար կնքեալ: Յազգէն գադայ՝ երկոտասան հազար
6 կնքեալ: * Յազգէն ասերայ՝ երկոտասան հազար
կնքեալ: Յազգէն նեփթաղիմայ՝ երկոտասան
հազար կնքեալ: Յազգէն մանասէի՝ երկոտասան
7 հազար կնքեալ: * Յազգէն շմաւոնի՝ երկոտասան
հազար կնքեալ. Յազգէն ղևեայ՝ երկոտասան հազար
կնքեալ: Յազգէն իսաքարայ՝ երկոտասան հազար
8 կնքեալ : * Յազգէն զաբուղոնի՝ երկոտասան
հազար կնքեալ: Յազգէն յովսեփայ՝ երկոտասան հազար
կնքեալ: Յազգէն բենիամենի՝ երկոտասան հազար
9 կնքեալ: * Եւ յետ այսորիկ տեսի՝ և ահա ժողովուրդ
բազում, որոց ո՛չ գոյր թիւ : յամենայն հեթանոսաց՝
և յամենայն ազգաց. և յամենայն լեզուաց՝
և յամենայն ժողովրդոց. որք կային առաջի
աթոռոյն՝ և առաջի գառինն արկեալ զիւրեամբք
հանդերձս սպիտակս՝ և արմաւենիս ՚ի ձեռս
10 իւրեանց : * Աղաղակէին ՚ի ձայն մեծ՝ և ասէին.
փրկութիւն Այ մերոյ՝ որ նստի ՚ի վերայ աթոռոյն,
11 և գառինն : * Եւ ամենայն հրեշտակք կային շուրջ
զաթոռովն, և զերիցամբքն, և զչորիւք կենդանեօքն.
անկանէին յերեսս առաջի աթոռոյն՝ և երկրպագանէին
12 Այ : * Ասելով Ամէն: Օրհնութիւն,
և փառք, և իմաստութիւն, և գոհութիւն, և պատիւ,
և զօրութիւն, և շնորհք Տն Այ մերոյ
13 յաւիտեանս յաւիտենից. Ամէն : * Եւ ասէ ցիս՝
մի յերիցանց անտի. սոքա, որք զգեցեալք են զհանդերձս
սպիտակս՝ ո՞յք են՝ և կամ ո՞ւստի գան :
14 * Եւ ասացի ցնա՝ Տր, դու գիտես : և ասէ ցիս.

սոքա են՝ որք գան 'ի վշտաց մեծաց. և լուացին
զարկամնելըս իւրեանց՝ և սպիտակացուցին արեամբ
15 գառինն։ * Վասն այնորիկ են առաջի աթոռոյն
Այ՝ և պաշտեն զնա զտիւ և զգիշեր 'ի տաճարի
նորա. և որ նստի 'ի վերայ աթոռոյն՝ բնակեսցէ
16 'ի նոսա։ * Ոչ քաղցիցեն՝ և ոչ ծարաւիցեն. և
ոչ՛ք մերձիցէ նոցա, ոչ արեգակն, և ոչ տօթ։
17 * Եւ գառն 'ի միջոյ աթոռոյն իւրոյ հովուեսցէ
զնոսա. և առաջնորդեսցէ նոցա 'ի կենաց աղբիւրն
ջրոյ կենդանւոյ։ քանզի էհան Ած զամենայն արտօսր
յաչաց նոցա ։

ԳԼ. Ը.

1 Եւ յորժամ եբաց զկնիքն եօթներորդ՝ եղև լռու-
2 թիւն յերկինս՝ որպէս կէս ժամու։ * Եւ տեսի
հրեշտակս եօթն, որք առաջի Այ կային, և տրուաւ
3 նոցա եօթն փողս։ * Եւ այլ հրեշտակ եկն՝ և
եկաց առ սեղանն, և ունէր խնկանոց ոսկի. և
տուաւ նմա խունկ բազում, զի մատուսցէ զաղօթս
ամենայն սրբոց. 'ի վերայ ոսկեղէն սեղանոյն առա-
4 ջի աթոռոյն Այ։ * Եւ ել ծուխ խնկոյն աղօթք
սրբոցն 'ի ձեռաց հրեշտակայն առաջի Աստուծոյ։
5 * Եւ ելից հրեշտակն զխնկանոյն 'ի հրոյ սեղանոյն՝
և էարկ զնա յերկիր։ և եղև որոտմունք, ձայնք՝
6 և փայլատակմունք. և շարժումն մեծ։ * Եւ եօթն
հրեշտակքն՝ որք ունէին զեօթն փողս՝ պատրաս-
տեցին զինքեանս առ 'ի հարկանել։
7 * Եւ առաջին հրեշտակն էհար փողն, և եղև
կարկուտ՝ և հուր՝ և արիւն խառնեալ՝ և անկաւ
յերկիր. և զերրորդ մասն երկրի այրեաց։ և զեր-
րորդ մասն ծառոց այրեաց։ և ամենայն դալարի
8 խոտ տոչորեցաւ։ * Եւ երկրորդ հրեշտակն փո-
ղեաց՝ և իբրև զլեառն մի մեծ հրդեհեալ անկաւ 'ի
ծով։ և եղև երրորդ մասն ծովու արիւն։
9 * Եւ սատակեցաւ երրորդ մասն լողակաց՝ և որ
ունէր զշունչ կենդանի, ապականեցաւ։ և երրորդ
10 մասն նաւուց ընկղմեցաւ։ * Եւ երրորդ հրեշ

տակն փողեաց՝ և անկաւ յերկնից աստղ մի մեծ՝
բորբոքեալ իբրև զջամբար ։ և անկաւ յերրորդ
11 մասն գետոց և աղբերաց ։ * Եւ՛ էր անուն աստեղն
դառնութիւն, և բազումք մեռան 'ի դառնութենէ
12 ջուրցն ։ * Եւ՛ չորրորդ հրեշտակն հարկանէր, և
վիրաւորիւր երրորդ մասն արեգական, և երրորդ
մասն լուսնի՝ և երրորդ մասն աստեղաց։ և խաւա
րիւր երրորդ մասն նոցա ։ և աւուր ոչ լուսաւորէր
13 մասն երրորդ՝ և գիշերոյ նոյնպէս ։ * Եւ՛ տեսի՝
և լո՛ւայ զձայն հրեշտակի թռուցելոյ 'ի մէջ երկ-
նից, զի ասէր 'ի ձայն մեծ. վա՜յ՝ վա՜յ՝ վա՜յ՝ որք բնա
կեալ են յերկրի ։ Յորժամ լիցի ձայն և՛ս երից
փողոց, զոր կամիցին հրեշտակքն հարկանել ։

ԳԼ. Թ.

1 Եւ՛ հինգերորդ հրեշտակն փողէր ։ և տեսի, զի
աստղ մի անկանիւր յերկնից յերկիր, և տը-
2 ո՛ւաւ նմա բանալի գբոյն անդնդոց ։ * Եւ՛ եբաց
զգուբն անդնդոց. և ելանէր ծուխ 'ի գբոյն որպէս
զծուխ հնոցի մեծի ։ և խաւարեցաւ արեգակն և օդ ։
3 * Եւ՛ 'ի գբոյն ելանէր մարախ յերկիր ։ և տո՛ւաւ
նոցա իշխանութիւն իբրև զխայթոց կարճի ։
4 * Եւ՛ ասացաւ նոցա՝ զի մի՛ մեղիցեն խոտոյ երկրի.
և մի՛ ամենայն ծառոց, բայց միայն մարդկան երկրայ
նոցա. որք ոչ ունիցին զկնիքն ա՟յ 'ի վ՟ր ճակատուց
5 իւրեանց ։ Եւ՛ տո՛ւաւ նոցա հրաման՝ զի մի՛ սպա-
նանիցեն զնոսա. այլ չարչարեսցեն զնոսա ամիս
հինգ ։ և չարչարանք նոցա իբրև զխայթոցս կար-
6 ճի, որ հարկանիցէ զմարդ ։ * Եւ՛ յաւուրսն յայ
նոսիկ խնդրեսցեն մարդիկ զմահ՝ և ոչ գտցեն ։
և ցանկասցին մեռանիլ՝ և փախիցէ 'ի նոցանէ
7 մահ ։ * Եւ՛ նմանութիւն մարախոյն, 'ի նմանութի՟
ձիոյ պատրաստելոյ 'ի պատերազմ ։ և 'ի վ՟ր գլխոց
նոցա իբրև զպսակս նմանեալ ոսկւոյ ։ և երեսք
8 նոցա իբրև զերեսս մարդոյ ։ * Եւ՛ հերք նոցա
իբրև զհերս կնոջ. և ատամունք նոցա իբրև առ-
9 իւծուց ։ * Եւ՛ ունէին զզրահս իբրև զրահս եր

կայծիս : և ձայն թևոց նոցա՝ իբրև զձայն կառավարաց
ձիոց բազմաց՝ որք արշաւեն ՚ի պատերազմ:
10 * Եւ ունէին ագիս ըստ նմանութեան կարճաց :
և խայթոց յագիս նոցա : և ունէին զիշխանութի՟
11 չարչարել զմարդիկ ամիսս հինգ : * Եւ ունէին
զթագաւոր ՚ի վերայ իւրեանց զհրեշտակն դժոխոց:
և անուն նորա եբրայեցերէն աղբադոն : որ կոչի
12 ՚ի հայ բարբառ կորուստ : * Ահաւասիկ վայ մի
13 էանց · և վայք երկու գալոց են : * Եւ վեցերորդ
հրեշտակն հարկանէր զփողն : և լուայ զձայն ՚ի չորից
կենդանեացն՝ որք են առաջի սեղանոյն Ա՟յ :
14 * Զի ասէր ցհրեշտակն վեցերորդ , որ ունէր
զփողն · լոյծ զչորս հրեշտակսն զկապեալսն ՚ի վ՟ր
15 գետոյն մեծի եփրատայ : * Եւ լուծան չորք հրեշտակքն
· պատրաստեալք ՚ի ժամ, և յօր՝ և յամիս՝
և ՚ի տարի · զի սպանցեն զերրորդ մասն մարդկան:
16 * Եւ համարք հեծելոց զօրաց նոցա՝ բիւրք բիւրուց՝
և հազարք հազարաց՝ լուայ զթիւ նոցա :
17 * Եւ տեսի ձիս ՚ի տեսլեանն, և հեծեալս ՚ի նոսա՝
որք ունէին զրահս հրեղէնս : և յակնթս հրդեհեալս
ծծմբով : և գլուխք ձիոյն իբրև զգլուխս
առիւծուց : և ՚ի բերանոյ նոցա հուր ելանէր՝ և
18 ծուխ՝ և ծծումբ : * Եւ ՚ի հարուածոցս յայսցանէ
մեռաւ երրորդ մասն մարդկան ՚ի հրոյն՝ և ՚ի
ծխոյն՝ և ՚ի ծծմբոյն , որ ելանէր ՚ի բերանոյ նոցա:
19 * Զի իշխանութիւն ՚ի բերանս նոցա է՝ և յագիս
նոցա : և ագիք նոցա նմանութիւն օձի : և
ունէին գլուխս՝ որով սատակէին զանիրաւսն :
20 * Եւ այլք ՚ի մարդկանէ՝ որք ոչ մեռան ՚ի հարուածոցս
յայսցանէ : և ոչ ապաշխարեցին , և ոչ
դարձան ՚ի գործոց ձեռաց իւրեանց · յերկրպագութ՟է
դիւաց՝ և կռոց՝ յոսկեղինաց՝ և յարծաթեղինաց՝
և ՚ի պղնձոյ · և ՚ի քարէ , և ՚ի փայտէ :
որք ոչ տեսանել կարեն՝ և ոչ լսել՝ և ոչ գնալ :
21 * Եւ ոչ ապաշխարեցին ՚ի մարդասպանութ՟է՝ և
՚ի դեղատուութ՟է , և ՚ի պոռնկութ՟է՝ և ՚ի գողութ՟է
իւրեանց :

ԳԼ. Ժ։

1 Եւ տեսի զայլ հրեշտակ զօրաւոր՝ զի իջանէր յերկնից.
եւ զգեցեալ էր զամպ՝ եւ ծիածան ՚ի գլուխ
նորա։ եւ երեսք նորա իբրեւ զարեգակն։ եւ ոտք
2 նորա իբրեւ զսիւն հրոյ։ * Եւ ունէր ՚ի ձեռին իւրում
գրքոյկ մի բացեալ։ եւ եդ զոտն իւր զաջ
՚ի վերայ ծովու. եւ զձախն ՚ի վերայ երկրի։
3 * Եւ աղաղակեաց ՚ի ձայն մեծ՝ եւ գոչեաց իբրեւ
զառիւծ։ եւ յորժամ աղաղակեաց՝ խօսեցան եօթն
որոտմունքն յիւրեանց ձայնսն։ * Եւ յորժամ խօսեցան
4 եօթն որոտմունքն՝ կամէի գրել։ եւ լուայ ըզ
ձայն յերկնից՝ զի ասէր։ կնքեա՛ զոր խօսեցան
5 եօթն որոտմունքն՝ եւ մի՛ գրեր։ * Եւ զհրեշտակն՝
զոր տեսի, որ եդ զոտն իւր ՚ի վերայ ծովու, եւ զմիւսն
՚ի վր̅ ցամաքի, համբարձ զձեռն իւր զաջ յերկինս։
6 * Եւ երդուաւ ՚ի կենդանին յաւիտենից՝ որ հաստատեաց
զերկինս՝ եւ զորս ՚ի նմա։ եւ զերկիր, եւ զորս
՚ի նմա։ եւ զծով, եւ զորս ՚ի նմա։ զի ոչ եւս կայ այլ
7 ժամանակ։ * Այլ յաւուրս ձայնի եօթներորդի
հրեշտակին՝ յորժամ հարկանէ զփողն՝ կատարեսցի
խորհուրդն Այ̅։ որպէս աւետարանեաց ՚ի ձեռն ծառայից
8 իւրոց մարգարէից։ * Եւ ձայնն՝ զոր լուայ
յերկնից. դարձեալ խօսեցաւ ընդ իս՝ եւ ասէ։
երթ՝ առ զգրքոյկն, զոր ունի հրեշտակն բացեալ
՚ի ձեռին իւրում, եւ կայ ՚ի վր̅ ծովու եւ ցամաքի։
9 * Եւ ես երթեալ առ հրեշտակն՝ խնդրեցի ՚ի նմանէ։
եւ ասէ ցիս, առ զսա՝ եւ կեր զդա. եւ դառնասցի
յորովայն քո. այլ ՚ի բերան քո եղիցի
10 քաղցր իբրեւ զմեղր։ * Եւ առի զգրքոյկն բացեալ
՚ի հրեշտակէն՝ եւ կլի զնա։ եւ էր ՚ի բերան իմ
որպէս մեղր՝ եւ յորժամ կերի, դառնացաւ որովայն
11 իմ։ * Եւ ասէ ցիս. հասանի քեզ դարձեալ մարգարէանալ
՚ի ժողովուրդս՝ եւ ՚ի հեթանոսս. եւ ՚ի
լեզուս՝ եւ ՚ի թագաւորս երկրի։

ԳԼ. ԺԱ.

1 Եւ տուաւ ինձ եղէգն նման գաւազանի. և կայր
հրեշտակն՝ և ասէ ցիս։ արի, և չափեա զտաճարն
Այ՝ և զսեղանն՝ և զերկրպագուսն՝ որք 'ի
2 նմա։ * Եւ զգաւիթն, որ է արտաքոյ տաճարին՝
թող զնա՝ և մի չափեր. զի տուեալ է նա հեթանոսաց։
և զքաղաքն սբ կոխեսցեն ամիս քառասուն
3 և երկու։ * Եւ տաց երկուց վկայից իմոց՝
և մարգարէասցին աւուրս հազար երկերիւր և
4 վաթսուն՝ զգեցեալ զքուրձ։ * Սոքա են երկու
ձիթենիք՝ և երկու ճրագք. որք կան առաջի Այ
5 յերկրի։ * Եւ որք կամիցին վնասել նոցա, հուր
ելցէ 'ի բերանոյ նոցա՝ և կերիցէ զթշնամիս նց։
և որք կամիցին մեղանչել նոցա՝ այսպէս սատակեսցին։
6 * Սոքա ունին զիշխանութիւն փակել զերկինս՝
զի մի տեղասցի յաւուրս մարգարէութեան
նոցա։ և ունին զիշխանութիւն 'ի վերայ ջուրց դարձուցանել
զնոսա յարիւն։ և հարկանել զերկիր
յամենայն հարուածս՝ քանիցս անգամ կամիցին։
7 * Եւ յորժամ կատարեսցեն զամենայն աւուրս
վկայութեան իւրեանց, յայնժամ գազանն՝ որ ելանէ
յանդնդոց՝ տացէ ընդ նոսա պատերազմ. և
8 յաղթեսցէ նոցա, և սպանցէ զնոսա։ * Եւ դիք
նոցա անկեալք կայցեն 'ի մէջ հրապարակաց քաղաքի
նոցա մեծի։ որ անուանեալ կոչի ըստ հոգւոյն
սոդօմ, և եգիպտոս։ ուր և Տրն նոցա խաչեցաւ։
9 * Եւ տեսցեն զնոսա ամենայն ցեղք՝ և ժողովուրդք՝
և ամենայն լեզուք՝ և հեթանոսք։ զի
դիք նոցա անկեալք կայցեն զերիս աւուրս և կէս
և ոչ տայցեն թողել 'ի գերեզմանս զոսկերս նց։
10 * Եւ որք բնակեալ են յերկրի՝ ուրախ լինին՝ և
խնդան 'ի վերայ նոցա։ մինչև ընծայս և պատարագս
տան առնել միմեանց։ վասն զի սոքա երկոքեան
մարգարէքս չարչարեցին զբնակիչս երկրի։
11 * Եւ յետ երից աւուրց և կիսոյ՝ հոգի կենդանի
յԱյ մտցէ 'ի նոսա, և յարիցեն. կայցեն 'ի վերայ
ոտից իւրեանց, և ահ և երկիւղ մեծ անկաւ 'ի

12 վերայ ամենեցուն՝ որք տեսին զնոսա ։ * Եւ լուան
զձայն մեծ յերկնից՝ որ ասէր ցնոսա. վերացի՛ք , և
ելէ՛ք աստ ։ և վերացան՝ և ելին յերկինս ամպովք ։ և
13 տեսին զնոսա թշնամիք նոցա ։ * Եւ 'ի ժամուն
յայնմիկ շարժումն մեծ եղև ։ և տասներորդ մասն
քաղաքին ընկղմեցաւ ։ և մեռան 'ի շարժմանէն
արք եօթն հազար ։ և յետ այնորիկ ահ մեծ եղև
յամենեսեան. և փառս տային Այ երկնաւորի ։
14 * Ահաւասիկ վայն երկրորդ էանց. և վայն երրորդ
15 գալոց է վաղվաղակի ։ * Եւ յորժամ եօթներորդ
հրեշտակն հարկանէր զփողն , եղև ձայն յերկինս՝
և ասէ ։ եղև թագաւորութիւն ամենայն տիեզերաց
Տն մերոյ՝ և Քի իւրոյ ։ և թագաւորեսցէ
'ի վերայ ամի յաւիտեանս յաւիտենից. Ամէն ։
16 * Եւ քսան և չորք երիցունքն , որք նստէին յաթոռս
իւրեանց առաջի Այ. անկանէին 'ի վերայ
երեսաց իւրեանց՝ և երկիրպագանէին Տն Այ՝ և
17 ասէին ։ * Գոհանամք զքէն Տր Ած ամենակալ ։
որ էն , և եւ՝ և որ գալոց ես. և առեր զզօրութի
18 քո մեծ , և թագաւորեցեր ։ * Եւ հեթանոսք
բարկացան ։ և եկն բարկութիւն քո՝ և ժամանակ
մեռելոց՝ զի դատեսցին ։ և տալ վարձս ծառայից
քոց մարգարէից. և սրբոց երկիւղածաց անուան
քոյ. փոքունց՝ և մեծամեծաց ։ և ապականել զապականիչս
19 երկրի ։ * Եւ բացաւ տաճարն Այ՝ որ
յերկինս ։ և երևեցաւ տապանակն Այ՝ որ 'ի տաճարի
նորա ։ և եղեն փայլատակմունք՝ և ձայնք ։
և որոտումն, և շարժումն. և կարկուտ մեծամեծ ։

ԳԼ. ԺԲ ։

1 Եւ նշան մեծ երևեցաւ յերկինս. կին մի արկեալ
զիւրև զարեգակն. և լուսինն 'ի ներքոյ ոտից
նորա. և 'ի վերայ գլխոյ նորա պսակ յաստեղաց
2 երկոտասանից ։ * Եւ էր յղի. և ճչէր յերկնելն՝
3 և բազմօք վշտօք մերձ էր 'ի ծնանել ։ * Եւ երևեցաւ
այլ նշան յերկինս՝ և ահաւասիկ վիշապ մի
մեծ հրեղէն. որոյ էին գլուխք եօթն՝ և եղջիւրք
տասն. և 'ի վերայ գլխոց նորա եօթն խոյրք ։

4 *Եւ տուտ նորա քարշէր զերրորդ մասն աստեղաց
երկնից՝ և էարկ զնոսա յերկիր։ և վիշապն կայր
առաջի կնոջն՝ որ հանդերձեալ էր ծնանել· զի
յորժամ ծնցի կինն զորդի իւր, կլցէ զնա վիշապն։
5 *Եւ ծնաւ կինն զորդի արու՝ որ հանդերձեալ էր
հովուել զամենայն հեթանոսս գաւազանաւ երկաթեաւ·
և յափշտակեցաւ որդի նորա առ Ած՝ և
6 առ աթոռ նորա։ *Եւ կինն փախեաւ յանապատ՝
ուր էր տեղի նմա պատրաստեալ յԱյ· զի կերակրեսցի
անդ աւուրս հազար երկերիւր և վաթսուն։
7 *Եւ եղև պատերազմ յերկինս· Միքայէլ և
հրեշտակք իւր կռուէին ընդ վիշապին։ և վիշապն
8 պատերազմէր զօրօք իւրովք։ *Եւ ոչ կարացին
կալ ընդդէմ։ և տեղի ոչ գտաւ նոցա յերկինս։
9 *Եւ անկաւ վիշապն մեծ՝ օձն առաջին· որ անուանեալ
կոչի բէեղզեբուղ և սատանայ· որ մոլորեցոյց
զամենայն տիեզերս երկրի· և հրեշտակք
10 նորա ընդ նմա անկան։ *Եւ լուայ ձայն մեծ
յերկնից՝ որ ասէր։ արդ եղև զօրութիւն, և փրրկութիւն·
և արքայութիւն Այ մերոյ· և իշխանութիւն
օծելոյ նորա· զի անկաւ չարախօսն եղբարց
մերոց· որ չարախօսէրն զնոցանէ առաջի Այ
11 'ի տուէ և 'ի գիշերի։ *Եւ նոքա յաղթեցին նմա
արեամբ գառինն· և բանիւ վկայութեան նորա։
և ոչ հաճեցան ընդ վիշապին մինչև 'ի մահ։
12 *Վասն այսորիկ ուրախ լերուք երկինք՝ և ամենեքեան՝
որք բնակեալ էք 'ի նմա· վայ երկրի և
ծովու՝ զի անկաւ բանսարկուն առ ձեզ· որ ունի
զցասումն բազում։ և կայցէ առ սակաւ մի ժամանակ։
13 *Եւ յորժամ ետես վիշապն, թէ անկաւ
յերկիր՝ զհետ եղև կնոջն, որ ծնաւ զմանուկն արու։
14 *Եւ տուան կնոջն երկու թևք արծուոյ
մեծի՝ զի թռիցէ յանապատ 'ի տեղի իւր՝ ուր կերակրիւր
անդ ժամանակ, և ժամանակս, և կէս ժամանակի՝
15 յերեսաց օձին։ *Եւ եհեղ օձն 'ի բերանոյ
իւրմէ զհետ կնոջն· ջուր՝ զի ընկղմեսցէ զնա։
16 *Եւ օգնեաց երկիր կնոջն՝ և եբաց երկիր զբերան
իւր, և եկուլ զջուրն, զոր եհեղ վիշապն 'ի բե-

17 բանոյ իւրմէ: * Եւ ցասեաւ վիշապն ընդ կնոջն.
և գնաց պատերազմիլ ընդ այլ զաւակս նորա՝ որք
պահէին զպատուիրանս Ա̃յ. և ունէին զվկայու-
18 թիւն Յ̃ի Ք̃ի: * Եւ եկաց ՚ի վերայ աւազոյ ծովու:

Գլ. ԺԳ.

1 Եւ տեսի զի ելանէր ՚ի ծովէն գազան. և ունէր
գլուխս եօթն՝ և եղջիւրս տասն. և ՚ի վերայ
եղջերաց նորա տասն խոյր: և ՚ի վերայ գլխոց նորա
2 անուն հայհոյութեան: * Եւ գազանն՝ զոր տեսի,
նման ընձու: և ոտք նորա իբրև զարջոյ. և բե-
րան նորա որպէս զառիւծու. և ետ նմա վիշապն
զզօրութիւն իւր՝ և զաթոռ իւր՝ և զիշխանութիւն
3 իւր մեծ: * Եւ մի ՚ի գլխոց նորա վիրաւորեալ էր
4 ՚ի մահ. և վէր մահու նորա ողջանայր: * Եւ զար-
մացաւ ամենայն երկիր ընդ գազանն. զի ետ նմա
վիշապն զթագաւորութիւն իւր. և երկիրպագին
վիշապին՝ որ ետ զիշխանութիւն գազանին. և ա-
սէին՝ ո՞վ իցէ նման գազանին. կամ ո՞վ կարիցէ
5 պատերազմիլ ընդ նմա: * Եւ տուաւ նմա բերան
խօսիլ զմեծամեծս, և զհայհոյութիւնս. և տուաւ
նմա իշխանութիւն՝ զամիսս քառասուն և երկու:
6 * Եւ եբաց զբերան իւր հայհոյութեամբ առ Ա̃ծ.
և հայհոյել զանուն նորա՝ և զխորան նորա. և
7 զայնոսիկ՝ որք յերկինս բնակեն: * Եւ տուաւ նմա
պատերազմիլ ընդ սուրբս՝ և յաղթել նոցա. և
տուաւ նմա իշխանութիւն ՚ի վերայ ամենայն ազ-
8 գաց և լեզուաց և ժողովրդոց: * Զի երկիրպագ-
ցեն նմա ամենեքեան՝ որք բնակեալ են ընդ երեսս
երկրի. որոց ոչ են գրեալ անուանք նոցա ՚ի դպրու-
թեան կենաց գառինն զենելոյ ՚ի սկզբանէ աշխար-
9 հի: * Ոյք ունին ականջս լսելոյ՝ լուիցեն:
10 * Զի են ոմանք՝ որք ՚ի գերութիւն վարեսցին.
և են ոմանք՝ որք սրով մեռցին. և են ոմանք՝ որք
անձամբ զանձինս սպանանիցեն. աստ է համբերու-
11 թիւն և հաւատ սրբոց: * Եւ տեսի այլ գազան՝
զի ելանէր յերկրէ. և ունէր եղջիւրս երկուս նման

12 գառին. եւ խօսէր իբրեւ զվիշապն: * Եւ զիշխա-
նութիւն զամենայն զառաջնոյ գազանին գործէր
առաջի նորա. եւ առնէր զերկիր եւ զամենայն բնա-
կիչս նորա, զի երկիրպագանիցեն գազանին առաջ-
13 նոյ՝ մինչեւ ողջացաւ վէր մահու նորա: * Եւ առ-
նէր նշանս բազումս. եւ տայր հրոյ իջանել յերկ-
14 նից յերկիր՝ առաջի մարդկան: * Եւ մոլորեցու-
ցանէր՝ որք բնակեալ են յերկրի նշանօքն, որք
տուեալ են ՚ի ձեռս նորա՝ առնել առաջի գազա-
նին. ասեն ցնա բնակիչք երկրի. առն զպատկեր
15 գազանին. որ ՚ի վերայ սրոյն եկեաց: * Եւ տը-
ուաւ նմա իշխանութիւն, զի տայցէ զհոգի պատկե-
րի գազանին: եւ զի խօսեսցի պատկերին. եւ երկիր
պագցեն նմա ամենայն բնակիչք երկրի. եւ որ ոչ
պագցէ երկիր պատկերի գազանին, սպանցեն զնա:
16 * Եւ արասցէ զամենայն, զփոքունս՝ եւ զմեծամեծս՝
եւ զմեծատունս՝ եւ զաղքատս՝ եւ զազատս՝ եւ զծա-
ռայս՝ ունել զդրոշմ յաջոյ ձեռինն՝ եւ ՚ի վերայ
17 ճակատու նոցա: * Եւ ոչ՛ք կարասցէ գնել եւ վա-
ճառել՝ եթէ ոչ ունիցի զդրոշմ գրոյն՝ եւ զանուն
18 գազանին. եւ զթիւ անուան նորա: * Աստ է իմաս-
տութիւն. որ ունի միտս՝ համարեսցէ զթիւ գա-
զանին: թիւ եղեալ մարդոյ՝ եւ թիւ նորա է այս.
վեց հարիւր վաթսուն եւ վեց:

ԳԼ. ԺԴ:

1 Եւ տեսի՝ եւ ահա գառն կայր ՚ի վերայ լերինն
Սիօնի. եւ ընդ նմա հարիւր քառասուն եւ չորք
հազարք. որք ունէին զանուն նորա՝ եւ զանուն Հօր
նորա գրեալ ՚ի վերայ ճակատուց նոցա:
2 * Եւ լուայ զձայն յերկնից՝ իբրեւ զձայն ջուրց բազ-
մաց՝ եւ զձայն որոտման մեծի. եւ լուայ զձայն իբրեւ
զքնարահարաց. զի հարկանիցեն զքնարս իւրեանց:
3 * Եւ երգէին զերգս նորս. առաջի աթոռոյն Այ՝
եւ առաջի չորից կենդանեացն՝ եւ առաջի երիցանցն:
եւ ոչ՛ք կարէ գիտել զերգս նոցա՝ բայց միայն հա-
րիւր քառասուն եւ չորք հազարքն. որք գնեալք

4 են յերկրէ ։ * Սոքա են՝ որք ընդ կանայս ոչ
խառնակեցան . և են կուսանք ։ սոքա զկնի երթան
գառինն, ուր և երթայցէ ։ սոքա ընտրեցան
5 'ի մարդկանէ առաջին Այ և գառինն ։ * Եւ 'ի բերանս
նոցա ոչ գտաւ սուտ՝ զի անբիծք են առաջի
6 աթոռոյն Այ ։ * Եւ տեսի այլ հրեշտակ թռուցեալ
'ի մէջ երկնից՝ և ունէր զաւետիս յաւիտենական՝
աւետարանել ամենայն ազգաց և լեզուաց՝
7 որք բնակեալ են յերկրի ։ * Եւ ասէր 'ի ձայն
մեծ՝ երկերուք յԱյ՝ և տուք փառս նմա . զի եկն
ժամ դատաստանի նորա . և երկիրպագէք արարչին
երկնի՝ և երկրի՝ և ծովու՝ և աղբերաց ջուրց ։
8 * Եւ այլ հրեշտակ երկրորդ գայր զհետ նորա՝ և
ասէր . անկաւ, անկաւ Բաբելոն մեծն՝ 'ի գինւոյ
արբեցութէ՝ 'ի ցասմանէ՝ 'ի պոռնկութէ իւրմէ՝
9 որ արբոյց զամենայն հեթանոսս ։ * Եւ այլ հրեշտակ
երրորդ գայր զհետ նոցա՝ և ասէր 'ի ձայն
մեծ՝ ո՛վք երկիրպագեաց գազանին կամ պատկերի
նորա՝ և կամ դրոշմն նշանի նորա էառ 'ի ճակատ
իւր . և կամ 'ի վերայ աջոյ ձեռին իւրում ։
10 * Այնպիսին արբցէ 'ի բաժակէ ցասմանն Այ, որ
կերլոյ յանապակէ բարկութեան բաժակին . և տանջեսցի
հրով և ծծմբով առաջի Այ և գառինն ։
11 * Եւ ծուխ նոցա ելցէ յաւիտեանս յաւիտենից՝
և ոչ ունին զհանգիստ՝ որք երկիրպագին գազանին
'ի տուէ և 'ի գիշերի . և որք երկիրպագին
պատկերին՝ և առին զդրոշմ և զանուն նորա ։
12 * Եւ համբերութիւն սրբոցն աստ է . այս՝ որք
պահեն զպատուիրանս Այ . և զհաւատս Յի ։
13 * Եւ լուայ զձայն յերկնից՝ որ ասէր ցիս . գրեա՛,
երանի մեռելոցն, որք 'ի Տր ննջեցին ։ այժմիկ վաղվաղակի՝
զայս ասէ Հոգին, քանզի հանգեան յաշխատութէ
իւրեանց . զի միայն գործք իւրեանց չոգան
14 զհետ նոցա ։ * Եւ տեսի, և ահա ամպ սպիտակ՝
և 'ի վերայ ամպոյն նստէր նման որդւոյ մարդոյ .
և 'ի գլուխ նորա պսակ ոսկի . և 'ի ձեռին
15 իւրում ունէր գերանդի սրեալ ։ * Եւ այլ հրեշտակ
ելանէր յերկնից . աղաղակէր 'ի ձայն մեծ՝

և ասէր․ որ նստէր ՚ի վերայ ամպոյդ՝ առաքեա
զգերանդիդ քո՝ և հնձեա, զի եկն ժամանակ հնձոց․
16 և հասեալ են հունձք երկրի։ * Եւ առաքեաց՝
որ նստէրն ՚ի վերայ ամպոյն, զգերանդի իւր յերկիր,
17 և հնձեցաւ երկիր։ * Եւ այլ հրեշտակ ելանէր
՚ի տաճարէն՝ որ յերկինս․ ունէր և սա զգերանդի
18 սրեալ։ * Եւ այլ հրեշտակ ել ՚ի սեղանոյն՝
որ ունէր իշխանութիւն ՚ի վերայ հրոյ՝ և աղաղակեաց
՚ի ձայն մեծ առ հրեշտակն՝ որ ունէր զգերանդին
սրեալ՝ և ասէր․ առաքեա զգերանդիդ քո
սուր՝ և կթեա զողկոյզս այգւոյ երկրի․ զի հասեալ
19 է խաղող ՚ի դիմա։ * Եւ էարկ հրեշտակն զգերանդի
իւր յերկիր․ և կթէր զխաղողն ՚ի նմա․
20 և արկանէր ՚ի հնձանն Այ ՚ի մեծ։ * Եւ կոխեցաւ
հնձանն արտաքոյ քաղաքին․ և ելանէր ՚ի հնձանէն
արիւն մինչև ՚ի սանձս ձիոյն։ և երկայնութիւն
նորա հազար հարիւր և վեց ասպարէզ։

ԳԼ․ ԺԵ։

1 Եւ տեսի այլ նշան յերկինս՝ մեծ և սքանչելի․
հրեշտակս եօթն՝ որք ունէին եօթն վէրս վկնի․
2 զի նոքօք կատարիւր բարկութիւնն Այ։ * Եւ տեսի
որպէս զծով ապակեղէն խառնեալ հրով․ և
որք յաղթեցին գազանին՝ և պատկերին՝ և թուոյ
անուան նորա՝ և դրոշմի նորա․ նոքա կային ՚ի վերայ
ծովուն ապակեղինի․ և ունէին զքնարս Այ։
3 * Եւ երգէին զերգս Մովսէսի ծառայի Այ․ և զերգս
գառինն ասելով։ Թէ մեծամեծք և սքանչելիք
են գործք քո՝ Տր Ած ամենակալ․ արդար՝ և ճշմարիտ
են ճանապարհք քո, թագաւոր ամենայն
4 հեթանոսաց։ * Եւ ո՞վք ոչ երկիցէ՝ և փառաւորեսցէ
զանուն քո․ զի դու միայն ես սր․
և արժանի երկրպագելոյ։ զի ամենայն հեթանոսք
եկեսցեն և երկիրպագցեն առաջի քո Տր՝ յորժամ
5 արդարութիւն քո յայտնեսցի։ * Եւ յետ այսորիկ
տեսի՝ և բացաւ տաճար խորանին վկայութեան՝
6 որ էր յերկինս։ * Եւ ելանէին եօթն հրեշտակք՝

որք ունէին եօթն հարուածս և զգեցեալք էին 'ի
տաճարէն կտաւս մաքուրս' և սպայծառս : և գօտևորեալք
էին առ ստեամբք իւրեանց գօտիս ոսկեղէնս :
7 * Եւ մի 'ի չորից կենդանեացն տուաւ եօթն
հրեշտակացն եօթն սկաւառակս լի՛ ցասմամբն Այ
8 կենդանւոյ յաւիտեանս յաւիտենից : * Եւ լցաւ
տաճարն ծխով փառացն Այ' և զօրութեն նորա.
և ոչ ոք կարէր մտանել 'ի տաճարն' մինչև կատարեսցին
եօթն հարուածքն յեօթն հրեշտակացն :

Գլ· ԺԶ։

1 Եւ լուայ զձայն մեծ 'ի տաճարէն' զի ասէր ցըեօթն
հրեշտակսն. երթայք, հեղէք զեօթն սկաւառակս
2 ցասմանն Այ յերկիր։ * Եւ գնաց առաջին
հրեշտակն' և եհեղ զսկաւառակ իւր յերկիր' և եղեն
հարուածք չարաչարք 'ի վերայ մարդկան. որք ունէին
զդրոշմն գազանին. և երկիրպագին պատկերի
3 նորա : * Եւ երկրորդ հրեշտակն եհեղ զսկաւառակն
իւր 'ի ծով. և դարձան ջուրքն յարիւն մեռեալ'
և ամենայն շունչ կենդանի' որ էր 'ի ծովուն'
4 սատակեցաւ։ * Եւ երրորդ հրեշտակն եհեղ
զսկաւառակ իւր 'ի գետս. և յաղբիւրս ջրոյ'
5 և եղև արիւն : * Եւ լուայ 'ի հրեշտակէն' որ
ասէր. արդար է' որ էնն. և է սուրբ 'ի գործս
6 իւր' զի այսպէս դատեցաւ : * Վասն զի զարիւն
սրբոց' և զարիւն մարգարէից հեղին ամբարիշտք.
վասն այնորիկ զարիւն ետ ըմպել նոցա ըստ արժանւոյն
7 : * Եւ լուայ զձայն 'ի սեղանոյն' զի ասէր.
այո՛ Տր ամենակալ : արդար' և ճշմարիտ են դատաստանք
8 քո : * Եւ չորրորդ հրեշտակն եհեղ 'ի
9 սկաւառակէ իւրմէ 'ի վերայ արեգական : * Եւ
տուաւ նմա խորշակահար առնել զմարդիկ հրով :
և տապացան մարդիկ 'ի տապ մեծ : և հայհոյեցին
զԱծ' որ ունի իշխանութիւն 'ի վերայ հարուածոցս
այսոցիկ. և ոչ ապաշխարեցին 'ի փառս Այ։
10 * Եւ հինգերորդ հրեշտակն եհեղ 'ի սկաւառակէ
իւրմէ 'ի վերայ աթոռոյ գազանին. և եղև թա-

գաւորութիւն նորա խաւարեալ. և ծամէին զլեզուս
11 իւրեանց յախտէ ցաւոյն: * Եւ հայհոյէին
զԱԾ երկնից 'ի ցաւոց իւրեանց՝ և յախտէ դառնութեանն՝
և ոչ ապաշխարեցին 'ի գործոց իւրեանց:
12 * Եւ վեցերորդ հրեշտակն էհեղ 'ի սկաւառակէ
իւրմէ 'ի վերայ գետոյն մեծի Եփրատայ.
և ցամաքեցան ջուրք նորա՝ զի պատրաստեսցի ճանապարհ
13 թագաւորի ելիցն արևու: * Եւ տեսի՝
զի ելանէր 'ի բերանոյ վիշապին՝ և 'ի բերանոյ գազանին՝
և 'ի բերանոյ սուտ մարգարէին ոգիք երեք
14 անսուրբք իբրև գորտս: * Քանզի նոքա էին
ոգիք դիւականք, որք առնէին զնշանս՝ և երթային
առ ամենայն թագաւորս երկրի՝ ժողովել զնոսա
'ի պատերազմ. յօրն մեծ ՏՆ ԱՅ ամենակալի. քանզի
15 այսպէս ասաց ՏՐ: * Ահա գամ իբրև զգող,
երանի որք լիցեն արթունք. և պահիցեն զհանդերձս
իւրեանց: զի մի մերկս շրջեսցին. և երևեսցին
16 ամօթանք իւրեանց: * Եւ ժողովեսցին զնոսա
'ի տեղի մի. որ կոչի եբրայեցերէն՝ արմագեդոն:
17 * Եւ եօթներորդ հրեշտակն էհեղ 'ի սկաւառակէ
իւրմէ 'ի վերայ օդոյ. և ել ձայն մեծ
18 յերկնից՝ և յաթոռոյն՝ ասելով. եղև: * Եւ եղեն
փայլատակմունք. ձայնք՝ և որոտմունք: և եղև
շարժումն մեծ՝ որպիսի չէր եղեալ 'ի սկզբանէ՝
յորմէհետէ եղև մարդ 'ի վերայ երկրի՝ այնպիսի
19 շարժումն մեծ: * Եւ եղև քաղաքն մեծ յերիս
մասունս՝ և քաղաքք ազգացն անկան. և բաբելօն
մեծ յիշեցաւ առաջի ԱՅ. տալ նմա զբաժակն գինւոյ
20 ցասման բարկութեան նորա: * Եւ ամենայն կղզիք
փախեան. և լերինք 'ի միջոյ բարձան:
21 * Եւ կարկուտ մեծ իբրև կշիռ տաղանդի միոջ
իջանէր յերկնից 'ի վերայ մարդկան. և հայհոյէին
մարդիկ զԱԾ յերկինս՝ վասն հարուածոց կարկտին՝
զի մեծ էր հարուածն՝ և սաստիկ:

ԳԼ. ԺԷ:

1 Եւ եկն մին յեօթն հրեշտակացն՝ որք ունէին
զեօթն սկաւառակսն՝ խօսեցաւ ընդ իս՝ և ասէ.

Եկ այսր. և ցուցից քեզ զդատաստան մեծ պոռն
2 կին՝ որ նստի 'ի վերայ ջուրց բազմաց : * Ընդ ո-
րում պոռնկեցան թագաւորք երկրի՝ և արբեցան
բնակիչք երկրի 'ի գինւոյ արբեցութե̅ պոռնկու-
3 թեան նորա : * Եւ տարաւ զիս յանապատ
հոգւով. և տեսի զկին մի՝ զի նստէր 'ի վր̅ կարմիր
գազանի: և լի էր անուամբ հայհոյութե̅ բերան նր̅.
և գազանն՝ զոր տեսի՝ ունէր գլուխս եօթն՝ և եղ
4 ջիւրս տասն : * Եւ կինն զգեցեալ էր ծիրանիս և
կարմիրս, և զարդարեալ ոսկւով և մարգարտով.
և ականք պատուականօք՝ ունելով զբաժակ ոսկի
'ի ձեռին իւրում, և լի էր գարշելի և անմաքուր
5 պոռնկութեամբ : * Եւ 'ի ճակատ նորա գրեալ
անուն : խորհուրդ : բաբիլօն մեծ՝ մայր պոռնկու-
6 թեանց և գարշութեանց երկրի : * Եւ տեսի զկինն
արբեցեալ յարենէ սրբոց՝ և յարենէ ամենայն
վկայից Քի̅: և զարմացայ՝ տեսեալ զնա զարմաց-
7 մամբ մեծաւ : * Եւ ասէ ցիս հրեշտակն՝ ընդէ՞ր
զարմացար. ես ասացից քեզ զխորհուրդ կնոջն,
և զգազանին, որ բարձեալ ունի զնա. որ ունի
8 զեօթն գլուխս՝ և զտասն եղջիւրս : * Եւ գազանդ՝
զոր տեսեր՝ որ էր, և չէ. և հանդերձեալ է
ելանել 'ի դժոխոց՝ և 'ի կորուստ երթալ. և զարմասցին
ամենեքեան՝ որք բնակեալք են 'ի վերայ
երկրի : (որոց ոչ են գրեալք անուանք 'ի գիր կե
նաց 'ի սկզբանէ աշխարհի:) զոր տեսանէին զգա-
9 զանն, զի էր՝ և չէ. և մերձ է : * Աստ է իմաս-
տութիւն՝ որ ունի միտս. եօթն գլուխքն՝ եօթն
լերինք են. ուր կինն նստեալ էր 'ի վր̅ նոցա : և
նոքին թագաւորք եօթն են. և թագաւորք գոլով:
10 * Հինգքն անկան, և մինն եկաց. և մինն ոչ է ե-
կեալ : և յորժամ գայ՝ սակաւ մի ժամանակ ունի:
11 * Եւ գազանն՝ որ էր՝ և չէ՝ և նա ութերորդ է.
և է յեօթանց անտի, և 'ի կորուստ երթալոց է:
12 * Եւ տասն եղջիւրքն՝ զորս տեսեր՝ տասն թագա
ւորք են. որոց չեւ ևս է առեալ զթագաւորութի̅ն՝
այլ առնուն՝ և կան իշխանք 'ի մի ժամ. և առնուն
13 նոքա զիշխանութիւն ընդ գազանին. * Սոքա զմի

կամս ունին՝ եւ զզօրութիւն եւ զիշխանութիւն իւրեանց՝ գազանին տան։
14 * Եւ ընդ Գառինն պատերազմին. եւ Գառն յաղթեսցէ նոցա՝ զի Տր̃ է նոցա. եւ Թագաւոր թագաւորաց. եւ որք ընդ նմա՝ կոչեցեալք են, ընտրեալք՝
15 եւ հաւատարիմք։ * Եւ ասէ ցիս՝ Ջուրքն զոր տեսեր՝ ուր նստէր պոռնիկն՝ ժողովուրդք են. եւ
16 բազմութիւնք՝ եւ ազգք՝ եւ լեզուք։ * Եւ տասն եղջիւրքն՝ զորս տեսեր՝ գազանին. նոքա ատեսցեն զպոռնիկն՝ եւ աւերեսցեն զնա. եւ զմարմինս նորա
17 կերիցեն՝ եւ այրեսցեն զնա հրով։ * Քանզի Ած̃ ետ 'ի սիրտս նոցա առ 'ի լինել նոցա 'ի մի կամս. եւ տալ զթագաւորութիւնն գազանին. մինչեւ կա-
18 տարեսցի բանն Այ̃։ * Եւ կինն զոր տեսեր՝ է քաղաքն մեծ՝ որ ունի զթագաւորութիւն 'ի վերայ թագաւորութեանց երկրի։

Գլ. ԺԸ։

1 Եւ յետ այսորիկ տեսի այլ հրեշտակ իջեալ յերկնից՝ որ ունէր զիշխանութիւն մեծ, եւ երկիրս
2 լուսաւորեցաւ 'ի փառաց նորա։ * Եւ աղաղակեաց 'ի ձայն մեծ՝ ասելով. անկաւ՝ անկաւ Բաբելոն մեծ. որ եղեալ էր բնակութիւն դիւաց՝ եւ արգել ամենայն այսոց պղծոց. եւ բանտ պահպանութեան ամենայն թռչոց անսրբոց՝ եւ ատեցելոց։
3 * Վասն զի 'ի բարկութէ գինւոյ պոռնկութեան նորա արբին ամենայն ազգք եւ թագաւորք երկրի. որք ընդ նմա պոռնկեցան. եւ վաճառականք երկրի՝ նորա զօրութեանն յօրանալոյ մեծացան։
4 * Եւ լուայ զձայն յերկնից՝ զի ասէր. ելէ̃ք 'ի միջոյ դորա ժողովուրդ իմ. զի մի՛ հաղորդք լիցէք մեղաց դորա եւ 'ի հարուածոյ դորա մի՛ առնուցուք։
5 * Քանզի հասին մեղք նորա մինչեւ յերկինս. եւ յիշեաց Տր̃ զանօրէնութիւնս նորա։
6 * Եւ հատուցէ̃ք դմա՝ որպէս եւ հատոյց ձեզ. եւ առցէ դա երկպատիկ ըստ գործոց իւրոց. եւ զբաժակն որով խառնեաց՝ խառնեցէ̃ք դմա կըր-
7 կին։ * Եւ որչափ փառաւորեաց զինքն, եւ խայտաց.

այնչափ հատուցէք դմա զսուգ. զի ՚ի սրտի իւրում
ասէր՝ եթէ յամենայն ժամ նստայց եւ թագուհի՝
8 եւ այրի ոչ եւս եղէց՝ եւ զսուգ ոչ տեսից։ * Վասն
այնորիկ ՚ի միում աւուր եկեսցեն ՚ի վերայ դորա
հարուածք՝ մահ, եւ սուգ, եւ սով. եւ ՚ի հուր այրես-
ցի. զի հզօր է Տր Ած՝ որ դատեցաւ զնա։
9 * Եւ լացցեն, եւ կոծեսցին թագաւորք երկրի ՚ի
վերայ դորա՝ որք ընդ դմա պոռնկեցան, եւ խաղա-
ցին. եւ հեծեսցեն՝ յորժամ տեսցեն զծուխ կիզման
10 դորա։ * ՚Ի հեռաստանէ կայցեն վասն երկիւղի
տանջանաց դորա՝ եւ ասասցեն։ վայ, վայ քաղաքին
մեծի բաբելոնի. քաղաք հզօր՝ զի ՚ի միում ժա-
11 մուն եկին հասին դատաստանք քո։ * Եւ վաճա-
ռականք երկրի ողբասցեն, եւ սգասցին ՚ի վերայ
12 քո՝ զի զբեռինս նոցա՝ ոչոք է՝ որ գնէ։ * Եւ շահ,
որ ՚ի քէն, ոչ եւս իցէ՝ ոսկւոյ՝ եւ արծաթոյ. եւ ա-
կանց պատուականաց՝ եւ մարգարտոյ. եւ բեհեզոյ՝
եւ ծիրանւոյ՝ եւ ոսկեթելի՝ եւ որդանի։ (եւ ամենայն
փայտ խնկոյ՝ եւ ամենայն անօթ փղոսկրեայ. եւ ա-
13 մենայն անօթ ՚ի փայտէ պատուականէ։ * Եւ ՚ի
պղնձոյ՝ եւ յերկաթոյ՝ եւ ՚ի կճոյ. եւ կինամոմոն։)
եւ ամենայն խունկ, եւ իւղ, եւ կնդրուկ. եւ գինի,
եւ ձէթ, եւ նաշիհ, եւ ցորեան, եւ ստացուածք ա-
մենայն, եւ արջառ՝ եւ ոչխար. երիվարաց եւ կառաց՝
14 որ վայել է մարմնոց եւ ոգւոց մարդկան։ * Եւ ամ
ցանկութիւն անձին քոյ գնաց ՚ի քէն. եւ լուսա-
փայլ վայելչութիւնն, պարարտն, եւ գէրն, եւ այլ
ամենն գնաց ՚ի քէն. եւ ոչ եւս այլ գտցես զայդ։
15 * Եւ ամենայն շահավաճառք այսոքիւք մեծա-
ցեալք՝ ՚ի քէն ՚ի բաց կայցեն վասն երկիւղի տանջա-
16 նաց քոց լալով՝ եւ սուգ առնելով։ * Եւ ասասցեն.
վայ, վայ քաղաք մեծ. որ զգեցեալ էիր զբեհեզս՝
եւ զծիրանիս՝ եւ որդան՝ եւ զոսկէզօծս. եւ քա-
17 րինս պատուականս՝ եւ մարգարիտս։ * Զի ՚ի մի-
ում ժամու ապականեցաւ այդչափ մեծութիւն քո։
եւ ամենայն նաւավար՝ եւ ամենայն, որք ՚ի տեղիս
տեղիս նաւեն. եւ նաւաստք. եւ որք միանգամ ծով
կանաւ գործեն՝ ՚ի հեռաստանէ կայցեն լալով։

18 * Եւ աղաղակեսցեն տեսանելով զծուխ կիզման
նորա․ եւ ասելով․ ո՞ նման է քաղաքիս այսմիկ մե-
19 ծի։ * Եւ արկցեն զհող ՚ի վերայ գլխոց իւրեանց՝
եւ գուժալով ձայնիւ մեծաւ՝ լալով եւ ողբալով
ասասցեն․ վա՛յ՝ վա՛յ քաղաքդ մեծ․ որով ամենե-
քեան մեծանային։ որք ունէին զնաւս ՚ի ծովու՝ վասն
պատուականութեան քո։ զի ՚ի միում ժամու ա-
20 պականեալ կործանեցար։ * Ուրախ լերուք ՚ի վ͞ր
նորա երկինք՝ եւ սուրբ առաքեալք՝ եւ մարգարէք․
զի դատեաց Ա͞ծ զդատաստանս ձեր ՚ի նմանէ։
21 * Եւ էառ հրեշտակ մի հզօր՝ զքար մի մեծ իբրեւ
զերկան, եւ ընկէց ՚ի ծով՝ ասելով։ այսպէս յար-
ձակմամբ անկցի բաբիլոն քաղաքդ մեծ․ եւ այլ ոչ
22 եւս գտցի։ * Եւ ձայն քնարերգաց, եւ երաժշտա-
կանաց՝ արուեստականաց՝ եւ փողահարաց՝ եւ թմբկի,
23 այլ ոչ եւս լուիցի ՚ի քեզ։ * Եւ լոյս ճրագի, եւ
ձայն երկանի՝ այլ ոչ եւս երեւեսցի ՚ի քեզ․ եւ ձայն
փեսայի եւ հարսին ոչ եւս լուիցի ՚ի քեզ․ եւ ոչ
վաճառականք քո՝ փառաւորք եւ մեծամեծք երկրի․
որք զուարճացեալք էին ՚ի քեզ․ վասն զի կախար-
դութեամբ դեղատուութեան քո մոլորեցան ա-
24 մենայն ազինք։ * Եւ ՚ի քեզ ամենայն արիւն մար-
գարէից եւ սրբոց գտաւ․ եւ ամենայն դրելոց յերկ-
րին կենդանեաց։

Գլ․ ԺԹ․

1 Եւ յետ այսորիկ լուայ զձայն մեծ բազմութեան
յերկինս ասելով։ ալէլուիա։ փրկութիւն, եւ
փառք․ եւ պատիւ եւ զօրութիւն Ա͞յ մերոյ։
2 * Զի ճշմարիտ եւ արդար են դատաստանք նորա։
զի դատեաց զպոռնիկն մեծ ՚ի պոռնկութեան իւ-
րում, եւ խնդրեաց զվրէժ արեան ծառայից իւրոց
3 ՚ի ձեռաց նորա։ * Եւ կրկին անգամ օրհնեցին, եւ
ասացին․ ալէլուիա։ եւ ծուխ նորա ելանէր յա-
4 ւիտեանս յաւիտենից։ * Եւ անկան քսան եւ չորք
երիցունքն՝ եւ չորք կենդանիքն․ եւ երկիրպագեցին
Ա͞յ․ որ նստէրն յաթոռ փառաց․ ասելով։ Ամէն
5 ալէլուիա։ * Եւ ձայն յաթոռոյն ելանէր՝ ասելով։

օրհնեցէք զԱծ մեր ամենայն ծառայք նորա. և
որք երկնչիք 'ի նմանէ՝ փոքունք և մեծամեծք։
6 * Եւ լուայ զձայն բազմութեան մեծի. իբրև զձայն
ջուրց բազմաց. և իբրև զձայն հզօր որոտմանց.
ասելով դարձեալ. ալէ՛լուիայ։ վասնզի թագա-
ւորեաց Տր Ած մեր ամենակալ։
7 * Խնդամք՝ և ցնծամք. և տամք փառս նմա. զի
եկն հարսանիք գառինն։ և կին նորա պատրաս
8 տեաց զինքն։ * Եւ տուաւ նմա զգենուլ բեհեզս
սպիտակս՝ սբս՝ և լուսափայլս։ որ է բեհեզն ար-
9 դարութիւն սրբոցն։ * Եւ մի յերիցանցն ասէ ցիս.
գրեա՛ զայդ։ երանելիք են ամենեքեան՝ որք կոչե-
10 ցեալք են յընթրիս հարսանեաց գառինն։ * Եւ
ես անկեալ առաջի ոտից նորա, զի երկրպագից
11 նմա։ * Եւ ասէ ցիս. անսա՛, մի՛ անկանիր առաջի
իմ. քանզի և ես ծառայակից քո եմ, և եղբարց
քոց, որք ունին զվկայութիւն Յի Քի։ Տն Այ
միայն երկրպագեա։ քանզի հաստատութեամբ Յի է
տեսիլդ։ և հոգի մարգարէութեանդ։ զի վկայու-
թիւնն Յի է Հոգւովն սրբով. որ 'ի մարգարէսն
12 էր։ * Եւ տեսի զերկինս բացեալ. և ահա ձի սպի
տակ. և որ հեծեալն էր 'ի նմա՝ կոչիւր հաւատարիմ,
և ճշմարիտ։ և արդարութեամբ դատէ՝ և պատե-
13 րազմի։ * Եւ աչք նորա բոց հրոյ։ և 'ի վերայ
գլխոյ նորա պսակս բազումս։ և ունէր զանուն գր-
րեալ. զոր ոչ ո՛ք գիտէ՝ բայց միայն ինքն։ Եւ ար
կեալ զիւրեաւ զհանդերձ ներկեալ արեամբ։ և կո-
14 չիւր անուն նր՝ բան Այ։ * Եւ զօրավարք երկնից՝
և զօրք երկնից զհետ երթային նորա ձիօք սպիտա-
15 կօք. զգեցեալք բեհեզս սբս և սպիտակս։ * Եւ 'ի
բերանոյ նորա ելանէր սուր սրեալ. զի նովաւ հարցէ
զազգս։ և նա հովուեսցէ զնոսա գաւազանաւ եր-
կաթեաւ։ և նա կոխեսցէ զհնձան գինւոյ՝ ցասման
16 բարկութեան Այ ամենակալի։ * Եւ ունէր 'ի վե
րայ պատմուճանի իւրոյ։ և 'ի վերայ անդամոց իւ
րոց գիր գրեալ։ թագաւոր թագաւորաց. և Տր
17 տերանց։ * Եւ տեսի այլ հրեշտակ, որ կայր 'ի
վերայ արեգական։ զի աղաղակեաց 'ի ձայն մեծ

ամենայն հաւուց թռուցելոց ՚ի մէջ երկնից՝ ասելով.
եկայք, և ժողովեցարուք յընթրիս մեծին Այ:
18 * Եւ կերիջիք զմարմինս թագաւորաց. և զմարմինս
հզօրաց. և զմարմինս երիվարաց՝ և ամենայն
հեծելոց ՚ի նոսա: և զմարմինս ազատաց և ծառայից՝
19 մեծի և փոքու: * Եւ տեսի զգազանն՝ և
զթագաւորս երկրի՝ և զզօրս նոցա ժողովեալս առնել
զպատերազմ ընդ այնմ, որ հեծեալն էր ՚ի
20 ձի սպիտակ՝ և ընդ զօրս նորա: * Եւ ըմբռնեցաւ
գազանն. և ընդ նմա սուտ մարգարէն՝ որ առնէր
զնշանսն առաջի նորա. զորս մոլորեցոյց. և ետ
առնուլ զդրոշմն գազանին. և զերկրպագուս պատկերի
նորա: և կենդանւոյն արկին զնոսա՝ ՚ի լիճ
21 հրոյն այրեցելոյ ծծմբով: * Եւ այլքն մեռան
՚ի սրոյ հեծելոյն ՚ի վերայ ձիոյն. յորոյ բերանոյ
ելանէր սուրն. և ամենայն թռչունք յագեցան ՚ի
մարմնոց նոցա:

ԳԼ. Ի:

1 Եւ տեսի այլ հրեշտակ՝ զի իջանէր յերկնից. և
ունէր զփականս դժոխոց: և շղթայս մեծ ՚ի
2 ձեռին իւրում: * Եւ ըմբռնեաց զվիշապն՝ զօձն առաջին.
որ է բանսարկուն և սատանայ: և կապեաց
3 զնա զհազար ամ. * Եւ էարկ զնա յանդունդս
դժոխոց. և փակեաց, և կնքեաց զնա՝ զի այլ մի
ևս մոլորեցուսցէ զազգս. մինչև կատարեսցի հազար
ամն: և յետ այնորիկ պարտ է լուծանիլ նմա
4 սակաւ ժամանակս: * Եւ տեսի աթոռս. և նըստան
՚ի վերայ նոցա: և դատաւորութիւն տուաւ
նոցա: ընտրել զհոգիս չարչարելոցն վասն վկայութեանն
Յի՝ և վասն բանին Այ: և զորս ոչ երկրպագին
գազանին. և ոչ առին զդրոշմն նորա
՚ի ճակատս իւրեանց, և ոչ ՚ի վր աջոյ ձեռին իւրեանց:
և կեցին, և թագաւորեցին ը Քի մինչև
5 ՚ի հազար ամ: * Եւ յետ սորին ՚ի մեռելոց ոչոք
եկեաց, մինչև ՚ի կատարել հազար ամին: այս է
6 յարութիւն առաջին: * Երանի սրբոյն, որք ունին

բաժին ՚ի յարութեանն առաջնում: ՚ի վերայ սոցա
երկրորդ մահ ոչ ունի իշխանութիւն: այլ եղի-
ցին քահանայք Այ, և Տն Յի Քի: և թագաւո-
7 րեսցեն ընդ նմա հազար ամ: * Եւ յետ հազար
ամին լուծցի սատանայ՝ և հանցէ ՚ի բանտէ անտի:
ելցէ և մոլորեցուսցէ զազգս ամենայն ընդ չորս
կողմանս երկրի: և զգօգ՝ և զմագօգ ածցէ ՚ի ձեռս՝
ժողովել նոքօք զամենայն զօրս ՚ի պատերազմ:
8 որոց թիւ իբրև զաւազ ծովու: * Եւ ելցեն ՚ի
լայնութիւնս երկրի. և պատեսցեն զբանակս սըր-
9 բոցն, և զքաղաքն սիրելի: * Եւ իջցէ հուր յերկ-
նից առ յԱյ և կերիցէ զնոսա: և արկցէ զնոսա
10 ՚ի ծովն հրոյ և ծծմբոյ: ուր էր գազանն, * Եւ
սուտ մարգարէն: և չարչարեսցին զտիւ և զգիշեր:
11 * Եւ տեսի զաթոռ սպիտակ մեծ. և ՚ի վերայ
նորա նստեալ՝ յորոյ երեսացն երկնչէին, և փախ-
չէին երկինք և երկիր. և տեղի ոչ գտաւ նոցա:
12 * Եւ տեսի զմեռեալս՝ զմեծամեծս և զփոքունս,
որք կային առաջի աթոռոյն: և դրեանք բանային:
և այլ գիրք բացաւ կենաց: և դատեցան մե-
13 ռեալքն ՚ի գրելոյն՝ ըստ գործոց իւրեանց: * Եւ
ետ ծով զմեռեալս իւր. և մահ և դժոխք զիւրեանց
մեռեալս: և դատեցան իւրաքանչիւր ըստ գործոց
14 իւրեանց: * Եւ մահ՝ և դժոխք մատնեցան ՚ի լիճն
15 հրոյ: այս է մահն երկրորդ: * Եւ որոք ոչ գտաւ
՚ի գիրն կենաց գրեալ՝ արկաւ ՚ի լիճ հրոյն:

ԳԼ. ԻԱ:

1 Եւ տեսի երկին նոր՝ և երկիր նոր: քանզի առա
ջին երկին և երկիր էանց. և ծով ոչ գոյր:
2 * Եւ զքաղաքն սբ՝ զնորն եէմ տեսի, զի իջանէր
յԱյ՝ և յերկնից՝ զարդարեալ և պատրաստեալ
3 որպէս հարսն առն իւրոյ: * Եւ լուայ զձայն մեծ
յերկնից որ ասէր: ահաւասիկ խորանն Այ ՚ի մէջ
մարդկան. և բնակեսցի ընդ նոսա: և նոքա ժողո
4 վուրդք նմա: և սաԱծ նոցա: * Եւ ջնջեսցէ
զամենայն արտօսր յաչաց նոցա: և մահ ոչ ևս գոյ:
ոչ սուգ. և ոչ աղաղակ. ոչ ցաւք՝ և ոչ աշխա

5 տանք եւս գոյ : զի առաջինն էանց : * Եւ ասաց ցիս՝
որ նստէր ՚ի վերայ աթոռոյն : ահաւասիկ առնեմ
զամենայն նոր : և ասէ ցիս, գրեա՛ • այսք բանք
6 ճշմարիտք են և հաւատարիմք : * Եւ ասէ ցիս՝ եղէ,
ես եմ α ալֆա, և օ օ• սկիզբն և կատարած: ես ծա
7 րաւելոյն տամ յաղբերէ ջրոյ կենաց ձրի : * Որ
յաղթէ, ժառանգեսցէ զայս ամենայն: և ես եղէց
նորա ԱԾ : և նոքա եղիցին ինձ որդիք :
8 * Եւ ծուլոյն, և անհաւատից• և պղծոց• և
սպանողաց, և պոռնկաց• և կախարդաց՝ և կռապաշ
տից՝ և դեղատուաց• և ամ՟ ստոց՝ ամբարշտաց:
որոց բաժինն ՚ի լճին այրեցելոյ հրով և ծծմբով•
9 որ է մահն երկրորդ : * Եւ եկն առ իս մի յեօթանց
հրեշտակայն, որք ունէին զեօթն սկաւառակսն
լցեալս եօթն վախճանօք կատարելովք՝ խօսեցաւ
ընդ իս և ասէ : եկ, ցուցից քեզ զհարսն՝ և զկին
10 գառինն: * Եւ էառ տարաւ զիս ՚ի լեառն մի
բարձր և մեծ՝ հոգւով: և եցոյց ինձ զքաղաքն
մեծ և սբ՝ եՀմ: զի իջեալ յերկնից առ յԱԾ:
11 * Եւ ունէր զփառս ԱԾ: Եւ ՚ի նմա լուսաւորու-
թիւն• նմանեալ ականց պատուականաց՝ քար յաս
12 պիս սառնատեսակ և կենդանի: * Եւ էին պա-
րիսպք նորա մեծ, և բարձր: և ունէր դրունս
երկոտասան: և յերկոտասան դրունսն երկոտասան
հրեշտակս, և անուանք իւրաքանչիւրոց ՚ի վերայ
դրանցն գրեալք էին՝ ըստ երկոտասան ցեղիցն Իէլի:
13 * Յարևելից կողմանէ դրունք երեք: և ՚ի հիւսիսոյ
կողմանէ դրունք երեք: և ՚ի հարաւոյ կողմանէ
դրունք երեք: և յարևմտից կողմանէ դրունք
14 երեք: * Եւ պարիսպ քաղաքին ունէր հիմունս
երկոտասան: և ՚ի նոսա երկոտասան անուանք երկոտասան
15 առաքելոց գառինն: * Եւ որ խօսէրն
ընդ իս, ունէր գեղէգն ոսկի ՚ի ձեռին իւրում,
զի չափեսցէ զքաղաքն՝ և զդրունս նորա՝ և զպարիսպս
16 նորա: * Եւ էր քաղաքն քառակուսի: և
որչափ երկայնութիւն նորա՝ նոյնչափ և լայնութիւնն՝
17 և բարձրութիւնն՝ հաւասար: * Եւ էր
չափ երկայնութեան նորա երկոտասան հազար աս

պարէզ ։ և լայնութիւն նորա՝ և բարձրութիւնն
միաչափ, կիլօս ։ և չափեաց զպարիսպ նորա հար-
իւր քառասուն և չորս ասպարէզ ։ չափ մարդոյ՝
18 որ է հրեշտակի ։ * Եւ էր շինուած պարսպոյ՝
քաղաքին յասպիս ։ և քաղաքն էր ոսկի մաքուր,
19 նման ա̅բ՝ և սպիտակ ապակւոյ ։ * Եւ հիմունք պարս-
պի քաղաքին յամենայն ականց պատուականաց զար-
դարեալ ։ հիմն առաջին յասպիս ։ երկրորդն շա-
փիղա ։ երրորդն պղնձադոյն ։ չորրորդն զմրուխտ ։
20 * Հինգերորդն եղենգնաքար ։ վեցերորդն սար-
դիոն ։ եօթներորդն ոսկէքար ։ ութերորդն բիւ-
րեղ ։ իններորդն տպազիոն ։ տասներորդն քրի
21 սոպրա ։ մետասաներորդն յակինթ ։ երկոտասան
երրորդն ամեթօս ։ * Եւ էին երկոտասան դրունք
յերկոտասան մարգարտաց՝ միաձև ։ և իւրաքանչիւ-
րոյն դրունք՝ էին մի մի դուռն՝ ՚ի միոյ միոյ մար-
գարտոյ ․ և ընդարձակութիւն քաղաքին ոսկի մա-
22 քուր՝ որպէս զապակի պայծառ ։ * Եւ տաճար ոչ
տեսի ՚ի նմա՝ քանզի Տ̅ր Ա̅ծ ամենակալ տաճար
23 էր ՚ի նմա՝ և գառն ։ * Եւ քաղաքին չէին պէտք
արեգական և լուսնի, զի լուսաւորեսցեն զնա ։
քանզի փառքն Ա̅յ լուսաւորէին զնա յամենայն
24 ժամ ․ և ճրագ ՚ի նմա գառն ։ * Եւ գնային հե-
թանոսք ՚ի լոյս նորա ։ և թագաւորք երկրի լու-
25 սոզդեայք լինէին ՚ի փառս նորա ։ * Եւ դրունք
նորա ոչ փակեին ՚ի տուէ և ՚ի գիշերի ։ այլ բաց
կային հանապազորդ ։ և գիշեր ոչ ևս լինէր ։
26 * Այլ փառք, և պատիւ ազգաց ՚ի նմա ։
27 * Եւ ոչ մտցէ անդ ամենայն չարական, և պիղծ,
և ստութիւն, բայց միայն որք գրեալք են ՚ի
դպրութեան կենաց գառինն ։

Գլ․ ԻԲ ։

1 Եւ եցոյց ինձ մաքուր գետ կենդանւոյ ջրոյ՝ սառ-
նատեսակ՝ որ ելանէր յաթոռոյն Ա̅յ և գա-
2 ռինն ։ * Եւ գնայր ընդ մէջ հրապարակաց քաղա-
քին ․ և զեզերբ գետոյն աստի և անտի ծառս կե-

նաց՝ որք բերէին պտուղս երկոտասան․ ըստ միոյ միոյ ամսոյ տային զպտուղս իւրեանց․ և տերև ծառոցն էր բժշկութիւն հեթանոսաց։
3 * Եւ նզովք անդ ոչ ևս էին․ և աթոռն Այ և գառին նորա էր 'ի նմա․ և ծառայք նորա պաշ-
4 տէին զնա։ * Եւ տեսանէին զերեսս նորա՝ և անուն նորա գրեալ էր 'ի ճակատս նոցա։
5 * Եւ գիշեր ոչ էր անդ՝ և ոչ էին անդ պէտք ճրագի, և լուսոյ արեգական․ վասն զի Տէր Ած լուսաւորէր զնոսա․ և թագաւորեսցեն յաւի-
6 տեանս յաւիտենից։ * Եւ ասէ ցիս՝ այս բանք հաւատարիմք են և ճշմարիտք։ և Տէր Ած մարգարէից սրբոց՝ առաքեաց զհրեշտակ իւր՝ ծառայից իւրոց ցուցանել՝ զոր լինելոց է վաղվաղակի։
7 * Ահա գամ վաղվաղակի։ երանի՝ որ պահէ զբանս
8 մարգարէութեանս այսորիկ։ * Ես յօհաննէս լուայ և տեսի զայս ամենայն․ և յորժամ լուայ և տեսի․ անկայ՝ և երկիրպագի հրեշտակին՝ որ ցու-
9 ցանէր ինձ զայս ամենայն։ * Եւ ասէ ցիս՝ մի անկանիր առաջի իմ, և երկիրպագաներ․ քանզի և ես ծառայակից քո եմ, և եղբարց քոց, որք պահեն զբանս մարգարէութեան գրոյս այսորիկ։
10 Աստուծոյ երկիրպագ։ * Եւ ասէ ցիս դարձեալ․ մի կնքեր զբանս մարգարէական գրոյս այսորիկ․
11 քանզի ժամանակս մերձ է։ * Որ ամբարշտելոցն է՝ ամբարշտեսցի․ և որ աղտեղանալոցն է՝ աղտեղասցի․ և որ արդարանալոցն է՝ արդարասցի․ և որ
12 սրբելոցն է՝ սրբեսցի։ * Ահա՝ ես գամ վաղվաղակի՝ և վարձք իմ ընդ իս է․ հատուցանել իւրա-
13 քանչիւր զգործս իւրեանց։ * Ես եմ ալֆայ α և ο ο, սկիզբն և կատարած․ առաջին և վերջին։
14 * Երանելիք են՝ որք պահեն զպատուիրանս նորա․ նոքա ունին զիշխանութիւն ուտել 'ի փայտէն կենաց՝ և մտանել ընդ դրունս քաղաքին։
15 * Այլ ելցեն արտաքս շունք՝ և դեղատուք՝ և սպանօղք՝ և կռապաշտք․ և ամենեքեան որք սիրեն
16 զստութիւն։ * Ես Յս առաքեցի զհրեշտակ իմ վկայել զայս ձեզ եկեղեցեացդ․ ես եմ յարմատոյ

և 'ի սեռէ Դաւթի. և աստղ պայծառ առաւօտու:
17 * Եւ Հոգի, և փեսայ՝ որ գոլոյն եմ: և հարսունքն
ասեն՝ եկ: և որ լսէ՝ ասասցէ՝ թէ եկ. և որ ծա
րաւի է՝ եկեսցէ. և որոք կամի առնուլ զՋուրն
18 կենաց ձրի: * Վկայեմ ես ամի՝ որ լսէ զբանս
մարգարէութեան գրոյս այսորիկ: թէ ոք յաւելցէ
'ի սա, յաւելցէ Ած 'ի վերայ նորա զեօթն հար-
19 ուածսն՝ գրեալսն 'ի գիրս յայս: * Եւ եթէ ոք
պակասեցուսցէ 'ի բանից մարգարէութեան գրոյս
այսորիկ՝ պակասեցուսցէ, և հատցէ Ած զբաժին
նորա 'ի ծառոյն կենաց՝ և 'ի քաղաքէն սրբոյ՝ որ
20 գրեալ է 'ի գիրս յայս: * Ասէ՝ որ վկայեաց այսո-
ցիկ. գամ ես վաղվաղակի: Ամէն:
Եկ Տէր Յս Քս:
21 * Շնորհք Տն մերոյ Յի Քի 'ի վերայ ամենայն
սրբոց: Ամէն:

Վ Ե Ր Ջ:

* * *

Նախադրութիւն Մատթէոսի Աւետարանին :

Աւետարան որ ը̅ Մատթէոսի գրեալ է ։ զի ինքն Մատթէոս աշակերտ Տ̃ն գրեաց զաւետարանս զայս։ Եւ պատմէ մեզ 'ի սկզբանն զըստ մարմնոյ ծնունդ Փրկչին 'ի զաւակէ Դաւթի · վ̃ն և զազգահամարն ժողովէ մինչև 'ի Ք̃ս՝ ազգս քառասուն և երկու · բերէ ը̅ կարգի և զմկրտութիւն Յօհաննու, և 'ի լերինն 'ի դիմաց զփորձութիւն: Եւ զնշանս և զարուեստս մեծամեծս 'ի Փրկչէն եղեալ · և զընտրութիւն աշակերտացն · և վասն խորհրդոյ մատնութեանն · և զկատարածն · զի մատնեցաւ Պիղատոսի · և խաչեցաւ մարմնով · և մարմինն եդաւ 'ի գերեզմանի · և զինուորքն բաժանեցին զհանդերձս նորա : Նոյն և զերրորդ աւուր յարութիւնն · և զպատուէր աշակերտացն · աշակերտել զամենայն հեթանոսս , և մկրտել զնոսա պատուիրեաց · լինել ընդ նոսա զամենայն աւուրս մինչև 'ի կատարած աշխարհի խոստացաւ :

Մատթէոս գրեաց զԱւետարանս իւր յԵրուսաղէմ քաղաքի, 'ի լեզու Եբրայեցի, զկնի ութ ամի (ըստ այլոց ոմանց՝ զկնի չորից ամաց) համբառնալոյ Փրկչին, 'ի խնդրոյ Եկեղեցւոյն Երուսաղէմի :

Մատթէոս՝ որ թարգմանի երդ կենաց :

* * *

ՍԿԻԶԲՆ ԳԼԽՈՑ

Աւետարանին որ ըստ Մատթէոսի :

	Գլուխ .	Համար :
Վասն մոգուցն :	1 .	1 :
Վասն կոտորածի մանկանցն :	2 .	16 :
Վասն յառաջընթաց քարոզութեանն Յօհաննու :	3 .	1 :
Վասն վարդապետութեան Փրկչին :	3 .	23 :
Վասն երանութեանց :	5 .	2 :
Վասն բորոտին :	8 .	1 :
Վասն հարիւրապետին :	8 .	5 :
Վասն զոքանչին Պետրոսի :	8 .	14 :
Վասն բժշկութե՟ ամ՟ ցաւոց :	8 .	16 :
Վասն որ ոչ ետ հրաման երթալ զկնի :	8 .	19 :
Վասն սաստելոյն 'ի վերայ ջուրցն :	8 .	25 :
Վասն դիւահարացն :	8 .	28 :
Վասն անդամալուծին :	9 .	1 :
Վասն Մատթէի :	9 .	9 :
Վասն դստեր ժողովրդապետին :	9 .	18 :
Վասն տեռատեսին :	9 .	20 :
Վասն երկուց կուրացն :	9 .	27 :
Վասն խուլ և համր դիւահարին :	9 .	32 :
Վասն առաքելոց իշխանութեան	10 .	1 :
Վ՟ առաքելոյն Յօհաննու զաշակերտսն :	11 .	2 :
Վասն՝ որոյ ձեռն գօսացեալ էր :	12 .	10 :
Վայսն կոյր և համր դիւահարին :	12 .	22 :
Վասն՝ որ խնդրէին նշանս :	12 .	38 :

*

Վասն առակացն սերմանեաց : 13 . 1 :
Վասն Յօհաննու և Հերովդի : 14 . 1 :
Վասն հինգ հացին : 14 . 15 :
Վասն երթալոյն 'ի վերայ ծովուն : 14 . 22 :
Վասն անցանելոյն զպատուիրանաւն Այ : 15 . 1 :
Վասն կնոջն քանանացւոյ : 15 . 21 :
Վասն բժշկելոյ զժողովուրդն : 15 . 29 :
Վասն եօթն հացին : 15 . 32 :
Վասն խմորոյ փարիսեցւոյ : 16 . 6 :
Վասն՝ որ 'ի կեսարիա հարցմանն : 16 . 13 :
Վասն այլակերպութեան Տն : 17 . 1 :
Վասն լուսնահարին : 17 . 14 :
Վասն խնդրելոյ զերկդրամեանն : 17 . 23 :
Վասն հարցանելոյն թէ ով իցէ մեծ : 18 . 1 :
Վասն առակի հարիւր ոչխարին : 18 . 12 :
Վասն թողլոյ զբիւր տաղանդն : 18 . 23 :
Վասն հարցմանն արձակելոյ առն զկինն : 19 . 1 :
Վասն հարցանելոյ մեծատանն զՅս : 19 . 16 :
Վասն վարձկանութեան մշակացն : 20 . 1 :
Վասն որդւոյն զեբեդեայ : 20 . 20 :
Վասն երկուց կուրացն : 20 . 29 :
Վասն իշոյն և յաւանակին : 21 . 1 :
Վասն կուրացն և կաղացն : 21 . 14 :
Վասն չորանալոյ թզենւոյն : 21 . 18 :
Վասն հարցանելոյ զՏէրն քահանայապետացն և ծերոց : 21 . 23 :
Վասն առակի երկուց որդւոյն : 21 . 28 :
Վասն առակի այգւոյն : 21 . 23 :
Վասն կոչեցելոցն 'ի հարսանիսն : 22 . 1 :
Վասն դահեկանին, որով փորձեցին զՏրն : 22 . 15 :

Վասն սադուկեցւոյն ։ 22 . 23 ։
Վասն օրինականայն ։ 22 . 34 ։
Վասն հարցանելոյ զփարիսեցիսն ։ 22 . 41 ։
Վասն վայ տալոյ դպրացն և փարիսեցւոց ։ 23 . 13 ։
Վասն կատարածի աշխարհի ։ 24 . 3 ։
Վասն աւուրն և ժամուն ։ 24 . 36 ։
Վասն տասն կուսանացն ։ 25 . 1 ։
Վասն զտաղանդսն տալոյ ։ 25 . 14 ։
Վասն գալստեան Տ̅ն̅ ։ 25 . 31 ։
Վասն օծանելոյն մարեմայ զՏ̅ր̅ն իւղով ։ 26 . 6 ։
Վասն պատրաստելոյ զպասեքն ։ 26 . 17 ։
Վասն օրհնաւոր խորհրդոյն ։ 26 . 26 ։
Վասն մատնութեան Տ̅ն̅ ։ 26 . 41 ։
Վասն ուրացութեանն Պետրոսի ։ 26 . 69 ։
Վասն յուդայի զղջմանն ։ 27 . 3 ։
Վասն խնդրելոյ զՏէրունական մարմինն ։ 27 . 57 ։
Վասն իւղաբեր կանանցն ։ 28 . 1 ։

Նախադրութիւն Մարկոսի Աւետարանին։

Աւետարանս որ ըստ Մարկոսի գրեալ է։ Սոյն Մարկոս աշակերտ Պետրոսի, և ընթացակից Պօղոսի՝ գրեաց զԱւետարանս զայս. և դնէ զսկիզբն և ասէ. Սկիզբն Աւետարանի՝ 'ի Յօհաննու քարոզութենէն. և զմկրտութիւնն Յօհաննու՝ և առնու զվկայութիւն յեսայեայ մարգարէէ։ Նշանակէ և զփորձութիւնն 'ի լերինն. և ոչ ասէ զփորձանսն։ Պատմէ և վասն ընտրութեան աշակերտացն. և զնշանս և զարուեստս զորս արար. և զխորհուրդ մատնութեան, և զկատարածն. որ և մատնեցաւ պիղատոսի. և խաչեցաւ մարմնով. և զի զինուորքն բաժանեցին զհանդերձս նորա. և զի մարմինն եդաւ 'ի գերեզմանի. և յարեաւ երեքօրեայ. և զիջանել հրեշտակին. և երևիլ կանանցն. և զնոյնն պատմել աշակերտացն։

Մարկոս հրամանաւ Պետրոսի վիմի գրեաց զԱւետարանս իւր յԱղէքսանդրիայի քաղաքի, 'ի լեզու Եգիպտացի, զկնի. ԺԵ. ամի համբառնալոյ Փրկչին։ Բայց ըստ այլոց՝ Մարկոս հրամանաւ Պետրոսի վիմի գրեաց զԱւետարանն իւր 'ի Հռոմ քաղաքի, զկնի Երկոտասանից ամաց համբարձմանն Քրիստոսի՝ Յունական լեզուաւ. որ և նոյն 'ի Լատինական լեզու թարգմանեցաւ։ Եւ անտի մինչ գնաց յԵգիպտոս՝ նոյնն թարգմանեալ եղև նաև յԵգիպտական լեզու։

Մարկոս՝ որ թարգմանի երդ կենաց բարձր պատուար, կամ 'ի վերայ տանեացն։

ՍԿԻԶԲՆ ԳԼԽՈՑ

Աւետարանին որ ըստ Մարկոսի:

	Գլուխ.	համար:
Վասն դիւահարին :	1.	23:
Վասն Պետրոսի զոքանչին :	1.	29:
Վասն բժշկութեան հիւանդութեանց :	1.	32:
Վասն բորոտին :	1.	40:
Վասն անդամալուծին :	2.	3:
Վասն ղեւեայ մաքսաւորին	2.	14:
Վասն գօսացեալ ձեռին :	3.	1:
Վասն առաքելոցն ընտրութեան :	3.	13:
Վասն սերմանեացն առակին :	4.	2:
Վասն սաստելոյ ջուրցն :	4.	35:
Վասն լէգէօնայն :	5.	1:
Վասն դստեր ժողովրդապետին :	5.	21:
Վասն տեռատեսին :	5.	25:
Վասն համարոյ առաքելոցն :	6.	7:
Վասն Յովհաննու և Հերովդի :	6.	14:
Վասն հինգ հացիցն և երկու ձկանցն :	6.	35:
Վասն 'ի վերայ ծովուն գնալոյն :	6.	47:
Վասն անցանելոյ զպատուիրանաւն Այ :	7.	5:
Վասն ասորւոյ կնոջն փիւնիկեցւոյ :	7.	24:
Վասն համրին և խլին :	7.	31:
Վասն եօթն հացիցն :	8.	1:
Վասն խմորոյ փարիսեցւոյն :	8.	16:
Վասն կուրին :	8.	22:
Վասն հարցանելոյն 'ի կեսարիա զՊետրոս:	8.	27:

Վասն այլակերպութեան Տ՟ն։ 9. 1:
Վասն լուսնահարին։ 9. 16:
Վասն խորհելոյ աշակերտացն՝ թէ ով իցէ մեծ։ 9. 32:
Վասն հարցմնելոյն թէ պարտ իցէ արձակել զկին։ 10. 1:
Վասն հարցմնելոյ մեծատանն զՅ՟ս։ 10. 17:
Վասն որդւոցն զեբեդեայ։ 10. 35:
Վասն բարտիմէոսի։ 10. 46:
Վասն յաւանակին և իշոյն։ 11. 1:
Վասն չորանալոյ թզենւոյն։ 11. 12:
Վասն անյիշաչարութեան։ 11. 25:
Վասն հարցմնելոյ քահանայապետիցն զՏէրն։ 11. 27:
Վասն այգւոյն։ 12. 1.
Վասն հարցմնելոյն զդահեկանէն։ 12. 13:
Վասն սադուկեցւոյն։ 12. 18:
Վասն դպրայն։ 12. 28:
Վասն Տ՟ն հարցմնելոյ զփարիսեցիսն։ 12. 35:
Վասն երկու լումայիցն։ 12. 41:
Վասն կատարածին։ 13. 3:
Վասն աւուրն և ժամուն։ 13. 32:
Վասն օծանելոյ կնոջն զՏէրն։ 14. 3:
Վասն զատկին։ 14. 12:
Վասն մատնութեանն մարգարէանալոյ։ 14. 18:
Վասն Պետրոսի ուրացութեանն։ 14. 66:
Վասն խնդրելոյ զՏէրունական մարմինն։ 15. 42:
Վասն իւղաբերից կանանցն։ 16. 1:

Նախադրութիւն Ղուկասու Աւետարանին :

Աւետարան որ ըստ Ղուկասու գրեալ է : Նոյն ինքն Ղուկաս • աշակերտ պետրոսի • և ձեռնադրեցեալ ընթացակից Պօղոսի • և վկայեցեալ 'ի նմանէ : Սա գրեաց զաւետարանս զայս : զՍկիզբն առնէ 'ի ծննդենէն Յօհաննու՝ և զորս ը̅ նմին : Պատմէ և զմարմնանալ Փրկչին : ազգաթիւ առնէ՝ և ելանէ 'ի Յօսեփայ 'ի դաւիթ՝ և 'ի դաւթէ մինչև յԱդամ : Պատմէ սա և զմկրտութիւնն Յօհաննու՝ և լինելովն 'ի լեառն զփորձիլն 'ի սատանայէ : և զընտրութիւն աշակերտացն • և այլ եօթանասունս : Եցոյց նշանս և արուեստս բազումս եղեալս : և զխորհուրդ մատնութեանն : և զկատարածն • որ մատնեցաւ Պիղատոսի պոնտացւոյ• և խաչեցաւ մարմնով : Զի զինուորքն բաժանեցին զհանդերձս նորա : և որք խաչեցան, յերկուց աւազակաց մինն ապաշխարեաց խոստովանութեամբ : Եւ զի մարմին նորա եդաւ 'ի գերեզմանի• և յարեաւ յերրորդ աւուր • և յետ այսորիկ համբարձաւ յերկինս՝ տեսանելով հրեշտակաց : Ղուկաս արուեստիւ բժիշկ գոլով՝ սա աշակերտեցաւ Փրկչին, և համարեալ կոչեցաւ 'ի թիւս եօթանասնիցն : իսկ յետոյ աշակերտեցաւ Պօղոսի, (Բայց ըստ այլոց, Ղուկաս ոչ 'ի ժամանակս Քրիստոսի աշակերտեցաւ Քրիստոսի. այլ յետոյ հաւատալով Քրիստոսի և աշակերտելով ընդ Պօղոսի անուանեցաւ աշակերտ Քրիստոսի :) վասն որոյ ասէ գովութիւն սորա յԱւետարանի : 2. Կորն. 8. 18 : Սա հրամանաւ Պօղոսի գրեաց զԱւետարանն իւր յԱնտիոք քաղաքի 'ի լեզու Ասորի ․ (ըստ այլոց՝ ճշմարտագոյն, նաեւ հաւատարմագոյն, Յունական լեզուաւ գրեալ) զկնի ․ ԺԵ ․ ամի ․ (ըստ այլոց զկնի քսան եւ մէկից ամաց) համբառնալոյ Փրկչին ։

* * *

ՍԿԻԶԲՆ ԳԼԽՈՑ

Աւետարանին՝ որ ըստ Ղուկասու ։

Գլուխ․ համար ։
Վասն աշխարհագրին ։ 2 ․ 1 ։
Վասն բացօթեայ հովուացն ։ 2 ․ 8 ։
Վասն Սիմէոնի ։ 2 ․ 25 ։
Վասն մարգարէին Աննայի ։ 2 ․ 36 ։
Վասն լինելոյ բանին Այ առ Յօհաննէս ։ 3 ․ 2 ։
Վասն որոց հարցանէին զՅօհաննէս ։ 3 ․ 10 ։
Վասն փորձութեանց Փրկչին ։ 4 ․ 2 ։
Վասն որ ունէր զոգի պղծական ։ 4 ․ 53 ։
Վասն զոքանչին Պետրոսի ։ 4 ․ 38 ։
Վասն որոց բժշկեին 'ի պէսպէս հիւանդութեանց ։ 4 ․ 40 ։
Վասն որսոյ ձկանցն ։ 5 ․ 4 ։
Վասն բորոտին ։ 5 ․ 12 ։
Վասն անդամալուծին ։ 5 ․ 15 ։
Վասն ղեւեայ մաքսաւորին ։ 5 ․ 27 ։
Վասն գօսացեալ ձեռին ։ 6 ․ 6 ։
Վասն առաքելոցն համարոյ ։ 6 ․ 13 ։

Վասն երանութեանցն ։ 6 · 20 ։
Վասն հարիւրապետին ։ 7 · 2 ։
Վասն որդւոյ այրւոյն ։ 7 · 12 ։
Վասն որոց առաքեցանն 'ի Յօհաննէ ։ 7 · 19 ։
Վասն օծանելոյ զՏէրն իւղով ։ 7 · 38 ։
Վասն առակի սերմանացանին ։ 8 · 5 ։
Վասն սաստելոյ ջուրցն ։ 8 · 24 ։
Վասն որ ունէր զլեգէօնն ։ 8 · 27 ։
Վասն դստեր ժողովրդապետին ։ 8 · 41 ։
Վասն տեռատես կնոջն ։ 8 · 43 ։
Վասն առաքելոյ զերկոտասանսն ։ 9 · 2 ։
Վասն հինգ հացիցն, և երկու ձկանցն ։ 9 · 13 ։
Վասն զաշակերտսն հարցանելոյն ։ 9 · 18 ։
Վասն այլակերպութեանն ։ 9 · 29 ։
Վասն լուսնահարին ։ 9 · 39 ։
Վասն խորհելոյն, թէ ով մեծ իցէ ։ 9 · 46 ։
Վասն չտալոյն զհրաման զկնի երթալոյ ։ 9 · 57 ։
Վասն երևեցուցանելոյ զեօթանասունսն ։ 10 · 1 ։
Վասն հարցանելոյ օրինականին ։ 10 · 25 ։
Վասն անկելոյն 'ի ձեռս աւազակաց ։ 10 · 30 ։
Վասն մարիամու, և մարթայի ։ 10 · 38 ։
Վասն յաղօթս կալոյն ։ 11 · 1 ։
Վասն համր դիւին ։ 11 · 14 ։
Վասն որ կինն ձայն եբարձ 'ի ժողովրդենէն ։ 11 · 27 ։
Վասն նշան խնդրելոյն ։ 11 · 29 ։
Վասն որ փարիսեցին կոչեաց զՏ̅ն 'ի ճաշ ։ 11 · 37 ։
Վասն վայ տալոյ օրինականացն ։ 11 · 46 ։

Վասն խմորոյ փարիսեցւոյն ։ 12· 1։
Վասն բաժանելոյ զինչս ը̄ եղբօր ։ 12· 13։
Վասն պտղաբերելոյ անդոյն մեծի ։ 12· 16։
Վա̄ գալիլեայւոցն, և որոց ՚ի սելովամ։ 13· 1։
Վասն անպտուղ թզենւոյն ։ 13· 6։
Վասն կարկամեալ կնոջն այսահարի ։ 13· 11։
Վասն առակայն հատոյ մանանխոյ ։ 13· 19։
Վասն թէ սակաւք են որք ապրելոց են ։ 13· 23։
Վասն որք ասացին ցՅս̄ վհերովդէէ։ 13· 31։
Վասն որ ջրգողեալ էր ։ 14· 2։
Վա̄ այնոցիկ, որք սիրեն զնախագահս ։ 14· 7։
Վասն կոչելոյ յընթրիս ։ 14· 12։
Վասն շինելոյ աշտարակին ։ 14· 28։
Վասն հարիւր ոչխարայն ։ 15· 4։
Վասն անառակ որդւոյն ։ 15· 11։
Վասն անիրաւ տնտեսին ։ 16· 1։
Վասն մեծատանն և ղազարու ։ 16· 19։
Վասն տասն բորոտայն ։ 17· 12։
Վասն անիրաւ դատաւորին ։ 18· 2։
Վասն փարիսեցւոյն և մաքսաւորին ։ 18· 10։
Վասն հարցանելոյ մեծատանն ։ 18· 18։
Վասն կուրին ։ 18· 35։
Վասն զաքէոսին ։ 19· 2։
Վասն գնալոյ առն ազնուականին առնուլ իւր թագաւորութիւն և դառնալ։ 19· 12։
Վասն առնլոյ զտասն մնասն ։ 19· 13։
Վասն յաւանակին, և իշոյն ։ 19· 30։
Վասն հարցանելոյ քահանայապետին զՏէր ։ 20· 1։

Վասն տուակի այգւոյն ։ 20 ․ 9 ։

Վասն դահեկանին ։ 20 ․ 23 ։

Վասն սադուկեցւոյն ։ 20 ․ 27 ։

Վասն թէ զինչ է որդի դաւթի Քս̃ ։ 20 ․ 41 ։

Վասն երկու լումայից այրւոյն ։ 21 ․ 2 ։

Վասն հարցման կատարածին ։ 21 ․ 7 ։

Վասն զատկին ։ 22 ․ 1 ։

Վասն վիճելոյն թէ ով մեծ իցէ ։ 22 ․ 24 ։

Վասն խնդրելոյն սատանայի փորձել զսիմոն ։ 22 ․ 31 ։

Վասն նախատանացն հերովդի ։ 23 ․ 11 ։

Վասն կոծելոյ կանանցն ։ 23 ․ 27 ։

Վասն ապաշխարելոյ աւազակին ։ 23 ․ 40 ։

Վասն խնդրելոյ զՏր̃ունական մարմինն ։ 23 ․ 52 ։

Վասն իւղաբեր կանանցն ։ 24 ․ 1 ։

Վասն կղէոպեանցն ։ 24 ․ 13 ։

Վասն համբառնալոյ Տն̃ ։ 24 ․ 51 ։

Նախադրութիւն Յօհաննու Աւետարանին:

Յօհաննու աւետարանն՝ գրեալ է Յօհաննու, որ եղբայր է Յակոբայ զեբեդեայ. որ անկաւ ՚ի վերայ լանջացն Տն: Նոյն սա գրեաց զաւետարանս զայս: Եւ՛ զսկիզբն առնէ յանծական բանէն. և զլաստ մարմնոյ ծննդեանն յիշատակէ յասելն. և Բանն մարմին եղև: Եւ՛ յիշատակէ զմկրտութիւնն Յօհաննու. և զընտրութի աշակերտացն: այլ և զնշանս և զսքանչելիս. որք եղեն. և զկատարածն, որ մատնեցաւ սրնատայցւոյ Պիղատոսի՝ և խաչեցաւ. յորում և զինուորքն բաժանեցին զհանդերձս նորա. և ՚ի վերայ պատմուճանի նորա զվիճակ արկին. և մարմին նորա եդաւ ՚ի գերեզմանի՝ և յարեաւ յերրորդ աւուր: և երևեցաւ աշակերտացն ինքն: Յօհաննէս,՛ որ և որդի որոտման, զվերինն որոտալով պատմեաց մեզ: Սա գնի. ծգ. ամի (քաղ այլոց ասելոց՝ ըձն. 66. ամաց) Համբառնալոյ Փրկչին՝ գրեաց զԱւետարանս իւր յեփեսոս քաղաքի, ՚ի խնդրոյ Եկեղեցւոյն Ասիոյ, ՚ի լեզու յոյն:

Յօհաննէս՝ որ թարգմանի Հնազանդութիւն:

◆

ՍԿԻԶԲՆ ԳԼԽՈՑ

	Գլուխ.	Համար:
Վասն զի անսկիզբն է բանն ԱՅ:	1.	1:
Վասն Յօհաննու վկայելոյն բանին ԱՅ:	1.	15:
Վասն գալոյն առ նա գառին ԱՅ:	1.	29:
Վասն աշակերտացն առ Յս ագանելոյն:	1.	39:
Վասն գտանելոյն զմեսիայն:	1.	41:
Վն̅ հարսանեացն 'ի կանա գալիլեացւոց:	2.	1:
Վասն արտաքս հանելոյ 'ի տաճարէն զվաճառօղսն:	2.	15:
Վասն Նիկոդիմոսի:	3.	1:
Վասն 'ի յայենոն մկրտելոյն:	4.	23:
Վասն խնդիր լինելոյ վասն սրբութե̅:	4.	25:
Վասն կնոջն սամարացւոյ:	4.	7:
Վասն թագաւորազնին:	4.	46:
Վասն երեսունևութամեայ հիւանդին:	5.	5:
Վասն զի հայր սիրէ զորդի:	5.	20:
Վասն հինգ հացին, և երկու ձկանն:	6.	9:
Վասն գնալոյն 'ի վերայ ծովուն:	6.	19:
Վասն մարտնչելոյն կամ կագելոյն ընդ միմեանս հրէիցն:	6.	41:
Վասն շրջելոյն Յի 'ի գալիլեա:	7.	1:
Վասն խրատու եղբարցն:	7.	3:
Վասն խնդրելոյն հրէից ունել զՅս̅:	7.	30:
Վասն 'ի ծնէ կուրին:	9.	1:
Վն̅ դնելոյն Յի զանձն 'ի վր̅ ոչխարացն:	10.	15:
Վասն նաւակատեացն յեէ̅մ:	10.	22:

Վասն ղազարու յարութեանն : 11. 1:
Վասն օծանելոյն զՏէրն : 12. 3:
Վասն որ ասաց յուդայ գլուղոյն : 12. 5:
Վասն յաւանակին և իշոյն : 12. 14:
Վասն եկելոց հեթանոսացն առ Տր̅ : 12. 21:
Վասն հատին ցորենոյ : 12. 24:
Վասն Յի̅ լոյս յաշխարհ գալոյ : 12. 46:
Վասն ընթրեացն . և լուանալոյ զոտս աշակերտացն : 13. 1:
Վասն չարչարանաց Տն̅, և սփոփելոյ զաշակերտսն : 13. 15:
Վասն գալոյ սր̅ հոգւոյն և մխիթարելոյն զաշակերտսն : 13. 25:
Վասն մատնութեանն Յի̅ : 18. 5:
Վասն ուրացութեանն Պետրոսի . և հաւուն խօսելոյ : 18. 25:
Վ̅ս ածելոյն զՅս̅ ՚ի վանսն կայիափայ : 18 28:
Վասն տանելոյն զՅս̅ ՚ի գողգոթա : 19. 17:
Վասն աւանդելոյն Յի̅ զհոգին : 19. 30:
Վ̅ս խնդրելոյն զՏ̅րունական մարմինն : 19. 38:
Վ̅ս բերելոյն նիկոդեմոսի զմուռս : 19. 39:
Վասն գալոյ կանանցն ՚ի գերեզմանն : 20. 1:
Վասն դրօքն փակելովք մտանելոյն Յի̅ առ աշակերտսն : 20. 19:
Վասն զթովմաս հաստատելոյ Տն̅ : 20. 27:
Վասն ուտելոյն ը̅ նոսա, և հարցանելոյն զՊետրոս . 21. 15:
Վասն սիրելոյ աշակերտին, որ և գրեաց զաւետարանն : 21. 24:

ԶԵԿՈՒՑՈՒՄՆ·

Փառք, պատիւ և գետնամածեալ երկրպագութ͞ի եռանձնեայ դիմաց Հօր և Որդւոյ և Հոգւոյն Ս͞բյ, որ խուռն ամենառատ ողորմուք͞ն զօրավիգ եղեալ խմբիս տկարութ͞ե, ետ կարողութ͞ի 'ի լոյս ածել տպագրութ͞ք զայս հնգեշահ մատեան 'ի յօգուտ արամեանս սեռի: Արդ խնդրեմ խոնարհաբար 'ի բարեպաշտօն և 'ի բարեմիտ վայելողաց ըքան Փրկչին· անբասիր առնել զիս, տեսեալ սակաւ ինչ սխալս տառից, որ 'ի ներ սորա սպրդեալ գտանի 'ի վրիպմանէ յաչաց: Քանզի չունելով իմ ուստեքէ օգնական, այլև զբաղեալ կառավարութ͞ք նորաշէն տպարանի իմոյ, առաւել ևս քան զա͞մ դժուարատանելին վ͞ն իմ, էր այս· զի ոչ գտաւ գրաշար 'ի մերայնէից, վասն որոյ անճար մնացեալ՝ դիմեցի առ օտար ազգս, հազիւ գտի համբակ զոմն՝ որ հաճեցաւ ուսանիլ զգրաշարութիւն մեր· յետ այսքանեաց տառապանաց՝ պարտէի համանգամայն գրաշարին օգնել· և սրբագրութիւնն երկիցս և երիցս ընթեռնուլ չարչարեալ մարմնով· ահա առիթ սխալանաց: Արդարև վայ և եղուկ միոյն՝ *** ***: Յաղագս որոյ 'ի զեկուցումն ա͞ծասիրացդ՝ արտադրեալ եղև զխօսքս 'ի մատենէ, զի բարուք տեղեկացեալ անցից, զիս անմեղադիր կացուսջիք առաջի Ք͞ին Ա͞յ մերոյ:

		Սրբագրելիք։	Սրբագրեալք։
Թուղթ-համար.	Տողահամար։		Ընթերցի՛ր։
8.	7.	տեսալ	տեսեալ
15.	25.	վայսն	վասն
15.	29.	յամեայն	յամենայն
29.	4.	առ հանապարհաւ	առ ճանապարհաւ
39.	13.	աշակեքտքն	աշակերտքն
62.	45.	առ աշակերտտսն	առ աշակերտսն
102.	11.	յայնմիկ	յայնմիկ
103.	28.	ուսչիք	ուսջիք
109.	22.	'ի գողգոթա տեղ մի	'ի գողգոթա տեղի մի
113.	17.	ժողովուբդ	ժողովուրդ
114.	39.	յաւուրսն 'ի քաղակն	յաւուրսն 'ի քաղաքն
118.	22.	ըսա	ըստ
118.	24.	կալ երկուս	կամ երկուս
126.	19.	ամլոխին	ամբոխին
135.	26.	յանկոյս	յայնկոյս
136.	37.	մաեալ	մտեալ
146.	39.	և ներքինն ձերն	և ներքինն ձեր
158.	4.	Գիտամ	Գիտեմ
283.	35.	ղօր	զօր
303.	25.	Գլուխ Առաջներրոդ	Գլուխ Առաջներորդ
303.	10.	զյիշտակս	զյիշատակս
331.	18.	Գլուխ Առաջներրոդ	Գլուխ Առաջներորդ
358.	16.	Գլուխ Առաջներրոդ	Գլուխ Առաջներորդ
370.	7.	դարցեալ	դարձեալ
377.	7.	Գլուխ Առաջներրոդ	Գլուխ Առաջներորդ
592.	28.	զքաբիս	զքարիս

ԳՐԱԴԱՐԱՆ